Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

1754

227
N-85

1880

94 203.2

347

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆԱԽՆԵԱՑ

ՈՍԿԵԲԵՐԱՆ

№ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ 179.
БИБЛІОТЕКА
Никиты Осиповича
№ ЭМИНА. ~~179~~ 99
ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ.

227
Հ-85

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ



ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԲՐՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ
1880 – ՌՅԻԹ

36345-Կ.Ր.

ԾԻՇԱՏԱԿ

ՄԱՂԱՔԵԱՆ ՏՕՀՄԻՆ

ՀԱՅԿ-ՏՕՐԱ
19898-59
(5133
38)
2001

ԾԱՌԱՋԱԲԱՆ

Ի բազում ժամանակաց հետէ իղձ լեալ մեզ հրատարակութեամբ մատենիս՝ի լոյս ածել և զկատարեալ զայս մասն Թարգմանութեան մատենագրութեանց Սրբոյ Ոսկեբերան Հայրապետին, և վասն բազում պատճառաց յերկարեալ ձգեցաւ ցայսօր ժամանակի։ Գլուխ պատճառաց յապաղելոյ տպագրութեանս, որպէս և ակնարկեալ է՝ի յառաջաբանի Մեկնութեան Թղթոցն Պօղոսի, եղեն հանգամանք ձեռագիրը օրինակի սորին, որոյ մի ևեթ գոլով, և այն լի վրիպակօք և՝ի տեղիս տեղիս պակասաւոր, տայր ակնկալել մեզ նորոգ օրինակաց, որովք մարթ լինէր լացեալ և ուղղագիր ընծայել զայն՝ի լոյս. մանաւանդ զի լուեալ իսկ է մեր եթէ գտանին առ ոմանս յազգայնոց՝ի պակասեալ կոտորակաց օրինակիս մերոյ. այլ քանզի ցարդ չէղեն մեզ դէպք՝ի ձեռս բերելոյ զնոսին, վասն որոյ լաւ վարկանիմք ընծայել յօգուտ եկեղեցւոյ և ուսումնասէր աշխարհի զչքնաղ զայս գանձ ամբարեալ յերանաչնորհ նախնեաց մերոյ՝ի գանձատան մատենագրութեանց Սրբոյ Հայրապետին, հանդերձ թերութեամբք, քան թէ սպասեալ մնալ այլ ևս՝ անստոյգ օրինակաց, որք եթէ

հրատարակեսցին ՚ի հայրենասէր խնամոյ՝ բազում յոյժ գործեն օգուտ, լըացուցանելով զպակասաւոր մասունս սորին, և զանստոյգսն և զտարակուսականս բացայայտելով։

Պարտք պատշաճից տան մեզ հարկ համարել աստանօր կարճ ՚ի կարճոյ զեկուցանել զեղանակ տպագրութեանս և զհանգամանաց ձեռագիրը օրինակին։ Որպէս ՚ի վերոյ յիշեցաք՝ մի միայն օրինակ էր առ մեզ գրոցս, և այն անթուական՝ առանց ինչ յիշատակարանաց, ՚ի սկզբանէ, ՚ի միջի և ՚ի վերջոյ թերի, որպէս նշանակեալ է ՚ի տպագրին յիւրաքանչիւր տեղւոջ։ Եղանակ գրութեանն՝ որ է միջին առնուանեալ երկաթագիր, և արտաքին երևոյթ մատենին, յօրինեալ ՚ի բամբակեայ թղթոյ՝ տան մեզ դուշակել յերկոտասաներորդ դարու գաղափարեալ լինել։ Ի գրութեանն ոչ երբեք միօրինակ իմն ուղղագրութիւն պահէ բառից կամ յատուկ անուանց. զոր օրինակ խառն դնէ յաձախ տնաւնկք և տնաւնգք, ընկեր և ընգեր, երկիւղ և երկիղ. այսպէս և զայլս ՚ի լծորդաց. իսկ ՚ի յատուկ անուանս՝ Յորոբոաամ և Յորաբոաամ, Գումոր և Գոմոր, Ասքազ, և Ազքազ, Յովախ և Յովաք, Ակիւդաս և Ակիդաս, Թէոդոտոն և Թէոդոտովն և Թէոդիտոն և Թէոդոտիովն և Թէոդոտոն, և այլն. յորոց զգետին զերկոսին անուանս անփոփոխ պահեցաք, իսկ զառաջինն և զնմանիս նոցին եդաք միօրինակ ըստ սովորական տառադարձութեան Աստուածաշունչ գրոց, բաւական լեալ համարեալ ծանուցանել աստանօր. այսպէս և զլծորդ տառսն եդաք ըստ սովորական գրութեան, որպէս և զերկբառբառն ա և զին փոփոխ ՚ի հասարակ անուանս միայն փոխեցաք յ՝ և ՚ի ւ առ ՚ի դիւրութիւն ընթերցանելոց. Թող զի և ՚ի ձեռագրին բառք ինչ ուրեք ուրեք լերկ լինին են գրեալ և այլուր ՚ի լիս, որպէս գուն ուրեք և շաղկապն այլ փոխանակ այդ՚ի։ Դարձեալ և

ուրեք ուրեք յայտնապէս խառնակութիւն և անկապակցութիւն իմաստից երևի, և այլ ուրեք առանց գյառաջադոյն խոստացեալսն ասելոյ՝ անցանէ յայլ իմաստ, զոր օրինակ յէջսն 110, տող 4-5, և 111, տող 2-4, և այլն, որ ընդօրինակողին թերութիւն է անշուշտ և ոչ հեղինակին։

Զվերնագիր մատենիս և զգլուխսն ՚ի մէնջ յօդեցաք, բաժանելով զայն ըստ գլխոց մարգարէութեանն Եսայեայ։ Սկզբըդ վարկաք զառաջին գլուխն զպակասեալն՝ նորոգ թարգմանութեամբ յաւելուլ ՚ի սմա, զի ակն ունիմք եթէ յաջողեսցի մեզ ընթեռնուլ գեղեցիկ թարգմանութեամբ նախնեաց։ Տրոհութիւն մատենիս արարաւ ըստ պահանջելոյ կարգի բանիցն, քանզի յօրինակին ոչ ուրեք միօրինակ կանոնաւոր էր կետադրեալ, բազում ուրեք յաւելորդս շնայլեալ, և այլ ուրեք և ՚ի կարևորս վերջացեալ. վասն որոյ պատշաճ թուեցաւ մեզ ըստ կարի յամենայն տեղիս միապէս կետադրել։ Ուր ուրեք կարևոր պէտք էին՝ ուղղեցաք զյայտնի վրիպակս օրինակին, ՚ի սակաւ տեղիս միայն նշանակելով զվրիպեալսն ՚ի ստորև, այլ յաձախս զանց արարաք՝ զի մի տաղտուկ ածիցեմք ընթերցանելեաց։ Մարթ էր և ՚ի բազում տեղիս գուշակել զնոյն սրբագրել զվրիպակ թուեցեալս օրինակին և զտարակուսական իմաստս, այլ կամաւ զանց արարաք գայսու առաւելութեամբ, ընտրելով յաւէտ զկնի գնալ մերոյս վկայեալ հաւատարմութեան ՚ի տպագրութիւնս նախնեաց, մանաւանդ մի միայն ունելով օրինակ ՚ի ձեռին և այն ոչ սակաւ սխալագիր։ Իսկ ՚ի սակաւ տեղիս նորօրինակ հոլովմունք լինչ բառից և խոնարհմունք ժամանակաց բայից ոմանց՝ երևելոց ՚ի մեհենութեան աստ, թուին մեզ առաւել ՚ի գաղափարոցագ մուծեալ, քան թէ ՚ի թարգմանչէ ոսկեղինիկ դարուն։

Յայսօր ժամանակի առ բանասէրս Եւրոպիայ ան-

ծանօթ եկաց մատենագրութիւնս այս Սրբոյ Հայրապետին, բայց միայն յեօթանեցունց առաջնին գլխոյն և յութերորդէն մինչև ցհամար մեծասաներորդ. որոց յոյն բնագիրն երևի նոյն լինել, զորոյ դիւտն ծանուցանէ և օրինակս մեր յէջ 102, եթէ « Մինչև ցայսվայր գտաւ իւրով ձեռովք գրեալ երանելոյն Յոհաննու յունարէն ». որով և յայտնապէս տայ մեզ գիտել եթէ ամբողջութիւն գործոյս կորուսեալ էր և առ նախնեօք, և զի հայկական թարգմանութիւն սորին եղեալ էր յառաջ քան զկորուստ բնագրին, ընդ այլ թարգմանութիւնս մատենագրութեանց Ս. Հայրապետին, որպէս և հաւանական յոյժ երևի 'ի սեղմ և 'ի հայկաբան ոճոյ գրութեանն, որ բազում ուրեք յիշեցուցանէ մեզ զտիպս կերպարանաց բանից թարգմանչի մեկնութեանն Մատթէի։

Ի վերայ մեկնութեան գրոցս երեք գլխաւոր խընդիրք կային առ արևմտեան բանասէրս. առաջին, եթէ արդեօք բեմախօսելով Ճառեալ իցէ Ոսկեբերանի զմեկնութիւնս զայս, եթէ առանձինն 'ի վարժութիւն և եթէ անձին գրեալ. արդեօք ՅՈՒտիճք եթէ 'ի Կոստանդնուպօլիս յօրինեաց զայս մեկնութիւն. հուսկ ուրեմն, արդեօք զԹերի մեկնութիւնն, զոր 'ի ձեռն ունէին մինչև ցօրս ցայս՝ լրացուցեալ իցէ Ոսկեբերանի եթէ ոչ։

Լիովին լուծումն վերջին և կարևոր հարցմանս, որոյ առաւելապէս լացաւական ընտրէին տալ պատասխանի բանագէտք, պահեալ էր հայկականս մատենագրութեան, որ ոչ հաւաստէ կարծեօք, այլ անժխտելի վկայ արձանանայ բովանդակութեան գործոյն։ — Իսկ թէ արդեօք առաջի ժողովրդեանն խօսեցեալ իցէ կամ եթէ ոչ, ոչ սակաւ դժուարին է առ 'ի լուծանել. քանզի արդարև 'ի բազում տեղիս Թուի առ ժողովուրդն զգեմս բանիցն դարձուցանել, զոր օրինակ յէջն 5, տող 29. — 12, 2-8. — 40, 23-39.

— 63, 13-20. — 107, 13-16. — 111, 1-3. — 120, 20-30. — 374, 18, Լայլն, Լայլն. և այլ ևս բազում բանք գտանին 'ի մեկնութեան աստ, որք այնպէս իմն ցուցանեն եթէ Ոսկեբերանի խօսեցեալ իցէ զՃառս զայսոսիկ առ ժողովուրդն. այլ ինձ, ասէ Հռչակաւորն Մոնֆոքոն, դժուարին է ընդգրկել զկարծիս զայս, եթէ զոր այժմ ունիմք, զնոյն ամենևին առ ժողովուրդն խօսեցեալ իցէ նորա։ Այդ և նորոգ գտեալ շարայարութիւնս այս 'ի Հայումն՝ առաւել զօրացուցանէ զկողմն կարծեաց Մոնֆոքոնի, այլ և այլ թարգմանչացն բանից ընդ միմեանս մանր բազդատութեամբք, և ըստ ասելոյ Մինչի « Աւաւել իբրև մեկնիչ քան թէ Ճարտասանս » երևելով 'ի սմա, կամ ըստ բանից Տիբերինի « Ուսումնօրէն և առաւել պատմական-աստուածաբանական՝ քան թէ բարոյական մեկնութեամբ », թէպետ և վերջին մասնս այս անպակաս իցէ 'ի սմա, այլ ոչ այնչափ ընդարձակեալ։ Դարձեալ և 'ի բովանդակ մեկնութեան ոչ ուրեք տեսանի յառաջաբան լինչ, զոր սովոր էր կանխել Ոսկեբերան յայլ ամենայն Ճառս իւր՝ Ճարտարարուեստ յոյժ առ 'ի յերկրել և զարդարել զխօսս. ոչ ուրեք 'ի վերջոյ յորդորական բանք, փառատրութեամբ Քրիստոսի կամ Սրբոյ Երրորդութեանն, որ և անվրէպ սովորութիւն է Ոսկեբերանի յամենայն Ճառս իւր։ — Իսկ ոմն արդեօք յօրինեաց զմեկնութիւնս զայս Ոսկեբերան։ Ջառաջինն վերՙ 'ի վերոյ հայեցիւք, թերևս ամբողջութիւն հայ թագմանութեանն այնպէս իմն ցուցանիցէ, զի գոնեա յաքսորանս իւրում 'ի Կուկիւսոն լրացուցեալ իցէ զըստկըսեալն յառաջագոյն. զոր և հաստատել Թուիցին բանք օրինակիս մերոյ յէջ 102, որպէս թէ 'ի Հայաստան լեալ իցէ գիւտ առաջնոյ մասին յոյն բնագրին՝ գրեալ ինքնին Ոսկեբերանէ։ Այլ որ միանգամ ոք զմտաւ ածիցէ զՀանգամանս վարուց Ս. Հայրապետին յաքսորանս իւրում, զտաւտապալից զերկամեայ աւեթ

զկեանս նորա՝ զբաղեալ միշտ ՚ի քարոզութիւն, ՚ի կըր-
թութիւն և ՚ի գարձ անհաւատից, տկար գոլով ՚ի
մարմնի, և զմեծ մասն ցրտաշունչ աւուրց ձմերայնոյն
հիւանդութեամբ անցուցանելով, և որչափ և սիրա-
լիր ընդունելութեան համարիցիմք դիպեալ ՚ի Դիոս-
կորոսէ հայկազն հայրապետէ տեղւոյն, սակայն և ՚ի
կարևոր իրաց անգամ պակասեալ, այսոքիւք ասեմ
մտածութեամբք՝ կարծեմ ոչ ումեք համարձակելի՝
զայսպիսի լին գրութիւն, որ հանդարտութեան մտաց
և երկար և անխոնջ աշխատանաց կարօտի, յայնպի-
սում ժամանակի համարել յօրինեալ Սրբոյ Հայրա-
պետին: — Ո՞ւր ուրեք ուրեմն յօրինեալ իցէ նորա զայս
մատեան, ՚ի Կոստանդնուպօլիս արդեօք եթէ ՅՈՒ-
տիոք: Ընդհանուր կարծիք են բանասիրաց, զի ՅՈՒ-
տիոք գրեաց զգիրս զայս և ոչ ՚ի Կոստանդնուպօլիս.
զոր այսպէս պարզաբանէ Թիլլըմոն. « Ոչ ոք երկուա-
նայ Ոսկեբերանի լինելոյ մեկնութեանս, որ և գե-
րազանց յոյժ աղբիւր է վայելչաբանութեան: Զոր
ինչ զհովվմէական պետութենէն ձառէ, յէջ 9, ա-
մենևին ՚ի դէպ ելանէ աւուրց Սրբոյն Ոսկեբերանի,
մանաւանդ յառաջ քան զամն 377, (ջրոս ամօք յա-
ռաջ քան զսարկաւագութիւն Սրբոյն): Զգործս զայս
կամ յառանձնութեան և կամ ՚ի ժամանակս սարկա-
ւագութեան յօրինեալ ինձ թուի. քանզի զինի քա-
հանայութեան անմարթ լին երևի այնքան պարապ և
ժամանակ գտանել, առ ՚ի ձեռն արկանելոց յօրինել
գործ լին այսպիսի »: Յոր յաւելու ասել Մոնֆոքոն,
եթէ « Զայս կարծիս Թիլլըմոնի մտադիւր ընդդրկեմք.
և արդարև մարթ իսկ է ասել եթէ մինչ դեռ ևս չէր
ընկալեալ զպաշտօն քարոզութեան, (յետ ընդունե-
լոյ զաստիճան քահանայութեան, որ եղև յամին 383),
՚ի վարժութիւն անձին առ ՚ի քարոզութիւն յօրի-
նեալ իցէ զձառս զայսոսիկ »: Դարձեալ և ՚ի յոլո-
վագոյն բանից անտի ընդդէմ Հրէից, կարեմք իմաս-

տասիրել զի ՅՈՒտիոք յօրինեալ իցէ զնոսին. քանզի
զայնու ժամանակօք առ ՅՈՒտիոքացիս յաձախեալ էին
վէճք և հակառակութիւնք քրիստոնէից ընդ Հրեայս,
զոր իմանամք ոչ միայն յութեղութենէ ձառից անտի,
զորս գրեաց Ոսկեբերան ընդդէմ Հրէից և ծիսից և
սնոտի աւանդութեանց նոցին, այլ և յայլ աւելնայն
ձառս՝ զորս խօսեալ իցէ նորա ՅՈՒտիոք: Եւ ևս՝ ան-
հնարին լին երևի եթէ յաւուրս պատրիարքութեան
իւրոյ այնքան պարապ գտեալ իցէ Ոսկեբերանի առ ՚ի
յօրինել զմեկնութիւնս, որ՝ ըստ ասացելոցս՝ բազում
տքնութեանց և քննութեանց են արդասիք:

Մնայ արդ ասել և սուղ ինչ՝ առ ՚ի ցուցանել
եթէ նորոգ հրատարակեալս ՚ի մէնչ արդարև շարու-
նակութիւն իցէ գրութեանն Ոսկեբերանի՝ ինքնին
՚ի Սրբոյ Հայրապետէն գրեալ, և ոչ նոր ումն եր-
ջանկացի վարդապետ ՚ի մերոցս՝ զնորհաբանն յօրի-
նեալ շարայարութիւն, որպէս ՚ի Մատթէի մեկնու-
թեան Շնորհալւոյն: Սակայս ոչ անուղղակի և եթէ ըն-
ծայութիւն մատուցանէ օրինակս մեր, ոչ ինչ նշանակե-
լով՝ յոր վայր դադարէ այժմեան յոյն բնագիրն, որով
յայտ արասցէ այլում ումեք լինել շարայարութեան
գործոյն, այլ և ուղղակի հաւաստիս ընծայէ յա-
սել անդ ՚ի խորագրին, յէջ 185, եթէ « Երանելոյն
Տեառն Յովհաննու Ոսկեբերանի ՚ի մարգարէն Ե-
սայիաս »: — Իսկ ՚ի տեղեկութենէ օրինակիս, յէջ 102,
եթէ « Մինչև ցայս վայր գտաւ իւրովք ձեռօք գրեալ՝
երանելոյն Յովհաննու յունարէն », թուի մեզ թէ
մարթ իցէ իմանալ, եթէ Ս. Հայրապետին ոչ կամե-
ցեալ ՚ի լոյս ընծայել զմեկնութիւնս զայս Եսայեայ,
որպէս թէ ՚ի կրթութիւն ևեթ անձին գրեալ, առ
իւր պահեալ իցէ նաև յաքսորանս իւրում: որով և
զինի փառաւորեալ մնհնան նորա, ընդ այլ մատե-
նագրութիւնս Սրբոյն, և զայս մեկնութեան գիրս յե-
ղեալ իցեն ՚ի հայ թարգմանիչքն մեր, որոյ վկայ է ա-

կեղծիկ շարադրութիւն մատենին։ Եւ յետոյ յաղէտս անդ Հայաստանի յետ սուղ ժամանակաց՝ի վերայ անցանելոյ՝ իսպառ անչետացեալ լոյծն սակաւ օրինակք բնագրին՝ իսկագրաւն Հանդերձ. և յետ ժամանակաց՝ի յայտ եկեալ առաջնոյ մասին, (զորոյ զկոյն բնագիրն ունիմք այժմ՝ի ձեռին), բազմացուցեալ լոյծն զօրինակս նորին. և այսր ժամանակի հանդիպեալ և գրչի ծանօթութեանս, յաւելեալ լոյծ զայս տեղեկութիւն յամբողջութեան հայերին թարգմանութեան։

Դարձեալ, չիք ինչ յայսմ շարայարութեան՝ որ ընդդէմ լոյծ ոձոյ գրութեան կամ սկզբանց և կամ ժամանակաց աւուրց Ոսկեբերանի, այլ՝ի հակառակն բազումինչ տեսանին՝ի սմա յատուկք Ս. Հայրապետին. զոր օրինակ, ուր ուրեք բանք լինին զաղօթից, զողորմածութենէ, զեկեղեցւոյ, զպարտուց մծատանց առ աղքատս, զպարշութենէ կրօնից հեթանոսաց, զարբեցութենէ, զզեղխութենէ, զնաբէութենէ կախարդաց և զդիւթից, զորոց յայլ ամենայն Հառս Ոսկեբերանի երկայնօրէն էն Հառեալ, սոյնպէս երկարօրէն բանք լինին զայսցանէ և՝ի համառօտութեան մեկնութեանս։ Այսպէս և աստուածաբանական ընծայութիւնք, որովք կշտամբէ՝ի սմա զվաղենտիանոսս, զՄարկիոնիտս, զՆովատեանս և զընդհանուր Արիոսեանս, և զայլ ևս ազգի ազգի մոլորվարդապետութիւնս և խոտոր ուսմունս հերետիկոսաց, գրեաթէ բառ առ բառ գտանին յայլ մատենագրութիւնս Սրբոյ Հայրապետին. բաւական գրեսցի առ այս՝ի բաղդատութիւն արկանել զերկուս և զերիս հատուածս որ գտանին՝ի սմա ընդդէմ Նովատեանց, յէջ 66, և այլն, ընդ երկոտասան Հառն մակագրեալս Ընդդէմ Նովատեանց կամ Ցաղագս անհատանելոյն, յորոց եօթն միայն կան առ մեզ[1], թերևս խօսեցեալքն միայն Նո-

1 Տես՝ի Հառն Ոսկեբերանի. էջ 557։

տիոք։ Եւ որպէս յառաջնում մասին խօսի յաՀախ ընդդէմ Հրէից, այսպէս և՝ի յաջորդութեանս երկարօրէն վէՀի ընդ նոսա, զոր օրինակ յէջն 189, 245, 295, 304, 329, 385, 389, 392, 402-404, 422, 442, 450, 486, և այլն, և այլն. որոյ Հաւանական պատՀառ յայտնեցաք՝ի վերոյ զյաՀախութիւն Հակառակութեանց Հրէից և քրիստոնէից ժամանակին առ Անտիոքացիս։

Դարձեալ, որպէս թարգմանութիւն առաջնոյ մասին ընդ Հնդութեանն՝ է և ամենևին հայկաբան, նոյնպէս նորին թարգմանչն է հրաշալի բարբառ՝ որ խօսի և՝ի շարայարութեան անդ, նորին ոճ սեղմն և հայկաբանութիւն Հարտար և կորովի՝ փայլէ և յամենայն ասացուածս վերջնոյ մասին։

Դարձեալ, որպէս յամենայն մեկնութիւնս Ս. Գրոց, սոյնպէս և՝ի մեկնութեան աստ Եսայեայ, զի՝ջինն ունի շաւիղ Ոսկեբերան՝ի մէջ երկուց Հակառակ գպրոցաց Աղեքսանդրիայ և Անտիոքայ. յորոց առաջինն ներշնչումն աստուածային դնէ ոչ յիմաստս միայն, այլ և յամենայն բառս Սուրբ Գրոց. իսկ Ոսկեբերան Հակառակ աղեքսանդրեանցն՝ ոչ եթէ զբառս Սուրբ Գրոց, այլ զբարոյական և զաստուածաբանական իմաստս ևեթ Համարի ներշնչեալս. և՝ի Հակառակն ոչ ըստ անտիոքեան գպրոցին մերժէ իսպառ զայլաբանական իմաստս Սուրբ Գրոց, այլ միայն զգոյշ կալ պատուիրէ մի կարի յաՀախել և ընդլայնել զնոսին, զորս և՝ի կարևորս իսկ չՀամարի՝ի մեկնութեան Ս. Գրոց։ Այսպէս բազում ուրեք և՝ի մեկնութեան աստ Եսայեայ խօսի զայսմանէ որոշակի, որպէս յորժամ ասիցէ, եթէ « Եւ այսպէս մտացն կարգի միտ դնեմք, և ոչ բանիցն ասացելոց. էջ 2. — Յորժամ Գիրք այլաբանիկ բարբառով զիրս ինչ նշանակիցեն, մի միայն ևեթ Հաստատել կալ, այլ ըզմտացն վՀետ վարել, և ոչ յայլաբանիկ բարբառն

Հաստատել. էջ 50. — Վայրապար է ցանկութիւն այնոցիկ, որ զայլասացիկսն հաստատել կամին, զի մոլորեալ իմն այնու այսր անդր հարկանիցին. էջ 50 ». տե՛ս զայսմանէ դարձեալ էջն 44, 47, 100, և այլն։ Արդ որ աստէն այսպէս ասէ, յայտնի ցուցանէ յետոյ՝ զի ոչ իսպառ անհետ կամի առնել և զմեկնութիւնս այլ ասացիկ իմաստից Սուրբ Գրոց. քանզի էջ 461, յետ մեկնելոյ զսկզբնաւորութիւն ԿՊ. Գլխոյն Եսայեայ, առնու կրկնել զնոյն քնաբան՝ այլասացիկ մեկնութեամբ էջ 463, յասել անդ, եթէ « Միտ դիցուք և այլասացիկ բանիցն, և այլն »։ Եւ է իսկ վասն այսորիկ, որպէս Թուխ մեզ, զի առաջի ունելով զվեցհնեանն Որոգինէ, բաղումք ուրեք՛ի բաղդատութիւն ածէ և զբանս Թէոդոտիոնիէ և Սիմաքոսի և Եօթանասնիցն, յորոց՝ ըստ ասելոյ Խիւքոսի երուսաղէմացւոյ՛ի մեկնութեան իւրում Յոբայ գրոցն, « Թէոդոտոս և Սիմաքոս Հեբրայական բանին ծառայեցին, իսկ Եօթանասնք՝ մեծաց աստուածային գրոց ծառայեցին և ոչ բանի »։

Եթէ գուցէ լինչ նորութիւն կամ զանազանութիւն ընդ երկուս մասունս յայսոսիկ, յայտ ևեթ է միայն՝ զի յառաջնում մասին ոչ ուրեք երևին բաղդատութիւնք թարգմանութեանց Ս. Գրոց ընդ միմեանս, որպէս բազում անգամ գտանեմք՛ի վերջնում մասին։ Այլ այս ասելի է, զի թէպետ և ոչ գտանին բաղդատութիւնք բանից Ակիւղասայ, Սիմաքոսի և Թէոդոտիոնիէի յառաջնում մասին, այլ ի անդամ ևեթ առեալ է՛ի բաղդատութիւն զեբրայականն և զասորին, (էջ 92, տող 12). զեբրայականն բազում ուրեք յիշատակէ և՛ի վերջին մասին, իսկ զասորին աստ միայն և ոչ այլ ուրեք՛ի բովանդակ մատենին. Թերևս և զասորին՛ի Թիւս այնոցիկ գասելի իցէ, յորժամ ասիցէ իսկ այլքն առեն կամ իսկ այլ թարգմանքն ունին այսպէս կամ այնպէս։ Դարձեալ մարդ

իսկ է համարել եթէ յայլ և յայլ ժամանակս գրեալ իցէ զառաջին և զերկրորդ մասն մեկնութեանս, թէպետ և զամենայնն յԱնտիոք յառաջ քան զպատրիարքութիւնն։

Ոչ միայն ցայսվայր ասացեալքս և այլովք ևս բազում՛ ներքին ընծայութեամբք մարթի հաւաստի ցուցանել զհարազատութիւն հայերէն շարայարութեանս, այլ առ այս ոչ պակասեն մեզ և արտաքին աւանդութիւնք և վկայութիւնք՛ի նախնեաց մերոց։ Որպէս Դաւիթ ոմն վարդապետ յերկոտասաներորդ դարու, որ՛ի յորդորանաց Պետրոսի վարդապետի իւրոյ գրեաց զծաղկաքաղ մեկնութիւն իւր Եսայեայ, յորով ուրեք՛ի կարգի բանից Ս. Եփրեմի և Ս. Կիւրղի Աղեքսանդրացւոյ և այլոց Սրբոց Հարց, ՛ի մէջ բերէ ըստ բաւից անդամ և զբանս Ոսկեբերանի՛ի մեկնութենէ աստի Եսայեայ։ Նոյնպէս և Գէորգ վարդապետ Ակներացի, ՛ի վերջ կոյս ԺԳ դարու, ՛ի խմբագիր մեկնութեան իւրում Եսայեայ, գրելոյ յաւուրս « արքային Հայոց Հեթմոյ միակեացն կոչեցելոյ » (1289-1305) որպէս աւանդեալ է՛ի յիշատակարանին, բազում ուրեք փոքու իւիք փոփոխութեամբ յառաջ բերէ և զբանս՛ի մեկնութենէ աստի Եսայեայ՝ յանուն Ոսկեբերանի։ Դարձեալ և՛ի փոքրիկ ծաղկաքաղ մեկնութեան Եսայեայ՝ Գրիգորի Տաթևացւոյ, ՛ի վախճան ԺԴ դարու, զոր ժողովեալ է՛ի բանից վարդապետին իւրոյ Յովհաննու Որոտնեցւոյ՝ կախիկ մականուանեալ վարդապետի, նոյնպէս՛ի ԺԴ դարու, բազում ուրեք ըստ մեկնութեանն Ոսկեբերանի ունի զնմաստս, թէպետ և շարադրութիւնն օտար իցէ՛ի վերջնոյս և ոչ յիշատակիցէ զանուն Ոսկեբերանի։ Թող զայսոսիկ, և՛ի զանազան Հաւընտիրս որ առ մեզ, գտանին այլ և այլ ընտիր Հատուածք քաղեալք՛ի մեկնութենէ աստի յանուն Ոսկեբերանի. զորոց զտարբերութիւնսն յօրինակէս մերմէ՝ տեսցես՛ի վերջ կոյս մատենիս,

յԿ[illegible]ն 473-487. այլ թէ ժրջաւի կեղակարծ իցէ հաւատարմութիւն ձառընտրաց ի քաղել անդ զհատ-ընտիր կոտորակս ի մատենագրութեանց՝ ամենե-ցուն է յայտ. վասն որոյ և զանց արարեալ զտարբերու-թիւնս նոցին կարդելոյ ի տորև իւրաքանչիւր հա-տուածոյն, ընտրեցաք յաւելուլ միայն ի վերջոյ, ի զբօսուճն և ի վայելս բանասէր մտաց:

Աւրդ՝ զմատեանս զայս, որպէս և իցէն, նուիրեմք յօգուտ ազգիս և ի փառս հրաշալի հանճարոյն՝ որ անկարօտն է փառաց առ ի մէնջ ընծայելոց, և ի պարծանս նահինեաց մերոց՝ սիրողաց և պաշտողաց զայնպիսի հանճար. որք և յետ բազմադարեան աւուրց տան յունկն մեր հնչեցուցանել զհրաշալին արձագանգ ձարտարախօս բարբառոյ Ոսկեբերան Դեմոսթենեայ Եկեղեցւոյ՝ ոսկեբարբառ հայացն խօսիւք:

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

ՄԵՆՆՈՒԹԻՒՆ

ԵՍԱՅԵԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ

ԳԼՈՒԽ Բ*

. . . . . ժամանակաց. զսոյն և մարգարէս ասէ, Թէ « Եղիցի յաւուրս յետինս »: Իսկ լեառն՝ զեկեղեցի կոչէ և զկրօնիցն ամրութիւնս. զի զոր օրինակ յորժամ զամուր լերամբք Թէպէտ և բիւրք բիւրուց զօրաց պատիցեն, աղեղունս լարիցեն, ի կռիւս մատչիցեն, տեգս արձակիցեն, գեղարդունս շողացուցանիցեն, մեքենայս կազմիցեն[1], հնարս հնարիցին, սակայն ամուր և անառիկ լերանցն՝ ինչ ոչ ՀԱՅՍիցեն, զևրեանց զոյժ[2] և զօրութիւն Թափիցեն, և նմա ինչ ոչ ազդիցեն. սոյնպէս և որ ընդ եկեղեցւոյ մարտեան հանապազ, զնա ինչ ոչ կարացին շարժել և ինքեանք անկան յիւրեանց զօրութենէ. ի տանջելն ամաչեցին, ի հարկանելն հիւանդացան, և ի ջարդարելոցն յաղթահարեցան: Քանզի նոր իսկ և ջքնաղ էն յաղթութեանս կերպարանք, որ ոչ մարդկան վայելէ, այլ միայն մեծազօրն Աստուծոյ. և այս իսկ զարմանալի է եկեղեցւոյ, ոչ զի յաղթեաց, այլ զի այսպէս յաղթեաց. հալածեալ, մերժեալ, պեսպէս

* Յօրինակին պակասի մեկնութիւն Ա. գլխոյն և 1 համարոյ Բ-ին:

1 Յօր. կազմեցին: 2 Յօր. Զյոյժ:

նեղուԹեամբք կռփեալ, և ոչ միայն նուաղել, այլ ևս քան զևս ամէն և բազմանայ. և առ այնչափ հնարս զոր մեծաւ փուԹով հնարէին, չարչարանացն միայն խափանէր զամենայն. որպէս և անդամանդ յուցանէ ըզհանդէս, զի հարկանելոյն միայն լուծանէ զզօրուԹիւն հարողին, և խԹան՝ աքացելեաց, որ ինքն ոչ ճնասի, և զոտս աքացողացն ծակոտէ. վասն այսր ամենայնի յիրաւի կոչեաց լեառն զեկեղեցի: Ապա եԹէ ոչ առնուցու յանձն հաւանել Հրէից, 'ի միս այլազիջկիկ այլակերպ յորջորջանս[1] անդստին անձամբ անձին առցէ զյանդիմանուԹիւնն. քանզի սոյն իսկ մարգարէ զգայլս և զգառինս արօտակիցս միմեանց, ասէ, լինել. և ձանձոց և մեղուաց, ասէ, շրջել զՅստուծոյ. և գետ յորդ և սաստիկ, ասէ, գալ հասանել 'ի վերայ Հրէից վասն չհաւատալոյ զխաղաղ ջուրն Սիլովհայ: Եւ եԹէ յախուռն 'ի բանն ոք ևեԹ հայիցին, յոյժ և անհնարինն գժուարին են առ իմանալ, այլ վասն որոյ իրիք որ ինչ 'ի սոցանէ նշանակելոց էր, առաւ բանքս 'ի վերայ նոցա. և այսպէս մնացեալ կարգի միտ դնեմք և ոչ բանիցն ասացելոց: Եւ արդ զինչ ինչ արդեաք նշանակեցան 'ի սոցանէ. 'ի գայլոցն և 'ի գառանցն՝ իւրաքանչիւր բազք մարդկան. զի կէսն վայրենամիտք և կէսն զգօնաբարոյք. իսկ 'ի ձանձոցն անամԹականէ՝ Եդիպտացւոցն[1] լպրծուԹիւն, և յորդախաղաց գետոցն՝ բազմուԹիւն զօրացն Ասորեստանեաց. քանզի ոչ կամեցան զջուրն Շիլովհայ, այս ինքն զհեզ և զհանդարտ զյուդայական ազգին զԹագաւորուԹիւն: Եւ այսմ որ և կարի ոք յոյժ անմիտ իցէ՝ չկարէ ոք բանիցդիմ լինել, Թէ չէցէ այսպէս: Արդ զոր օրինակ այս ամենայն այլ իմն անուամբք նշանակեցաւ և յայլ իրս կատարեցան, սոյնպէս և զհաստատուԹիւնն եկեղեցւոյ, զանշարժուԹիւնն, զանմեղկուԹիւնն, զբարձրուԹիւնն, զամրուԹիւնն՝ յորջորջանս[2] լերինն նշանակեաց: Միւս ևս մարգարէ զյուսացեալսն 'ի Տէր՝ լերինն նմանեցուցանէ, զի զամրական զանառիկ միտն յայտ առնիցէ. և աստ այժմ և ոչ բանից ինչ մեկնուԹեանն պէտք էն, քանզի ինքնին իրքն իրրև զիրող

1 Յօր. Գեւատացոցն:

2 Յն. ի ձեռն յորջորջման:

հնչէն, և լուսաւոր առնեն զկարգ եկեղեցւոյ. քանզի ոչ այնպէս սպայծառագոյն է արեգակն՝ որպէս և իրք եկեղեցւոյ լուսաւորագոյնք:

«Եւ տուն Աստուծոյ 'ի վերայ գլխոց լերանց»: Եւ զայս զիսիրդ կամիցի մեկնել Հրէից. քանզի ոչ եԹէ 'ի վերայ գլխոց լերանց շինեցաւ տաճարն. իսկ եկեղեցւոյ զօրուԹիւնն և արդ իսկ 'ի բարձունս երկնից եհաս, և որպէս տաճարի՝ որ 'ի գլուխս լերանց շինեալ իցէ և ամենեցուն յայտնի իցէ, սոյնպէս և ասէ յայտնի եղիցի ամենայնի:

«Եւ բարձրասցի 'ի վերայ բլրոց»: Ջնոյն մեկնէ, որ 'ի վերայ տաճարին ոչ երբեք կատարեցաւ, և ոչ միոչ կարծէին Թէ զբարիս ինչ գործեցին. քանզի և 'ի նոցունն իսկ 'ի Հրէից բազում անգամ Թշնամաներ տաճարն, և 'ի ձեռաց այլազգեաց աւերեցաւ: Իսկ եկեղեցւոյ զօրուԹիւն կրեաց պատերազմ, ևս աւելի և գժնդակ քան զնորայն, այլ ոչ երբեք ետ ձեռս պատերազմողացն, այլ բարձրագոյն և առաւել յայտնագոյն գտաւ քան զԹշնամիսն, մարտիւրոսացն գընդք, դաւանելոցն բանակօքն, որոց առաւել քան զերկաԹ հաստատուն ընտրէին ոգիքն, և լուսաւորագոյն քան զաստեղս երկնից. զի Թէպէտ և մարմինքն ծայրակտուր կոտորէին, սակայն միտքն 'ի պարտուԹիւն ոչ մատնէին, այլ հանդուրժէին և ժուժկալէին, և անԹառամական պսակօքն պսակէին: Ո՞ եւ տես, ո լուաւ, Թէ սպանուԹիւնք պսակս բոլորիցեն, և խողխողումն յաղԹուԹիւնս գործիցէ, և առաւել քան զզօրականն լուսաւորագոյնք, յորժամ սպառնեալքն առաւել քան զսպանողսն յոլովագոյն գտանիին:

«Եւ եկեսցեն հասցեն 'ի վերայ նորա ամենայն հեԹանոսք»: Յառաջ մատուցեալ մարգարէիս՝ ևս յայտնագոյն առնէ զբանն, և լուսաւորագոյն զմարգարէուԹիւնն, և յայտ յանդիման կարկէ զբերանս Հրէիցն. զի որչափ և լռիցին՝ սակայն ոչ կարեն զայս 'ի տաճարն կատարել. քանզի վճարեալ իսկ էր և սահմանեալ, զի ոք 'ի հեԹանոսաց 'ի տաճարն մի իշխեսցէ մտանել. և զինչ ասացիս ԹԷ 'ի տաճարն, ուր և նոցա իսկ ստէպ ստէպ սպառնային օրէնքն, զի մի իշխեսց

ցեն խառնակել ընդ հեթանոսս, նաև պատիժ ևս պատուհասի կրէին վասն այսպիսի իրաց. քանզի Մաղաքիա զամենայն իսկ զմարգարէութիւնն յայս ծալէ, առ՝ի պատուհասել, առ՝ի սպառնալ, առ՝ի պատիժս պահանջել եթէ մի՛ ոք իշխեսցէ ընդ օտարազգիս ամուսնանալ։ Իսկ առ մեզ ոչ այսպիսի ինչ, այլ ամենայն հաւարձակութեամբ ընդարձակեալ զգոյս երկնեցեալ, տարածեալ զերկիր, զամենայն ազգս տիեզերաց ընդունի օր ըստ օրէ. զայն և նախ ինքն իսկ կրօնիչն վարդապետք նային Հրամանի Տեառն....[1] եթէ երթայք աշակերտեցէք զամենայն հեթանոսս։

Եւ արդ միտ դիր, ղի ոչ միայն զկոչումն հեթանոսաց ակնարկէ մարգարէս, այլ և զյօժարութիւն հնազանդութեանն. քանզի ոչ ասէ՝ եթէ ածցեն ազգս բազումս, այլ թէ՝ եկեսցեն, զոր և միւս ևս մարգարէն յայտնագոյն ասէ, թէ Մի՛ ևս ուսուցանիցեն[2] իւրաքանչիւր զքաղաքացի իւր և իւրաքանչիւր զեղբայր իւր, թէ ծանիր զՏէր, այլ ամենեքեան իսկ ծանիցեն զիս՝ի փոքրկանց մինչև ցմեծամեծս։ Իսկ առ Հրէիւքն և արարածք իսկ դղրդեին, և սպառնալիք յաճախ և տանջանք հանապազորդ և նշանք յոլովագոյնք և մարգարէին ընթացք և օրհնադրին երկիւղ և պատերազմաց սպառնալիք և հինից արշաւանք և բարկութիւնք աստուածապատիժք և արհաւիրք յերկնից. և նոքա կային ճնային խստապարանոցք և անթլփատք՝ որպէս և գրեալ է. խստասիրտք և խստապարանոցք։ Իսկ հեթանոսաց բաւական են քանք միայն և լուր լոկ, և ամենեքին վազվազակի ընթանան. զոր և Դաւիթ ասէ ակնարկելով, եթէ ժողովուրդ զոր ոչ գիտէի՝ ծառայեաց ինձ. և զպայման հնազանդութեանն յաւելու զարմանալով. Եւ՝ի լուր ականջաց, ասէ, լուան ինձ։ Զոյն և Յակովբ առաքաւ ինն գուշակեալ ձառէ. կապեսցէ, ասէ, զորթոյն զաւանակն, և զընդակէնն զյաւանակ իշոյն. և ոմն ոք ետես կապեալ զընդակէ զյաւանակ, և հարստեալ զորթոյ և որթոյն ոչ մեղանչէցէ, և զպտուղն ոչ ապականիցէ. յանապատնս ոչ ոք

1 Յօբ. Բառ մի ջնջագիր՝ի մաշմանէ թղթոյն։

2 Յօբ. Ուսանիցեն։

գտանէ զայս, իսկ՝ի մարգիկ եղև և կատարեցաւ հաւատեաւ։ Հրէայք կապեալք բիւրապատիկ կապանօք, զկապանս խզեցին, զլուծն ընկեցին, որպէս և մարգարէն ասէ. իսկ հեթանոսք և ոչ միոյլ իւիք այսպիսի կապանօք կապեալք՝ի հարկէ, պատրաստագոյն գտան անոսալ, իբրև զյաւանակ մի տրմուղ, կապեալ զընդակէ, և ոչ ինչ եղծին՝ի հրամանացն, այլ զգօնայեալ կացին ճնացին, յուցեալ ամենևին զհնազանդութիւն։

«Հասանիցեն ժողովուրդք բազումք և ասիցեն, եկայք ելցուք՝ի լեառն Տեառն և՝ի գաւիթս Աստուծոյ Յակովբայ»։ Տեսանե՞ս, զի խնդան, ցնծան[1], և ժողովին, և զմիմեանս ժողովեն, միմեանց հրամայեն, և իւրեանց լինին վարդապետք. ոչ մի կամ երկու կամ երեք, այլ ամենայն ազգք խառնեալք՝ի միասին ընթանան։ Եկեսցեն հասցեն, ասէ, ազգք բազումք յամենայն գաւառաց. որ ոչ երբեք եղև Հրէից, այլ ոմանք թէպէտ և նուազունք ոք եկք մերձեցան, և նոքա մեծաւ քննութեամբ, և ոչ երբեք ազգք կոչեցան, այլ եկք. Եւ եկք, ասէ, առ քեզ մնանիցեն, և քեզ ծառայեսցեն։ Իսկ եթէ կայ և ճնայ տակաւին, յայլասացիկ յայլակերպ յորջորջման մարգարէն, կոչէլ լեառն Տեառն և տունն Աստուծոյ Յակովբայ, ընդայն ինչ մի զարմանայցես, որպէս յառաջագոյնն ասացի. մերթ բանայ մերթ խնու զմարգարէութիւնն, ղի միոյն տայէ պատճառս խմաստնոց առ՝ի միտ առնուլ զասացեալսն, և միւսոյն կալչիցէ զյանդգնութիւն անհաւատիցն, և յառենայն կողմանց առնէ բազմադիմի զձառն։ Եւ ընդ այն ինչ մի խառվիցիս, եղբայր, զի ասէ Աստուած Յակովբայ, զի և միածին Աստուծոյ Որդին՝ Աստուած Յակովբայ էր, քանզի նա ետ զօրէնսն և զամենայն արուեստս նա եցոյց առ նոսա. և զայս մանաւանդ՝ի հին կտակարանսդ է ուսանել, քանզի՝ի նորումն բնաւ և ոչ ձառք ինչ էն Հրէիցն. զի Երեմիա այսպէս ասէ, իբրև յերեսաց Որդւոյ, եթէ Հաստատեցից ընդ ձեզ կտակ նոր, ոչ ըստ կտակին՝ որ Հաստատեցի ընդ հարսն ձեր. և յայտ առնէ եթէ եր-

1 Յօր. Ցնծացան։

կոյունց օրինացն ինքն է օրէնսդիրը, և զի Յեգիպտոսէ և նա Եհան ընտա՝ յարէ ՚ի նոյն, Թէ Յաւուր՝ յորում կալայ զձեռանէ նոցա հանել յերկրէն Եգիպտացւոց։ Ցեսանէս, զի նա է որ Եհան ընտա, և նոյն արար զնշանս և զարուեստս և յԵգիպտոս և յանապատին։

«Եւ պատմեսցէ մեզ զձանապարհս իւր, և գնասցուք ընդ նա»։ Ցեսանէս, զի այլ ինն օրէնս խընդրեն, քանզի դիրքն ձանապարհ՝ զպատուիրանս Աստուծոյ սովոր են կոչել. զի եթէ զառաջինն ինչ կատարեցանայն ձառէր, ոչ ասէր Թէ պատմեսցէ մեզ, քանզի յայտնի և երևելի և ծանօթ ամենեցուն էր. և զի ոչ վայրապար ինչ ձարտարեալ ասիցէ ոք զայսպիսի բանս, ընթերցուածս իսկ կարէ հաւանեցուցանել և զայնոսիկ որ յայժ անամօթք իցեն. քանզի զձանապարհէ յիշեաց, ասէ՝ և զորպիսի ձանապարհ, և բազում նշանակ ՚ի մէջ գնէ, և մանաւանդ յաջորդաւն։

«Ի Սիոնէ ելցէն օրէնք և բան Տեառն յԵրուսաղէմ». և առ այս և ոչ բերան [1] անգամ կարէն բանալ լարշական Հրէից ազգի որդիքն. այլ զի զնորոց կտակարանացդ են ձառքս՝ և ՚ի տեղւոջէն և ՚ի ժամանակէն, և յայնցանէ ոչք ընկալան զօրէնսն, և ամենայն ուստեք միանգամայն է խմանալ։ Եւ նախ ՚ի տեղւոջէն իսկ ՚ի Սիոնէ լեռնէ. զի մովսէսական օրէնքն ՚ի լերինն Սինեայ տուան նախնեացն նոցա. և աստ զիաթրդ իցէ զի ՚ի Սիոնէ տացին։ Եւ ոչ զայս միայն համարի բաւական, այլ և զժամանակն ևս գնէ. քանզի ոչ ասաց Թէ ելին օրէնք, այլ Թէ ելցեն, որ հանդերձեալ էր, և իրաց՝ որ չև ևս էին լեալ։ Քանզի յորժամ մարգարէս զայս ձառէր, բազում ժամանակաւք յառաջ քան զայս ժամանակս տուեալ էին օրէնքն. իսկ նոր կտակարանք յետ բազում ամաց հանդերձեալ էին տալ, վասն այնորիկ ոչ ասէ Թէ ելին, այլ Թէ ելցեն, այսինքն առ յապա ժամանակս. դարձեալ անդրէն ՚ի տեղին իմն ապաւինի։ «Եւ բան Տեառն յԵրուսաղէմ»։ Հաւաստեաւ իմն նշանս զնորոց կտակարանացդ տայ. քանզի և յորժամ էին Տէրն՝ մերթ ՚ի լերինն նստեալ, և բարձրագոյն և գերկնից արժանի հրամանն տայր օրէնս, և մերթ յԵրուսաղէմ ջրջէր և ուսուցանէր. և իբրև նշանակեաց զտեղին և զժամանակն, ապա յաւելու ձառել զայնցանէ որք ընդունելոց էին զօրէնսն, զի յամենայն կողմանց կարկեսցէ զբերանս հակառակորդաց։ Եւ արդ ո՞ք իցեն որ ընդունելոց են զօրէնսն. մի եթէ Հեբրայեցւոցն բազմաքօրէն, կամ հրեական ժողովակոյսն. և ոչ ուրեք, այլ ՚ի հեթանոսաց հաւատացեալք. վասն որոյ և ածէ զնորին հետ, Թէ «Դատեսցի ՚ի մէջ հեթանոսաց». քանզի այս օրէնն է իսկ օրինացն՝ զի դատիցին, ընտրիցեն ՚ի մէջ ընդունելեացն։ Եւ զի ոչ վասն հնոյն է ձառս, անդստին իսկ յիրացն յայտ է. քանզի ոչ շաբաթ պահեմք, և ոչ թլփատութիւն ընդունիմք, և ոչ ոճս տարեկատաց, ունկնդիր լեալ Պաւղոսի՝ որ ասէր. Զի եթէ թլփատիք՝ Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ. և դարձեալ, եթէ՝ Զաւուրս խորէք և զամիսս, և զժամանակս և զտարեկանս. երկնչիմ զուցէ ընդունայն ինչ ուրեք ՚ի ձեզ վաստակեցի. ուստի յայտ իսկ է Թէ վասն նոցա են ձառք. զի ՚ի մէջ հեթանոսաց դատի՝ մեկնեսցէ այն առաքեալն որ ասէր, Թէ Յաւուր յորում դատի Աստուած զզաղտնիս մարդկան. և որպէս ինչ դատի, ըստ հինն կտակարանացն. և ոչ երբեք. այլ Ըստ աւետարանիս իմում՝ ասէ։ Ցեսանէս, զի Թէպէտ և այլազգիքդ իցեն, սակայն միաբն միաբանք. Եսայի ասէ. Դատիցի՝ ՚ի մէջ հեթանոսաց, և Պաւղոս ասէ, Թէ Դատիցի՝ ըստ աւետարանիս իմում։ «Եւ յանդիմանեսցէ զժողովուրդս բազումս». զայնոսիկ որ չընդունիցին և անցանիցեն զօրինաւքն. զոր և Քրիստոս յայտ յանդիման ասէր, եթէ Ես ոչ դատիմ զձեզ՝ այլ բանն իմ։

«Եւ ձուլեսցեն զսուսերս իւրեանց ՚ի խոփս, և զմկուռս իւրեանց ՚ի մանկաղս, և ոչ ևս առնուցուն ազգ յազգի վերայ սուր, և ոչ ուսանիցին տալ պատերազմ»։ Ոչ հաւատոյ բաւական զառաջինն նշանակին՝ մարգարէս, քանզի բազում է ձշմարտութեանն առաւելութիւն, վասն այնորիկ և այլ իմն ծանօթս տայ զնորոյ կտակարանացդ, որ լուսաւորելոց էին զամենայն աշխարհս հաւատոյն։ Եւ զինչ ինչ այն իցէ. խաղա-

1 Յր. պակասէր բառս Բերան։

ղուԹիւն և պատերազմանց ՚ի միջոյ բառնալ. զի յորժամ, ասէ, այս ամենայն լինիցի, այսպիսի ինչ յապահովուԹիւն աշխարհի լինիցի, զի և զպատերազմաց գործիսն ՚ի հողագործաց գործիս ձուլեացեն, զոր ոչ ոք երբեք ՚ի ժամանակս Հրէիցն գտանէ կատարեալ, այլ հակառակ սմին ամենայն ինչ ՚ի նոցա յուսուԹեանն գործէր, ձակատամարտ պատերազմունք ՚ի հեռաւորաց և ՚ի մերձաւորաց, նաև անդէն իսկ ընդ միմեանս բաղում անգամ կռուէին, և ՚ի միմեանց կոտորէին. և զայս ամենայն ՚ի ԹագաւորուԹենէն ոք հաւաստեաւ ուսանի, որ ամենևին զպատերազմանցն յայտ առնէ: Պատմեն և ամենայն իսկ մարգարէքն կանխասացիկ բարբառովքն, զպատերազմունսն և զնեղուԹիւնսն որ հասանելոց էին ՚ի վերայ նոցա առ յապահովուԹեան Եգիպտացւոցն, զամենայն աւուրս կենաց իւրեանց ՚ի պատերազմունս ծախեցին: Իսկ այժմ ոչ այսպիսի ինչ, այլ ՚ի բաղում խաղաղուԹեան բնակեալ են ամենայն տիեզերք. Թէպէտ և լինիցին ուրեք պատերազմունք՝ սակայն ոչ ըստ առաջնոցն, զի յայնժամ քաղաք ընդ քաղաքս և գիւղք ընդ գեւղս, և միանգամ ցեղընտիր լեալ ՚ի բաղում ցեղս բաժանէր. կամ զՅեսու կամ զԴատաւորսն Թէ ոք ընԹերևնուցու գտանէ, ուրչափ պատերազմունք ՚ի սակաւ ժամանակի ՚ի Պաղեստինացւոց աշխարհին գործեցան. և ոչ այս միայն բռնուԹիւն էր, այլ և ամենեցուն իսկ զկնի առնուլ հրամայէին օրինացն, և ոչ ոք կարէր ազատել զանձն յայնմ հարկէ. և ոչ առ Հրէայս ևԹէ պահեին այսպիսի օրինք, այլ և յամենայն աշխարհի, ուր ձարտարախօսք և փիլիսոփայք, որք աւելի քան զաղաքաղոնն այլ ինչ ոչ արկանէին զանձամբ, որ ինչ իրք ՚ի հարկէ ՚ի վերայ հասանէին, ասպարս և սուսերս առնուին և ձակատս յօրինէին. որ և յԱԹենացւոց իսկ ՚ի քաղաքին, որ ՚ի դատարկուԹիւն և ՚ի պարապս գեգերէին, Սոփկրատ Սոփրոնիսկեանց, և միանգամայն և երկիցս ելեալ պատրաստեր ՚ի պատերազմ: և գվնասուորն նոցուն ձարտարախօսացն ԴեմոսԹենէս, յաւուրն հրահանգացն բաղում անգամ յարուցեալ ելանէր ՚ի պատերազմ: զի

ելիէ զձարտարախօսն և զփիլիսոփայն ոչ առնէին աղատ ՚ի պատերազմանց օրինք ժամանակացն, զիաւրդ ևս արդեւք այլ բազմամբոխքն լինէին ազատ յայսպիսի հարկաց: Այլ այժմ ոչ այսպիսի ինչ տեսանեմք. քանզի արդարուԹեան արեգակն ծագեաց, և քաղաքք և բազմամբոխ ժողովք, և ազգք ամենայն այնպէս ազատաբար կեան յայսպիսի ձգանց, զի և ՚ի ձեռին անգամ ունել ոչ գիտեն զպատերազմական գործիսն, այլ ՚ի մէջ քաղաքաց ընդ անհոգ պարսպօք բնակեալ են յապահովս և այլ իմն օտար ՚ի պատերազմաց ուսանին ՀնամարտուԹիւն. և բազմամբոխ ժողովք ազատուԹեամբ կեան և անհոգ յապահովին յայսպիսի դժնդակ հարկաց: Զի Թէպէտ և լինիցին հեռի ուրեք պատերազմունք արտաքոյ քան զՀռոմայեցւոյ իշխանուԹեան սահմանս, ոչ քաղաքաց առ քաղաքս որպէս յառաջն լինէին, այլ դուն ուրեք յանկարծ. իսկ այժմ աւասիկ արև ընդ երկիր ծագէ, ՚ի ՊկղաԹ գետոյ մինչև ՚ի Բրետանացւոց կղզիսն, և հանդերձ այնու Լիբեացւոց կողմանքն, և առ հասարակ ամենայն երկիրն Եգիպտացւոց, և Պաղեստինացւոցն աշխարհն, իբրև զմի ազգ կայ ընդ հնազանդուԹեամբ՝ ընդ Հռոմայեցւոց տէրուԹեամբն. և դուք ձեզն իսկ գիտէք ուրչափ ազգք և աշխարհք նստին յապահով ՚ի խաղաղուԹեան, զլուր ևԹէ լսեն զպատերազմաց և զհանդէս արդեանց ոչ երբեք տեսանեն. կարէր Քրիստոս և զսակաւ ինչ մնացորդս պատերազմաց խափանել, այլ Թոյլ ետ զի խրատուս պատճառք լինիցին ծուլացելոցն, զի որք ՚ի խաղաղուԹեանն յողանայցեն, յաստատակէ հինիցին զարԹնուցումն: Նաև մարգարէսն իսկ՝ որոց հաւաստեաւ կարացեն նայել, զսոյն իմն ակնարկէ, որպէս յառաջագոյն իսկ ասացի. ոչ ասէ ԹԷ բնաւ չլինիցի պատերազմ, այլ ասէ. «Ոչ առնուցու ազգ յազգի վերայ սուր»[1]. և զի բազմամբոխ ժողովոցն նշանակիցէ զաղաւաուԹիւն, «Եւ ոչ ևս, ասէ, ուսանիցին տալ պատերազմ»: Այսպա ուրեմն գիտէ՞ ոք տալ պատերազմ: և ոչ երբեք. բայց ՚ի սակաւ զինուորսդ՝ որ յայն միայն իցեն կրԹեալ և կարգեալ:

1 Յես. Բաղումաբոխ:

«Եւ արդ դու տուընդ Յակովբայ, եկայք եղցուք ՚ի լոյս Տեառն, զի եթող նա զժողովուրդ իւր զտունն Յակովբայ»։ Եւ իբրև կատարեաց զեկեղեցւոյ մարգարէութիւնն՝ դարձեալ լինգանէ անգին ՚ի կարգ ընթերցուածոցն, զի կարգաւ զբանսն վարիցէ յառաջ. զի այսպիսի լինի սովորութիւն և մարգարէիցն, ոչ միայն ասացելոցն անյայտութեան, այլ և կարգելոցն[1] կերպարանօք ծածկել զմարգարէութիւնն. վասն ո՛ր ոչ կատարէ իսկ զբանն, այլ իբրև թէղ ք[2] ՚ի արձակեաւ. դարձեալ անդրէն դառնայ տալ խրատ Հրէից։ «Եւ դու, ասէ, տուն Յակովբայ, եկայք երթիցուք մեք ՚ի լոյս Տեառն», ՚ի պատուիրանս նորա, յորոց էին պատուիրանք օրինացն և լոյս և կեանք և յանդիմանութիւն և խրատ. և մարգարէն Դաւիթ ասէ. Պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց. և ճրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս շաւղաց իմոց. և ՚ի բազում տեղիս գտանես զլոյս կոչեն օրէնք. և Պաւղոս ասէ. Յուսացեալ ես յանձն քո, առաջնորդ լինել կուրաց, լոյս խաւարելոց և վարդապետ տղայոց. զի ոչ այնչափ լուսաւորեն ճառագայթք արեգական զաչս՝ որպէս պատուիրանք օրինացն լուսաւորեն զաչս ոգւոցն։ Եւ արդ, զի յայտ առնիցէ մարգարէն, թէ յառաջ քան զՀատուցումն վարձուց, ՚ի կատարել պատուիրանացն տան մեզ զՀատուցումն պատուիրանքն, վասն այնորիկ լոյս կոչէ ընդոստ. զոր օրինակ ասէն լուսաւորելոյն գործէ մեզ շահս, նոյնպէս ոգիքն հաւանելով օրինացն՝ յաճախեն մեզ պատուղս. յորժամ սրբիցին և աղատիցին ՚ի չարեացն, և յառաքինութիւնս ևեթ ուշ եդեալ նայիցին. որպէս զի որք յանցանեն և յառաջ քան զժանջանան՝ խղճիւ յանցանացն հաշին, և առաւել քան զայնոսիկ որ նատիցին ՚ի խաւարի՝ ևս հիւթագոյնք են, յորժամ ահն և երկիւղն և կասկած սրտին զմիտս հարկանիցէ, ՚ի միջօրէի իբրև ՚ի գիշերի զարհուրին յիրագիտէ մտացն խղճէ։ «Եթող, ասէ, զժողովուրդ իւր՝ զտունն Յակովբայ»։ Ընդ վայր եհար, անտես առ

1 Յօր. չկարգելոցն, է օտար գրչաւ։

2 Ա.յապէս Յօր. կամ Ցե. սիրոյ, այսինքն՝ չզթոյ։

րար, ՚ի ձեռաց եթողոյ, մերկ կապուտ կացոյց յամենայն դարմանոյ։ Ապա իբրև երկեցոյց՝ ասէ և զպատաճառս իրացն, զի ուղղեսցէ ածցէ զնոսա ՚ի ձանապարհն։ Իսկ արդ զինչ իցէն պատճառքն։

«Լացաւ, ասէ, իբրև զառաջինն[1] երկիր նոցա հնամեայիւք՝ իբրև զայլազգեացն»։ Վերադոյնն վասն գինեվաճառիկ արուեստի և վասն արծաթասիրութեան, և անտես առնելոց զօրքս և զպիրս պատուհասէ, իսկ աստ վասն կրօնից իմն չարաց և խմորոյ ամբարշտութեան, որ առ սակաւ սակաւ ձգէին զնոսա ՚ի դիւացոյ մոլորութիւն. և զի առաւել մօրմոքեցուցանիցէ, ոչ ասէ թէ հնամեայն լոկ, այլ Լացաւ, ասէ, երկիր նոցա հնամեայիւք, զի զառաւելութիւն չարեացն յայտ առնիցէ. որպէս և վերագոյնն՝ ոչ ասաց եթէ ժողովուրդ մեղաւոր, այլ՝ ժողովուրդ լի մեղօք, և աստ՝ թէ լացաւ. և զի ձգիցէ զնախատինսն, յաւելոյ՝ Իբրև զառաջինն. զառաջինն յորժամ զԱստուած ձանաչէին, և զօրէնսն չէ էր ընկալեալ, և զերախտեացն ինչ փորձ չէ էր առեալ, մինչ ընդ հեթանոսս էին, որ ամենևին իսկ[2] պարտաւանք էին. զի յետ այնչափ խնամոց և դարմանոց ոչ երբեք եղեն պիտանիք։ Եւ ոչ յայս միայն կայ, այլ զի և ևս կսկծեցուցանիցէ, յաւել թէ Իբրև զայլազգեացն. համեմատութեամբ երեսացն սաստկացուցանէ զամբաստանութիւնն. զոր և Պաւղոս սովոր է սաստպատնել. յորժամ ասէ, եթէ վասն ննջեցելոցն ոչ կամիմ եթէ տգիտք իցէք, եղբարք, զի մի տրտմիցիք իբրև զայլեսն՝ որք ոչ ունիցին յոյս. և դարձեալ, թէ ձանաչել իւրաքանչիւր զիւր ամանս ստանալ ՚ի սրբութիւն. մի ՚ի հարուածս ցանկութեան. և չատացաւ այսու միայն, այլ յաւել, թէ Որպէս այլ հեթանոսքն որ ոչ գիտիցեն զԱստուած. զի այսպէս իմն մանաւանդ սովոր է բանն կսկծեցուցանել և զայնոսիկ որ կարի որք յոյսք իցեն։ Զի եթէ Հրէայք այսպիսի բանիւք պատուհասէին, մեք զինչ պատասխանի ունիցիմք, կամ նեբրեալ Թողութեան, որք յետ այսչափ շնորհաց և անձառ պատուոյ, և անմահական յուսոյ,

1 Յօր. Պահասի Էրբե զառաջինն։

2 Յօր. Աստն և ՚ի միակ։ Ցե. յետին պարապանք։

գարձեալ անդրէն ՚ի նոյն մոլորութիւն փութացեալ կործանիցիմք։ Քանզի և այժմ բազումք են որ այսպիսի ախտիւ ջերանին, և ապականեն զիւրեանց վարուցն առաքինութիւնս. որք զՀմայեան անհանգար մրոտաք հմայեն, և Աստուծոյ հրամանացն հակառակ գտանին, և աւելորդ որտմութիւնս անձանց գանձեն, և զառաքինութեան քաջութիւնս՝ ծուլութեամբ կորուսանեն. քանզի յայն իսկ փութացեալ սահիպէ սատանայ առնելին զանմիտսն, կարծեցուցանել թէ ոչ զառաքինութիւնն յանձանց գործիցեն, և ոչ զչարութիւն, և ոչ ազատութեամբ անձնիշխանութեանն իցեն պատուեալք. զերկուս զայս յոռութիւնս կամեցաւ ուղղել Աստուած, զորս ջանացաւ խանգարել թշնամին, զի և յառաքինութենէ վատակօղն մեղկացուցանիցէ, և զմեծ պարգևս անձնիշխանութեանն բառնայցէ. հմայիւք, կիսիւք, խըրատանօք աւուրց և ժամանակաց, դժնդակ կրօնիւք, բախտաբաշխն հրամանօք, կարծականն ձախատագրօք, և բազում ևս այլ այսպիսի գժնդակ հիւանդութիւն եմոյծ ՚ի վարս մարդկան. և զամենայն վերՙի վայր հարեալ կործանեաց, զի Աստուծոյ օգնականութեանցն կարիցէ վերիպեցուցանել. վասն այնորիկ մարգարէս յոլովագոյն իմն զամբաստանութիւնն ՚ի մէջ բերէ, զի արմատաքի խլեսցէ զայսպիսի ցաւս անհնարինս։

«Որդիք բազումք այլազգիք ծնան նոցա»։ Զինչ իցեն որդիքն այլազգիք. այլ օրէնք ՚ի վաղուց հետէ էին առ նոսա, վասն այսր և անդր դանդաչական մրտացն, և արագախաբիկ խորհրդոյն իւրեանց, զի միերբեք ընդ այլազգիս խնամութիւնս խառնիցեն, և այնպիսի ազգախառնութիւնն լինիցի նոցա պատճառք ամբարշտութեան. զի ոչ եթէ զայլս միայն չկարէին ուղղել, այլ և ոչ զայլոց վնասակարութիւնս կարէին յանձանց ՚ի բաց մերժել, օրինօքն պարսպեաց[1] վնասա, և ՚ի խառնակելոց ընդ այլազգիսն զգուշացոյց, զատ մնիցեաց, ուրոյն բնակեցոյց. օրէնք ուրոյնք, կարգք ուշոգիք, պարտ և պատշաճ էր նոցա

1 Յօր. Պարսաւեաց։

որք սիրեցանն յԱստուծոյ՝ պահել զամենայն զգուշութիւնսն որ հրամայեցան յԱստուծոյ. այլ որպէս զայլսն պատուիրանօքն անցին՝ և յայսմ գտան ծուլացեալք. զի ընդ մերձաւոր այլազգիսն խնամութիւնս խառնէին, և նուաստս[1] ՚ի տուն՝ ՚ի Մովաբացւոցն և յԱմմոնացւոց աշխարհէն ածէին, և յայլ ևս ազգաց ամբարշտելոց. և այսպէս ընդ օտարոտիսն ազգակառնութիւնս առնէին, զի ածիցեն զչարեաց վարդապետսն ՚ի տուն, և զհայրենի անմեղ սովնութիւնս դժրիցեն. արդ վասն այնորիկ հանդերձ այլովքն և այսու ևս պատուհասէ զնոսա մարգարէն։

«Լացաւ երկիր նոցա ոսկւով և արծաթով, և ոչ էր համար գանձից նոցա. լացաւ երկիր նոցա երիվարօք, և ոչ էր թիւ կառաց նոցա»։ Եւ թերևս ասիցէ ոք, թէ զինչ պէաս էր ինչս առնել և երիվարս ստանալ, և մանաւանդ այնպիսում աղքի՝ որք զգաստական կրօնից ձգմարտութեան չէին ընդելք։ Եւ արդ զինչ ասացուք առ այս։ Ոչ եթէ զպէտս ընչից խոտէ, այլ զգժընդակ միտսն, զի ոչ յօգուտ զինչն ստանայ, այլ՚ի պէաս. զոր օրինակ յորժամ ասիցէ, թէ Վայ ձեզ հզօրդ Իսրայէլ, ոչ եթէ զզօրութիւնն ինչ աղաղտիցէ, այլ զայնոսիկ որ զզօրութիւնն ՚ի չարիս ինչ ծախիցեն. նոյնպէս և աստ, ոչ եթէ ստանալ ընչից խոտան իցէ, այլ զի բազում յանձախութեամբ, և աւելի քան զպէտսն ժողովէին։ «Եւ ոչ գոյր, ասէ, համար գանձուցն նոցա». և ոչ այս միայն, այլ զի յղփութեամբ ընչից զԱստուած ոչ յիշէին, հըպարտացեալք յընչից մեծութիւնն, յերիվարացն զօրութիւն, և յԱստուծոյ յուսոյն զանձինս ՚ի բաց մերժէին. որպէս և յայլում վայրի ասէ մարգարէն. Վայ այնոցիկ որ յուսացեալ իցեն ՚ի զօրութիւն իւրեանց և ՚ի բազուկ մեծութեան իւրեանց պարծեսցին. և Դաւիթ ասէ, թէ Ոչ ապրեսցի թագաւոր ՚ի բազում զօրս իւր, և հսկայ բազում զօրութեամբ իւրով. և ՚ի միւսում սաղմոսի, թէ Ոչ ընդ զօրութիւնս ձիոյ կամեսցի, և ոչ ընդ իրանս[2] առն հսկայի հաճի, այլ հաճի Տէր ընդ երկիղածս իւր։

1 Ս. սխինքն՝ հարսունս կամ նուաստս։ 2 Յօր. Սրանց։

«Եւ լցաւ երկիր նոցա գարշելեօք գործոց ձեռաց իւրեանց, և երկիր պագին այնոցիկ զոր արարին մատունք իւրեանց»։ Զոր օրինակ բժիշկ մի իմաստուն, նոյնպէս և մարգարէս նախ քան զգաւսն՝ զպատճառսն ուստի ախտն բղխեալ էր՝ ասէ. քանզի պատուհասեալ էր զամբարշտութիւն նոցա, յառաջագոյն զպատճառս ախտին յայտ առնէ. զարծաթասիրութիւնն, զամբարտաւանութիւնն, զանարժան լինամութիւնան. եթէ յայսոսիկ իրաց առ սակաւ սակաւ կործանեցան անկան՝ ի խորխորատ կորստեան, զի և կռոց երկիր պագին. և արդ զի հեգնիցէ՝ յերդ արկեալ զպատճոն նոցա, ածէ զնովքիմք թէ՝ գործոց ձեռաց իւրեանց։ Զի՞նչ ինչ քան զայն ծաղր կայցէ, յորժամ մարդ՝ արարիչ աստուածոց լինիցի. իսկ գարշելիս՝ դիրք սոքոր են զկուռսն կոչել, ուստի և պղծութիւն աւերածոյ կոչի պատկերն՝ որ կանգնեցաւ՝ ի տաճարին Սատուածոյ. Յորժամ տեսանիցէք, ասէ, զպղծութիւն աւերածոյն, զի կայցէ՝ ի տուրբ տեղւոջն, որ ընթեռնուն՝ ի միտ առցէ։ Վասն որոյ և Հրաման ետ վճիռ արար յանապատին, եթէ ամենայն պատկերի երկիր մի պագանիցիք, զորս պիղծս և գարշելիս իսկ կոչեաց, զի հեռացեալ կարձեցուսցէ զնոսա յամբարշտութենէն. զի գարշելի այն ինչ կոչի՝ որ կարի աղտեղին էր, պիղծ ինչ, նողկ, անսուրբ։ Եւ արդ գարշելի զայն ինչ որ ատելի էր և զերեսս դարձուցանելի՝ կոչեն զիրք. ամենայն կուռք այսպիսի ինչ են։ «Եւ երկիր պագին այնոցիկ, զոր արարին մատունք իւրեանց. և խոնարհեցաւ մարդ, և յերկիր կործանեցաւ այր»։ Զի զոր օրինակ Սատուածոյ երկրպագութիւնն՝ ի բարձունս հանէ, նոյնպէս և կռոցն՝ խոնարհեցուցանէ և յերկիր կործանէ։ Ո՞ր թշուառական քան զայն մարդ կայցէ, որ՝ ի փրկութենէն վրիպիցի, և զամենեցունն Սատուած թշնամի անձինն ստանայցէ, անշնչականացն անկեալ երկիր պագանիցէ, և զանմուռնչ քարինս՝ թաւալեալ աղաչիցէ. զի Սատուած յայսոսիկ ինչ պատիւ եհան զմեզ, զի և քան զերկինս բարձրագոյնս արասցէ. իսկ սատանայ այնպէս վհութացաւ ի՛ջուցանել՝ ի վատթարութիւն զիւր հաւանեալն, զի և քան զանհանձարան անհանձարա-

գոյնս արասցէ. վասն որոյ և մարգարէս իսկ ասէ, եթէ խոնարհեցաւ մարդ և յերկիր կործանեցաւ այր։ Եւ թէպէտ և այսպիսի ամբաստանութիւն բաւական էր զնոսայիս ազատել յայսպիսի ախտէ, այլ քանզի բազումք՝ ի մարդկանէ ոչ այնպէս՝ ի մեղացն որպէս՝ ի պատժոցն երկնչին, ածէ յարէ՝ ի նոյն և զտանջանսն։

«Եւ արդ ոչ, ասէ, ներեցիք նոցա». չանսացից, չթողից, այլ պահանջեցից վրէժս, և ածից պատիժս յանցուցելոյն։ «Եւ արդ երթայք մտէք՝ ի քարածերպս, և թաքերուք յերկրի յերեսաց ահի Տեառն»։ Յորժամ յերդ արկեալ հեգնեաց զերկրպագութիւն կռապաշտիցն, ապա և՝ ի կերպարանաց գործոցն եղոյց զնոցա անհանձարութիւնն, և զկռոցն տկարութիւնս՝ զանայ բանիւ միւսանգամ զհանդէս իրացն յայտ առնել. բաւական էին այսմ, ասէ, և ինքեանք մարդիկ անդոմնեալ զիւրեանց անմտութիւնն, բայց քանզի առաւել ինն արբեցութեամբ ամբարշտութեան թըմբրեալ էին, և զյայտնի և զերևելի իրս չտեսանէին կուրութեամբն, այսպիսի ինչ չարիք գայցեն հասանիցեն՝ ի վերայ քաղաքին, զի և որ կարի ոք անմտագոյնք էցեն՝ կարիցեն վարդապետք լինել, թէ ո՛րչափ Սատուածոյ զօրութիւնն է, և ո՛րչափ կռոցն տկարութիւն. և վասն այնորիկ յառաջ քան զհինն ձառէ զայն ինչ որ՝ ի հինէն անցք անցանելոց էցեն, հրամայէ առնել, ՝ի քարածերպս մտանել, և՝ ի փապարս երկրի թաքչել. ոչ զի զայս այսպէս առնիցեն, այլ զի յայնմանէ ուսանիցեն զՍատուածոյ զանհանդուրժական արձակեալ բարկութիւնն։

«Թաքերուք, ասէ, յերեսաց ահի Տեառն, և՝ ի փառաց զօրութեան նորա, ՝ի ժամանակի իբրև յարիցէ վանել զերկիր»։ Եւ ոչ ասէ լոկ՝ ի զօրութենէ, այլ՝ ի փառաց զօրութեան նորա. քանզի այսպիսի ուղղութիւնք են նորա, այսպիսի նշանք յաղթութեանց, երևելիք և յայտնիք։ Եւ ինձ այսպէս թուի թէ զյաղթութիւնսն որ առ Եզեկիայիւ արքայիւ եղեն նշանակէ ասա. երկիր՝ զբազմութիւն զօրացն կոչէ, և վանել՝ զկործանուածն, և յարութիւն՝ զվերակացութիւնն. քանզի և Դաւիթ այսպէս ասէ, թէ Յարիցէ Սատուած և ցրուեսցին ամենայն թշնամիք նորա. և

գարձեալ, Թէ Աբի Աստուած և գատեա զերկիր։ Ի մարդկեղէն կերպարանաց զԱստուծոյ զաղդեցիկ զօրութիւնն նշանակէ դրոշմէ։

«Չի աչք Տեառն բարձունք են և մարդ խոնարհեալ և տառապեալ»։ Իսկ զի մի՛ ոք յայնցանէ որ՝ի ժամանակին լսիցեն՝ չաւատացէ ասացելոյն, քանզի անյոյս և անկարծ իմն լինելոց էին իրքն առ յառպա, վախստական անկանի՝ի զօրութիւն այնորիկ որ զայնն կատարելոց էր. և զի զտկարութիւն այնոցիկ որ ընդունելոց էին զպատիժն՝ յայտ արասցէ, ասէ՝ ոչ քան զԱստուած ոք բարձրագոյն է և ոչ քան ըզմարդ ոք խոնարհագոյն։ Եւ արդ մի՛ ինչ երկմտիցին, ասէ, Թէ այնպիսի մեծն և հզօրն, զտառապեալսն այնպէս խոնարհեցուցանել կարէ։ Եւ բարւոք ասաց՝ եթէ Աչք Տեառն բարձունք, և ոչ՝ զօրութիւն Տեառն, զի ցուցցէ եթէ երեսացն միայն երևելն բաւական է զամենայն հակառակորդսն կործանել. զոր և Դաւիթ այլազգ իմն ասէ, Թէ Ո հայի յերկիր և տայ դողալ նմա. և այլուր, Թէ Նայեցայց առ նա և յաղթեցից նմա։

«Եւ խոնարհեսցի բարձրութիւն մարդկան, և բարձրասցի Տէր միայն յաւուր յայնմիկ». զի յորժամ զարմանալի յաղթութիւնն լինէր, և լուսաւոր և չքնաղ նշանք յաղթութեանցն կանգնէին, ապա և դէպ յանդիմանէին և կուռք անարգէին, և սուտ մարգարէքն կարկէին, և բռնութիւն հինին՝ի պարտութիւն մատնէր, և ամենայն բերան բացեալ ընդդէմ Աստուծոյ՝ պատանձէր։ Վասն այնորիկ ասէ, Թէ Բարձրասցի Տէր միայն, և ոչ ևս ոք իցէ որ ընդդէմ դառնայցէ, և ոչ այն որ երկիւղ լինիցի Աստուծոյ զօրութենէն, որ այնպէս և զհանդէս իրացն կատարելոցն յայտնադոյն ցուցանէ. քանզի բնութեամբ ունի միանձնաւոր զբնութիւնն, և ոչ եթէ սկզբամբ ինչ սկսանի բարձրանալ, այլ է իսկ միշտ բարձրեալ՝ի բարձունս. և բարձրանալ յայն սակս ասի՝ յորժամ միաք հակառակորդացն և ընդդիմակացն առնուցուն հանդէս լիրացն ինչ՝ որ գայցեն՝ի վերայ նոցա Աստուծոյ բարձրութենէն, առ՝ի խոնարհել և զպատշաճ փառաւորութիւնն տալ միայն բարձրելոյն։

«Չի օր Տեառն հասանելոց է՝ի վերայ ամենայն թըշնամանողաց և ամբարտաւանից, և՝ի վերայ ամենայն բարձանց և հպարտից, և խոնարհեսցին. և՝ի վերայ ամենայն մայրից բարձանց Լիբանանու, և՝ի վերայ ամենայն ծառոց կաղնեաց Բիշանու, և՝ի վերայ ամենայն պարսպաց բարձրացելոց, և՝ի վերայ ամենայն նաւաց ծովու, և՝ի վերայ ամենայն տեսլեան գեղեցկութեան նաւաց. և խոնարհեսցի ամենայն բարձրութիւն մարդկան, և բարձրասցի Տէր միայն յաւուր յայնմիկ»։ Պարիսպս և մայրս և բլուրս՝ աստ զմարդիկ զօրաւորս կոչէ. բարձրութեան, ծառոց փոփոխականն յորջորջմամբ՝ զզօրութիւնս նոցա յայտ առնէ. և նաւուք և գեղեցիկ տեսլեամբ նաւաց՝ զշահաւէտ զմեծութիւնս նոցա ակնարկեաց. և զոր ասելս կամի՝ այսպիսի ինչ է, եթէ՝ ամենայն հզօր և ամենայն բռնաւոր և ամենայն զօրավար և ամենայն մեծութիւն և ամենայն իսկ զօրութիւն և վայելչութիւն մարդկան՝ կասեսցի և խափանեսցի. և ոչ ինչ իսկ է որ կարիցէ ապրել յԱստուծոյ բարկութենէն. ոչ մարմնոյ զօրութիւն և ոչ տեղեկութիւն պատերազմաց, ոչ ընչից առաւելութիւնք, ոչ բռնաւորաց ձոխաձանութիւնք, ոչ զօրավարաց յաձախագունդ գումարութիւնք, և ոչ այլ ինչ յայսոցանէ։ Մայրից Լիբանանու վասն այնորիկ նմանեցուցանէ՝ զի առ նոսա մծծ է Լիբանան. կամ որպէս մայրքն մերձ էին, նոյնպէս և բարկութիւնն ընդ հուսկ ժամանակս գալոց էր։ Իսկ՝ի տեսիլ գեղեցկութեան նաւաց՝ ըզզօրաւարացն փառաւորութիւն, զընչից յաձախութիւն, զղինուցն յոլովութիւն, զսպասաւորացն վայելչութիւնս առակէ։ Դարձեալ զի և՝ի հեռուստ գալոց էին թշնամիքն, թուի ինձ Թէ յայն սակս տարագիր նաւուց նմանեցուցանէ։

«Եւ զձեռագործս իւրեանց զամենայն տարցին և Թաքուսցեն յայրս և՝ի փապարս վիմաց, և՝ի սուրս երկրի յերեսաց ահի Տեառն, և՝ի փառաց զօրութեան նորա,՝ի ժամանակի՝ իբրև յարիցէ հնազանդել զերկիր»։ Չի այնչափ՝ի ձեռաց Թողցուցեն զնոսա դիքն իւրեանց առ՝ի տալոյ զմարտիցն օգնականութիւն, զի ոչ միայն զմարդիկ կոչիցեն

19898 -59
(57133 38)

յօգնականութիւն, այլ և զտեղեաւն ամրութիւնս՝ առ ի չանկանելոյ ի բուռն։ «Նա յերեսաց ահի Տեառն և ի փառաց զօրութեան նորա, ի ժամանակի՝ իբրև յարիցէ վանել զերկիր»։ Զի ոմն ոք հինին առաքեալի համարեսցի զպատճէն, եթէ իւրեանց ինչ զօրութեամբ առաքեսցեն զաշխարհն՝ հանել զերկիւղն առ ամենեցունն Աստուած. նա է, ասէ, որ ածէ զպատերազմն, և նորա է զօրութիւնն. զի այսպիսի սպառնալիք ածցէ յուղղութիւն զանձնոսիկ՝ որ ի վաղուց հետէ էին մեղուցեալ։

«Յառուր յայնմ բարձցէ մարդ զդարչելիս իւր զարծաթեղէնս և զոսկեղէնս՝ զոր արար իւր՝ երկիր պագանել մնոտոյն չղջիկանացն, մտանել ի ծակս առապար վիմաց և ի փապարս քարանձաւաց, յերեսաց ահի Տեառն և ի փառաց զօրութեան նորա, ի ժամանակի՝ իբրև յարիցէ վանել զերկիր»։ Բաւական և այն էր՝ որով և յերգ իսկ արկեալ հեգնէր զնոսա. բայց յայտ առնէ թէ հանդերձ աստուածոլքն թաքչելոց էին յերկրի և ընդ փապարս մտանելոց, այնպէս զի և դարանքն ևս չէն բաւական առ ի ծածկել ի խուճապական բարկութենէն, որ եկեալ կայցէ ի վերայ։ Դարձեալ և դիշերի չղջիկանս ևս կոչէ զկուռսն՝ վասն անհնարին տկարութեան կամ վասն խաւարին մոլորութեանն, և զի աւելոյն ինչ դիւացն ի ծածուկ գործէր. զոր օրինակ դիշերականն չղջից՝ արև և լոյս թշնամի են, և դիշեր և խաւար սիրելի, նոյնպէս և դիւաց և որոց ի նոցանէ իցեն մոլորեալք՝ չարիք և անօրէնութիւնք ընդելականք և սիրելիք, և առաքինութիւնք և լուսոյ գործք՝ թշնամիք. զի ի ծագել լուսոյն խաւարին։ Եւ ոք ի քաջութենէն կեցցեն՝ չէն ինչ կարօտ աշխատութեան և վաստակոյ, քանզի բաւական է յայտնութիւն միայն քաջութեանն, և վաղվաղակի խափանին դանդաղականքն։

«Լռել ձեզ ի մարդոյն՝ յորում գոյ շունչ յընդգունս նորա. զի որո՞ւմ արդեաք նմանութեան նմանեցաւ նորա»։ Այսպէս ինձ այսպէս թուի՝ թէ ղեղեկիայ աբբայէ ակնարկիցէ. քանզի յահէն և ի բազում խուճապանացն, և իբրև ընդ աղօտ լիմն շունչ յընդունս առնէին։ Քանզի ի վարմարկել զնա հինին, այնպէս համարեին թէ արդ եկեալ անկեալ էցէ ի բուռն որոմն, զի և ոչ աշխատութեան ինչ պէտք էցէն առնուլ զքաղաքն, և վարել զթագաւորն ի գերութեան. և զայն ոչ առնուին ի միտ, թէ այն եղեռն՝ ի նոցին գլուխն կատարեր. վասն այնորիկ ասեր մարգարէն, թէ «Լռել ձեզ ի մարդոյ անտի յայնմանէ՝ յորում գոյ շունչ յընդգունս նորա». եթէ «Որո՞ւմ նմանեցուցէք զդա». միթէ անօրէնն թագաւորացն, որք ոչ ունէին շունչ փրկութեան. դա՝ ասէ, զոր առ ոչինչդ համարեցայքդ, զոր անգոանեցէքդ՝ թէ երթամք և առանց աշխատութեան առնումք զքաղաքն, գտանիցի փառաւորեալ քան զամենեսեան Աստուծոյ օգնականութենէն, զձեզ հարկանիցէ աղօթիւք և ինքն զանձն և զքաղաքն ապրեցուցանէր։ Այն իսկ է՝ զի յոչինչ համարեցաւ, զի իբրև յասպատակի լիմն կարծէին զամենայն առնուլ, և դիպեցաւ ամենևին նորին հակառակն. որ ոչն ինչ համարէր ձեզ, այլ արհամարհելի և դիւրաւ հնազանդելի, նա քան զամենեսեան պայծառագոյն երևեսցի վայելեալ Աստուծոյ օգնականութեանն։

ԳԼՈՒԽ Գ.

«Ահաւասիկ Տէր, Տէր զօրութեանց բարձցէ ի Հիւսաստանէ և Յերուսաղեմէ զայր հզօր և զկին զօրաւոր»։ Զոր օրինակ բժիշկ ձարտար մերթ խրիցէ, մերթ հատանիցէ, մերթ դառն ինչ դեղս ըմպել տացէ, առ ի հնարել զցաւածացն առողջութիւն, սոյնպէս և մարգասէրն Աստուած պէսպէս սպառնալեօք՝ առ ի սնդել զծուլութիւնն և զմեղկութիւնն Հրէից, մերթ հինից ասպատակօք երկեցուցանէ զանհաւատսն. իսկ արդ՝ ահաւասիկ յառաջ քան զվինն սրշաւանան՝ այլով իմն սաստիկ սպառնալեօք երկեցուցանէ, և պէսպէս սպառնալեօք յաստուած պահէ ի նոսա զերկիւղն. զի մերթ հիւանդութեամբ և սովով և երաշտութեամբ, ոչ միայն

կարևորօք, այլ այնպիսեօք՝ որ ոչ ինչ նուաղագոյն քան զպիտոյն՝ ունիցին հաստատուն զկեանս մեր. զի ոչ սոյն միայն գառնագոյն է, այլ և անվերակացու յառաջնորդաց կալ, որ և զլիուԹիւնն՝ գժնդակագոյն քան զսոյն սովոր է յուցանել: Զ[ի]նչ օգուտ էր Թէ իբրև զաղբեւրս արտաքուստ բարուԹիւնքն բղխեցեն, և՝ ի ներքոս չընտանեացն կոտորածք գործիցին, և կամ յորժամ ծով յուզիցի և զալիսն վեր՝ ի վայր կուտակիցէ, և ոչ ուղղիչ նաւին՝ ի Թիկանց, և ոչ յառաջապահք դիտաւորք որ ընդ ալիսն կռուիցին՝ գտանիցին, առ զերծուցանել զնաւն՝ ի նաւահանգիստ. իսկ յորժամ ոչ առաջնորդք էին, և սոյն սաստկացեալ՝ անհնարին աղէտք և կորուստ: Զայս ամենայն սպառնացեալ Աստուած, և նախ՝ որ քան զամենայնն ահագին է. «Ահաւասիկ, ասէ, Տէր զօրուԹեանց»: Զահաւասիկն լինն առաջն գնեն ստէպ մարգարէքն՝ յորժամ հաւանել զլսօղսն կամիցին վասն իւրաց ինչ՝ զոր ձառիցեն. զահաւասիկն յաձախագոյն գնեն, ոչ աստ միայն, այլ անդուստ՝ ի վերուստ իսկզբանէ, և՝ ի քնէ է իմանալ. և զի մարմնաւոր հիւանդուԹիւնք բազում անգամ վասն մեղաց գան՝ ի վերայ, որպէս Կայենին, քանզի ոչ բարւոք վարեցաւ զօրուԹեամբն, յիրաւի եղև անդամալոյծ. նոյնպէս և յայնմ որ յաւազանին Բեդհեզդա անկեալ գնէր՝ մեղք էին պատճառք անդամալուծուԹեանն, քանզի և ասէր իսկ Քրիստոս, Թէ Ահաւադիկ ողջացար, այլ մի՛ ևս մեղանչեցես. և Պաւղոս ասէ. Վասն այնորիկ են՝ ի ձեզ բազումք հիւանդք և ախտաժետք, քանզի մեղանչէին՝ և անստուրբ մտօք՝ ի սուրբ խորհրդոյն հաղորդէին. և պոռնկեցեալցն պատճառ հիւանդուԹեան մարմնոյ՝ նոյն մեղքն էին: Բայց ոչ եԹէ ամենայն ուրեք պատճառք հիւանդուԹեան՝ մեղք իցեն, այլ՛ ուրեք զի և պսակաց ևս բարուրք լինի, որպէս Ղազարու և Յովբայ: Եւ ոչ միայն հիւանդուԹիւն, այլ և ուրկուԹիւնք ևս՝ ի մեղայն լինին, որպէս և Ոզիայ վասն յանդգնուԹեանն բուրուԹիւնն, և Յորաբոլամու արքայի զօուԹիւն ձեռինն՝ վասն ամբարտաւանուԹեանն և հպարտուԹեանն, և Զաքարիայի լեզուն այլ ուստեք ոչ խրատեցաւ՝ բայց յիւրոյ մանչն մեղայ. և

քանզի Հրեիցն՝ առողջուԹիւնն և ողջանդամուԹիւնն եղեն պատճառք գալոյ յամբարտաւանուԹիւն, կարէ զարմանս հպարտուԹեանն, զի յանպիտանեացն առաքեալ պիտանիս, և մեծ լինի քան զոր առնուն՝ չնորհէ: Քանզի զ[ի]նչ ինաս իցէ ԹԷ՝ ի մարմնոյն հիւանդանալ՝ ոգիքն խրատիցին: Իսկ զի մի կարծիցեն ԵԹԷ մարմնոյ ինչ բերք իցեն ցաւք՝ որ՝ ի վերայ հասանիցեն, յառաջագոյն գուշակէ մարգարէն. զի ոչ միայն արանց յաձախ զսպառնալիս, այլ և առ կանանց ևս ազգս ձգէ զպատիժս. քանզի յերկուց իսկ կոչմանց եղծեալ էին կարգք. և մատուցեալ յառաջագոյն վասն առաւելուԹեան չարեացն, առ կանայսն իսկ առանձինն արձակէ զպատուհասն. որով ամենևին իսկ զքաղաքն՝ ի հիմանց կործանէ, վասն այնորիկ և զկանայսն ընդ նովին համատարած հարուածովքն փակէ. քանզի լինձ այսպէս Թուի ԹԷ զհամատարած հարուածոն նշանակէ այնու՝ եԹէ «Բարձից զայր հզօր և զկին զօրաւոր», և կամ այլ ինչ զմարմնաւոր հիւանդուԹիւնս հասարակաց, որում և ոչ բժիշկք ամենևին կարիցեն հնարս[1] դտանել. քանզի այսպիսի են Աստուծոյ պատիժքն:

«ԶզօրուԹիւն հացի և զզօրուԹիւն ջրոյ»: Դառն պատիժք՝ յորժամ ոչ զկերակուրն՝ ի միջոյ բառնայցէ, այլ զզօրուԹիւնն որ՝ ի նմա է՝ առնուցու. զի ԹԷպէտ և տեսանել աչօք տեսանիցեն, սակայն առ սրան ոչ երբեք յագեսցին, և անտի առնուցուն՝ ի միտ եԹէ աստուածապատիժ է բարկուԹիւնն:

«Զայր հսկայ, զայր հզօր»: Հսկայ՝ զիրք զհարուստ ոք սովոր են կոչել, և կամ որ անդամօք ոք յաղԹ իցէ. ՅԱբրահամ յորժամ ասէ, ԹԷ Նոքա են սկայք՝ այր ա-նուանիք, ոչ եԹէ այլ ազգ ինչ զսկայիցն պատմելով զայս ասէր, այլ զի հարուստք էին և առողջ և պինդք:

«Եւ զայր պատերազմող, և զայր դատաւոր»: Ծանր են պատիժքն և վերջին կորստեան նշանակ. զի ԹԷպէտ և պարիսպքն ևս կայցեն և աշտարակքն կանգունք, բայց քանզի անմարդիքն են՝ վաղվաղակի մատնի քաղաքն՝ ի պարտուԹիւն: Զի զգուշուԹիւն քաղաքացն ոչ՝ ի քարանցն և՝ ի փայտիցն կամ՝ ի պարսպ-

1 Յոր. Համարս:

պայն և՝ի պատուարաց ւոցէ, այլ յիմաստութենէ բնակչաց քաղաքին. զի եթէ իմաստունք ոք՝ի ներքս ւոցեն՝ թէպէտ և պատերազմունք շուրջ փակիցեն, ա- ռաւել քան զպարիսպն լինիցին իմաստութեամբն ամ- րութիւն. ապա թէ այնպիսիք ոք՝ի ներքս ոչ գտանի- ցին, թէպէտ և ոչ ոք պաշարիցէ՝ ինքնին իսկ կործա- նեալ յաւերք բերէ մէտ: Եւ արդ վնոսա և զայս իսկ զամենեսեան որք լսիցեն, ոչ սակաւ այսպիսի բանիւք խրատեաց մարգարէս, զի մի՛ երբեք՝ի բարձրաբերձ շինուածս ապաստան լինել, և մի՛ ի մեքենայս և՝ի հնարս, այլ յարանց հեղոց՝ի կատարեալն առաքի- նութիւնս: Եւ արդ երկեցուցանէ վնոսա՝ թէ ոչ յայն սակս միայն աւերի քաղաքն, զի զարս պատերազմողս միայն բառնայ՝ի միջոյ, այլ զի և զդատաւորս իմաս- տունս, որք ոչ նուազագոյն քան զպատերազմողսն լի- նիցին օգնական խաղաղութեան քաղաքաց, զի հնա- րագէտ իւրեանց իմաստութեամբն՝ և զպատերազ- մունսն ցածուցանիցեն, և քաղաքաց խաղաղութեան տիրեսցեն. և քանզի ձակատամարտքն իսկ յաճախս՝ի մեզաց արմատոյ բուսանին, պարտ և պատշաճ է այ- նոցիկ որ զօրէնսն՝ի ձեռին ունիցին, իրաւանցն ճըշ- մարտիւ սպասել, զի զբազում մեղս կարճիցեն որ պա- տերազմացն պատճառք են: Եւ արդ ընդէ՞ր բառնայ- ցէ վնոսա Աստուած. այլ զի մինչ կայրին՝ի գլուխ ա- ռաքինութեան՝ ոչ օրինօք վարէին զկարգս իրա- ւանցն. զի զոր օրինակ ուղիղ հրամանք նոցա բազում շահս գանձեն աշխարհի, նոյնպէս և թիւր դատաս- տան՝ կորուստ բազմաց: Քանզի առ Հրեից ժողովն խօսէր, անյայտութեամբ լինն ծածկէ զասացեալսն, քանզի ոչ ունէին ուշ ճառելոցն. նոյնպէս և զայսպիսի պարգևս զնճծամեծս, ուր զբազում փրկութիւնն յոր- դէր, բազում անգամ՝ի միջոյ բառնայր. քանզի որք ընդունէինն՝ ոչ ինչ կամէին շահել պարգևօքն:

Վասն այնորիկ ասէ. «Ձայր մարգարէ և զայր կար- ծող»: Ոչ սակաւ բարկութեանն նշանակ է այս, յորժամ մարգարէութիւնքն խափանեսցին. զի յորժամ վասն չարեաց Հրէիցն Աստուած զերեսս՝ի նոցանէ դարձու- ցանէր, ապա և զմարգարէութիւնն կարձէր: Բան Տեառն, ասէ, պատուական էր և ոչ դոյր տեսիլք որ

կատարէին. պատուական՝ այսինքն է չքնաղ, ահաւոր: Եւ առ Ոզիա արքայիւ այսպիսի ինչ եղև, և ոչինչ սակաւ շահս շահէին աստի՝ թէ կամեցեալ էր. զի յորժամ ուսանէին զԱստուածոյ հրամանսն, թէ առ յապա չարիք գալոց էին՝ի վերայ նոցա, և թէ մերթ մատնին՝ի ձեռս գերեվարաց, և մերթ փրկին, զի՞րդ ոչ որոմնականքն՝ փրկութեան պատճառք լինէին նո- ցա: Այլ քանզի ուսանէին և չառնէին, վասն այնորիկ և զուսանելն ևս բառնայր՝ի նոցանէ. որ և այս իսկ բազում մարգարէութեանն Աստուծոյ է նշանակ, զի և ցուցանէր զհանդերձեալսն, և գիտէր իսկ զի թէ և ցուցանիցէ՝ ոչ ինչ օգտին, և սակայն՝ի գուշակե- լոյն ոչ դադարէր: Եւ ընդ մարգարէին՝ և զկարծողէնն ևս, ասէ, բառնալ՝ի միջոյ. և ինձ այսպէս թուի՝ եթէ կարծող զպնպիսիսն կոչէ՝ որ՝ի բազում իմաստութե- նէ կարծէր զհանդերձեալս ինչ որ լինելոց էին՝ իբրև հմուտ և փորձ իրաց: Քանզի այլ իմն կարծիքն են և այլ իմն մարգարէութիւնն. զի մինն աստուածեղէնն հո- գւով բարբառի և յիւրմէ ինչ ոչ նորոգէ, և միսն՝ի վաղուց ինչ իրաց կատարելոյ՝ առնու պատճառս իւ- մաստութեանն, և բազում անգամ՝ի դէպ կարծէ, և ասէ յառաջագոյն զիրս ինչ՝ որ առ յապա ւոցեն գոր- ծելոց: Այլ յոյժ խստոց՝ի միջի կայ ընդ մարգարէն և ընդ կարծողն, որչափ ընդ մարգիկեղէն իմաստու- թիւն և Աստուծոյ շնորհ: Եւ օրինակ ևս՝ի մէջ բե- րեալ՝ առնիցեմք զբանս յայտնագոյն: Նայեաց ընդ Սողոմոնի և ընդ եղիշեա, զի երկոքեան զծածուկ իրս՝ի մէջ բերին, այլ ոչ նոքին զօրութեամբ. զի մին մարգկեղէն իմաստութեամբ առ՝ի մարդկան բարուցս առեալ զպատճառս՝ ածէր յայտ զգաղտնիս կինոջն պոռնկի, և միւսն՝ ոչ բնաւ և զմեաւ իսկ ինչ ածէր. քանզի որպիսի՞ միտք կարէին յայտնել զԳեհեզայ գո- ղութիւնն, եթէ ոչ Աստուծոյ շնորհն զնրան՝ որ բա- զում՝ի բաց գործեցան՝ յայտնեցին:

«Ձայր ծեր, զայր յիսնապետ». զի և ծերքն և յիս- նապետքն բառնայցին՝ի միջոյ: Ծեր՝ ոչ որ վայրապար ոք ծերացեալ էր, այլ ըստ ալեացն արժանի և զիմաս- տութիւնն պահեալ: Եւ յիսնապետ յորժամ ասէ, ոչ եթէ զմիոջէ ուժեքէ ձառէ, այլ զամենայն իշխանաց

ակնարկէ, զի չէք ինչ դժնդակ քան զայն՝ յորժամ իշխան ոք ի գլուխս ոչ կայցէ. որպէս քան զնաւ կոծեալ այլ ինչ ոչ լինիցի՝ յորժամ ուղղիչ նաւին ոչ գտանիցի: Ա՛յլ ոչ յայսմ ևեթ կայ, այլ և զայլ ինն ղուշուԹենէ սպառնայ ի միջոց բառնալ՝ բարեխոսատիցն խորհրդականացն, որ ոչ ինչ սակաւ քան ըզզինուց յուցանեն ամրուԹիւնս քաղաքաց:

« Բարձից, ասէ, զզարմանալին զխորհրդականն, զիմաստունն զձարտարապետն և զհանճարեղն զուսկըզիր[1] »: Եւ աստ ոչ զտնաշէն ինչ ձարտարապետաց ձառէ, այլ զայնպիսեացդ որ բազում իրաց տեղեակ իցեն, և իմաստուԹեամբ զամենայն իրս քաղաց հաձիցեն: Եւ հանդերձ սղջօք և զուսկիզիրն ևս ի միջոց բառնայ. զի եԹէ ունկնդիրք ուրեք չիցէ, Թէպէտ և այլքն ամենեքեան իցեն՝ ոչինչ աւելի յաւելուած լինիցի քաղաքաց. Թէպէտ և մարդարէք իցեն կամ խորհրդականք կամ դատաւորք, և ունկնդիրք ոք ոչ իցեն՝ զուր վայրապար է այն ամենայն: Բայց ինձ այսպէս Թուի եԹէ բարձիցն ասել աստ՝ Թողից և ընդ վայր հարից. որպէս և Պաւղոս ասէ, Թէ Մատնեաց զնոսա ի միտս անիծրձս, ոչ զայս ինչ ցուցանէ՝ եԹէ անմիտս արար զնոսա, այլ եԹող, ընդ վայր եհար զանմիտսն՝ որք ինքեանք անձամբ եղեն անմիտ:

« Եւ կացուցից ի վերայ նոցա մանկունս իշխանս », որ քան զանիշխանն լինել և վատԹարագոյն և առաւել դժնդակագոյն է այս. զի որ իշխանն չունիցի՝ զրկեալ յառաջնորդուԹենէ. իսկ որ ստահակ իշխանն ունիցի, այնպէս համարիմ Թէ քարաւիժ լինիցի հանապազ: Իսկ մանկունս ասելով՝ ոչ եԹէ զտիս մանկուԹեան ազարտէ, այլ զյաձախ անմտուԹիւնս նոցա յայտ առնէ. քանզի գտանին և մանկունք իմաստունք, և ծերք անմիտք. այլ քանզի այս անօսրագոյն լիցի և զրևի և այն յաձախագոյն, վասն այսորիկ անուանէ մանկուԹեանն՝ զանմտուԹիւն նշանակէ: Ա՛յլ զի ոչ ունկնուԹիւն ինչ առնէ և ոչ ծերուԹիւն, բայց միայն միտք հաստատունք, տէս զՖիմեԹէոս՝ զի մանուկ եհաս

1 Յօր. Պակասի և վհանճարեն զուսկիզիր:

յառաջնորդուԹիւնն, և քան զբազում ծերս զգաստացեալ՝ առաւել ուղղեաց զեկեղեցիս: Եւ Սողոմոնէն մինչ երկոտասանամեան էր՝ ընդ Աստուծոյ խօսէր, և բազում համարձակուԹիւն առ ամենայն ազգս ունէր, զի ընդ ամենայն երկիր ելեալ էր համբաւ իմաստուԹեան[1] նորա, և այնպէս զի ոչ միայն արք, այլ և կանայք ի հեռաստանէ վասն այնր ևեթ գային, զի լսիցեն ինչ և ուսանիցեն ի նորա իմաստուն բերանոյն. իսկ իբրև ի ծերուԹիւն եհաս, յոյժ յուլացեալ յառաքինուԹենէ: Հայր սորա երանելին ԴաւիԹ զանարժան մեղան՝ ոչ մինչ մանուկ էր և համբակ՝ գործեաց, այլ ի կատարեալ հասակի. մինչդեռ մանուկ մատաղ էր՝ արուԹիւն զարմանալի եցոյց, և զայլազգին կործանեաց, և բազում զգաստուԹիւն յանձին ունէր, և ոչ ինչ եղև նմա խափան մանկուԹիւնն առ ուղղուԹիւնն: Եւ երեմիա՝ որ զմանկուԹիւնն բարուրս առնէր՝ ոչ առ յանձն Աստուած, այլ առաքեաց առ ժողովուրդն Հրեից. Ջի ինձ, ասէ, խափան մանկուԹիւնդ, որովհետև միտք առողջ են: Նոյն տիս էր և Դանիէլ և մանաւանդ ևս մատաղագոյն՝ յորժամ զծերսն գատեցաւ. և Յովսիա՝ և ոչ երկոտասանամեայ լեալ էր, յորժամ յաԹոռ ԹագաւորուԹեանն նստաւ, և յայնժամ առաքինի էր, Թէպէտ և յետոյ սկսաւ ծուլանալ, և սակաւ սակաւ լուծանիլ յառաքինուԹենէն: Իսկ Յովսէփ չէր մատաղ յորժամ դժնդակ պատերազմին դիպեր, և ոչ ընդ արս տայր պատերազմ, այլ ընդ բռնուԹիւն մարմնոյն բնուԹեան: Եւ ի միջոց հնուցին բոլբոքելոյ, ի պարսկաստանն աշխարհի, անշնաս և անարատ հաներ առաքինուԹիւնն՝ զերիս մատաղ մանկունսն. զի զոր օրինակ նոքա զմարմինս հանդերձ հերովք, առանց հոտոյ և առանց խանձատելոյ, իբրև յաղեերկ և. ոչ իբրև ի հնոցէ հանելին, նոյնպէս և սա ի սիւնջ ձեռաց կնոջն եգիպտացւոյ զերծաներ՝ առանց շօշափելոյ և բանս խօսելոյ, առանց տեսլեան ճնաստելոյ և առանց հոտոյն իւղոյ և խնկոցն, որք առաւել քան զորթն և զձիւն և զնաւթ՝ տոչորէին զբոլոյ ցանկուԹեանն: Մի եԹէ մատաղ հասակաւն նեղ

1 Յօր. Երկոքին վերջին բառքս օտար գրչաւ գրեալ են:

ղեցաւ ինչ ՚ի ցանկութենէն, որպէս այլ մարդիկ նե-
ղին ՚ի ցանկութիւնս։ Եւ երեք մանկունքն ՚ի նոյն տիս
հասակաց, մինչ դեռ յաձել և ՚ի ծաղկի էին, և որո-
վայնի ձգանցն յաղթեցին և զերկիւղ մահու կոխե-
ցին, և զօրացն և թագաւորին՝ որ բազմապատիկ զՀր-
նոցն ջեռուցանէին՝ յաղթեցին, և ոչ ինչ կարաց ըստ-
նանել նոցա, այլ կացին ճնային հաստատուն յանծա-
ռայական միտս ազատաբար։ Եւ արդ ոչ եթէ զտիս
մանկութեանն խոտիցէ զայն ասելով, քանզի Պաւղոս
յորժամ ասէ. Մի՛ մատաղատունկ, զի մի հպարտա-
ցեալ ՚ի դատաստանս [1] անկանիցի սատանայի, ոչ զմա-
տաղ հասակէ ինչ ասէ, այլ զկամակ տնկոյ՝ որ այն ինչ
յերախայիկ ՚ի ձեռնադրութիւն մատչիցի. զի տնկեալն
զերախայութեանն խրատ՝ մինչդեռ ՚ի կինքն ոք յօժա-
րեցուցանէ՝ յայտ առնէ. ըստ այմ՝ թէ Ես տնկեցի,
Ապողոս ջուր ետ։ Եւ Փլնտոս զայսպիսի իմն տնկոյ
ձառէ յասելն, եթէ Աբրահամ տունկ որ ոչ ՚ի Հօրէ իմմէ
երկնաւորէ է տնկեալ՝ արմատաքի խլեսցի։ Զի եթէ
նորատունկ ասա՝ մանուկ որ կոչեր, ապա ոչ զՏիմո-
թէոս, որ այնչափ կարի մանուկ էր և այնպիսի մանուկ,
քանզի ասէր՝ թէ Մի՛ ոք զքո մանկութիւնդ արհա-
մարհիցէ, յայնպիսի մեծ իշխանութիւն հաստացանէր,
և այնչափ եկեղեցեաց հրամանատար առնէր։

« Խաբեբայք, ասէ, տիրեսցեն նոցա [2] »։ Տեսանէս,
զի ոչ վայրապար զտիս մանկութեանն աղաչաէ, այլ
զապականեալ միտս, քանզի և յաջորդաւս յայտնա-
գոյն առնէ։ Խակ խաբեբայս ասէ՝ զվերիպեցուցիչսն,
զպատրիչսն, որ քծինս տալով և պատիր բանիւք խա-
բիցեն և առնիցեն սատանայի։

« Եւ կործանեսցի ժողովուրդն այր առ այր, և այր
առ ընկեր »։ Զոր օրինակ չինուածոյ յորժամ պա-
հանգքն, որ ամենք ունիցին զչինուածսն՝ փտիցին և
ապականիցին, ապա որմքն ՚ի հարկէ խարխարին և
անկանին, սոյնպէս և նորա ամենեքին զոր վերագոյն
ասացաք, յորժամ ՚ի միջոյ բառնայցին իշխանքն, խոր-
հրդականքն, դատաւորքն, մարգարէքն, չիք ինչ այ-
նուհետեւ որ զխառնիճաղանճն ունիցի։

1 Ցօր. Պակասէր ՚ի թափապան։
2 Ցօր. Պակասէր փերեսցեն նոցա։

« Ընդհարցի մանուկն ընդ ծերոյն և անարգն ընդ
պատուականին »։ այսինքն ընդդէմ դառնայցէ որդի
ընդ հօր, անդոնիկէ և արհամարհիցէ։ Այս և քան
զկէնն և՛ս չար հէն է՝ յորժամ ծերն ՚ի մանկանէն
անարդիցի, և անարգք և վատթարք՝ զպատուականս
և զվեճամեծս արհամարհիցեն. չիցէ ինչ ընդհատ
՚ի հողմակոծեալ նաւէ քաղաք՝ որոյ այսպիսի կարգք
լիցեն։

« Զի բուռն հարկանիցէ այր զեղբօրէ իւրմէ կամ
զընտանոյ հօր իւրոյ և ասիցէ. Հանդերձք գոն քո,
առաջնորդ լեր դու մեզ և կերակուր մեր առ ՚ի քէն
լիցի։ Պատասխանի տացէ յաւուր յայնմիկ և ասիցէ.
ոչ եղէց առաջնորդ ժողովրդեանս այսմիկ »։ Այս ինձ
այսպէս թուի թէ պաշարութիւն իմն գժնդակ է՝ որ
յանհնարին նեղութիւնսն իջուցանէ զնոսա, կամ
առանց պաշարման՝ սով ինչ անհնարին, և բազում
պիտոյից նուազութիւն. և որպէս բազումք ըստ հա-
սարակաց սովորութեանն, եթէ այնպիսի ինչ դէպք
լինիցին, զի ամենայն քաղաք դանգի միով վաճառէր,
սակայն և ոչ այնպէս ոք կարէր գնել։ Եւ այսու զան-
հնարին աղքատութիւնն յայտ արարեալ, այսպէս
մարգարէն ասէ, եթէ կապերտի միջ և պատառոյ
հայի վաճառեսցին իշխանութիւնք, սակայն ոչ ոք
լիցէ որ գնիցէ, զի այնպիսի նուազութիւն եղիցի,
ասէ, ամենայն պիտոյից։

« Զի լքաւ երուսաղէմ». ընդվայր հարաւ, աւարե-
ցաւ, մերկ ճնաց Աստուծոյ խնամոյն։ « Եւ Հրէաս-
տան կործանեցաւ ՚ի միասին ». զի լքան խռովութեամբ
և խռնճապանօք և անկարգութեամբ։ « Եւ լեզուք
նոցա անօրէնութեամբ ՚ի Տեառնէ ապստամբեցին ».
զի և պատճառք իսկ չարեաց՝ լեզուին անհամութիւնն
է, որում և Ովսէէ մեղադիր լինի, և Մաղաքիա՝ թէ
Որ զկծեցուցանէիք զԱստուած բանիւք ձերովք, և
ասէիք՝ թէ ի՞ւ զկծեցուցաք զնա, յասելն ձեր՝ թէ
ամենայն որ առնէ չար՝ բարի է առաջի Տեառն, և
ընդ այն իսկ հաճեցաւ. և ո՞ւր է Աստուած արդարու-
թեան։ Զոյն և սա բերեալ ՚ի մէջ պատուհասէ, եթէ
ոչ միայն անհաւանք են, և ոչ միայն զօրինաւքն անցա-
նեն, այլ պարտ էր դէթ այսու ամաչել և կորանալ,

և ընդ գետին մտանել. իսկ սոքա ևս քաջանան անցա-
նել զառաջնովքն, և հանդերձ չառնելով զհրամա-
յեալն՝ բանս ևս ծանուցանս և անպարտս խօսին, իբրև
ծառայ մի ստամբակ Թագեալ զհրամանն՝ և վհձիցի
ևս ընդ տեառնն։

« Վասն որոյ այժմ խոնարհեցան փառք նոցա և
ամօթ երեսաց նոցա եղև հակառակ նոցին »։ Դար-
ձեալ զհանդերձելոց իբրև զանցելոց ձառէ, սովորու-
թեամբ օրինաց մարգարէութեամբն վարեալ։ Խո-
նարհութիւն փառաց՝ զգերութիւնն կոչէ, քանզի ոչ
սակաւ ինչ ամօթ էր, եթէ որք յաշտիճանս Թագա-
ւորաց էին, պիղծ և խուժադուժ մարդկան լինիցին
վտարանդիք. աստ ամօթ երեսաց՝ զայն որ ՚ի մեղացն
լինիցին՝ ասէ։ Եւ քանզի յառաջագոյն արարին յամօթ
զանձինս գործովքն զոր գործէին, վասն այնորիկ և
Աստուած ՚ի վառացն մերժեաց զնոսա, և մատնեաց
ոչ սակաւ պատժոց, զոր ինքեանք անձամբ անձանց ա-
սէին. զի ոչ այնչափ միայն լինէին նախատինս, մինչ
յօտար աշխարհին քնակէին, որպէս զի մինչ յիւրեանց
քաղաքին էին և անօրինէին. զի յայնժամ և կասէին
իսկ ՚ի չարեաց, իսկ մինչդեռ յաշխարհին էին ՚ի մեծա-
մեծ չարիս մտաբերէին։ Եւ արդ մեծ կրճնս դնէ նոցա
մարգարէս և խրատէ, զի յառաջ քան զտանջանս փա-
խիցեն ՚ի չարեաց. և արդ սքողեսցին և ամաչեսցեն,
ոչ յօրժամ Թշնամիքն վտարանդեալ ՚ի ծառայութիւն
տանիցին, այլ յօրժամ մեղաց բռնութիւնն վարիցէ
գերի։

« Եւ զմեղս իւրեանց իբրև զՍոդոմայեցւոցն յայտ-
նապէս պատմեցին »։ Զոր բազում անգամ ասացի և
այժմ ասեմ, զի ցուցանիցէ զՍտուածոյ մարգասիրու-
թիւնն, ոչ զոր կրելոց էին պատիժս՝ ասէ յառաջա-
գոյն, այլ Թէ որպիսի ինչ արժանի էին կրել. զի մեղքն
նոցա հանգոյն Սոդոմայեցւոցն էին, և պատիժքն նուա-
զագոյն քան զնոցայն, զի ոչ արմատաբի խլեաց զնո-
սա, և ոչ զքաղաքն ՚ի հիմանց բրեաց, և ոչ զինացորդս
ազգին բնաւին ջնջեաց։ Զայսոսիկ պատմեցին՝
մարդկօրէն լինն ասէ. քանզի ոչ եթէ յայնժամ ուսա-
նի Աստուած՝ յօրժամ իբր ինչ գործիցին, որ զամե-
նայն մինչ և լեալ իցեն գիտէ, այլ զի զվշտաց յոլովու-

թիւն յայտ առնէ, որպէս և այլուր ասէ, Թէ Ել ա-
ղաղակ չարութեան նոցա առ իս. իբր ոչ եթէ այն-
պէս յայտ առնիցէ, եթէ Աստուած հեռի ուրեք իցէ,
և յերկինս միայն սահմանեալ, այլ զմեծութիւն մե-
ղացն յայտ առնէ. նոյնպէս և աստ պատմեցին ասելով՝
զմեծութիւն [1] չարեացն ցուցանէ. զի զսակաւ ինչ
մեղս Թաքուցանել մարթ է, իսկ բազում ինչ և մե-
ծամեծք՝ ամենեցուն յայտնի և ծանօթք են, Թէ-
պէտ և չիցէ՝ որ ամբաստան լինիցի և յանդիմանես-
ցէ, ինքեանք զինքեանց պատմեն և յայտնի առնեն։
Կամեցաւ մարգարէս ցուցանել զաձախութիւն չա-
րեացն, ասէ՝ յայտնապէս պատմեցին, այսինքն՝ մե-
ծաւ համարձակութեամբ, յայտնի գործէին զչա-
րիսն, ոչ ամաչէին և ոչ ակնածէին, այլ զբօսանս իմն
զմեղսն առնէին։

« Վայ անձանց նոցա զի խորհեցան խորհուրդ չար
առանձինն և ասեն. Եկայք կապեսցուք զարդարն՝ զի
դժպհի եղև մեզ »։ Ցաձախութիւն չարեաց է և այս՝
յօրժամ ոչ միայն զի մեղանչեն, և ոչ միայն զի չայտ-
նի համարձակ մեղանչեն, այլ զի և զայնոսիկ որ յու-
զութիւնս լինչ իցեն՝ հալածիցեն. զոր օրինակ որ ՚ի մե-
ռացեալ անկեալ իցեն՝ բազում անգամ զբժիշկսն կոչո-
ղիցեն, սոյնպէս և նոքա որ զանբժշկական ախտն ծըն-
կէին, զայրանային առ ցաւսն՝ սրկանել զարդարն չար-
գարութենէ։ Զի այնպէս իմն է առաքինութիւնն, և
չայտնելովն միայն կարէ տրտմեցուցանել զայնոսիկ որ
՚ի չարիսն կեցցեն. և այնպիսի իմն են չարիքն՝ և ոչ
յօրժամ յանդիմանիցի, բազում անգամ և ՚ի գալըս-
տեանն տաղտկալ այնոցիկ որ արդարութեամբն կա-
տենէն տաղտկալ որ արդարութեամբն կա-
մին կեալ։ Եւ արդ կրկին իմն է ամբաստանութիւնն.
նախ զի կապեն զարդարն, և ապա իբրև զդժպհի
զոմն կապեն. յօրժամ ոչ միայն զի զօգտակարսն չըն-
դունիցի, այլ և ընդհակառակս և զօգտակարսն համա-
րիցի, զինչ ինչ այնուհետև ուղղութեան պատճառք
՚ի միջի գտանիցեն։ Վասն որոյ իբրև ետես մարգարէն
Թէ յայնպէս վերջին կորուստ կործանեցան, ձայն
առնոյր, ողբս յօրինէր. ոչ ամբաստանութեամբ լինչ

1 Յ։ Զչնձութիւն։ Յն. Զգերյալանցութիւն։

մեղադիր լինելով, այլ աշխարելով և ողբալով: Վայ, ասէ, անձանց նոցա, և զայլսն ըստ միոջէ իմաստու-
թեամբ. զի խորհեցան, ասէ, զխորհուրդս չարս զան-
ձանց. Թէպէտ և իւրքն կարծիցին Թէ արդարոյն ինչ
ստանանիցեն, այլ Թէ ոք հաւաստեաւ քննիցէ՝ գիւտն
անդէն՝ ի չարչարելիսն դառնայ: Եւ անտի ուսանիմք զի
արդարն Թէպէտ և բազում անգամ վիշտս կրիցէ՝ ոչ
ինչ գիւտի, իսկ որք դժրեն՝ նոքա անձամբ անձին սրեն
սուսեր. զոր օրինակ և սոքա արդարոյն գիւտս ինչ ոչ
արարին՝ ի կապելն, և զանձինս՝ ի խաւարի և յաւե-
րակի նստուցին, վասն զի մերժեցին զձերադն յաչացն:

«Արդ այսուհետև ըստ գործոց ձեռաց իւրեանց
կերիցեն». զի այնպիսի ինչ էն չարիքն, զի ինքն ան-
ձամբ յանձնէ ունի զպատիժս. որպէս և ասաց, ասէ,
՝ի պտղոյ գործոց իւրեանց վայելեսցեն, զի ինքեանք
հաստատեցին՝ ի վերայ իւրեանց զաւերածն, և ան-
ձամբ զանձինս արարին քարավէժ:

«Վայ անօրինին, չարիք անցցեն ընդ նա ըստ գոր-
ծոց ձեռաց իւրոց»: Տեսանէս, զի միշտ՝ ի մէնջ է չափ
պատժոցն, և՝ ի մէնջ սկիզբն լինելոց. վասն այսորիկ
մարգարէս դարձեալ աշխարէ և ողբայ, զի ինքեանք
զանձինս նեղեցին Հրէայք, և առաւել քան զամե-
նայն զգժնդակ պատերազմին, անձամբ եղծին զան-
ձանց վերկութիւնն, քան զոր ոչ այլ ինչ մեծ լինիցի
Թշուառութիւն:

«Ժողովուրդ իմ, հարկահանք ձեր ձեռաքաղ առ-
նեն զձեզ»: Այս իմաստուն վարդապետի է, յոր-
ժամ բանին բազում դէմս դնիցէ. զի ոչ միայն ըզ-
խիստն և ոչ միայն զկակուղն, այլ մերթ զայն, մերթ
զայս, զի բազմադիմի բանիւն յանձախիցէ շահ օգտի.
վասն այնորիկ մարգարէս ոչ միայն պատուհասէ, այլ
և ողբայ, որ ծանրագոյն է քան զպատուհասն և սա-
կաւ ինչ աղդէ զցաւն: Եւ զարմանք այս են, զի վե-
րինն հատած՝ ի խոր է, և ցաւքն մեղմագոյնք. և ոչ
միայն ողբայ՝ այլ և բժշկէ. և այլ իմն զվարդապետու-
թեանն՝ զարմանալի ցուցանէ օրինակ. և զինչ ինչ.
զի ոչ աւետեցուն միանգամայն սաստէ, այլ քակէ զժո-
ղովուրդն յիշխանացն, և՝ ի նոցա գլխոն թափէ զպա-
տուհասն, և այսպէս իմն շահաւոր ցուցանէ զբժնիսկս.

իբրև զՄովսէսն բազում յանձախութեամբ առնել
զնոսին. զի սա Թէպէտ և ամենեքեան ընդ պատժովք
էին, զիշխանսն և եթէ պատուհասէ. և Մովսէս՝ Թէպէտ
և զժողովուրդն եդիտ գործեալ զգործ անօրինու-
թեան, զԱհարոնն պատուհասէր, որ չէր ինչ այնպիսի
պատուհասից արժանի, Թողեալ զայնոսիկ՝ որ բուն
պատժապարտքն էին, և յայն՝ որ ոչ այնպէս գիտաս-
կար էր՝ ածէր զմեղադրութիւնն, և պատուհասիւքն՝
որովք զերագէտ չարեացն նոցա պատուհասէր, մեծա-
մեծ պատիժս՝ ի վերայ ամպարշտելոցն ածէր, որ և
եղև ինդ. զի առ նոսա և ոչ բանս ծախեաց որպէս առ
Ահարոնն, այլ զարդիւնս եղոյց. զի այնչափ հազարս
իբրև զմի մարդ տապաստ արկանէր. և ահ և երկիւղ
նոքօք ամենայն բանակին արկանէր: Զի յառաջագոյն
տեսեալ Մովսէսի, մինչդեռ իջանէր՝ ի լեռնէն, զտախ-
տակսն վաղվաղակի՝ ի բաց ընկենոյր, և զԱհարոնն
պատուհասել մտածէր, եթէ Զի՞ արար քեզ ժողո-
վուրդն, զի արարեր ոտնհար Թշնամեացն. այնպէս և
մարգարէս նմանեալ սրբոյն երկուք օրինակօք. ոչ միայն
պատուհասէր յայնժամ Մովսէս, այլ և վշտակից լի-
նէր, և ապա զպատուհասն՝ ի մէջ բերէր. նոյնպէս և
սա երկոքումբ նմանող լինի Մովսէսի: «Ժողովուրդ
իմ, հարկահանք ձեր ձեռաքաղ առնեն զձեզ». և զիշ-
խանս պատուհասէ և ժողովրդեանն վշտակից լինի: Իսկ
հարկահանս աստ Թուի ինձ Թէ ոչ միայն զհարկա-
հանան կոչէ, այլ և զյափշտակողսն, որք անիրաւու-
Թեամբ մերկանային զժողովուրդն: Իսկ եթէ և զհար-
կահանացն իսկ ձառիցէ, սակայն և աստ տեսս զնմաս-
տութիւնն մարգարէին, զի ոչ զարդար հարկն խոտէ,
այլ զաւելորդն և զանչափն. քանզի ոչ ասէ՝ եթէ
հարկս հանեն, այլ զի ձեռաքաղ առնեն, այս ինքն է
մերկանան, ընչաթափ առնեն: Ի դէմս հարկահանու-
Թեան զայս բան փոփոխեալ յորջորջումն այգեկրթաց
և հնձողաց ձառէ, զի ձեռաքաղն և հասկաքաղն առ-
նել այն է՝ զի և զմնացեալսն ևս պտուղ և զհասկն՝ ի
կթոց և՝ ի հնձոց որոնիցեն, և մի ինչ ամենևին Թո-
ղուցուն յանդին, զոր և նոքայն իսկ առնէին, զբարին
զամենայն յափշտակէին և մերկանային զնոսա:

«Ոք պահանջէնն զձեզ՝ տիրեն՝ ի վերայ ձեր». որ

ևս անհնարին դժոդակազոյն է, զի ոչ միայն յագա-
հութեան կայլին, այլ ևս յառաջ ձգելին զբռնաւորու-
թիւնն, զի զաղատս ևս ի ծառայութիւն արկանելին:
« Ժողովուրդ իմ, որ երանեցոյ ձեզ՝ դոքա խաբեն
զձեզ »: Այսպ Թուի ինձ Թէ զսուտ մարգարէիցն ակն-
արկէ, և կամ զայնցանէ՝ որք բանիւք պաշտօն առ-
նէին, զի մեծամեծ ՚ջասք և յայտնիսի նիմն ստկանայց
լինելին, վասն որոյ յարէ ՚ի նոյն, Թէ « Ձշաւիղս ոտից
ձերոց խռովեցուցանեն ». ոչ տան Թոյլ ուղիղ գը-
նալ կամակորեն, մեղկեն, ՚ի ծուլութիւնս դարձու-
ցանեն:

« Այլ հաստանէ Տէր ինքնին յատեան դատաստանի,
և դատի ժողովուրդս իւր, ինքն Տէր ՚ի դատ եկեսցէ
ընդ ծերս ժողովրդեան իւրոյ և ընդ իշխանս նոցա »:
Տակաւին ՚ի նմին ուղղութեան կայ. զի ՚ի ժողովրդե-
նէն՝ առ ծերունիան և առ իշխանան դարձուցանէ ըզ-
սաստն, և ահագին նիմն տայ զպատգամն, իբրովի զԱս-
տուած յատեան մատուցանէ, և զժողովրդոյն մեղս
յիշխանացն պահանջէ: Վասն որոյ ասէ. « Այլ արդ
հաստանէ Տէր ինքնին յատեան դատաստանի ». քանզի
պատուհասն ծախեաց զբանսն, և անհանձարացն ոչ
այնպէս պատուհասքն ծանունք Թուին՝ որպէս տան-
ջանքն ահագինք, յայտնէ եԹէ ոչ բանից աւեԹ սպառ-
նալիք են, այլ և արդեանց պահանջմունք, նորին ի-
բրովին ՚ի դատ մատուցեալ պահանջէ, և ըստ նոցա զի-
ջանելն՝ զԱստուծոյ զբաղում ողորմութիւնն յայտ
առնէ, և մերմոքեցուցանիցէ բանիւք, զի մտացեալ ա-
ւելի ահ և երկիւղ ՚ի միտս արկանիցէ, ոչ վասն այնր
միայն որ վերագոյնն ասացի, Թէ ՚ի ժողովրդենէն դար-
ձեալ զիշխանան և զծերսն պատուհասէ, այլ և ուսու-
ցանէ զամենեսեան Թէ քան ռամկին՝ իշխանացն պա-
տիժքն ծանունք են. զի մին վասն իւր միայն պատժի, և
միւսն վասն իւր և վասն ժողովրդեանն՝ որ նմա յանձն
էին՝ տացէ համարս: Զի ծերքն ոչ այնպէս յանկրաւի
էին պահանջին, զի մանկտոյն՝ սկիզբն կենաց, ծերոյն՝
կատարած հասակաց է. արժանի է և մանուկն պա-
տուհասից վասն անարժան ինչ մեզաց, իսկ որ կատա-
րեալն էին հասակաւ և յուզից եռանդման մանկու-
Թեան կատեալ, այնպիսի ինչ վտանգ ինչ էին, նման

դիւրին է կարգացն ուղղութիւն, զի ընդ բազում իրս
և անցեալ էին. ապա եԹէ ՚ի լկտութիւնս ինչ անա-
ռակութեանց ՚ի կատարեալ հասակին անկանիցի, ևս
աւելագոյն պատժոյ արժանի է, զի ՚ի ծերութեանն՝
զնակութեան գործ եցոյց:

« Դուք զի հրկէզ արարէք զայգի իմ, և յափշտա-
կութիւն անանկին է ՚ի տունս ձեր »: Ամենայն ուրեք
Աստուծոյ փոյթ վասն զրկելոց է, և զաղքատաց նե-
ղութիւն՝ գրեԹէ յիւր դէմն ընդունի, և է ուրեք զի
և աւելի յայնժամ բարկանայ՝ յորժամ ՚ի ծառայա-
կիցն իւրեանց մեղանչիցեն մեղանչականքն. և յայտ
այնու է, յորժամ զպոռնիկ ոք կին ունիցի՝ հանել
հրամայէ, Թէպետ և զմի մեղն ՚ի նմա մեղանչիցեն,
և զմիւսն մարդիկ առ մարդիկ. և զպատարագն ՚ի վե-
րայ սեղանոյն Թողուլ հրամայէ, զի նախ երԹիցէ ընդ
ընկերին հաշտեսցի, և ապա եկեալ՝ նմա պատարագ
մատուսցէ. և որում զբազում տաղանդն էր տուեալ
որ են լտելք, և պահանջէր վասն իւր, և ոչ չար ան-
գամ կոչեաց զծառայն, այլ վաղվաղակի հաշտեցաւ և
զպարտսն եԹող. իսկ յորժամ պարտապանն զհարիւր
դահեկանն ՚ի ծառայակիցն պահանջէր, և չար ծառայ
կոչէր և դահճաց մատնէր, և ջոյր Թոյլ միչ զամե-
նայն պարտսն պահանջէր. և յորժամ ինքնին Քրիստոս
զպատակն առնոյր ՚ի ծառայէն, ոչ ինչ զայրանայր ծա-
ռային, այլ մեղմագոյնս տայր պատասխանի. Թէ չար
ինչ խօսեցայ, վկայեա վասն չարին, ապա Թէ բարի
խօսեցայ, ընդէ՞ր հարկանես զիս: Իսկ յորժամ Յորո-
գումամ ձգեաց զձեռն ունել զմարգարէն, գօսացոյց
զձեռն՝ զի զքեզ խրատեսցէ. զի յորժամ քո ինչ իրք
խցեն, զայն վրէժն մի խնդրեր, և յորժամ ակրունի ինչ
իրք խցեն, անդ մնհու ջուր մատնէիցես: Վասն որոյ և
յօրինան ուսուցանէ, զի Թէպետ և երկրորդ պատուի-
րան իցէ զընկերն սիրել, սակայն առաջնոյն նման է. որ-
պէս զառաջինն զառաւելն՝ մեծաւ զգուշութեամբ պա-
տուիրէ, նոյնպէս և զերկրորդն. զի անդ ասէ, Թէ
Յամենայն սրտէ քումմէ և յամենայն մտաց քոց սի-
րեսցես զտէր Աստուած քո, և աստ՝ Թէ Ձընկերն ի-
րըև զանձն: Եւ ամենայն ուստեք է իմանալ եԹէ որ-
պիսի ինչ սէր հրամայէ ունել ընդ միմեանս, որպէս և

աստ ահագինս իմն բարբառի, եթէ «Դուք ընդէ՞ր հրը-
կէզ արարէք զայգի իմ». զոր օրինակ հէն և այլազգիք
անողորմ լինիցին, նոյնպէս և դուք առ ձեր ընտանիսն
անողորմ գտայք: Ա.յգի՝ զժողովուրդն կոչէ վասն բա-
զում դարմանոցն՝ զոր յերկինէ դարմանեաց ընծա. և
մեծ իմն ցուցանէ զպատուհասն. ոչ, ասէ, զծառայա-
կիսս ձեր հրկէզ արարէք և ոչ զեղբարս կամ զըն-
կերս, այլ զմեզ, ասէ, կորուսէք, զմեզ առերեցէք. և
ապա զօրինակ հրկիզութեանն յայտ առնէ:

«Յափշտակութիւն, ասէ, տնանկին է՛ի տունս ձեր». զի ոչ այնչափ ապականէ հուր զայգիս, որպէս անիրա-
ւութիւն զաղքատս և զտնանկս. քան զամենայն մահ
և՛ս գառնագոյն է, ամենայն ուրեք չար է յափշտակու-
թիւն, առաւել և՛ս յայնժամ՝ յորժամ աղքատ իցէն
որ յափշտակիցին. և ոչ միայն սաստէ, այլ և ուղղէ
կամ զվնասն:

«Դուք ընդէ՞ր զրկէք, ասէ, զժողովուրդ իմ». որպէս անդ ասէ զայգիդ իմ, նոյնպէս աստ՝ զժո-
ղովուրդ իմ: «Եւ զերեսս տնանկաց ամաչեցուցա-
նէք». զորս կանգնելն պարտ էր՝ գլորէին, զորս յա-
րուցանելն՝ կործանէին, զի հանդերձ յափշտակու-
թեամբն և այսն և՛ս առնէին, և քան զծառայս և՛ս
չար կռփէին. ընդ ագահութեանն և ամբարտաւա-
նէին և՛ս, քանզի լծակից իմն են ամբարտաւանու-
և ագահութեանն ախտ. զի որչափ մեծանայ ոք, այն-
չափ աճեցաւ հպարտութիւնն:

«Ա.յսպէս ասէ Տէր զօրութեանց». այսինքն է հրեշտակաց, հրեշտակապետաց, վերնոց զօրութեանց
ամենեցունց. յերկրէ յերկինս առաքէ զլսողն, զվերին
մեծապատիւ թագաւորութեան ձառս՛ի միտ արկա-
նէ, զի գէթ այնու զարթուցանիցէ առնել զգաստա-
գոյս, առ՛ի ցուցանել թէ երկայնամտութեամբ
ներէ և ոչ՛ի տկարութենէ արգելու: «Ա.յսպէս ասէ
Տէր զօրութեանց. փոխանակ զի հպարտացան գըլ-
ուխք ձեր և գնացին՛ի բարձր պարանոց, յօնովք ակն-
արկէին, և՛ի գնացս իւրեանց քարշէին զատորատս
իւրեանց, և ոտիւք կաքաւէին: Եւ խոնարհեցուցանէ
Աստուած զվշխանս գստեր Սիովնի, և մերկասցէ Տէր
զզարդ նոցա յաւուր յոյժմիկ, և հանցէ զփառս հան-

դերձից նոցա և զզարդս նոցա, և զՀլիսս և զճամա-
կալը և զպսակակալսն և զմանիկս նոցա և զպաճու-
ճանս երեսաց նոցա, զքօղչայս և զապարանջանս և
զմեհեանդս նոցա, զվինդս և զմատանիս և զվշտա-
պանակս իւրեանց, զեզրաճիրանին և զմիջնաճիրա-
նին, զառանին արկանելիս, և զարտաքին խլայտեռս
լակնացիս, զճիրանին և զկարմիրն, զբեհեզն, զսակէ-
հուռն, զերկնագոյնն, զշղարշատեռն, զձամկաւորն,
զսակեճամուկն, զսակէտտունն և զկապուտակագործն:
Եւ եղիցի փոխանակ հոտոյն անուշիլոյ՝ փոշի, և փոխա-
նակ կամարացն՝ չուան գօտի, և փոխանակ զարդու
գլխոցն՝ կնտուքիւնն, վասն գործոյ քոյ. փոխանակ
ոսկեհուռն դիպակին՝ քուրձ զգեցցիս. և այս վասն գոր-
ծոյ քոյ: Եւ որդիքն քո գերեցիկ զոր սիրես՝ սրով
մեռցին. հզօրքն ձեր ի սուր անկցին և խոնարհեացին,
և սուգ զգեցցին սապատք զարդուց ձերոց. և ինասջիր
միայն և յերկիր կործանեսջիր[1]»:

Նոր իմն իրս ասար զայս մարգարէս՝ զի այսչափ եր-
կայնեաց զբանս առ կանայս, զոր ոչ երբեք գտանեմք
այսպիսի ինչ՛ի գիրս. և արդ զինչ պատճառք իցեն
նոր իրացս: Ինձ այսպէս թուի, թէ բազում իմն առելի
պերճանք եին՛ի ժամանակին կանանցն, այնպէս զի և
զարամբք ելանէին չարիք նոցա, վասն որոյ և ուրոյն
առ նոսա ձգէ զբաստիկ պատուհասն. և իբրև յերե-
սաց Աստուծոյ բարբառի առ նոսա ահագինս: «Ա.յս-
պէս ասէ բա Տէր կամարար. փոխանակ զի հպարտա-
ցան դստերք Սիովնի, և գնացին՛ի բարձր պարանոցս».
զգլխաւոր չարեաց նոցա ամբաստանէ՝ զամբարտաւա-
նութիւն և զհպարտութիւն, զի ամենայն ուրեք նոքա
են անհնարին չարիք, և մանաւանդ յորժամ՛ի կանանց
ազգի ծնանիցին. քանզի թեթևամիտ և մեղկախոր-
հուրդք են, յորժամ մանկիցէ հպարտութիւն՝ վաղվա-
ղակի կործանէ զնոսա յամենայն չարիս: Թուի ինձ թէ
առ երուսաղեմացւոց կանայսն ձգէ զբանն, քանզի և
դստերս Սիովնի կոչէ զնոսա: «Եւ գնացին, ասէ, ՛ի

Յեր. Յաւելեալ կայ աստէն զինի բնաբանիս՝ բովանդակ Դ գլխին
Եսայեայ, որ չէք ՛ի Յե. և քանզի չէր ՛ի կարգի մեկնութեան եդեալ
է ընդ Յե. վասն որոյ երբև աւելորդ իմն ՛ի բաց թողաւ ասասկն:

բարձր պարանոցս»։ Չեգնէ աստ և զկանացի բարւոյն. Յայտ առնէ՝ թէ և՛ ի միտս անգամ չժուժան, այլ Յայտ յանդիման մարգինոյն Ձեմելէքեայ ցուցանեն զՀըպարտութիւնն. ոչ միայն յամբարտաւանութիւն, այլ զի և Ձեմելէքէ ևս յանառակութիւնս կործանեցան՝ բամբասէ և, զայս Յայտ առնէ յաջորդաւն. «Ցօնովէք, ասէ, ակնարկէին». որ պոռնիկ կանանց իմն սեփական նշանակ է, զայս յերկպեղել և զչքեթանս և զշռայլութիւնս ցուցանել, Ձեմել Ձօձել, զհասակաբեր նայել։ «Եւ՛ի գնացս իւրեանց քարշէին զստորոտս իւրեանց», որ հատիւտ անառակութեան նշանակ է, զի մերկին իմն և երկայնեն զստորոտս իւրեանց. զայս և յարտաքնոցն յերդ արկեալ մրմնջէ. Զիւր զսոսիս և զՀանդերձան, ասէ, զպէշմամբքն քարշէր։ «Եւ ոտիւք կաքաւէին». և այս ոչ ինչ սակաւ լկտութեան օրինակ է, զի առ նեւին և աչօք և հանդերձիւք և ոտիւք և գնացիւք մերկացեալ զցածութիւն՝ ի լկտութիւն կործանէին։ Չի բարւոյ ոգւոյն ի ներքս բնակելոյ՝ իբրև քարողք իմն են անդամքն հատիւտ խաղալիկք. զի զոր օրինակ նկարչաց խառնեալ զերանգս՝ զինչ կամիցին պատկեր նկարել նկարիցեն, նոյնպէս և անդամոց մարմնոյ խառնիկք՝ զբարս մտացն հաւաստեաւ նկարեն, և յայտ յանդիման առնեցուն ցուցանեն. վասն որոյ և Իսաստուն ասէ, թէ Հանդերձ մարդոյ և ծաղը ընթացից և գնացք ոտից՝ գուշակեն զնմանէն։

«Եւ խոնարհեցուսցէ Տէր զկնէրս Սիսաղնի. և մերկասցի զզարդ նոցա յաւուր յայնմիկ, և հանցէ Տէր զփառս հանդերձից նոցա»։ Եւ արդ երկուս ինասս դնէ, զՀպարտութիւնն և զմարմնոյն լկտութիւնն. և ըստ իւրաքանչիւր երկոցունց բերէ դեղս ի մէջ. առաջնոյն ըստ առաջնումն, և վերջնոյն ըստ նմին. Հպարտութեանն՝ զխոնարհութիւնն, պաճուճանացն՝ զմերկանալն զարդուցն. զի յորժամ հէնն գայցէ, ասէ, ամենայն միանգամայն կորիցէ. որք խորհին ի պատուհասին և զղջանայցեն՝ ապրիցին ի պատժոցն, և որք պերձացեալք միտ գործիցեն ի փափկութիւնս, վաթեալ՝ ի գերութեան՝ մերկասցին յերջանկութենէ փափկութեանցն։ Չի ծանրագոյն առնիցէ զբանն և կսկծեցուցանիցէ՝ ի ըստ միոջէ ի թիւս արկեալ ուրուրոյն թուէ զզարդն զգլխոց և զոտից և զայլոց անդամոց իւրաքանչիւր. և ևս յառաջ մատուցեալ՝ ընդհանուր զարդարանս համարի. զի ոչ միայն զմարմինս պաճուճէին, այլ և՛ տունս զորս զարդարէին, յոչինչ պէտս ծախեալ զսակին. և զծամս հիւսէին որ են թևք ամեն՝ ամենայն պատրանացն, զի ամենևին զքթիցին. վասն որոյ ասէ, թէ «Մերկասցէ զփառս հանդերձից նոցա և զզարդ նոցա և զհիւսս և զծամակալս և զպսակակալս», որ պսակ իմն զարդ զգլխոյն պատէին. մանիկք՝ լուսնաձև իմն զարդ պարանոցացն են։ «Եւ զպաճուճանս երեսաց նոցա», թուի ինձ թէ զսնդոյր և զծարիր՝ որով զաչս և զերեսս պաճուճէին. քողիք՝ որ արմկանց վերոյ զսակի ապարանջան՝ ի տիպս արկանեն, և ապարանջանքն որ՝ ի դաստակ ձեռացն։

«Եւ զմեհեանդս և զգինդս և զմատանիս և զկշտամբանակս և զձեղանակս, զեղրածիրանին և զվինջնածիրանին զառանին արկանելիս և զարտաքին խլատեռս լակոշնացիս»։ Վասն զի այնպիսի իմն փոյթ կր նոցա՝ ի լկտութիւնս, զի ոչ միայն որ յաչխարհին հանդերձք գտանէին, այլ և՛ ի հեռաստանէ և յօտար աշխարհէ ժողովել. զի ընդ ծով յօտար աշխարհ յղէին և բերէին. քանզի մեծ վայրք՝ ի միջի են ընդ պաղեստինացւոց աշխարհն և ընդ Ալեկեղոնացիս, և ծով մեծ և լայնատարած։ Քանզի ոչ վայրապար զանուն ազգին յիշէ, ուստի այնպիսի հանդերձք գային. և զի և՛ս առաւել զզարդասեր լկտութիւնս նոցա յանդիմանեսցէ, «Զբեհեզեղէնն, ասէ, և զերկնագոյնն, զկարմիրն և զծիրանին, զբեհեզն ոսկեհուռ, զկապուտակագործն և զշաղաշատեռն, զոսկեձամուկն և զոսկեձամուկն և զոսկեձամուկն». զի ոչ ուրեք հանդերձս թողուլին, և ոչ զարդս ազգի ազգիս, եթէ ոչ իւրեանց աղտեղութեանցն առնէին պարար, առ մոլուցս անհնարին ցանկութեանց։ Եւ այսպիսի իրք եթէ յառաջ քան ըզջնորհն և պատուհասից արժանի են, մերքս որպիսեմ ներելոյ թողութեան լինիցին արժանի, որք յերկինս են հրաւիրեալ և՛ ի վերին կոչմանն առաքելութեանց, որ հրեշտակաց նմանել զի առաւել քաջութեամբք

1 Ա. յոպէս յորինին։

յաղթեսցեն լիտուԹեանցն։ Եւ այս ևս չար, զի մեղս ևս չհամարին զլիսի պաՀուՀանան. վասն որոյ և առ սոսա, որպէս և առ նոսա, ՚ի գէպ ելանէ բան մարգարէիս, Թէ «Եղիցի ձեզ փոխանակ հոտոյն անուշից՝ փոշի»։ Ցեսանէս, և զնարդ զօծուԹիւն իւղոյն խոտէ, և մեծամեծ պատիժս ընդ այն սպառնայ. զի փոշի՝ ընդոյն նշանակէ յորժամ քաղաքն աւերեցաւ, և նոքա ՚ի փոշոյ աւերածոյն հեղձնուին, և զհինին գալ, քանզի հրով և երկաԹով բրեին զատակ քաղաքին. զի զկէտն աւերեցին և զկէտն հրձիդ արարին։ Եւ զայն յառաջագոյն ասէր մարգարէն, Թէ «փոխանակ հոտոյն անուշից՝ փոշի, և փոխանակ կամարացն՝ չուան գօտի»։ Յառաջագոյն զգերուԹեանն նշանս տայր, և զանողորմ գերեվարսացն։ «Եւ փոխանակ զարդուց՝ գլխոյն հնդուԹիւն». զի առ վիշտն հերքն Թափէին. կամ գերիչք կարէին և առնէին նշաւակ, կամ ինքեանք զանձինս. քանզի սովորուԹիւն էր առաջնոցն ՚ի սուգ և ՚ի վիշտ՝ կարել կամ գերծուլ, որպէս և Յովբ, յորժամ լուաւ զգոյժ որդւոցն՝ զհերսն հատանէր, զմորուսն գերծոյր։ Եւ մատուցեալ ևս յառաջ մարգարէիս, զբձագգած հրամայէ ՚ի սուգ մտանել, և խզել և գերծուլ. որպէս և միւս մարգարէ ասէ, եԹէ խզեաց և գերծիր ՚ի վերայ փափուկ որդւոցն քոց։

«Եւ փոխանակ ոսկեհուռ դիպակագործ պատմուձանիդ՝ քուրձ զգեցիր»։ Եւ արդ չԹուիցին այս ահագին և անհնարին աղէտք։ Ա՛յլ մեզ ոչ այնպիսի միայն պատիժք են. այլ և որդինն Ծունաւոր և խաւարն անվախճան սպառնայեալ՝ առնուցու, որպէս նոյա գերուԹիւնն՝ փոխանակ զարդուցն և պաՀուՀանացն։ Եւ զի յայտ յանդիման ընդ այսպիսի մեղայ ածզպատիժս պատուհասից, լուր զնարդ յորժամ մի լատ միոջէ Թուեաց զաւետեան, ածէ յարէ ՚ի նոյն զպատՀառան. «Ա՛յս ամենայն քեզ, ասէ, վասն զարդուց պաՀուՀանայ քոյ»։ Զի եԹէ Հրէից կանայք զարդասէրք՝ այնպիսի պատիժս կրեցին, զի և քաղաքք նոցա ՚ի հիմանէ բրեցան, և յետ այնչափ փափկուԹեանց՝ գերիք ՚ի ստրկուԹիւն չոգան յօտար երկիր, և սովք և սրոյ և պեսպէս մահուց մատնեցան, զնարդ ոչ լոցէ յայտ, Թէ և մեք աւելի ևս պատիժս եմք կրելոց, եԹէ նովքին

ախտիւ ախտանայեմք. զի որպէս պատիւքն մեր մեծամեծք են, նոյնպէս և պատիժքն սաստիկք։ Ա՛պա եԹէ ոք կինն պաՀուՀող վայրապարազարդ՝ ոչինչ պատիժս կրեաց, մի՛ ինչ յայն ապաստան լինիցիս. զի սովորուԹիւն է Աստուծոյ այնպէս զպատիժսն լինն կարգել. ընդ մի ոք և ընդ երկուս՝ աստէն Հանէ, և զի նոքօքք զայլս ամենեսեան խրատեսցէ։ Եւ զի յայտնագոյն ևս արարից զբանս, մեղան Սոդոմայիքն զայնպիսի անՀնարինն մեղանս, և ետուն վրէժս բարկուԹեան Հրոյն, որ ՚ի վերայ տեղայր առ ՚ի սատակումն քաղաքացն և մարդկանն, և առ Հասարակ ամենայն երկրին. և արդ զի՞նչ ասիցեմ, և յետ նոցա ո՞չ ոք յանդգնեցաւ գործել. այլ բազումք բազում անգամ ընդ ամենայն տիեզերս. և ընդ՞ոչ կրեցին զնոյն պատիժս. քանզի պահեալ են այլում ևս մեծ պատժոց։ Վասն այնորիկ միանգամ վասն այնպիսի չարեաց աՀ Աստուած բարկուԹիւն և լուեաց, զի ոչք զնոյն գործ ժպրհիլն գործել, Թէպէտ և աստ ոչ տայցեն զտոկոսիս, գիտասցեն ստոյգ Թէ չեն ապրելոց անդ։ Զի՞արդ մարԹիցի լինել իրացն, Թէ ոչք յառաջ քան զնոցունն և զօրհնան էին, և ՚ի մարգարէիցն ինչ չէր լուեալ, կրելիցին զայնպիսի գառն պատիժս վասն այնպիսի մեղաց, իսկ ոչք յետ նոցա, այսչափ և այսպիսի խնամովք վարեալ և զնոսա օրինակ ունիցին առ ՚ի զգաստանալ, որ և անՀնարինն իսկ աւանդ ապրել ՚ի պատժոց զայնոսիկ՝ որ զնոյն գործիցեն։

Եւ եԹէ ասիցես Թէ ընդ՞որ և նոքա զնոյն պատիժս ոչ կրեցին, գիտասջիր զի և՛ս մեծամեծ պատժոց պահեալ էին. զի և՛ս անՀնարինն պատիժք կան ինձան այնպիսեացն՝ լուր Քրիստոսի որ ասէրն, Թէ Դիւրագոյն լինիցի երկրին Սոդոմայեցւոց և Գոմորացւոցն յաւուրն դատաստանի, քան քաղաքին այնմիկ։ Որպէս զի Թէ և ոչինչ պատիժս կրեցին լիակզարդ ընդվայրապաճոյճ կանայք, որպէս և Հրէից զարդասէրք կանայքն, յայն ինչ ապաստան մի լինիցին, զի երկայնմտուԹիւնն՝ և՛ս առաւել բորբոքեն զնոսա Հրոյն գեՀենին։ Այսպիսի ինչ Անանիայ և կնոջ իւրում Սափիրայ դիպեցաւ. զի ՚ի սկզբան քարոզուԹեանն Սափիրայ դիպեցաւ. զի ՚ի սկզբան քարոզուԹեանն գողացան յընչից, և մեռան սատակմամբ. և բաղումք

յետ նոցա զնոյն յանդգնութիւնս յանդգնին, և ոչինչ պատժին։ Զիարդ պատշաճ իցէ արդար դատաւորին՝ որ ամենեցուն հասարակաց ըստ իւրաքանչիւր պատշաճի հատուցանէ. եթէ զսակաւամեղսն տանջեաց, և մեծամեղացն ներիցէ՞. և ոչ ապաքէն յայտ է լեր որոշեաց օր մի՝ յորում դատելոց է զտիեզերս միանգամայն։ Վասն այնորիկ յապաղէ զպատիժս՝ զի երկայնմտութեամբն լինիցին պիտանիք. ապա եթէ ի նմին յանցանս կայցեն մնայցեն՝ և՛ մեծամեծ պատիժս կրեսցեն։ Այրդ յորժամ զնոյն մեղս՝ զոր այլոց վաղուց գործեալ իցէ՝ գործիցէ՛ք, մի՛ ինչ յայն ապաստան լեալ խնդասցուք, այլ առաւել և ս զահի հարկանիցիմք, քանզի իբրև զօրէնս ինչ զնոցա պատիժս հաստատեաց ամենեցունն Աստուած. որ և խրատէ և ուսուցանէ՝ թէ վասն այնորիկ զայն՝ որ յառաջ ինչ գործեցեալ մեղս տանջեցի, զի դու այնպիսի ինչ միւ գործիցես. և եթէ գործիցես, և՛ վաղվաղակի դառնայցես. ապա թէ ոչ՝ գիտասջիր, զի որք զայնպիսի ինչ մեղս գործիցեն, որովք պատժեցան առաջինքն, և որք յետ նոցա զնոյն գործիցեն՝ նոցին պատժոց արժանի էն, թէպէտ և առ ժամայն վաղվաղակի ոչ գայցեն՝ ի վերայ։

Եւ յայսպիսի բանս ոչ վայրապար յամեցի, այլ զի չար ցաւք մարին՝ ի տունս արանց առ՝ ի կանանց հլատպիտ պերձանայ և զարդասիրիկ ցանկութեանց, որ և զընչասիրութեանն բռնաւորութիւն պարարէ, ուր և արանց վաստակք ընդ վայր ծախեալ կորնչին, և հանապազորդ կապոյ և կռուոյ և չարահաւանութեան ետն պատճառք, ուստի և զաղքատսն յորովայնն ամենան։ Քանզի յորժամ կին մարդ զամենայն ինչ զառնն առեալ՝ զանդամոքն վառիցէ, տառապանք են առնն և ընչինն ծախք և թշնամանք՝ կնոջն անուղղայ զարդարանքն։ Զի յորժամ զսկին՝ ի գլուխ և յականջս և՛ ի բազուկս վառիցէ, կարձին այնուհետև ձեռք առնն՝ յողորմութիւնս առնելոյ և՛ ի տնանկացն խնամածութեանէ. և բազում և այլ մեղք ծնանին յայսպիսի իրաց։ Այլ զայս թողեալ, զի նոքա զգայեցեն վնասուն՝ որք այսպիսի ախտիւ ջերանիցին, մեք զկարգ ընթերցուածոյ՝ յորում էաքն՝ յառաջ վարեսցուք։

Ցետ յայտ առնելոյ զնշանս գերութեանն, և ասելոյ, եթէ՝ այդ քեզ փոխանակ զարդուն պաճուճանացդ է, ապա և զանհնարին վնասն ասէ։ «Եւ որդին քո, ասէ, դեղեցիկ զոյ սիրես՝ սրով մեռցի, և հղօրքն ձեր՝ի սուր անկանիցին»։ Այս և քան զգերութիւնն ևս դժնդակագոյն. զի են կեանք՝ որ քան զմահ ևս դառնագոյն են. յորժամ հանդերձ ծառայութեամբ՝ և զտաբաժամ սուգն ևս տգայցեն. միտ դիր, որչափ ևս յաճախագոյն վնասքդ լիցեն և առանձինն դառնութիւն, զի մի՝ի միոյ վերայ հասանիցին. եթէ՝ի գերութեան լինիցի և այն անհնարին աղէտք են, և եթէ անգէն՝ի քաղաքին այնպիսի սուգ, սակայն և՛ քան զմահ դառնագոյն են կեանքն։ Այլ այժմ, ասէ, երկոքեան մեծ առ միմեանս լինիցին. և մանաւանդ ոչ միայն երկուս, այլ և երիս և չորս աղէտս պարտ է անուանել զայնպիսի եղեռն, զի և որդին մեռանի և գեղեցիկն և սիրելին, և այն՝ սրով՝ի ձեռաց այլազգեաց. և ոչ ըստ հասարակաց բնութեան վախճանիցի՝ի կենաց. և հանդերձ նոքիմբ և ամենեքեան որ՝ի կատարեալ հասակի իցեն՝ չունիցին ինչ յոյս բարութեան, որ մարդկեղէն բնութեանն զօրավիգն օգնականութիւնն իցէ։

«Եւ խռնարհեսցին և սուգ զգեցցին սապատք զարդուց ձերոց, և ինասջիր միայն և յերկիր կործանեսջիր»։ Ամենևին բազմացուցանէ զսուգն, յաճախեցուցանէ զերկիւղն, ահեցուցանէ զահն, յորվէ զկասկածն, երկայնէ զվշտացն պատմութիւն, յամենայն կողմանց ընթացեալ ժողովէ զտրտմականն վասն անմտութեան լսողացն։ Չի պարտ էր նոցա այսպիսի սաստիկ սպառնալեօք ստանալ զհանձար, և առնուլ՝ի միտ զվախճան բանիցն ասացելոց. այլ քանզի ոչ խմաստնացան առաջնովքն, ած և ցայս՝ի մէջ իբրև զողորմագին լինի, թէ և զսապատս զսկսցէ և զզարդուց՝ տեսանիցէք ուղղութեալք. զի յուշ առնիցէ, թէ յորժամ տեսանիցէք՝ի գերութիւնն փոխանակ զարդուցն պաճուճանացն՝ փոշոտեալ երիվարեալ զերեսս, զսիրտ և զլիտս ուսկցէք, թէ յորպիսի փառաց յո՞ր թշուառութիւն հասաք։ Չի յայնժամ կարի կսկծեն՝ի նեղութիւնն, յորժամ առաջինն ինչ բարութիւնք՝ի միտ անկանիցին. զոր և Յովք յայտ առնէ ողբալովն, թէ Ո՞

տայր ինձ ամիաս ըստ ամենոյ աւուրցն առաջնոցն. և համարի կարգաւ զմեծութիւնն՝ որ ի բերև յաղբերաց բղխեին բարութիւնք, զպատիւն, զսպան, զհարկն՝ որ գային նմա, զի յորպիսի փառաց՝ յի՛ր տառապանս ի՛ջեալ նստէր. վասն որոյ և մարգարէս յուշ առնէ զսպատաս զարդուցն, նա և զայգեացն և զբուրաստանացն՝ զոր լքեալ յիշեցուցանէ: «Մնասջիր, ասէ, միայն». զի ոչ աք է զօրավիգն. ոչ Աստուծոյ գարմանք, ոչ՛ի մարգկանէ՝ բանիւ ընկերութիւնք. յամենայնի մերկ և կողոպուտ ինաոցես. շուրջանակի հինիւ և պատեբազմիք պաշարիցիս: Եւ զի զյաձախութիւն Թշուառութեանցն ցուցանիցէ, ասէ՝ «Ցերկիր կործանեսջիր». ոչ միայն զի անկանիցիս, այլ զի յատակն հասանիցես:

ԳԼՈՒԽ Դ

«Յաւուր յայնմիկ բուռն հարկանիցեն եօթն կինս զառնէ միոջէ՝ և ասիցեն. Հաց զմեր կերիցուք, և հանդերձ զմեր զգեցցուք, բայց միայն անուն քո կոչեսցի՛ ի վերայ մեր. բարձ՛ի մէնջ զնախատինս մեր»: Ցնուաղութիւն մարգկանն որ՛ի պատերազմացն լինելոց էր՝ յայտ կամի առնել, եթէ որպիսի՛ ինչ անօսրելոց էին ազգ որդւոցն Հրէից, զի և ոչ գարման անգամ յարանց պատանիցեն կանայք նոցա, թազ թէ զսէր և զգութ՝ որ բնաւ ուրեք ոչ գտանիցի. զի գոնեա անուամբ միայն բառնայցեն նախատինք այրութեանն. քանզի մեծ նախատինք էին այրութեան՛ ի մէջ Հրէից:

«Յաւուր յայնմիկ ծագեսցէ Աստուած խորհրդով հանդերձ փառաք յերկիր, բարձրացուցանել և փառաւոր առնել զինացորդս Իսրայելի»: Քանզի յոյժ տըրտմեցոյց զինոսա տրտմականացն սպառնալեօք, շրջի միւթաբել հեշտականացն աւետեօք. զի այս իսկ է իմաստուն բժշկի նշանակ իմաստութեան, զի ոչ հատանէ ևեթ և խարէ, այլ և զցաւս վիրացն հեշտական դեղովքն կակղացուցանէ. նոյնպէս և մարգարէս առնէ,

ոչ միայն զտխրեցուցիչսն ասէ, այլ և յետ չար պատգամացն՝ զբարիսն ընծայեցուցանէ. ոչ միայն զառ՛ի վշտացն ազատանալ, այլ և զփառաւորելն և զերևելին լինել: Ծագումն Աստուծոյ կոչէ՝ որ զնաւար տրտմութեանն մերժէ, և տիւ ծագէ և լուսաւորէ. իսկ խորհրդովքն հանդերձ փառաք, զի իմաստութեամբ որպէս Աստուծոյ վայելէին գործք՝ գործէին:

«Եւ եղիցին ինացորդքն Իսրայելի՛ ի Սիոնի, և ինայեալքն Սիոնի սուրբ կոչեսցին՝ որ գրեալ իցեն յԵրուսաղէմ՛ ի կեանս». զի ուսանիցիս, զի ոչ յանկարծագէպ լինչ իրօք եղև փրկութիւն զերծելոցն՛ ի վըշտացն, այլ յերկնից կարգեալ հրամանքն. զի իբրև ընդվարմաւ փակեալ էին և ոչ ըմբռնեցան. վասն այնորիկ ասէ, թէ սուրբ կոչեցան՝ որ գրեալ են Յերուսաղէմ՛ ի կեանս, զատեալքն, ընտրեալքն, նկատեալքն չմտանել՛ ի պատիժս: Նմանագոյնս՛ ի սուրբս կոչեաց զնոսա, զի յայտ արասցէ թէ ոչ վայրապար փրկեցան, այլ Աստուծոյ հրամանօվք: Այլ և այլ իմն լաւութիւնք գործէին. զի թէպէտ և էին պիտանիք և հեզք, սակայն յետ վշտացն և՛ս հաստատունք և առաքինիք լինէին. զոր օրինակ ոսկի ի հուր մտեալ՝ զամենայն աղտն մերկանայ, նոյնպէս և պիտանիքն և՛ս պիտանապինք լինին՛ ի փորձութիւնս, զի զամենայն իսկ ծուլութիւնն՛ ի բաց մերժեն:

«Լուացէք ցերը զաշտ ուստերաց և դստերաց Սիոնի, և զարիւնն Երուսաղեմի սրբեսցէ՛ ի միջոյնորա, հոգւով դատաստանի և հոգւով կիզման»: Թուի ինձ թէ աստկրկին իմն սրբութիւն ասէ, և պատիժս՝ ընդ մեղացն զոր գործեցին կրել, և փութագոյնս առ Հանդերձեալիսլինել: Եւ արիւն Երուսաղեմի՝ զտարապարտ հպարտութիւնն ասէ. զի ոչ գազատ ինչ կամ ծածուկ կոտորելին զնարդիկն՝ որպէս աւազակք կամ գողք, զի նոքա՛ ի ծածուկ, և սոքա յայտնի առաջի արեգական՛ ի հրապարակս և յատեանս: Այլ և որ անտի աղտն լինիցի եկեալ՛ ի պատերազմ՛ ի բաց սրբեսցէ. քանզի և՛ ի ժամանակի հեշտութեանցն, զառաջինն տրտմութեանցն պատմէ ձառս, և իբրև վշտագինք յայն սակս անյանգիլին ընդ նոսա, զի լուանայցեն, սրբիցին, ընդ եւանգն անյանիցեն, և զամենայն աղտն՛ ի բաց ընկենուցուն,

և ՚ի մեղացն և ՚ի սպանութենէն նախատանացն սրբե-
ցեն զանձինս. և վասն այսորիկ իսկ շրջէ զբանն յայլ-
ասացիկ յորջորջումն յիրաց ինչ՝ որ մտեալ ՚ի բովն՝
սրբիցին: «Հոգւով, ասէ, դատաստանի և հոգւով, ասէ,
կիզման». զի զոր օրինակ անդ հողմն մտեալ ՚ի փուքսն՝
զեռանդնն հորդիցէ, և զամենայն աղտ իրաց ինչ որ ՚ի
բովսն իցեն՝ սրբեսցէ, նոյնպէս և աստ աստուածապա-
տիժ բարկութիւնն, որով հէնն եկեալ հասանիցէ,
մտեալ իբրև զհուր ՚ի քաղաքն՝ սրբեսցէ զամենայն.
ոչ առ ուտել և ծախել, այլ առ ՚ի զտել և սրբել:
Հոգւով դատաստանի՝ զլրեկժան կոչէ, զպատիժն:

«Եւ եկեսցէ հասցէ Տեր». գալուստ՝ զպղեցիկ
նորա զօրութիւնն կոչէ: «Եղիցի ամենայն տեղի լերին
Սիովնի, և ամենայնի որ շուրջ զնովաւ իցեն, հովանի
յամպոյ ՚ի տուէ և իբրև ջծուխ և ելոյս հրոյ բորբոքե-
լոյ ՚ի գիշերի: Եւ ամենայն կողմանքն փառաք ծած-
կեացին: Եւ եղիցի հովանի ՚ի տուընջեան առ ՚ի տօթոյ
և ՚ի ծածկոյթ թաքստեան՝ ՚ի խաւարթենէ և յան-
ձրևոյ»: Այսպէս աստ՝ յետ չարչարանացն որ անդորրու-
թիւնն լինելոյ էր՝ կոչէ, և հուր բորբոքեալ՝ զմխիթա-
րութիւնն, որ յետոյ լուսաւորելոյ էր զնոսա. զի որպէս
ամպն ՚ի տօթոյն զովացուցանէ, նոյնպէս և մեծին գի-
շերի՝ լոյս խարուկի սքանչանք են. զի մին ՚ի խորշակէ
ապրեցուցանէ, և միսն ՚ի խաւարի լոյս առնէ: Զփա-
ռաւորութիւնն որ յետ վշտացն՝ հրոյ բորբոքելոյ նմա-
նեցուցանէ, և զդիւրութիւնն՝ ամպոյ. և զի յայտ ա-
րասցէ եթէ ոչ առ սակաւ սակաւ փարատել վշտացն
լինիցի դիւրութիւն, այլ վաղվաղակի մինչդեռ վիշտն
սաստկացեալ իցէն՝ փարատեսցի տրտմութիւնն. զի
այնու ևս ուսանիցին, զի ոչ յանկարծադէպ ինչ եղև
նոցա վշտացն փարատումն, այլ ՚ի վերին զօրութենէն:
«Եւ եղիցի հովանի տուընջեան առ ՚ի տօթոյ»: Աստու-
ծոյ օգնականութիւնքն և զօրավիգն լինելն. զի զոր օ-
րինակ հովանի ինչ ՚ի տօթոյ, կամ յարկ կամ քար-
այր, ՚ի սաստիկ անձրևի լինիցի անքոյթ այնմ՝ որ
անդր մտանիցէ, նոյնպէս և Աստուծոյ զօրավիգն օգ-
նականութիւն՝ չտայցէ ինչ վշտանալ, թէպէտ և քան
զանձրևն ևս սաստիկ զօրքն գայցեն, սակայն կարող է
փրկել և ապրեցուցանել:

ԳԼՈՒԽ Ե

«Օրհնեցիք զՏիրեցեաքն՝ յօրհնութիւն այգւոյ սիրե-
լոյ»: Երկեցոյց տրամականօքն, ուրախ՝ հեշտականօքն
արար, ազգի ազգի ինն հնարս բժշկութեան կազմեաց.
դարձեալ անդրէն ՚ի սկիզբն հանէ զբանն՝ նմանեցու-
ցեալ գլխոյ մարգարէութեանս, զի որպէս ՚ի սկզբանն՝
զերախտիսն Աստուծոյ որ առ նոսա գործէ՝ պատմէ.
Որդիս, ասէ, ծնայ և բազմացուցի. և զանօրէնու-
թիւնն որ առ ՚ի նոցանէ գործեցան յանդգնութեամբ՝
թուէ. ապա ածէ յարի ՚ի նոյն, թէ Եւ նոքա զիս ա-
նարգեցին, և Իսրայէլ զիս ոչ ծանեաւ, և ժողովուրդ
իմ զիս ՚ի միտ ոչ առ. նոյնպէս և աստ, թէպէտ և այ-
լազգիսս ինն բանս ձառէ, սակայն միտս զնոյն, զի յայտ
արասցէ թէ այն բանք և իսկզբանն՝ միմեանց նման են:
Եւ արդ ընդէ՞ր արդեօք զի պատուհասելոց էր՝ զպա-
տուհասն օրհնութիւնս կոչէ: Նախ Մովսէս իսկ հան-
դերձ քերբն Իւրով Մարեմաւ՝ զյաղթութեան երգս
օրհնութիւնս կոչէ. Օրհնեացուք, ասէ, զՏէր, զի փա-
ռաք է փառաւորեալ, զՀեծեալսն և զերիվարս ընկէց
՚ի ծով: Եւ Դեբովրա յետ սքանչելի յաղթութեանն՝
նմանագոյն ինն զյաղթութիւնն նուագեալ՝ օրհնու-
թիւնս մատուցանէր Աստուծոյ. նոյնպէս և սա, թէ-
պէտ և ՚ի պատուհաս մատչելոց էր, ուր սաստիկ բա-
նիւ սկսաք էին, և սրտի քաջի և մտաց զայրացելոց,
օրհնութիւն ինն պատմէ, և զպատուհասն օրհնու-
թիւն կոչէ. և ոչ սա միայն, այլ և մեծն Մովսէս յոր-
ժամ զյաղթութեան երգսն երգէր, զպատուհասն
Հրէիցն՝ օրհնութիւն անուանէր. քանզի այսպէս ասէր.
Զայս Տեառն հատուցանէք, և այս՝ ժողովուրդ յիմար
և ոչ իմաստուն. և բազում անգամ զպատուհասն նո-
յա՝ օրհնութիւնս կոչէ յօրէնսն: Եւ արդ ընդէ՞ր զպա-
տուհասն յօրհնութիւնս հանիցէն. այլ Հոգւոյն Սըր-
բով իմացեալ, թէ բազում շահ է այնոցիկ՝ որք ախոր-
ժելով կամիցին լսել. զի չիք այնպիսի ինչ օգտակար

յորժամ միշտ յանցանայն յիշատակք ՚ի մոլ կայցեն, և չտայցեն յապաղել և դանդաղել առ ՚ի գառնալ յապաշխարութիւն և ապրել. զի յորժամ յիշատակք յանցանաց միշտ ՚ի մոլ կայցեն, հանապազ զայն մըտ-մտնջէ, ընդ այն զբօսնու, և գութ գեղգեղանայս օրհ-նութեան՝ իբրև վարդապետ իմն լինի ածել յուղղութիւնս:

Եւ գութ ձեզին իսկ գիտեք թէ այլ գիւք այնպէս ընտանի ուժք ոչ են՝ որպէս սաղմոսքն, զորս յամե-նայն ժամ ընդ բերան ածեն. և անդստին իսկ յի-րացն յայտ է թէ ոչ՛ւչափ օգուտ մտաց լինի՝ յորժամ բանք սաղմոսին յօրինեալ ձայնիւք միշտ ընդ բերանն գայցեն. վասն այնորիկ և մարգարէն ասէ, թէ « Եր-գեցից սիրեցելոյն՝ զերգս այգւոյ իմոյ սիրելոյ». զնորին երգս սիրելոյն, ասէ, նմա երգեցից. քանզի և պատ-ճառք օրհնութեանն վասն նորա են և վասն նորին ինչ իրաց: Իսկ եթէ ՚ի ժամանակի պատուհասիցն սի-րելի և սիրեցեալ կոչէ, ընդ այն ինչ մի զարմանար, զի և սիրեցեալք՝ ևս և այնչափ վայելեալք Աստուծոյ խնամոցն, սակայն ոչինչ եղեն սպիտանիք: Զայս և միւս ևս մարգարէ ակնարկէ. Իբրև զնաղող, ասէ, յանա-պատի գտի զԻսրայէլ և իբրև զդիտակ վաղահասուկ ՚ի թզենւոջ տեսի զՀարս նոցա. և զգութն և զնը-նաման զոր ունէր ընդ նոսա՝ այսպիսի պաղոց նմանեցոյց. ոչ վասն գործոց ինչ նոցա ունէր գութ ընդ նոսա, այլ վասն խոստ բարերարութեանն՝ Աստուած: Եւ զոր ա-սէն՝ այսպիսի ինչ է. այնպէս, ասէ, սիրեցի զնոսա, որպէս ոք զի գտանիցէ խաղող յանապատի, կամ իբրև զդիտակ վաղահասու ՚ի թզենւոջ. զի թէպէտ և չիցեն ինչ արժանի Աստուծոյ օրինակքս, այլ նոցա որկորըս-տութեանն ՚ի դէպ են. զի նոքա, ասէ, որ յայսպիսի սիրոյ վայելէին, օտարացան և մոլին ՚ի Բեղեբուղը. նոյնպէս և աստ սիրեցեալ և սիրելի կոչէ զնոսա. զի Աստուած, ասէ, զնոր զամենայն զերախտիսն էցոյց, և ոչ վասն նոցա նախ սկիզբն առնելոյ, այլ Աստուծոյ նախ զսէրն յուցանելոյ. քանզի և նոքա և ոչ յետ ե-րախտեացն՝ յուցին զանձինս արժանի երախտեացն, այլ յամենայնի յետս ընդդէմ խոստմնական գտան:

« Այգի եղև սիրեցելոյն յեղջեր ՚ի տեղի պարար-

տութեան »: Այնուամբ այգւոյ զամենայն գործսն և զնաման որ ՚ի նմանէ նոցա լինելին՝ նշանակէ. և ոչ այս-չափ միայն, այլ և զայնչ ամենայն երախտիս Համարի. և նախ զկայեանս տեղւոյն յուցանէ, զի եղջերքն և պարարտութեամբ տեղւոյն՝ զկայեանս երկրին գո-վեալ ասէ. որպէս և Դաւիթ ՚ի սաղմոսն, Թէ երու-սաղէմ՝ լերինք շուրջ են զնովաւ, և Տէր շուրջ է զժո-ղովրդով իւրով. զի պարսպեաց զնա և տեղւոյն իսկ կայենութիւն. և ոչ այսչափ միայն, այլ և ինքն իսկ պա-րիսպ հզոր եղև շուրջանակի, զոր և մարգարէս իսկ նշանակէ, զամրութիւն տեղւոյն՝ եղջիւրն և բարձրա-ւանդակ կոչելով: Եւ յառաջ քան զայս՝ զԱստուծոյ օգ-նականութիւնն ակնարկէ, փոփոխական եղջերն յոր-ջորջմամբ. նաև առաւել Իմաստնոյն զայս յայտնապէս յուցանէն ՚ի զգուշութիւն ապաւինելոյն. քանզի ուժ-գին քան զբազում անասունս է զուարակ, և ՚ի նմա զօրագոյն անգամ՝ եղջիւրն է, զի իբրև զինու իմն վարի նովաւ, որով և ոչ վաղվաղակի ՚ի բուռն ուրուք ան-կանի. նաև գիւք՝ բազում անգամ եղջեր միեղջիւրոյ կոչէն զայնոսիկ՝ որ յամրութեան և ՚ի զգուշութեան իցեն. վասն այնորիկ և աստ եղջիւր՝ զամրութիւն և զբարձրութիւնն կոչէ, որպէս մօտ ՚ի սկիզբն ասէ, Թէ Որդիս ծնայ և բարձրացուցի: Եւ տեղի պարար-տութեան այն է՝ զոր և Մովսէսն ասէ, Թէ Երկիր՝ որ բղխէ զկաթն և զմեղր:

« Ցանկով փակեցի, և ամրութեամբ պարսպեցի »: Ցանկ՝ կամ զպարիսպն ասէ կամ զօրէնսն, և զառ ՚ի նմանէ խնամսն. քանզի օրէնքն ևս ամրաձածուկ քան զպարիսպն պահէին զնոսա: « Ամրութեամբ պարըս-պեցի ». այս ինքն է՝ հաստատուն յամենայն կողմանց արարի զամրութիւնն. քանզի ցանկ դիւրաւիկ իմն կարծի, վասն այնորիկ, ասէ, և այլովք զօրավիգն ամ-րութեամբ պարսպեցի:

« Եւ տնկեցի որթ սուրկք ». Թէպէտ և յամէ ՚ի փոփոխումն անուանցն, չէ ինչ Հարկ մի ըստ միոջէ ըստ բանիցն մեկնել, այլ Հայեցեալ ՚ի միտս՝ շատա-նալ նովքին: Սուրկքն ասելով զաշնութիւնն և զա-ռաւելութիւն որթոյն յայտ առնէ, եթէ ոչ յուի տնկոց, այլ յամենաւայ և յընտրոյ. քանզի բազում

աղդք են որթոց: « Եւ շինեցի ’ի նմա աշտարակ »: Ո-
մանք զտաճարն ասեն աշտարակ, և գուբ հնձան՝ զսե-
ղանն. վասն զի պտուղք իւրաքանչիւր առաքինու-
թեանց, ասեն, անդր ժողովեին՝ պատարագք և ըն-
ծայք. այլ ես որպէս յառաջագոյն ասացի և այժմ՝
զնոյն ասեմ, եթէ ոչ ’ի փոփոխումն անուանցն պարտ
է հայել, այլ ’ի միտն. զի ամենևին այսպիսի լուծ կամի
ասել, թէ ես՝ որ յինէն էր՝ զամենայն կատարեցի, զա-
մենայն դարմանս ցուցի, ոչինչ աշխատ արարի զնոսա
վաստակով, ոչ նոցա ետու գործել և բրել և հանկել
այլ կատարեալ գործեալ ետու ’ի ձեռս նոցա. և ոչ այ-
սու միայն ցուցի զմարդասիրութիւն իմ: « Այլ և կա-
յի ինձս բազում ժամանակս, յերկարեցի երկայն-
մտութեամբ, զի բերցէ խաղող, եկն և եբեր փուշ
և տատասկ »: Փուշ և տատասկ՝ զանպտղութիւն
գործոցն, զլաստութիւնն և զանպտղութիւնն յայտ
առնեն: Եւ արդ որպիսւմ ներելոյ Թողութեան լի-
ցին արժանի որք զայնպիսի պտուղս ետուն մշակին:

« Եւ արդ, այր Յուդայ և բնակիչք Երուսաղեմի,
դատ արարէք ընդ իս և ընդ այգի իմ»: Բազում ի-
րաւանց առաւելութիւն է, յորժամ զպատժապարտ-
սըն դատաւորս նստուցանէ իւրոց երախտեացն, և նո-
ցա ապախտաւորութեանն: Եւ արդ չասեմ, ասէ, զՀին
ինչ, այլ այժմ պատրաստ եմ ’ի դատ մտանել. զի ոչ
երբեք նուաղեցուցի ինչ՝ թէ ոչ զիմն զամենայն կա-
տարեցի, նաև դուք զձեր չարիսն լցէք:

« Եւ արդ զինչ պարտ էր առնել այգւոյ իմոյ և ես
ոչ արարի նմա». զամենայն ինչ արարի, բայց այն
միայն զի պտուղ ոչ առնուի. և ոչ ասեմ թէ բազում
երախտիս արարի, այլ թէ՝ զամենայն զերախտիսն կա-
տարեցի. արդ պահանջեմ ’ի ձէնջ՝ որ վայելեցէքդ, և
վկայք երախտեացն՝ զձեզ կոչեմ ’ի դատաստան, ոչ զօ-
տարս և զանտեղեակս: « Վասն որոյ կացի ինացի, եկն
եբեր փուշ և տատասկ »: Եւ զոր ասէն՝ այսպիսի ինչ
է: « Զինչ ինչ պարտ էր առնել այգւոյ իմոյ և ես ոչ
արարի նմա » զի այնչափ մեղան. զինչ մեղ գնիցեմ;
զինչ պակասեաց նոցա՝ զի այնչափ չարիս գործեցին:

« Այրդ ես ինձէն պատմեցից թէ զինչ արարից ընդ
այգի իմ»: Յորժամ զնւ ը յաղթութիւնն եցոյց, և զնո-

ցա առաստութիւնն [1] յայտ արար, ապա ածէ զվճիռն
’ի մէջ՝ որ տալոց էր նոցա, ոչ զի դատապարտեսցէ,
այլ զի երկիւղիւ սպառնալեացն՝ ’ի համեստութիւն
դարձուսցէ: « Աւուց զամբութիւն ցանկոյն և եղիցի
յափշտակութիւն. քակեցից զպարիսպ նորա և եղիցի
կոխան»: Ի բաց արարից զզօրավիգն օգնականութիւնն,
մերկ և կողոպուտ կացուցից ’ի պաշտպանութենէն, ’ի
դարմանոյն և ’ի խնամոյն, զի փոխանակ բարութեանցն
յորս վայելելին՝ ’ի թշուառութիւն հասուցից:

« Լքից զայգի իմ, զի մի յատցի և մի գործեսցի »:
Դարձեալ զփոփոխական յորջորջումն ’ի մէջ բերէ. զի
եթէ ջերմագոյն ոք ’ի միտն կամիցի նայել զօրինացն
խնամոց ասէ, զպատուիրանացն դարմանոց, զի մի վա-
յելեսցեն ’ի նոսա՝ որպէս յառաջագոյնն, մի վարդա-
պետս ունիցին, մի իշխանս, մի մարգարէս, որք զնոյն
զեղծութիւնս ուղղիցեն: Զոր օրինակ որք զայգիսն
գործիցեն՝ բրեն, կակղեն, յատանեն, նոյնպէս և որ
զոգիսն դարմանիցեն՝ սպառնան, երկեցուցանեն, ու-
սուցանեն, մխիթարեն. և արդ ասէ, թէ Թափուր յա-
ւիտենական երկիւղեն վտարանդի յօտար աշխարհ:

« Բուսցի և կցեսցի ’ի նմա փուշ իբրև ’ի խոպանի.
հրաման տայ ամպոց իմոց զի մի տեղասցին յայգի իմ»:
Կամ զաւերած քաղաքին նշանակէ, կամ զիւրաքան-
չիւր ոքւոց քաղաքահեղձոյցն լինելոյ ’ի չարիս: Ամպս
աստ՝ ասեն ոմանք՝ զմարգարէսն կոչէ, որք ’ի վերուստ
իբրև զանձրև առնուին զվարդապետութիւնն, և տե-
ղային ’ի ժողովուրդն զպատգամն, զի և այն ևս սովորու-
թիւն բառնայցէ ’ի միջոյ. թէպէտ մի և երկու չոգան
ընդ նոսա ’ի գերութիւն, սակայն բազմութիւն մար-
գարէիցն ’ի ժամանակին լռեաց:

« Չի այգի Տեառն զօրութեանց՝ տունն Իսրայելի է,
և մարդն Յուդայ՝ նորատունկ սիրելի. կայի ինացի զի
արասցէ իրաւունս, և արար անիրաւութիւն [2], և ոչ
արդարութիւն՝ այլ աղաղակ»: Քանզի բազում անգամ
’ի մէջ եբեր զփոփոխականն յորջորջումն, զի այդի և
մշակ և գուբ հնձան և յանկ, բրել և յատանել զորթն՝
ասէ. և զի մի ոք յանմտաց որ էին ’ի ժամանակին՝ կար-

1 Յն. Անիմաստութիւն կամ անձանաչողութիւն:
2 Յօր. Պակասէր և արար անիրաւութիւն:

ծիլէ թէ վասն այգւոյ ինչ իցեն ձառք, գայ վաղվա-
ղակի յետոյ միանգամայն զամենայն մեկնէ ասելովն,
թէ «Ա.յգի Տեառն զօրուԹեանց՝ տունն Իսրայելի է»·
ոչ զտնկոյ ինչ խօսիմ, ասէ, և ոչ զանշունչ երկրէ, և
ոչ զքարանց կամ զպարսպաց, այլ զձերոյ ժողովրդոյն·
քանզի և յարէ իսկ՝ինոյն՝ եԹէ «Մարդն Յուդայ՝նո-
րատունկ սիրելի»· զի զրեԹէ ամենայն տան ազգն
անդ էին, և տաճարն՝ի միջի նոցա, և այլ ևս դալ-
մանքն, զի քան զայլն առաւել ևս ծաղկեալ էին, և
մանաւանդ զի Թագաւորացդ ազգն անդ էր, վասն այ-
նորիկ կոչէ զնոսա սիրեցեալ, զի այնու առաւել կըս-
կԾեցուսցէ, Թէ որ այնպէս սիրելիք էին՝ այնպիսի ա-
պաՀատուորք գտան: Ա.յնպիսի իմն են օրէնքն այնոցիկ
որ սիրիցեն, և՝ի պատուհասն չԹաքուցանեն զիւրեանց
սիրոյն առաւելուԹիւնն: Եւ աստի այլ իմն ոչ սակաւ
ուսանիմք. և զինչ իցէ զոր ուսանիցիմքն. զի յորժամ
զիրք այլասացիկ բարբառով զիրս ինչ նշանակիցեն,
զի միայն ևԹէ Հաստատել կալ, այլ զմտացն զՀետ
վարել, և ոչ յայլասացիկ բարբառն Հաստատել: Եւ զոր
ասեմ՝ այսպիսի ինչ է. ասացին այժմ գիրք՝ ցանկ և
դուք Հնձան, և ոչ Թողին զմիտս լսողին յայնմ Հաս-
տատել կալ, Թէ որպէս լուաւն՝ և զնոյն իմանայցէ,
այլ ինքնին զամենայն մեկնեն գիրք. որպէս և աստ իսկ,
Թէ «Ա.յգի Տեառն զօրուԹեանց է տունդ Իսրայելի».
և Եզեկիէլ ասէ, Թէ Ա.րծուին մեծ լայնաԹեւն եր-
կայնատարած էկեալ մտանէր՝ի Լիբանան, և կոտո-
րեր զծայրս մայրիցն. սակայն և նա ոչ տայ Թոյլ մտալ
լսողացն՝ յայնմ Հաստատել կալ, այլ և զմեկնուԹիւնն
՝ի մէջ բերեալ յուցանէ, Թէ ա՛ արծուին իցէ և կամ
զինչ մայրքն: Եւ սա մատուցեալ յառաջագէտ իմն յոր-
ժամ ասէ գալ Յերկիրն Հրէաստանի. և զի մի իշխես-
ցէ լսողն ըստ իւրոյ մտացն պատշաճել զերեսս բա-
նին, յայտ առնել զԹագաւորն զոր գետն կոչեաց. և
աւրէնացն ուրեք գրոց այնպիսի իմն օրէնք են, յորժամ
այլասացիկ բարբառով իրս ինչ ձառիցեն, անդէն վաղ-
վաղակի զմեկնուԹիւնն այլասացիկ յորջորջմանն՝ի մէջ
բերեն, զի յայտ արասցեն՝ եԹէ վայրապար է ցանկու-
ԹիւնՆ այնոցիկ, որ զայլասացիկսն Հաստատել կամին.
զի մոլորեալ իմն այնու այսր անդր Հարկանիցին: Եւ

ընդ այս զի զարմանաս, Թէ մարգարէքն այսպիսի բար-
բառովք խօսին. ուր և առաքադիրն ասէր, Թէ Եղէն
սիրոյ և յաւանակ էնոլհայ խօսեացի ընդ քեզ. և աղ-
բիւր ջուրց եղիցի քեզ միայն առանձինն. և մեկնէ, Թէ
վասն կր ասիցէ զայս. վասն ամուանոյ և օրինաւոր կնոջ,
զի... կարձեսցէ՝ի պոռնիկն և յօտարոտին մերձենա-
լոյ. սոյնպէս և սա ասաց՝ այդի, և մեկնեաց Թէ զինչ
այդին իցէ: Եւ իբրև ասաց զպատուհասն և զպատիժն
որ՝ի վերայ դալոց էին, դառնայ այնուհետև յաղերս.
«Կացի ինձայի, ասէ, զի արասցէ իրաւունս, և արար
զանօրէնուԹիւն, և ոչ արդարուԹիւն՝ այլ աղաղակ»:
Յիրաւի պահանջեմ զվրէժս, քանզի կացի ինձայի իրա-
ւանց արդարուԹեան, և նոքա զանիրաւուԹիւն և զան-
օրէնուԹիւն և զաղաղակ ցուցին: Աղաղակ ասաւ՝ զա-
գահուԹիւնն կոչէ, զանիրաւ ցասումնն, զանհանձար
բարկուԹիւնն, զկռիւսն, զՀակառակուԹիւնն:

«Վա՛յ այնոցիկ որ յարէն տուն՝ի տուն և ագարակ
առ ագարակ մերձեցուցանիցեն, զի զընկերին հանի-
ցեն»: Աղաղակ, ասէ, ցուցին, այսինքն է զյափշտա-
կուԹիւնն, և զնշանակ ևս զապիրատուԹեան և զա-
գահուԹեան, որ լինի է չարագործուԹեամբ՝ ցուցա-
նէ: Դարձեալ ողբս առեալ ողբայ, զի զբազմուԹիւն
մեղացն յայտ արասցէ, և զանբժշկական ցաւս նոցա:
Ձայս և այժմ տեսանեմք, զի բազումք խնամածու-
ԹեամբՔ ԹեԹն ածեն դրացեաց, ոչ զի օգնիցեն ինչ,
զի առաւել նենգիցեն զմերձաւորս. որպէս և հրդեհ
զի ոՀով ուտիցէ զամենայն, սոյնպէս և զդրացեաց
զաղքատսդ՝ ձարակին Հարուստք զամենայն ինչ:

«Մի եԹէ միայն ինչ բնակելոց իցէք յերկրի. դա
աւադիկ ազգ եղև յականջս Տեառն զօրուԹեանց այդ
ամենայն»: Ձի յայտ արասցէ՝ եԹէ՝ի զուր ջանան,
ընդ վայր վաստակին, զի պատիժքն և տանջանքն ու-
սուսցեն Հաւաստեաւ Թէ էՔ վայելելոց յայդմ՝ զոր
յափշտակիցեՔ, ԹէպետՔ և վաստակիցեՔ և զմեղս ան-
ձանց գանձեՔ, սակայն ոչ վայելիցեՔ, զի կործանելոց
են, զի ոչ գաղարեսցէ ակն արԹուն: «Ազգ եղև յա-
կանջս Տեառն զօրուԹեանց». ոչ զայն ինչ յայտ առնէ՝
ԹէԹ լուաւ զչարիսն, այլ զաւ՝ի պատիժան յայտ առ-
նելոյ, ԹէԹ յայնմ Հետէ խնդրելոց է վրէժ յափշտակու-
ԹեանցՆ:

«Զի Թէ եղիցին տունք բազումք՝ սակայն յաւեր դարձցին, և եթէ մեծամեծք և գեղեցիկք իցեն, սակայն մի գոցին՝ որ բնակիցեն ՚ի նմա»։ Զի այսպէս ինն է ապահովութիւնն. յորժամ բազում ինչ յաձախէ գոյաւորացն, ապա և յառաջնոցն ևս սրկանէ. զոր և ասէ իսկ ակնարկէ, Թէ յորժամ շինիցէք զամենայն կազմ, և համարիցիք Թէ ամենայնին ձեր իցէ, ապա և յառաջնին արարոյն անկանիցիք, և լքեալ ինացեալ տունք առանց բնակչաց, զի առաւել քան զփող հընչեալ աղաղակէ զյափշտակողացն Թշուառութիւն։

«Ուր գործիցեն տանն լուծք եզանց, եղիցի անդ խաւեակ մի, և որ սերմանիցէ արդուս վեց, եղիցի անդ դրիւք երեք»։ Ի քաղաքէն մինչև յանգոյն անպտղութիւնն ձգէ զսաստն, զի յամենայն կողմանց մորմոքեցուսցէ զլսողսն. ոչ տունք, ասէ, ունիցին զբնակիչսն, և ոչ երկիրն տայցէ զպտղութիւնն. քանզի և իսկզբանն վասն Ադամայ մեղացն՝ փուշ և տատասկ հրամայեցաւ բուսանել երկրի, և ՚ի բազում արմտեաց սակաւ արդիւնս ժողովել կայենի, վասն անհնարին անօրէնութեանն։ Եւ բազում և այլ ուստեք է իմանալ, զի վասն մեղաց մարդկան երկիր տանջի. և ընդ այն մի զարմանալ եթէ կարձէ զբերս երկրի և զծնունդս մարդկան՝ անօրէնութիւն, ուր զի և ապականացու իսկ վասն մեր եղև, և անապականացու դարձեալ վասն մեր է լինելոց. և քանզի ամենևին իսկ վասն մեր եղև նմա լինել և վասն մերոյ սպասաւորութեանն, և այսպէս և այնպէս։ Նոյնպէս և առ Նոյիւ, քանզի յանհնարին չարիս կործանեցաւ բնութիւն մարդկան, ամենայն երկիր շփոթեցին և սերմանիք և տունկք և անասնոց ազգք և երկիր և ծով և օդք և լերինք և բարձունք և բլուրք և քաղաքք և պարիսպք և տունք և աշտարակք և ամենայն ինչ միանգամայն յահագին համատարած ծովուն ծածկեցին։ Եւ դարձեալ յորժամ ազատել պարտ էր միւսանգամ ազգաց և ծննդոց, դարձեալ շիւր յօրինաւոր վայելչութիւնն առնոյր անդէն միւսանգամ երկիր։ Եւ այլ ևս իմն իմանալ է, Թէ վասն մարդկան պատուոյ և ծով յամաքեցաւ և դարձեալ անդրէն խառնարհեցաւ և արեգակն նահանջեցաւ և լուսին կասեաց յընթացից և հուր՝ զքոյ գործ եղոյց

և երկիր զծովու և ծով զերկրի. և ամենայն ինչ վասն մարդկան օգտի փոփոխեր, զի քան զամենայն ինչ՝ մարդ է պատուական և ամենայն ինչ վասն նորա եղև. և անդ վասն զի մեղաւ[1] ժողովք Հրէիցն՝ արգելոյր Աստուած զծնունդս երկրի. և Թէպետ և բազում անգամ վաստակէին և խոնջէին, սակայն ոչ բանայր Աստուած զարգանդս երկրի, զի անտի ևս իմանայցեն Թէ ոչ միակաց ձեռաց է Ճարտարութիւն, և ոչ ջանայն և ոչ լծոյն և արօրոյ, և ոչ երկրին բնութեանն, և ոչ այլ իրիք ինչ այսպիսեաց. այլ ամենեցուն Տէր է, որ առատ ձեռամբ զեղու զամենայն, և յորժամ կամի՝ արգելու զբնաւ։

«Վա՛յ այնոցիկ՝ որ յառնեն ընդ առաւօտս և զՀետ լինին ցքոյն, որ երեկանանն ՚ի նմին, զի գինին անդէն զնոսին այրէ. փողոմք և քնարաւ, երգով զգինին ըմպեն, և ՚ի գործս Տեառն ոչ հային, և զգործս ձեռաց նորա ոչ առնուն ՚ի միտ»։ Պատուհասեաց զբազումս ագահութիւն նոցա, և արմատս չարեաց ցուցանէ զարքեցութիւնն, որ է պատճառք ամենայն չարեաց, և մանաւանդ յորժամ այնպէս յանգգնութիւն իցէ։ Եւ տէս, զիարդ հենգնէ. զօրն իսկ ցերեկի, ասէ, յայն ծախէք. ոչ յորժամ Ճաշս մեծարանաց ուտեք առնիցեն, այլ զամենայն ժամանակս, ասէ, արբեցութեանն ժամանակ առնեն. և յայդուէ իսկ հետէ յորում նոցա՝ յանցանաց պարտ էր զգուշանալ, անապակին, ասէ, տան զանձինս, և մինչև ցերեկոյ յայն ծախեն զօրն. զի յորժամ ընկզմիցին յանխառնութեանն խորս, և ՚ի մեռց անկանին և զոգիսն ՚ի դերութիւն չարաչար արբեցութեանն մատնեսցեն. իբրև զնաւ առանց ռազաստի և առանց ուղղչի և առանց նաւորդացն՝ որ այսր անդր կոծիցի յալեացն սաստկութենէ, և նոքա նոյնպէս ծփիցին. վասն որոյ ասէ՝ Թէ յարուցեալք յառաւօտէ մինչև յերեկոյ զգբոյն զՀետ ընթանան. ոչ եթէ զպետն և՛եթ վՃարեն, այլ գործ իմն զայն արարեալ՝ հանապազ արբենային։ Իսկ ցքի՝ որ յամբլուածն առնեին և ՚ի պետս գինոյ փոխէին՝ զայն կոչէ, քանզի Թմրեցուցիչ իմն և արբեցուցիչ է. ապ-

1 Ցօր. Մեղացն։

կայն նոքա ոչ խորչէին, այլ միշտ զայնը ձգետ երթա-
յին. « Ող 'ի նմին, ասէ, երեկանան. զի գինին, ասէ,
անգէն զնոսին այրէ ». քանզի այսպէս է արբեցութիւն,
որչափ ըմպէ ոք՝ առաւել պատքեցուցանէ:

Դարձեալ և այլ իմն պատուհաս 'ի մէջ բերէ.
« Փողովք, ասէ, և թմբկաւ և քնարաւ զգինին ըմ-
պեն ». զայս և միւս մարգարէ բամբասէ. Ողք ըմպէին,
ասէ, պարզեալ գինի, և անոյշ անոյշ խղովք օծա-
նէին, որք ուրախ էին 'ի ձայնս փողոց իբրև 'ի հաս-
տատանոց լինէ և աննշանակ ոգւոց մեղկացելոց, որք
լիտեցուցանեն զանձինս յայսպիսի լինէ երգս զեղեալք.
զի որպէս արբեցութիւնն ցնորեցուցանէ, նոյնպէս և
երգք մեղկեն զմտացն Հաստատութիւնն, զջիլս ոգւոյն
Հարկանեն և յանպայման անառակութիւնս կործա-
նեն: « Եւ 'ի գործս Աստուծոյ ոչ հայիմ, և զգործս
ձեռաց նորա ոչ առնուն 'ի միտ »: Զոքանչելիս նորա
ասէ, և զարարածոցս տեսիլ. քանզի զիաւրդ կարէին
լինել տեսողք՝ որք զտիւն գիշեր առնէին, և զգիշերն
ևս ծանրագոյն քան զմահ. զիաւրդ կարէին տեսանել
զարեգակն ծագեալ, կամ զերկինս զարդուք պայծա-
ռացեալ, կամ զաստեղս լուսաւորեալս յերեկուն և
յառաւօտին ժամանակի, կամ զայլ ևս վայելչութիւն
զարարածոց և զպատասաւորութիւն, որոց ներքոյ և
արտաքոյ փակեալ են աչք հանապազ 'ի թմրիլ ար-
բեցութենէ:

« Եւ արդ 'ի գերութիւն մատնեցաւ ժողովուրդ
իմ. զի ոչ գիտացին ձանաչել նոքա զԱստուած, և բա-
զում եղեն դխակունք նոցա, վասն սովոյ հացի և ծա-
րաւոյ ջուրց »: Ցէս, և 'ի պատիժն որպիսի լինէ խրատ
կայ. քանզի ոչ վաղվաղակի հերձու զվէրն 'ի խոր, և
ոչ ածէ վաղվաղակի զգերութիւն, այլ նախ սով և ե-
րաշտութիւն. զի միթէպէտ յաշխարհին իցեն, և 'ի սո-
վոյն նեղիցեն, լինիցին պիտանիք, և մի ծնկիցեալք
յանհնարին ախտն՝ ածեն 'ի վերայ անձանց զզօրս
հինին: Եւ քանզի ոչ ինչ անսացին, և ոչ ինչ շահե-
ցան, այն սակս ածէ 'ի վերայ նոցա զանհնարին պա-
տիժն. այլ նախ քան զայս՝ զայն սպառնայ, և մեծա-
ցուցանէ զձառս սովոյն:

« Լայնեցին, ասէ, դժոխք զանձինս իւրեանց »: Ի-

բրև ոչ ասէ՝ թէ անձն կամ շունչ ինչ իցէ դժոխոց,
այլ երեսս առեալ՝ կամի առնել զքանն յայտնագոյն.
քանզի և յամէ 'ի նմին, եթէ « Բացին զբերանս իւ-
րեանց՝ զի մի ինչ պակասեսցէ ». իբրև զահագին ինչ
գազանէ ձառէ. և այն ևս չար է, զի ոչ միայն բերա-
նաբաց է, այլ զի և յագուրդ ոչ գիտէ: « Եւ իջցեն
փառաւորք, մեծամեծք, մեծատունք, որկորեայք,
ժանտք »: Ժանտք յայն սակս ասէն, զի ոչ միայն ին-
քեանք էին ժանտք, այլ և յայլս ևս տային զժանտու-
թիւնն. զի գիտասցես՝ թէ ոչ վայրապար ինչ եկին
իրքն որ գործելոց էին, այլ Աստուծոյ պատիժք և
յերկնից հրամանք: « Եւ 'ի վերայ փառաւորաց և զօ-
րաւորաց և յղփացելոց ». ամենեքեան նոքա, ասէ, ի-
ջանիցեն 'ի դժոխս. որ փափուկն իցէ, որ համարիցի
թէ 'ի բարիսն իցէ և ոչ անցանիցէ 'ի նմանէ բարիքն,
և նա խոնարհեսցի և կործանեսցի:

« Խոնարհեսցի, ասէ, մարդ, և անարգեսցի այր, և
աչք հպարտք և ամբարտաւանք՝ խոնարհեսցին. և
բարձրասցի Տէր զօրութեանց »: Ցէս դարձեալ զդար-
մանս խնամոյն Աստուծոյ, զի ոչ զամենեսեան առ հա-
սարակ սատակէ, և ոչ զամենեսեան 'ի միջոյ բառնայ,
այլ յորժամ ոմանք 'ի գերութիւն վարիցին, այլք նո-
քովք խրատեալք՝ պիտանիք լինիցին: Արդ զայս իմն
ակնարկեալ ասէր, եթէ խոնարհեսցին մնացեալքն:

« Եւ բարձրասցի Տէր զօրութեանց իրաւամբք, և
սուրբն Աստուած փառաւորեսցի արդարութեամբ »:
Եւ արդ երկուս ինչ բարութիւնս առնէ, զի և նոքա
սպրեալք 'ի բարկութենէն՝ լինիցին պիտանիք, և Աս-
տուած փառաւորեսցի առ ամենեսեան. և զի յորժամ
հարկանէն և պատժէ՝ յայնժամ փառաւորի և բար-
ձրանայ իրաւամբք վրէժխնդրութեանն: « Արածեսցին
զկեալք՝ իբրև յուրս, և զաւերակս մնացելոցն գա-
ւիթքն կերիցեն »: Ջնաւաղութիւն մնացելոցն և զա-
ւեր երկրին յայտ առնէ այսուիկ:

« Վայ որք կորզեն զձեզ իւրեանց՝ իբրև երկայն
չուանով, և իբրև սամետիւք երընջոյ լծոյ՝ զանօրէ-
նութիւնս իւրեանց. որք ասիցեն՝ եթէ փութասցի
զոր առնելոց իցէ Աստուած՝ զի տեսցուք, և եկեսցէ
հասցէ խորհուրդ սրբոյն Իսրայելի՝ զի գիտասցուք »:

Յորժամ մարգարէքն սպառնային և զահապինն յա-
ռաջագոյն ասէին, սուտ մարգարէքն պաշտօն առնե-
լով ժողովրդեանն՝ զԻլլէն հարկանէին, զմարգարէիցն
բանս սուտ առնէին, և զնուբեանցն՝ Աչմարիտս: Ապա
այնուհետև բազումք մոլորեալք ՚ի նոցանէ և ոչ հա-
ւատային իսկ մարգարէիցն. քանզի մարգարէութիւնն՝
ոչ անդէն միանգամայն ասէին և իսկ և իսկ իրացն
վճիռ առնէին. զի մարգարէութեան բանք էին՝ յա-
ռաջագոյն գուշակել, և յետ բազում ժամանակաց
գալ բանիցն յարդիւնս. և զի Ճառէին բազում ան-
գամ և զսովոյ և զսրոյ, և իրքն իսկ և իսկ ոչ կատա-
րէին, քանզի առ յատպա էին գործելոյ, ՚ի թերահա-
ւատութիւն կործանէին բազումք ՚ի մոլորելոցն. լսեի,
ասէ, զինչ լինելոցն իցէ, ստուգեսցին իրքն, ցուցէք
արդեամբք զնորհուրդն Աստուծոյ: Եւ քանզի եր-
կայնմտութիւնն Աստուծոյ՝ անհաւատութեան պատ-
ճառք լինէր, և յայնմանէ ևս յաճախէին ՚ի մեղս առ
՚ի չաւատալոյ և ՚ի չաւատալոյն՝ ծուլալ, յիրաւի մար-
գարէն ողբայ և ասէ, եթէ իբրև երկայն չուանօք՝
այնպէս ձգէք յանձինս զբարկութիւնն Աստուծոյ և
աձեցուցանէք զչարիսն ձեր. և զի չաւատայք բանիցն
այն, և եթէ պակասէ զի զարդեանց Հանդէս տեսա-
նիցէք, դուք ձեզինն էք՝ որ զչարիսն ձգէք ՚ի ձեզ՝ չա-
ւատալով ասացելոցն. վասն այնորիկ և ասէ իսկ, Թէ
« Վայ այնոցիկ որք կորզիցեն զմեզս իւրեանց », այս-
ինքն է զհատուցումն մեղացն՝ իբրև երկայն չուանաւ
ձգէին ՚ի բացուստ, զվաղուցն կատարեալ զբարկու-
թիւն վրիժուցն. « Եւ իբրև սամեսկիւք լծոյ երինջոյ՝
զանօրէնութիւնս». զի որպէս ուժգին սամեսկիւք լուծ
ձգիցի, նոյնպէս և նոքա թերահաւատութեամբ ձգէին
յանձինս զբարկութիւնն Աստուծոյ: Ապա ասէին [1],
Թէ ՚ո՞րպէս ձգէին. « Ո՛յք ասէին, ասէ, փութասցի
մերձեսցի զոր ինչ առնելոց իցէ Աստուած, զի տես-
ցուք ». և միւս ևս մարգարէ մեղադիր լինի, Թէ Վայ
ոյք յանկայցեն աւուր Տեառն. զի կայ ձեր և աւուրն
այնորիկ. զի խաւար է նա և ոչ լոյս, և մէգ, և ոչ գոյ
՚ի նմա ձառագայթ լուսոյ. որպէս նոքայն չաւատային Թէ
էիցէ գալոց օրն դատաստանի և պատժոց:

1 Ցե. Ասէ:

« Վայ այնոցիկ՝ ոյք ասիցեն զչարն բարի և զբա-
րին չար. և ոյք դնիցեն զխաւարն լոյս և զլոյսն
խաւար. և ոյք դնիցեն զքաղցրն դառն և զդառնն
քաղցր »: Դարձեալ զնոյն իրացն ասէ. զի զմարգա-
րէսն Թշնամանէին և խաբեբայս կոչէին, և զսուտ
մարգարէսն պատուէին և յարգէին՝ աչխարէ զան-
մտութիւն նոցա և ասէ. « Վայ ոյք ասիցեն զչարն բա-
րի », զսուտ մարգարէութիւնն՝ Աչմարտութիւն, և
զՀչմարիտն՝ ստութիւն: Զի Թէպէտ և բանքն Ծանուռնք
իցեն, սակայն չէք լինչ քաղցր քան զմարգարէութիւնն՝
որք սպառնալեօք բանից՝ փարատէին զբարկութիւնն.
և Թէպէտ և քաղցր են բանք սուտ մարգարէիցն, ոչ
ինչ գոյր դառն քան զայն, զի պաշտօն առնելով յո-
ղացուցանէին [1] և առնէին արժանիս պատժոց: Այն-
պէս զխաւարն և զլոյսն է իմանալ. զի նոքա ՚ի խաւար
ձգէին, և մարգարէքն ՚ի լոյս առաջնորդէին:

« Վայ այնոցիկ՝ որք զանձինս առ իմաստունս ու-
նիցին, և յաչս անձանց խորհրդականս ելևէսցին »:
Զի և այս չէ լինչ փոքր վնաս զանձն առ իմաստունս
ունել և ըստ իւրոց մտացն ևեթ գնալ. զի յայտնէ
լինի և այն՝ զոր և Պաւղոս առ արտաքին իմաստունսն
ասէր. Զանձինս առ իմաստունս ունէին՝ յիմարեցան.
քանզի յայտպիսի մտաց յիմարեցան. և Ակակապիոն
ասէր. Տեսի զմարդն յանձն պանծացեալ՝ Թէ իմաս-
տուն իցէ. և յանմտին առաւել յոյս գոյր քան ՚ի
նմա: Վասն որոյ և Պաւղոս սաստէ՝ Թէ Մի լինիք ի-
մաստունք յանձինս ձեր. և դարձեալ, Թէ Որ կամին
իմաստուն լինել՝ յիմար լիցի. մի յիւր իմաստութիւնն
ևեթ պանծանալ և ըստ իւրոց մտացն ևեթ գնալ,
այլ զիւր խորհուրդն զիջուցանիցէ, և այնմ ևեթ տա-
ցէ զանձն՝ որ զվարդապետութիւն Հոգւոյն ուսուցա-
նիցէ: Եւ արդ քանզի և էին ՚ի Հրէիցն ոմանք, որք
մարգարէիցն չանսային իբրև հովուաց առաջնորդաց,
և անձամբ ևեթ կամէին իմաստնանալ, որ
տութեան պատճառ էր նոցա, յիրաւի ողբայ՝ Թէ
« Վայ այնոցիկ՝ որ զանձինս առ իմաստունս ունիցին »:
« Վայ Հզօրացդ՝ որ ըմպեն զգինիդ, և իշխանացդ՝

1 Ցբ. Զղացուցանէին:

որ խառնեն զգբի »։ Ամենայն ուրեք չար է արբե-
ցութիւն, մանաւանդ իշխանաց՝ որոց ամենայն ի-
յանձն իցէն։ « Որ երթան ընդ ամբարշտութեան
վասն կաշառոց, և զիրաւունս գողանան զարդարոց »։
Կրկին չարիք են, զի զարդարն պարտաւորեցուցանեն
և զպարտաւորն արդարացուցանեն, և երկոցունց մե-
ղաց՝ կաշառքն են պատճառք. վասն որոյ և զպատ-
ճառն ի մէջ բերէ, թէ « Որպէս վառի եղէգն ի
հրոյ, այնպէս բորբոքեսցի բոց ի վերայ նոցա, և այ-
րեսցէ զնոսա իբրև զմղեղ »։ Զի վազվզակի հասանե-
լոց էին ի վերայ նոցա պատիժքն։ « Եւ ծաղիկ նոցա
իբրև զփոշի »։ Զհաստատուն կարգս նոցա մաղեսցէ և
ցանեսցէ իբրև զփոշի։

« Զի ոչ կամեցան զօրինս Տեառն զօրութեանց
առնել, այլ զրգռեցին զպատգամ առաւել Սրբոյն
Իսրայէլի »։ Պատգամն՝ զօրինսն կոչէ։ « Եւ բարկա-
ցաւ Տէր զօրութեանց ի վերայ ժողովրդեանն, բար-
կացաւ ի վերայ լերանց, և անկան դիակունք նոցա
իբրև աղբ զձանապարհաւ։ Ի վերայ այսր ամենայնի
ոչ դադարեաց բարկութիւնն, այլ տակաւին ձեռն
իւր բարձրացեալ է »։ Պատերազմ իմն անհնարին ակն-
արկէ, զի և զդիակունս նոցա չառնէ արժանի թա-
ղելոյ. ոչ զի նոքա տանջեսցին ինչ, այլ զի կենդանիքն
այլոց հարուածովքն կարձեսցին ի չարեացն։ Եւ տե՛ս,
զիա՛րդ սաստիկս իմն բարբառի. ոչ ասէ թէ մի՛ թա-
ղեսցին, այլ քան զաղբ ևս անարգագոյն ընդ վայր
անկանիցին ոսկերք վախճանելոցն. որ կենդանեացն
ահագին իմն թուի, և քան զմահ ևս դառնագոյն։
Նա և այն ևս չար է, զի թէպետ և այնպիսի ինչ անցք
անցանիցեն ընդ նոսա, սակայն և այնպէս ոչ իմաս-
նանան, այլ ի նոյնս մնասցեն. և քանզի ոչ ինչ
էին գալոց ի լաւութիւն, վասն այնորիկ սպառնայ
զկնին անհնարին հարուածն. վասն որոյ և ածէ խօ
զնովիմբ. « Ախտահեռս բարձրացուսցէ նշան ի հե-
թանոսս ». զի միւ և երկայնութիւն ձանապարհայն
դանդաղութիւն ինչ լինիցի նոցա, այնպէս դիւրին է
Աստուծոյ ածել զնոսա, որպէս զի բառնայցէ նշան
ինչ որ կանգնեալ կայցէ. զոր և ի ձիոց հրահանգս
գուսական ասպարիզացն տեսանեմք, զի յորժամ ըզ-

նշանն ի միջոց բառնան, ինքնակամինքն գրգռեալք
յանկարծ արշաւեն ի գլխոց ասպարիզացն։ Վասն ո-
րոյ մարգարէս ակնարկէ, թէ մտադիւր յօժարու-
թեամբ գայցեն, իբրև յԱստուծոյ կոչեցեալք. նա
և՛ս վաղուց եկեալ էին՝ թէ ոչ Աստուծոյ երկայն-
մտութիւնն էր խափանեալ։ Եւ դարձեալ զի և՛ս դի-
րագոյն ցուցանիցէ զգալուստն, « Եւ հնչեսցէ, ասէ,
նոցա ի ծագս երկրի »։ Եւ ընդ այն ինչ միւ զարմա-
նար թէ յորժամ Աստուած խօսի՝ թանձրագոյն իմն
բանիւք բարբառիցի. ըստ անմտութեան լսողացն՝
նոյնպէս և կերպարանս բանիցն զգեցուցանէ՝ թէ Աս-
տուծոյ դիւրին է և իրքն լինելոց է. վասն որոյ և յա-
րէ ի նոյն. « Թէ ահաւասիկ վազվզակի ի թե-
թեւագոյնս հասանիցեն »։

« Ոչ քաղցիցեն և ոչ վաստակեսցեն, ոչ նիրհեսցեն
և ոչ ննջեսցեն »։ Զայս յաձախաբար իմն ասէ. քանզի
անհնար էր ոչ քաղցնուլ և ոչ ննջել, զի մարդիկ էին և
զհասարակաց պետսն ունէին. այլ զարագութիւն զօ-
րացն, զյօժարութիւնն, զանարգելական մտադիւրու-
թիւնն նշանակէ, որպէս և վաղագոյնն։ « Ոչ լուծցեն
զգօտիս ի միջոց իւրեանց և ոչ զքրացս կօշկացն լու-
ծանիցեն։ Որոց նետք իւրեանց սրեալ են և աղեղունք
լարեալք. սմբակք երիվարաց նոցա՝ իբրև զվէմ հաս-
տատուն համարեցան և անիւք կառաց նոցա՝ իբրև
զմրրիկ փոթորկեալ։ Մռնչեսցեն իբրև առիւծունք
և հասցեն յափշտակեսցեն իբրև զկորիւնս առիւ-
ծուց. գոչեսցեն, յարձակեսցին, հատցեն զաղանա-
բար, և ոչ ոք իցէ որ փրկիցէ ի նոցանէն։ Աղաղակ
լիցի վասն նոցա յաւուր յայնմիկ՝ իբրև ծովու խռո-
վելոյ ալեաց. հայեսցին յերկիրս ի վեր և յերկիրը ի
խաւարչ, և ահա խաւար խստութեան ի վարանս
տուայտութեան նոցա »։ Եւ ամենևին զբանն մեծա-
ցուցանէ և զահն յաձախէ և զբարոյիցն պատմէ և ըզզօ-
րութենէ և զղինուց և զերիվարաց և զկառաց. զի ի
բազմացուցանել բանիցն՝ ահ ի միտս արկցէ լսողացն։
Նաև առիւծուց և կորեանց առիւծուց նմանեցու-
ցանէ զնոսա. և ոչ այսչափ միայն, այլ և գոչեսցեն և՛ս,
ասէ, և յարձակեսցին գազանաբար. և այսպէս յամ-
իմն ի փոփոխական յորջորջմանն. զի ի գազանացն՝ և

'ի ծով ևս փոխէ զբանն. և այսպիսի ինչ խոտորութիւն լինիցի՝ որպէս ծովու 'ի կուտակել ալեացն յարուցեցոյն. և առնոյն հնարիւք ջանայ, զի զահն սաստկացուցէ, զի բնաւին մի ինչ կարօտ լինիցին իրացն հանդիսից։ Եւ այն ևս չար է՝ զի ոչ վերակացու ոք գտանիցի նոցա, ոչ յերկրէ և ոչ յերկնից. այլ անկեալք 'ի վերին պաշտպանութենէն և 'ի ներքին օգնականութենէն՝ մատնեացին 'ի ձեռս պատերազմողացն։ Խաւար աստ՝ զվիշտս որ գալոց էին 'ի վերայ նոցա՝ կոչէ. զի ոչ եթէ արեգական ձառագայթք մթանային, այլ նոցա միջօրեային 'ի խաւար էր դառնալոց, որ միշտ նեղելոց և վշտագնելոց խաւար թուի լոյն՝ 'ի ներելոյ թիւնն. վասն որոյ և յարէ 'ի նոյն, թէ « խաւար խստութեան 'ի վարանս տուայտութեան նոցա »։

ԳԼՈՒԽ Զ

« Եւ եղև յամին՝ յորում մեռաւ Ոզիա արքայ »։ Եւ զիաւրդ լսէ զի զայլ ժամանակն 'ի կենաց թագաւորացն նշանակէ և զայս ժամանակ 'ի մահուանէ թագաւորին. քանզի ոչ ասաց՝ թէ եղև յաւուրս Ոզիայ, այլ եղև, ասէ, յամին՝ յորում մեռաւ Ոզիա։ Եւ զայս ոչ վայրապար, այլ և զծածուկս իմն ակնարկէ։ Եւ զինչ իցէ ծածուկն. զի Ոզիա յորժամ մեծացաւ և յզփացաւ, սկսաւ և այլ իմն պատիւ ըղձանալ. և քանզի թագաւոր էր, կարծեաց թէ և 'ի քահանայութիւնն պարտ է նմա մատչել. յանդգնեցաւ մտանել 'ի տաճարն և 'ի սրբութիւն սրբոցն. զժկամակ լինելոր և ոչ անսայր քահանային. և զի յանդգնեցաւ և եմուտ, վաւեաց Աստուած 'ի ձակատ թագաւորին բորոտութիւն. և քանզի ըղձանայր աւելի ևս պատիւ՝ քան զոր ունէրն՝ առնուլ և յայնմանէ ևս զոր ունէրն՝ անկաւ. զի ոչ միայն զքահանայութիւնն չառ, այլ և 'ի թագաւորութենէ անտի ևս անկաւ բորոտութեամբն. քանզի 'ի ծածուկ սենեկի բնակէր զամենայն աւուրս կենաց իւրոց, և ոչ կարէր յամենայն արտաքս ելանել. նա և ժողովուրդն ամենայն ընդ նմին պատժէին յԱստուծոյ բարկութենէն. զի անփոյթ արարին զօրինացն, և զքահանային՝ որ լինէր ամենեցուն՝ վրէժ ոչ լնդրեցին։ Եւ զիաւրդ արդեւք կրեցին ընդ նա պատիժս յԱստուծոյ բարկութենէն՝ ժողովուրդն. այլ զի մարգարէութիւնն դադարեաց, քանզի ցաստուեալքեր նոցա Աստուած, և ոչ ումեք ինչ տայր նոցա պատասխանի. զի ուրեմն ժամանակս թագաւորն 'ի կեանս էր, նոյնչափ ժամանակս և պատիժքն ձգեցան. և 'ի մեռանել թագաւորին եբարձ զպատիժն Աստուած. զայն ակնարկէ մարգարէն՝ յուշ առնելով զժամանակս վախճանելոց թագաւորին. վասն որոյ և այսպէս իսկ առնէ սկիզբն մարգարէութեանն։

« Եւ եղև, ասէ, յամին՝ յորում մեռաւ Ոզիա արքայ, տեսի զՏէր զի նստէր »։ Թէպէտ և յաւետարանին ասէ Քրիստոս, թէ ՉԱստուած ոչ ոք երբեք ետես, բայց Միածինն՝ որ է 'ի ծոց Հօր՝ նա պատմեաց. և դարձեալ, թէ Ոչ ոք ետես զՀայր, եթէ ոչ որ էն յԱստուծոյ. և յՈվսէս ընդոյն ասէր, թէ Ոչ ոք տեսցէ զերեսս իմ և կեցցէ. և արդ սա զիաւրդ ասիցէ՝ թէ տեսի զԱստուած. « Տեսի, ասէ, զՏէր »։ Ոչ եթէ հակառակ իցէ սորայս այնմ՝ որ 'ի Քրիստոս ասացաւ, այլ առաւել միաբանութիւն. զի Քրիստոս վասն Հնմարիտ տեսանելոյն ասաց՝ թէ Ոչ ոք ետես. քանզի մերկ և առանց կերպարանաւոր ինչ երևելոյ զէութիւնն Աստուծոյ՝ ոչ ոք ետես, բայց միայն Միածինն. և մարգարէն իսկ որ ինչ իւր մարթն էր տեսանել՝ զայն պատմէր. քանզի ոչ եթէ որպիսին է Աստուած՝ զայն կարաց տեսանել, այլ զկերպարանսն յոր փոխեցաւ. զի այնչափ խոնարհեցաւ, որչափ տկարութիւն տեսողին՝ տեսանել կարելոր։ Եւ զի ոչ մերկ ետես զաստուածութիւնն՝ ոչ սա և ոչ այլ ոք 'ի մարգարէիցն, 'ի բանից անտի զոր պատմենն՝ յայտ է. քանզի և ասէ իսկ, թէ « Տեսի զՏէր՝ զի նստէր ». զի Աստուած ոչ նստի, զի նստելն՝ մարդկան կերպարանք են. և ոչ վայրապար նստէր, այլ յաթոռ. և Աստուած ոչ քովանդակի և ոչ ընդսահմանաւ անկանի. քանզի զիաւրդ որ ամենայն ուրեք մեծ է և զամենայն ընդ, որոյ 'ի ձեռին են ամենայն ծագք երկրի՝ նստէր արդեւք, և 'ի սակաւ չափ աթո-

ոգին ժողովեալ. ուստի յայտ իսկ է՝ զի ըստ մեզ զինչ-
նելոյ զԱստուծոյ նշանակէ՝ որ երևեցաւն: Զսոյն և միւս
ևս մարգարէ լբրև յերեսաց Աստուծոյ ակնարկեալ
ասէր, եթէ ես տեսիլս յաձախեցի. այսինքն է՝ թէ ՚ի
պէսպէս տեսիլս երևեցայ. զի եթէ մերկ զաստուա-
ծութիւնն ոք կարէր տեսանել, ապա ոչ պէսպէս տես-
լեամբք երևէր. այլ զի ըստ մարդկան զինչանէ, երբեմն
այլովք և երբեմն միւսովք կերպարանօք երևէր մար-
գարէիցն: Ըստ ժամանակացն՝ որ առաջի կային՝ նոյն-
պէս և զկերպարանն փոփոխէր. վասն այնորիկ, ասէ,
թէ ես տեսիլս յաձախեցի, և ՚ի ձեռն մարգարէից
նմանեցայ, ոչ որպիսի ինչ էին՝ ասէ, երևեցայ, այլ
որպիսի դուքն կարէք տանել՝ այնմ նմանեցայ: Տեսա-
նէ՛ս, զի երբեմն նստեալ յաթոռ երևի և երբեմն վա-
ռեալ և երբեմն լբրև վարսաւոր հինաւուրցն և եր-
բեմն հոգմով և երբեմն հրով և երբեմն ՚ի թիկանց
և երբեմն ՚ի վերայ քերովբէից և երբեմն ՚ի քրէական
նիւթոց կերպարան: Եւ արդ, ընդէ՞ր արդեւք երբեմն
վառեալ և երբեմն ՚ի թիկանց, երբեմն յերկինս, եր-
բեմն յաթոռ և մերթ ՚ի քրովբէս: Ոչ այժմ ժամա-
նակ է ասել. զի մի որ այժմ գործն լինչ իցէ՝ մեծ քան
զգործն լինելի. այլ առ այժմ ՚ի պէտս մեզ տես-
լեան իրացս փութացեալ խօսել, թէ ընդէ՞ր այժմ
այսպէ՛ս նստեալ յաթոռ, հանդերձ սերովբէիւք՝ մարդ-
կեղէն ինն սովորութեան նմանի: Քանզի և վասն
մարդկան իսկ էին պէտք, զի վէհիւ ինն տալոց էր մե-
ծամեծ իրաց, և ամենայն իսկ տիեզերաց, մանաւանդ
երուսաղէմացւոցն՝ կրկին ինն դնէ զվէհիւն, զի և պա-
տիժս ածէ քաղաքին և ամենայն հեթանոսաց զեա-
րերարութիւնն, և բազում յոյսս խոստանայ և պա-
տիւս անմահականս: Զի յորժամ դատաւորք յատենի
նստիցին՝ զայսպիսի իրս ոչ եթէ գաղտ վճարիցեն, այլ
յաթոռ բարձրութեան նստեալ յատենի. անդ սպա-
սաւորք, անդ սրահանկք ՚ի սպասս ձգին և մերկա-
նան յայնպիսի իրաց. նման այնմ՝ չուրջ զնւրեաւ ցո-
ցանէր սպասաւորս սրոբէս, և յաթոռ բարձրութեան
նստէր և տայր այսպիսի վճիռս: Եւ զի ուսանիցիս թէ
ոչ կարծիք լինչ են իրքն, այլ այսպիսի ինն սովորու-
թիւն է Աստուծոյ, կամիմ և ՚ի միւսմ ևս մարգարէէ

յայտ առնել. քանզի և առ Դանիէլիւ յորժամ զա-
հապին վէհիւն էր տալոց, նախ քան զտանջանս և
զպատիժս Հրէից և զբարութիւնն՝ որ ամենայն աշ-
խարհայ լինելոց էին, և անդ աթոռս լուսաւոր և ահա-
գին երևէր և ժողովք հրեշտակաց և գունդք հրեշ-
տակապետաց ՚ի սպաս և Միածինն նստէր և գպրու-
թիւնք բանային և գետ հրեղէն յորդեալ ելանէր և
ամենևին յօրինեալ չափք ատենից երևէին. զի և այն՝
այսմ որ աստ ասին՝ նման է. թէպէտ և այն յայտնա-
գոյն էր քան զայս. քանզի և ժամանակն՝ յորս իրքն
կատարելոց էին՝ մօտ էր, և առ գուրս իսկ եկեալ հա-
սեալ կայր մարգարէութիւնն: Այլ զայն ուսմասի-
րայ Թողցուք, զժողովել ՚ի մի վայր և զերկոցունց
մարգարէութեանցն զմիաբանութիւնն ուսանել միան-
գամայն. և մեզ զայսց իրացս որ առաջիս կան՝ փոյթ
յանձին ունելիք ասել հաւաստեաւ՝ որպէս մեզ մարթ
լինի. զի յորժամ զամենայն զբանսն յեղյեղիցեմք՝
այնպէս և մեզ և ձեզ լուսաւորագոյն լինիցի ասացե-
լոցն իմաստ:

Եւ արդ զինչ իցէ, «Տեսի, ասէ, զՏէրն նստեալ».
նստելն յաթոռ՝ զատենի լինն օրէնս մեզ յայտ առնէ,
որպէս և Դաւիթ ասէ, թէ Նստաւ յաթոռ գատաւոր
արդարութեան. և Դանիէլ ասէ, թէ Աթոռք ար-
կան և ատեանն ուղղեցաւ: Իսկ զլոկն նշանակել՝ այլ
լինն նշանակէ մարգարէ՝ զհաստատութիւնն, զանեղ-
ծութիւնն, զնշանջենաւորութիւնն, զյաւէժ կեն-
դանութիւնն. վասն որոյ և ասէ իսկ, թէ Դու նըս-
տիս յաւիտեան և մեք կորնչիմք իսպառ. այս ինքն
է, թէ դու կաս միաս նոյն միշտ կենդանի, միշտ
նոյնպիսի. և զի ոչ վասն յաթոռ նստելոյ ասէ, ան-
դէն առնթերակայ խորոցաւն յայտ առնէ. քանզի
ոչ ասէ՝ թէ մեք յոտն կամք և դու նստիս, այլ՝ թէ
դու նստիս և մեք կորստականք եմք: Իսկ յաթոռ
նստելն՝ զդատելն յայտ առնէ. վասն այսորիկ տես-
նէ նստեալ յաթոռ բարձրութեան և վերացելոյ. կամ
թէ պատմութիւն է՝ զմին ասէ զբարձրացելոյն և զը-
վերացելոյ, կամ թէ այլ լինն զսա և այլ լինն զնա ակն-
արկէ, զի բարձր էր աթոռն, այսինքն է՝ մեծ և
վերացեալ յերկրէ, քանզի անչափ բարձրութեան
երևէր:

« Եւ լի էր տունն փառաւք նորա »։ Ո՛ր տուն. տաճարն. քանզի անտի հրաման տայր, նմանապէս իսկ այնպիսի սքանչելի տեսլեամբ՝ անդ նստեալ երևէր. զանձառ փառսն՝ զոր բանիւ չէ հնար մեկնել՝ փառս կոչեաց. լոյս աստ՝ զմեծապայծառ փառսն կոչէ, զանձառն, զանքննին, զոր ոչ ոք կարէ բանիւ մեկնել. և ոչ վայրապար փառս, այլ Աստուծոյ փառս։

« Եւ սրոբէք կային շուրջ զնովաւ »։ Եւ զինչ իցէն սրոբէքն. անմարմնական զօրութիւնքն, ի վերնոցն գնդացն, զորոց զառաքինութիւնն և զերանութիւնն՝ յանուանց է լսանալ. զի ի հեթրայեցի լեզուս՝ հրեղէնք բերանք թարգմանին սրոբէք։ Եւ զինչ իցէ աստի լսանալ. զօրքութիւն էութեան նոցա, զանքուն բնութիւնն, զերագութիւնն, զանարատութիւնն, զազդական զօրութիւնն. զի այսպէս և միւս մարգարէն, յորժամ զանխափան վերին զօրութեանցն զօսպասաւորութիւն կամէր ցուցանել և զերագակատար պաշտօնն՝ Որ առնէ, ասէ, զհրեշտակս իւր հողմն և զպաշտօնեայս իւր՝ հուր կիզեղոյ. զերագութիւնն, զթեւութիւնն, զվաղվաղակի կատարեալ զհրամանն ցուցանէ այս երկու արարածովք։ Այսպիսի լինին են և այն զօրութիւնք, զի սրբասաց բերանովք միշտ փառաւորեն զՏէրն. զի այն իսկ գործ է նոցա, զի միշտ զօրհնութիւնն ևթե ունկնդին ի բերան, զանդադար պաշտօնն։ Դարձեալ ցուցանէ զպատիւս նոցա՝ մերձաւորութեամբ նոցա զաթոռոյնն. զոր օրինակ առաջի երկրաւոր թագաւորացն, նոյնպէս և սրոբէիցն զօրութիւնք վանն առաւել առաքինութեանցն զվերինն աթոռոյնն շուրջ պատեալ էն, և յանվախձան երանութենան վայելեն հանապազ, և զուարճանան յերանեալ կայանն սպասաւորութեան։

« Վեց թևք միոյ և վեց թևք միոյ. երկուքն ծածկէին զերեսս իւրեանց, և երկուքն ծածկէին զոտս իւրեանց, և երկուքն թռուցեալ՝ աղաղակէին մի առ մի և ասէին. սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց՝ լի է ամենայն երկիր փառաք նորա »։ Եւ արդ զինչ կամիցին մեզ թևքն այնպիսիքն նշանակել. քանզի ոչ եթէ թևք իցեն անմարմնական զօրութեանցն, այլ զի թանձրութեան կերպարանաւքն՝ զծա-

ծուկս ինչ յայտնեսցէ մեզ մարգարէս և ըստ նոցա տկարութեան զիջանելով, որք ի ժամանակի անդ զբանսն լսէին, բայց ըստ զիջանելոյն՝ և իմաստ ինչ որ ըստ ամենայն միտս անցանեն՝ հաւաստեաւ ցուցցէ մեզ։ Եւ արդ զինչ առնիցեն թևքն. զհամբառնալն, զերագութիւնն այնպիսի զօրութեանց. որպէս Դաբրիել թռուցեալ իջեալ յերկնից երևէր, զի ուսանիցիս զթեթևութիւնն և զերագութիւնն։ Եւ ընդ այս զի զարմանաս թէ զհարկաւոր զօրութեանցն այսպիսի բանս թանձունս խոսի, ուր և զամենեցունն իսկ Աստուծոյ ըստ զիջանելոյ՝ ոչ ինչ դանդաղի այսպիսի բանս ի կիր արկանել թէ կամ զանմարմնաւորութիւնն կամի ցուցանել, կամ զերագութիւնն, զի յամենայն տեղիս բաւական է. Որ շրջին, ասէ, ի վերայ թևոց հողմոց. թէպէտ և հողմոց թևք չեն և ոչ նա ի վերայ թևոց շրջի, քանզի յամենայն վայրի է. և որպէս յառաջագոյնն ասացի, թէ ըստ տկարութեան լսողաց զիջեալ, այնոքիւք որով մարթն է լինել՝ հանէ զմիտս նոցա ի վեր։ Եւ զարձեալ, զի զօդնականութիւնն նոցա յայտ առնիցէ և որ յայնմանէ զգուշութիւնն իցէ՝ այնպիսի բանս ի մէջ բերէ, թէ ի հովանի թևոց քոց ծածկեցեր զիս. և աստ՝ թևօքն ոչ միայն զերագութիւնն ակնարկէ մարգարէս, այլ և այլ իմն ահագին։ Զի թէպէտ և ըստ զիջանելոյ մարդկան էր տեսիլն, քանզի և էր իսկ վանն այնորիկ, սակայն և ոչ վերին զօրութիւնքն լինէին ժուժկալ այնմիկ. և ծածկեն իսկ զոտս և զերեսս և զթիկունս՝ զդողալն, զզարհուրելն, ըստ չժուժկալ փառաց աթոռոյն՝ յայտ առնէ. վանն այսորիկ իբրև պարսպով իւիք՝ թևոցն ամբառնալովք՝ ծածկեին զերեսս իւրեանց. որպէս մեք իսկ սովոր եմք առնել, յորժամ որոտմունք ձայնի իցեն, փայլատակմունք շողայցեն, զգլուխ ի վայր արկանեմք, զերկիր նշմարեմք, նոյնպէս և նոքա յահէ փառացն զարհուրին։ Զի եթէ սրոբէիցդ մեծամեծ և սքանչելի զօրութիւնքն, զԱստուած միտգեւս յաթոռ նստեր, ոչ կարէին համարձակ տեսանել, այլ և զերեսս և զոտս ծածկէին, ո այնչափ ոք անմիտ կայցէ, որ ժպրհիցէ ասել՝ թէ Աստուած յայտ յանդիման տեսանի, կամ թէ անմահ էութիւնն

քննիցի։ « Եւ երկուքն Թռուցեալ՝ աղաղակէին »։ Եւ զինչ լինչ Թուէին յայտ առնիցէ. այլ զի միշտ հանապազ առաջի Աստուծոյ կան և ՚ի նմանէ հեռանալ ոչ իշխեն. քանզի այն իսկ է նոցա առաքինութիւն, զի զմշտնջենաւոր օրհնութիւնն Արարչին միշտ ՚ի բերան ունիցին։ Եւ ոչ ասէ՝ Թէ աղաղակեցին, այլ Թէ աղաղակէին. զի յայտ արասցէ Թէ միշտ այն գործ է նոցա։ « Աղաղակէին մի ցմի և ասէին. սուրբ, սուրբ, սուրբ »։ Եւ այս օրհնութիւն ոչ միայն փառաւորութիւն է, այլ և մարգարէութիւն բարութեանցն՝ որ լինելոցն էին յաշխարհի և կրօնից հաստատութեան։ Ընդէր ոչ ասացին սուրբ՝ և լռեցին, և կամ երկից՝ և դադարեցին, և կամ երից՝ և այլ յաւելին. ոչ ապաքէն յայտ է Թէ երրորդութեանն մատուցանէին զփառաւորութիւնն. վասն այնորիկ երից՝ և այլ ոչ յաւելին. զոր Յովհաննէս ասէ՝ Թէ զՈրդւոյ ասացաւ, և Ղուկաս՝ Թէ զՀոգւոյն, և մարգարէս՝ Թէ զՀօրէ։ Այլ և յաջորդաւն ևս յայտ են միտք բանիս, զի յետ զփառաւորութիւնն մատուցանելոյ՝ յարէ ՚ի նոյն, Թէ « Լի է ամենայն երկիր փառաք նորա ». որ ձշմարիտ մարգարէութեանն էր՝ յառաջագոյն գուշակել զհանդերձեալ լոյս փառացն Աստուծոյ՝ որով ընդոյ էին ամենայն տիեզերք, այսինքն է գիտութեամբն նորա։ Քանզի յայնժամ՝ յորժամ այս բանք ձառեցան, ոչ միայն մի կողմ տիեզերայ կամ երկու, այլ զի և Հրէաստանի երկիրն իսկ լի էր ամբարշտութեամբ, և ոչ ոք ուրեք էր որ փառաւորէր զԱստուած. և վկայէ սոյն մարգարէ. Վասն ձեր, ասէ, անուն իմ հայհոյի ՚ի մէջ հեթանոսաց։ Իսկ յոր ժամ լի եղև փառաք ամենայն երկիր. յորժամ օրհնութիւնս այս էջ յերկիր, և գնդակիցք եղեն մարդիկ վերին զօրութեանցն, և զմի փառաւորութիւն նուագեալ յօրինէին առհասարակ վերինք և ներքինք։ Այսպա եթէ յամառիցի Հրէայն առ այս զոր ասացաքս, ցուցցէ Թէ Երբ լցաւ ամենայն երկիր փառաք նորա, այսինքն է՝ Երբ ծանեաւ զնա առհասարակ ամենայն երկիր. այլ գիտեմ՝ Թէպէտ և յամառիցին՝ չկարեն ցուցանել։

« Եւ վերացաւ դրանդն ՚ի ձայնէն զոր աղաղակէին »։ Տեսանէս, զի զամենայն կարգաւ մի ըստ միոջէ

յառաջագոյն գուշակէ մարգարէութիւնն. զի յետ օրհնութեանս այսորիկ և ընդոյ ամենայն երկրի փառաք նորա, դադարեցին ամենայն հրեական կրօնքն. քանզի վերանալ դրանդւոյն՝ զաւերած տաճարին նշանակէր. զի ՚ի տաճարին աւերեցին՝ և այլն ևս ամենայն ընդ նմին քակեր. և զի ուսանիցիս Թէ նորս զհինն դադարեցոյց, « ի ձայնէն, ասէ, վերացաւ դրանդին ». այս ինքն է՝ ՚ի գալ հաստանել այսր փառաւորութեան և ՚ի ծագիլ ընորհաց և ՚ի յայտնել փառացն ընդ ամենայն տիեզերս, ամենայն կարգք ստուերին ՚ի միջոյ բառնային։

« Եւ տունն լի եղև ծխով »։ Թուի ինձ Թէ այս՝ պաշարման հինչ նշանակ է և հինական հրոյ՝ որով այրեին զքաղաքն։ « Եւ ասեմ. վայ ինձ՝ զի ես եմ այր տառապեալ և կամ հիացեալ. զի մարդ եմ ես և պիղծ շրթունս ունիմ, և ՚ի մէջ պղծախօս ժողովրդեան բնակեալ եմ, և զՏէր կամարար տեսի աչօվք իմովք »։ Զարհուրեցոյց տեսիլն զմարգարէն, շտապեաց ասն, շարժեաց ՚ի հաստատուն խոստովանութիւն, ՚ի միտ առնուլ զիւրոյ անձինն զնուաղութիւնն։ Զի այսպիսիք իսկ են սուրբք ամենայն, յորժամ մեծամեծիցին՝ յայնժամ առաւել խոնարհութիւն ցուցանեն. այսպիսի էր և Աբրահամ, զի Թէպէտ և ընդ Աստուծոյ խօսէր, ասկայն հող և մոխիր կոչէր զանձինն. սոյնպէս և Պաւղոս յորժամ տեսլեանն արժանի եղև, յայնժամ տրուպ ընկեցիկ առնէր զանձն. նոյնպէս և սա՝ տառապեալ կոչէր զանձինն. նախ զտկարութիւն բնութեանն իսկ խոստովանի, և ապա զմեծայն խոստովանութիւն յայտ առնէ։ « Եւ պիղծ շրթունս ունիմ» ասէ։ Պիղծ շրթունս՝ ինձ Թուի եթէ յայս սակս ասէ՝ առ ՚ի համեմատութիւն հրեղէնն բերանոց և բոցեղէնն աչաց սրբոց զօրութեանցն՝ որք ՚ի ձշմարիտ պաշտամանն կային, եթէ՝ զինչ նման եմ ես նոցա։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և ընդ ամենայն իսկ ժողովրդեանն խոստովան լինի. քանզի յարէ իսկ ՚ի նոյն, Թէ « ի մէջ պղծախօս ժողովրդեան բնակեալ եմ ես»։ Եւ ընդէր բամբասիցէ զշրթունս պիղծս, այլ զի զանհամարձակութիւն ցուցանիցէ. քանզի և երեք մանկունքն ՚ի հնոցին գրեթէ զնոյն բանս խոստեցան. Եւ

ոչ գոյ մեզ, ասեն, բանալ զբերան. և աստ՝ քանզի օրհնութեան և փառաւորութեան ժամանակ էր, և մանաւանդ զի զվերին զօրութիւնն յայնպիսի օրհնութիւնս տեսանէր, նմանապէս սիրէ՛ զքրիստոս ասէր իւր, յայնպիսի յահեղ պաշտօնն կոչեցեալ զիւր շնորհն՝ յայս միտս կոչէր։ « Եւ զՏէր Սաբաւովթ տեսի աչօք իմովք »։ Վասն այնորիկ հեծեմ և ողբամ, զի այսպիսի պատուոյ արժանի եղէ, որում չեմ արժանի, զի՝ ի վեր է քան զիս պատիւս, անդր՝ ի վեր բարձրագոյն քան զիմ բնութիւնս։ Իսկ յորժամ ասէ՝ թէ տեսի, մի՛ զձիմարիտ տեսիլ աստուածութեանն կարծիցեն, այլ այնպիսի ինչ՝ որ ինչ նմա մարթ էր տեսանել։

Եւ արդ միտ դիր, որպիսի՛ շահք են՝ ի խոստովանութենէ. խոստովան եղև զանձն, խոշտանգեաց, և վաղվաղակի և առժամայն սրբեցաւ. և քանզի այսպիսի բանս խոնարհութեան խօսեցաւ, « Աւաքեցաւ, ասէ, մի՛ ի սրտիկ, և՝ ի ձեռինն իւրում ունէր կայծակն ունելովք՝ ի սեղանոյն, և մերձեցաւ՝ ի շրթունս իմ, և ասէ. Ահաւասիկ մերձեցաւ այդ՝ ի շրթունս քո, և բարձից զմեղս և զանօրէնութիւնս քո և սրբեսցէ զքեզ »։ Ոմանք վասն հանդերձեալ խորհրդոյն որ լինելոյն էին, ասեն՝ թէ էր այն օրինակ. զսեղանն և զհուրն որ՝ ի վերայ կայր՝ զմատակարարելն՝ ի նորումն զօրութեանն՝ որ մերձենայ՝ ի բերանս և սրբէ զմեղս։ Բայց մեք առ այժմ զպատմութիւնն վարեսցուք յառաջ, թէ վասն կր իրքն գործեցան։ Քանզի առաքեալ էր զմարգարէն առ հրեական ժողովուրդն՝ ահագին լինս և անհնարին իրս սպառնալ, առաքէր զսրբելիսն և զկենդանին մերժեսցէ և համարձակութեամբ ընուցու. զի մի՛ պատճառիցէ որպէս Մովսէսն՝ թէ նըւազաձայն եմ և ծանրալեզու, և Երեմիա ասէր՝ թէ մանուկ եմ, նոյնպէս և նա ասիցէ՝ թէ պիղծ շրթունս ունիմ, չկարեմ սպասաւոր լինել այդպիսի հրամանաց, զայր հասանէր սրտիկն և սրբէր զմեղս նորա. ոչ իւրով զօրութեամբ, զի այս Հոգի և Որդւոյ և Հօրն Սրբոյ միայն է, այլ հրամանաւ և տալով զկայծակինն։ Եւ ոչ ասաց՝ թէ ահաւասիկ բառնամ, այլ թէ ահաւասիկ սա բարձից զմեղս քո և սրբեսցէ զքեզ, այսինքն հրամանաւ այնորիկ՝ որ առաքեացն։ Եւ ընդէր արդեւք ունելեօք առնոյր սրտիկն զկայծակինն. ոչ ապաքէն և նա յանմարմնական զօրութեանցն էր՝ որք ոչ ինչ ասին՝ ի կայծականց։ Սակայն՝ թէ ըստ բազում զիրս Աստուծոյ ընդ մարդկան. քանզի և՝ ի սեղանոյն՝ ուր պատարագքն մատչէին և սրբութիւնքն լինէին՝ անտի առ զկայծակինն։ Իսկ եթէ ասիցէ ոք՝ թէ բերան մարգարէին ընդէր ոչ այրեցաւ, ասեմք՝ թէ և ոչ հուրն՝ հուրս այս երևելի էր։ Եւ այլազգ ևս, թէ յորժամ Աստուած գործ ինչ գործիցէ՝ դու զայն մի՛ քններ և մի՛ յանդգնիր՝ ի խոյզ և՝ ի խնդիր արկանել. քանզի և երևելի իսկ և զննելի հուրս՝ երբեմն մերձեցաւ՝ ի մարմինս և ազդ ինչ հրոյ ոչ եցոյց. զի եթէ ուր որթն և ձիւթն այրէին՝ ի միասին և բորբոքէին, մոռացաւ զնոր բնութիւնն բոցոյն, զայն զի՛ զարմանաս՝ ուր այնպիսի սքանչելի և նորակերտ իրք գործէին, զի սրբեաց և ոչ այրեաց հուրն։

« Եւ լուայ զձայն բարբառոյ Տեառն՝ զի խօսէր և ասէր. Զո՞ առաքեցից և կամ ո՞ երթիցէ առ այն ժողովուրդ »։ Տեսանե՞ս, որչափ ինչ վէմիւ եցոյց տեսիլն, որչափ ինչ ուղղութիւն պարգևեաց երկիւղն. զի և առ Մովսիսիս այնպիսի ինչ իրք գործէին, թէպէտ և ոչ սրտիկք ուրեք երևէին, և ոչ ինքն նստեալ յաթոռ, սակայն այլ իմն սքանչելի տեսիլ երևէր մարգարէին, այնպիսի ինչ՝ զի և ոչ հայել իսկ կարէր՝ ի տեսիլն, քանզի մոռնէին, ասէ, բորբոքեալ էր և չայրէր։ Սակայն յետ այնր և յետ այլ բազում թելադիր լինելոյ՝ դադարէր Մովսէս և այսր անդր հարկանէր և բազում պատճառս հնարէր գտանել. Ներքաճայն եմ, ասէ, և ծանրալեզու, և տես քեզ զայլ ոք զոր առաքեսցես. և Երեմիաս՝ զիս մանկութեանն առաջի դնէր. և Եզեկիէլ՝ յետ և զՀրամանն իսկ առնոյ՝ զեօթն օր երեկօթս առնոյր յափն գետոյն, քանզի դանդաղէր և վհատէր. վասն որոյ և զառաքն ևս յաւելոյր նմա Աստուած, եթէ Դէտ եռուս զքեզ տանն Իսրայէլի, և զհոգիս նոցա՝ ի ձեռաց քոց պահանջեցից. և Յովնան ոչ միայն հրաժարէր, այլ և փախստական լինէր։ Եւ արդ զիարդ համարձակագոյն քան զամենեսեան, և քան զմեծն իսկ Մովսէս՝ Եսայի ևեթ գտանի. զի նո-

ըա և հրաման առեալ՝ և գանգաղէը. և սա և ոչ յայտնի ինչ տուաւ հրամանն, և ընդ առաջ գնաց. քանզի ոչ ասաց՝ թէ երթ, այլ իբրև լուաւ Աստուծոյ՝ թէ ղի առաքեցից, յափշտակելով արար զհրամանն: Ոմանք ասեն՝ թէ վասն զի յանցեաւ, զի զՈզիա ոչ յանդգնեցաւ որ ժպրհեցաւ ի հրամայեալն մտանել, զայն յանցանն, ասեն, կամեցաւ մտադիւր յօժարութեամբն խաղաղել. այլն սակս, ասէին, ընդ առաջ գնաց հրամանին, զի քաւեսցէ Աստուած զմեզ սըն. և սիղճ շրթունս իւր, ասեն, վասն անհամարձակութեանն կոչէ: Այլ ես ոչ առնում յանձն նոցա՝ որ զայս այսպէս ասեն. զի հաւատարմագոյն քան զնոսա է Պաւղոս, որ համարձակն կոչէ զնա. եւայլ, ասէ, համարձակի և ասէ: Վասն որոյ, որպէս և ասեն, և ոչ հասարակ օրինօք վճարեաց զկեանն, այլ էարաէար տանջանօք մեռաւ ի Հրէից. զի ոչ կարէին ժոյժ ունել համարձակութեանն նորա: Այլ ի մտաց կարծեն՝ որ զայս այսպէս կարծեն: Եւ արդ զինչ ինչ առ այս ասել. միթէ չէի՞ զդոյ Մովսիսի իրաց՝ նորա իրք, զի զնա յօտար և յայլազգի աշխարհն առաքէ, և առ խիստ իշխանն որ մոլեալն էր, և զսա առ ընտանիս՝ որ բազում ինչ լուեալ էր և զբազում ժամանակս խրատեալք: Ոչ նոյն քաջութիւն էր որպէս և անդ՝ նոյնպէս և աստ հնազանդ լինել հրամանին: Իսկ ոմանք ասեն՝ այլ ինն յորդոցեաց զյօժարութիւնն նորա. քանզի վասն իւր և վասն ժողովրդեանն խոստովան եղև, և առաքեցաւ սրոբէն և սրբեաց զերթունս նորա, կարծէր՝ թէ այնպիսի ինչ իրք լինէին զոր էին և ժողովրդեանն, և երթիցէ տայցէ աւետիս. յայն սակս, ասեն, յօժարագոյնս արար յափշտակելով զհրամանն. քանզի որպէս աստուածասէրքն էին՝ նոյնպէս գթած առաւել քան զամենայն մարդիկ սուրբքն. կարծէր՝ եթէ թողութիւն մեղաց երթեալ աւետարանեսցէ, վասն այսորիկ վաղվաղակի գնայր ընդ առաջ քանին:

« Ես աւասիկ, ասէ, Տէր, կամ: առաքեա զիս »: Եւ այլ ևս ազգ, զի յոյժ ժուժկալ միտ առ նեղութիւնն ունէր, և զայս ամենայն իսկ ի մարգարէութենէս է իմանալ. քանզի յանձն առ երթալ, չիշխէր այնուհետև

առ յետս կալ. և ապա յետոյ լսէր զտրտմականն: Զի և Աստուած իսկ իմաստութեամբ ըմբռնեաց զնա. զի ոչ նախ ասաց՝ թէ երթ և ասա զայս ինչ, այլ զբօսուցիկ լիճն արար զնան, և անյայտ զառաքելութեանն պայման. և իբրև մտադիւրութեամբ ունկնդիր եղև, ապա և զբարիսն որ հասանելոց էին Հրէից՝ յայտնեաց:

« Գնա դու, ասէ, և ասա ժողովրդեանն. լսելով լսիջիք և մի իմասջիք, և տեսանելով տեսջիք և մի տեսջիք, զի խստացաւ սիրտ ժողովրդեանդ այդորիկ. ականջօք իբրեանց լսեան և ոչ առին ի միտ, և զաչս իբրեանց կափուցին, զի մի երբեք տեսցեն աչօք և լսիցեն ականջօք և իմասցին սրտիւք և դարձցին և բժշկեցից զնոսա »: Այսմ և ոչ մեկնութիւն ինչ պիտի, քանզի որք ձշմարտիւն գիտէին, նոքա բերին ի մէջ և մեկնեցին. Որոտման որդին Յովհաննէս և Պաւղոս, որ զհին և զնոր կտակարանն գիտէր հաւաստեաւ. զի մին ի Հռովմ քաղաքի առ ժողովեալսն առ նա, որք եկեալ էին լսել և յետոյ փախստական լինէին, քանզի խոցէին ի բանիցն, հրապարակագոյժ աղաղակէր, թէ Բարւոք ասաց վասն ձեր Հոգին Սուրբ, թէ լսելով լսիջիք և մի իմասջիք. և Որոտման որդին՝ նայէր ընդ Հրէայսն, զի զբանէլեսն տեսանէին և ոչ հաւատային, և կրօնս լսէին և ոչ անսային. յարոյց զՂազար, և զնա սպանանել խորհէին. առ Հայր մերձեցուցանէր, և զնա մոլորեցուցիչ կարծէին, և այլ ընդ այլոց լիճն կարծիս կարծէին զնմանէն, չիշէ զմարգարէութիւնս զայս և ասէ. Բարւոք ասաց Եսայի մարգարէ, թէ լսելով լսիջիք և մի իմասջիք, և տեսանելով տեսջիք և մի տեսջիք [1]: Քանզի նեղեցոյ՝ աչք մտացն կուրացեալ էին, չէր ինչ օգուտ արտաքին աչօքն տեսանել. վասն այնորիկ՝ տեսանէին և ոչ տեսանէին, և լսէին և ոչ լսէին: Այլ զպատճառ չլսելոյն և չտեսանելոյն յայտ առնէ՝ զի ոչ եթէ զգայութիւք [2] ինչ ապականեալ էին և ոչ բնութիւնն ինչ խեղեալ. « Թանձրացաւ, ասէ, սիրտ ժողովրդեանս այսորիկ »: Թանձրութիւն

1 Յօր. Պակասէր Ե՛ ՚ի թէրէին:
2 Յօր. Օտար գրչաւ՝ պիտոյիւն:

մտաց՝ ի մեղաց լինել, յերկրաւոր ցանկութեանց. և զայսպիսի թանձրութենէ Պաւղոսի ձառեալ ասէր. Ոչ կարացի ընդ ձեզ իբրև ընդ հոգեւորս խօսել այլ իբրև ընդ մարմնաւորս, քանզի և ոչ ևս կարիք. նա և արդ իսկ ոչ կարէք. և զպատճառս չկարելոյն բերէ ի մէջ. Ուր հեռ ի ձեզ և նախանձ և հերձուածք և պառակտութիւնք, ոչ ապաքէն մարմնաւոր էք: Եւ քանզի և նոքա հեռիւ և նախանձու ծնկէին, և քաղում՝ և այլ ևս չարեօք հեղձեալ էին, թանձրացուցանէին, շլացուցանէին զաչս մտացն, և սուրբ նայել ոչ կարէին. քանզի այլ ընդ այլոց իմն կարծէին զոր տեսանէին: Զայս ամենայն տեսեալ մարգարէին՝ հաւաստեաւ յառաջագոյն գուշակէր. նա և զպատճառս իսկ ախտին նշանակէր: Եւ արդ միտ դիր, զի երկու մարգածրդութիւնք են ի ձառիս, զորինն որ վասն եկեղեցւոյ է և վասն ամենայն աշխարհաց լինելոց բարութեանցն, առ որ սրոքէքն աղաղակէին՝ Թէ սուրբ, սուրբ, սուրբ. Տէր զօրութեանց՝ լի են երկինք և երկիր փառաց նորա. և զմիւսն՝ որ վասն պաշարմանն և վասն պատժոյ Հրէական ազգացն էր՝ մարգարէին Թողին, զի և այսու ուսանիցիս Թէ մրչափ առաւելութիւն է եկեղեցւոյ:

« Եւ ասացի, ասէ, Թէ մինչև ցե՞րբ Տէր »: Տեսանեմ, Թէ մրչափ վայրապար կարծեցաք զմտաղիսըս յօժարութիւն մարգարէին: Եւ արդ քանզի այլ իմն փանակ այնը զոր կարծէրն՝ լուաւ, զաւերն, զբնաւսատակումն, աղաչէ զի գոնեա զչափ պատժոյն ուսանիցի. քանզի ոչ իշխէր աղաչել և բնաւ Թափել զբարկութիւնն. զի Աստուած յառաջագոյն եցոյց Թէ առանց նեղելոց և Թողութեան են մեղքն. զի ոչ ընդ խափս էին յանդգնութիւնքն, և ոչ մտաց յանկարծ յափշտակելոց, այլ ոգւոց զործ արարեալ յանհնազանդութիւնն. իբրև յայն իմն խոկային և՛ ի նոյն զբօսնուին, զի մեծաւ իմն փութով կային հառաւակ Աստուծոյ հրամանացն: Եւ արդ զայս իմն ակնարկեալ ասէր. Չի մի երբեք տեսցեն աչօք և իմացին սրտիւք և դարձցին առ իս և բժշկեցից զնոսա: Որպէս որ առ երկիւղածութեան ինչ ջանասցէ բարի ինչ ուսանել նոյնպէս և նոքա բազում փոյթ յանձին ունէին զնուիրեանց միտն կուրացուցանել: Ե. քանզի ամբաստանութիւնն ծանր էր և պատիժքն անհրաժեշտք, որ ինչ անյայտն էր՝ զայն կամի ուսանել մարգարէս. մանաւանդ զի ոչ ուսանել այլ՛ի դէմն ուսանելոց պատասխս առաջի դնէ:

Եւ քանզի ոչ կարէր յայտնի վասն այսպիսի իրաց աղաչել ուսանելոց պատճառանօք հարցանէր աղաչելով. « Մինչև յե՞րբ Տէր », ասէ. և առ պատասխանի. « Մինչև աւերեսցին քաղաքք՝ ի բնակչաց, և տունք՝ զի ոչ գոյցէ մարդ՝ ի նոսա. և լքցի երկիրն աւերակ, և ապա ընդերկարեսցէ Աստուած մարդկան և բազմասցին մնացեալք յերկրի: Եւ՝ ի նմա եղիցի՝ ի վեր քան զտասներորդն և դարձեալ յափշտակութիւն մատնեսցին, իբրև զբևեկնի տերևաթափ, իբրև ըզկաղնի՝ զի թօթափեալ լցեն յիւրաքանչիւր պատենից. սերմն սուրբ արձան նորա »: Իբրև զմարգարէութիւնն՝ որ առ ամենայն աշխարհ էր լինելոց՝ կատարեաց, ապա փոխէ զբանն՝ ի պաշարումնն, և զտան աղգաց հրաւիրէ՝ի գերութիւն գուշակէ յառաջագոյն. և առ երկուս աղգս զերկայնմտութիւնն Աստուծոյ՝ որ յայնմ ժամանակի լինելոց էր՝ յուցանէ. Թէպէտ և նոքա յետոյ երթալոց էին՝ի գերութիւն. քանզի ոչ ինչ եղէն պիտանիք երկայնմտութեամբն, և ոչ այնու՝ զի միայն մնացեալ էին և՛ի բարութեան էին: Չի յորժամ ասէ, Թէ « Աւերեսցին քաղաքք՝ի բնակչաց », զտան աղգացն գերութիւնն ակնարկէ. քանզի միանգամայն ամենեքին առան և վարեցան՝ի միասին՝ի գերութիւն յօտարն աշխարհ. զի ամենևին իսկ քաղաքքն ամենայն՝ մնացին լոկ՝ի մարդկանէ. և լքաւ երկիրն ամենայն և եղև աւերակ՝ի բնակչաց: Եւ յորժամ ասէ, Թէ « Աւերեսցին քաղաքք՝ի բնակչաց, և տունք՝ զի ոչ գոյցէ՝ի նոսա մարդ », յայնժամ զգերութիւնն ակնարկէ. և յորժամ ասէ՝ Թէ « Յետ այսորիկ յերկարեսցէ Աստուած մարդկան », զամենեցուն աղգացն զդիւրութիւնն, որ յետ գերութեանն լինելոց էր՝ է իմանալ: Եւ դարձեալ յետ տան աղգացն վարելոյ՝ի գերութիւն, զերկուց աղգացն՝ որ ընդ այն ժամանակս լինելոց էին բարիքն՝ է իմանալ. զի յորժամ ապրեսցին՝ի Աենեքերիմայ և՛ի

խուժադուժ զօրացն, զուարճացեալք սքանչելի յաղ-
թութեամբքն՝ ի բազմութիւն սերկևին յերկիրս կա-
կեաց ժամանակս. զի ոչ ուստեք այնուհետև զարհու-
րեցուցանէր զնոսա պատերազմ։ Եւ յորժամ ասէ, թէ
« Ընդերկարեսցէ Աստուած մարդկան », կամ զմարդ-
կանն բազմութիւն կամ զամացն երկայնութիւն նշա-
նակէ։ Եւ զի ուսանիցիս եթէ վասն երկուց ազգացն
ասաց զայս, յարէ ի նոյն եթէ « Ի նմա իցէ ի վեր
քան զտանելորդն ». տանելորդ զայն ասէ՝ որ ինչ
աւելի իցէ քան զտան, այսինքն երկու ազգքն։ Ա-յս-
պիսի ինչ և Պաւղոսի է ասացեալ, թէ Ի վեր քան
զՀինգ Հարիւր եղբարս, այսինքն բազում ևս քան
զՀինգ Հարիւր։

« Եւ դարձեալ ի յաւիտականութիւն մանեսցին,
իբրև զբևեռին տերևաթափ ». այսինքն երկու ազգն։
« Եւ իբրև զկաղնին՝ զի Թօթափեալ իցէն չիւրաքան-
չիւր պատենից ». զոր օրինակ մերկ ի վայելչութենէ
լինի կաղնին, յորժամ Թօթափեսցի ի պատենից, նոյն-
պէս և նոքա ձաղ և նախատ լինիցին՝ յորժամ ելանի-
ցեն ի քաղաքէն և մերկանայցեն ի փառացն։ « Սերմն
սուրբ արձանն նորա ». սակայն ոչ եթէ առանց բժըշ-
կութեան իցէն պատուիրքն կամ առանց վախճանելոյ,
այլ սերմն նորա՝ սուրբ եղիցի, հաստատուն կալ մնալ
անշարժ, առանց փոփոխման։ Ի բարեացն, ասէ, ան-
կանելոցն էն, բայց ինքեանք ամենեքեան չէն սատա-
կելոց, այլ կալոց մնալոց են՝ մինչև առնուցուն անդէն
զառաջինն զկարգսն, և հաստատիցեն յառաջինն առաքի-
նութիւնան։

ԳԼՈՒԽ Լ

« Եւ եղիցի յաւուրս Աքազու՝ որդւոյ Ցովաթամայ
Ողիանց, արքայի Հրէաստանի »։ Զոր բազում անգամ
ասացի և արդ զնոյն ասեմ, զի ոչ յայն սակս յառա-
ջագոյն գուշակէին մարգարէութիւնքն, զի ուսանիցին
միայն Հրէայքն զիրս ինչ որ գալոց էին, այլ զի յուսա-

նելն՝ և շահս ինչ ցուցանէն, և ահիւ սպառնալեացն՝
լինիցին զգաստացեալք, և բարութեանցն աւետեօք՝
յօժարագոյն լինիցին ի գործս առաքինութեանց. զի
յերկոցունց կողմանց և Աստուծոյ զօրութեանցն
ակահ լինիցին և իւրեանց խնամոյն՝ որ առ ի նմանէ։
Քանզի սիին իրի իսկ ձառէր յառաջագոյն որ ինչ յա-
պա լինելոց էր, զի մի կարծիցեն եթէ վայրապար ինչ
և յանկարծադէմ իրքն գործիցին. այլ զի ի միտ առ-
նուցուն թէ ի վերուստ և յԱստուծոյ հրամանացն կա-
տարին իրքն երկրեան, որ զնոսա մեծ իմն յաստուած-
գիտութեան շահն ձգէր։ Ա-յլ քանզի որպէս վերա-
գոյնն իսկ ասացի, եթէ մարգարէութիւնն ոչ ի նմին
ժամանակի զվճիռ իրացն ցուցանէր, այլ բանքն յայն-
ժամ ասէին, իրքն յետ բազում ժամանակաց կատա-
րէին, զի ոմանք որք լսէին՝ բազում անգամ մեռա-
նէին իսկ, և ոչ կարէին քննել իրացն լինել. տես,
զիաւրդ հնարէր Աստուած. մարգարէութիւն ի մար-
գարէութիւնս յարէր, զի մնան՝ մարգարէութեամբն
որ ի նոցա ժամանակն կատարէր, զայլոց մարգարէու-
թեանցն որ առ յապա ժամանակն լինելոց էին՝
ցուցանիցէ զճշմարտութիւնն։ Իսկ յաւետարանն և
այլազգ իմն շահս հնարի ցուցանել. զի աքանչելիս
ընդ մարգարէութիւնս խառնէ, և այլովք իրովք այլ
իմն ցուցանէ։ Ա-յսպիսի ինչ է զոր ասեմ. մերձե-
ցաւ առ նա բորոտն և սրբեցաւ, և յետ նորա՝ հա-
րիւրապետին ծառայ ապաքինեցաւ յայնպիսի չարա-
չար հիւանդութենէ. և երկոքեան նշանք այսոքիկ
մեծամեծք էին. բայց սակայն ոչ յայսմ աւեթ կաց
ինաց, այլ և մարգարէութիւն ևս յաւել. քանզի հա-
րիւրապետն զայնպիսի մեծ հաւատս եցոյց, որով բու-
ժեցաւ մանուկն ի հիւանդութենէ անտի, ածէ յա-
րէ ի նոյն Քրիստոս, եթէ Բազումք յարևելից և յա-
րևմտից եկեսցեն և բազմեսցին ընդ Աբրահամու և
ընդ Սահակայ և ընդ Յակովբայ, և որդիք արքայու-
թեանն եղեն ի խաւարն արտաքին. զայս ասէլով
զհեթանոսաց կոչումն և զէրեից խոտումն միանգա-
մայն յառաջագոյն գուշակեաց։ Որպէս և այժմ ար-
դեամբք իսկ դիպեցաւ և քան զարեգակն ևս յայտ-
նագոյն երևի. բայց սակայն յայնժամ անյայտ էր և

անհաւատից պժուարընկալ, վասն այսորիկ զնշանն առաջի արկ, զի որ ինչ յայնժամ լինիցի, զայնս որ յետ այնորիկ լինելոց էին՝ արասցէ հաւատալիս. զոր օրինակ և մարգարէութիւնն՝ որ յայնժամ ասացաւ, նշանաւքն որ ի նմին ժամանակի գործէին, և չհաւանականն իսկ անհաւատից՝ առաւել հաստատեսցի ի միտս: Եւ արդ զինչ ունի անհաւատն ասել. սրբեցաւ բորոտն թէ չսրբեցաւ. ապա և մարգարէութիւնն չհմարիտ է. զի յորժամ մարգարէութեանն ոչ հաւատայցեն, յանդիմանեսցէ զնոսա բորոտն՝ որ սրբեալ կայր առաջի, զի և անտի զհանդերձելոցն առնուցուն առհաւատչեայ: Ցեսանէ՞ս, զի այլ իրք այլովքն կազմին. զայս և ի հնումն է տեսանել. քանզի և Յորոբովամ մոլորեցաւ յայնպիսի մոլորութիւն և կանգնեաց զորթան ոսկի. եկին մարգարէն, յառաջագոյն գուշակեր և նշանս ցուցանէր, զի մի՛ ոք թերահաւատ լինի իրացն՝ որ յետ երեք հարիւր ամի գործելոց էին. զազգինն ընդ մէջ հերձեալ և զձարպ ողջակիզացն հեղոյր և զձեռն թագաւորին զօսացուցանէր, և իրօքն՝ որ անդէն առաջի աչաց գործեցան, և զայլոցն ևս՝ որ յետ բազում ժամանակաց գործելոց էին՝ ցուցանէր զհանդէս: Եւ բազում այսպիսի ինչ եթէ ոք կամի՝ գտանէ և ի նորումն և ի հնումն, որով Աստուած ազգի ազգի իրօք ցուցանէ զմերոյ փրկութեան զնաթս. որպէս և անդ իսկ եղև բազում առաւելութեամբ. զի ոչ միայն նշան, այլ և մարգարէութիւն և նշան՝ի միասին հիւսեալ: Ապա զի ևս լուսաւորագոյն լինիցին ասացեալքս, ընդ ամենայն իսկ ձառս անցցուք կարգաւ:

« Եւ եղև, ասէ, յաւուրս Աքազու՝ որդւոյ Յովաթամայ Ողիանց, արքայի Հրէաստանի, եւ Համաթիմ արքայ Ասրամայ և Փակէհ՝ որդին Հռամելայ արքայի Իսրայէլի՝ ի վերայ Երուսաղէմի, տալ պատերազմ ընդ նմա. և ոչ կարացին պաշարել զքաղաքն. և ազդ եղև՝ի տուն Դաւթի՝ թէ միաբանեաց Ասրամ ընդ Եփրեմայ »: Են զոյգ իսկ բանքս և իրաց պատմութիւնք, այլ որ միտս ոք ունիցի և աչս՝ի տեսանել, սակայն և աստի քաջ զումարինչ շահի, յորժամ յԱստուածոյ՝ի բազում խնամոց տուեալ հայիցի և՝ի Հրէից խնամն որ յԱստուածոյ լինելն. զի ոչ իսկզբանն արդեւզպատերազմն և ոչ

յորժամ եկն եհաս՝ետ թոյլ՝ առնել ինաս քաղաքին. այլ սպառնալեացն Թոյլ ետ լինել և զփորձ իրացն արգել. զի միանգամայն և զնոսա զարթուսցէ՝ի ծուլութենէն, և զիւր զօրութիւնն ցուցցէ, թէ կարող է՝ զի յորժամ վախձան ինչ իրաց չարաչ եկեալ հասեալ կացցէ՝ի վերայ, այնպէս՝ որպէս թէ սկիզբն իսկ ինչ լեալ՝ կարէ խափանել և զնոսա պահել անարատս: Զոր բազում անգամ է իմանալ ի լուսոյ ինչ արար, ի հնոյէն Բաբելացւոց՝ զերիս մանկունս, և՝ի գերոյն ազատեաց՝ զՂանիէլ, և այլև ևս բազում իրս այսպիսիս. զի և աստ եկին պաշարեցին, զպարսպօքն պատեցան, և զիմս պաշարելոցն խռովեցուցին, սակայն ոչ ինչ կարացին գամ և մուտ գտանել: Այլ և աստի է իմանալ զտան ազգացն անօրէնութիւն, զի ոչ միայն ընդ ընտանիսն կռուէին և ընդ եղբարսն տային պատերազմ, այլ զի և յայլազգիսն ևս յօտարոտիսն յարեցան. որոց և ոչ յոկ հաղորդութիւնս առնել հրամայեալ էր նոցա ընդ հեթանոսս, նոքա և յօգնականութիւնս ևս կոչէին, և միաբանեալք ընդ նոսա՝ գային՝ի վերայ քաղաքին, զի զայլազգին Հռասիմ՝ի վերայ քաղաքին՝ որ էր մայր քաղաքացն՝ յարուցանէին: Եւ էր մարտն անզուգական, զի նոքա բազումք և անհամարք, և քաղաքք և ազգք և զօրք միաբանեալ, և սոքա սակաւաւորք և մի քաղաք՝ մայր քաղաքացն ևեթ՝ պաշարեալ: Զի և յայսմ երևեսցի առաւելութիւն Աստուծոյ զօրութեանն. զի ոչ զէն զանձամբ ոք առնոյր և ոչ արտաքս քան զքաղաքն ելանէր. և նոքա այնպէս անկեալ կործանեալ էին հիւրեանց յանդուգն չարութենէն: « Եւ ոչ, ասէ, կարացին պաշարել զքաղաքն ». յայտ է թէ ոչ այլ ինչ արգելոյր՝ եթէ ոչ Աստուծոյ ձեռնն՝ որ՝ի ծածուկ մերժէր զնոսա. բայց սակայն որպէս յառաջագոյն ասացի՝ զպատերազմն մերժեաց, այլ զերկիւղն ոչ եբարձ:

« Ազդ եղև, ասէ, ՝ի տուն Դաւթի՝ եթէ միաբանեաց Ասրամ առ Եփրեմ; և զարհուրեցաւ անձն նորա և անձն ժողովրդեան նորա »: Զի յորժամ իրս ինչ նորս կամիցի առնել Աստուած՝ ոչ վաղվաղակի ցուցանէ զբանչելին. այլ նախ այնոցիկ՝ որ փըրկելոցն լինէն՝ թոյլ տայ՝ի կասկածի լինել, զի յոր-

ժամ ապրեցին՝ մի ինչ ապախտաւորու-
թիւնս ցուցցեն: Չի բաղումք՝ ի մարդկանէ կամ
վասն հպարտութեան կամ վասն ծուլութեան մոռա-
նան զվիշտս ինչ՝ յորոց ապրեցան Աստուծոյ օգնակա-
նութեամբն, կամ թէ իւրեանց ինչ համարեցին
զքաջութիւնսն: Թոյլ տայ նախ տրտմականացն խու-
ճապել և ապա ցուցանէ զաղատութիւն իրացն՝ որ
ծանրացեալ կայցեն՝ ի վերայ, զոր և աստ իսկ արար:
Նախ թոյլ ետ սրտաբեկ սրտապախ լինել, և ապա
զաղատութիւն՝ ի պատժոյն եցոյց. յորժամ հանդեր-
ձեալ էր զնա նահատակել՝ ի պատերազմին և զայն-
պիսի մեծասքանչ նշան յաղթութեան նուաւա կան-
գնել՝ ի մէջ երկրին Իսրայելացւոց, ոչ իսկզբան պատե-
րազմին եցոյց զայսպիսի առաքինութիւն, այլ նախ՝
քան զքառասուն օր խուճապեաց զնոսա երկիւղ, և
յորժամ հատանէր յոյս փրկութեան՝ ի մտաց և բա-
զում թշնամանօք այլազգւոյն կսկծէին, և սակայն
ոչ ոք կարէր յօժարել և՝ ի դիմի հարկանել, ապա
իբրև պարտութիւն տկարութեան նոցա յայտնի լի-
նէր, ածէր զհամբաւն զմանուկն, և զնորանշան յաղ-
թութիւնն ցուցանէր: Փէպետ և յետ այնչափ հան-
դիսից տկարութեանն նոցա ապրեցաւ թագաւորն
յանհնարին պատերազմէն՝ որ կայր՝ ի վերայ, առ հեռ
և առ նախանձ ծնեալ նենգաւ գնայր ընդ Դաւթի,
որ ախտացեալ ախտիւ՝ լինէր ապախտաւոր առն ե-
րախտաւորի: Զոր և այլուր բազում անգամ գտանեմք
այսպիսի ինչ գործս գործեալ Աստուծոյ՝ որպէս և
աստ, քանզի քակելոց էր զպատերազմն և ազատելոց
զնոսա՝ ի տրտմականացն, թոյլ ետ նախ փոքր մի զգալ
կարեացն:

« Զարհուրեցաւ, ասէ, անձն նորա և անձն ժողո-
վրդեան նորա, զոր օրինակ շարժիլն՝ ի մէջ անդաս-
տանաց մատաղատունկ ծառ՝ ի հողմոյ»: Եւ այս մար-
գարէութեանն առանձինն սեպհական լինի է՝ զծա-
ծուկս՝ ի մէջ բերել և յայտնել զի ցաւք ինչ որ՝ ի
սիրտս կայցեն և յայտ լինիցին, այն կամ՝ ի մարգա-
րէութենէ կամ յԱստուծոյ՝ որ զսիրտս քննէ: Եւ
զինչ ասէ: Խռովեցաւ, ասէ, անձն նորա, չհաւատայր
փրկութեան, չուներ ակն դիւրութեան. ոչ միայն նա,

այլ և ամենայն ժողովուրդն. իւրաքանչիւր զանձինս
մանաւանդ՝ ի գերութիւն համարէին: Եւ արդ զինչ
առնիցէ Աստուած. նախ յառաջագոյն գուշակէ զա-
զատութիւնն, և ապա զհանդէս իրացն ցուցանէ, զի
մի այլ ուժեք համարիցին զքաղաքին փրկութիւնն,
առաքէ զմարգարէն երթալ առնել ազդ հանդերձե-
լոյն:

« Եւ ասէ Տէր ցեսայի. Ե՛լ դու ընդ առաջ Աքազու,
դու և մնացեալ որդին քո Յասուբ, հանդէպ աւազա-
նի Թաւիչայ ադարակին վերին ճանապարհին. և ա-
սասցես ցնա. Սկա պատուէր քեզ՝ հանդարտ լինել և
մի երկիցես և մի տկարասցին միտք քո, և մի զարհու-
րեսցիս յերկուց փայտից խանձողացն՝ որ ծխոյին,
յորժամ բարկութիւն սրտմտութեան իմոյ հասանի-
ցէ՝ դարձեալ բժշկեցից»: Եւ զինչ իցէ՝ Թէ «Ե՛լ ընդ
առաջ Աքազու». այլ քանզի յահէն և յերկիւղէն
ոչ դադարէր Թագաւորն և ոչ՝ ի տան գտեղն ունել
կարէր, այլ որպէս սովորութիւն իսկ է պաշարելոց՝
զպարսպօքն շրջել, դրացն զգուշանալ, նոյնպէս և նա
ջանայր հնարէր Թէ զիարդ մարթասցէ զերս պատե-
րազմին վձարել. վասն այնորիկ ասէ, Թէ « Ե՛լ ընդ
առաջ Աքազու»: Եւ զինչ իցէ՝ Թէ «Դու և մնացեալ
որդին քո Յասուբ»: Յասուբա, յեբրայեցի լեզու՝ Թէ
զիարդ իցէն կամ զիարդ կայցեն՝ Թարգմանի: Քանզի
ցեսէ յորժամ յղեաց զԴաւիթ՝ ասէ. Ե՛րթ և բեր ինձ
զասուբայն նոցա. այսինքն Թէ՝ զիարդ իցէն, զիարդ կա-
յցեն՝ բեր ինձ զրոյց: Եւ աստ ինձ այսպէս Թուի՝ Թէ մար-
գարէս առ հրաման բազումն տանել ընդ իւր, զի մի
յորժամ իրքն վձարիցին՝ յապախտաւորութիւն դառ-
նայցէ Թագաւորն և ասիցէ՝ Թէ իմ այդպիսի ինչ իրս
՝ի մարգարէէն չէ լուեալ: Եւ զոր ասէն՝ այսպիսի ինչ
է, Թէ՝ Ել դու և մնացորդք ժողովրդեանդ: Եւ ընդ
այն մի ինչ զարմանար Թէ որդի կոչէ զժողովուրդն.
զի յառաջագոյն ևս մատուցեալ ասէ. Սկաւասիկ ես
և մանկունք իմ՝ զոր ետ ինձ Աստուած. զի զՀօր գոլ
և զինամարունին սուրբք ընդ ժողովուրդս, նա և ան-
ցանեն ևս քան զՀայրենի գոլթս: Մնացեալս յայն
սակս կոչէ, քանզի զբազումն տարեալ էր գերի ընդ
Ձանապարհս Թաւիչայ ադարակին. և ինձ այսպէս

թուի՝ թէ բազում դժուարաւ են միտք բանիս. զի թէ արգելականքն և պաշարեալքն, որք ոչ և նայել համարձակ արտաքս քան զդրունսն և քան զպարիսպն կարէին, զիա՞րդ կարէին անդ յայն Ճանապարհի գտանել. զի Ճանապարհ Թափչայ ագարակին՝ արտաքոյ պարսպայ քաղաքին է այժմ: Եւ արդ զի՞նչ իցէ ասել առ այն. այլ զի հին իմն պարիսպ էր արտաքոյ. և զայս դիւրագոյն ուսանել՝ի միւսմէն ևս մարգարէէն է, որոյ կամիցին միտ դնել: Արդ ելանէ՛ լովն՝ զսիրտս կործանեալս կանգնել և համարձակել հրամայէ առ աւետիս հանդերձելոյն բարեաց. քանզի դադարեա, ասէ, մի՛ երկնչիցիս: Եւ զի փայտ խանձողս կոչէ զԹագաւորս, զի միանգամայն և զասստկութիւն զօրացն և զվազվազակի խափանելն յայտ արասցէ. և զծխելն յայն սակս յաւելու՝ զի զարագ շինջանելն նորա ցուցցէ, և զի իմացուսցէ Թէ ոչ իւրեանց ինչ զօրութեամբ, այլ նորա Թոյլ տալով եկին գումարեցան:

Այս. « Յորժամ սրտմտութիւն բարկութեան իմոյ հասանիցէ, դարձեալ բժշկեցից: Եւ որդին Արամայ և որդին Հեսաւեայ, զի խորհեցան խորհուրդս չար՝ի վերայ քո և ասեն. եկցուք մեք յերկիրն Հրէաստանի և չարչարեսցուք զնոսա, խօսեսցուք ընդ նոսա և դարձուսցուք զնոսա առ մեզ, և կացուսցուք նոցա արքայ զորդին Տաբէալ. այսպէս ասէ Տէր զօրութեանց. մի՛ կացցէ խորհուրդն այն և մի՛ եղիցի. այլ գլուխ Արամայ՝ Դամասկոս, և գլուխ Դամասկոսի՝ Հեսայի: և այլ ևս վաթսուն և հինգ ամ, և ապա պակասեսցէ Թագաւորութիւնն Եփրեմայ՝ի ժողովրդենէ անտի: Եւ գլուխ Եփրեմայ՝ Սամարիա, և գլուխ Սամարիոյ՝ որդին Հեսայեայ. և եթէ ոչ հաւատասջիք, և մի՛ի միտ իսկ առջիք »: Դարձեալ մարգարէն մեծ իմն վկայութ ցուցանէ զմարգարէութեան, քանզի ահն պախեցոյց և չարիքն առաջն աչաց կային, և հեշտականացն յուսոյ՝ ոչ ուստեք կայր ակն ունել և լսողքն ոչ այնչափ ինչ հաւատացեալք, տեսս զինչ գործէին. նշան իմն մեծ տայ զվինեվոյ իբաց. զմարդս պատերազմողացն՝ի մէջ բերէ և զվիտան՝ յոր սակս դիմեցին՝ի վերայ քաղաքին, և որ ինչ առ

անձինն ընդ ինքեանս խօսեցան, և զիարդ ուխտ եդին ընդ միմեանս՝ յայտ առնէ, և կամ Թէ մատնութեան ինչ իրք էին, քանզի ասէ, Թէ « խօսեսցուք ընդ նոսա, և դարձուսցուք զնոսա առ մեզ », կամ Թէ բազում հպարտութեամբն դանդաչէին՝ իբրև զարբեալս, Թէ և ոչ զինուց անգամ պէտք ինչ ինչ եղեն և ոչ կռուոյ, այլ երթայցեն և առնուցուն առանց աշխատութեան զքաղաքն: Երևեցաւ մեր միայն, ասեն, և խօսեցաւ՝ բաւական է, և առնուցումք վարձեցեալք գերի զամենեսեան: Ջոր և կրեն հպարտք, զի այլ իմն կարծեն և այլ իմն պատահէ. նոյնպէս և նոքա հպարտացեալք՝ յորժամ զքաղաքն, ասեն, առնումք, ապա զի՛ և կամիմք Թագաւոր ևս կացուցանեմք: Եւ նոցա բանքն այսչափ ինչ. իսկ աստուածոյքն խափանիչք էին ամենայն խորհրդոց նոցա: Վասն որոյ յարէ՛ի նոյն, Թէ « Այսպէս ասէ Տէր ». և ոչ միայն զայս, այլ և զԱբաւաովԹն յաւելու, այսինքն՝ զօրութեանց. զի ուր մեծամեծս ինչ առնել խոստանայցէ՝ զզօրութիւնն Աստուածոյ յիշէ, զվերին Թագաւորութիւնն, զաքանչելագործ իշխանութիւնն: Եւ արդ զի՞նչ ասիցէ Աստուած. « Մի՛, ասէ, կացցէ խորհուրդն այն և մի՛ եղիցի. այլ գլուխ Արամայ՝ Դամասկոս », այսինքն է՝ իշխանութիւն նորա և տերութիւն նորա՛ի Դամասկոս կացցէ, և այլ ուրեք մի՛ երթէ. « Եւ գլուխ Դամասկոսի՝ Հեսայի՛ ». զոր ունին՝ կալցի, և այլ ուրեք մի՛ իշխեսցէ խաղալ:

« Եւ այլ ևս վաթսուն և հինգ ամ, և ապա պակասեսցէ Թագաւորութիւնն Եփրեմի՛ի ժողովրդենէ անտի »: Յայտ յանդիման ցուցանէ զՀնամարտութեանն հաստատութիւն, յորժամ և զժամանակս յառաջագոյն ասիցէ, յայնժամ Հնամարտիս զզօրութիւն մարգարէութեանն ցուցանէ: Այժմ, ասէ, մերժեսցին՛ի քաղաքէդ, և յետ վաթսուն և հինգ ամի՝ բնաւին իսկ կորիցէ ազգն, և բարձցի Թագաւորութիւնն Իսրայէլի, և առցեն գերեվարքն և տարցեն զամենեսեան. բայց յառաջ քան զայն հինաւանդութիւնն[1] ոչ ինչ աւելի քան զիւրեանցն զօր ունիցին՝ առնու-

1 Յն. Աւուրն կամ կործանումն:

ցուն։ Չի մի՛ յորժամ լուիցէ Թագաւորն Թէ զի չետ
վաթսուն և հինգ ամի բառնայցեն, ասիցէ՝ի միտս իւր՝
Թէ զմեզ այժմ առնուն և նոքա յայնժամ բառնալոց
իցեն, և մեզ զի՞նչ շահ յայնցանէ լինիցի, քաջալե-
րեաց, ասէ, և մի՛ ինչ կասկածեր և վասն մերձաւո-
րացդ. զի ամենևին, ասէ, յայնժամ առցին, բայց ա-
ւելի ինչ քան զոր ունին այժմ՝մի՛ ինչ կալցին. այլ
գլուխն Եփրեմի՝ այսինքն է տասն ազգացն Սամարիայ,
զի անդ էր նոցա Թագաւորութիւնն, և այլ ուրեք մի՛
ելանիցէ. և գլուխ Սամարեայ՝ արքայն Խորայելի.
զոր՝ի վերայ Դամասկացւոցն ասաց, զնոյն և աստ,
Թէ մի՛ ինչ աւելի զոր ունին՝ ունիցի։ Եւ քանզի այն-
պիսի ինչ իրս, որ ըստ մարդկեղէնն միտս անցանէին և
՝ի վերոյ քան զմարմնաւոր խորհուրդս էին, և մանա-
ւանդ զի մարգարէութիւն ևս էր, նմանագոյնս յարէ
՝ի նոյն, զի «Թէ ոչ հաւատասջիք, և մի՛ առջիք՝ի միտ»։
Մի՛ խնդրեր, ասէ, Թէ զիա՛րդ կամ որպիսի՛ կեր-
պարանօք այսպիսի իրք լինիցին. Աստուած է, ասէ,
որպէս կամի՝ և առնէ, և հաւատոյ միայն են քեզ
պէտք. զի յորժամ իմանայցես զգօրութիւն սքանչելա-
գործին, ապա լինիցիս հասու և ասացելոցն հաստա-
տութեան։ Վասն որոյ և մարգարէն Դաւիթ ասէ, Թէ
Հաւատացի՝ վասն որոյ և խօսեցայ. և Պաւղոսի նմա-
նագոյնս առեալ զբանն՝ ևս՝ի մեծ իմն իրս ձգէ. Ու-
նիմք, ասէ, զնոյն հոգի հաւատոյ, որպէս և գրեալ է,
Թէ Հաւատացի՝ վասն որոյ և խօսեցայ, և մեք հաւա-
տամք՝ վասն որոյ և խօսիմք իսկ։ Չի եթէ հինքն հա-
ւատոյ կարօտէին, որ այնչափ հեռի էին՝ի նորոյս,
որչափ երկիր յերկնաւորականաց, սրչափ ևս առաւել՝
որ այսչափ բարձրագոյն աստուածադէտ կրօնիցդ գի-
տութիւն է, որ ոչ և՝ի միտս ուրուք երբեք անկա-
նէր, զորմէ և ինքն իսկ Ջաւէ, Թէ Ձոր ակն ոչ ետես
և ունկն ոչ լուաւ և՝ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ զոր
պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։

« Եւ յաւել Տէր խօսել ընդ Աքազու՝ և ասէ. Խըն-
դրեա դու քեզ նշան՝ի Տեառնէ Աստուծոյ քումմէ՝ի
բարձրութիւնս կամ՝ի խորութիւնս։ Եւ ասէ Աքազ.
Ոչ խնդրեցից և ոչ փորձեցից զՏէր։ Եւ ասէ Եսայի.
Լուարուք, տունդ Դաւթի. մի եթէ թեթև՞ ինչ

Թուիցի ձեզ հասուցանել աշխատութիւն մարդկան,
և զիա՛րդ իշխէք դուք աշխատ առնել զՏէր։ Վասն
այսորիկ տացէ ձեզ ինքնին Տէր նշան. ահաւասիկ
կոյս յղասցի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա
Եմմանուիէլ»։ Բաղում անչափ էր Աստուծոյ զիշա-
նել ըստ Աքազու, և յոյժ Թագաւորին ապախտաւո-
րութիւն. պարտ և պատշաճ էր նմա յորժամ լուաւ
՝ի մարգարէէն՝ չերկմտել յասացելոցն. ապա եթէ
երկմտեաց ևս, իբրև լուաւ զնշանէն՝ պարտ էր հա-
ւատալ զոր և բազումք՝ի Հրեից արարին։ Բայց
քանզի մարդասէր է Աստուած, և զայս ևս չհրաժա-
րեաց ընդհել. Թէպէտ և Թանձրասրտացն՝ որ միշտ
յերկիր ևեթ հայէին և ընդ գետին պչնուին՝ առնէր
այնպէս ինչ՝ որպէս առ Գեդեւոնին։ Չի Թէպէտ և
քան զամենեսեան վատթարագոյն և Թանձրամիտ էր
Աքազ, տես, ուստի՛ յո՛ իջանէր Աստուած, կամ ո՛ր-
պես ինքն զինքն խոնարհեցուցանէ և յորդորէ՝ զի
նշան ինչ խնդրեսցէ։ Թէպէտ և այն չէր փոքր ինչ
նշան՝ զի զծածուկս սրտի նորա յայտնեաց, զմիտս
մերկեաց և զկեղծաւորութիւն նորա յայտնեաց, զի
մարգարէն ասէ. « Խնդրեա դու քեզ նշան », և կարի
իմն հաւատացեալ զանձն ցուցանէր կեղծաւորու-
Թեամբ. « Ոչ, ասէ, խնդրեցից և ոչ փորձեցից զՏէր»։
Եւ արդ, տե՛ս, զիա՛րդ սաստիկս կարէ մարգարէն. զի
յորժամ զմիտսն յայտնեաց համարձակ, ապա և զմե-
ղադրութիւնն՝ի մէջ բերէ, որով զնա և պատասխա-
նոյ անգամ արժանի ոչ առնէ։ Եւ դարձուցեալ զե-
րեսս՝ի նմանէ առ ժողովուրդն՝ ասէ. « Լուարուք,
տունդ Դաւթի, միթէ Թեթև՞ ինչ Թուիցի աշխա-
տութիւն հասուցանել մարդկան, և զիա՛րդ իշխէք
աշխատ առնել զՏէր »։ Սկայած է ասացուածս, վասն
որոյ պարտ է հաւաստեաւ բանալ զբանս. զի զոր ա-
սէն՝ այսպիսի իցէ. մի եթէ իմ իցեն բանքս, մի եթէ
իմ իցէ վճիռ. զի եթէ մարդկան վայրապար չհաւա-
տալ ծանր է և մեղադրութեան արժանի, որչափ ևս
առաւել Աստուծոյ. զի աշխատութիւն հասուցանել
այլ ինչ ոչ է՝ եթէ ոչ չհաւատան։ Եւ արդ ասէ՝,

1 Յօր. Ա՝ս է։

միթէ թեթեւ ինչ ՚ի նմա կամ սակաւ մեղադրու-
թիւն՝ մարդկան չհաւատալ. և եթէ այս ծանր ՚ի նմա
է, ո՛րչափ ևս առաւել Աստուծոյ չհաւատալ: Եւ յայն
սակս ասէ զայս, զի ուսանիցին ամենեքեան թէ մար-
գարէն ոչ խաբեցաւ, և ոչ ՚ի բանից Աքազու պա-
տրեցաւ, այլ ըստ մտացն ած զպատուհասն ՚ի վերայ:
Զայս և Քրիստոս բազում անգամ եցոյց յաւետարանի.
զի յառաջ քան զնշանսն ցուցանել, զչարութիւնսն՝
որ ՚ի սիրտս նոցա մածեալ կային՝ յայտ ածէր. և այս
ոչ սակաւ ինչ նշան էր. որպէս և յանդամալուծին իսկ
եցոյց. քանզի յորժամ ասացն ցնա, թէ Որդեակ, թո-
ղեալ լիցին քեզ մեղք քո, նոքա ասէին՝ թէ հայհոյէ.
նախքան զայն՝ սրտգեալ զանդամալոյծն՝ Ձի՛, ասէ, խոր-
հուրդք չարութեանն՚ի սիրտս ձեր. որ մեծ նշանակ յու-
ցանէր զաստուածութեանն՝ ճանաչել զծածուկս մի-
տացն. ըստ այնմ՝ թէ Դու միայն ճանաչես զսիրտս.
և Դաւիթ ասէ, թէ Միայն որ քննէ զսիրտս և զե-
րիկամունս՝ Աստուած:

Զայս և մարգարէիցն տայր բազում անգամ ճանա-
չել, զի որք լսիցեն՝ ուսանիցին թէ չէ ինչ մարդկեղէնն
յասացեալսդ, այլ՚ի վերուստ յերկինից հրամանք են ի-
ջեալ: Վասն այնորիկ և մեծաբարբառն Եսայի, քան-
զի բազում անգամ խօսեցաւ ընդ Թագաւորին և ՚ի
չարեացն ազատեաց և վասն եկելոց հասելոց իրացն
համարձակութիւն ետ, և նշան այսմիկ՝ զկորնդուքս
զայնոցիկ՝ որ յարուցեալն էին ՚ի վերայ նորա՝ գուշա-
կեաց, և զմատն՝ որ անդէն յրնտանեացն լինելոց էր՝
յանդիմանեաց. և զամենևին ղգերութիւնն Բաբա-
յելի՝ յառաջագոյն պատմեաց, նաև զժամանակն ևս
եցոյց: Եւ ոչ միայն զայս բաւական համարի, այլ և
իմն յառաջ մատչի. զի գնա՝ որ վասն բազում անհաւա-
տութեանն ոչ կամէր, նշան ևս յօժարեցուցանէ խըն-
դրել. և ոչ վայրապար, այլ տէր առնէ գնա կամացն.
ոչ ասաց՝ եթէ զայս ինչ կամ զայն, այլ զոր ինքն ըն-
տրեսցէ: Մեծ է Տէրն, բաւական է զօրութիւնն.
եթէ յերկինից կամիցիս՝ չէ ինչ որ արգելու, և եթէ
յերկրէ՝ չէք ինչ որ խափանիցէ. քանզի ՚ի բարձրու-
թեանն և՚ի խորութեանն խնդրել՝ այս է: Եւ այլ ոչ
ևս յորդորեաց գնա և ոչ լռեաց ՚ի նշան տալոյ, այլ

պչանդիմանութիւնն ՚ի վերայ բերէ, և զայն՝ վասն
ուղղութեան լսողին, և առ ՚ի ցուցանել՝ եթէ ո՛չ խա-
բել կարաց և ո՛չ արհամարհել, յայտնէ մարգարէու-
թիւն իմն ծածուկ՝ որ ՚ի փրկութիւն առնոյն աշ-
խարհի լինելոց էր, յուղղութիւն առնոյն իրաց: Եւ
տայ նշան, ոչ այսուհետև Աքազու, այլ հասարակ ա-
մենայն ժողովրդեանն Հրէից. զի նախ առ նա ձգեաց
ղբանն, բայց քանզի նա չարար զանձն արժանի, թո-
ղեալ ցնա՝ այնուհետև ընդ ամենայն ժողովրդեանն
խօսի. վասն այնորիկ ասէ՝ տացի ոչ քեզ նշան, այլ
ձեզ. ձեզ, ո՛ւմ: հասարակ տանդ Դաւթի, քանզի
անտի բղխեաց նշանն:

Եւ զինչ իցէ նշանն. «Ահաւադիկ, ասէ, կոյսն
յղասցի և ծնցի որդի, և կոչեսջիք զանուն նորա Էմ-
մանուիէլ»: Որպէս և յառաջագոյն իսկ ասացի, թէ
ոչ Աքազու տայր այնուհետև զնշանն, և զի ոչ կար-
ծիք ինչ էն, ինքնին իսկ մեղադիր լինի. «Մի եթէ
թեթե՛ւ իցէ աշխատութիւն հասուցանել մարդկան».
և յաւել՝ եթէ «վասն այնորիկ տացէ Տէր ինքնին
նշան». և զինչ նշան. «Ահաւասիկ, ասէ, կոյսն յղաս-
ցի». զի եթէ կոյս չէր, և ոչ նշանն՝ նշան ինչ. զի նշանն՝
պարտի՚ի միջոյ բառնալ զհասարակաց կարգն և զբը-
նութեան սովորութիւն, և նոր ինչ և չքնաղ լինել
զի հասարակաց նշանակ իցէ նշանն, և տեսողացն և
լսողացն. քանզի վասն այնորիկ իսկ նշան ասի, վասն
նշանակ ինչ ցուցանելոյ. և նշանակն՝ նշանակ ինչ չէ,
եթէ այլոց հասարակ իրօք ծածկելոց իցէ: Զի եթէ
զկանանչ ինչ բանք էին, ըստ օրինաց սովորութեան
բնութեանն ծնանել, վասն է՞ր նշան կոչէր զայն ինչ՝
որ հանապազ լինէր: Եւ յայն սակս իսկ՚ի ծնանելն՝
ոչ վայրապար ասէ՝ թէ ահաւասիկ կոյս, այլ թէ՝ ա-
հաւադիկ կոյսն, յաւելուածով վերադրին նշանաւոր
իմն և միայն զայն այնպէս իմն ահնարիկ, և յաւելուած
վերադրիս զայս ինչ յայտ առնէ՝ զոր ասացաք: Եւ
յաւետարանէ մարթի է ձեզ ուսանել. յորժամ
առաքեցին առ Յովհաննէս Հրէայքն և հարցանէին,
թէ Դու ո՞վ ես, ոչ ասացին՝ թէ դո՛ւ ես Քրիստոս,
այլ թէ՝ Դո՛ւ ես Քրիստոսն. և ոչ ասացին՝ թէ դո՛ւ
ես մարգարէ, այլ եթէ՝ Դո՛ւ իցես մարգարէն. որոց

իւրաքանչիւր առաքինութիւնն յայտնէ վերադրեալն։ Վասն այնորիկ և Յովհաննէս իսկզբան աւետարանին ոչ ասաց, եթէ Իսկզբան էր Բան, այլ եթէ՝ Իսկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած։ Սոյնպէս և աստ ոչ ասաց՝ եթէ ահաւասիկ կոյս, այլ եթէ՝ ահաւադիկ կոյսն. և պատուով ևս հանդերձ՝ որպէս և մարգարէն վայելէ՝ ահաւադիկ ասել. քանզի ոչ եթէ առ զբօսանս ինչ տեսեալ, այլ և բազում իսկ հաստատութիւն առեալ զձառելոյն. զի քան զվեր աչս զբևելիսս՝ նոքա ևս լուսաւորագոյնս տեսանէին զանբևեղէնն. զի աչաց մարթ է և պատրել և այլ և այլ տեսանել, իսկ հնարհք Հոգւոյն՝ անվրէպ հնարհէին զհրամանն։ Եւ ընդէ՞ր, ասեն, ոչ յաւել՝ եթէ՝ ի Հոգւոյն է ծնունդն. ասեմք՝ եթէ մարգարէութիւն է՝ որ ասէր, և ծածուկս պարտ էր ձառել. զոր բազում անգամ ասացի, թէ վասն անհաւանութեան լսողացն. զի մի յորժամ յայտնագոյնս ուսանիցին, և զգիւրսն ևս այրեսցեն. զի եթէ՝ ի մարգարէսն չկնայէին, ոչբափ ևս առաւել և՝ ի գիրսն չկնայէին։ Եւ զի ոչ կարծ ինչ են զոր ասեմն, մի թագաւորն առ Երեմիայիւ և զմանտեսանն իսկ կոտորեաց և՝ ի հուր ընկէց։ Ցեսանէ՞ս զյանգուգն կատաղութիւնն, հայիս յանհանձար բարկութիւնն. զի ոչ միայն զայն բաւական համարեցաւ՝ զի կոտորեաց, այլ և՝ ի կրակ ևս ընկենոյր, զի զջարակամ բարսն կատարել կարասցէ։ Բայց թէ ոչ յայտնագոյն ասաց, սակայն զամենայնն յայտնի եղոյց. զի կոյս յորժամ ծնանիցի և կոյս մնասցէ, ուստի՞ այլ ուստեք ծնանիցի, եթէ ոչ՝ ի Հոգւոյն Սրբոյ. զի զօրէնս բնութեան լուծանել այլ ուրուք ոչ է, բայց եթէ բնութեանն իսկ արարչէ. որպէս զի ասելովն՝ թէ կոյսն ծնցի, զամենայն ինչ յայտ արար։

Եւ արդ, իբրև ասաց՝ թէ ծնցի, ասաց՝ թէ և զինչ անուն է ծննդեանն, ոչ՝ որ եդաւ ինչ նմա անուն, այլ որ ինչ ըստ դիպաց իրացն պատշաճ էցէ. զի զոր օրինակ զՅերուսաղէմ կոչէ քաղաք արդարութեան, թէպետ և ոչ երբեք կոչեցաւ քաղաք արդարութեան, այլ ըստ դիպաց իրացն կալաւ՝ ի ժամանակին զպղծութիւնն, զի բազում՝ իմն՝ ի ժամանակին եղև նման փոփոխումն՝ ի լաւութիւն, և վասն արդարոյն

պաշտպանութեան. և քանզի յորժամ պոռնիկ կոչի՝ ոչ վասն զի այն անուն եդաւ քաղաքին, այլ ըստ չարեացն՝ որ՝ ի ժամանակին գտան՝ ի նմա, սոյնպէս և վասն արդարութեանն՝ արդարութեան քաղաք։ Եւ արդ զոյն ասէ վասն Քրիստոսի, եթէ ըստ դիպաց իրացն կոչեցաւնման Եմմանուիէլ անուն. զի յայնմ ժամանակի եղև ընդ մեզ մանաւանդ Աստուած՝ յորժամ յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ և զբաղում խնամն եցոյց առ մեզ. զի ոչ հրեշտակ ոք և ոչ հրեշտակապետ եղև ընդ մեզ, այլ ինքնին Տէր էջ և ուղղեաց զամենայն ուղղութիւնս. ընդ պոռնիկս խօսեցաւ, ընդ մաքսաւորս բազմեցաւ և՝ ի մեզաւորաց տունս եմուտ, աւազակաց համարձակութիւն ետ, զմիգս առ ինքն ձգեաց, ընդ ամենայն չափս էանց, և զամենայն ինչ ուղղեաց և զբնութիւնս մարդկան ընդ իւր միաւորեցոյց։ Եւ արդ զայս ամենայն՝ մարգարէս յաւաղագոյն գուշակէ, զի միանգամայն և զծնունդն ասիցէ և զբազում ևս զշահ զծննդեանն պատմիցէ։ Զի յորժամ Աստուած ընդ մարդկան լիցէ, չէք այնուհետև ոչ երկիւղ ուստեք և ոչ կասկած յումեքէ, այլ համարձակութիւն առ ամենայն ինչ. որ եղև իսկ. զի առաջինն և անշարժ չարիքն քակեցան, և պատիժքն որ՝ ի վերայ ազգի մարդկան կային՝ ՝ի միջոյ բարձան, և մեղաց չիւք հարան և սատանայի բռնութիւնն շիջաւ, և անկոխ դրախտին Աստուածն՝ մարդակոտոր աւազակաւն նախ բացաւ, երկնից կամարքն յայտնեցան, մարդիկ ընդ հրեշտակս խառնեցան, և յաթոռն իսկ արքունական հասանէր մեր բնութիւնս, և դժոխոյ կապանք կոտորեցան և մահու անունն ևեթ լոկ մնաց, զի ոչ ուրեք են արդիւնք՝ ի միջի, և գունդք մարտիրոսաց և կանայք ևս՝ փշրեն զնայեթոցս մահու։ Զայս ամենայն տեսեալ յաւաղագոյն մարգարէս, խաղայր, ցնծայր, և միով բանիւ զամենայն միանգամ մարգարէացեալ՝ Եմմանուիէլ անուամբ ցուցանէր։

« Եւ եւղ և մեղր կերիցէ. մինչև ծանուցեալ լիցէ նորա կամ ածեալ զմոռաւ, ընտրեսցէ զբարին »։ Քանզի զի որ ծնաւ մանուկն՝ ոչ մարդ լոկ էր և ոչ Աստուած միայն, այլ Աստուած մարդացեալ, և ոչ՝ ի մարմին

դարձեալ. նմանապէսն և մարգարէն այլ և այլ կերպարանօք զբանսն Ձառէ, զի մերթ զայս և մերթ զայն ասէ, և զբանչէլեան պատմէ և զտեսչութիւնն չառնէ անհաւատալի՝ վասն առաւել զարմանալեացն։ Քանզի ասաց՝ Թէ կայս ծնցի, իբրք որ՝ի վերոյ քան զբնութեան էին. և կոչեսցի անուն նորա Եմմանուիլ, որ և այս իսկ մեծի յուսոյ նշանակ է. զի մի՛ ոք յորժամ զԵմմանուիլէլն անուն լսիցէ, զմարկիոնական ախտն ախտանայցէ և՛ի Վաղենտիանոսոյ ցաւս ջերանիցի, միանգամայն և զմեծամեծս աստուածութեանն և զտեսչութեան լուսաւորագոյն ընծայութիւն ցուցանէ, և մանաւանդ յայսպիսի սեղանոյ առնէ հաւատալի զտնտեսութիւնն։

« Եղ և մեղր, ասէ, կերիցէ», որ ոչ էութեան աստուածութեանն է, այլ մերոյ բնութեանս, զոր առ իւր մարմին վայել է [1]։ Վասն այսորիկ ոչ զմարդ ոք վայրապար ստեղծ և բնակեցաւ՛ի նմա, այլ ինքն իսկ յղանալոց յարգանդի կուսին աւրհնեալ ժամանակ կատարելով և երկանց և ծննդոց և խանձարրոց և այսպիսի կերակրոց՛ի մատաղական տիս հասակին. զի ամենևին կարկեսցէ զբերանս այնոցիկ՝ որք զտնտեսութիւն տեսչութեանն՛ի միջոց յանդգնութեան բառնալ։ Զայս ամենայն յառաջագոյն տեսեալ մարգարէիս, ոչ միայն զբաբանչէլն ծնունդն ասէ, և զխանձարուրսն Թաքուցանէ. զի այնու ոչ աւելի ինչ քան զայլոց մարդկան և ոչ նոր ինչ քան զնոցա, քանզի ոչ զամենայն ինչ այլակերպեաց, և ոչ զամենայն ինչ ըՀաստարակացն եցոյց. զի՛ի մարդոյ [2] ծնանել՝ այն հասարակաց է, իսկ՛ի կուսէ, և զկոյսն՛ի կուսութեան պահել, այն մեծ և՛ի վեր քան զՀաստարակացն. մանաւանդ կերակրովք՝ ըստ օրինաց մարդկան բնութեան էր, իսկ անարատ մնալ՛ի չարեաց՝ տերունական մարմնոյն աւետ. և բնաւ իսկ՛ի փորձ չգալ՛ի մեղաց՝ այն նոր և չքնաղ և նորա միայն. վասն որոյ զայն և զայս առՀաստարակ իսկ եդ։ Քանզի ոչ ասէ՝ Եթէ՛ի փորձ չարեաց եկն և ապա հեռացաւ՛ի չարեացն, այլ՛ի բնէ և իսկզբանէ իսկ եցոյց յիւրում

1 Ս. յապէս յօրինակին։ 2 Յն. ի կնոջէ։

մարմինն զկատարեալ զքաջութիւնան, որպէս և ինքն իսկ ասաց, Թէ Ո՛վ՛ի ձէնջ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց. և Գայ իշխան աշխարհիս այսորիկ և առ իս ինչ ոչ գտանէ զիւր։ Եւ սոյն մարգարէ մատուցեալ յառաջագոյն և ասէ, Եթէ Ջմեղս ոչ արար և ոչ գտաւ նենգութիւն՛ի բերան նորա. զսոյն և աստ յայտ առնէ՝ Թէ մինչչև ծանուցեալ էր նորա և կամ նախ կամեցեալ զչարութիւն՝ անդստին յանփորձ լեաց, յառաջնին տիոյն իսկզբանէ ընկալեալ զառաքինութիւնս, և ոչ ինչ եկեսցէ՛ի հասարակաց չարութիւն։

« Ձի մինչչև ծանուցեալ իցէ մանկանն զչար կամ զբարւոյ, անարգեսցէ զչարն՝ առ ընտրել զբարւոյն» [1]։ Դարձեալ նովին բանիւք՝ զնոյն միտս նշանակէ, և յամէ՛ի բանին. զի յոյժ բարձրագոյն է որ ասացաւն, վասն այսորիկ յաձախէ և զպատմութիւնն, զի հաւատալի արասցէ՝ զոր վերագոյն ասաց, Թէ « Մինչչև ծանուցեալ իցէ նորա կամ նախ կամեցեալ չարութիւն». զնոյն և աստ կրկնէ, Թէ « Մինչչև իցէ ծանուցեալ մանկանն զբարւոյ կամ զչար, անարգեսցէ զչարն՝ առ ընտրել զբարին »։ Ս. յս առաւելութիւն նորա միայն է, զոր և Պաւղոս յառաջագոյն ինքն յերկեղել, և Յովհաննէս իբրև ետես զայսպիսի զարմանալիս՝ աղաղակ եդեալ բարբառէր, եթէ Ս. Հաւատասիկ գառն Աստուծոյ՝ որ բառնայ զմեղս աշխարհի։ Եւ եթէ զայլոց մեղս բառնայ, սրչափ ևս առաւել անարատ իցէ՛ի մեղաց։ Եւ քանզի Հանդերձեալ էր մեռանել, զի մի՛ ոք կարծիցէ՝ եթէ վասն իւրոց մեղաց Հատուցանիցէ զպարտս վրիժուց, յաձախագոյնս Պաւղոս բարբառի զանմեղութիւն նորա, զի զմահ նորա մերոց մեղացն քաւութիւն ցուցցէ. վասն որոյ ասէ, Թէ Քրիստոս յարուցեալ է՛ի մեռելոց, այսուհետև չմեռանի. և որ մեռաւն՝ մեղաց մեռաւ միանգամայն, քանզի ոչ եթէ իբրև զպատժապարտ մեղաց մեռաւ, այլ փոխանակ Հաւարակաց ամենեցունն մեղաց, զի եթէ առաջնումն յայտ է՝ եթէ ոչ իբրև զպատժապարտ մեռաւ, և յայտնագոյն՝ եթէ այլ ևս ոչ մեռանի։

« Եւ մնասցէ երկիրդ՝ յորում դու ես պակուցեալ առաջի երկուց Թագաւորաց »։ Որպէս և բաղում

անգամ առնէ մարգարէս, նոյնպէս և աստ ընոյն ցուցանէ. զի յետ մարգարէութեանն՝ ապա անդրէն ՚ի կարգն ածէ զբանն։ Ցսոյն և ՚ի սրոբէիցն Ձառս յօրինեալ՝ ցուցաք յայտնագոյն, որպէս և աստ իսկ. զի յորժամ ասացէ զհանդերձելոյն բարութեանց՝ որ լինելոյն էին տիեզերաց, ապա՚ի Թագաւորն շրջէ զբանն. վասն որոյ յառաջ ևս մատուցեալ՝ ասէ. « Եւ մնասցէ երկիրդ »։ Զի՞նչ իցէ մնասցէն. առանց լլկանաց մնասցէ, ազատ կացցէ, ոչ ինչ չարչարեսցի՚ի պատերազմաց։ « Եւ մնասցէ երկիրդ՝ յորմէ դու ես պակուցեալ». վասն որոյ երկնչիսդ, վասն որոյ կասկածեսդ՝ յերեսաց երկուց Թագաւորացդ, ՚ի Դամասկացւոյն և Յիսրայելացւոյն։

Իսկ զի մի բարեացն մարգարէութեամբն ծուլացեալք գտանիցին, և խաղաղութեանն աւետեօք՝ յուսահատիցնս հատանիցին, պնդէ դարձեալ զմիտս ասելովք. « Ա՚յլ ածցէ Տէր ՚ի վերայ քո և ՚ի վերայ ժողովրդեան քո և ՚ի վերայ տան հօր քո աւուրս՝ որ չև իցեն եկեալ յօրէ՝ յորմէ հանցէ Եփրեմ՚ի Հրեաստանէ զաղքայն ասորեստանցի »։ Ա՚յսու՝ զհինին պլաղդեաց զասպատակն յայտ առնէ, որով զամենայն քաղաքն իսկ ՚ի հիմանց բրելոց էր, և առնուին զամենեսեան և տանէին ՚ի գերութիւն. և ոչ յայն սակս ասիցէ յառաջագոյն զի լինիցին, այլ զի ահն արկանելով զգաստանայցեն և մերժեսցեն զսպառնալիսն. և քանզի ոչ հեշտականօք՝ որոց չէին արժանի և վայելեցին, զայն միտք Թագաւորին յայտ առնեն, և առաւել անհաւատութիւնն, զի ոչ ահիւ սպառնալեացն փոխեցան ինչ՚ի չարութեանցն, այլ յերկոսին կողմանս շահին գերզոց գտանէին դիմադարձք, ածէ այնուհետև ՚ի վերայ զնոր վիրին զհատածն՝ զի զփուտն հարկանիցէ [1], և որք զանբժշկական ցաւսն ջերանիցին՝ ՚ի միջոյ բառնայցէ։ Եւ զի՞նչ ինչ այն իցէ, « Յօրէ՝ յորմէ հետէ հանցէ Եփրեմ զաղքայն Ասորեստանի ». զի եկն եհաս հէնն և աւր զամենեսեան, բայց զՀրեաստան միայն Թողին, զաղգս զերկոսեան, և ձի արկին վարեցին՚ի գերութեան զամենայն Իսրայելացիս։ Եւ զոր ինչ ասէս

1 Յն. Հատանիցէ։

այժմ՝ այսպիսի ինչ է. յայնմ օրէ հետէ, յորմէ տաճարգն ձգիցեն ածիցեն ՚ի վերայ անձանց զզօրս հինգին, ՚ի ձէնջ մերժիցեն, և իւրեանց չարութեամբքն անձամբ անձին ածեալ զբարկութիւնն՝ վարեսցին ՚ի գերութիւն, յայնմ օրէ հետէ պարտ էր և ձեզ կասկածել, զի յորժամ զնանձ առնուցուն Ճանապարհացն և ՚ի ձեր վերայ ևս գայցեն, եթէ ոչ գառնայցէք. յայնմ օրէ հետէ, ասէ, ածցէ զնոսա. զի ոչ եթէ յորժամ Իսրայելացիքն գերեցան՝ ՚ի նմին ժամանակի և Հրեաստանեայքն առան, այլ ժամանակք լինչանցին ընդ միջ։ Եւ զոր այժմ ասէ՝ այսպիսի ինչ է. զի զվէնն ածել՚ի վերայ՝ յայնմ օրէ հետէ պարտ էր, այլ երկայնամիտ լինէր Աստուած և ներէր. Թէպէտ և մեղայն արժանք՝ յայնմ հետէ իսկ պահանջէին զպարտիսն։ Զոր բազում անգամ սովոր է առնել Աստուած, զբուն ժամանակն յապաղել և յամեցուցանել, որ և նորա մարդասիրութեանն մեծ առաւել նշանակ է, և ստահակութեան այնոցիկ՝ որք և երկայնմտութեամբն ոչ առնեն զանձինս պիտանիս։ Այնպիսի ինչ և աստ ասէ, եթէ յայնմ հետէ իսկ են սպառնալիքն, յայնմ հետէ վէնն պատժոցն, յայնմ հետէ աստուածասաստ բարկութիւնն. զի յորժամ՚ի դուրս իսկ ածեալ հասուցանիցէ զպատիժսն, զարթուսցէ յապաշխարութիւն և արասցէ պիտանիս, և նոցա գերութեամբն՝ արկանիցէ ահ սոցա, զի մի յորժամկէսքն գերիցին և կէսքն մնայցեն, լինիցին այնու ծուլացեալք։

« Եւ եղիցի յաւուր յայնմիկ ընչեսցէ [1] ՚ի Ձանձիւ՝ որ տիրեսցէ ՚ի վերայ կողմանն գետոյն Եգիպտացւոց»։ Տեսանե՞ս, զի ոչ վայրապար ինչ ասէի, եթէ զի զերկիւղն կամեր աձեցուցանել վասն այնորիկ յայնմ օրէ շարժէր զսպառնալիսն, զի որ յետոյ գան բանքն յայտ առնեն՝ որովք զերկիւղն յաձախէ. և զի զօրացն գալ պատմէ՝ որ կարի զարհուրեցուցանէր զնոսա, և զգալ ձին դիւրութիւն. զի յաձախագոյն լինի պախեցոյց զմիտս նոցա բազմութեամբ զօրացն. և զայս առնէսյն յաջորդօքն նշանակէ. և մի՛ դիր. « Եղիցի, ասէ,

1 Յն. Ընչեսցէ։

յաւուր յայնմիկ՝ ընչեսցէ Տէր ՚ի Ձանջիւն»։ Ձանջիւն ասա՝ զԵգիպտացիան կոչէ, վասն լայրութեանն և լըբութեանն, զի ստէպ հալածէին, և նոքա դարձեալ ստէպ դային, և ոչ սակաւ ժամանակս տային ոչն առնուլ, այլ հանապազ ձանձրացուցանէին. որպէս և Ձանձք՝ որ հալածէին ՚ի վիրաց, և դարձեալ ստէպ անդրէն դառնայէին։ Եւ զնոսա, ասէ, ածցէ Աստուած. և ոչ ասէ՝ թէ ածցէ, այլ նոցա ընչեսցէ. զի յայտ առցէ՝ թէ այնպէս դիւրաւ է Աստուծոյ զօրութեանն, զի միայն ակնարկէ, և վաղվաղակի ամենայն ինչ կատարէ զկամս նորա։ Եւ նմանագոյն զսկիզբն սպառնալեացն ՚ի նոցանէ առնէ, զօրոց և արդեամբք իսկ զփորձն գիտէին. և մեղուացն ասէ՝ որ էին յերկրին Ասորեստանեայց։ Իսկ եբրայեցին և ասորի՝ ոչ մեղուս ասեն, այլ ձիաստաց, զի ոչինչ այնչափ գիտէին զփորձ նոցա, օրինակաւ ձիաստացին արկանէ նոցա ահ, զի զյաձախութիւնն ցուցցէ զխայթողութեանն, զոխակալութիւն, զդաժանութիւն հարուածոցն, զերագութիւն զօրացն, ապա ասէ և զբազմութիւնն, և ոչ ասէ՝ թէ բանակեսցին, այլ թէ հանգիցեն. զի ոչ եթէ իբրև ՚ի թշնամեաց երկիր երթայցեն ՚ի պատերազմ, այլ իբրև յիւրեանց երկրի փերեւեւիցին համարձակ, զի ոչ աշխատ լինիցին և ոչ ջանայցեն ինչ, այլ միայն յայտնեսցին և ցուցանիցեն զյաղթութիւնն, և պատրաստ գտեալ առնուցուն զառն. վասն այսորիկ ասիցէ՝ թէ հանգիցեն, որ յաղթութեան և դիւրին առի նշանակ է. որք և զկատորուածսն և՛ս յաձախիցեն. և ոչ ՚ի դաշտս միայն հանդչիցին, այլ բազմութեան զօրացն՝ որում ոչ հանդարտիցի երկիրն՝ և ձորքն ընուցուն և ծերպք վիմաց և այրք լերինք և բարձունք և ամենայն առհասարակ հինաւուրց ծածկիցին։ Զի թէպետ և սաստիկք էին և ոչ ժիրք և քաջք, սակայն բազմութիւն բաւական էր հարկանել. իսկ յորժամ ժիրքն և՛ս իցեն և բազումք, և որ քան զամենայն դաժանագոյն է, զի Աստուծոյ բարկութիւնն եկեալ հասեալ էին ՚ի վերայ, զինչ ինչ այնուհետեւ կայր ակն յուսոյ փրկութեան։ Իսկ ՚ի ծերպսն և ՚ի փայտս հանդչել՝ զբազմութիւնն յայտ առնէ. և ոչ եթէ մարդիկն ՚ի ծերպս և ՚ի ծառս հանդչէին։

«Յաւուր յայնմիկ գերծցէ Տէր ածելեաւն մեծաւ՝ որ արքեաւն իցէ»։ Իբրև աձեցոյց Տէր զահ զօրացն, ձգէ զարձեալ զբանն և հանէ յերկինս, և յայտ առնէ՝ եթէ ոչ այլազգիք և ոչ Եգիպտացիք և ոչ Ասորիք, այլ Աստուած է՝ որ մարտնչի ընդ Հրէայս։ Իսկ ածելի ասա՝ զանհնարին բարկութիւնն կոչէ, որում ոչն ոք կարէր հանդարտել կալ առաջի, որ դիւրաւն և վաղվաղակի ծախէր. որպէս մազ գլխոյ ոչ կարէ կալ առաջի սրբչի, այլ վաղվաղակի գերծու և անկանի, նոյնպէս և ոչ Հրէիցն բարութիւնքն կարէին առաջի կալ Աստուծոյ բարկութեանն։ Ածելի արքեցեալ՝ զսաստկացեալ, զլցեալ, զկատարեալ զԱստուծոյ զբարկութիւնն կոչէ։

«Յայնկոյս գետոյ թագաւորին Ասորեստանեայց»։ Ասրածանի [1] գետոյ, զի յայնկոյս Ասրածանւոյ են Ասորեստանեայք և Պարսիկք, Հրէաստանի և Պաղեստինացւոց աշխարհին։ Ձամենայն, ասէ, միանգամայն աւերեսցէ, գլխովն և մազովն և մորուքն և ոտիքն. զընաւ իսկ զերկիրն նմանեցուցանել զմարմնոյ նշանակէ. որպէս և իսկզբանն ասէ, թէ Ամենայն գլուխ ՚ի ցաւս, և ամենայն սիրտ ՚ի տրտմութիւն [2]. և ոչ զմիոջէ մարմնոյ ասէ, այլ զամենայն աշխարհն ակնարկէ, նոյնպէս և աստ. քանզի զանհնարին պատիժն էր կրելոց ամենայն երկիրն առհասարակ, ածէ յաւուրս զածելին և զմարմինն. զի որպէս ածելի հատու է, նոյնպէս և Աստուծոյ բարկութիւնն. զի մերկ և աւերակ ձեսցէ ամենայն երկիրն։ Եւ որ յետոյ բանքն ասի՝ թուի անտեղեկաց եթէ բարեաց լինչ աւետիք իցեն, որ և նոքին իսկ աւերի նշանակ են։

«Եւ եղիցի, ասէ, յաւուր յայնմիկ մնասցէ մարդ երինջ մի յարջառոց և մաքիս երկուս. և եղիցի ՚ի բազմութենէ կաթինն՝ ուտել իւղ, զի իւղ և մեղր

1 Յն. Ընդհանուր անուամբ՝ Եփրատ գետոյ։
2 Յօր. Սրտմտութիւն. ուղղեցաւ ըստ Յն։

կերկեն ամենայն՝ որ մնացեալ էին յերկրին »։ Եւ այս բազում աւերածի նշանակ է. զի որ ցորեանն և գարին բերէր երկիրն, յորժամ աւեր մնայէ ՚ի մարդկանէ՝ խոտալից Ճարակաշատ լինի անասնոց. և այնպէս խոտալից, զի երկու ոչխարք և մի երինջ՝ բաւական լինէին տալ կաթն առատութեամբ՝ ստացողին, որպէս զի ընդարձակութիւն անասնոց Ճարակաց՝ լինի նուազութեան մարդկանն նշանակ։ Եւ մեղրն զնոյն յայտ առնէ, զի ուր մարդիկ չէին՝ անդ բնակէն մեղուք, զի յայնժամ շատ գտանեն ծաղիկս՝ յորժամ ոչ ուստեք լինէին։ Եւ զի ուսանիցիս՝ եթէ ըզսաստկացեալ զաւերածն նշանակէ, մի՛ դիր յաջորդացս։

« Եւ եղիցի, ասէ, յաւուրսյայնմիկ՝ զի ուր էին հազար որթ, հազար կշռոյ գինւոյ. խոպանասցի և փուշ գարձցի. կապարձեալք լինաձիգք լինագիրկք մտցեն անդր. զի խոպանացեալ և փշաբեր լինի ամենայն երկիր »։ Բազում և այս իմն նուազութեան նշանակ է, յորժամ ոչ միայն լերինք և բարձունք, այլ և շէն երկիր, որ զբազում գարմանս ընդունէր, լինի փշաբեր. նաև զգինս որթոյն ոչ վայրապար ինչ գնէ, այլ զի և զերկրին զառոգութիւնն ցուցցէ և զմշակայն բազում գարմանս։ Սակայն և որ այնպէս, ասէ, պտղաբեր էր և ՚ի ձեռաց հողագործաց այնպիսի գարմանաք գարմանէր՝ յայնչափ աւերուած հասցէ՝ զի փուշ փոխանակ որթոյն բերիցէ։ Ախտիսի ինչ ահ արկանէ բնակչացն, եթէ այնպէս ինչ լինելոց է երկիրն, զի ոչ ոք մերկ և անզէն իշխեսցէ ՚ի ներքս մտանել. և այսու զաւերն յայտ առնէ և զգազանացն հանդիսանալ։

Եւ յորժամ եհար զմիտս ահագին պատգամաւքն և խուճապեցոյց երկիւղիւն, ասպ դառնայ և զհեշտանայ կանոն ևս խաւնէ, և ՚ի լաւ անդր դառնալ, զի յետ երկոցունց [1] կողմանց ուսանիցին զԱստուծոյ զօրութիւնն։ Ապ՚ի տրտմականն յայմ, և զհեշտականն հարևանցի ինն պատմէ. և ընդ՚ր արդեւք. այլ զի սաստիկ դեղոյ էին պէտք մանաւանդ ՚ի ժամանակին, վասն որոյ զայն իսկ յորդէ. և զի փոքր մի ոգի առ

1 Յն. Զի յերկոցունց։

նուցուն և այնու յօժարիցին յառաքինութիւնս՝ խառնէ և զհեշտականն։

« Ամենայն, ասէ, լեառն արօրադիր՝ ակօսաբեկ լիցի »։ Զի որպէս ՚ի բարկութեանն Աստուծոյ և շէն երկիրն յաւեր դառնայր, նոյնպէս և ՚ի հաշտութեանն՝ խիտն և առապարն՝ զպարարտ երկիր ՚ի գործ անկանիցի [1]։ Եւ յորժամ այս ամենայն լինիցի, այնուհետև խաղաղութիւն իցէ և յապահով ժամանակ, և մի՛ ինչ երկնչել և սրտապաղ լինել իբրև զառաջինն։

« Եւ մի՛ հասցէ անդր երկիւղ. զի եղիցի ՚ի խոպանէն և ՚ի փշաբեր տեղւոջէ՝ արօտ գառին և կոխան եղիցի »։ Եւ այսու ևս զշինութիւնն նշանակէ՝ որպէս և զառաջինն. քանզի յառաջ երթեալ՝ ասէ. Երանի՛ որ սերմանիցէն ընդ ամենայն ջրով՝ ուր էզն և էշ կոխիցեն։ Զի զոր օրինակ յորժամ զաւերածոյն կամի պատմել, զհամբարուս և զյուշկապարիկս՝ ՚ի մէջ բերէ, նոյնպէս և յորժամ զխաղաղութիւնն և զշինութիւնն նշանակէ՝ զձեռնասուն և զընտանի անասունս և զիշխս և զգործ երկրի։

ԳԼՈՒԽ Ը

« Եւ ասէ Տէր ցիս. Ա՛ռ դու քեզ տոմս մի քարտէս նոր մեծ, և գրեա դու ՚ի նմա գրչաւ մարդոյ, արագ արագ զաւար հարկանել, վաղվաղակի զապուռ ժողովել. զի ահաւասիկ հասեալ է։ Եւ վկայս կացուցեալ է արս հաւատարիմս, զՈւրիա քահանայ և Զաքարիա որդի Բարեքայ։ Եւ մերձեցայ ես առ կինն իմ մարգարէ, և յղացաւ և ծնաւ որդի. և ասէ ցիս Տէր. Կոչեա զանուն նորա՝ երագ երագ կապտեսջիր. քանզի մինչչև ճանաչեալ իցէ մանկանն զանուն հօր կամ զմօր, առցէ զզօրութիւն Դամասկոսի և զաւար Սամարեայ, առաջի թագաւորին Ասորեստանեայց »։ Թուի եթէ բարժանեալ իմն իցէն ըստ բանիս ըստ այսմիկ

1 Ասպէս յօրինակին։

երկոքին իսկ հրամանքս այսոքիկ, և ոչինչ հաղորդու-
թիւն ունիցին առ միմեանս. իսկ եթէ ոք հաւաս-
տեաւ քննեսցէ զմտացն զօրութիւն, բազում հաւա-
նութիւն գտանիցէ ի միջի և միաբանութիւն: Եւ արդ,
հարկ է ասել՝ եթէ վասն էր մարգարէութեանն նշա-
նակ խոնարհեցաւ ի մարդկան վարս. քանզի յամել
և յապաղել սովոր է Աստուած առ ածել պատիժս
մեղաւորաց, որպէս և փոյթ և երագ ի բարերարու-
թիւն այնոցիկ՝ ոլք զաղօթիւնն կատարիցեն: Եւ
քանզի այս գծուլացեալցն պարարէ զմտութիւն, զի
ոչ անգէն վաղվաղակի գան հասանեն պատիժք յան-
ցաւորացն, և արդ զի և զերկայնմտութիւնն իւր ցու-
ցէ Աստուած, և զի մի յերկայնմտութեանն յաղագս՝
նոքա ծուլանայցեն ինչ, կազմ դեղս մարգարէու-
թեամբն. ոչ զփորձ ցուցանելով զտանջանաց, այլ կա-
նուխ զիտութեամբ՝ խրատէ զանցաւորս. զի թէ
յորժամ լսիցեն զսպառնալիսն և աշխուժանայցեն, մեր-
ժեսցեն զփորձ տանջանացն. ապա եթէ ի նմին հաս-
տատեալ կայցեն անհանձարութեամբ, ապա և զպա-
տիժն ածեալ հասուցանիցէ ի վերայ:

Ձայս իմացեալ սատանայի, և եթէ զինչ չահ կայն-
մանէ իցեն, դրդէր զսուտ մարգարէսն սպառնալ մար-
գարէից, որք զսուրն և զսոճն և զառհասարակ եղ-
ծական հարուածոն և զչէն և զպատերազմ յառա-
ջագոյն իմացեալ՝ գուշակէին. նոքա զչեշտականն և
զծուլացուցիչսն քարոզէին: Զի որպէս Աստուած ա-
հագին բանիւքն զփորձ պատժոյն կամէր կարձել,
նոյնպէս և սատանայ՝ հեշտականացն աւետեաք լուծա-
նել և ածէր ի պատժոյն հանդէս: Եւ քանզի յետ
այսր ամենայնի սուտ մարգարէիցն հաւատային և լա-
ւութեանցն միտ ոչ դնէին, այլ ի նոյն մեղս կային և
անձամբ յանձինս ձգէին զպատիժս, ուստի իսկ և մար-
գարէից ճշմարտութիւնն երևէր և սուտ մարգարէ-
իցն ստութիւնն յանդիմանէր, այլ իմն հնարս հնարի
սատանայ՝ վասն կորստեան կորուսելոցն: Քանզի հա-
ւանեցոյց զնոսա՝ զինքնակամն պատրեալս ի խաբե-
ութիւն, թէ ամենայն անցք ի դիւացն բարկութենէ
անցանեն ընդ նոսա, քանզի արհամարհէին և անար-
գէին զնոսա: Այլ զի զայսպիսի պատիրս բառնայցէ

ի միջոյ՝ յառաջագոյն քան զբազում ժամանակս գու-
շակէ զբարիսն՝ որ հասանելոց էին ի վերայ նոցա. զի
մի իշխեսցեն որք խաբէիցն զնոսա՝ դիւաց բարկու-
թեանն համարել զպատիժսն և ոչ Աստուծոյ: Եւ զի
ոչ կարծեօք ինչ ասեմ, լուր սմին եսայեայ՝ որ ասէ,
եթէ Ես ինձէն գիտեմ զի խիստ ես դու, և ջիլք եր-
կաթիք պարանոց քո. վասն այնորիկ իսկզբանէ խօ-
սեցայ ընդ քեզ, զի մի՛ ասիցես՝ եթէ կռւռքն իմ արա-
րին զայս և դրօշեալքն ինձ կազմեցին զայս, նա և ոչ
գիտէիր իսկ և ոչ լսելի երբեք եղև քեզ: Եւ արդ,
որպէս վերագոյնն ասացի և ի վկայութենէս յայտմա-
նէ է իմանալ, զի չիք ասել նոցա՝ եթէ այլ ուստեք եղեն
իրքն. քանզի բաւական է մարգարէութիւնս՝ բառնալ
ի միջոյ զխաբէութիւնն, որ յառաջ քան զբազում ժա-
մանակս գուշակէր, վասն իրացն՝ որ լինելոցն էին: Այլ
և այլ իմն պատշաճ էր ասել ապախտաւորութեանն
նոցա, թէ յառաջագոյն չասացեք ինչ այդպիսի, և ոչ
լուաք ինչ ի ձէնջ յայնժամ, արդ իմն յօդէք, արդ
իմն կղկղէք, յորժամ իրքս եկիցն հասին ի վերայ.
քանզի ոչ գիտէիք զինչ անցք անցանելոց իցեն. և
ուստի՞ յայտ իցէ՝ եթէ յառաջագոյն ասիցէք: Եւ
արդ տէս, զիարդ կազմէ յառաջագոյն զանվրէպ յան-
դիմանութիւնն, և կարկէ զբերանս լրբախօսս. զի ոչ
միայն ասել տայ, այլ և ի քարտին միանգամայն գրել:
և ոչ վայրապար գրել, զի մի՛ ասիցեն եթէ յետոյ ստեղ-
ծին ի մտաց, այլ և վկայս գրելոցն կոչէ արս հաւա-
տարիմս, զի և ի պատուոյն և ի վարուց պատուական
արանցն՝ առնիցէ զդիւրն հաստատուն. « Կացուսջես
ինձ վկայս, ասէ, արս հաւատարիմս, զՈւրիա քահանայ
և Զաքարիա որդի Բարեքեայ». զի յորժամ վճիռ ի-
րացն լինիցի, և ասիցեն՝ եթէ մեր երբեք զայդ չիք
լուեալ բերիցեն զդիւրն ի մէջ և ածիցեն զվկայսն և
ըմբերանիցեն զլրբութիւն նոցա:

Վասն այնորիկ ասէ. « Այո՛ դու քեզ տուն մի նոր
մեծ». զի մի՛ հնացեալ՝ վաղվաղակի կորնչիցի, այլ
կայցէ միայցէ պահեալ ի բազում ժամանակս յամբաս-
տանութիւն նոցա՝ յորժամ ժխտիցեն: « Եւ գրեա ի
նմա գրչաւ մարդոյ », այսինքն՝ եղեգամբ, որ լինելոցն
իցէ առ յատպա պատերազմին, յաղթութիւն հինաւան-

դին, յաւարի բաժանել, յասպատակէ յարիշտակել. զայս ամենայն, ասէ, գրեաջիր. « Արագ արագ զաւար հարկանել, վաղվաղակի զապուռ ժողովել. զի ահաւասիկ հասեալ է »: Երկոքեան բանքն զմի ինչ յայտ առնեն, զի բազմութիւն մեղացն՝ զվրէժխնդրութիւնն կոչէ, և պատիժքն եկեալ հասեալ կան առ դուրս, և նա յապաղելով՝ մարգարէութեամբն կամի առնել զնոսա պիտանիս և անցուցանել զպատիժն. զի դիւրին է նմա ակնարկել և զամենայն՝ի գլուխ տանել: Եւ քանզի հինի ձառք էին՝ որ հանդերձեալ էին ասպատակել, մի՛ ինչ կարծիցէք, ասէ, եթէ ձանապարհացն երկայնութիւն կամ զօրացն բազմութիւնն առնիցէ զաղթութիւնն, որ ըստ մարդկան լինի այնպիսի ինչ. այլ Աստուածոյ, ասէ, և հեռին՝ մօտ է, և այսպէս դիւրին՝ որպէս զի և՛ի միում ժամու՛ի ծագայ երկրէ ածել հասուցանել զբազումն վաղվաղակի:

« Եւ վկայս կացուսցես ինձ արս հաւատարիմս, զՈւրիա քահանայ և զԶաքարիա որդի Բարեքեայ »: Զի Թէպետ և զդիրն չառնիցէ վաւեր, վկայքն՝ որ կենդանի լիցեն և զժամանակն գիտիցեն՝ առնիցեն յամօթ զանառմօթ ան: Եւ՛ի հաստատութիւն՝ յարէ զյաջորդն. « Մերձեցայ [1], ասէ, առ կինն իմ մարգարէ ». զի կինն մարգարէի՝ մարգարէ կոչէր յայնժամ, և Թերևս և հոգևոր ինչ ընորհայ արժանի եղեալէր կինն. քանզի ոչ յարս ևեթ հանգչէին ընորհք, զի ոչ եթէ որպէս ըստ աշխարհիս իրաց բաժանեալ են ազգքն՛ի միմեանց, և այլազգք պէտք արանց և այլազգ ինն կանանց, և այլազգք պէտք արանց և այլազգ ինն կանայք, նոյնպէս ինչ՛ի հոգևորսն լիցէ. այլ զոյգ են ձրգութիւնքն, քանզի հասարակաց են պատիկքն. և զայս՛ի հին և՛ի նոր կտակարանս՝ եթէ կամի ոք՝ գտանէ հաւաստեաւ: Եւ արդ՛ի կինն իւր յամուսին առ հրամանն մերձենալ, զի յղասցի և ծնցի որդի, և կոչեսցի անուն նորա նոր, չքնաղ, սքանչելի, որ զդէպս իրացն՝ յանուանն նշանակել ունիցի:

« Կոչեա, ասէ, զանուն նորա արագ արագ կապտեսջիր, և փոյթ ընդ փոյթ զաւար հարկանիջիր »: Զի

1 Յօր. Մերձեաց. Յհ. Մերձեցաւ, ասէ, առ կինն մարգարէ:

Թէպետ և տումն գրեալ՝ չլինիցի վաւերական, սակայն անուն մանկանն՝ որ զդէպս իրացն նշանակէր և՛ի վաղուց հետէ այնու անուամբ կոչէր, և զկարի անառմօթիցն խնուցու զբերանս, եթէ ոչ յետ՛ի գլուխ ելանելոյ իրացն կցկցեայ ինչ մարգարէին, այլ անդուստ՛ի վաղուց յառաջագոյն գիտէր: Նա և մեկնութիւն իսկ անուան մանկանն՝ զժամանակն հաւաստեաւ նշանակէ:

« Զի մինչչև ծանուցեալ իցէ զանուն հօր կամ զմօր, առցէ զզօրութիւն Դամասկոսի և զաւար Սամարեայ, առաջի Թագաւորին Ասորեստանեայց »: Եւ զոր ասէն՝ այսպիսի ինչ է.՛ի ժամանակի տհաս հասակի մանկանն, մինչչև բարբառել իսկ կարիցէ, երևեսցի յաղթութիւնն: Ոչ զի մանուկն կարողիցէ՛ի մարտ պատերազմի պատրաստել և հարկանել զձիաւորս, այլ յայն տիս մանկանն, մինչչև խօսելն կարիցէ՝ մատնեալ լիցի ամենայն ինչ գերեվարացն:

« Եւ յաւել ևս խօսել ընդ իս Տէր՝ և ասէ. վոխանակ զի ոչ ախորժեաց ժողովուրդս այս զջուրն Շիլովհայ՝ որ գնայ խաղաղ, այլ կամեցան զՀռասիմ և զորդին Հռոմելայ՝ Թագաւորել իւրեանց, վասն այսորիկ՝ ահաւասիկ ածցէ Տէր՛ի վերայ ձեր զջուր գետոյն բազում և զորդն՝ զարքայն Ասորեստանի»: Որպէս սովոր իսկ է Աստուած՝ ոչ միայն զպատիժն ասել յառաջագոյն, այլ և զպատճառսն ևս յայտ առնէ, զի այնու ևս խրատեսցէ զլսողսն. որպէս և աստ՝ յորժամ ասացէ զաւարն առնուլ, զկապուտն ժողովել, զհինին գալ հասանել, ապա և զպատճառսն ասէ պատերազմին, զանհնազանդութիւն բնակչաց քաղաքին: Քանզի, ասէ, Թագաւոր հեզ, հանդարտ և զգօն ունին, և կիցս ընկենուն, այլուստ բռնաւոր իշխանի ցանկանան, զի զնուբեանց բարիսն չգիտեն, և զայլոց չարիսն անձանց բաղձան. չոչՁ զբանն յայլասացիկ բարբառն, և զբարս աշխարհին Թագաւորի և զնստութիւն այլազգւոյն պատմէ: « Փոխանակ, ասէ, զի ոչ ախորժեաց ժողովուրդդ այդ զջուրն Շիլովհայ՝ որ գնայ խաղաղ». քանզի աղբիւրն Սելովհայ խաղաղ գնայ և ձայն ինչ ոչ հանէ, զհեզութիւն և զհանդարտութիւն Թագաւորին՝ գնացից խաղաղ ջրոյն Սելովհայ նմանեցուցա-

նէ, և զԹագաւորն իսկ Սեղովամ կոչէ, զի ոչ զոք նէ-
ղեր և ոչ զոք լկկեր, և զարհամարհումն քաղաքին
որում տիրեր՝ ներելով անցուցանէր: Եւ քանզի ոչ
լուծ ծանր ունէին ՚ի վերայ, այլ առ խակուԹեանն
յօտարազգիսն ձեռս տային, փոխանակ, ասէ, զի ոչ
ախորժեցէք զՀեզդ և զՀանդարտդ, այլ զՀռասիմ
դամասկացի և զորդին Հռոմելայ՝ԹագաւորԻսրայելի,
ածից՚ի վերայ ձեր զԱյորեստանեայցն՝ հանդերձ յորդ
զօրօքն. «ՁՂուրն գետոյն զՀզօրն և զյորդն». և ան-
դէն մեկնէ զայլասացիկ անուննն, եԹէ «Զարքայն Ա-
սորեստանեայց»: Տեսանե՞ս, զի ոչ ընդ վայր ինչ ասա-
ցաք վերագոյնն, եԹէ ամենայն ուրեք զայլասացիկն՝
ինքնին մեկնեն գիրք. որպէս և ասա՝ նախ կոչեաց
գետ, և ապա եՀան զգետն՝ յարքայն Ասորեստանի և
յամենայն փառս նորա:

«Եկեսցէ Հասցէ յամենայն ձորս և ՚ի խորս ձեր,
Ճեմեսցի և ՃօՃեսցի ՚ի վերայ պարսպաց ձերոց, և
բարձցէ յերկրէդ Հրէաստանէ զայր՝ որ կարող լիցէ
վերացուցանել զգլուխս իւր և կամ կատարել ինչ ՚ի
վերայ երեսաց երկրի. եկեսցէ բանակեսցի և խՃողես-
ցի, զի ոչ իցէ տեղի բաւական բանակի նորա»: Ցու-
ցանէ եԹէ ոչ մարդկեղէն ինչ զօրուԹիւն է, այլ աս-
տուածասաստ բարկուԹիւն իրքն՝ որ լինելոց էին. զի
ոչ իբրև զսատերազմող ՚ի Ճակատ եկեալ համարի
զնա, այլ իբրև պատրաստ եկեալ յառ և յապուռ և
յափշտակուԹիւն. ոչ ասէ՝ կացցէ և Ճակատեսցի,
այլ ընդացս բազմուԹեամբ զերեսս երկրիդ և դիւ-
րաւ անխափան ժողովեսցէ զամենայն: Այլ և ՚ի բար-
կուԹեանն՝ մարդասիրուԹիւն առնէ. զի ոչ բնաւին,
ասէ, ՚ի հիմանց բրեսցէ զքաղաքն, այլ գերուԹիւն
պատմէ, զի զինացորդս գերւոյն՝ պատժովքն առնիցէ
զգաստագոյնս: «Բարձցէ, ասէ, ՚ի Հրէաստանէ զայր՝
որ կարող իցէ վերացուցանել զգլուխս իւր»: ՁՀզօրացն
ասէ՝ որ զամենայն ինչ այսմ և անդր Հարկանել
կարէին, զոր բազմուԹեամբ զօրացն վարիցեն գերի և
առնիցեն ծառայս վտարանդիս, զի տնանկացն լինիցի
փոքր մի ոգի առնուլ. և ահիւ գերելոցն՝ առնիցէ ըզ-
նոսա սլիտանիս: Վասն այսորիկ ասիցէ, եԹէ որ կա-
րիցէ կատարել ինչ. այսինքն զՀզօրն՝ որ գործ ինչ կա-

րիցէ յուցանել. զի և յառաջ քան զգերուԹիւնն,
միայն երևեալ այլազգւոյն՝ պահեցուցանիցէ. զի ընդ-
ցու զամենայն երկիր հինին ասպատակով:

Վասն որոյ և յարէ ՚ի նոյն, եԹէ «Եղիցի բանակ
նորա ընդ լերինս երկրիդ: Ընդ մեզ Աստուած,
գիտացէք, հեԹանոսք, և պարտեցարուք. լսարուք
մինչև ՚ի ծագս երկրի, և զօրացեալք պարտեցարուք:
Զի ԹեպԷտ և դարձեալ զօրասջիք, դարձեալ ՚ի պար-
տուԹիւն մատնեսջիք: Եւ զոր ինչ խորհուրդ խորհի-
ջիք՝ խափանեսցի Տէր. և զոր ինչ բանս խօսեսջիք՝ և
այն մի կայցեն. զի ընդ մեզ Աստուած է»: Ինձ այս-
պէս Թուի, եԹէ զնգնկիեայ զյաղԹուԹիւնն գուշա-
կէ աստ և զպատճառս յաղԹուԹեանն. զի ԹեպԷտ
և զինք և զօրք բազումք հմուտ պատերազմաց ընդ
նոսա էին, այլ որ քան զամենայն զօրագոյն օգնակա-
նուԹիւնն է՝ ընդ մեզ է, այսինքն՝ Աստուած: Քանզի
եկն օտարազգին՝ որպէս սպառնացաւ յառաջագոյն,
և աւր քաղաքս բազումս և գնաց. և յետ այսր ամե-
նայնի՝ եկն յերկիրն Հրէաստանի, և որում ոչն ակն
կայր՝ այնու Հարաւ: Եւ արդ մարդարէս՝ զայս գուշա-
կէ և զպատճառս յաղԹուԹեանն քարոզէ յառաջա-
գոյն, և յօտարազգիսն ձգէ զբանսն, եԹէ մի՛ ինչ ա-
պաստան լինիցիք յառաջնին յաղԹուԹիւնն, քանզի
յարդի գալ Հասանելդ ձեր ՚ի վերայ, մեծ զօրավիգն
ունիմք զԱստուծոյ օգնականուԹիւնն: «Գիտացէ՛ք,
ասէ, զայս, և մերժեցարուք». և մի՛ իբրև ՚ի վերայ
վատԹարաց յանդգնիցիք: Եւ զյաղԹուԹիւնն յայտ
առնէ. և զի մինչ ՚ի ծագս աշխարհի երԹալոց է
Համբաւ առաքինուԹեանն. «Լուարուք, ասէ, մինչև
՚ի ծագս երկրի». քանզի ոչ զոք էր՝ որ ոչ լսաւ զիրսն՝
որ յայնժամ գործեցան յերուսաղէմ: վասն այնորիկ
ասէր՝ «Լուարուք մինչ ՚ի ծագս երկրի. և հզօրացեալ-
քըդ պարտեցարուք». զի ՚ի մեծ իմն զօրուԹիւն հը-
պարտացեալ էր յայնժամ օտարազգին: Իսկ հզօրս
ասա՝ ոչ միայն զայնոսիկ՝ որ մարմնով հզօրք էին՝ կո-
չեսցէ, այլ և զմեծատունս և զիշխաւորս և զամբար-
տաւանս: «Զի ԹեպԷտ և դարձեալ հպարտասջիք,
դարձեալ ՚ի պարտուԹիւն մատնեսջիք. և զոր ինչ
խորհուրդ խորհեսջիք՝ խափանեսցէ Տէր. և զոր ինչ

բանս խօսեսջիք՝ այն մի կայցեն. զի ընդ մեզ Աստուած է »: Քանզի չար խորհուրդք կային ի մտի, և զքաղաքն կամէին ի հիմանց բրել և զամենեսեան պերլի տանել յիւրեանց աշխարհն: Եւ զխորհուրդս նոցա ի մէջ բերէ մարգարէս, և յայտ առնէ, եթէ բանք միայն են, ոչ արդիւնք լինին, և զի այնպիսի իրք են՝ որ ըստ մարդկան բնութիւն անցանեն: Եւ զի հաւատարիմ առնիցէ զբանն, ի պատիւ այնորիկ ապաւինի՝ որ զամենայնն կարէ ուղղել և կարգել. ստէպ ունի զբանն ի բերան, թէ « Վասն զի ընդ մեզ Աստուած է », որ կարող է զամենայն մեքենայս նոցա խափանել:

Մինչև ցայսմայր գտաք [1] իւրով ձեռամբ գրեալ
Երանելոյն Յոհաննու յուսարէն:

1 Ցօր. Գտաւ, զոր մարթ է ևս ընթեռնուլ գտաս: Ասանօր գտաբրէ և տպագրութիւնն յուշարէն ի հատորսն Մոնֆոքոնի: Հատ. Ջ. 93:

« Այսպէս ասէ Տէր՝ որ զօրութեան ձեռին ընդդէմ դառնան »: Այսինքն Հրեայք անհաւատք, որ ոչ հաւանէին օրինացն: « Ի գնացս ժողովրդեանս այսօրիկ. փարթաւ, մի՛ ինչ խօսիք, զի մի երբեք խօսեացին խստութիւն ինչ կամ հայհոյութիւն կամ ծանրութիւն. զի զամենայն ինչ զոր խօսի ժողովուրդս այս՝ խստութիւն է ». կամ որպէս միւս Թարգման Սիմաքոս ասէ՝ անտարսիս [1]: Այսինքն՝ միթէ բանի՛ք ինչ կուիւ վճարիցի. որպէս օտարազգին ասէր. Միթէ ի խորհուրդս կամ ի բանս շրթանց պատերազմ վճարիցի: Մի՛ բանս ինչ սպառնալեաց առաջի դնիցէք, զի մի՛ համարիցեն՝ եթէ վճարիցեն ինչ. զի ցասմամբ բարբառէ՝ օտարազգեացն է: « Բայց յերկիւղ նոցա մի՛ երկնչիք »: Ոչ յայն սակս արգելում զձեզ սպառնալ նոցա, եթէ՝ երկնչել ինչ պարտ իցէ ձեզ ի նոցանէ, այլ սպառնալիս ինչ մի՛ սպառնայցէք. սակայն և մի՛ երկնչելոյիք ինչ, այլ « Եւ մի՛ խռովեսջիք »:

« ԶՏէր զնոյն սուրբ արասջիք, և նա եղիցի ձեզ յերկիւղ »: Եւ զի՞նչ իցէ, եթէ « ԶՏէր զնոյն սուրբ արասջիք ». այլ զի յոսսացիս ի նա և զնոյն փառաւորեսցես և ի նոյն պանծացեալ պարծիցիս և ի նմանէ երկնչիցիս. զի մի՛ յայլմէ երկնչիցիս՝ զնա պատուել: « Եւ եթէ ի՛նձ լիցիս յոսացեալ՝ եղիցի քեզ ի սրբութիւն. և ոտն քո զքարի ոչ հարկանիցի, և գայթակղութիւն քեզ ոչ պատահիցէ ». զի և ոչ սակաւ ինչ կարիցեն զձեզ տրտմեցուցանել իրքս՝ որ գայցեն ի վերայ:

« Բայց տուընն Յակովբայ յորոգայթ և ի ծործորս դարանակալաց Երուսաղեմի ». վասն հինին՝ որ շուրջ զնովաւ գալոց էին՝ գուշակէ: « Վասն այսորիկ տակաւասցին ի նմա բազումք և խորտակեսցին և մերձեսցին ի կործանումն, և մատնեսցին ի գերութիւն մարդկի ». և այսպիսի ինչ գերեսցին՝ քանզի զարտաքին քաղաքն առին: Մի՛, ասէ, հասարակաց համարիցէք գերկրութիւնն, զի է ինչ աւելի ի քաղաքին, ոչ վասն տաճարին՝ այլ վասն քնակչացն:

1 Այսինքն Ανταρτις, Ապստամբութիւն:

Եւ զի մի՛ հասարակաց ոք համարիցի զկորուստն և զփրկութիւնն, յարէ՛ ի նոյնն. « Յայնմ ժամանակի, ասէ, յայտնեսցին՝ որ հինքիցեն զօրհնան՝ առ՛ի չուսա նել ». այսինքն յայտնի են ապստամբք յօրինացն՝ բը նակիչք արտաքին քաղաքացն. զի որպէս՛ ի հնոցին զարտաքինսն այրեաց և ներքնոցն ինչ ոչ վնասեաց, նոյնպէս և անդ եղև։ « Ապա ասիցես. կացից մնացից Աստուծոյ՝ որ դարձոյց զերեսս իւր՛ ի տանէն Յակովբ այ, և յուսացեալ եղեց՛ ի նա »։ Զինչ խօսիս. նմա՛ կացես մնայցես՝ որ զայլն՛ ի դերութիւն մատնեաց. այո՛, ասէ, նմա. և՛ ի բարիոք իմն նուագէ, զի և նոքա ուսանիցին զհամբերութիւն. ապա թէ ոչ՝ և նոքա զնոյն պատիժս կրեսցեն. զի բանս՝ զհամբերութիւն վերստաց յիշեցուցանէ, որով զգուշանայցեն։ Նմին, ասէ, որ երկարն և ած զպատիժն՛ ի վերայ՝ կացից մնացից համ բերութեամբ։ Զի եթէ յորժամ ընդ հօր կամ ընդ մօր կռուիցիմք, ոչ այլ հայր և մայր խնդրեմք, այլ ընդ նոյնս փութամք հաշտել, որչափ ևս առաւել ընդ Աստուծոյ, յորժամ բարկանայցէ՝ ՛ի նոյն ապաստան լինել՝ որ բարկացաւն, և ոչ յայլ ոք որ չկոյէ բարկա ցեալ. զի յորժամ բարկանայցէ՝ յայնժամ հանդար տագոյն գտանի առ քեզ. զի լաւ է գան բարեկամաց, քան զքծիլնս թշնամեաց. որչափ ևս առաւել Աստու ծոյ խրատն. քանզի լաւ են հարուածք բարեկամաց, քան զկամակաւ համբոյրս թշնամեաց։ Լուր և Դաւ թի՝ զինչ ասէրն, եթէ՝ Դարձո զտապանակդ Տեառն՛ ի տեղի իւր. զի թէ գտից չնորհս առաջի Տեառն և դարձուսցէ զնս այսրէն և տեսից զվայելչութիւն դո րա. ապա թէ ոչ կամեսցի զնս, ահաւասիկ կամ ես, արասցէ ինձ զինչ հաճոյ իցէ առաջի նորա։ Մի՛ օրէնս դիր ինչ լինիցիմք նմա և մի՛ իրաւունս ինչ, ասէ, պա հանջեսցեմք զնրաց՝ որ գայցեն՛ ի վերայ մեր. այլ մի ինչ միայն, զոր յորժամ խրատիցիմք՝ գոհութեամբ ընդունիցիմք զնրատն։

« Ահաւասիկ, ասէ, ես և մանկունք իմ՝ զոր ետ ինձ Աստուած » և ոչ բնութիւն. զի եթէ նա ետ՝ և նոյն պահեսցէ զնոսա. և ոչ միայն ես, այլ հանդերձ մանկամբքն՝ ահաւասիկ ես. որպէս և Դաւիթն ասէր, եթէ Ահաւասիկ արասցէ ինձ զինչ հաճոյ թուեսցի

առաջի նորա։ Նմա նմանող լինիցէ ծառայն տեառնն, որ մատնեաց զանձինն և ասէր, եթէ ահաւասիկ կամ։ միթէ իմ ինչ իցէ. այլ այս է խնայելն՛ ի նոսա՝ զոր ետ ինձ. և ես ահաւասիկ զանձն և զորս ետ ինձ՝ նոքին մատուցանեմ։ Եւ մեք նոյնպէս ասացուք՛ ի վիշտս, որպէս և Յոբն ասաց, եթէ Տէր ետ և Տէր առ։ եթէ պատիժք գայցեն՛ ի վերայ և եթէ զինչ և իցեն իրք, իրրև՛ ի բաւական իմն առ՛ ի ցուցանել զՎնասզանդու թիւնն՝ զահաւասիկն առաջի դնէ. « Ահաւասիկ ես և մանկունքս իմ՝ զոր ետ ինձ Աստուած »։

« Եւ իսկ և իսկ եթէ եղիցին նշանք և արուեստք՛ ի վերայ տանն Իսրայելի՛ ի Տեառնէ զօրութեանց, որ բնակեալն է՛ ի լերինն Սիովնի »։ « Ի Տեառնէ զօրու թեանց »՝ բարւոք իմն ասացեալ է. իսկ եթէ՝ « Որ բը նակեալն է՛ ի լերին Սիովնի », վասն էր արդեօք. այլ զի ծանուսցէ զերսն, և զնշանակ օգնականութեանն յայտ արասցէ։ « Ահաւասիկ ես և մանկունքս. և ե՛ զիցին նշանք և արուեստք »։ Տեսանե՞ս, զինչպիսի պը տուղ համբերութեանն է։ « Եւ եղիցին, ասէ, նշանք և արուեստք ». ոչ միայն զփրկութիւնն, այլ զփառա ւորութիւնն յայտ առնէ. զոր օրինակ այր տէր՝ տես ցէ զծառայ՝ զի յանձն առնուցու զգան և զպատիժ, զինքանիցի՛ ի ցասմանէ, սոյնպէս և Աստուած։ Զի Տէր ինքնին զօրութեանց՝ ինքեալ բնակեալ է՛ ի լերին Սիովնի, և չօգնելոյն՝ քո չարութիւնդ է պատճառք. զի եթէ ոչ կամէր օգնել՝ և ոչ բնակեր՛ ի լերինդ։ Զի մարգարէքն ոչ միայն յառաջագոյն գուշակեն, այլ և յայտնեն զվճիռ ասացելոցն, թէ որպիսի՛ ոք ասիցէ. և յայտնեն զվճիռ ասացելոցն, թէ որպիսի՛ ոք ասիցէ. և ոչ բռնադատէ Աստուած, այլ կամի՝ զի իւրեանց յօժարութեամբ դարձուցանեն զբարկութիւնն։

« Եւ եթէ ասիցեն ցձեզ. խնդրեցէք դուք զվհուկս և զգետնակոչս և զընդվայրախօսս, զորովայնակոչս, ոչ որպէս ազգք լինէ՝ որ յԱստուածոյ իւրեանց խնդրեա ցեն. զինչ խնդրեսցեն վասն կենդանեաց՛ ի մեռելոց սնոտի »։ Մի՛ միայն յանձանց ևեթ չհաւանիցեք, այլ յորժամ և այլք յօժարեցուցանիցեն՝ մի՛ առնուցուք յանձն՛ ի դիւթս ապաւինել։ Քանզի սովորութիւն իսկ է՝ յորժամ պատերազմինք չարժիցեն և վիշտք ինչ՛ ի վերայ հասանիցեն՝ զՎանդերձեալսն ըղձիք

ձառել.[1] քանզի միշտ աներևոյթ ինչ իրաց ցանկայ դիտակ լինել քննութիւն մարդկան. զի քննող իմն է և ընդվայրախոյզ, և մանաւանդ զիւր վիշտ կամի յառաջագոյն գիտել, զի մի յախուռն անկանիցի ՚ի վիշտս: Եւ արդ, լուր, զինչ ասէն. յառաջագոյն, ասէ, դուշաւ կեցի ձեզ, եթէ եղիցին նշանք և արուեստք, զի մի կարօտանայցէք ինչ այլոց ըղձական կարեաց, թէպէտ և նոքա ՚ի բանս ինչ արկանիցեն և պատրիցեն. ապա թէ այլոց խրատուցն անսայցէք՝ չառնիք արժանի նեբելոյ Աստուծոյ և թողութեան, որք անձամբ անձանց ածէք զբարիսն ՚ի վերայ:

Եւ արդ զինչ միսիթարութիւն ՚ի դիւթացն գտանիցես, ա՛վ մարդ, յորժամ պատիժքն եկեալ ՚ի վերայ կայցեն. եթէ վասն ինչից կորստեան ծախիցես ինչս և զդիւթս հարցանիցես, զինչ օգուտ գործիցես՝ եթէ զինչն գտանիցես, զի դու հանդերձ ինչիւքն՝ ՚ի գերութիւն ես վարելոց. քայց զի զդիւոզ կորուսանիցես և ինչ ոչ օգտիցիս: Եւ եթէ զինչ ինչ վհուկն իցէ՝ պարտ է ասել. զի իմն չար է, որ յորովայնէ կանանց խօսի, և կամի նոր իմն իրօքն՝ հաւատացուցանել զմնջորութիւնն. զի ոչ ըստ սովորութեան բնութեանն խօսի, այլ յորովայնէն. և զարմացուցանէ զտգէտս հաւատալ՝ թէ իբրև զձմարիտ ինչ իրս խօսիցի. զի յայնմանէ և գետնակոչաց արուեստն լինիցի հաւատարիմ և ընդվայրախօսացն՝ որք յորովայնէն բարբառիցեն: Իսկ Սկիղաս՝ Չհաւգետան, ասէ, և զձայնատուրս, իսկ Սիմաքոս՝ Չգէտան, ասէ, որ ձրձուիցեն և ձրղիցեն. Թէոդիտոսն՝ Չկանխագէտան ձագացեալս, այսինքն՝ ձագուց նմանեալս: Եւ ինձ այսպէս թուի, թէ այս՝ և զառ՚ի մեռելոյն հարցութիւնս նշանակէ. զի նոր բարբառոմն իմն՝ զարմացուցանիցէ, որպէս և այլ թարգմանքն ցուցին: Քանզի սովորութիւն է դիւացն՝ ձգելոյ զհաւուս ձայնս արձակել. զոր եօթանասունքն [2] ընդվայրախօսութիւն կոչեցին: Չի ամենայն ուստեք և նորաձայն բարբառովքն՝ զմնջորութիւնն հաստատիցեն. զի թէպէտ և այս դիւի հնարք են,

1 Յօր. Օաաւ գրչաւ՝ ձանալէլ:
2 Յօր. Ռաբանասունդն:

կարծեցուցանել՝ եթէ զմեռելոց ոգիսն կոչել կարիցէ, զի զղատաստանաց ձառսն գողացեալ. այլ մեք այսպէս ասեմք՝ եթէ յորժամ ելանիցէ շունչ ՚ի մարմնոց՝ յըշտեմարանս ուրեմն երթայ գագարէ, ուստի չէ մարթ նմա ելանել: Իսկ դևն հակառակի ցուցանել՝ եթէ ոչ միայն առ ոսկերսն բնակեալ է, այլ և երթեալ անդր և ընդ վայր շրջի. և ոչ ընդ տերութեամբ ինչ է և ոչ ընդ աստուածեղէն լոնամովք, և ոչ պատիժս ինչ կրելոց է՝ վասն յոռութեան ինչ զոր գործեաց. և բազմաց կարծեցոյց՝ եթէ յետ վախճանելոյն՝ ընդ վայր իմն ոգիքն թարթափիցին: Եւ այս մանկըտոյ կամ պառաւանց առասպելք իցեն, զի մի՛ յորժամ յայսպիսի ինչ դիւթութիւնս յօժարեցուցանիցեն՝ յանձն առնուցուք: Քանզի վհուկին՝ երբեմն հանիմն Շաւուղի՝ Աստուծոյ թոյլ տալով. զի ցուցցէ նմա յարութիւն, որ չէր յարութիւն. զի գոնեա այնու հաւատայցէ՝ թէ և կենդանեաց և մեռելոց՝ Աստուած է տէր. քանզի և որ երևեցաւն իսկ նմա, թէպէտ և չէր Սամուէլ, ոչ իշխեաց զնա յԱստուծոյ խոտորեցուցանել:

« Ոչ ազգ ինչ՝ որ յԱստուծոյ իւրեանց խնդրեսցեն ». զի որ զայսպիսի իրս կամ ասիցեն կամ գործիցեն՝ հեռի են յԱստուծոյ. որպէս և Սաւուղն կըբեաց զսպատիժսն. յԱստուծոյ հեռացաւ և զվհուկն եհարց և ոչ ինչ ոչ օգտեցաւ, այլ և ընդ մեծաւեծ պատժովք անկաւ, զի յառաջ քան զժամանակն եհաս չարաչար վախճանի:

Տես, զիարդ հեգնէն. « Զինչ խնդրեսցեն, ասէ, վասն կենդանեաց՝ ՚ի մեռելոց անտի »: կամ զդևսն կոչէ մեռեալս կամ զմեռեալսն. և այս իսկ շատ բաւական է ՚ի ցուցանել զտգութիւնն. զի եթէ կենդանիքն չգիտեն ինչ, արդեաւ ևս առաւել մեռեալքն և թաղեալքն, որք և զայս ևս չգիտեն՝ զոր ինչ մեք գիտեմք:

« Չի զօրէնսն յօգնականութիւն տուեալ է. զի ասիցեն եթէ ոչ իբրև զբանս զայս, վասն որոյ ոչ է տալ կաշառս »: Եւ ոչ ասէ՝ եթէ զբանս զայս, այլ՝ եթէ իբրև զբանս զայս. քանզի բազում անգամ հրաժարէ որք ՚ի դիւթութեանն կերպարանաց, այլ յայլ ինչ

մելորութիւն յօժարէ. և արդ միանգամայն իսկ վճիռ տան օրէնքն, թէ ամենևին ինչ մի պատճառս պատճառիցիք. զի յորմէ իմեքն Աստուած արդելու՝ հաւանել պարտ է. մի լինել դատաւոր իրաց ինչ՝ զոր արգելուցու: Բարւոք ասաց, եթէ « Զօրէնսն յօգնաւ կանուխ տուեալ է »: Դրդեն խորհուրդք, պատրեն մարդիկ. բազում ինչ է՝ որ խախտե զմիտս, վհշտք, նեղութիւնք ստիպեն զայս ամենայն. բաւական են օրէնքն ոչ միայն արգելուլ, այլ և առանց թողութեան յայտ առնել զայսպիսի չարիս: Մինթէ այնպիսի մի մեղք իցեն՝ որ բժշկիցին իւիք. անբժշկական են մեղքս այս և առանց միսիթարութեան յանցանք: Ոչ միայն ասէ՝ թէ մի գործեսցեն, այլ թէ և բնաւ մի ձառեսցեն. իսկ որպէս զի ոչ միայն թէ գործիցեն, այլ եթէ և ձառիցեն՝ մեղք են, անդստին ի բնէ զարմանս կամեցաւ հատանել Աստուած. վասն այնորիկ զկնի մեղացն՝ հրամայեաց պատարագօք բժշկել և զկնի յայտ արար թէ անբժշկական են: Եւ ընդ ի՞նչ արդեւք. այլ զի սոսկալի է և փախչել պարտ է: Եւ այն միայն բաւական է՝ յորժամ լուիցես թէ Աստուծոյ արգելեալ է, և ցածուցանես զքո մտացդ ըղձանկութիւն:

Եւ արդ գուշակէ յառաջագոյն զչարիսն. « Եկեսցէ հասցէ ի վերայ ձեր սուր խստութեան, և եղիցի յորժամ քաղցիցէք՝ տրտմեսջիք, և հայհոյել սկսանիջիք զնիշխանն և զհայրենիսն », այսինքն զկուռսն: Տեսա՞նէ՞ս, վասն կր սուին գայր հասանել. և յառաջագոյն գուշակէ և կամի զչարիսն ցուցանել և զտկարութիւն կռոցն յայտ առնել, եթէ որք զսուին չկարացին շնջոցանել, զնա՛րդ զարտաքին պատերազմունսն խափանիցեն: « Եւ եղիցի յորժամ քաղցիցէք՝ տրտմեսջիք, և հայհոյել սկսանիջիք զնիշխանն և զհայրենիսն». տեսանէ՞ս, յետ սակարութեանն՝ և զամբաստանութիւն կռոցն, զի և զհայհոյութիւնն որ ի նոսա լինելոց էր՝ չկարէին խափանել և ոչ զսուին արգելուլ:

« Եւ հայեսջիք յերկինս ի վեր և յերկիր ի խոնարհ պշնուցուք »: Տեսս, զնա՛րդ զԱստուած հայհոյէին, զի խղձէին ի միտն և ինքնամանէին. և պշնուցուն, ասէ, յերկիր ի խոնարհ. զի ոչ ունիցին համարձակութիւն վասն չարեացն որ գործեցան: « Եւ ահաւասիկ կարօտութիւն և անձկութիւն, խաւար և նեղութիւն, զի ոչ ոք կարիցէ տեսանել». իսկ Սիղոս՝ փոխանակ ասելոյ, զի ոչ ոք կարիցէ տեսանել՝ լուծութիւն ասէ. և այլ թարգմանքն՝ զնաւար տեսանել աչօք բացօք, այս ինքն՝ զի աչք ևս շլացեալ նուաղիցին ի տեսանելոյ: « Եւ մի նուազեսցի նեղութիւն նոցա՝ մինչև ի ժամանակ »: Սկսինքն չարիքս այս մինչև ի ժամանակ մի լինիցին, զի ուսանիցիք զկռոյն վատթարութիւն:

ԳԼՈՒԽ Թ

« Հապա, նախ զայդ ա՛րք վաղվաղակի, երկիր Զաբուղոնի, երկիր Նեփթաղեմի և այլք ևս ծովեզերայքդ, և որ յայնկոյս Յորդանան գետոյ. Գալիլեա հեթանոսաց, կողմանք Հրէաստանի: Ժողովուրդ՝ որ գնայր ի խաւարի՝ լոյս մեծ տեսցէ. որ բնակեալ են յերկրի և յստուերս մահու՝ լոյս ծագեաց ի վերայ նոցա »: Զպատիժն, ասէ, ա՛րք նախ. և այս նախ շուրջ զեռուսաղեմաւ կատարեցաւ՝ սոքին: « Ժողովուրդ՝ որ գընայր ի խաւարի՝ տեսցէ լոյս մեծ ». և զի՞արդ իցէ այս լոյս. « Զմեծ մասն ժողովրդեանդ, ասէ, զոր ինչուցեր դու յուրախութիւն. և ուրախ լինիցին առաջի քո »: Եւ քանզի իբրև փախստականք էին, էին Քրիստոս յաշխարհ նոցա և աճ գնոսա յուրախութիւն. ոչ իբրև զպատժապարտս և ոչ իբրև զփախստականս ամաչեցեալս: Եւ բարւոք ասաց, եթէ « Զմեծ մասն ժողովրդեանդ ». զի և ի նոցանէ բազումք հաւատացին, և որ ընդ նոսա և որ շուրջ ընդ նոքօք հեթանոսք՝ զոլոյ էին յուրախութիւն: Տե՛ս, ուստի՛ նախ սկսանի լոյսն. և զինչ հաղորդութիւն ունէին առ այսոսիկ հեթանոսք. այլ ի գալստեանն Քրիստոսի, ծնաւ ի Բեթղահէմ, և ծագեաց անտի ի հեթանոսս. անդէն իսկզբանն իսկ հալածէին զնա առնեղբեան ի Հրէաստանէ. երթայր հասանէր յԵգիպտոս, զի ծա-

գեսցէ զլոյն ի հեթանոսս. և ոչ եթէ աչօք տեսա-
նեմք զլոյն, այլ սրտին և մտացն աչօք: « Ժողովուրդ՝
որ գնայր ի խաւարի». զվարս նոցա զառաջինս՝ խա-
ւար կոչէ. և զի ի խաւարի գնային՝ ես քեզ ցուցից,
զվէրս նոցա և զհարուածս: « Որք նստէին յերկրի և
ի ստուերս մահու». երկիր և ստուերս մահու՝ զմոլո-
րութիւն կռապաշտութեանն կոչէ, որով մոլորեալ և
յերկիր կործանեալ էին: «Տեսցէ լոյս մեծ». ոչ միայն
զայսպիսի ինչ իրս՝ որ լուսաւոր ցուցան մեզ, այլ մա-
նաւանդ և՛ առաւել զերկնաւորականն որ յայտնե-
ցան մեզ, եթէ զինչ մահ իցէ կամ զինչ կեանք կամ
զինչ չար իցէ կամ զինչ բարի. զի մի զքարեղէնսն և
զփայտեղէնս տեսանիցեմք և մի ընդ երկիր պչնու-
ցումք, այլ յիմանալիսն, յանքնինսն, յերկնաւորսն
նայիցիմք: Սրդարև լոյս մեծ և նորանշան է, զոր ա-
ւետարանիչն՝ լոյս Աչմարիտ կոչէ, զի Աչմարիտ իրացն
ի վերայ հասուցանէ. քանզի երևելիքս փուճան յա-
պականութիւն, սահին, անցանեն և ուրեք ոչ առնուն
զտեղի. իսկ այն՝ հաստատուն և անշարժ կայ, զի զմե-
ծամեծսն և զԱչմարիտս ցուցանէ՝ մեծ լոյս և Աչմա-
րիտ: « Զմեծ մասն ժողովրդեանդ՝ զոր իմուցեր դու
յուրախութիւն»: Եւ այս՝ Աստուծոյ միայն սեփական
է, ուրախ լինել ընդ գիւտ փրկելոցս. ուրախութիւն՝
զհաչն կոչէ:

« Եւ ուրախ լինիցին առաջի քո, որպէս ուրախ լի-
նիցին յաւուրս ամառանոյ»: Զի որպէս նոքա ընդ
արմտիս բարեացն ուրախ լինիցին, նոյնպէս և սոքա որ
աշխատութեամբ կամ քրտամբք, այլ զամենայն սպա-
տրաստ գտանիցեն: « Եւ ցնծասցեն իբրև զայնոսիկ՝
որ բաժանիցեն զաւար». զի վիշտք ինչ այնուհետև
մի գայցեն ի վերայ, այլ զի յանվշտականն և՛ եթէ
վայելիցեն:

« Եւ վերացաւ լուծն՝ որ կայր ի վերայ նոցա, և
գաւազանն՝ որ ի վերայ պարանոցի նոցա. զի զգաւա-
զան պահանջողացն խափանեաց, իբրև յաւուր ժա-
մանակին Մադիամու»: Զի զոր օրինակ յայնժամ ոչ
մարդկեղէն զօրութեամբ փլաւ Ճակատն, նոյնպէս և
մարդկեղէն զօրութեամբ փլաւ Ճակատն, նոյնպէս և
ոչ աստ՝ սատանայական պատերազմն. անդ սափորք և
ջահք, իսկ աստ՝ ոչ սափորք և ոչ ջահք, այլ ի մի-

մեանս անկեալ դիւք և ի բաց մերժեցան: Գիտեք
զպատերազմն, ապա եթէ անտեղեակք իցէք՝ ես ձեզ
պատմեցից: « Զամենայն պատմուճանս և զՀանդերձս՝
որ նենգութեամբ ժողովեալ իցէ՝ տուգանօք տուժես-
ցին»: Զայս այսուհետև վասն հանդերձելոցն ակնար-
կէ. այսինքն՝ թէ զամենայն սաստիւ և տակոսիւք հա-
տուսցեն:

« Եւ նոքա կամէին թէ արդէն իսկ հրձիգ լեալ
էին. զի մանուկ ծնաւ մեզ և որդի տուաւ մեզ»: Ուս-
տի՞, ասա՛ ինձ. այլ զի միայն՝ որ ծնաւն՝ եղծ և կորոյս
զնոսա. նա իսկ հաշեաց զնոսա՝ զի մեզ ծնաւ: Թէ-
պէտ և Պաւղոս ասէ՝ թէ վասն նոցա ծնաւ, այլ քան-
զի ոչ կամեցան՝ մեզ ծագեաց. և մանուկն մեզ և որ-
դին մեզ: Եւ արդ տէս, զիարդ զմարդկեղէն քնու-
թիւնն յաւաջագոյն քարոզէ, և զծնանելն անդուստ
ի վերուստ ուսուցանէ՝ յորմէ արդեւք ծնաւ: Եւ արդ,
ուսիր՝ ով արդեւք նա իցէ, կամ որպիսի՛ ինչ անուն նո-
ցա: « Որոյ իշխանութիւն ի վերայ ուսոց իւրոց է»:
Եւ այսմ չէ մարթ, եթէ ի վերայ այլոց մարդոց կա-
տարեսցի. այսինքն ոչ յայլմէ ումեքէ ունի զիշխանու-
թիւն, այլ յանձնէ և առ յիւրմէ քնութենէն, զի
ինքն իւր բաւական իսկ է:

« Եւ կոչի անուն նորա մեծաց խորհրդոց հրեշ-
տակ»: Եւ արդ, ո՞ւր իցեն երկաբեան կողմանքն, Հրէ-
այք և հերետիկոսք. զի և այս՝ Հոգւոյն Սրբոյ ընորհք
են, զի արժանի արար զմեզ զարմանալ և ոչ քննել.
ոչ զարարիչն՝ արարած, և ոչ զմինն՝ երկուս, և կամ
քնաւ որդի իսկ չկոստուանել, որպէս Հրէայքն ժըպը-
տին: Եւ նշանակ վիրաց նոցա այն է, զի և ոչ հաստա-
տակաց դեղովք կամեցան բժշկել. զի անդ ասէ. Ընդ
մեզ Աստուած, և աստ ասէ. « Մեծաց խորհրդոց
հրեշտակ»: Եւ արդարև մեծաց հայրենի խորհրդոց.
զի զՀօր զանուն այլ ոք ոչ յայտնեաց, բայց որ ի նո-
րին քնութենէնէն է, և առ յանձն լինել կամաց հրեշ-
տակ. ոչ զի ի հրեշտակ փոխիցի, այլ զի զգործ հրեշ-
տակի՝ իւրով մարդասիրութեամբն Աստուածն Աս-
տուծոյ՝ կատարիցէ, ըստ այնմ՝ եթէ ես ցուցից նմա
զանուն քո: « Մեծաց խորհրդոց հրեշտակ». յայլ
և և երեսս. զի ժառանգակիցս և մարմնակիցս և հա-

զորդս կամեցաւ առնել իւրում Որդւոյն Հայր՝ զՀե-
Թանոսս, տէս, զինչ խորհեցաւն ընդ Որդւոյն և ընդ
Հոգւոյն Սրբոյ. զի զմեր բնութիւնս՝ ի վերոյ քան
զՀրեշտակս և զհրեշտակապետս, և զքրոջքս և զորո-
քէս հանցէ նատուսցէ: « Եւ կոչի անուն նորա հրեշ-
տակ մեծաց խորհրդոյ ». զի զհողն և զմխիրն՝ յեր-
կինս վերացուսցէ. այլ գտանի և ինքն իսկ խորհուրդ
և կամք, զի խորհեցաւ և կամեցաւ և սիրեաց զաշ-
խարհ և եկն և փրկեաց ի չարեաց:

« Եւ սքանչելի խորհրդակից »: Այս քան յեօթա-
նանիցն Թարգմանութիւն ոչ գտանի. բայց յայլոց
Թարգմանացն և յեբրայեցին կայ. և այլքն ևս՝ որ
սոցին յաջորդքն են. ուստի արժան իսկ է զարմանալ
ընդ Ղուկիանոս մարտիւրոս, որ զմեծագործսն բարւոք
ժողովեաց և եդ, զի զհանդիտապատիւ զուգականու-
թիւնն Որդւոյ ընդ Հօր յայտնեսցէ մեզ. և զոր քամ
բասեն զնա իբրև զհերետիկոս: Եւ զի՞արդ ասէ, թէ
Ո՞ եղև նմա խորհրդակից. տեսանե՞ս, զի ոչն ոք ասե-
լով, ոչ ընդ Որդի և ընդ Հօր անջրպետութիւն ինչ է
՝ի միջի, այլ չաստուածոյն անուանել աստուածս: Զար-
մանալի լիցի, ասէ, անուն իմ[1] սքանչելի: Այնուագոյն
ինն և այլուր ասէ, եթէ Զի՞ հանդրեա զանուն իմ, և
նա է սքանչելի. և դարձեալ, թէ Տէր Տէր մեր, սքան-
չելի է անուն քո յամենայն երկրի. և անունն՝ որ զմե-
ծութիւնն շինողց և զտիեզերս լուսաւորեաց և առ
ինքն և առ Հայր մերձեցոյց, զի՞արդ չիցէ զարմանալի,

« Աստուածք հզօր », որ ի միջ այլոցն՝ որ չէին աս-
տուածք՝ անջրպետութիւն իշխանական: Չի՞արդ ասէ
ցէք՝ եթէ ընդ[2] իշխանութեամբ է, զոր մարգարէս
իշխանական կոչէ. զի իշխանականն յայտ է՝ թէ չէ
ընդ իշխանութեամբ ուրուք: « Իշխան խաղաղու-
թեան, Հայր հանդերձեալ աշխարհին »: Եւ արդ, զի
ա՛րդ ոչ գիտիցէ զօրն, զի ահաւասիկ և Հայր ևս կոչի
Որդի: Եւ քանզի յայտ աշխարհի ոչ յայտնեցաւ
անհաւատիցն, և անդ ամենեքեան էն ձանաչելոց
զնա: Բարւոք ասէ՝ թէ « Հայր հանդերձեալ աշխար-

1 Յօր. իմ:
2 Յօր. Պահասի ընդ:

հին ». քանզի և զհանդերձեալսն նա արար, և ոչ
միայն զմծատւորսս ևեթ:

Եւ քանզի նախ կոչեաց զնա Հրեշտակ մեծաց խոր-
հրդոց, ապա համարձակ զամենայն մեծամեծսն ա-
սէ: Եւ զի մի՛ բնաւ անծին իսկ կարծիցես զնա, ասէ.
« Անծից գնաղաղութիւն՝ ի վերոյ իշխանաց նորա, և
առաղնութիւն նմա ». այսինքն՝ յաւուրս մարմնաւո-
րութեան նորա՝ նուաւա առաղն արարից զանգամն նո-
րա՝ զհաւատացեալս ամենայն: « Մեծ է իշխանու-
թիւն նորա, և խաղաղութեան նորա չիք սահման ».
զի անքաւ է խաղաղութիւնն նորա, և չիք ինչ՝ որ զնա
ընդ միջ հատանիցէ. վասն որոյ և ասէ իսկ, եթէ
Չխաղաղութիւնն իմ թողում ես ձեզ:

« Յաթոռն Դաւթի և յարքայութիւնն նորա»: Այն-
դրէն՝ի դլուխ բանիցս երթիցուք, և զոյն բանն՝ որ-
պէս յայլոց Թարգմանացն ասացեալ իցէ՝ երկրորդեա-
ցուք: Եօթանասունքն ասեն. « Զի մանուկ ծնաւ մեզ,
որդի տուաւ մեզ, որոյ իշխանութիւնն է՝ի վերայ ու-
սոց իւրոց. և կոչի անուն նորա մեծաց խորհրդոց հրեշ-
տակ. ածից զնաղաղութիւն՝ի վերայ իշխանաց նորա,
և առաղնութիւն նմա. մեծ է իշխանութիւն նորա և
խաղաղութեան նորա չիք սահման »: Իսկ Ակիլաս ա-
սէ. Զի մանուկ ծնաւ մեզ, որդի տուաւ մեզ, և եղև
չափ՝ի վերայ թիկանց նորա, և կոչեաց զանուն նորա
սքանչելի, խորհրդակից, հզօր, զօրաւոր, հայր և իշ-
խան ևս նոցա, բազում անչափ, և խաղաղութեան չիք
ևս կատարած: Իսկ Սիմաքոս. Պատանի ծնաւ մեզ, և
եղեցի խաղաղութիւն՝ի վերայ ուսոց նորա, և կոչեցի
անուն նորա սքանչելագործութիւն, խորհրդական,
ուժգին, զօրաւոր, հայր յաւիտեանցն, իշխան խաղա-
ղութեան նոցա. բազմացաւխրատն, և խաղաղու-
թեանն քոյ չիք վախձան: Սոյնպէս և Թէոդիտոնին,
փոխանակ ասելոյ՝ թէ կոչի, կոչեաց, ասէ. սքանչելա-
բար խորհի, ուժգին, զօրաւոր, հայր, իշխան խաղա-
ղութեան, բազմացուցանել զփրատ, և խաղաղու-
թեանն չիք վախձան: Սոյնպէս և եբրայեցին. Ուիէ[1],

1 Յօրինակին այսպէս չփոթի եղեալ կայր, զվանկս բառիցն ընդ
միմեանս խառնակելով. այլ բան ուղիղ ընթերցման եբրայական

կլասեմ, բովէ, վեղէ, խովէս, եղգիբ, բովբաբիաղ, սար, սաղովմ, ամարբէ, ամմէսրա, ուա, շաղովմնակէ: Եւ յայտ է՝ թէ ոչ յաւել ինչ և ոչ հատ՝ սուրբ Մարտիրոսն, այլ և յեբրայեցւոյն և յայլոց Թարգմանացն ժողովեաց և միաշար արար և զամենայն յայտ յանդիման եցոյց. և արդ չէ խոտան Ուղկիանն[1], այլ և կարևոր և քան զՊաղեստինացւոց գրեանն և ուղղագոյն: Այլ անդրէն՝ի կարգն երթիցուք:

« Յաթոռն Դաւթի և յարքայութիւնն, և ուղղեսցէ զնա և պաշտպանեսցէ արդարութեամբ և իրաւամբք, յայսմհետէ և յաւիտեանս ժամանակաց. Նախանձ Տեառն զօրութեանց արասցէ զայս ամենայն »: Եւ քանզի միշտ կործանէր և ոչ վասն այլ իրիք, այլ վասն մեղաց, յիրաւի եկն կանգնել միւսանգամ ծննդեամբ աւազանին: « Իրաւամբք և արդարութեամբ ». քանզի արդարութեամբ պաշտպանեաց նմա: « Յայսմհետէ մինչև յաւիտեան »: Եւ զիաւրդ հաստատեցաւ արդեւք թագաւորութիւնն Դաւթայ. այլ զի ընդ ամենայն տեղիս ամենայն տիեզերք՝ երկիր պագանեն այնմ՝ որ՝ի Դաւթայն ծնաւ. և կայ մնայ զաւակ նորա մինչև յաւիտեանս ժամանակաց: « Նախանձ Տեառն զօրութեանց արասցէ». զի և ոչ մարդկեղէն ինչ ուղղութեամբք, ասէ. և ոչ եթէ արժանի ինչ էին այսմ: Եւ այսու ոչ եթէ նախատէ զմեզ, այլ զի զհաստատուն թիւն բարութեանցն յայտ առնիցէ: Խաղաղութիւն և առողջութիւն՝ զոգւոյն ասէ և զմարմնոյն. զի և մարմնոյ ցաւոցն՝ՙի մեղաց եղև սկիզբն. որպէս ցանդամալոյծն ասէր, եթէ Ողջացար, մի ևս մեղանչեցես.

բնագրին պարսի լինել.

וקרא שמו פלא יעץ אל גבור אבי־עד שר־שלום: למרבה המשרה ולשלום אין־קץ..

որ է Ովիկկրա սեմոյ վեղէ, խովէս, էլ, գիբբովր, աբի–ադ, սարսաղովմ: Լմարբէ ամմիսրա ուզեշալեմ էնկէց: Այսինքն է. Եւ կոչեսցի անուն նորա սքանչելի, խորհրդական, Աստուած, հզօր, հայր հանդերձելոյ աշխարհին, իշխան խաղաղութեան: Բազմացէ իշխանութիւն նորա և խաղաղութեան նորա վախճան մի եղիցի:

1 Թուի լինել Ղուկեանն, այսինքն Թարգմանութիւն Սրբոյ Երիցոյն Անտիոքացւոյ Լուկիանոս մարտիրոսի, գրեալ յաւուրս Դիոկղէտիանոսի, յամին երր 300:

և այլուր՝ եթէ Ոչ եղիցի՝ի ձեզ հիւանդութիւն: Զի ոչ եղեն բաւական առաջինն պատիժքն, այլ պարտ էր յաւելուլ և այլ ևս պատիժս: Որպիսի ինչ իցէ զօրաւորն. եղ Աստուած սահման զպատիժս մահուն, եթէ իշխեսցէ ձաշակել մարդն՝ի պտղոյ ծառոյն, և այլ ինչ ոչ յաւել. և քանզի անց ղհրամանաւն, ած անձամբ անձին զցաւոցն պատիժս. զի թէպէտ և մեռանելոյ էր, սակայն՝ի կեանս առանց ցաւոց կէսցէր. և քանզի այն ևս՝ի ծուլութիւն էր անկանելոյ, եդ՝ի վերայ և զցաւոցն պատիժս, զի գէթ այնու խրատիցի և ունիցի՝ի մտի զչիշատակ բարեացն: Եւ այս Աստուածոյ տեսչութիւն է, զի սակաւ ցաւովքն՝՝ի բազում տանջանացն ապրեսցի: Այնպէս և Հրէից զբազում սպառնալիս սպառնայ, ցաւս, հիւանդութիւնս, տըրտմութիւնս, և այլ ևս ինչ բազում՝զշտականներս, զի ցուցցէ՝ եթէ պատձառք ամենայն բարեաց առաքինութիւն է. և այժմ զի գժնդակ վարս ցուցցին, սպառնայաւ գեհենն՝ի պատիժս:

« Մահ առաքեաց Տէր՝ի վերայ Յակոբու, եկն եհաս՝ի վերայ Իսրայելի». և առաքեաց և եկեսցէ. իսկ Թարգմանքն՝ բան, ասէ, առաքեաց. քանզի չէ ինչ այն՝ որ խափանել կարիցէ զայն ինչ՝ զոր Աստուած առաքիցէ: Զի յիւրմն առաքէ, և աղերսանօք լիմն առնէ զպատասխանին: « Եւ ծանիցեն, ասէ, ամենայն ժողովուրդն եփրեմեան, և որ նստին՝ի Սամարիա, զի Թշնամանօք և հպարտութեամբ սրտից խօսեցան »: Տեսանէս, զի ոչ այնպիսի ինչ զԱստուած բարկացուցանէ, որպէս և ամբարտաւանականն միտք և անհանդուրժական հպարտութիւնն և Թշնամանիկ բանք, ողք յանցաւորս՝ որպէս որ՝ի չանցաւորս յուսայցեն:

« Աղիւսք, ասէ, անկան, արդ եկայք վէմս տաշեսցուք »: Հանապազ լսելով, մարդ, եթէ պատերազմունք գալոց են, մեծամեծ չարիք հասանելոց են քաղաքիդ, և տակաւին արհամարհես զբանդ և շինուածոց զգուշութեան հոգաս. ոչ անմտութեան, ոչ անհանձարութիւն, ոչ ամբարտաւանութիւն: Աստուած սպառնայ և դու արհամարհես. զի Թէպէտ և Աստուած չսպառնայր, սակայն իրքն պարտ էին հաւանեցուցանել զքեզ. զի Թէպէտ և այլ ինչ ոչ՝ սակայն

վարքն իւրեանց՝ ոչ նուազագոյն քան զմարդարէս՝ պարտ
էին հաւանեցուցանել նոցա զբանիցն կանխասացու-
թիւնս։ Մինթէ լաւութիւնս ինչ գործէք և յայն սակս
թերահաւատէք՝ թէ չքան պատիժք ի վերայ. յոյժ
անհաւատից են բանք, արհամարհողայ՝ որ զԱստուած
անարգէն։ Զի այնպէս հակառակիչին չհաւատալ
կանխասացիկ պատգամացն, զի և բազմաժամանա-
կեայ և շինուածս խորհելին շինել։ Եւ արդ ունի զբազ-
մաժամանակեայ շինուածս շինես, ուր մարդ. զի դու
ի սակաւ ժամանակի ես վճարելոց յաշխարհէս. այս-
օր կամ վաղիւ մարմնով լուծանիցի, և հաստատուն
շինուածքն որ շինեցեր՝ ունի լինիցի. արջառի ինչ ևս
այսպիսի անմտութիւն։ Ասլ որդւոց և Թուռանց, ասէ,
արարս առնեմ։ Եւ զիաւրդ ոչ լաւ քան զտունս և շի-
նուածս էին այսպիսի օրինք՝ զորս եդ Յոհիադաբ որ-
դի Ռաքաբայ՝ իւրոց որդւոցն, Թէ Մի՛ ի տունս բնա-
կիցէք և մի՛ այգիս տնկիցէք։ Ասլ քեզ Թէ հնար ինչ
էր՝ յայլ ևս չարիս մեծամեծս դրդեիր, յոր և դրդեսդ
իսկ, և թևեռես զնոսա ընդ աշխարհս անցաւորս։

« Եւ շինեցուք մեզ աշտարակս ». և ոչ ասեն որ-
դւոց կամ Թուռանց, այլ մեզ. մարգարէդ, ասէ, առան-
ցեալ է և ոչ գիտէ զինչ խօսի։ Եւ աշտարակ՝ ոչ ի
բնակութիւն ինչ, այլ ի պարծանս և ի ցոյց նշանակի։
Տեսանե՞ս, ունի Թշնամանեին զԱստուած հպարտու-
Թեամբն, սակայն ոչ վասն այսորիկ միայն, ասէ, ա-
ծից պատիժս, այլ և վասն յուդայական ազգին։

« Եւ կործանեսցէ Տէր զբազմութեամբ՝ զյարուցեալսն ի վերայ Սիոնի, և զԹշնամիսն Յու-
դայ՝ խափանեսցէ, զԱսորիս՝ ի ծագացն արևելից
և զՅոյնսն ի մտից արևու »։ Ի բարերարութեանց
պարտ է լինել պիտանիս. տես, ունի Աստուած ա-
հիւ պատժոցն իրատէ զմեզ. նախ վասն Բաբելացւոցն
գուշակեաց, և ապա վասն Ասորւոցն և Յունացն ա-
բեմտեայց։ Ինձ այսպէս Թուի, եթէ զօրավիգն օգնա-
կանութիւն ինչ նշանակիցէ, զի բնաւ ընդ աւետեաց
տիեզերս յայտնի լինիցին փառք նորա, և մանաւանդ
առ Բաբելացիսն, որ յայնժամ նոքա ունէին զաշ-
խարհս բազումս. զի մի՛ անձանց ինչ համարիցին
զյաղթութիւնն, այլ զի իմասցին՝ Թէ Աստուած էտ

հարկանել նոցա զազգս բազումս, և զՅոյնսն ի մտից
արևու։ Եւ ընդէր. « Զի ուտէին զժողովուրդն իմ
Իսրայէլ բերանալիր ամենայն բերանով ». տեսանե՞ս,
զի և յետոյ ի նոցանէ խնդրէ վրէժս։

« Եւ ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ սրտմը-
տութիւնն, այլ և առաւելն բարձրացեալ է ձեռնն»։
Կամ զայն կամի ասել, եթէ այնչափ սպառնալիս լսեան
և չեղեն ինչ պիտանիք, կամ զի ոչ մինչ ցայն վայր
հաստատից զպատիժսն Աստուած, զոր և վասն ժո-
ղովրդեանն յաջորդաւն յայտ առնէ. « Ժողովուրդ
իմ՝ ասէ, ոչ դարձաւ՝ մինչև վիրաւորեցաւ, և զՏէր ոչ
խնդրեցին »։ Տեսանե՞ս, զի ամենայն վասն այնորիկ
Ձաւէր զի մի՛ վիրաւորեսցի, սակայն նա ոչ դարձաւ.
այս ամենայն նշանակ իմն է, որպէս զի ասիցէ ոք՝ Թէ
այս ամենայն եղև և ոչինչ եղեն պիտանիք մինչև վի-
րաւորեցան։

« Եւ ջնջեաց Տէր յԵրուսաղէմ զմեծն և զփոքրն,
զգլուխն և զտտուն՝ յաւուր միում»։ Իսկ այլ Թարգ-
մանքն փոխանակ այնր՝ Թէ զմեծն և զփոքրն, եթէ
Ջայն՝ որ պատակտէրն և Թիւրքր և խափաներ զփըր-
կութիւնն։ Եւ ոչ ասէ՝ Թէ զգլուխն և զոտս, այլ
իբրև զանխօս գազանաց՝ զգլուխն և զտտուննն։ Զի
իբրև օձից լիմն նմանեցաւ ժողովուրդն, վասն այսորիկ
զգլուխն Ջաղջախեաց՝ զարմատ ամենայն չարեաց, և
զտտուննն եհատ, զի և խլըտել մի՛ կարիցէ։ « Ի միում
աւուր »։ Յիրաւի եցոյց՝ եթէ աստուածասաստ են
ցաւքն։

Եւ ապա յայնոսիկ՝ որ զձեռնադրութիւնն ունէին՝
ածէ զբանն. « Ջերիցն և զահնաւուն՝ այս առաջն է».
որք զվրաւունս Թիւրէին՝ վասն զերեսս Թիւրելոյ և
ակնառութեանն։ « Եւ զմարգարէն՝ որ ուսուցանէ
զանօրէնութիւն՝ այս տտուննն է »։ Եւ ընդէր զսուտ
մարգարէն՝ տտուն կոչիցէ, որ գլուխն կարծէր նոցա.
այլ նոքա էին՝ որ զնոսա ի չարիսն գրդռէին, և ոչ տա-
յին Թոյլ գալ յուղղութիւնս։ Եւ աստի ուսանիմք,
եթէ ոչ ոչք գործեն զչարիսն, այլ որք գրդռենն զնոսա
ի մեղս՝ նոքա մեծաց պատժոց արժանի են. զի աղ-
քատն Թերևս զաղքատութիւնն պատճառս առնիցէ,
իսկ դու յո՞ փախչիցիս, որ կարող ես և առանց կարօ-

տուԹեան։ Եւ ապա իրաւունս ցուցանելով առնէ զպատասխանին, եԹէ ոչ պատժոց էն իրքն, այլ բժըշկուԹեան և ուղղուԹեան։

« Եւ եղիցին, ասէ, որ երանիցեն ժողովրդեանս, որպէս զի մնըրիցեն և մնըրեցուցանիցեն. զի կլանիցեն զնոսա, և ապա յայտնիցին »։ Քանզի յայն չէին ինչ յայտ և՛ի վախճանէն յանդիմանեսցին։ Այժմ մնըրեցուցանիցեն, բայց այժմ ամենեքեան իսկ տեղեկանայցեն. վասն որոյ յաւել իսկ, եԹէ մնըրեցուցանիցեն. զի Թէպէտ և այժմ մնըրեցուցանիցեն, սակայն յայնժամ յայտնի լինիցին։

« Վասն այնորիկ՛ի վերայ երիտասարդաց նոցա ոչ լինիցի ուրախ Աստուած »։ Քանզի զինչ օգուտ իցէ՛ի տիոցն և՛ի զօրուԹենէ, յորժամ՝ ոչ ոք յուղղուԹիւնս վարիցէ զՀասակն և զզօրուԹիւնն։ Զոր օրինակ, եԹէ ծառայք ուրուք իցեն մարմնեղէնք, անդամայաղԹք, հարուստք, առողջք, և՛ի չարագործուԹիւնս հատանիցեն, յարբեցուԹիւնս և յորկորտուԹիւն, այսր անդր խուսափիցին, և ոչինչ ոք ուրախ լինիցի՛ի զօրուԹիւնն նոցա. զի Թէպէտ և մարմնոյն յաղԹանդամք իցեն, և՛ի մտացն պակասեալք, ուստի ամենայն չարեացն պատճառք լինին։ Քանզի և ոչ բարին առանձինն՝ բարի իցէ, և ոչ չարն՝ չար, այլ ըստ մտացն՝ որ կամ Թէ զայն յառաջ բերիցէ կամ Թէ զայս. զի Թէ՛ի բարի յօժարիցի իսկզբանէ, լինի երիվար մուղ և վարժ. եԹէ յուսուԹիւնն յոլովիցէ՝ անառակուԹեամբն միտ՛ի չարիսն։

« Եւ որբոյ նոցա և այրեաց մի ողորմեսցի ». զի ոչ՛ի վերայ զգաստացեալք լինիցին պիտանիք[1]։ Մի՛ ինչ պարսաւիցես զխակուԹիւնն և անմարդուԹեան ինչ զնորան կարծիցես. այլ լուր զպատճառսն։ « Զի ամենեքեան, ասէ, անօրինեցան՛ի չարիս, և ամենայն բերան խօսեցաւ զանօրէնուԹիւն »։ Տեսանե՞ս, զի ողորմել՝ չողորմելն է. և զի ոչ այնպէս ինչ՛ի զգաստուԹեանն պիտանացուէ՝ իբրև զաւերելն և զլքանելն և զԹողուլն։ « Եւ՛ի վերայ այսր ամենայնի ոչ դարձաւ սրտմտուԹիւնն նորա, այլ ևս տակաւին բարձրացեալ

1 Ա. յապէս յօրինակին։

է ձեռնն », կամ իրօքն իսկ կամ սպառնալեօքն՝ որ պատշաճ էր Աստուծոյ պատուհասել. եԹէ այնպէս ինչ արարի և այնչափ յառաջագոյն գուշակեցի, « Եւ ոչ դարձաւ սրտմտուԹիւնն ». այսինքն՝ ոչ կարացին զբարկուԹիւն նորա բանքն ասացեալք՝ դարձուցանել։

« Եւ վառեսցի իբրև զՀուր անօրէնուԹիւնն [2], և իբրև զսէզ չորացեալ՝ հրով բորբոքեսցի »։ Տեսանե՞ս, որպիսի ինչ կերակուրս ետ հրոյ՝ Աստուծոյ բարկուԹիւնն. որպէս և կայծ մի ուրեք անկանիցի և բազում խոշոտ գտանիցէ՝ լինի հրդեհ անհնարին. ապա եԹէ ոչ ինչ գտանիցէ որ զնա արծարծիցէ՝ շիջանի վաղվաղակի և անցանէ։

« Եւ բորբոքեսցի յանտառս մայրեաց և կերիցէ շուրջ զբլուխ նոցա զաւետնայն ինչ. վասն սրտմտուԹեան բարկուԹեան Տեառն՝ հրձիգ լինի երկիրն ամենայն »։ Մի՛ վասն զի խոտոյ լուսոյ վաղաչէ՝ երագանցուկ համարիցիս, ասէ, զՀրդեհն. զի վասն երագուԹեանն և սաստկուԹեանն այն նմանեցուցի։ Այսպէս եԹէ կամիցիս ուսանել զսաստկուԹիւնն՝ միտ դիր յաջորդացն։ Եւ զՀնձնն իսկ, ասէ, կերիցէ հուրն. « Վասն սրտմտուԹեան բարկուԹեան Տեառն հրձիգ լինի երկիրն ամենայն. և եղիցի ժողովուրդն իբրև այրեցեալ հրով »։ Զի հաւատարիմ առնիցէ զքանն, զնէ՝ եԹէ Աստուծոյ բարկուԹիւն է. ոչ զերկիրն Թողուցու և ոչ զայլ ինչ, ոչ զտնանկս և ոչ զմեծամեծս. զի մի կարծիցես՝ եԹէ մեղքն այնչափ կարող իցեն, և բարկուԹիւնն Աստուծոյ չիցէ կարող։ « Եւ եղիցի ժողովուրդն իբրև այրեցեալ հրով ». անդ սով իմն ակնարկէ, զի և բնուԹեան օրէնքն, ասէ, խափանեսցին և ոչ ձանձ չիցեն զմիմեանս։

« Այր եղբօր իւրոյ մի ողորմեսցի »։ Եւ քանզի զմիմեանս ոչ ծանեայք, այլազգ արարից կործանել զձեզ։ « Այր եղբօր իւրոյ մի ողորմեսցի ». ոչ այժմ զգօնն և հանդարտն՝ առ այլս՛ի վայրենուԹիւն գայնանց չըմլիցի, այլ զի իւրում եղբօրն՝ որ քան զամենայն ազն ընտանի է՝ մի ողորմեսցի. և վիշտքն առաջի կայցեն։ « Այլ խոտորիցի յաջակողմն իւր՝ յորժամ

1 Յօր. Զոր։

2 Յօր. ԶանօրէնուԹիւնն։

քաղցիցէ »։ Ա.յսինքն՝ հեռասցի, թողցէ զնա։ « Եւ կերիցէ ՚ի ձախակողմ կողմանէն »։ Ա.յսինքն՝ ձարակեսցի իբրեւ զհուր, որ ձարակի յաջմէ և յահեկէ։

« Եւ մի յագեսցի մարդ ուտել զմարմինս բաղկաց իւրոց »։ իսկ Սիմաքոս ասէ. Զմարմինս ընկերի իւրոյ։ Ո՛վ դառն սեղան՝ լի լեղեաւ, ո՛վ կերակուր պատրաստեալ՚ի դիւաց, ո՛վ ձաշ անշայեկան. յիւրոյ անգամոյ պատրաստեալ սեղան դառնութեան, ինքն իւր լեալ կերակուր, և այնպիսի անոյշ կերակուր՝ զի և յագուրդ ևս չլինիցի։ Դժնդակ և բռնամարտիկ գեւք՚ի քաղաքն ժողովեցան. քան զբազում մահս դառնագոյն էր այն. ոչ ապաքէն լաւ էր մեռանել՚ի սովոյ և ոչ այնպիսի միխթարութիւն գտանել սովոյն. քան զցաւս՝ դէղն ևս չար էր, քան զախտն՝ առողջութիւնն ևս դժնդակ. ինքն ընդ ինքեան մարտնչէր մարդն։ Եւ արդ զիա՞րդ ոչ սոսկաւմն և արհաւիրք իցեն իրքն. տե՛ս, զինչպիսի կերակուր ուտէին. բերանն լի արեամբ և շաղաղով, և շրթունք հում մսով. ինքն՝ յինքենէ ծախեր, և ինքն՝ իւր շուն, և քան զամենայն գիշակեր՝ լեալ վայրենագոյն։ Որպիսի եղեռն, որպիսի աղէտք։ Գիտեմք զի բազումք ՚ի բանիցս իսկ սոսկան, զարհուրին, պահեն, յարտասուս հարկանեն. իսկ եթէ ցուցից և զմեզ՝ զի ևս քան զայսպիսի չարիս գործիցեմք, ընդ այն ոչ սոսկայցեք. մի մարմին է առհասարակ ամենայն եկեղեցիս, յորժամ զեղբարս մեր ուտիցեմք, և ըզմիմեանց ոսկերս քանսիցեմք. եթէ զմիմեանս, ասէ, խածատիցէք և զմիմեանս ուտիցէք. յորժամ այսպիսի ինչ իրք՚ի մէջ մարդկան գործիցին՝ մոլեաց նմանեն, կատաղեաց, ՚ի մտաց անկելոց։

« Կերիցէ Մանասէ զԵփրեմ, և Եփրեմ զՄանասէ ». սոքա եղբարք հարաղատք։ « Եւ ՚ի միասին պաշարեսցեն զՅուդա »։ Տեսանե՞ս զսրտմտութիւնն, հայե՛ս ՚ի բարկութիւնն։ « Եւ ՚ի վերայ այսր ամենայնի՝ ոչ դարձաւ սրտմտութիւնն, այլ տակաւին բարձրացեալ է ձեռնն »։ Չի ծանիցեն եթէ որպիսի պատժոց արժանի իցեն, զի և այնչափ վըրիժուք որ խնդրեցան ՚ի նմանէ՝ ոչինչ զգաստացան, այլ անդէն ՚ի նմին չարիս կործանեալ կայցեն։

ԳԼՈՒԽ Ժ

« Վա՛յ ոյք գրեն զչարիս, գրելով գրեն զչարիս». իսկ այլքն ասեն. Վա՛յ ոյք հաւաստեաւ քննիցեն զհաւատիսն։ Եւ ընդէ՞ր երկրորդիցէ. այլ զի չարիքն նոցա բազումք և յաճախագոյնք էին, որ լինէին ցաւոցն պատճառք. զի և գիրք՝ յամենայն վայրի զչարիս՝ ցաւս կոչեն. ի նեղըոյ լեզուի նորա, ասէ, ցաւք և վաստակք։ Եւ արդարև, ասեն, ցաւք են չարիք՝ որ պտուղ ևս ոչ բերեն, այլ մանաւանդ զի բերեն իսկ զսատակմանն պտուղ։

« Որք խոտորեն զկրաւունս աղքատաց և չափշտակեն զկրաւունս անանկաց »։ Տեսանե՞ս, զի ոչ զայնոսիկ որ լըկիցեն, այլ զայնոսիկ որ լըկիցեն՝ համարի ողորմելիս. զի ո՛րչափ զաղքատս զրկեալս ցուցանիցէ, նոյնչափ զՀարստացն զպատիժս աճեցուցանէ։ Եւ զայս ամենեքեան բամբասեն ՚ի բնէ, և սոյն միշտ լինի ամենևին։ Չէրեայս վասն այսպիսի իրաց չեն ինչ զարմանք պատուհասել. քանզի ամենևին յերկրաւորսս բևեռեալ են. այլ մեք՝ որ զգաստացաք և խոստովանեցաք, ոչ պարտիմք ընդ այնպիսի բամբասանօք գտանիլ։

« Վարել զայրիս ՚ի գերութիւն և զորբս չափշտակութիւն ժողովրդեան իմոյ »։ Ա.հաւասիկ այլ ևս իմն մեծ ապաստանք, զորս ոչ որբութիւնք լկանաց և ոչ այրութիւն նեղեաց, և ոչ այլ ինչ այնպիսի չարչարանք։ Նոցա չէր պարտ զայրս նեղել. լինին, ասէ, պարտ է երկինչել, և իմոյ երկիւղիւն լինել հեզ և ըզգաստ։ « Եւ արդ, զի՞նչ գործիցեք յաւուր այցելութեանն. զի նեղութիւն ձեր՚ի հեռաստանէ եկեսցէ »։ Եւ ընդէ՞ր ասէ՝ եթէ ՚ի հեռաստանէ. այլ զի նոքա յապաշխարութիւն դառնայցեն. զի յայտ արասցէ, թէ աստուածասաստ են տանջանքն, յերկնից է վըճիռն։

« Ա՛ւ ո՞ փախստական անկանիցիք յօդնականու-

Թիւն, և ոչ թողուցուք զփառսն ձեր, զի ոչ յղալ-
կեցին ընդ գերութեանն». իսկ այլ թարգմանքն ասեն,
եթէ Ոչ անկանիցիք ընդ կապանօք: Եւ ապա զի առ
ընտանիս գտայք անգուրք և անագորոյնք, առաքե-
ցից ի վերայ ձեր զօտարս, և ոչինչ գտանիցէք միսի-
թարութիւն և ոչ բժշկութիւն: Եւ այս ոչ անիրաւու-
թիւն ինչ է. զի գուք ոչ ողորմեցարուք որբոց, և ոչ
այլ ոք ձեզ ողորմեսցի. ոչ ած զձեզ յայգպիսի թը-
շուառութիւն: «Ո՞ր թողուցուք զփառս ձեր». ոչ
կարիցէ պահել, ասէ, զփառսն ձեր ձեզ, եթէ ոչ վա-
րիցիք ի գերութիւն: Տեսանէ՞ս, զի անձամբ յանձնէ
կշտամբէ չարութիւն. «Վայ, ասէ, որ գրէն զչարիս,
գրելով գրէն զչարիս իւրեանց»: Դու ցուցեր, ասէ, զա-
նողորմիսս, և ածից ցուցից, ասէ, զպատիժս և զհա-
րուածս. և ոչ այնու ևեթ վճարիցի: «Եւ ի վերայ այսր
ամենայնի ոչ դարձաւ սրտմտութիւնն, այլ ևս տակա-
ւին բարձրացեալ է ձեռնն»:

«Վայ Այորեստանեայց. գաւազան բարկութեան
սրտմտութեան իմոյ ի ձեռս նոցա»: Փոխէ այսու հետև
զսաստն առ պատերազմողսն, և յառաջագոյն գուշա-
կէ զիրսն՝ որ առ եզեկիայ արքայիւ լինելոց էին. քան-
զի հարիւր ութանասուն և հինգ հազար անկան ի
միում աւուր: Եւ արդ խնդրիցես՝ եթէ վասն էր այս-
պիսի իրք գործեցան. այլ զի Աստուծոյ տեսչութիւնն
որ ի վերայ ժողովրդեանն էր՝ ևս առաւել խրատ լինէր
քան զմարգարէիցն յառաջ գուշակել. զի Հրէայքն մար-
գարէիւքն խրատէին և թշնամիքն՝ իրաւամբքն՝ որ ընդ
նոսա անցանէին: Տեսանէ՞ս, զի նոքա ձգէին զպատճառս
յանձինս: Եւ պարտ է խնդրել, թէ գաւազան բարկու-
թեան սրտմտութեան քո ի ձեռս նոցա իցէ, իսկ
զնոսա ընդէ՞ր հարկանիցես: Եւ զի ի վերայ Այորե-
ստանեայց է մարգարէութիւնս այս, լուր, զինչ ասէն.
Ո՞չ ապաքէն այն Աստուած իցէ, որ եբարձ զբարձունսն
և առաջի սեղանոյ իմոյ, ասէ, միայն երկիր պագանի-
ջիք. և դարձեալ՝ եթէ Աստուած ասաց ցմեզ ելանել.
և այսպէս ի վաղուց հետէ գիտէին զայս: Այլ ասեն՝
եթէ Ռափսակ ի նոցանէ էր: Տեսանե՞ս, վասն էր
զայս գուշակէ յառաջագոյն. զի մի լքանիցեն յորժամ
տեսանիցեն զբազում զօրսն պատել շուրջ զքաղաքաւն.

վասն այսորիկ ասիցէ վասն նոցա, զի յինէն առին զիշ-
խանութիւնն, և զիա՝ որ ետու զիշխանութիւնն՝ չծա-
նեան: Չի այլոց ազգաց յաղթել, եթէ Աստուածոյ
իցէ տուեալ նմա զյաղթութիւնն, այն ոչ կարի ինչ
անգիտութիւն էր և ոչ այսպիսի ինչ. բայց Հրէից և
Իսրայելացւոց յաղթել, զի իւրում զօրութեանն հա-
մարէր և ոչ Աստուծոյ՝ անհնարին անմտութեան էր:
Որպէս առ Մովսիսիւն, սոյնպէս և աստ. գաւա-
զան բարկութեան ետու ի ձեռս քո, հարկանել
զազգս օտարազգիս և ոչ զիմդ:

Եւ քանզի անօրէնն ազգ էր, «Եւ զբարկութիւն,
ասէ, յազգ անօրէնն առաքեցից, և իմում ժողովըր-
դեանն՝ կարգեցից առնել զաւար և զյափշտակու-
թիւն, կոխան առնել զքաղաքս և դնել զնոսա ի փո-
շի»: Թէպէտ և այս իսկ բաւական էր ցուցանել, եթէ
ազգ անօրէնն են նոքա, ես հրամայեցի առնուլ նոցա
զպինչսի գերութիւնս: «Նա ոչ այսպէս ած զմտաւ,
և ոչ այսպէս համարեցաւ յանձն իւր». այլ զիա՞րդ
քան զամենայն տիեզերս կարծէր լինել զօրագոյն ար-
դեամբք: «Այլ դարձցին միտք նորա ապականել
զազգս բազումս»: Չի Թէպէտ և զանձնէ ինչ կարծէր
այնպիսի գործ գործել, սակայն ի մարդկեղէն փո-
փոխմանց պարտ էր նմա երկնչել: Տեսանե՞ս, ո՛րչափ
ինչ չարիք են չճանաչել զչափ մեծարանաց:

«Եւ եթէ ասիցես ցնա, թէ դո՛ւ միայն իցես իշ-
խան. ասիցէ. ո՞չ ապաքէն առի զերկիրն որ ի վերայ
Բաբելացւոյն է, և զքաղաքն՝ ուր աշտարակն շինե-
ցաւ»: Յիշեցոյց Աստուծոյ կռւիեալ զնա, զի որպէս
անդ ի նմա ցուցցէ զբազում զօրութիւն. յանցելոցն՝
զհանդերձեալսն, կիւսաես[1]. ո՞չ ապաքէն յորժամ ար-
գելուցաւ յանդգնութենէդ՝ զչափ առցես Աստու-
ծոյ զօրութեանն. վասն այնորիկ իսկ այնպէս խօսեր,
զի զԱստուծոյ զօրութիւնն ցուցանիցէ. զի զնա, որ
ի բազում աշխարհս աստատակեր և քակեր զազգս և
կործաներ զերկիր, իբրև զանձրև ուժգին կամ զհե-
ղեղատ սաստիկ, այնպէս խափանեսցէ ի փոքր և յար-
համարհեալ քաղաքին, իբրև թէ չիցէ իսկ լեալ:

1 Այսպէս յօրինակին:

« Որպէս զի զկողմանն Սրաբացւոց առի, ասէ, զԴամասկոս և զՍամարիա. որպէս զայս առի, նոյնպէս զամենայն իշխանութիւնս աւերեցից»: Տեսանե՞ս, զի արտաքոյ քան զմարդկեղէն բնութեան են իրքդ. ո՛վ այր դու, ոչ ոք, ասես, արգելուլ կարաց զիս. ո՛րչափ խօսիս զմեծամեծոդ՝ դոյնչափ զԱստուծոյ զօրութիւնն յայտ առնես:

« Ողբացէք, դրօշեալք, որ յԵրուսաղէմ էք և ի Սամարիա. զի զոր օրինակ արարի ընդ Սամարիա և ընդ ձեռագործս նորա, նոյնպէս արարից ընդ Երուսաղէմ և ընդ կուռս նորա»: Տեսանե՞ս զկռոյն տկարութիւն. տեսանե՞ս, զի և ոչ միոչև ցմարդիկ միայն ձգէ զամբարտաւանութիւնն, այլ և զդիմն ևս նախատէ. զի ոչ բազմութիւն մարդկան, ասէ, և ոչ առաւածեղէն զօրութիւն կարաց արգելուլ զիս՝ յորմէ հետէ սկսայ. զի եթէ սկսաւ՝ յայտ է եթէ տկար ես. և յորժամ յայտնիցի ոք՝ որ զքեզ խափանեսցէ, և քան զդիմն և քան զամենայն մարդիկ՝ յայտ է եթէ զօրագոյն է:

« Եւ եղիցի յորժամ կատարեսցէ Տէր զամենայն ի ի լեառն Սիովն և յԵրուսաղէմ, ածցէ ի վերայ մեծամիտ հպարտութեանն և ի վերայ իշխանին Սօրեստանեայց և ի վերայ բարձրութեան փառաց աչացն նորա »: Եւ զի՞նչ իցէ՝ թէ կատարեսցէ, զոր Ա՛կիղաս ասէ՝ եթէ անգէն կարեսցէ. Սիմաքոս՝ եթէ զոր կըարելոյն իցէ: Բազմաց թոյլ տայ երկնչել խուճապել. զի և այս անգ լիմն լինի՝ առ իմանալ սքանչելեացն առաւելութիւն. զի յորժամ սաստկացուցանիցէ զօրութիւնն և ինչ ոչ թողուցու՝ զոր ոչ խօսեսցի, ապա խափանեսցէ զնա Աստուած. զի ոչ եթէ ի ցոյց ինչ առնէր՝ զոր ինչ առնէր Աստուած, այլ յօգուտ Հրեից և բարբարոսաց. որպէս և Պաւղոս ասէ, եթէ Յորժամ կատարեսցի և ձեր հնազանդութիւնն:

« Քանզի և նա այսպէս ասաց, եթէ զօրութեամբ ձեռին իմոյ արարից և իմաստութեամբ խորհրդոյ՝ բացից զսահմանս ազգաց և զգօրութիւն նոցա աւար հարից, և շարժեցից զքաղաքս բնակեալս. հասից ի վերայ առնոյն սուրեղերաց ձեռամբ իմով՝ իբրև ի վերայ բունոյ, և բարձից իբրև զձուս սիացեալս. և ոչ

ոք իցէ՝ որ ապրիցէ, և ոչ այն որ ընդդէմ դառնայցէ»: Տեսանե՞ս, զի չհայելն իսկ նորա յԱստուածոյ բարձրութիւնն՝ մեծ ամբարտաւանութիւն էր, և բաւական՝ հարկել զնա և խրատել: Ո՞վ ոք իցէ ինձ Աստուածդ. վասն այնորիկ և զպարտացեալն և զզօրացեալն կործաներ ընկենոյր, զի բազում առաւելութեամբ ծանիցէ զԱստուածոյ զօրութիւնն: Կարող էր հուր յերկինից տեղալ և այրել զզօրսն կամ գազանս արձակել կամ այլովք պէսպէս հարուածովք հարկանել, բայց ոչ կամեցաւ. այլ թոյլ ետ նստել զքաղաքաւն, թոյլ ետ նմա զմեծամեծսն խօսել և եղեկիայ արքայի զաղօթսն մատուցանել. և ապա ածէր զբարկութիւնն, և ոչ փոքր ինչ իրս կատարէր. և եթէ չնորհօքն Աստուածոյ ի տեղիս իսկ հասցուք [1], արասցուք յայտ՝ եթէ զինչ իցէ այն զոր ասէն, եթէ կատարեսցէ Տէր զամենայն ինչ առնել:

Զոր օրինակ ոք զարմանազործ արուեստական, ոչ վայրապար մտանիցէ ի հանդիսական հրապարակն, եթէ ոչ նախ տեսանիցէ մնեալ զամենեսին նստել յիւրաքանչիւր չափս և ի կարգս, և ապա մտանիցէ ցուցանել զհանդէս արուեստին, նոյնպէս և Աստուածն ի լեառն Սիովն և յԵրուսաղէմ, յորժամ կարգեալ նստիցին յիւրաքանչիւր չափս՝ իբրև յատենի. « Ակնեցի լութիւն արարից, ասէ, ի վերայ հպարտացեալ մեծատացն ». Թէպէտ և չգոյին այլ միտք վատթարագոյնք քան զայն միտս: Բարւոք իսկ եկն եւ բանս ի դէպ, թէ քան զամբարտաւանն՝ չէք այլ ոք թշուառական. զի որ ոչ կարիցէ զայն ինչ իմանալ՝ որ և մանկտուց յայտ է, զնաւթդ իցէ նա մեծ: Եւ ոչ ասաց, եթէ զմարդ ոք, այլ թէ զմիտսն հպարտացեալս: Ոչ եթէ եբարձ զնա ի միջոյ, այլ թոյլ ետ խրատել յիրաց ինչ՝ որ ընդ այլ անցանիցեն: Եւ քանզի և ոչ այնպէս ինչ խրատեցաւ, այլ երթեալ երկիր պագանէր կռոյն, և զի յանբժշկական ցաւն սկսաւ ջերանել, բառնայր զնա ի միջոց, զի նորա պատժովքն՝ զայլս խրատիցէ. և ոչինչ յայտ առնէ զիրացն կերպարանս, այլ զվախճանն միայն: Դարձեալ և այլ իմն բանս իրաւացիս կամի ցուցանել մեզ, զի և

1 Յօր. Հարցոտ:

զապրեալսն վրկութիւն պատիւգ և զամբարտաւանին կործանումն։

« Ես, ասէ, զօրութեամբ ձեռին իմոյ արարից, և իմաստութեամբ խորհրդոց իմոց բարձից զսահմանս». զի մի՛ թափաւորք ուրեք կացցեն և մի՛ իշխանք գտանիցին։ « Եւ շարժեցից զքաղաքս բնակեալս. Հասից ՚ի վերայ ամենայն տիեզերաց և եդից զձեռն իմ իբրև ՚ի վերայ բունոյ»։ Ցեսանէս, ուր վայրենի միտքն զայն պիսի հպարտութիւնն ցուցին. զիա՞րդ ցուցանէ սպառնալեօք զամբարտաւանութիւնն. տեսանե՞ս, որչափ չարիք ՚ի հպարտութենէ էն։ « Եւ ոչ ոք իցէ, ասէ, որ ապրիցէ չլինէն, և ոչ ոք իցէ, ասէ, որ ինձ ընդդեմդառնայցէ»։ Զամենայն զամբարտաւանութիւնն ցուցանէ. զի չայտ արասցէ Թէ որպիսուիմ ես յաղթեաց։ Նա և ոչ՝ որ զօրութիւնս ինչ ոք գործիցէն, բարւոք ինչ իցէ նոցա հպարտանալ և կամ մեծամեծս խօսել. քանզի գան հասանեն յԱստուծոյ պատիժք ամբարտաւանից, որպէս և Փարիսեցւոյն դիպեցաւ. և եթէ զնա՝ որ բարի գործով հակառակ էր կամաց սատանայի, մի բան և սակաւ ինչ չանցումն կարաց վրիպեցուցանել և խոտել, որչափ ևս առաւել զայլ մնապարծս. զի եթէ ո՞րոց[1] զօրութիւնն ինչ կատարեալ էն՝ չվայելեն պարծանք, որչափ ևս առաւել այնոցիկ՝ որ հեռի իցեն յօրհնութեանց։

« Մի եթէ վերանայցէ փայտատ առանց փայտահարի, կամ ձգիցի սղոց առանց ուրուք ձգելոյ »։ Տե՛ս, ուր նմանեցուցանեն զՈրդի Աստուծոյ՝ հերետիկոսք. գործոյ՝ որում զԱյսորեստանեայն նմանեցուցին գիրք։ Որպէս փայտատ զի ոչ անձամբ հատանէ, նոյնպէս և ոչ դու անձամբ ինչ գործիցես. և որպէս սղոց զի ոչ ոչ դու անձամբ ձգիցի, նոյնպէս և ոչ դու անձամբդ ինչ վճարիցես։ « Նա և ոչ այդպէս », այսինքն այսուհետև ոչ պիտոյ իցես ինձ։ « Կամ վերանայցէ գաւազան առանց ուրուք վերացուցանելոյ ». զի ես էի՝ որ վերացուցանէի զքեզ, յայսմհետէ ոչ վերացուցից։

« Ա՛յլ առաքեսցէ Տէր զօրութեանց ՚ի պատիւ անդր քո՝ անարգանս, և ՚ի քո փառս՝ հուր բորբո-

1 Յօր. Պակասէր որոց։

քեսցէ »։ Զի և պարտութիւնն անարգութեամբ լինէին. որչափ սպառնալիքն մեծամեծք էին, և բաղումք Իսրայելացւոյն լինէին փառք, յորժամ հուր ՚ի թշնամին բորբոքէին։ « Եղիցի լոյս Իսրայելի ՚ի հուր, և սրբեսցէ զնա ՚ի բոց բորբոքեալ, և կերիցէ իբրև զխոտ զանտառս »։ Զկորուստ նոցա նշանակէ, զի իբրև զՀուր՝ այնպէս Ճարակէր բարկութիւնն զղօրս թշնամեացն։

« Յաւուր յայնմիկ չիջցին լերինք և բլուրք և անտառք, և կերիցէ ՚ի ընչից միմեանց ՚ի մարմին. և եղիցին որ ապրէն՝ իբրև որ զի ապրիցէ ՚ի բորբոքել բոցոյն. և որ մնացեալ էն ՚ի նոցանէ՝ թուով լիցին, և մանուկ տղայ գրեսցէ[1] զնոսա»։ Փախիցեն իբրև ՚ի հրոյ և լինիցին դիւրահամաքք։ « Եւ ոչ ևս լինիցին ապաստան ՚ի քեզ». և ոչ ևս ասելով՝ յայտ առնէ, եթէ երբեմն ապաստան լինէին ՚ի նա. քանզի զիսրայելացիսն առ վարեաց ՚ի գերութիւն, և որ ՚ի Սամարիա բնակեալն էին վասն Երուսաղէմացւոցն, զի ՚ի պաշարելն զնոսա՝ չարիք պատահէցին նմա։

« Եւ եղիցի յաւուր յայնմիկ ոչ ևս յաւելցուն մնացեալքն Իսրայէլի և ապրեալքն Յակովբայ. ոչ ևս ապաստան լինիցին ՚ի լկչէն իւրեանց, այլ եղիցին ապաստան յԱստուած ՚ի սուրբն Իսրայէլի, ճշմարտութեամբ »։ Ցեսանե՞ս, որպիսի չահ ՚ի կորստենէն եղև։ « Դարձցին մնացեալքն Յակովբայ՝ յԱստուած զօրացեալ »։ Եւ ընդէր նոքա միայն և ոչ ամենեքեան, զի և ամենեցուն խակ պարտ էր դառնալ ՚ի բարութիւնս։ Ցեսանե՞ս, զի աքանչելիքն առ ամենեսեան եղեն, և զշահն՝ նոքա ևեթ շահեցան։

« Եւ եթէ եղիցի ժողովուրդն Իսրայէլի իբրև զաւազ առ ափն ծովու, չափ ինչ մնացորդք մնայցեն ՚ի նոցանէ. զի բան մի հակիրճ և համառօտ յարդարութիւն արասցէ Աստուած ընդ ամենայն տիեզերս»։ Եւ ահաւասիկ ՚ի մարգարէութիւն իմն հանէ զբանն. քանզի միշտ ՚ի բազմութիւնն ապաստանէին՝ եթէ ոչ կորուսանէ Աստուած զայսչափ բազմութիւն, բառնայ ՚ի միջոյ զոյսն. ոչինչ, ասէ, առիւ ակն բազմութեանն։

1 Յօր. Գերեսցէ։

Եւ միւս ևս մարգարէ ասէ. Եւ էր թիւ որդւոցն Իսրայէլի՝ իբրև զաւազ առ ափն ծովուս: Զինչ օգուտ գործէ բազմութիւնն, ուր գործք անպիտանք գործին. քանզի ոչ ամենեքին էին անհատատք գտանելոց. սակաւք հաւատացին, վասն այնորիկ սակաւք ապրէին: «Բան հակիրճ և համառօտ յարդարութիւն». զի ոչ ևս երկայնմտութիւն և անսալ և Թողութիւն լինիցի: Ա.յլենձ այսպէս Թուի, եթէ վհանդերձեալ աշխարհին զդատաստանացն իսկ ակնարկիցէ ասելովն, եթէ «Բան մի հակիրճ և համառօտ արասցէ Տէր՝ ամենայն տիեզերաց»: Եւ տէս, զիարդ ընդ սքանչելւոյն՝ խառն են և կանխասացիկքն, և իբրև Թէ լեալք և կատարեալք իմն իցեն: Եւ քանզի ասաց, եթէ մնայեալք սակաւք ապրիցին, մի՛ ասեր, ասէ, եթէ զիարդ յայնչափ բազմութենէ՝ այնչափ սակաւք ապրեսցին: Ա.յո՛, ասէ, ոչ ևս խնայեցից ՚ի ձեզ, այլ զամենեսեան կորուսից, նաև զապրեալսն ևս ոչ Թողից:

Տեսանե՞ս, Թէ զիարդ ևս ստիպէ յԱստուած յուսալ և ոչ ՚ի բազմութիւն ապաստան լինել: Եւ քանզի այլևս ասէ, եթէ Ես ոչ խնայիցեմ ՚ի քաղաքն յորում բնակեալ իցեն աւելի քան զերկոտասան թիւր. և զայս ասելով՝ զմարգարէն իմն միխիթարէր, այլ առանց այսր՝ վասն աղնիւ ապաշխարութեանն խնայեաց: Զի Թէ բազմութեան էին ակն առնոյր, ապա և յառաջ քան զապաշխարութիւնն պարտ էր աչառել. իսկ եթէ ոչ աչառեցաւ բազմութեանն՝ յառաջ քան զապաշխարութիւնն, յայտ է՝ եթէ[1] և ոչ յետ ապաշխարութեանն ոչ էին զբազմութեանն ակն առ. վասն որոյ և ասէ իսկ. Եւ ետես Աստուած, զի դարձան իւրաքանչիւր ՚ի ճանապարհէ իւրեանց չարաց. և այլևս ասէ, եթէ Ըստ բազմութեանն իւրեանց՝ նոյնպէս և մեզան լինէ: Տեսանե՞ս, զի ոչ էին հաճէ, այլ առաւել բարկացուցանէ բազմութիւնն. զի որչափ բազումք իցեն, նոյնպէս և չարիքն մեծամեծք. զի մի օք չար՝ կարէ ապրել բազում անգամ; իսկ բազումք՝ և ոչ երբեք ուրեք, քանզի առհասարակ ՚ի միում ախտին ջերանին: Եւ այժմ ՚ի մերում ժամա-

1 Յօր. Յայտ է և եթէ:

նակիս, ասեն, եթէ զայսչափ բազմութիւնս սատակիցէ Աստուած: Ա.յո՛, սատակիցէ, քանզի խոտ բազմութիւն: Ո՞չ տեսանես զԼեղեղին, մին միայն՝ ընտանեօք ապրեցաւ, և ՚ի կրակատեղւոյ բարկութեանն Սոդոմայեցւոյն՝ երեք միայն ապրեցան, և յանապատին՝ երկուս միայն: Լաւ է, ասէ, մի՝ որ առնէ զկամս Տեառն, քան զբիւր անօրէնս. և յիրաւի իսկ: Եւ դու զնածդ կամիցիս, բիւր բնիսէն փայտեայ կամ՝ կապարեայ գտանել, եթէ մի մարգարիտ պատուական. և ոչ ասես՝ Թէ մի է, այլ գիտես՝ եթէ քան զայն զամենայն՝ միոյն պատուականէ. զի ոչ եթէ ՚ի բազմութեանն իսկ պատուականութիւնն, այլ ՚ի պատուականին՝ բազմութիւնն. քանզի և ասէ իսկ զսակաւսն պիտանեաց. Ջորս և աշխարհ իսկ ոչ արժէ:

«Մի՛ երկնչիք, ասէ, ժողովուրդ իմ, որ բնակեալդ էք ՚ի Սիովն՝ յԱսորեստանեայց. զի Թէ հարկանէ ըզքեզ գաւազանաւն, ածից ՚ի վերայ քո՝ ցուցանել զձանապարհն Եգիպտացւոց»: Ա.յսինքն՝ զի մեղմով, մարդասիրութեամբ ածից զվիշտս և զնեղութիւնս սովին: Եւ այս իսկ ուղղութեան նշանակ է Աստուծոյ, յորժամ ուսանիցիս՝ եթէ ոչինչ եղեն քեզ օգուտ Եգիպտացիքն, առ որս միշտ ապաստան լինէիր: «Զի փոքր միւս ևս դադարեսցէ բարկութիւնն իմ. այլ սրտմտութիւն իմ ՚ի վերայ խորհրդոց նոցա, և հասուսցէ Տէր ՚ի վերայ նոցա՝ ըստ հարուածոցն Մադիամու»: Ա.կիղաս և այլքն յաւելին, եթէ Տէր զօրութեանց. տանջանս՝ ըստ հարուածոցն Մադիամու, ՚ի տեղի չարչարանաց, ՚ի հաստատութեանն՝ որ եբաց. և այլք, Թէ ՚ի Սիոնէ՝ որ եբաց: «Եւ սրտմտութիւն նորա ձանապարհին՝ որ ընդ ծովակողին է և ընդ ձանապարհն Եգիպտացւոց»: Ա.կիղաս ասէ, Թէ գաւազան նորա ՚ի վերայ ծովու. Սիմաքա՝ եթէ ձուկ նորա՝ ՚ի ձանապարհն Եգիպտացւոց: Հաւատաբիմ լինի օրինակաւս՝ մարգարէութիւնս. քանզի և անդ երեք հարիւր արամբ կոտորեաց զամենեսեան և ոք աշխատ ոչ եղև, և զինու ինչ պէտք ոչ եղեն, նոյնպէս և աստ: «Եւ սրտմտութիւն նորա՝ ծովեզերեայ ձանապարհին». այսինքն՝ զի առ ձեւք հալեանցիս

անցանիցեն, և դիմեալ Յեգիպտոս երթայցեն. զի եթէ և տեսանիցես՝ մի՛ ինչ զարհուրիցիս: « Զի բարձցի երկիւղ նորա ՚ի քէն, և լուծ նորա ՚ի պարանոցէ քումմէ ». Ակիղաս և Սիմաքոս՝ բեռն նորա, ասեն: Ոչ յայնպիսի ինչ ՚ի պարտութիւն մատնիցին, եթէ դարձեալ զօրաժողով լինիցին գալ ՚ի մարտ պատերազմի. այլ անհնարին հարուածովք հարկանիցին. քանզի և ասէ իսկ, եթէ « Բարձցի լուծ նորա ՚ի պարանոցէ քումմէ »:

« Եկեսցէ հասցէ ՚ի քաղաքն Անդէ ». այլքն ասեն՝ եթէ յԱւաթ: « Եւ անցցէ ՚ի Մագեդով ». իսկ եօթանասունքն և այլքն՝ թէ ՚ի Մագրոնն. և եբրայեցին՝ թէ ՚ի Մադդոնն: « Եւ ՚ի Մաքմաս դիցէ զկապասի իւր. և անցցէ ընդ ձորն և հասցէ յԱնդէ. ահ առցէ զՈամա՝ զքաղաքն Սաւուղի, և փախիցէ դուստրն Գեղեղեմայ: Լու լինի յԱղաիշ, լու լինի յԱնաթովթ. զարմացի Մեդեբենա, և որ բնակեալն են ՚ի Գեբէր »: Տեսանէ՞ս, զի և զօթևանան՝ ուր ագանեցոյն էր՝ կարգ ըստ կարգի թուեն գիրք. զի թէպէտ և մօտ ՚ի ձեզ գայցէ հասանիցէ, սակայն մի՛ ինչ երկընչիջիք, զի ուր դէմ եդեալն է՝ երթայցէ. անտի առցէ՝ որչափ ինչ առնուցու, և դարձցի, և ձեզ ինչ ոչ վնասիցէ:

« Ամենասիկ Տէր զօրութեանց խռովեցուսցէ զփառաւորս զօրութեամբ իւրով և բարձրացեալքն՝ յամբարտաւանութեան իւրեանց կործանեսցին. և հպարտացեալքն խոնարհեսցին, և անկցին բազումք ՚ի սուր, և Լիբանան ինքնին բարձամբք իւրովք կործանեսցի »: Տեսանէ՞ս, որչափ ինչ միխիթարութիւն և սփոփութիւն է՝ յորժամ Աստուած գործ կամ իրս ինչ վճարիցէ:

ԳԼՈՒԽ ԺԱ

« Բղխեսցէ գաւազան յարմատոյն Ցեսսեայ ». այլ Թարգմանքն՝ Թէ ՚ի կոձեղէն, իսկ եբրայեցին՝ սեզ, ասէ: Տեսանէ՞ս զարմանան, տեսանէ՞ս զմարգարէութիւնն: « Եւ բղխեսցէ, ասէ, յարմատեացն », զի յայտ արասցէ՝ եթէ առ յապա էր լինելոց: Ոմանք ասեն՝ եթէ չեղեկիայ արքայէ ասէ, և եղեկիա՝ յառաջ քան զայն ժամանակ՝ յորում բանս այս ասացաւ՝ էր Թագաւոր, իսկ զսմանէ ասէ՝ Թէ յարմատոց նախնեացն է: Բարւոք ասէ՝ Թէ յարմատոցն, որպէս Թէ յԱբրահամէ և Լա ՚ի վեր. զի յայտ արասցէ՝ եթէ առանց ամուսնութեան եղև ծնունդն. որպէս և այլքն ասեն՝ եթէ ՚ի կոձեղէն: Ոչ ասէ սերմ կամ երկիր, այլ յարմատոցն բղխեսցէ գաւազան. ոչ զի ընդ արմատսն անցանիցէ, այլ զի անդստին յարմատոցն բըղխեսցէ. այսինքն՝ զի ոչ մարմին ինչ ընդ մարմին անց, այլ զի ՚ի բնութենէ կուսին առնուցու մարմին. ոչ յերկնից ինչ բերեալ մարմին և ոչ այլ ինչ ՚ի նոր աբարածոց, և ոչ ինքն ՚ի մարմին շրջեալ, այլ մարմին Ճշմարիտ առեալ ՚ի կուսէն, հանդերձ հնչով և մտածք. իւր մարմին՝ Բանին Աստուծոյ, և ոչ մարդոյ ուրուք մարմին՝ արտաքս քան զինքն. որպէս և Պաւղոս ասէ, Թէ Եկն և եղև ՚ի հնոջէ. զի միանգամայն Թէ և առանց ամուսնութեան է մարմինն՝ յայտ առնիցէ, և անդստին ՚ի նմին զանգուածոյ: Եւ գաւազան կոչելով՝ զթագաւորութիւնն յայտ առնէ. զի ամենայն ուրեք գիրք՝ զցեղն և զթագաւորութեանն պատիւ՝ գաւազան կոչեն. քանզի և գաւազան իսկ ոսկի ՚ի ձեռին ունին Թագաւորք, զի միանգամայն զթագաւորութիւնն և զահն և զսասան՝ կոչիցէ գաւազան: Ձոր վէրագոյնն մանուկ կոչեաց և ՚ի կուսէ, ասէ, ծնանելոց է, տեսցուք աստ զինչ կոչիցէ զմարմնաւորական գալուստն:

« Եւ ելցէ ծաղիկ յարմատոյն ». իսկ այլքն՝ Թէ

արձակեսցի շառաւեղ: Տեսանէս, զի և զաձումն յայտ առնէ. զի ելլէն, վերասցի՝ զառ սակաւ սակաւ և ըստ օրինաց զաձումն յայտ առնէ. ոչ ասէ՝ Թէ 'ի քէն, այլ Թէ ինքն լինքենէ աձեսցէ գաւազանն, որպէս զի ոչ երբեք Թարշամեսցի ծաղիկ գաւազանին: Եւ զի մի գաւազան կարծիցես, բարւոք բերէ զՅեսսէ'ի մէջ. նա և աւետարանիչքն այսպէս լինի առնեն, զի ցուցցեն Թէ ոչ յումեքէ գաղշեցաւ Տէրն հասարակաց:

« Եւ հանգիցէ 'ի վերայ նորա Հոգի Աստուծոյ. Հոգի իմաստութեան և հանճարոյ »: Ամաչեսցեն հերձուածողքն՝ որ հրէայերէն կամին մեկնել զգիրսս: « Հոգի, ասէ, խորհրդոյ և զօրութեան, Հոգի գիտութեան և աստուածպաշտութեան ». և այլքն՝ երկիւղն զի ևս յաւելուն, եթէ Լցցէ զնա Հոգի երկիւղի Աստուծոյ: Ակիղաս՝ եթէ Հոտոտեսցի 'ի նա երկիւղիւն Տեառն. Սիմաքոս և Թէոդոտիոն՝ եթէ Հոտոտեսցի նա յերկիւղ Տեառն: Եւ արդ ընդէր ընտրեաց Հոգւոյն զԱստուածն: Գրեսցուք՝ Թէ 'ի հօրէ երկնչիցի՝ որպէս դուք հայհոյէք, Հոգւոյն ևս զինչ կարօտեր, զոր դուք իսկ ասէք՝ Թէ փոքր է քան զնա. այլ վասն մեր յիւր ընչական և 'ի մարմնական մարմինն ընդունի զՀոգին զիմաստութեան և զհանճարոյ և զգիտութեան և զաստուածպաշտութեան. զի մեզ ինքեամբ ցուցցէ օրինակ, եթէ մեք կարօտ եմք այնպիսի պարգեւաց Հոգւոյն Աստուծոյ, և ոչ նա՝ որ Տէրն է՝ կարօտ ինչ է Հոգի ընդունելով, այլ 'ի նմա երևելով Հոգւոյն՝ մեզ լինիցին հաւատարիմ նորա երախտիքն. զի որպէս մարդն լինել՝ ոչ եթէ կարօտ ինչ էր և վասն այնորիկ եղև մարդ, այլ զի 'ի մարդն լինել՝ արասցէ զմարդիկ որդիս Աստուծոյ, նոյնպէս և ընդունել զՀոգին, ոչ եթէ իբրև զկարօտ ոք ընկալաւ, այլ զի կարօտելոց ինքեամբ բաշխեսցէ զՀոգին: Զի Թէ աւետեան ինչ էօր՝ նորա է, որպէս ասէ յաւետարանի, Թէ Աստեան ինչ որ իմ է՝ քո է, և որ քո է՝ իմ է, յայտ է Թէ և Հոգին Հօր՝ նորա բնակից է. և որպէս զանձն եդ 'ի վերայ խաշանց, նոյնպէս և զՀոգին՝ զիւր բնակից՝ եա 'ի կենդանութիւն մեռեալութեան աշխարհի, կամաք Հօր և նորին իսկ Հոգւոյն Սրբոյ: Եւ ոչ ասէ եթէ մանաւանդ ինչ ընկալաւ զՀոգին, այլ աւետեին, ասէ, լցցէ

զնա Հոգին Աստուծոյ: Զի որպէս չէ ոք բաւական Հօր՝ բայց միայն անձն Որդւոյ, և ոչ Որդւոյն՝ եթէ ոչ ծոյն Հօր, նոյնպէս և ոչ Հոգւոյն Սրբոյ՝ եթէ ոչ Որդի, որ նորին բնակից իսկ է:

« Հոգի, ասէ, իմաստութեան, հանճարոյ, Հոգի խորհրդոյ և զօրութեան և գիտութեան և աստուածպաշտութեան և երկիւղի Տեառն ». զի ուր երկիւղ Տեառն է՝ անդ աւետեան ինչ է. զի որ եցոյց զՀոգին յանձին, հանդերձ աւետեան պարգեւօքն, յայն սակս եցոյց՝ զի յերկիւղն աստուածպաշտութեան մերձեցուսցէ զմեզ. զի զանձնէ ոչ երբեք ասաց՝ եթէ ես ելից կեայ 'ի քէն, այլ՝ Թէ ես սիրեցի զքեզ. քանզի Որդւոյ՝ սէր վայել է և ոչ երկիւղ: Եւ եթէ 'ի մարդ ոք հանիցէն զայն, եթէ լցաւ Հոգւով Սրբով, ցուցցէն՝ ուր արդեւք ոք 'ի մարդկանէ բաւական եղև ամենևին զամենայն ընդունել զՀոգին: Մի եթէ Եղեկիա, մի եթէ Զօրաբաբէլ. և մի զբազումն ոք 'ի մէջ բերիցես, զի զայլոցն յիւրում տեղւոջն ցուցից. բայց առ այժմ՝ զերկուց ևեթ ձառեցից, զԵզեկիա և Զօրաբաբէլ: Ո՞վ ոք 'ի նոցանէ բաւական եղև գոյիւ իւրով ընդունել զՀոգին. ապա եթէ յամառիցիս՝ Թէ այո, բաւական եղեն ընդունել զՔրիստոսէ ընդէր չառնուցուս յանձն՝ Թէ ընկալաւ: Եւ զինչ ինչ իրս կարաց վճարել Եզեկիա. զի Թէպետ և ապրեցոյց զքաղաքն աղօթիւք, սակայն Աստուծոյ զօրութեամբն. իսկ եթէ զինչ զօրութիւնս եցոյց Քրիստոս, լուր սմին մարգարէի՝ որ ասէ, եթէ Որոյ իշխանութիւնն 'ի վերայ ուսոց իւրոց է. և ոչ այսչափ միայն, այլ և յաջորդովքն ևս յանդիմանեսցուք զանառնթեան:

« Ոչ 'ի կարծս դատեսցէ » ասէ: Տեսանէս զաստուածութեանն նշանակ. Ակիղաս՝ Ոչ ըստ տեսանելոյ աչաց դատիցի, և ոչ ըստ բանից յանդիմանեսցէ. իսկ այլքն՝ եթէ Ոչ ըստ լսելոյ ականջաց յանդիմանեսցէ: Եւ այսպիսի իրք՝ ոչ ըստ մարդոյ են, այլ ըստ Աստուծոյ. ըստ այնմ, եթէ Ծածուկքն՝ Տեառն Աստուծոյ մերոյ են. և Մարդ ընդ երեսս և Աստուած ընդ սիրտն նայի: Աստուծոյ միայն է ոչ ըստ կարծեաց դատել. իսկ մեք բազում անգամ այսր անդր վրիպիմք յիրաւանցն: Տեսանէս, զոր ինչ մարգարէքն յամենայն

տեղիս աստուածեղէն զօրութեանն տան, զնոյն մարգարէս՝ սմա ածէ ՚ի վկայութիւն. քանզի ոչ ասէ՝ եթէ երբեմն ըստ կարծեաց և երբեմն ոչ ըստ կարծեաց դատեսցի, այլ թէ և ոչ երբեք ըստ կարծեաց դատեսցի: Զի թէ մարգարէ ոք էր, վրիպէր արդեւք և սա, որպէս Սամուէլ և Եղիսեա, զի զբազում ինչ ոչ ճանաչէին յառաջագոյն, այլ յորժամ հնորհք Հոգւոյն կամէին՝ յայնժամ ճանաչէին: Նա և զի զանաչառ դատաստանն յայտ առնիցէ՝ ասէ. « Ոչ ըստ բանից յանդիմանեսցէ »: Տես, որպիսի՛ դատաւոր յայտ առնէ, որ ոչ ըստ բանից յանդիմանեսցէ, այլ և զծածուկս սրտի ՚ի մէջ բերիցէ, և ըստ նմին տայցէ զվճիռ դատաստանին: Երկրաւոր դատաւորք՝ զայսոսիկ և զերթ դատին, և բազում անգամ առ ՚ի չիմանալ՝ կորուսանեն զիրաւունս. իսկ Աստուած և զծածուկսն քննէ, և ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի նորա. ըստ այնմ՝ եթէ կենդանի է բանն Աստուծոյ և զօրաւոր և հատու [1] քան զամենայն սուր երկսայրի, և հատանէ և անցանէ մինչև ՚ի բաժինս հնչից և ոգւոց, և դատաւոր է մտաց և խորհրդոց. զի ոչ միայն զշունչն ՚ի մարմնոյն մեռնէ, այլ և զոգին, այսինքն է զհնարս հոգւոյն ՚ի հնչէն. զի ոչ բանիւք կարօտանայցէ և ոչ գրոյ ինչ պէտք լինիցի. Դպրութիւնք բացան, ասէ, և ատեան ուղղեցաւ:

« Այլ արասցէ իրաւունս տանակաց, և յանդիմանեսցէ զհնարս երկրի »: Այդ՝ զգիտութիւն յայտ առնէ, և ասա՝ զանաչառութիւնն, որպէս ընդ Ղազար և ընդ մեծատունն արար զդատաստանն. և այլուր՝ եթէ Ոչ իմ է տալ, այլ որոց պատրաստեալ իցէ. այսինքն՝ եթէ յինէն ինչ արգել չէ, բայց եթէ ինքեանք միայն առնիցեն զանձինս արժանի: Եւ բարւոք կոչեաց փառաւորս [2] երկրի, քանզի ոչ էին երկնից փառաւորք: Եւ տես, զնարդ տայ իրաւունս մեծատանն՝ Աւորք: Եւ տես, զնարդ տայ իրաւունս մեծատանն՝ Աբրահամու, և ոչ ինչ յայն ապաստան լինի, զի զիշխանութիւնն ունի. քանզի արդար է աշխոյ դատաստանացն նորա:

1 Յոր. Հապաղան:
2 Այսպէս յօրինակին:

« Եւ եղիցի, ասէ, ածեալ զարդարութիւնս ընդ մէջ իւր. հարցէ զերկիր ՚ի պատգամ բերանոյ իւրոյ ». զոր Պաւղոս յայտնագոյն ասէ զնեռնէն, եթէ Խափանեսցէ զնա՝ յայտնութեամբ գալստեան իւրոյ և պատգամաբեր բերանոյ իւրոյ. ոչ ինչ կարօտանայցէ զինու և ոչ պէտք ինչ լինիցին մեքենայից. քանզի բաւական է միայն երեւելն լուսոյ՝ հալածական առնել զխաւար: Կամ՝ սակաւ ի ուսանել՝ եթէ զնարդ հարկանիցէ. իբրև ետես զոննելիսն, Ջո, ասէ, թնդրէք, և վաղվաղակի չոգան և զարկան զգետնի: « Հարցէ զերկիր ՚ի պատգամ բերանոյ իւրոյ »: Որպէս զՀօրէ ասացեալ է՝ եթէ Բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և յոգի բերանոյ նորա՝ ամենայն զօրութիւնք նոցա. որ սաստէ ծովոյ և յամաքեցուցանէ, և զգետս ամենայն յանապատս դարձուցանէ, և որ ասէ արեգական չծագել և ոչ ծագէ. որպէս և մեք՝ որովք ձեռօք և շինեմք, նովին աւերել կարեմք, նոյնպէս և Աստուած. Բանիւ Տեառն, ասէ, հաստատեցան երկինք:

« Եւ եղիցի արդարութիւն ածեալ ընդ մէջ իւր, և ճշմարտութեամբ պատեալ զկողս իւր »: Սիմաքոս և Թէոդիտոնն՝ եթէ Հաւատովք պատեալ կուշտք նորա. զի և մեք այնպիսի հանդերձ զգենուցումք: Եւ ոմ ոք այսպիսի երևեցաւ մարդ, որ այսպիսի հանդերձ մըշտընջենաւոր ունիցի, որ Աստուծոյ միայն վայել է. զոր մ՚ի կատարած մարգարէութեանս ասէ, եթէ Զգեցցի զկրաչն արդարութեան. և հանդերձ, ասէ, զգենու Աստուծոյ: « Յայնմ ժամանակի, ասէ, գայլք և գառինք ՚ի միասին Ճարակեսցին [1] ». և թէ ի պատգամ բերանոյ հարցէ զերկիր. և այլուր, եթէ Բարբառեցաւ և վիրաւորեցաւ երկիր. եթէ ՚ի մարմին առնուցուս՝ զօրոյ զմեզն եհար գաւազանովն, և եթէ յերկրի սատակումն, որ ՚ի վախճանի լինելոց է՝ ոչինչ մեղանչես:

« Յայնմ ժամանակի գայլք և գառինք ՚ի միասին Ճարակեսցին »: Սիղոս ասէ, թէ Նժդեհ լինի գայլ գա-

1 Այս բան մարգարէին, անմիաբան ընդ առաջինն, թուի վրիպակաւ մուծեալ աստանօր ՚ի գաղափարողէն, զոր սուղ ինչ յետոյ առնու բացայայտել մատենագիրն:

ռին. Սիմաքոս՝ եթէ ի միասին քնակեսցեն. Թէոդիտոն՝ թէ պանդխտեսցին: Զգաշանամիտ բարս մարդկան կոչէ զայլս, և զգօնամիտս՝ կոչէ զառիւս: Այս եթէ հակառակիցէ ոք ցուցանել՝ թէ ոչ այդպէս, այլ զգաստանայ իսկ ասացեալ է, ցուցցէ՛ եթէ որպիսի գաւառան բղխեալ է յարմատոյն Յեսսեայ: Եւ այլազգ ևս. զի վասն վայրենամիտ մարդկան և զգօնաբարոյից ասէ, այլ թարգմանքն ևս յայտնագոյն ասեն. զի միւն ասէ՝ եթէ նժդեհեսցի, և միւսն՝ թէ պանդխտեսցի. զոր չէ հնար՝ ի գաղանս հանել, եթէ ոչ՝ ի մարդիկ տեսանել զգալտեանն շահս: Գայլք ընդ գառինն, և ընդ ուլն ընդ գառնուկն, և ընդ խոնարհ և ընդ շինական մարդկան, վասն աստուածպաշտութեան և Քրիստոսի սիրոյն զգաստացեալք, և ոչ ինչ զայրանան միմեանց:

« Եւ ինձ՝ առ ուլս մակաղեսցին ». և զայն Աստուծոյ դիւրին է առնել. և զայս՝ թէ կամիմք՝ և մեք առնեմք: « Որթք և առեւծք և ցուլք՝ ի միասին Ճարակեսցին, և մանուկ տղայ ժողովեսցէ զնոսա: Եզն և արջ՝ ի միասին Ճարակեսցին, և որդեակք նոցա խառն շրջեսցին. առեւծ իբրև զեզն՝ յարդ կերիցէ»: Եւ ոչ վայրապար ասէ՝ եթէ՝ ի միասին շրջեսցին, այլ ի ժամանակի կերակրոյն, յորժամ սեղանն կազմեսցի. ոչ զի զնութիւնն փոխիցէ, այլ զի զարան շրջիցէ. քանզի ոչ ասաց, եթէ գայլն՝ գառն լինիցի, այլ թէ պետ և՝ ի գաղանութեանն իւր՝ իշխել իշխեսցէ, այլ ոչ ինչ փնասիցէ շինականին. զի և այլուր զիշխանս խիստ՝ գայլս Աւրաբացւոց կոչէն գիրք: « Եւ ինձ առ ուլս մակաղեսցին, և որթք և առեւծք և ցուլք՝ ի միասին Ճարակեսցին »: Իւրաքանչիւր գաղան՝ զիւր բարսն Թողուցու. այն իսկ է՝ զոր վերագոյնն ասաց, եթէ Յանդիմանեսցէ զազգս բազումս: Եւ ոչ ընդ այն է զարմանալ, եթէ ինքն առնիցէ իրաւունս և յանդիմանեսցէ զփառաւորս երկրի. այլ զի և՝ ի մարդիկ տնկիցէ այնպիսի առաքինութիւնս, և զի վերկրաւորս՝ երկնաւորաց նմանեցուսցէ, և զմեծամեծս և ըզփոքունս՝ ընդ միով օրինաւք Հաւանեցուսցէ. զի մի ոք Հարստութեամբ զրկեսցէ զանաւատն. և այս՝ Աստուծոյ արարչութեանն գործ է: « Եւ մանուկ մատաղ ժողովեսցէ զնոսա »: Աչխոյս յոժարք և հաւանք լինիցին, զի մի իշխանաց ինչ կարօտանայցեն և մի օրինաց և մի այլ իմիք ինչ այսպիսեաց, այլ իւրաքանչիւր զանձինս յարդարիցէ. որպէս և ասէ իսկ, եթէ Ի վերայ արդարոց՝ օրէնք ինչ ոչ կան: Զի յորժամ ոք՝ ի քաղաք քրիստոնէից հասանիցէ, ուր սոյդ քրիստոնեայք ոք իցեն, թէպետ և կարի ոք անմիտ իցէ և բնաւ մատաղ մանուկ և զկարգս ինչ քրիստոնէութեան խոստանայցէ ցուցանել, դիւրաւ վաղվաղակի ժողովէ զամենեսեան, և ոչ ինչ աշխատ առնիցեն զայն՝ որ վերակացուն ոք լինելոց իցէ նոցա:

« Եւ եզն և արջ՝ ի միասին Ճարակեսցին, և որդեակք նոցա՝ խառն շրջեսցին »: Եզն առաջին միաքն են, զի վայրենամիտք և զգօնամիտք՝ ի միասին քնակեսցեն, և միմեանց ինչ ոչ վնասեսցեն վասն աստուածպաշտութեան: Եւ զի՞արդ մինչև ցմատաղ մանկտի խոնարհեցուցանէ զնոսան, զոր և այժմ իսկ տեսանեմք և՝ ի տհաս հասակս մանկտւոյ զառաքինութիւն աստուածպաշտութեան: « Եւ առեւծ իբրև զեզն՝ յարդ կերիցէ »: Յորժամ տեսանիցես զայր մի զօրավար, որ՝ ի բազում յաւիշտակութեանց լի առնէր զսեղան իւր, և յարբեցութիւն և՝ ի շաղղակերութիւն հարեալ, հատանէր իբրև զառեւծ մի, և զայլոց զմարմինս քանդեր և զոսկերս խորտակէր և զիւր սեղանն ընդոր աբեամբ և շաղղով, և յետոյ տեսանիցես զի վասն աստուածպաշտութեան՝ երբեմն պահիցէ և երբեմն զմիջին կերակուրսն ուտիցէ, յիշեսջիր զբան մարգարէիս՝ որ ասէ, թէ « Առեւծ իբրև զեզն՝ յարդ կերիցէ ». զի զվայրենութիւնն և զգաստանութիւնն փոխեաց, ոչ՝ ի խառն ժողովելոյն միայն, այլ և յայսպիսի սեղանոյ. զի ոչ ինչ գաղանական կամ դժգոհութիւն երևեսցի՝ ի սմա:

« Եւ մանուկ տղայ՝ ի բոյն իժից և զկօրեամբք իժից արկցէ զձեռն իւր, և նոքա մի՛ վնասեսցեն նմա, և մի՛ կարասցեն հարկանել զոք՝ ի լերին սրբութեան իմոյ»: Սիմաքոս, Եւ խաղասցէ ստնդիայ՝ ի վերայ բունոյ իժից, և՝ ի տեսիլն քարբից՝ ստնահատոյցն զձեռն իւր հատասիցէ, և ոչինչ մեղանչիցեն, և ոչինչ վնասիցեն յա-

մենայն լերին սրբութեան իմոյ։ Այսինքն տակաւք՝ թէպէտ և ի մէջ չարաց բնակեալ իցեն, սակայն մի՛ ինչ ինասեսցին ի չարութենէ նոցա. զի այնպիսի զօրութիւն ետ մեզ Աստուած՝ որում ոչ ինչ կարէ գամ գտանել չարութիւնն նոցա։ Զի եթէ շաղափքն սաքափաձանաց և թովչութիւնք ինչ ստաբանք յորժամ թովիցին՝ կարեն անազդական առնել զմարմինս ի թունաց չար գազանաց, ւրչափ ևս առաւել օծութիւն Հոգւոյն և հոգևոր թովչութիւնն, որով թովեցան միտք մեր, կարիցէ առնել զմեզ անվնասականս՝ եթէ կամիցիմք. վասն որոյ ոչ միայն զմեր չարութիւնն ի մէնջ հանիցեմք, այլ այնպէս զօրագոյն լինիմք, զի և այլոց ևս չարութիւն՝ մեզ ինչ ոչ ազդիցէ։

Եւ ուստի՞ լինիցի այս. «Զի լցաւ երկիր ամենայն գիտութեամբ Տեառն, որպէս զջուրս բազումս՝ որ ծածկեն զծովս»։ Գիտութիւն Աստուծոյ առնէ զայս ամենայն՝ որով նորոգիմքն, որով յայլակերպն փոփոխիմք. ոչ մեք միայն, այլ ամենայն երկիր առհասարակ։ Եւ մի՛ ինչ զայն ասիցես՝ եթէ զՊաղեստինացւոց աշխարհէն ասիցէ՝ զամենայն երկիրն ընդով գիտութեամբ, զի ոչ անսայ և ոչ առնու յանձն օրինակն՝ զաղքատութիւն բանին. «Որպէս զի ջուրք, ասէ, բազումք, զի ծածկեսցեն զծովս». և ոչ վայրապար զծով, այլ զծովս։

Եւ զինչ, ասէ, գործ բարիք, կամ աստուածպաշտութիւն ինչ այնպիսի արդեւք գտանի առ քրիստոնեայս. ոչ կապք և կռիւք ի մէջ քրիստոնէից են, զի ընդ միմեանս նախանձին, զիմեամբք կամին ելանել փառասէրք, աշխարհասէր դատիւք և դատաստանօք լի են, և զծով և զցամաք ի շահ և ի վաճառ արկեալ. ոչ տեսանես, զի կենդանւոյն կլանեն զմարդիկ՝ իշխանք և զօրավարք քրիստոնէից. և արդ, ուր այսպիսի բանք կատարեցան առ քրիստոնեայս, կամ լցաւ ամենայն երկիր գիտութեամբ Տեառն. և ազգք ևս բազումք՝ որ լուան զքրիստոնէից կրօնս, և ի վայրենի մտաց ինչ ոչ շրջեցան. և արդ, ցո՛ղ, ասեն, ուր առհասարակ օրէնք ինչ բարւոք կայցեն։ Կարծեմ թէ բազում ինչ բաղձալի զի՛ն և թարթափին մտօք, և խռովին և խռովեցուցանեն, և ջանան սուտ առնել զբանս և զմարգարէութիւնս,

և այնպէս համարին՝ թէ չկարիցեմք յայտ առնել. այլ մի՛ ինչ զանգիտէք, զի ընդհօքն Աստուծոյ յորժամ՝ի ձառս մտանիցեմք, ւրչափ ինչ պարգևեսցեն ընդհօք սուրբ Հոգւոյն՝ ասասցուք. զի վասն նորա իսկ փառացն ձգնիմք և վասն նորին պատերազմիմք։ Ո՛րչափ պատերազմունս ցուցից քեզ՝ զի քակեցան. ո՛չ ինքնին իսկ բնութիւնն անձամբ անձին թշնամի էր, ո՛չ փայտից և քարանց երկիր պագանէին, և զբազինս ամենայն՝ արեամբ ներկանէին. զի՞նչ ևս ընդհատ էին՝ի գայլոց. նա վատթարագոյն ևս էին քան զգայլս, և մանաւանդ ոչ միայն քան զգայլս վատթարագոյնք, զի նոքա՝ի կորիւնս իւրեանց գթան և խնայեն, և մարդիկ՝ առ բնութեանն գութ՝ անագորոյնք գտանէին. և զի՞ ջանայեմք՝ զայս յարտաքնոցն յայտ առնել. այլ լուր իսկ մարգարէին՝ որ ասէ, թէ Զենուին զուստերս և զդստերս իւրեանց դիւաց. կամ որպէս՝ի Թագաւորութեանն գրեալ է, թէ Ամո՛ղնացւոց արքայն, յորժամ պատերազմ ստիպեաց, զորդի իւր եհան առաջի ամենեցուն խոշխոջեաց։ Եւ արդ այս սակաւ ինչ գազանամտութեան նշանակ իցէ. ընդէ՞ր ոչ այժմ այնպիսի ոք գործ գործէ, և ոչ բուն հեթանոսն անգամ։ այլ համարձակ որդիք ընդ հարս և ընդ մարս բնակեն, և գութ և խնամ ընդ ծնօղսն ունին. զի յայնժամ ոչ ինչ ընդհատ՝ի գահճից էին հարքն՝ որդւոց, իսկ այժմ խնամ ունին սնոյեանն, հոգան՝ի կեանս և՝ի պատիւ հասուցանել։ Կամիցի՛ս և զայն ևս՝ի միտ առնուլ թէ զիարդ՝ի բոյն իժից մանուկ մատաղ արկանիցէ զձեռն և ոչ ինչ մեղանչեցեն. և այս ևս՝ առ քրիստոնեայս գտանի. զի՝ի մարտիւրոսութեան, թէպէտ և զթոյնս գազանաց ունիցին, սակայն գաժանութիւն թիւնին՝ ոչ ինչ ինասիցէ նոցա. և բազում անգամ մանկտի ևս պակեցան յայնպիսի պատերազմունս. և ոմանք զինչս վատնեն, և զիւրեանցն այլոց բաշխեն։ Ո՛չ տեսանես, ւրչափ օրկանոցք ընդ ամենայն աեղիս շինեալ՝ի դարմանս հաշմից, ւրչափ վերակացութիւնք օրբոց, տեսչութիւնք այրեաց. և զի՞ պիտոյ իցէ զայս արտաքուստ արտաքս թուել. մուտ չեկեղեցի և աչքք իսկ տեսանես զայսպիսի կարգս յօրինեալ. զի և որ զայս բանս ընդ մեր ընդդէմ գրեաց, ինքն

իսկ վկայէ՝ Թէ աղքատք և մեծատունք, ազատք և ծառայք՝ զմի պատիւ ունին յԵկեղեցւոջ։ Ո՛չ տեսա նես, զի ամենեքեան առհասարակ՝ ի միոջէ սեղանոյ ելանեն [1]. բայց քեզ չէ օրէն իսկ տեսանել. կամ զիարդ ինձք առ ուլս մակաղին, պատերազմողն և գա զանամիտ հզօրն՝ ընդ հեզսն և ընդ խոնարհի։ Իսկ եթէ զամենայն ուղղութիւնն միանգամայն չկարա ցին կատարել ամենեքեան, ընդ այն չեն ինչ զարմանք. այլ ընդ այն է սքանչանալ, զի ոմանք ամենայն վարուք կատարեալք, և ոմանք Թէպէտ և ոչ ամենայն վարուք կատարեալ իցեն, սակայն՝ ի գաղանամիտ բարեյիցն ցածուցեալք են։ Իսկ ի՛րք լցաւ ամենայն երկիր գի տութեամբ Տեառն. յորժամ ընդ ամենայն երկիր էլ բարբառ նոցա։

« Եւ եղիցի յաւուր յայնմիկ »։ Տեսանե՛ս, յորժամ այս ամենայն մերձ էր լինել, ապա ասէ. « Եղիցի արմատն Յեսսեայ, և որ կանգնելոց է՝ իշխան հեթանոսաց, ՚ի նա հեթանոսք յուսացցին»։ Եւ արդ, ո՞ր յու սաց ՚ի Զօրաքաջել կամ Յեղեկիա. և « Եւ եղիցի հանգիստ նորա ՚ի պատիւ». ա՛յր, որ և ոչ ձանաչին ումեք. իսկ ՚ի Քրիստոս կատարեցաւ այս. « Հանգիստ նորա ՚ի պատիւ », զերեզմանն՝ յորում Թաղեցաւ. զի միշտ պատուի և փառաւորի։

« Եւ եղիցի յաւուրն յայնմիկ՝ յաւելցէ Տէր ցուցանել զձեռն իւր ». յայնմիկ՝ յորժամ այս ամենայն իրք կա տարեցան, ՚ի Քրիստոսի [2] գալստեանն. այլ յետ գար ձին՝ « Ի նախանձու ժողովել զՄնացորդս ժողովրդեան իւրոյ, և որ մնացեալ իցեն յԱսորեստանեայց անտի»։ Տեսանե՛ս, զի նախանձու Աստուծոյ իրքն գործելին։

« Եւ բարձրացուսցէ նշան ՚ի վերայ հեթանոսաց. ժողովեսցէ զկորուսեալսն Իսրայելի, և զցրուեալսն Յուդայ ժողովեսցէ ՚ի չորից անկեանց երկրի. և բարձ ցի նախանձն Եփրեմի, և թշնամիքն Յուդայ սատա կեսցին. Եփրեմ՝ այլ ոչ նախանձեսցի ընդ Յուդայ, և Յուդա՝ ոչ ևս նեղեսցէ զԵփրեմ»։ Զի Թէպէտ և սա կաւաւոր էր և վերկուս ազգսն միայն ունէր, այլ Թա

1 Յօր. Ոսոր գրչաւ՝ վտեղէն։
2 Յօր. ի Քրիստոս։

դաւորութիւնն անտի էր։ Եւ զնգիպատացւոց հա բուածս՝ որ յետ գարձին լինելոց էին՝ յիշեցուցանէ, զի զկնի հարկանիցէ և զկնի հնազանդեցուսցէ։ « Եւ եղիցի, ասէ, ձանապարհ մնացեալ ժողովրդեան իմոյ յերկրէն Եգիպտացւոց. որպէս յաւուրն՝ յորում ելին յերկրէն Եգիպտացւոց »։ Յիշեցուցանէ զառաջինն անցսն՝ որ անցին ընդ նոսա։

ԳԼՈՒԽ ԺԲ

« Եւ ասասցես, ասէ, յաւուրն յայնմիկ. օրհնեցից զքեզ Տէր, զի բարկացար ինձ և ողորմեցար ինձ և դարձուցեր զսրտմտութիւն քո յինէն »։ Զի յԱստուծոյ՝ և ՚ի բարկութեանն իբրև ՚ի հաշտութեան՝ պարտ է գոհանալ. զի ՚ի բարկութենէ անտի խոր հաշտու թիւն ծնանին։ « Ահաւասիկ Աստուած իմ, փրկիչ իմ, Տէր իմ, և ես յուսացեալ եղէց ՚ի նա և այլ ոչ ևս երկեայց »։ Աստ՝ իբրև պարտս իմն ցուցանէ, Թէ զոր պարտեաքն՝ հատուցաք, և արդ ուրախ եմք։ « Եւ յուսացեալ եղէց ՚ի նա ». քան զամենայն ինչ՝ զայս խնդրէ Աստուած։ Զինչ, ասէ, խնդրէ ՚ի քէն Տէր Աստուած քո, այլ սիրել զնա և երկնչել ՚ի նմանէ, և պահել զպատուիրանս նորա։ « Զի փառք իմ և օրհնու թիւն իմ Տէր է, և եղև ինձ ՚ի փրկութիւն »։ Ո՛չ միայն փրկէ, այլ և փառաւորս և լուսաւորս առնէ։ « Եւ առնուցուք ջուր ուրախութեան՝ յաղբերացն փրկութեան »։ Աստ՝ և ակնարկէ իմն. « Ցնծացէք և ուրախ լերուք, բնակիչք Սիովնի, զի բարձրացաւ սուրբն Իսրայելի ՚ի մէջ նորա »։ Զամենեսեան, ասէ, կոչեցէք ՚ի վկայութիւն, և ամենեցուն ցուցէք հան դէս. քանզի ոչ ինչ ամաչեմ, այլ կոչեմ համարձակ զամենեսեան։

ԳԼՈՒԽ ԺԳ.

« Տեսիլ Բաբելացւոցն »։ Ակիղաս ասէ. կառք Բաբելացւոցն. Թէոդոտիտոնին և Սիմաքոս՝ Աւած Բաբելացւոց։ « Ջոր Ետես Եսայի ». քանզի և այլ մարգարէքն տեսին։

« Ի վերայ լերին դաշտականի առէք նշան, բարձրացուցէք զբարբառս ձեր՝ի վերայ նոցա. մխիթարեցէք ձեռամբ, բայեք իշխանք, և ես կարդեցից և ես ածից զնոսա. սուրբք են՝ և ես ժողովեմ զնոսա »։ Ակիղաս, ես ետու հրաման սրբելոյն իմոյ, այսինքն՝ եթէ ես առաջնորդեցից զօրացն և զօրավարացն. և քանզի ինքն ինձ յորդորեաց, զկիւրոս Թագաւորէ ասէ, ես ածից զնոսա, երկնչիջիք՝ի Թագաւորէն։ « Դիմեալ գան սկայք կատարել զսրտմտութիւն իմ». իսկ այլ Թարգմանքն՝ զօրս ասեն փոխանակ սկայիցն։ « Խնդան՝ գան միանգամայն, և Թշնամանեն »։ Ակիւլաս՝ Սմբարհաւաձեալք ամբարտաւանութեամբ. Թէոդոտիտոն՝ Ուրախ են ընդ Թշնամանն իմ։

« Ձայն աղգաց բազմաց՝ի վերայ լերանց՝ նման նուաԹիւն աղգաց բազմաց. ձայն Թագաւորաց և աղգաց ժողովելոց »։ Յայտ առնէ՝ եԹէ բազում էին զօրքն, բազում և զօրավիգն օգնականութեան։ « Տէր զօրութեանց հրամայեաց զօրաց սպառազինաց՝ գալ հասանել յերկրէ հեռաստանէ, ի ծագաց և՝ի հիմանց երկնից ». այսինքն՝ի Մարաց և՝ի ՊարԹեւաց։ « Ահաւասիկ օր Տեառն անբժշկական »։ Բառս առնուն՝ի վերայ հանդերձելոյն. զի եԹէ աստի յառաքինութիւնս ձգնիցիմք, գան հնարք դեղոց բժշկութեան. ապա եԹէ ոչ, յորժամ անդր երԹայցեմք՝ այնուհետեւ տանջանացն բռնութիւն հասանիցէ՝ի վերայ, և ոչ երբեք տանջանացն լինիցի վախձան։ Վասն այնորիկ անբժշկական զօրն կոչէ, զի մի ոք աստի առանց բժշկութեան գտանիցի։ Նաև տեսեալ յորժամ կամիցին զձառայս գան հարկանել և՝ի մահ

այն կայցեն՝ զի Թողուցուն զընտաս յանցաւորացն, բազում անգամ երդնուն իսկ առաջի բարեկամաց, զի եԹէ ըմբռնեմ, ասէ, չտամ ապրել։ Եւ եԹէ կամիցիս ուսանել, եԹէ զինարդ իցէ օրն անբժշկական, Եհ երԹիցուք՝ի միասին առ մեծատունն՝ որ բազում սպասս, տաշտս, և սկտեղս ունէր աստ, և անդ ինչ ոչ փչեաց[1] ՝ի նմա, այլ այնչափ՝ի տագնապի էր, և զՂազար ևս խնդրէր, զի երԹիցէ զովացուսցէ զծարաւեալ զայրեցեալ շրԹունն։ Զինարդ ոչ ամաչիցես, զինարդ ոչ ակնածիցես՝ զնա խնդրել քեզ բժիշկ վիրացդ՝ յոր հաշիսդ, զոր հանապազ տեսանէիր և անողորմ զանց առնէիր, և ոչ երբեք խըրտիր՝ի գութս, եԹէ գորին մարմնոյ սակի իցէ և նա. այլ վիշտք սաստիկք՝ զամօԹ մոռացուցանեն. և ո՞ ոք ոչ ողորմիր այնպիսի անհնարին ցաւոց, Թէպետ և այն ոք իցէ, առ որ մեղանչականն գտեալ իցէ։ Եւ տես, զինարդ և ոչ մեծ ինչ իշխէր խնդրել. ոչ ապրել՝ի բորբոքեալ բոցոյն և ոչ ելանել՝ի գեհենէն, այլ սակաւ մասին մարմնոյ՝ սակաւ ինչ զովանալ. նա և ոչ զայն ոք տայր նմա. Վիրհ մեծ է, ասէ, ընդ մեզ և ընդ ձեզ. զի մի կարծիցեք Թէ վասն զի առ Ղազարն անողորմ գտաւ՝ վասն այնորիկ արգելուցու զնա Աբրահամ երԹալ զովացուցանել զպասքեալ զտատապեալ շրԹունն, և լինիցին իրքն՝ այլոց ծուլութեան պատճառք, և այնպէս համարիցին՝ եԹէ Ղազար չիրաւի ոչ հատոյց նմա բարի ինչ, զի չար գնաց ընդ նա՝ի կեանս իւրում։ Ակլիմ հայր կամեցաւ կարեն բարեխօս լինել, քանզի ոչ կարէ հայր յայնպիսի տանջանս տեսանել և չողորմել, քանզի արդարև գԹայ և հանէ՝ի տանջանաց։ Վասն այսորիկ զի զայսպիսի զամենայն ցուրտ մխիթարուԹիւնս բարձեալ Քրիստոս, և հաւանեցուսցէ յիւրոյ անձին յառաքինութիւնն յուսալ, և մի յայլոց ուրուք ապաստան լինել, ածէ զԱբրահամ՝ի մէջ և ասէ, եԹէ վիրհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ. զի եԹէ կամիցի ոք այսի այսր գալ՝ չէ հնար, և ոչ աստի ոք այդր. առաջնումն զարդար իրաւունսն եցոյց. Դու, ասէ, ընկալար զբարութիւնս և Ղազար զկարիս։ Ակ՛ն, ասէ, և ես խոստո-

1 Ակսակս յօրինակին։

վանիմ և չլինիմ յուրաստ, զի ոչ այնչափ անամօթ ինչ իցեմ, թէ և՛ ի ամենայնս ապիրատ գտանիցիմ, ոչ արդարութեան ինչ բանիւ կամիմ ապրել, այլ զի ողորմութիւն գտից: Ա.յլ վիհ մեծ է, ասէ, ընդ մեզ և ընդ ձեզ. զի առանց բժշկութեան է օրս, լի սրտմտութեամբ և բարկութեամբ: Բարւոք ասաց եթէ լի է. քանզի չիք տեղի ապաշխարութեան, այլ զամենայն՝ բարկութիւնն ունի. չիք տեղի ողորմութեան, և ոչ մարդասիրութեան. զի յայս ժամանակս պատրաստեաց Աստուած զգեղն ապաշխարութեան, և զայն օր առանց բժշկութեան արար: Ա.յլ թերևս ասիցեն, եթէ ոչ ապաքէն զմարդկէզին բնութիւն խրատէ, միթէ չիցե՞մք ի կաւոյ, միթէ չիցե՞մք հող և մոխիր: Ոչ է, ասէ, ժամանակս այնպիսի բանից, այլ յորժամ մեզանչեիքն, հպարտանայիք և ամբարտաւանեիք, վասն կանայիք և արբեցութեամբ թմբրեիք՝ յայնժամ պարտ էր զայդպիսի բանս ձայրատարս լինել: Խօսէր նահապետն Աբրահամ՝ ի ժամանակի ձգանցն, յորժամ աստուածասաստ բարկութիւնն եկեալ կայր ի վերայ, մինչդեռ ատեանն էր և չև ևս էր վճիռ դատաստանին տուեալ, յառաջ քան զդահճայն մատանել. միթէ կարիցե՞ն յետ վճռին տալոյ՝ այլազգ ինչ զօրէն դատաստանին շրջել. և ոչ լսիցես նմին իսկ Աբրահամու, զի մինչդեռ դատաւորն կայր և խօսէր՝ նա ժառեր և պաղատանս մատուցանէր, իսկ յետ լինջուցանելոյ զթիւն արդարոյն մինչև ցտասն, Միթէ կորուսանիցե՞ս, ասէ, զարդարն ընդ ամբարիշտսն. զայն միայն ասաց և լռեաց. նոյնպէս և անդ է ասել եթէ յետ վճիռն տալոյ և գնալոյ՝ լսել պարտ է. զուր այնուհետև ջանայ ոք. մինչ փութալն էր՝ չփութայիր, և արդ զինչ օգուտ է փութալդ. ինքնին Քրիստոս աղաչէ և չլսեսցես. և զի աղաչէ Քրիստոս, եկեսցե՞ Պաւղոս և ասասցէ, եթէ վասն Քրիստոսի բարեխօսեմք, իբրև թէ Աստուած իսկ աղաչիցէ մեզ. Աղաչեմք վասն Քրիստոսի, հաշտեցարուք ընդ Աստուծոյ. զիրդին իմ, ասէ, հաշտեցո՛ ընդ քեզ, որ ոչն ինչ մեղաւ ումեք, այլ և զմեզս ևս բազմոց ջընջեաց. եթէ զնա հաշտեցուցանես՝ և ես հաշտ եմ: եթէ նորա աղաչանացն ոչ լսես, զիս ՚ի զուր է աղաչել: Եւ թէպէտ և ոչ հաշտեցուցեր զփրկիչն և զաղատիչն, սակայն կամ մնամ, տևեմ և բաւեմ, և աղաչեմ և ոչ կամիմ դառնալ, և ոչ յանձին ունել զաղաչանսն. և ապա զնաքո կարիցես կարդալաւ իս, յորժամ պատժիցեմն և տանջիցեմն. քան այժմդ յաղերս անկեալ աղաչես, յայնժամ արժան էր քեզ՝ մինչ կոչէին՝ լսել և անսալ. և արդ ներելի քեզ և ողորմի և հաշտի և դառնայի առ քեզ. և անձամբ անձին աբարեր քեզ զհաշտութիւնն դատախազ:

« Ա.հա աւասիկ օր Տեառն գալոց է անբժշկական. լի բարկութեամբ, սրտմտութեամբ, առնել զտիեզերս յանապատ »: Օր Տեառն կոչէ զօրն, զի ամենայն բեբանք անամօթք կարկելոց են. յայնժամ իմանան ամենեքեան՝ որ այժմ ապստամբք են, եթէ ամենայն ինչ յԱստուծոյ է, յորժամ զպատիժս պահանջիցեն, յորժամ առաջին կացցեն և դողայցեն, յորժամ որ աստ արհամարհեալքն էին՝ քան զձառագայթս արեգականն ևս աւելի պայծառագոյն զգենուցուն զլուսաւորութիւնն, և ամբարտաւանք՝ որ աստ յայտնիք և երևելիք էին, գլխիվայր, գլխարկեալ տապալեալ ձգիցին ՚ի տանջանսն: Օր Տեառն յայնժամ, յորժամ ամենեքեան՝ ըստ իւրաքանչիւր գործոցն ընդունիցին զհատուցումն: Եւ զի ոչ միայն սրտմտութեան բարկութեան է, այլ և պարգևաց և պատուոյ, ընդէ՞ր, ասեն, ՚ի չար անուանէն կոչի և ոչ՚ի բարւոյ. վասն քո և վասն քոյոյ ծուլութեան, զի գոնեա այնպէս զարթուսցէ: Եւ այլազգ ևս, զի թէ պարգևաց է՝ ամենեքին գիտեն, և թէ պատժոյ ևս իցէ՝ այմ՛ չեն տեղեակ. և այնմ հաւատան և այսմ ոչ հաւատան:

« Դնել զտիեզերս ամենայն յանապատ »: Եւ վասն էր ասաց, եթէ զամենայն տիեզերս. լուր և գլաջորդն. « Եւ զմեղաւորս կորուսանել ՚ի նմանէ ». յորժամ զմեղաւորսն գեհենն և զարդարսն արքայութիւնն ընդունիցի, բարւոք ասաց եթէ զտիեզերս՝ ուր մեղքն գործին. յայնժամ քաղաքք և տունք և ամենայն ինչ շինութեալ ելծանիցին և կարգք աշխարհիս, և գարձեալ վերստին նորոգիցին. թէպէտ և տունք չհաւատան: Բարւոք ասաց, թէ կորուսանել ՚ի նմանէ. քանզի ոչ եթէ կորստեամբ կորնչիցին, այլ ՚ի հուբ

մանեալ՝ տայցեն զտուկոսիս ընդ իւրաքանչիւր գոր-
ծոց։

« Զի աստեղք երկնից՝ Հայկիւն հանդերձ և ամե-
նայն զարդուն երկնից՝ լոյս մի տայցեն ». քանզի ոմ
առնիցեն լոյս, յորժամ արեգական արդարութեան
յայտնիցի. զի որպէս յերևել արեգականա՝ ամենայն
լուսաւորք ՚ի խաւար դառնան, սոյնպէս և յերևել
արեգականն արդարութեան, այլ ինչ այնուհետև լու-
սաւոր ոչ երևի։ «Հրաման տաց ամենայն տիեզերաց ՚ի
չարիս»։ Տե՛ս զվճիռն, որպիսի՛ չարիս ամենայն տիե-
զերաց բարբառի։ « Եւ ամբարշտաց՝ զմեղս իւրեանց.
կորուսից զթշնամանանն անօրինաց, և զբարձրութիւնս
ամբարտաւանից խոնարհեցուցից »։ Եւ վասն ի՛ր ար-
դեւք զամենայն կերպարանս չարեաց թողեալ, և զայս
միայն ՚ի ձեռն առեալ. զի զառաւելութիւնն յուցցէ,
զարմատ չարեաց, զաղբիւրն ամենայն յոռութեանց,
որով սկիզբն և կատարած կորստեանն աշխարհի եղև,
որ և սկիզբն չարեաց, որ զդևն ընկէց ՚ի վայր, և զայս
ընդ նմին պառակտեաց։ Վասն այսորիկ և զայսպիսի
անհնարին ցաւս բժշկեայէ Աստուած, ամենևիմբ զա-
մենայն իրս խոնարհութեամբ մնատակարարեաց, և
զծնունդն և զընտրհն, և զաշխարհի շրջեալն և զկոչումն
առաքելոցն և զկոչմն՝ յորմէ ծնաւ և զընկալուչն՝ որում
զկոչմն էր խօսեալ, զի հիւանդական արուեստին էր ա-
րուեստագէտ, և տեղի ևս չունէին ինքեանի, և այն-
պէս ևս չքաւորք՝ զի և յորոցս անգամ ոչ եդաւ, այլ
իբրև զմի ոք յաղքատաց որդւոց՝ ՚ի մնուրն, յանաս-
նականն սեղան։ Նա և յորժամ ՚ի ջուխս իսկ եկեալ
հասեալ էր ըստ մարմնաւորութեան, Այլ կանայք,
ասէ, կերակրեսին զնա յընչից իւրեանց. ինքն իսկ ա-
սէր, եթէ Որդի մարդոյ ոչ ունի տեղի՝ ուր դիցէ ըզ-
գլուխ իւր։ Առաքեալս նոյնպիսիս կոչեաց, կրօնս խո-
նարհագոյնս եդ, յամենայն կողմանց ամրացուցանել
զնահարհութիւնն, և զամբարտաւանութիւնն իբրև
զգազան մի չար՝ հալածէր. և այսպէս և ՚ի սեղա-
նոյն և ՚ի մահճակ և ՚ի գնացից և ՚ի հանդերձից
և ՚ի խրատ տալոց և ՚ի խաչէն չարչարանաց և
յայլ ևս բազում իրաց ոչ այլ ինչ ուսուցանէ մեզ
Աստուածոյ տեսութիւնն, բայց միայն զնահարհու-

թիւն։ Լուաց զոտս մատնչին, և այն իսկ քան զա-
մենայն ինչ զարմանալի էր։ Տեսանե՛ս, որպիսի՛ հե-
զութիւն եցոյց. ա՛ռ ապտակ ՚ի ծնօտ ՚ի ստրկէն, և
համբեր առաքինութեամբ. անարգի, անգոսնի յա-
մենեցունց ՚ի քնէ միևչև ցայժմ, և զամենայն ինչ
ասէր և արդեամբք կատարէր [1] ՚ի փրկութիւն այնոցիկ՝
որ անգոսնեն և արհամարհեն։

« Եւ եղիցի որ ինձացեալն լցեն՝ իբրև զայծեամն
փախուցեալ, և իբրև զոչխար մոլորեալ, և ոչ ոք լցէ՝
որ ժողովիցէ, իբրև զմարդ մի ՚ի ժողովուրդն իւր դառ-
նալ, և յերկիրն՝ ուստի ելեալ լցէ՝ փախստեայ ան-
կանել »։ Ոչ միայն զդառութեանցն ևէթ բարբառի,
այլ ցուցանէ՝ եթէ և առաքինութեանցն ժրչափ ինչ
նահատակութիւնք են։ « Եւ եղիցին ինձացեալքն
պատուականք առաւել քան զոսկի անհուր, և մարդն
առաւել պատուական եղիցի քան զկանս պատուա-
կանս Սոփորեայ »։ Տեսանե՛ս զգեղ առաքինութեանցն,
տեսանե՛ս զպայծառութիւնն։

« Զի երկինք շարժեսցին և երկիր սասանեսցի ՚ի
հիմանէ իւրմէ, վասն բարկութեան սրտմտութեան
Տեառն »։ Դարձեալ ՚ի տրտմականն շրջէ զբանն, և
անդ իմն յաձախագոյնս յամէ. քանզի այն իմն աւելի
զգաստացուցանէ և առնէ պիտանիս։ « Երկինք, ասէ,
շարժեսցին ». զի եթէ Զօրութիւնք երկնից շարժես-
ցին, ժրչափ ևս առաւել երկինք. զի և ՚ի նմանէ՝ որ
այնչափ ժամանակս դարմանեցան, լինիցին պատճառք
յաւիտենից տանջանացն, աւատութիւն բարութեանց
երկնից, որ հանապազ կերակրէր զնոսա։ Մի՛ այնպէս
կարծիցես զգալուստն՝ որպէս զառաջինն, զի առանց
ոտնաձայն իմն առնելոց եկն. զի յայնժամ զմեղս եկն
բառնալ, և այժմ զարդարութեան վրէժ խնդրել.
յայնժամ՝ ՚ի բժշկաց կարգի, և այժմ՝ ՚ի դատաւորի
կերպարանս. յայնժամ զորթն տնկեաց, և այժմ զպը-
տուղն պահանջէ. վասն այնորիկ զամենայն գայ դղրդ-
ել, զի ուսանիցիս զնորին առաւելութիւնն, և ՚ի միտ
առցես՝ թէ և յայնժամ այնպէս կարեր գալ. զի եթէ
ի ձեռին նորա են ամենայն ծագք երկրի, և Հայր

1 Ցօր. Աե՛ս ՚ս արդեամբ խրատուէր։

յերկիր և տայ դողալ նմա, ընդ այն ոչ՛ զարմանասցի՛ եթէ՛ ի գալստեան նորա դղրդէ զամենայն։

« Վասն սրտմտութեան բարկութեան Տեառն զօրութեանց ». քանզի և ոգիքն զգայցեն բարկութեանն Տեառն։ « Եւ եղիցին որ մնացեալ իցեն՝ իբրև զայծեամն փախուցեալ ». որք յարդարոցն քակիցին, ոչ ուրեք գտանիցեն պատսպարան ինչ և մխիթարութիւն։ « Եւ իբրև զոչխարս մոլորեալս ». յիրաւի խակ, քանզի զհովիւն[1] ոչ ճանեան։ « Եւ ոչ ոք իցէ՝ որ ժողովիցէ ». և զիաւրդ ժողովիցեն, զի Աստուած է որ ցբուէն։ Եւ յայսմ վայրէ անդրէն՛ ի տեղիսն շրջէ զբանն. « Ահաւասիկ, ասէ, ես յարուցանեմ՛ ի վերայ ձեր զՄարս՝ որ ոչինչ համարիցին զարծաթ և զոսկի. զաղեղունս խորտակեսցեն զարանց երիտասարդաց»։ Սիմաքոս ասէ. Աղեղամբք՝ զերիտասարդս խորտակեսցեն։ « Եւ մանկտւոյ ձերոյմ մի ողորմեսցին »։ Այնհնարին չարիք են՝ յորժամ թողութեան բանք ինչ ոչ երևեսցին. և տես, սոցա որպիսի՛ ինչ բարութիւնք, և նոցա որպիսի՛ չարիք, և զփոփոխումն մեծասքանչ։

« Եւ եղիցի, ասէ, Բաբելոնի՝ որ փառաւորդ կոչեցեալ է՛ ի թագաւորաց Քաղդէացւոց, զոր օրինակ կործանեաց Աստուած զերկիրն Սոդոմայեցւոց և Գոմորացւոց, և այլ ոչ ևս բնակեսցի մինչև յաւիտեանս յաւիտենից։ Եւ հանդիցեն անդ գաղանք, և լցցին տունք նոցա վայիւ և աղաղակաւ. անդ հանդիցեն հաճբարուք և անդ դևք կաքաւեսցին, և անդ յուշկապարիկք կապարիկք բնակեսցեն, և ոչնիւք ձագս հանցեն յապարանս նոցա »։ Համբարուք կամ յուշկապարիկք՝ ոչ եթէ անձն ինչ ուսնիցին և բնակեսցեն՛ ի Բաբելոնի, այլ՛ի մարգկան սովորութենէ, որ ինչ՛ի միջն նոցա համբաւք պաշտիցին՛ ի նշանակ աւերածոյ և թափուր լինելոյ քաղաքաց՛ ի բնակչաց՝ առնուն գիրք և պատուեն զամենայն ինչ՝ որ նոցա ընտանի իցէ. ոչ՛ի հաստատութիւն թէ արդարև այն այնպէս ինչ է, այլ որում իմիք նոքա ընդել իցեն՝ առեալ զնորին երեսս, այնու խօսիցին ընդ նոսա գիրք։ Իսկ այլք՝ փոխանակ համբարուց՝ զայլամունս ասեն։ Ակիւլաս ասէ.

1 Յօր. Քան գնովն։

Դևք թաւք և հերաւորք. Սիմաքոս և Թէոդոտիոնէն, Դևք խոզանեալք և աշտանակամազք և յուշկապարիկք։ « Եւ միմեանց ձայն տայցեն յիդիմ[1] »։ Սիմաքոս ասէ. Քրարքուս. Թէոդոտիոնէն՝ Եւբարբաւկիիմ. Եբրայեցին՝ Իւանիիմ։

ԳԼՈՒԽ ԺԴ

« Վաղվաղակի հասեալ և գայ, և աւուրք հատուցմանն նորա ոչ յերկարեսցին ». զի առին զԹագաւորութիւնն Բաբելացւոց՝ Մարք և Պարթևք։ « Եւ ողորմեսցի Տէր՛ ի վերայ Յակովբայ, և ընտրեսցէ նա զԻսրայէլ ». ի կատարել եօթանասնամին՝ որ յԱստուծոյ նշանակեալ էր վերութեան ժողովրդեանն, լինէր նոցա դարձ յերկրէն Բաբելացւոց։ « Եւ յաւելցի ընդոծինն, և բազմասցի տունն Յակոբայ, զի ոչ ոք իցէ՝ որ լսիցէ, և խախտիցէ զնոսա յերկրէն Տեառն։ Ընկալցին զնոսա հեթանոսք, և հանդերձեսցեն ածցեն զնոսա՛ ի տեղիս իւրեանց »։ Կիւրոս թագաւոր յորժամ ետ հրաման ազգաց և լեզուաց ժողովել և տանել զնոսա մեծարանօք յերկիրն Իսրայելացւոց, և բաժանեցին զնոսա որդիքն Իսրայելի՛ ի վերայ երկրին Աստուծոյ՛ ի ճառայս և յաղախնայս. զի ոչ միայն այնպիսի փոյթ արկ՛ ի սիրտ թշնամեացն՝ զի ժողովեսցեն և ածցեն ևւեթ զնոսա, այլ զի՛ ի համբաւ աստ-

1 Յօրինակին եգեալ կայր աստանօր բնաբանս այս, առանց նշանոյ ինչ զանազանելոյ թէ արդեօք բանք Մարգարէին իցեն եթէ յաջորդութիւն բանիցն Թէոդոտիոնէի. մեք զառաջինն կարծիմն ընտրելով եդաք զայն՛ ի մէջ չակերտից քան օրինակի այլոց բանից Մարգարէին. քանզի թէպէտ և չիք՛ ի Թարգմանութեան եօթանասնից, որով և՛ ի Թարգմանութեան հայկականին. սակայն գտանի յերբայեցին և՛ ի վուլկատային Հերոնիմեայ. զի վերջինս ունի այսպէս. « Et respondebunt ibi ululæ », այսինքն « Եւ ձայն տայցեն անդ բուհնձակք »։ Իսկ եբրայեցին գնէ. אניות בארמנתיו ילענו אין. այսինքն « կարդայցեն բուհնձակք ». Թերևս զերկոսին բառքս՛ ի միասին խառնելով եդեալ է ասա Թէրի եղանակաւ եբրայեցերէնն՝ Իւանիմ։ Իսկ էդիմդ Թուի լինել եբրայական բառն איי אין, որ է բուհնձակ կամ կասկամ։ Իսկ ընդհանրութիւն Քրարթոս և Ե-բրբաւկիիմ բառին չկարացաք ստուգաբանել, չունելով՛ ի ձեռն զպատառիկս հատուածոց Թարգմանութեանն Սիմաքոսի և Թէոդոտիոնէի։

տուածպաշտութեան՝ բազում յառակացն և զանձինս և՛ ի ծառայութիւն յօժարեցին գրել. որպէս և Յեգիպտոսէ, զի ելանէին ընդ ժողովրդեանն Աստուծոյ բազում խառնիճաղանճ. և անդ կատարէր, եթէ եղիցին գերեալքն՝ գերեվարք նոցա, և արկցեն՝ի ծառայութիւն զայնոսիկ՝ որ տիրեցին՝ի վերայ նոցա:

«Եւ եղիցի յաւուրը յայնմիկ, յորում հանգուսցէ տէր՝ի ցաւոց, առնուցուս զողբս զայս՝ի վերայ Թագաւորին Բաբելացւոց. զիաթրդ դադարեալ կայ պահանջողն»: Եւ այն են զարմանք և սքանչելիք, զի զբան՝ հանգիստ կոչէ. զոր Ակիւղաս լուսաւորագոյնս ցուցանէ, թէ զիաթրդ նուաղեսցին գժոխք՝ի գործոց, տեսեալ զչարութիւնն նորա: «Դառնացան՝ի պատահելն քեզ». այսինքն՝ բարկացան. զոր Ակիւղաս ասէ, եթէ ի նեղբուստ մեղկացան. Սիմաքոս՝ թէ Ցարժեցան. Թէոդոտիոնն՝ թէ Բարկացան, և նորա թշնամին և մահու [1]: «Խորտակեաց Տէր զլուծն մեղաւորաց և զլուծն իշխանաց. եհար զհեթանոսս անբժշկական սրտմտութեամբ. աներնեքեան պատասխանի տայցեն և ասացեն. Եւ դու՝ի պարտութիւն մատնեցար իբրև զմեզ, և ընդ մեզ համարեցար»: Տէս, զի շարժեին և դղրդեին և խռովեին, և յայտ առնէին, թէ Աստուծոյ պատիժք են և Աստուածոյ գործ՝ որում ոչ ակն ունէին, և ոչ յոյս ինչ կայր այսպիսի իրաց. և յիրաւի ասացաւ, եթէ «Զիաթրդ անկաւ յերկինից արուսեակն՝ որ ընդ առաւօտս ծագէր»: Ակիւղաս ասէ. Զիաթրդ անկաւ յերկինից ողբալով, որդիդ առաւօտու: Եւ ոմանց այսպէս կարծի, եթէ վասն ընդդիմակաց զօրութեանցն ասացեալ լիցի բանս. քանզի և Քրիստոս իսկ ասէ, թէ Տեսանէի զսատանայ իբրև զփայլակն՝ զի անկանէր յերկինից: Եւ մի ինչ զզպարտեսցուք զպատմութիւնս. զի թէպէտ և այլ ինչ միտս ունիցի բանս, սակայն և զայս ընկալցուք, զի և առ այժմ և այս պիտանացու է. և արդարև հնարաւոր եթէ զիաթրդ անմարմնական զօրութիւնն է, և անկաւ յերկինից՝ որ ընդ առաւօտան ծագէր, և առաքէր առ ամենայն հեթանոսս: Տեսանէ՞ս, երբ յիշեցուցանէ նմա զամբարտա-

1 Ակիւղաս յօրինակին:

ւանութիւնն: Սերմն չար, զոր իսկզբանէ սերմանեաց սատանայ, տէս, զիաթրդ բուսաւ և աճեաց. յորժամ կշռեացես ընդ կեանս երկրի՝ զչարիսն, ապա տայ քեզ իրաւունս Աստուած մարգարէիւն. զի եթէ ընդ այսչափ կարեօք կայ և ընդ պէսպէս փոփոխմամբք, և ոչ ինչ կարաց կարձել՝ի չանգստութենէ, զի մի ժտեսցի ելանել՝ի բարձրութիւն, քանզի ոչ ինչ սակաւ կարծեաց անմահութեան և հանգստեան հասանել Ադամ՝ այլ և զուգական Աստուծոյ կամեցաւ լինել. և արդ զիաթրդ ոչ՝ որք պատժեցանն՝ի սատանայէ՝ ուսուցին քեզ զմարդկեղէն բնութիւնդ: Նաև վասն Ծուրացոյ Թագաւորին ասէ, եթէ Դու ասէիր Աստուած եմ և ոչ եմ մարդ. և Սօրբեստանեայցն ասէր, եթէ Ըմբռնեցից զտիեզերս՝ իբրև զբոյն մի, և իբրև զձուս ձեռացեալ՝ բարձից: Այսպիսի զգուշութիւն էր, զի մի՝ անցանիցես ըստ սահմանն՝ որ եդաւ քեզ, և անցանես. եթէ արձակ թողեալ էր զքեզ, զիաթրդ ոչ ևս մեծամեծս քան զառաջինն գործս գործէիր: Ոյք զաշտարակն շինէին՝ յայսպիսի ամբարտաւանութեան միտս էին, և՛ի հեթանոսս սոյնս էր լեալ, և ամբարձտութենէն կերպարանք այսպիսի իրօք երևէին. և Աստուած միշտ հնարի՝ զի զցանկութիւն ինչասիրութեանն բարձցէ, զի մի՛ և ցանկանայցէ ոք և ըղձանայցէ աւելի ինչ քան զչափն:

«Այս այն այր է՝ որ զայրացուցանէր զերկիր ամենայն, և շարժէր զթագաւորս, որ առնէր զամենայն տիեզերս աւերակ»: Զինչ խօսիս, ողբաս և ամբաստան լինիս. այսպիսի ինչ են ողբք. ամբաստանութիւն չարեաց, իրաւունս ցուցանել Աստուծոյ վասն իւր՝ թէ յիրաւի ած՝ի վերայ նորա պատիժս. զի նա՝ զորս՝ի գերութեանն էին՝ ոչ արձակեաց: Տեսանե՞ս, զի խրատութիւն նորա եղև Աստուծոյ զօրութեանն, որ՝ի նա սաստկացաւ՝ պատճառաք, մահն նորա չարաչար: «Սիդդու անկցիս՝ի վերայ լերանց իբրև զմեռեալ գարշելի»: Տեսանե՞ս, զի և այս ոչ վայրապար ինչ եղև, այլ վասն իւրոց չարեացն. վասն այնորիկ յառաջագոյն ասէ, զի մի կարծիցես թէ ինքնեկ իցեն տանջանքն. ոչ ըզվախճան միայն ասէ, այլ զի և այլազգ ինն անհնարին մահու վախճանեսցի: «Այնոցիկ թագաւորքն հե-

Թանոսաց հնչեցին պատուով, դու անկանիցիս ՚ի վերայ լերանց իբրև զմեռեալ գաղջելի ». զի այլքն պատուով հնչեցին, և դու ՚ի պատիժս և ՚ի տանջանս:

« Որպէս ձորձք ինչ արեամբ Թաթաւեալ՝ որ ոչ իցեն սուրբ, նոյնպէս և դու ոչ սրբեսցիս, փոխանակ զի ասլականեցեր զերկիր իմ, և զժողովուրդն իմ կոտորեցեր. մի՛ ճնասցես յաւիտեանս ժամանակաց: Զոր օրինակ խօսեցայ՝ այնպէս լինի, և որպէս խորհեալ եմ՝ այնպէս կայցէ յաւիտեան. կորուսանել զԱսորեստանեայս յերկրին իմմէ և ՚ի վերայ լերանց իմոց »: Ցետ սանիկ, ուստի՛ են պատիժք նորա. նա աւանիկ դու իսկ հրամայեցեր, և ՚ի վեր և ՚ի խոնարհ զայդ ասես, եթէ Աֆից զԹագաւորն Բաբելացւոց, և չիցէ ոք՝ որ հանդարտել կարիցէ նմա. և աստ ամենևին լիմն հաւկառակ այնր տաս զՀրամանն: « Սերմն չար, պատրաստեա զօրդիս քո ՚ի սպանուածն »: Եւ ընդդէմ արդեւք. ոչ ապաքէն դու ետուր նմա իշխանութիւն երկրի: Եւ դարձեալ. « Զի մի՛ յառնիցեն և ժառանգիցեն զերկիր և լնուցուն զերկիր պատերազմաւ ». և արդ վասն հանդերձելոց ինչ իրաց կրեն զպատիժս՝ զոր ոչ երբեք գործեցին: «Վասն մեղաց, ասէ, հօր քո »: Եւ այս զի՛ արդ ՚ի գէպ ինչ իցէ. այլ քանզի և նոքա անողորմք հարանցն լինէին, յառաջագոյն բառնայ զնոսա, զի մի՛ այսպիսի ինչ գործ գործիցեն, զի պատերազմասերք, հեռասէրք և կռուողք էին: Իսկ ո՛վ իցէ՝ զորմէ ասէն՝ Թէ « Սերմն չար ». զի զնաբուգոդոնոսորայ չէ ինչ մարթ ասել, քանզի որդի իւր աւ ՚ի նմանէ զթագաւորութիւնն և բարւոք մահու վախճանեցաւ. իսկ զԲաղտասարայ արդեւք իսկ ակնարկիցէ, որ որդւովքն հանդերձ սպանաւ: Եւ ընդդէմ արդեւք ասէ, եթէ Զերկիրն իմ կորուսեր և զժողովուրդն իմ կոտորեցեր, և զայն Նաբուգոդոնոսորայ էր արարեալ և ոչ Բաղտասարայ. իսկ զԱսորեստանեայն իսկ ասիցէ՝ որ ծանրատաղտուկ բեռն էին Հրէից. այլ զայս ասասցուք, Թէ որ՚ի սուրբ սպասն ոչ իմայեաց, այլ անառակ արբեցութեամբքն պղծեաց, զի՛արդ այլ ումեք խնայէր. վասն այսորիկ մատուցեալ յառաջագոյն ասէ, եթէ Ծանրացուցեր ՚ի վերայ նոցա զլուծն, և փոխանակ զի ես մատնեցի զնոսա ՚ի սակաւ ինչ, դու մատնեցեր զնոսա ՚ի չար

խիստ, և ոչ արարեր ՚ի վերայ նոցա ողորմութիւն և ոչ իւիք: Իսկ Հայրն նոցա այսպիսի իրաց գործս ցուցանէր, զի Դանիէլն երկիր եպաց, և ետ հրաման՝ եթէ ոք բանս հայհոյութեան խօսեսցի զԱստուածոյ Սեդրագայ, Մեսաքայ և Աբեթնագոյի, ՚ի կորուստ մատնեսցի և տուն նորա աւար հարցի:

« Այսպէս ասէ Տէր զօրութեանց. Եւ եդից զքաբեելն աւերակ, զի բնակեսցեն ՚ի նմա իժք » . իսկ այլքն ասեն՝ եթէ ի ժառանգութիւն իժից. Եբրայեցին ասէ Իկիփոմի [1]: « Եւ եղիցի իբրև զչինչ, և ապարիցէ զնա խորխորատ տղմի ՚ի կորուստ »: Քան պատերազմողացն մատնել, զի բնակիչքն ոչ գտանիցին՝ այն է անհնարին չար, երկիր՝ որ ինքնին գործիցէ, և յայտ առնիցէ զայսպիսի չարիս՝ որ մեղան նմա: « Այսպէս ասէ Տէր. զօր օրինակ խօսեցայ՝ այնպէս լինի. որպէս խորհեալ եմ՝ այն կայ յաւիտեան. կորուսանել զԱսորեստանեայն յերկրէն իմմէ և ՚ի վերայ լերանց իմոց »: Կամ զԲաբելացիսն ասէ, կամ ևս նմանագոյն. զի Բաբելոնն՝ ընդ Ասորեստանեաքն էր, բայց զԱսորեստանեայսն՝ Բաբելացիքն առին, և ոչ եթէ Մարք: Իսկ աստ ասէ, եթէ Յարուցից ՚ի վերայ ձեր զՄարս. կամ Թերևս զԱսորեստանեայց Թագաւորութիւնն Բաբելացիքն առին, ոչ պատերազմաւ, այլ տէրութեան օրինօք, և ապա կոտորեցին զնոսա Մարք. զի զայն՝ եթէ յարուցից, մի երբեք զԲաբելացւոցն կարծիցես, որպէս ոչ զԱսորեստանեայն:

« Տեսիլ Փղշտացւոցն: Յամին յորում մեռաւ Ագաք արքայ, եղև պատգամ այս ՚ի վերայ Փղշտացւոց: Մի՛ խնդայք և մի՛ ուրախ լինիք, ամենայն այլազգիք. զի խորտակեցաւ լուծն հարկանողացն ձերոց ». իսկ այլքն՝ բեկումն ասեն, քանզի բեկաւ իսկ. Ակիւլաս՝ Գաւազան իշխանութեան պահանջողացն. և Սիմմաքոս և Թէոդոտիոն՝ Զվարոց տանջման, ասեն, փոխանակ ընդ լծոյ հարկանողացն ձերոց: « Զի՛ ՚ի զաւակէ օձից՝ ելցեն քարբք, և ՚ի նոցա ծննդոց՝ օձք թեւաւորք ». իսկ այլքն՝ բասիլիսկոս ասեն, որ Հայերէն միայն՝ սատակէ: Այսու ուսանիմք փոփոխմունս իրաց, որ

1 Յերրայական բնագրին գիր ՀԲՔ ԱՒՒՈ, որ է ՒՔ:

ոչ ըստ մարդկան, այլ ըստ Աստուծոյ կամացն. զի որ փոխէն զժամն և զժամանակս, նոյն է՝ որ կացուցա-
նէն և փոխիսկ զթագաւորս: Յորժամ տեսանիցես իշխան յանդուգն և անողորմ, մարդաչախոյժ՝ թագա-
ւորել մի այնպէս աղօթս առնիցես, զի նա՝ ի միջոյ բարձցի, այլ զԱստուած ընդ քեզ հաշտ առնիջիր, որ և զխստութիւնն նորա կարէ կակղացուցանել. և եթէ զԱստուած ընդ քեզ հաշտ ոչ առնիցես, կարդ է և այլ խիստ իշխանս յարուցանել: Եւ արդ մի՛ ի մարդիկ ապաստան լինիցիմք, այլ՝ ի վերին իշխանութիւնն, ուստի և իշխանացն իշխանութիւնք կարգին. իբրև զհոսանս ջրոյ՝ այնպէս են սիրտք թագաւորաց՝ ի ձեռս Տեառն, և յոր կողմն և կամի՝ դարձուցանէ զնոսա: Եւ արդ մի՛ ի սրտին երկնչիցիս, այլ՝ ի ձեռանէն՝ որ զսիրտն ունի. զի ուր Աստուած հաշտ իցէ, և՝ ի հրոյ մէջ ցօղ լինի. իսկ եթէ Աստուած կագիցէ, և՝ ի փափկութիւնս՝ մարտ և պատերազմ: Ո՞չ ապաքէն Բաբե-
լացիքն արտաքոյ հնոցին էին, այլ այրեցան, կիզան, քանզի զԱստուած Թշնամի ունէին. ոչ ապաքէն երեք մանկունքն՝ ի մէջ հնոցին բորբոքելոյ ընկեցան, և ոչ ինչ վնասեցան. քանզի Աստուած հաշտ էր ընդ նոսա: Որպէս զի Թէ Աստուած դժկամակ ընդ ումեք իցէ, բարի ինչ երբեք նմա ոչ լինի. և յորժամ հաշտ իցէ, չար ինչ երբեք նմա ոչ պատահէ: Եւ արդ զի պատա-
տիցիս զերկայն Ճանապարհաւ, և առ լիմ բիւր հնարս հնարիցիս, այսր անդր ընթանալ, զսա աղաչել, նմա կաշառս խոստանալ, զայլս բարեխօս առնել. ուր պարտ և պատշաճ է՝ ի մի և՝ ի կարճ Ճանապարհն ե-
լանել, զի զՏէր ընդ քեզ հաշտ առնիցես. իսկ եթէ նա չկամ հաշտ, այլն ամենայն՝ ի զուր վաստակք են. և նա չկամ հաշտ, այլն ամենայն՝ ի զուր վաստակք են. և եթէ նա ողորմութեան ակամբ նայիցի, և Թշնամիքն՝ բարեկամք լինիցին. Եւ գազանք անապատի, ասէ, հաշտիցեն ընդ քեզ: Այնպէս և զԴանիէլն զինեան կարէր Աստուած խափանել. որ զանյագ բերանս առիւծուցն սանձեաց և զարիւնարբու զկեղծան կար-
Ճեաց, կարող էր խնուլ և զբերանս չարախօսացն, և դարձուցանել զչար միտն՝ ի բարի խորհուրդս, զի քնաւ և՝ ի միտս մի՛ անկանիցի նենգել նոցա զսուրբն. այլ ոչնահանձեցաւ ընդ պսակս նորա. զի ոչ այնպէս

լինէր լուսաւոր և երևելի, և ոչ այնպէս նորա գործն՝ որ ունէր ընդ Աստուած՝ երևէր, և ոչ Աստուծոյ սէրն առ նա, եթէ չէր թոյլ տուեալ՝ ի Ճգունս և՝ ի փոր-
ձանս մտանել: Սիրէ Տէր զարդարս և կամի յայտ առ-
նել զնոսա ամենեցուն. զի այնպիսի իսկ սովորութիւն է սիրելեաց առ սիրելիս՝ զի ոչ ունին ժոյժ թագուցա-
նել զսէրն, այլ զի զբազումս առնիցեն վկայս սուրբ և սերտ սիրոյն. որպէս և ոք զարդու իւիք՝ այնպէս Աս-
տուած զարդարի, որ անկարօտականն է, սիրով սըր-
բոյն. և զի սիրի և զի սիրէ զնոսա, ամենեցուն յայտ կամի առնել: Եւ լաւ իսկ, զիարդ սիրեր զՅովբ, և ոչ ոք գիտէր. և արդ զինչ առնիցէ. յայտնէ սատանայի զսէրն, զի՝ ի սիրոյ անտի՝ յայտնի լինիցի գովութիւն նորա: Եւ տէս, զիարդ ստէպ գովէ. Հայեցար, ասէ, մեօք քովք՝ ի ծառայն իմ Յոբ, զի չկայ նման նմին յեր-
կրի: Սիրոյ են քանք, այլ ոչ այնպիսի ինչ՝ որպէս մեր քանքն իցեն. զի մեք իբրև պաշտօն ինչ առնելով գո-
վեմք, իսկ նա ոչ այսպէս: Ոչ միայն ասէ Աստուած՝ Թէ վասն զի սիրեմ զնա, կամիմ ցուցանել ձեզ և յայ-
գեղել այլ ածխ կացոյց շուրջ՝ ի հանդիսի զաշխարհս ա-
մենայն, և արձակեաց զնահատակն, և ինքն եթող զնա՝ ի կռուին և գնաց: Եւ զի մի՛ ոք ասիցէ եթէ նորա է յաղթութիւնն ամենայն, ՝ի բացեայ կայր և ուշ ունէր մրցելոյն և գուպարելոյն: Թէպէտ և մար-
զիչ՝ նահատակաց մեծ կայցէ՝ ի կռուին, և ոչ ոք ար-
գելուցու զնա, այլ զի և պայծառագոյն յաղթու-
թիւնն երևեսցի, ոչ մեծ կայր և ոչ հրամայէր Թէ այսպէս կամ այնպէս պարտ իցէ կռուել, այլ մերկ կո-
ղսղուտ արձակեաց զնա՝ ի մարտն: Դու, ասէ, տա-
րապարտուց կարծեցեր կորուսանել զինչս նորա, այլ ես և զմարմինն ևս տաց՝ ի ձեռս, և ոչ կարասցես գա-
մագիտ լինել: Կամի Աստուած ցուցանել ամենեցուն Թէ ուրպէս սիրէր զնա. յայտնէ Աստուած զսէրն վասն մեր, զի ինքն հեռի է յամենայն ինաստակար կարեաց. քանզի մեք՝ ի բազմաց խնդրեմք զփառս, վասն այնո-
րիկ կամիմք զքաջութիւնս ինչ յայտ առնել, զի մեզ՝ ի պարծանս լինիցին, իսկ նա և ոչ երբեք, այլ զի զմեզ հեղս և պիտանիս առնիցէ. որպէս և ոք զսիրելի՝ կամի զսէրն սիրելոյ ցուցանել զպատկեր մարմնոյ նկա-

ըլիցէ, զաչս և զունչս և զծնօտս, նոյնպէս և Աստուած կամի ցուցանել եթէ բարւոք սիրէ. և յիրաւի զպատկեր ոգւոյն վասն այնորիկ գրէ նկարէ առնելին զգեղեցիկն, և վկայէ եթէ չէք ոք նման նմա գեղեցիկ: Եւ նախ այն իսկ, զի նա միայն վկայեցաւ ի ժամանակին հաճոյ Աստուծոյ. ապա և զառաքինութիւնսն հանարի կարգ ըստ կարգէ. Ա. յոր մի արդար, ձշմարիտ, աստուածապաշտ, զատեալ և մեկնեալ յամենայն գործոց չարութենէ: Եւ այդ ուստի՞ յայտ իցէ, ասիցէ Թէնաման. բարւոք է, ես տայ առնուլ քեզ զիորձ և զհանդէս նորա. որպէս թէ ասիցէ ոք, թէ գեղեցիկ ի սպիտակին և մանուրսն և ի ծարրէն երևի, թայլ տուր, թողլ առից զպատճառանն ի բաց, և տեսանես՝ արջառ տգեղ են երեսքն՝ որոց ցանկանաս. և նա յուսացեալ՝ ասիցէ հանարձակ, եթէ մատիր, որպէս կամիս, լուա ի բաց, և ևս առաւել գեղեցիկ երևի. նոյնպէս և Աստուած ասէ. մատիր և արկ ի փորձութիւն, և տեսջիր՝ զի ևս պայծառագոյն գտանի: Խօսի աղերսիւ և ընդ սիրելսն. Մի՛ կարծիցես, ասէ, եթէ Թողի ինչ զքեզ ի ձեռաց. ոչ լուծի զսկզբն, ոչ քակեցի զինամանն, այլ առ սէր արարի զայդ, զի յայտ արարից եթէ յիրաւի սիրեմ: Տէ՛ս, և Յովք զինչ ասէրն, եթէ Տէր եմ և Տէր ա՛ռ, և եթէ զբարիսն ընկալաք ի ձեռանէ Տեառն, կարեացս ոչ ժուժայցեմք. քանզի ոչ կամէր եթէ բամբասիցի ինչ սիրելին իւր. որպէս թէ ասիցէ ոք, եթէ զայս ինչ և զայս ինչ անցս անցոյց ընդ քեզ, և նա առ սէրն՝ չառնուցու յանձն զբամբասանսն. Եղիցի, ասէ, անուն Տեառն օրհնեալ: Սիրեմ, ասէ, և չկարեմ զնմանէ չար խօսել. թէպէտ և ասէ ուրեք, եթէ Թշնամանք զսէր ջրեն. իսկ անդ ոչ այսպիսի ինչ իրք կարծեն ստանանել, զի ոչ միայն թշնամանք էին, այլ և տանջանք անհնարինք, և նմա գամագիտ ինչ ոչ լինէին. թէպէտ և ծանրագոյնս ինչ խօսեցաւ, առ աղերս՝ և ոչ ինչ թշնամութեան, առ զայրուցս սաստիկ հարուածոցն: Եւ այս են ծանրագոյնք՝ զոր խօսեցաւ, եթէ Մի՛ ուսուցանէր զնս ամբարշտել. և ընդէր եդիր զնս նպատակ քեզ. զի այս ինչ իրք կարի տրտմեցուցանէին զնա, զի մծատկայքն կարծէին եթէ ոչ նա սիրէր զԱստուած, և ոչ Աստուած զնա: Ես, ասէ, գիտեմ և դու, Տէր, գիտես, այլ զսոսա ոմն հաւանեցուսցէ. այնպէս կարծէին՝ եթէ Աստուծոյ խնամոցն անկեալ մերժեալ ինչ իցէ: Եւ առ Մովսէս դարձեալ այսպիսի բանս խօսէր. Թոյլ տուր, ասէ, վասն քո պատուեմ զնոսա. և զքոյր նորա այսպէս ասէր, եթէ Ոչ ընդ ումեք խօսեցայ՝ որպէս ընդ Մովսիսի. և նա Թողոյր, և Աստուած ոչ Թողոյր. Վասն քո, ասէ, քաւեմ և ոչ վասն նոցա: Տէ՛ս և առ Աբրահամաւ. Ե՛լ, ասէ, յերկրէ քումմէ և յազգէ քումմէ. և Մինչեւ Թագո՞ւստ ինչ իցէ՝ ի ծառայէ իմմէ Աբրահամէ, զոր ինչ գործեցից եմ: Ա. յլ դարձցուք անդրէն՝ ի կարգն՝ որ առաջին կայ:

« Մի՛ խնդայք և մի՛ ուրախ լինիք, ամենայն այլազգիք, զի խորտակեցաւ լուծ հարկանողին ձերոյ. զի՝ ի զաւակէ օձից՝ ելցէն ծնունդք իժից »: Զի Եզեկիա, ասէ, դժնդակագոյն լինիցի ձեզ. և ընդէ՞ր արդեւք ոչ ասաց, եթէ Աստուած տանջելոց է զձեզ. այլ զի անուամբ իժիցն՝ առաւել լիցին քասքնէին: Եւ այս ոչ եթէ զչարութիւնն Եզեկիայի յայտ առնէ՝ իժն կոչելով, այլ զի նոցա ծանրաբեռն ծանրատաղտուկն լինելոց էր: « Եւ բուծցին աղքատք՝ ի ձեռանէ Տեառն, և տկար մարդիկ՝ ի խաղաղութեան բնակեսցեն »: Տեսանե՞ս, զի որում ոչն հաւատային եթէ՝ ի ձեռանէ Տեառն լինիցի, նոյն առ՝ ի Տեառնէ լինելոց էր: Սոյնպիսի ինչ և՝ ի Քրիստոսի գալստեանն եղև. զի նոքա աղքատք բուծանին, տնանկք կերակրին. իսկ մեծատունք՝ ոչ ինչ այնպէս, այլ յիւրեանց ագահութենէ. իսկ աղքատացն՝ Աստուած ինքնին հովութենէ. իսկ ոչ եթէ տեղեակ այնպիսի ինչ սեղանոյ՝ հովիւն քաջ, վուէ, որպէս և ասէ իսկ, եթէ ես եմ հովիւն քաջ, այլ՝ի սուրբ և յիստակ աղբիւրն առաջնորդէ տանի զնաշխինան: Ո՞չ տեսանես զչքնաղս, զի ոչ ինչ ցանկանան այնպէս խորտակաց, այլ զլոկն, զանհանդերձ ձաղակին. նոյնպէս և զքեզ կերակրէ Աստուած: Մինչեւ ո՞չ երբեք կերակրեաց. այլ Թէպէտ և կերակրեաց, այլ աշտուձ հացիւ և ձկամբք. նա և քաղքին այն իսկ էր հանապազորդ ասձի. այլ կերակրեաց երբեմն և մանր, այլ՝ի չար և ոչ՝ի բարի ուտելեացն:

« Եւ տիար մարդիւ՝ ի խաղաղութեան բնակելոց են ». և զմահն չհանգստեան յայտ առնէ. քանզի այլ թարգմանքն ասեն, թէ ի խաղաղութիւն բաղմեսցին. զի ոչ ձայնք և ոչ ողբք և ոչ սուգք լինիցին ի նոսա, և մի այլ ինչ այնպիսի, այլ ի խաղաղութեան. զի ոչ խռովեսցին ինչ և ոչ մարտնչիցին, թէպէտ և սպանանիցին, թէպէտ և գլխատիցին. զի ի խաղաղութեանն հանգչել այն է, յորժամ վասն Աստուծոյ ոք մեռանիցի, այլ պատուով ննջեսցէ ի հանգիստ: Չի այսպիսի ինչ է արդարոց մահն պատուական. ոչ զի ի տան իւրում ոք մեռանիցի, և զի պատուական է այսպիսի մահ, կամ ի մահիճս, և ոչ՝ առ իւր ընտանիս, այլ յորժամ քաջութեամբ և առաքինութեամբ վասն Ճշմարտութեանն մեռանիցի: Եւ զի պատուական է այսպիսի մահ, ամենայն իսկ տիեզերքս վկայեն. զի թէպէտ նշանաւորք ինչ իցեն մահք թագաւորաց և զօրագլխաց, և առ ժամանակ մի անգէն յիւրեանց ընտանեաց մեծարիցին, սակայն ոչ իբրև զձկնօրսաց՝ որ ոչ ըստ բնութեան օրինացն կատարեցան, այլ մեծաւ առաքինութեամբ՝ զկատարեալ յաղթութիւնն, և պատուին յամենայն աշխարհ գերեզմանք նոցա. զի ոմն գլխատեցաւ և ոմն պատառ պատառ կոտորեցաւ, և ոմն քարկոծեցաւ. սակայն յայն սակս պատուին առաւել, զի այնպիսի մահուք կատարեցան, զի փոխանակ խաղաղութեան ամենայն աշխարհի մեռան: Ջոր օրինակ և զօրականք ոք առաքինիք և յետ մահուն պատուին՝ ողք վասն իրաց աշխարհի ձգնեցան և անկան ի պատերազմի, սոյնպէս և առաքեալքն վասն եկեղեցւոյ՝ իւրեանց աշխարհի՝ մեռան, և առնուն զպսակն, և յետ մահուն՝ ևս առաւել պատուին. զի թէ թագաւորն նոցա՝ մահուամբ յաղթեաց մահու, ծրչափ ևս առաւել զօրավարացն պարտ էր նմանել թագաւորին: Եւ արդ, մի ինչ աշխարհսցուք զգլխատեալսն, և մի երանի ինչ տացուք այնպիսեացն՝ որ յիւրեանց տունսն մեռանիցին, զի ոչ այն երանելի ինչ է, և ոչ այս եղկելի. այլ ողք առաքինութեամբ վասն Ճշմարտութեանն մեռանիցին, և պատանս ի զարդ զգարուզք կարգս և վարս ունիցին, որ քան զոսկէհուռ պատմուճանն ևս պատուական է: Չի զայն՝

որ վասն Ճշմարտութեանն մեռանիցին, եթէ քնաւ մերկ իսկ ոք ընկենուցու և թաղելոց ևս չառնիցեն արժանի, այնու առաւել զարդարէ, զի զմեծամեծ կըտուտսն անցուցանէ վասն Ճգանցն՝ զորս վասն Ճշմարտութեան կրիցէ. և զայնպիսին ոչ եղկելի, այլ երանելի կատարէ. զի զայնպիսի հանդերձ ոչ ցեց ուտէ և ոչ որդն հարկանէ, և ոչ գերեզմանակրկիտք գողանան, և ոչ ժամանակք մաշեն և ոչ հող փտէ, այլ կայ մնայ միշտ անծախական. և այնպէս զարդարէ զզգեցօղն, որպէս և ոչ զերկինս՝ պսակն արեգական և ոչ պատրաճև բակք աստեղաց:

Սրդ զայնպիսի մահ խնդրեսցուք, որ վասն հասարակաց ինչ օգտից է մեռանելն. արդ ընդ՚ը ոչ վասն շահի և կամ օգտի: Ջայս ասեմ՝ զի պատրաստագոյն գտանիցիմք առ Ճգունս՝ որ վասն աստուածպաշտութեան ինչ՝ ի վերայ հասանիցեն: Եւ այժմ եթէ կամիմք, բաղում մահս մեռանիմք. և զիաւրդ մարդ[1] մահկանացու կարիցէ բազում մահս մեռանել. զի եթէ մահկանացու է՝ միանգամ է մեռանելոց, իսկ եթէ բազում անգամ մեռանի՝ յայտ է եթէ անմահական է. զի ապաքէն որ կենդանին իցէ՝ մեռանի, ոչ եթէ՝ որ մեռեալն իցէ՝ միւսանգամ մեռանիցի: Նոր ինն է խնդիրս, զի և ոչ մահկանացու իսկ է. զի եթէ մահկանացու էր, զիաւրդ յետ մեռանելոյն՝ դարձեալ մեռանէր. և ոչ անմահ, զի եթէ անմահ էր, զիաւրդ ասէր Պաւղոս, եթէ վասն քո մեռանիմք զօրհանապազ. և դարձեալ, թէ ՅՈ երդնումն՝ ի պարծանս ձեր, զի հանապազ մեռանիմ: Յոռութիւն և վստահարութիւն համարէր, և ոչ արութեան ինչ գործ, եթէ միայն որպէս բնութեամբ սահմանեալ իցէ մահ, այնպէս և եթէ մեռանիցի. վասն այնորիկ ասէր՝ թէ հանապազ մեռանիմ: Որչափ ժամանակս ետ նմա կեալ Աստուած, նոյնչափ անդրկէն ետ փոխարէն մահս մեռանել Պաւղոս. և ոչ ուրեք կամեցաւ պարտապան գտանել, մանաւանդ զի և զհանապազորդն իսկ մեռանել՝ պարտս համարէր:

Եւ արդ մեք զինչ ինչ այնպիսի գործ ցուցանեմ.

1 ՅՈր. Մահ:

ցեմք. այլ տէս, այր ուրուք է այնպէս հանդչելն. աղքատաց, տկարաց, ոչ այնոցիկ՝ որ զմեծամեծս բարբառիցին: Եւ յիրաւի հանգիստ՝ զայնպիսեաց մահն կոչէ. քանզի չիք ինչ հանգոյն այնմ հանգըստեան, յորժամ անխիղճ մտօք ոք զայն զտարաշխարհական ձանապարհն երթայցէ: Զի եթէ այր ոք՝ յորժամ մերձ ՚ի մահ իցէ, և բարւոք պատուէրս և հրամանս՝ տան և կնոջ և որդւոց տայցէ, և որպէս կամիցի՝ այնպէս կարգիցէ, և զմահն այնուհետև մահ չհամարի, թէպէտ և նմա ինչ այն ամենայն ոչ փչիցէ, որչափ և առաւել՝ որ այնպիսի ոք ինչ շահս գանձիցէ, որովք երթեալ աստի այնուհետև առաջի Աստուծոյ համարձակ կարիցէ մնանել: Քանզի երևելոց է հոգին՝ Աստուծոյ, յորժամ բարւոք վախճանաւն՝ զծանրութիւն մեղացն ընկենուցու, և թեթևացեալ ընդ երկինս թռիցէ. յորժամ զչար խիղճ մտացն մերկանայցէ, և համարձակ առ Տէրն փութացեալ երթայ. յորժամ ոչ վասն պատժոց ինչ կասկածիցէ, և ոչ թէ դրունքն երկնից նմա փակելոց իցեն՝ երկնչիցի. զի ոչ ոգորիցի և ոչ ջանայցէ և ոչ մխիթի, այլ դիւրաւ հեշտեաւ լինի զմարմին թողուցու. զի ոչ բռնաբար ինչ ձգիցի ՚ի վարչացն, և ոչ յանկարծակի յափշտակիցի, ոչ վասն մեղայ ինչ դանդաղիցի, և ոչ վասն չարեաց ինչ վհատիցի. այլ իբրև խնդացեալ փափագեալ՝ ինքնին զանձն հեղուցու ՚ի վերայ, որպէս և մանուկ մի անձկացեալ առ իւր դայեակս, կամ առ հայր և մայր. քանզի գիտէ այնուհետև՝ թէ ոչ ՚ի տանջանս եկեալ կոչէն, և ոչ ՚ի մահն անմահական, այլ ՚ի պատիւս արքայականս և ՚ի սեղանն՝ ի ամենայն բարութեամբք, և իմանայ թէ զմարմինն՝ զոր առ ժամանակ մի թողու, դարձեալ միւսանգամ զգենուլոց է մեծաւ փառաք և պատուով:

« Սատակեսցի սովոյ զաւակ քո, և զմնացուածս ժառանգութեան քո՝ ՚ի հարուածս սատակեսցէ ». զի և արմատ ևս ոչ գտանիցի այնուհետև. մեծ բժշկութիւն է՝ որ սովոյ լինիցի բարձիչ չարեացն: « Ողբացեք, դրունք քաղաքաց. ձայնս արկցեն քաղաքք խառնվեալք, այլազգիք ամենեքեան. զի ծուխ ել ՚ի հիւսիսոյ և ոչ ևս ուրեք գտանիցի. զինչ տայցեն պատասխան Թագաւորք հեթանոսաց. զի Տէր ուղղեաց զՀիմունս Սիոնի և նովաւ փրկեսցին խոնարհք ժողովրդեան »: Այհաւասիկ և այլազգեացն մարգարեանայ, և յիրաւի նախ զծուխն դուշակէ. զի զոր օրինակ ծուխ՝ հրեշտակ է հոյլ, նոյնպէս և գոյժ ինչ չար՝ հրեշտակ է բարկութեան: Եւ տէս և աստ իսկ զԱստուծոյ մարդասիրութիւնն. զի ոչ վաղվաղակի զկրակն բորբոքէ, այլ նախ զծուխն, զի յորժամ նախ զծուխն տեսանիցեն՝ փախչիցին ՚ի կրակէն: Եւ տէս, զիարդ ՚ի հեռաստանէ գայ ծուխ, և ոչ ոք զգուշանայ:

« Եւ զինչ տայցեն պատասխանի Թագաւորք հեթանոսաց. զի Տէր ուղղեաց զՀիմունս Սիոնի, և նովաւ փրկեսցին խոնարհք ժողովրդեանն »: Զինչ իցէ այն, թէ « Զինչ պատասխանի տայցեն ». և ոչ ինչ կարիցեն խօսել և ոչ ձիկ հանել. զի բարձեալ լինիցին ամենևին պատճառք. զի ոչ ըստ բնութեան ինչ իրքն գործիցին, այլ ամենեքեան ՚ի չարիս, ամենեքեան ՚ի կարիս մաչեսցին, բայց միայն Երուսաղէմացիքն զերծանիցին: Եւ դու զինչ կարիցես տալ պատասխանի. զի նա ինքնին ուղղեաց զՀիմունս Սիոնի. և նովաւ փրկեսցին խոնարհք ժողովրդեանն, և ոչ իւրեանց ինչ քաջութեամբ: Եւ տէս, զի՛ կոչէ խոնարհս. զտկարսն՝ որ յիւրեանց ընտանեաց մատնեալ էին, զի չայտ չանդիման լիցի Աստուծոյ զօրավիգն օգնականութիւնն:

ԳԼՈՒԽ ԺԵ

« Տեսիլ Եւթներորդ. պատգամ Մովաբացւոյն »: Սկզբ և զՄովաբացւոյն ձառէ, զի մի ինքնագործ ինչ յառաջասաց իրքն կարծիցին. և թուէ կարգաւ զպատճառս պատժոցն. նախ զի ամբարտաւանք և թշնամանողք էին, ապա զի վասն Երուսաղէմի էին պատժելոց [1]:

1 Չհեռաւեալ հատուած բանիս, որ թուի մասն լինել մեկնութեան ԺԳ գլխոյն Եսայեայ և յօրինակին զետեղեալ կայր ՚ի կարգի

« Գիշերի սատակեսցին Մովաբացիք, գիշերի կոր-
ծանեսցին պարիսպքն Մովաբացւոց »։ Գիշեր՝ զմոլո-
րութիւն ըղձիցն կոչէ, որով եղև սատակումն քաղա-
քին։ « Սուգ առէք յանձինս ձեր, զի կոլեաւ Ղեգե-
բոնն՝ տեղի մեհենից ձերոց »։ Տեղի էր մեհենաց՝
ուր բագինքն կանգնեալ էին։ « Անդ ելանիցէք լալ՛ի
Նաբաւ Մովաբացւոց»։ Ի պաշարել հինին՝ փախստա-
կան լինիցիք՛ի քաղաքաց՛ի լերինս. ՛ի Նաբաւ լեա-
ռըն, ուր Մովսէսն Թաղեցաւ։ « Ողբայիք, զի ամե-
նայն գլուխ՛ի կնտուԹիւն և ամենայն բազուկք խոր-
տակեալք եղիցին »,՛ի սաղաւարտից և՛ի ծանրուԹենէ
զինուց. սակայն և այնպէս ինչ ոչ վճարիցի։ « Յամե-
նայն հրապարակս քրձազգած կոծեսցին », ուր զսնո-
ւիան ողբէին։ « Եւ՛ի վերայ տանեաց նորա, և՛ի
փողոցս նորա ողբասցին լալով », ուր զօրուԹեանց
երկնից պաշտօնն մատուցանէին։

« Զի աղաղակեաց Եսեբոնէ, և գուժեաց Յասսա,
մինչև լսելի եղև բարբառ նորա» յարտաքին քաղաքն՝
որ շուրջ զՄովաբաւ նստէին։ « Վասն այնորիկ մէջն
Մովաբացւոց գոչէ» . այսինքն՝ զի՛ի հրապարակացն
Մովաբաւ ելանէր գոչումն և կառաչ։ « Անձն իւր ծա-
նիցէ », զի սիրան գործի գործիցէ։ « Սիրան Մովա-
բացւոց՝ գոչէ յանձն իւր մինչև՛ի Սեգովը » . զի

ասա մեհենուԹեան ձն գլխոյս, պատշաճ գտաւեցաք կարգել ասա-
նօր՛ի սաղաւ, իբրև միջանկեալ պատառիկ մեհենուԹեան գրոցս։

« Մինչեւ վճիռ ապառաժ նկէ լեառն գտաբր Սիոնի. և եղիցիս դու
իբրև հաւու Թռուցիչոյ ձագ լքեալ, դուստր Մովաբու »։ Եւ զի
մի կարծիցի եԹէ ինքնագիտ ինչ նկեն չարիքն, և զտեղիսն ևս և ըզ-
ժամանակն յառաջագոյն գուշակէ, և եԹէ յոյր վերայ նախ գայ-
ցեն կամ երբ։ « Իբրև զվարձս երեմիոյ վարձկանի միոջ». այսինքն՝
եԹէ յետ երից ամաց։ Եւ զի զբարեաց հաւքաւս յառաջագոյն ա-
սէին խղձքն, « Ոչ այնպէս, ասէ, լինիցի ըղձուԹիւնն քո, և ոչ
այնպէս՝ որպէս ողբանն՛ի Մովաբ. զի՛ի Մովաբ ողբասցին ամենե-
քեան »։ զի՛ի յաւիտեանուԹենէ և ոչ ըստ կամացն Աստուծոյ մեծա-
ցան։ « Երինջ երեմեան, ասէ, դուստր Մովաբացւոց ». զօրաւոր,
բարեչէն, երջանիկ, երանիկ, պերճացեալ, փափկացեալ. այլ ոչ
այնպէս ինչ անցանիցէք ընդ քեզ՝ որպէս խղձքդ ցուցանեն, այլ
սպառսպուռ կորնչիցիս, և հիմանց կործանիցիս, ոչ որպէս գա-
քաղդ մնացորեցուցանիցեն, Թէ չիցեն ուրեք մատնելոց՛ի Թշնա-
ռուԹիւն։ Ոչինչ օգնեսցին քեզ կուռքդ՝ զոր ողբաս, գրօչեալքդ՝
որոց պաշտօնդ մատուցանես. խղձքդ սուտքանք, որ զսուտ ինդ
իբրև զճշմարտուԹիւն պատմեն »։

սատակացան Հարուածք՛ի բուն քաղաքի Մովաբա-
ցւոց՝ մինչև՛ի քաղաքն Սեգովը, ուր Ղովտն ապրեցաւ։
« Երինջ երեմեան է ». այսինքն յաստիս, յուժի զօրու-
Թեան, ՛ի մեծուԹեան, ՛ի փափկուԹեան։ Եւ զի ասէ.
« Ցելանելն առ քեզ՝ լալով ելանիցեն ընդ Ճանապարհն
Աբունիմ», զի Աբունիմ՛ի դաշտի կայ և նա՛ի բար-
ձու, և փախստականն՝ ՛ի դաշտէն՛ի լեռնակոյիցն
դիմիցէ. սակայն և անդ դուլ և դադար ոչ լինէր,
այլ՛ի լերինս դիմիցէ, որպէս և վերագոյնն ասաց,
եԹէ Անդր ելանիցէք՝ լալ՛ի Նաբաւ Մովաբացւոց, ՛ի
լեառնն անապատական։ Եւ զի և՛ս կսկծեցուսցէ, «Գո-
չէ, ասէ, բեհուՃի և շարժուՃի. և ջուրն Նեբերայ
աւերեսցի »։ Կամ՝ զօրս քաղաքացն կոչէ ջուրս, կամ
՛ի բազմանալ հինին՝ և ջուրքն և՛ս նուազին։

« Եւ ցամաքեսցի ամենայն խոտ, և դեղ դալար անդ
մի գտցի »։ Յայտ իսկ է, զի ուր բանակք բազմաժո-
ղովք բանակիցին, նուազուԹիւն խոտոյ և ամենայն
դալար դեղոյ լինի։ Զի Թէպէտ և յայնմանէ ապրես-
ցին, « Սծից՛ի վերայ ձորոց զԱբաբացիս և առցեն
զնա ». զի Թէպէտ և յօտար հինէն՛ի ձորս ուրեք և
յամուրս ինայցեն, սակայն ՅԱբաբացւոցն՝ որ նոցին ա-
րուարձայինքն էին և տեղեակք ամրոցն, մի կարասցեն
ապրել։ « Զի կցեցան բողոքք սահմանացն Մովաբա-
ցւոց ընդ բողոքս Գաղամացւոցն ». ՛ի գալ հասանել
հինին՛ի վերայ Մովաբացւոցն, և զայլ ևս քաղաքսն՝
որ շուրջ զնոքօք էին [1]։ « Մինչև՛ի ջրհորն, ասէ, յե-
զիմ։ և ջուրն Հեսեմոնեայ՝ լցցի արեամբ »։ Թուի ինձ՝
եԹէ կիրճք ինչ էին գետոյ, ուր փախստականն դի-
մէր. և անդր հասեալ Աբաբացիքն՝ տեղեակք վայ-
րացն, կատորէին զփախստականսն. վասն որոյ յարէ՛ի
նոյն, Թէ « Սծից՛ի վերայ Հեսեմոնեայ զԱբաբացիս,
և բարձիք զաւակն Մովաբացւոց և զԱբրիկ, և զմա-
ցորդս Ադամայ՝ առաքեցից ընդ ամենայն երկիր՛ի
մուրոդուԹիւն և՛ի ԹափառականուԹիւն »։

1 Ա յատկս յօրինակին։

ԳԼՈՒԽ ԺԶ

« Մ[illegible]Թ[illegible] վ[illegible]մ ապառաժ [illegible]ոյ՝ լեառն գ[illegible]տեր Սիո-
ւէլի ». այսինքն՝ աւերակ յօգնականուԹենէ. այլ ոչ
այդպէս. ՚ի ժամանակի՝ յորժամ նա զօգնականու-
Թիւնն գ[illegible]անիցէ, ՚ի պաշարմանէ զօրացն այլազգեաց,
« Դու քեզ մեայցես՝ իբրև հաւու Թռուցելոյ ձագ-
մի մեացեալ։ Բայց իսկ արդ դու Աւնոյէլ, աւելի լինչ
խորհուրդ խորհեալիր ». ոչ այլ լինչ աւելի, այլ զի
« Աւռնիցես նոցա յարկս սգոյ. հանապազ ՚ի միջօրեայ
խաւարին փախչիցին ». զի լոյս նոցա ՚ի խաւար
դառնայցէ առ վտանգին։ Վասն որոյ յարէ ՚ի նոյն՝
Թէ « Ցիմարեցան. մի[illegible]Թէ որպէս իսկզբանէն գայցեն
յԵնուցիմն ՚ի քեզ փախստականքն Մովաբացւոց, և
լինիցին ձեր յարկք ապաւինի յերեսաց հալածչաց ».
ոչ ևս զոք ՚ի Մովաբացւոցն ապրեցուսցէ Աւնոյէլ՝ քա-
զաքն ամրաշէն։ « Զի բարձաւ, ասէ, ՚ի քէն ընկերը
մարախն քո, և իշխանքն կորեան, որ կոխէին զեր-
կիր ». քանզի քաղաքքն՝ հանդերձ իշխանօքն մատնե-
ցան ՚ի պարտուԹիւն։

« Եւ ուղղեսցի հանդերձ ողորմուԹեամբ աԹոռ,
և նստցի ՚ի նմա ճշմարտուԹեամբ՝ յարկան ԴաւԹի,
դատել և խնդրել զնիրաւունս, և փութալ առնել զար-
դարուԹիւն »։ Թուի լինել Թէ աստ զնեղեկիայէ ակն-
արկէ, զի նորա աղօԹիւք եղև ողորմուԹիւն քաղա-
քիս։ « Լուաք զԹշնամանան Մովաբայ, զի Թշնամա-
նեցաւ յոյժ, և զՀպարտուԹիւն նորա բարձի, ասէ
Աստուած, և զԹշնամանան և զոխակալուԹիւն նորա ».
զի միշտ ոխս ունէր ընդ Իսրայէլացիս։ « Ոչ այնպէս՝
որպէս ըղձուԹիւնքն քո ». ոչ այնպէս լինչ պատահեաց
քեզ, որպէս իղձքն խաբէին՝ Թէ չգայցէ բարկու-
Թիւն։ « Ոչ այնպէս՝ որպէս ողբանն ՚ի Մովաբ ». զի
ընդ ժամանակս ժամանակս սակաւ լինչ ողբք լինէին.
այլապէս « Աւռնէքին իսկ Մովաբացիք ողբասցեն ող-
բալով, և որ բնակեալն իցեն ՚ի Գեսեթ՝ զնոյն մըր-

մունջ մրմնջեսցեն, և ոչ լինչ ամաչեսցեն գաշտքն Եսե-
բոնիայ ». զի առ անհնարին ազեռին և զամեթ ա-
ւերածոյ գաշտացն՝ չհամարիցին ամեթ։ « Սուգ առ-
ցեն այգիքն Սեբեմայ, զորս կլանիցեն ազգքն, և կո-
խիցեն զայգիս Նորա ». զի ՚ի բազմուԹենէ զօրացն՝
անդք և այգիք հարկանիցին։ « Մինչև ցեզեր մի հա-
սանիցէք », ուր փախստականն դիմեցէք, այլ « Ցանա-
պարհին մոլորիջիք »։

« Սրաքեալք Նորա լքան, քանզի անցին ընդ ան-
ապատ ». այսինքն մոլորեցան յանապատին։ « Վասն այ-
սորիկ լացից իբրև զլալուննն Ցեզերայ՝ զայգիսն Սեբե-
մեայ », որ էին մարմանդք նոցա։ « Զի ծառատունկն քո
կոտորեցաւ, Եսեբոնէն, և գոյժ ևս առ ՚ի վերայ հնձոց
կԹոց քոց. կոխեցիչ և կործանեսցին. և բարձի ու-
բախուԹիւն և ցնծուԹիւն յայգեաց քոց, և յայգե-
ստանի քումմ մի լինիցին ուրախ, և մի հարկանիցեն
հնձան, քանզի գադարեաց ». Զի ՚ի նուազել մարդ-
կանն՝ և անդքն և այգիքն անպտուղ լինիցին։

« Վասն այնորիկ որովայն իմ ՚ի վերայ Մովաբու՝
իբրև զքնար հնչեսցէ, և փոր իմ իբրև զպարիսպ՝ զոր
նոր նորոգեցեր ». որպէս և Երեմիա ասէ, եԹէ Եղեն
պատգամք Տեառն ՚ի բերան իմ՝ իբրև զՀուր, և բորբո-
քեցան յոսկերս իմ։ և Միքէ՝ Թէ Ես լցայ զօրուԹեամբ
ոգւով Տեառն. զի զոր ինչ չնորհք Հոգւոյն ազդէին ՚ի
սիրտս մարգարէիցն, զնոյն փութային ազգ առնել
յառաջագոյն։ « Եւ եղիցի, ասէ, յամաչելն քեզ ». զի
ամաչեաց ՚ի դրօշելոցն՝ յորս յուսացեալ էր. զի և յարէ
իսկ ՚ի նոյն, եԹէ « Աշխատեցաւ Մովաբ ՚ի բագինսն,
և մտցէ ուխտաւոր ՚ի ձեռագործս և մի կարասցեն
փրկել զնա ». զի ծանիցէ՝ Թէ ոչ գոյ այլ օգնականու-
Թիւն, բայց յայնմանէ՝ որ զներուսաղէմն պահեաց և
զնա կործանեաց։

« Սյս պատգամք են՝ զոր խօսեցաւ Տէր ՚ի վերայ
Մովաբու, զոր երբեմն խօսեցաւ, և արդ դարձեալ
ասէ. Ցերիս ամ ամաց վարձկանի միջ անարգեսցի
փառքն Մովաբու՝ ամենայն մեծուԹեամբն իւրով
հանդերձ ». Զի միանգամ զամենայն իսկ հարուա-
ծոյն ձառեաց, և ապա յետ այնր ժամանակի և զայս
ևս յայտնեաց, եԹէ յետ երից ամաց՝ անարգեսցին

փառք նորա. « Եւ ճնասցէ սակաւաւոր և ոչ պատուական »:

ԳԼՈՒԽ ԺԷ

« Ցեսիլ Եւթներորդ [1]. պատգամ՝ի վերայ Դամասկոսի: — Ահաւասիկ Դամասկոս բարձցի՝ի քաղաքաց քոց և եղիցի՝ի կործանումն լքեալ». նաև զպատճառն ևս ասէ: « Եւ ոչ ևս լինի թիկունք և ամրութիւն ասպաստանի աղգին Եփրեմայ, զի ոչ լինչ դու լաւ ես քան զորդիսն Իսրայելի». և այսու յայտ է՝ եթէ ոչ իբրև զյանցաւոր պատժեաց զնա Աստուած, այլ ինաքեալ և դարմանելով: « Եւ մոցէ, ասէ, ուխտաւոր, և մի՛ ինչ կարասցեն օգնել». և ոչ ասէ՝ թէ մի՛ կարասցեն. և զիարդ իսկ, որք հակառակ մարգարէութեան խօսէին մեռոիս յառաջագոյն, զիարդ կարէին օգնել ինչ, որք և ինքեանք հեռի էին յօգնականութենէ: Այսպա ասէ թէ զինչ անցք անցանելոց էին ընդ Հրէայսն, զի ամենեքեան լքանիցեն զքաղաքս:

« Եղիցի, ասէ, պակասութիւն փառացն Յակովբայ, և յաձախութիւն փառաց նորա շարժեսցի». զի կէսքն արտաքոյ կոտորեսցին, և կէսքն՝ի քաղաքսն պաշարեսցին, և ամենեքեան յանհնարին վիշտան անկանիցին. զի ոչ քահանայ և ոչ մարգարէ, և ոչ այլ ոք կարիցէ ձեռնտու լինել. ապա յայտ է եթէ պակասեն փառքն Յակովբայ, և յաձախութիւն փառաց նորա շարժի. զի ոչ լինչ բազմութիւն և ոչ մարմնոյ զօրութիւն, և ոչ այլ ինչ այնպիսի կարիցէ նոցա պաշտպան լինել. զի այնպէս սակաւաւոր ճնասցեն՝ իբրև զհասակս ճնացեալս՝ի հնձոյ: Զի վասն այնորիկ իսկ շարժէ Աստուած զպատերազմունս, և բազում անգամ սակաւուց տայ յաղթել բազմաց, զի յայտ արասցէ թէ ոչ բազմութեամբն է յաղթութիւնն, այլ նորա զօրութեամբն. զի յորժամ կամի՝ բազմօք բազմաց յաղթէ, և յորժամ կամի՝ սակաւուք բազմաց:

« Եւ զոր օրինակ եթէ ժողովիցէ ոք հասկ՝ի ձորն հաստատութեան, և ճնասցէ՝ի նոցանէ խոզան, կամ որ կթիցէ ձէթ և ճնայցեն անդ պտուղք երիւղ կամ երեք՝ի ծայրս բարձրութեան ձիթենոյն, կամ չորք կամ հինգ՝ յոստս նորա ճնայցեն»: Ցէս, զինչ ասէն. զի՝ի տեղեացն պանծալին զքաղաքին փրկութիւն, և չառնէին ինչ՝ի նեղս այլ զգուշութիւն. այլ մեք ոչ պարտիմք՝ի տեղեաց ակն ունել փրկութեան, այլ յԱստուածոյ օգնականութենէ: Զայս ասէ՝ զի արժանի հաւատալոյ արասցէ զմարգարէութիւնն, և զի մի՛ ինչ զարհուրիցին. այլ տէս զահն նոցա՝ ո՛րչափ ինչ էր: Զի ոչ միայն զի ուսանիցին զզօրութիւնն, վասն այնորիկ հարկանէր զայլազգիսն, այլ զի և նոքա զգաստանայցեն և լինիցին պիտանիք:

« Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի. յաւուր յայնմիկ յուսացեալ լինիցի մարդ յարարիչ իւր, և աչք նորա՝ի սուրբն Իսրայելի նայեսցին, և ոչ ևս յուսացեալ լինիցին՝ի լկևիչսն իւրեանց»: Զինչ գործես, ո՛վ մարդ մոռոի, նա արար զքեզ և դու յայլ յուսաս. նա ստեղծ, և ո՛չ կարիցէ վերակացու լինել. որ՝ի չգոյէն՝ի գոյ էած, կարող է միւսանգամ անդրէն լուծանել: « Եւ աչք նորա՝ի սուրբն Իսրայելի». զի մեռացն աչք նայիցին՝ի սուրբն Իսրայելի: « Եւ մի՛ ևս յուսացեալ լինիցին՝ի լկևիչսն իւրեանց»: Բազում պարսաւանք են՝ յորժամ զգիւրին ինչ իրս չկարեն իմանալ, Թո՛ղ Թէ զգժուարինս. և զոր ինքն առնէ, այնմ երկիւղ վա՛ղդ պագանիցէ. և այս՝ ոչ այլ ուստեք է, եթէ ոչ յիւրեանց պղերգութենէ:

« Յաւուրն յայնմիկ եղիցին քաղաքք լքեալք, որպէս լքան Ամաւրհացիքն, զոր օրինակ լքան Ամաւրացիք և Խեւացիք յերեսաց որդւոցն Իսրայելի, և եղիցին աւերակ»: Ցիշեցուցանէ զառաջինն երախտիսն, զի և ուսանիցին Թէ և այժմ ոչ առ տկարութեանն ինչ տայ Թոյլ, և ոչ նոքա իւրեանց զօրութեամբ ինչ ապաւինին. այլ սոքա վասն իւրեանց մեղաց՝ որպէս և նոքա յայնժամ՝ի կատարեալ մեղացն իւրեանց աւերեցան քաղաքք: Ցէս զյաձախութիւն ամբաստանութեանն,

1 Ցօր. Ե-ԲՆԵՐՈՐԴ անուանի և առասպէլն՝ որ՝ի սկիզբն ՅՆ գլխոյն:

զի յորժամ և նոքա ընդ նովին մեղօք գտանիցին, որպես և այլ հեթանոսքն, ոչ ապաքէն նոցին պատժոց իցեն արժանի։

« Վասն զի Թողեր զԱստուած փրկիչ քո, և զՏէր Աստուած քո ոչ յիշեցեր »։ Եւ ոչ շատ էր արդեւք զԱստուածն ասել, այլ և զփրկիչն և զԺողովիչն։ « ԶՏէր Աստուած քո ոչ յիշեցեր »։ Ոչ միայն չյիշեցեր, այլ և մոռացար իսկ. և եթէ զԱստուած մուանայիր, զկերակրիչն՝ որ հանապազ կերակրէր զքեզ՝ զնաքրդ ոչ յիշէիր, զի յորժամ պէտք կերակրոյն և բժշկութեան ձեռնիցեն, հարկ լինիցի քեզ յիշել։ « Վասն այսորիկ տնկեսցես տունկ անհաւատ »։ Ակիղաս, Տունկ վաչելութեան. Սիմաքոս, Տունկս գեղեցիկս. Թէոդիտոն, Տունկս վայելուչս։ « Եւ սերմն անհաւատ ». Ակիւղաս ասէ. Եւ շառաւեղ օտարոտի. և այլքն նման սոցին. այսինքն՝ օտարացն պատերազմողացն՝ որ արտաքոյ բանակեալ նստիցին, տնկիցես։ « Զի յաւուր՝ յորում տնկիցես՝ վերիպեսցիս ի նմանէ»։ Վասն վախճարստեիցն՝ որ զքաղաքն լքանելոցն էին։ « Եւ եթէ ընդ առաւօտն սերմանեսցես՝ տնկեսցի յամառն »։ Ակյսինքն՝ եկեսցէ հասցէ ի չափ։ « Ցորում աւուր ժառանգեսցես, և իբրև զՀայր մարդոյ ուրուք՝ ժառանգեցուսցես » օտարացն՝ իբրև որդւոց քոց, և յուղարկեսցես։

« Վայ բազմութեան ազգաց բազմաց, իբրև զծով ալեօք կուտակեալ՝ այսպէս խռովեսջիք »։ Մի՛ ինչ, ասէ, երկեցուսցէ զքեզ բազմութիւնն. նոյն իսկ այն լինի պատճառք խռովութեան։ « Եւ Թիկունք ազգաց բազմաց՝ իբրև զքուր հնչեսցեն, և իբրև զջուրս բազումս, և իբրև զձայն ջուրց բազմաց՝ բռնութեան հոսանաց [1] անարգեսցէ զնոսա ». այլքն ասիցեն՝ Թէ փախիցէ, և ի բացուստ ի բաց հալածեսցէ։ « Իբրև զփոշի յարդի՝ հոսեալ ընդդէմ հողմոյ »։ Ցէս, որպէս վաղվաղակի դիւրաւ լինէր յաղթութիւնն։ « Ընդ երեկոյս եղիցի սուգ, և յառաջ ևս քան զառաւօտն ոչ ևս լինիցի ». և զժամանակն ևս յաղթութեան յիրաւի ասաց, զի գիշերի վճարիցի գործն. և ընդ՚ոչ՚ի

1 Յօր. Հեղեանոսաց. Թուի լինել վրիպակ գտազփարօղին։

տուէ. այլ զի մի և տեսանիցեն իսկ զվիշտն, և խռովիցին բնակիչք քաղաքին։ « Ա՛յս բաժին է աւարառուացն քոց, և այս ժառանգութիւն՝ որ զձեզն վճակիցին »։ Տեսանե՞ս, զիարդ յիշեցուցանէ նոցա, զի և ուսանիցին Թէ և յայնժամ վասն նոցա կրեցին զպատիժն։

ԳԼՈՒԽ ԺԸ

« Վա՛յ Թևաց երկրին նաւաց՝ յայնկոյս գետոյն Եթէոպացւոց. որ առաքէր ընդ ծով պատանդս, և Թուղթս գրեղէն [1] ի վերայ ջուրց մկանաց, տանել առ ազգ մի անյոյս և կոխեալ ». և ոչ զօրավիգն օգնականութիւնն քո՝ վճարել ինչ կարիցէ. զի և նոցա իսկ վայելիցի՝ զի յանօգուտն ընթանայցեն։ « Ձկրեշտակս առաքեն և զԹուղթս՝ ի վերայ ջուրց, երթալ ի հեռաւոր և ի տարաշխարհական ձանապարհն». զի մի և ժամանակին լինչ եղծանիցէ զԹուղթն, վասն այսորիկ ի գետոց կերպարանս յօրինեն։ « Վա՛յ երկրի նաւաց »։ Ակիղաս ասէ. Վա՛յ երկրի ստուերաց. Սիմաքոս, Վա՛յ երկրին՝ որոյ հնչիւնն անյուսից և կոխեցոյ իցէ. կամ որ կարի ինչ տակարացեալ իցեն Թևք, կամ յայնկոյս գետոյ Եթէոպացւոց, կամ յայնկոյս հիւսիսային գետոյն, որպէս ի Հնդկաց իսկ աշխարհէն յղիցեն առնուցուն զզօրավիգն օգնականութիւնն։ « Որ առաքէր ընդ ծով պատանդս, և Թուղթս գրեղենս ի վերայ ջուրց, զի գնասցեն հրեշտակք երագունք՝ յազգ ամբարտաւան և ի ժողովուրդ օտար »։ Սիմաքոս, Որ առաքէր ընդ ծով առաքեալս, և յանօթս պղտուեայս՝ ի վերայ ջուրցն մկանացն գնալ. ով զնորա յայնկոյս, ազգ անյոյս [2]։

« Եւ այժմ գետք երկրին՝ իբր զաշխարհ մի՝ որ

1 Յօր. Բառդ գրեղէն սեաւգեղով եղծեալ և ի վերայ գրոյիս գրոշմեալ սեաւաւի, որպէս Թուի յօտար գրէն։

2 Թուի լինել. Ոչ ոք (իբրէ) նորա յայնկոյս, ազգ անյոյս։

բնակեալ իցէ ». և բնութեամբ իսկ տկարագոյն էն, և յասպատակէ պատերազմողաց և՛ տկարանայցեն : « Իբրև զաշխարհ մի բնակեալ ». այսինքն՝ զի բարեշէն լինեսցի աշխարհ նոցա : « Իբրև նշան ՚ի Տեառնէ բարձցի, և իբրև զձայն փողոյ լսելի եղիցի » : Իրքն որ ասացան և առա կատարելոց էին, մի կարծիցէք, ասէ, եթէ յանդիմանիցեն ինչ բանքս. ոչ կոչեի վկայս զամենեսին զձեզ, եթէ ոչ էի յուսացեալ՝ եթէ իրքն ՚ի գլուխ ելանիցեն : Այլ զարմանալի և սքանչելի այն է, զի ոչ յանկեան ուրեք և ոչ ՚ի խորշի միջ տիեզերաց ծածուկ, այլ յայտ յանդիման լիցի վճիռ իրացն, ՚ի նմանութիւն փողոյ ընուցու հնչելովն՝ զտիեզերս, զի մեծութիւն ուղղութեանցն հասցէ անցցեն ընդ ամենայն երկիր :

« Զի այսպէս ասաց ինձ Տէր. զգուշութիւն եղիցի յիմում քաղաքին, իբրև զլոյս տօթադիմն ՚ի միջօրէի». զի ոչ երկմտութեան ինչ իրքն իցեն. զի որպէս յայնժամ լուսաւորագոյն է արեգակն՝ յորժամ օրն ՚ի հասարակ միջօրէին իցէ, նոյնպէս և այժմ: և մի սակաւ ինչ զարհուրիջիր : « Եւ իբրև զամպ ցօղագին՝ յաւուրս ամարանոյ ». որպէս և ամպ սիրոխանք են տօթացեալոց, զի հովանին լինելով՝ ծածկէ զտապս արեգականն, և ոչ միայն հովանի լինի, այլ և զովացուցիչ, նոյնպէս և Աստուածոյ փրկութիւնն լինիցի նոցա մեծութարիչ՚ի չարեացն եկելոց հասելոցն ՚ի վերայ :

« Յառաջ քան զամառն յորժամ կատարեսցի ծաղիկն և բուղկն ծաղկիցէ, ծաղիկն ազդհացեալ, և բառնայցէ զմանր ողկուզըն մանգաղաւ, և զմանուկս որթոյն հատանիցէ և կոտրիցէ, և Թողուցու միանգամայն Թռչնոց երկնից և գազանաց երկրի ». զի բառնայցեն ՚ի միջոյ, և Թաղելոց արժան ևս ոչ լինիցին. զի մեծ և փոքր՝ առհասարակ իբրև մանգաղաւ կոտորիցին, այնպէս՝ զի և ՚ի գերեզմանս և մտանել չլինիցին արժանի մարմինք անկելոցն. զի ահագին զպատիժն ցուցանիցէ, Թէ այնպէս բազում տապաստ անկանիցին, որպէս յանապատին եղև, զի զթշնամին մեռեալս ընկեցեալս արտաքոյ ալեաց ծովուն տեսանէին. զի յորոց երկնչէին, յորոց սարսէինն՝ զնոսա Թքեալ արտաքս ծովուն՝ մերկս, անզէնս, անթաղ

տեսանէին. այս յայնժամ կատարէր, և ելանէին առ մեռեալսն ՚ի տեսիլ. ոչ վերս և ոչ հարուածս ինչ տեսանէին, այլ մարմինս մեռեալս ընդ վայր ընկեցեալս :

« Յայնմ ժամանակի մատչիցին պատարագք Տեառն զօրութեանց ՚ի նեղեալ և ՚ի խոնարհ ժողովրդենէ, և ՚ի մեծ ժողովրդենէ՝ յայսմհետե մինչև յաւիտեանս ժամանակաց » : Զյաղթութիւնս և զփոխութիւնն, յորժամ կատարեսցին իրքն և կանգնեսցի նշան յաղթութեան, բերցեն մատուցցեն Աստուծոյ. զոր նոքա յանձանց և յիւրեանց քաջութենէ ոչ ունէին, զայն այնուհետեւ Աստուած՝ յիւրոց սքանչելեացն առնիցէ : « Աղբ անյոյս և կոխեալ, որ է ՚ի կոզմանս գետոյ աշխարհն նոցա » : Զօսակաւաւորութիւն և զնուազութիւնն նոցա յայտ առնէ, և զյաղթութեան մեծութիւն, զի մի՛ անձանց ինչ զուղղութիւնն համարիցին, այլ Աստուծոյ :

ԳԼՈՒԽ ԺԹ

«Տեսիլ եգիպտացւոցն : — Ահաւասիկ Տէր նստեալ ՚ի վերայ թեթև ամպոյ՝ եկեսցէ յԵգիպտոս, և շարժեսցին ձեռագործք եգիպտացւոցն » : Այլուայս ասէ. Ի վերայ Թանձու փոքրոգւոյ : Զինչ խօսիցիս՝ ՚ի վերայ ամպոյ նստիցի. Թէպէտ և Թանձրագոյն իցէ, գոյ ՚ի նմա և մարմնական ինչ : Ամենք զսուրբ Կոյսն ասեն զամպն, սակայն և առ լսելիս՝ և այս չէ ինչ փոքր, զի զանօսրութիւն և զԹեթևութիւն և զերագութիւն Հոգեառնն ցուցանէ : « Եւ շարժեսցին ձեռագործք եգիպտացւոցն » : Այլոքն յաղթութեան նախ ՚ի դիւացն առնէ, զի մի և մի ինչ պատճառք պատժոյ Հնայցեն ՚ի միջն մարդկանն : Ի գալստեանն ոչինչ արդեամբք գործ ցուցանէր, այլ միայն երևէր, և շարժէին աւերնայն տիեզերք. զի գայն միայն Քրիստոսի՝ այնպիսի գործ էցոյց. անդէն ընդ իջանելն Յեգիպտոս՝ քակեաց ՚ի հիմանց զաւերնայն ամբարշտու-

թիւնս. ոչ ևս այսուհետև բռնաւորք և թագաւորք ընդ Աստուծոյ մարտնչին անդ, և կամ թէ բազում ամբարշտութեամբ հրաժարիցեն ի նորա տէրութենէն, այլ զանձինս ևս տան մահու չափ ի վերայ նորա դաւանութեանն. ոչ ևս ոք փարաւոնէն, որ յառաջ քան զնշանացն զզօրութիւնն յանդգնիցի, կամ յետ նշանացն, այլ և առանց նշանաց՝ ունկին մարդիկ յանձն զՔրիստոսի թագաւորութիւնն. ոչ ևս այնուհետև գոտանի անդ քաղաք պատուական քան զանապատն, այլ և անապատն ամենայն՝ յօրինեալ կարգեալ իւրովք քաղաքացեօքն՝ գլէ յաղթէ քաղաքացն. զի զմարմինս և զոգիս՝ Աստուած առնէ, և զանձնիշխանութիւն և զառաքինութիւն՝ մարդիկ նահատակեցուցանեն։ Եւ արդ տես զնորաբանչ զարմանալիսն, զի ոչ ատեան ուրեք ուղղեալ, քանզի զի արդեւք, կամ ո՞րպէս. ոչ խորհուրդ խորհրդականաց և ոչ ժողովք իրաց հնչ հարցափորձութեան, ոչ օրէնք աշխարհականք և ոչ տէրութիւնք, ոչ վարիչք, ոչ անդրադարձք ի սպաս և ոչ ջրիք ի կառս լծեալ, ոչ բարբառ քարոզաց, ոչ շահ ի սպասաւորաց. այլ այս ամենայն հալածեալ մերժեալ անտի. քանզի զինչ իսկ պիտոյ էին ողջոյն՝ բժիշկ, որոց Քրիստոսի գալուստն՝ եղև կատարեալ առողջութիւն։ Եւ բարւոք ասէ՝ Թէ նստեալ. զի այսու՝ դատաւոր և վերիժխնդիր զնա ամենայն իրաց՝ որ անդ գործեցան՝ ցուցանիցէ։

« Եւ սիրտք նոցա պարտեցին յանձինս իւրեանց»։ Զինչ այնուհետև օգուտ էին մարմինն, յորժամ առաջնորդն նորա միտքն՝ ի պարտութիւն մատնիցին. զի պարտութիւն աստ՝ զայն որ առ ի պատերազմս զայն լինելոց էր՝ ասէ. զի ոչ առ մարմնոյն տկարանալ մատնէին ի պարտութիւն, այլ առ ի խորհրդոցն պախելոյ. զի ինքեանք զանձինս տային ի պարտութիւն։ « Եւ յարիցեն Եգիպտացիքն ի վերայ Եգիպտացւոց, և տայցեն պատերազմ այր ընդ եղբօր և այր ընդ ընկերի իւրում»։ Եւ այս բարերարութեամն էին նշանակ էին. այո՛, և մեծաց բարերարութեանց, որպէս և ինքն իսկ Տէրն ասէր, եթէ Ոչ եկի արկանել խաղաղութիւն երկիր, այլ սուր և հուր, և քակել զայր ի հօրէ և յընկերէ իւրմէ. զոր օրինակ յապա-

կանել էին մարմնոյ՝ զփուտն պարտ է հատանել ընկերոյ, նոյնպիսի էին և աստ պարտ և պատշաճ է առնել։

« Եւ հարցանիցեն զդիս իւրեանց և զպատկերս իւրեանց, զլծկուկս իւրեանց և զգեստահարսս իւրեանց. և մատնեցից զերկիրն Եգիպտացւոց ի ձեռս արանց տերանց խստասրտաց, և մի տայցեն նոցա վձիռ էին »։ Չի թէպէտ և ըղձից էին կերպարանք իցեն իրքս, սակայն ոչ էին գուշակեսցեն զլինելոցսն։ « Ա՛յսպէս ասէ Տէր զօրութեանց. արքցեն Եգիպտացիքն զջուրն ծովակիսեայ, զի գետն նուազեսցէ և ցամաքեսցի »։ Եւ ի՞րք եղև այս. տեսանէս զԱստուծոյ զօրութիւնն և զկարողութիւնն։ Եւ զառաջինն ընդդէմ ոչ եղև այսպիսի էին, ընդդէմ ոչ յայնժամ եբարձ զջնութիւն ջուրցն ի միջոց, այլ զնոցին՝ յայլ կերպարանս փոխեաց. առ կախարդօքն՝ ի տկար նշանացն կամեցաւ սկիզբն առնել, զի գրգռեսցէ ածցէ զնոսա ի մարտ պատերազմին։ Եւ աստ ունր ցամաքեցաւ գետն, հարցանեն զմեզ, և ոմ որ գիտակ եղև, և զնաւրդ մարթ էր լինել այսպիսի իրաց։ Որպիսի՞ հնչ իցէ, ասա ինձ, միթէ քան զտեղալ հրոյն և քան զբռնցուցն ցօղ լինել՝ աւելի՞ հնչ զարմանալիք էին այս. սակայն և ոչ զայն գիտեն հեթանոսք ցունաց, զի խակք են և չիւրեանց ևեթ զբռնսեալք, և զիւրեանցն ևեթ կամին մեծացուցանել. և յորժամ նոր հնչ լսիցեն՝ զարմանալիսն ծածկել ջանան։ Չի և առաջինք իսկ են այս և հին պատմութիւնք, որ յառաջ քան զժամանակս առ նոցա իսկ իմաստնոքն այսպիսի հնչ իրք պատահէցին։

« Եւ պակասեսցէ գետն և գուբն առ գետովն, և ցամաքեսցին ամենայն ժողովք ջրոյն, և ամենայն պրակս եղէգան և պրտուց, և ամենայն կանաչ՝ որ շուրջ զգետովն իցէ՝ ցամաքեսցի »։ Սիմաքոս ասէ. Աղբատացի անվայելչութիւնն. Թէոդիտոն, Տկարասցի արուեստքն. զի և ի հեբրայեցի՝ արուեստն՝ անվայելչութիւն Թարգմանի։ Տեսանէս, զի ոչ մի տիւ հնչ[1] իբրև աւելի մանն հնչ զջրոյն պակասել կարծիցես։

1 Ա յսպէս յօրինակին։

« Եւ յոգւոց հանիցեն, ասէ, կարեկընկեցք գետոյն, և ուռկանաւորք, և սուգ առցեն ցանցողդք նոցա ». զի ոչ մինչև ՚ի ծարաւն լեթէ խցեն չարիքն, այլ մինչև յարուեստագէտք հնարաւորս։

« Եւ յիմարեսցին իշխանք Տայանու՝ իմաստունք խորհրդականք թագաւորին, և խորհրդականք նոցա մոռասցին»։ Զինչ իցէ մոռոսանալ։ Զի ոչ ինչ գտանիցեն հնարս իրացն դիւրութեան. որպէս և այլուր ասէ, թէ Աստնային իմաստութիւնն նոցա ընկլաւ։ Եւ այս իսկ Աստուծոյ զօրութիւնն է, այնպիսի չարիս ածել ՚ի վերայ, զի մի իմաստունք և մի հզօրք և մի մեծատունք կարասցեն այնմ հնարս միխթարութեան գտանել. զի յայտ լիցի՝ թէ աստուածապատիժք են ցաւքն։ « Զիա՞րդ ասիցէք դուք ցարքայն, թէ որդիք իմաստնոց եմք մեք. ուր են արդ իմաստունքն քո, պատմիցեն քեզ ». և ոչ ասէ՝ թէ լուծցեն զչարիսն, որ մեծագոր զօրութեանն միայն է. այլ պատմեսցեն ասէ, զոր մանաւանդ ըղձութիւն հեթանոսացն խոստանայ։ « Եւ ասասցեն, եթէ զինչ խոստանայ Տէր զօրութեանց ՚ի վերայ երկրին Եգիպտացւոց »։

« Պակասեսցին իշխանքն Տայանու, և հպարտասցին իշխանքն Մեմփեացւոց ». կամ զի զչարիսն ինչ յառաջագոյն խոստանայն, կամ զի որ յառաջ քան զայս հպարտացեալն էին՝ չկարացին ինչ յայտնել։ « Եւ մոլորեցուսցեն զեգիպտացիսն յամէս ամէս. զի Տէր խառնեաց նոցա ոգի մոլորութեան, և մոլորեցոյց զեգիպտացիսն ՚ի զոլն [1] նոցա »։ Բաղում ցուցանի աստ Աստուծոյ զօրութիւնն, բազում յաձախութեամբ բառնայ ինքն զյոլովութիւնն, զոր ըղձութիւնն կարծէր ունել յանձին. զի ոչ եթէ միայն ոչ ընդունիցեն զմարգարէութիւնն, և գուշակեսցեն զիրսն՝ որ գալոց իցեն, այլ և յետ ուսանելոյն չինէն՝ չկարասցեն յայտ ցուցանել. զի այնպիսի է Աստուծոյ զօրութիւնն՝ զի և զայսոսիկ ինչ և զերևելի՝ կարէ ծածկել ՚ի նոցանէ։ Ահաւասիկ, ասէ, ասացի. ահաւասիկ խորհեցայ, ահաւասիկ և արարի իսկ, սակայն և ոչ յետ այսորիկ

1 Ա. յոգւոյն յօրինակին. այլ սոսրին մանն վին՝ անկիւնաձևն՝ օ. ասր գրչի է։

կարիցեն ասել ինչ. խառնեաց նոցա ոգի մոլորութեան, զի յապուշ դարձան միտք նոցա. զայն ասէ՝ զի ոչ միայն բարեաց, այլ և կարեաց կամի Աստուածն հնարել պատճառս. զի Ես ես եմ Աստուած, ասէ, որ առնեմ զնաղաղութիւն և հաստատեմ զչար. և ոչ՝ ընդ չարիք՝ ի քաղաքի՝ զոր Տեառն չիցէ արարեալ. և զի ոչ նուազագոյն քան զձեռնարտութիւնն՝ առնէ զնա յայտնի մոլորութիւնն, լուր Աշակաղնացւոյն, որչափ խաբէութեամբն զարմանային. Ո՞չ սա է, ասեն, աստուածն՝ որ խաղայ խաբեաց զեգիպտացիսն. և մանաւանդ յայնպիսւոյն՝ որ յուղղ ձանապարհէն վերպեցուցանէ՝ պարտ է, ասեն, մեզ երկնչել, զի մի յորժամ տեսանիցեն եթէ նշանս ինչ առնէ, յայնժամ երկնչելոյն, այլ յորժամ՝ ի խաղաղութեան և ՚ի շինութեան իցեն, մի ինչ չայն ապաստան լինել, զի գուցէ խաբէութիւն ինչ երբեք առնիցէ նոցա. վասն այնորիկ զնովմէ ասէ, եթէ մոլորեցուցանէ, քանզի սիրե զազգս մարդկան, և ոչ կամի և ոչ մի ինչ իրաց՝ զդէս պատճառս համարել. որպէս և Յունաց իմաստունք՝ գրեցին փոխանակ իմն զօրութիւն, և զաստուածականն՝ յերկուս իմն մասունս բաժանեցին ՚ի հակառակս միմեանց, որ նուիրն չափով զիւրաքանչիւր գործն առ միմեանս ցուցանիցեն, և զկեղծն բարի դէս, և զկեղծն չարս անուանեցին. այլ ոչ եթէ Աստուած այնպիսի ոք ինչ իցէ։ Այլ ասեն, եթէ գոյ զօրութիւն անմարմին չար, բայց ոչ եթէ նմա ինչ հակառակ իցէ և ոչ զուգական նմին, այլ հնազանդ և ընդ նովաւ, որպէս մարդկան՝ զի մարթի և չարանալ և բարի լինել. և ցուցանեն եթէ ոչ յիւրմէ ինչ կարէ գործել զչարութիւնն. Մատնեցի, ասէ, զնա սատանայի. զի եթէ Պաւղոս ոչ մատնէ, ոչ իշխէ երբեք համարձակել սատանայ, որչափ ևս առաւել առանց Աստուծոյ հաւանձակեցուցանելոյ՝ ոչ իշխեսցէ ժտել ինչ սատանայ. զի եթէ ՚ի ծառայից նորա այնպէս երկնչի, և կայ ինչ՝ մինչև զՀրաման ինչ առնուցու, և զգահՀն կարգ պահէ առ նոսա, որչափ ևս առաւել Աստուծոյ։ Եւ տէս, զնաթրդ և առ Յոբ սակաւ սակաւ թոյլ տալով նմա Աստուծոյ՝ գոյր հասանէր ՚ի վերայ. տէս և առ հիքին Թշուառականին Յուդայի, զնաթրդ նախ ոչ իւրումն

իշխէր դիմել՝ի վերայ, մինչև առաքէ զնշխանութիւնն. զի յորժամ քակեցաւ յաստուածական գնդէն՝ ապա դիմեաց՝ի վերայ նորա սատանայ, զի թէպետ և յառաջ քան զայն բազում տեղի պատրաստեաց զանձնն սատանայի, տաճարակապուտ, սեղանակապուտ գողութեամբն, զի այնպիսի բարեաւք երկնէ այր զչարն, սակայն ոչինչ ունէր իշխանութիւն՝ մինչև մատնեաց զնա նմա Քրիստոս: Այսու ուսանիմք եթէ ոչ չարի ինչ անհնարին լրք են՝ յորժամ յաղօթից և յօրինաց ոք մեկնիցի:

« Եւ մոլորիցեն զեգիպտացիս յամենայն գործս իւրեանց, որպէս մոլորիցի արբեալ մի և փսխիցէ. և մի ևս լիցի եգիպտացւոցն գործ՝ որ առնիցէ գլուխ համատունս, սկիզբն կամ կատարած: Յաւուր յայնմիկ եղիցին եգիպտացիք իբրև զկանայս՝ դողացեալս և զարհուրեալս յերեսաց ձեռին Տեառն զօրութեանց՝ զոր ածցէ ինքն՝ի վերայ նոցա. և եղիցի երկիրն Հրեից խրտուիլ եգիպտացւոցն»: ԵՒան Հրէիցն, ասէ, կրիցեն զպատիժսն, զի նոքա լինէին սոցա պատճառս չարեաց: Տեսանեմ, ոչչափ լաւութիւն լինէր Հրէից, յորժամ ևան նոցա՝ ամենայն տիեզերք խառնիճին, քանզի ոչ միայն չմոլորեցուցանէն զնոսա, այլ և երկնչեցին՝ի նոցանէ:

« Յաւուր յայնմիկ եղիցին հինգ քաղաքք յերկրին եգիպտացւոց, որ խօսիցին զբանանացւոց լեզուն, և երդնուցուն յանուն Տեառն զօրութեանց. քաղաք Սեդեկ կոչեսցի մի քաղաքն»: Սկիւղաս, Քաղաք գաղնանուց, Սիմաքոս՝ Աբեգ քաղաք, Թէոդիտոն՝ Քաղաք արէից [1] անուանեսցի մին: Եւ արդ բազում իմն ցուցանէ զգիւրութիւն իրացն, քանզի և յեգիպտոս շինեցաւ տաճար: Զինչ իցէ Քանանացւոց լեզուն. այլ զի գհրէական լեզուն խօսեսցին: Ապա ասէ և զանունն, եթէ «Քաղաք Սսեդեկ կոչեսցի մի քաղաքն». տեսանեմ զելս իրաց մարգարէութեանն, տեսանեմ զհաստատութիւնն. զի զժամանակն ասէ, և զտեղին և զթիւն և զյորջորջումն անուանն. զի ոչ եթէ զնոցայն գիտե-

1 Յօր. Ընդ մեջ ր և է տառիցն՝գոյ տառ մի քերեալ անընթեռնլի, նոյնպէս և վերին մասն ն ին:

ցեն, այլ և զիւրեանցն ուսուցանիցեն. և քանզի ցըրուելոց էին ընդ ամենայն տիեզերս, յառաջագոյն կրթեր զնոսա, և լուծանէր զարհաւիրս օրինացն, և զհաստատութիւնն զայն՝ի միջոյ բառնայր: Եւ այժմ, ասէն, այլազգ ուսուցանիցէ, և զիարդ անսայցեմք. զի ըստ օրինացն՝ նզովք են այլ ուրեք շինել տաճար, և այդ՝ զօրինօք անցանել է: Մի այսուհետև երկնչիցիս յօրինացն, այլ տէս, յորմէ՞ ինչ իրս եղոյց զանխտրութիւնն. ոչ յառաքինութիւնն, այլ՝ի տեղիսն և եթէ թողացոյց փոփոխել զկարգս:

« Եւ եղիցի յաւուրն յայնմիկ սեղանն Տեառն յերկրին եգիպտացւոց». այս և զարդն իսկ ժամանակացս ասի: « Եւ արձան կանգնեալ՝ի սահմանս նորա». զոր օրինակ արձանն կանգնեալ՝ կայ Հաստատուն, և գրոշմն քարոզէ զհին ուղղութիւնն, նոյնպէս և սեղանն. ոչ եթէ արձան ինչ իցէ պղնձի և ոչ յադամանդեայ վիմաց, այլ յայլ ինչ յանձեռագործ նիւթոյ: Եւ զինչ պատմիցէ գիր արձանիս այսորիկ. այլ զԱստուծոյ զօրութիւնն. զի սեղանս այս՝ որ կանգնեցաւ արտաքոյ, ոչ այլ ինչ, այլ զմահն Աստուծոյ պատմէ, եթէ Աստուծոյ է մահն. զի մահն Աստուծոյ մարմնոյն՝ ոչ զայլ ինչ, այլ զԱստուծոյ մարդասիրութիւնն յայտ առնէ. մահն՝ յաւիտենական կենացն պատճառ:

Ապա յետ այսորիկ և զպատճառս իրացն ասէ. « Զի աղաղակեսցեն առ Տէր վասն նեղչացն իւրեանց». որպէս՝ի սկզբանէն աղաղակեցին, և առաքեաց նոցա զՄովսէս, նոյնպէս և այժմ. այլ տէս, զի ամենայն ուրեք որոց խնդրենն, որոց աղաղակենն, որոց հայցեհն՝ տայ զբարութիւնսն. ոչ վայրապար որոց և իցէ, այլ աղաղակեսցեն, ասէ, վասն նեղչացն իւրեանց: Տեսանեմ, ոչչափ նեղութիւնն ածէ զնոսա՝ի բարիս. աղաղակել յորդորէ, և աղաղակելն զնեղութիւնսն [1]:

« Եւ առաքեսցէ նոցա Տէր այր մի, որ փրկեսցէ զնոսա, և դատելոյն փրկեսցէ զնոսա»: Ոմանք զՈնիայէ [2] ասեն, բայց լռեմ թաւի թէ զԲրիստոսէ իսկ

1 Յօր. Զյոնիխան: Օտար գրչաւ՝ի վերայ եդեալ կայր ընդհանուն, այլ պատշաճ՝թուի պնիոնիխան:
2 Թուի լինել պՈնիայէ:

ի՞նչ ասացեալ. զի այլ Թարգմանքն ասեն, Թէ Սբա-
քեսցէ նոցա փրկիչ: Զի բազում ինչ՝ ի մարգարէու-
Թեանց անտի՝ կրկին է. զի զոր օրինակ յորժամ ասիցէ,
Թէ Յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ: զի և այս փրկու-
Թիւն այնչափ առաւել է՝ որչափ սգւոց և խորհրդոց
և մեծաց առաքինեաց է: «Դատեալ փրկեսցէ զնոսա».
զինչ իցէ դատելոյն. կամ զի զսատանայ իսկ դատա-
պարտեաց, կամ զի ոչ վայրապար զամենեսեան: Մի՛
վասն զի ընդհանուր է փրկուԹիւնն, անհանձարական
ինչ համարիցիս. ընդհանուր իսկ է, այլ զնայրդ ընդհանուր.
այլ զի ըստ արժանի ընդհանուր ոք գտանիցի:

« Եւ ծանիցի Տէր Եգիպտացւոցն, և ծանիցեն Ե-
գիպտացիքն զՏէր յաւուր յայնմիկ, և մատուսցեն
պատարագս, և զիցեն ուխտս և կատարեսցեն
Տեառն »: Տեսանե՞ս, զի նախ նա լինի ծանօԹ, և ա-
պա նոքա ձանաչեն: « Եւ հարցէ Տէր զԵգիպտացիս՝ ի
հարուածս մեծամեծս, և բժշկեսցէ զնոսա. և դարձ-
ցին առ Տէր, և լուիցէ նոցա Տէր և բժշկեսցէ զնոսա:
Յաւուր յայնմիկ եղիցի ձանապարհք Եգիպտացւոցն
առ Ասորեստանեայս, և մտցեն Ասորեստանեայքն յեր-
կիրն Եգիպտացւոց. և օրհնեալ լինի ժողովուրդ իմ՝
որ յերկրին Եգիպտացւոց է և յԱսորեստանի, և ժա-
ռանգութիւն իմ Իսրայէլ»: Մինչ յերուսաղէմ էին՝
՝ի չարիսն էին, և յորժամ յօտարազգեաց երկիրն ջո-
պան՝ օրհնեալք եղեն: Տեսանե՞ս, զի ամենայն ուրեք
զառաքինութիւն խնդրէ Աստուած, և ոչ զտեղիս. ո՞
ոք եղև սրբագոյն քան զազգս զայսոսիկ. եղոյց քեզ
նախ եթէ և յօտար երկրի մարթ է հաճոյ լինել Աս-
տուծոյ. յորժամ լսիցես ՝ի Պաւղոսէ, եթէ Յամենայն
տեղիս ամբառնալ զսուրբ ձեռս, մի՛ ինչ խռովիցիս և
օտարոտի ինչ կամ արտաքոյ օրինաց համարիցիս զնա՝
որ զայսն ասաց. զի ամենայն ինչ հնոյն՝ յառաջագոյն
խափանեցաւ. շաբաթք լուծան, Թլփատութիւն
բարձաւ, զոհք խոտեցան, տաճարն չօգնեաց ինչ, քա-
ղաքն կորեաւ, տեղին կործանեցաւ: Եւ արդ այսու-
հետեւ երԹեալ կբերեալ նստիցիս ընդ արուք հովա-
նովք՝ որովք նախինքն ինչ ոչ օգտեցան. և ամենայն
հրեականքն բարձան, և գիտութիւնն միայն Աստու-
ծոյ՝ առանց գործոյ՝ ոչ ինչ և օգուտ նոցա: Տեսանե՞ս,

զի այն ամենայն ստուեր և նշմարանք, և նոքովք այլ
ինն խնդրէր Աստուած: Եւ մեք զայն ինչ արասցուք՝ որ
Աստուծոյ հաճոյ լիցի և կեցցուք, և աւելի ինչ մի՛
քննեսցուք, մի՛ հերհեալք և մի՛ քրիստոնեայք. զի չէք
ինչ այնպէս՝ իբրև զաղնուական առաքինութիւն և
զկրօնս ուղիղ՝ զոր խնդրէ Աստուած:

ԳԼՈՒԽ Ի

« Տասներորդ տեսիլ: Յամին յորում եմուտ Նա-
Թան Յազվոտս ». այլքն ասեն՝ Թարան: « Յորժամ
առաքեցաւ Յառանայ՝ աբբայէն Ասորեստանեայց»: Ա-
կիղաս և Սիմաքոս ասեն՝ Ի Սարգունեայ: « Հարկա-
նէր պատերազմաւ զքաղաքն Ազովտացւոց. յայնժամ
խօսեցաւ Տէր ընդ Եսայեայ՝ որդւոյ Ամովսայ և ասէ»:
Վասն էր արգելուք և զժամանակն նշանակիցէ մարգա-
րէս, և զպաշարուածն քաղաքին գնիցէ ՝ի նշանակ. այլ
զի և զՀրէայս կրԹիցէ և ՝ի ժամանակէն և ՝ի պաշար-
մանէ քաղաքին. քանզի բանից ևԹէ ոչ հաւատային,
և մանաւանդ զեգիպտացիսն՝ որ ոչինչ ունէին ժամա-
նակ, հանդերձ բանիւք՝ որով պարտ էր հաւանել.
քանզի սովորութիւն է անհաւատից՝ անցելոց ինչ իրաց
չհաւատալ, զվտանգութիւն քաղաքին յաւելու առ՝ ի
նշանակ՝ զի եթէ դա քեզ արհամարհեալ ինչ Թուի-
ցի, ահ եգիպտացիդ և ընդվայրախօս, հաւատասջիր
յիրացդ հանդիսիս, և ընդունիջիր զարդեանցդ վար-
դապետութիւն: Պարտ և պատշաճ էր դոյզն ինչ
հրամանի Աստուծոյ վազվազակի հաւատալ լսողացն,
Թող Թէ այժմ՝ զի արդիւնս ևս յաւելու՝ զմերկու-
Թիւն մարգարէին. զի եթէ ոչ վախձան եկեալ հա-
սեալ էր բանիցն ասացելոց, ոչ՝ի զուր ինչ և վայ-
բարար արդեամբք խայտառակէր զիւր սիրելին: Եւ
զինչ զարմանք են, եթէ յորժամ ընդ անհաւատսն և
ընդ այլազգիսն խօսէր, այսպիսի գործ ցուցանիցէ,
ուր և ընդ իւր ընտանիսն այսպիսի իրօք հաստատէր
զիրս ինչ. ոչ յորժամաւաքեցաւն, այլ յորժամ էտ պա-

տերացին և յաղթեաց։ Ցեսանէս, ուրչափ ինչ շահէ ի ժամանակացն. մի՛ հարևանցի վայրապար անցանիցեմք ընդ գիրս. ամենայն ուրեք՝ ոչ ինչ վայրապար ինչ յիշէ զժամանակս, այլ զի ինչմի աւելի ուսուցանիցէ ի ժամանակացն։

« Եւ՛րթ, ասէ, և՝ի բաց համն զքուրձդ՝ զոր զգածեալ ես՝ ի միջոց քումմէ, և լիցի զհողաթափս յոտից քոց »։ Որպիսի՛ հանդերձ, որպիսի՛ պատմուճան ունէր մարգարէս. և վասն ի՞ր արդեւք այնպիսի հանդերձ, զոր վաղվաղակի առ հրաման ընկենուլ՝ի բաց և գտանել մերկ. և զայն՝ի վերայ մերկատարը անգամից ըզգածեալ՝ սգայր զբարիսն եկեալ հասեալ՝ի վերայ։ Ինձ այսպէս թուի, թէ որպէս Դանիէլն մնիսիր տարածեաց իւր անկողին, նոյնպէս և մարգարէս՝ իբրև տեսս եթէ զանբժշկական ախտն ջերանին, զգենայր զայնպիսի անհնարին սուգն։ Ո՞չ տեսանիցես զկանայս, յորժամ տեսանիցեն զարս ամուսինս մերձ՝ի վախճանել՝ զիարդ սեազգած լինին, զգլուխ և զտաս՝ի թուխս համակեն, եթէ հնար ինչ էր՝ ամենևին զհանդերձն՝ի թուխս դարձուցանէին. սոյնպէս մարգարէս, իբրև տեսս եթէ ոչինչ շահ՝ի մարգարէութենէն էր լինելոց, լուաւ յոգւոյն բժշկէ՝ թէ քաղքն յօրհասական վախճան հասեալ է և չիք ինչ ուսքեք նմա պատսպարան կամ օգնականութիւն. զոր օրինակ և ոչ զցաւոյն իսկ զգայցէ հիւանդն, նոյնպէս և զՀրէայն տեսանէր յանզգայս, ի սուգ մտանէր այնուհետև։ Ա.յսպիսի ինչ սուգ և երեմիա ցուցանէր. այլ տե՛ս, թէպետ և՝ի սուգ էր նայն՝ի վեր ոչ հանէր, բայց յայնժամ՝ յորժամ հարին գայր՝ի վերայ հասանէր. քանզի ոչ ինչ առնէին վասն մնապարծութեան, այլ միայն վասն բազմագութի խնամոյն. վասն այնորիկ ոչ վաղվաղակի ընդ վայրօք ածէին զկրոն՝ որ ընդ նոսա անցանելոց էին։ Եւ միտ դիր, որպիսի՛ պատուհասիւ ցուցանէ. այնպիսի անձն հաստատուն՝ յայնպիսի սուգ մտեալ, և զգոյն ևս և զտրտմութեան հանդերձ հրաման առնոյր՝ի բաց մերկանալ, և յանձին ունէր և ունկնդիր լինէր վաղվաղակի։ Վասն է՞ր և Յովհաննէս ստէ ուղղոյ զգենոյր. ոչ զի զսուգն եկեալ ցուցանիցէ տիեզերաց, այլ զի՛ւ բազա-

տիկ պարգևաց զպատճառս, զգալուստն՝ որ յետոյ էր աւետարանելոց. թուի ինձ թէ և նա զքաղաքն Երուսաղէմ սգայր, զի ոչ էր ընդունելոց զՔրիստոս, զոր և ինքն իսկ Տէրն արտասուեաց։ Եւ այլազգ ևս. զի հաւատարիմ առնիցէ զբանսն կերպարանօքն։ Դիտէք իսկ եթէ բազում անգամ յորժամ ոչ զգայ հիւանդ ցաւոց, յայնցանէ՝ որ շուրջ զնովաւն կան՝ իմանայ զվախճանին չափս, վասն որոյ և բժիշկք պատուիրեն զի մի յաղթեալք՝ի գԹոյն՝ լայցեն և ընկղմիցեն զմիտս հիւանդին, և առ տրտմութեան՝ ևս՝ի կարիս մտանիցէ։ Ջի՞նչ խօսիս, ասէ, ո՛վ մարդ, ես լալով ինչ սպանանիցե՞մ։ այո՛, ասէ, քո արտասուացդ պատճառք՝ հաւատարիմ առնեն նմա զօրհաս մահուն. այսպէս և մարգարէս ոչ միայն արտասուօք, այլ և կերպարանօք զՀեռաւորս անգամ խրատէր։ Ա.ռնէր այսպիսի ինչ և Դաւիթ. այլ նա վասն իւրոց մեղաց. առնեն զսոյն և այժմ այլք բազումք. ոչ զքաղաք՝ որ մերձ յառնուլ իցէ սգայցեն, որպէս և մարգարէս յայնժամ, և ոչ զգերութիւն ինչ յառաջագոյն իմացեալ, այլ վասն ժամանակացս չարեաց. զի ամենայն իսկ տիեզերք այժմ, որպէս և յայնժամ Երուսաղէմ, կան՝ի տատանի, և զհատարակաց նաւակոծութիւնն տեսանեն միշտ, և սուգ առեալ աշխարհն զկորուսեալսն, զի և կորնչին և զկորուստն չիմանան թէ կորուստ իցէ. վասն այնորիկ և զքաղաքս իսկ թողեալ՝ և յանապատս դիմեցին. ոչ իբրև զՅովնան, այլ այլով ինն օրինակաւ։

« Եւ լիցի զհողաթափս յոտից քոց. և արար այնպէս »։ Եւ այս մեծի հնազանդութեան նշանակ է. ոչ ասաց եթէ զինչ խօսիցի, Տէր, ծանակ հրամայես լինել առակ, խայտառակ լինել, ծաղր տեսողաց, ձաղ առնիցես ամենեցուն. ասիցեն՝ եթէ առանցեալ ինչ իցէ, չիցէ յիւր միտն. յօրէնսն հրամայես՝ թէ և՝ի բաղանիս անգամ մի ինչ հարկ լինիցի մերկանալ հարց առաջի որդւոց, և մի որդւոց առաջի հարց, և ինձ՝ այդպէս հրամայես մերկ խայտառակ լինել. լծիմբ ծանականք առաջի կանանց, առականք առաջի մանկտւոյ։ Ոչ ինչ իշխեաց այսպիսի ասել, նաև ոչ բնաւ իսկ զմտաւ ածել. զի ծանականք

և ամէն այն միայն է, զոր Աստուծոյ չիցէ հրամայեալ և առնիցէ ոք. այլ զոր ինչ Աստուած հրամայիցէ, այն չէն ինչ պատկառանք, մանաւանդ զի յուղղութիւնս ինչ լինելոց են մարդկան։ Զինչ խօսիս, ո՛վ մարդ. զի Տէրն ինքնին ոչ հրաժարեաց զանարժանն իւր կերպարանան զգենուլ, և բանս այնպիսի ունել յանձն՝ որ նմա ոչ վայելէին, զի զքեզ յամենայն զերծուսցէ. և դու հրաժարիս և դանդաղիս վասն քոյոյ ծառայակցաց. անձառականն և անհասականն և մտաց և սրտից և խորհրդոց, նստեալ՝ի վերայ ամպոյ երևի. և որ ևս տգեղագոյնն ինչէ՝ բարկանայն այմ՝յորում կարիք ինչ ցասման ոչ գտանին, և ունի յանձին զի բազում անգամ ասի, եթէ Բարկացաւ Տէր, և դու հրաժարիցիս և դանդաղիցիս վասն քո ծառայակցացն։ Եւ տես իսկ, ուստի՛ մերկութիւն ծանականացն եղև. ի՛ մեղաց. զի ծանականք՝ մեղքն միայն են, և նա է պատճառք մերկութեանն, որ առնէ զամենեսեան նշաւակ խայտառակ. իսկ յորժամ Աստուծոյ հրամանով զմերկանայցէ, այն չէն ծանականք։ Ո՛չ իցէ տեսեալ զնահատակական մարտիկսըն՝ մերկացեալս, պատրաստեալս. և աստ՝ ոչ այնպիսի ինչ ինաս տեսողաց, այլ օգուտ և շահ և մեծ գործաւիգն օգնականութեան։

« Եւ արար այնպէս. և երթայր մերկ և բոկ գնացեալ։ Եւ ասէ Տէր. Զոր օրինակ երթայ գնացեալ մերկ և բոկ՝ ծառայ իմ Եսայի, զերիս ամ եղեցին նշանք և արուեստ՝ի վերայ Եգիպտացւոցն և Եթովպացւոցն, և՝ի միտ առցեն թէ այդպէս վարեսցէ զԵգիպտացիս և զԵթէովպացիս՝ արքայն Աստեստանի՝ի գերութեան, զծերս և զերիտասարդս մերկս և բոկս »։ Եւ ընդ՚որ, ասեն, այլովք ոչ հրամայեաց. ասեմք, եթէ ոչ լինէր իրքն այնպէս ահագին և ոչ այնպէս ընդհանուր սիրեր։ « Այնպէս եղիցի նշանք և արուեստք զերեամ»։ Տեսանե՞ս, ո՛րչափ ինչ միտս լինի՝ի մերձաւորսն ապաստան լինելոց և ոչ յԱստուած. լուար զտկարութենէ դրացեացն, զի եկեալ հասեալ էր մօտ՝ի դուրս, և ոչինչ զգաստացար. լուար և զմերկութենէ մարգարէին, և ոչ ինչ ստջացար. զերեամ հրամայեաց աքանչելի և նորագործ իցէ

ցեն լինել, և ոչ ինչ օգտեցար, վասն այնորիկ երթայցես մերկ՝ի գերութեան, հանդերձ ամենայնի, և պատիժքն՝ հանդերձ տառապանօք և միասօք։ « Երիտասարդք՝ ծերովք հանդերձ ». դառն տեսիլ տեսանել, ողորմագին և եղկելի, ծերութիւն ալեօք հանդերձ՝ի գերութիւն վարեալ։ Եւ որպիսի՛ պատժոց չէին պարտական Հրէայք, զի զայսպիսի ինչ յառաջագոյն լսէին, և զվճիռ իրացն տեսանէին։ Տե՛ս, զի և այժմ այսպիսի ինչ լինի, և ոչ ևս մարդարէ ոք առաքի, այլ ինքնին Քրիստոս՝ յանձին եցոյց զամենայն բարիսն և զկարիսն. չարութիւն, ասէ, լինելոց է. և նախ յիւրում մարմնին եցոյց և զչարչարանսն. Պարտ է, ասէ, Որդւոյ մարդոյ բազում չարչարանս կրել. Թուք յերեսս ընկալաւ, ապտակեցաւ, պրկեցաւ, յետոյ և զչարչարանս մահու յանձին կրեաց. մարգարէքն լալով ասէին եթէ այսպիսի ինչ լինելոց է, և նա կրեաց իսկ յանձին զչարչարանսն, զի և զմեզ յօժարեցուսցէ՝ի չարչարանս. նոցայն՝ պատժոց էին չարչարանքն, մերս՝ ուղղութեան և առաքինութիւն։

« Եւ ասասցեն ընակիչք կղզւոյդ այդորիկ չաւուր չայնիկ. ահաւասիկ մեք յուսացեալ էաք՝ ապաստան փախստեան՝ի սոսա, արդ սոքա զանձինս իւրեանց ոչ ապրեցուցին չարքայէն Աստեստանի. զմեզ զիա՞րդ փրկիցեն սոքա »։ Եւ զայս՝ վասն Հրէիցն, զի ուսանիցին մի՛ ապաստան լինել՝ի մարդիկ օգնականութեան, այլ յԱստուած։

ԳԼՈՒԽ ԻԱ.

« Մետասանեերորդ տեսիլ անապատի ծովուն։ — Իբրև մրրիկ ընդ անապատ անցեալ, եկեալ յանապատ երկրէ »։ Ակիւղաս ասէ. կառք անապատի, Սիմաքոս և Թէոդիտոնէն՝ Աւածած [1] ասեն։ Ակիւղաս ասէ. Իբրև փոթորիկք ի հարաւ. Սիմաքոս և Թէոդոտիտոնէն՝ Իբրև մրրիկք ի հարաւոյ։ Ակիւղաս ասէ. Երթալ և գալ յանապատն երկրէ ։ « Ահագին է տեսիլն և խիստ՝ որ պատմեցաւ ինձ, որ արհամարհելոց [2] . . . ։

1 Ա. յապէս յօրինակին։
2 Յօր. Քանի մի Թերթք անկեալ են, որով պակասի յետ այսորիկ մինչև ի Գլ. Լ. համար 6. Տեսիլ երէոպոէոյ, որ սկսանի ուրոյն խորագրով։

Երանելոյն Տեառն Յոհաննու Ոսկեբերանի ի մարգարէն Եսայիա մեկնութիւն։

« Տեսիլ չորքոտանեաց յանապատի, ի նեղութեան և յանձկութեան »։ Քանզի ամբարշտութիւնս ընկալան յանձին, վասն այնորիկ չորքոտանիս կոչէ զնոսա. զի թէպէտ անապատ և անջրդի Ճանապարհք էին ի միջի, սակայն ոչ դանդաղէին առ անմտութեան՝ երթալ տանել զմեծութիւնս իւրեանց՝ առ ազգն Եգիպտացւոց, որ ոչ ինչ կարէր օգնել նոցա։

« Աւիւծ և կորիւն աւիւծու, և անդստին և ձագք քարբից Թռուցելոց, որ բարձեալ տանէին իշոց և ուղտուց զմեծութիւնս իւրեանց » ։ Աւիւծ՝ գիւղային ազգն կոչէ, որ ոչ անձամբ ունէին զօրութիւն, այլ՝ի վերին օգնականութենէն. ըստ այնմ, եթէ կորիւն աւիւծու Յուդա. յիշեցուցանելով զնախնեացն առաքինութիւնս, հեգնէ զլեռնոցն անմտութիւնս։ « Եւ անդստին իժք և ձագք քարբից Թռուցելոց ». զի անտի կսկծեցուսցէ, թէ իրպէս ի հարց առաքինեաց, որպիսի ժանտ որդիք եղեն։ Դուք, ասէ, զիս յամօթ առնէք. զի ես ձեզ պարծիմ ի թշնամիսն. զի որ արդարն է՝ իբրև զառիւծ յանձնապաստան է. իսկ ամբարիշտն ամօթով է և չունի համարձակութիւն լեռնեսս։

« Եւ երթ, ասէ, պատմեաց, թէ ի զուր է այդ միսթարու . . . յառաջագոյն չէր պատու . . . մ հասանէին պատիժքն ի վերա . . . [1] յանկարծադէպ զիրան կարծէին. նա ոչ միայն պատմել առնու հրամանն, այլ՝ եթէ « Նիստ և գրեա ի տախտակի և ի գիրս հաստատեա. զի եղիցի այս յաւուրս ժամանակաց՝ մինչև յաւիտեան. զի ժողովուրդ ապստամբ է և որ-

1 Յօր. Կատարակ ինչ փոքրիկ պատառեալ գոլով ի թղթին՝ անընթեռնլի մնան բառքն։

դիք սուտք, որ ոչ կամեցան լսել զօրէնս Աստուծոյ»։ Տեսանէ՛ս, զի՛արդ առնուին հրաման գրել յանդիման-նուէթիւն և յամբաստանուէթիւն նոցա, որպէս և Մովսէս յօրհնուէթիւնն։

Աբդարև ժողովուրդ ապստամբք, եղծեալք զեղծեալք. «Ո՛յք ասէին ցմարգարէսն՝ մի՛ պատմէք մեզ, և որ զտեսիլն տեսանէին՝ թէ մի՛ խօսիք ընդ մեզ ուղիղ». որպէս ցաւածք՝ որ սովակյեն ի՛ բժշկական ձեռաց։ «Ա՛յլ խօսեցարուք բանիւք լոկօք, պատմեցէք մեզ մոլարով զօտար, և մոլորեցուցէք զմեզ ի՛ ձանապարհէս յայսմանէ»։ Եւ տեսանեմք՝ զի և տեսիլք յայտնիք և մարգարէուէթիւնք երևելի պատմէր վասն նոցա Հաստատուէթեան, և նոքա ընդ՛որ դժկամակ լինէին ընդ բանս և մոլորել կամէին։

«Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր՝ սուրբն Իսրայէլի. փոխանակ զի անարգեցէք դուք զբանս իմ, և յուսացարուք ի ստուէթիւն, և զի տրտմիցէք դուք՝ զի յուսացեալ եղերուք ի բանդ յայդ»։ Յո՛ր բան. զի ոչ յԱստուած յուսային, այլ՛ի պատիրս Եգիպտացւոցն։ «Վասն այսորիկ եղիցին մեղքդ այդ ձեզ՛ի նզովս, իբրև զպարիսպ հզօր քաղաքի՛ ի ժամանակս պաշարման վաղվաղակի կործանեալ»։ Սհաւասիկ մեծ մեղք են դժկամակ լինել ընդ բանս Աստուծոյ, և յայտնանէ իբրև զպարիսպ հզօր քաղաքի կործանի. իսկ հաստատուն և անշարժ այն է, որ ասէ՝ եթէ «Յորժամ դարձցիս հեծեծիցես, յայնժամ կեցցես և դիտացես թէ ո՛ւր իցես. զի յուսացեալ էիր դու՛ի մնոտիսն, մնոտի եղիցէ զօրութիւն ձեր, և ոչ կամեցարուք լսել»։ Յայնժամ մեծապէս լինի խրատիմք՝ յորժամ՛ի մեղացն իբրև՛ի մեղաց հեռանայցեմք. զի յորժամ մեղքն գործիցին՝ խաւար լինի մանեալ առնի առ աչօք, և ոչ ոք իմանայ զմեղն՝ մեղս. իսկ յորժամ հեռանայցէ՛ի մեղացն, ապա ղգայ զցաւս մեղացն։ Ջօր օրինակ սառամանիք լուծանիցին, ապա յայտնին ուղիք սառամանեացն. որպէս մեծին Դաւթայ իսկ պատահեցաւ. և յորժամ դարաւոս ոք՛ի խոր ուրէք ձորոց անկանիցի, յորժամ անդրէն ելանիցէ, ապա իմանայ զարհաւիրս արհամանացն։ Զի՞նչ, ասէ, պտուղ ունէիք յայնժամ, վասն որոյ այժմ ամօթի հարկանիք. մի՛ ինդրիցես զմեղն

տեսանել՝ մինչգեռ՛ի մեղն իցես, այլ յորժամ զերծանիցիս և՛ի բաց վաղիցես, յայնժամ ուղիղ ընտրութեամբ տեսանիցես զմեղսն՝ մեղս. ապա ուրեմն հեծութեանց և յոգոց հանելոյ պէտք են վասն մեղաց. զի յոգոց հանել և հեծել՝ ստգտանք են մեղացն գործելոց. և յայտ է՝ եթէ դառնալ պարտ է և հեծել և յոգոց հանել. զի հեծութիւն՝ գարձին հաստատուէթիւն է և ղգուշութիւն։ Տէր զօրութիւն ձեր եղիւ, և ոչ կամեցայք դուք լսել նմա. և թէպէտ և զհանդէս իրացն տեսէք, սակայն և ոչ այն եղիւ ձեզ վարդապետ։

«Ա՛յլ ասացէք, եթէ յերիվարս մեր հեծցուք և փախիցուք. վասն այսորիկ՝ դուք իսկ ինքնին հալածականք լինիք. և ասացէք՝ թէ թեւաք փախիցուք մեք. վասն այսորիկ թեթեւագոյնս ևս լինիցին՝ որ հալածիցեն զձեզ. զի՛ի ձայնէ միոյ՝ փախիցեն հազարք, և՛ի ձայնէ հնգից՝ փախիցեն բազումք»։ Եւ աստ յայտ է, եթէ զքաջերացուցոյն նշանակէ. բազում ծանօթս տայ գիտուէթեան, առ՛ի ձանձրել եթէ՛ի վերստ է օգնականուէթիւնն։ «Մինչև ձեռասիքն իբրև զձող մի ցցեալ՛ի լերինն, և կամ իբրև կոթող մի նշանակեալ՛ի վերայ բարձանց։ Եւ գարձեալ կանխեսցէ Աստուած՛ի վերայ ձեր գթալ, և վասն այսորիկ բարձրասցի ողորմել ձեզ»։ Ա՛յսինքն է՝ զմեծ և զանբաւ զօրութիւնն իւր ցուցանիցէ։

«Զի դատաւոր Տէր Աստուած մեր է. երանեալ է՝ որք համբերեն նմա, զի ժողովուրդ սուրբ՛ի Սիոն բնակիցէ»։ Ո՛չ այսպէս այլ ինչ օգուտ է մեզ՝ իբրև զհամբերութիւն և զայս հաստատուն. զի Պաւղոս ասէ. Ձոյս ոչ ամաչեցուցանէ. և դարձեալ, եթէ համբերութեամբ բազմաւ. յաւետարանն՝ եթէ Որ համբերիցէ իսպառ՝ նա կեցցէ. զի՛ չէք ինչ այնպէս՝ որ առնիցէ փորձ զմարդն։ «Եւ երուսաղէմ լալով ելայ՝ թէ ողորմեաց ինձ». և առ պատասխանի ... ուածոյ քոյ ողորմ... անեմք, զի աստ արտաս...[1] վճարեցին զամենայն. ոչ վարք պարկեշտականք, ոչ ուղղութեանց յաձախութիւնք, և ոչ առաքինութեանց հանդէս, այլ դոչումն

1 Ձօր. Բառք ինչ եղծեալ են՛ի մաշմանէ թղթոյն։

և արտասուք։ Որպէս և յերկրին Եգիպտացւոց, Տեսանելով, ասէ, տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ՝ որ յԵգիպտոսն էր, և աղաղակի նոցա լուայ. ոչ եթէ յաշխուժութիւնս ինչ փոխեցան, այլ զայն բաւական համարեցաւ՝ի փրկութիւնն՝ զի բողբոջեին առնա։ Եւ այդ միայն հաշտեցուցանէ. այո, ասէ, քանզի ողորմած է, և ողբումեսցի քեզ։ «Ձձայն աղաղակի քո իբրև ետես և լուաւ քեզ, և տացէ քեզ Տէր հաց նեղութեան և ջուր կարօտանաց». զի Թէպետ սակաւ ինչ նեղիցիք[1] այդրէն՝ի քաղաքիդ, այլ՝ի տարաշխարհական գերութենէ զերծեալ ապրեսջիք։

« Եւ այնուհետև ոչ ևս մերձեսցին՝ի քեզ, որ մոլորեցուցանիցին զքեզ»։ Տեսե՞ր, ուրչափ շահք՝ի պատժոյն լինին, և որպիսի օգուտ յետ տանջանացն. ոչ ասէ եթէ ոչ ևս մոլորեցուցանիցեն զքեզ, այլ եթէ ոչ ևս մերձեսցին՝ի քեզ. զի անմատոյց և անըմբռնելի լինիցիս նոցա։ « Զի աչք քո տեսցեն՝ի մոլորեցուցիչս քո, և ականջք քո լսիցեն՝ի վերայ այնոցիկ՝ որ մոլորեցուցանիցինն զքեզ, զի մոլորութեամբն որով զքեզ մոլորեցուցանէին՝ ինքեանք մոլորիցին». այսինքն արծաթապատ նանրովքն՝ որով զքեզ ստիպեցուցանէին՝ ինքեանք վերիպեցան, որպէս և յաջորդքն իսկ յայտ առնեն։

« Եթէ գաղջեցուսցես դու զկուռնն՝ զոսկեպատս և զարծաթապատս, խորտակեսցես և հօսեսցես իբրև զջուր դաշտանաց, և իբրև զաղբ մերժիցես զնոսա. յայնմ ժամանակի եղիցի անձրև սերմանեաց երկրի քումի, և հաց արմտեաց երկրի քո յագուրդ և՝ի պարար. յայնմ աւուր ձարակեսցին խաշինք երկրի քո՝ի տեղի պարարտութեան յանդորրու »։ Եւ մի խնդրեսցուք յայսմ վայրի զասացեալն՝ եթէ եղև և եթէ ոչ, զի բազում ինչ վասն յորդորելոյ հանելոյ զնոսա՝ի գերութենէն իբրև առաւելութեամբ ինն ասացաւ, և բազումինչ՝ վասն զի չեղեն արժանի՝ ոչ կատարեցաւ. և յայտ յաջորդքն է։

« Եւ եղիցի, ասէ, ի վերայ ամենայն լերանց բարձանց և՝ի վերայ ամենայն գլխաւոր բլրոյ՝ ջուր բզղխեալ»։ Եւ ոչ ուրեք տեսանեմք, եթէ այսպիսի ինչ յետ դարձին կատարեցաւ առ նոսա. վասնզի, ասէ, խօսեցայց ածել՝ի վերայ ազգի և թագաւորութեան, և եթէ գառնայցեն՝ ոչ արարից։ Եւ այլազգ ևս. մի՛ լեզի ցուցանել եթէ յայնժամ ասացաւ և նոցա լեզի յայտ առնել եթէ կատարեցաւ։

« Եւ եղիցի, ասէ, լոյս լուսնի՝ իբրև զլոյս արեգական, և լոյս արեգական՝ եօթնապատիկ եղիցի յաւուրս յայնմիկ, յորժամ բժշկեսցէ Տէր զբեկումն ժողովրդեան իւրոյ»։ Տեսցուք առ ո՛վ ոք կատարեցաւ մարգարէութիւնս այս. անդստին՝ի վերուստ քննեսցուք. զի Հրեայք ասեն, եթէ հանդերձեալ է լինել, և մեք ցուցանեմք, եթէ՝ի Հրէից ոք ոչ բժշկեցաւ. այլ մեք յանլինս ցուցանեմք, զի մեծ լոյս ծագեաց մեզ. ոչ միայն եօթնապատիկքան զարեգական, այլ բիւրապատիկ ևս անչափ առաւել, զի առհասարակ արտաքին և ներքին աչք լուսաւորեցան, և ջուր կենդանի յամենայն տեղիս բղխեաց, այսինքն՝ ուսումն վարդապետութեանն Քրիստոսի. և բժշկեցաւ բեկումն մեր և պատեցան վէրք։ Եւ արդ մի՛ի ցուրտ և՝ի մնոտի յայս յուսացեալ պատրիցին և անկանիցին՝ի ձգմարտութենէն։ Երուսաղէմ, ասէ, լալով ելայ, եթէ ողորմեայ ինձ. և ՚ի բրբ եղև այս.՝ի գերութեանն, ասեն. իսկ այժմ ոչ երբեք գնոսա՝ի սուգ, բայց յայնժամ հանապազ յայնմ ծնկեին. ի գետս Բաբելացւոյ՝ անդ նստեաք և լայաք, ասէ։ Եւ գաղջեցուսցես զկուռնն. զո՛ր կուռս. և՚ի սրբեցան նոքա յամբարըշտութենէ. միթէ յԱստուծոյ ոչ ասացան նոցա մեծամեծքն լինել՝ի դարձին, կամ եթէ չ՚ի կարող կատարել զոր խոստացաւն. այլ որպէս վերագոյնն ասացաք՝ նոքա զանձինս չարարին արժանի։

« Ա՛հաւասիկ անուն Տեառն գայ յամայր ամն, յետ բազում ժամանակաց վառեալ սրտմտութիւնն հանդերձ փառաք. պատգամք շրթանց նորա լի բարկութեամբ, և բարկութիւն սրտմտութեան նորա իբրև զհուր կերիցէ, և հոգի նորա իբրև զջուր ձորալիր պարանոցաձագ եկեսցէ »։ Է և այժմ սրտմտութիւն նորա, այլ ոչ հանդերձ փառաք. յայնժամ յայտնելոց են փառք նորա և առաւել լուսաւորութիւն։ « Եւ բար-

[1] Յոր. Զհեղիոթ։

կութիւն սրտմտութեան նորա իբրև զհուր կերիցէ». որպէս վճիռ դատաւորաց ոչ այլ ինչ է, բայց եթէ մահ, նոյնպէս և Քրիստոսի վճիռն՝ հուր և տանջանք են. ըստ այնմ՝ եթէ երթայք յինէն, անիծեալք հնոր իմոյ, ի հուրն յաւիտենից, որպէս պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա:

« Եւ հալածեսցէ զնոսա ի մոլորութիւն, և հասցէ նոցա յանդիման նոցա պատիժքն. միթէ հանապազ պարտիցէ ձեզ ուրախ լինել և մտանել ի սրբութիւնս իմ»: Որք միշտ մեղանչիցեն՝ միթէ միշտ մատնեսցին ի տանջանս. զի Թէպէտ և այլ ինչ նշանակ տանջանաց չկայր ի միջի, սակայն ի մարդկան փոփոխմանցն պարտէր խորշել և չհամարձակել ի չարիս: Եւ Թէպէտ մի իսկ բաւական համարեսցին զՀրէշտատան միայն Սատուծոյ, այլ և զԱսորեստանեայսն կոչեսցեն յօգնականութիւն, և յորժամ յապահով լինիցին եթէ չկայ ուստեք կասկած, յայնժամ բարեկամանցն առաւել քան ի Թշնամեաց լինիցի կասկած, որ բաւական լինի մորմոքեցուցանել և ցուցանել՝ եթէ աստուածատաստ է բարկութիւնն. զի ոչ հին ինչ Թշնամութեանն մեղադիր լինիցին, և ոչ վաղվաղակի փոփոխմանն հաւատացեն:

«Զի նոքա փողովք և Թմբկօք տայցեն պատերազմ». և այն ինքն իւր լինիցի պատճառք, զի ինքն անձամբ անձին ած ի վերայ զչարիսն: « Հուր կիզման և կարկուտ քարանաւն » զսուր Բաբելացւոցն կոչէ. զի մինչդեռ յապահով և յանկասկած էին, և բարեկամ և ոչ Թշնամիս համարէին զնոսա, յանկարծակի իբրև հրդեհ բորբոքեցան և իբրև զկարկուտ արագահաս հասին. որ յաւուրս Եղեկիայ՝ հրեշտակս հանդերձ պատարագօք առաքեցին առ նա: Եւ յորժամ Ճառէ զԲաբելացւոցն, և զԱսորեստանեայս անուանէ. ընդ այն մի ինչ զարմանար, զի յորժամ Ասորեստանեայքն ունէին զԱսորեստան, և զԲաբելացիսն առհասարակ ունէին. նոյնպէս և յորժամ Բաբելացիքն զԲաբելոնն և զԱսորեստանեայսն:

« Եւ եկեսցէ նմա շուրջ յօգնականաց իւրոց, յոր կողմ և յուսացեալ իցէ. և նոքա փողովք և Թմբկօք մարտիցեն ընդ նմա փոփոխ. քանզի ոչ եթէ յառաջ

քան զաւուրս մոլորիցիս». այսինքն՝ ոչ յառաջ քան զժամանակն մատնիցիս ի պատիժս. և երկու ինչ աղէտք հասանելոց էին ի վերայ. մի՝ զի յանկարծ յանկասկած, և միւս ևս՝ զի ի բարեկամացն:

« Միթէ և դուն իցես պատրաստեալ Թագաւորել ի վերայ ձորոյն խորոյ»: ԶԹագաւորութիւնն ցուցանէ ի ժամանակի գերութեանն պատուհասել, եթէ չես Թագաւորելոց. և յայտ յայնմհետէ է: « Իբրև զփայտ բորբոքեալ, ասէ, հրով՝ բարկութիւնն Տեառն, և իբրև զձոր ինչ ի ծծմոյ բորբոքեալ». զի զանվրէպ պատիժն յայտ առնիցէ: Մարթի զայս իմանալ և վասն հանդերձեալ աշխարհին դատաստանի:

ԳԼՈՒԽ ԼՍ.

« Վայ այնոցիկ որք իջանեն Եգիպտոս վասն օգնականութեան, որք ի հեծեալս և ի կառս յուսացեալ իցեն»: Զինչ ինչ կայցէ քան զայն անմտութիւն, որք այնչափ ի նոցանէ չարչարանս կրեցին և յայնժամ և յետ այնորիկ՝ և ի նոցանէ ոչ Թափէին, և ոչ ատէին զնոսա, այլ ևս ապաստան լինէին ի նոսա: « Եւ ի բազմութիւն կառաց և երիվարաց. և ոչ էին յուսացեալ ի սուրբն Իսրայէլի»: Թէպէտ և առաջինն պատմութիւնն ուսուցանէր նոցա զԱստուծոյ զօրութիւնն՝ եթէ չէր նոցա պարտ ապաստան լինել ի զօրս, սակայն ոչ այնմ ինչ մեղադիր լինի, այլ զի Աստուած ոչ յուսացան՝ եթէ նա եհան զնոսա անտի:

« Եւ նա իմաստութեամբ ածէր ի վերայ նոցա զչարիս. և քան նորա ոչ անարգեսցի. և յարիցէ ի վերայ տանց անօրէնն մարդկան, և վասն մեռտի յուսոյն ի յայր եգիպտացի և ոչ Աստուած»: Հասարակաց են պատիժքն և բազում ամբաստանութիւնն. քանզի բազումք և այժմ ապաստան լինին Եգիպտացիսն. Թողեալ զերկնաւոր յոյսն՝ յանցաւոր օգնականութիւնն ապաստան լինին, ի մեծութիւնս, ի հարստութիւնս: « Եւ նա իմաստութեամբ ածէր ի վե-

րայ նոցա չարիսն». իմաստութեամբ և ոչ ապիրատութեամբ. քանզի գործէ իմաստութեամբ, զի՝ի նորա օգնականութենէն կարօտ գտանիցին. և ոչ միայն իմաստութեան գործ է, այլ և մարդասիրութեան: «Եւ բան նորա ոչ անարգեսցի». զի՝ի նա ապաստան լինիցին, և մի՛ այլ ինչ վայրապար հնարս հնարիցեն: «Եւ վասն մնոտի յուսոյն՝ի յայր եգիպտացի և ոչ յԱստուած». զի յուսացեալ լինէին յերիվարսն Եգիպտացոց, ուստի ոչ ինչ օգտութիւնս գտանէին. երիվար, ասէ, պատրաստի՝ի պատերազմ, բայց՝ի Տեառնէ է օգնականութիւն: Կամէր զի և առանց այնպիսի ինչ իրաց յաղթէին, այլ զի միմիայն հպարտանայցեն, արար զքեզ կարօտ բաղումս ինչ իրաց:

«Այսպէս ասաց ցիս Տէր, եթէ զոր օրինակ գոչէսցէ առիւծ կամ կորիւն առիւծուոյ՝ յոր հասանիցէ, մըընչեսցէ՝ի վերայ մինչև լցցէ զերկինս բարբառով իւրով, և սարսիցեն ամենեքեան՝ի սրտմտութենէ բարկութեան նորա, այնպէս իջցէ Տէր զօրութեանց զօրաժողով լինել՝ի վերայ լերինդ Սիոնի»: Տեսանե՞ս, յորպիսի փոքր օրինակ խոնարհի, և զարհուրեցուցանէ. որպէս յՈվսէէ մարգարէ ասէ, թէ Պատահեցից նոցա իբրև զարջ զայրացեալ: Եւ չև զահագին սաստն բարբառեալ՝ անդէն վաղվաղակի դառնայ յողոքս. «Դարձարուք, ասէ, որ խորհիք զչարխորհուրդս խորինս և զանօրէնս». քան զբարերարութիւն և զէրկութիւն՝ դառնալոյն օրինակ մեծ է:

«Բարձցեն, ասէ, զձեռագործս իւրեանց մարդիկ[1] զարծաթեղէնս և զոսկեղէնս». յորժամ պատժին՝ այնժամ դառնան՝ի լաւութիւն, որպէս՝ի գեհենին՝ այնպէս ինչ լինելոց է. քանզի և մեծատունն յորժամ պատժեցաւ՝ յայնժամ դարձաւ՝ի լաւութիւն, ապիրատն և անագորոյնն՝ յանկարծակի շրջեցաւ և եղև մարգասէր. աղաչէր՝ զի առաքեսցէ զոք քարոզել իւրոց եղբարցն, զի մի՛ և նոքա վճարեսցէ մեղօք՝ի նոյն պատիժս գայցեն: Մինչև՝ի բարիսն էր և հանապազ տեսանէր զմերձաւոր նեղեալն՝ ոչ ողորմէր, և յորժամ՝ի տանջանան եմուտ, ապա և բացականացն ողորմէր և

1 Ցօր. Բառագ մարդիւ՝ օտար գրչի է:

մարդասէր լինէր. և այսպէս ամենայն ուրեք տեսանեմք զշահս՝ որ յետ պատժոյն լինին. քանզի և ոչ տանջէ զոք Աստուած զայրացեալ մտօք, որպէս մեք յորժամ ընումք բարկութեամբ՝ ընդ այլս հանեմք զցասումն. իսկ Աստուած ոչ այսպէս, այլ ածել յաղղութիւն զմեր կամակորութիւնս խրատէ: Իսկ Փաբաւոմնի, ասեն, ընդէ՞ր ոչ ողորմեցաւ՝ յետ դառնալոյ՝ի լաւութիւնս. ասեմք, եթէ ուր է՝ զի եցոյց ինչ լաւութիւնս. ոչ յետ տասն հարուածոյն հետամուտ լեալ, կամէր՝ի բուռն արկանել զժողովուրդն. և յայտ է թէ ոչ Աստուած եղև պատճառք կորստեան նորա, այլ ինքն անձամբ անձին. քանզի որք զանբժշկական ախտն ախտանայցեն՝ զնոսա մատնէ՝ի մահ, որպէս և ՂբՀեղեզակուբան և զՍոդոմայիան, որք ոչ կամեցան գալ՝ի բժշկութիւնս՝ սատակեցան: Եւ այժմ ընդէ՞ր, ասեն, չառնէ այնպիսի ինչ, այլ ներէ մինչև ցծերութիւն, այնպիսի մարդկան՝ որ՝ի չարիս ծերանայցեն. ասեմք. յայնժամ յիրաւի լինէր, զի անդէն առժամայնն հանէր. և այժմ ներէ, զի յարութեանն յոյն հաստատեսցի, զի մի՛ի հարկէ զոք առնիցէ առաքինիս. յայնժամ զի ոչ ինչ երկիւղ գեհենին կայր՝ի վերայ, նմանապէս անդէն առ ետեղ ածէր զպատիժն. իսկ այժմ զի հանդերձեալ աշխարհի երկիւղիւն զգաստանայցեն՝ ոչ ածէ զպատիժն, բայց եթէ յանկարծ դէմն ուրեք:

«Եւ անկցի նա՝ի սուր, ոչ՝ի սուր առն և ոչ՝ի սուր մարդոյ կերիցէ զնա. և՝ի փախուստ դարձցի յերեսաց սուսերի. և երիտասարդք նորա՝ի պարտութիւն մատնեսցին». այն իսկ է, զի ոչ սրով կոտորեաց զբանակս Աստրեստանեայցն՝ հրեշտակն: «Եւ եղիցին վէմք արգելեալք իբրև զորմարգելս. և՝ի պարտութիւն մատնեսցին. և որ փախստական ոք իցէ՝ ըմբռնեսցի». զի յայտ արասցէ, եթէ ոչ են ապրելոց՝ի սատակացեալ Աստուծոյ բարկութենէն:

«Այսպէս ասէ Տէր. երանի՛ այնոցիկ՝ որ լինիցին զաւակ՝ի Սիոնի, և որդեակք իցեն նորա՝ի յերուսաղէմ»: Ակիւղաս և Թէոդոտոն ասեն. երանի՛ որոյ լոյս՝ի Սիոնի իցէ. Սիմաքոս ասէ. Որ ունիցի զՀուր՝ի Սիոնի, և զհնոցն յերուսաղէմ. և Հուր աստ՝ զպա-

ալիժան՝ որ ՚ի ժամանակս Եզեկիայ ՚ի վերայ Սոր-
ստանեայցն[1] եկին՝ կոչէ։ Եւ զաւակ ՚ի Սիոնէ և ընտա-
նիս Յերուսաղէմ, զփրկութեան ժամանակն երանէ։
Իսկ այլքն վասն վերին քաղաքին Երուսաղէմի ասա-
ցին. և յանձն առնում. քանզի է և է իսկ ՚ի տանջա-
նաց և խրատուց ապրիլ յայսմ աշխարհի, բայց զինչ
համեմատ առ այն իցէ, յորժամ յայնմ տանջանաց
ոք ապրեսցի. և Թէպետ և որդիք և ընտանիք ոք ի-
ցեն Աստուծոյ, սակայն պարտին և յիւրեանց անձանց
առաքինութիւնս ցուցանել. զի Թէպետ և անուանես-
ցին որդիք, և կարգս առաքինիս ոչ ցուցանեն, չէ այն
նոցա յօգուտ՝ անուն որդւոց. որպէս և Հարք՝ ոչ եթէ
ծնանելովն միայն են Հարք, այլ զի և կարգս ինչ ու-
ղիղս ուսուցանիցեն որդւոց. քանզի և Պաւղոս՝ ոչ եթէ
յորդեծնութենէն ևեթ Հաշուի մեզ օգտել, այլ ասէ,
եթէ Կացցեն ՚ի Հաւատս, ՚ի սէր և ՚ի սրբութեան՝
Հանդերձ պարկեշտութեամբ. զի եթէ տանջանս կրե-
լոց լցեն, ապա և առաւել և պատիւս վայելիցեն։

ԳԼՈՒԽ ԼԲ

« Զի ահաւասիկ Թագաւոր արդար Թագաւորես-
ցէ, և իշխանք իրաւամբք իշխեսցեն »։ Քանզի ոչ սա-
կաւ երախտիք են Աստուծոյ, յորժամ արդար Թա-
գաւոր յարուցանիցէ Թագաւորել, և իշխան իրաւանց՝
առ իշխել. և արդար՝ ոչ միայն զայն ասէ որ յընչից
ազատ իցէ, այլ որ զիրսն ամենայն՝ արդարութեամբ
վճարիցէ. և մանաւանդ Թագաւորին և իշխանաց վա-
յելէ արդարութիւն, որ կարող են և զօրէնս հաստա-
տուն պահել և զկարգս խանգարել։ Իսկ այլք ՚ի
Քրիստոս առին, Թէ « Ահաւասիկ Թագաւոր արդար
Թագաւորեսցէ », և իշխանս՝ զաւաքեալս. ըստ այմ՝
որ ասէր ՚ի Սաղմոսին, եթէ կացուսցես զնոսա իշխանս
ընդ ամենայն երկիր։

1 Յօր. Հրէաստանեայցն. օտար գրչաւ Աւորեստանեայցն։

« Եւ եղիցի մարդն Թաքուցանել զձանս իւր, և Թա-
քիցէ որպէս ՚ի ջուրց սաստկութենէ յահէ բազմու-
թեան զօրութեանցն. և երևեսցի ՚ի Սիոնէ՝ իբրև զգե-
տ սաստիկ երևեալ փառաւոր՝ յերկիր ծարաւոտ »։
Զյաղթութիւնն՝ որ ՚ի ժամանակին Եզեկիայի կատա-
րեցոյ ելին՝ նշանակէ։ Վասն այսորիկ Թոյլ ետ Աստուած
բազմանալ երկիւղին, և բանիւք յափ միայն ձնհանալ
Թշնամեացն, զի յորժամ իրքն ՚ի գլուխ ելանիցեն՝ մի
մոռասցին զաջանչելիսն և մի սակաւ ինչ համարեսցին
զաւրիսն։ Զի յորժամ մեծ իցեն ազէտք՝ սովոր է եր-
կեցուցանել և ահագին և նոր իմն երևել. իսկ յոր-
ժամ անցանիցեն՝ արհամարհելիք իմն լինին, և քնաւ
ինչ և յիշատակ ինչ չերևի իրացն գործելոց։ Տեսանէս,
զի աստ յառաջագոյն ասէ զյաղթութիւնն զՆեզեկիայ
աւքայի, ոչ յորժամ ահն անցանիցէ, և աքանչելիքն
մոռացօնք լինին. արդ զի մի այսպէս ինչ լինիցի, յեր-
կարեաց Աստուած զահն և Թոյլ ետ, զի երևեսցին
աքանչելիքն։

« Եւ եղիցի, ասէ, ՚ի Սիոնէ՝ իբրև զգետ սաստիկ
փառաւոր՝ յերկիր ծարաւոտ »։ Նախ եցոյց զնոսա կա-
րօտս երախտեացն, և ապա պարգևեաց զշահն։ « Եւ
ոչ ևս, ասէ, յուսացեալ լինիցին ՚ի մարդիկ ». զի յետ
երախտեացն և ոգւոյն ևս շահ գործեցան[1]։ « Տա-
ցեն, ասէ, զլսելիս իւրեանց ՚ի լսել. և սիրտք սկսաց՝
հայեսցին յիմանալ »։ Եւ յայտ է, եթէ ոչ լսէն միայն
ինչ պարտ է, այլ և ՚ի միտ առնուլ. Թէ զինչ օգուտ[2]
իցէ լսելն, յորժամ միտքն ոչ իմանայցեն։

« Եւ մի ևս յօժարեսցուցեն զլիմարն՝ իշխել ի-
րեանց. և մի ևս ասասցեն պաշտօնեայք քո, եթէ
լուռ լեր. կատարել զանօրէնութիւնս, խօսել մոլո-
րութիւն զՏեառնէ. զի խորհուրդք չարաց զանօրէ-
նութիւնս խորհեսցին, ապականել զխոնարհս՝ բանիւք
անօրէնութեամբ, և ցրուել զբանս տնանկաց ՚ի գա-
տաստանի. իսկ աստուածապաշտք՝ իմաստունս խոր-
հեցան, և խորհուրդս այս կայցէ և հնայցէ »։ Որպէս և
չարեաց՝ այնպիսի խորհուրդն իւր, որք ապականեցին և

1 Յօր. Օտար գրչաւ ՚ի վերայ եգեալ կայր գանձեսցին։
2 Յօր. Բառդ օգտոյ օտար գրչի է։

վնոնարհս[1] բանիւք անօրէնութեամբ. որպէս զի չարեացն այնպիսի խորհուրդ է՝ որք այսր անդր հարկանիցեն զմիտս, եղծանիցեն, զբանսն ստերիւրիցեն ՚ի դատաստանի: Արդարև յետին անօրէնութիւն է, փոխանակ ողորմելոյ և օգնական լինելոյ բանիւք ՚ի դատաստանն՝ Թիւրեն և ստերիւրեն: Իսկ խորհուրդք արդարոցն հաստատուն կայցեն. ոչինչ հատանէ և ոչ ընդ մէջ արկանի. որպէս և եդին ՚ի մտի երեք մանկունքն՝ չպագանել երկիր պատկերին, և ոչ ոք կարաց շրջել զմիտս նոցա. եդ ՚ի մտի և Պաւղոս չմտատնել զքարոզութիւնն, և ոչ ինչ կարաց շրջել զմիտս նորա. զի որպէս աստուածոյքն հաստատուն են, նոյնպէս և ծառայից նորա մնացականք. զի զոր ինչ խորհին՝ ոչ ոք կարէ զխորհուրդն զայն ցրուել, ոչ մահ և ոչ այլ ինչ. որպէս և Պաւղոս ասէր, եթէ Ոչ մահ և ոչ կեանք, ոչ հրեշտակք և ոչ հրեշտակապետք, ոչ իշխանութիւնք և ոչ զօրութիւնք, ոչ որ կանս և ոչ որ հանդերձեալքն իցեն, ոչ բարձրութիւնք և ոչ խորութիւնք, և ոչ այլ ինչ արարածք՝ կարեն զմեզ ՚ի սիրոյն Աստուծոյ մերկնել, որ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր: Քանզի այնպէս հաստատուն և մնացական է առաքինութիւնն, և չարիք՝ նմին հակառակ անկայական և անհաստատական: Ո՞ որք զօրաւոր եղև քան զնաբուքոդոնոսոր, որ ամենայն աշխարհաց առհասարակ տիրէր, և ընդ միով լծով փակեալ ունէր զտիեզերս, որում ոչ ոք կարէր ՚ի բառնոյ և չիշխանայր ընդդէմ դառնալ և դոյզն մատաղ մանկունքն՝ Աստուծոյ ահիւն շրջեցին զմիտս նորա: Զի այսպիսի ինչ կամի վէմն և յորդորէ, եթէ Ամենայն՝ որ լսէ բանից իմոց, նման է առն իմաստնոյ՝ որ շինեաց զտուն իւր ՚ի վերայ վիմի:

« Կանայք մեծատունք, արիք և լուարուք բարբառոյ իմոյ. և դստերք՝ յուսով լուարուք զբանս իմ»: Բարւոք ասաց, եթէ արիք. քանզի յանհնարին կործանումն կործանէ մեծութիւն, վասն որոյ և ասէ, եթէ արիք կանգնեցարուք ՚ի կործանմանէդ և լուարուք: « Եւ դստերք՝ յուսով». այսինքն՝ համարձա-

1 Յօր. Զխորհուրդս:

կեցարուք լսել. և զինչ լսիցեն. « Աւետ լիցի, ասէ, ամենայն երկիր »: Եւ ընդէր զմեծատուն կանայսն կոչէցէ, որպէս և այլ Թարգմանքն զերջանիկսն ասեն. զոյն և միս և այս մարգարէն բամբասէ. Որ ասիցեն, ասէ, ցտեառս իւրեանց, Թէ տուք մեզ՝ զի արբցուք. քանզի և նոքա բազում անգամ լինէին արանց կորըստեան պատճառք, կոչէ զնոսա ՚ի պատուհաս: Եւ կամ զբազաքս կոչէ կանայս, որպէս և յաջորդք իսկ յայտ առնեն:

« Յուշ լիցին աւուրքն տարեկանին, ցաւօք և կսկածանօք հանդերձ »: Զի յորժամ՚ի վիշտս մատնիցին, յայնժամ յիշեսցեն զուրախութիւն տանիցն, և ցաւ և կսկած ՚ի սիրտսն գործեսցէ. և ամենայն բանիցն, որ զսորին հետ էն՝ մի միտք էն: « Մինչև եկեսցէ ՚ի վերայ ձեր ոգի ՚ի բարձանց », այսինքն այցելութիւն ՚ի բարձանց: « Եւ դարձցին[1] և հանդիցեն յանապատի իրաւունք, և արդարութիւն ՚ի Քերմէղ բնակեսցէ»: Քերմէղ՝ լեառն է առընթերակայ երկրին Իսրայելացւոց. և յանուն լերինն՝ զիրկութիւն և զհաղաղութիւն երկրին առակէ. որպէս յորժամ յիշէ զԻբանան և զմայրսն՝ զերկիրն և զժողովուրդն առակէ. և այս ամենայն յետ դարձին կատարելր ՚ի նոսա. վասն որոյ և ասէ իսկ, եթէ « Յուսացեալք եղիցին ՚ի նա՝ մինչև յաւիտեան և յաւիտեանս». աստ ոչ եթէ զկատարած աշխարհին նշանակէ, այլ զժամանակս փրկութեան: « Այլ կարկուտն Թէ արձակիցէ, ոչ եթէ ՚ի ձեր վերայ եկեսցէ »: Զի Թէպետ և յաւետեան զօրք բազումք ՚ի բազում ազգաց՝ յաւուրս Ջօրաբաբելի, ոչ ինչ կարացին ստնանել նոցա:

Դարձեալ և այլազգ ևս. « Եղիցի անապատն՝ իբրև զՔերմէղ, և Քերմէղն՝ իբրև զանտառ Համարիցի ». զի չէն ինչ ընդհատ քաղաքք յանապատից, ուր կոտրուածք գործիցին և հանապազորդ կռիւք լինիցին. բնաւ զինչ ինդիր ևս ատենից և դատաւորաց, ուր անօրէնութիւնք գործիցին. իսկ յորժամ անօրէնութիւնն ՚ի միջոց բառնայցէ, ապա վայելէ երկիրը խաղաղութեամբ:

1 Յօր. Ե- ՚ի դարձին:

« Եւ եղիցին, ասէ, գործք արդարութեան՝ ի խաղաղութեան ». և զիաւրդ արդեւք ուր մարտն և կռիւ ի միջի կայցէ՝ անդ խաղաղութիւն իցէ. ըստ այնմ՝ եթէ Հոգին հակառակ կայ [1] մարմնոյն՝ Թէ կամիցիմք՝ բնակեմք արդարութեամբ ի խաղաղութեան քաղաքի, ուր բնաւ և պատճառք կռուոյ ուրեք ոչ երևին. զի որպէս մայր պատերազմաց՝ անիրաւութիւն է, նոյնպէս և մայր խաղաղութեան՝ արդարութիւնն է. և մի՝ ի նեղութիւն մարմնոյ լինչ հայիցիս, այլ ընդ այն՝ եթէ զինչ շահ ի նեղութենէն լինիցի. զի բազում անգամ մարտ և կռիւ՝ պատճառք խաղաղութեան լինին. զոր օրինակ մինչդեռ զօրականք պատերազմ տայցեն, քաղաքք և ռամիկք ի խաղաղութեան բնակեալ են. և յորժամ դադարիցեն վատութեամբ և ոչ կռուիցին ընդ թշնամիս, յայնժամ բառնայ ի միջոյ խաղաղութիւն. նոյնպէս և աստ։

« Եւ հաստատիցի նոցա արդարութիւն ի հանգիստ, և յուսացեալք եղիցին մինչև յաւիտեանս. և բնակեսցէ ժողովուրդ իմ ի քաղաքս խաղաղութեան ». զի ոչ այնպէս այլ ինչ լինիցի հանգիստ ոգւոյն, և ոչ այնպէս ցածուցանիցէ զխիղճ մտացն, և ոչ այնպէս լինչ զուարճացուցանէ զմիտսն՝ իբրև զարդարութիւն, յորժամ չիցէ ինչ՝ որ ամբաստան լինիցի և լռիցէ զնօրհնուրդսն։ « Եւ յուսացեալք եղիցին մինչև յաւիտեան ». քանզի արդարութիւն ոչ գիտէ զժամանակս փոփոխումն, ոչ զմարդկեղէնն իրաց զծանրութիւնս. ամենայն այսպիսի ինչ մերժեալ, ընկճեցեալ և արհամարհեալ է յաչս նորա։

« Եւ եղիցին՝ որ բնակեալ իցեն յանտառս, յուսացեալք իբրև զդաշտականսն ». զի որ առաքինութեամբ ոք յանապատ տեղիսն կայցէ, քան՝ի քաղաք՝ ևս զգուշագոյն բնակեսցէ. իսկ որ՝ ի չարիս թաթաւեալ իցէ, թէպէտ ընդ բիւրապատիկ պարսպօք բնակեսցէ, չէ ինչ ընդհատ քան զմերկս և զանզէնս. մեծամեծ բաւիք են առաքինութիւն՝ առ՝ի զգուշութիւն, մեծամեծ չարիք են մեղք՝ առ՝ի մատնիչ լինել ոգւոյ յապականութեան։

1 Յօր. Որոյ եթէ ի վերայ եգեալ էր. Հոգին ցանկայ հակառակ մարմնոյն։

նութիւն [1]։ Իմաստութիւն օգնեսցէ, ասէ, իմաստնոյն, քան զտասն իշխանս քաղաքացւոյ՝ զկնի հանձարոյ՝ զթուղթ իմաստունք։ Ա. յսպիսի կերպարանօք վառեսցուք զանձինս. քան զայս սպառազինութիւն՝ չիք ինչ զօրագոյն. և ոչ երբեք երևեցուցանէ զմեզ մերկս և անզէնս։ Զինչ ինչս եղև Յոհաննու՝ յանապատական բնութենէն. որոյ ինչասակարաց, կամ որպիսի՞ ատակաց եւ երբեք՝ ի ձեռս զվայրագն. կամ զինչ ինչս եղև կարմեղով լեառն՝ եղիայի. ո՞չ սպաքէն պարբսպեալ քաղաքացն էր կասկած՝ քան զլերինն։ Զիք ինչ զգուշագոյն քան զառաքինութիւնն, և ոչինչ տգեղագոյն՝ քան զչարութիւն։ Զհաստատեսցին, ասէ, ոտք նորա, և զեղևեալ են ձանապարհք նորա, և ոչ դիւրաւ ձանաչելիք. և զինչ չարմանք իցեն, եթէ՝ ի մարդկան նենգութեանց անըմբռնական եղև, ուր և՝ ի վերուստ եկելոց հասելոց հարուածոցն՝ գտաւ ամբարիշտ։ Զոցոյն ակնարկէ և Քրիստոս, ոչ զնեերքին ինչ փորձութիւն, այլ որ՝ ի վերուստ գայցեն. Է՛լ, ասէ, անձրեւ. անձրեւս աստ՝ զառ՝ ի բարձանց եկեալ ինչ՝ ի վերայ փորձութիւնս կոչէ. և յարեան գետք՝ ի գետս. զառ՝ ի ծառայակցաց ինչ նենգութիւնս. և շնչեցին հողմք և ոչ կործանեցաւ։ Կամիս, ցուցից քեզ այսպիսի այլ՝ որ՝ ի վերուստ փորձեցաւ և՝ ի նեղբուստ նենգեցաւ, և ոչ ինչ վնասեցաւ, այլ և առ երկինս և առ երկիր՝ կաց ճնշոյ հաստատուն. Տէր ետ, ասէ, և Տէր առ. որպէս և Տեառն կամք եղեն, նոյնպէս և կատարեցան. տեսո՛ր զանձրևն իջեալ՝ ի վերուստ։ Ա՛հաւասիկ տաց, ասէ, քեզ իշխանութիւն՝ ի վերայ նորա. տե՛ս և զառ մարդկանէ նենգութիւնսն։ Այս, ասէ, քան ինչ՝ ի Տէրն քո, և վհատեաց. այլ ոչ ինչ ասաց այսպիսի։ Տեսո՛ր, ո՞րպէս բաղխեաց զչինուածն՝ գետն, և ոչ կործանեցաւ. քանզի հաստատեալ էին հիմունքն՝ ի վերայ վիմին ար...ացեալ [2] Աստուծոյ երկիւղին։

« Երանի՛ որ սերմանիցէն ընդ ամենայն ջրով՝ ուր եղն և էշ կոխիցեն »։ Եւ զինչ ինչ յայտ առնիցէ երանութիւնս. այս՝ ըստ այլոց պատմութեանն, ասէն,

1 Յօր. Պատանութիւն։
2 Յօր. ի մաշմանէ Թղթոյն՝ անընթեռնուլի. Թուի արմատեալ։

ղդարձէն նշանակեալ։ Ինձ այսպէս թուի, եթէ այլ ինն ակնարկէ. որք զկորդացեալ ոգիսն կակղիցեն, և վար երկրաւոր սերմանն պատրաստիցեն։ Եւ ոչ ասացի, եթէ ջամենայն երկիր, այլ՝ եթէ ընդ ամենայն ջրով՝ զոր եզն և էշ կոխիցեն. զի ոչ միայն առ սերմանեղն Աեթ փութ այցեն, այլ զի և ՚ի չափ հաստուցեալ պատրաստիցեն զարմիս յըշտեմարանս կենաց։

ԳԼՈՒԽ ԼԹ.

« Վայ այնոցիկ որ թշուառեցուցանիցեն զձեզ, բայց զձեզ ոչ ոք առնէ թշուառականս »։ Ջինչ խօսիսդ. զի եթէ թշուառեցուցանիցեն, զիա՞րդ չառնիցեն թշուառականս. զի նման այսպէս թուի, բայց իրքն այսպէս ոչ վճարին։ « Եւ որ անարգէն՝ ոչ զձեզ անարգէ, այլ զանձն »։ քանզի չէն հաստատուն իրքն. և թէ անզգամ լինիցիս՝ միայն պեղեսցես. բայց սակայն տեսանեմք զբազումն, զի և այլոց լինին ՚ի նաստակաբք. այլ ոչ ոք այլում լինի ՚ի նաստակաբ, այլ իւրաքանչիւր անձանց ՚ի նաստակաբք. զի չարն՝ իւր չար է. Սիրտ, ասէ, անզգամի՝ ցաւք են. միթէ ՚ի մէնջ ումեք. այլ ստացողին։ Բարկութիւն՝ կորուսանէ զիմաստունն. այր ցասկոտ՝ տխեղծ է կերպարանօք. ոչ ընդրա ինչ գոյն փոխէ՝ որ ըստ ցասնուն, այլ զիւր. զի Թէպետ և նա Թշնամանիցի, այլ որ ցասնուն՝ վերս առնու ՚ի սիրտն։ Եւ դարձեալ ասէ, եթէ Որպէս ազօխ ատամանց ՚ի նաստակ և ծուխ աչաց, նոյնպէս և անօրէնութիւն այնոցիկ՝ որ կրնչեն զնա. զի ՚ի կապանս անձին իւրոյ չազի ամենայն ոք, և անօրէնութիւնք՝ զայր կորուսանեն։ « Եւ իբրև զցեց ՚ի վերայ ձորձոց, այսպէս մատնեսցին »։

« Տէր, ողորմեայ մեզ, զի մեք ՚ի քեզ յուսացեալ եմք »։ Տեսանե՞ս, զի ողորմականացն ոչ վայրապար պարտ էր ողորմել. չունի՞ս ինչ ուղղութիւնս, չկայցե՞ն ինչ վաստակք և ձգունք, գէթ հաւատովք միայն ժառաց և առնուս։ Եւ ամենայն ուրեք տեսանեմք, զի որք ողորմութիւն գտին՝ այսպէս գտին։ Սկսաւ առ

ոտն, ասէ, և աղաչէր, եթէ երկայնամիտ լեր և հատուցից. և որ եկեալն Թախանձէր զբարեկամն ՚ի գիշերի, Թեպետ և վասն բարեկամութեանն չառ յանձն տալ, սակայն վասն ժուռթեանն հաւանեցաւ. և ոչխարն որ չինննուն և չինն ոչխարացն էր կորուսեալ, խնդրեցաւ և գտաւ, և եղև պատուական հովուին։ Եւ պարտ է խնդրել. զի եթէ ողորմի Աստուած, ընդէ՞ր ոչ ամենեցուն ողորմիցի. զի ուր ողորմութիւն է, անդ պատուոյ ինչ խնդիր չկաք, ոչ վարուց և ոչ ուղղութեանց ինչ պէտք. և եթէ այդպէս իցէ, ապա ամենեցուն պարտ էր ողորմել. զի եթէ ըստ Աստուծոյ մարդասիրութեանն իցէ ամենայն ինչ՝ որ լինիցի, ապա մի՛ ասեր, եթէ այս անուն արժանի է, և այս անուն չէ արժանի. իսկ յորժամ խնդրիցէ՝ չկաք անդ ժամանակ այսպիսի բանից. իսկ յորժամ աստ մարդասիրութիւնն՝ լինիցի փրկութիւն, ելցէ ՚ի բաց ձառ անարժանին և արժանաւորին։

Եւ արդ զիա՞րդ ասիցէ, Թէ Ողորմեցայց՝ որում՞ ողորմեցայց, և գԹացայց՝ յորս գԹացեմ. յայտ առնէ Թէ ոչ վայրապար ումեք ողորմի, այլ են արժանիք և անարժանք։ Արժանեքեան իսկ արժանի են փրկութեան Թէ կամին, բայց ոչ ամենեքեան արժանի ողորմութեան, քանզի ոչ կամին. և անտի յայտ են արժանիքն և անարժանքն։ Եւ զիա՞րդ իցէ, ասէ, այդ ՚ի գէպ. ես ասեմ ՚ի գրոց և ոչ ՚ի մտաց ինչ. պարտէր մին բիւր ստացող, պարտէր և միւսն Հարիւր դահեկան, և երկոքեանն ընդ պարտեօք էին. պա՞րտ էր փրկութիւն գտանել եթէ ոչ. ասեմ եթէ պարտ էր, և կարի քաջ. և անդ ոչ եթէ արժանաւորութիւն ուրուք խնդրէր, քանզի երկոքեանն ընդ պարտեօք էին. և սեսանեմք զինն, զի յետ Թողութեանն՝ զրկեաց զանձն ՚ի մարդասիրութենէ անտի։ Նկն և Որդին Աստուծոյ, կիսոցն Թողոյր զմեղն, և զկէսս կոչէր. ոմանք մերձեցան և ոմանք ոչ մերձեցան. և յայտ է եթէ ողորմի, այլ ոչ բռնութեամբ կամ ՚ի հարկէ, կամ եթէ յորժամ ոչ կամիցին՝ որ զողորմութիւնն խնդրիցեն. այլ զայն միայն պարտի ցուցանել, որ զողորմութիւնն հայցիցէ, զի ցանկայցէ ողորմութեան և կամիցի, զի այնպէս և իմանալ մարթիցէ և զչնորհս ողորմութեանն. ապա

Թէ պլազզ ինչ յուլանայցէ, վիաՌդ իմանայցէ զԼըոյն փրկուԹիւն կամ զընորհացն առաւելուԹիւն։ Եւ ոմ՛ն ոք, ասեն, այնչափ անմիտ իցէ կամ հէք և կամԹը-շուառական, որ զբիւր չարիս գործեալ իցէ, և Աստուծոյ մարդասիրուԹեան ոչ ցանկանայցէ և փրկել ոչ կամիցին։ Բազումք են և յոյժ անԹիւ. վի յորժամ եկն Քրիստոս պարգևել զմեղացն ԹողուԹիւն, ընդԷրը ոչ կամեցան Հրեայք ապրել. որոց և ասէր իսկ, եԹէ Բազում անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, և ոչ կամեցարուք. տեսանէ՞ս, վի և նոքա ոչ կամեցան։ Ջինչ դիւրագոյն կայցէ քան զաղօԹս. և Թէ չկամիցիս կալ յաղօԹս, և վիաՌդ կամիցիս գտանել ողորմուԹիւն. և արդ որ հայցել ոչ կամիցի զԹողուԹիւն, վիաՌդ ցանկայցէ ԹողուԹեան. միԹէ ուղղուԹի՞նք ինչ խնդրիցին և չկարիցեն բաւական լինել կամ քիրան կամ վաստակ կամ ՃգնուԹիւն. Խնդրեա միայն, ասէ. և դու և զայդ ևս ոչ կամիս, այլ զսխմոՀնական զիտան ունիս, որ ասէր. Աղաչեցէք զՏէր վասն իմ։ և զայն ոչ գիտես՝ վի ոՌչափ իցէ ոք մեծ և աքանչելի, այն որ վասն քոյն աղաչիցէ, ոչ այնպէս աղաչի նման Աստուածծ, որպէս և քոյոՀն աղօԹիւքն. և եԹէ պիղծ իցես և անհամարձակ, այլ ցանկալի էն քո աղօԹքն՝ Աստուծոյ, քան զըբօյն և զհամարձակին. քանզի ոչ եԹէ պատուի ինչ ցանկայ Աստուած, եԹէ զբեզ մերժիցէ և զնա մեծարիցէ. մի միայն խնդրէ Աստուած, վի ընտանուԹիւն կալցիս ընդ նմա։ Եւ արդ ընդԷը արդեւք մերժէր զաղօԹսն Երեմիայ մարգարէին, որ բազում անգամ աղօԹս մատուցանէր վասն Հրէիցն. ոՀ ապաքէն վի յորդորեսցէ զնոսա ՝ի վերայ անձանց կարդալ առ Աստուած. Մի, ասէ, կար յաղօԹս վասն ժողովրդեանդ այդորիկ. և յարէ անդրէն ՝ի նոյն, եԹէ Ո՞չ տեսանես զինչ դոքայդ գործեն. դոցա, ասէ, չէ ինչ փոյԹ, և դու կամիս, կոծիս, ողբաս և գոչես։ Բայց մեք աղաչեցուք և սրբովք, այլ բազում յոյս ՝ի մերոյն աղօԹս ունիմք. քանզի և մաքսաւորն ոչ աղաչեաց զվերակացուն իւր առ ՝ի Աստուածոյ, այլ ինքնին այնչափ կարող եղև՝ որչափ ոչ լինին կարող բիւրք վերակացուք արդարք, որք աղաչեին արդեւք վասն նորա զԱս-

տուած։ Մի՛ ասեր, եԹէ չունիմ աղօԹս, չեմ արժանի, չեմ համարձակ. կարևոր իմն պատճառս զաղօԹիցն ասես [1] ինձ, զորս անարժանուԹեան և լռուԹեան պատճառ կարծես։ Զիցե՞ս արժանի, չիցե՞ս համարձակ. Թէ այդպէս իցէ դիր դեղ ցաւոցն զաղօԹանց. լուր զինչ ասէին երեք մանկունքն, Թէ Զնիք մեզ բանալ զբերան, զի ամօԹ և նախատինք եղեն ծառայից քոց և պաշտօնէից։ Եւ արդ, զնա՛րդ չեղև արդեւք նոցա բանալ զբերանս. այլ բացան բերանք և աղաչեցին և առին՝ զոր ինչ խնդրեցինն. և մեք ընդ նմին բարբառոյ աղաչեսցուք։ Զոր ինձդ ասես եԹէ չեմ արժանի, չեմ համարձակ, զդոյն՝ Հասարակաց Տեառն ասա՛, և վաղվաղակի առնուս համարձակուԹիւն. ոՀ տայցէ քեզ խիղճ մտացդ հայել՝ի վեր համարձակուԹեամբ. դոյն իսկ այդ՝ եղև շահ մաքսաւորին։ Զոր կարծեաց՝ եԹէ խափան իցէ աղօԹիցդ, դա է՝ որ առնէ սուրբ զաղօԹսդ։ Ա՛յսպիսի միտք և բանք ոչ միայն յանցաւորաց վայելէն, այլ և այնոցիկ՝ որ զուղղուԹիւնս ինչ կատարեցին. որպէս Աբրահամ յորժամ հայցել լինն կամեր յԱստուածոյ, ասէր. Բայց ես հող եմ և մոխիր. քանզի զմտաց ինչ խիղճ ոչ ունէր ՝ի սրտի, վասն այնորիկ ՝ի [2] քննուԹեանն նուաղուԹիւն ընԹացաւ, զի այնու զինքնուցանիցէ զմտացն հպարտուԹիւն. և ԴաւիԹ ասէր, եԹէ ես որդն եմ և ոչ եմ մարդ։

Բազում անգամ դարձար ընդդէմ Տեառն. վասն այնորիկ կաս անդէն ՝ի մեղս, զի և այլ ևս մեղս ՝ի վերայ մեղացդ դիցես, յորժամ ոչ մերձենայցես և աղաչիցես. տե՛ս զմարգարէն, զնա՛րդ ՝ի վերայ բազմաց աղաչէր. « Տէր, ողորմեաց մեզ, ասէր, զի մեք ՝ի քեզ յուսացեալ եմք »։ Զինչ ինչ լաւ կայցէ քան զայսպիսի աղօԹս. յորժամ ոչ վասն միոյ, այլ վասն ամենայն անդամոց եկեղեցւոյ առհասարակ աղօԹս մատուցանիցէ. զի այնպէս հաճ ունէր ընդ իւր զԱստուած, զի ՝ի վերայ հասարակաց աղաչէր և վասն ամենեցուն հոգայր, և զպատճառս ևս աղօԹիցն ասէր. « Զի քեզ, ասէ, յուսացեալ եմք »։ Այս և դու այսպէս ինչ. մի-

1 Յօր. Աէն։ 2 Յօր. Զնք ՝ի։

Թէ սակաւ ինչ ինչ ինչ Աստուծոյ մարդասիրութիւնն. միթէ քո չարիքն՝ չափոյ նորա բարերարութեանն յաղթել կարիցեն. զի որպես կայծակն ինչ փոքր՝ ի հատարածն ծովու, նոյնչափ և ևս նուազագոյն մեղքն և չարիք մարդկան՝ առ Աստուծոյ մարդասիրութիւնն: Կամիս ուսանել զնորա զօրութիւնն. կամօք միայն և զանպատմապարանն և զդատապարտեալս և զթշնամիս և զօտարացեալս և զանյոյս և զանաստուածս յաշխարհիս՝ արար իւր որդիս և ժառանգակիցս Իւրոյ Միածնին: Կամիս ուսանել փոքրափ ինչ զօրութիւն ունի առ ի մեղացն սատակումն. Եթէ իցեն, ասէ, մեղքն ձեր իբրև զձանձախարիճ, իբրև զձիւն սպիտակ արարից. և այլուր զևս դիւրագոյն. Յանեացես յիս զոպային, և սուրբ եղէց. այսինքն՝ ծաղիկ ինչ է՝ զօր Թանային յարեան, և սրսկէին զյանցաւորօքն ժողովրդեանն. Լուասցես զիս, և քան զձիւն սպիտակ եղէց. զի եթէ լինելն իսկ ոգւոյն՝ առ ի նորա մարդասիրութենէն են, ոչքափ ևս առաւել սրբիլն և անաղտ լինել: Մի՛ ոք վհատեսցի՝ անհնարին համարել զխոփոխումն, զի և այն ևս գըԸխաւոր է մեղացն. քանզի և մեղքն այլ ինչ ոչ են, այլ զի յօրժամ առանց Աստուծոյ կամացն՝ գործ ինչ գործիցի. և յապաշխարութիւն չդառնալ՝ արտաքոյ նորա կամացն է: Այմենեցունն ինքն է տէր՝ և բնութեանց անձնիշխանութեանց. կամեցաւ՝ և հաստատեցան երկինք. եթէ կամի միայն, և անդէն լինիցես դու սուրբ. Աստուած է, ասէ, որ արդարացուցանէ, և ոմ է որ դատապարտիցէ: Մի՛ ի բազմութիւն քոց մեղացն հայիցես, այլ յԱստուծոյ յանբաւ մարդասիրութիւնն. մեծամեծ իցեն ցաւքն, այլ առաւել մեծ է բժիշկն. ահագին է ձիեռն, այլ իմաստուն է նաւապետն. ի յուսահատութեան կործանեալ իցեն ոգիքն, այլ կազմ են գեղքն յետ յուսահատութեանն. և չիք ինչ՝ որ նմա յաղթել կարիցէ, կամ անցանել ըստ նորա ողորմութիւնն. ասէ. Այսօր եթէ ձայնի իմում լսիցէք: Ջինչ չար կայցէ քան զաւազակ. և լոկ բանիւ ի միում վայրկենի յաւաջ քան զդունդն սրբոց եմուտ ի դրախտն. զի՛ ի մեղն և եթէ հայել և խոհալ՝ այնր միայն է՝ որ յուսացեալ ապաստան իցէ Աստուծոյ մարդասիրութիւնն. զի յօրժամ բարեկամ զօք ունիցիմք,

Թէպետ և բիւր յանցանս յանցեալ իցէ, սակայն ոչ ինչ զանգիտեմք, յուսացեալ՝ ի սէր բարեկամի. ապա Թէ զանգիտիցեմք ինչ ապաստան լինել՝ ի սէրն, մեք մեղիս կորուսանեմք զհամարձակութիւն: Ո՛չ ապաքէն որդին օձառղ վասն այնորիկ արժանի եղև փրկութեան, զի Թէպետ և այնչափ ակնկորեալ էր յաղթօքն զոր գործեաց, սակայն ժտեցաւ դիմել գալ առ Հայրն. վասն էր այնպէս լըքմիտ ընկալաւ զնա. զինչ ինչ ուղղութիւնս ետես՝ ի նմա. միթէ կամաւ ինչ և առ դիւրութիւն եկն. ոչ առ սուղ հարկի, և ոչ առ ձեռնի աղքատութեանն և անարգանացն բռնի վարելոյ և ածելոյ. այլ Հայրն զայնր ամենայնի հաւաստիան ոչ ինչ պահանջեաց, քանզի գիտէր ձարտար զամենայն. այլ ետես ծիւրեալ ծնկեալ, երիթացեալ, ծաւրաւեալ, և զայն լիով ցանկալի համարեցաւ. զի Թէպետ և առ վշտի դիմեաց գալ, ընկալաւ զորդին. զի յորժամ դառնայցեմք առ Աստուած՝ ընդունիցի զմեզ գրկատարած ձեռօք, Թէպետ և առ վշտի և կամ առ կարիս դիմիցեմք առ նա. զի յորժամ սիրիցէ ոք զոք, զամենայն միասս Թողեալ՝ զմի և եւթ խնդրէ, զերեսս սիրելեաց տեսանել. և չնորհս ևս ունի վշտացն՝ որ ստիպեցին զնա գնալ առ նա: Քանզի և Հրեից ոչ այլ ինչ արար աղաղակել առ Աստուած, այլ նեղութիւն և աղիւսակին չարչարանք. միթէ կամք, միթէ մտաց ինչ յօժարութիւն. ոչ ապաքէն յորժամ սպանանէր զնոսա՝ յայնժամ խնդրելին զնա. և արդ զինաքրդ, զի յայնժամ միայն խնդրելին զնա, միթէ մերժէր զնոսա յանձնէ. և ոչ երբեք. զի ցանկալի է Աստուծոյ, զի և յորժամ առ վշտի դիմիցեմք առ նա՝ ընդունել զմեզ. և այնպէս ցանկալի՝ զի և զվիշտն ևս ինքն համարի ածել՝ ի վերայ նորա. Թէ ոչ, ընդէր իսկ սպառնայցէ զգեհենն և հանապազօր երկեցուցանէր զմեզ. ոչ ապաքէն՝ զի առ ինքն դարձուցանիցէ. և ընդէր արար զմեզ բաղում իրաց կարօտս. ոչ ապաքէն զի գոնեա վասն կարօտութեանն առ նա դիմեացուք: Դարձեալ այլ լիով պատճառք. տես, զինչ ասէ. Խրատեսցէ զքեզ, ասէ, ապստամբութիւն քո, և չարիքն քո՝ յանդիմանեացեն զքեզ, զի ծանիցես և գիտասցես՝ եթէ դառն է քեզ և՞չար՝ Թողուլն զնա. ոչ կամիս բանիւք զգաս-

տանալ. Թոյլ տամ արդեամբք խրատել. ես ոչ լինչ կամի զայդ, բայց որովհետև դու զայդ կամեցար, չեղեց դիմադարձ քոյ կամացդ։ Եւ տես զՀայրն գԹածՙ զի ոչ բանս լինչ ողոքս և ոչ բարբառս լինչ աղերսական լուաւ, այլ միայն ետես և գիրկս տարածեաց։ Ջի՞նչ լինչ ուղղութիւնս տեսեր, զի այդպէս սիրով ընդառաջ ելեր. և ոչ այսչափ միայն, այլ քան զայն՝ որոյ զուղղութիւնս էր գործեալ՝առաւելագոյն պատուեաց. և այն չքը արդեւք բաւական զայդ այլոյն համարել, այլ առաւել ևս պատուոյ արժանի լինել։ Եթէ այդպէս իցէ, քան զայն՝ որ ոչն մեղանչիցեն, մեղաւորքն լաւ են։ Ոչ եթէ մեղաւորքն լաւ իցեն, այլ որք կարող իցեն յետ մեղացն դառնալ. և աստ՝ յայտ առնէ, Թէ մարթի մեղաւորին և անկելոյն ևս՝ լաւ լինել քան զառաջինն։

« Եւ եղև զաւակն ապստամբողաց՝ի կորուստ, և ծնունդք նոցա ապականեցան »։ Ոչ սատակէ Աստուածՙ զամենայն չարս, և ոչ Թողու. ոչ սատակէ՝ զի ընտիրքն երևելիք լինիցին. բայց և ոչ Թողու՝ զի զայլսն զգաստացուսցէ և զարԹուսցէ։ Ջի Թէ զամենեսեան սատակէրը, ապա և զՀգանցն իսկ բարուրս՝ի միջոյ բառնայր. և Թէ Թողոյր ամենեցուն, ծուլացուցանէր զամենայն կենդանիս, և դժուարակատար զառաքինութիւնն գործէր, և չպատժելով զՀնաստակարն՝ զառաքինեացն զվաստակն խափանէր։

« Սակայն մեր փրկութիւն՝ի քէն է և՝ի ժամանակս նեղութեան. վասն ձայնի սաստից քոյ՝ յիմարեցան ժողովուրդք »։ Իբր ոչ եթէ ձայն գուցէ Աստուածոյ, քաւ լիցի. զի այն՝ մարմնոյ է և մարմնոյ յօդակապացն պէսպէս անդամոք. այլ զանձնական յաղթութեանն դիւրութիւն յայտ առնէ այսուհիկ։ « Բայց արդ ժողովէ զկապուտան ձեր՝ փոքրկանոյ մինչև՝ի մեծամեծս. զոր օրինակ ժողովեսցէ ոք զմարախս, այնպէս խաղայցեն ձեւք՝ի խորխորատիցն իւրեանց »։ Բարիոք ասաց՝ խորխորատից, զի խորխորատ՝ զժողովուրդսն և զմեծս կոչէ։

« Սուրբ է Տէր Աստուածՙ որ բնակեալ է՝ի բարձունս »։ Եւ զի՞ ասիցես՝ Թէ՝ի բարձունս տեղիս. ոչ միայն անդ, այլ և՝ի յոգիս բարձրացեալ. և շրթունք

արդարոյ Հանապէն զբարձունս, և որք երկիր պագանեն նմա՝ Հոգւովն Աշմարտութեամբ պարտ է երկիր պագանել նմա։ Բարձրեալ այն է՝ որ յերկրէ և յերկրաւորացս Հեռի իցէ. քանզի ոչ եթէ վայրապար լինչ պարտ իցէ՝ի բաց կալ՝ի կենցաղականացս, այլ բազում անձըպետութեամբ, և այնչափ՝ որչափ մեռեալք՝ի կենդանեաց. զի Թէպէտ և Հեռանայցես և անդրէն մօտ կայցես, վաղվաղակի անկանիցիս՝ի բուռն. Հեռի արա, ասէ, ՚ի նմանէ զՀանապարՀս քո։ Բազում անձըպետութիւն պարտ է առնել ընդ անպիտանութիւն և ընդ պիտանութիւն. զի Թէպէտ և գլորիցիս՝ մի՛ վաղվաղակի՚ի խորխորատ անկանիցիս, այլ զի պատրսպարել և յառնել կարիցես, զի Հաստատեալ կայցես Հանապազ զգուշութեամբ։

« Լցաւ Սիոնն իրատամբք և արդարութեամբ. օրինօք՝ մատնեսցին». զի ըստ արդար դատաստանին Աստուծոյ լինիցի վՀուն։ « Եւ՚ի գանձս է փրկութիւնս մեր ». այսինքն՝ ՚ի զգուշութեան։ Մի՛ ոք վՀատեսցէ, մի՛ ոք զանգիտիցէ, քան զամենայն ինչ՝ զայս պարտ է նախ խնդրել, որ է մայր առաքինութեանց, զի յորժամ ոչ զրկիցէ զոք, և ոչ այլոց արարոց ցանկանայցէ՚՚ի խաղաղութեան բնակեսցէ, առնեցուն ցանկալի և սիրելի։ Եւ ոչ վայրապար լինչ արդարութիւն ասէ. այլ՝ Թէ լցաւ իսկ արդարութեամբ։ Եւ այս իսկ է խնդիր, զի եթէ յընչից կողմանէ արդար իցես, և յայլ իրս չիցես արդար, կէս ինասի է արդարութիւնն. նա և զմեծութիւնն, Թէպէտ և ոչ տեսանիցես, բայց գիտիցես՝ Թէ քեզ պահեալ կայցէ՝ վտահ լինիցիս. սոյնպէս և վասն մերոյ փրկութեան պատրաստեալ կայ քեզ մեծութիւն՚ի գանձս ծածկեալս. և այժմ ոչ երևի, զի մի՛ նենգիցի լինչ ուստեք. այլ մի՛ կարծիցես Թէ աղքատ իցես, Թէպէտև ոչինչ երևեսցի այժմ՚ի Հրապարակս։ Եւ վասն էր արդեւք այժմ ոչ երևեսցին փառքն. մանաւանդ զի և այժմ իսկ երևին. քանզի և մի՛ ոք փառաւորի քան զառաքեալսն, կամ մեծարոյ և պատուական քան զմարգարէսն՝ որ զամենայն տիեզերս ընդՀանուր կալան։ Եւ այլազգ ևս. ոչ կամի այժմ

1 Յօր. Արդարութեամբ օրինացն մատնեսցին։

յայտնի առնել այնոցիկ՝ որ ձգնեն կամիցին, զի [1] տացէ ժամանակ. այլ, ասեն, ևս յօժարագոյնք լինեաք, եթէ զփառսն տեսանեաք. այլ ևս լիմն լքանեաք, զի մեծամեծ լիմն համարեաք զկարեացն ձգնութիւն։

« Եկն իմաստութիւն և հանձար »։ Սկիզբ և Սիմաքոս՝ փոխանակ հանձարոյ՝ գիտութիւն ասեն, և փոխանակ աստուածպաշտութեան՝ երկիւղ և աստուածպաշտութիւն՝ առ Տէր։ « Սյս են դանձք արդարութեան ». զի դիրք՝ իմաստութիւն ամենայն ուրեք զերկիւղն սովոր են կոչել. և հանձար և աստուածպաշտութիւն հեռացեալ մերժեալ է. ունի արդեւք ածմերձեցոյց զնա. պատիժքն. այս են դանձք արդարութեան, այսինքն՝ զի զգուշութեամբ հաստատեալ ունին զարդարութիւն. զի երկիւղ Աստուծոյ՝ զամենայն ինչ կարող է առնել յանձին։

« Սհա աւադիկ յահէ ձերմէ երկիցեն նոքա, յորոց դուք երկնչէիք. բոլորք բարձցեն յերեսաց ձերոց ». զառաւելութիւնն Աստուծոյ՝ զզօրավիգն օգնականութեան յայտ առնէ, յորժամ զծառայս ի վերոյ քան զտեառս առնիցէ. զի ծանիցեն՝ եթէ ոչ նոքա իւրեանց ինչ քաջութեամբն կալան, և ոչ սոքա վասն անձանց ինչ տկարութեան մատնեցան, այլ ամենայն ուրեք առաքինութիւն և ծուլութիւն են պատճառք, և յամենայն վայրի զօրութիւնն և արդարութիւնն Աստուծոյ երևի. զի ոչ յիւրան խնայէ՝ յորժամ մեղանչիցեն, և ոչ յօտարացն ի պարտութիւն մատնի, յորժամ կայցեն ճնշայեն անդէն ի նոյն չարիս։ Սյսպէս յորժամ տեսանիցես ի տանջանս զԲաբելացիսն՝ զարմացիր ընդ արդարութիւնն նորա, զի զիւրան և զօտարոտիսն՝ միով կշռով դատաստանին դատեցաւ. զի առաքինութիւնն և ծուլութիւն միայն առնեն կամ արդարացեալ կամ պատժապարտս. զամենեսեան առհասարակ արար, զամենեսեան զոյզ սիրէ. գարձեալ առհասարակ իբրև գործք ձեռաց իւրոց՝ ամենեքեան կենդանացան. այլ ի պարգևս և ի պատիժս՝ ոչ ամենեքեան առհասարակ. զի չարքն և բարիքն ինքեանք եղեն կամօք. և վասն այնորիկ ի կէսս [2] գառնայ և կիսոցն երեսս դարձու-

1 Յօբ. Զիք ա։ 2 Յօբ. Զկէսս, այլ օտար գրչաւ՝ ի կէսս։

ցանէ, և զկէսս ատեայ և մերժեայ, և զայլս մատուցանէ և սիրէ։ Երկու ընտանութիւնք են ընդ Աստուծոյ. մի՝ ըստ արարչութեանն, և միւս ևս՝ ըստ առաքինութեանն։

« Հրեշտակք արձակեցին գառնապէս, բայց են ի խնդիր խաղաղութեան. զի հատցին ձանապարհք նոցա. գազաբեաց ահն հեթանոսաց, և բարձաւ ուխտն ի միջոյ նոցա, և մի ինչ համարիցիք զնոսա ի մարդիկ». այսպիսի ինչ գործ Աստուծոյ է։ « Սուզ առ երկիր, զամթն զգեցաւ Լիբանան, մարգագետին համարեցաւ Սարոնն, յայտնի եղև Գալիլիա և Քերմէղ։ Սրդյաբեայց, ասէ Տէր, արդ փառաւորեցայց, արդ բարձրացայց, արդ տեսցիք, արդ իմասջիք »։ Նա և յայնժամ իսկ յարեաւ, քանզի նա մատնեաց զնոսա, այլ ոչ այնպէս յայտ ինչ եղև իրքն. ունել ունի զկուր փառաւորութիւն առ յիւրմէ բնութենէն. բայց ասէ զինքենէ և ըստ մարդկեղէն մտաց։ Եւ ոչ ասաց, թէ այժմ դիմեցից ի վերայ, այլ ասէ՝ յարեայց. զի բաւական է յառնելն միայն, և ամենեքին ի փախուստ դառնան։ Սպէ. Յարիցէ Աստուած և ցրուեսցին թշնամիք նորա. Թէպետև այս ևս Թանձրագոյն իցէ և անարժան աստուածեղէն բնութեան. զի մարմնոյ սեփական է յառնելն, որք յառաջ քան զյառնելն՝ նստիցին. այլ Թէպետ և Թանձրագոյն իցէ, քան զայլ սըն նրբագոյն է։ Ինուանէ իւր և փառս, զի յորժամ անհաւատ լինիցիս, եթէ զքեզ ի լուսաւորութիւն փոխելոց է, լինիցիս յայնմանէ հաւատալ։ Սյսպիսի լիմն պատուէրս հաւատարիմն տայր և Պաւղոս. ի փրկութիւն, ասէ, փառաց նորա. ոչ ասեմ Թէ վասն ձեր ինչ սուտեմ, այլ վասն իմոց փառացն առնեմ զայս, զի հաւատայցէք։ « Սրդ բարձրացայց », այսինքն յայնմի եղէց. քանզի Թուէր խոնարհ՝ հանդերձ ժողովրդեամբն. և արդն ասելով՝ զմոտաւոր ժամանակն յայտ առնէ, և ոչ հեռաւոր ինչ զկանխատես. զի մի կարծիցէք եթէ յապաղիցեմ ինչ, ոչ ասեմ Թէ լսիցէք, արդ զձեզ իսկ տեսցես արարիչ նորոյ ուղղութեանցն. « Սրդ ի միտ առջինք ». պարտ էր ի վաղուց հետէ իմանալ։

« Սնոտի եղիցի զօրութիւն ոգւոց ձերոց, և զձեզ

հուր կերիցէ : Եւ եղեցին հեթանոսք իբրև զփուշ յա-
գարակի այրեցեալք և ընկեցեալք » . և ոչ իբրև ըզ-
վայտ ինչ, այլ իբրև զանպտուղ փուշ՝ ի միասին տա-
րաժամ այնպէս այրեսցին վաղվաղակի . քանզի ոչ
երբեք զպտղաբեր ինչ փայտ այրէ Աստուած , զի մի
կարծիցես եթէ վասն հեթանոսաց ինչ լինիցի , ասէ .
« Զի մնասի ձերոց ոգւոցդ զօրութիւն . վասն այսո-
րիկ այրեսջիք՝ ի հուր իբրև զփուշ » . զի որպէս փուշն՝
հրոյն պիտանացուն է , նոյնպէս և նոքա բարկութեանն
պատրաստականք :

« Լուիցեն հեթանոսք՝ զոր ասացի . ծանիցեն մեր-
ձաւորք զօրութիւնս իմ» : Սոքա ծանիցեն , բայց նոքա
լուիցեն . որ մանաւանդ տրտմեցուցանէր զՀրեայսն
ունել բազում վկայս իւրեանց աղետից . և ուղղու-
թեանցն յայտնի լինիցին պատճառք ամենայնի , զի
մի ծածկեալ լինիցին՝ ի միում կողմանց տիեզերաց , ա-
մենայն ուրեք հասանիցէ , և անցանիցէ ընդ ամենայն
երկիր :

« Մեհենեցան՝ ի Սիոնէ անօրէնք . ահ կալցի զամ
բարիշս » . զի յորժամ պատճառքն՝ ի միջոյ բառնայ-
ցէ , որովք ոչ տացէ՝ ի ձեռս կորնչել և ջնասել՝ ի թըշ-
նամեաց , չկիցէ ինչ այնուհետեւ որ արգելուցու :

« Ո՞վ պատմեսցէ ձեզ եթէ հուր վառեալ է , կամ
ո՞վ պատմեսցէ ձեզ զտեղւոյն յաւիտենից» : Վասն զար-
ձին , ասեն , ասէ . բայց ինձ այսպէս թուի , թէ և
զհանգերձելոցն ակնարկիցէ . ո՞վ պատմեսցէ ձեզ եթէ
հուր վառեալ է զգեհենին . հուր՝ զոր Քրիստոսն կո-
չեր տեղի յաւիտենից , քանզի ոչ դոյ նորա վախճան :
« Որ գնայ արդարութեամբ »՝ ի Քրիստոս , « Եւ խօ-
սի զուղղորդս՝ ի ձանապարհի » : են բազումք՝ որ ըստ
իրաւանցն գնան . ոչ զի սիրեցին զիրաւունս , այլ վասն
Սրտուածոյ երկիւղին . իսկ իրաւացին ոչ այսպէս , այլ
« Աստեայ զանօրէնութիւն . զձեռս իւր թօթափիւ՝ ի
կաշառաց , ծանրացուցանէ զլսելիս՝ զի մի լուիցեն
զդատաստանս արեան » . կամ անիրաւութիւն զչարիսն
կոչէ՝ զոր ոչ կամի բնաւ լսել . զի և այն իսկ առաքե-
նութիւն է . Արդար , ասէ , ոչ հայի՝ ի շրթունս սուտս .
որպէս չէ պարտ տեսանել զչարիսն , նոյնպէս և ոչ
լսել :

« Սա , ասէ , բնակեսցէ՝ ի բարձրացեալ այրին վէմին
հզօրի » . այսինքն է՝ զգուշութեան , զի ոչ վաղվաղակի
անկանիցի՝ ի ձեռս չարեաց : « Խնու զաչս իւր՝ զի մի
տեսցէ զանիրաւութիւն . հաց տացի նմա , և ջուր նո-
րա հաւատարիմ» , հաստատուն , սերտ . փափկութիւն
նորա անընդունելի , անփութախական . և արդ լիմ իմիք
արժանի լեալ սա :

« Զթագաւորն փառաց տեսջիք , և աչք ձեր տեսցեն
զերկիրն հեռաւոր » . ոչ եթէ տեսլեամբ , այլ հաւա-
տովք տեսանելիք : Եւ տէս զյաջորդն՝ որ քան զամե-
նայն ևս լաւագոյն է . « Եւ որդիք ձեր խորհեցան
յերկիւղ Տեառն . ահ են գպիլքն . ահ են խորհրդա-
կիցքն » . այս ամենայն բարիք եղեն , ասէ , առանց
իմաստնոց հնարից և դրադիտաց : « Ո՞ւր իցէ՝ որ հա-
մարիցի զվարձս մեծ և փոքր ժողովրդեանն , ընդ
որում ոչ ինչ խորհեցաւ . զի և գիտեր ինչ ոչ . ծանրա-
ձայն ժողովուրդ յուսացեալ , և ոչ դոյ լսելեացն իմաս-
տութիւն » . ոչ՝ վասն զի ոչ գոյին խորհրդականք , վասն
այնորիկ այսպէս եղև , այլ զի ժողովուրդ էր , յորում
ոչ դոյր իմաստութիւն . ամենայն չարեաց պատճառք՝
անմտութիւն է :

« Ահա աւասիկ Սիոնի քաղաք փրկութեան մերոյ ,
աչք քո տեսցեն և զՅերուսաղէմ քաղաք մեծացեալ .
խորանք քո ոչ տատանիցեն , և մի՛ շարժեսցին ցիգք
խորանի նորա յաւիտեանս ժամանակաց , և մի՛ խզես-
ցին ապառանդակք նորա » : Եւ արդ ո՛չ արդեւք տա-
տանեցան , և ո՛չ շարժեցան . այո՛[1] , այլ շարժեցան վասն
էր . վասն իւրեանց մեղացն : « Զի անուն Տեառն մեծ
է՝ ի ձեզ » : Տէս , զիարդ ասէ զպատճառսն . ոչ բա-
նակս զօրաց և ոչ ընչից յաճախութիւնք և ոչ պարըս-
պաց ամրութիւնք , այլ անուն Տեառն : « Ձեզ լինիցին
տեղիք՝ յորում գետքն և փոսքն լայնք և ընդարձակք» .
զյաղթութիւնն յայտ առնէ և զՀաստատութիւնն բա-
րութեանցն : « Մի՛ երթիցես զայդ ճանապարհ , և մի՛
գնասցեն նաւք քո» . զոր երկիրդ , ասէ , ՝ի Բաբելոնէ ,
այլ մի՛ ևս գնասցես անդրէն ընդ նոյն ճանապարհս , և

1 8o. : Այո՛ տառը դրի է :

այլ՝ ման Տեառն Աստուծոյ քո։ « Զի Տէր Աստուած իմ մեծ է, և ոչ արասցէ զանց զինեւ »։

« Տէր դատաւոր մեր, Տէր հայր մեր, Տէր իշխան մեր, Տէր Թագաւոր մեր, Տէր ինքնին փրկեսցէ զմեզ». իշխանն մեր՝ ինքն պատժեսցէ զմեզ։ « Խզեցան պարանք քո՝ զի ոչ հանգարտեցին. կայմն խոնարհեցա՝ և ոչ ինձուցէ զմանր կայմն, և ոչ արձակեսցէ զնշանս մինչեւ մատնեսցի յաւար »։ Այսպէս իսկ է. սովոր է մարգարէութիւն մերթ զգերութիւն նշանակել և մերթ առ նմին զդարձն. զի որպէս նաւին՝ ի սաստիկ հողմոյ քակտիցի հաստատութիւնն, նոյնպէս և նոցա. յանագորոյն թշնամեացն եղծանիցին կարգք և օրէնք և հաստատութիւն շինուածոց, շահք ընչից։

« Այսուհետեւ բազում կաղք յաւար հեծցեն. և մի ասասցէ ժողովուրդն՝ որ բնակեալն իսկ է՝ ի նմա, եթէ վաստակեցայ. զի Թոզան նոցա մեզքն »։ Որպէս և Եբեմիա ասէ, թէ Որդիս ծնանիցին՝ կաղք. նոյնպէս և աստ, թէ « կաղք աւար առնուցուն ». և Զաքարիա ասէ, եթէ Եղիցի Ցերուսաղէմ իբրև վհատարատեան։

ԳԼՈՒԽ ԼԴ

« Մատերուք հեթանոսք, և լսատուք իշխանք, լսիցէ երկիր և որ՝ ի նմա իցեն տիեզերք »։ Տեսցուք զինչ ասիցէ, ման էր զամենայն տիեզերս կոչեցէ։ « Զի սրտմտութիւն Տեառն՝ ի վերայ հեթանոսաց, և բարկութիւն նորա՝ ի վերայ Թուոց նոցա, կորուսանել զնոսա և մատնել զնոսա՝ ի սպանումն. և վիրաւորք նոցա զի տապաստ անկցին. ելցէ հոտ նոցա և թացցին լերինք յարեանց նոցա »։ Ումանք զայս ման կոտրածոյ Գովգայ և Մագովգայ առնուն, բայց ինձ թուի թէ և զկատարած աշխարհիս ակնարկիցէ, որպէս և յաջորդքն իսկ ման միտքս։

« Գալարեսցին, ասէ, երկինք իբրև զմագաղաթ, և ամենայն աստեղք թօթափեսցին իբրև զտերև յորթ, և որպէս թօթափեսցէ տերև՝ ի թզենւոյ »։ Տես, զնիւթդ և մարգարէս ասէ յաւուրսդգոյն, որպէս և Քրիստոս զվաղվաղակի թօթափել աստեղացն գուշակէր։ Եւ զայն ինչ մի ածիցես զմտաւ խնդրել, եթէ զնւթդ հաստատեալքն և բևեռեալք յերկինս՝ իբրև զտերև յորթոյ թօթափեսցին. զի որպէս տերևն յիւրում ժամանակի թօթափի, նոյնպէս և նոքա յիւրեանց պատշաճ ժամանակին թօթափեսցին։ Դարձեալ և այլ իմն ակնարկէ, զի ևս յաշխուժութիւն իմն փոխելոց են. զի զոր օրինակ որթն մերկ ինասցէ՝ յորժամ՝ տերևն թափեսցի, և դարձեալ յորժամ միւսանգամ տերևաբուղխ ժամանակն գայցէ՝ զարդարի միւսանգամ տերևովն և մրգովն, նոյնպէս և երկինք յայլ իմն առաւել յաշխուժութիւն շրջեսցին։

« Սրբեցաւ սուր իմ յերկինս. ահա աւասիկ՝ ի վերայ Եդովմայեցւոցն ինձ, և՝ ի վերայ կորստեան ժողովրդեանն՝ դատաստանաւք։ Սուր Տեառն լցաւ արեամբ, թանձրացաւ ճարպով յարեանէ որոջայն և նոխազացն, և՝ ի ճարպոյ ցլուցն և խոյոց »։ Ջպատիժսըն՝ սրոյն անուամբ անուանէ, զի ծանօթական անուամբ՝ զանծանօթսն յայտ առնիցէ։ Եւ զի ասէ, եթէ յերկինս արբեցաւ սուր իմ, զի յայտ արասցէ՝ թէ յերկնից է պատիժն. և զի ահագին ցուցցէ զպատիժն՝ ասէ. « ի վերայ կորստեան ժողովրդեանն՝ դատաստանաւք ». զի ցուցցէ թէ ժողովուրդն՝ որ՝ ի մեզս կորուսեալ էր, ոչ անիրաւութեամբ ինչ, այլ Աստուծոյ արդար դատաստանաւքն ընդունի զպատուհասս. և յորժամ բարկութիւն ինչ ահագին սպառնայցէ, ոչ զի սատակիցէ, այլ զի ածցէ ահիւն յուղղութիւնս։ Եւ բարիոք կոչէ կորստական ժողովուրդ զայնոսիկ՝ որ՝ ի մեզն էին. զի որպէս կորուսեալն՝ հեռացեալ յաչաց սատացողին իցէ, նոյնպէս և մեզաւորն՝ ի դիպահաւոջ՝ յԱստուծոյ՝ ի սուրբն երեսաց. որպէս և Կայինն ասէր, եթէ Հանես զիս յերեսաց քոց, և եղիցի ամենայն որ գտանիցէ՝ սպանանիցէ զիս. և ըստ այմմ, եթէ Բարձցի ամբարիշան՝ զի մի տեսցէ զփառն Տեառն։

Եւ քանզի սրտմտութեան և բարկութեան բանք ձառեցան, մի կարծիցէք, ասէ, թէ ընդ կարեօք ինչ

ինչ Աստուած. զի մարդ նեղեալ՝ի կարեաց յանդգնի բարկութեամբ. և ոչ կարէ իմանալ զօրէն իրաւանցն, յորժամ միտքն՝ի ցաւմանէն խախտիցին. իսկ Աստուած՝ ոչ այնպէս ինչ. իսկ ձրպես. յորժամ բարկանայ՝ իրաւամբք առնէ զամենայն. զի մեր բարկութիւն մտացն՝ շրջականք են, իսկ Աստուծոյ պատիժք պատուհասին՝ որով այլոց հատուցանէ, ըստ արժանի իւրաքանչիւր գործոց. և ինքն ինչ ոչնեղի՝ի ցաւմանէ անտի. Թէպէտ և զմէնջ և զնմանէ նոյն բանք ասիցին, այլ ոչ զնոյն յայտ առնիցեն. զի նա առանց ցաւման է բնութեամբ, և մեք միշտ զայրանամք ցաւմամբ, որով նախ զմեզ նեղեմք, և ապա այլոց՝ եթէ առնիցեմք ինչ ինաս և եթէ չառնիցեմք:

« Սուր Տեառն լցաւ արեամբ, ուռուցաւ Ճարպով յարենէ նոխազացն և որոջացն և ցլուց»: Տե՛ս, զի յայտ յանդիման ածէ զնոսա, և նոխազօք և խոյովք յայտ առնէ՝ Թէ իբրև զանխօսան՝ այսպէս կոտորիցին: Որպէս և զնոցանէն չէն ինչ բանք՝ յորժամ կոտորեսցին, նոյնպէս և ոչ զմարդկանէ՝ յորժամ զբարսն անխօս առնասնոց առնուցուն, և ևս չար քան զնոցանէ՝ զսոցանէ, զի նոքա բնութեամբ ունին զանխօսութիւն, և սոքա ինքեանք զանձինս արարին անասուն:

« Չի զենումն Տեառն՝ի Բոսորայ, և սպանդ մեծ յերկրին Եդոմայեցւոց »: Վասն ի՞ր զենումն զնոսա չէ. զի եկեալ վճարեալ էր, և այլ ոչ ևս անցանելոց էր զնովաւ բարկութիւնն: « Օր դատաստանի Տեառն և տարեկան հատուցման ». զի ոչ ինչ անկրաւութիւն էր, այլ արդար դատաստանք և հատուցումն ըստ գործոց: « Եւ արբեսցի երկիր յարենէ, և լցցի՝ի Ճարպոյ նոցա. զի օր դատաստանի Տեառն և տարեկան հատուցմանց դատաստանաց Սիովնի »: Սա յայտ է՝ եթէ վասն Սիովնի քաղաքին Աստուծոյ՝ եկն բարկութիւնն՝ի վերայ Եդոմացւոցն՝ մինչդեռ Սիովն էր. այսինքն՝ ծարաւեաց Աստուծոյ փրկութեանցն, և ոչ գնաց ցեալ զհետ օտարոտի կռոցն, յորոց ոչ ինչ օգտեցաւ:

« Եւ գարձցին ձորք նորա՝ի ձիւթ և երկիր նորա՝ի ծծումբ. և եղիցի երկիր նորա իբրև զձիւթ հրով բորբոքեալ՝ի տուէ և՝ի գիշերի »: Թէպէտ և զսնհնարին հարուածոցն Եդոմայեցւոց ասէ, բայց բազումք և վասն հանդերձեալ դատաստանի աշխարհին կարծեցին. զի հուր է, ասեն, և ծծումբ և միջոցն ջենաւոր տանջանք. քանզի և յարէ իսկ՝ի նոյն, եթէ « Մի՛ շիջցի՝ի տուէ և՝ի գիշերի, և մի՛ շիջցի յաւիտեանս ժամանակաց »:

« Եւ ելցէ ծուխ նորա . . . . . [1] բեսցի, և բազում ժամանակս աւերեսցի, և բնակեսցեն՝ի նմա հաւք և ոզնիք և ցինք և ագռաւք. և անկցի՝ի նմա լարաբաժին աւերակի. և յուշկապարիկք բնակեսցեն՝ի նմա: Եւ իշխանք նորա իբրև զչեղեալս եղիցին. և Թագաւորք նորա և մեծամեծք՝ եղիցին՝ի կորուստ. և բուսցին՝ի քաղաքս նորա փայտ փշաբեր, և յամուրս նորա: Եւ եղիցի հանգիստ հառաբեաց և դադար ջայլամանց. և պատահեսցեն գևք յուշկապարկաց և տայցեն ձայն միմեանց: Անդ հանգիցեն յուշկապարիկք, անդ եհան ձագս ոզնի [2], և մնայց երկիր զձագս նորա զգուշութեամբ. անդ եղջերուք միմեանց պատահեցին և տեսին զերեսս միմեանց. Թուով անցին և մի՝ի նոցանէ ոչ վրիպեցաւ. ընկեր զընկեր ոչ խնդրիցեն. զի Տէր պատուիրեաց նոցա, և հոգի նորա ժողովեաց զնոսա, և նա արկցէ նոցա վիճակս, և ձեռն նորա բաժանեաց նոցա Ճարակս յաւիտեանս ժամանակաց. ժառանգեսցեն աղգաց յազգս, և հանգիցեն՝ի նմա »: Մինչև ցիժս՝ զընաբարձ աւերական նոցա յայտ առնէ, և յեղջերուացն և՝ի խնարՀ՝ մարթի ուսմնասիրաց և՝ի նոր ինչ առնուլ:

[1] Ցօր. Բառք ինչ ջնջագիր. Թուի լինել ըստ Ս. Գրոց բնագրին. Եւ- Էլցէ ծուխ նորա՝ի վեր, և առերեսի (յապագա ապգայ):
[2] Ցօր. Ոզնիս:

ԳԼՈՒԽ Ա

« Ուրախ լեր, անապատ ծարաւի, և ցնծասցէ անապատն, և ծաղկեսցէ իբրև զշուշան »: Կրկին ասէ զանապատն. կոչէ անապատն անդօրծ ինչ երկիր, և կոչէ դարձեալ անապատ և ծարաւուտ ինչ երկիր: « Ծաղկեսցէ և ցնծասցէ անապատն Յորդանանու, և փառքն Լիբանանու տայցին նմա և պատիւն Քեր-մէղեայ. և ժողովուրդ իմ տեսցէ զփառն Տեառն և զբարձրութիւնն Աստուծոյ »: Ա.յսու նշանակէ վասն ի . . . թիւնս ինչ փոփոխելոյ ի գալստեանն Քրիստոսի . . . ան . . . ա . . . ք [1] ծարաւիք, այսինքն հոգիք անդօրծք և ծարաւիք՝ արբչին զկենդանի ջուր վարդապետութեանն Քրիստոսի, և տեսին զփառն Տեառն. ըստ այնմ՝ զոր Յովհաննէս ասէր, թէ Տեսաք զփառս նորա, զփառս իբրև զմիածնի առ ի Հօրէ: « Եւ զբարձրութիւն Աստուծոյ ». այն իսկ է՝ զի վերացաւ բարձրացաւ ի խաչն՝ ի վերայ անուանեալ աստուածոյ:

« Զօրացարուք ձեռք լքեալք և ծունկք դողդոջոտք »: Զայս բանս Պաւղոս Հեբրայեցւոյն գրեաց. զի որոց կայցեն ընդ [2] բազում համարձակութեամբքն՝ լինիցի օգնական, և անկելոցն տայցէ ձեռն և յարուցանիցէ. իբրև մարտիկ ինչ և պատերազմող՝ արանց վհատելոց տայցէ խրախոյս: « Մխիթարեցարուք, կարձամիտք սրտիւք, զօրացարուք, մի՛ երկնչիք »: Տեսանե՞ս, զի ոչ ի փորձութեանց, այլ ի կարձմտութենէ լինի լքումն:

« Ա.հա աւասիկ Աստուած մեր հատուցանէ զդա-

1 Յօր. ի մաշմանէ Թղթոյն եղծեալ էին բառքս. Թուի լինել. վասն ի բարուխիանո ինչ փոփոխելոյ ի գալստեանն Քրիստոսի. զի և անապատ, և այլն:

2 Ա.յսպէս յօրինակին. Թուի Թէ պարտ էցէ ընթեռնուլ ընդ նե-ղութեամբ:

տաստանս և հատուսցէ. ինքնին եկեսցէ և փրկեսցէ զմեզ »: Ինքնին եկեսցէ և ոչ այլ ոք. քանզի ոչ ոք էր լինել բաւական կատարեալ փրկութեանս: « Եւ յառաջ քան զդատաստանն հատուսցանէ »: Եւ տեսի իսկ, զիարդ եղծան հրէականքն. քաղաքն աւերեցաւ, Յուդա խեղդեցաւ, Հերովդէս չարաչար մահու մեռաւ, և հայրն և որդին. դատաստանս հատուցանէ, որպէս Սաւիւրա՝ զի յանկարծահաս եղև, և եղևնաս մոգ: Մի եթէ չկարէ՞ր ամենեցուն աստ հատուցանել. այլ լուր զինչ ասեն, եթէ ոչ աճէ զբարկութիւն իւր հանապազ. և թէ ըստ մեղացն անդէն վաղվաղակի հատուցանէր, ի վաղուց հետէ ջնջեալ լինէր ազգ մարդկութեան: Ա.յլ ոչ աստ աւետ, այլ և յապա ժամանակս հատուսցէ և նոցա և այլոց. բայց սակաւ ինչ զոր առնէին՝ առհասարակ է և տանջանացն և հանգըստեան: Յորժամ տեսանիցես զդէս հալածականս և զցաւս փախստականս և զընութիւն ամենայն եկեալ յուղղութիւնս, զգաղանս հանդարտացեալս և զամենայն արարածս խորշեալս յառաքելոյն, համարեայց եթէ զհանգերձելոյն զօրութիւն տեսեր, զհոգւոցն առհասարակ: « Ինքնին եկեսցէ և փրկեսցէ զմեզ». ինքնին եկեսցէ և ոչ ծառայ ոք կամ հրեշտակ, այլ ինքնին. զոր և Պաւղոս վեր ի վայր յեղյեղէ, զի զբաղումք պատիւն յայտ առնիցէ, եթէ ինքն անձամբ եկն ի խօսել. Բազում մնասմունք, ասէ, և բազում կերպասանք վաղ իսկ խօսեցաւ Աստուած մարգարէիւքն ընդ հարսն մեր. իսկ ի վախճան աւուրցս այսոցիկ՝ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն. և զատ մեկնեաց այսուիկ զտերն ի ծառայից:

« Յայնմ ժամանակի աչք կուրաց բացցեն և ականջք խլոց լուիցեն. յայնմ ժամանակի կաղն վազեսցէ իբրև զեղջերու »: Ոչ միայն զմարդկանէ ասացեալ, եթէ Դատաստանս հատուցանէ և հատուսցէ, այլ և վասն սատանայի. քանզի և նմա հատոյց կապեալսն զնա այժմ: Եւ արդ ուստի՞ յայտ իցէ. Ոչ ոք, ասէ, կարէ առնուլ զաւար հզօրի, եթէ ոչ նախ զնա կապեսցէ. և ինքեանք ասէին իսկ, Թէ Թող, զի կայ մեր և քո, Յիսուս Նազովրացի, եկիր այսր յառաջ քան զժամանակն տանջել զմեզ: Եւ Տէրն ասէր. Ե՛րթ յետս սա-

տանայ, զի գրեալ է թէ Տեառն Աստուծոյ քումդ երկիր պագանիցես. և զարձեալ, եթէ Տեսի զսատանայ անկեալ իբրև զփայլակն յերկնից. և զարձեալ, թէ Կոխեցէք զօձս և զկարիճս և զամենայն զօրութիւն թշնամւոյն:

« Յայնմ ժամանակի աչք կուրաց տեսցեն և ականջք խլից լսիցեն » : Յիրաւի կարևոր անգամք մարմնոյն բժշկելին առ պէտս աստուածգիտութեանն պատշաճից. զի բանսարկուն յառաջագոյն կուրացոյց զհանապարհս մեր և փակեաց զուղիս գիտութեանն՝ որ զմեզ առ Աստուած տանին: Եւ լուր զինչ ասէ Պաւղոս երանելի. Զի աներևոյթք նորա ի սկզբանէ աշխարհի՝ արարածովքս իմացեալ տեսանին: Զի յորժամ աչք ոչ իցեն, զիարդ ոք տեսանիցէ. քանզի և զլսելեացն ասէ, թէ Լուր ի պատգամսդ Աստուծոյ. յորժամ լսելիքն չիցեն, զիարդ ոք լսիցէ. վասն այնորիկ զի զորս թշնամին կուրացոյց, զնոսին եկն Քրիստոս յարդարեաց, ոչ միայն զանգամս մարմնոյն, այլ և զբարս ոգւոց: Զինչ օգուտ իցէ, եթէ արտաքին անդամքն լսասցեն և ներքին միաքն կուրացեալք. քանզի և բազում անգամ բացօք աչօք ոչ տեսանեն: Եւ եթէ առ աչս այսպիսի ինչ, ոչըստի ևս առաւել առ ոգիս, յորժամ մոլորութիւնք ինչ ի միտս մտանիցեն և կամ այլ ինչ կարիք, որ զայլ ինչ կարգս յօրինեալս խախտիցեն. որ և լինէր իսկ. և Քրիստոս զամենայն եբարձ զայնպիսի կարիս ի միջոյ:

« Յայնմ ժամանակի կաղք վազեսցեն իբրև զեղջերուս » : Ոչ միայն զառողջութիւն տայր մարմնոյ, այլ որ գամ մի ի սուրբ ի ձեռան մերձենային՝ զերծանէին և ի յոգւոցն կապանաց: « Եւ պարզ լիցի լեզու թոթովով » : Զի տգէտք և տխմարք յաղթեցին ճարտարաց և փիլիսոփայից. բայց միայն ի հրեական աղգէն, զի յամառեալ կացին ի հեստութեան և ոչ լուան աստուածեղէն գրոց, և վերպեցին յիւրեանց անձանց փրկութենէն:

«Զի ջուր բղխեաց յանապատ, և գետք յերկիր ծաւրատուտ » : Միանգամայն զյանկարծաբուղխ բարեբարութենան յայտ առնէ, և զովացութիւն ոգւոցն ծարաւելոց. զի չէք այլ անապատ դժնդակ, քան զոր

գիս անգործս, խոպանացեալս, լեալ բնակութիւն գաղանաց. զոր օրինակ յանապատս է բնակութիւն գաղանաց և հանդիսանալ փշոյն, նոյնպէս և ի մարդկան ոգիս: « Եւ եղիցի անջուրն ի ջրամարգս, և երկիրն ծարաւուտ յաղբերականս » : Զսոյն և Քրիստոս ասէր. Եթէ ոք ծարաւի իցէ՝ եկեսցէ առ իս, և որ հաւատայ յիս, որպէս և ասէ գիրն, գետք յորովայնէ նորա բղխեսցեն ջրոց կենդանութեան: Եւ վասն էր աղբիւր կոչիցէ զնրան. այլ ի սրբութիւն պատշաճական է հաւատացելոցն, և ցանկութեան եռանդնացն շնջուցիչ:

« Այնդ եղիցի ուրախութիւն հաւուց և կայանք խաշանց և մարգագետինք եղիցին. անդ ձանապարհ մաքրեալ և ձանապարհ սուրբ կոչիցի » : Ե՞րբ. յետ մկրտութեանն, յետ զգոյն զգենլոյ. քանզի ոչ եթէ յանձանց ինչ ունէաք, այլ յԱստուծոյ մարգասիրութենէն պարգևեցաւ: Ուր արքունական ոտքն չրջիցին, զիարդ չլինիցի սրբեալ և մաքրեալ ձանապարհն. ուր այնպիսի աղբիւր բղխեսցի, զիարդ ոչ վտակք ոգւոցն ոռոգանիցեն զանդամս ոգւոցն ծարաւելոց:

« Եւ մի անցցէ ընդ նա պիղծ ոք, և մի եղիցի անդ ձանապարհ պղծութեան » : Սրբեսցուք զանձինս՝ որ անկեալ եմք յուղի՝ գնալ ընդ այնպիսի ձանապարհ: « Իսկ որ ցրուեալքն իցեն՝ գնասցեն ընդ նա և մի մոլորիցին » :... [1] Քանզի և չէ իսկ՝ որ ընդ այնպիսի լայս գնասցէ, եթէ մոլորիցի երբեք: ... նաց [2] չարաց անդ մի գացի». զինչ առեւծն. որ կարծեցոյց զանձն առեւծացեալ, և պաշտօնեայք նորա չարագաղանք, թէպետ և ջանայցեն՝ չկարիցեն ինչ ստանալ ձմարիտ հաւատացելոցն. այլ ընդ նա գնասցեն փրկեալք և ժողովեալք ի Տեառնէ՝ որ փրկեացն անարատ աբեամբն, և ժողովեցան ի մեղացն թափառանաց՝ Տէրամբն: Եւ թէպետ օրինակաւ գործին երևեցաւ այսպիսի ինչ, այլ ձշմարտութեամբ ի գալստեանն Քրիստոսի կատարեցաւ:

1 Յօր. Բառ մի եղծեալ:

2 Յօր. Բառք ինչ ջնջագիր, այն է սկիզբն բնաբանիս, զոր այսպէս ունի Աստուածաշունչն մեր. Մի եղիջի անդ առիւծ, և ի գողանոյ չարոյ ընդ այն մի անցանիցէ:

« Դարձցին և եկեսցեն ՚ի Սիոն ուրախութեամբ, և ուրախութիւն յաւիտենից ՚ի վերայ գլխոց նոցա. և օրհնութիւն և ուրախութիւն և ցնծութիւն հասցէ նոցա. մերժեցան ցաւք, տրտմութիւնք և հեծութիւնք »։ Զի թէպէտ և այլքն կարծիցին ՚ի դարձին կատարել, սակայն մերժել ցաւոց և տրտմութեանց և հեծութեանց չէ մարթ՝ եթէ անդ կատարեր, այլ յայս վայր՝ որ մեզ աւանդեցաւ [1]։ Վասն որոյ ասէ Սառաքեալ. Ուրախ լերուք հանապազ, ուրախ լերուք, անդադար յաղօթս կացէք. զի ոչևս ցաւովք ծնանի եկեղեցի զմանկունս իւր, և ոչ բազմանալով բազմանան տրտմութիւնք և հեծեծութիւնք, այլ « Մերժեցան ցաւք և տրտմութիւնք և հեծեծութիւնք ». ՚ի փախուստ դարձան, հետակորոյս եղեն։

ԳԼՈՒԽ Լ.Զ

« Եւ եղև ՚ի ջրեքտասաներորդ ամի Թագաւորութեանն Եզեկիայ, եկ Սենեքերիմ արքայ Սորեստացի նեայց ՚ի վերայ ամուր քաղաքացն Հրէաստանի, և առ զնոսա»։ Սքանչելի եր այրս այս, սքանչելի և մեծ. և արդ միտ դիր. յորժամ հանդերձեալ էիցէ Սստուածծ զարմանալիս ինչ առնել յաւաջադոյն հնարի իրս ինչ. « Ել, ասէ, ՚ի վերայ ամուր քաղաքացն Հրէաստանի, և առ զնոսա ». զի մի կարծիցես եթէ Երուսաղէմիւրովին ամրութեամբ կարաց ապրել։ Ցէս, որչափ ինչ արդարութիւն եր առն, զի վերակացու եղև քաղաքին, այնպէս՝ զի զայլն առ և զնա ոչ կարաց առնուլ. և ոչ ժամանակս ինչ բազում ծախեաց, այլ որպէս որ յորժամ վաղվաղակի ընդ ձորս ինչ անցանիցէ, այնպէս աստատակի առ զքաղաքն ամենայն։

« Եւ առաքեաց արքայն Սորեստացեայց զՌափսակ ՚ի Ղաքիսայ Երուսաղէմ առ Եզեկիա արքայ՝ զօրօք բազմօք»։ Վանել զքաղաքս ամենայն կամէր, և զնա ևս

1 Ցօր. Աստուածեան։

առնուլ։ Եւ ընդ՚որ զօրօք բազմօք. այլ զի երևեսցի զօրութիւնն Սստուծոյ. զինա յանպատրաստից եկեալ հասեալ՚ի վերայ երկեցուցանէր բանիւք, և սրտապահ առնէր զբնակիչս քաղաքին՝ տեսլեամբ զօրացն բազմաց. և զայն ոչ գիտէր, եթէ լինքն սրտառուչ [1] սրտաբեկ դառնալոց է։

« Եւ ելին առ նա Եղիակիմ Քեղկեանց՝ հանդերձապետն, և Սոմնաս դպիր և Յովաք Սսափեանց՝ յիշատակաց դպիր »։ Եւ զնմոքդ ոչ երկեան, զի ոչ իբրև զմարտիկ ոք, այլ իբրև զթագաւոր ոք բռնաւոր, այնպէս եկեալ համարձակ՝ կամէր զառնայն կործանել։

« Եւ ասէ Ռափսակ. Սացէք ցեզեկիա. այսպէս ասէ արքայն մեծ ». և սարանայր՝ կոչել զեզեկիա՝ արքայ։ « Յո՞յսացեալ ես. մի բանիւք կամ խորհրդովք շրթանց պատերազմ վճարիցի »։ Բարիոք ասացեր, եթէ ոչ խորհրդովք կամ իմաստութեամբ վճարեսցի պատերազմ, այլ Սստուծոյ զօրութեամբ։ Եւ զինչ իցէ խորհրդովքն կամ բանիւք. կամ թէ բանս իսկ առաքեաց առ Եզեկիա, կամ թէ բանիւք իսկ էին հրեականքն. այսինքն՝ հեգնելովին՝ եթէ զմարգարէսդ ունիցիս քեզ խորհրդակիցս, ոչ ինչ է այդ պիտոյ. այլ զէն և կազմած և արս ընտիրս՝ ըստ բարբարիկ վայրենական մտաց։ Ո՛ անօգուտ, ո՛վ մեծաբան բարբառ, ո՛վ անհանճար միտք. քանզի խորհրդով իսկ և բանից շրթանց վճարի՛ պատերազմ. զի եթէ իմաստութեամբ ոչ յարդարեսցէ զձեռնատն, այն աշխատութիւն ՚ի զուր և ընդ վայր լինի։

« Եւ արդ յո՞յսացեալ իցես, ասէ, զի ոչ հնազանդիս ինձ »։ Ո՞ որ երբեք ետ քեզ խրախոյս. միթէ եդիպտացիքն. և ասէ զնոցա տկարութիւնն, եթէ ոչ միայն չօգնեն, այլ և վնասակար ևս լինին. և զայս արդարասէր, բայց զայլն ևս ոչ արդար։ « Սհա առաջիկ յուսացեալ իցես ՚ի ցուպ եղեգնեայ ջաղջախեալ». որպէս և եզեկիել եղեգնեայ ինն անուանէ զեգիպտացիսն. անզօր է, ասէ, նոցա օգնականութիւնն. ոչ միայն չօգնէ, այլ և վնասակար ևս լինի։ « Յոր թէ

1 Յօր. Սրտառուչ։

յԵնուցու ոք՝ ինքն բեկանի, և ընդ նորա ձեռն ելանէ. այսպէս և Փարաւոնն՝ արքայն Եգիպտացւոց, և ամենքին որ յուսացեալ իցեն ի նա: Այսպ Թէ ասիցէք, եթէ ի Տէր Աստուած մեր յուսացեալ եմք, ոչ այս այն Աստուած իցէ, որ քակիցէ զբարձունս և զսեղանս». և արդ չէք ինչ օգտեսցէ յայդպիսի մոլորուԹենէ: Եւ ապա զինչ արար. հրաման ետ զօրացն պատել յառաջ, և ասէ. «Եկայք խառնեցարուք ընդ տեառն իմում Թագաւորի, և տացեն ձեզ երկուս հազար յերիվարաց, եԹէ կարող իցէք տալ հեծեալս ի վերայ նոցա: Եւ զնաւղդ կարէք դուք ի դիմի հարկանել միոյ ուրուք յաշխարհակալաց, զի երկու հազարք զօրք ոչ գտանին ի ձեզ»: Տէս զվկայուԹիւն առ ի Թշնամեացն: «Ծառայք և որ յուսացեալ իցեն յԵգիպտացիսն»: Զի՞նչ խօսիս, հէք Թշուառական. եԹէ ծառայք էն՝ որ յուսացեալ էին, վասն այնորիկ յորս վստահն էին, այնուհետև զնկուցանիցէ զՏպարտացեալ միտս նոցա. իսկ Աստուծոյ յուսովն՝ յօգուտ նա խատեր զնոսա՝ որ՝ի վերուստ բազում անգամ առաքեր նոցա օգնականուԹիւն. և նա հմուտ էր մեծի զօրավիգն օգնականուԹեան. և տէս, զնաւղդ կործաներ զնոսա՝ի վհատուԹիւն: «Եւ այժմ մեք, ասէ, միԹէ առանց Տեառն ելանիցեմք յաշխարհս յայս՝ տալ պատերազմ ընդ նմա»: Նա, ասէ, եհան զմեզ[1]. և դարձեալ, եԹէ չէ կարող փրկել. «Մի, ասէ, խաբեսցէ զձեզ Եզեկիա, եԹէ Աստուած փրկէ զմեզ». և դարձեալ ասէս, Թէ նա եհան զմեզ:

«Եւ ասէն Եղիակիմ և Սոլմնաս և Յովաք. խօսեաց ընդ ծառայս քո ասորերէն, քանզի և լեմք իսկ, և մի խօսիր հրեարէն յականջս մարդկանդ՝ որ անկեալ կան զպարսպօքդ»: Տէս, զնաւղդ զրգռեցին զնա. պարտ էր յԱստուծոյ զօրուԹիւնս ապաստան լինել. մի, ասէ, զանգիտացուցանէր զմիտս զօրացդ. բազում անմտուԹեամբ լի են բանքն. և նա ևս հպարտացեալ մեղկէր զմիտս զօրացն, մերԹ բարեացն խոստմամբք, և մերթ ահագին սպառնալեօք: «Մի, ասէ, խաբեսցէ

1 Յօր. Օտար գրչաւ. Այս ըմբռնի չերկոսս խօսել ժեղ. ըն նա եհան զմեզ, և դարձեալ, և այլն:

ցէ զձեզ Եզեկիա, եԹէ Աստուած փրկէ զմեզ. միԹէ փրկեցի՞ն աստուածքն հեԹանոսաց զաշխարհն իւրեանց»: Այսպ ասէ զտկարուԹիւն այլոց աստուածոց, զԱմաւրիայ և զընկերացն: Եւ տէս, զնաւղդ հնարեր լուսաւոր առնել զյաղԹուԹիւնն. «ՄիԹէ փրկեցի՞ն, ասէ, աստուածքն հեԹանոսաց, եմաԹն և ԱրփաԹն, և Սափարուեմ, և այլք սոյնպիսիք[1]»: Դու ասացեր եԹէ ոչ փրկեցին, արդ եԹէ փրկեսցէ Աստուած, ըստ քոց մտացդ՝ ապա մեծ է Աստուած, և ոչ իբրև զայլս բազումս:

«Եւ կերիցիք զաղբս և արքիք զմէգս»: Եւ տէս, որպիսի անհնարին պատիժս սպառնայ ամենայն մարդկան, մանաւանդ առաւել Հրէից: «Եւ ոչինչ ետուն պատասխանի». և ընդէր արգելաք. «Զի այնպէս հրամայն տուեալ էր Թագաւորին»: Ո՛վ Թշուառական, չիք ինչ հաւասար Աստուծոյ. մի տակաւ ինչ համարիցիս զՀզմարիտն զօրավիգն օգնականուԹիւնն: Զայս լուեալ՝ զհանդերձս պատառէին, և պատմէին Եզեկիայի զբանս. իսկ նորա ուսեալ ի ԴաւԹայ, եԹէ ես՝ի նեղ ընկնուցա՝ քուրձ զգենուի, զնոյն օրինակ յանձին ունէր:

ԳԼՈՒԽ Լ

«Քուրձ զգեցաւ և եկ՝ի տաճարն Աստուծոյ»: Տէս զպատերազմ, տէս զմարտն և զկռիւս. ոչ զէն կազմէր, և ոչ մենքենայս յարդարէր. ոչ զպարսպօքն շուրջ գայր, և ոչ զամուրսն պնդէր, և ոչ առ ապգս ուրեք հրեշտակս արձակէր. այլ յերկինս արձակէր զաղօԹան հրեշտակս, այնպիսի կերպարանօք՝ որով զբարձանցն Թագաւոր յուսայր հաշտեցուցանել. և պատարագս՝ զարտասուսն մատուցանէր, և զսիրտն փղձկեալ, և սիրածումն խորգոյ այրն[2] Թագաւոր: Նա և վայելէր իսկ նմա, որ քան զայլսն պատուական էր,

1 Յօր. Եւ այլք, և ի սնոցիկ:
2 Յօր. Այր:

զի և հոգւոյն ամենեցուն լինիցի երաշխաւոր, և այն-
պէս՝ի կոր կործանեալ կայր յաղօթս և աղերսեր. ոչ
պատուոյ ինչ փոյթ առնէր, և ոչ զթագաւորութիւնն
ինչ ածէր զմտաւ. այլ զայն ևեթ՝ի մտի եդեալ, թէ
քան՝ի զօրացն օգնականութենէ՝ ի նորա խորհուրդն
առաւել կայ փրկութիւն. և այն իսկ է Թագաւորի
և իշխանի, ոչ միայն զի առաւել պատուիցի քան զայ-
նոսիկ՝ որ ոչ իշխիցեն, այլ զի առաւել քան զնոսա ու-
նիցի հոգ յանձին վասն նոցա։

« Եւ ասեն ցԵսայի մարգարէ. այսպէս ասէ Եզեկիա,
եթէ օր նեղութեան և նախատանաց »։ Եւ ընդէր
ոչ ինքնին չոգաւ առ մարգարէն. զի ևս լաւագոյն և
մեծ արար, զի առ Աստուածն դիմեաց։ « Այսպէս
ասէ Եզեկիա ». որպէս՝ի հիւանդութեանն ասէր,
Յիշեա՛ որպէս գնացի առաջի քո ձշմարտութեամբ,
ոչ նոյնպէս ինչ և աստ. ոչ զվարուց ինչ սրբութիւնն
և ոչ զուղղութեանց ինչ յաձախութիւն առաջի դնէր,
այլ զվշտացն ևեթ սաստկութիւն։ «Օր, ասէ, նեղու-
թեան ». ոչ վասն քաղաքիս առնէր, ասէ, ցաւէ ինչ,
այլ զի ՀԱստուածն Տէր՝ի դիւաց նուաղութիւնն
իմոյց բարբարոսն, և ոչ ինչ աւելի զօրաւոր համարե-
ցաւ զնա ։ « Օր յանդիմանութեան և բարկութեան
օրս այսր աւուր, զի հասեալ է երկունք ծննդականի,
և ոչ զոյ զօրութիւն առ՝ի ծնանել »։ Եւ երկու ա-
ղէտք են, յորժամ երկունք հասանիցեն և ծնանել
ոչ կարիցեն. երկունք սպիսեցին և վհիւ ինչ ոչ եղև։
Տեսանե՞ս, որպէս պաղատի զաղէտսն. և սա որ այս-
պէս պաղատեր և խոնարհագոյնս խօսեր, յետոյ
հպարտացեալ գտաներ. որպիսի՛ ինչ դժնդակ է
հպարտութիւն. և թէպէտ բազում վկայս արս ըն-
տիրս ուներ իւրոյ օգնականութենէն, սակայն յետոյ
զայնպիսի բանս ինչ ոչ յիշեաց, ոչ զբուքն զգենուլ,
զի այնպէս լինի յափշտակեցաւ յախտէ ամբարտաւա-
նութենէն։

« Թերևս լուիցէ Աստուած զբանս Ռափսակայ ». որ-
պէս Ներսուէսայիքն ասէին. Թերևս զղջասցի Աստուած
՝ի վերայ չարեացն՝ զոր խօսեցաւ։ Եւ զինչ ուսանիցիմք
ասել. զի թէպէտ և ոչ խղեմք վստահ ողորմութիւն
գտանել, սակայն յաղօթից մի՛ հեռասցուք. զի թէ-

րևան ասել, Թուի թէ երկբայական մտաց է. զոյն և
Աստուած բարբառէր առ մարգարէսն. Թերևս լուիցէ,
ասէ. և դարձեալ, թէ Ո՛ տացէ լինել այսպէս սրտի
ժողովրդեանս այսորիկ. Թէպէտ և ինքն ձարտար գի-
տեր թէ չէն ինչ լսելոց, սակայն ոչ հրաժարէր՝ի խրա-
տելոց. սովին օրինակաւ և մեք վարեսցուք։ « Թերևս
լուիցէ Տէր Աստուած քո զբանս Ռափսակայ ». և ոչ
իշխէ իւր Աստուած անուանել։ Զինչ խօսիպ դու.
աղաչես զԱստուած, և ոչ՝ի քոց աղօթիցդ, այլ՝ի
նախատանաց թշնամւոյն ունիս ակն՝ գտանել փրկու-
թիւն։ Ցոյն և առակական բանն ասէ, զի թէ ան-
կանիցի թշնամի քո, մի՛ ոտնհար լինիցիս՝ի վերայ գլուխ-
ման նորա, զի մի՛ տեսանիցէ զայն Աստուած, և չլինի-
ցի նմա հաճոյ, և դարձուցանիցէ զբարեմտութիւն իւր
՝ի նմանէ։ Բազում անգամ ոչ արժանաւորութիւն
փրկելոյն, այլ ընտանակարացն չարութիւն զարթու-
ցանէ զԱստուած յօգնականութիւն. սոյնպէս և սա
այսպէս՝ի միտս վստահ լեալ, ցուցանէր բազում խոս-
նարհութիւն։ Տեսանե՞ս, որչափ չար են նախատինք.
և մի՛ կարծիցես թէ Ռափսակայ էին այնպիսի բանք,
այլ արքային. քանզի և ասէր իսկ. « Ցորս առաքեաց
արքայն Ասորեստանեայց ». զի զնա ևս արձակեսցէ
ընդ անպարտս խօսութեամբն, մեծամտութեամբն՝
նախատել զԱստուած կենդանւոյ։ Ոչ քաղաքիս ինչ է-
զեն նախատինք և ոչ մեզ ինչ ամօթ, այլ մեծամեծ
աղէտք մեզ այն են, զի զամենայն ինչ առ Աստուած
իշխեաց ձգել, և նախատել բանիւք. և ոչ ասէ թէ
բանիւ, այլ զի զբազում երկրեզածութիւն ցուցանիցէ։

« Եւ աղաչեսցես զՏէր Աստուած քո վասն մնացե-
լոցն այսոցիկ »։ Տես, զիարդ ընթանային ընդ բազ-
մութեան վշտացն՝ աղօթքն Եզեկիայ, և ըստ ան-
պարտս խօսութեան թշնամւոյն՝ համարձակութիւն
մարգարէին, և ընդ նմին և նուաղութիւն մնացելոցն։
Եւ մեք սոյնպէս առ այնոսիկ՝ որք ունիցին համարձա-
կութիւն առ Աստուած՝ ապաւինեսցուք. զի ամբո
աշտարակք են՝ի պահպանութիւն։ Բայց մի՛ միայն՝ի
նոսա ապաստան լինել. քանզի և ոչ նա՝ի քոյն էր
և զմարգարէն զարթոյց, այլ յառաջ քան զնա և ընդ
նմա՝ պատկառ կայր խնդրուածոցն. որպէս զի և ոչ

անփոյթ պարտ էր լինել յաղօթիցն, և ոչ ՚ի նոսա միայն ապաստան լինել։ Քրձազգեստ լինէր Թագաւորն, որ յայնժամ ՚ի պատուի էր, վասն միայն խափանելոյ պատերազմին. իսկ դու, ռամիկդ, որ ոչ վարս ինչ պարկեշտականս ունիցիս, և ոչ վասն քո մատուցեալ աղաչիցես զԱստուած, այլ՚ի մեծամեծ պատմուճանս զարդարիս և իւղովք անուշիւք օծանիս, և հեղգ գաս հաշտեցուցանել ընդ քեզ զարարչացեալն ։ Ո՛չ այդպէս ոք կարէր հաշտեցուցանել զարքային արքայից, եթէ ՚ի ծուլութեան ոք իցէ, և՚ի քաղցրութիւն ջանայցէ ածել զցասուցեալն։ Չամարեաց զմեծութիւն այնորիկ՝ զոր աղաչեան, և զյաձախասութիւն քոյ մեղադ և զնուազութիւն քոյոյ բնութեանդ, և զիւղիր փոքր մի, հաշուեաց զմիտս. զի Թէպէտ քուրձ զգեներ նուցուս, այլ ոչ ինչ արժանի գործ գործեցեր այնմ՝զոր հաշտեցուցանելն կամիցիս ։ Ժամանակ արտասուաց և լալոյ է, և ոչ ծաղու և ուրախութեան. բազում ինչ միասս առնելմբ հանապազ և բարկացուցանելմբ զԱստուած, և չիցէ պարտ գնել ՚ի մի ժամու սուրբ լինել ՚ի մեղաց։

« Եւ ասէ ցնոսա Եսայի. Այսպէս ասէ Տէր. մի երկնչիցիս ՚ի բանիցն՝ զորս լուար, որովք նախատեցին զիս հրեշտակք Սորեստանեայց [1] »։ Տէ՛ս, զիարդ զարթուցանէ զնա և քաջալերէ. զիս, ասէ, նախատեաց. ապա Թէ այդ այդպէս իցէ, դու մի երկնչիցիս։ Յորժամ Աստուած չիւր գէմն առնուցու զթշնամանս, վստահ լինիցիմք՝ եթէ լինելոյ է հատուցումն։ Ընդ իս գրգռի, ասէ, և ընդ իս կռուի. «Ահա աւազիկ ես արկանեմ՚ի նա հոգի ». այսինքն խռովութիւն։ « Եւ լսիցէ գոյժ և դարձցի յաշխարհ իւր, և անկցի՚ի սուր յերկրի իւրում»։ Զայս զբետինն ասէ, չև ևս այժմն զամենայն հարուածսն յայտնէ։ Եւ ինձ այսպէս Թուի, Թէ ոչ ածէր զՀարուածսն [2] ՚ի վերայ նորա, Թէ չէր յամառեալ՚ի նմին չարութեան. զայս ասելով՝ և սմա քաջալերութիւն տայր. զի Թէ ասացեալ էր՝ Թէ ՚ի քում երկրին անկցի ՚ի սուր, յիրաւի

1 Յօր. Օասր գրչաւ՝ արփային Աւորեսթանեայց։
2 Յօր. Եւ ինչ... զՀարուածսն՝ յօտար գրչէ ՚ի լուսանցսն էր եդեալ։

հասանէր նմա կասկածել. զի Թէպէտ և անկանելոց էր, սակայն և նմա ինչս առնէր. իսկ յորժամ յիւրում երկրին անկցի ՚ի սուր, սորա երկիրն ՚ի զգուշութեան ինայ։ Դարձեալ զի զիջուսցէ զՀպարտացեալ միտն, « Եւ առաքեաց, ասէ, հրեշտակս, զի առաջնորդ լինիցի նմա յուղղութիւնս. և ոչ ոք յաստուածոց կարաց ապրեցուցանել զիւրաքանչիւր ազգ ». զի և՚ի Թշնամեացն վկայութիւն լինիցի Աստուծոյ անհամեմատական զօրութեանն։

« Զորս աւր Եզեկիա ՚ի [1] հրեշտակացն, և ընթերցաւ. եմուտ ՚ի տունն Աստուծոյ Եզեկիա, և աղաչէր զԱստուած »։ Մեծ իմն զէն աւր զՀրովարտական, զի նոքօք հաւանեցուսցէ զԱստուած։ Տէ՛ս զՀայր նորա, ուրպէս անհաւատ էր, և ուրպէս սա հաւատացեալ. ի մարտնչէր ընդ Թշնամւոյն, ուստի՞ կազմէր զէն ընդդէմ պատերազմողացն. ՚ի տանէն Աստուծոյ, աղօթիւք, խնդրուածովք. մեծ և կարևոր զէն է ամենայն ուրեք զԱստուած կոչել յօգնականութիւն։

« Տէր, ասէ, սաբայովթ, Աստուած Իսրայելի »։ Վերին զօրութիւնք սաբաւովթ կոչին, հրեշտակք և հրեշտակապետք։ Ոչ ինչ խախտեցին զնա, ասէ, նախատինք Թշնամւոյն, և ոչ՚ի նորա մոլորութենէն համարիմ անկարծ ինչ գոն զօրութիւն. Թէպէտ և բիւր անգամ վտիտցէ զպատիւ քոյոյ մարդասիրութեանդ, ես ոչ միայն յերկրի, այլ և յերկինս խոստանամ զքո մեծազօր զօրութիւնդ ։ Եւ արդ զնաիրդ. եթէ Աստուած կարող է, և դուք չէք արժանի փրկութեան. վասն այնորիկ յարէ՚ի նոյն, եթէ « Աստուած Իսրայելի »։ կարող եմ, քանզի Տէր եմ սաբայովթ, այսինքն՝ զօրութեանց։ « Կամիս, և վայելէ իսկ քեզ, զի Աստուած ես Իսրայելի, որ նստիսդ՚ի քերովբէս, դու ես Աստուած միայն ամենայն թագաւորութեանց տիեզերաց »։ Քանզի խուժ դուժն փոքր ինչ մանհամարեցաւ նմա տիեզերաց զՀրէաստան, և իբրև ընդ զուգական ախոյանի ինչ գիւաց խօսէր, զի զայսպիսի կարծիս՚ի միջոց բառնայցէ, ասէ. «Դու ես Թագաւոր ամենայն տիեզերաց ». և ոչ վայրապար, եթէ

1 Յօր. Պակասի ՚ի։

դու ես Թագաւոր, այլ Թէ միայն դու ես անհամեմատական, որ ոչ ոք ունիս ընդ քեզ զոլոզ կամ ընկերակից, որպէս Աւորին համարի։

« Դու արարեր զերկինս և զերկիր ». զի եթէ այսպիսիքն քոյոյ զօրութեանդ գործ են, ուրչափ ևս առաւել քնակիչքն նոցուն։ « Զի արդարև աւերեցեր զտիեզերս՝ Թագաւորքն Աւորեստանեայց, և հրձիգ արարեր զկուռս նոցա »։ Եւ ընդ ի՞ր. «Բանզի չէին իսկ աստուածք, այլ ձեռագործք մարդկան »։ Եւ այսպէս ամենայն ուստեք զօրութիւնն Աստուծոյ վկայի, ոչ միայն յիւրոցն, այլ և յօտարացն։ «Զի նոքա դևք են, ասէ, և ոչ աստուածք։ Բայց արդ դու, Տէր Աստուած մեր, ապրեցո զմեզ ի ձեռաց նորա, զի ծանիցեն ամենայն Թագաւորութիւնք երկրի, եթէ դու ես Աստուած միայն »։ Ես և առանց զիտոյ ասելոյ իսկ զիտեմ զքեզ, բայց զի և այլքն ևս ձանաչիցեն ի վճարելոյ իրացն, և եղիցի փրկութիւնս հասարակաց ամենեցուն կրօնք. ապրեսցի ի վտտաց քաղաքս, զի ապրեսցեն ի մոլորութենէ տիեզերք. և յոյս[1] Երուսաղեմի խրատեսցէ զայնոսիկ՝ զոք զնուժդուժն հռոմայական համարեսցին։ Տեսանէս, զի ամենայն իրացն վերակացու եղև. և յետ ի գլուխ ելանելոյ իրաց՝ զմարգարէութեան զօրութիւն ունիցին։

« Եւ առաքեցաւ Եսայի, և ասէ ցնա. Լուայ ես զաղօթս՝ զոր աղաչեցեր »։ Ոչ ասէ Թէ վասն Թագաւորիդ լուայ, այլ վասն աղօթիցն՝ զոր աղաչեցեր։ Եւ ամենայն ուրեք տեսանեմք յետ աղօթից՝ պարգևս ընդ աղօթիցն։ Մինչ չկարէր Աստուած և առանց աղօթիցն առնել փրկութիւն. այլ ոչ այնպէս պաղաբեր և հոգացող լինէր՝ որ փրկեցուն։

« Սյս բան է՝ զոր խօսեցաւ Տէր Աստուած վասն նորա. Ընդունեաց, արհամարհեաց զքեզ ». յառաջագոյն ասել զկործանումն Թշնամոյն, զի հաձեսցէ զնեղեկիա։ « Զի՛ նախատեցեր ». և ոչ[2] երևելիքս հաւանեցուցանիցեն զքեզ։ « Ո՞ւմ ձգեցեր նեստս, առ ո՞ արձակեցեր[3] զնեղուդ։ Դու և զառաջինն ասէիր,

1 Յօր. Հայս։
2 Յօր. Ե- ՛ ու։
3 Յօր. Յօսաւր գրէ՝ Ե- ԹԷս, ա- ՛, և այլն։

զոր արդ ասես, եթէ հասից ի վերայ ամենայն տիեզերաց, իբրև ի վերայ բունոյ հաւու, և իբրև ընձուս մնացեալս բարձից զնոսա ». և այժմ նախատես, և զիմ զօրութիւն՝ քեզ համարիս։

« Ո՞չ զայս իսկ լուար յառաջագոյն՝ զոր ես արարի, յաւուրցն առաջնոց՝ զոր ես կարգեցի. բայց այժմ և յայտնեցի իսկ »։ Տեսանե՞ս, ուրչափ ինչ շահք են մարդ արեւիցն. և քանզի չհաւատաս՝ ի վախճանիս արարից զքեզ առաջնոցն հմուտ. կարգեցից տեսանս և նստուցից դատաւոր զտիեզերս ամենայն. զի նա ասէր՝ եթէ ես իմով զօրութեամբ և իմաստութեամբ առի զայս անուն և զայս անուն աշխարհ. և Աստուած ասէ, թէ ոչ քո ինչ զօրութեամբ և իմաստութեամբ, այլ իմով զօրութեամբ, քանզի յառաջագոյն իսկ ասացի՝ միևչև լեալ էր։ Այլ հաւատամ, ասէ, այդմ. եթէ չհաւատաս՝ խրատեսցէ զքեզ վախճանն. յորժամ զզօրաւոր և զբռնաւոր յանկարծակի իջուցից ի թշուառութիւն, ոչ ապաքէն յայտ իցէ Թէ և զառաջինն ես ետու Թոյլ աւերել զաշխարհս։ Դարձեալ և այլազգի փոքր ինչ յաղթութենէ պարտ է հաւատալ մեծաց իրաց. որպէս և Քրիստոս՝ զի ասաց վասն յարութեան, և չհաւատան կռապարիշտք, ցուցցուք մեծ ինչ իրս քան զյարութիւնն լեալ, զի այնու ի փոքուէն միւ երկմտիցեն. զի հաւանեցուցանել զամենայն աշխարհս մոլորեալս՝ առաւել մեծ է քան զյարութիւն. զի քնութիւն մարմնոյ՝ կամաց արարչին ոչ ընդդիմ դառնայ, և ոչ հակառակ կարէ կալ. իսկ անձնիշխանութիւնն բազում անգամ կամեցաւ զլինել մարմնոյ, և եղեն. կամեցաւ զի լինիցին մարդիկ հաձոյք, և ոչ եղեն. զի յորժամ զգժուարագոյնն տեսանիցես լեալ, վասն դիւրագունին միւ երկմտիցես, զի ամենայն ինչ ընդ զօրութեամբն Աստուծոյ կայ. և է ինչ՝ որ ոչ ընդ զօրութեամբն միայն Աստուծոյ, այլ և քո անձնիշխանութեամբդ. զի և կանխասացութիւնն յայնժամ յայտնագոյն է, յորժամ ոչ միայն զոր ինքն առնելոց իցէ՝ յայտնիցէ, այլ զայն ինչ՝ զոր և դուն կամիցիս։ Եւ տե՛ս, զինչ ասէ և աստ. զի Թէպէտ և զիւր զօրութիւնն ցուցանիցէ, սակայն զպատձառս ի նմանէ առ։

« Բայց արդ զկայանս քո և զել և զմուտ քո՝ ես

ինձէն գիտեմ. բայց զսրտմտութիւնդ՝ զոր ընդ իս սրտմտեցեր, և դառնութիւն քո՝ եղ առ իս »: Եւ ոչ ասէ Թէ սրտմտեցեր միայն, այլ եթէ եղ առ իս. յայտ առնէ զերկայնմտութիւնն, որպէս և առ Սոգոմացիսն. ոչ անդէն՝ի դառնալն քումմ յարեայ, ասէ, ՝ի վերայ քո, այլ կացի ճնացի մինչև ելանիցէ առ իս:

« Բայց այս քեզ նշան լիցի »: Այս եզեկիա շրջէ զբանն. « Կերիցես այս ամ զսերմանեալդ, և յամի ևս կերիցես զինացեալն ». այսինքն՝ զի մի երթայցէք գերի, այլ կերիջիք զոր ինչ սերմանիցեքդ. զայս ինչ յայտ առնէ, եթէ ոչ վտիճեննոքա զձեզ: Եւ զի ասէ, « Ցամին երկրորդի », զինացեալն Թուխ ինձ եթէ հացամոլ իմն լինելոց էր. զի այնչափ բերիցէ երկիրն, զի և երկրորդական ևս բաւական լինիցի: « Ցամին երկրորդի սերմանեսջիք [1] այգիս և կերիջիք զպտուղ նոցա. և եղիցին ճնացեալքն Ցուդայ՝ արձակել արմատս խոնարհ, և զպտուղն՝ի վեր ». զայս յառաջագոյն ասէ, զի վստահ լինիցին:

« Նախանձ Տեառն զօրութեանց արասցէ զայս ամենայն »: Տեսանե՞ս, զի ամենայն ուստեք զգուշացուցանէր զԹագաւորն, զի մի յիւրոյ ինչ ուղղութեանց համարեսցի զփրկութիւնն, այլ Աստուծոյ մարգարէութենէ անտի. բայց և այսպէս ևս սակայն՝ անկաւ յախտ հպարտութեան:

« Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր՝ի վերայ Թագաւորին Սոբեստանեայց. և մի մտցէ նա՝ի քաղաքս յայս »: Տե՛ս զհպարտութիւն Թշնամւոյն և զյաղթութիւն Թագաւորին առանց արեան [2] հեղլոյ, ըստ այնմ՝ որպէս մարգարէն յառաջագոյն ասէր. Սնկկին ընդ կողմանէ քումմէ հազարք. տեսող միայն լինիցիս, ասէ, հարուածոյն Թշնամեացն: « Եւ վերակացու եղեց քաղաքիս այսորիկ, ապրեցուցանել զսա վասն իմ և վասն Դաւթի ծառայի իմոյ ». տե՛ս, զիաւրդ զկնդութեանիցէ զմիտս Թագաւորին, զի մի ախտանայցէ ինչ. բայց սակայն ախտացաւ:

« Եւ եղ հրեշտակ Տեառն և կոտորեաց՝ի բանակէն

1 Յօր. Ի լուսանցան յօտար գրչէ. Հդեսջիք, պնդեսջիք:
2 Յօր. Զինք արեան:

Սոբեստանեայց հարիւր և ութսուն և հինգ հազար: Եւ յարեան տեսին ընդ առաւօտն զմարմինս մեռեալս»: Վասն այսորիկ գիշերի եղև՝ զի մի ամբոխեսցին ինչ, և մի իւրեանց ինչ համարեսցին զյաղթութիւնն. զի Թէ և անամօթեսցին ինչ, յանդիմանեսցէ զնոսա ժամանակն, զի մինչ դեռ դուք՝ի քուն իսկ կայիք՝ վճարեցաւ գործն:

« Եւ դարձաւ և գնաց. և մինչդեռ երկիր պագանէր կռոց իւրոց, հասին սպանին զնա որդիք իւր »: Տե՛ս զանհաւանութիւնն. զի յետ այնչափ զիտոյձ առնելոյ զԱստուծոյ զօրութեանն, երթեալ դիւի երկիր պագանէր, իւրև անտի իմն համարէր զփրկութիւն. վասն այսորիկ անդէն առ ժամայն առնոյր զիտոյձ Աստուծոյ զօրութեանն: « Եւ թագաւորէ Սոբոգան որդի նորա ընդ նորա »: Յորժամ կարծեաց յիւր յերկիրն հաստատել, յայնժամ էար ևս անգք քան զանցանելոցն՝ի հրեշտակէն՝ անցանէին ընդ նա. զի՝ի ձեռաց ծննդոց իւրոց անկեալ մեռանէր, և ոչ ինչ օգնեցին նմա կուռքն. և յայտ է եթէ վասն տկարութեանն. և չիք ասել եթէ վասն զի ոչ օղոքեաց զկուռան. զի մինչդեռ երկիր պագանէր՝ անդէն առաջի կռոցն սպանաւ: Եւ ընդ՞ը արդեւք, ո՛ մարտս գնդ, ոչ օգնեցեր նմա, զի յայնչափ թշուառութիւն մատնեցաւ. զօրաժողով եղև՝ի վերայ օտարոտի ազգաց, և նմա ինչ ոչ օգնեցեր ուրեք. այլ Թոյլ ետուր բազում զօրաց հարկանել մեռանել յօտար երկրի. և՝ի վերայ այնր ամենայնի ոչ ինչ տրըտունջք եղև զբէն, և ոչ բողոք եբարձ և մեղադիր ինչ եղև, այլ մնեալ երկիր պագանէր քեզ. ընդ՞ը ետուր Թոյլ՝ քո առաջի հարկանել մեռանել. յայտ է՝ զի ամենևին լի ես տկարութեամբ:

1 Յօր. Օտար գրչաւ՝ Ո՞չ յայտ է:

ԳԼՈՒԽ ԼՐ.

« Եւ եղև, ասէ, ՚ի ժամանակին յայնմիկ »: Եւ ոչ վայրապար յաւել մարգարէն եթէ ՚ի ժամանակին յայնմիկ, այլ զի ուսուցանիցէ մեզ զպատճառս ախտին. քանզի բազմաց բարիք լինէ՝ չարեաց պատճառք լինին. և զայս Մնացորդք յայտ առնեն, եթէ Զիջաւ Եւ զեկիա ՚ի հպարտութենէ սրտի իւրոյ: Տէս, ո՛վ մարդ, զի յիրաւի գան ՚ի վերայ մեր նեղութիւնք. և արդ, զի՞նչ լինչ բաւական էր հպարտացուցանել զքեզ. միթէ դու քեզի՞ն լինչ ուղղեցեր, և կամ անձամբ լինչ կատարեցեր զյաղթութիւն. միթէ դո՛ւ հալածեցեր զպատերազմողն. ո՞չ միևչ՚ի քուն իսկ կայր քաղաքդ ամենայն՝ վհատեցան իրքն: Այլ այն իսկ եղէն նմա հպարտութեան պատճառք, զի Աստուածն վերակացու եղև քաղաքին. և զայն ո՞չ լուար արդեւք, եթէ Վասն իմ և վասն Դաւթի ծառայի:

« Եւ եկն առ նա Եսայի, և ասէ. Հրամանն տուր վասն տան քո »: Եւ տէս, Իրք եկն առ նա. յորժամ յոգիսն ապաստան էր. զի և ՚ի հիւանդութենէ անտի հաւատասցին իրքն: Եւ այլազգ ևս. պարտ էր հաւատալ նմա յիրաց անտի՝ որ վաղուց իսկ անցեալ էին ընդ նոսա և ընդ Թէնաւիան: « Հրամանն տուր վասն տան քո, քանզի մեռանիցես ես, և չես կենդանի »: Եւ ոչ վայրապար ասաց, Թէ մեռանիս, այլ Թէ գիր արա, հրամանն տո՛ւր. զոր և այլ Թարգմանքն ասեն Թէ պատուիրեա, որ մանաւանդ ձշգրտէր զնա առ ՚ի հաւատալ. զայս յայն սակս արար, զի այլն ևս ամենայն՝ որ՝յետոյ լինելոց էին նշանք՝ գործեսցին և հաստատեսցին:

« Եւ դարձոյց Եզեկիա զերեսս իւր յորմ անդր »: Ընդէ՞ր ոչ ասէ զպատճառս ախտին. զի մի՛ արատեսցէ զինչ զարգարն: Եւ արդ միա դիր, զի հիւանդութիւնն ոչ էր Թոյլ՝ երթալ՚ի տուն Աստուծոյ, և ոչ յոտս շրջել. քանզի մերձ՚ի մահ խօթացաւ, բայց սակայն ոչ

լինչ հեղգացաւ. ուստի ուսանիցիմք իսկ, եթէ ամենայն ուրեք կամաց և անձնիշխանութեան և մտաց բարեաց պէտք են: Եւ վասն է՞ր արդեւք դարձաւ յորմն. զի գաղտ և հանդարտ ընդ միտն խօսիցի ընդ Աստուծոյ, ոչ ուրուք յորդորելով:

« Յիշեա, ասէ, Տէր, ո՛րպէս գնացի առաջի քո ճշմարտութեամբ, և կատարեալ սրտիւ զհաճոյս քո արարի առաջի: Եւ լաց Եզեկիա զլալուն մեծ »: Եւ ընդէ՞ր արդեւք յիւր առաքինութենէն ապաստան լինիցի. այլ քան զվիշտն եւս ար...ս...յն [1]: Առաջի քո, ասէ, և ոչ՚ի ցոյց մարդկան, և ոչ՚ի պարծանս լինչ. և կատարեալ սրտիւ: Եւ յաւել ևս զարտասուն, զի յայտ արասցէ Թէ ոչ յառաքինութենէն միայն ապաստան լցէ, այլ և ողորմութեամբ կամի ապրել: Տեսանե՞ս, զի ոչ երկայն լինչ բանս դնէ առաջի, այլ միայն գԹուղ սրտիւն. և վհատեցաւ ամենայն:

« Եւ եղև բան Տեառն առ Եսայի. Այս, ասէ, ցեզեկիա. այսպէս ասէ Տէր Դաւթի հօր քո »: Եւ ոչ ասաց եթէ քո. առ հայրենի առաքինութիւնս ձգէ զվիտս նորա, առ հեզութիւն և խոնարհութիւն Դաւթի: « Լուայ, ասէ, ձայնի աղօթից քոց, և տեսի զարտասուս քո. ահա աւասիկ յաւելում՚ի ժամանակ քո ամս հնգետասան »: Այսոքն մեծաց լինն կրօնից հանդամանս ուսանիմք. զի Թէ յօրհասէ ևեթ՚ի քնութեան կարեաց վախճան լինիցի, կամ Թէ՚ի ցաւոց լինչ քնաւորաց և եթէ յուրուք մեղանչականութենէ, պարտ է զայս ամենայն խնդրել: Աւուրք կենաց մերոց ութանասուն ամ՝ և եթէ ևս զօրութեամբ՝ ութսուն ամ [2]. այս քնութեան սահման է, ասեն. զի այսչափ կարէ մարդկեղէն քնութիւն բաւական լինել: Մի՛ ՚ի դուն ինչ զհամաշխարհականն նկարիցեմք, զի ոչ լինչ է այն յայս յար. այլ լինն նկատեսցուք. լինի մահ վասն մեղաց. և յայն սակս ասէ դիր, եթէ Բաղում ժամանակ կացցես, և յաւելցեն ամք կենաց քոց, զի երկայնակեաց լինիցիս՚ի վերայ երկրի. և այլուր, Թէ Մի՛ լինիր խիստ, զի մի՛ տարաժամ մեռանիցիս. և

1 Յօր. Տառք լինչ ջնջագիրք:
2 Այսպէս յօրինակին:

դարձեալ ասէ, թէ Աւուրք ամաց նոցա լցին. և հաստատեալ գիտեմք եթէ յարդարութենէ և ի մեղաց՝ մահք ի ժամու և մահք տարաժամք լինին։ Իսկ արդ վասն առաքինութեանց տարաժամ մահք ոչ լինիցի. Յափշտակեցաւ, ասէ, յառաջ քան զչարիսն. և յայտ է եթէ ըստ իմաստութեանն և ըստ մարդասիրութեանն Աստուծոյ՝ լինին մահք տարաժամք։ Աւ՛ռ, ասէ, Աստուած զՅուսիա, զի մի տեսանիցէ զչարչարանս՝ որ գալոց էին։ Տեսանե՞ս, զի և վասն չարեաց և վասն մարդասիրութեանն Աստուծոյ լինին մահք տարաժամք, և ծերութիւն. Եւ եղիցի, ասէ, երկայնակեաց ի վերայ երկրի. և միւս ևս ծերութիւն՝ վասն մեղաց, ըստ այնմ՝ որպէս վասն Կայենին ասացաւ. Սմենայն որ սպանանիցէ զԿայէն, ասէ, զեւթն վրիժուց պահանջուին լուծցէ. որպէս ոմանք մեկնեցին, և այլք այլազգ. որպէս և մեք իսկ ի Զաքարիայ մեկնութենէն նշանակեցաք [1]։ Եւ Պաւղոս ասէ. Վասն այնորիկ են ի ձեզ բազում հիւանդք և ախտաժէտք և ննջեցեալք յոլովագոյնք։ Եւ յայտ է, եթէ երկուս պատճառս գտաք տարաժամ և ի ժամու մահուց՝ հակառակ միմեանց, զարդարութիւն և զմեղս։ Ցեսցուք թէ և այլ ևս ինչ պատճառս գտանիցեմք. այլ [2] և գտանեմք իսկ. այլ ոչ որպէս դուն կարծես, եթէ բռնադատեալ ինչ կարիցէ զԱստուած՝ կամ ցաւ ինչ կամ մարդկան մեղանչականութիւն. մեռանին և ի ցաւոց և ի մարդկան զրպարտութենէ, այլ Աստուծոյ թոյլ տալով. այնպիսի ինչ, յորոց վերայ աշտարակն կործանեցաւ. զորոց և ասէրն իսկ Յիսուս. Մի՛թէ նոքա ևս եթէ մեղաւորք էին քան զամենայն մեղաւորս։ Եւ միւս ևս պատճառք հասուն մահու, որպէս ի Պաւղոսն կատարեցաւ. և ոչ վայրապար ինչ և ոչ ի զուր. զի արդար էր՝ յայն սակս եկաց շատ. Եւ այլ վասն ձերոյ օգտի կացից և ճնացից. ապա թէ ոչ և նա ևս ընթացեալ

1 Յայժ ցանկալի էր արդարև դիւտ այսպիսւոյ պատուական մարգարէի ի գանձատան մատենագրութեանց Սրբոյ Հայրապետիս, որոյ նշխարք և նշմարք անդամ չերևին և չերևատակին, թող թէ բուն վանդակն, ցայսօր ժամանակի, ոչ առ ազգայինս և ոչ առ օտարազգիս։

2 Յօր. Յօտար դրէ. Աւ՛, այլ Ե գրանէմ իսկ։

Քեպէր առ Քրիստոս. այլ վասն քարոզութեանն կամէր յամել ի մարմնի անդ։ Սոյնպէս և մարգարէքն վասն այսպիսի ինչ իրաց կէին ամն բազումս, զի շահ օգտի լինիցի բազմաց։ Ասհաւասիկ երեք պատճառս ցուցաւ տարաժամ մահու և ժամու մահուց. կամիցիս և յորրորդ ևս պատճառս ուսանել. որպէս զԱբրահամ ի ծերութենէ ի մանկութիւն նորոգեալ, վասն սերոյ զաւակացն ի նմանէ։ Կամիս և այլ հինգերորդ պատճառս ուսանել, որ անճառ և կարի զարմանալի է. մանչ տղայոցն՝ որ ի դառնաշունչ հրամանէ Հերովդէսի անօրինի կոտորէին. զի նոքա ոչ վասն արդարութեան և ոչ վասն մեղաց կոտորեցան, և ոչ յափշտակեցան յառաջ քան զչարիս ինչ, այլ յայլոց դառնութենէ մանաց կոտորեցան. քանզի Հերովդէս առ իւրում չարութենէն կոտորեաց։ Իսկ ի Ջհեղեղ, ասէ, ընդէր. Աստուծոյ հրամանէ, ասեմք, ջնջեցան՝ վասն մեղաց իւրեանց։ Եւ Եգիպտոս մանկտին Իսրայելացւոց, և անդրանիկքն Եգիպտացւոց. սակայն և նոքա վասն պատճառանաց ինչ. որպէս որք ջհեղեղեալն ջնջեցան՝ վասն այլ ինչ պատճառանաց, և ի Հերովդեսէ՝ վասն այլոց պատճառանաց, և Եգիպտոս՝ վասն այլոց. և թէպէտ և իւրաքանչիւր պատճառք իցեն, սակայն և զպատճառսն ինդրել պարտ է։ Աւ Նոյիւ՝ զի մի ամենևին չարիքն տարածանիցին. իսկ առ Քրիստոսիւ՝ ոչ այսպիսի ինչ. Եգիպտացւոց՝ վասն հարցն մեղաց, իսկ Իսրայելացւոցն՝ վասն Եգիպտացւոցն չարութեան։ Եւ եթէ ասիցես, եթէ ընդէ՞ր ոչ զամենայն մեղաւորս նոյնպէս սատակէ. ասեմ, թէ վասն զի դատաստան լինելոց է։ Իսկ զմանկտցն՝ որ ի Հերովդեսէն կոտորեցան, եթէ ասիցէ ոք եթէ ոչ այնպիսի ինչ պատճառաք կոտորեցան, զի եթէ մեղաւորք լինելոց էին՝ օգտեցան, և արդարք՝ շնաստեցան. ասեմք, եթէ ոչ այդպէս. քանզի գիտէ Աստուած և այն ինչ ծնելոցն հատուցանել զհատուցումն, և մինչև ծնեալ էին, և մինչև մի ինչ բարի և կամ չար գործեալ երէցն, ասէ, կրսերոյն ծառայեսցէ. և զարձեալ, եթէ ՉՅակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի։ Եւ այս՝ ըստ հանդերձելոց իրաց ինչ. քանզի գիտէ Աստուած եթէ յոր չափ գալոց հասանելոց են. և յայտ է, զի եթէ

քարիք լինելոց իցեն՝ սիրելիք Աստուծոյ լինին, և եթէ չարք լինելոց իցեն՝ լաւ էր նոցա մեռանելն, զի մի՛ չարք լինիցին։ Իսկ զայն, ասեն, զիաՀրդ իմա՛ նայցեմք. զի թէ աւազակ ոք կամ չարագործ սպա՛ նանիցի, այնպէս արդեւք հրամանք էին նմա, զի չար մահու մեռանիցի։ Ոչ եթէ Աստուծոյ ինչ այն՛ պէս հրամանք էին նմա, այլ յիւրոյ չարեաց. եւ յիւրմէ անձնիշխանութենէ. ինքն իւր եղև արարիչ մահու. ինքն զանձն արկ ընդ բռնութեամբ մահուն. որպէս և Իմաստունն ասէ, թէ Իւրօք իսկ ձեռօք կո՛ չեաց զնա։ Եւ թէ գլըրիցէ ոք և մեռանիցի, Աստուածծ առնիցէ զայնպիսի մահն։ Ինչ արդեւք զի ինքն յիւրմէ ծուլութենէ իցէ. զի յորժամ Աստուած Թոյլ տացէ այնպէս մեռանել, վասն որո՛յ պատճառանայ՝ ինքն իսկ ձարտար գիտէ. և եթէ խեղդիցէ ոք և մեռանիցի, ոչ եթէ Աստուած ընդ այն կամիցի, այլ Թոյլ տայ ըստ կամաց յանդգնելոցն։ Սոյնպէս և յորոյ վերայ աւազակք անկանիցին, է ուրեք զի Հանէ զայլ ընդ առաջ և ապրեցուցանէ, և է ուրուք զի Թոյլ տայ, զի մի՛ զանձնիշխանութիւնն կարծիցէ [1]։ Եւ այսպէս իւ՛ մանաւանք եթէ է մահ որ յԱստուծոյ հրամանաց և՛ի կամաց լինի, և է՝ զի Թէպէտ և ինքն ոչ կամի, բայց Թոյլ տայ, զի անձամբ զանձն դատապարտեսցէ սպա՛ նող։ Ոչ ամենայն ուրեք օգնէ Աստուած, քանզի այն՛ պէս կամի՝ զի մեք ապաստան լինիցիմք՛ի նա. և ոչ ամենայն ուրեք ընդ վայր Հարկանէ, զի մի՛ առանց առաքինորդութեան և դարմանոյ Համարեալ լինիցին արարածք իւր։ Եւ յայտ է, եթէ ոչ օրհաս ինչ անվրի՛ պական մահ սահմանեալ կայ՛ի վերայ մարդկան յԱստուծոյ, այլ մարթ է ապաշխարութեամբ և զե՛ լեալ վՀիւ մահուն դարձուցանել, և փախստեայ ա՛ պաստան լինել արդարոյն և մեղաւորի առ Աստուած. որպէս և եղ իսկ վՀիւ՛ի վերայ արդարոյն Եզեկիայ, և նա դարձոյց անդրէն զՀրամանն՝ արտասուօք։ Ա՛ն՛ պէս իսկ կամի Աստուած, զի ոչ միայն ըստ բնութեան, այլ ըստ արդարութեանն և ըստ մեղայ լինիցի մահ, զի կարիցեմք արդարութեամբն անցուցանել զտա՛

1 Ա՛յսպէս յօրինակին. Թերևս կարճիցէ։

րաժամ մահ։ Եւ արդ զինչ օգուտ է, ասէ, յորժամ լսիցեմ, Թէ առաջին մարդն վասն մեղայ մեռաւ. և ես Թէպէտ և արդարութիւնս ինչ գործիցեմ, ընդ նորին պատժոք այրեցեալ մեռանիմ։ Այլ Թէ արդար իցես՝ անցուցանես զմահն տարաժամ. և եթէ մեղաւոր լինիցիս՝ չկարես անցուցանել, և այս յայնժամ իսկ պիտոյ էր, այլ այժմ և զմահն իսկ Հրամայեաց առ ոչինչ Համարել։

« Ահա աւասիկ յաւելում՛ի ժամանակս քո ամս հնգետասան »։ Եւ մի՛ ևս ասիցեն Թէ այսպիսի իսկ Հրամանք էին. և զայս ոչ իմանան, եթէ եւ Հրաման և տուաւ վՀիւ, և նա դարձոյց անդրէն՝ արտասուօք։ Եւ այս Աստուծոյ մարդասիրութեանն նշանակ է. զի՛ի մարդկանէ՝ որ զվՀիւ մահու առնուցու՝ չկարէ ապ՛ րել բայց Թէ իցէ ոք՝ որ Համարձակութիւն ունիցի առ դատաւորն, և կարիցէ ապրեցուցանել՛ի մահուա՛ նէն զմահապարտն. իսկ առ Աստուած ոչ այնպէս, այլ ինքնին՝ որոյ զվՀիւ առեալ էր, աղաչեաց միայն և արտասուեաց, և դարձոյց զպատիժս մահուն։

« Եւ՛ի ձեռաց արքային Ասորեստանեայց փրկեցից զքեզ »։ Տես, զիաՀրդ զնջուցանէ զՀպարտութիւն նորա. ես, ասէ, փրկեցից զքեզ, և ոչ դու անձամբ։ «Եւ այս ինչ նշան լիցի քեզ՛ի Տեառնէ »։ Ի պատերազ՛ մին տայ նշան զյաղթութեանն պայման. « Այս, ասէ, նշան լիցի քեզ. կերիցես այս ամ զսերմանեալդ ». զայնպիսի ինչ նշան՝ որ յիշեցուցանէ զանցեալ ինչ իրս. զի ոչ միայն յորժամ զՀանդերձեալն ինչ իրս կա՛ միցի Հաւատալի առնել Աստուած՝ տայ նշան, այլ զի և զանցեալսն մեռանայցեն. որպէս և օձիւն պղնձեաւ, զի այն յիշեցուցիչ իմն էր ձեռան տարածելոյ [1]. Գրեա զայդ, ասէ, առ յիշատակ, զի յայտնի լինիցիք այլոց աղգացն և որ գալոցն է առ յապա։ Զի յորժամ մեռ ինչ իցեն իրքն, չեն ինչ պէտք նշանաց, այլ յորժամ Հե՛ ռի իցեն՝ յայնժամ պիտոյ են։ Եւ արդ, տես զզարմա՛ նալին և զկանխատեսութիւնն. զարմանալիք էին վՀա՛ րել պատերազմին, զի յերևելոց միոյ Հրեշտակին սա՛ տակեցան զօրք Ասորեստանեայց. և ևս զարմանալի

1 Ա՛յսպէս յօրինակին։

կանխասացութիւնն. և եթէ սերմանեօջիք և հնձես-
ջիք, որպէս և ՚ի խաղաղ ժամանակս, և ոչ որպէս
թշնամին տեղատարափ լինի սպառնալեօք: Յաւելոյր
նշան ՚ի նշանս. ոչ վասն արդարոյն, զի նա և առանց
նշանաց իսկ հաւատայր, այլ վասն այլոցն ամենեցունց,
զի յայտնի գիրսն առնիցէ. զի ՚ի կոտորածոյ զօրացն
բազմաց՝ ծանիցեն եթէ նա է տէր մահու. և յաւել-
լոյ կենաց ՚ի ժամանակս Եղեկիայ՝ եթէ նա է իշխան
և տուիչ կենաց:

« Ահա աւադիկ ես դարձուցանեմ զտուերդ՝ որ
իջեալ է ՚ի շողդ, ՚ի տան աստիճան [1] աքազեան ա-
պարանից հօր քո: Եւ դարձաւ շողն անդրէն »: Սի-
մաքոս յայտնագոյնս ասէ. Ահա աւադիկ, ասէ, ես
դարձեալ ընծայուցից զտուերդ զաստիճանացդ,
ընդ որս իջեալ է ՚ի ժամացուցիդ Ազաղու, և շողդ
անդրէն յետս զտան աստիճանօք: Եւ դարձաւ շողն
զտան ժամն մեղմով իջանելով զաստիճանօք: — Մեծ
ինն զարմանալի են իրք. զի եթէ վաղվաղակի տուեալ
էր նմա անդրէն յետս ընծայանալ, ոչ այնպիսի զարմա-
նալի էին իրքն, այլ ԹԵրևս ՚ի նմին իսկ արեգական
համարէին զընծայսն, և ոչ ինչ յայտնի լինէր. իսկ
յորժամ անդրէն մեղմով դառնայր յետս, յայտ է՝
եթէ կառավարի ուրուք՝ որոյ բազում իշխանութիւնն
իցէ՝ էր գործն: Եւ տես, զի ոչ ՚ի հարթ ինչ վայրի
իրքն գործէին, այլ յաստիճանս, ուր յայտնի երևէր զօ-
րութիւն զարմանագործին. և այս ընդ ամենայն տիե-
զերս առհասարակ լինէր. ոչ ոք երբեք եառես և ոչ
լուաս այսպիսի նշանս արարեալ: Ասէ Յեսու՝ որդի
Նաւեայ. Կացէք արեգական և լուսին. և զտեղի ա-
ռին. Թէպէտ և մեծ նշան էր, այլ ոչ այնպէս յայտնի
ցուցանէր, եթէ ոչ ինքնակացք ինչ իցեն, այլ է ոմն
որ ունի և վարէ զամենայն: Զի մի ՚ի յօրինեալ ընթա-
ցիցն ինքնակայ ինչ կարծիցեն զարարածս, և կամ
Թէ արեգական ինչ իմանայցես զիւր գնացսն, վասն
այնորիկ մեղմով շարժէ, և յորժամ կամի՝ և այլակեր-
պէ. ոչ զի միտս ինչ կամիցի առնել տիեզերաց, այլ
զի զարմացուսցէ և ածցէ ՚ի հաւատս: Կացոյց զնա Յե-

1 Յօր. Օտար գրչաւ՝ ասպիճանաց:

սու որդի Նաւեայ, դարձոյց անդրէն յետս Աստուած.
արգել զմանապարհ նորա Քրիստոս, զի յորժամ ե-
սանիցես զնա նուաղեալ՝ ուսանիցիս եթէ ոչ նորա բը-
նութեանն գործ ինչ է, այլ արարչին:

« Աղօթք Եղեկիայ արքայի Հրէաստանի, յորժամ
հիւանդացաւն ». իսկ այլքն ասեն. Յորժամ խօթա-
ցաւն և յարեաւ յախտին իւրմէ: Տեսանէս, որպէս
բարերար և շնորհակալ եղև յախտին, և յիշեր զե-
րախտիսն: « Ես, ասէ, ասացի ՚ի բարձրութեան ա-
ւուրց իմոց »: Զբարձրութեան աւուրցն՝ զմանկու-
թեան աւուրսն կոչէ. կամ որպէս այլքն ասեն, եթէ
ի հանդարտեալ աւուրց իմոց. այսինքն՝ ՚ի դադարելն,
՚ի հանգչելն: « Գնացից [1] ՚ի դրունս դժոխոց. Թողից
զայլ ևս ամն ». այսինքն ընդ տարաժամ մահն,
որ մինչ Թե ամք են, և մեզ հասանէ կեալ:

« Ասացի Թէ ոչ ևս տեսից զփրկութիւն Աստուծոյ
՚ի վերայ երկրի. և ոչ ևս տեսից զմարդ բնակչաց իւ-
րոց ». և այս ևս տրտմագոյն է. զի և զմեռեալս ևս
տրտմեցուցանէ: « Պակասեցայ յաշգատուհմէ իմմէ.
Թողի զենացորդս կենաց իմոց, եւ և գնաց յինէն իբրև
զայն՝ որ քակէ զտաղաւար ինչ Հարեալ. Հոգի իմ եղև
առ ՚ի յինէն իբրև զոստայն սատարաց՝ մերձեալ ՚ի հա-
տանել » : Յայնմանէ յայտ է՝ եթէ ՚ի վախճան հա-
սեալ էին կեանք նորա, և յոգիս ապաստան մերձ էր
՚ի մեռանել. և զի Աստուծոյ փրկութեանն է ամենայն
ինչ: Եւ արդ նոր իմն յարութեան գործ էր. զի Թէ-
պէտ և ՚ի վախճան չէին ինչ վէիւռն, սակայն կեանքն
իբրև վախճան իմն առնի. զմեռեալն յարոյց՝ որ ապ-
րեցուցանէ ՚ի մահուանէ:

« Յաւուր յայնմիկ մատնեցայ ես մինչև յառաւօտ՝
իբրև առիւծու »: Զսաստիկ ցաւն կոչէ առիւծ:
« Այնպէս մանրեաց զամենայն զոսկերս իմ. ՚ի տուընջ-
ենէ մինչև ՚ի գիշեր մատնեցայ »: Այսու զվախճանն
յայտ առնէ, որ եկն եհաս ՚ի վերայ, և զԱստուծոյ
յանկարծահաս փրկութիւնն. զի յոյս հատուածին [2]
յոյս եղև նմա:

« Իբրև զծիծեռն՝ այնպէս ձէեցի [3], և իբրև զաղաւ-

1 Յօր. Գնայ: 2 Յօր. Հապառկեանն: 3 Յօր. Ճլլիմէ:

նի՝ այնպէս մնչեցի »։ Ա.յսինքն գոչէի, պաղատէի առ զայրուցս ցասոյն սատկուլթեան։ « Զի նուաղեցին աչք իմ՝ ի հայելոյ ի բարձրուլթիւն երկնից առ Տէր, որ փրկեացն զիս, և փարատեցոյց զցաւս անձին իմոյ »։

« Տէր, վասն այսորիկ պատմեցաւ քեզ ». այսինքն վասն անձինս իմոյ։ « Զարթուցեր զշունչ իմ, և մխիթարեալ կեցի։ Ա.հաւասիկ ի խաղաղուլթիւն դարձաւ դառնուլթիւն իմ։ զի փրկեցեր զանձն իմ՝ զի մի կորեայց, և ընկեցեր յետս զամենայն մեղս իմ »։ Տեսա՞նէս, զիարդ ցուցանէ եթէ մեղք՝ մահու պատճառք են. որպէս և սա ինքն իսկ խոստովան լինի. « Զի ոչ եթէ որ ի դժոխս իցեն՝ փառաւոր առնիցեն զքեզ, և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ »։ Ապա ոչ ուրեմն ընդհատ ի մեռելոց են, որք ոչ օրհնիցեն զԱստուած, այլ ևս վատթարագոյնք քան զմեռեալս. զի որ զԱստուածն ոչ փառաւորեն, այնպէս համարեն, եթէ մեռեալ և ի գերեզմանի իսկ կայցեն։ Եւ յիրաւի ասէ, եթէ « Որ կենդանիքն իցեն օրհնեսցեն զքեզ, զոր օրինակ և ես »։ Եւ կենդանիս ասա՝ զայնոսիկ կոչէ, որ յաստուածպաշտուլթեանն կենդանի իցեն. և յայտ այնու է որ ասէն, եթէ « Զոր օրինակ և ես »։ Զի ոչ եթէ նա միայն կենդանի էր ի ժամանակին, այլ աշխարհք ամենայն, և աստուածպաշտուլթեամբն՝ նա միայն կենդանի էր. զի ոչ եթէ թերահաւատուլթիւն ինչ ի յարուլթեանն ասեր արդարն, եթէ « Ոչ որ ի դժոխս իցեն՝ փառաւոր առնիցեն զքեզ, և ոչ մեռեալք օրհնեսցեն զքեզ ». այլ թէ որ ի մեղսն մեռեալ իցեն՝ իբրև զայնոսիկ՝ որ ի հողն կայցեն փըտեալ՝ անպտուղ են յօրհնուլթենէ։

« Ոչ դադարեցից օրհնել զքեզ սաղմոսարանաւ զամենայն աւուրս կենաց իմոց՝ յանդիման տաճարիդ Աստուծոյ »։ Տեսանե՞ս, որչափ խոստանայ ամբաստան լինել զմեղաց. զի որչափ յամենայն ժամ ոչ դադարես ցեղ յանդիման տանն Տեառն օրհնել զԱստուած, ոչ ինչ այնուհետև կարեն ոտնկռիւ լինել ի նմա մեղք։

« Եւ ասէ Եսայի ցեզեկիա. Ա՛ռ դու պաղատիտս ի Թզղզ, և գիր ի վերայ վիրիդ և ողջասցի։ Եւ ասէ Եզեկիա. Ա.յս ինչ նշան լիցի՝ զի ելից ի տունն Աստուծոյ »։ Եւ ընդհատ պաղատիտս ի Թզղզ հրամայեր դնել

ի վերայ վիրին. այլ ըստ այնմ օրինակի, որպէս և Եզեկիան կամեցաւ, երևելի ինչ և մարմնաւոր նշանակ իւրոյ բժշկուլթեան առնուլ զՏողն, նոյնպէս և սա։

Եւ զիա՞րդ ասիցէ, եթէ Ա.յս են աղօթք Եզեկիայ՝ յորժամ յարեաւ ի հիւանդուլթենէ, և այժմ ասէ, եթէ « Դիր սպեղանիս ի վերայ վիրիդ, և ողջասջիր»։ Սովորուլթիւն իսկ է մարգարէիցն՝ յետ ձառելոյ զիրայ ինչ՝ վերստին կրկնակի պատմել. զի ոչ եթէ բժշկաց ինչ ձարտարուլթեամբ ցաւք փարատեին, այլ յԱստուծոյ օգնականուլթենէն. զի ոչ հնարիւք ինչ դեղոց, այլ և առանց դեղոցն կարող է բժշկել. և ոչ պատարագս խնդրելով. և եթէ խնդրիցէ ևս պատարագս՝ զհաւատսն միայն բժշկելոցն։ Վասն այսորիկ իսկ ի հարիւրապետին տուն ոչ ջոգաւ Քրիստոս, քանզի մեծ էին հաւատք նորա. իսկ ի ժողովրդապետին տունն ջոգաւ՝ վասն չափոյն նուազ հաւատոյն։ Դարձեալ ի միւսումն ասէ. Կամիմ, բժշկեա՛ց. և առ միւսն ձեռն ձգեաց, և զմիւսոյն ևս զաչսն զիներ. ընդէ՞ր արդեւք. այլ զի ըստ ամենեցունց զկնի անիցէ։ Զնեէմա նայ բորոտե ասէ . Երթայցէ լուայցէ. և զկուրին՝ ինքնին ծեփեաց զաչս կաւով. և կաւ բժշկուլթիւն ինչ ոչ գործէ, այլ և զաչս իսկ կուրացուցանէ։ Եւ վասն Ղազարու ասէ. Առէ՛ք զվէմդ ի բաց. և Արի՛, եկ արտաքս։ Մինէ մինչ կափարիչն ի վերայ կայր՝ չկարէր զմեռեալն յարուցանել. այլ զի և որ զվէմն վերացուցանիցեն՝ լինիցին վկայք յարուլթեանն. զի եթէ ըզդրունս մահու եբաց, և զարգելականն՝ որ ընդ նորա աղխիւք պաշարեալ կային՝ եհան, որչափ ևս առաւել կարող էր զվէմն կափարիչ՝ բանիւ՝ ի բաց տապալել. այլ զի մի՝ ի թերահաւատուլթիւն դառնայցեն մարդիկ, որոց առաջի յարուցանէր զմեռեալն։ Այնպէս և աստ, հրամայեաց առնել սպեղանի ի թզոյ. այլ զի հասեալ կայր ի վերայ օրհաս, ինքնին իսկ վկայ եղև. ասէ. Ոգի իմ առ յինէն իբրև ոստայն սատարաց՝ մերձ ի հատանել։ Եւ յայտ է, եթէ ոչ ի սպեղանոյ թզոյն, այլ ի հրամանէն Աստուծոյ եղև բժշկուլթիւն. զի ի բժշկացն օգնուլթիւնք՝ ի դեղոյն բնուլթենէ են, և ոչ եթէ ի նոցա ինչ զօրուլթենէ. իսկ Քրիստոսին ոչ այսպիսի ինչ է. քանզի ոչ եթէ ի դեղս ինչ մատուցա-

ներ սպեղանին, այլ'ի նշանակ լինի. զի գեղ՝ բան նորա է, յորժամ հրամայէ՝ և ամենայն ինչ գիւրաւ լինի:

« Ա.յս ինչ իցէ, ասէ, նշանակ, զի ելից 'ի տունն Աստուծոյ »: Իսկ այլքն ասեն, եթէ Ջինչ նշանակիցէ, զի ելանիցեմ 'ի տունն Աստուծոյ : Մի, ասէ, զաղօթից ինչ կամ զառողջութեան կամ զայլ իրիք տացես նշան, այլ յորժամ ցուցանիցես՝ եթէ 'ի տանն Աստուծոյ իցես, այն լիցի նշան:

ԳԼՈՒԽ Լ Թ

« Ի ժամանակին յայնմիկ առաքեաց Մարոդաք Բաղդան, որդի Բաղադայ »: Եւ զինչ առաքեաց ասդեւք. « Թուղթս ողջունական և հրեշտակս պատարագաւք »: Տեսանէս, որպիսի ինչ ուղղութիւնք գործեցան 'ի հիւանդութենէ Եզեկիայ. տեսանէս զպատուղ յաղթութեանն: Որք միշտ ընդ կրունկն հարկանէին զօրաք զՀրեայս, և բնաւ առ մարդս իսկ ոչ ունէին զնոսա, և անօրէն լինն համարէին զազգ նոցա, նոքա հրեշտակս արձակէին, 'ի խաղաղութիւն խօսէին և զկրօնսին լինն փոյթ առնէին, և յանձին ունէր ախորժէին զՀրէական օրէնսն. զի յետ առողջութեանն առաքել՝ այն իսկ էր միաբանութեան նշանակ. ոչ միայն պատարագաւք 'ի հաշտութիւն խօսել, այլ և բարեկամութիւն ևս կամաք յանձին ունել: Իսկ Եզեկիա զբարեկամացն լինն հանգոյն և հաստատուն սէր ցուցանէր առ նոսա:

Իսկ մարգարէն ցԵզեկիա. « Ջինչ, ասէ, ասեն արքդ այդոքիկ, և կամ ուստի՞ եկին առ քեզ »: Եթէ զինչ ասիցեն՝ զայն ինչ չգայտնեաց [1] Եզեկիա, բայց եթէ ուստի իցեն եկեալ՝ ասաց: Մինչ առ չգիտէր ինչ Հարցանիցէ մարգարէն. և զի ոչ առ չգիտէր Հարցանիցէ, յետոյ յայտ առնէ. այնու՝ զգերութեանն գալ գուշակեաց նմա: Եւ պարտ էր խնդրել՝ թէ զինչ

1 Յօր. Յայտնեաց:

պատճառաք իցեն ցասմանն գերութեանն. Թէպէտ և չէ յայտնի, այլ զ...աւ առատ [1] զուարթութիւնն Եզեկիայ պարտ էր կարծել. զի որպէս հիւանդութեանն պատճառաք յայտնի չէ [2] և զՀպարտութիւնն իմանամք, նոյնպէս և ասա, Թէպէտ և չէ ինչ յայտ, սակայն զի 'ի մարդիկ յոյս արար և ոչ զԱստուած՝ իմանամք. զի չէր պարտ նմա 'ի նոսա յուսալ, և ոչ բարեկամութիւնս ինչ առնել ընդ նոսա [3]. այլ իբրև պարտեաւ 'ի պատարագացն՝ ոչ եցոյց նոցա զինչ պարտ էր ցուցանել, այլ փոխանակ այնր՝ եցոյց նոցա զտունն Նեբովթայ: Ակիղաս փոխանակ Նեբովթայն՝ զինկոց տունն, ասէ. Սիմաքոս, զզինուցն պատերազմողաց, և զոսկոյ և զարծաթոյ և զտաճկէից՝ որ է ստաչին, և զիւղոց և զինկոց, և զամենայն ինչ՝ որ էր 'ի գանձս իւր: Ընդէր առնէիր զնոսա բարեկամս և ոչ զԱստուած, որով ամենայն ինչ քեզ զգուշալի է: Իսկ ոմանք ասեն, երկեցուցանել կամեցաւ զնոսա գանձուցն ցուցանելով, որում պարտ էր այլով իրիք երկեցուցանել: Իսկ այլք ասեն, եթէ զնշանին՝ որ եղև, զպատճառս եկին ուսանել. զի օրն այն մեծ և երկայնաձիգ եղև քան զամենայն աւուրս. զի տասն ժամ էր, և դարձաւ անդրէն այլ ևս տասն ժամն արեգակին, զի ընդ գալն և ընդ անդրէն գառնալն՝ լինի ցին այսքան ժամ: և դարձեալ ըստ իւրոց գնացից, այլ ևս երկոտասան ժամ գնաց արեգակին: Իսկ Բաբելացիքն գԺնդակք առ այսպիսի իրս, եկին Հարցանել վասն նշանին՝ որ եղև. քանզի չէր ըստ սովորութեանն ընթացից արեգական երեսուն և երկու ժամք լինել 'ի միում աւուր: Վասն որոյ և մարգարէն ասէ, եթէ « Ջինչ ասեն արքդ այդոքիկ »: Եւ նորա թողեալ 'ի զարմանալեացն ցուցանել մեծ զԱստուած, 'ի մարդկականացն առնէր զանձն ահագին. և զայն ոչ ածէր

1 Յօր. Տառ մի եղծեալ. Թերևս պարտ իցէ ընթեռնուլ պ'ոչսաւ, իբր ըստ չափ, չտալոցն, որպէս գասանի և յայլ Թարգմանութիւնս Ոսկեբերանի 'ի նախնեաց խօս առաքելին' շուայտութեան իմաստիւք:

2 Յօր. Յայտ ինչ է. այլ օտար գրչաւ՝ յայտ չէ:

3 Յօր. Ա՛ նոսա. յօտար գրչէ՝ առնել ընդ նոսա:

զմտաւ, եթէ գրեալ է, թէ Աննիծեալ լիցի մարդն՝ որ առնիցէ զայս իւր ի մարդ մահկանացու։

« Եւ ասէր Եսայի. Ահա աւասիկ աւուրք եկեսցեն, և առնուցուն զամենայն՝ որ ինչ ի տան քումմէ է. և յորդւոց քոց՝ զոր ծնանիցիս՝ առնուցուն և առնիցեն կուրաս ». իսկ այլքն՝ նեղքինիք, ասեն։ Բարիոք ասեն ոմանք վասն Դանիելի, եթէ ի զաւակէ Թագաւորու-Թեանն էր, և արարին զնա նեղքինի, և զերից մանկանցն։

« Եւ ասէ Եզեկիա. Բարի է բանդ. յաւուրս իմ խաղաղութիւն եղիցի »։ Ա՛յլ ոչ այսպիսի ինչ աքանչելի և մեծամեծ որեարն. զի՞րդ արդեւք. Ինձ քաւ լիցի, ասէ, դադարեցի յաղօթս առնլոյ վասն ձեր. և միւսն, Թէ ես հովիւս մեղայ և ես չարչարեցի, դոքա խաչեդ զի՞ արարին. և միւսն. Թէ Թողուս զդոցա զմեղս՝ Թո՛ղ, ապա Թէ ոչ՝ և զիս ջնջեա ի գպրութենէդ՝ յորմէ գրեցեր։ Նոքա ոչ ինչ զգային իւրեանց անձանց բարեաց Թեանց, յորժամ զայնոսիկ՝ ընդ որս էին՝ ի վիշտս տեսանէին. և սա ոչ ինչ իմանայր զայլոցն վիշտս՝ մինչև ինքն ի բարիսն էր. սորայս մարդկեղէն ինն էր, և նոցայն հրեշտակական. սա առ իւր որդիս և Թոռունս անգութ և անագորոյն, և նոքա առ օտարս գԹաճձ և խնամակալք։ Զայս ասեմք՝ զի մի զոյն առնիցեմք. զի եԹէ մեծատունն՝ որ անագորոյնն գտաւ առ Ղազար, այնպէս գԹաճձագոյն էր ի տանջանսն, որչափ և առաւել մեզ պարտ իցէ լինել գԹաճձագոյն։ Տե՛ս, որչափ ինչ օրինակ առաքինութեան աւր յանձն ի տանջանացն. զի արդարն Եզեկիա և ոչ վասն որդւոց իւրոց ինչ հոգացաւ, իսկ անգութն և անագորոյնն՝ և ոչ զազգականաց ինչ անփոյթ արար. զի Թէպէտ և այնչափ տանջանք զանձամբ պատեալ էին [1], սակայն յաղերսոյն և յողբանայն չդադարէր. Թէպէտ և ոչ ինչ կարէր նոցա մխիթարութիւն գտանել, այլ յաղաչելոյ և ի մաղթելոյ ոչ դադարէր։ Եւ արդ ո՞ւր է ցեն՝ որ ասիցեն, եԹէ տանջանաւորացն այն իմն մխիթարութիւն է, եԹէ ամենեքեան ի տանջանսն գտանիցեն. զի ահա աւանիկ նա ոչ այնպէս աղաչէր, զի

1 Յօր. ԼԴ՝ յօտար գրէ։

տանջանք ի տանջանս տանջանաւորացն յաւելուցուն, այլ այնպէս պաղատէր՝ զի մի յանցանիցեն, և ի նոյն տանջանսն՝ որ չէին եկեալ գայցեն։ Եւ մանաւանդ յիրաւի իսկ. քանզի զի՞նչ օգուտ իցէ քեզ, ո՛վ մարդ, զայլս ի տանջանս ըղձանալ. միԹէ քեզ այն դիւրութի՞ւն ի ցաւոց անտի լինիցի. միԹէ քան զչարին ԹեԹևագո՞յն ինչ լինիցին տանջանքն. այո՛, ասէ, յաստի իրաց [1]. աստի գործես, քանզի չես ինչ տեղեակ այնպիսի մեծամեծ պատժոց։ Եւ զմեծատունն արդեւք միա՞յն ինչ իմանայիս ի տանջանս, և ո՛չ ընդ բիւրուց բիւրս պատժաւորս. և զի ոչ միայն էր, այլ ընդ բազումս, լա՛ւր Աբրահամու՝ որ ասէն, եԹէ Վիրհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ։ Միթէ բազմութիւնն զտապ բոցոյն հանդարտագո՞յն ինչ արար. և ոչ ուրեք։ Կամ Հրեայքն յորժամ գերի վարեցան, միԹէ զի ընդ բազումսն էին՝ մխիթարութի՞ւն ինչ էր այն նոցա։ Զի Թէ միտս ունիցիս, ո՛վ մարդ, զի յորժամ դու միայն իցես ի պատիժս, մարԹ է այլոց աղաչանաւք փրկուեան հասանել. իսկ եԹէ ամենեքեան յանցաւորք գտանիցիմք առ Տէրն, ո՛վ լցե՝ որ զցասումն նորա ցածուցանիցէ։ Եւ քանզի Եզեկիա այնպէս անագորոյն գտաւ առ իւր ծնունդսն, տե՛ս զմարդասէրն, զի՛րդ տայր խրախոյս։

ԳԼՈՒԽ Ի

« Մխիթարեցէք, մխիթարեցէք զժողովուրդս իմ, ասէ Աստուած. քահանայքդ, խօսեցարուք ի սիրտ Երուսաղէմի »։ Եւ ոչ վայրապար ինչ կրկնէ. այլ քանզի առ այնպիսիսն է պատգամն՝ որք ի յուսահատութիւնն կործանեալ էին. որպէս և Աբրահամն ասէր, Թէ Աբրահամ, Աբրահամ, նոյնպէս և աստ, Թէ « Մխիթարեցէք, մխիթարեցէք »։ Քանզի բազում և երկայնաձիգ բանս ամբաստանութեան յառնախեաց

1 Ա՛յսպէս յօրինակին։

առ Հրեայսն, և բիւրապատիկ չարիս՝ որ լինելոց էին նոցա՝ յառաջագոյն գուշակեաց, և կսկծեցոյց ահագին բանիւք զմիտս նոցա, յանկարծակի լինն դարձեալ անկեալ յաղերս, ասէ. « Ժողովուրդ իմ». զոր այլուր այլազգ լինն ասեր, թէ Ե՛րթ, ՚ի աստի վաղվաղակի, զի անիրաւեցաւ Ժողովուրդն քո. զի Մովսիսի արժան էին կոչել Ժողովուրդ, և ոչ Աստուծոյ: Իսկ արդարն և տիրասէրը Ծառայն յանձին կալաւ արդեւք ունել զնոսա առ Ժողովուրդս. և ոչ ուրեք: Եւ ընդէ՞ր արդեւք ասաց, եթէ Ժողովուրդ քո. այլ զի զնա ՚ի խնդրուածս գրգռեսցէ. քանզի ասելովն՝ եթէ Թոյլ տուր ինձ, նշանակեր եթէ զնա յորդորե՛ր ՚ի պաղատանս:

« Ջահանայք, խօսեցարուք ՚ի սիրտ Երուսաղեմի »: Քանզի քահանայից գո . . . ձինն [1] են այնպիսի իրք, միջնորդ լինել յուղղութիւնս ածել. զի նաւահանգիստ են Ժողովրդոյն և բարեխօսք առ Աստուած ՚ի հաձեցուցանել զմիջնորդ Աստուծոյ և մարդկան: « Մխիթարեցէք զդա, զի լցան տառապանք դորա. Թողեալ լինին դմա մեղք իւր, զի ընկալաւ ՚ի ձեռանէ Տեառն կրկին ըստ մեղացն իւրոց »: Այլ մեք ասեմք եթէ ոչ ըստ պարտեացն հատուցանէ Աստուած, ըստ այսմ: Զի եթէ զանօրէնութիւնս պահեսցես, ո՛վ կարիցէ կալ առաջի քո ամենայն կենդանի. իսկ գու ա հաւադիկ ասես, թէ « Ընկալաւ ՚ի ձեռանէ Տեառն կրկին ըստ մեղացն իւրոց»: Եւ այս խնամածի և յաձախագութի հօր է, սակաւ ինչ տանջել, և մեծ համարել զգանն. քանզի ոչ իսկ ժուժայ սէր զբազում տանջանս պատժաւորացն տեսանել: Եւ այլազգ ևս. զի և առ ՚ի հաւատալ կամի ածել զնոսա՝ բարութեանցն միւսանգամ նորոգութեանց: « Թողեալ լինին դմա մեղք իւր »: Փայփայանք են առ այնոսիկ՝ որ ՚ի պատիժն էին. զի այսպէս լինի պատիժք սովոր են լինել լուծիչք մեղաց [2]:

«Ձայն բարբառոյ յանապատի. Թողեալ լինին նմա մեղք իւր »: Այսց նախ զգերութիւնն, գուշակեաց

1 Յօր. Բառ մի եղծեալ. Թուի լինել գործ առանձինն:
2 Յօր. Պաղատ. օտար գրչաւ՝ մեղաց:

ապա և զմխիթարութիւնն [1] և զազատութիւն ՚ի գերութենէն. միթէ միշտ որչափ մեղանչեցեք՝ տանջեալց լեցեք, և ոչ առնիցէ լուծումն մեղացն. այո՛, ասէ, լինի լուծումն մեղաց [2]:

« Ձայն բարբառոյ յանապատի »: Այսինքն աւետիք՝ յաւերակ երկիր Հրէաստանի, յետ գարձին: Այլ և այլազգ ևս իմանալ. « Ձայն բարբառոյ յանապատի ». ոչ միայն յաւերակ տեղիսն, այլ յոգիս աւերակս և յանապատացեալ: Եւ վասն ի՞ր աղաղակիցէ առ անզգայսն. այլ զհամարձակութիւն քարոզին ցուցանէ մեզ. եկեալ բերէր ամբաստանութիւնս Հրէիցն, և ոչ ինչ զանգիտեր. արդ և լսեր [3] ՚ի նախնեացն իւրոց, թէ արեամբ մարգարէիցն լի են ձեռք նոցա, ինքն ոչ ինչ խորշեր. այլ համարձակեալ ևս ասեր, եթէ Ծնունդք իմից, ո՞ ցոյց ձեզ փախչել ՚ի բարկութենէն՝ որ գալոցն է: Եւ արդ զոր օրինակ սա՝ որ կոչեցաւ բարբառ, է ոչ միայն բարբառ [4], այլ և մարդ և մարդարէ, սոյնպէս և Բանն Աստուած՝ ոչ միայն բան ինչ անանձն, այլ և բան անձնական և մարդ կատարեալ: Եւ բարիոք ասաց, եթէ յանապատի. քանզի քաղաքք լի էին չարեօք. ուր չարիքն չէին և սուրբ ՚ի մեղաց էին տեղիքն՝ անդր խոյս ետ գնաց. անապատն երկիրն [5] ՚ի պտղոց պատշաճի:

Լուր զգաստութեան և հեղութեան. զի ոչ էին անդ պատերազմունք և ոչ սպանութիւնք, և ոչ յափըշտակութիւնք և ոչ ագահութիւնք, և ոչ այլ ինչ չարիք. վասն որոյ ասէ մարգարէն, եթէ Տեսի զանօրէնութիւն ՚ի քաղաքի. և Անօրէնութիւն և վաստակք են ՚ի մէջ նոցա. և այլուր, եթէ Ընդէ՞ր ցուցեր ինձ զվաստակս և զգաւս միանգամայն: Եւ վարդապետութիւն լինի վաղվաղակի ՚ի սկզբանցն ընծայեցուցանել, արհամարհել զամենայն ինչ զաստի կենացս. զի զանապատ իւր բնակութիւն առնիցէ, զքաղաքս և որ

1 Յօր. Գուշակեաց ապա և զմխիթարութիւնն, օտար գրչի է:
2 Յօր. Այո՛, ասէ, լինի լուծումն մեղաց, յօտար գրչէ:
3 Յօր. Օտար գրչաւ՝ լսեալ էր:
4 Յօր. Ոչ միայն բարբառ՝ օտար գրչի է:
5 Յօր. Երկին:

ինչ ’ի քաղաքս իցէ, անդ նկարէ զամենայն։ Ա.յսպիսի իմն էր և Ադամ զառաջինն. ոչ տան ինչ կարօտանայր և ոչ հանդերձից և ագանելեաց, և ոչ իմիք այսպիսեաց՝ առ ’ի նշանակ հանդերձեալ զգաստութեանս։ Ոչ այնչափ քաղաք ամբոխեալ պատշաճէ ’ի բնակութիւն, որպէս զանապատ ինչ խաղաղացեալ յամբոխից։

Եւ արդ տեսցուք զինչ ասիցէ. « Պատրաստ արարէք զՀանապարհս Տեառն, և ուղիղ արարէք զշաւիղս նորա ». քանզի անկոխ և անարահետ էին շաւիղքն։ Զոր օրինակ այր մի Թագաւոր ’ի քաղաք ուրեք դիմիցէ, զՀանապարհն՝ որ զբազում ժամանակս կուբացեալ իցէ, և անհետ և աներևոյթ լեալ, փշալից, տատասկաբեր, պարտուպատշաճ է մաքրել և յատակել և պատրաստագոյն յօրինել, նոյնպէս և յայնմ ժամանակի ելանէին իրքն ’ի դէպ. էին յառաջագոյն հորդել Հանապարհ Քրիստոսի։

« Ուղիղ արարէք զշաւիղս նորա »։ Ա.յսինքն ընդ անկոխն ընդ անգնաց՝ հորդեցէք նմա Հանապարհ։ Եւ այն իսկ են զարմանալիք, զի ընդ անապատն կամի գնալ, ուր ոչ և արահետ ինչ երբեք առաքինութեանց երևեցաւ, և ոչ մի ինչ զգաստութեան. զի մերկութիւն և պռունկ և մաքսաւորութիւն և ուաղակութիւն նախ քարոզեցաւ. քանզի նոցա ոգիք անկոխ, անհետ [1] էին յառաքինութեանց. ոչ երբեք յօժարեալք ’ի զգաստութիւնս, և ոչ ցանկացեալք քաջութեանց, այլ միշտ ներկեալք ’ի չարութիւնս։ Մեծ է Թագաւորին զօրութիւն, որ զանանց և զանկոխ անապատ՝ հորդեաց արար արքունի պողոտայ։

« Ամենայն ձորք լցցին, և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին »։ Եւ տեսանեմք ըստ նկարագրին և ըստ նորոց կտակարանացս կատարեցաւ այս. նախ ’ի դարձին, զի առանց դժուարութեան և առանց խափանելոյ եկն [2] ժողովուրդն ’ի Բաբելոնէն. ապա և այլազգ ևս. զի ձորոյն լնուլ, և լերանցն և բլրոց խոնարհել, և դժուարացն ’ի դիւրինս դառնալ,

1 Ցօր. Անհէտ՝ յօտար գրէ։
2 Ցօր. Են։

ոչ այլ ինչ նշանակ է, այլ թէ դիւրին իմն և հեշտական իցէ Հանապարհն՝ որ տանիցէ յառաքինութիւնս. զի ոչ խորաձորք լինչ պատահիցեն, և ոչ լերինք դժուարինք ’ի դիմի հարկանիցեն, և ոչ այլ ինչ արգել լինիցի այնոցիկ՝ որք կամիցին։ Եւ լուր, զիարդ զդիւրութիւն ինքնին Տէրն ընծայեցուցանէ [1]. Լուծ իմ քաղցր է և բեռն իմ փոքրագի։ Եւ Պաւղոս. Զի որ առժամայն, ասէ, թեթեւութիւնս է նեղութեանց, ըստ առաւելութեան՝ զյաւիտենից փառացն ծանրութիւն գործէ մեզ. և Մերկացեալք, ասէ, զՀին մարդն. զի որպէս մերկանալն դիւրաբեր է, նոյնպէս և զբարին ’ի բաց ընկենուլ դիւրագոյն է։ Եւ յայտ է, եթէ ոչ բնութեամբ լինչ էր այնպէս դիւրին առաքինութիւնն, այլ Քրիստոս յիւրում գալստեանն արար զնա դիւրագոյն. որպէս և Պաւղոս իսկ ասէ, եթէ Ա.յր մի տառապեալ եմ ես, ո՛ապրեցուսցէ զիս ’ի մարմնոյ աստի մահու. և դարձեալ, եթէ Ոչ դատապարտութիւն լինչ է այժմ այնոցիկ՝ որ ’ի Քրիստոս ըստ մարմնոյ ոչ շրջիցին. յառաջ քան զՔրիստոսի գալուստն՝ իբրև մեղրիք լինն Թանձրախիտք, և աւիւղայք անանցք և անհնարինք և անհետք. իբրև ողջոյք և արտասուօք լինն աշխարհին մարգարէքն և արդարքն զայնոսիկ՝ որ յայնպիսի առատաբոս բնակեալ էին. և յետ այնորիկ ոչ ևս այնպիսի լինչ։

Եւ վասն էր ասէ, « Ամենայն ձորք լցցին, և ամենայն լերինք և բլուրք խոնարհեսցին »։ Հարցցուք ցՀրեայսն՝ թէ ո՞ւր եղև այս, ո՛ր լեառն խոնարհեցաւ, կամ՛ր ձոր լցաւ. զի ոչ լինչ այսպիսի նշանակ կգրա, որ վասն դարձին գրեաց։ Ա.յլ ես ցուցանեմ, եթէ վասն առաքինութեանց ասացեալ է. որպիսի լինչ, զի երբեմն և ոչ անուն կուսութեան էր ուրեք, զի այնպէս դժուարինք և քարուտ և խորաձոր իմն է Հանապարհն կուսութեան և առաքինութեանց. և այնպէս դիւրեցաւ և հարթեցաւ, զի և կանանց ևս անգամ դիւրին է գնալ ընդ այնպիսի արքունական և անկասկած Հանապարհ. զի քաջութիւք անխեթ և անեղկիւղ գնան ընդ այնպիսի Հանապարհ. քանզի զոր լինքն

1 Ցօր. Ծառայեցուցանէ. օտար գրէաւ՝ ընծայեցուցանէ։

արար՝ ’ի նոյն և զմեզ յորդորէ. « Պատրաստ արա-
րէք զձանապարհս Տեառն ». ընդ որս նախ ինքն գնաց,
և զմեզ ’ի նոյն առաջնորդէ, զի և մեք կամիցիմք, ըղ-
ձանայցեմք և ցանկանայցեմք : « Այնոյն ձորք լցցին » :
Չի չէ ինչ յառաքինութեանց՝ որ դժուարին իցէ, և
ոչ այն՝ որ դիւրին քան զմիւսն. այլ զամենայն ամե-
նևին, ասէ, դիւրաւ առնիցէք և կատարիցէք՝ եթէ
կամիցիք :

« Եւ եղիցին ամենայն դժուարինք ’ի դիւրինս, և
առապարք ’ի դաշտս » : Եւ զինչ իցէ՝ դժուարինք ’ի
դիւրինս. զի ոչ միայն ’ի բռնաւոր ձեռաց զերծանի-
ցիմք, այլ զի ’ի մոլորութենէ, և յայնցանէ՝ որք զուղ-
ղութիւնն մեր ’ի կամակորութիւն [1] դարձուցանի-
ցեն. զոր և Ակիւլաս յայտնագոյն իսկ ասէ, եթէ Չկա-
մակօրն յուղղութիւն. զոր և Եբրայեցին՝ Սկովբա [2]
կոչէ, այսինքն՝ կամակոր. ըստ այմ՝ եթէ եղիցին ա-
մենեքեան ուսեալք Աստուծոյ : Եւ ոչ ասաց, եթէ
բարձցին դժուարինք, այլ եթէ ինքեանք ’ի դիւրինս
դարձցին. և այս իսկ է մեծի զօրութեանն նշանակ,
զի ոչ զբնութիւնն փոխէ, այլ զբարսն և զկամս դար-
ձուցանէ. զի թէպէտ և չաղքատութեան ոք իցէ,
չաղքատութիւն ոչ դժուարին ինչ, այլ ցանկալի
թուեցուցանէ՝ վասն աստուածպաշտութեանն :

« Եւ եղիցին ամենայն [3] դժուարինք ’ի դիւրինս, և
առապարք ’ի դաշտս » : Չինչ դժուարագոյն իցէ քան
զընչից չքաւորութիւն. սակայն և զայն ուրախութեամբ
տանէին և բազում ախորժական դիւրութեամբ. և
էր ուրախութիւն ամենեցուն նոցա, զի Մի անձն և
մի սիրտ էր ամենեցուն, և ոչ ոք ասէր զընչից՝ եթէ
իւր առանձինն ինչ իցէ, այլ էր նոցա ամենայն ինչ
հասարակաց : Նա և Առաքեալ ասէ, թէ ՅիշեցէՔ զա-
ւուրսն զառաջինս՝ յորս լուսաւորեցայք և բազում
ձգնութեան համբերեցիք. մերթ նախատանաց և նե-
ղութեան, և զայրշտակութիւն ընչից ձերոց խնդու-
թեամբ ընկալարուք : Չինչ խօսիմ, ասէ Պաւղոս.

1 Յօր. Մեր ’ի կամակորութիւն, յօտար գրչէ :
2 Եբրայեցի բառն է בקעה , որ է ենթագրէ :
3 Յօր. Այնոյն՝ յօտար գրչէ :

զայրշտակութիւն ընչից իւրոց խնդութեամբ ընդու-
նիցի. այո՛, ասէ. քանզի գրեալ է, եթէ « Եղիցին դը-
ժուարինք ’ի դիւրինս » : Եւ Ղուկաս ’ի Գործս առա-
քելոց, եթէ ելին ուրախութեամբ յերեսաց ատենին,
զի արժանի եղեն վասն անուանն կրել թշնամանս :

« Եւ եղիցին դժուարինք ’ի դիւրինս » : Չինչ դը-
ժուարագոյն իցէ քան զսպառնալիս, և զինչ վշտա-
գոյն քան զպատիժս սպառնալեաց. սակայն և այն
դիւրին եղև. ոչ վասն զի բնութիւն ինչ փոխեցաւ,
այլ զի իրք իրաց եղև պատճառք : Քանզի այսպիսի է
զօրութիւնն Աստուծոյ. զի ոչ եթէ զայլ ինչ իրս հա-
նիցէ և զայլս ’ի ներքս արկանիցէ, այլ զնոյնս՝ որ կան
յանուղղայս՝ յուղղութիւնս դարձուցանէ. զի ուսա-
նիցիս եթէ ոչ միայն առ ’ի բնութենէն, այլ և յանձն-
իչխանութենէն՝ որ ոչ յուղղութիւնս մտաբերիցէ,
ծնանին չարիք : Սոյնպէս և զմարմինս՝ ոչ թէ այլ
ընդ այլոց յարուցանիցէ, այլ զնոյն զմեռեալսն և
զեղծեալս և զհողացեալս նորոգէ :

« Եւ երևեսցին փառքն Տեառն. և տեսցէ ամենայն
մարմին զփրկութիւն Աստուծոյ. զի Տէր խօսեցաւ » :
Փառքն Տեառն միշտ հանապազ երևին. բայց առա-
ւել յայնժամ երևեցան մեծ փառքն Աստուծոյ, յոր-
ժամ Աստուած ընդ մարդիկ խառնեցաւ, և զհրեշ-
տակաց վարս յերկրի հաստատեաց. յորժամ այնչափ
չարչարանս Աստուած իւրով մարմնով կրեաց : « Եւ
տեսցէ ամենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ » :
Չփրկութիւն Աստուծոյ, և ոչ զմարդոյ ուրուք. զի
ամենեքին որ ընդ նա հայեցան [1], տեսին զփրկութիւն
նորա. զի թէպէտ և ոչ ամենեքին հաւատացին, սա-
կայն ամենեքին տեսին, ումանք հաւատովք, ումանք ’ի
լսելոց. բայց տեսցեն ամենեքեան և առ յապա ժա-
մանակս :

Եւ քանզի մեծամեծս ձառեաց, յարէ ’ի նոյն զար-
ժանաւորն առ ’ի հաւատացուցանել զձառեալսն, ասէ.
« Զի Տէր խօսեցաւ » : Յորժամ ինքն Տէրն տայցէ
վճիռ, մի ոք թերահաւատ լինիցի. զի բան նորա՝ ա-
րարիչ է բնութեանց և ձարտարապետ իրաց նորա-

1 Յօր. Հայիցին :

կերտաց. և արդ մի պահանջեր իրաւունս առ ՚ի նմա-
նէ: Սակայն իսկ եթէ ոմանց յարտաքին փիլիսոփայից
ասացեալ է այսպիսի ինչ. առ այն և ես այժմ ասացից.
զի յորժամ Աստուած խոսի, դու աւելի ինչ քան զայն
մի խնդրիցես. ծառայք յորժամ ՚ի տերանց լուիցեն
ինչ, ոչ ինչ աւելի քան զոր ինչ լուանն՝ խնդրեն, և
ոչ՚ի հարց և ՚ի փորձ իշխեն հարկանել, այլ փութան
արդեամբք կատարել զհրամանն. նոյնպէս և դու յոր-
ժամ լսես, եթէ Տէր խոսեցաւ, մի ինչ աւելի քան
զայն քննիցես:

« Բարբառ ասողին, թէ գոչեա: Եւ ասեմ: Ջ՞ինչ
գոչեցից. և ասէ. Ամենայն մարմին խոտ է, և ամե-
նայն փառք մարդոյ՝ իբրև զծաղիկ խոտոյ»: Իսկ այլքն
ասեն, թէ Ամենայն ողորմութիւն նորա. և Եբրայեցին՝
Ուքուղիզդով [1] ասէ, որ Թարգմանի ողորմութիւն:
Եւ արդ տես, զինարդ յորդորէ զմեզ ցանկանալ յա-
րութեան. զի զմծտաւորսն խոտէ և յայլ ինն ցանկու-
թիւն մեծամեծ իրաց յօժարեցուցանէ: Եւ բարւոք
ասաց, թէ Գոչեա. քանզի վճիռ ինն հակառակ ըստ
իւրաքանչիւր կարծեաց՚ի մէջ բերելոց էր, և բանս
իմաստունս խոսէր, զոր ոչ դիւրաս վաղվաղակի ընդ-
ունէին բաղումք. զի ըստ իւրեանց նուազութեան բնու-
թեան կարծէին զիրսն. վասն այնորիկ ասէ. Գոչեա.
մի ինչ զանգիտիցես բարբառել զհրամանդ. քանզի և
զծովականս ջրոյն ձանապարհորդս՝ խիզախեցուցանեն

1 Այսպէս ունի եբրայական բնագիրն.

קול אמר קרא ואמר מה אקרא כל־הבשר חציר
וכל־חסדו כציץ השדה:

որ է. Ֆօլ օմեր կրա վէամար մա էկրա ֆօլ ապատսար ֆավիր վէկօլ ֆապօ ֆէսոխա
ատսոպէ: Ամինքն է. Լսեմ ձայն ուրուք՝ որ ասէ. Գոչեա: Եւ նա
ասէ. Ջ՞ինչ գոչեցից. — Ամենայն մահկանացու խոտ է, և ամենայն
հովանաւորութիւն նորա՝ իբրև զծաղիկ դաշտի: — Բառդ ոֆօ-
ղինդով կամ ոֆօսիդդով Թերևս ծեքեալ հնչումն իցէ կրկին բա-
ռիցն վէկօլ ֆապօ, որ է ամենայն հովանաւորութիւն նորա: Արդարև եբրա-
յեցի բառն חסד ֆապօ, յորժամ զԱստուծոյ ասի՝ յաձախ ո-
ղորմութիւն կամ գթութիւն Թարգմանի, այլ աստանօր խոսելով զմար-
դոյ մահկանացուէ՝ առաւել ՚ի դէպ գայ հովանաւորութիւն կամ պաշտ-
պանութիւն, իբրև նոյնանիշ ընդ Patrocinium հռովմէական բառի,
որ լաւ ևս յայտ առնէ զնմանաս ֆապօ եբրայական բառին:

համարձակ տալ զանձինս ՚ի միջոց ծովուն: Մի ինչ
երկնչեցիս, ասէ, զի Թէպէտ և ընդդէմ բանիցն՝ զոր
լսիցեն՝ հակառակ կայցեն, սակայն դու մի ինչ կասե-
ցիս ՚ի համարձակութենդ. գոչեա, գուժեա, քանզի
զի գոյ ղօրութիւն ՚ի բանսդ՝ զոր խոսիս: Զի եթէ [1]
ոչ ոք կամիցի ընդունել, սակայն դու վստահ լինիջիր
՚ի ղօրութիւն հրամանիդ. զի չիք ինչ որ կարիցէ եղ-
ծանել զվճիռդ. քանզի այսպէս են Աստուծոյ հրա-
մանքն: Եւ զայդ մի ինչ ասիցես, եթէ ամենեքին ընդ-
դէմ դառնան, ամենեքին հակառակ կան. հաստա-
տեալ կան ՚ի ձշմարտութեան բանդդ, վասն այնո-
րիկ իսկ համարձակ գոչեա, եթէ « Ամենայն մարմին
խոտ է »:

Իսկ արդ զիա՞րդ. մինէ Աբարչին ՚ի ձեաս էցէ. քաւ
լիցի. ոչ եթէ նա յայնպիսի ինչ արար զնա. այլ կա-
մեցաւ վաղվաղակի անմահ կազմել զնա. իսկ դու՝ որ
զմեղդ մուծեր՝ յանարգութիւն կազմեցեր զնա [2]:
Զի մի կարծիցես եթէ նորա ձեռինն է գործ՝ լինել
խոտեղէն մարմնոյդ, վասն այնորիկ յառաջագոյն ասէ,
եթէ Յորում աւուր ուտիցես՝ մահու մեռանիցիս: Եւ
արդ զի՞ ձառիցես զնոտոյ. մինէ և Թագաւորաց մար-
մինք խոտ էցեն, կամ կանա՞նց գեղեցկաց, կամ սկա-
յի՞ցն անուանեաց: Այո՛, ասէ. իսկ եթէ չհաւատայ-
ցես, հայեաց՚ի վախճանն հասարակաց ամենեցուն:
Տեսանե՞ս զգերեզմանս. մինէ ոսկին նուազագո՞յն
ինչ էցէ, և մեծամեծացն առաւե՞լ լաւագոյն. այլ ա-
մենայն առհասարակ մխիթը է, ամենայն առհասա-
րակ հող. զի յերը և՚ի փոշի դարձեալ են ամենեքին:
Եւ աստ ոչ վայրապար ասէ Թէ Մարմին, այլ եթէ Ա-
մենայն մարմին: Զնոյն և միւս մարգարէն ասէ, եթէ
Ամենայն մարդ մնոտի է: Այլ տես, զի արդ ոչ ասաց
եթէ Ամենայն մարդ, այլ եթէ Ամենայն մարմին, այս-
ինքն՝ մարմնեղէնք, որ ըստ մարմնոյ գնայցեն: Վասն
այնորիկ՚ի վատթարէն անուանեաց, քանզի վատթա-
րութեան գործս գործեցին. զոր օրինակ և Աստուած

1 Յօր. Յօտաւր գրչէ ՒՆպէք Ե:
2 Յօր. Իսկ դա՝ որ զմեղդ մուծեր՝ յանարգութիւն կազմեցեր զնա, օտար
գրչի է:

իսկ ասէ, եթէ Մի՛ ճաշացէ ոչի՛ ի մարդկանդ յայդմիկ, վասն լինելոյ դոցա մարմին: Ասյ մեք չեմք խոտ. Դուք, ասէ, չէք՛ի մարմնի: Եւ արդ տես, ասէ, զԱստուծոյ մարդասիրութիւնն. զի յորժամ դատապարտեացն ըզքեզ և՛ի վատթարութիւն ինջոյց, յայնժամ ետ քեզ միւսանգամ իշխանութիւն՝ աղատանալ՛ի դատապարտութենէն: Եղեր խոտ. այլ թէ կամիս՝ ոչ ես խոտ: Եթէ ոք, ասէ, լինէ՛ի վերոյ հիմանս այսորիկ ոսկի, արծաթ, ականս պատուականս, փայտ, խոտ, եղէգն. տեսանե՞ս, զի շինուածն առնէ զամենայն ինչ: Զի եթէ զբնութիւն [1] մարմնոյ քննիցես, չէ ինչ լաւագոյն քան զբանջար, զի այնպէս թառամի և թօթափի, և՛ի ժամանակս ծերութեան՝ ոչ ինչ գտանի՛ի նմա՛ի տիոց երիտասարդութենէն. իսկ եթէ յաղնուականութիւն ոգւոյն հայիցես, ոչ ինչ ընդհատ՛ի հրեշտակաց գտանես զմարդ. խոնարհ սրտերը զնա, ասէ, փոքր մի քան զհրեշտակս. փառաք և պատուով պսակեցեր զնա:

« Եւ ամենայն փառք մարդոյ՝ իբրև զծաղիկ խոտոյ »: Զի մարմին քան զմարմին ոչ ինչ առաւել ունի, բայց զառաւելութիւն փառացն առնու, և այնու առաւելագոյն քան զընկերն գտանի. վասն այնորիկ որ զառաւելութիւն գործէ, և զմին պայծառագոյն երևեցուցանէ, և զիւսն նուաղագոյն: Զայն ինձ խոտէ, եթէ ոչ միայն խոտն անկանի, այլ և ծաղկին թառչամի, այսինքն փառք փառաւորացն: Ո՞չ տեսանես զայնոսիկ որ՛ի թագաւորութեանն իցեն, յորպիսի՛ սպասս են. միթէ այլ ինչ կարիցե՞ս ասել. այլ թէ հանակ յոսկի և՛ի մարգարիտ են, և՛ի կառս սպիտակս երիվարաց լծեալ, յերիվարս գեղեցիկս, յանդրուաարս աղնիւս, շուրջ սպասաւորք, զօրք առաջի, զօրավարքն վերջապահք. անդ երկիւղք, անդ ահ միայն եթէ երևեսցի, ահ և դողումն ունի զբազումն. և բազում անգամ չև յերեկն հասեալ իցէ՝ և վախճան՛ի վերայ գայցէ, և ոչ ինչ պատուականագոյն քան զաղքատն և զմերկն գտանի: Վասն այնորիկ ասէ, եթէ « Ամենայն փառք մարդոյ՝ իբրև զծաղիկ

1 Յօր. Բնութիւն:

խոտոյ »: Թէպէտ և զընչից ասիցեն, կամ զպատուոյ, կամ զգեղոյ, ՛ի նոյն՛ի մի թշուառութիւն հասանելոց են ամենեքեան. և եթէ մարմին այսպէս լինելոց է, ո՛րչափ և առաւել՝ որ ինչ առյապոյն նմա պատահելոց իցէ՝ և վատթարագոյն: Զի՞նչ խօսիցէ. ահա ցամաքեցաւ արդեւք խոտն, և թօթափեցաւ ծաղկին: Նա աւանիկ և Դաւիթ ասէ, եթէ Մի՛ երկընչիր՝ յորժամ մեծանայ մարդ, և յորժամ բազմանայցեն փառք նորա. քանզի ոչ եթէ՛ի մեռանելն իւրում առնուցու ընդ իւր զամենայն, և ոչ իջցեն փառք նորա ընդ նմա: Եւ ընդ՞ր ոչ ասացեր, եթէ կենդանւոյն իսկ եթող. այլ զայս՝ որ մեծ ինն թուի անհաւատից, երկրանախանձ ոգւոյ՝ եթող՛ի բաց. քանզի անհաւատ ինն թուի նոցա, եթէ ատ թողուցուն և անդ բազմապատիկ առնուցուն. այլ յանշուշան ընթացեալ հասանէ, եթէ յորժամ վախճանեսցին՝ ոչ երթայ ընդ նոսա մեծութիւն իւրեանց:

Եւ վասն ի՞ր արդեւք այնչափ յաձախագոյն կամեցար զայնոցիկ՝ որ զաշխարհական ինչ իրս յարգեն՝ կարկել [1] զբերանս. զի մի՛ ոք ասասցէ եթէ բազմաց մինչև ցմահ կացին մնացին փառք, և յանդիմանեալ վարժիցէ այսու զբանս մարգարէիս. առ այն դնէ զայս, եթէ՛ի վախճանին կորնչելոց են փառք. « Ցաքսեցաւ, ասէ, խոտն ». այսինքն մեռաւ: Ասյսպիսի՛ ինչ լինի և մեր մահ, իբրև զբանջարոյն թառամել և զծաղկացն թօթափել: Զի ինչ պիտոյ, ասէ, կրկին մահ. մեռաւ մարդն, և մեռաւ ընդ նմա ծաղիկն նորա [2], այսինքն՝ մեծութիւնք, փառք, խորհուրդք. Յայնմ աւուր, ասէ, կորիցեն ամենայն խորհուրդք նոցա: Դու այսօր չանաս այլոց միաս առնել, և վաղիւ դու իսկ ինքնին չես գտանելոց: Որ ինչ իբր ընդ բնաւ տիեզերս աղաղակեն, ոչ կամին զայն ուսանել բնաւ ծոյլք. վասն այնորիկ ասէ, եթէ Գոչեա: Ակիղաս ասէ. Գոչեա. Եբրայեցին՝ Կրիայ [3] ասէ, այսինքն կարդա: Իբրև առ անզգայս ինն տայ աղաղակել. զի և դու

1 Յօր. Կարկեն:
2 Յօր. Նոր՝ յօտար գրչէ:
3 Եբրայեցի բառն է אקר, որ է Կրա:

յորժամ տեսանիցես զոք հարստահարեալ՝ի բռնաւորացդ, զդոյն բարբառ աղաղակիցես առ նա, եթէ « Ա-մենայն մարմին խոտ է »: Մի՛ ընդ մարմնաւորս միառս ինչ զարմանայցես, այլ զառ յապա Թշուառութիւն նոցա՝ի միտ առնուցուս. զի ո՛րչափ պայծառագոյն ե-րևեսցի, աւելի քան զնոյն ողորմելի լինելոց է, յոր-ժամ մեծութիւնն՝ի միում վայրկենի թօթափեսցի՝ի նմանէ: Եւ ահա, ասեն, խոտեցեր զամենայն ինչս աշխարհիս: Ոչ այնպէս ինչ խոտեցի՝ եթէ չար իցեն քնութեամբ, այլ թէպէտ և բարի իցեն այնոցիկ՝ որ՝ի բարի սէտս ինչ վարիցեն, սակայն անցանելոց են, և ոչ կալոց մնալոց:

Եւ զինչ իցէն որ կայցէ մնայցէ. « Բանն Տեառն », որ կայ մնայ յաւիտեան Հաստատուն, անշարժ. այսինքն օրէնքն նորա և պատուիրանք, զոր ոչ ժամանակք և ոչ մահ և ոչ հիւանդութիւն և ոչ ծերութիւն և ոչ նա-խանձ և հեռ և այլ ինչ այսպիսի՝ կարէ եղծանել: Այլ թէ ոք բիծ ինչ դնիցէ ասացելոցս, ի՛ մէջ մա-տիցէ, յանդիման արասցէ, եթէ չիցեն՝ի դէպ բանքս՝ զոր ասացաքս. եթէ է ինչ՝ որ Հաստատուն է և կայ մնայ յաւիտեան, և է ինչ՝ որ յողդողդ և անցանելոց է վաղվաղակի: Եւ ոչ ասաց եթէ գործք Տեառն կան մնան, այլ եթէ բանն Տեառն կայ մնայ. զի եթէ բանն կայցէ մնայցէ, ո՛րչափ և առաւել գործքն. զի եթէ բանն յաւիտենից մնայցէ, ապա վասն յարութեան չէ պարտ թերահաւատ լինել:

Իսկ յայլոց յօրինակս և այսպէս գտաք գրեալ՝ի պատուի [1]. յետ ասելոյ՝ թէ «Յամաքեցաւ խոտն և թօ-

1 Տե՛ս, զի զոր ասէ Սուրբն Յոհան, թէ « Ոգի Տեառն չնչեացն » ոչ կայ՝ի հէս օրինակս՝ արդարացուցանէ Պետրոս՝ի Կաթողիկէն. զի և անդ ոչ կայ « Ոգի Տեառն չնչեացն », թէպէտ և յԵսայի՝ի մեր օրինակքս կայ Ոգի Տեառնն: Այլ զի ասէ, թէ գտաք՝ի պա-տուի գրեալ, ինձ թուի, զՀոգին, ասէ, պատուով գրեալ. որպէս զԱստուածն և զՏէրն և զՏեառնն պատուով գրեմք. զի պատիւն, որ է քաջն՝ որ՝ի վերայ երկու գրոյն գնեմք, որոշէ զանուանն Աս-տուածոյ՝ի պիտակ անուանց աստուածոցն: Սոսկ են Յոյնք և զՀո-գին Սուրբ պատուով գրել, զի պատիւն զատուցեալ զանուն Սուրբ Հոգւոյն՝ի հոմանուն հոգւոց. ասէ՝ ոչ միայն զՏեառնն, այլ և զը-Հոգին պատուով գրեալ: — Գէորգ Վրդապետ (Ա՞նտոպե՞ ?) — Մեկ-նութիւն Եսայեայ:

Թափեցաւ ծաղիկն », ասէ. « Ոգի Տեառն չնչեաց՝ի նա. արդարև խոտ է աշխարհս ». որպէս Դաւիթ ա-սէ, եթէ Հանես զոգիս՝ի նոցանէ, պակասեացեն և՝ի հող իւրեանց դարձցին:

« Ի վերայ լերինդ բարձու ել, աւետարանիչդ Սիո-նի. բարձրացո զբարբառ քո զօրութեամբ, աւետա-րանիչդ Երուսաղեմի. բարձրացուցէք, մի՛ երկնչիք »: Եւ ընդ՞ը ասիցէ, եթէ մի՛ երկնչիք. և իցէ՞ ոք՝ որ ա-ւետիս տայցէ և կասկածիցէ. և մանաւանդ յորժամ աւետարանիչքն՝ի բարիոք վարս և՝ի կարգն իցեն. և արդ զինչ իցէ. զի մի՛ անհաւատ ինչ ամենեցուն կար-ծիցեն Հառեալքն. մի՛ երկնչիցիք՝ եթէ ոչ իցեն՝ի գլուխ ելանելոց. զի զոր ինչ ասեմն՝ ածից և կատա-րեցից: Թէպէտ և մեծութիւն ասացելոցն զբազում թերահաւատս առնէր, թէ ոչ իցեն վճարելոց, որպէ-սի անգք ընդ Յովհաննէս իսկ անցին, մի՛ երկնչիր, ասէ. զի թէպէտ և մեծ իցեն բանքդ, այլ՝ի միտ առ զա-սացողն՝ որ բաւական է առնել զվճիռ ամենայնի. վասն այնորիկ ասէ. « Ե՛լ՝ի վերայ լերինդ բարձու, և բարձրացո յուժով զբարբառ քո, աւետարանիչդ Երու-սաղեմի ». զի և զբազումս ևս վկայս առնիցէ կանխ-ասացիկ բանիցն՝ որ՝ի վաղուց հետէ յառաջ քան զբազում ժամանակ Հառեցան:

« Այս ցքաղաքդ Հրէաստանի. Ահա աւասիկ Աս-տուած մեր, ահա աւասիկ Տէր գայ զօրութեամբ, և բազուկն տէրութեամբ Հանդերձ »: Եւ զինչ իցէ զօրութեամբն և տէրութեամբն Հանդերձ. զի զա-ռաջինն ոչ զօրութեամբ ինչ և փառաւք երևեցաւ, այլ Հեզութեամբ և խոնարհութեամբ. և խաչեցաւ ևս ըստ մարմնաւորութեանն, և մեռաւ՝ կենդանին և կենդանարար ըստ աստուածութեանն. իսկ յերկրորդ գալստեանն՝ ոչ այսպիսի.... ցանիցէ [1]. ըստ այնմ՝ Զի թէպէտ և գիտեաք զԲրիստոս մարմնով, այլ այսու-հետև ոչ ևս նոյնպէս գիտեմք. զի ուսանիցես թէ և աւաջինն անարգանքն՝ վասն զինջանելոց ըստ մերում տկարութեանս եղեն նմա՝ առ մեր փրկութիւն:

« Ահա աւասիկ վարձ նորա ընդ նմա »: Բարիոք

1 Յօր. եղծեալ. թուի լինել. Ու այսպէս ինչ ցոցանիցէ:

ասաց եթէ քանիւք լինելոց են վարձք. քանզի քանիւ միայն հրաման տայ և կարգէ զամենայն: « Եւ գործք իւրաքանչիւր առաջի նորա ». և այն իսկ է Աստուծոյ, զի ոչ է կարօտ եթէ ոք ամբաստան լինիցի, և ապա հասանիցէ յիրաւանցն վերայ: « Ի բերւ Հովիւ՝ որ հովուեսցէ զքաջինս իւր, և ի բազուկս իւր ժողովեսցէ զգառինսն »: Զդիւրութիւնն իրացն, որ յայնմ ժամանակի գործելոց էին՝ յայտ առնէ. քանզի և լինքն իսկ Աբեւտարանի այսպիսի իմն առակս առակէ. Ի բերւ զՀովիւս մի որոշեսցէ զոմիս յայծեաց: Քանզի եւ զբար ի բարւոյ չկարեմ մեկնել դիւրաւ, նա և ոչ դժուարաւ իսկ. ըստ այնմ, եթէ Ոչ ոք գիտէ զմարդոյն, եթէ ոչ Հոգին՝ որ ի նմա է. մանաւանդ քան և զՀոգին իսկ զմարդոյն՝ Հարտարագոյն ևս գիտիցէ սրտագէտն՝ զինչ ի մարդն կրիցէ. նոյնպէս և ոչ զԱստուծոյ ոք գիտէ, եթէ ոչ ոգին Աստուծոյ՝ որ ընդ նմա է. քանզի և Պաւղոս ոչ ինչ գիտեր զանձնէ, այլ ոչ եթէ այնու ինչ արդարացաւ. իսկ Քրիստոս յընթերիսն ասէր, եթէ Մի ոմն ի ձէնջ մտանելոց է զիս. որ յառաջ քան զլինել Հարտար գիտէ զամենայն ինչ, այնպէս՝ որպէս յետ կատարելոյն ամենայնի: Եւ արդ զինչ իցէ, զի և յառաջ քան զգործել զաւրն ինչ և կամ զչար, զմինն սիրեաց և զմիւսնատեաց. և զայս ոչ վայրապար ինչ ասացի, այլ այնմ յանկ անկանէ, եթէ « Բազկաւ իւրով ժողովեսցէ զգառինս իւր ». զի ոչ իմիք կարօտանայցէ [1], ոչ ցպոյ և ոչ այլ իմիք գործոյ:

« Եւ ի ծոց իւր կրեսցէ, և զղջանսն մխիթարեսցէ »: Ցեսանէ՞ս, զի յայտնագոյն ցուցանէ զինամ գարմանոյն. և Թէպէտ և ի դատաստանն և ի պարգևսն կատարի Հնմարտութեամբն՝ ընթերցուածս, այլ Թուի ինձ Թէ և ի գարձին Բաբելոնի կատարեցաւ օրինակաւ. զի քան ամենայն մարդկան՝ յղեաց պիտոյ է գարման, և կամ ծնելոց՝ որ զմատաղ մանկունսն ի գիրկս ունիցին. նոցա, ասէ, աւելագոյն խնամ առնիցէք Հանապազ Հոգայն:

Եւ զի մեծամեծ իրս Հառեաց, որ գժուարին Թուի

[1] Ցար. Զի ոչ իմիք կարօտանայէ, օտար գրչի է:

ւէր բազմաց, պարզեալ ևս մեծամեծաց կամի Հաստատել զայն, քանզի և յարէ իսկ ի նոյն, եթէ « Ո՛ չափեաց ձեռամբ իւրով զջուրս ». զոր այլ Թարգմանչն որոՀով ասեն. « Եւ զերկինս Թզաւ, և զերկիր քաշեաց. ո՞ կշռեաց զլերինս ի կշեռս, և զբարձունս կշռորդաց »: Ընդ՞որ ոչ զՀրեշտակաց ինչ Հառեաց, եթէ ո՞ զՀրեշտակս արար, կամ ո՞ զՀրեշտակապետս Հաստատեաց, այլ զայսոսիկ և զերևելեացս Հառէ. զի նոքա Թէ մեծամեծք են պատուով, ոչ այն ինչ ձգտեցուցանէ ըզմիտս տգիտաց՝ որ ինչ աներևոյթն ի նոցանէն իցէ, այլ յայտնեաքն կամի Հաւանեցուցանել: Եւ ոչ ասէ Եթէ ո՞ արար կամ ո՞ Հաստատեա...է [1], ո՞ գիտաց. զի Թէ գիտեէն գործ է, և այն գործ Աստուծոյ, ո՞րչափ ևս առաւել՝ ի չգոյէ՝ ի գոյ ածել: Քանզի և այլուր ասէ, Թէ Որ Թուէ զաւազմունեան աստեղաց, և ամենեցուն անուանս կոչէ: Զի իւրաքանչիւր ոք՝ ի նոցանէն բաւական են ցուցանել զգործ Աստուծոյ. ի չգոյէն՝ ի գոյ ածել, զածեալն Հաստատուն ունել, և զունելն գիտել. զսոյն իսկ և Ցովբ ասէր: Իսկ Հարտարապետաց ոչ այսպիսի ինչ արուեստ. առնեն և նոքա անօթս ինչ, այլ ոչ եթէ յոչընչէ. և զոր առնեն՝ ոչ եթէ զնոյն ցբուն պարհել կարիցեն, և ոչ սակաւ ինչ. իսկ Աստուծոյ այն զարմանալի է, զի զոր ինչ արարն՝ մինչև յաւիտեան Հաստատուն պահել կարէ. և որք պահիցին, ոչ եթէ անձանց ինչ զօրութեամբ, այլ ըստ այնմ՝ եթէ ի ձեռին նորա են աւետեան ծագք երկրի:

Եւ արդ, մի կարծիցես եթէ նախ չափեաց և ապա եղև տեղեակ առնելոյ, զի ոչ երկինք Թզաւ չափեցան և ոչ երկիր քաշեաց. զի չէք չափ ինչ Հանգոյն անբովանդակական ձեռին: Այլ զոր օրինակ յորժամ ասիցէ, Թէ Որ քննէ զսիրտս, ոչ այլ ինչ ասէ եթէ ոչ՝ զի գիտէ իսկ. քանզի գիտեէն՝ ի քննելոյն լինի. և Որ Թուէ զաւազմունեան աստեղաց, ոչ այլ ինչ յայտ առնէ, եթէ ոչ՝ զի գիտէ իսկ. քանզի գիտեէն՝ ի Թուելոյն անտի լինի. սոյնպէս և յորժամ ասէ, Թէ « Ո չափեաց զջուրս ». ոչ այլ ինչ կամի ասել, Թէ ոչ՝ զի գիտէ իսկ ո՞րչափ ինչ ջուրն իցէ: Եւ տեսս, զիարդ ոչ կարօտեցաւ

[1] Ցար. Եղծեալ Թուի, Ո՛ հաւատացէք, այլ ՌԷ ո՞ գիտաց:

այլոց անօթոց [1] ինչ որդաց. այլ՝ ի զօրութիւն ձեռինն ընթացաւ, թէ որ արարն՝ նոյն գիտէ զչափն: « Ձա-փեաց, ասէ, զերկինս թզաւ ». զի ցուցցէ եթէ կա-տարեալ զօրութեանն է գործ: « Եւ զերկիր քաւ »: Եւ արդ, մեծ իցէն երկինք քան զերկիր՝ ամենայն ու-րեք յայտնի է. քանզի իբրև վերարկու են երկինք՝ երկրիս: Տեսանէս, զի չէն արժանի այսպիսի բանք Աստուծոյ, որ զամենայն յոչընչէ արար:

« Ո՞ կշռեաց զլերինս ի կշիռս, և զբարձունս կըշ-ռորդաք »: Իսկ այլքն փոխանակ բարձանց՝ բլուրս ա-սեն: Եւ որպիսի՞ կշռաք կարասցեն կշռել զլերինս՝ զան-չափ Թանձրութիւն մարմնոյն. զի Թէպէտ և լուար կշռիս, մի՛ կշեռս կարծիցես, այլ Թէ այնպէս ձարտար գիտէ, որպէս Թէ կշռով կշռեալ իցէ: Նա և յարտա-քնոցն ոմն՝ ի դիւաց ասէր, եթէ գիտեմ զթիւ աւազոյ և զչափ ծովու. այլ նա առ՝ ի վերիպեցուցանել ստաբա-նութեամբ պարծէր, իսկ աստ ձշմարտութեամբ ըզ-մանն ինչ Աստուծոյ զօրութեան պատմ մեզ մարգա-բէս. զի աստ ոչ պարծանք ինչ ստաբանութեան են, այլ հաստատութիւն ձշմարտութեանն:

Նա և այլուստ ևս ցուցանէ զԱստուծոյ զմեծու-թիւնն, եթէ յանձնէ ունի զգիտութիւն, և անհա-սական՝ իմաստութիւն նորա: Մի՛ ինչ զարմանայցես, ասէ, եթէ գիտէ զամենայն, քանզի իմաստուն է. և այնպիսի իմաստուն, որում չէ ոք հասու իմաստու-թեանն. վասն որոյ յարէ իսկ՝ ի նոյն, թէ « Ո՞վ գիտաց զմիտս Տեառն »: Եւ ոմն ասելով՝ զամենայն ոք ընդ-անգիտութեամբ փակէ: Ոչ որպէս հերձուածողքն՝ և զՈրդին և Սուրբ Հոգին. զի վասն Որդւոյն՝ ի Տեառնէն իսկ ուսանիմք, եթէ Ոչ ոք գիտէ զՀայր՝ եթէ ոչ Որ-դի, և ոչ զՈրդի՝ եթէ ոչ Հայր: Եւ վասն Հոգւոյն՝ Սուա-քեալ ասէ, եթէ զԱստուծոյ ոչ ոք գիտէ, եթէ ոչ Հո-գին Աստուծոյ. և զարձեալ, Թէ Հոգին զամենայն ինչ քննէ և զխորս Աստուծոյ: Ա՛յսինքն՝ գիտէ զխորս Աս-տուծոյ և ոչ եթէ անգիտութեամբ քննէ. զոր օրինակ և ոչ Հայր անգիտութեամբ քննէ զսիրտս մարգկան. ուր և ցուցաք իսկ վերագոյն, եթէ գիտէ՛ն՝ քննելոյ

1 Ա՛յսինքն՝ օրոճաց:

է, և ոչ եթէ քննելն՝ ի գիտելոյն: « Ո՞վ գիտաց, ասէ, զմիտս Տեառն »: Եւ Սուաքեալ ասէ, եթէ Մեք զմիտս Քրիստոսի ունիմք: Եւ եթէ ոչ ոք գիտիցէ զմիտս Տեառն, զիա՞րդ ասիցես, Սուաքեալդ, եթէ Մեք զմիտս Քրիստոսի ունիմք: Այլ մեզ, ասէ, յայտնեաց Աս-տուած Հոգւովն. այնչափ ինչ՝ որով մեք կարիցեմք բաւական լինել, և ոչ այնչափ ինչ՝ որչափ ինչ միտքն Տեառն:

Եւ զի [1] զաւգէ յամենայն արարածոց, եթէ ոչ ու-մեք կարօտացաւ, և ոչ յումեքէ ուսաւ, և ոչ ինչ յու-մեքէ աւո՛ յարէ՝ ի նոյն, եթէ « Ո՞վ եղև նմա խորհըր-դակից, եթէ խելամուտ արասցէ զնա. կամ ընդ ո՞ւմ խորհեցաւ խորհուրդ, և արար զնա տեղեակ. ո՞վ ու-սոյց նմա դատաստան, կամ ո՞վ ցոյց նմա զձանապարհս իմաստութեան, կամ ո՞վ ետ նմա փոխ, և առնուցու՞ ի նմանէ զփոխարէնն »: Զհնարս իսկ իբացն լինելոյ՝ նա եգիտ յառաջագոյն. իսկ արդ մեք և զփոքրն ինչ զգի-տելն չհամարիցիմք նմա [2]. զի և գիտել զարժանն՝ մեք ի՛ նմանէ ուսաք. և սակայն և այնու վատթարագոյն եմք, և հակառակ իմն քննել զնա, որ և զքնութիւնն իսկ ամէն իրաց ինքնէ գիտէ:

« Թէ ամենայն հեթանոսք իբրև զկաթիլ մի՛ ի դուլէ իցեն, իբրև զմէտ մի՛ ի կշռոց համարեցան »: Եւ արդ մի՛ ինչ՝ի բազմութենէն նայիցես, այլ՝ի միտ առնուցուս զԱստուծոյ մեծութիւնն, եթէ զիարդ դիւրին է՛ի նմա կորուստ նոցա: « Եւ իբրև զկաթ մի՛ ի դուլէ՝ որ՛ի ներքոյ կաթիցէ, և իբրև զմէտ մի՛ի կշռոց համարեցան, և իբրև շիթք մի՛ի բերանոյ համա-րեցան »: Ակիզաս ասէ. Ա՛հաւասիկ կղզիք իբրև զմանր գող [3] իջեալ. և Սիմաքոս և Թէոդիտոն նոյնպիսի իմն. Եբրայեցին. են իմ քադակի յետոտոզ [4]:

1 Յօր. Զիք պ:
2 Յօր. Զհամարի ամա. այլ յօտար գրէէ, լամարիցիմ նմա:
3 Յօր. Յօտար գրէէ՝ մանրագող:
4 Ա՛յսպէս ունի եբրայական բնագիրն.

הן איים כדק יטול׃

որ է. Եւ յիմ փոքոյ իրաւ. այսինքն. Ամբարձցէ նա զկղզիս իբրև զփո-շի մանր:

« Եւ Լիբանան չէ բաւական յայրուծին »: Զարձեալ նուազականաբն արար նուազագոյն զնուազականացն իմաստ. զի եթէ ողջակիզեալ ինչ կարօտէիր, ասէ, եթէ զանենայն զանտառս Լիբանանու կոտորէիր, չէր ինչ բաւական յայրուծին ողջակիզեալ. եթէ զանենայն ջոր-քոտանիս մատուցանէիր, սակայն և այնպէս ոչ լինէր ինչ բաւական: Քանզի անենայն բնութիւնք չեն ինչ բաւական ըստ արժանի պատուել զԱստուած: Այլ տէս զԱստուծոյ մարդասիրութիւն. զի թէպէտ և չիցէ ինչ բաւական ըստ նորա պատուոյն, սակայն յարգէ զանարգն և պիտանացու առնէ:

« Անենայն հեթանոսք ոչինչ են, և յոչինչ համարեցան նմա »: Զի եթէ պատուելոյ ինչ արժանի նմա ոչ գտանի, նոյնպէս և ոչ իմաստութեան նորա հասու, ոչ խորհրդակից և ոչ խրատատու: Եւ եթէ գիտութեան նորա ոչ ոք է հասու, որչափ ևս էութեան նորա. և եթէ երկինք մանն ինչ են չափոյ ձեռին նորա, որ քան զերկինս'ի խոնարհ իցեն, զիմաստութիւն նորա:

« Արդ ում նմանեցուցէք զՏէր. միթէ պատկեր կոփեաց զնա հիւսն, կամ ձուլեաց զնա իբրև զոսկերիչ'ի բովս՝ զոսկի »: Ոչ, ասէ, այդպիսի ինչ հրաման եա Աստուած, եթէ պատկեր ինչ կանգնիցէք նմա, և կամ ոսկով զուրկ օծանիցէք. զոր'ի վեր և'ի խոնարհ տայ խրատ Մովսէս, եթէ Մի առնիցէք ձեզ ինչ նմանութիւն պատկերաց, մի յերկինս'ի վեր, և մի յերկիր'ի խոնարհ: Քանզի ոչ'ի սկզբանէ ոք արար պատկեր Աստուծոյ, և ոչ գիտութեան նորա ոք գիտաց հաւաստեաւ հասու լինել. զի որ ինչ եղծանի և ապականի՝ այնմ առնեն պատկեր. զի յորժամ չիցէ'ի միջի, գոնէ պատկերաւ ունիցին զիշատակս'ի միտս. իսկ անեղծ և անարատ Աստուծոյ որպիսի՞ ոք ինչ առնիցէ պատկեր. ում իմիք նմանիցէ, զի կարիցէ ոք նմա և պատկեր նկարել, որ իւրն միայն նմանէ և ոչ այլ իմիք: Եւ արդ մատուցեալ մարգարէին պատուհասն զկուռնն՝ 'ի հարց և'ի փորձ արկեալ իմաստութեամբն՝ ըզկռոցն տկարութիւն և զԱստուծոյ զօրութիւն: Նախ ցուցանէ եթէ անբաւ և անհասական է Աստուծոյ գիտութիւնն, և ապա զգործուած կռոցն յանդի-

մանէ, եթէ'ի փայտից և'ի քարանց ոսկեպատաք և արծաթապատաք կանգնեալ կան անմտութեամբ: Եւ ընդէր, ասեն, որպէս զկռոցն բնութիւն ասաց, ոչ նոյնպէս և զԱստուծոյ. քանզի զԱստուծոյ բնութիւնն ոչ ինչ կարէ ընծայեցուցանել. վասն այնորիկ եթող զէութիւնն, և յայտնեաց զգիտութիւնն [1]: Իսկ կուռքն քանզի'ի քրայական և փայտեղէն նիւթոց են, վասն այնորիկ զպայման և զարար բնութեան նոցա պատմէ: « Որո՛մ, ասէ, նմանութեան նմանեցուցէք զնա ». զի չէք ինչ նմանն նմա, և ոչ պատկեր կերպարանաց յարարածոց. բայց մի միայն է նորա պատկեր կերպարանաց, անձեռագործ Որդին իւր:

« Զի զփայտ անփուտ ընտրեաց հիւսն »: Եւ քանզի բազում յայտիսի պատկերաց'ի բազում ժամանակս տեւեցին, վասն այնորիկ զպատճառսն ասէ, եթէ ոչ յանձանց ինչ, այլ յանփուտ փայտէն տեւէին [2], և յիմաստութենէ Ճարտարութենէ Ճարտարին է գործն տեւական, և հնարս խնդրէ՝ զի մի շարժեսցի պատկերն: Եւ մի ինչ'ի գեղ պատկերին հայեսցիս, և մի'ի հաստատութիւն և յանշարժութիւն. զի այն մարդկան Ճարտարութեան արուեստ է: Այլ թէ գործ ինչ վճարիցեն, զայն'ի մէջ բերիցեն, ըստ այնմ՝ զոր'ի նոյն յարէ, եթէ « Ո՛չ լսէք և ո՛չ իմանայք, և ո՛չ պատմեցաւ ձեզ'ի սկզբանէ, ո՛չ գիտէք զհիմունս երկրի »: Զի արդեամբք իսկ պարտ էր ուսանել ձեզ զայս [3], և ոչ բանից միայն և ապա հաւանել. այլ [4]'ի սկզբանէ զայդ ուսանիէք. զի և առանց բանից իսկ ինքն բնութիւն իրացն կարէ ուսուցանել. և թէ և դուք ոչ իմանայք, սակայն յայլոց պատմեցաւ ձեզ, և ոչ այժմ ինչ, այլ'ի սկզբանէ. այսու ամենայնիւ հաստատէ եթէ առանց նախընթաց Թողութեան է ամ բարշտութիւն նոցա: Եւ քանզի վասն զարձին խօսէր, այնուհետև քանզի ոչ վասն հանգատեան առ'ի

1 Ձօր. Եւ յայտնեաց զգիտութիւնն, յօտար գրչէ:
2 Ձօր. Երևէն. օտար գրչաւ պնէն:
3 Ձօր. Զայս յօտար գրչէ:
4 Ձօր. Այլ յօտար գրչէ:

վչտացն զերծանելոյ՝ յառաջինն չարիսն ընթանալ միւս-
անգամ պարտ էցէ, իբրև զմոլեցս լինչ Հաստատուն
տայ զպատուիրանն, որ ոչ տայցէ նոցա թոյլ միւսան-
գամ կործանել յառաջինն ամբարշտութիւնն։

« Որ ունի, ասէ, զշնջանակ երկրի ». իսկ այլքն
ասեն, թէ Որ նստի ՚ի վերայ շրջանակին։ « Եւ բնա-
կիչք նորա իբրև զմարախ »։ Տեսանե՞ս, զի բոլորակ
իմն է երկիր, զի շրջանակն զբոլորաձև կերպարանսն
երկրի յայտ առնէ, և չէ լինչ անօգուտ գիտել զայս.
զի մի ըստ արտաքնոց փիլիսոփայից առասպելացն պատ-
րիցիմք[1], որք գառագղի և կարկնի և սկտեղ և լկան, և
այլ լինչ այսպիսեաց սուտք են[2] նմանեցուցանել զեր-
կիր. լուեալ ՚ի մարգարէիս եթէ շրջանակի իմն է, մի
այլ լինչ ուրեք ցնորիցիս։ Եւ բարիոք ասաց, թէ ունի.
քանզի ՚ի ձեռին նորա են ծագք երկրի. զի նուաւ
հաստատեցաւ եկաց ամենայն լինչ։ Վերապոյն վասն
գիտութեանն ասաց, եթէ Ո՞ չափեաց զերկինս
թաւ, և զերկիրս քաւ. և աստ վասն տեսչութեանն
ասէ, և ոչ ևս վասն արարչութեանն։ Եւ արդ մի լինչ
խնդրիցես եթէ յի՞ր վերայ կայցէ երկիրս և կամ յի՞ր
վերայ հաստատեալ իցէ. յորժամ Աստուած իւրով ձե-
ռամբ ունիցի, այլ լինչ հիմն քան զայն մի խնդրեր, և
մի միտս լինչ հաւանեցուցիչս։ « Եւ բնակիչք նորա ի-
բրև զմարախ »։ Ահագին տկարագոյն է մարդ առաջի
Աստուծոյ, և այսպէս վաղվաղակի յոր կողմն և կամի՝
դարձուցանէ։ Եւ արդ մի լինչ՚ի թանձրութիւն մար-
միոյ երկրի նայիցիս, այլ զմեծայաղթ զօրութիւնն՝ որ
զնայն ունիցի՝ ՚ի միտ առնուցուս. և ոչ լինչ այնուհետև
խռովիցիս, և ոչ ցնորեալ այսր անդր աստանդիցես։
Եւ յորժամ՚ի միտ անկանիցի, թէ զիւրդ կայցէ ան-
շարժ շրջանակն երկրի, զանհնարին, զանպարտա-
կանն, զանվաստակ ձեռինն՚ի միտ առնուցուս զգօրու-
թիւնն, և այնպէս կարիցես ընդունել հաւատովք.
քանզի և մեք յօրինակ տկարութեան սուտք եմք բա-
զում անգամ առնուլ զմարախս։

« Ո հաստատեաց զերկինս իբրև զկամար »։ Սկի-

1 Յօր. Պարթիցիմ։
2 Յօր. Այսեաց սոպեն։

զաս ասէ. Ո ձգեաց իբրև զանօսր լինչ զերկինս. Սի-
մաքոս. Ո ձգեաց իբրև գերան զերկինս։ Դարձեալ
աստ զարարչութենէն լինչ ասէ և ոչ զնիւթոյն յա-
ռաջ բերելոյ, և ոչ զնորին իսկ մարմնոյն երկնից զա-
րարածոյ. այլ զյօրինուածն՝ յորում և մարդիկ կարեն
հաղորդ լինել Աստուծոյ։ Ոչ ասացէ եթէ զնարդ՚ի
չգոյէ զգոյն ած՚ի մէջ, այլ թէ ուրպէս զորս ածն՝
զկէտն ամբողջ պահէ, և զկէտսն յօրինեալս յարդարէ։
Եւ այս իսկ ոչ սակաւ արուեստի Ճարտարութիւն է՝
հաստատել զէտլն և յօրինել և պարհել անարատ՝
զհաստատեալսն. քանզի և ընդ Ճարտարապետս՝ ոչ
միայն յորժամ բազում սիւնս Ճախարակիցեն, այլ
յորժամ կանգնել և հաստատել կարիցեն, յայնժամ
զարմանամք. նոյնպէս և Աստուծոյ, մի միայն ընդ այն
զարմանայցես՝ զի զայնչափ մեծութիւն մարմնոյ եր-
կնից՚ի չգոյէ՚ի գոյ ած և եցոյց, այլ զի յետ երևեցու-
ցանելոյն՝ հաստատուն և անարատ պահէ։ Դիտուք
երևեցուցանել զմարմինն երկնից և զգմբէթն՝ և այն-
պէս ընդ վայր ընկեցեալ՚ի վերայ երկրի, որպիսի՞ լինչ
զօրութիւն կարէ ուղղել և հաստատել զնա, եթէ ոչ
այն՝ որ՚ի սկզբանէն՚ի չգոյէ՚ի գոյ ած զնա։ Զի մի
յորժամ լսիցես, եթէ « Ձգեաց զերկինս իբրև զեռ-
րան », երկնչիցիս բնակել յերկրի, եթէ գուցէ ան-
կանիցի՚ի վերայ, նախ ասէ, եթէ « Հաստատեաց
զերկինս իբրև զկամար ». զի առաջին օրինակաւն՝ ա-
զատեսցէ զքեզ յերկեղէ. զի թէպէտ և կասկածիցես՝
եթէ իբրև զեռրան է, գուցէ անկանիցի, քաջալե-
րեսցիս այնու, թէ իբրև զկամար հաստատուն է։ Եւ
ընդդէմ զերկասին օրինական՚ի մէջ բերիցէ. այլ զի ա-
նուամբ կամարին՝ զհաստատութիւնն ցուցանիցէ, և
անուամբ խորանին՝ զդիւրութիւն արարչին, եթէ
այնպէս դիւրաւ կանգնեաց իբրև զեռրան մի. և ոչ ի-
բրև զեռրան լինչ անօգուտ, այլ իբրև զկամար հաս-
տատուն. զի մի դիւրաւ առնել արարչին՝ կասկած
լինչ՚ի միտս արկանիցէ արարածոցն, յառաջագոյն ուղ-
ղեաց զայն՝ կամարն կոչելով. ապա և զպէտս պատշա-
ճիցն. և յայտ առնէ եթէ ոչ վայրապար և ոչ՚ի զուր
և ոչ՚ի ցոյց լինչ կամ՚ի պարծանս, այլ զի բնակիցեն՚ի
նմա մարդիկ։ Իսկ երկինք իբրև զձեղունն լինչ գոգաւալ

զմբեթաձև՝ ի վերուստ ձգեցան։ Այսպա եթէ ասիցէ ոք, եթէ ընդէր այնպէս գոգաձև գմբեթաձև են երկինք, և ոչ իբրև զհարթ ինչ ձեղուն. զայս և եթէ պատասխանի տամ, եթէ այնպիսի ինչ իրաց չկարեմ խելամուտ լինել. զի այնպիսի կերպարանք են երկնից՝ զոր ուսայ, իսկ եթէ ընդէր այնպիսի իցեն՝ զայս ոչ և ս։ Եւ ձգելն զոր ինչ յայտ առնէ, եթէ որպէս վաղվաղակի առանց դժուարութեան հանդերձ ոք տարածանիցէ, այնպէս և ս բիւրապատիկ դիւրաւ այն ձգեաց յանկարծակի զերկինս. և այս են զարմանք զի զայնչափ և զայսչափ ժամանակս ոչ խորշ ուրեք և ոչ գոգ ինչ գործեցաւ յերկինս։ Որպիսի՞ ապաւանդակք կարիցեն պարզ ունել, կամ որպիսի՞ սիւնակք, կամ որպիսի՞ ապարումք խառնեալ ընդ երկինս՝ ունիցի զնա ձիգ և պարզ. այլ գիտեմ թէ չկարես ինչ ցուցանել. բայց թէ ընթացեալ Աստուծոյ զօրութիւնս լինիցիս ապաստան. ըստ այմմ, եթէ և ձեռին նորա են ամենայն ծագք երկրի։ Եւ բարւոք ա՛ռ զայն, թէ Ձգեաց.՝ի միւսում վայրի ասէ. Գալարեսցին երկինք իբրև զմագաղաթ. և այլուր, եթէ իբրև զվերարկու կրկնիցես զնոսա, և փոփոխեսցին։ Իբրև զկտաւ ինչ բարակ, այնպէս ձգեաց Աստուած զերկինս՝ի վերայ գլխոց մերոց. և մեծութեամբն և գեղեցկութեամբ և ազգի ազգի զարդուցն պաճուճանօք պարարէ զաչս մեր և զուարթացուցանէ. և ոչ միայն կարևոր պիտոյիւքն՝ որ՝ի նմանէ իցեն, այլ և առաւելութեամբ գեղեցկութեան վայելչացուցանէ և ուրախ առնէ. քանզի մեծատունք՝ի մեծապարգևէ [1], ոչ եթէ միայն զի զպէտս ևեթ մեր վճարիցէ, այլ զի հանգիստ և յուրախութիւն իցէ մեզ ամենայն. ապա թէ ոչ, վասն էր իսկ զայսչափ լաւութիւն երկրի տարածէր մեզ, և զընդարձակութիւն ծովու, և այսչափ յօգս և այսչափ ջուրս. ոչ ապաքէն բազմութիւն արարածոցն անցանէ ըստ պատշաճս մերոց պիտոյից. և զայն՝ի զբօսանս և՝ի միսիթարութիւն արար մերոյ կարօտութեանս։

« Որ տայ իշխանութիւն յոչինչ իշխել, և զերկինս յոչինչ արար »։ Եւ զի՞նչ իցէ, եթէ « Որ տայ զիշխանս յոչինչ իշխել »։ Տեսանե՞ս, զօրպիսի՞ իրս՝ որ ամենեցուն ծանօթ են՝ ածէ յօրինակ. քանզի յարարածին երկնից չէաք մեք, և ոչ միոչ ձգերն զնա՝ խելամուտ լինել էաք։ Զի մեծամեծս ինչ, թէպէտ և կարի մեծամեծք իցեն, և յականջալուրս լսիցին, ոչ այնպէս ինչ յայտնագոյն լինի լսողացն, զորչ զբանն յայն ինչ՝ որ ծանօթ առնեսցուն է և հանապազօր՝ի մէջ առնեսցուն երևի. որպէս և միւս մարգարէն ասէր, թէ Որ փոփոխէն ժամս և ժամանակս, և որ ցուցանէ զթագաւորս և փոխէ. և դարձեալ, թէ Բռնաւորք նոտան՝ի գեհենի, և որում ոչ ակն կայր՝ զգեցաւ զպատկ. և դարձեալ, թէ Տեսի զծառայս՝ի ձիս, զիշխանս՝ի ծառայութիւն վարեալս. և դարձեալ, թէ Յառաւօտ մինչև յերեկոյ փոփոխմունք բազումք. և դարձեալ, թէ Ամենայն ինչ երագագոյն է առաջի նորա։ Տեսանե՞ս, որչափ ամենայն ուրեք ընդ տիեզերս սերմանեաց Աստուած գիտութեանն պատճառս առ իւրոց արարչութեանն հաւատս. կամիս լսել բարբառ՝ որ անդուստ՝ի վերուստ եկեալ ուսուցանիցէ քեզ Տէրն, այլ ոչ կամիս ուսանել. զկրս աշխարհիս կշռեաս, բնութեանցդ՝ որ հանապազորդ ընթանան՝ միտ դիր, և անտի առնուս՝ի միտ զՏէրն և զԱրարիչ։

« Ձերկիրս, ասէ, յոչընչէ արար »։ Մի՞ծ իմն թուի քեզ՝ զի ունկն զնա հաստատուն, եթէ ունիցիս՝ զի չէր իսկ և արար. և այնպէս վաղվաղակի՝ իբրև ոչինչ

1 Ս. Յոսէպս յօրինակին. Թուի, ֆանդի ՀԷՖԱՓՈՌՆ Է՝ ՀԷՖՈՍ ՊԱՐԳԵՆԷ։

խանս յոչինչ իշխել »։ Քանզի փոփոխումն թագաւորի ուրուք՝ իրք դժուարինք են, այլ սակայն Աստուծոյ և ոչ այն ինչ դժուարին է։ Եւ սակաւ ինչ թուիցի քեզ այնպիսի ոք՝ որ զաշխարհս [1] ամենայն ունիցի, և յամենեցունց մեծարեալ պատուիցի, և հրամանաւ միայն՝ զամենայն շարժիցէ, և յոր կողմ պէտս դարձուցանիցէ, ընկենուլ զայնպիսին յանթուոյ թագաւորութեան [2]. այլ Աստուծոյ և այն ոչ ինչ է։ Եւ եթէ զամիկ ոք, որ և զբանս անգամ չշարժիցէ, հանից յայնպիսի պատիւ, սակայն և այն չէ ինչ դժուարաւ. և ոչ ասայ թէ դիւրին է, այլ յայտնագոյն ևս քան զդիւրին, թէ « Որ տայ զիշխանս յոչինչ իշխել »։ Տեսանե՞ս, զօրպիսի՞ իրս՝ որ ամենեցուն ծանօթ են՝ ածէ յօրինակ. քանզի յարարածին երկնից չէաք մեք, և ոչ միոչ ձգերն զնա՝ խելամուտ լինել էաք։ Զի մեծամեծս ինչ, թէպէտ և կարի մեծամեծք իցեն, և յականջալուրս լսիցին, ոչ այնպէս ինչ յայտնագոյն լինի լսողացն, զորչ զբանն յայն ինչ՝ որ ծանօթ առնեսցուն է և հանապազօր՝ի մէջ առնեսցուն երևի. որպէս և միւս մարգարէն ասէր, թէ Որ փոփոխէն ժամս և ժամանակս, և որ ցուցանէ զթագաւորս և փոխէ. և դարձեալ, թէ Բռնաւորք նոտան՝ի գեհենի, և որում ոչ ակն կայր՝ զգեցաւ զպատկ. և դարձեալ, թէ Տեսի զծառայս՝ի ձիս, զիշխանս՝ի ծառայութիւն վարեալս. և դարձեալ, թէ Յառաւօտ մինչև յերեկոյ փոփոխմունք բազումք. և դարձեալ, թէ Ամենայն ինչ երագագոյն է առաջի նորա։ Տեսանե՞ս, որչափ ամենայն ուրեք ընդ տիեզերս սերմանեաց Աստուած գիտութեանն պատճառս առ իւրոց արարչութեանն հաւատս. կամիս լսել բարբառ՝ որ անդուստ՝ի վերուստ եկեալ ուսուցանիցէ քեզ Տէրն, այլ ոչ կամիս ուսանել. զկրս աշխարհիս կշռեաս, բնութեանցդ՝ որ հանապազորդ ընթանան՝ միտ դիր, և անտի առնուս՝ի միտ զՏէրն և զԱրարիչ։

« Ձերկիրս, ասէ, յոչընչէ արար »։ Մի՞ծ իմն թուի քեզ՝ զի ունկն զնա հաստատուն, եթէ ունիցիս՝ զի չէր իսկ և արար. և այնպէս վաղվաղակի՝ իբրև ոչինչ

1 Յօր. Յայնպիսիս ոչ զաշխարհս։
2 Ս. Յոսէպս յօրինակին։

ինչ։ Եւ ուր իցեն՝ որ ասիցեն, եթէ երկիր էր իսկ աներեւոյթ և անպատրաստ. զի ահա աւասիկ ասէ, եթէ արար զնա. զի եթէ արար, զուարդ իցէ՝ զի անարար իցէ. և արար դիւրաւ, վաղվաղակի։ Եւ միւս ևս մարգարէն, եթէ Տեսից յերկինս զգործս մատանց քոց. և դարձեալ նոյն, եթէ Ձամենայն ինչ զոր կամեցաւ՝ և արար. և հանգոյն այնմ, եթէ «Արար զնա իբրև զոչինչ», այն է՝ եթէ Արարեր զամենայն ինչ բանիւ քով։

Եւ բարւոք ասէ. «Կոչեաց զնոսա, և ասեն. Ահա աւասիկ եմք»։ Եւ այսու ամենայնիւ դիւրութիւն արարչութեանն ընծայեցուցեալ երևի։ Եւ ոմն այլ իմաստուն ասէ, եթէ յարարածոց ասի՝ իւրաքանչիւր ազգագործ երևի. իսկ սա ոչ միայն յարարածոց, և այլ իմն հանգամանս տայ որ խելամուտ առնիցէ զմեզ մեծութեան արարչին, այսինքն զկերպարանս արարչութեանն։ Տեսանեմ զմեծութիւն այնպիսի և զգեղեցկութիւն արարածոց. մի՛ յայնս ևեթ հայեցուածիցիս կայցես, այլ միտ դիր և ուսիր՝ զնարդ այս ամենայն մեծամեծք՝ եղեն իբրև զոչինչ, հրամանաւ և բանիւ և մատամբք և կոչմամբ. Միայն՝ որ կոչէ, ասէ, զգոյս՝ի չգոյից անտի։ Զի և սա վերագութիւն և զգիւրութիւն արարչութեանն հաստատէ. զի որպէս մեք կոչեմք զայնպիսի՝ որ վաղվաղակի լսիցեն մեզ, նոյնպէս և նա զգոյսն իբրև զգոյս։ Եւ զնարդ, ասէ, մարթիցի այդմ լինել. այն իսկ են զարմանք, զի այնպիսի Տէր ունիմք, որոյ գործն ոչ բանիւք և ոչ մտօք, և ոչ այլ ևիւք կերպարանօք կարեմք հասու լինել։

Ո՛րչափ ինչ յառաջագոյն ասացաք զարարչութենէն թէ դիւրաւ արար զերկինս և զերկիրս. «Արար, ասէ, զերկիր յոչինչ», և անդէն յարէ՛ի նոյն, եթէ «Մի՛ սերմանեսցեն և մի՛ անկեսցեն և մի՛ արմատեսցի յերկիր արմատ նոցա»։ Եւ արդ վասն կռօցն արդեւք ասիցէ, եթէ վասն Բաբելացւոց. յերկոսեան կողմանս կրթիցուք զբանս. զի այնպէս կարիցեմք ուսանել զհաւաստին. և թերևս վասն Բաբելացւոցն իսկ ասիցէ, եթէ գերի երթիցեն, և իբրև՛ի հողմոյ՝ այնպէս բառնայցեն։ Եւ եթէ զկռոց ևս ասիցէ, վասն զի անզգայք և անշունչք են, և ոչ մի ինչ զօրութիւն կա-

րեն ցուցանել. զի ոչ միայն բարութիւնս ինչ յանձանց չկարեն տալ մարդկան, այլ և ոչ ըստ այնմ օրինակի՝ որպէս և մարդիկ առնիցեն մարդկան. Թէպէտ և ոչ այնը ինչ է՝ որ սերմանիցէն, և ոչ այնը՝ որ տնկիցէն, այլ Աստուածոյ՝ որ աճեցուցանէն. իսկ նոքա և ոչ զգոյսն ինչ իրս կարեն վճարել։ Եւ զինչ զարմանք իցեն, ուր և առ իւրեանց անձանց փրկութիւն չլինին բաւական, այլ որպէս և՛ի հողմոյն բնաբարձ լինին։ Տեսեր զԱստուածոյ զօրութիւնն, տես և զկռոցն տկարութիւնն։ Եւ ընդէր արդեւք զայս եդ, և ոչ զընդդէմն, եթէ ոչ արարին նոքա զերկիր. քանզի ասելովն՝ թէ արարեր զերկիր, եցոյց թէ և զտունկն նա արար. զի որ զմայրն անկոյն ած՛ի մէջ, յայտ է թէ և զտունկն նոյն արար. իսկ նոքա ոչ միայն զտունկն ոչ ընդհեղին, այլ և ոչ սպասաւոր լինել իբրև զմարդիկ բաւական ինչ են։ «Յամաքեցան». զի այն իսկ սոլորութիւն է փայտից. զի որպէս՛ի փայտս գօսացեալ՝ անպտղութիւն է, նոյնպէս և նոքա առանց զօրութեան։ «Հողմք առցեն»։ Հողմք աստ զպատիժն՝ որ առ յիւրմէ են՝ կոչէ, և զպատերազմաց հասանել՛ի վերայ, եթէ ամենևին ինչ ոչ կարիցեն օգնական լինել կուռքն։

«Եւ արդ ումո՛ւ, ասէ, նմանեցուցէք զիս»։ Բարւոք ասաց, ումո՛ւ նմանեցուցէք զիս. բարւոք ասաց՝ թէ արդ. թէ յետ[1] այնչափ զփորձ առնելոյ զերախտեացն, ոչ իմացարուք զիս։ «Եւ բարձրացայց, ասէ Աւրբեն»։ Այսինքն զինչ ինչ այնպիսի իցէ՝ որ կարիցէ զիս բարձրացուցանել. և այսու յայտ է եթէ կռոցն փառքն՛ի մարդկանէ են, և՛ի նոցունց պաճուճանաց՝ բարձրութիւն նոցա. զի յորժամ բարւոք յօրինիցեն զնոսեցէ՛ղէնն, և արքունական իմն կերպարանս պաճուճեն, և ահագին իմն նշանակս բարկութեան՛ի ձեռին իմն դնեն՝ կամ թէ հուր կարիցէ ինքնացանել կամ կարկուտ ածել, ոչ ասպաքէնն նոքա բարձրացուցանեն զնա։ Իսկ ինձ, ասէ, զինչ ինչ հնարս ինչ իմանայցէք, զի բարձրացայց. չէք ինչ և չէ հնար և ոչ լիցի. և յայտ է

1 Յօր. Չէք չե։

թէ անկարօտական է Աստուած, և ոչ ՚ի մարդկանէ բարձրանայ, այլ ինքն զնոսա բարձրացուցանէ:

Իբրև եցոյց զանկարօտութիւնն, եթէ ոչ ինչ գոյ՝ որ զնա բարձրացուցանիցէ, յարէ ՚ի նոյն, եթէ « Սմբ բարձէք ՚ի բարձունս զաչս ձեր, և տեսէք՝ ո՞ եցոյց զայս ամենայն »: Ո՞չ ապաքէն ՚ի չգոյէ ՚ի գոյ ածի. յայտ արար այնու՝ ոմն եցոյց զայս ամենայն: Եւ մեք նովին բանիւ վարեսցուք, եթէ զչգոյն ած ՚ի գոյ և եցոյց. որպէս յորժամ զմարդկանէ ասիցեմք, եթէ ոչ ոք երբէք այսպիսի իբր կամ անօթ ինչ կամ հանդերձ ինչ, յայտ առնեմք՝ եթէ այնպիսի ոք ինչ յառաջ քան զայն ոչ գործեաց: Զեմ ինչ, ասէ, կարօտ ձերոյ բարձրացուցանելոյդ. այլ դուք հայեցարուք ՚ի բարձունս: Բայրիոք առ մարդիկ՝ որ միշտ ևեթ ՚ի վայր հայիին, և ոչ կարեն ամբառնալ ՚ի բարձունս. թէպէտ և կերպանք իսկ այսպիսիք տուան մարդոյ, զի կամաւ և ակամայ մի մոռանայցեն զիւրոյ բնութեան ապնուականութիւն. կանգուն արար զնա և բարձրաւանդակս մարմնոյ Հաստատեաց զաչսն. և ինքն իսկ արարն ոչ խրատիցէ զքեզ, եթէ ոչ վասն այլ իրիք անդ Հաստատեաց զաչսն, այլ զի ՚ի վեր ևեթ հայիցիս՝ իբրև զիշխան մի և զգաստաւոր. որ ոչ ՚ի վայր ևեթ հայիցիս, այլ միշտ ՚ի վեր համարձակ ապաստան ՚ի թևս աչացն Թռուցիչս. այլ եա քեզ և այլ ևս թևս թեթևագոյնս քան զայդ, որ ոչ յօգս ևեթ և յերեթերն Թռուցանիցեն, այսինքն զոր խաղաղականն ասէն, որ քան զշարժանակս ՚ի վերայ [1] են ընդ օդս և ընդ երկինս ՚ի միջի, այլ և ՚ի վերոյ ևս քան զերկինս: Եւ յինչ իցեն այսպիսի թևք. այլ Ձնմարիտ Հաստատոյն Թռիչք. զի Հաստատոյն Թևոք կարես ելանել ՚ի վեր քան զերկինս, և գիտել զամենայն ինչ՝ որ անդ իցէ:

« Եւ տեսէք, ասէ, ո՞վ եցոյց զայս ամենայն »: Եւ Թերևս ասիցէ ոք, եթէ տեսանեմ զամենայն, և զգեղեցկութիւն նոցա և զմեծութիւն, բայց Թէ ո՞վ եցոյց զայս ամենայն՝ զնա ոչ կարեմ ձանաչել: Տեսանեմ զարեգակնն, տեսանեմ զլուսին, տեսանեմ զերկինս, տեսանեմ զաստեղս և զայլսն ևս ամենայն. և ուստի

1 Յօր. Օտար գրեաւ՝ ՚ի վերոյ են:

կարիցեմ ձանաչել զարարիչն: Եւ մանաւանդ քան այլոց ամենեցունց՝ Հրեից չէր պարտ զայս ասել, որոց յամենայն ազգս ետ զիւրոյ արարչութեանն ծանօթս: Քանզի և ինքն աներևոյթ է, և մինչ առնէր զերկինս՝ չէր ոք մօտ, և մանաւանդ մարդ, զի իմանայցէ եթէ նորա իցեն արարածք. արար զերկինս, և Ադամ չէր ուրեք մօտ. Հաստատեաց զերկիր, և նա ոչ ևս ետես. կոչեաց զծովս, և նա չէր ուրեք մերձ՝ Թէ խելամուտ լինիցի. զի չետ առնելոյն զամենայն, ապա արարաւ մարդն. և արդ ուստի՞ կարիցեմք, ասեն, իմանալ եթէ Աստուածոյ իցեն արարածք: Այլ ՚ի բնէն և ՚ի կարէ. զի արար առաջի նորա ՚ի նմանէ՝ մարդ, զկնոջէն ասեմ: զի որ զմարդ կարիցէ առնել, ո՞րչափ ևս զայլն ամենայն՝ որ վասն մարդոյն եղև. յայժ առաւել դիւրագոյն էր զերկինս առնել և զայլսն ևս ամենայն առաջս բարածս, քան զմարդ. ոչ միայն վասն չնչոյն, այլ և վասն մարմնոյն, եթէ որպիսի զօրութիւն չիւրաքանչիւր անդամն եղ: Եւ ոչ, ասեն, ետես զնա՝ մինչ ստեղծանէրն, այլ յորժամ ստեղծաւն: Այսեմք. սակայն գիտաց Թէ նա արար, զի ՚ի նմանէ էր. Այժմ [1], ասէ, ոսկր յոսկերաց և մարմին ՚ի մարմնոյ իմոյ: Եւ զի զանաստուածն նոյն արար, յայնմանէ ուսանիցեմք, զի առ նա ածէր և տայր անուանս դնել. իսկ եթէ յերկրէ իցեն նա և անաստուածքն՝ զայն յետոյ ուսանիցեմք յայնմանէ, եթէ Հող էիր, և ՚ի Հող դարձիցիր: Այո՛, ասեն, զի յերկրէ արար զնա՝ յայտ է եթէ յայնմանէ ուսանիցեմք. իսկ եթէ զերկիր ՚ի չգոյէ ած ՚ի գոյ՝ զայն ուստի՞ կարէր գիտել: Այսեմք. վասն զի եդ ՚ի նմա իմաստութիւն ծանուցիչ ամենայնի. զի որ մարգարէացաւն և զծածուկ լեալն Աստուծոյ կարաց իմանալ, զնաւ, զնաւորդ զայլսն ոչ կարէր իմանալ. զի եթէ գազանքն ինչ անկաւ ՚ի վերայ նորա, զնաւորդ կարէր իմանալ զկողկն որոշումն. զի յորժամ գազարեալ ոք իցէ, և առնուցու ինչ ոք ՚ի նմանէ, Թէպէտ և ՚ի նմանէ իցէ, սակայն ոչ զգայ: Տեսանեմ, զի այլովք աչօք տեսանեմք. և ոչ միայն զմեծաւորս, այլ և զՀանդերձեալսն: Եւ զի անաստուածքն ոչ ՚ի նմանէ էին, այնու յայտ է, եթէ

1 Յօր. Այս յոսկր գրէ:

Ա.յս այժմ ոսկը յոսկերաց իմոց, և մարմին ՚ի մարմնոյ իմոյ: Եւ անտի զինչ իմանայցեմք, եթէ Ա.յս այժմս. նախ քան զայն՝ զի անաւսունքն ՚ի նմանէ ոչ էին. և միւս ևս, եթէ որպէս այժմ եղև, ոչ ոք երբեք սոյն լինիցի: Տեսանե՞ս զի առ յապա ևս ժամանակս մարգարէանայ: Նաև Մովսէս ոչ եթէ մեռեալ ինչ էր Աստուծոյ՝ յորժամ զարարածս առնէր և իմացաւ, այլ յետ բազում աղգաց, յայտնութեամբ Հոգւոյն, իբրև զմանուկ առեալ ուսանէր ՚ի հօրէ: Եւ այլուր, եթէ Ծանօթքն Աստուծոյ՝ յայտնի է ՚ի նոսա. այսինքն կարէին ճանաչել զԱստուած. Զի աներևոյթք նորա ՚ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանի: Եւ այլազգ ևս. զամենայն աղգս վարդապետութեանն իմն նշանակ արար. ՚ի ջրհեղեղին զամենայն աշխարհ վերստին իմն նորոգեաց. առ աշտարակաւ՝ այլ իմն նորանշանք. առ Սոդովմայովքն այսպիսիք. առ Աբրահամու ոչ նոյնպիսիք ինչ. ՚ի գալստեանն՝ ևս զարմանալիք: Ուսաւ և կային ՚ի հօրէն, այլ արհամարհեաց, քանզի ամբարիշտ էր. զի նա ոչ միայն արարիչ իմացաւ զԱստուած, թէ կամեցեալ էր, այլ և դատաւոր և վրէժխնդիր. իսկ հայրն իմացաւ եթէ արարիչ է Աստուած, և ամենայն ուրեք մեռ է, և դարմանիչ է մարդկան, և եթէ ոչ վայրապար ինչ լինի, այլ ամենայն ինչ յօրինուածով. և եթէ բառնայ զքաշնամի ՚ի միջոյ, նոյնպէս վրէժս հատուցանելոց է: Տէս և գլարուածեանն իսկ զծանօթս. զի արիւն վախճանելոյն՝ առաւել զօրագոյն է քան զկեանս կենդանւոյն: Դնեը ՚ի վերայ նորա պատիժս, զի մի ոք ասիցէ՝ թէ սպանի զքաշնամին, անհոգ եմ յերկեղէ. ցուցանէ թէ յայնժամ առաւել եւք ընդ երկեղիւ՝ յորժամ ՚ի թշնամեաց անհոգ լինիցիւք. զի այլ թշնամի ոտանաւք անձանց՝ զԱստուած: Եւ ամենևին ոչ եթող Աստուած առանց վկայութեան զաշխարհս: Դարձեալ և Պետրոս ասէ, եթէ ձշմարտութեամբ ՚ի վերայ հասեալ եմ՝ զի ոչ է ակնառու Աստուած, այլ յամենայն աղգս՝ որ երկնչի ՚ի նմանէ և գործէ զարդարութիւն՝ ընդունելի է նմա. և դարձեալ, եթէ Յորժամ հեթանոսք՝ որ զօրէնս ոչ ունիցին, բնութեամբ զօրինացն գործ գործիցեն, նոքա որ զօրէնս

ոչ ունին, անձանց իւրեանց իսկ են օրէնքն: Եւ օրէնս, եթող դարձեալ առանց օրինայ, զի մի՛ ասիցես եթէ կարի ծանրացուցանէ լինձ: Ահա աւասիկ, ասէ, չլինիմ ինչ քեզ վերակացու. տէս, իցէ՞ թէ կարիցես անձամբ առնել ինչ առաքինութիւնս. այլ ոչ ինչ կարիցեն անձամբ վճարել. դարձեալ լինիմ վերակացու և կեցուցանեմ զնորհօք:

« Ամբարձէք ՚ի բարձունս զաչս ձեր »: Քանզի որ ինչ յերկրի էր՝ չեղև բաւական ցուցանել քեզ զարարիչն, որպէս կարծեցեր. քանզի ոչ առեր ՚ի միտ զայն, եթէ Լցաւ երկիր փառաք նորա. և Ողորմութեամբ Տեառն լի է երկիր: Եւ եթէ փառաք և ողորմութեամբ լի իցէ երկիր, ընդէր կոչիցէ զնոսա ՚ի բարձունս հայել: Ամենայն երկինք, ասեն, լաւագոյն են քան զերկիր: Քանզի յերկրէ ինչ ոչ ուսաւրուք, գէթ յերկինս հայեցարուք: Գեղեցիկ են երկինք, այլ կարևոր է և երկիր. որպէս մարմին մի ՚ի բազում անդամոց յօդեալ, նոյնպէս արար Աստուած զաշխարհս. և զոր Պաւղոս զփիլաքանութենէ անդամոյն ասէ, զնոյն և զբնաւ աշխարհիս պարտ է՝ իմանալ, եթէ անարգ անդամոյն աւելի պատիւ ետ, զի մի՛ ինչ հերձուածք լինիցին ՚ի մարմնին: Գրեալքիր եթէ յոռի ինչ և վատթարագոյն իցէ երկիրս քան զերկինս. այլ ունի ինչ և յոլովագոյն քան զնս. քանզի կերակրէ զամենեսին որ ՚ի վերայ նորա շրջիցին, և զի ՚ի ամանէ են մարմինք ամենայն. բայց ունին ինչ յոլովագոյն երկինք, զի և անտի ոչ սակաւ խնամք դարմանոց են յարեգականէ և ՚ի լուսնէ և յաստեղաց: Եւ այլազգ ևս. զի սա արհամարհանաց է, քանզի հանապազ կոխի. եթէ անդր յերկինս հայիցիք, ասէ, և զայդ ամենայն՝ որ յերկրիդ է՝ առնուցուք ՚ի միտ: Ել զոր օրինակ հեթանոսք, որ ՚ի բիւրուց ՚ի բիւրս աստուածս բարժանեն զտեսութիւն աշխարհիս, և զայն ոչ կատարեալ ինչ, այլ անկատար և կուռական. և այնպէս իմն համբաւեն, եթէ Դեմետեր՝ երկրի ՚ի Թիկունս իցէ. և Պոսիդոնն՝ ծովուն, և Ա.յրերա՝ օդոց. և ոչ այսչափ միայն, եթէ Դեմետեր Թիկունք երկրի, այլ և զայլ ոմն յօդեցին

1 Յօր. Պաւղ:

ընդ նմա աստուած. զԴիմնիոսոս, ասեն, թէ այգեաց շահապետ է, և զԱթենան՝ թէ ձիթենեաց, և զՄայրեկնան՝ ամենայն ծառոց շահապետս կոչեն։

Իսկ աստ ոչ այսպիսի ինչ. այլ «Տեսէք, ո՛վ եղոյց զամենայն զայս». և յաւէ՛ն նոյն, թէ «Ուր հանէ [1] ընդ թիւ զաշխարհ իւր, և զամենեսեան յանուանէ կոչեսցէ»։ Ակիղաս ասէ, թէ Ուր հանէ համարաւ զօրս նոցա. Սիմաքոս՝ Թուով ասէ. Թէոդիտոնն [2], Ուր հանելոցն է ըստ Թուոյ զօրուԹեան նոցա. որպէս և Դաւիթ ասէ, թէ Ուր Թուէն զբազմուԹիւն աստեղաց, և ամենեցուն նոցա անուանս կոչէ։ Զի յայտ առնիցէ այնու, զի ոչ միայն արար, այլ և հաստատուն պահէ զամենեսեան. այս իսկ է, եԹէ «Ուր հանէ ընդ Թիւ զաշխարհ իւր»։ Եւ ոչ ասաց, եԹէ հանելոց է, այլ եԹէ հանէ, զի յայտ արասցէ եԹէ հանապազ հանէ [3]. և յաւելու և՝ որ զարմանագործ ոք և սքանչելագործ, զի հանապազ տեսանելով՝ [4] հանապազ զարմանայցես ընդ նա. զի այլ իմն ցերեկ ցուցանէ, և այլ իմն ցայգ։ Այլ զնոյն ցուցանէ, ասեն, և ոչ այլ ինչ նոր և չքնաղ։ Եւ այն իսկ չկրճե՞ն զարմանք, զի նոքիմքիք միշտ ցուցանէ բազում յօրինուածոցն Թիւն. եԹէ խառն՝ի խուռն ինչ էր, հանապազ ձևեռն և միշտ ամառն, ոչ ապաքէն ինքնակաց կարծէիր զամենայն։ Զի եԹէ յօրինուածն ոչ հաւանեցուցանէ զքեզ՝ զՏէրն ճանաչել, ո՛րչափ ևս առաւել անսաստուԹիւն. որպէս զի ոք վաճառ ինչ առնիցեն, զառգինն՝ի միջի դնեն, նոյնպէս և Այտուած՝ եդ առաջի քո զաշխարհս, զի յերևելեացս աստի գնեսցես զՀաւատսն՝ի նա։

«Զամենեսեան, ասէ, յանուանէ կոչեսցէ»։ Այս ինքն ամենայն ինչ անսայ բանին նորա։ «Ի բազում փառաց քոց»։ Եւ ոչ ասաց եԹէ՝ի բազում զօրս փառաց քոց»։ Եւ ոչ ասաց եԹէ՝ի բազում գիտուԹենէ քո, կամ յիմաստուԹենէ, այլ ընդ փառսն զարմացաւ. քանզի՝ի վեր են փառք քան զիմաստուԹիւն։ «Ի բազում փառաց քոց», ասէ. զի և

1 Յօր. Հաննէն։
2 Յօր. Թէոդոսէն։
3 Յօր. Զի յայտ արասցէ եԹէ հանապազ հանէ, օտար գրչի է։
4 Յօր. Հանապազ տեսանելով, յօտար գրչէ։

մեք զանուանս զայս ազգական գիտեմք՝ ընդ որ ինչ կամիցիմք զարմանալ. զի յորժամ զառնէ Թագաւորէ Ճառիցես, մեծ փառս ունի, ասես. յորժամ զմեծուԹիւն ոչ կարիցեմք համարել՝ և ոչ զգեղեցկուԹիւնն, զի՛ի գեղեցկուԹիւն՝ և մեծուԹիւն, և որ այլ ինչ այսպիսիք իցեն՝ սեպհականք են. իսկ փառացն անուն՝ ազգական է առաւելուԹեան [1] քան զայնոցիկ՝ որ ընդ նովաւն իցեն, որ զբազում ինչ միանգամայն ընդ իւրև կարէ ամփոփել. մեծ փառք են, ասեմք, ի վերայ իրայ ինչ զարմանալեաց, բազում՝ որչափ ինչ ոչ գիտեմ։

Այս. «Եւ՝ի սաստիկ ուժոյ և՝ի զօրուԹենէ քումմէ»։ Ոչ վայրապար ինչ՝ի զօրուԹենէ, այլ Թէ՝ի սաստիկ զօրուԹենէ։ «Եւ ոչ ինչ ծածկեցաւ՝ի քէն». մանաւանդ նախ՝ի բնուԹենէն մնաց, և ապա յիշատակացն՝ որ հանապազորդ լինին, այսինքն զարմանալիքն, և որ ինչ Այտուածոյ իմաստուԹիւնն է։ Մի՛ զայս ինչ ասիցես՝ որ այժմ ասեմ. մի եԹէ՝ի քո հայհոյուԹեամ՞նցն իրքն քննիցին. այլ զի ամենայնի անդուստ՝ի վերուստ եղև խելամուտ, զի արարիչ է և սրտագէտ և դարմանիչ ամենայնի՝ որ են։ Զի եԹէ արարածոց, ասէ [2], այնպէս ունի խնամ, զոր վասն քո իսկ ած՝ի մէջ, ըստ այնմ, եԹէ Այրար զերկինս՝ի բնակուԹիւն. և եԹէ զերկինս՝ի բնակուԹիւն արար՝ ո՛րչափ ևս առաւել զերկիրս. և եԹէ երկնից և երկրի դարմանս տանիցիմ, ո՛րչափ ևս առաւել քեզ՝ վասն որոյ նոքայն եղեն։

«Մի՛Թէ ասասցե՞ս ինչ Յակովբ, կամ զի՞նչ խօսեցաւ Իսրայէլ, եԹէ ծածկեցան Ճանապարհք իմ՝ի Տեառնէ, և Այտուած իմ բարձ զկրաւունս»։ Այտ ինձ այս այսպէս Թուի, եԹէ և մխիԹարեսցէ ևս զանմխիԹարան և զկործանեալս՝ որ ընդ երկար ժամանակս՝ի գերուԹեան էին, եԹէ չեմ՝ի բացէ, ոչ Ճանապարհք քո ծածկեցան յինէն, և ոչ զկրաւունս քո անցուցի առ քեզ. առաքեր եմ յօգնականուԹիւն, և եկեալ հասեալ

1 Յօր. Առաքելութեան։
2 Յօր. Ա՛ն՝ յօտար գրչէ։

փրկութիւն. ոչ եթէ լինէն ինչ ծածուկ էին Ճանապարհքդ, այլ մեղքն քո առնէին զքեզ անծանօթ լինէն, և անօրէնութիւնք քո անպուցանէին զերեսս ուսանն: Որպէս յորժամ ասիցէ, եթէ Պահեցաք մեք և դու ոչ տեսեր, և խոնարհեցուցաք զանձինս մեր և դու ոչ գիտացեր, ոչ եթէ ոչ գիտեր, այլ առաւել գիտէր, և վասն բազում անօրէնութեանցն անփոյթ առներ. յայն սակս վասն գիտութեան ևեթ շարժէ զբանն, եթէ զամենայն ինչ անվրէպ գիտէ և չափէ, ասէ, և թուէ, և ամենեցուն անուանս կոչէ: Մի՛ եթէ ոչ գիտիցեմ, ասէ, և չկարիցե՛մ փրկել. այլ և գիտեմ և զարմանեմ զամենայն: Զի ես ձեռամբ իմով չափեցի զերկինս, և զձեզ ոչ զարմանիցեմ. վասն ձեր արարի զերկիրը իբրև զոչինչ մի, և ձեզ չիցե՛մ բաւական օգնել. և զբնակիչս նորա իբրև զմարախ արարի, զիշխանս՝ յոչինչ իշխել. և ես ի՛ր իմիք կարօտանայցեմ: Այդ ո՛ւմ նմանեցուցէք զիս. նա և ոչ վասն ողջակիզաց ինչ մեղադիր լինիմ ձեզ. զի ոչ Լիբանան յայրումն բաւական է, և ոչ չորքոտանիք յողջակէզս: Նա և ոչ ծածկեցի ինչ, զի՛ ի սկզբանէ ուսար զամենայն:

« Եւ այժմ ոչ ծանեար, եթէ չի՛ր լուեալ, եթէ Աստուած յաւիտենական է, Աստուած՝ որ հաստատեաց զծագս երկրի»: Ակիղաս ասէ. Հաստատէ զծագս երկրի. Սիմաքոս ասէ. Հաստատեաց: Եթէ յայն սակս ասիցէ, եթէ « Ո՞չ ծանեար », զի պարտ էր՛ի կարգէ իրացն ուսանել, կամ թէ ես իսկ քեզ զամենայն յառաջագոյն պատմեցի: Մի՛ ասիցես եթէ՛ի դիւացն ուսայ: « Աստուած յաւիտենական». այն իսկ է սեփական Աստուծոյ՝ զի յաւիտենականն է. այն իսկ է սեպհականն Աստուծոյ՝ հաստատել զծագս երկրի. և այլ ևս յաջորդքն, եթէ « Ոչ քաղցիցէ, և ոչ վաստակիցի »: Ակիղաս ասէ. Լքցի. Սիմաքոս ասէ. Ոչ լքաւ և ոչ վաստակեաց. ընդ զանազանութեան նոցա իմն ասացեալ՝ այլոց թարգմանացդ. այլ այն և հրեշտակաց է չքաղցնուլն և չվաստակել: Իսկ արդ դու՝ նախ զաբարչական նորա ուսար, զի՛ չգոյէ՛ի գոյ ածէ զամենայն, և զիմաստնականն և զանբովանդականն: « Եւ չիք դիւտք հանձարոյ նորա »: Ակիղաս ասէ. Չիք քնին. Սիմաքոս, թէ Չիք չափ հանձարոյ նորա. Թէոդիտոսին [1], Եւ չիք իսկ եղը հանձարոյ նորա: Ցոլովագոյն իմն ասէ. « Տայ զօրութիւն քաղցելոյ ». իսկ այլքն, եթէ Տայ զօրութիւն լքելոյ: Ոչ այն միայն է Աստուծոյ, զի ինքն անկարօտական է, այլ զի և այլոց պարգևեսցէ զայն ինչ՝ որում ինքն ոչ իցէ կարօտ: « Եւ տրտմութիւն անցաւականաց »: Դարձեալ հակառակ իմն ուղղութեանց իբրև չարութիւն ինչ համարին Աստուծոյ բնութեանն՝ յորում ոչն գոյ չարութիւն, այլ ըստ իւրաքանչիւր արժանեացն հատուցանէ արդար դատաստանաւ: Ի չարչարէն՝ ոչ ինքն ինչ զայրանայ, և՛ի տանջէն՝ ոչ ինքն ինչ ազդի, որպէս մեք յորժամ տանջիցեմք զոք, նախ մեք իսկ տանջիմք՛ի ցասմանն զայրմանէ:

« Քաղցիցեն մատաղք [2] և վաստակեսցին երիտասարդք, և ընտիրքն անզօրք լինիցին »: Տեսանե՞ս զԱստուած, զպնպիսիսն տանջէ: « Իսկ որ համբերեն Տեառնէն, նորոգեսցին զօրութեամբ, նորափետուրք զարդարեսցին իբրև զարծուիս »: Այս և՛ի միրտութեանն կատարի. զի մատաղանան, նորոգին վերստին՝ որ սուրբ խոցհրդոյն արժանի լինիցին: « Որք համբերիցեն », ասէ. տեսանե՞ս, որպիսի ինչ լաւութիւն է համբերութիւն: Մի՛ ինչ վհատել, և մի՛ ինչ զանգիտել և անյոյս լինել, և մի՛ խոտորել ինչ ընդ իրս՝ որ՛ի վերայ հաստատեցեն, այլ կալ հաստատուն, և տանել ամենայնի առաքինութեամբ: Նա և օրինակ իմն տայ զՀաւատոցն. զի եթէ արծուեաց այնպիսի ինչ նորոգութիւն լինի, ծրջափ ևս առաւել մարդկան՝ յորժամ լուսաւորեալ միրտութեամբ նորոգեսցին: « Որք ընթացցին և ոչ վաստակեսցին, գնասցեն և մի՛ քաղցիցեն »: Տեսանե՞ս, զիարդ յերկոսին կողմանս առաքինանայ Աստուծոյ զօրութիւնն, և՛ի չարչարէն և՛ի կեցուցանել:

1 Յօր. Թէոդոտէ:
2 Յօր. Զառաջինն Տաղտկ գրեալ, և ապա Տն գերեալ է:

ԳԼՈՒԽ ԼԱ.

« Նորոգեցարուք առ իս, կղզիք »: Ականջս ասէ. Պապանձեցարուք. Սիմաքոս, թէ Լռեցէք: « Զի իշխանք նորոգիցին զօրութեամբ »: Բարիւք ասաց, եթէ « Նորոգեցարուք առ իս ». քանզի չէք այլ ուստեք նորոգել, եթէ ոչ Աստուծոյ. ըստ այնմ, եթէ Մատիք առ նա, և առէք զլոյս: Ոչ օրինակ յարեգակն ոք [1] հպիցի՝ լուսաւորի, նոյնպէս և որ առ Աստուածն մերձենայ՝ բիւրապատիկ լուսաւորի: Տէս զկերպարանս նորոգութեանն, տէս զվերստութեանն արծածութիւն. յառաջագոյն դրոշմեալ է լերայն փոփոխմանց. կամ որպէս այլքն ասեն, եթէ Լռեցէք կղզիք. որ է նշանակ՝ ի վարդապետութիւն կոչել:

« Մերձեսցին, խօսեսցին միանգամայն, յայնժամ զկրաւունս պատմեսցեն»: Զի՞նչ էր եկեալ զկրաւունս պատմել. ՝ի դատ կամիմ մտանել, իրաւունս տալ զասացեալն: Չհանդերձեալն յառաջագոյն ասէ. զի թէ զոր ասացին և ոչ կարացից կատարել, ապա տկար եմ իբրև զկուռան. բարիւք ասաց, եթէ « Յայնժամ պատմեսցեն ». յորժամ վճար արարից իրացն վճարելոյ:

« Ո՞ զարթոյց յարևելից զարդարութիւն »: Ոմանք զկիւրոսէ ասեն, և ոմանք զՋօրաբաբելէ. քանզի այլ Թարգմանքն ասեն, եթէ Ո՞ յարոյց յարևելից զարդարն. կամ վրէժխնդրութիւն է՝ որ զարթեաւ յարևելից: Մխէթ, ասէ, լիմմէ՞ քաղաքէն. այլ յօտար աշխարհէ և ՝ի խուժադուժ երկրէ. ուստի ոչ միայն ոք ՝ի քնակեաց, այլ և ոչ լիմոյն ոք զկս ողբէ: Այսի ոչ միայն մարդասիրութիւնն Աստուծոյ, այլ և զօրութիւնն երևի: Եւ բարիւք ասաց՝ զարթոյց, և ոչ եթէ արար. զի որ յետոյն կարէր զամենայն, և յառաջագոյն կարող էր, այլ յապաղեաց վասն նոցա անօրէնութեան:

1 Ցօր. Արեգակն ։

Ադդ և զերագութիւնն ևս յայտ առնէ. ասէ. « Եւ կոչեաց զնա զկնի իւր, և երթիցէ »: Այսինքն զի ոչ լինիցի նմա արգել և ոչ խափան: « Տացէ առաջի հեթանոսաց, և զթագաւորս զարմացուսցէ »: Ոչ ինչ հրաժարեմ, ասէ, զքնամիսն՝ զվկայս իրացն գործելոց կոչել զի լիցի և կատարեսցի. մինչ զի և թշնամիքն զարմանայցեն:

« Եւ տացէ յերկիր զսուրս նոցա, և իբրև զխուրձ ցրուեալ՝ զաղեղունս նոցա. և հալածեսցէ զնոսա, և անցցէ ՝ի խաղաղութիւն՝ ճանապարհ ոտից նորա »: Տեսանե՞ս, զի վասն յարևելից զարթուցելոյ արդարոյն ասէ իսկ. իսկ ըստ Եւթանասնիցն՝ վասն ժողովրդեանն ասէ, եթէ ոչ ոք արգելուցու, կամ խափանեսցէ զնոսա:

« Ո՞վ ազգեաց և արար զայս ամենայն, և կոչեաց զսա՝ որ կոչեացն յազգացն իսկզբանէ ՝ի վաղուց հետէ »: Այսպիսի լինն սովորութիւն է Աստուծոյ, զի յորժամ անիրաւութիւն ինչ գործիցի, զանգստին զառաջինն յիշեցուցանել: Եւ արդ զո՞ր ասիցես. զԵգիպտացւոցն, զԱբրահամեն, զՈդոմայեցւոցն, զՋրհեղեղին: Տեսանե՞ս, զի յիւրոց և յօտարաց հասարակ խնդրէ զվերժ. զի զիրաւունս ողջ պահիցէ, և զարժանն չկորուսանիցէ, և զիւրս և զչիւրս՝ ՝ի մեղաց և յարդարութենէ ընտրէ Աստուած: Եւ եթէ զնախնեացդ ինչ յիշիցէ և ասիցէ, եթէ Վասն Աբրահամու ընտրեցի զձեզ, ոչ այլ ինչ յայտ առնէ, այլ զի մի հպարտանայցեն, և անձանց ինչ քաջութեան համարիցին զուզղութիւնն:

« Ես եմ Աստուած առաջին, և ես եմ առ յապա»: Եւ յայտ է՝ եթէ ոչ յառաջ զքան զնա, և ոչ զկնի նորա. զի այն լինն առաւել սեպհական է Աստուծոյ, յորժամ ոչ նախ քան զնա ոք իցէ, և ոչ առ յապա վախճան կայցէ, այլ զի անսկիզբն իցէ և միջնջենաւորապէս սեպհական է անմահ կենդանութեանն:

« Տեսին հեթանոսք և երկեան, սարսեցին ծագք երկրի. մերձեցան և եկին միանգամայն. եղիս ՝ի մի՝ այլ ընկերի, այլ եղբօր իւրում օգնական լինել»: Վերնովքն զդարձեն նշանակ, և ապա մատչի հեգնել զկուռան, թէպէտ և ժողովիցեն օգնականութիւն ինչ

'ի մարտ պատերազմի, ընդունայն լինի յոյս նոցա. քանզի 'ի նիւթոյ փայտից են կուռքն. չեն լինչ անտի օգնականութիւն գտանելոց։

« Բայց դու, Իսրայէլ, ծառայ իմ, Յակոբ՝ զոր ընտրեցիդ »։ Ա.յլ քաջալերս լիցի նոցա, եթէ ոչ իբրև զայնոսիկ լիցեն՝ որ 'ի կուռսն յուսացեալ էին. զի նոցա Աստուած է յոյս, և ոչ կուռքն. և 'ի նախնիսն խիզախեցուցանէ անուամբն Իսրայէլի և Յակոբայ։ Տէս զհաստատութիւնս օգնականութեանցն. « Ծառայ իմ, ասէ, զոր ընտրեցի, զաւակն աբրահամեան՝ զոր սիրեցին ». զի մի՛ հպարտացուցանիցէ զնոսա։ Եւ նա ասէ սիրեցի զԱբրահամ։ և դոցա զինչ օգուտ լիցէ. զի զնոյն նախանձ յանձին ունիցին։ Եւ նշանակ սիրոյն էր, « Որում օգնական եղէ, ասէ, 'ի ծագաց երկրէ և դիտաց նորա կոչեցի զքեզ »։ Ա.յսինքն 'ի միջոց իշխանաց նորա։ Եւ զի մի՛ ասիցեն, եթէ միոչ 'ի մերում աշխարհին էաք, և տաճարն կանգուն կայր, յորում նմա պաշտօնն մատուցանեը, յայնժամ 'ի ձեռս եաք, և արդ յօտար երկրէ կոչիցէ. և ասէ զիտիցե՛ք զայդ [1]. այո՛, ասէ, լինելոց է. քանզի և առ նախնեսն ձերով եղև այդպիսի լինչ. զի 'ի Պարսկաց երկիր օգնեցի նմա, զի և նա անդր էր. զի թէպէտ ոչ 'ի գերիս, սակայն 'ի վիշտս. և տեսի զհանդերձեալն՝ իբրև զլեալ լինչ, ասէ. և ասացի, ասէ, թէ ծառայ իմ ես դու։ Զիք լինչ այսպիսի աշխուատանութեան հաստատ. « Ծառայ իմ ես, ասէ, դու՝ զոր ընտրեցիդ »։ Ոչ եթէ որպէս մեր օք՝ արծաթագին ընտրեցի զքեզ, ասէ. զի որ ընտրանաւն լինչ օք իցէ, աւելի լիցի պատուական է, և աւելի գութ կայ ընդ նմա այնր՝ որ ընտրիցէն. զայլ ազգս, ասէ, խոտեցի, և զքեզ միայն ընտրեցի։

« Մի՛, ասէ, երկնչիր, զի ընդ քեզ եմ». մեծ միխիթարութիւն։ « Մի՛ խաբիր, զի ես եմ Տէր Աստուած քո, որ զօրացուցի զքեզ և օգնեցի, և զգուշացայ քեզ »։ Զառաջինն երախտիս յիշեցուցանէ. միթէ չտնկեցի՞ս օրինակ առաջին սիրոյն. նա և Դաւիթ ասէ.

1 Ա.յսպէս յօրինակին։

Միթէ յաւիտեանս մերժեսցէ Տէր, և ոչ ևս յաւելցու՞ 'ի գթալ։

« Եւ զգուշացայ քեզ աջով իմով արդարով »։ Միթէ զի իմ իցես՝ վայրապաթ լինչ օգնիցեմ քեզ. այլ արդարութեամբ. զի և այս իսկ հաւատարիմ գործ է ձեռին իմոյ, չհարկանել ընդվայր զայնոսիկ՝ որ 'ի լլկանս լինչ կայցեն. որպէս զի թէ արդար իցէ աջս իմ, ապա և դուք պարտիք վայելել առ յիմմէ օգնականութենէն։

« Ա.հաւադիկ ամաչիցեն և պատկառիցեն ամենայն հակառակորդք քո, զի եղիցին իբրև զչէզեալս. կորիցեն ամենայն դատախազք քո. զի ես եմ Աստուած, որ ունիմ զաջդ քումմէ »։ Զի թէպէտ սակաւաւուր և որդն իցես, սակայն 'ի միտ առ զմեծ զբարվիգն օգնականութեան. մի՛ 'ի մօտաւոր վիշտդ հայիցես, այլ զի զմեծաղոր զօրութիւնն 'ի մտի ունիցիս։

« Ա.հա աւադիկ արարի զքեզ իբրև զանիւս նորս սղոցաձև կայծնասայլից »։ Իսկ այլքն՝ սրաբերանս ասեն։ « Կասեսցես զերինս և մանրեսցես զբլուրս »։ Եւ արդ, լերինք և բարձունք կասուցանեն. այլ բազմութիւնք զօրաց։ « Բայց դու ուրախ լինիցիս 'ի Տէր». իսկ այլքն՝ ցնծասցես, ասեն, 'ի Տէր։ Եւ զինչ իցէ 'ի Տէրն ուրախ լինել. զի ոչ ընդ լինչն, և ոչ ընդ յաղթութիւնս, այլ ընդ գութն Աստուծոյ ուրախ լինիցիս. զի նա ինքնին եղև քեզ օգնական։

« Ցնծասցեն տանկք և կաթսաեալք. խնդրիցեն ջուր և ոչ իցէ »։ Փոխանակ ասելոյ, եթէ « խնդրիցեն ջուր և ոչ իցէ », մարթի իմանալ եթէ կաթսաեալքն՝ որ խնդրեին ջուր, և ոչ էր։ « Եւ լեզուք նոցա 'ի ծարաւոյ ցամաքեսցին։ Եւ ոչ թողից զնոսա, այլ բացից 'ի վերայ լերանց զգետս, և 'ի մէջ դաշտաց աղբերս. և արարից զանապատն 'ի ձախիձն, և զերկիրն ծարաւուտ 'ի վտակս։ Եւ բղխեցուցից 'ի պաստս երկրի սնդ՝ զմայրն և զնոձն, զմուրտն, զսարդն և զսոյն. զի տեսցեն և գիտասցեն, եթէ ձեռն Տեառն արար զայս ամենայն »։ Տեսանե՞ս, որպիսի՛ ինչ փոյթ է Աստուծոյ, ոչ միայն զբարիսն պարգևել, այլ և յայտառնել եթէ ինքն է՝ որ պարգևէն. զի մի՛ ինքնադէպ ինչ կամ մարդկեղէն յաջողութեանցն իբրն կարծիս

յին. այլ ձանաչել եթէ ըստ աստուածեղէն տեսչու-
թեանն և խնամոյն լինի այսպիսի բարուքիւնք։ Քան-
զի մարդկեղէն իմն է վշտանալն և դարձեալ՝ի բարիս
հասանել, զերկոցունց կողմանց փուքթայուցանել
զպատճառս՝ թէ՝ի վերուստ են։

« Մերձեալ են դատաստանք ձեր, ասէ Տէր Աս-
տուած, մերձեցան խորհուրդք ձեր, — այսինքն կռոցն
յանդիմանուքիւնք, — ասէ Թագաւորն Յակոբայ. արդ
մերձեսցին պատմեսցեն ձեզ՝ որ լինչ անցք անցանելոց
են ընդ ձեզ. կամ առաջինն զինչ իցէ, ազդ ասացէք,
և դիցուք՝ի մտի և ծանիցուք, եթէ զինչ առաջինն,
զինչ միջին, զինչ այն՝ որ լինելոց է առ յապա »։ Քանզի
՝ի ժամանակի գերուքեան Հրէից գոգցես կռոցն
իմն յաղթուքիւն համարէին, արդ, ասէ, դատ դնեմ
ընդ ձեզ. վախճան է իրացն՝ որ ելին՝ի գլուխ. զի ես
Թէպէտ և ածի զպատիժսն, սակայն յառաջագոյն՝ի
սկզբանէ պատմեցի. իսկ նոքա և ոչ հուպ լինել իշ-
խեն. և զիաւրդ. քանզի անչարժք են։ Թող Թէ ասել
յառաջագոյն զհանդերձեալս ինչ, և շարժել իսկ չը-
կարեն. իսկ ես ոչ միայն յառաջագոյն ասացի, այլ և
զձանապարհն ևս ցուցի՝ ընդ որ փախստեայ գնայցեն։
Եւ արդ, ասիցեն զառաջինն. եթէ զառաջինն չասի-
ցէք, ապա վասն հանդերձելոյն չէ ապաստան ումեք
՝ի ձեզ լինել. և չէ իսկ կռոց զհանդերձեալս պատմել,
նա և ոչ դիւաց իսկ, յորոց անուն կուռքն կանգնեցին.
քայց Աստուծոյ, որ ասէ յառաջագոյն, և ընդոյն կա-
րող է՝ի գլուխ հանել։ Եւ արդ, առ յամենի պաշտօ-
նեիցն ստիպէ պատուհաս առ կուռսն և առ դևս։

« Պատմեցէ՛ք զառաջինսն, գուշակեցէ՛ք զհանդեր-
ձելոցն՝ զի գիտասցուք. եթէ աստուածք իցէք, բարի
արարէք, չար արարէք. և զարմասցուք և տեսցուք՝
եթէ ուստի՛ իցէք դուք, և ուստի՛ իցէ գործուածն
ձեր. զի յերկրէ պիղծս ժողովեցեալն զձեզ »։ Ցերկուս
դէմս եդ զբանն, վասն նախագիտութեան և վասն ե-
րախտեացն և պատժոց, որ Աստուծոյ միայն գործ է
և ոչ դիւաց։ Եւ դևք, ասեն, չառնիցե՞ն ինչ այսպիսի.
և ոչ ուրեք, բայց եթէ Աստուած Թոյլ տայցէ. իսկ
եթէ Աստուած Թոյլ տայցէ, և ես կարեմ գործ ինչ
գործել։ Եւ ընդ այն զի զարմանայցես, եթէ մարդկան

չկարիցեն մեզանչել առանց Աստուծոյ հրամանին, ուր
և խոզից և շանց չկարացին ինչս առնել. որպէս յԱ-
ւետարանի իսկ և՝ի Յովբայ ուսանիմք։

« Եթէ ուստի՛ իցէք դուք, կամ ուստի՛ գործուածն
ձեր. յերկրէ պիղծս ժողովեցեալն զձեզ »։ Եւ արդ զի
պիտիցի ասել զայս, զի այն իսկ շատ է՝ գիտենալն եթէ
ուստի՛ իցէք. չէն լինչ պէտք առեալ և ընտրուքեան.
յերկրէ էիք, այլ ոչ եթէ յերկրէ պիղծք էիք, այլ
եղերուք պիղծք. զի ուստի բնուքիւնն ձեր էր՝ չէր
պիղծ բնուքեամբ։ Եւ յետ խայտառակելոց զնոցա
տկարուքիւնն, ապա յայտ առնէ զիւր զօրուքիւնն.
« Ես, ասէ, զարքաւսի՛ի հիւսիսոյ զԱորեստանեայն,
և յարևելից զԲաբելացին. կոչեցից յանուն իմ, եկես-
ցեն իշխանք, և իբրև զկաւ բրտի՝ այնպէս կոխեսցին»։
Աստինքն՝ի դարձին որք ոչ կամիցին զելանելն նոցա
՝ի Բաբելոնէ։ « Ո՞վ է այն՝ որ պատմեացն ձեզ զա-
ռաջինն, զի գիտասցուք. և զլինելոցսն, և ասասցուք
եթէ արդար է »։ Եւ զի պիտոյ իցէ ասել, եթէ յա-
ռաջագոյն չասէք. զի և զայլոցն ևս ասացեալս ոչ
լսէք։ Եւ Թերևս ասիցէ ոք, եթէ ընդէ՞ր զայդ ամե-
նայն առ պատկերսն Ձարտարաբանես, այլ մարգարէդ,
և զօրուքիւնս՝ որ բնակեալ են՝ի նոսա՝ չառնուս՝ի
միտ, որք յառաջագոյն ասեն, և չառնեն և բարի՝։ և
խեցեղէնք և փայտեղէնքն՝ իբրև առաջնորդք իմն են
մարդկան առ նոսա, և մարգարէդ ընդ անմտունչսն
և եթէ վիձի, ՝ի նմանուքիւն մանկտոյ՝ որ խուճապեալ
խուսափիցին։ Եւ արդ, զինչ իցէ ասել առ այս. զինսա՝
զգիտուքիւնն իսկ անմարմնաւորացն յետոյ հայթայ-
Թեցէք իմանալ. և առաջինքն ամենեքեան զպատկերս
և եթէ պաշտէին. և մինչև յանդիմանեալ էին ան-
մտունչքն, չէր ումեք փոյթ զծածուկ ինչ զօրու-
Թեանց. և վասն այնորիկ մարգարէն ընդ նոսա վիձի,
զի զնոսա առ աստուածս ունէին, և ստէպ յանդիմանէ,
եթէ մերձեսցին, պատմեսցեն։ Իսկ եթէ առ դևս ինչ
պիտոյ իցէ առել, սակայն և յայնմանէ ոչ ինչ զանգի-
տասցուք յիւրացն իսկ գործելոց փորձոյ։ Պաշտէին
Հրեայք զդևս, և այնպիսի ինչ պաշտօն, զի զուստերս

1 Աղսպէս յօրինակին։

զենուին և զդստերս զոհս մատուցանէին. և այնպէս գիւացեալք՝ զի յաղին և՛ ծնունդս ոչ լինայէին. և զՀայկեան Աստուածն Թողուին՝ զբարերարն և զեբախտաւորն, որ ազգի ազգի խնամս դարմանոց նոցա մատուցանէր. և զգևան միասակարս մեծարէին և ոչ զպարգևատուն Աստուած։ Եւ արդ տեսցուք, եթէ օգնեցի՞ն ինչ նոցա գևքն, զորս մեծամեծարս պատուէին քան զԱստուած. և ոչ ուրեք. այլ՝ի ձեռս ետուն, և՛ի տանջանացն՝ի պատժոց չկարացին ապրեցուցանել։ Եւ ոչ միայն յօտար երկրի ինչ չօգնեցին [1], այլ և ոչ անգէն յաշխարհին. և ոչ յառաջագոյն ինչ գուշակեցին. և զոր մարգարէքն գուշակեցին՝ զայն [2] և սուտ կամէին առնել։

Նա թէ կամիս՝ և զՀեթանոսաց ինչ պատմութիւնս պատմեցից։ Եկն եհաս երբեմն պատերազմ՝ի վերայ Ելադացւոց աշխարհին, և արշաւեաց առ զբազում քաղաքս Պարսից. այլ թերևս ասիցես, եթէ և յայնժամ ապրեցուցին՝ի թշնամեացն. առասպելս պատմես և շատախօսութիւնս մարդկան. զի ոչ եթէ յայտնութիւն ինչ երևեցաւ և ապրեցան, այլ իմաստութիւնն առն Թեմիստոկղեայ, զի զնաւամարտիկ հնարս հնարեցաւ. սակայն այնչափ ջանալով թէպետ և զմարդիկն ապրեցոյց, սակայն զքաղաքն հրձիգ արարին. այլ ոչ որպէս մեր Աստուածն, որ հարիւր և ութսուն հազար արս՝ արկ տապաստ՝ի միում վայրկենի։ Նա և ոչ բամբասէին ինչ զնոսա քուրմքն, եթէ ծոյլ ինչ իցեն առ մեհեանն պատկերացն. և ամենեքեան առմենեցուն թշնամիք էին. զիմեանս հարկանէին և՛ի միմեանց կոտորէին առ ագահութիւն, և ոչ առ ծուլութեան ինչ՝ զոր առ կուռսն ցուցանէին։ Ընդէ՞ր ոչ յառաջագոյն գուշակեցին զգալոսան Քրիստոսի. ընդէ՞ր և այժմ ոչ վաղագոյն ինչ ազդեն, այլ կարկեաղ պաշարեալ են ամենայն ըղձականն դիւթութիւնք. միթէ չկայե՞ն քուրմք և մոլիք, միթէ չիցե՞ն խղճք և դիւթք. այլ և կարի շատ։ Ո՞չ վասն այսորիկ յամենայնի ապրեցաք՝ի բազում չարեաց, և բազում

1 Ցօր. Օգնեցին։
2 Ցօր. Եւ զոր մարգարէն գուշակեցին, յօտար գրէ։

կեանք հեշտականք չնորհեցան մեզ. ոչ մարտք, ոչ պատերազմունք, և ոչ այլ ինչ նոյնպիսիք առ մեզ. և կանխասացութիւնք ինչ չեն պիտոյ. զի և այնպիսի վարս ինչ չնորհեաց մեզ, որք և առանց կանխասացութեանն կարող են՝ի զգուշութեան պարհել. և յայտ է եթէ կանխասացութիւնքն վասն զինջանելոյ և եթէ էին Աստուծոյ ըստ մարդկան։ Եւ արդ զի՞նչ ինչ պէտք կանխասացութեանցն իցեն, յորժամ մեք գուշացեալ զգուշութեամբ կեցեմք. իսկ արդ ձեզ ոչ ինչ այսպիսի։

« Սկիզբն տաց [1] Սիոնի »։ Սկսինքն որպէս՝ի սկզբանէն էին, նոյնպէս արարից և՛ի դարձին։ « Եւ զերուսաղէմ մխիթարեցից՝ի ձանապարհին. զի՛ հեթանոսաց ահա աւասիկ և ոք ոչ »։ Զի ոչ երբեք՝ի նոցանէ մխիթարեաց զնա. նա և վասն այնորիկ թոյլ ետու երթալ նմա անդր, զի ուսանիցի զտկարութիւն կուռց նոցա։ Զի՞ ողբեաս աստ առ իս զկուռսդ. Երթ անդէն ողբեսջիր, և ապա գիտասջիր, եթէ կարո՞ղ ինչ իցեն, և եթէ ոչ. Երթ, ողբեա ըստ նոցա կրօնիցն, և ապա առնուցուս՝ի միտ զտկարութիւնն նոցա։

ԳԼՈՒԽ ԽԲ

« Ցակովբ ծառայ իմ, օգնական եղէց նմա. Իսրայէլ ընտրեալ իմ, զոր ընկալաւ անձն իմ »։ Որպէս և Դաւիթ ուրեք ուրեք Քրիստոսի և Սողոմոնի դէմս դնէ, թէպետ և՛ի Սողոմոն կարծեցուցանիցէ ձառել, այլ՝ի Քրիստոս հանէ զմարգարէութիւնն. սոյնպէս և աստ՝ի դէմս Ցակոբայ և Իսրայէլի՝ զՈրդւոյ ձառս՝ի մէջ բերէ։ Եւ չեն ինչ զարմանք, զի եթէ որդիք Աստուծոյ և աստուած կոչին մարդիկ, որպէս և Աստուածն և Որդի Աստուծոյ՝ կոչի մարդ և Որդի մարդոյ։ Եւ եթէ ընդ այսպիսի անուամբք ծածկեալ է մարգարէութիւնս՝իբրև զմարգարէութիւն, սակայն՝ի

1 Ցօր. Տա՛ ի բնաւորի Ս. Գրոց դնի. Սկիզբն աւուրց պնդէ։

միտ պարտիմք առնուլ զՀշմարտութիւնն. մանաւանդ զի յազգէ իսկ նոցա ծագեալոց էր Քրիստոս. վասն այնորիկ ընդ անուամբքն նոցին մերթ Թաքնու, մերթ յայտնի։ Եւ զօգնականն լինել՝ ըստ տնտեսութեանն լմանամք, և ոչ ըստ աստուածութեանն, զի անկարօտական է աստուածութիւնն։ Եւ զՀրեշտակին զօրացուցանել սովին օրինակաւն ըստ մարմնաւորութեանն լմանամք, և ոչ ըստ աստուածութեանն. զի որ զամենայն ունի, զինքրդ էր՝ զի ծառային օգնականութեամբ կարօտանայր. ըստ այմ, եթէ Աստենայն ինչ նուաւա հաստատեցաւ եկայ. և եթէ ամենայն ինչ նուաւա հաստատեցաւ եկայ, զինքրդ էր՝ զի՝ի Հրեշտակէն զօրացայր։

« Եւտու, ասէ, զոգի իմ՝ի վերայ նորա »։ Այս առաւել սիրոյն Աստուծոյ նշանակ է, որ նուաւա՝ի մեզ սփռեցաւ. ըստ այմ որ Առաքեալ ասէ, եթէ Սէրն Աստուծոյ հեղեալ է՝ի սիրտս մեր։ Եւ չէ ինչ մարթ զայնպիսի պարգեւս ընդունել, եթէ ոչ նախ սրբիցին ոգիքն. զի որպէս ինքն՝ որ ընկալաւ զՀոգին յօրինակ միայն, և ոչ զի կարօտութիւն՝ի յիւր մարմնաւորութիւնն, նոյնպէս կամի զամենեսեան լինել սուրբս, զի արժանի լինիցին լինել տաճար և բնակութիւն Հոգւոյն։

« Դատաստան հեթանոսաց հանցէ »։ Եւ արդ, մեկնութիւն ինչ խնդրիցէ ասես. քանզի անխաիր կեանք էին առաջնոցն, որդիք ընդ մարս խառնակեին, և դստերք ընդ Հարս պղծէին, զմիմեանս կոտորէին, միմեամբք մեռանէին, զգազանաց զբարս յանձին ցուցանէին, նա և գժնդակագոյն քան զգազանացն. այլ այժմ ոչ այսպիսի ինչ. այլ գայլք և գառինք՝ի միասին հանգչին, և լինծք՝ առ ուրս մակաղին, ըստ այմ; եթէ ի Սիոնէ ելցեն օրէնք, և բան Տեառն Յերուսաղէմ։

« Եւ դատեսցի՝ի մէջ ազգաց »։ Այսինքն ընտրութիւն արասցէ՝ի մէջ կրօնիցն նոցա։ Եւ արդ երկու ինչ աքանչելիք եղեն, զի զբարիսն յետս ընկեցին, և զգաստութիւն յանձին կալան։ Եւ Հրեայքն՝ որ միշտ զբրնացն խոկային և՝ի մարգարէսն Թևակոխէին, վրիպեալք դատան՝ի Հշմարտութենէն՝ իւրեանց հեռութեամբն, և Հեթանոսք՝ որ քան զանաստուն ևս անխօսագոյնք էին, ՝ի գլխաւոր առաքինութիւնսն հասին։ Եւ բարիոք ասաց, եթէ հանցէ, և ոչ ասաց, եթէ արասցէ. զի որ էր դատաստանն և ծածկեալ էր, զայն էին յայտնեաց. ըստ այմ. Ահա աւասիկ եղ որ սերմանէր սերմանիս։ Իբրև զբարի ինչ պարգևան՝ի Հայրենի գանձուցն Հան բաշխեաց զկրօնս աստուածաճանոյցս, որ քան զամենայն ոսկի և զականս պատուականս և քան զթագ և զծիրանիս թագաւորութեան պատուականագոյն. և զպակին արքայութեան խոստացաւ, և վասն Հանդերձեալ դատաստանացն յիշեցոյց, և սանձս եդ յերախս Հոգւոց մերոց՝ զերկիւղ դատաստանաց. պէսպէս առաքինութեամբ զարդարեաց զմիտս մեր, զանօրէնութիւնս կարեացն, որ զմեզ յուզիւքն ցանկութեան լկտութեան լկէին՝ չիջոյց։ Եւ զինչ ինչ բարութիւնս ոչ կատարեաց. ոչ միայն զգաստանացն Հառեաց, զի այն Հանդերձելոց ժամանակացն էր, այլ և զաստիս ևս յայտնեաց, յորժամ վասն աշտարակին՝ որ անկաւ և կալաւ զբազում՝ Հառիւղ. և վասն որոյ և Պիղատոս խառնեաց զարիւն ընդ ողջակէզս։ Զի ոչ՝ի Հնութիւն զՀանդերձելոցն լռեաց, և ոչ՝ի նորութեան զմոտաւորս Թաքոյց, այլ երկոյն եթէ յիւրաքանչիւր յօրինութեան՝ զիւրաքանչիւր զօրութիւն ունին։

« Ոչ աղաղակեսցէ և ոչ անսաստեսցէ »։ Եւ այնու զՀեզութիւնն յայտ առնէ, եթէ ոչ բռնութեամբ ինչ կամ Հոխութեամբ, այլ Հեզութեամբ և Հանդարտութեամբ արասցէ զամենայն ուղղութիւնս։ Զինչ պէտք էին աղաղակելոյ նման, որ զայնպիսի զգաստութիւնս ուսոյց. զինչ ինչ խռովութիւն ոչ եղև նորընծայ ուրուք՝ի մտապատճ կրօնից. այլ ոչ եթէ նորայն այնպիսիք ինչ լսեն, այլ մեղմով լսին, անոտնաձայն առնելով։

« Զեղեգն ջաղջախեալ մի փշրեսցէ »։ Եւ այն իսկ են զարմանք, որ զայնչափ ուղղութիւնս՝ այնչափ Հանդարտութեամբ կատարեաց, և ոչ ուժեք եղև տաղտկալի՝ որ այնչափ ծանրագոյնս և խիստ կրօնս քարոզեաց, և ոչ տաղտկացաւ և ոչ զերեսս դարձոյց։ Տես, որպիսի ինչ է զօրութիւնն Հեզութեան։ Եւ ուր կա-

տարեցաւ այս. առ Հրեայս. զի նոքա իսկ էին եղէգն
ջաղջախեալ. ոչ լաւ ինչ պատերազմունք և կոտո-
րած եւթ դարձին գործեցան, մինչև ձորք անգամ
արեամբ լնուին, և մարմինք անկելոց զլերինս ծած-
կէին: Ս.յլ հաստատութիւն և անշարժութիւն կրօնից
յայնժամ լինի, յորժամ ոչ բռնութեամբ և ոչ սաստիւ
և ոչ ծանրատաղտուկ ի մարդկան վարս մտանիցէ
ինչ հրաման. յայնժամ յարդարին կարգք, յորժամ
ոչ հակառակութեամբ ինչ լինիցի:

« Եւ զպատրոյկն ծխեալ մի՛ շիջուսցէ »: Իսկ այլ
Թարգմանքն ասեն. Զպատրոյկն առակայծեալ մի՛ շի-
ջուսցէ. զոր ոմանք յօրէնս առակեցին, և զեղէգն ի
ժողովուրդն: « Ս.յլ հանցէ ի ձշմարտութիւն »: Զինչ
իցէ ձշմարտութիւն [1]. զի յայտնեսցէ զմարդկան ստու-
թիւն, եթէ ոչ ինչ ունի ձշմարտութիւն, այլ թէ
ամենայն կարեօք և ընդունայնութեամբ լի է. զի
յառաջ քան զայն ժամանակ ոչ ինչ ոք ի ձշմարտու-
թիւն փութայր, այլ ամենեքեան հարեալ հատեալ
էին ի ստութեական և կերազական իրս: Ս.յլ մարթի
իմանալ և զայլ իմն դատաստանացն և զվերիժուց. ըստ
այնմ, եթէ Ս.յժմ դատաստան է աշխարհիս, այժմ
իշխան աշխարհիս [2] այսորիկ ընկեսցի արտաքս. և ես
քարձրացայց: Սակայն մեծ ժողովն, քանզի ինքն կա-
մեցաւ Սուտաւածն. զի եթէ իւր չէր կամեցեալ, ոչ ոք
լինէր նմա ասոյթ. որպէս ոմն ասէ զբանն իմաստուն,
եթէ Ո՞վ ասիցէ ցնա, եթէ զինչ գործեցեր: Բայց
սակայն թէպէտ և այնպէս ի վեր էր քան զամենայն,
հեզութեամբ տայ պատասխանի, և իրաւունս՝ ոչ մեզ
միայն, այլ դիւին իսկ ջարի, զի մի՛ ոք ասիցէ եթէ
անիրաւ ինչ դատապարտեցաւ. քանզի իրաւամբք
առնէր ընդ իւրև մահ զմարդիկ, զի մեղանչէին, և
իբրև զպատժապարտս բռնադատեալ կորզէր զնոսա
յինքն: Իսկ Փիլիտոս ինքն իսկ. Ս.յժմ դատաստան է
աշխարհիս. այսինքն՝ վերիժութիւն մարդկեղէն
բնութեանս: Գրեսջիր թէ զայլսն ամենեսեան ունէիր
իբրև զպատժապարտս մեղաց, յՍուտուծոյ յորդին

1 Ցօր. Զինչ էիցէ ձշմարտութիւնն, յօտար գրէ:
2 Ցօր. Ս.յժմ էվան աշխարհիս, յօտար գրէ:

զնաթրդ իշխեցեր ժտել. Որ զմեղս ոչ արար, և ոչ գտաւ
նենգութիւն ի բերան նորա. զնաթրդ գրգռեցեր ար-
կանել զնա ընդ պատժովք, ուր բանսարկուդ: Եւ զի
նա գրգռեաց, լաւ այնմ՝ որ ասէր, եթէ Սատանայի
խակ արկեալ էր ի սիրտն Յուդայի: Նա կազմեաց զմե-
քենայս, նոյն գործեաց զոճիրսն՝ զի սպանանել մտա-
բերիցեն զօձեաղն Սուտաւած: Զի եթէ բանս պա-
հանջիցիս և հարցանիցիս, ուր բանսարկուդ, եթէ ըն-
դէր սպաներ, զինչ ինչ յանցանս գտեր ի նմա, դա-
տապարտելոց ես և վերժս պահանջելոց, և զայլսն ևս
ամենեսին ի դուրս տայցես: Սրդ վերժխնդրութիւն
եղև աշխարհի, քանզի անպարտն իբրև զպատժա-
պարտ մեռաւ, զի զայլ՝ որ ըստ պատժոցն մեռեալ
էին՝ կենդանացուսցէ:

« Ս.յլ հանցէ ի ձշմարտութիւն զդատաստան »:
Ոչ վայրապար և ոչ դոյզն ինչ իրաց վասն՝ եբեր
ի մէջ զձառ դատաստանին, այլ բարիւք ասաց եթէ
ի ձշմարտութիւն հանցէ. քանզի մարդկան դատա-
ստան ոչ երբեք ձշմարտութեամբ վճարի, ոչ միայն առ
ի զերաւունն կորուսանելոյ, այլ թէպէտ և ազատ ի
կաշառոց և ի պատարագաց իցէ և ի ցասմանէ և ի
թշնամութենէ, բազում անգամ ինքն իսկ բնութիւնն
տկարանայ արդ՝ զարժան իրացն գտանել, կամ թէ ի
վերայ իրաց ինչ չհասանիցէ, կամ թէ վկայք արդարք
ի միջի չգտանիցին. այլ այն միայն դատաստան ձշմա-
րիտ է՝ յորում և զծածուկս մտաց մերոց գիտէ Սու-
տուածն, որ զամենայն արդարութեամբ քննէ. յորժամ
զամենայն ձշմարտութեամբ գիտիցէ, և ոչ ըստ կարեաց
ինչ, կամ առ թշնամութեան, կամ առ ի չնորհել ինչ
ումեք զվճիռն տայցէ. այլ այնպիսի ինչ ձշմարտութիւն
է ի դատաստանին, զի ինքեանք իսկ ջնասակարքն և
պատժապարտք անձամբ անձանց տայցեն զվճիռն:
Զինչ ինչ ձշմարտագոյն կայցէ քան զայնպիսի ատեան.
և դուք ձեզէն իսկ գիտեք ամենեքին՝ զի ոչ ոք ի
ջնասակարաց անձամբ յօժարէ խոստովանել զջնաս,
այլ ջանայ ծածկել զյանցանս. իսկ յայնմ դատա-
ստանի ոչ այնպիսի ինչ, այլ ինքեանք անձամբ անձանց
տան զվճիռն: Նա և աստէն իսկ գործեցան երբեմն
այսպիսի իրք առ Դաւթաւ. Ես, ասէ, հօվիւս մեղայ,

և ես չարչարեցի. դոքա խաչեդ զի արարին: Եւ զի մի
ասիցես եթէ ՚ի պատժոյն բռնադատեցաւ այսպիսի
բանս խօսել, որպէս ոքք տանջէին, և զանձանց ինչ
ինաս ոչ գիտացին, այլ գանին գատոյս [1] բերեալ, առ-
նիցեն զանձինս ինասակարս: Ոչ այսպիսի ինչ և ար-
գարն, այլ միոյ այլք ՚ի պատիժս էին, և նա արտաքոյ
տանջանացն՝ յանձն ձգէր զպատուհասն՝ ասելովն, եթէ
Ես հովիւս մեղայ: Եւ կային ասէր, եթէ Մեծ է
ինաս իմ՝քան զթողութիւն. և զայն միոյէն ընդ պատ-
ժոյք մտեալ էր: Եւ Ադամ թաքեաւ, զի թաքչէլովն
յայտ առնիցէ զանցանսն: Կամի՞ս և ՚ի գեհենի այս-
պիսի ինչ տեսանել. յորժամ լուաւ մեծատունն, եթէ
Դու ընկալար զբարութիւնս, ոչ դիմադարձեաց, և
ոչ իրաւունս ինչ կամեցաւ ցուցանել: Եւ միոք ասիցէ,
եթէ զայն՝ ահ գատաւորին առնէր, զի տեսանէիք
զայլս՝ որ ընդդէմ դարձան և ըմբերանեցան: Ոչ ինքն
իսկ գատաւորն անդ մեծ էր. զի յորժամ վասն միոյ
տաղանդի պատուհասէր, տեսցուք, զինչ տացէ պա-
տասխանի. Գիտեի, ասէ, եթէ այր մի խիստ ես: Ո՛վ
հեզութիւն և հանդարտութիւն գատաւորին, որպի-
սի բանից տանէր. Գիտեի, ասէ, եթէ այր մի խիստ
ես: Զորպիսի՞ oք գատաւոր զայրացուցանիցեն այս-
պիսի բանք. այլ զնա միայն: Եւ այլոյր իբրև իրաւունս
տալով, թէ ժողովուրդ իմ, զի արարի քեզ, կամ զի
տրտմեցուցի զքեզ, տուր ինձ պատասխանի. և այլոյր
ոչ զմեծատոր ինչ իրաց, այլ զանցելոց տայ զիրաւունս:
Զինչ գտին, ասէ, յիս յանցանք հարքն ձեր: Եւ Յով-
նանայ ՚ի մեղադիր լինել յիրաւի, եթէ Դու խնայեցեր
՚ի գղձնիդ, յոր ոչ վաստակեցեր, և ես ոչ խնայիցեմ
՚ի Նինուէ քաղաք մեծ, յորում բնակեալ են աւելի
քան զերկոտասան բիւր: Տեսանէ՞ս, զի ամենայն ուրեք
իրաւունս տայ մեզ. նա և սատանայի ևս արժանի առնէ
իրաւունս տալ. Հայեցարո, ասէ, ՚ի ծառայ իմ Յոբ. զի
ոչ գոյ ըստ նմա մարդ արդար, ճշմարիտ, աստուածա-
պաշտ: Այլ տեսցուք և առ այնս՝ զոր ՚ի գեհենն հրա-
մայէ. և անդ յառաջ իրաւունս տայ, և ապա ՚ի տան-
ջանսն հրամայէ. զի յորժամ չունկնդրին ինչ տալ պա-

1 Այսինքն յօրինակին. յօտար գրէ ՚ի վերայ եզեալ գոպոյս:

տասխանի, ապա առաքիցէ ՚ի տանջանս. որպէս որ
ջհանդերձս աղտեղիս ունէր, և որք ոչն կերակրեցին
զնա, և որ այլ ևս այսպիսիք ոք գտանիցին: Եւ ոչ վայ-
րապար, այլ յորժամ ամենայն աշխարհք ՚ի մի վայր
ժողովեալ իցեն, յայնմ ժամանակի ատեան առնէ, և
մեծաւ հեզութեամբ տայ իրաւունս տանջանաւո-
րացն, եթէ յիրաւի ըստ իւրաքանչիւր յանցանաց
տանջելոց են:

« Ծագեսցէ և մի շինջի »: Զի խաչն այսպէս իմն
կարծէր եթէ խափանիչ լինելոց իցէ քարոզութեանն.
բարիոք ասաց եթէ ծագեսցէ, որ առ ժամանակ մի
կարծեցաւ եթէ շինջանելոց իցէ, և նոյն մեծապայծառ
ծագեաց:

« Մինչև դիցէ յերկրի զգատաստանն. և յանուն
նորա հեթանոսք յուսասցին »: Տեսանե՞ս զհանդերձեալ դատաստանին չահ. զի յորժամ ձառք հանդերձեալ դատաստանին յերկիր ձառեցան, ոչ օրէնք թա-
գաւորաց կարացին յաղթել և ոչ սպառնալիք գա-
տաւորաց. ոչ քերանք և ոչ տանջանք, ոչ մահ, ոչ
այլ ինչ խորամանկութիւնք, այլ խրատ միայն և յո-
ժարութիւն կարգեցին ընդ ամենայն աշխարհ ուղիղ
օրէնս: Զի թէպէտ և կռապաշտք իցեն և վայելչացեն
այսպիսի օրինօք, քրիստոնէից ունիցին չնորհ, եթէ ոչ
վասն կրօնից՝ որ զԱստուած ծանուցանիցեն, սակայն
վասն բարիոքն օրինաց. զի զչար վարս նոցա ՚ի լաւու-
թիւն դարձուցին, և սրբեցին զերկիր յայնպիսի չա-
րեաց. և թէպէտ ՚ի բաց առ զքրիստոնէութիւն, և
անդէն եղծանես զյօրինեալ խաղաղութիւնն: Ո՞րչափ
ինչ յոռութիւնք խափանեցան. և զայն մի ասեր, եթէ
ընդէ՞ր իսկ ոչ բնաբարձ եղեն չարիքն. այլ յայն հա-
յեաց, եթէ ոչ սատկութիւն, և ոչ բանութիւն զի-
ջաւ. որչափ չնութիւնք անհնարինք արգելան. յորպի-
սի անմոլորութեան էին յառաջ քան զայն ժամանակ,
յորպիսի աղետս. և զայն ոչ ասեմ, եթէ ՚ի գրոց ինչ
ուսանիցիս, այլ անդստին ՚ի վկայասանացն՝ որ զառաս-
պելն դրէին. որչափ սովք և սուրք և սատանութիւնք.
և զգողութիւնս պարծանս համարէին. և այն աւելի
խնդրէր՝ եթէ միայն գող ոք իցէ, և ոչ ինչ էին նա-
խատինք. յորժամ և զէերմեսեայ ևս զանուանուցն ՚ի

դիս լսիցես՝ եթէ գող էր, և Աստղիկ պոռնիկ. և այժմ և տօնքն ևս վկայեն՝ որ կատարին վասն նոցա, յորոց ա- նուն յայսօր ժամանակի երգեցիկքն ընարեալք պատ- րաստին: Իսկ առ մեզ ոչ այսպիսի ինչ. այլ նմին հակառակ՝ ոչ միայն զԱստուածոյ, փարգաստք, այլ և ոչ սիրելեաց Աստուծոյ այսպիսի ինչ համբաւք համ- բաւէին: Ապա եթէ կամիցիս ուսանել, թէ որպիսի՛ ինչ արամբուր աղաեղութեանց յառաջնովք կայր, ըզ- կռապաշտս հարց, և՛ի նոցանէն տեղեկանաս: Եւ այժմ իսկ մոգք, գևք և մոլիք համարձակեալք՛ի մէջ կռապաշտից, ՛ի Տաճիկս և՛ի Պարսս. վասն այնորիկ եթող սակաւ մնացորդս հեթանոսութեան խմորոյն, զի յամօթ պաշտօնէիցն միայն լինիցի: Եւ այժմն իսկ ՛ի տօնսն կապերտակս իմն զերեսօքն պատեն, և փա- դանս՛ի բերան՝ առ մոլութեանն. և զշան անգամ միս անխաիր ուտեն. և յորժամ հասանէ գևն՛ի մոլին, զգեստն զարկուցանէ, հերարձակ առնէ. զչըրս և զչէաղս տայ խօսել: Այլ առ մեզ ոչ այսպիսի ինչ, քաւ լիցի. քանզի հեթանոսաց են լկտութիւնք. և զի ևս զայս ասիցեմ, ուր և զարս՛ի կանանց կերպարանս նմա- նեցուցեալ՝ ածեն շուրջ խայտառակեալ ընդ քաղաքն ամենայն. զինչ ինչ այլ կայցէ քան զայն ծանականս ծանականագոյն: Տեա զչար գևն. թէպէտ և՛ի բնէն անկաւ, սակայն զնշմարանս չարեացն ջնաց պարհել մինչև ցայսօր ժամանակի. զի այնչափ սաստկացեալ էր յառաջին ժամանակն մոլորութիւնն, զի և զմար- դիկ՛ի կերպարանս շանց կարծեցուցանէին գարձու- ցանել, և զբանն և զբարբառ շրջէին. և եթէ չհա- ւատայես, ասէին, թէ չիցէ շուն՛ի ձայնէդ, հաւա- տա և կերակրոյն զոր ուտէ. զձայն շան թերևս ջանայ- ցէ զբ ածել, այլ զնոյն կերակուր զիարդ զբ ախորժի- ցէ: Եւ մոլորելոյն այնպէս թուէր, եթէ զբնութիւնն իսկ գարձուցանիցեն կախարդքն. և զայն ոչ առնուին ՛ի միտ, եթէ գև լիմն այնպիսի նստեալ՛ի վերայ մար- դոյն՝ որ զկերպարանս շան ցուցանէր և զնոյն բար- բառ ածէր, և զնոյն կերակուրս ծախէր կերպարա- նօք: Եւ զայն ամենայն համարձակութիւն խափա- նեաց Աստուածն մեր. և յայնժամ կատարեցաւ, եթէ « Յանուն նորա հեթանոսք յուսասցին », այսինքն՛ի

Քրիստոսի: Տեսանէս, արդէս և առ կռապաշտն նմա- նագոյն եղիցի իրքն. զի այնմ՝ որ այնպիսի վարս չնոր- հեաց մեզ, զիարդ ոչ հաւատայցեմք:

Զինչ իցէ, եթէ « Յանուն նորա յուսասցին »: Յայնժամ անուն նորա այնպիսի ինչ առնիցէ՝ որպէս ինքն իսկ արար. յորժամ կոչեցես զՔրիստոս, և դևք հալածական լինիցին, զիարդ ոչ հաւատայցես յա- նուն նորա. և ոչ զի արդ միայն ցուցանէ զօրութիւնս՝ պարտ իցէ հաւատալ, այլ զի այլոց անմահական կենաց ետ առհաւատչեայ՝ որովք ասէն եցոյց ինչ՛ի մեզ զօ- րութիւնս:

« Ասյսպէս ասէ Տէր Աստուած, որ արար զերկինս և մածոյց զնա »: Իսկ այլքն ասեն, թէ Որ հաստա- տէ կամարս. Սիմաքոս ասէ, եթէ Որ հաստատեացն: Եւ զինչ իցէ՝ որ մածոյցն. լցեր ինչ զնութիւնս ինչ արդեաք պնդեաց. այլ այնպէս իմն Թուի նմանագոյն. զի գոգեացն՛ի վերուստ վասն լցեր ջրոցն, զի մի՛ի խոնարհ սահիցեն. քանզի յոյժ անօսր իմն և բարակ են իբրև զծուխ, և Թանձրացոյց արար սերտ: Եւ գար- ձեալ մածոյցն՝ այդպէս իմն Թուի Թէ ընդ երկիրս կցեաց, զի մի՛ շրջիցի և անկանիցի. և որ ինչ պնդի՝ ընդ իմիք պնդի. և յայտ յաստեղոց անտի է. և այ- սու ոչ եթէ զբոլորակութիւն ինչ յայտ առնէ, և ոչ զգնդաձև ինչ կերպարանս:

« Որ հաստատեաց զերկիր և զամենայն ինչ որ՛ի նմա իցէ »: Եւ զիարդ անօսր ինչ բնութիւն կարիցէ հանդարտել այսպիսի ծանրութեան լերանց մեծամե- ծաց և բարձանց. զիարդ ոչ լուծանիցէ, զի յամենայն ժամ ընդ ջուր կոծի. կամ զիարդ ոչ այրիցի, զի միշտ ՛ի բոցոյ բորբոքի. այլ իբրև զվէմ մի հաստատուն եղև նա, և աւելի ևս քան զվէմ ինչ. այն իսկ է, Թէ « Որ հաստատեաց զնա և զամենայն ինչ՝ որ՛ի նմա է »: Նախ զմարդիկ իսկ, զի գիտասցես եթէ Աստուածոյ ունին զօրութիւն. զի եթէ ոչ վերին տեսչութիւնն ունէր, ՛ի վաղուց իսկ հետէ եղծեալ էին ազգք մարդկան: Անչափ վիշտք, անչափ տառապանք. վասն այնորիկ իսկ ասէ մարգարէն, եթէ Օգնութիւն ինձ՛ի Տեառնէ. անչափ հոգք, անչափ տատամսութիւնք, անչափ տըրտ- մութիւնք, անչափ նաւաբեկութիւնք. զի եթէ և

մարմինն չեղծաներ, սակայն չունչն Թուխեր գնայր՝ առ չժուժալ ծանրութեան հոգւոյ և տրտմութեան. որ-չափ տրտմութիւնք և աղէտք, և ոչ Թողու և գնայ: Եւ բազում անգամ Թողու և գնայ, զի գիտասցես՝ եթէ յորժամն ոչն Թողու և գնայ՝ Աստուծոյ զօրութեան է գործ: Երթևեցուք և առ անասունս. որչափ վիշտք, որչափ ցաւք և [1] վաստակք, և ոչ լուծանին. վասն որոյ և Պաւղոս ասէ, եթէ Սուտ այս ոմն իցէ բանական. և դարձեալ, եթէ Որ մխիթարէն զմեզ յամենայն նեղութիւնս: Զի թէ ոչ՝ի վերին օգնականութենէն վայելեաք, չէր ինչ բանական ամենայն իսկ տևելն և բանել:

« Տայ չունչ ժողովրդեանն, և ոգի՝ որոյ կոխիցեն գնա»: Ահա և այլ իմն. գարմանիչ է ոգւոյն. այսինքն Աստուծոյ տեսչութիւնքն՝ որ ունին պինդ և պահեն: Զի և մարմինք ընչաւորք են, և են որ անշունչք. յորժամ տեսանիցես գեղեցիկ և տեսական զմարմինն երկնից, մի ընչական կարծիցես, որպէս Յունաց առասպելքն դանդաչեն, եթէ որ ինչ է և կայ և տևէ, առանց ընչոյ չէ. նոյնպէս յորժամ վերկիր տեսանիցես, մի ինչ ընչաւոր համարիցիս վասն կալոյն և տևականութեան. նոյնպէս և զջուրս: Ահա աւասիկ երկին և երկիր, մին կոխ և միւսն կոխի, մին ընչաւոր և միւսն անշունչ. զի ոգի՝ մարդկան ետ, և ոչ երկնի և երկրի և ջրոց. և անասնոյ՝ չունչք և զգայականք, և ոչ խոհականականք. և յայսմ է, եթէ ընչոյն խոհականոյ և զգայականաց նա է արարիչ: Եւ մարդկան ոչ եթէ այլ ինչ չունչն իցէ և այլ ինչ հոգին. թէպէտ և երկու անուանք ասին, այլ մի ինչ իրս ընծայեցուցանեն, որպէս մարմին և միս՝ զի նոյն են, կամ մարդ և խոհականաւոր:

« Ես Տէր Աստուած»: Տեսանե՞ս, զի ոչ ինչ պարկեշտագոյն և ձշմարտագոյն է Աստուծոյ քան զՏէրն անուն: « Կոչեցի զքեզ յարդարութիւն»: Այսինքն զՈրդի. քանզի ոչ այլ ոք կոչեցաւ յարդարութիւն լինել ազգիս մարդկան: « Կալայց զձեռանէ քումմէ նել ազգիս մարդկան: « Կալայց զձեռանէ քումմէ և զօրացուցից զքեզ»: Դարձեալ և ասէ՝ի մարմնաւորութիւնն Որդւոյ չըլէ զբանս. և ոչ ինչ հրաժարեմ ասել զայս:

« Եւտու քեզ, ասէ, յուխտ ազգաց և՝ի լոյս հեթանոսաց»: Իսկ այլքն ասեն, Թէ ի դաշն: Եւ զինչ իցէ դաշն, և կամ ի՞նչ իւիք. այլ զի զօրէնսն ընուցու: « Եւ՝ի լոյս հեթանոսաց»: Տեսանե՞ս, զի և հեթանոսք մարգարէիւքն կոչեցան: « Բանալ զաչս կուրաց»: Եւ աստ երկու պէտք են, և լուսոյ և աչաց ողջութեան. և զերկոսին ինքն կատարէ. որպէս կուրին՝ զի զինքն եցոյց, և զաչս եբաց. և ասէ. Դու հաւատաս յՈրդի Աստուծոյ: Ո՞վ իցէ, ասէ, զի հաւատացից՝ի նա. և յայտնեաց և ոչ Թաքոյց, եթէ Ես եմ: Եւ ցանգամանայծն, Թէ Ահաւասիկ ողջացար, այլ մի՛ ևս մեղանչիցես, զի մի՛ չար ևս ինչ լինիցի քեզ:

« Հանել զկապեալս՝ի բանդէ»: Եւ այն դատաւորի էր՝ որ զայնչափ ժամանակս կապեալ էին: « Ազձակել՝ի բանդէ՝ որք նստէին՝ի խաւարի»: Դարձեալ զկռօցն մխրութիւն յանդիմանէ. զի այնպիսի կապանօք կապեաց սատանայ զբնութիւն մարդկան. տալածեաց զամբն խաբէութեան զերեսօք, մեծացոյց միգովքն ապշութեան. ըստ այնմ, եթէ Ընդ այնացան՝ի խորհուրդս իւրեանց, և խաւարեցան անմտութեամբ սիրտք նոցա: Տեսե՞ր զպատճառս խաւարին. հրաժարեա՝ի նմանելոյ խաւարելոցն, զի՝ի մտաց, ասէ, ծնանի այնպիսի խաւար: Եւ գրեսջիր, եթէ նոցա մտաց. իսկ Հրեից ուստի՞ արդեւք. յայնմանէ՝ զի Չիւրեանց արգարութիւնն խնդրեն կացուցանել. քանզի Աստուծոյ արդարութեան ոչ հնազանդեցան: Իւրաքանչիւր ոք յընկերէ չկամի ուսանել, այլ ինքն լինել վարդապետ. ամաչէ յընկերէն ինչ առնուլ, վասն այնորիկ և ունի ինչ ոչ: Զայնպիսի ախտ և Հրեայք և հեթանոսք ախտացան. իւրաքանչիւր ոք գտակ կրօնից կամեցան լինել. և այնպէս կամեցան, և զի ոչ կանգուն անգամ կարէին կալ, այլ կծկեալ կաշկանդեալք նստէին յերկրի, իբրև յանհնարին բանդի ուրեք:

« Ես եմ Տէր Աստուած. այս է անուն իմ»: Իսկ և Որդւոյն յորժամ նոյն անուն կոչիցի, ոչ ապաքէն ձշմարտութեամբ Տէր իցէ. Մի է, ասէ, Տէր Յիսուս Քրիստոս: Եւ տէս, զիարդ նախ զՏէրն անուն գնէ.

1 Յօր. Յաւէ՛ յոտոր գրէ:

իսկ ՚ի մերում միջի թէպէտ և կոչեսցին տեառք, սի-
տականութեամբ կոչին. իսկ Աստուծոյ բնութեամբ է
Տէրն անուն, քանզի և է իսկ Տէր: « Չփառս իմ, ասէ,
այլում ոչ տաց »: Այսինքն՝ հանից ՚ի կռոցն զիմ ա-
նունս: Եւ այս Հնմարտութեամբ ՚ի Քրիստոսի գալըս-
տեանն կատարեցաւ. զի ոչ ևս ոք անուանէ զանուն
կռոց, այլ զանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի: Դար-
ձեալ այլազգ ևս, թէ զմարդկանէ ասիցէ. զի փառք
Աստուծոյ՝ մարդիկ են. ըստ այնմ որ Աւաքեաքն ասի-
ցէ, եթէ Այր ոչ պիտի ծածկել զգլուխ իւր, զի
պատկեր և փառք Աստուծոյ է. որպէս ստեղծ՝ զի ու-
րուք պատկերն իցէ, նոյնպէս և Աստուծոյ՝ մարդ:
Զանդրիդ, ասէ, զամենազարդ, զամենակազմ, զոյատ-
շաձևական, զգեղեցկայօդ զգործս ձեռաց իմոց՝ ոչ տաց
դիւաց: Տեսանէս, որչափ լինչ կարևոր էր գալուստն
Քրիստոսի:

« Զի որ լինչ ՚ի սկզբանէն էին, ահա աւասիկ եկին
հասին. և զնորս պատմեցից. և մինչչև պատմեալ
էր՝ գուշակեցաւ ձեզ »: Զհնոյն ասէ եթէ ՚ի գլուխ
եկին օրինքն. ապա ուրեմն ժամանակ էր նորոյս կտա-
կարանաց, որք պատմիցեն և հաւատարիմ առնիցեն
զհանդերձեալսն. որպէս առաջինն կատարեցաւ, նոյն-
պէս և երկրորդիս պարտ էր կատարել: Զի և երկրոր-
դին ևս մնալ լինիցի՝ բազում լինչ ասացաւ ՚ի հնումն
և վճարեցաւ, զպատերազմաց, զուղղութեանց, և այլ
լինչ ըստ մարգարէութեանց: Զլինիցի, ասէ, անձրև.
և ոչ եղև: Զգաւակ քո, ասէ, ընտրեցից, և կալցի զեր-
կիրդ. և եղև. և դարձեալ, եթէ Այհատասիկ ծառա-
յեցուսցեն և չարչարեսցեն զնոսա ամն չորեքհարիւր.
և եղև. և դարձեալ, թէ Եղիցի լինձ ժողովուրդ սեպ-
հական ՚ի Թագաւորութիւն, ՚ի քահանայութիւն:
Եւ բազում լինչ է՝ զոր ասացաք և զոր ասասցուք. ո-
րովք [1] յայտնի լիցին թէ անգստին ՚ի քնէ ուներ
սկիզբն նորս:

« Օրհնեցէք զԱստուած յօրհնութիւն նոր»: Այլքն
ասեն. Երգեցէք: « Զի Իշխանութիւն նորա ՚ի բար-

1 Յօր. Որով՝ յոմար գրչէ:

ձունս փառաւորի, անուն նորա ՚ի ծագաց երկրէ »: Եւ
զինչ իցէ նոր օրհնութիւն. ոչ ըստ բնութեանց լինչ
հնոցն, և ոչ ըստ օրինականացն, այլ և Հոգւովն սրբով:
Քանզի չնորհականքն ամենայն նորք էն, և առաքի-
նութիւն նոր, նոյնպէս և օրհնութեանն պարտ էր
նոր լինել: զի ոչ եթէ Աստուած այնու առաւել պա-
տուիցի, քանզի անկարօտ իսկ է Աստուածականն. այլ
զի պատուիչքն՝ այնու լիմն յոլովագոյն [1] կարիցեն մեր-
ձենալ առ Աստուած, ըստ առաքինութեանն վարուց.
վասն որոյ և ասէ իսկ, եթէ Եւ Հայր զայնպիսի երկրը
պագուս խնդրէ, որք Հոգւովն և Ճշմարտութեամբ
երկիր պագանիցեն նմա:

« Իշխանութիւն նորա ՚ի բարձունս »: Զի մի կար-
ծիցէ ոք եթէ կարօտական ոք իցէ, ասէ. « Աքքայու-
թիւն նորա ՚ի բարձունս փառաւորի »: Զէր լինչ կա-
րօտ ձերովքդ, նա և ոչ հրեշտակացն զօրութեանց
փառաւորութեամբք. զի և յառաջ քան զլինել նոցա՝
չէր իւիք կարօտ. քանզի և նոքա աղաղակէին. Սուրբ,
սուրբ, սուրբ. այլքն, թէ փառք ՚ի բարձունս Աստու-
ծոյ, և յերկիր խաղաղութիւն. և քրօբէքն մեծաձայն
բարբառովք, եթէ Օրհնեալ են փառքն Տեառն ՚ի
տեղւոջէ իւրմէ: Եւ բազում և այլ լինչ լսեմք բար-
բառս փառաւորութեանց, եթէ Օրհնեցէք զնա հրեշ-
տակք և հրեշտակապետք. այլ ոչ եթէ այնու լինչ
կարօտ իցէ: Եւ բարիոք ասաց, եթէ « Իշխանութիւն
նորա ՚ի բարձունս »: Եւ գնաւ թէ կամիցի՞ս իսկ զԱս-
տուծոյ Թագաւորութիւնն տեսանել. բայց մտօքդ
զերկինս, և անդ հայեցեալ տեսանիցես բիւրս բիւրս
հրեշտակաց, հազարս հազարաց հրեշտակապետաց,
զբրովքէս մծտակացս, զքրովքէս նուաւս, զաթոռն
հրեղէն, զամենեսին սարսեալս և զարհուրեալս: Իսկ
այսր ոչ միայն վասն նուաստութեան բնութեանս չերևի
իշխանութիւն նորա, և ոչ վասն զի բազում վայրք ՚ի
միջի իցեն ընդ հրեշտակս և ընդ մարդիկ, այլ սոքա
զի ոչ են բաւական կալ ՚ի պաշտաման իբրև զայն
զարմանալի բնութիւնս: Զոր օրինակ յորժամ այր
Թագաւոր երևիցի, զամենայն ռամիկն ահ և դողութիւն

1 Յօր. Ան որ ի՞ն յոլովագոյ:

ունի, ծրչափ ևս առաւել ահ վերին մեծութեանն. զի յորժամ յարքունական ապարանից ոք ՚ի դուրս մերձենայցէ, անդ մահ և սաստ տեսանիցէ, և զամենեսեան ՚ի սպասս արքունականս. նոյնպէս և որ անդ զօրքն իցեն. զի որ յերկիրս են, բազում ինչ խափանէ զնոսա յայնպիսի սպասաւորութենէ [1]. իսկ երկնաւորացն ոչ այլ ինչ գործ է, բայց միայն հանապազ փառաւորել զԱստուած, և ՚ի նա ևեթ հայել. ըստ այնմ, եթէ Մի՛ արհամարհիցէք զմի ՚ի փոքրկանց, զի և հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս Հօր իմոյ՝ որ յերկինս է: Որպէս և Քրիստոսի իսկ՝ հրեշտակքն կային ՚ի սպասու. Եկին, ասէ, հրեշտակքն և պաշտէին զնա: Մի՛ ընդ այն ևեթ հայիցես, զի ապտակեցաւ և տանջեցաւ, այլ և զայն ևս ՚ի մտի ունիցիս՝ զոր ասէրն, եթէ թագաւորութիւն ոչ է յայսմ աշխարհի: Տե՛ս, զնարդ միաբան է բարբառս ընդ մարգարէին՝ որ ասէր, եթէ « Իշխանութիւն նորա ՚ի բարձունս »: Զոյն ասէր և Նաբուգոդոնոսոր, եթէ Աքքայութիւն նորա՝ աքքայութիւն յաւիտենից, և իշխանութիւն նորա յերկինս, և զոր ինչ կամի՝ առնէ յերկինս և յերկրի: Եւ յԱւետարանի, եթէ Հայր մեր, որ յերկինսդ ես, փառաւորեսցի անուն քո. եկեսցէ աքքայութիւն քո, եղիցին կամք քո՝ որպէս յերկինս՝ և յերկրի:

« Իշխանութիւն նորա ՚ի բարձունս փառաւորի. անուն նորա ՚ի ծագաց երկրի »: Նոքա առաւել զոհանան և երկնչին յԱստուածոյ քան զմարդիկ. որպէս և աւելագոյնն գիտեն, նոյնպէս աւելագոյնն երկնչին. չիք անսաստութիւն և ոչ անհնազանդութիւն կամ ծուլութիւն. քանզի Հզօրք են զօրութեամբ և առնեն զբան նորա: Տեսանե՛ս զի նոքա առաւել երկընչին. և նոքա՝ որ ընդ պատժօք ինչ ոչ են՝ այնչափ երկընչին, և սրօքէքն և հայել անգամ ոչ իշխեն, մեք զիա՞րդ իցէ զի քննիցեմք. զոր օրինակ աստ որչափ զմեզ մեծ ունիցի ՚ի Ճառագայթս արեգական, նոյնչափ կամիմք ՚ի բաց փախչել, նոյնպէս ո՛րչափ մեծ տեսանիցեմք զՔրիստոս՝ և քաջ պարտիմք երկնչել: Տե-

1 Ցօր. Սպասաւքն:

սանե՛ս, զնարդ փառաւորեցաւ ՚ի լերին անդ, և թաղացան անկան աշակերտքն յահէն: Եւ մարգարէքն բազում անգամ ստունգանէին, իսկ հրեշտակք և ոչ երբեք. և ուստի՞ արդեօք ՚ի բազում ահէ՝ որ անկանի զնոքօք: « Փառաւորի անուն նորա ՚ի ծագաց երկրի. այսու և մարգարէնայ իսկ՝ որ ինչ լինելոց է ընդ ամենայն երկիր. ըստ այնմ, եթէ Ընդ ամենայն երկիր եւ բարբառ նոցա:

« Որ իջան ՚ի ծով նաւօք, կղզիք և բնակիչք նոցա»: Տեսանե՛ս, զի ընդ ամենայն տեղիս սփռեցաւ քարոզութիւնն: Ասէ Թեւդաս ասիցէ ոք, թէ որ ՚ի ցամաքին են, նոքա զրկեա՞լ ինչ իցեն. քանզի և Դաւիթ իսկ ասէ, եթէ Նոքա տեսին զգործս Տեառն և զքաջանչելիս նորա ՚ի խորս: Զիք ինչ ասել և ոչ պատճառս դնել. քանզի և նոցա բազում յորդորութիւնք են աստուածգիտութեան. բայց արդարև նոցա աւելի իմն պարտ է խրատել. քանզի ծովն ահագին աւելի իմն պարտի յորդորել զմիտս, զի հանապազ տեսանեն զալիս մրրիկս և սպառնացեալս, և միշտ զմահս և զստուերս նկատեն:

« Ուրախ լեգի անապատն և աւանք իւր, հանգրուանք և բնակիչքն Կեդարու»: Ոչ եթէ անապատքն և աւանք ինչ ուրախ լինիցին, այլ սովորութիւն է գրոց և անշնչականացն տալ աւետիս ուրախութեան, յորժամ բարութիւնս ինչ առնելոց իցէ Աստուած: « Տէր Աստուած զօրութեանց ելցէ և խորտակեսցէ զպատեբազմն, զարթուսցէ զնախանձ իւր, գոչեսցէ ՚ի վերայ թշնամեաց իւրոց խպաւ »: Այսինքն վասն իւրոյ սիրոյ եւ յայց և արար գարձ ժողովրդեանն, և ոչ վասն փրկելոյն ինչ արժանաւորութեան:

« Լուռ եղայ յաւիտենից. միթէ միշտ լռիցեմ և անսայցեմ: Թէպէտ և համբերեի իբրև զծննդականն, յայտնեցից, զարմացուցից և ցամաքեցուցից միանգամայն. եղից զգետս ՚ի կղզիս, և զծովս ցամաքեցուցից»: Ակիլաս և Սիմաքոս ասեն. Ջնաւահանգիստն ցամաքեցուցից: Տեսանե՛ս, զնարդ յայտ առնէ եթէ ոչ այն կամք են, զի տանջիցէ զամենեսին. այնպիսի վիշտս վշտանայմ, ասէ, որպէս որք ծնանիցինն՝ վշտանայցեն. իբր ոչ եթէ Աստուծոյ վշտանալ մարթ ինչ իցէ. ճն

անդը, քաւ լիցի. այլ զայն կամի ցուցանել եթէ ոչ կամի պատժել և ընդ վայր հարկանել զմարդիկ:

« Եդից զգետս յանապատս, և զխաղս ցամաքեցուցից »: Ս.յսինքն զբարութիւնս ի միջոց բարձից, կամ զթշնամեացն զբռնութիւնս: Եւ եթէ զնոսա վատթարեցից, և զձեզ հանից տանել յերկիրն ձեր: « Եւ ածից զկոյրսն ընդ ճանապարհ՝ զոր ոչ գիտիցեն »: Տեսանե՞ս զմեծագոր զօրութիւնն. զի զնեղիչսն հարկանէ և զնոսա հանէ ի դիւրութիւն. որպէս եղև իսկ ի դարձին: Ս.յլ ևս նմանագոյն առ հեթանոսս կատարի. « Ածից զկոյրսն ի ճանապարհ՝ զոր ոչ գիտիցեն ». և արդար իսկ ոչ գիտէին զճանապարհն. քանզի կուրացեալք էին: « Ս.յլ արարից, ասէ, զնոցա խաւարն՝ ի լոյս, և զկամակորն յուղիղս »: Դարձեալ այլ իմն զարմանալիք, զի խաւարն լոյս լինի, և տրտմութիւնքն հեշտականք: « Զայս պատգամս արարից նոցա, և ոչ թողից, և ոչ ընդ վայր հարից զնոսա, այլ և պարգևեցից և վերակացու եղէց և ապրեցուցից »: Ս.յլ յետառնելոց զայսպիսի պարգևս յՍտուածոյ, դարձեալ ապաստան ի նոյն ձեռն լինիցիմք, զի մի անդրէն յառաջինն չարիսն կործանիցիմք: « Եւ նոքա, ասէ, դարձան յետս »: Եւ ընդէ՞ր ի սկզբանէ իսկ ոչ. զի այլոց մուտ լինէր:

« Սմանէացին ամաչելով որ յուսացեալ էին ի կուռս »: Հանապազ իսկ, բայց առաւել յետ Քրիստոսի գալստեանն, որ յայտնեաց նոցա զյանդգնութիւնն: « Խուլք՝ լսարուք, և կոյրք՝ տեսէք »: Ա.րդարև խլութիւն և կուրութիւն ոչ մարմնոյ, այլ ոգւոյ. զի մարմնոյ խլութիւն ոչ ինչ կարի վնաս առնէ մեզ, այլ է ուրեք զի և զգաստութեան իսկ պատճառք լինի. ըստ այմմ, եթէ եղէ ես իբրև զմարդ՝ որ ոչ լսէ, և իբրև զՀամն՝ որ ոչ բանայ զբերան իւր. իսկ ոգւոյ խլութիւնն՝ հանապազ զրկէ ի բարեաց:

« Եւ ո՞վ իցէ խուլն՝ եթէ ոչ ծառայքն իմ, և կամ կոյրքն՝ եթէ ոչ որ տիրեն նոցա »: Եւ արդարև խուլք և կոյրք Հրեայք. Որ ունի, ասէ, ականջս՝ լսելով լուիցէ. և դարձեալ, եթէ Ջերոց երանի է աչացդ՝ որ տեսանեն, և ականջացդ՝ զի լսեն: Եւ յայտ է եթէ նոքա խլացան և ոչ լուան, կուրացան և ոչ տեսին. քանզի յարէ

իսկ ի նոյն, եթէ « Կուրացան ծառայքն Սստուածոյ »: Զի ոչ եթէ յայնմ ժամանակի միայն կուրացան, այլ անդուստ ի նմին կուրացեալք էին. քանզի և ասէ իսկ, եթէ « Տեսէք բազում անգամ, և ոչ զգուշացաք »: Մի եթէ միանգամա՞յն կամ երկի՞ցս. բազում անգամ տեսէք [1], և ոչ զգուշացարուք:

« Տէր Սստուածծ խորհեցաւ՝ զի մեծացուցանիցէք զօրհնութիւնն, և արդարանայցէք »: Զայն իսկ միշտ կամի Սստուածծ, այլ դուք ոչ կամեցարուք, այլ հակառակ նմին՝ յափշտակութիւնս և յագահութիւնս հայեիք: « Եւ եղև բանն յափշտակեալ և յաւար մատնեալ ». իսկ այլքն զժողովուրդն ասեն՝ փոխանակ բանին [2]: « Յամենայն շտեմարանս որոգայթս կազմեալ »: Եւ քանզի ինքեանք ի յափշտակութիւն մտաբերէին, վասն այնորիկ և նոքա եղեն ի յափշտակութիւն [3]:

« Ո՞վ է ի ձէնջ՝ որ ունկնդիր լինիցի այսմ ամենայնի, կամ լսիցէ զառ յապայն: Ո՞վ ետ յափշտակութիւն զՅակովբ, կամ զԻսրայէլ աւարառուաց. ո՞չ Սստուածծ ինքնին՝ որում մեղանն իսկ, և ոչ կամեցան գնալ զճանապարհս նորա, և ոչ լսել օրինաց նորա »: Տեսանե՞ս, զիարդ փութայ յայտ առնել՝ եթէ ինքն է որ ածէ զպատիժսն, և ոչ յայլ ումեքէ տանջի:

1 Յօր. Բազում անգամ կոչէ Իսկ էին. այլ օտար դրէաւ եղծեալ և վերայ եդեալ էր պեղէտ:
2 Յօր. Բանին՝ յօտար դրէէ:
3 Յօր. Յաէլտնիւան:

ԳԼՈՒԽ ԽԳ

« Եւ արդ այսպէս ասէ Տէր՝ որ արարն զքեզ, Յակոբ, և ստեղծն զքեզ, Իսրայէլ. Մի՛ երկնչիր զի փրկեցի զքեզ, և եդի քեզ անուն՝ եթէ իմ ես դու։ Եթէ անցանիցես դու ընդ ջուրս՝ ընդ քեզ եմ, և գետք զքեզ ոչ ողողեսցեն. և եթէ անցցես ընդ հուր՝ ոչ այրեսցիս, և բոց զքեզ մի՛ կերիցէ. զի ես եմ Տէր Աստուած քո՝ Սուրբն Իսրայելի, որ փրկեմն զքեզ»։ Եւ արդ, մի՛ միայն՝ի չարեաց ինչ կամիցիմք զերծանել այլ զի զԱստուած միշտ առ մեզ մօտ ունիցիմք. և յորժամ չիցե որ՝ի վիշտս, և յԱստուծոյ օգնականութեան նէն հեռի իցէ, և այն ևս չար է քան զվիշտս։ Զնիմք և օրինակս ինչ յաստուածեղէն գրոց. մանկունք՝ որ՝ի հնոցին էին, քան զայնոսիկ՝ որ արտաքոյ հնոցին էին՝ և՝ի դիւրութեան էին. քանզի և Թագաւորն ևս հանդերձ զօրօքն՝ի տագնապի էր։ Դարձեալ Հրեայք յորժամ արկին զառաքեալսն՝ի բանտ, ինքեանք չար խռովեցին քան զնոսա։ Ասպիսի իմն են չարիքն, զի և՝ի վիշտս առանց խռովութեան պահէ զառաքինիս. և այնպիսի իմն են չարիքն, զի և՝ի խոր խաղաղութեան՝ խռովէն զչարագործսն. զոր օրինակ չեն ինչ օգուտ հեշտական[1] քաղցրախառն օդք գարնանոյ՝ մարմնոց՝ որ՝ի տապոյ ջերման գոլանայցեն, նոյնպէս և ոչ յորժամ արտաքոյ վշտաց ինչ իցեմք, և ոգիքն ճանրութեամբ մեղացն՝ի նեղքս տաղտկանայցեն։ « Ես եմ Տէր Աստուած՝ Սուրբն Իսրայէլի»։ Տէս, զիարդ զօրութիւնն և զկամն ցուցանէ. զինչ յայտ առնիցէ ասել. « Ես եմ Սուրբն Իսրայէլի»։ այլ զպարծանսն, եթէ նորա ընտրեալ և նորին՝ի ժողովուրդս սեպհական։

« Արարի, ասէ, փոխանակ քո զերկիրն Եգիպտա-

1 Յօր. Հրեշտական։

ցւոց». իսկ այլքն՝ փրկանս ընդ քո, ասեն[1]։ « Եւ զերկիրն զԱւհէն քեզ փոխանակեցից»։ Ա. յսինքն զնոսա հարից ընդ քո փոխանակ չարչարանաց՝ զոր չարչարեցար՝ի նոցանէն։ « Մի՛ երկնչիր, զի ընդ քեզ[2] եմ»։ Զնիք ինչ հանգոյն այնմ մխիթարութեան. զսոյն և աշակերտացն խոստացաւ. Ընդ ձեզ եմ, ասէ, զամենայն աւուրս՝ մինչ՝ի կատարած աշխարհի»։

« Յարևելից ածից զզաւակ քո, և յարևմտից ժողովեցից զքեզ. ասացից հիւսիսոյ՝ թէ այծ, և հարաւոյ՝ թէ մի՛ արգելուր։ Այծիք զորդիս իմ՝ի հեռաստանէ, և զդստերս իմ՝ի ծագաց երկրի. զի փառօք իմովք պատրաստեցի զնա և ստեղծի զնա, և արարի զնա»։ Ա. յսինքն յիմ փառս լինելոյ ժողովին նոցա. ես, ասէ, փառաւորիմ. որպէս և Աւրաքեամ ասէ, եթէ Յառաջելութիւն փառաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի եթէ ոչ վասն այլ իրիք, սակայն վասն իմոց փառացն ոչ թողից զձեզ յօտար երկրի։ « Եւ հանից զժողովուրդն կոյր. և տակաւին աչք նոցա կուրացեալ կան, և ականջք իւրեանց չլսեն». զնշխանացն ասէ կուրացան։

« Ամենայն հեթանոսք ժողովեցան՝ի միասին, և ժողովեցան իշխանքն՝ի նոցանէ. ո՞վ պատմեսցէ զայս, կամ որ՝ի սկզբանէն ինչ էր՝ զայն ո՞ պատմեսցէ ձեզ»։ Եւ ոչ ոք ուրեք. այսինքն, և որ ինչ անցք անցանելոց իցեն ընդ նոսա, որպէս և ընդ ձեզ։ Ա. յլ ձեզ և զձերդ ասեմ և զայլոցն իսկ. նոցա՝ և ոչ զիւրեանցն. և արդ ո՞վ իցէ՝ որ պատմել կարիցէ։ « Այծիցն զվկայս իւրեանց», իբրև յատեան. « Եւ արդարասցին»։ Եւ եթէ կարիցեն իրաւունս ցուցանել, և զարդար ինչ խօսել ես ոչինչ զանգիտեմ և փախչիմ՝ի քննութենէն. նոքա թէ ունիցին ինչ վկայս՝ յառաջ մատուսցեն, կամ մարդիկ՝ որպէս զմարդարսէն և զձեզ՝ որ զպատիժս կրիցէք, կամ գիրս ինչ՝ որպէս ես ասացի յառաջագոյն և կատարեցի։ Տէս, զիարդ ոչ բռնութեամբ, այլ մեղմով տայ զիրաւունս. և արդ յետ յանդիմանելոյ զնշնամին, շրջէ զբանսն առ Իսրայէլացիսն։

1 Յօր. Իսկ այլքն փրկանս ընդ քո, ասեն, յօտար գրէ։
2 Յօր. Պահասի «եզ»։

«Ա՛յժմ, ասէ, լերուք դուք ինձ վկայք, և ես ձեզ, ասէ Տէր». եթէ ո՛չ զոր յառաջագոյնն ասացի՝ և կատարեցի։ Թէպէտ և ես իսկ արժանաւոր և հաւատացեալ էի, բայց սակայն և դուք լերուք ինձ վկայք։ Տէս, ո՛րչափ ինչ յաձախագոյն տայ ցիրաւունս, ո՛րչափ յԱՀետարանի ասէ, եթէ ես եմ որ վկայեմ վասն իմ, և վկայութիւնն իմ ձշմարիտ. և Հայր իմ վկայէ վասն իմ և Յոհաննէս. որպէս և աստ ասէ. «Ծառայ իմ՝ զոր և ընտրեցի». զի և զմարգարէն կոչէ ՚ի վկայութիւն. և զայս, ասէ, վասն ձերոյ փրկութեան ասեմ. «Զի գիտասջիք, հաւատասջիք և ՚ի միտ առջիք»։ Տէս, զի ամենայն ուրեք քան զնմաստութիւն՝ զհաւատս մեծարոյ ցուցանէ։

«Եւ ՚ի միտ առջիք, եթէ ես եմ. զի յառաջ քան զիս ոչ եղև Աստուած, և յետ իմ ոչ ևս լիցի»։ Իսկ արդ զՈրդւոյն զինչ ասիցեմք. ոչ եթէ ծնեալ ոք չիցէ Աստուած, այլ արարած ոք[1] այլ Աստուած չէիք։ Տեսանե՞ս, զի ամենայն ուրեք զանսկզբնականն, զանվախճանականն, զարարչականն դնէ. զոր օրինակ զանսկզբնականն՝ աստուածութեանն օրինակ եդ, նոյնպէս և ընդ արարչականին՝ և զնախգիտականն յայտ արար. և այսպէս օրինակօք եցոյց մեզ զԱստուած։

«Ես եմ Տէր, և չիք այլ ոք բայց յինէն՝ որ փրկէ»։ Ոչ, ասէ, դուք աղաչեցէք և ածէք զնս ՚ի հաւան փըրկել այլ ես կամեցայ փրկել[2]. և զի մի ինքնադէպ ինչ զնրսդ կարծիցես, ես իսկ, ասէ, յառաջագոյն գուշակեցի, և ապա ածի հաստուցի. քանզի «Պատմեցի և կեցուցի. նախատեցի, և ոչ գոյ ձեզ Աստուած օտար»։ Ա՛յսինքն յայտանախատ արարի, եթէ ո՛ւր իցեն աստուածքն՝ որոց նուէրս նուիրիկիք և զոհս մատուցանէիք. զի մի ասիցեն, եթէ կամաւ իսկ չհանին ինչ ՚ի վեր, նախատեցի, ասէ, և ոչ այնպէս ինչ կարացին յայտ առնել։ Եւ զնս յորժամ նախատեաց Աստուած, անդէն վաղվաղակի ցուցի զզօրութիւն իմ։

«Դուք ինձ վկայէք, և ես Տէր Աստուած, զի ՚ի սկզբանէ եմ, և ոչ ոք իցէ՝ որ ՚ի ձեռաց իմոց հանիցէ.

1 Յօր. Ո՛չ՝ յօտար գրէ։
2 Յօր. Այլ ես կամեցայ փրկել, յօտար գրէ։

արարիցէ ես, և ոչ ոք իցէ՝ որ դարձուցանիցէ զայն»։ Տեսանե՞ զօրութիւն ՚ի վեր քան զամենայն զօրութիւն. տեսանե՞ զիշխանութիւն՝ իշխան ամենայն իշխանութեանց։ «Վասն ձեր առաքեցից ՚ի Բաբելոն»։ Ա՛յսինքն վասն ձեր զնոսա տանջեցից։ «Ես Տէր սուրբն ձեր, որ յայտ արարի ձեզ զթագաւորն Իսրայելի»։ Օրինակաւ՝ զՕրթաբաբել նշանակէ, և ձշմարտութեամբ զՔրիստոս։

«Ա՛յսպէս ասէ Տէր Աստուած, որ տայ ձանապարհ հորդել ընդ ծով»։ Զառաջինն սքանչելին յիշեցուցանէ նոցա, զի այնու զվերջինն առնիցէ հաւատալի։ «Եւ ՚ի ջուրս սաստիկս զշաւիղս»։ Ա՛յսինքն յահագին ծովու, որ հանապազ ալեօքն կուտակի։ Կրկին իսկ են սքանչելիքն. նախ զի ՚ի ջուրսն իսկ ձանապարհ արար, և ապա յայնպիսի ծովու՝ որ միշտ ալեօքն մրմռեալ սպառնայ։ «Ա՛յլ ննջեցին, և այլ ոչ յարիցեն»։ Թէպէտ և այսչափ օրինակք առաջի կային, Եգիպտացւոցն և ծովուն, սակայն Թերահաւատ լինելին ՚ի վարձէն։

«Մի՛ յիշեք զառաջինն. զի ահաւասիկ ես առնեմ նոր. արարից զձանապարհն ընդ անապատ, և յանջուր՝ գետս»։ Զի յայնժամ զծովն պատառեցի, և իբրև զպարիսպ կացուցի զջուրսն. և արդ յանջուր՝ գետս բղխեցուցից։ Ա՛յլ ձանապարհ յանապատն, և զգետս յանջրդիս, նախ օրինակաւ զիփրկութիւն ժողովրդեանն Բաբելոնի է իմանալ, ապա ձշմարտութեամբ և զՔրիստոսիւ վարդապետութիւնն[1]. ըստ այնմ, եթէ Գետք յորովայնէ նորա խաղայցեն ջրոյն կենդանութեան։ Տեսանե՞ յերկոսին կողմանս, մանաւանդ յերեսին իսկ առաքինացեալ՝ զԱստուծոյ զօրութիւնն։

«Ոչ եթէ այժմ ինչ կոչեցի զքեզ, Յակոբ, և ոչ աշխատ ինչ արարի զքեզ, Իսրայէլ»։ Ա՛յսինքն ՚ի բնէ և ՚ի վաղուց հետէ, մինչեւ[2] պատարագքն իսկ ուրեք էին։ Զի մի միւսանգամ յորժամ ՚ի գերութենէն դառնայցեն՝ յայլոյն առաքինութեանց ան-

1 Յօր. Աւրթաբաբիլեան. այլ յօտար գրէն Զորթաբաբիլեան։
2 Յօր. Մինչև։

փոխն առնիցեն, և միայն՝ ի զոհից անտի համարիցին զփրկութիւնն. տես, զնարդ ցածուցանէ զնոսա յայնմանէ. ոչ միայն յորժամ մեզագիր ինչ լինիցին, այլ և յորժամ փրկել կամիցի, զի մի՛ զնոցն ախտ ախտանայցեն. Նիքանան, ասէ, չէ բաւական ինձ յայրումն. և զարձեալ. Մինչ ուտիցեմ զմիս ցլոց, կամ զարիւն նոխազաց ըմպիցեմ: Տեսանե՞ս, զնարդ և աստ զի յառաջնին իրացն իսկ հաւանեցուցանէ զնոսա. ոչ անդստին իսկ՝ ի բնէ սիրեցի զքեզ, մինչև զոհքն իսկ ուրեք չէին:

« Եւ ոչ աշխատ ինչ արարի զքեզ Իսրայէլ. ոչ ինչ էին խաչինք ողջակիզացդ քոց, և ոչ զոհիւք քովք փառաւոր արարեր զիս. և ոչ ծառայեցեր ինձ պատարագօք քոյովք»: Քանզի փառան իմն համարէին զնորն, յառաջնոյն ուսիր, ասէ, զի առանց զոհից իսկ կուշեցի զքեզ. և՝ ի վերջնոցդ՝ ի միտ առ, զի առանց զոհից փրկեցի զքեզ: « Ոչ ինչ երբեք աշխատ արարի զքեզ կնդրկաւ », եթէ՝ ի հեռաստանէ երթեալ բերիցեն ինձ խունկս: « Ոչ գնեցեր ինձ խունկս արծաթոյ ». իսկ այլք խունկեղէնդն ասեն: « Եւ ոչ ցանկացայ ձարպոյ զոհից քոց. այլ՝ի մեղս քո և յանօրէնութիւն քո վերակացու եղէց քեզ»: Ա.յսինքն Թէպէտ՝ի մեղս և յանօրէնութիւնս ծախիւր զաւուրս քո, սակայն զվերակացութիւնդ իմ ոչ առնէի բացեայ՝ի քէն: Եւ ինձ Թուի Թէ զայնմ ժամանակէ մինչև Յեփթայոսին էին՝ ասիցէ:

« Ես եմ ինքն՝ որ ջնջեմ զանօրէնութիւնս քո, և զանիրաւութիւնս քո վասն իմ այլ ոչ յիշեցից»: Ոչ ասաց եթէ պատժոյ ևեթ դիւրութիւն առնեմ քեզ, այլ Թէ՝ և զմեղսն ոչ յիշեցից: Եւ դու յորժամ ոչ կամիցիս ոխս ունել՝ զդոյն ասասջիր. և մի՛ բանիւք միայն ասասցես, այլ և արդեամբք մի՛ յիշեսցես զյանցանս ուրուք. զի ոչ միայն պիտոյ իցէ Թողուլ զյանցանս յանցաւորացն, այլ զի և՝ ի մեայդ հետակորոյս առնիցես զցասումն:

« Բայց դու յիշեա՛, և՝ ի միասին դատեսցուք. ասա դու նախ զմեղս քո »: Տեսանե՞ս, զնարդ ուղղէ աւտեան, և ցուցեալ զչաղթութիւնն իրաւամբք. որպէս և զակղբեանն ասէ, եթէ զայս ինչ և զայս արարիցես. Դատ

արարեք որբոյն, և տուք իրաւունս այրոյն, և եկայք յանդիման լիցուք. նախ զայն ասէ որով չաղթելն կարէ, և ապա կուշէ յատեան. նոյնպէս և աստ. « Բայց դու յիշեա՛, ասէ, և դատեսցուք՝ի միասին »: Եւ ընդ դէպ ասիցէ, եթէ « Բայց դու յիշեա՛ ». այլ զի ուսանիցի զերախտեացն մեծութիւն: Զի որ սիրիցէն՝ զայն ինչ կամի ցուցանել՝ եթէ յիշիցէ. զի եթէ յիշիցէ արդեւք սիրեցեալն զերախտիսն, և եթէ ոչ յիշեսցէ, գոնէ խմանայցէ եթէ յորպիսի՛ մեզաց փրկեաց: Մի՛ զայն ինչ, ասէ, զմտաւ ածիցես եթէ վասն այնորիկ մոռանեմ քնդ քեզ՝ի դատ՝ զի դատապարտեցից, այլ զի ցուցցե եթէ ոչ՝ զսիրեմ զքեզ: Զասեմ՛ես զմեղսն քո, այլ դու քեզէն ասա, զի ծանիցես եթէ զորպիսի՛ վերս բժշկեցի. այլ վասն այնորիկ ասեմ յիշեա՝ զի արդարասցիս. և այն իսկ բաւական է քեզ առ արդարանալ, յորժամ ես ոչ ասիցեմ, և դու քեզէն խոստովան լինիցիս:

« Հարքն ձեր նախ մեղան, և իշխանքն ձեր անօրինեցան յիս »: Մինչ առ այժմ ինչ լսեն մեզք, մինչ այժմ ինչ ապստամբեցէք: « Եւ պղծեցին իշխանք զսրբութիւն իմ, և մատնեցի՛ի կորուստ »: Իսկ այլքն ասեն՝ի նզովս. և եբրայեցին. Սաբրին Յակովբ[1]. այսինքն՝ ի նզովս Յակոբ, և Իսրայէլ՝ի նախատինս. իսկ այլքն՝ ի հայհոյութիւն ասեն: Տեսանե՞ս, զի դուք էք բարուքք: Եւ զինչ լսէ, եթէ « Հարքն ձեր նախ մեղան »: Ես լռեալ կայի, և դուք նախ սկիզբն արարէք:

« Այսա դու նախ զմեղսն քո »: Մի՛ կար մեծ ինձ ասելոյ. որպէս և միւսն ասէ, եթէ Սրդարն յառաջնին իսկ պատասխանողն՝ ոսոխս լինի անձին իւրում: Տես, զի ամենայն ուրեք իբրև՝ի հարկէ իմն կամի մեզ շահս շահել. զի և արդարոյն իմն և մեղաւորի այն պատշաճ է: Զի՞ Թաքուցանես զմեղս քո. Երբ և է՝ յայտնելոյ են, կամ աստ կամ անդ. ապա Թէ այդպէս իցէ, աստ պարտ է յայտնել, զի և ընկենուլ՝ի քաց կարիցես:

1 Եբրայական բնագիրն դնէ

לחרם יעקב וישראל לגדופים׃

որ է. Նախերբ էոով չէնեցայեւ լէիկո-քիմ. այսինքն, Ի նզովս Յակոբ և Իսրայէլ՝ի նախատինս:

Չի՛ փախչիս ի մահուանէ՝ որ վասն Աստուծոյ իցէ. զի որովք բանիւ և իցէ՝ հարկ է մեռանել. և եթէ այսպէս իցէ, այն լաւ է՝ զի վասն Աստուծոյ մեռանիցիս: Չի՛ խեղդեաւ իցես յընչից վերայ. ապաքէն մեկնեալց իցեն և ակամայ. ապա եթէ այդպէս իցէ՝ լաւ իցէ եթէ կամաւ: Չի՛ ի փառս և յայլ բազում իրս հարեալ իցես. ոչ ապաքէն մեկնելոց իցեն ի քէն: Սակայն Աստուած ոչ զայնպիսի ինչ մնուցանս հաւաստեօք պահանջիցէ: Ընդէր ոչ ձգնիցիս վասն աստուածպաշտութեան. զի որովք բանիւ և է՝ հարկ է քեզ վասն չարեացն ձգնել: Եւ մեք ցմիաբանս ասեմք, եթէ զինչ օգուտ իցէ, նա և ոչ ունիմ իսկ ջնորհ, թէ վասն իմ ինչ գործեցեր, և զինչ հարկ եր գործել. իսկ Աստուած ոչ այսպէս. զի եթէ բնութեամբ ինչ վիշտ գայցեն, և վասն նորա համբերիցես, սակայն և այնմ ջնորհ ունիս:

ԳԼՈՒԽ ԽԴ.

« Բայց այժմ լուր Յակոբ ծառայ իմ, և Իսրայէլ՝ զոր ընտրեցիդ »: Զայս ասելով յայտ առնէ՝ եթէ վերակացու է նոցա, և ի նոցանէն են պատճառք և սկիզբն վշտացն իւրեանց: Քանզի ոչ եթէ զբարեկամին զսիրեցեալն զընտրեալն՝ առանց յուղղութիւնս ածել՝ այ՝ վայրապար մատներ արդեաք: « Այսպէս ասէ Տէր Աստուած քո, որ արարն զքեզ և ստեղծ յորովայնէ մօր քո »: Եւ աստ այլ իմն երախտիս յիշեցուցանէ. քանզի ոչ կամի եթէ բնութեանն ինչ գործ կարծիցի ծնանելն, այլ իւր. ըստ այնմ, եթէ Չգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ:

« Մի՛ երկնչիր, Յակոբ ծառայ իմ, և Իսրայէլ՝ զոր ընտրեցիդ. զի ես տայ քեզ ջուր ի ծարաւ՝ որ գնայցէ քեզ յանջրդոլ »: Աղբիւրս բխեալ յանապատս յիշեցուցանէ, թէ որպէս անդ ի ծարաւն ձեզ վտակս բխեցուցի, և այժմ ի վշտաց ձեզ դիւրութիւնս արարից: « Եղիցի զոգի իմ ի վերայ զաւակի

քո »: Այլքն ասեն, եթէ զեղից. այսինքն զկատնն իմ, զպանկուԹիւն իմ, զօրհնուԹիւնսն իմ ի վերայ զաւակի քո. զի ի Թոռանց ի Թոռունս անցանիցեն բարուԹիւնքն:

« Բղխեսցեն իբրև զխոտ ի ջրարբոջ, և իբրև զուռի՝ որ առ ջրով: Մին ասասցէ Աստուծոյ եմ ես »: Մեծ մասն է ումեք՝ ընտանի լինել Աստուծոյ, և ի նորա համարի գրիլ[1]: « Եւ միւսն խրախուսեսցէ յանուն Յակովբայ »: Սիմաքոս լուսաւորագոյնս ասէ. Եւ միւսն կոչեսցի անուամբն Յակոբայ: « Եւ միւսն գիր հանցէ ձեռամբ իւրով՝ Թէ Աստուծոյ եմ. և յանուն Իսրայէլի խրախուսեսցէ »: Իսկ Ակիլաս փոխանակ ընդ խրախուսելոյն՝ Թէ Նմանեսցի. Սիմաքոս, Թէ Պատրաստեսցի. Թէոդոտիոնն, եթէ կերպարանեսցի: Չի որ ասիցէ՝ Թէ Աստուծոյ եմ, կերպարանեսցի յանուն Յակովբայ, որ Թարգմանի խաբող. զի և նա խաբեալով խաբեսցէ զընկամիս իւր: Քանզի բազումք յաղգայն իբրև տեսին զզօրուԹիւնն Աստուծոյ ի Պարսից աշխարհին՝ որ ի Հրեայսն կատարէին, յօժարէին և ինքեանք ընդ նոսա ելանել երԹալ յերկիրն Իսրայէլացւոց. զայն իմն առակելին Թարգմանքն, Թէ Նմանեսցեն և կերպարանեսցին յանուն Յակոբայ:

« Այսպէս ասէ Տէր Աստուած Թագաւորն Իսրայէլի, որ փրկեացն զնա՝ Աստուած սաբաովթ. Ես եմ առաջինն, և ես եմ առ յապա. բայց չկինէն՝ այլ ոչ գոյ Աստուած. ոմ իցէ իբրև զիս. և ոչ ոք ըստ իմ: յառաջ կացցէ, կոչեսցէ, պատրաստեսցէ, յայտնեսցէ, պատմեսցէ, յորմէ հետէ ես արարի զմարդն »: Եւ արդ տեսս, ոչինչ մեծ խնգրեաց. այլ Թէ յորմէ հետէ ըզմարդն արարի, զայն և եթէ ասասցէ: Զասեմ ինչ, ասէ, զառաջինն ժամանակացն, և ոչ զվերինն զօրուԹեանցն:

« Արդ դուք ձեզէն իսկ վկայեիք ինձ, եթէ իցէ այլ Աստուած բայց չկինէն: Եւ յայնժամ իսկ ոչ լսեան՝ որ ստեղծանէին զնոսա և դրոշմէին զանօգուտս, Թէ ամենեքեան սոքա մնոտիք են՝ որք առնեն ըստ մտայն իւրեանց, որք ոչինչ օգնեսցեն նոցա »: Տեսա՛ նէս, զի ի մարդկանէ է սկիզբն նոցա: « Եւ ամենե-

1 Յօր. Համարէ է գրել:

քեան ուստի եղեն՝ ցամաքեսցին »։ Գարձեալ զյաջախութիւն անպէտութեան կռոցն յայտ առնէ. զբաղում դրօշմեալն արկեալ յերդ հեգնէ. և յամէ՛ի բանի անդ, եթէ զնաւրդ, ոչպէս դրօշեալքն եղեն[1]։

« Զի այր հիւսն թեքեաց զգործի իւր. ուրագ սրեաց, և կոփեաց նովաւ »։ Եւ զայլն ևս, որ զկնի սոցին են՝ Թուէ առ յամօթ գործելեացն։ « Եւ ոչ համրեցան՛ի սիրտս իւրեանց, և ոչ յիշեցին, եթէ զկնի փայտին այրեցին հրով, և՛ի նմանէ հաց արարին, և՛ի վերայ կայծականց նորա մխ խորովեցին, և զինաց եալը՛ի նմանէ արարին պատկեր »։ Եւ արդ մի՛ ընդ պատկերն հայիր և ընդ գեղն, այլ զայն՛ի միտ առ, եթէ զի՞նչ եղև՛ի կիսոյն՝ զոր այրեցին, որ՛ի ջեռնուլ և՛ի պէտս տուեալ էր. զի այրեցաւ և եղև մոխիր։ Եւ զբանս ևս ջեռլեացն ասէ հեգնելով, եթէ « վա՛շ ինձ, զի ջեռայ և տեսի զգով »։

« Եւ զկէսն արար աստուած, դրօշեաց, և երկիր պագանէ և ասէ. Աստուած իմ ես դու։ Ոչ լմացան՛ի միտ առնուլ, քանզի շլացան առ՛ի տեսանել աչօք։ Գիտասջիք զի մոխիր է սիրտն նոցա. տեսէք և ոչ ասացէք, եթէ ստուգիւն է՛ի ձեռին իմում»։ Ակիւղաս ասէ. Եւ ոչ ասիցէ, միթէ ստուգիւն ինչ իցէ՛ի ձեռին իմում։ Տեսանէ՛ս, որպիսի՛ ինչ միտք են ամբաստանութեանցն։

« Յուշ լիցի քեզ այս, Յակովբ և Իսրայէլ, զի ծառայ իմ ես դու. բայց դու մի՛ մոռանայցես զիս »։ Ոչ այլ ինչ ասէ առաւել, բայց զայս միայն՝ զոր ինչ մարդ խնդրէ։ « Ա՛հաւադիկ ընկէցի իբրև զամբ զանօրէնութիւնս քո, և իբրև զմէգ զմեղս քո »։ Զգիւրութիւն յայտ առնէ։ « Ընդուսի՛ն քեզ, ասէ, զմեղս քո. դարձ առ իս, և փրկեցից զքեզ »։ Տեսանե՛ս, զի ոչ միայն յերախտիսն Աստուծոյ պարտ է վստահ լինել այլ դառնալ և ողջքել։ « Դարձ առ իս », ասէ. քանզի չէն պատճառք ասել եթէ չունիմ համարձակութիւն, զի ամօթալից եմ։ « Ընկէցի՛ն քեզ զանօրէնութիւնսն »։ Պատճառէն իսկ է ցանկ և պարիսպ և արգել և խափան և ամօթ։ « Գիտասջիր զի

1 Յօր. Եղէն յօտար դրչէ։

մոխիր է սիրտ նոցա », և երկրպագուացն և որոց երկիրն պագանէին։ « Եւ չիք աստուածիւն՛ի ձեռին իմում »։ Ա՛յսինքն՝ զի յոյժ է զօրութիւնն և հանդէս իրացն՝ զոր՛ի գլուխ հանիցէն. զի օգնական և պաշտպան և զօրութիւն լինիմ։

« Ուրախ լերուք երկինք, և ցնծասցէ երկիր. փողջ հարէք հիմունք երկրի, գոչեցէք լերինք զուրախութիւն, բլուրք և ամենայն անտառք. զի ողորմեցաւ Աստուած Իսրայէլի »։ Զոր օրինակ յորժամ ասիցէ, եթէ ինքն արարածք՝ յուսով յայտնութեանց Որդւոյն Աստուծոյ ակն ունին, կամ թէ չէ՛ծէն և երկնեն, նոյնպէս և աստ՝ առ՛ի նշանակ հաշտութեանն Աստուծոյ ընդ նոսա՝ բազում հաղորդս կոչէ ուրախութեանն։

« Ես եմ Տէր, որ կատարեմ զամենայն. ձգեցի զերկինս միայն, և հաստատեցի զերկիր »։ Ստիպեն, ասէ, զայս, զի զօրաւորսն յայտ առնիցէ։ « Եւ արդ ո՞վ իցէ որ խափանիցէ »։ Ակիղաս ասէ. Ո՞վ որ իցէ ընդ իս որ խօսիցէ. և ոչ ասեմ, եթէ ո՞ պատժեսցէ, կամ՞ զօրավիգն կարիցէ լինել. թէպէտ և այս դիւրագոյն է, սակայն՛ի նմանէ ցուցանեմ զհանդէս զօրութեան իմոյ։

« Ա՛յսպէս ասէ Տէր՝ որ փրկեացն զքեզ և ստեղծ զքեզ յորովայնէ. ես եմ Տէր, որ կատարեմ զամենայն. ձգեցի զերկինս միայն »։ Ա՛մենայն ուրեք նախ զարարչութիւնն դնէ. զի յայտ արասցէ զօրութիւն և զքեզնամածութիւնն, և զի մանաւանդ ընդ նմա չէ օրէն մարտնչել. քանզի ոչ առնէր՝ եթէ ոչ փրկել կարէր. զի որ՛ի սկզբանէն առանց ուրուք ստիպելոյ, և առանց երախտեաց ինչ արար, ո՛րչափ ևս յետ առնելոյն կեցուցանիցէ։ Ռան զչառնելն՝ բնաւ չէր ինչ տրբտունջ. իսկ զարարեալն՛ի տանջանս մատնել՝ բազմացուպէղ Թուի. վասն որոյ և ասէրն իսկ մեծն՛ի մարգարէս. Ա՛սիցեն, գոգցեն, եթէ վասն այնորիկ հաներ զնոսա յերկրէն Եգիպտացւոց, զի յանապատին կոտորեացես, և յերկրէ՛ն ջնջիցես։

« Ես եմ Տէր, որ կատարեմ զամենայն ». և զձեր և զքո՛ւնամեացն։ Մի՛ կարծիցէք եթէ այլ Աստուած գոյ. « Ձգեցի զերկինս միայն, և հաստատեցի զեր-

կիր »։ Դարձեալ՝ ի համաշխարհականաց բարբառի, ի բուն՝ ի գլխաւոր արարածոյն։ Եւ միտ դիր, զիարդ յերևելեացն, և ոչ յաներևութիցն կամի հաւատացուցանել։ « Հաստատեցի, ասէ, զերկիր, և ոչ՝ զերկիրս եղծանել »։ Եւ այս մեծի զօրութեանն հանդէս է. զի այնպիսի ինչ կարէ առնել՝ որ ամենեցուն անհնարին է առ եղծանել. և ոչ միայն եղծանել, այլ և ոչ մտաբերել իսկ. զի ոչ միայն չկարիցէ ոք եղծանել այլ զի և ոչ մտաբերել ինչ ձեռնհաս իցէ։

« Յրուեցից զնշանս վհկաց »։ Սիմաքոս զատոյն ասէ։ Եւ այն են զարմանք զի առնէ, և այնպիսի ինչ առնէ՝ զոր ոչ ոք եղծանել կարէ։ Այլ զրեօջիը թէ ոչ զերկինս արարի, և ոչ զերկիր հաստատեցի, այլ որ ինչ մեծն թուէր նոցա՝ զայն ամենայն եղծի, և խափանեցի զօրութիւն բռնաւորին. զի ոչ միայն զպատմեալս վհկացն ցրուեցի, այլ և՝ ի սրտից անտի զզգաձուելութիւնն ցրուեցի. այս է զօրութիւն մեծ և հարցատուութիւն անմարտական։

« Դարձուցից զխմաստունս յետս, և զխորհուրդս նոցա յիմարեցուցից »։ Զի յայտ արասցէ, եթէ իմաստութեանն և խորհրդոցն նա է տէր։ « Եւ հաստատեցի զպատգամն ծառայի իմոյ »։ Այն իսկ է հարցատուութեան նշանակ, զի զայլոցն եղծանէ, և զիւրոյ ծառային կատարէ։ Զի եթէ եղծանէր միայն, ասէին արդեւք, եթէ զայն և՛եթ կարէ առնել. իսկ եթէ զայլոցն եղծանէ, և զիւրոյն հաստատէ, յայտ է եթէ կատարեալ է զօրութիւնն և չէ իւիք կարօտական։ « Եւ զխորհուրդս հրեշտակաց իւրոց արդարացուսցէ »։ Անդ ըղձութիւնք, և այնպէս վաղ եղծանէ. և աստ ոչ միայն մարդարէութիւնքն, այլ և կատարումն կանխաւասացից։ Թուի ինձ եթէ աստ հրեշտակ՝ զմարդիկ կոչիցէ։

« Որ ասեմ ցերուսաղէմ [1] թէ շինեսջիր, և ցքաղաքն [2] Հրէաստանի. որ ասեմ անդնդոց թէ աւերեսջիք »։ Սիմաքոս ասէ, թէ Որ ասեմ երկրի թէ

1 Յօր. Այլ և կոպարոն... Որ ասեմ ցերուսաղէմ, ի լուսանցին յօտար գրչէ եգեալ։
2 Յօր. Յաղկոպան։

իբրև զանդունդսն աւերեսջիք, և զչետս նորա ցամաքեցուցից։ Զի եթէ զնոցանէն իսկ ասիցէ, և այսպէս կարող է Աստուծոյ զօրութիւնն. և եթէ զբազմութենէ պատերազմացն, սակայն և այն՝ ի դէպ է։

« Որ ասեմ Կիւրոսի իմաստնանալ »։ Ակիղաս ասէ, եթէ Որ ասեմ Կիւրոսի՝ աւարառուդ իմ. Սիմաքոս և Թէոդոտիոն, եթէ Հովիւդ իմ, ըստ իւրաքանչիւր [1] թարգմանութեան։ « Եւ զամենայն կամս իմ արասցէ »։ Եւ այս զմեծութիւն զօրութեանն Աստուծոյ յայտ առնէ. զի այլ մտօք, որ՝ի նա երբեք ոչ էին յուսացեալ և ոչ երբեք ձանձէին, զոր ինչ կամէր՝ կատարէր։ Քանզի Աստուած շարժէր զմիտս նորա, զի դարձ առնիցէ գերծին՝ Աստուծոյ հրամանաւ. որպէս ամենայն մարդարէքն մարգարէանային, և զիջանել ժողովրդեանն և զելանել, և մեծաւ աքանչելեօք իմն գործք գործէին։ Զի արձակել զգերին՝ մարգարէութեանն միայն նշանակ էր, իսկ Աստուած՝ զոր ոչ գիտէր՝ պատուել, և մեծամեծ պատարագօք մեծարել, այն ոչ ըստ մարգարէութեան ինչ էր, այլ մեծագոյն իմն զօրութեան, որ զնորա զմիտսն շարժէր։ Որպէս ած զԲաբելացիսն և ետ զնոսա՝ ի ձեռս, նոյնպէս և զայն առնէր։ Մի եթէ զանձնիշխանութիւնն ինչ բարձ՝ ի նմանէ, և շրջեաց ինչ զմիտս առն։ Ոչ եթէ զանձնիշխանութիւն եբարձ, այլ յայն յորդորեաց զանձնիշխանութիւն։ Ի ուրեք՝ զի փութացուցանէ Աստուած զմարդիկ, այլ՝ի բարիս ինչ, և ոչ՝ի չարիս. և է ուրեք՝ զի նոցա չարութեամբն՝ բարի պէտս վճարի, և՝ի չարեացն՝ որ՝ի նոցանէն գործին՝ բարի ինչ կատարէ, որպէս Բաբելացեօքն և Յուդայիւք և այլովքն բազմօք։

1 Յօր. Ըստ Իւրոհի, այլ եղծեալ և յօտար գրչէ՝ի վերայ եգեալ, ըստ Իւրափանչիւր։

ԳԼՈՒԽ ԽԵ

«Ա.յսպէս ասէ Տէր Աստուած յօծեալ իմ Կիւրոս, զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա»: Յայտ է եթէ ինքն օծ էնա, վասն որոյ և օծեալ իսկ իւր կոչէ. և յօծութենէն զօծութիւնն յայտ առնէցէ: Ակիղաս ասէ. Չիւղեաւն իւր. իսկ այլքն՝ Յօծեալ իւր ասեն: Եւ զայլ Թագաւորսն ոչ եթէ ինքն օծ. ոչ եթէ օրինեալ ինչ յայտ առնէցէ այժմ, այլ զի առ քաղաքին շինութիւն այնպէս կամեցաւ զնոսն վճարել. վասն այնորիկ օ-ծեալ իւր կոչէ զնա: Եւ այլազգ ևս. քանզի հեղա-դոյն քան զայլ Թագաւորսն էր Կիւրոս: Նա և զԲա-բելացւոց Թագաւորէն յայտ առնէ՝ եթէ նուաւա ու-նէր զիշխանութիւն, քանզի և զնա ծառայ իւր կոչէ. Ծառայ իմ՝ ասէ, Նաբուքոդոնոսոր: Եւ վասն Աւորե-ստանեայցն՝ եթէ նա արար զնոսա այնպիսիս. Վա՛յ, ասէ, Աւորեստանեայցն. գաւազան բարկութեան սրտմտութեան իմոյ՝ ի ձեռին նոցա. և զարձեալ, եթէ Իմում ժողովրդեանն կարգեցից: Տեսանե՞ս, զնաւրդ ընտանեցուցանէ զԹագաւորս հեթանոսաց: Եւ զԱնթիոքէ յայտ առնէ՝ եթէ Աստուած յարոյց. Յա-րուցից, ասէ, հովիւ տգէտ, և գործի հովուութեան: Եւ յայտ առնէ եթէ ամենայն ուստեք նորա հրաման է, թէպէտ և ամբարշտիցեն Թագաւորք: Եւ եթէ վասն էր զայս այսպէս առնիցէ, նմա միայն յայտ է, և՝ի մէնչ ծածուկ տեսչութիւն նորա:

«Հնազանդեսցին առաջի նորա հեթանոսք: քայլից առաջի նորա դրունս, և քաղաքք մի ամրասցին. ըզ-դրունս պղնձիս խորտակեցից, և տայ քեզ զգանձս աներևոյթս. զի ծանիցես եթէ ես եմ Տէր Աստուած, որ կոչեմ զանուն քո, Աստուածն Իսրայէլի, վասն Յակոբայ ծառայի իմոյ»: Տեսանե՞ս, մրջափ պարգևս պարգևէ ժողովրդեանն: Յորժամ Հայիցես՝ի չար անցս որ ընդ Փարաւոն անցին, մի ապիրատութիւն ինչ կարծիցես առ՝ի Աստուծոյ. զի անտի նմանպէս դիւ-

րաւ կամի հանել, այլ ոչ կամեցաւ եգիպտացին: Եւ զի ոչ կամէր հարկանել զնա՝ յառաջին իրացն յայտ է: Աւաքեաց առ արքայն եգիպտացւոց, ասէ. Արձակեա զժողովուրդդ իմ, զի ինձ պաշտօն մատուսցեն յանա-պատին: Թէպէտ և չէր ինչ ծանր հրամանն, ոչ ապա-քէն սիրով արժան էր քեզ ելանել ընդ առաջ հրա-մանին: Մինչ ասիցէ թէ այդրէն՝ի քում աշխարհիդ առնիցեն ինձ պաշտօն, զի ասիցես՝ թէ չէր հնար, զի մեր՝ մերոյն իսկ քուրմք են, և չէ մարթ թէ օտարոտի ոք օրէնս յաշխարհ մուծանիցէ: Մինչ անդէն՝ի սկզբ-բանն ասիցէ, եթէ հեռի ուրեք՝ի բաց վայրս երթի-ցեն. ոչ զերիս միայն աւուրս խնդրեցի պարապորդս լինել. զի եթէ բնաւին իսկ արձակել խնդրէի, չէր ինչ զուր, որք այնչափ ժամանակս ծառայեցին քեզ ձրի. այլ ոչ այնպիսի. պահանջի զերիս աւուրս միայն, և ոչ առնոյր յանձն: Զէր պարտ պատկառել քեզ՝ի զօրութենէդ իմմէ, կամ ակնածել յերկայնմտութե-նէն: Ա.յլ ոչ այնպիսի ինչ յամառեաց պարսիկն. իբրև լուաւ՝ վաղվաղակի արձակեաց, արագ արագ առնէր գարձ գերոյն: Եւ ուսո՞ւ արդեւք լուաւ, կամ ուսո՞ւ իմացաւ: Թէպէտ և կայնի իսկ օրինակք զօրութեանն Աստուծոյ յերկիրն Պարսից, այլ ասեմ՝ թէ յԱստու-ծոյ յորդորելոյ: Եւ ոչ եթէ փարաւոնն ոչ յորդորե-ցաւ, այլ և լուաւ զպատուամանն Աստուծոյ, և խոստա-ցաւ. ապա թէ ոչ, ընդէ՞ր առաքեր զՄովսէս յառաջա-գոյն. ո՞չ ապաքէն զի յօժարեցուսցէ արձակել զժողո-վուրդն. այլ ոչ կամեցաւ, որպէս պարսիկն՝ իբրև լուաւ՝ վաղվաղակի անսաց:

«Վասն Յակոբայ կոչեցի զքեզ յանուն իմ»: Ա.յս-ինքն յանուն Քրիստոսի իմոյ: Գարձեալ խառն ընդ աւետիս՝ պատուհաս առ Իսրայէլացիսն: «Եւ դու, ասէ, զիս ոչ ծանեար, եթէ ես եմ Տէր Աստուած, և ոչ ոք գոյ բայց յինէն»: Զի ես կատարեցի առ քեզ զայն, եթէ Թշնամի եղէց Թշնամեաց քոց, և բարե-կամ բարեկամաց քոց [1]. զի որ ոչ կամին զդարձն քո, առ նոսա՝ զԹշնամեաց գործ ցուցի. և որ յօժարեացն և յորդորեցաւ Կիւրոս, առ նա՝ զբարեկամութեան:

1 Յօր. եւ բարեկամ բարեկամաց տուր, յօտար գրէ:

« Ես եմ Աստուած, և չկայ այլ ոք բայց Յիսուս »։ Չի մի կարծիցեն հակառակորդքն, եթէ մի ոք ի բաղմաց իցէ, և ոչ միայն և ամենակալ։ Վասն այնորիկ յարէ ի նոյն, եթէ « Ծանիցեն յարևելից և յարևմտից եթէ չկայ ոք այլ բայց Յիսուս »։ Տեսանէ՞ս, զի և այլոցն ևս խնամածու լինի, և մեծամեծ երախտիս ցուցանէ ի նոսա. զի թէ և նոքա յաշխարհն իւրեանց դառնայցեն, այլ և սոքա զերծանիցին ի մոլորութենէն, առաջնորդեալք ձշմարտութեամբն՝ հասանիցեն ի վերին աշխարհն։

« Ես միայն եմ Աստուած, և այլ ոք չկայ՝ բայց Յիսուս » ։ Գիտել գիտէին եթէ և նա Աստուած է, բայց թէ միայն Աստուած իցէ, այնմ ինչ էին տեղեակ՝ զոր Հրեայքն ուսանէին, եթէ Տէր Աստուած քո՝ Տէր մի է, զնոյն ծանեան՝ եթէ ոչ միայն Հրէից մի է, այլ ամենայն աշխարհաց մի Աստուած. « Ես եմ տէր Աստուած, և չկայ այլ ոք »։

« Ես եմ Տէր, որ հաստատեցի զլոյս և արարի զխաւար. որ առնեմ զխաղաղութիւն, և հաստատեմ զչար» ։ Տեսանե՞ս, զի ոչ տայ մուտ այլումարարչի. այլ և որ չարն ինչ թուէին, և այնց ինքն կամի համարել արարիչ. որպէս և այլուր ասէ, թէ Ո՞վ արար զխուլն և զհամրն։ Այլ հաստատել զչար, զպատերազմայն ասէ, և ոչ եթէ բնութեամբ չար ինչ արար Աստուած, կամ առնիցէ. այլ զհատուցմունս ինչ և զվրէժս՝ չար կոչէ. և զի չկայ չար բնութեամբ, յորժամ վիշտքն ինչ՝ ի դիւրութիւն դառնայցեն, այնու յայտ է։

« Ուրախ լերկինք՝ ի վերուստ, և ամբք ցօղեցեն զարդարութիւն » ։ Դարձեալ աւետիք են՝ ի դարձին, իբրու թէ արարածք՝ ի նոցա բարիսն ուրախ լինիցին. զոր և՝ ի նորա վարդապետութիւն մարթի առնուլ՝ թէ կամիցի ոք։ Այլ ոչ այն միայն որ ամբաստան լինի զարարչէն իւրմէ, այլ և որ պատասխանի տայցէ, որ իրաւունս իշխիցէ պահանջել զլինելոց ինչ իրաց։ « Ես զքեզ ստեղծի », և դու կինէն օձաձն խնդրես. զի թէ չէր կամեցեալ, և ոչ լինէիր իսկ. և յայտ է եթէ այն ելն՝ Աստուծոյ բարերարութեանն է[1]։

1 Յոր. Զիք է։

« Մի՛թէ ասիցէ կաւն ցբրուտն. զի՞ կաս, զի՞ չըգործես. և գործն՝ թէ չիք քո ձեռք »։ Զայս առ այնասիկ ասէ՝ որք զերկայնմտութիւնն Աստուծոյ բամբասիցեն, եթէ այս ինչ պարտ էր Աստուծոյ, և այս ինչ չէր պարտ։ Զիք ինչ քան զայն բարբառ ամ պարշտապոյն՝ օրէնս դնել դատաւորին, և զստեղնագործն բնութեանց՝ մարդկեղէն մտօք բամբասել։ Թէպէտ և չիցէ ինչ նման օրինակս. զի բրուտն ոչ եթէ նիւթոյ կաւոյն արարիչ իցէ, այլ միայն ստեղծուածոյ, և այնպէս՝ որչափ ձեռնհաս ինչ իցէ. իսկ Աստուած ոչ միայն պատկերիդ քոյոյ, այլ և նիւթոյն ևս՝ ուստի եղեր՝ արարիչ է։ Կաւն ոչ եթէ զլինելն, այլ զկերպարանս միայն առնու՝ի բրտէն. և ոչ հեռի ինչ, և ոչ ընդդէմ դառնայ. իսկ դու որ ամենևին իսկ Աստուծով եղեր, նստեալ համբոս պահանջես՝ի նմանէ։ Կաւն չդառնայ ընդդէմ, քանզի ոչ բարբառ իսկ ունի՝ի բերան. իսկ դու յայն սակս դիմադարձ լինիցիս, զի զբարբառդ առեր. պարգեւատդ՝ ընդ պարգեւատուին կռուիս. ընդէ՞ր ոչ ասիցես զպատճառսն, վասն որոյ ոչ պարտիս ընդդէմ դառնալ։ Այլ զքեզ խօսուն իմաստուն, ոչ զի առաւելութեամբն ընդդիմակաց ետուն լինիցիս, այլ զի զնա փառաւորիցես, և զնոյն օրհնեսցես. ոչ զի քննիցես և՝ի հարց և՝ի փորձ արկանիցես։ Այլ եղեր լեզու՝ի փառաւորութիւն, առեր զմիտս՝ի գոհութիւնս, ի հաւատս. և Սիրաք ասէ. Ետու քեզ լեզու կամակար. և զպատճառսն ասէ. Զի օրհնեսցես զնա, և պատմեսցես զփառսն նորա։ Զունչ բարբառ կաւն. զի եթէ ձանաչէիր զարարիչն, գիտէիր թերևս՝ քան զկաւն ևս անարգագոյն ես և անձայնական։

Քանզի մերձ էր՝ի փրկել զնոսա, և գիտեր եթէ բամբասելոց են զնա վասն անցելոց ինչ ժամանակացն՝ յորս զվիշտս կրեցին. ըստ այնմ, եթէ Սակաւիկ միւս ևս սասանեալ էին ոտք իմ։ և դարձեալ. Այսցի եթէ զիաղդ ծանեաւ Աստուած, կամ իցէ գիտութիւն առ՝ի Բարձրելոյն, զի ահա աւասիկ սոքա մեզաւորք են, և յաջողեալք են. և դարձեալ, եթէ Զիարդ իցէ զի այս իւթանասուն ամ՝ զի անտես արարեր զմեզ. և բազումք այսպիսի ինչ բանիւք բամբասելոց էին, ըմ

բերանէ զայնպիսիսն, և ասէ. « Մի եթէ ասիցէ՞ կաւն ցբրուտն »: Եւ տէս, յորպիսի դէպ ժամանակի. յորժամ արձակուրդն առնելոյն էր, զի մի կարծիցէ եթէ չկարիցէ վճիռ իրացն առնել. և յայն սակս զայնպիսի բանս ՚ի մէջ բերիցէ: Զի եթէ անդէն ՚ի վիշտն Թողեալ էր, և այնպիսի բանս խոսէր, և այնպիսի իմն կարծէր, եթէ վասն զի ՚ի վշտացն չկարաց փրկել այնպիսի բանիւք պատրէ. իսկ նա աւանիկ ՚ի ժամանակի փրկութեան ըմբերանէ, զի ուսանիցին եթէ ՚ի ձեռացն Թողուլ, անքնին և անձառ խնամոտութեանն գործ էր, և չէ պարտ բամբասել և մեղադիր լինել, և կամ ՚ի խոյզ և ՚ի քնին ինչ արկանել: Իսկ առ Թշնամին զՀերկին Հարկանելով, ասելոյին. Մի եթէ զօրն ամենայն վարիցէ՞ Հերկահարն. իսկ առ նոսա՝ որք անյոյսն լեալ էին ՚ի փրկութենէն, զկաւոյն և զբրտի: Ո՞չ գիտիցէք, ասէ, եթէ վասն խրատու և ուղղութեան արարի զայս ամենայն. ո՞չ յառաջագոյն իսկ գուշակէի, և չըսէիք. և եթէ չըսարուք, և անձամբ անձանց ածէք զպատիժս, անձանց լերուք մեղադիր, և մի ինձ:

Եւ ոչ այնչափ միայն որոշումն էից ընդ քեզ և ընդ Աստուած, որպէս ընդ կաւն և ընդ բրուտն. զի բրուտան՝ կաւոյն չէ արարիչ, այլ միայն կերպարանաց. և նոքա կարի մօտ են առ միմեանս. զի կաւն արարած է և բրուտն. իսկ քո արարիչն անարար է, և դու արարած: Եւ քանզի բազում ինչ որոշումն էր ընդ քեզ և ընդ Աստուած, վասն այնորիկ ասէ. « Մի եթէ ասիցէ՞ կաւն ցբրուտն, զի՞ կաս, զի՞ չգործես. և գործն՝ եթէ չէք քո ձեռք: Մի եթէ պատասխանի՞ տայցէ ստեղծուածն ստեղծչին իւրում». ոչ միանգամ կաւն կայցէ, և ոչ յորժամ ստեղծանիցի, եթէ այն լաւ էր՝ միանգամ կաւն կայի, ընդէ՞ր ստեղծեր զիս. և կամ թէ ստեղծանել լաւ էր, ընդէ՞ր Թողեր զիս կաւ: Զոր բազում աղաչուրք ՚ի փիլիսոփայիցն ասէն, որ ծաղրն եղեն և ծանակ կան. որ զանչափ զԱստուծոյ իմաստութիւնն՝ կամին ընդ իւրեանց քննութեամբ արկանել. որ ուրացութեանց[1] և ատելիքն լինին յիւրեանց շաղփաղփական

1 Ա. յոպէս յօրինակին:

յոփութենէն, զոր միշտ վայրապար նորոգեն. զի թէ բարիոք լինչ էր, ասեն, Հաստատել ընդէ՞ր ոչ ՚ի սկզբանէն. իսկ եթէ չէր բարիոք, ընդէ՞ր և յետ այնորիկ: Եւ առ այն զինչ ասիցեմք, եթէ ոչ զայն. « Մի՞թէ ասիցէ՞ կաւն ցբրուտն, կամ ստեղծուածն ընդ ստեղծիչն [1] »: Զբանն նա միայն գիտէ. և եթէ ևրբ պարտ իցէ առնել՝ ինքն ձարտար է: Եւ եթէ բարիոք իցէ, ասեն, գործելն, ընդէ՞ր ոչ[2] միշտ գործիցէ: Իսկ արդ դու Աստուածոյ օրէ՞նս ինչ գնիցես. ո՛վ Հպարտութեան և Թշուառութեան՝ որդան Հողոյ և մխրոյ, որ յայնպիսի բնութենէ՝ յանձառ և յանքնին, Համարս պահանջիցէ, և ոչ ակն ածիցէ. և յայնմանէ ևս զի իբրև զմանկտի ընդվայրասուն և շատխօսս՝ որ ոչ ունիցին զԼրատ, զայր որ իմաստուն աշխատ առնիցեն. և չէ ինչ մեծ որ ասացաւս. և մանաւանդ զի և ոչ սակաւ ինչ իսկ մարտ:

« Վա՛յ այնմիկ՝ որ ասիցէ ցՀայր իւր եթէ ընդէ՞ր ծնար զիս, և կամ ցմայր իւր եթէ ընդէ՞ր երկնեցեր զիս »: Եւ այս իբրև զառաջինն՝ օրինակ իմն է: Մի՞թէ ասիցէ՞ ոք ցՀայր իւր եթէ ընդէ՞ր ծնար զիս, և կամ ցմայր իւր Թէ ընդէ՞ր երկնիցես: Եւ եթէ այն անմտութեան իցէ, ո՞րչափ ևս այն առաւել անհանձար մտաց: Բնութեան չլինիս մեղադիր, և ինձ զիաւրդ իշխիցես՝ որ տէրն եմ բնութեան՝ մեղադիր լինել. ընդէ՞ր, ասես, արար Աստուած զմարդիկ: Զի որ ըստ բնութեան ծնունդն է, անդ բազում վիշտք են և հօրն և մօրն, զայն ոչ ինչ քննես, և զիս ՚ի խոյզ և ՚ի քնին արկանես: Եւ ընդէ՞ր արդեաք ձառեաց զերկանց և զծննդոց. այլ զի զերկոցունց կողմանց ծնողացն կարդ՝ յիւր անձն առնուցու. զի իբրև զպատձառս և իբրև զգործած ծանիցի: Քանզի և այլուր իսկ ասէ, Թէ Որպէս գԹայ Հայր յորդի, գԹայ Տէր յերկեղած իւր. և դարձեալ, եթէ Ո՞վ իցէ ՚ի ձէնջ՝ որոյ խնդրիցէ որդի իւր Հաց, միթէ քա՞ր տայցէ նմա. և ևս յառաջ ՚ի սոյն գիրս. Զի Թէպէտ և մոռանայցէ կինն՝ ողորմել ծննդոց իւրոց, սակայն ես ոչ մոռացայց

1 Յօր. Սպեղծիչն ցսպեղծուածն. յօտար գիրէ ուղղեալ՝ սպեղծուածն ընդ սպեղծիչն:
2 Յօր. Զինք ու:

զքեզ: Զի բարս ոգոց ունին ծնողք խնամածականս, որոց չկրեցէ ինչ համեմատ գտանել. սակայն և քան զայն 'ի վեր են Աստուծոյ խնամքն: Զսոյն և աստ յայտ առնէ, թէ որպէս մայր՝ որ ծնանիցի, այնպէս պահէ զծնունդն, և իբրև զհայր՝ խնամ տանի և դարմանէ, և ամենեցուն պատճառ ինքն է:

« Ա.յսպէս ասէ Տէր Աստուած Իսրայէլի, որ արար զառյապայն »: Ակիղաս ասէ. Որ եղծանեն զնա: Սիմաքոս ասէ. Փրկիչն նորա: « Հարցէք զիս վասն որդւոցն իմոց, և վասն դստերացն իմոյ, և վասն գործոց ձեռացն իմոց պատուէր տուք ինձ »: Ա.յդ ինչ 'ի դէպ իցէ, ասէ, զի հայր վասն որդւոց պահանջիցի, կամ արարիչ վասն արարածոց: Եւ ոչ ուրեք դուք ինչ քան զիս քաջ խնամ ածիցէք և հոգայցէք. և որ ինչ ըստ հարկի բնութեանն է՝ զայն չհարցանէք ինչ, և որ ըստ իմոց բարերարութեանց է՝ զայն 'ի հարց և 'ի վորձ արկանէք: Եւ թէպէտ և ոչ ինչ կարի ընդհէք հօրն լցեն 'ի ծնանելն, քանզի բնութեանն է գործն, այլ իմ է ընդհէքն, քանզի յիմմէ բարերարութենէ աստի է ծնունդն: Զի թէ հօրն ինչ ընդհ լիցէ, որքան և աւաւել իմ: զի հարքն՝ սպասաւոր միայն եղեն, և ես պատճառք իսկ եմ ամենեցուն:

« Ա.յսպէս ասէ Տէր՝ որ արար զառյապայն »: Բառբառ ասէ զառյապայն, այսինքն զհանդերձեալն: Մի՛ եւեթ յանցեալսն հայիցիք: Ա.յն իսկ էր շատ ըմբերանել զձեզ, զի 'ի չգոյնէն 'ի գոյ եկիք. և իմաստութեամբ գոյացայք: Մի՛թէ չսիրիցեմ, ասէ. այլ չէ բաւական սիրելն միայն: Մի՛թէ չգիտիցեմ դարման տանել. վասն այնորիկ առ 'ի բարիսն գիտելոյ զդարմանելն, զայն առնու յառաք. և առ սիրելն՝ զհայր և զմայրն: Զիք որ որ ասիցէ եթէ չկարիցեմ դարմանել, և ոչ այն որ ասիցէ, եթէ գիտել գիտիցեմ, բայց կամիցիմ ոչ՝ սիրել: այլ սիրեմ և խնամ տանիմ: Եւ ինձ այսպէս Թուի, եթէ զայս ինչ ասիցէ, թէ որպէս մանուկն ոչ ինչ կարիցէ ասել ցմայրն, թէպէտ և վշտաք գայցէ արտաքս յորովայնէ, այնպէս և ոչ դուք պարտիք ինչ ասել:

Ա.պա և զանցեալն ևս համարի. « Ես իսկ արարի, ասէ, զերկիր և զմարդ 'ի վերայ նորա »: Տէս

զդարմանան և զնախ լինելն երկրի. զի երկիրն ասելով՝ զամենայն բարութիւնն յայտ առնէ. զի նա է սեղան ամենալից և հանդերձ և կերակուր: « Ես ձեռամբ իմով հաստատեցից զերկինս. ես պատուիրեցի աստեղաց »: Ակիղաս և Սիմաքոս ասեն. Եւ ամենայն զօրութեան նոցա պատուիրեցի. Թէոդոտիոն՝ Եւ ամենայն զօրութեանց նորա ետու պատուէր: Եւ այս՛ի նշանակ դարմանոցն խնամոցն: Գլուխքիր թէ զառնելն ոչ ինչ համարիցիք՝ եթէ խնամակալութեանն է, իսկ զայնչափ բարերարութիւնս պատրաստել՝ ո՛չ համարիցիք խնամակալութեան: Եւ թէպէտ և հայր առանց խրատ նամ և դարման [1] ինչ տանելով, ծնանելովն միայն եբախտաւոր է, և ոչ ոք բամբասէ զնա՝ յորժամ ծնանելն կամիցի [2]. այլ իշխանութիւն ունի, քանզի տէր իսկ առնեն զնա և արտաքնոյն օրէնք՝ աներկիւղ և անկասկած 'ի պատժոյն՝ առնել զինչ և կամիցի ըստ իշխանութեանց. քանզի ունին գրաւական հաւատարիմ՝ զգութն և զնամն բնականս. քանզի յայն իսկ ապաստան ետու ամենևին իշխանութիւն ծնողին. իսկ ես ոչ արարի միայն, այլ և զայս ևս ամենայն յաւելի, զերկիրս, զերկինս, զաստեղս: Ա.յլ նոքա թերևս համաշխարհականք լցեն. տեսցուք և զսեփականան: « Ես, ասէ, յարուցից զնա արդարութեամբ թագաւորել »: Ինձ այսպէս Թուի, եթէ ընդ արարածս՝ զամենայն բնութիւնս համարիցի, իսկ 'ի խնամն՝ յայնմ ժամանակի զյուդայական միայն ազգէ ասէ:

« Զարթուցի արդարութեամբ զթագաւորն »: կամ զՁօրաքաջեալ ասէ, կամ զկիւրոս թագաւորէ: « Նա, ասէ, շինեսցէ զքաղաքն իմ, և զգերութիւն ժողովրդեանն իմոյ դարձուսցէ, ոչ փրկանօք »: Իսկ այլքն ասեն. Ոչ փոխանակօք և ոչ պատարագօք: Զի ծանիցես եթէ 'ի վերուստ է հրամանն. « Զի Տէր, ասէ, այսպէս ասէ »: Եւ ուր Տէր ասիցէ, պարտ է հաւատալ իբրև Տեառն: Իսկ ոմանք ասեն, եթէ և զՔրիստոսն ասէ. և չէ ինչ արգել և զայն ևս ընդունել: « Նա շինեսցէ զքա-

1 Յօր. Հայր ինչ խնամ առանց դարման... և ախտաւոր է: Եւ Հայր ինչ՝ յօտար գրչէ եդեալ:

2 Յօր. Յորժամ կամիցի ինչ առնել. այլ յօտար գրչէ եղծեալ սեագեղով և փոխանակ եդեալ՝ ծնանելն կամիցի:

ղաքն իմ», զեկեղեցի։ Եւ «Աւդարութեամբն զարթուցանել»։ Չի այնպիսի իսկ վարս կարգեաց յեկեղեցւոյ, զի ոչ բազմութեամբ ինչ սպասաւորեայ և ոչ մրագիր օրինօք և ոչ այլ ինչ իւիք ըստ արտաքնոցն՝ եցոյց զօրութիւն ինչ զառաջինն։ Իսկ ի՛ւ իւիք. արդարութեամբ. քանզի չիք ինչ հանգոյն արդարութեանն։ Վասն որոյ և ունի իսկ ոչ բռնութեամբ, այլ կամօք նոցին իսկ՝ որ ընդ[1] իշխանութեամբն իցեն. ոչ ուրեք մեղաւ, և ոչ զոք զրկեաց։ «Եւ ամենայն ձանապարհք նորա ուղիղ են»։ Չի ոչ ոք կարիցէ բիծ գնել հրամանաց նորա։ «Եւ զգերութիւն ժողովրդեան իմոյ դարձուսցէ, ոչ փրկանօք և ոչ պատարագօք»։ Այն իսկ է, թէ Մի՛ ստանայք ձեզ ոսկի և արծաթ։

«Վաստակ եղև Եգիպտոս»։ Իսկ այլքն ասեն. Գետն Եգիպտացւոց և վաճառքն ԵԹԷովպացւոց։ Բայ բիոք իսկ զերս աշխարհիս և զհոգս՝ վաստակս կոչէ. որպէս մեւս մարգարէն՝ խռովութիւն անուանէ. Զօրը, ասէ, խռովի. գանձէ և ոչ գիտէ ումմ ժողովէ զայն։ Եւ վաճառքն իսկ՝ ցաւք, և վաստակքն աւելորդք են. ըստ այնմ, եթէ Ետ չար զբօսանք առ ի զբաւնսուլ և ի ժողովել. զի առնայն ինչ մնոտի է, և կամ մնայ զբօսանք[2]։

Այս ասէ. «Եւ Սաբայիքն արք մեծամեծք առ քեզ անցցեն, և քեզ ծառայեսցեն, և զինի քո շղթայեցին»։ Սաբայիք սահմանորդք են ԵԹէոպացւոց. զի նոքա իսկ ընկալան զնոր քարոզութիւնն՝ նեբքինեաւն։

«Կապեալք ի ձեռակապս եկեսցեն առ քեզ, և երկիր պագցեն քեզ, և ի քեզ ուխտադիր լինցին»։ Եւ արդարև կապեալ իսկ էին անհնարին մոլորութեամբ ամենեքեան, մանաւանդ Եգիպտացիքն և ԵԹէոպացիքն և նոցին սահմանորդք Սաբայիքն։ Այս և ըզպատձառն իսկ ասէ, վասն որոյ զայցեն, թէ «Չի և ի քեզ Աստուած գոյ»։ Ըստ այնմ, եթէ Ես ի Հայր, և Հայր լիս։ Իսկ ումանք զայն, եթէ «Ի քեզ Աստուած գոյ»։ յԵրուսաղէմ տանին. և եթէ այնպէս Աստուած գոյ», յԵրուսաղէմ տանին. և եթէ այնպէս Աս

1 Յօր. Զիք ընդ։
2 Յօր. Զիք պէօսան։

լցէ, ոչ ինչ ապականէ զմիտան. քանզի անտի իսկ ծագեաց Տէրն և Աստուած։ Իսկ այլ Թարգմանքն չդնեն ինչ զպատձառան, այլ ասեն. Բայց և ի՛ քեզ Հզօրն։ Սիմաքոս միայն ասէ, եթէ Չի և ի՛ քեզ Աստուած գոյ. և ոչ գոյ այլ Աստուած, բայց ի՛ քէն, Աստուած յԱստուած։ Յայտ է եթէ Հայր յՈրդի. որպէս և ինքնին իսկ ասէ, եթէ Ես ի՛ Հայր, և Հայր լիս։

Այսպա և զկուրութիւնն իսկ Հրէիցն ակնարկէ, եթէ «Դու ես Աստուած, և մեք ոչ գիտեաք, Աստուած փրկիչ Իսրայելի»։ Իսկ Ակիւղաս փոխանակ այնր, եթէ «Դու ես Աստուած, և մեք ոչ գիտեաք». Դու ես Աստուած, ասէ, անեղական։ Սիմաքոս և Թէոդիտոնն՝ Ծածուկ, ասեն։ Եւ վիճարդ իցէ ծածուկ. արարչութեամբն յայտնի է, իսնամովքն արարածոց՝ զորս ունի հաստատուն. վասն որոյ և յաղօրդն իսկ յայտնագոյն ցուցանէ տեսչութեան նորա. «Աստուածդ Իսրայելի, ասէ, փրկիչ»։

«Այմաչէսցեն և պատկառեսցեն ամենայն հակառակողդք նորա, և գնասցեն ամօթով[1]։ Նորոգեցարուք առ իս, կղզիք»։ Ակիղաս ասէ. Այմաչէսցեն, նա և պատկառեսցին իսկ ամենեքեան ի միասին. գնացին ամօթով հիւսուն արարելոյն։ Սիմաքոս ասէ. Յամօթ եղև։ Թէոդոտոն. Այմենեքին նոքա համօրէն։ Իսկ այլ Թարգմանիչքն՝ առ կռոցն արարիչս յաձախեն ըզբամբասանսն. Թերևս զնիպտացւոցն իսկ ասիցեն, և զԵԹէոպացւոց վաճառացն։ Իսկ ԵւԹանասուսնքն նորոգութիւն իմն գուշակեն հեթանոսաց և ուրախանալ ի փրկութեան Իսրայելի։ Այսպա և զծով իսկ և զցամաքն կոչէ. զի ասելովն զկղզիս, զայն յայտ առնէ. «Նորոգեցարուք, ասէ, առ իս, կղզիք. զի փրկեալ է Իսրայէլ ի Տեառնէ՝ փրկութիւն յաւիտենից. մի՛ ամաչեսցեն և մի՛ յամօթ լինիցին մինչև յաւիտեան»։ Չի անդէն իսկ ի՛ մանկութենէ զընտիր ընտիր առաքինութեանցն յանձին ունիցին։

«Այսպէս ասէ Տէրն, որ արար զերկինս. սա է Աստուած, որ եցոյց զերկիրն և արար զնա»։ Եւ տե՛ս, յորժամ կամիցի ինչ մեծ ասել, ոչ միայն զանուն Տեառն

1 Յօր. Եւ փառօքն ամրիվ, յօտար գրէ։

դնէ, թէպէտ և այն իսկ արժանի և հաւատարիմ էր. զի թէ զամենայն ունի, և ամենեցուն տիրէ, ապա չէք ինչ յայնցանէ՝ որ ընդ նովաւ իցեն, որ կարիցէ նմա կալ հակառակ. բայց սակայն և զզօրութենէն ձառէ. « Սա է Աստուած, որ եղեալ զերկիր »: Տեսա՛նէ՛ս, զի չէր, և ածʼի գոյ. քանզի զայն իսկ յայտ առնէ. « Եղեալ զերկիր և արար զնա »: Զի ոչ միայն, ասէ, զնութեան ածʼի մէջ, այլ և զկերպարանն, և զպատշաճութիւնն. քանզի անկատար և աներևոյթ էր, ջրովք տղմայեալ, սկացեալ, անկերպարան, անհեղեղ:

« Սա է Աստուած, որ եղեալ զերկիր »: Մինթէ բաժանիցէ՞, որպէս Յունաց ցոփքն՝ զկնի աստուածս սանդարամետականաց անուանեն, և այլս՝ երկնաւորա՛կանացն: Մի է, ասէ, Աստուած ամենայն աշխարհի. և այսպէս զօրութիւն է նորա ʼի վերայ երկրի, որպէս և ինքնին իսկ երևելիքն վկայեն նմա: Եւ ոչ այնչափ, այլ այնպիսի ինչ, զի ոչ ասել և ոչ իմանալ ոք կարի՛ցէ: Իսկ Ակիւղաս և Թէոդոտոն ասեն. Ա՛յսպէս ասէ Տէրը, որ հաստատէ զերկինս. սա է Աստուած, որ ստեղծանէ զերկիրս, և առնէ զնա: Կարևոր է և սոցա թարգմանութիւնս, թէ զոր ածնʼի մէջ՝ չէ ʼի նմանէ բայեալ, ունելովին և առաջնորդելովին, իբրու թէ հանապազօր հաստիցէ և ստեղծանիցէ: Իսկ Եւթանասնիցն, եթէ կատարեալ և բովանդակ արար. զորս արարն՝ ինքն որոշեաց զնա: Իսկ այլքն ասեն. Պատրաստեաց, հաստատեաց. բայց ըստ Եւթանասնիցն, թէ Որոշեաց. այսինքն՝ զծածկեալն ʼի ջրոյն բաղմութենէ յայտնեաց: Զի զառաջինն ոչ այսպիսի ինչ որոշումն ունէր, այլ երկիր և ջուր մի էին. զի և այն իսկ ոչ փոքր ինչ զօրութեան է, զբազմութիւնն ջրոյն ʼի բաց փարատել, զերկիրս խաղաղել յայտնել: Զոր և այժմ է տեսանել յորժամ ծով մրմռեցի, և արշաւանք ալեացն կուտակելոց՝ սպառնայցեն զամենայն ցամաք առհասարակ ծածկել. և զսպառնալիսն միայն ցուցանիցէ, և արդիւնս ինչ ոչ գործիցէ. ապա ʼի միտ առնուցու զայն՝ որ ʼի սկզբանէն այնպէս սահմանեաց զնա, և ոչ ʼի զուր ինչ արար զնա, այլ ʼի բնակութիւն ստեղծ զնա: Տէս, զիա՛րդ առնէ զնա արժանի հաւատալոյ զվկայութիւնն՝ առ ʼի հանել զնոսա և ոչ կորուսանել:

« Մինթէ ʼի զո՞ւր ինչ եղև », ասէ. զոր և այլուր ասէ. Մինթէ ʼի զո՞ւր ինչ հաստատեցեր զամենայն որդիս մարդկան: Վասն ձեր իսկ եղև երկիրս, և վասն ձերոյ բնակութեան պատշաճեցաւ ʼի կերակրել ʼի դարմանել:

« Ես եմ Տէր, և չիք ևս այլ ոք: Ոչ ʼի ծածուկ ինչ խօսեցայ, և ոչ ʼի խաւարին ինչ տեղի երկրի »: Զի որպէս յԵլհանէն Նոցա յԵգիպտոսէ, օրէնքն տուան մովսիսականք, նոյնպէս և աստ, զի ʼի Պաբսից չարեացն հեռանայցեն:

« Ոչ ʼի ծածուկ ինչ խօսեցայ, և ոչ ʼի խաւարին ինչ տեղւոջ երկրի ուրեք »: Չկուռան և զգիւթութենէն անյայտս, և որք ʼի խաւարին դանդաչիցեն՝ ակնարկէ, եթէ ոչ որպէս նոցայն խաւարինք իցեն, նոյնպէս է և խնքս. այլ համարձակութեամբ խօսիմ, զոր ոչ ոք յանդիմանել կարիցէ. և անկասկած, զոր ոչ ոք ապարտել մարթիցէ: Լուսոյ բանք են. ըստ այնմ, թէ Զոր ինչ ասեմ յականկանէ, քարոզեցէք զայն ʼի վերայ տանեաց. այսինքն ʼի լոյս, յայտ յանդիման. և դարձեալ, թէ Սմենայն որ զչարիս գործէ, ատեայ նա զլոյս. և դարձեալ, եթէ ես լոյս եմ աշխարհի. և դարձեալ, եթէ ես համարձակութեամբ խօսեցայ ʼի տաճարին, ուր ամենայն Հրեայքն ժողովեալ:

« Զասացի երբեք ցզաւակն Յակովբայ, եթէ դուք մնոտիս խնդրեսջիք »: Զետու ինչ այսպիսի հրաման, և ոչ պատուիրեցի, և ոչ ʼի լերինն իսկ բարձու, ուր ամենեքին իսկ մօտ կային և լսէին: Ո՞չ մինչ յերկինից իսկ գայր բարբառ և փողն հնչէր, եդի ընդ ձեզ վկայութիւն. չիք պատճառք ասել, եթէ ես ինչ հրամայեցի. և արդ այլ ևս ասեմ և յայն սակս, կամ զորս և յառաջագոյնն ասացի:

« Ես եմ, ես եմ Տէրը, որ խօսիմ զարդարութիւն, և պատմեմ զճշմարտութիւն »: Սյսինքն պատմեմ յաւենից զճշմարտութիւն հանդերձելոցն: Եւ այն իսկ մանաւանդ Աստուծոյ՝ զի զմօտաւորսն արդարութեամբ վճարիցէ, և զհանդերձեալսն ճշմարտութեամբ յառաջագոյն ասիցէ. որոց չէին իսկ ձեռնհաս պատմել կուռքն:

« Ժողովեցարուք և եկայք խորհել ʼի միասին՝ ա-

պրեալքդ »։ Որպէս տէր ոք ինամակալ, որ ՚ի բանդէ զբազմամեղս հանել կամիցի, տայ խրատ յառաջագոյն յիշեցուցանելով զառաջինն, զի մի իբրև ելանիցէ ընդարձակ, այլոց ինչ չարեաց լինիցին նմա պատճառք դիւրութիւնն, և երկեցուցանիցէ և սաստ ցուցանիցէ. և ոչ զի տանջիցէ, այլ զի մի անգէն յառաջինն բարսն շրջիցի. սոյնպէս և Աստուածծ յորժամ մերձն էր արձակել զնոսա ՚ի գերութենէն, դատ դնէ, իրաւունս տայ. « Մինթէ յօժարեցուցի զձեզ, ասէ, երբեք երկիր պագանել կռոց. ժողովեցարուք և եկայք խորհել ՚ի միասին՝ ապրեալքդ »։ Զամենեսեան ՚ի միասին կոչեմ, թէ կարող ոք իցէ՝ յանդիմանեսցէ համարձակ. ամենեցուն առաջի ասեմ, զի լինիցիք միմեանց միխիթար ՚ի ժողովելն ՚ի միասին, և խորհել՝ ապրեալքդ ՚ի հեթանոսաց։

« Զի նոքա ոչ ծանեան, որ բարձեալ տանիցին ըզփայան դրօշեալ իւրեանց. և յաղթեմն կայրն առ աստուածս՝ որ ոչն ապրեցուցանիցէ զնոսա, կամ պատմիցին ինչ »։ Ոչ ծանեան, քանզի դեռ ևս շլացեալք էին, և կուրացան յոյժ. և արդիւնքն իսկ բարքն որ բասրիցեն, եթէ զորս բարձեալս տանիմ՝ որ ոչ և միւր իսկ անձն շարժել կարէ։ Ընդէ՞ր իցէ այս մահ, վասն ի՞ր այսպիսի ծանրութիւն։ Եւ երկուս ինչս դնէ, թէ և նմանութիւն են, և մարդկան նմանութիւնք. իսկ ես և ոչ միւմ ուժեք այսպիսեաց։ Եւ թէպէտ և փայտք իցեն, և նմանութիւնս ինչ մարդկան կերպս ունիցին, սակայն թէ կարիցեն ինչ օգնել՝ օգնեսցեն։ Վասն այնորիկ ասէ հեգնելով, թէ « Յաղթեմս կայ առ աստուածս, որ ոչ ապրեցուցանիցեն, կամ պատմեն ինչ »։ Թէպէտ և փոքր ինչ իցէ յառաջագոյնն պատմել. զի Աստուծոյ ոչ միայն յառաջագոյնն պատմել է, այլ և զկնարս ցուցանել՝ որով փախչել կարիցեմք. և ես ոչ, ասէ, զայս ինչ պահանջեմ առ ՚ի նոցանէն, այլ պատմել միայն։ Եթէ ստիցեմ, և եթէ ձշմարտութեամբ խօսիցիմ, « Ելթեալ ուսարուք ՚ի տեղւոյն՝ ուր պատուիրէին, եթէ պատմեացէ՞ն ինչ. մերձեսցին զի ծանիցեն միանգամայն և հեթանոսք »։ Զինչ իցէ միանգամայնն, այլ թէ ընդ ձեզ ելանիցեն ՚ի հեթանոսաց, զի ծանիցեն զձշմարիտն Աստուած։

« Ո՛ լսելի արար զայս ամենայն ՚ի սկզբանէ »։ Տէս զնախագիտութիւնն. ոչ միայն վայրապար ինչ ասացի, այլ և լսելի իսկ ընդհանուր արարի. յայնմ հետէ իսկ պատմեցաւ ձեզ. և արդ թէպէտ և մոռանայցեն, այլ ընդ ձեզ լսիցեն։ « Եւ այժմ ես եմ Աստուած և չիք բայց յինէն »։ Արդարև փրկիչ չիք ոք արտաքս քան զիս. ոչ վայրապար ինչ պահանջեմ զթագաւորութիւնն, քանզի չիք ոք արդար բայց յինէն, և ոչ փրկիչ և Աստուած պարտի լինել արտաքս քան զիս՝ արդար առլկեալս, աքանչելի փրկիչ։ Եւ առ պատժապարտսն է մարթի լինել ումեք արդար, բայց ոչ եթէ և փրկիչ կարիցէ լինել. որպիսի ինչ՝ զի իշխան ոք կարէ դատաստան առնել արդար, սակայն փրկել չէ ձեռնհաս. զի այն իսկ տայ նմա կոտորել զբազումս, զի զարդար զդատաստանն դատիցի. իսկ առ իս ոչ այսպիսի ինչ. այլ միանգամայն արդար եմ և փրկիչ. քանզի և ոչ արգարն իսկ վճիռ՝ կարէ խափանել զիս ՚ի փրկելոյ. զի ոչ ինչ կամէն ապրեցուցանել զպատժապարտս՝ եղծանիցէ զարդարն դատաստան, քանզի և արդարութեամբ պատժէ՝ փրկութիւն մեծ է պատժապարտացն, որպէս ՚ի մարմնի զվէրս ինչ բժշկել ՚ի փրկութիւն է մարմնոյն։ Եւ զի այս այսպէս է, ես ցուցից քեզ. աղէ, ասա. յիրաւի՞ տանջելն լաւ իցէ, եթէ յանիրաւին հանապազ. այլ և ոչ զայս ասեմ ինչ, այլ զսորին հակառակն. զի որ զարգարն կեցուցանէ, ոչ եթէ զպատիժն ինչ թողուցու, այլ մեղացն վախճան առնէ։ Ո՞չ ապաքէն հայհոյիչ էր Պաւղոս. քանզի և ինքն իսկ ասէր, եթէ Շնորհ ունիմ Քրիստոսի, որ զօրացոյց զիս. զի հաւատարիմ համարեցաւ. քանզի յառաջ հայհոյիչ էի, այլ գտի ողորմութիւն. զի չիս ցուցեալ Քրիստոս զամենայն երկայնմտութիւնն ։ Եւ արդ զի՞նչ. տեսանեմք զարդարն Աստուածոյ, որ զանձն յանդիմանէր. քանզի յանդիմանեաց զանձն, և մեծաւ առաւելութեամբ, զի մի դատաւորն յանդիմանիցէ այնու զնա. քանզի ոչ ուրեք երևի թէ այնպիսի ինչ երբեք ասաց և յանդիմանեաց. այլ կամի թէ ինքն պատժապարտն զանձն յանդիմանեսցէ. զի ոչ ոք խոստանայ զչարիս, եթէ ոչ նախ լստգտանիցէ զանձին յոռութիւնն։ Եւ արդ, փրկեսցէ արդեւք զնա, թէ ոչ

փրկեաց. Ոչ, ասէ, եկի զի դատեցայց զաշխարհ, այլ զի փրկեցից զաշխարհ: Իսկ աւազակին չէր արդեւք այսպիսի. այլ սակայն կեցոյց զնա արդարն և փրկիչ: Իսկ զո՞ր չփրկեաց. զարդարսն ըստ օրինաց, որ ոչ կամեցան. քանզի և զարդարոցն վճիռ ընդ մեղաւորսն բերէ, զի Աստնեքին, ասէ, մեղան և նուաղեալ են ի փառաց անտի Աստուծոյ. և յայտ առնէ, եթէ առ կշիռ Աստուծոյ արդարութեանն, և արդարքն ևս պատժապարտք են. և փրկելն ոչ յայտ աշխարհի միայն է, այլև յետ մահու, ուր կարի պէտք իցեն փըրկութեանն:

« Դարձարուք առ իս, և ապրեսջիք՝ որ ի ծագաց երկրի »: Մի կարծիցէք եթէ յերուսաղէմ և եթէ արգելեալ կայցէ մարդասիրութիւն իմ: Ոչ ոք այսորիկ զնոսա կոչեցի, զի զձեզ կոչեցից. զի ձեզ նոքօք արկից նախանձուկս. միայն կամիմ զի դառնայցէք, և ի ձէնջ նախ լինիցի սկիզբն. ոչ զի ես առնիցեմ սկիզբն, այլ զի ձերով դառնալովն եկից ետեպ զկնի: Ոչ ինչ աւելի խնդրեմ քան զապաշխարութիւն:

« Ես եմ Աստուած և չկամ այլ ոք. յանձն իմ երդուայ, եթէ որ ինչ ելանէ ի բերանոյ իմմէ՝ արդարութիւն է »: Զի՞ պիտոյ էր երդուին. այլ զի հաւատացուցանիցէ զբանս լսողացն: Եւ զի այս այսպէս է, վկայեսցէ Պաւղոս. Զի ունիցին, ասէ, ուժգին մխիթարութիւն, որ կոչեցեալք լցեն ի կեանս յաւիտենից: « Եւ բանք իմ ոչ դառնայցեն »: Քանզի բազումանգամ ասացի, և ոչ արար վասն անարժանութեան պատժաւորացն, վասն այնորիկ աստ և զերդումն իսկ յառաջ բերի:

« Զի ինձ կրկնեսցի ամենայն ծունր »: Եւ արդարև արժան իսկ էր հաճել զանհաւատսն: Զի՞նչ խօսիցի, Տէր բարերար. Հրեայքդ զքեզ Թողլն, և զայլ կամիս մտերիմս առնել: Այն մեծ պարծանք են Հրէից, յորժամ Աստուածն նոցա զյաղթութիւնն ցուցանէր. և այն իսկ էր անհնարին վատթարութիւն թշնամեացն, յորժամ ոչ միայն ծառայիցն չյաղթէին, այլ զի և զիւրեանց տեարսն ուրանային:

« Եւ երդնուցու ամենայն լեզու Աստուածն ճշմարիտ »: Զոր Պաւղոս վասն սանդարամետականաց

ասէ: Եւ ո՞ր կատարեցաւ այս, ով Հրեայքդ. առ մեզ չայտ է զի կատարեցաւ: Ո՞ր ամենայն ծունր կըրկնեցաւ երբեք Աստուծոյ. զի յետ դարձին և դուք դարձեալ անկուշեցէք: Եւ ոչ ասէ եթէ կայցեն, այլ թէ կրկնեսցի ամենայն ծունր: Նա և իրաւունս իսկ ետ վասն սորին բանի վերագոյնն. զի եթէ զերկիրս ես արարի, չայտ է եթէ ի համաշխարհն Աստուած եմ: « Եւ երդուիցի ամենայն լեզու »: Որ և այս իսկ աստուածպաշտութեան նշանակ է: « Եւ խօսեսցի զարդարութիւն և զփառս, և առ նա գայցէ »:

« Ամաչեցէք ամենեքեան, որ որոշէք զանձինս ի Տեառնէ »: Եւ զիարդ ամենայն ծունր կրկնեսցի, եթէ իցեն ոմանք որ որոշեցեն. ի նոցանէ իսկ բազումք ամաչեսցեն, որք որոշեցին զանձինս ի Տեառնէ, և Աստուծով փառաւորեսցին ամենեքին, և ոչ ոք այլ իւիք աշխարհական ինչ իրօք արդարասցին յԱստուած: « Եւ փառաւորեսցին ամենայն զաւակ որդւոցն Իսրայելի »: Եւ այն իսկ են փառք՝ որ յարդարութենէն իցէ, և ոչ յայլ ումեքէ:

ԳԼՈՒԽ Լ.Զ

« Անկաւ Բէլ, կործանեցաւ Դագովն, եղէն կուռք նոցա յանասունս և ի սողունս »: Մանաւանդ զի և առանց այնր իսկ անկանէին, զի ոչ ինչ ունէին զօրութիւն, և ոչ ազդումն ինչ. ևս առաւել յայնմ ժամանակի՝ յորում ժողովուրդն փրկելոց էր, անկեալ կործանէին: « Եղէն ամենայն կուռք նոցա յանասունս և ի սողունս »: Կամ թէ զանասունս և զսողունս իսկ պաշտէին, կամ թէ յայն կերպարանս պատկերս ինչ առնէին:

« Իբրև բեռինք ինչ, ասէ, կապեալք և կաշկանդեալք »: Հեգնէ զկուռսն. զի եթէ աստուածք իցեն, զնմանէ իբրև զբեռինս կապեալս վերամբարձ կրիցեն. քանզի ոչ եթէ աստուածեղէնն զօրութիւնն վերամբարձ ումեք կրեցին: « Իբրև զբեռն ինչ, ասէ, վաս-

տակելոյն, ծարաւոյն և քաղցելոյն, և լքելոյ, և ոչ զօրացելոյ »։ Եւ արդ ա՛ծ զմտաւ միանգամայն, եթէ զնաւրդ կարիցեն ապրե՛լ պատերազմ։

« Լուարուք ինձ, տունդ Յակոբայ, և ամենայն ճնացեալք Իսրայէլի »։ Վասն զի բազումք էին եղ ծեալք և կորուսեալք, վասն այնորիկ ասէ, Թէ « Որ ընտրեալք յորովայնէ և խրատեալք մինչև ցծերուԹիւն »։ Զի մի՛ ոք մեղադիր լինիցի մարգարէին, եթէ միշտ զնոյն խօսի հանապազ, զնոյն յեղյեղէ, վասն այնորիկ և զպատճառսն գնէ զլռողացն զանզգայուԹիւն. ամենայն տիք, ասէ, չեն ձեզ բաւական առ ուսանել։ « Ես եմ, ասէ, և մինչև կարի ծերասջիք, սակայն ես եմ »։ Եւ մինչև ցամ՛ենժամ արդեւք միայն. ոչ, այլ առ այժմ ևեթ. զոր օրինակ յորժամ ասիցէ, եթէ Յառաջ քան զԱբրահամու լինելն եմ ես, ոչ եթէ ցայնժամ ևեթ էր։

« Ես անսամ ձեզ, ես արարի, և ես ներեցիկ. ես ընկալայց և կեցուցից զձեզ »։ Այս և զմարգասիրուԹեան նշանակ ցուցանէ, զոր մանաւանդ և խնդրելին իսկ։ Իսկ արդ դու իցես, քանզի և ես իսկ. բայց զմեզ անողորմ տանջես։ Թէպէտ և հակառակ նմին իցէ՝ զոր ասէ, եթէ « Ես անսամ ձեզ ». ոչ եթէ դուք անսայցէք ինչ ինձ. զի որ եմն միտնջենական, տեսանեմ զձեզ զի փոխսկէք աստուածս, և արդ զիա՛րդ իցէ զի չներկեմ ձեզ. դուք էք ծանրատաղտուկն բեռինք, դուք էք Թշնամանողք. զի եթէ ես ոչ տեսանէի, ի՛ վաղուց հետ իսկ սատակեալ էիք։ « Ես արարի, և ես անսայից »։ Այսինքն ոչ եթէ դուք արարէք զայս ամենայն, այլ ես. բայց այսուհետև և ԹողուԹիւն արարից և փրկեցից զձեզ։ « Ես անսամ ձեզ »։ Կամ մեղադրուԹիւն, կամ աւետիք։

« Ո՞ւմ նմանեցուցէք զիս. միԹէ կռո՞ն »։ Դարձեալ յերգ արկեալ՝ հեգնէ զստեղծուածն և զդրօշած և զկերպարանս կռոցն։ « Որ արկանէն ի՛ մէջ ոսկի ի՛ քսակէ, և զարծաԹի կշռեն կշռօք, և ի՛ վարձու ունին ոսկերիչս. առնեն ձեռագործս, և անկեալ երկիր պագանեն նմա. բարձեալ՛ի վերայ ուսոց և գնան։ Եթէ գնիցեն ի գետնի՝ անկեալ գնի, և ոչ շարժեսցի. և եթէ ոք կարդայցէ առ նա՝ ոչ լսիցէ, և ի չա-

բեաց ոչ փրկեսցէ զնոսա։ Յիշեցէք զայս և յոգոյ հանդէք. ապաշխարեցէք մոլորեալքդ. դարձարուք սրտիւք և յիշեցէք զառաջինսն յաւիտենից »։ Զոր օրինակ վերք ղերեսս քաջնեցուցանեն, նոյնպէս և մեղք զոգիս։ « Ապաշխարեցէք մոլորեալքդ »։ Եւ ա՛լ ոք մոլորեալ չկամիցի գալ յուղիղ ճանապարհ. զի Թէպէտ և ես չյորդորեի յայդ, չէր պարտ ձեզ և այլ ուստեք խնդրել զուղիղ ճանապարհ։ « Դարձարուք սրտիւք »։ Տեսանէ՞ս, զի զայսպիսի դարձ խնդրէ Աստուած։ « Յիշեցէք զառաջինսն յաւիտենից »։ Եւ այն իսկ են կերպարանք ապաշխարուԹեան, զի զառաջինսն ոք ստէպ զմտաւ ածիցէ և ղջնայցէն։ Վասն այնորիկ իսկ են գիրք, վասն նորին և պատուիրանք։ Պատրաստ եմ յամենայն ժամանակս պահանջել՛ի ձէնջ վրէժս. ոչ եթէ յայսմ ժամանակի, ասէն, յայս, և՛ի միւսումն ևս ոչ, այլ յամենայն ժամանակս։ Ոչ միայն զբարեբարուԹիւնս ցուցանեմ, այլ և զպատիժս. ոչ միայն զերկայնմտուԹիւնս, այլ և զառ՛ի ձեռացն Թողուլ բաւական է. վկայ լինել ինձ ամենայն առաստուԹեամբ, և ոչ նուազուԹեամբ, կամ բարեբարուԹեան անժամանակ, կամ պատժոյն։

« Եթէ ես եմ, ես միայն՝ որ պատմեմ յառաջագոյն զվերջինս մինչև լեալ իցէ, և միանգամայն կատարեսցին »։ Տեսանէ՞ս, զիա՛րդ ցուցանէ եթէ յառաջագոյն ասել՝ մանաւանդ Աստուծոյ է, և ոչ այլ ուրուք »։ « Եւ ածել զհանդերձեալսն միանգամայն »։ Ե՞րբ. ոչ եթէ ըստ ժամանակաց ինչ կարգի, այլ միանգամայն, յորժամ ինքն կամիցի, միանգամայն զամենայն։ Նախ ասացն՝ որ առ յատպ յետ բազում ժամանակաց լինելոց իցէն, քանզի այն իսկ են վերջինք։

« Եւ ասացի, Թէ ամենայն խորհուրդք իմ կացցեն, և զամենայն ինչ զոր և կամիմ՝ արարից »։ Զի այն իսկ Աստուծոյ միայն է՝ զամենայն ինչ զոր և ասիցէ՝ առնել. զի և ոչ ինչ իցէ՝ որ արգելուցու, և ոչ այն ինչ՝ որ խափանել կարիցէ. իսկ մարդ և ասել չիշխէ, ԹողԹէ և առնել ինչ։

« Կոչեցից յարևելից Թռչուն, և յերկրէ հեռաստանէ վասն որոյ խորհեցայ »։ Զիսրայէլացիսն կոչէ Թռչուն՝ վասն երագուԹեան դարձին. զի իբրև զԹռ-

ջունս ինչ՝ այնպէս սլացեալ էլանիցեն ընդ ձնանապարհն ընդ որ իջին։ « Զայս խորհեցայ և զսոյն արարից. զի ես իսկ եմ արարիչ »։ Եւ դարձեալ զդիւրութիւնն ցուցանէ՝ վասն որոյ խորհեցաւն. « Խորհեցայ, հաստատեցի և արարի և ածի և յաջողեցի զձանապարհս նորա »։ Զի յայտ լինի եթէ՝ ի չգոյէ. և ոչ եթէ իբրև զկարծիս ինչ իրս, այլ հաստատունս. այն իսկ է եթէ հաստատեցի և արարի զայն ինչ՝ որ էր ուրեք։ Եթէ զդիւրութիւնն խնդրեսցես, իբրև զգոյս, ասէ, ինչ կոչեցի. և եթէ զզօրութիւնն՝ զգոյսն արարի։

« Լուարուք ինձ, որոյ կորուսեալք իցէ զսիրտս »։ Ակիւղաս, Հզօրգդ սրտիւք. Սիմաքոս, Խստասիրտդ, ասէ։ Ուստի և Սահմանոս իսկ, յորժամ հրապարակագոյժն բարբառէր՝ զսոյն ասաց։ « Որ հեռացեալք էք յարդարութենէ »։ Տեսանե՞ս, որչափ ինչ կորուստ սրտի է, յորժամ զարդարութիւն ոք կորուսանիցէ։ Զի սկիզբն ձանապարհի բարութեան՝ առնել զարդարութիւն է։ Եւ արդարև, չարիք՝ անհիտ և անհանձար առնեն զմարդիկ։ Ոչ վայրապար՝ ի բաց կացեք, այլ հեռի իսկ եղերուք յարդարութենէն։

« Արդ ես մերձեցուցից զարդարութիւն իմ, և զփրկութիւն իմ ոչ յամեցուցից »։ Զմարդասիրութիւնն արդարութիւն կոչէ. քանզի կայ արդարութիւն՝ ի մարդասիրութեան, և մարդասիրութիւն յարդարութեան. վասն որոյ և ասէ իսկ, թէ Ողորմութիւն և իրաւունս երդեցից քեզ, Տէր. և դարձեալ, եթէ Ողորմեցայց՝ որում ողորմելոցն իցեմ։ և ոչ վայրապար ամենեցունն։ Տեսէ՛ր զարդարութիւնն ընդ մարդասիրութեանն. տեսէ՛ր զմարդասիրութիւնն ընդ արդարութեանն։ Տանջեաց երբեմն, այլ յետ սրչափ ամաց։ Եթէ՝ ի համառօտութիւնն նայիցիս, և եթէ յերկայնմտութիւնն, սակայն՝ ի միտ առ միշտ զմարդասիրութիւնն։ Պատժեաց զԿայէն, այլ ոչ ինչ քան զպատիժն զայնս զոր մարդասիրադոյն. զի յօժարեցուցանէր զնա մերկանալ՝ ի չարեաց։ Թէպէտ և համառօտ սատակեաց զԼերհեղեղակուլն, սակայն ոչ ինչ զոր քան զայն մեղմագոյն. զի որպէս և որպիսի կերպարանօք կարձեաց զջուրսն։

« Մերձեցուցի զարդարութիւն իմ, և ոչ հեռացի. և զփրկութիւն ոչ յամեցուցից։ Ետու՝ ի Սիոն փրկութիւն փառաւորութեան Իսրայէլի »։ Քանզի սպրեալքն իբրև զպատժապարտս և յօտար աշխարհէ եկեալք՝ ի դերութենէ, այնու իմն նախատէին եթէ նժդեհք էք և թափառականք. ես, ասէ, զնորին հառաչին արարից։ « Տայ՝ ի Սիոնի փրկութիւն Իսրայէլի՝ ի փառաւորութիւն »։ Անդրպիսի իմն պատուական առնէր զնոսա՝ ի դարձին, զի ոչ միայն ընախանձիցին, այլ և փառաւորք ևս լինիցին։

ԳԼՈՒԽ Իէ

« Է՛լ, նիստ՝ ի յերկրի — իսկ այլքն՝ ի գետնի ասեն — կոյս դուստր Բաբելոնի »։ Տէ՛ս, զիարդ հրամայեաւ տայ հրաման, զի մեզ ուսուսցէ մեծամեծս ինչ. և ոչ եթէ մարգարէութիւն ինչ, այլ հրաման Աստուծոյ. « Մո՛ւտ, նիստ՝ ի խաւար, դուստր Քաղդէացւոց. զի ոչ եթէ ևս յաւելուցուս կոչել դիրդ և փառս »։ Տէ՛ս, զիարդ երջանիկ կանայքն՝ ի թշուառութիւն դառնային, ՝ի թագաւորութենէն յերկիր կործանեալ։ « Ա՛ռ երկան. աղա ալիւր »։ Յաքքայութենէն՝ յերկանս և՝ ի գերութիւն, և յայնպիսի գժնդակ գերութիւն, և վշտագին ծառայութիւն։

« Ընկեա՛ զքօղ, բաց զալիս քո »։ Եւ զգերութիւն՝ ի թշուառութիւնն հաստացանես, և ոչ յալեացն ակն ածիցես ինչ։ « Յայտնեսցի ամօթ քո, երևեսցին նախատինք քո. զի բարձից՝ ի քէն զիրաւունս »։ Իսկ այլքն՝ եթէ վրէժ խնդրեացի. այսինքն՝ առից՝ ի քէն զվրէժս։

« Զի ես բարկացայ ժողովրդեան իմում, զի պղծեցին զժառանգութիւն իմ, և մատնեցի զնոսա՝ ի ձեռս քո, և դու ոչ արարեր նոցա ողորմութիւն և ոչ իւիք։ Ծերոց ծանրացուցեր զանուրս յոյժ, և ասացեր, քամ՝ մինչև յաւիտեան կացից իշխան »։ Տեսանե՞ս զպատ-

ձառս պատժոյն. միթէ անձամբ լինչ զօրութեամբ յաղթեցեր նոցա. ես մատնեցի զնոսա ՚ի ձեռս քո, և դու ոչ խնայեցեր, և ոչ ողորմեցար ծերոյ նոցա. և ասացեր եթէ մինչև յաւիտեան կացից իշխան: Տեսա՜ նէ՞ս, զի և զօրս Աստուծոյ մատնեալ իցէ, պարտ է տանջել, այլ խնայելով:

« Եւ դու ոչ եդիր զայս ՚ի մտի քումմ, և ոչ յիշեցեր զվախճան քո »: Զինչ ինչ քան զայս չար, յորժամ մարդ իցէ, և զնւր բնութիւնն մոռանայցէ: « Արդ լուր զայս, գիրգդ փափուկ, որ նստեիր յուսացեալ և ասէիր ՚ի սրտի քումմ: Ես եմ, և այլ ոք չկայ բնաւ »: Զայս ասէ, զի ցուցցէ քեզ եթէ ոչ ՚ի մեռայ ինչ են փոփոխմունք մարդկեղինք. զի ոչ յառաջ քան զաւուրսն ինչ վերապեսցես, այլ յանկարծակի գառնայցեն մարտնչել ընդ քեզ՝ յորս յուսացեալն էիր: « Ոչ նստայց յայրուձեան, և ոչ ծանեայց զօրքուձիւն: Եւ արդ հասցեն ՚ի վերայ քո յանկարծակի ՚ի մի օր միանգամայն երկոքին սոքա »: Տե՛ս, զիարդ յանկարծակի յայտ առնէ եթէ աստուածասաստ է բարկութիւնն, և ՚ի յերկնից պատիժք:

« Եւ այժմ կայ դու ՚ի կախարդութեանդ քումմ, և ՚ի զօրացեալ դիւահարութիւնս քո »: Բաբէ. տե՛ս զմեծազօր զօրութիւնն. յորժամ յաւուրս գուշակել երևեսցի, և նոքա ոչ միայն [1] չգիտիցեն, այլ և առ այլոցն յաւուրսն գուշակեալ՝ ոչ ինչ կարիցեն հնարս հնարել, և ոչ մեքենայս խառնել. զի կանխասայութեան [2] մարտնչել ոչ այլ ինչ է, այլ յոյժ վտանգաւոր լինել յիւր զօրութիւն, և խշտրել զպատերազմողացն տկարութիւն: Եւ ըստ մարդկան ինչ միայն ասեմ: այլ թէպէտ դիւացն իսկ զօրութիւն շարժեսցի, սակայն ոչ ինչ կարասցէ գամագիտ լինել:

« Դու ասէիր, եթէ ես եմ, և չկայ այլ ոք »: Տեսա՜ նէ՞ս, զի որ ինչ մարդկական է՝ կիրթ իմն և պատրաստական է: Եւ եթէ ՚ի վերուստ աջողութիւնն չիցէ, սակայն ՚ի զուր է կալմածն, և յամօթ ևս և ՚ի պար-

1 Յօր. Գուշակել երևեցի, և նոքա ոչ միայն, յօտար գրչէ:
2 Յօր. Չկանխասայութեան. յօտար գրչէ ուղղեալ, զի կանխասայութեան:

տութիւն լինի պատրաստողացն: Եւ այն իսկ է պարտութեան նշանակ, յորժամ յոչինչն վտահ լինիցին, ոչ գտանիցեն ինչ ՚ի նոցանէն օգնութիւն:

Եւ մինչդեռ, ասէ, ՚ի մեծացեալ միտս կայցես, « Հասցէ ՚ի վերայ քո կորուստ, և ոչ ծանիցես. և խորխորատ, և անկանիցիս ՚ի նոյն »: Տեսանե՞ս, զի աստենային ուրեք զանկարծահաս նշանակէ: Եւ այն իսկ են զարմանք, զի յառաջ քան զայնչափ ժամանակս ասէ, և ոչ ածէ ՚ի գործ զարդիւնսն կանխասացութեանն. զի ըստ մարդկան միտս այնպէս իմն համարեալ լիցի, եթէ ոչ կարիցէ կատարել՝ զօրս սպառնացեալն. և ապա յանկարծակի կատարէ զատացեալսն: Հանապազ պարտ էր ակն ունել. այլ սակայն և ոչ այսպէս լինին պիտանացուք, եթէ և արդելոյր իսկ զգաստութիւնն. զի ուր ՚ի նենութեայնն արգել, և ՚ի նոցանէն կայող էր արդելուլ:

« Եւ արդ կայ դու ՚ի դիւթութիւնս քո և ՚ի քաղցրումդ կախարդութիւնս քո [1], զոր ուսար ՚ի մանկութենէ քումմէ, եթէ կարիցես ինչ օգտել »: Նա և Աստուածն ձեր, եթէ կարիցէ ինչ օգնել. այլ նոքա զուր և վայրապար, իսկ Աստուած օգնեաց և վրէժխնդիր եղև:

« Աչխատեցար ՚ի խորհուրդս քո. յարիցեն և փրկեսցեն զքեզ աստեղագէտք երկնից »: Ակնդետս ասէ. Լուսաւորիչքն երկնից. իսկ այլքն՝ Երկնագէտքն, ասեն, որք նշմարեն զաստեղս երկնից: Զի մի՞ ոք ասիցէ եթէ գոն աստեղագէտք, որ պատմել կարիցեն զՀանդերձեալսն, վասն այսորիկ՝ ասէ, պատմեսցեն քեզ՝ յորժամ զանայցեն նշմարել անդադար զաստեղս, և վճիռ ինչ ոչ առնուցուն, ոչ այլ ինչ, բայց զի զարտմութիւնն ևեթ շահիցեն:

« Ահաւասիկ ամենեքեան իբրև զխուխ ՚ի հուր այրեսցին, և ոչ կարասցեն փրկել զանձինս ՚ի բոցոյ անտի »: Ոչ միայն քեզ չօգնեսցեն ինչ, այլ և ինքեանք ևս կորիցեն: « Աչխատեցար ՚ի փոփոխելդ քումմ ՚ի մանկութենէ քումմէ. այլ ըստ իւրաքանչիւր մոլորու-

1 Յօր. Եւ ՚ի բազում կախարդութիւնս քո, յօտար գրչէ:

Թեան, և քեզ ինչ ոչ եղև օգնականութիւն »: Իւրաքանչիւր, ասէ, ըստ մեղաց իւրեանց պատիժս կրիցեն, և դու ուստի՞ կարիցես ապրել:

ԳԼՈՒԽ ԽԸ

« Լուարուք զայս, տունդ Յակոբայ, անուանեալք յանուն Իսրայելի, ելեալքդ ի զաւակէ Յուդայ»: Իսկ այլքն՝ ի ջրոյն Յուդայ, ասեն: Տեսանե՞ս, զիարդ աղաւտէ զաղգականութիւն, եթէ չէ ինչ ընկեր առաքինութեանն, այլ վայրապար ընդ գետին Թափառեալ քանք աւելորդք պաճուճեալք: « Տուն Յակոբայ, անուանեալք յանուն Իսրայելի, ելեալքդ ի Յուդայէ, որ երդնուքդ յանուն Աստուծոյ Իսրայելի, և խրախուսեք յանուն քաղաքին սրբոյ »: Չաւաչլինան ևս պատմեսցէ. կամ որ ինչ Յեգիպտոսն, զի ասէ. Զարչարեսցեն զնոսա ամն չորեք Հարիւր և երեսուն, կամ զքառեքեալա՞ցոցն՝ զի զերեվանասուն ամ լկեցին: « Եւ լսելի եղև յանկարծակի. արարի և եկն »: Կամ իբրև զչարագործաց վաղվաղակի եկն եհաս ի վերայ, կամ իբրև անկասկածից:

« Ես ինձէն գիտեմ, զի խիստ ես դու, և ջիլք երկաթիք պարանոց քո, և ճակատ քո պղնձի »: Չի մի՞ ոք ասասցէ, եթէ զի՞նչ օգուտ եղև ի մարգարէութեանցն, որ հանապազ սպառնայինզհանդերձեալն. և նոքա ոչ ինչ օգտեցան սաստիւքն, և ոչ յուղղութիւնս ինչ եկին:

« Լուր պատմեցաւ քեզ, չև եղեալեր, և լսելի եղև յանկարծակի զոր արարին. զի մի՞ ասիցես եթէ կուռքն ինչ արարին ինձ, և մի՞ ասիցես եթէ դրօշեալքն և ձոյլքն արարին ինձ »: Վասն այնորիկ և Ագաբոս մարգարէանայր, եթէ սով մեծ լինելոց է. քանզի այն ինչ նոր զերծեալ էին ի դիւաց, զի մի՞ կարծիցեն եթէ ի նոցանէ ինչ բարկութենէ լինիցի սովն, վասն այնորիկ իւրով մարգարէին յայտնեաց, և ոչ այլ իւիք

օտարոտեաւ: Գիտեմ, ասէ, եթէ անհնազանդ ես, և չես ինչ օգտելոց ի կանխասացդ լինել պիտանացու, վասն այնորիկ յառաջագոյն ասացի:

« Լուարուք դուք զայս, և ոչ առէք ի միտ »: Այսինքն՝ անփոյթ արարէք: « Նա և զնորն իսկ լսելի առնել՝ որ յայսմ հետէ լինելոց էիցէ »: Այսինքն է որ ինչ ի դարձին լինելոց էիցէ: « Եւ ոչ ասացեր եթէ այժմ լինի և ոչ վաղ. և ոչ յառաջինն աւուրսն իսկ լուար զայդ»: Այսինքն՝ ոչ հաւատացեր և ոչ փոյթ ինչ արարեր: « Մի՞ ասասցես եթէ այո՛ գիտեմ: ոչ ծանեար և ոչ գիտէիր, և ոչ իսկզբանէ բացի զականջս քո »: Այսինքն՝ ոչ ետու քեզ թոյլ խմանալ. զի ոչ յորժամ ասացի, անդէն զպատիժն ածի ի վերայ. ասել ասացի յառաջագոյն, այլ ոչ ինչ յայտ արարի արդեամբք. որպէս և Քրիստոս ասէր բազումինչ, և լուծումն ինչ առակաց ոչ առնէր:

Այս և զպատճառս կորուածոյն ասէ. « Չի գիտէի թէ արհամարհելով արհամարհեսցես, և անօրէնն անդստին յորովայնէ կոչեսցիս: Վասն անուան իմոյ ցուցից քեզ զբարկութիւն իմ, և զբանչէլիս իմ ածից ի վերայ քո, զի մի՞ սատակեցից զքեզ »: Վասն այնորիկ և ոչ զաւետեացն ինչ ձառեցի քեզ, այլ թոյլ ետու ընդվայր թափառել: Եւ յորովայնէ որ անօրէնն զիաղդ լինիցի: Չյաձախութիւն չարեացն նշանակէ այնու. քանզի չէ մարթ թէ անդստին յորովայնէ անօրէնն լինիցի: Թէպետ և այլուր ասիցէ, թէ Օտար եղէն մեղաւորք ի մօրէ, խաբեցան յարգանդէ, և խօսեցան սուտ: Այսինքն՝ յառաջին տիոց յորժամ յարութիւն հասին՝ չարեացն և եթէ զհետ էին: Իսկ այլքն ասեն. Չի յորովայնէ մօր անօրէնն կոչեսջիր: Յայնմ իսկ ժամանակի՝ յորմէ հետէ ելին յերկրէն Եգիպտացւոց. զի ի չարչարանացն՝ իբրև յերկանց ծնան ի փրկութիւն ի ձեռն Մովսեսի:

« Վասն անուան իմոյ ցուցից քեզ զփրկութիւն իմ»: Տե՛ս, զիարդ զտանջանսն երախտիս համարի: Եւ այնմ ևս, ասէ, չէին արժանի, եթէ այնպէս կայք ինչ յուղղութիւնս. այլ վասն անուան իմոյ արարի զայն: Չի զմեղմութիւն պատժոցն ցուցանիցէ, ոչ ասէ թէ կարգեցից, այլ թէ ցուցից միայն: Եւ աղէ ասա՛,

զինչ շահ անտի ծնանիցի. « Զի միւ, ասէ, սատակեցից զքեզ »։

« Եւ զաքանչելիս իմ ածից ի վերայ քո »։ Զի ոչ միայն պատժովքն զգաստանայցեն, այլ և սքանչելեօքն. զի ոչ պատիժս, և ոչ բարութիւնս ածեմ ի վերայ՝ առանց սքանչելեաց։ Եւ եթէ կամիս՝ վերստին իսկ պատմեցից քեզ՝ զի՛արդ յիւրաքանչիւր պատիժս և բարութիւնս՝ սքանչելիք կան, զի յերկոցունց կողմանց օրինակ լինիցին շնորհք։

« Ահա աւադիկ վաճառեցի զքեզ ոչ վասն արծաթոյ, և փրկեցի զքեզ ի հնոցէ անտի աղքատութեան. վասն իմ առնեմ զայդ, զի միւ անուանս հայհոյիցի [1]. և զփառս իմ այլում ոչ տայ »։ Ժողովուրդն կոչէ ասէ իւր փառս։ « Լուր, Յակովբ, և Իսրայէլ զոր եսք կոչեմ։ Ես եմ առաջինն և ես յաւիտեան »։ Եւ զինչ նշանակիցէ այդ. « Ձեռն իմ, ասէ, արկ հիմն երկրի, և աջ իմ հաստատեաց զերկինս »։ Այս ոչ եթէ զաբարչութեանէն լինչ ճառէ, այլ զյօրինուածոյն։

« Կոչեցից, ասէ, զանշունչսն զանզգայսն, և այնպէս լուիցեն, կայցեն ի միասին. և ժողովեսցին ամենեքեան, և լուիցեն թէ ո՞վ պատմեաց նոցա զայն։ Աբսէրն քո արար Տէրն զկամս իւր ի վերայ Բաբելացւոց »։ Ա.յսինքն՝ վասն քո սիրոյ կատարեաց զկամս իւր ի նոսա. « Բառնալ զզաւակն Քաղդէացւոց »։ Զինչ խօսիս. վասն նոցա սիրոյն՝ զնոսա տանջիցէ. և ոչ ուրեք. այլ զոր օրինակ եթէ սիրեսցէ ոք զոք, և երախտիս վարկանիցէ եթէ զայս լինչ և զայս վասն քո արարի, նմանպէս և Աբտուածն առ սէր տանջեաց զնոսա, և առ սէր եհան ի գերեացն. այլ զի ոչ վասն նոցա տանջեաց զԲաբելացիսն, այնու յայտ է՝ եթէ առաքի զկամս իւր։

« Ես խօսեցայ, ես կոչեցի, ես ածի զնա, և յաջողեցի զձանապարհս նորա »։ Զկիւրոսէ ասէ՝ եթէ յառաջագոյն ասացի և հանի ի գլուխ զնրան։ Եւ քաղաքացիսն իսկ անգամ ասացաք զպատճառսն, զոր և Աբէտտարանին իսկ գտանեմք, եթէ Յորժամ լինիցի՝ հաւատասջիք եթէ ես եմ։

[1] Ցար. Զի իմ անուանս հայհոյէք։

« Մատերուք առ իս, և լսարուք. ոչ ի սկզբանէ ծածուկ լինչ խօսեցայ, և ոչ ի խաւարին տեղւոջ երկրի »։ Եւ վասն էր միշտ մօտ կոչիցէ. այլ զի զկարևորացայ և զվճռամեծաց ճառիցէ, որոց պարտ էցէ հաւատալ։ « Ոչ ի սկզբանէ ծածուկ լինչ խօսեցայ »։ Ոչ այժմ լինչ համարձակս խօսիցիմ, և յայնժամ ի ծածուկ լինչ։ « Մինչդեռ լինէրն իսկ՝ անդ էի։ Եւ արդ Տէր առաքեաց զիս և ոգի նորա »։ Տեսանե՞ս, զի և Հոգին՝ Աստուածն է և առաքիչ։

« Ա.յսպէս ասէ, Տէր Աստուած, որ փրկեացն զքեզ՝ սուրբն Իսրայէլի. ես եմ Աստուած քո. ցուցի ես քեզ գտանել զձանապարհն յօգուտ »։ Իսկ այլքն փոխանակ ցուցանելոյն, եթէ Որ ուսուցանեմն։ Աեէպ ասէ՝ եթէ ես եմ Տէր Աստուած քո, զի ծանիցեն զաւգուտ օգնականութիւնն։ Թագաւորք ոչ յառաքինութիւն լինչ յօգուտս փութան, այլ վասն իւրեանց օգտի ձեռնի հանապազ. և թէ վասն առաքինութեանց լինչ խնդիր առնիցեն, սակայն և այն վասն իւրեանց օգտի է։ Իսկ Աստուած յորդորէ զի ծառայքն իւր օգտեսցեն, և գործք ձեռաց իւրոց կեցցեն առաքինութեամբ։

« Եւ թէ լուեալ էր, ասէ, քո պատուիրանաց իմոց »։ Եւ յայտ է եթէ զոր լինչ առնէ՝ ի մեր օգուտ առնէ։ « Լինէր քեզ իբրև զգետ խաղաղութիւն քո, և արդարութիւն քո իբրև զալիս ծովու՝ յորդ և առատ »։ Խաղաղութիւնք անպակաս անխափան. չիք լինչ շահաւոր իբրև զպատուիրանս Աստուծոյ, զի և կենաց իսկ և խաղաղութեան և ամենայն բարութեանց նա է աղբիւր։

« Եւ իբրև զաւազ ծովու զաւակ քո »։ Զանգի և այս ի բարութեան կարգի էր օրինաւորացն։ « Եւ ծնունդք որովայնի քո իբրև զխոշ երկրի »։ Իսկ այլքն ասեն. Իբրև զկորեակ երկրի։ « Սակայն և ոչ արդ լինչ սատակեսցիս, և ոչ կորիցէ անուն քո առաջի իմ »։ Ա.յսինքն՝ եթէ և այժմ՝ յորժամ ոչդ լաւ լինէ։ Ո՛վ մարդասիրութիւն. Թէպէտ և չլաւ լինէ, ասէ, սակայն և այժմ մի՛ինչ կրեսցես պատիժս առաջի իմ։ Թէպէտ և ի մարդկան մտաց կորեայք, սակայն ինձ կենդանի էք, և կարող էք միւսանգամ լսել պատուիրանացն։

« Ե՛լ՝ի Բաբելոնէն, փախիր՝ի Քաղդեացւոյն »։ Եւ ընդէ՞ր արդեւք փախչէ Հրամայիցէ. զյոլովութիւնն նոցա այսու յայտ առնէ։ Քանզի ոմանց խնամ արկեալ էր ընդ երկիր թշնամեացն, զի անդէն կամէին ինալ, մերժէ զնոսա յայնպիսի խլեալական, հեղգական մտաց. «Ե՛լ, ասէ, ՚ի Բաբելոնէն, փախիր՚ի Քաղդեացւոյն», ՚ի թշնամեացդ երկրէ։ Զի այնպիսի ինչ չարիք հասանիցեն երկրիդ, զի միշտ ՚ի փախստա բերիցէք, որ ապրելդ կամիցիք։ Որպէս և անդ յԵգիպտոս եղև. զի որք արգելուինն և չտային ելանել Իսրայէլացւոյն, նոքին ստիպէին և հանէին բռնի. նոյնպէս և այդր, ասէ, այնպիսի աղէտք ՚ի վերայ հասանիցեն, և դոքա և դուք առհասարակ փախստական լինիցիք։

« Զայն ուրախութեան պատմեցէք, և լսելի լիցի, պատմեցէք մինչև ՚ի ծագս երկրի »։ Այսինքն՝ հաչակ հարէք ընդ բնաւ՝ վասն իրացդ գործելոց։ Կամ զայն ինչ յայտ առնէ, զի սաստիկ համարձակութեամբ զերծուցանէ զնոսա՚ի գերչացն, կամ զի փրկէն զնոսա։ Քանզի և ասէ իսկ, եթէ « Այսացէք՝ զի փրկեաց տա։ Տէր զժողովուրդ իւր Յակովբ, և ոչ տայցէ նմա ծառայել. և եթէ ծարաւեսցեն յանապատին, հանցէ նոցա ջուր և բխեսցէ՚ի վիմէն. պատառեսցէ վէմն, և բխեսցէ ջուր, և արբցէ ժողովուրդ իմ »։ Եւ այսու զգիւրութիւն գործէին նշանակէ. զի եթէ թերահաւատիցէ ոք, եթէ չիցեմ կարող հանել՚ի Բաբելոնէն, յայնցանէ որք յանապատին եղեն՝ հաւանեսցի։ Ցայժ առաւել քան զարարածոց բնութիւն՝ յամառ է մարդկան անձնիշխանութիւն. զի նոքա անշունչք և անզգայք են, և սոքա բանիւ պատուիրեալք, յորժամ կամին՝ լսեն, և յորժամ կամին՝ յամառին։

« Ոչ գոյ ամբարշտաց ուրախութիւն, ասէ Տէր »։ Եւ արդ զիա՞րդ չլինին ուրախ ամբարիշտք. իսկ նա աւանիկ և մարգարէքն ասեն իսկ, եթէ Ոչ գոյ հաստատութիւն՚ի տանջանս նոցա, և՚ի վաստակս մարդկան չեն, և ընդ մարդկան ոչ տանջեսցին. և միւսն, եթէ փողոմք և թմբկօք խաղայցեն առաջի նոցա մանկտի. որ մեծի և յոյժ իմն ուրախութեան նշանակ է. և դարձեալ, եթէ ձանապարհ ամբարշտաց յաջողեալ է։ Իսկ սա զիա՞րդ ասիցէ, եթէ « Ոչ գոյ ուրախութիւն ամբարշտաց »։ Իսկ այլքն ասեն, եթէ Ոչ գոյ խաղաղութիւն. զի ուրախութիւն թերևս լինիցի երբեք։ Եւ եբրայեցին Սաղմոս՝ ասէ [1]. Սմար Ադոնէսի ղարսահիմ. այսինքն՝ Զիք խաղաղութիւն ամբարշտաց [2]։ Եւ յայտ է՝ եթէ զձշմարիտ ուրախութիւնն, զանվախճանականն, զանթառամականն՝ ոչ ունիցին. զի որպէս Աստուած անվախճան է, նոյնպէս որ վասն նորա ուրախութիւնն է՝ անեղծ է, միշտ բխէ, միշտ ծաղկի, և ոչ փոխ [3]. յայնպիսի ուրախութենէ անմասն են ամբարիշտք։

Եւ ոչ ասացց եթէ չառնին ուրախ, այլ եթէ ոչ գոյ իսկ ուրախութիւն. զոր օրինակ և յորժամ զաղքատացց ոք ասիցէ, եթէ ոչ է հնար նոցա մեծանալ, քանզի չէ ինչ մարթ։ Զի մարդիկ՝ որ հանապազ՚ի մեզս կացցեն և խղճիւ չարեացն միշտ յահ և յերկիւղ կացցեն, հանապազ մահուց մահս մեռանին. և մանաւանդ զի չէ պարտ իսկ զայն՝ մահ կոչել, այլ Լաս դժբնդակ քան զմահ։ Զի մահ՝ լուծումն է չարեացն որ զմեզ կապեալ ունիցին, և զոգիսն լուծանէ՚ի մարմնոյն շղթայից, զի յորժամ զնա արձակիցէ՝ և զհոգսն ընդ նմին փարատէ. իսկ վարք անօրինացն՝ Լաս իմն աղէտք գործեն, զի երկայնեն և Լաս չաճախագոյն բորբոքեն զցաւն՚ի կապանս անձին իւրոյ շաղին իւրաքանչիւր

1 Յօր. Զկնի սաղմս բառին տառ մի եղծեալ և՚ի վերայ եդեալ է, որպէս թուի՝ յօտար գրչէ, բառն ասէ։

2 Այս բան չերևի ուրեք՚ի Սաղմոսին. իսկ եբրայական բնագիր մարգարէութեանն Նայեցայ, ուստի այսպէս.

אין שלום אמר יהוה לרשעים׃

որ է Ի կամ Ո–ն առջի ամբ Իահ տրտաֆ. այսինքն է. Զիք խաղաղութիւն, ասէ Եհովա, ամբարշտաց։ – Որպէս տեսանի՝ յօրինակի մերում պակասաւոր է եգեալն Այ՚ր Ադոնէսի տրտաֆ, որ է. Աստ Ադոնէսայն ամբարշտաց. եթէ հայ գաղափարողն օրինակիս, որպէս հաւանական թուի, չիցէ չփոթեալ ղսաչվմ ընդ առջոյ բառի, և եգեալ Նբրայեցին առջոյ, փոխանակ՝ Նբրայեցին. Իսկ կամ Ո–ն առջմ։ – Փոխանակ Իահվեի եբրայական բնագրին, որ՚ի հատորան վալթոնի, օրինակս մեր դնէ Ադոնէս (եբրայականն ׳אדני, ադոնայ), որ է՝ Աստուած–տարերէ, Աստուած–ամենակալ, իբրև համանիշ ընդ Իահ բառի, որ նշանակէ յատկ՝ Աստուած–որ են, Աստուած՝ էութիւն դերաբան։

3 Յօր. փրկի։

ոք, զի չաղէն ՚ի չար գնացիցն լինիւ։ Ին և այլ ինչ կեանք վշտագինք և առանց մեղաց իսկ. կերակրոցն հոգք, հիւանդութեանց տրտմութիւնք, ցնաւք, եպեւրանք, զրպարտութիւնք, նենգութիւնք, տխրութիւնք ժամու և տարաժամու, և որ այլ ևս այսպիսիք ինչ իցեն։ Իսկ յորժամ մեղքն ևս առընթեր կայցեն, դժնդակն և անհամբոյր գաղանն, չիք ինչ այնուհետև մխիթարութիւն ՚ի միջի։ Տես, զիարդ շրջեր կայրն տատանեալ և երերեալ։

Եւ արդ զանհանձարացն ձառէ ինչ պարտ իցէ, զանյուսիցն որ քան զքարինս, թէպէտ և մարգիկ իցեն, և՛ անզգայագոյնք իցեն. որք զվիտան ունիցին, և չըվայելիցեն ՚ի միտս. քանզի ՚ի խորխորատան չարեաց մղեն ընկենուն միշտ զանձինս, և համարին եթէ կանգուն կայցեն գլորեալքն, ընկեալ ՚ի մոլորութիւնս։ Զայնպիսեացն ասէ. « Ոչ գոյ ուրախութիւն ամբարշտաց »։ Եւ արդարև չիք իսկ, այլ ցաւոք և ցակամք են կեանք նոցա, և եթէ առանձինն ուրեք իցեն, և եթէ զայլս ՚ի պատիժս ինչ տեսանիցեն. այլոց պատժովքն՝ զիւրեանց անձանց աղէտս նկատեալ տեսանեն. զոր օրինակ որք զուղղութեանցն հետ իցեն, յորժամ լսիցեն զբարի ինչ՝ ուրախ լինիւն։ Իսկ նոքա գրոց ունկն չկարեն դնել, քանզի ոչ կամին լսել զիւրեանց պատուհասն. զի թէպէտ և յանդիման չտանջիցեն զչարս՝ գիրք, այլ յորժամ այլոց ձեռասակարաց սպառնան, նոքա իբրև լսիցեն՝ զվիտս և զմարմինս ուտեն։ Թէպէտ և ոչ յականէ զոք, սակայն հասարակաց սպառնալեօք կսկծեցուցանեն. որպէս և Պաւղոս ասէր, եթէ Ջխաղաղութեան ընդ երթայք և զսրբութեան, զի առանց այնր՝ ոչ ոք կարէ տեսանել զՏէր։ Իսկ ձեռասակարն յորժամ լսիցէ՝ առնու վէրս և գնայ. քանզի խոցի ՚ի միտն ՚ի վէմէն առնլոյ. և այն՝ մինչև զդատաւորն տեսեալ, և մինչև ժամանակ առեւնին իցէ, ոչ տանջանք ՚ի միջի և ոչ պատիժք. և խեղճ մըտացն՝ զիմաստ պահանջէ, յորժամ յարժանն Հայեցի։ Եւ գարձեալ միւս ևս ոք յորժամ լսիցէ, եթէ Մի խաբիք, ոչ պոռնիկք և ոչ շունք և ոչ իգացեալք և ոչ արուադէտք՝ զարքայութիւնն Աստուծոյ ժառանգել կարեն. և գարձեալ, եթէ Ամենայն ինն է գատաս-

տանացն ընդունելութիւն, և հրոյն նախանձ՝ որ ուտէ զհակառակորդս։ Զի յորժամ ՚ի գրոց այսպիսի ինչ լսիցեն, ուստի՞ լինիցի նոցա մխիթարութեան և սփոփութեան հնարք. յորժամ ցաւոց և տրտմութեանց պատճառք անտի իցեն, իսկ այլ ուստի՞ իցէ ուրախ լինել. յո՞ փախչիցէ, յո՞ ապաստան լինիցի, յորժամ անտի տըրտմիցէ և խոցեսցի. ՚ի նաւահանգիստ ամենայն բարութեանցն մտեալ՝ ոչ միայն ուրախ չլինիցի, այլ ցաւս և վէրս ևս առնուցու։ Յորժամ գիրք ոչ մխիթարեացեն զայնպիսին, զի՞նչ ինչ կայցէ՝ որ կարող իցէ նմա մխիթար լինել։

Կամիս զի և ՚ի թատերն ևս հրապարակատես տանիցիմք զայնպիսին, ուր ուրախութեան և ծաղու տեղի է. զի վասն այնր իսկ հնարս իմացեալ է զայն նախնեացն, և զայն ոչ ՚ի բարի ինչ, այլ ՚ի ծուլութիւն առաքինութեանց, և անկարգ վարուց ՚ի պատճառս։ Այլ նոքա յամառին ասել եթէ ոչ այդպէս, այլ յայնսակս, զի զհանապազորդ տրտմութիւնս՝ որ զմեր միտս հեղձուցանիցեն՝ այնու սփոփիցեմք։ Եւ գրեալքիր եթէ այնպիսի ինչ իցէ. և արդ երթեալ այնպիսին կամ երգչաց լսիցէ, կամ թէ որոց զկերպարանն կերպարանաց նմանեցուցանիցեն։ Յորժամ և անդ տեսանիցէ, եթէ որ յընկերին կին մտաբերեսցէ՝ գլխապարտ է, և անտի ևս վերս առեալ երթիցէ՝ ի տուն։ Զի թէպէտ և ոչ ոք ՚ի նոցանէ՝ որք ընդ նմա տեսանիցեն զթատրն, իցէ ոք իրագէտ չարեաց ինչ՝ որ նոքա իցէ գործեալ, սակայն իւր խղճէն հարկանէ զմիտս, և չիշեցուցանէ եթէ ծաղն՝ որ առնէին զայն՝ զոր ՚ի վերայ ընկերին կնոջն կալան, ոչ ՚ի նա ինչ մերձեցաւ՝ որ այժմ նմանեցաւ, այլ ՚ի սա՝ որոյ զչարիսն գործեալ էր։

Իսկ կամիցիս՝ ուր ուրախութիւնքն ինչ իցեն կամ խաղ մարգկան, ուր հարսանիք և ռայք կաքաւջանն կայցեն, անդր ձգեսցուք զայնպիսին. Սակայն և անդ և՛ս չար զոփայցէ և աշխարիցէ, եթէ յորպիսի իրս անօրինեցաւ. զի որ ամենեցուն իշխանութեամբն է և ուրախութեամբ, նա զայն անօրինութեամբ գործեաց, և գտաւ պատժապարտ։ Զի յայլոց բարութիւնս՝ առաւել խնդանամք զանձանց վնասս. յորժամ ՚ի միտ

առնուցու ումն, եթէ որով իւիք ինքն ձախողեցաւն, մարթ էր և նմա նովին պատուով և մեծարանօք վայելել, և ոչ ապաքէն ևս չար լայցէ և ապաշաւիցէ: Իսկ այլ ումք կամիցիս տանել զընացողն. ՚ի գատաւորսն ատեանս, ուր բաղումք այնպիսիք կառափին. և անդ՝ ևս չար ոձիրս և աղէտս տեսանիցէ. զի յորժամ զայլ ոք ըմբռնեալ ՚ի տանջանսն տեսանիցէ, և զնա անձն ՚ի նոյն չարիս յանդգնեալ և ոչ ըմբռնեալ, ևս առաւել զայրանայցէն ցաւքն. զի մինն ընկերաց զհոգսն, քանզի եմուտ այնուհետև ՚ի տանջանս, և միսն յերկիւղէ և ՚ի կասկածոյ ևս առաւել ուտէ զմիսս: Իսկ յորժամ յեկեղեցի և ՚ի Թատերս և ՚ի հարսանիս և յուրախութիւն տանիցեմք զմեղաւորն, և մխիթարութիւն ինչ ոչ գտանիցէ, զի գործիցեմք: Ջոր օրինակ զհիւանդ ոք չարախտս, տհաճս, յորժամ առ աղբիւր ջուրց տանիցիմք, կամ ՚ի գետս կամ ՚ի ձախիճս, յայնժամ ևս աւելի այրեսցին ՚ի փոր, զի ունկն զանան ՚ի փորն. իսկ եթէ ՚ի մահու ևս ասիցես՝ յորժամ մեռանիցեն, անդ ևս աղէտք և անհնարին չարիք: Յորժամ ՚ի հարսանեացն արտաքս ելանիցեն, ՚ի տանջանս մատնեսցին, ՚ի պատիժս հրամայեսցին. իսկ արդ, անդ ոչ ևս կարևոր ցաւք իցէն և անհնարին արհաւիրք և երկիւղք:

« Ոչ գոյ ուրախութիւն ամպարշտաց, ասէ Տէր »: Յորժամ Աստուած ասիցէ, մի՞ ինչ այնուհետև թերահաւատ լինիցիս. ետ վկիւռ եթէ ոչ գոյ ուրախութիւն, և մի՞ այլ ինչ աւելի ակն ունիցիս քան զայն: Յորժամ տեսանիցես զայլ ոք ՚ի տապ ջերմանն գոլացեալք, և կայցեն առաջի տաշտք և բաժակք պեսպես ըմպելեաց, կամ ցուրտ ջրով լի, և սեղան ինչ ամենայնիւ՝ յօրինեալ առաջի պեսպես կերակրովք և համադամ խորտիկօք, ընդ բարեկեցիկս ինչ համարեսցիս զանատացեալսն. այլ ես ոչինչ համարիմ՝ զծնկացեալսն՝ ի բարեացն, թէպետ և ձաշակիցեն իսկ ՚ի խորտկացն, յայնժամ աւելի տանջեսցին, զի տապոյ ջերմանն տայ զկերակուրն. նոյնպէս և դու յորժամ տեսանիցես զմեղաւոր ոք երկապաշտիւք մեծարեալ, սպասաւորօք պատուեալ՝ որ ասէի անտի անցանիցեն, և զողջոյն ևեթ խօսեսցին, ՚ի սեղանս բազմախորտիկս վայելեալս, ազգի

ազգի եւղօք անուշացեալս, պեսպես պաձուձանօք պաձուձեալս, մի՞ ինչ երանի տայցես, այլ սգասջիր, լացջիր և յոգւոյ հանիջիր. զի այն ոչ այլ ինչ է, այլ հրոյն՝ որ ՚ի մեղացն բորբոքեալ իցէ՝ կերակուրն. զի ևս քան զևս ղցաւսն աձեցուցանէ, և ծանրութիւն և տաղտուկ օր ըստ օրէ ոգւոյն հասուցանէ, քանզի այն ևեթ պարարէ մեծութիւնն: Եւ որպէս յաձախութիւն կերակրոյն ոչ միայն զհիւանդագայ, այլ և զողջոց մարմինս ապականէ, նոյնպէս և ՚ի բազում մեծութիւնն ոչ միայն ապականել ոգւոյն, այլ և այնոցիկ՝ որոց կարծիցին եթէ առողջք իցեն՝ ցաւոց պատճառք է և յաւելուած հարուածոց: Որպէս յայնժամ իմն աւելի չիք նոցա ուրախութիւն, յորժամ ՚ի մեղսն ուրախ լինիցին. զի տրտմութիւն ինչ դեղ և սպեղանի է այսպիսի ցաւոց, և մանաւանդ յորժամ վասն Աստուծոյ իցէ տրտմութիւնն. իսկ ուրախութիւնն և խնդութիւնն՝ յաւելուած ցաւոցն: Եւ մի՞ ինչ զայն ուրախութիւն համարեսցիս՝ որ արտասուացն պատճառք է, որք ընդ ցաւսն ուրախ լինիցին, և ընդ ողջութիւնն ոչ բերկրեսցին: Եւ արդ տես, ո՞րչափ ինչ գանձիցեն անձանց զհոգւոյն. ո՞րչափ ինչ՝ փոքր բան մարգարէութեանն՝ ունէր զօրութիւն բազում: Եւ եթէ կամիս՝ մի՞ ինչ հարևանցի անցցուք. յորժամ տեսանիցես զգբուխաւորս քաղաքաց մարմնապէղս, անդամայաղթս զբաւարձացեալ ՚ի ծերութիւն պարարտութեան, յորդիս, ՚ի թոռունս բերկրեալս, խրախճանս, ուրախալիցս, անհոգս, առանց տրտմութեան, երջանիկս, երանելիս յաւիտենական, յայնժամ աւելի համարեսջիր զնոսա լալոյ և արտասուաց արժանի. զի զոգիսն ՚ի ներքս՝ մշոյ հրոյն բորբոքեն: Քանզի մեղքն՝ բարութեամբքն իմն սովոր են աձել և ցաւոյք և վշտօք խարխել: Իսկ յորժամ մեղաւոր ոք իցէ, և ՚ի դիւրութեան և ՚ի հեշտական կեանս՝ յաւելուած ևս ցաւոցն լինի դիւրութիւնն: Եւ գիտեմք զբազումս՝ որ քան զանասունս կէս անխօսագոյնք իցեն, այսպիսի իմն կենաց ցանկան, եթէ կամի զնոյն կեանս կեալ, և զնոյն ախտ ախտանալ. և այն ևս իմն աւելի գժնդակագոյն է, զի և զգան իսկ ոչ ցաւոցն:

ԳԼՈՒԽ ԽԹ

« Լուարուք ինձ կղզիք, հայեցարուք հեթանոսք »։ Ակիւղաս ասէ՝ Ազգք. Թէոդիտոսին՝ ժողովուրդք։ « Բազում ժամանակաց յարիցէ, ասէ Տէր »։ Ակիւղաս՝ Հեռաստանէ. Թէոդիտոսին՝ ի բացուստ։ Ի կղզեաց լիմն միշտ կոչէ. Նա և զհեթանոսս իսկ հրաւիրէ իբրեւ նշան ինչ զանգգայականն՝ զդայնոյն. իբրու Թէ նոքա լսանեն նայցեն զնրան գործեալս, և զմեծութիւնն Աստուծոյ։ « Ի բազում ժամանակաց յարիցէ, ասէ Տէր »։ Ցծոյլ և զցամաք կոչէ հանդերձելոյն իրաց՝ ի վկայութիւն, օրինակաւ՝ որ ինչ՝ ի գարձին կատարէր, և ճշմարտութեամբ՝ որ ինչ՝ ի նորումն։

« Յորովայնէ մօր իմոյ կոչեաց զանուն իմ »։ Իսկ այլքն փոխանակ կոչելոյն՝ յիշեաց, ասեն. բայց ըստ Եւթանասնից՝ ոչք ասացին Թէ Յորովայնէ մօր իմոյ կոչեաց զանուն իմ, յայն միտս պարտ է մեկնել, եթէ Հոգի Տեառն եկեսցէ՝ ի վերայ քո, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լինի՝ ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն էին՝ սուրբ կոչեսցի Որդին Աստուծոյ։ Իբրև ոչ եթէ յայնմ հետէ սուրբ կոչեսցի, որ՝ ի քնէ սուրբ և սրբիչ էր ամենայնի, այլ զի յայնմ հետէ յայտնեսցի սուրբն։ Եւ գարձեալ, եթէ Ահաւադիկ կոյս յղասցի և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նորա Ցիսուս, այսինքն՝ փրկիչ. զի որպէս փրկիչն՝ ի սկզբանէ և յաւիտենից էր. և ասէ Թէ կոչեսցի փրկիչ, զի յայտնեսցի որ փրկելոցն էր. որպէս և յառաջն ասէ, եթէ ոչ հրեշտակ ոք և ոչ հոգի, այլ ինքնին Տէրն էջ և փրկեաց զնոսա, ըստ նմին օրինակի իմանալի և զսուրբն անուն։ Եւ բարւոք իսկ եղ զՅորովայնէն մօր իմոյ. զի յայնմ հետէ յայտնեցաւ հաւաստեաւ սուրբն և փրկիչն։

«Եղ զբերան իմ իբրև զսուսեր պողպատիկ»։ Որով զամենայն իսկ զգաւս և զհնազանդութիւնս կոչէր,

որով զամենայն խափանիչսն պատառէր, որով դիւացն և այսոցն ահագինս բարբառէր։ « Եւ ընդ հովանեաւ ձեռին թագոյց զնս »։ Զայս զԻսրայէլէ պարտ է իմանալ. և չեն ինչ զարմանք. զի որպէս յանուն Յակովբայ և Իսրայէլի՝ զՈրդւոյ Ձառէ, նոյնպէս և յորժամ վասն Որդւոյ ինչ Ձառիցէ, յարէ՝ի նոյն և վասն ժողովրդեանն փրկութեան։ Նա և յերկուս իսկ դէմս կայ մարգարէութիւնն, և՛ի մարգարէն և՛ի ժողովուրդն. զի սուսեր պողպատիկ՝ կամ բերան մարգարէին է, կամ բերան ժողովրդեանն. զի այնպէս իբրև սուր սուսերաւ վձարէին աղօթիւք զամենայն ինչ։ Զի չիք ինչ զօրագոյն քան զբերան մարդոյ, զոր օրինակ և ոչ տկարագոյն ինչ քան զնոյն բերան. զերկինս փակեաց, և աքանչելիս մեծամեծս կատարեաց և՛ի հնումն և՛ի նորումն. զի միայն բարբառէին մարգարէքն, և արարածք հնազանդէին. և միայն բարբառովն առնէին զդէս հալածականս՝ Աւետարանքն։ Բերան զմեղաւորս կեցոյց, և զարդարութիւն արգասոյն կատարեաց։

« Ընդ հովանեաւ ձեռին իւրոյ ծածկեաց զնս »։ Զգուշութիւնն ասէ։ « Եդ զնս իբրև զնետ մի ընտիր »։ Զամրութիւնն՝ որում՝ ոչ ոք կարիցէ գամ ինչ գտանել։ « Եւ՛ի կապարձն իւր թագոյց զնս »։ Նոյն միտք են։ « Եւ ասէ ցիս. ծառայ իմ ես Իսրայէլ, և՛ի քեզ փառաւորեցայց »։ Ոչ սակաւ ինչ պատիւ է, և ոչ փոքր ինչ մեծարանք՝ յորժամ Աստուած՝ի մարդ փառաւորեսցի։ « Եւ ասեմ. զուր ուրեմն տառապեի, ընդունայն վաստակեի, տարապարտուց ետու զզօրութիւն իմ »։ Փոխանակ ընդ տալոյն, այլքն՝ կատարեսցի, ասեն, ծախեսցի, միանգամայն սպառեսցի։ Տեսանեմ, որպիսի բանիւք մատուցանէ Նուէրս Իսրայէլ Աստուծոյ. զի ոչ ինչ գոյր աւելի քան զայս. գիտէր եթէ այսպիսի բանիւք առաւել ուրախ առնի Աստուած, վասն այսորիկ ասէ. « Իրաւունք ինձ՝ի Տեառնէ են, և վաստակք իմ առաջի Աստուծոյ իմոյ »։ Իսկ այլքն՝ Իրաւունս և արդարութիւն, ասեն. այսինքն՝ Թէ վրէժխնդրութիւն ինձ՝ի Տեառնէ եղիցի, և վաստակք իմ առաջի Աստուծոյ իմոյ. նմա, ասէ, գործեմ; նմա վաստակիմ։

« Եւ այսպէս ասէ Տէր, որ ստեղծն զիս յարգանդէ՝ ծառայ իմ» : Որպէս ասիցէ զք, եթէ նորա սեպհական եմ: « Եւ ժողովել զՅակովբ առ ինքն » : Սիմաքոս՝ Դարձուցանել, ասէ: « Եւ Իսրայէլ առ նա ժողովեսցի. և փառաւորեցայց առաջի Տեառն » : Ոչ ’ի տեղիս ինչ ուրեք, այլ վարուք և կարգօք պարտ իսկ է ժողովել առ Աստուած. և այլազգ ինչ չէ մարթ հասանել առ նա, եթէ ոչ ուղիղ ինչ կարգօք: « Փառաւորեցայց առաջի Տեառն » : Մեծ առաքինութիւն է՝ յորժամ առաջի Աստուծոյ զք փառաւորեսցի. յորժամ առաջի թագաւորի ուրուք՝ այր վինաւոր կազմ ’ի սպասու գտանիցի, առաքինի ’ի պատերազմունս, փառաւոր քան զբազումս երևի. նոյնպէս և Աստուծոյ առաջի՝ Աստուծոյ առաքինիքն:

« Եւ Աստուած իմ լիցի ինձ զօրութիւն » : Ակիւզաս՝ Հաստատութիւն, ասէ: Զի մի՛ զք համարեսցի եթէ նորա ինչ են ուղղութիւնքն, ասէ՝ թէ Աստուած իմ եղիցի ինձ զօրութիւն: « Եւ ասէ ցիս. մեծ է քեզ կոչել մանուկ իմ» : Իսկ այլքն՝ Ծառայ իմ, ասեն: Եւ ընդէ՞ր ասիցէ զայս. և ո՛ւմ չիցէ յայտ, եթէ չիք ինչ այսմ զուգական. Մովսէս, ասէ, ծառայ իմ վախճանեցաւ: Եւ եթէ ծառայ կոչել մեծ իցէ, որպիսի պատիժոց արժանի լիցիմք. զի որդիք իսկ անուանեցաք, և ապախտաւորք գտանիմք. զի թէ հրեշտակապետ զք կոչեսցի, մեծ քան զայն է անունս և աւելի պատիւս. զի ոչ կարեն բանք՝ բովանդակել զայնպիսի պատիւ, այլ որպէս Տէրն անձառ և անպատումն, նոյնպէս և ծառայութիւնն՝ որ նմա ի՛ցէ:

« Սհաւադիկ եղի զքեզ յուխտ ազգին և ’ի լոյս հեթանոսաց, լինել ’ի փրկութիւն մինչև ’ի ծագս երկրի » : Զայս և ’ի Քրիստոս առին Առաքեալքն. քանզի ձշմարտութեամբ ոչ երբեք Իսրայէլ կատարեցաւ, զի ոչ երբեք եղև փրկութիւն Իսրայէլ՝ մինչ ’ի ծագս երկրի: Զի թէպէտ և ’ի դէմս նոցա ասացաւ, այլ աստ էլ ’ի գլուխ. զի Քրիստոս եղև յուխտ ազգայ մարդկան, և ’ի լոյս հեթանոսաց՝ որ ’ի խաւարին ընկղմէր:

« Սյսպէս ասէ Տէր, որ փրկեացն զքեզ՝ Աստուած Իսրայէլի. սրբեցէք զայն՝ որ խոտէն զանձն իւր, որ անգոանին ’ի հեթանոսաց ’ի ծառայից իշխանաց »:

փոխանակ այնր՝ եթէ սրբեցէք, և ’ի նորին յաջորդայ, Ակիւզաս և այլքն՝ այլազգ տան զկարգն. ասեն. Սյսպէս ասէ Տէր, մերձաւորն Իսրայէլի՝ սուրբն նորա, ցարհամարհեալն յանձնէ, ցխոտեալն ազգաց՝ ծառայ իշխանաց: Սիմաքոս ասէ. Սյսպէս ասէ Տէր, որ փրկեացն զԻսրայէլ՝ սուրբն նորա, ցանպատմեալն յանձնէ, ցաղարտեալն յազգայ, ցծառայն իշխանաց: Թէոդիտոնն նոյնպէս՝ որպէս Ակիւզասն ասէ. բայց զմինն և եթէ փոխեաց, թէ որ անգոանեալն. քանզի նա ասէ. Ցխոտեալն՝ որ աղարտէն զինքն: Եւ արդ, միտ դիր փոփոխմանն. յիշեցուցանէ նոցա զառաջինն խոնարհութիւնն և զնուաղութիւնն, զի մի՛ յորժամ յԱստուծոյ երախտիսն վայելեսցեն՝ մոռացօնս առնիցեն. քանզի սովոր էն պարգևք բարութեանց՝ ածել զմեզ ’ի մոռացօնս, զի մի՛ յիշեսցեմք՝ թէ ո՛վ նեղեաց, կամ՞վ արար զդիւրութիւնն: Ընդ սմին և զզօրութիւնն Աստուծոյ յայտ առնէ, եթէ այնչափ յարգեաց, մեծացոյց զանգոնեալն, զխոտեալն, զվատթարեալն, զի և « Թագաւորքն անդամ տեսանիցեն և յոտն կացցեն, իշխանքն երկիր պագանիցեն » : Տեսանե՞ս զառաջադոյն նկարեալ զսքանչելիս նորոյս. զի որպէս զնա հնազանդեալ ունէին ընդ իւրեամբք Բաբելացիքն, նոյնպէս և զամենայն բնութիւն մարդկան՝ զևք. զի ’ի մոլորութիւնս կործանեալ՝ տիրէին նոցա: Բայց տե՛ս, զի՛արդ երկիր պագանեն. « Վասն Տեառն » , ասէ: Ակիւզաս և Սիմաքոս՝ Յաղագս Տեառն, ասեն: Զի մի՛ անձին ինչ համարեսցիս զուղղութիւնն, այլ Տեառն, որ հաւատարիմ և ձշմարիտ արար՝ զոր ինչ խոստացաւն. զի և ասէ իսկ, եթէ « Հաւատարիմ է սուրբն Իսրայէլի, և ընտրեաց զքեզ » :

« Սյսպէս ասէ Տէր. ’ի ժամանակի ընդունելութեան լուայ քեզ » : Ակիւզաս և Սիմաքոս, ի ժամանակի հաճութեան, ասեն. որպէս և Դաւիթն ասէ, եթէ ժամանակ հաճութեան Աստուած է: « Եւ յաւուր փրկութեան օգնեցի քեզ » : Զինչ խօսիսդ. զի թէ ժամանակ ինչ ’ի դէպ չիցէ, ո՛չ օգնիցէ. և ոչ ուրեք. այլ նախ վանն յապաղելոյն իրաւունս տայ թէ վանն էր իրիք յաւելաց: Զոր օրինակ բժիշկ մի, որ ցաւածն օգնել կամիցի, տեւէ բաւէ և ժամանակին ծնայ. բժիշկն

կարօտ է ժամանակին, իսկ Աստուած ոչ եթէ ժամանակի ինչ կարօտ իցէ. զի զառաջինն ինքն մատակարարեաց, և շրջել զնոսն՝ ինքն կարող է. զի կրկին լիցի ուղղութիւն, զի օգնիցէ, և՛ի դէպ ժամու օգնիցէ: Զի եթէ յառաջագոյն օգնեալ էր՝ ոչ ինչ աւելի օգուտ գործէր. այլ յորժամ՝ի դէպ էր օգնել, յայնժամ օգնեաց, զի յայտ լիցի եթէ և՛ի ձեռացն Թողուլ՝ ըստ նորա տեսչութեանն եղև: Եւ ընդէր այն ժամանակն եւեթ ընդունելի իցէ. այլ որպէս և Պաւղոս ասէ, թէ Ա.Հասասիկ ժամանակ ընդունելի: Քանզի է ժամանակ՝ի դէպ, և եթէ կորուսանիցեմք զդէպ ժամանակն, ոչ ևս այլ լինի մեզ՝ի դէպս առաքինութեան. որպիսի ինչ որպէս կուսանք կորուսին զժամանակն, և մեծատունն՝ որ զՂազարն անտես առնէր, և յետոյ խնդրեին ժամանակ՝ի դէպ, և ոչ գտանէին: Որպէս զի ժամանակ ընդունելութեան յայնժամ է՝ մինչ յաշխարհիս իցեմք, իսկ յորժամ ելանիցեմք աստի, ոչ ևս կարիցեմք յառաքինոյն ինչ ստանալ, և ոչ զպատուն ապաշխարութեան ժողովել: Քանզի մարտիկ որ թէ մինչդեռ տեսողքն նստիցին՝՝ի պարտութիւն մանիցի, յորժամ տեսողացն զրաւ լինիցի, ոչ ևս կարէ զպարտութիւնն՝՝ի յաղթութիւն ածել. զի մինչդեռ տեսողքն նստիցին, և յօրինիչ մարտին մծտ իցէ, ամենայն իմիք հնար է, և յաղթելոյ և պարտութեան: Իսկ յորժամ նկատեալ ժամանակն՝՝ի գլուխ ելանիցեն, այնուհետև թէ և աշխատիցի ևս, ընդ զուր և ընդ վայր են ձգունքն:

« Եւ ստեղծի զքեզ, եւտու զքեզ յուխտ հեթանոսաց »: Ակիւղաս և Սիմաքոս փոխանակ ստեղծանէլոյն, Պահեցի զքեզ, ասեն: « Հաստատել զերկիր և ժառանգել զժառանգութիւն անապատի »: Ակիւղաս և Սիմաքոս, Տալ՝՝ի ժառանգութիւն զապականեալ ժառանգութիւնն: Զայս և՛ի Քրիստոսի վերայ մարթէ առնուլ ըստ մարմնաւորութեանն, որ ասէր՝՝ի դէմս մարդկան, թէ Աստուած, Աստուած իմ, ընդ՞ր թողեր զիս:

« Ի ժամանակի ընդունելութեան լուայ քեզ, և յաւուր փրկութեան օգնեցի քեզ, և եւտու զքեզ յուխտ հեթանոսաց »: Տեսանե՞ս, զի՛ի հեթանոս

միշտ կարապետեն մարգարէքն զառնալ Քրիստոսի հաստատել զերկիր: Քանզի անհնարին չիոթութեամբ ամբոխեալ էր երկիր յառաջ քան զգալուստն. զի ոչ այնպէս տգեղ և անվայելուչ էր՝ մինչդեռ սիկն և կաւ և ջրոցն բազմութիւն ունէր զարարն երկրի, որպէս մեղայն և անօրէնութեանցն խառնութիւնք և ամբոխք՝ չիոթեցին եղծին զյօրինեալ կարգն: Քանզի միշտ մարթ, հանապազ պատերազմունք, խռովութիւնք, արիւնք հարազատաց, գոյժ և աղաղակ, լալիւն, ողբումն և աշխարանք. չկայր՝՝ի հաստատութեան երկիր: Ա.յլ Աստուած՝ նոր եկն հաստատեաց զնաւ. իբրև զքաղաք մի խռովեալ և ամբոխեալ՝ ած՝՝ի խաղաղութիւն: Եւ այն իսկ են զարմանք, զի ոչ զնուա վիչն եհան և զայլս բնակեցոյց, այլ զնոսին զարձոյց յուղղութիւնս: Զի հազարապետք յորժամ տեսանիցեն զծառայս տերանց իւրեանց՝՝ի ստահակութեան, զնոսա հալածեն, և զայլ՝՝ի տեղի արկանեն. իսկ Աստուած կամեցաւ զիւր մարդասիրութիւնն ցուցանել. զնոսին իսկ որ՝՝ի ծուլութիւնան էին՝ ած յառաքինութիւն. զի ոչ զպիտանի զոք, այլ զանյոյս՝ որոց ոչ ակն ինչ կայր՝ արար վարդապետս, որպէս զՊաւղոս՝ որ հայհոյիչ էր և թշնամանիչ և հալածիչ. որ ասէր. Զի նախ միս ցուցցէ զառաւելութիւն մեծութեան քաղցրութեան իւրոյ, յօրինակ այնոցիկ՝ որ հաւատալոցն էին՝՝ի նա՝՝ի կեանսն յաւիտենից. և զՄատթէոս զմաքսաւորն, զաւազակն՝ զկախարդն և զպիւղծն, որ և՛ի խաչին՝ հնարս կարաց հնարել առ Քրիստոս, և ըզմոգսն: Եւ քանզի խրատ վարդապետութեանն ոչինչ կարաց օգնել, ոչ երկիւղ գեհենին, ոչ հրոյն սպառնալիք, ոչ տանջանացն հրաւէրք, վասն այնօրիկ զայն եւեթ ստէպ ասէր, եթէ Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն. և Ոչ եկի զի դատեցից զաշխարհ, այլ զի կեցուցից: Վասն էր փախչէք, ընդէ՞ր սրանայք. միթէ պատիժս եկի պահանջել, միթէ ծա՞նր ինչ իցէ քարոզութիւնդ, միթէ տաղտկալի ինչ է գալուստս. ո՛վ որ փախիցէ՝՝ի բժշկէ. միթէ դե՞ղքն ինչ դաժանք իցեն. ոչ ասացի, եթէ լացէ՛ք միայն, աշխարեցէ՛ք[1] և կոծեցարո՛ւք. եթէ միայն ե-

1 Յօր. Լացէ՛ք զ ալխարեցէ՛ք:

կայք առ իս, և գոջիք հանգիստ. և զինչ դանդաղանք իցեն գալդ առ իս: Իսկ իբրև եառես եթէ ոչ կամին գալ, ըզկեր ընդ քաղաքս, ընդ գեղս, քարոզեր և ասեր՝ ապաշխարեցէք. իսկ նոքա՛ի հեռ և նախանձ և՛ի չարագործութիւնս մտաբերէին: Ո՞վ ոք ընդ իւր բարիսն լինչ նախանձեսցի: Եւ արդ տեսցուք եթէ ոչ յոլովագոյն զարմատս այնպիսի ախտիցն կոտորեաց. միթէ չբժշկեաց զբորոտն և առաքեաց առ քահանայն՝ առ քննիչ բժշկութեանն: Ո՞չ ապաքէն ըստ օրինացն Մովսեսի ժողովել և ոչ ցրուել. միթէ ընդ աղգ քահանայութեանդ եկի, և կամ ձերոմ իշխանութեան լինչ ցանկացայ. միթէ չմատուցի պատարագս ըստ օրինացդ. միթէ չմոի ընդ հնազանդութեամբ, որ տէրս և տուիչս էի օրինացդ. ի՛ւ իւիք ձաղ լինչ կամ ձունիս առ բարի զձեզ. միթէ փութացայ երբեք արկանել զձեզ՛ի փառացն ձերոց, և ո՛չ՝ առաւել հաստատել՛ի փառս. ո՛չ ապաքէն վերիպելոյն առ՛ի ձէնջ պատուիրեցի, թէ Զամենայն զոր լինչ ասիցեն ձեզ՝ արարէք, բայց ըստ գործոց նոցա մի՛ գործիցէք: Զի թէ ըստ գործոց գործէին, ապա և լսէին իսկ ոչ բանիցն ձերոց. միթէ Աստուածմի լինչ վերիպեցուցի. ո՛չ զամենայն լինչ Աստուածոյ նուիրեցի. ո՛չ որումն բժշկեցաւն՛ի լինդևոնէն, ասացի թէ Փառաւորի՛ զԱստուած. և միւսումն, եթէ ե՛րթ առ քահանայն, և մատո՛ պատարագս փոխանակ փրկութեանդ:

«Եւ ժառանգեսցեն զժառանգութիւն անապատի»: Եւ այս այնպիսեացն է, որ հաստատութեամբ ունիցին զժառանգութիւն և տիրեսցեն. ըստ այմ, եթէ Տիրեցես՛ի մեջ թշնամեաց քոց: Իսկ այլազգ ևս. անապատ զմարդկեղէն բնութիւնս կոչէ. քանզի արդարև անապատ էր՝ որ ոչ տայր պտուղ. ոչ եթէ յերկրի լինչ արմտեաց, այլ յոգւոց պտուղ. բայց եկն Տէրն, արար պտղաբերս:

«Հրաման տալ ելանել կապելոց, յայտնել այնոցիկ՝ որք նստէին՛ի խաւարի և՛ի ստուերս մահու»: Տե՛սանե՛ս, զի և զկերպարանս հաստատութեանն ասէ, եթէ ոչ մարդկեղէնն լինչ, այլ աստուածական և անմահական և երանելի և աքանչելի բնութեանն. որ ոչ վաստակաւքն լինչ կամ աշխատութեամբ, այլ միայն հրա-

մանաւ բաւական եղև հանել զկապեալսն՛ի կապանաց մեղաց, և յայտնել զայնոսիկ՝ որ՛ի խաւարի մնալոցն եանն նստէին: Քանզի և ասեր իսկ. Քաջալերեա՛ց, որդեակ, թողեալ լիցին մեղք քո. և ցՂազար, Թէ Սլի, ե՛կ արտաքս. Թէպէտ և՛ի բանտի և՛ի խաւարի իցեն, որք՛ի մարդկան սաստից արգելեալ իցեն, այլ ոչ այնպիսի խաւար է և սաստիկ կապանք, որպէս որք՛ի մեղացն կապեալ իցեն. զի նոքա՛ի հարկէ կապեալ են, և սոքա՛ի կամաց. նոցա մարթ է զի երբեք և լուծանիցին, իսկ մեղաւորացն չէ հնար Թէ լուծանիցին, այլ զի նոյնպէս մատնեսցին՛ի հուր. զորս և գեհենն իսկ չկարէցե լուծանել, եթէ աստի անդր կապեալք երթիցեն. զի եթէ լուծանելոց էին, ապա ոչ անմահ լինէին տանջանքն և ոչ անվախճան պատիժքն:

«Զամենայն ձանապարհս արածեսցին, և ընդ ամենայն շաւիղս ձարակք նոցա»: Իսկ այլքն՝ ի դաշտս, ի հարթս. այսինքն՝ եթէ ամենայն կեանք նոցա պատշաձականք լինիցին. ամենայն ուրեք գտանիցեն կերակուրս, զի զամենայն տիեզերս ընդարձակեցից նոցա, Թէպէտ՛ի ծառայութիւն կամ յաղքատութիւն կամ՛ի ցաւս կամ՛ի յայլ լինչ լկանս մատնիցին, սակայն ժուժկալք լինիցին: «Մի՛ քաղցիցեն և մի՛ ծարաւիցեն, և մի՛ խորշակահար լինիցին»: Ակիւղաս ասէ. Մի՛ հարցէ զնոսա խորշակ և մի՛ արև: Ոմանք զայս զՀանդերձելոցն ասեն. բայց ինձ Թուի Թէ զմեծաւորացս իսկ ասիցէ. զի Թէ այլն ամենայն լինչ ոչ ընտրիցէ, ոչքափ ևս առաւել և ոչ խորշակին: Զգեաց ամպ և այժմ Աստուած, մանաւանդ եթէ առաւել ևս քան զամպ, զի զմխիթարութիւն Հոգւոյն չնորհեաց մեզ և զամենայն պարգևս, զի մի՛ լինչ գամագիտ լինիցի ցանկութիւնն այրելի իւրեանց խորշակին տապով:

«Ա՛յլ որ ողորմելոցն իցէ՝ միսիթարեսցէ զնոսա»: Ակիւղաս ասէ. Ձի որ զԹալոցն իցէ՝ ողորմեսցի նոցա: Սիմաքոս ասէ, Թէ Աւաջնորդեսցէ. Թէոդիտոսն, եթէ Ածցէ զնոսա: Տեսանե՛ս, զի մարգասիրութեանն է միսիթարութիւնն: «Եւ ընդ աղբերականս առաջնորդեսցէ նոցա»: Ակիւղաս ասէ. Վարեսցէ. Սիմաքոս, Թէ Աւաջնորդեսցէ: «Եւ արարիցէ զամենայն

լերինս ՚ի ձանապարհ, և ընդ ամենայն շաւիղս արօտք նոցա»: Ակիւղաս և Թէոդիտոն ասեն. Եւ անխոչ լինիցին շաւիղք իմ: Սիմաքոս. Եւ եղիցի իմ բարձրաց ցին. այսինքն է՝ ամենայն կեանք նոցա:

« Եւ իբրև զձանապարհ հարթեալ դիւրեալ լինիցին: Ասհաւասիկ ոմանք եկեսցեն ՚ի հեռաստանէ, ոմանք ՚ի հիւսիսոյ և ՚ի ծովէ, և ոմանք յերկրէն Պարսից »: Իսկ այլքն և եբրայեցին՝ Սինիմ, ասեն [1]: « Ուրախ լերուք երկինք »: Ակիւղաս ասէ. Օրհնեցէք. այլքն ասեն, Թէ ցնծայէք. Թէոդիտոն և Սիմաքոս, Թէ Ուրախ լեր: « Եւ ցնծասցէ երկիր, զի ողորմեցաւ Աստուած ժողովրդեան իւրոյմ»: Ակիւղաս և Թէոդիտոն ասեն. Չի մխիթարեաց. Սիմաքոս ասէ. Չի սիրտիեաց: « Եւ զնոսարհս ժողովրդեան իւրոյ մխիթարեաց »: Ակյլքն ասեն. Գթացաւ: Տէոսանէս, որ պիսեաց է մխիթարութիւնն. ոչ հպարտացելոց և ոչ ամպարհաւաճից, այլ խոնարհաց, զի նոքա իսկ ընդունին զբանն Աստուծոյ, և ոչ հպարտացեալքն:

« Բայց Սիոնի ասաց. բա՛, Թող զիս Տէր: և մոռացաւ զիս Աստուած: Միթէ մոռասցի կին զմանուկ իւր, և կամ՞չ գթասցի ՚ի ծնունդ որովայնի իւրոյ. և եթէ մոռասցի զայս կին, սակայն ես ոչ մոռացայց զքեզ, ասէ Տէր »: Տէոսանէս, զի ըստ քնութեան գութս և ըստ ծնողաց խնամն անցանէ Աստուծոյ մարդասիրութիւնն:

« Ասհաւասիկ ՚ի վերայ ձեռաց իմոց նկարեցից զպարիսպս քո »: Ակիւղաս ասէ. Ասհաւասիկ ՚ի վերայ ափոց իմոց Հաստատեցի զքեզ, և պարիսպք քո առաջի իմ են Հանապազ: Սիմաքոս, Թէ ի վերայ ձեռաց իմոց նըշ-

1 Եբրայեցին סִינִים ունի: Բառս այս մի անգամ ևս եթէ հանդիպեալ առաւօտ ՚ի Ս. Գիրս ընդ ץ֗ ՀՀՀ էրէց (որ է երկիր կամ գաւառ) բառ, նշանակէ սովորաբար աշխարհ իմն կարի բացակայ. այլ թէ որ իցէ այս աշխարհ՝ դեռ ևս անմիաբան են մեկնիչք, ոմանց իմանալով զՊէլուսիա և զԵգիպտոս, և այլոց զՊարսկաստան՝ ըստ տուչութեան Թեան Եթեանանից, զոր Ս. Հերոնիմոս էրիէր հարաւոյ Թարգմանէ: Այլ առ գիտունս ժամանակիս առաւել հաւանական Թուին կարծիքն այն՝ զոր կալաւ նախ Արիաս Մոնտանոս, և զկնի նորա Յունիոս, Մէսլէր և Լանկէ, առաւելապանելով զբնիկն զաշխարհն Սինեոս, Մէսլէր և Լանկէ. Հէբռայեցւոցն լինել. զորմէ տես ՚ի Լանկէ. Հէբռայեցւոցն ասխանդ. Հատ. Բ. էջ 406 և որ գնդի. և ՚ի Միներ. Բառգիրս Ս. Գրոց Հատ. Դ. էջ 585 և 883:

մարեցի զքեզ, և պարիսպք քո միշտ յանդիման կան լինած: Թէոդիտոն, Թէ ի վերայ ձեռաց իմոց նկարեցից զքեզ, և առաջի իմ ես դու Հանապազ: Ջգուշութիւնն յայտ առնէցէ՝ եթէ անտի է, և չիք ոք որ կասկիցէ գամագիտ լինել. ըստ այսմ, եթէ ՈՀ ոք յարիցէ տակեսցէ զնոսա ՚ի ձեռաց Հօր իմոյ. և այլուր. Եթէ լինիցի Յոբնիայ կնիք ՚ի ձեռին իմում, սակայն անտի իջուցից և մատնեցից զնա:

« Եւ արագ շինեսջիր դու ՚ի ձեռաց այնոցիկ՝ որք քակեցին զքեզ»: Ակիւղաս ասէ. Շինողքն քո յայնցանէ լսցին՝ որ քակեցին զքեզ: Թէոդիտոն ասէ. Կանխեսցեն շինողքն՝ որ քակեցինն զքեզ: Սիմաքոս ասէ. Կանխեսցեն որդիքն քո՝ որ քակեցինն զքեզ: Եւ արդ կանխե՞լ ինչ է յետ այնչափ ժամանակաց. այո՛, ասէ, և յոյժ իսկ կանուխ է. զի առ մեղացն ջնջել՝ այն լինն պիտանացու է: « Վաղվաղակի շինեսջիր ՚ի ձեռաց այնոցիկ՝ որ քակեցինն զքեզ»: Եւ այն իսկ են զարմանք, զի այսպիսի փոփոխմունք լինիցին. զի յորժամ տեսանիցես եթէ ձեռք Թշնամեացն որ աւերեցին՝ նորոք և շինեացեն, ՚ի միտ առնուցուս Թէ և ՚ի գերութիւնն Աստուած մատնեաց, և շինութիւն քաղաքին նոյն առնէ, և յոր կողմ կամի՝ դարձուցանէ զմիտս մարդկան: Զինչ ինչ մեծ կայցէ քան զայնպիսի իշխանութիւնն: Այս Թէ ասիցէ ոք, եթէ իբրև զԹշնամիս յարեան ՚ի վերայ և առին, և ոչ Աստուծոյ ինչ հրամանաւ, այնմիք, իսկ զիա՞րդ իցէ՝ զի՛ ՚ի նոցանէ իսկ շինեցաւ, ո՞յորդորեաց զնոսա յայն. զի մանաւանդ նոցա իսկ չէր պարտ կանգնել զքաղաքն, որ այնպէս կռուասէր և խաղմարար էր ՚ի մանկութենէ, զոր և ինքեանք իսկ այնպէս բամբասէին: Ո՞վ ոք զիւր Թըշնամի անկեալ՝ կանգնել կամիցի, և անդրէն միաւանդամիւր Թշնամի և հակառակորդն առնիցէ: Եւ արդ, որ ցածոյց զպատերազմն և կանգնեաց զքաղաքն՝ կիւրոս էր, որ երբեմն զնոսա ընդ սորուկս ունէր, և ապա իբրև զազատս մեծացոյց: Ա՛յն իսկ չէր բաւական՝ զի Թոյլ ետ ելանել գերւոյն, այլ և մեծարանօք ևս մեծարէր, զի այլոց ևս յայտնիք լինիցին: « Եւ ոչք աւերեցինն զքեզ՝ ՚ի քէն ՚ի բաց մերժեսցին »: Թշնամիքն, խուժադուժքն հեռանայցեն ՚ի նմանէ:

« Համբարձ դու զաչս քո՛ի վեր, և տես զամենայն որդիս քո, զի աճատասիկ ժողովեցան և եկին առ-նեքեան »: Շուրջ զքև գոմարեալք, միախուռն ժողովեալք. ոչ իբրև՛ի գերութենէ ցրեցան վայրավա-տինք, այլ յարդարեալք միաժողով և յօրինեալք՝ իբրև Աստուծոյ զօրավարութեամբ առաջնորդեալք: Եւ տես, զինարդ տեսչութեամբք և պէսպէս կերպարա-նօք, և յայլ և յայլ ժամանակս լինէր գարձն. զի կի-սոցն ելանել և կիսոցն անդէն մնալ ոչ այլ ինչ էր, այլ Աստուծոյ զօրութեանն նշանակ: Աբրահամեայ զքեզ, ասէ, ի գերեացդ. չհատատացեր թէ ես ար-ձակեցի. գարձեալ՛ի բաց առնեմ զօդնականութիւն իմ, զի անդրէն յառաջին պայմանն գառնայցես. գար-ձեալ կապիցիս և այգրէն արգելուցուս, մինչև ծա-նիցես թէ զարձակուրդն ես արարի և զարգելուչն:

Եւ զի զամենեցուն զգարձն միանգամայն յայտ առ-նիցէ, հաստատէ ևս երդմամբ, եթէ « կենդանի եմ ես, ասէ Տէր, զի զամենեսին զնոսա զգեցջիր դու ի-բրև զպատմուճան մի, և զարդարեսջիր դու նոքօք, իբրև զհարսն զարդու »: Եւ այսու ցուցանէ թէ յոր թշուառութենէ յորպիսի փառաւորութիւն եղև նո-ցա փոփոխումն. զի գերութեան գարձ եղև և քա-ղաքին շինութիւն և ամենայն կարգաց եղծելոց յօ-րինուածք: Եւ ոչ անգ միայն, այլ յորժամ Յեգիպ-տոսէ՛ի հինգ գար՝[1] վեցհարիւր հազարք զօրացն ե-լանէին: Եւ արդ զինչ ասիցեմք. միթէ վասն այնր ինչ առնիցէ Աստուած զմարդիկ, զի երկայնակեաց ժա-մանակօք սիրիցին ընութիւն զամենայն երկիր: ոչ եթէ այն ինչ իցէն պատճառք. զի և՛ի սակաւ վայր կարէ առնել Աստուած աճումն մարդկան, որ ստոյգ մարդիկ ոք իցեն: Որպէս յարէ իսկ՛ի նոյն. « Զի աւերակն և աս ականեալ և կործանեալ գետինքն քո, անդ նե-ղէսջիր դու՛ի բնակութենէ նոցա, և հեռասցին՛ի քէն՝ որք կլանէին զքեզ. քանզի ասիցեն յականջս քո որդիքն քո զորս կորուսեր. անձուկ է մեզ, ընդարձա-

1 Ա.յն է՛ի կոչմանէն Աբրահամու մինչև ցելանէն Իսրայէլի յԵ-գիպտոսէ. 1921–1491 Ն. Ք., և ըստ ամաց արարչութեան աշ-խարհի 3412–3842 ըստ Եւթնանասնից, իսկ ըստ Վուլկատային 2083–2513:

կեա տեղի բնակութեան »: Տես, որչափ բազում իւնք հասանէլոց էին յետ գարձին, զի այնպէս ընութիւն, ասէ, աւերակ տեղիքն յորդւոց և՛ի ծննդոց, մինչև ասիցեն. « Անձուկ է մեզ, ընդարձակեա տեղի բնա-կութեան »: Զի յաւերակ և յանմարդի տեղիսն այն-չափ քան զչափն յաւելցոյր բազմութիւն ծննդոց՝ մինչև նեղէին ևս՛ի բազմութենէն. զի կատարեսցի՛ի վերայ նոցա հին օրհնութիւնն, եթէ Ոչ լինիցի քեզ ան-սերմն այր, և կին ամուլ: Եւ ուստի՞ լինէր այն. այլ յորժամ թշնամիքն վանէին, և նոքա ելանէին՛ի դիւ-րութիւն, յաճել և՛ի կեալ:

« Եւ ասիցես՛ի սրտի քումմ, եթէ զոսոա ինձ ո՞ ծնաւ »: Զարմացեալ իբրև երազ իմն համարէր, եթէ սոքա ուսո՞ւմ ծնան ինձ: « Զի ես անժառանգ էի »: Իսկ այլքն՝ եթէ ես սկզբուկ և այրի: Սիմաքոս՝ Անծին, ասէ. Ակիւղաս՝ Ամուլ: Տեսանե՞ս անյուսական ինչ իւ-րաց զԱստուծոյ սքանչելիսն: « Պանդուխտ և արգե-լական »: Ակիւղաս՝ Նշդեհ և հեռացեալ. Սիմաքոս՝ Վարատական և գերի, ասէ: Զի երկու իրք էին որ արգելուին. մի՝ զի ընդ այլոց ձեռամբ էր, և միւս ևս՝ զի ելեալ էր յանգոյ և անկեալ՛ի հաստատութենէ: « Եւ զոսոա ինձ ո՞վ սնոյց. զի ես լքեալ միայն էի, և սոքա ո՞ւր էին »: Եւ երկրորդելն՝ անհնարին տարա-կուսանացն զարմանալոյ և չանարգական ուրախու-թեանց նշանակ:

« Ա.յսպէս ասէ Տէր. ահաւասիկ ես համբառնամ ձեռն իմ՛ի վերայ հեթանոսաց, և՛ի կղզիս կանգնե-ցից զնշան իմ, և ածցեն զորդիս քո՛ի գոգս իւրեանց »: Զի մի՛ իւրեանց ինչ արդարութիւնն վատահ լինիցին՝ յիմնդ աչխարհելոյ, ասէ, խոտ զօրութեամբ է գարձ լինելոյ: Եւ եթէ որպիսի՛ ինչ գգուանաց իսկ գարձն, մերթ ասէ՝ ելանիցեն. գարձեալ, եթէ « Ածիցեն զօր-դիս քո՛ի գոգս իւրեանց, և զդստերս քո՛ի վերայ ուսոց բարձեալ բերիցեն. և եղիցին թագաւորք դա-յեակք քո, և իշխանք նոցա մանկակալք քո »: Եւ այս ամենայն առ Կիւրոս արքայիւ կատարեցաւ: Նա եր-կիր ևս պագանէին նոցա իշխանաք թագաւորին: Եւ տես զպէսպէս զբանչելիսս. զի ոչ միանգամայն ինչ իսաբկանօք, որպէս Յեգիպտոսէն ելին՝ ելանէին, այլ պէսպէս պատուոյք ընդ ժամանակս ժամանակս:

« Մ.ԻԹԵ առնուցու՛ ոք աւար ի հսկայէ »։ Քանզի անհաւատ լինի բանքն Թուխին նոցա՝ ի մտաց հաւատնեցուցանել զնոսա։ Եւ արդ ՀԱրիմն արդեւք աւար Թշնամիքն. այո՛, առնեն, այլ յարուն իւրեանց. զի Թէպետ և առնեն, ոչ ինչ իւրեանց զօրութեամբ, այլ ետու զնոսա ի ձեռս։ Եւ զինչ ասիցեմ ի հսկայէ. զի եԹէ յանիրաւի ոք վարեալ իցէ ի գերութեան, միԹէ չկարիցեմ ապրեցուցանել։ « ԵԹէ ոք վարեսցէ ըզհսկայ գերի, առցէ և զաւարն. բայց որ առնուցու ոք զՀարստի, ոչ կարէ ապրել». քանզի կարող է Հզօրն խնդրել զվրէժ անձին։ « Եւ կերիցեն կերիչքն զմարմինս իւրեանց, և արբցեն իւրեանց զարիւնն իւրեանց »։ Ա.յնպէս ախորժելով ինն և ցանկութեամբ։ Տեսանէս, զի ի զուր յարեան ի վերայ, և ոչ եղև նոցա չայեկան՝ զոր ինչ առինն։ « Եւ ծանիցեն ամենեքեան, եԹէ ես արարի և ոչ նոքա ինչ »։

ԳԼՈՒԽ Ծ

« Ա.յսպէս ասէ Տէր. ա՞ր է Թուղթն ապահարաշանի՝ որով արձակեցի զմայրն ձեր յինէն. կա՞մ ո՞ր է գրաւականն՝ որով վաճառեցի զձեզ »։ Չհամարիմ միայն զբարեացն կանխասացութիւնս, այլ և զանցելոցն և տրամաբանեալ տայ իրաւունս. զի ցուցցէ ԹԷ և գերութեանն ինքեանք իսկ են պատճառք։ Ա.պա եԹէ ոչ, քնաւ զի՞ անուանէր իսկ գիր ապահարզանի. զի ստվերութիւն է կանանց արձակելոյ՝ գիր ապահարզանի [1] առնուլ յիրաւի, որպէս և այժմ իսկ լինի։ Ա.յլ ես ոչ ետու, ասէ, և ոչ կարէ մեղադիր լինել եԹէ ես նախ ետու. այլ նախ ինքն կամեցաւ ելանել, և ապա ես Թոյլ ետու։ Նա և ոչ զձեզ իսկ վաճառեցի. ապա Թէ ոչ՝ ցուցէք զգրաւականն. մարդկեղէն իմն խօսել խառնէ, զի ազատ արասցէ զանձն Թէ ես չեմ պատճառք գերութեանն։ Եւ ո՞վ ոք իցէ. « Ա.յլ ի մեղս ձեր,

1 Ցօր. Զի ստերութիւն.... ապահարաշանի, յօտար գրէ։

ասէ, վաճառեցարուք դուք. և վասն անօրէնութեան ձերոյ արձակեցի զմայրն ձեր յինէն։ Զի եկի՝ և ոչ գոյր մարդ, և խօսեցայ՝ և ոչ ոք էր որ լսէր »։ Սոյնպէս և առ Քրիստոսիւ Հետեցեալն։ Զսոյն ասէր և Մովսէս, եԹէ Հայեցարուք, երկինք, և խօսեցայց. և սոյն մարգարէ՝ի սկզբանն, եԹէ Լսէր երկին, և ունկն դիր, երկիր։ Եւ զինչ իցէ՝ ԹԷ եկի. այլ ԹԷ Հանապազ մօտ եմ, Հանապազ պաշտպան լինիմ. քանզի ոչ երբեք Թողու՛ի ձեռաց՝ Աստուծոյ պաշտպանութիւնն։ Եկի, ասէ, խրատել, ուղղել, յերիւրել, և դուք ոչ լսարուք։ « Մ.ԻԹԵ ո՛չ կարիցէ փրկել ձեռն իմ, կամ ԹԷ ո՛չ զօրիցեմ ապրեցուցանել »։ Մ.ԻԹԷ տկարութիւն ինչ իցէ յինէն։

« Ա.Հաւասիկ յանդիմանութեամբ իմով՛ի սաստ իմ »։ Իսկ այլքն ասեն, ԹԷ Ա.ւերեցից զՃով։ Ա.կիւզաս ասէ. Ցամաքեցուցի։ Եւ ուստի՞ յայտ իցէ. յայնցանէ՝ որք յառաջագոյն գործեցան յԵգիպտոս։ « Եւ եդից զգետս յանապատ, և ցամաքեսցին ձկունքնոցա»։ Ա.կիւզաս ասէ. Ներխեսցին ձկունք նոցա. և Սիմաքոս ասէ. Տրորեսցին ձկունք նոցա. և զայսր նշանակ եցոյց Յովդանան գետ։

« Չգեցուցից զերկինս խաւարաւ, և իբրև զքուրձ արարի զՀանդերձ նոցա »։ Եւ այս եղև յԵգիպտոս՛ի գիշերին. զի ԹԷ և այլ ինչ ոչ, այս իսկ միայն չկարէր կորուսանել զամենեսեան։ Եւ զի ցուցցէ մարգարէս, եԹէ ոչ մարդկօրէն ինչ մտաց են բանքս, և մի՛ ասիցէ ոք, ԹԷ այո՛ գիտեմ եԹէ Աստուած զամենայն ինչ կարէ առնել, բայց ուստի՞ յայտ իցէ եԹէ դու անտի խօսիցիս, « Տէր, Տէր, ասէ, տայ ինձ լեզու խրատու, զի գիտացից խօսել՛ի ժամու ըզանն. յաւել ինձ ունկն՛ի լսել. և խրատ Տեառն բանայ զականջս իմ»։ Որպէս միւս մարգարէն ասէ, եԹէ Ես լցայ զօրութեամբ ոգւով Տեառն. եԹէ Ես ոչ էի մարգարէ և ոչ որդի մարգարէի, Հովիւ էի և Թուփ քաղէի. և գարձեալ ԹԷ Ընտրեաց զԴաւիԹ ծառայ իւր, և առ զնա՛ի Հօտից խաշանց. նոյնպէս և սա ասէ. « Տայ ինձ լեզու խրատու, զի գիտացից խօսել՛ի ժամու ըզանն »։ Լեզու զպատգամն կոչէ. և իրաւունս տայ և այնոցիկ՝ որ գժուարաւն լսէին։

ԵԹԷ ոչ մարդկեղէն ինչ բանք պաճուճեալք են, այլ Աստուածոյ պատգամք, « Յաւել ինձ, ասէ, ընդ առաւօտս ունկն ՚ի լսել »: Եւ զկնի յանկուԹիւնն և զԱստուածոյ գունակ գունակ զպարգեւսն նշանակէ: « Եւ խրատ Տեառն, ասէ, բանայ զականջս իմ »: Չի ցուցցէ ԹԷ և խրատն ՚ի նմանէ է և իմաստուԹիւնն: Եւ բարիոք ասէ. « Յաւել ինձ ունկն ՚ի լսել »: Քանզի ոչ կարէ այնպիսի ականջօք լսել զայնպիսի բարբառս, եԹէ ոչ ըստ բարբառոյն՝ և ականջքն նորոգեսցին: Չի ոչ ուսմամբ ինչ է իմաստուԹիւնն երկնաւոր, այլ ընորհօք, ըստ չափոյ իւրաքանչիւր հատուցոց:

« Ա՛յլ ես ոչ խոստանամ, և ոչ ընդդէմ դառնամ »: Տեսանէ՞ս, զազատուԹիւնն և զանձնիշխանուԹիւնն յայտ առնէ. ես ոչ, ասէ, յամառիմ, զի յայտ արասցէ եԹէ մարԹ էր նմա յամառել, որպէս երեմիայն յամառեաց, և յետոյ ասէր, եԹէ Եղև յոսկերս իմ իբրև զՀուր վառեալ. զի ցուցցէ եԹէ մարդարէուԹեան են իրքն:

« ՁԹիկունս իմ եւտու ՚ի հարուածս »: Ակիւզաս ասէ. վիրաւորչաց [1]. այլքն՝ Գանահարաց, ասեն: « Եւ զծնօտս իմ յապտակս »: Ա՛յլքն՝ Կողպտչաց: Եւ տես, որպիսի ինչ հնազանդուԹիւն ունէր յանձին. չդառնամ, ասէ, ընդդէմ: ԹէպէԹ և ընդդէմ դառնալ՚ի դէպ իսկ էր, ասել Թէ ծանր է բանդ, չՀանդարտեմ բառնալ. զի ԹէԹ մին նախատանաց ոչ համբերէր, իսկ ես տանջանացդ զիմըդ կարիցեմ տանել: Ա՛յլ այսու ամենայնիւ հնարի յայտ առնել, եԹէ ոչ իւրով ինչ կամօք և ոչ մարդկան ինչ մտօք խօսիմ: քանզի և զիմըդ իսկ՝ ուր այնչափ տանջանք՚ի վերայ կայցեն՝ յոժարեր իւրոյ մտաց խօսել ինչ:

« Եւ զերեսս իմ ոչ դարձուցից՚ի Թքոց »: Չի՞նչ խօսիսդ. այո՛, ասէ, միշտ յայսպիսի աղէտս կամ; ոչ միանգամ կամ երկիցս կամ երիցս, այլ միշտ. զի զամենայն կերպարանս բարկուԹեան և սրտմտուԹեան շարժեցին՚ի վերայ իմ և կատեցին, այլ ես ոչ ինչ ընդդէմ դարձայ:

1 Յոբ. Վիրաւոր լարաց:

Եւ յայնչափ յանհնարին Թշնամանս և չարչարանս զի՞նչ ասիցէ. « Եւ Տէր ինքնին, ասէ, եղև ինձ օգնական »: Ա՛հաւասիկ և այլ ևս նշանակ, եԹէ արդարև յԱստուածոյ են բանքն և ՚ի վերուստ հրամանքն. զի յայնչափ մոլեացն ՚ի վերայ յարուցելոյն, որ հանապազ ձեռակոծ ԹուքՀ՚ի գլուխ առնէին, վերս ՚ի վերայ վիրաց դնէին, և սպանանել վաղվաղակի ոչ կամէին՝ զի առաւել կատեսցի, երկայնամիտ լինելը, և ուշաբերեալ ասէր, եԹէ « Տէր ինքն եղև ինձ օգնական »: Որպէս և առ Աբաքեալն՝ ոչ այն միայն յայտ է զի յԱստուածոյ միայն մատնեցան՚ի չարչարանս, այլ զի և՚ի նմանէն ընդունէին զօգնականուԹիւնն, յորժամ ասիցէ՝ ԵԹէ կենաք եԹէ մահու. զի մահուն ասելով՝ զիւրեանց համբերուԹիւնն ցուցանիցէն, և կենաքն ասելով՝ զՔրիստոսի օգնականուԹիւնն. Բարձրասցի, ասէ, Աստուած՚ի մէջ: Եւ յերկրորդ ԹղԹին ԿորնԹացւոցդրէ, եԹէ Մահ՚ի մէջ զօրանայ, և կեանք՚ի ձեզ. զի Թէպէտ և մեք, ասէ, չարչարիմք, սակայն ձեզ պարտ է օգնական լինել:

« Ոչ պատկառեցի, ասէ, և ոչ ամաչեցի. զի Աստուած է իմ օգնական »: Տե՛ս, զիարդ նման են բանքս առաքեալական բանիցն. Յամենայնի, ասէ, նեղիմք, այլ ոչ փղձկիմք, և Թէպէտ և հալածիմք, այլ ոչ լքանիմք. Թէպէտ և անկանիմք, այլ ոչ կորնչիմք: « Ա՛րար զի զգեմն իմ իբրև զվեմ ապառաժ »: Եւ յայտ է եԹէ կամօք և ոչ բռնուԹեամբ: Տե՛ս, զիարդ ընդելուզանէ զբանն Աստուածոյ օգնականուԹենէն և յիւրոց կամաց. « Եւ գիտացի, ասէ, զի մերձ է՝ որ արդարացուցանէն զիս »: Միանգամայն և զՀանդերձելոց իրացն հաւատ տայր. զի ԹէԹ ես՝ որ այսչափ՚ի չարչարանս կամ՝ ոչ ինչ լքանիմ, զիարդ ևս առաւել դուք չպարտիք յուսահատ լինել՝ ԹէԹ ոչ լինիցի դարձ գերուԹեանդ. զի ԹէԹ ես՝ որ չեմ պատժապարտ՚՚ի պատիժս եմ վասն ձեր, զիարդ ևս առաւել և դուք պարտիցիք տանել վշտացդ:

« Եւ ոչ ամաչեցի »: Եւ վասն Հանդերձելոց իրացն վստահ լինի. « Չի մերձ է՝ որ արդարացուցանէն զիս». քանզի ընդ իս իսկ է: Դա աւադիկ չէ ինչ այդ նշանակ ԹէԹ ընդ քեզ իցէ. այլ և է իսկ, ասէ, նշանակ

սոյն՝ եթէ ընդ իս իցէ. զի թոյլն տալ այսպէս չարչարանս կրել և չամաչել, նշանակ է եթէ ընդ իս իցէ: Սոյն և Սաքեղովքն. զի թէ չհաւատայցէ ոք յարուցեալն, չարչարանօքն՝ զոր տեսանիցէ յԱքեաքեալն՝ հաւատասցէ թէ ինչ յարուցիւն և մահու լուծումն. ոչ այնու միայն զի հանապազ փրկեր զնոսա ՚ի վշտաց, այլ առաւել այնու՝ զի ոչ երբեք պատանիէն վհատեալք:

« Ո՞վ իցէ՝ որ ոսոխն իցէ. եկեսցէ, կայցէ առաջի իմ միանգամայն. կամ ո՞վ իցէ որ դատեսցին, մերձեսցի առ իս »: Ո՞վ ոք, ասէ, Թերահաւատ լինիցի յասացեալսս, եկեսցէ, յայտնեսցի առ իս. կամ ո՞վ կամիցի զհանդէս առնուլ՝ յառաջ կացցէ, խոստեսցի իբրև զսուտ ինչ՝ թէ կարասցէ. եթէ ոք կամեսցի չաղթականս լինել, եկեսցէ առցէ զչափ զասացեալսս, զի ես պատրաստ եմ տալ վճիռս:

« Սհաւատիկ ամենեքեան դուք իբրև զձորձս մանչեօջիք, և իբրև զցեց կերիցէ զձեզ »: Սկիւղաս՝ Ուստիճ, ասէ. Սիմաքոս՝ Երը: կամ զԱստուածոյ բարեխոսութիւնն, կամ զմարմնոյ սովորութիւն. զի Աստուած մշանջենաւոր է. մի՛ երկիցուք ՚ի մարդկան ինչ չարչարանաց. որպէս զջուր հանապազ սահին անցանեն, և ոչ երբեք կան ՚ի հաստատութեան. յայն սակս ասէ, թէ « Ո՞վ իցէ ՚ի ձէնջ որ երկնչիցի ՚ի Տեառնէ, լսիցէ ձայնի ծառայի նորա »: Զի այն իսկ է երկիւղածաց Աստուածոյ՝ մարգարէիցն լսել. որպէս և Բրիստաս իսկ ասէր, եթէ Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ. այն իսկ է մեծ և զարմանալի գործ:

« Որ գնայիք ընդ խաւար, և ոչ գոյր ՚ի ձեզ լոյս »: Վասն անգիտութեան և չար գործոց ասէ. զոր Սողոմոն իսկ ասէր, եթէ Ձանապարհք ամպարշտաց խաւարինք են, և ոչ գիտեն ուրպէս գայթագղին. իսկ Ձանապարհք արդարոց իբրև զլոյս ծագեն: Եւ ընդէր արգելք յաւել, եթէ « Ոչ գոյ նոցա լոյս »: Զի որք ՚ի խաւարի գնային՝ յայտ է եթէ ոչ էն ՚ի լոյս. բայց է երբեք ընդ խաւար գնալ, և զլոյս տեսանել յորժամ Ճրագ ոք լուցանիցէ կամ կանթեղս կամ ջահս. իսկ նոքա և ՚ի խաւարի գնան, և լոյս ինչ ոչ ունին ընդ իւրեանս՝ որ զխաւարն լուծանիցէ: Եւ ոչ ասաց, եթէ ոչ լուծանիցին, այլ թէ քնաւ իսկ ոչ լուծանիցին. քանզի բաւական է խիղճ մտացն զլոյս սրտին փախուցանել: « Յուսացարուք յանուն Տեառն »: Սիմաքոս և Թէոդիտոսիք՝ Ապաստան լերուք, ասեն: « Եւ զօրացարուք յԱստուածն ձեր »: Մեծ օգնականութիւն է՝ յորժամ ՚ի Տէր ոք յուսասցի: Եւ արդ զիա՞րդ մարթ իցէ վատահ լինել և յուսալ յանուն Տեառն, զի բաղում իրք խափանիչք կան առաջի. այլ զի յաճենայնի զխափանիչսն [1] ՚ի բաց ընկենուցումբ, և՛ի նա միայն ապաստան լինիցիք:

« Սհաւատիկ դուք ամենեքեան իբրև հուր վառեալ »: Սկիւղաս ասէ. Վառեք հուր: « Հուր վառեալ և բոց բորբոքեալ. գնացեք հրոյ լուսով ձերով և՛ի բոց բորբոքեալ »: Քանզի որ մեղանչեն՝ հուր բորբոքեն, և հանապազօր ոչ ընդ լոյս, այլ ընդ խաւար գնան: Զի անլոյս է այնպիսի հուրն և այրիչ միայն և ուտիչ. զի այնպէս իմն է քնութիւն այնր հրոյ: Եթէ հուր ունիցիք՝ այնպիսի լինչ կալարուք՝ յորոյ և՛ի լոյն գնայցէք, և մի՛ զայրիչն և զանլոյս:

« Վասն իմ եղև ձեզ այդ ամենայն. ՚ի տրտմութեան ննջեսջիք »: Սկիւղաս՝ Ի ցաւն [2], ասէ. Սիմաքոս՝ Ի ցաւս: Զի՞նչ խօսիագ. այո՛, ասէ. քանզի և Երեմիա զգոյն ասէ, եթէ վասն իմ ապականելով ապականեցի զամենայն երկիր: Ո՛չ վասն զի վայրապար մարդկան ինչ վըհծք պահանջիցեն, այլ վասն իւրոց պատգամացն՝ յորժամ արհամարհիցին և կոխան լինիցին: « Ի տրտմութեան ննջեսջիք »: Այսինքն զի ոչ քուն անգամ քաղցրանայցէ ձեզ, որպէս վերագոյն, թէ Ի լոյս գնասջիք [3]: Զի ցուցցէ թէ ոչ գոյ լոյս ՚ի գործս նոցա:

1 Յօր. Զխոչիւն:
2 Յօր. Ի ցանկն:
3 Յօր. Այսինքն.... գնասջիք, յօտար գրէ:

ԳԼՈՒԽ ԾԱ.

« Լուարուք ինձ, որ ջհետ երթայք իրաւանց, և խնդրեք ջՏէր »: Սա նոսա ասէ. Ո՞վ իսկ՝ որ ոսոխն իսկ ինձ, եկեսցէ յանդիման լսոյ ինձ. իսկ առ սոսա, եթէ « Լուարուք ինձ, որ ջհետ երթայք իրաւանց, և խընդրեք ջՏէր »: Ցնոսա ասէ. Դատ դիք, իրաւունս տուք. և զսոսա ուսուցանէ. մանաւանդ զայնպիսիսն պարտ է ուսուցանել՝ որ ջՏէր խնդրիցեն և զիրաւանցն ջհետ իցեն. իսկ նոցա թէպետ և յոյնկանէ ոք աղաղակեցէ, ՚ի զուր և ընդ վայր է: Իսկ ո՞վ իսկ՝ որ ջՏէրն խընդրիցէ. որ զիրաւանց ջհետ իցէ, և զարդարն կշռիցէ. և արդարութիւն ոչ միայն առ ընչիցն չագահելոյ, այլ և որ այլով ախտիւք չախտանայցէ: Եւ ոչ ասէ վայրապար՝ խնդրել զարժանն և զիրաւն. քանզի բազում անգամ սովոր է խօսել ՚ի բազմայ՝ ոչք զագահութեանն ջհետ իցեն, և՚ի ցանկութիւնս հարեալ իցեն: Արդ և մեզ պարտ է ջհետ երթալ արդարութեան, և խնդրել զարժանն. զի այսպիսի կերպարանօք գտանէ ոք զԱստուած. զի որ՚ի խնդիր ոք ելանիցէ, պարտ է զի գտանիցէ ևս. և արդ եթէ կարի ուժգին և առաքինի իցէ լսողն, սակայն խմաստութեան պէտք էն նմա. զի ոչ այնպէս զօրութիւն և քաջութիւն առանձինն կարեն հաւանել զլսողն, եթէ ոչ մատիկէ իմաստութիւնն. քանզի իմաստուն լսող լիմի՝ յարգէն գիւք. և այլուր, եթէ եբաց Աստուած զսիրտն նորա անսալ բանիցն Պաւղոսի. և այլուր, եթէ եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ: Եւ ՚ի սմին մարգարէի վերագոյնն ասէ, եթէ ՅաւԷլ ինձ ունկն ՚ի լսել. և Իմաստունն, եթէ Տէր տայ զիմաստութիւն, և յերեսաց նորա գիտութիւն և հանճար:

« Հայեցարուք ՚ի վէմն հաստատուն յորմէ կոփեցարուք »: Եւ բարւոք ասաց հաստատուն. քանզի զբնութեան անզաւակութիւնն վիմի կարծրութեան նմանեցոյց. քանզի անծին և անպտուղ է, որպէս և մէջն Սառայի: Միանգամայն զի և ցուցանիցէ եթէ Աստուծոյ ձեռայն գործ էն ծնունդք մեր. զի ոչ եթէ բնութիւնն լինչ ևեթ յիւրմէ նպաստ լինիցի, այլ Աստուած է որ ստեղծանէ և նկալէ. բայց ոչ իբրև զառաջինն մարդն և ոչ յոյժ հեռի լինչ քան զնոյն. զի զոր օրինակ նա եղև ստեղծեալ, նոյնպէս և աստ, թէպետ և յարգանդէն լինչ առնուցու, սակայն ինքն է որ ստեղծանէ: Եւ բարւոք իսկ ոչ միայն վէմ, այլ հաստատուն վէմ կոչեաց. զի ոչ միայն ամրութիւնն էր, այլ և պատուաւութիւն: Եւ յիրաւի խոր գործոյն նմանեցուցանէ. զոր Ակիւղաս՝ Հատոր գործ, անուանէ. Սիմաքոս՝ փապ. Թէոդիտոսն՝ Ծակ: Քանզի և գուբն անծին է. ոչ իբրև զաղբեւր բխեալ արտաքս լինչ ահեցուցանէ, այլ որ ժողովիցեն ջուրն՝ պահիցէ, և ոչ յաւելորդ լինչ գործիցէ: Իսկ այլքն ասեն, եթէ Աբրահամ յորդեցաբուք. իսկ եւթանասնիցն՝ ոչ եթէ պեղեցայք, այլ փոբեցարուք, զի յայտ լիցի եթէ Աստուած էր որ գործէր զամենայն լինչ:

« Հայեցարուք յԱբրահամ հայրն ձեր, և ՚ի Սառա՝ որ ծնաւն զձեզ »: Զայս առ օրինակ այնպիսեացն բերէ, թէ զիարդ մարթիցի այսպիսի գժուարին իրաց լինել յանցելոց հաւանեցուցանէ. պարտ և պատշաճ է ձեզ իմոց իսկ բանիցս հաւատալ. և զի ոչ անսպաք, յանցելոցն կամիմ հաւանեցուցանել: Զոր օրինակ ՚ի միջէ արարի զայդչափ բազմութիւն, զի զամենեսին զձեզ նա ծնաւ, թէպետ և զխոտհակ միայն ծնաւ՝ որ զբնութիւն սկզբնակ որովայնին ելոյծ. արդ որ զայն արարի, ձեզ դարձ՚ի գերութենէդ չկարիցեմ առնել. զի այնպէս դիւրին է ինձ զանհնարինս հնարաւորս առնել, քաւական իսկ էին նախնեացն աւետիք հաւանեցուցանել զձեզ ամենեսին:

« Զի մի էր, ասէ, և կոչեցի զնա »: Նա աւանիկ երկու իսկ էին. իսկ այլքն լուսաւորագոյն ասեն, եթէ Մի կոչեցի զնա: Բայց և մի իսկ էր՚ի բնէ. Աբար, ասէ, Աստուած զմարդն, արու և էգ արար զնոսա. ապա ուրեմն արու և էգ է մարդն, և միոյն գլուխ և միւսն մարմին: Այլ ես ոչ բազմութեամբ լինչ գործ վճարեմ, և ոչ՚ի սակաւութեան լինչ վհատիմ, այլ

առաքինութիւնք ևեթ պիտոյ են ինձ ամենայն ու-
րեք: « Չի՛ մի էր, և կոչեցի զնա և բազմացուցի զնա»:
Եւ ոչ յիւրում երկրի ինչ, այլ յօտար յերկիր բազմա-
ցուցի զնա. զի յայտ լիցի եթէ առնային ինչ դիւրին ե
ինձ: Եւ ընդ՚ի՛ր զԱդամ ոչ յիշեցէք, զի մանաւանդ
նորա օրինակք կարող էին հաւանեցուցանել զնոսա.
և նոքա իսկ ցանկ յԱբրահամ էին: Եւ այլազգ ևս. զի
այն ընտանեգոյն էր, և զի յառաքինութեանցն չէր
անմասն Աբրահամ, և զի զմխիթարութիւնսն ևս
ունէր:

« Սիրեցի, ասէ, զնա և բազմացուցի զնա »: Եւ ոչ
ասէ Թէ ընդ՚ի՛ր, զի մի՛ դարձեալ՚ի վհատութիւնս
ինչ կործանեսցէ զնոսա, եթէ վասն առաքինութեանց
կոչեցաւ նա և սիրեցաւ և բազմացաւ, և մեք զի չու-
նիմք առաքինութիւնս, զիաՀրդ ունիցիմք ակն փրկու-
թեան:

Նմանագոյնս յարէ՚ի նոյն, եթէ « Եւ զբեզ այժմ
մխիթարեցից, Սիոնի, և մխիթարեցից զամենայն գա-
ւերական քո»: Սիմաքոս ասէ. Սփոփեցից: Բայց և
զԱբրահամ ոչ վասն առաջին կենացն ինչ առաքինու-
թեանց կոչեաց Աստուած. Թէպէտ և ձառէն գիրք
զբարւոք ինչ կարգացին նորա, այլ որպէս յառաջագոյն
գիտէին զհանդերձեալսն, նոնպէս և ձեզ, ասէ, մե-
ծամեծ օրինակք պիտոյ են, որովք կարիցէք հաւանել:
Քանզի անապատ էր և արգանդն Սառայի, իսկ աստ
զերկրէ ասէ Թէ անապատ էր. այլ չէր ինչ հաւելմատ
զերկիր անպտուղ՚ի պտղաբերութիւն ածել, և զար-
գանդ անսերմն՚ի ծնունդ. զերկիր՝ և մշակաց ձեռք
կարող են արկանել՚ի գործ, իսկ զարգանդն՝ Աստու-
ծոյ միայն զօրութիւնն: Դարձեալ չէ ինչ հաւելմատ
զմի ոք կոչել և բազմացուցանել, և զբազումս՚ի բազ-
մութիւն աճեցուցանել: Եւ դարձեալ չէ ինչ հանգոյն
՚ի թշնամեացն ապրեցուցանել, և ականջ յիւրեանց
աշխարհն տանել. և յիւրեանց աշխարհէն՝ յօտար յաշ-
խարհ վարել. զի սոքա արձակեալք վաղվաղակի դար-
ձան. բայց անդ հաւանեցուցանել պիտոյ էր, զի եթէ
մեծն եղև, ծրչալի ևս առաւել և փոքրն լինելոց էր:

« Եւ մխիթարեցից զաւերակս նորա, և արարից
իբրև զդրախտ »: Սակիւզաս և Սիմաքոս ասեն. Իբրև

զփափկութիւն. Թէոդիտոնէ՝ Իբրև զպարտէզ: « Եւ
զարևմտեայ կողմանն իբրև զդրախտն Տեառն »:
Սակիւզաս ասէ. Զդաշտս նորա. Սիմաքոս, Զտերևս
նորա. Թէոդիտոնէ, Զարաբայինն [1] նորա: « Ուրա-
խութիւն և ցնծութիւն գտցեն՚ի նմա և գոհու-
թիւն »: Սակիւզաս՝ Զայն գոհութեան, ասէ. Սիմաքոս՝
Զայն երգոյ. Թէոդիտոնէ՝ Զայն սաղմոսից և ձայն
օրհնութեան: Ասպիսի ինչ լինիցի՝ որպէս զի զԱ-
տուած օրհնել գովել և փառաւորել մարթիցեն, և
կամ զի՛ի վարսն իսկ բազում շահս շահիցին:

« Լուարուք ինձ, լուարուք ինձ, ժողովուրդ իմ, և
Թագաւորք առ իս ունկնդիր լերուք. զի օրէնք յինէն
արձակիին, և գատաստանք իմ՚ի լոյս հեթանոսաց »:
Եւ վասն էր արդեաք կրկնիցէ. այլ քանզի զմեծամեծ
իրաց ձառէ, որ հազիւ հազ ելանիցեն՚ի գլուխ: « Չի՛
օրէնք յինէն արձակիին »: Դարձեալ մեղմաւ լինի
ջհանդերձեալն ինչ ակնարկէ. քանզի առաջին և կա-
րևոր այն իսկ է՝ զօրէնսն տալ, և այն իսկ որոշէ զմեզ
յանասնոց: Չի՞նչ օգուտ իցէ Թէ բանս և խօսս ու-
նիցիմք, և յուղիղ մտաց վերիպեալ իցեմք: Չի կարիքն
որովք ախտանամք՝ զմիտսն անապատ առնեն. և այն
յայնմանէ լինի, զի զխօսողութիւնն՝ որով պարտ էր
աւետագոյն գտանել, յանխօսսն բարս անասնոց փո-
փոխեմք. զի առ նոսա վաղվաղակի շնչանի ցասումն, և
՚ի մեզ ոխակալութիւն՚ի տև պահի. ՚ի նոսա նախանձ
ինչ չիք, և առ մեզ հանապազ բորբոքի: Եւ վասն այ-
նորիկ առաջին և մեծ օգնականութիւն՝ օրէնսդրու-
թիւնն է և օրէնսդիրն: Եւ վասն այնորիկ և արտա-
քինքն՝ որք զբաղաքս նուաճէին, զօրէնսդիրսն բարե-
բարս համարէին, և ս աւելի և քան զծնողս իւրեանց.
և յիրաւի իսկ, զի նոքա զկեանն, և սոքա զբարւոքն
կեալ չնորհէն, որով զգուշութիւնն և ամրութիւն լի-
նիցի: Քանզի ոչ եթէ պարիսպքն և բազմութիւնք
զօրաց, այլ ուղիղ օրէնքն պահեն զքաղաքս. որպէս
զմարդ ոք՝ ոչ եթէ մարմնոյն զօրութիւն և առողջու-
թիւն, այլ ոգւոյն առաքինութիւն և կարգացն ուղ-
ղութիւն ապրեցուցանեն՚ի վտանգ: Վասն որոյ և ասէ

[1] Այսպէս յօրինակին:

ոմն իմաստուն, եթէ Լաւ է իմաստուն քան զՀզօրն, և այր հանճարեղ քան զմիշակ առաքինի, և օգնականու-
թիւնն որ ի նմանէն լինիցի՝ քան զտասն իշխանս քա-
ղաքի. և դարձեալ. Զէն հանճարոյ են ըղթունք ի-
մաստունք: Եւ ամենայն ուրեք տեսանեմք ոչ ի մար-
միոյ զօրութենէ յաջողեալ Հզօրս, այլ յոգւոյն առա-
քինութենէ. քանզի նաւ ոչ ըղ մեծ էր և ուժգին և
պարիսպս անբակս ունիցին շուրջ զԹումբսն՝ վասն
այնորիկ հատանիցէ անցանիցէ ընդ ծովն, այլ առաջ-
նորդութեամբ ուղղչին՝ ուր և ուղղիցէ:

« Եւ դատաստանք իմ՛ի լոյս հեթանոսաց »: Այս
իսկ լուսաւորեցոյց զնոսա, զդատաստանն գիտել և
զիրաւունսն՛ի միտ առնուլ: Ցեսանե՞ս զշահս դատաս-
տանին. զի խաւար փախեաւ, երկիւղն մերժեցաւ,
ցանկութեանն կարիք փախստական եղեն: Զօր օրի-
նակ յորժամ այր դատաւոր երևեսցի, զդողս և զաւա-
զակս և զգերեզմանակրկիտս և զամենայն ազգս չա-
րագործաց առնէ հալածական, նոյնպէս և մտացն
ընտրութիւն յորժամ միւսանգամ անդրէն զիւր զօ-
րութիւնն առնուցու, և ելեալ նստիցի յաթոռն ա-
տենի, զամենայն ճշմասակարան հալածական առնէ, և
զամենայն զօգտակար՝ համբոյրս և ընտանիս: Կամ
թէ չկարէ՞ տեսեալ քաղաքս, յորժամ դատաւորն յատե-
նի նստիցի, ուրչափ ինչ ահ՛ի քաղաքին լինիցի. ոչ
միայն ճշմասակարացն, այլ և այնոցիկ՝ որոց չկայցէ ինչ
խիղճ՛ի մտի. նոյնպէս և միտք յորժամ առողջ իցէն, և
եւեալ իբրև զդատաւոր նստիցի յաթոռն ատենի, ապա
այնուհետև ահ և երկիւղ շտապէ զգործն՝ որ յառաջ
գագոյն ինչ ոչ՛ի դէպ գործեալ իցէն. և ոչ միայն չար
խորհուրդքն յանդիմանիցին, այլ և այլ ևս բարք մե-
տայն՝ որ չկարեն ինչ ճշմասակարք՝ զոզան և սարսեն:
Զօր օրինակ յորժամ Այտուած դատիցէ՝ և ոչ աստեղք
սուրբ գտանին առաջի նորա, և ոչ Պաւղոս արդա-
րանայ. Ոչ ինչ գիտեմ, ասէ, զանձին, այլ ոչ եթէ
այսու արդարանամ: Նոյնպէս և միտքն յորժամ ինք-
քեանք գատաւորք լինիցին, և զիշման պահանջիցեն
պատշաճական ամբաստանութեամբք, չիք ինչ որ կա-
րիցէ զնա արդարացուցանել. ըստ այնմ, եթէ Ո՞վ
պարծեսցի եթէ սուրբ իցէ սրտիւ, և կամ ո՞վ հա-

մարձակիցէ եթէ անարատ իցէ. և դարձեալ, եթէ
Զիք ոք արդար՝ որ առնիցէ զբարիս յերկրի, և ոչ մե-
ղանչիցէ. և դարձեալ, եթէ Զոր ինչ ասիցէք՛ի սիրտս
ձեր՝ յանկողինս ձեր զղջացարուք: Եւ Պաւղոս, թէ
Փորձեսցէ իւրաքանչիւր ոք զանձն իւր. և դարձեալ,
եթէ զանձինս դատիաք՝ ապա ոչ դատապարտիաք:
Եւ յիրաւի կամի այնպէս՝ զի զանձինս դատիաք. այլ
չհամարձակիս և չյօժարես արկանել զնիրզ մտացն՛ի
խուճապանս, և քննել զամենայն կեանս քո, զի գտա-
նիցես մեղս բազումս, և հալածականս առնիցես: Եւ
գիտեմք եթէ բազումք իսկ ախտանան զայսպիսի
ախտ, և ես իսկ ինձէն, և յիմնէն իմանամ և զայլոց.
քանզի և ես իսկ բազում անգամ կամեցայ զմտաւ ա-
ծել զամենայն զկենացս իմոց զվարս, և քննել ճշգրտիւ.
բայց ոչ իշխեցի համարձակել, զի մի՛ի բազում տըրտ-
մութիւնս ընկղմեսցին միտքս: Զի թէ կարէաք՛ի հարց
և՛ի փորձ արկանել զմեղսն, և քնաւին իսկ գյիշա-
տակս մեղացն՛ի բաց ջնջէաք, և յիրաւի և նմանա-
գոյնս ջանայաք յայն. իսկ եթէ մերթ խոշտանգեմք
զմիտս և մերթ ծուլանամք, զինչ ինչ՛ի գղջերոյն շա-
հիցեմք: Եւ զինչ օգուտ իցէ, ասեն, զմտաւ ածել,
բայց զի աւելի ևս տրտմութիւն շահիցեմք. զի աստ
զմիտս ուտիցեմք, և անդ զպատիժսն կրիցեմք: Այլ
ես ասեմ թէ գոյ օգուտ և՛ի տրտմութենէն. զի եթէ
զմտաւ ածել տատամսիցիս, դանդաղադոյն լինիցիս
միւսանգամ առ այնպիսիս մտաբերել. և ոչ այնչափ
միայն, այլ և զԱստուած ևս աղաչիցես ածել՛ի հա-
ւան. ըստ այնմ, եթէ Այս դու նախ զանօրէնութիւնս
քո՝ զի արդարասցիս: Զի թէ ասէն արդարացուցանէ,
որչափ ևս առաւել տատամսէն: Ոչ այնչափ ինչ օգնէ
յանցաւորին, որչափ յորժամ հանապազ առաջի աչաց
և՛ի միտս ունիցի զմեղսն, և ստէպ ստէպ զուիայցէ և
զանձն խոշտանգիցէ: Ոչ ինչ այնչափ զԱստուած հաշ-
տեցուցանէ վաղվաղակի, ոչ պահք և ոչ գեհենատա-
րած անկողինք և ոչ հսկումն և ոչ այլ ինչ այսպի-
սիք. և սմին հաւանութիւն՛ի գրոց կարգեցից ձեզ.
Այսպէս, ասէ, պատմեցից զմեղս իմ, և դու թողեր
զամենայն ամպարշտութիւնս մեղաց իմոց: Այսպէս,
ասէ, տեսանե՞ս, զինչ զօրութիւն է այնր, եթէ Այս

դու նախ զանօրէնութիւնս քո՝ զի արդարասցիս։ Զանօրէնութիւնս իմ, ասէ, Տէր, յուցից քեզ, և զմեղս իմ ոչ ծածկեցի։ Մինչ յորժամ դու քեզն չկամիցիս յիշեցուցանել, Աստուած ոչ գիտիցէ. մինչ չունիցիս զամենագէտ գիտութիւնն, որով զամենայն գործս իբրև՝ ի գրի գրեալ ունի։ Այլ գնա, ասեն, ղաշխարհիս զքէնամանս չջահիցիմք, զի մի ծանակ և առակ լինիցիմք։ Այլ այդպիսի մտօք ոչ գաստի զքրիստոնեամանս անցուցանել կարես, և ոչ զանտի շահն օգտել։ Եւ եթէ ասիցես, զիաղդ լինիցի այդ, ասեմ՝ եթէ և՛ ի մեծամեծ՝ ի մեղս անկանիմք այնպիսի միսիթարութեամբ, և անդ տանջելոց եմք։

« Արագ արագ մերձենայ արդարութիւն իմ, և ելցէ իբրև զլոյս փրկութիւն իմ »։ Արդարութիւն զկուր՝ որ ինչ աստ է և որ ինչ անդ լիցի՝ ասէ։ Եւ ոչ վայրապար ինչ ասէ՝ եթէ մերձեսցի, այլ եթէ « Արագ արագ մերձեսցի արդարութիւն իմ». այսինքն դատաստան իմ, և ոչ ողորմութիւն։ « Եւ ելցէ իբրև զլոյս փրկութիւն իմ»։ Եւ զինչ լցէ՝ իբրև զլոյս. այսինքն՝ յայտնի, յանկարծակի։ « Ինձ կղզիք համբերեալ սպասցին, և՛ ի բազուկ իմ յուսասցին »։ Սիմաքոս ասէ. Եւ բազուկք իմ զժողովուրդս դատեսցին. իսկ այլքն՝ զՀեթանոսս՝ ժողովուրդս ասիցեն. այլ նոյն է յուսասցին, քննեսցեն երկեղիւ, զփրկութեան պատուէրն ժողովեսցեն. և կամ որպէս Եւթանասունքն ասիցեն, եթէ ի բազուկ իմ յուսասցին. այսինքն՝ ՚ի զօրութիւն իմ։

« Համբարձէք յերկինս զաչս ձեր, և հայեցարուք յերկիր ՚ի խոնարհ. զի երկինք իբրև զծուխ հատտատեցան, և երկիր իբրև զձորձս մաշեսցին »։ Տես, որպիսի օրինակս բերէ վասն դիւրութեան դարձին. որպէս անցքն ընդ Եգիպտացիան անցին, և որպիսի ինչ իրք առ Աբրահամն եղեն։ Դարձեալ և յարարածս իսկ եկն, և զգօրութենէն Աստուծոյ ձառէ, եթէ « Երկինք իբրև զծուխ հատտատեցան »։ Ակիւղաս ասէ. Երկինք իբրև զծուխ պատեցան. Թէոդիտոն ասէ. Իբրև զաղ մածցին։ Զվանագոյն ականագոյնն երկնից՝ աղաւձակի նմանեցուցանէ կերպարանաց։ Իսկ եթէ՝ որպէս Եւթանասունքն ասեն,

եթէ իբրև զծուխ. և ոչ զոր կարէ զծուխ հաստատել, բայց միայն ամենազօր զօրութիւնն։ « Եւ երկիր իբրև զձորձս մաշեսցի »։ Իբրև ՚ի միմեանց լինն հակառակ զանաւադն հարուստ արարք, զհարուստն անաւադ. զի ցուցցէ եթէ ամենայն ինչ դիւրին է ինձ։

« Եւ բնակիչքն սորայ իբրև զնոյնս կորիցեն »։ Այսինքն՝ որ յերկրիս իցեն։ Եւ ինձ այսպէս թուի, թէ յերկինս ևս ձգիցէ զբանն. քանզի ոչ ասաց թէ իբրև զսա, այլ թէ « Իբրև զնոյնս կորիցեն »։ Թէ և զնա ևս կարող է լուծանել, քանզի ոչ այլ ինչ է, այլ ծուխ։ Եւ եթէ կամի՝ իբրև զծուխ՝ այնպէս անցուցանէ. քանզի ոչ եթէ բնութեամբ ինչ ունի զհաստատութիւնն, այլ կամօք արարչին։ Եւ քանզի աղնիւ և գեղեցիկ էր, վասն այնորիկ անաւադ արարք զնա, զի իբրով զօրութեամբն զգուշացեալ պահիցէ։ Զի եթէ զերկինս, ասէ, կորուսանել կարող եմ՝ եթէ կամիմ, ոչջափ ևս առաւել զմարդիկ՝ զձեր թշնամիս։ Վասն որոյ և յարէ զբանն վասն նախատանաց մարդկան ջարաց, և ասէ. « Լուարուք ինձ, որ գիտէք զդատաստան »։ Իսկ այլքն ասեն՝ Զարդարութիւն, այսինքն զիրաւունս։

« Ժողովուրդ իմ, օրէնք իմ՝ ի սիրտս ձեր. մի երկնչէք ՚ի նախատանաց մարդկան, և բամբասանք նոցա զձեզ մի պատրեսցեն »։ Իսկ այլքն ասեն, եթէ ի Հայհոյութեանց նոցա մի ինչ զարհուրեսջիք։ Որպէս և Քրիստոս իսկ ասէր, եթէ երանի իցէ ձեզ՝ յորժամ նախատեսցեն զձեզ, և ասասցեն զձէնջ զամենայն բան սուտ. ուրախ լերուք և ցնծացէք։

« Զի իբրև զձորձս ինչ՝ որ ուտիցին ՚ի բազում ժամանակաց »։ Ակիւղաս ասէ. Իբրև զձորձս ինչ՝ զոր ուտիցէ ուտիճ. Սիմաքոս՝ Մեց, ասէ. Թէոդիտոն՝ Ցեց։ « Եւ իբրև զասր ցեցակեր »։ Եւ արդ, ոչ զոք կսկծեցուցանեն նախատանք և բամբասանք. և զիաղդ ասէր Եզեկիա. Թերևս լուիցէ Տէր զպատգամն Ռափսակայ՝ որով նախատեաց զԱստուած կենդանի. և Դաւիթ ասէր, եթէ Փրկեա զիս ՚ի նախատչաց և՛ ի չարախոսութենէ։ Այլ Աստուծոյ նախատանացն վաղվաղակի գարձան փոխարկնք, իսկ մարգարէս զմարդկան նախատանաց ասէ։ Նա և Սեմեայ խնդրեաց վրէժ Թըշ-

նամբոյն՝ Դաւիթ, ոչ անձամբ, այլ որդւոյն պատուի-
րեաց, զի գիցէ սանձս ի վերայ այլոց՝ որ այնպիսիք ոք
գտանիցին, և որդւոյն նորա ինքեան ինչ ոչ արար: Վասն
այսորիկ և մարգարէս առ կատարեալս խօսի, թէ
« Լուարուք ինձ, որ գիտէք զիրաւունս. ժողովուրդ
իմ՝ օրէնք իմ՝ ի սիրտս ձեր »: Եւ դարձեալ, եթէ « Ի-
բրև զասը ցեցակերը »: Կամ զնախատանսն ասէ, կամ
զնախատիչսն:

Վասն որոյ յարէ ի նոյն, եթէ « Արդարութիւն
իմ յաւիտեան կացցէ, և փրկութիւն աղաչս մինչև
յազգ »: Զոր և Քրիստոս ասէր, եթէ Վասն իմ ուրախ
լերուք և ցնծացէք, զի վարձք ձեր բազումք են յերկինս:
Զի թէ երկինքն անցանիցեն, այսինքն կերպարանք երկ-
նից՝ որ այժմ սիտոց են, և մարդկան բնութիւն նմին
նման են, ի կերպարանաց ի կերպարանս փոխիցի, և
զինչ ինչ հաստատուն կացցէ ճնասց: « Փրկութիւն
իմ՝ աղգաց մինչև յազգս »: Զինչ խօսիպ. և յոր-
ժամ պատժիցես և սպանանիցես, և յայնժամ՝ փրկու-
թիւն իցէ. զի թէպետ և փրկութիւն չիցէ, սակայն
առ կորուսեալսն արդարութիւն, և առ ապրեալսն
փրկութիւն. քանզի չկաք ժամանակ որ հատանել կա-
րիցէ կամ խափանել զփրկութիւնն և զարդարու-
թիւնն: Որպէս չէն հնար՝ թէ չիցէ Աստուած, այլ
զի միշտ իցէ և յաւէժ կենդանական, նոյնպէս փըր-
կութիւնն և արդարութիւնն յամենայն ժամ և հա-
նապազօր: Եւ եթէ ասիցեն, եթէ գիտէր չիցէն
այնմ մարգիկ խնելոմուտ, կարգեսցուք ինչ և ի գրոց.
Ողորմեաց ինձ, ասէ, Աստուած, ըստ մեծի ողորմու-
թեան քումի: Մեծ ասաց ողորմութիւնն, բայց թէ
որչափ ինչ իցէ՝ ոչ գիտէ: Եւ ըստ բազում գթութեան
քումի: Բազում գթութիւնս ասաց, բայց թէ որչափ
ինչ իցեն գթութիւնքն՝ չէ խնելոմուտ: Եւ Պաւղոս՝
Առաւելութիւն մեծութեան քաղցրութեան նորա,
ասէ. բայց թէ որչափ ինչ իցէ՝ չէ հմուտ: Եւ վասն այ-
նորիկ իսկ մեծութիւն անուանէ, և մեծութիւն առա-
ւել, զի գուցի երբեք իշխեսցես հարցև փորձ արկանել:
Զի որչափ և քննիցես, անցանէ ըստ քեզ առաւելու-
թեամբ, և եթէ ի քեզ ամիոփել կարիցես, ապա ա-
ռաւելութիւնն չէ առաւելութիւն: Եւ դարձեալ ա-

սէ, եթէ Շնորհքն Աստուծոյ ի վերայ անպատուհն
պարգևացն. քանզի չկարէ ոք պատմել:

Այլ տեսցուք, միթէ պատմել չիցէ հնար, և իմա-
նալ իցէ ինչ հնար. քանզի և ոչ զամենայն ինչ զոր
չկարիցեմք պատմել, զնոյն և իմանալ չկարիցեմք:
Նա աւանիկ ըստ միտս, ասէ, անցանէ խաղաղու-
թիւնն. Խաղաղութիւնն, ասէ, Աստուծոյ՝ որ ի վեր
է քան զամենայն զիտս: Այլ զխաղաղութենէ ա-
սաց, ասէն. և մեք զմարդասիրութենէն և զմեծա-
մեծ պարգևացն հարցանեմք: Եւ զինչ մեծ ի մարդ-
ասիրութեանն քան զխաղաղութիւն կայցէ. զի
մեծ և գլխաւոր ի մարդասիրութիւնն՝ խաղաղու-
թիւնն է: Բայց սակայն և անուանցն ևս միտ դիցուք,
թէ ունր մարդասիրութիւնն Աստուծոյ առաւելագոյն
գտանիցի. Զոր ակն ոչ ետես, ասէ, և ունկն ոչ լուաւ,
և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ՝ զոյն պատրաստեաց
Աստուած սիրելեաց իւրոց: Այսպէս եթէ չափ ինչ ուրեք
եդեալ տեսանիցես, մի ընդ այնու և եթէ փակեալ հա-
մարիցես զԱստուծոյ մարդասիրութիւնն: Այսպիսի
ինչ է զոր ասեմն. Որպէս գթայ Հայրն, ասէ, յորդիս,
այնպէս գթայ Տէրն յերկիւղածս իւր. իսկ յԱբեաթա-
նին հակառակ իմն սմին ցուցանէ, եթէ Դուք, ասէ,
չարք, գիտէք պարգևս տալ որդւոց ձերոց. և աստ
մարգարէս իսկ. Զի թէ մոռանայցէ, ասէ, կին զծը-
նունդս իւր, սակայն ես զքեզ ոչ մոռացայց: Որպէս զի
օրինակս ոչ յայն սակս եդեալ է՝ եթէ այնչափ միայն
իցէ մարդասիրութիւնն, այլ զի մեք այլ ինչ չափ գթայ
ի վեր քան զայս ոչ գիտեմք, և ի մեր միտս վերջին
սահման ասէ: Եւ զի այսպէս է, լուր իսկ որ ասէն.
Զի եթէ և մոռացի զայս կին, սակայն ես ոչ մոռա-
ցայց զքեզ, սա է Տէր: Այսպէս և յորժամ լսիցես,
եթէ Որպէս ի բացէ են արևելք յարևմտից, այն-
պէս հեռի արար ի մեզ զմեղս մեր. մի այնչափ և եթէ
կարծիցես, այլ և առաւել յոյժ. զի քան զայն այլ
ինչ չափ մեծ ոչ գիտես, վասն այսորիկ ի ծանօթագոյն
ած քեզ օրինակ: Այլ զի և աւելի հեռացոյց, յայտ
է յասելոյն, եթէ Սպանի զմեղս և ջնջեցի. զի այս
յոյժ աւելի է քան զՀեռացուցանելն. քանզի և հե-
ռացելոյն մարթ է և մօտել, իսկ ջնջեալն ոչ ևս այլ

գրի: Եւ այլուր ասէ, եթէ Հայր զթութեամբ և Աստուած ամենայն մխիթարութեամբ. և աստի զինչ կամի ցուցանել: Ինձ այսպէս թուի, եթէ որպէս լինքն անհաս է, նոյնպէս և ողորմութիւնն նորա. զի որպէս զօրութիւնն անհասական է, նոյնպէս և ամենայն ինչ զօրութեանն. ըստ այնմ, եթէ Ցամենայն ինչ զոր կամեցաւ՝ արար. և դարձեալ, եթէ Զիք բան ինչ անկար 'ի նմա. զի անչափ զօրութեանն՝ և խնամատարութիւնն անբաւ է. զի թէ խնամատարութեանն նորա չիք չափ, իսկ մարդասիրութիւնն նորա ընդ չափիւ անկանիցի. և ոչ ուրեք. որում փափագիցեմքն, որով ամենայն ինչ հաստատեցաւ եկաց: Եւ վասն սիրոյն ևս ձառէ, եթէ Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին իւր միածին ետ: Եւ զդատաստանացն, եթէ Դատաստանք նորա իբրև զխորս բազում: Եւ զողորմութենէն, եթէ Առնէ զողորմութիւն 'ի հազար դար:

Զայս ասելով ոչ եթէ 'ի ծուլութիւնս ինչ յօժարեցուցանեմք զձեզ, այլ զվհատեալսն զարթուցանիցեմք քաղցրական յուսովք և Աստուծոյ մարդասիրութեամբն: Զի որպէս ողորմութիւնն նորա բազում է, նոյնպէս և յանդիմանութիւնն նորա: Եւ դարձեալ ասէ. Ուրախութիւն յերկինս լինի և յերկրի. թէպէտ և զինչ իսկ իցէ մարդ. զի թէ Ամենայն հեթանոսք իբրև զկաթիլ մի 'ի դուլէ իցեն, և իբրև շիթ մի 'ի բերանոյ, և իբրև զմէտ մի 'ի կշռոյ, և իբրև յոչինչ համարեցաւ. զի թէ ամենայն մարդիկ այնպէս իցեն, իսկ մի ոք լիմ իմիք արժանի իցէ առաջի նորա, մանաւանդ թէ և մեղաւոր իսկ իցէ. բայց սակայն այնչափ փոյթ յանձին ունի հնարել, զի զերկոսին զղջեսցուց արարածն ածէ յուրախութիւն վասն միոյ մեղաւորի. զինչ այլ ինչ զուգական կայցէ այնպիսի խնամոյ: Եւ ընդ այս մի ինչ հայիցիս, եթէ վասն փրկութեան աշխարհի առաքեաց Աստուած զՈրդին իւր. զի թէպէտ և մի ոք փրկելոց էր, սակայն և ոչ այնպէս Աստուած հրաժարեր առաքել զՈրդին իւր: Եւ ուստի, ասեն, կարես ցուցանել զայդ. զի Պաւղոս ասէ. Վասն մեր ամենեցուն մատնեաց զնա: Նա և այլ ինչ նշանակ է արդարութեանն. ոչ եթէ վասն մեծատանց նման-

նեաց ասէ, և վասն աղքատաց ոչ. և կամ վասն իմաստնոց, և վասն անմտաց ոչ. և կամ վասն աղքատաց, և վասն ծառայից ոչ. այլ վասն ամենեցուն, զի զամենեսեան առհասարակ պատուեսցէ: Իսկ նա և այլ աղգ ինչ ասէ, եթէ վասն իմ մատնեաց զանձն. Որ այժմն, ասէ, կեամ մարմնով՝ ոչ ինձ կեամ, այլ այնմ՝ որ սիրեացն զիս, և մատնեաց զանձն իւր վասն իմ: Զինչ խօսիցի, Պաւղէ. արգելուլ կամիս զԱստուծոյ պարգևն. ոչ դու յառաջ քան սակաւ մի ասեիր, թէ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա. և այժմ ասես, եթէ վասն իմ միայն մատնեաց: Այո՛, ասէ. զի յայտ արարից եթէ վասն միոյ ուրուք ինչ էր մատնելն, սակայն և այնպէս ոչ հրաժարեր: Կամիս զի և յառակէն հաստատեցից զսոյն. ոչ մի միայն ոչխար էր կորուսեալն, և իննսուն և ինն ապրեալք. միթէ դանդաղեցաւ ինչ Թողուլ զապրեալսն և ընթանալ 'ի լերինս և 'ի դաշտս և 'ի ծորձորս. միթէ հեղգացաւ ինչ և եգիտ. ոչ կարացին միասեալքն միխիթարել վասն միասուս կորուսելոյն: Եւ այսպիսի իրք անդ լինին, ուր կարի ջերմ սէր իցէ. քանզի և զոսկեսերն՝ որ բազում դահեկանս ունիցի, մի դահեկան կորնչիցի՝ կարէ տրտմեցուցանել, վասն առհասարակն զամենայն սիրելոյ: Եւ յորժամ եգիտն, տէս զսէրն, զիարդ խնամով և գթով բարձեալ բերէ 'ի վերայ ուսոց. զի ոչ գան եհար, և ոչ սաստ ինչ պահանջեաց: Եւ այսպիսի գործ կարի լինի սիրելեաց և անձկալեաց է. Թէպէտ և Թողուցուն և հեռանայցեն և միասակալք ինչ գտանիցին, չցանուլ ընդ միասն, այլ զգաբձն աւեթ խնդրել և զհաշտութիւնն: Եւ զինչ ինչ միաս արարաք ոչ՝ առ Աստուած, կամ որով իւիք բարկացուցաք: Եւ արդ, յետ այնր ամենայնի՝ վրէժս պահանջիցէ. այլ աղաչակեր ևս, եթէ Ոչ եկի զի դատեցայց զաշխարհ, այլ զի կեցուցից. զի փախչիք, զի խրտչիք: Եւ դարձեալ, եթէ վասն Քրիստոսի պատգամաւորեալ աղաչեմք, մեւք հաշտեցարուք ընդ Աստուծոյ: Յետ Թըշնամանացն, յետ խայտառականացն. այո՛, ասէ, հաշտի: Եւ մեք փութացուք զի և ընդ մեզ հաշտեսցի:

« Զարթիր, զարթիր Երուսաղէմ, և զգեցիր զզօրութիւն քո »: Իւթանասուսնքն այնպէս յայտ

առնեն, եթէ առ քաղաքն ինչ հրաման իցէ։ Եւ յորժամ թագաւոր ոք հրաման տայցէ, հարկ է զի կատարեսցի հրամանն, ոչ լսել եւս առաւել յորժամ Աստուած հրաման ինչ ումեք տայցէ։ Իսկ այլ թարգմանք և եբրայեցին այսպէս ինձ յայտ առնեն՝ եթէ ընդ Աստուծոյ խօսի մարգարէն. քանզի եբրայեցին այսպէս ասէ. Ուրի ուրի, զարիշող զրով [1]։ Եւ անդէն ոմն առընթերակաց զէորեքգրեանն գնէ, զոր յայլում վայրի գտաք Սոփէայի իսկ գրեալ. զոր ոմանք

1 Եբրայական բնագիրն ունի այսպէս.

עורי עורי לבשי-עז זרוע יהוה׃

որ է. Ուրէ, ուրէ, լապէ—ոչ դրա Իվահ. այսինքն է. Զարթիր, զարթիր, զգեցիր զօրութիւն բազուկ Եհովայ։ – Գէորգ Սկևռացի՛ ի մեկնութեան Եսայեայ՝ առեալ յՈսկեբերանէ՝ ասէ. « Իսկ այլ թարգմանքն և եբրայեցին յայտ առնեն թէ ընդ Աստուծոյ խօսի մարգարէն. զի մոտ առ ջրերն եդեալ է Սգանիա, որ ասի ջրեքգրեան անուն Աստուծոյ »։ Արդարև Սգանիա ևս ջրեքգրեան անուն է Աստուծոյ (אדני), այլ յատկապէս ջրեքգրեան անուանն անունն Եհովա (יהוה), որ է իսկական անուն Աստուծոյ, որպէս առ մեզ Որ-Էն՝ նշանակիչ էութեան։ – Իսկ զոր ասէ ասա, եթէ գտաք այլուր վոխանակ ջրեքգրենին՝ Սգոնիայի եդեալ՝ տե՛ս յէջ 341 ՛ի ծանօթութեան։ – Զոր աստանօր Ահիահ գրէ՝ է նոյն ինքն անունն Եհովա. զհնչմանէ բառիս կարի անմիաբանութիւն է առ գիտունս. զոր օրինակ Էհէվէ, Էհէյ, Էհէվէ, Էհէվէ, Էհոհոյ, Էհովէ, Էհոռ, Էհէվէ, Էհէհէվէ, Էհովէ, Էհէհէվէ, Էհէռ, Էհոօ, Սհյահ։ Սհասական այսքան տարաձայն ընթերցուածս միոյ եւեթ բառիս, զորոյ և ինքեանք Եբրայեցիք տգիտանան զբուն ուղիղ հնչումն։ Հաւանական երեւի զի առ Մովսիսիս և զհին նորա հնչէր նուիրականս այս բառ յԵբրայեցւոց. այլ խորին յարգուածութիւնն, զոր ջանային աւանդապահք հնոյ օրինաց տպաւորել ՛ի սիրտ ժողովրդեանն առ այս անուն անճառելի, եւս առ սակաւ սակաւ խափան ՛ի մոռացօնս արկանել զհնչումն նորին՝ երկիւղիւ անուրբ առնելոյ զնոյն։ Եւ յընթերցուածս փոխանակ ընթեռնուին զնոյնպէս ջրեքգրեանն אדני Սգոնայ։ Իսկ զԵհովայն Քահանայապետին եւեթ պահեալ էր հնչել՝ մի անգամ ՛ի տարւոջն, ՛ի մտանել անդ խրոմ յաւուր քաւութեան ՛ի Սուրբն Սրբոց, և յօրհնել զժողովուրդն ՛ի ձայն հնչմանց և ծնծղայից։ Վասն որոյ և ինքնին հնչումն բառիս խորհուրդ ինն էր ծածկեալ առ նոսա, և սակաւուց եւեթ ծանօթ յընտանեաց քահանայապետին. որով և զինն աւերման երկրորդ տաճարին խափանեցաւ։ Ընդ ձիգ ժամանակս ՛ի մոռ եգեալ էր հրէից եթէ ուղիղ հնչումն ջրեքգրենին՝ որում գիտէին՝ ընծայէլոց էր զօրութիւն անսահման ՛ի վերայ ամենայն հրեից հեղինաց և հոգեղինաց, և ասէին գործել զքանչելիս իւր Յիսուսի՝ ՛ի ձեռն մոգական զօրութեանն՝ զոր ունէր գաղտնի գիտութեամբ հնչման անճառելի բառիս ՛ի Սրբութեան Սրբոց։ – Անունս այս առ Եբրայեցիս երեց ևս

Ահիահ ասեն. զի ջրեքգրեանն և Սգոնիայի և Ահիահ՝ զԱստուծոյ անունն նշանակեն եբրայեցերէն։ Իսկ Սկիւղաս ասէ. Զարթիր զարթիր, և զգեցիր զզօրութիւն բազկաւդ. և աստ առընթեր կայ ջրեքգրեանն, որ նշանակէ զՏէրն անուն. բայց Իւթանասանքն և յաջորդքն ևս յայտ առնեն եթէ զերուսաղեմ է ասացեալ զզարթիր զարթիր, յասելոյն անտի՝ եթէ « Ո՞չ դու այն ես՝ որ աւերեցեր զծովն »։ Սկիւղաս ասէ. Մի թէ դո՞ւ ինքնին իցես՝ որ աւերեցեր զծովն։ Սյլ և չէ ինչ անման՝ թէ և առ երուսաղէմ ասացեալ իցէ. զի ամենայն նշանքն որ գործէին՝ վասն ժողովրդեանն գործէին, քանզի զնոյն իսկ կոչէ Երուսաղէմ. ՅԱստուծոյ, ասէ, գործէին, այլ վասն նորա գործէին. ապա թէ յԱստուած ևս հանիցէ ըզբանն, զի ցուցցէ եթէ ՛ի նմանէ վասն ժողովրդեանն լինէին սքանչելիքն, այսինքն վասն Երուսաղէմի։ Եւ արդ Թողցուք ՛ի բաց զկարծեալ երկբայութիւնն՝ որ չէ իսկ երկբայութիւն, և ուշ առեալ կարգին՝ ըստ Իւթանասանից Թարգմանութեանն ասկնեացուք։

« Եւ զգեցջիր զզօրութիւն բազկի քո »։ Մեղայ լինի Թօթափուիմն նշանակէ. զի զոր օրինակ ՛ի փարատել ցաւոց՝ զօրութիւն առնու հիւանդն և կազդուրէ, նոյնպէս և յընկենուլ մեղացն՝ առողջանան հոգիքն. զի մեղացն ախտ լուծանէ զՀոգւոյն զօրութիւն, բաւում անգամ ՛ի մարմինն իսկ տայ. և վկայեսցէ այսմ անդամալոյծն և կինն կարկամեալ, և որ ՛ի Կորընթոս վասն մեղացն հիւանդացեալքն էին։ Եւ չէք ասել եթէ վասն մեղացն կերպարանք, եթէ ոգւոցն ոչ ինչ սիցեն [1]. և զոր օրինակ ՛ի մարմնոյ հիւանդութենէ նուաղէ ոգւոցն արթնութիւն, նոյնպէս և հոգւոցն հիւանդութեան լինի հաղորդակից մարմինն։ Եւ այս

ժամանակաց կրէ յինքեան զգալափար, անցեալըն, ներկայն և ապառնին։ Անցելոյն՝ վերջին վանկիւն Ո. ներկային՝ միջին ձայնաւորն ունի. ապառնւոյ՝ սկզբնադիր տառիւն Յ. որով գրուածն է արդարև յատկութենականութեան. քանզի նշանակէ՝ Որ էրն, որ էն, որ եղեցին։ Վասն որոյ և Աստքեանն Յովհաննէս Թարգմանէ զայն ՛ի Յայտնութեան իւրում. Որ էն, և որ է, և որ գալոցն է. (Յայտն. Ա. 8)։ Տե՛ս զայսմանէ և ՛ի Մինեը ՛ի Բառագիրս Ս. Գրոց, ՛ի բառսն Deus և Dominus.

1 Այսպէս յօրինակին։

Աստուծոյ մարդասիրութեանն գործ է. քանզի ոգին գժուարի առ ախտն՝ առ մեղացն հարուածս, այնպէս կարգեաց՝ զի և մարմինն զգայցէ. զի ի մարմնոյն ցաւոց զարթնուցումք յուղղութիւն չարեացն՝ որ զհոգ կապեալ ունիցին: Եւ եթէ կամիս՝ քննեսցուք նախ վասն ցասմանն իսկ. ոչ տեսանես, զիարդ ապականիկ ցասումն զմարմին. վասն որոյ ասէ իսկ Խմաստունն, եթէ Աստ ցասկոտ՝ տգեղ՝ի կերպարանս իւր: Եւ զի զոգիսն կորուսանէ, յայնմանէ յայտ է՝ զոր ասէն, թէ Բարկութիւն կորուսանէ և զխնաստունս: Եւ յայտ է եթէ յորժամ մարմինն ծանրանայ՝ իւրովք ախտիւքն յոգիսն ազդէ, նոյնպէս և յորժամ ոգիքն ծանրանայցեն՝ ի մարմինն տան զպյժն. նա և առաքինութիւնն ոչ զոգիսն միայն, այլ զմարմինսն առողջացուցանէ, իբր ի գառնաշունչ ձմերայնւոյ զերծուցեալ պահէ ի խաղաղութեան:

« Չարթիր զարթիր, երուսաղէմ»: Անհնարին կործանումն կործանեալ էր. ոչ զի յատակն միայն հասեալ էր, և ոչ զի շինուածքն միայն հիմն ի վեր էին, և ի հող և ի մոխիր շինեալ նստեր, այլ զի յամենայն կողմանց հրդեհիւք մեղացն էր բորբոքեալ: Ողորմելի են բանքն, զի յանհնարին կոր կործանեալ էր մեղքն և անօրէնութեամբ. այլ գերութիւնն և օգուտ լս եղև նմա: Եւ եթէ ուստի էին եղեալքն, և ուստի անկաւ ի չարչարանս, և զիարդ կարիցէ ապրել յանհնարին կապանացն, ուսուցանէ՝ թէ որպէս անկաւ նեղն ի նմանէ եղև, նոյնպէս և յառնելն ի նմանէ է, և հաստատել յառաջին զօրութիւնն. և ինքն յորդորէ ևեթ: Եւ զի ի նմանէ եղև անկանելն, և ի նորին ձեռս է և յառնելն՝ յայտնի յաջողացն է:

« Չարթիր, ասէ, իբրև ի սկզբանէ աւուրցն, իբրև յառգացն յաւիտենից »: Հաւատացուցանել կամի նմա զիուխոխումն: « Ոչ դու այն ես՝ որ աւերեցեր զծովն և զբազմութիւն ջուրցն անդնդոց. արարեր զնաւս ծովու Ճանապարհ փրկելոցն և ապրելոց »: Զնգիպտացւոց ցասցն և զծովուն Ճառս ի մէջ բերէ: Մինչ իւրովք ինչ զօրութեամբ գործեր զայնպիսի գործ. ոչ եթէ նա յանձնէ ինչ կարեր առնել, այլ քո ձեռնդ առներ և

կատարեր զամենայն ինչ: Այլ զի ուսանիցիս եթէ վասն նորա եր ամենայն, զի մի կարծիցես եթէ վայրապար ինչ առնիցէն, եթէ ոչ նախ ի նոցանէ առնուցու պատճառս: Եւ զի՞նչ, ասէ, մեծ ինչ ցուցանեմ կամ զարմանալի. գոչեաց, հեծեաց առ վիշտն. տեսանելով տեսի զնեղութիւնս ժողովրդեան իմոյ, և հեծութեան նոցա լուայ: Եւ զոր Մովսէսիւն արար՝ զնոյն ի ժողովուրդն հանէ: Տեսանե՞ս, որչափ զօրաւոր է որ Աստուծոյ հնազանդի, և որչափ տկար որ Աստուծոյ անհնազանդի: Ոչ ի քումմէ անձնէ եղև քեզ զօրութիւնն այն յայնժամ, և ոչ առ քո ինչ տկարութեան եղեն ինչ այժմ աղէտքդ քեզ. այլ այն վասն առաքինութեան և այդ վասն մեղացն: Եւ տես, զինչ ասէն, եթէ նոքա վասն հպարտութեան ջնջեցան, և յոտսով ինչ՝ որ չէր նոցա օգուտ. զի թէ նոքա վասն հպարտութեան կորեան, և սոքա՛ի նմին յամբարտաւանութեան կացին, զիա՞րդ կարէին ապրել. քանզի ոչ եթէ վայրապար ինչ սպան զնոսա Աստուած, այլ առակ և ծանակ արար: Եւ քանզի տապաստ անկանել զտկարութիւն անկելոցն յայտ առնէ, որպէս նոքա զմանկտին ի ջուրսն հեղձուցանէին, նովին կերպարանօք և նոքին հեղձնուին ի ջուրսն:

Յիշեա, ասէ, զառաջին աշխուատանութիւնն. ուսիր զի մեծ զօրութիւն ունիս՝ թէ կամիս: « Ո՞չ դուն այն ես՝ որ աւերեցեր զծովն »: Մի ասեր թէ քոյ ինչ նմանակցաց աղգաց յաղթեցեր, այլ նոցին իսկ արարածոց յաղթեցեր. փոխելով զբնութիւնն՝ գրեթէ տիրեցեր իսկ արարածոց, մինչդեռ արարածոց Տէրն հաշտ եր ընդ քեզ. և ոչ ինչ նախանձեցաւ ընդ այն, այլ որպէս սերտ ոք բարեկամ հրամայեիր արարածոց բարեկամին: « Սրարեր Ճանապարհ փրկելոց և ապրելոց »: Թշնամեաց յաղթեցեր, և զնոր Ճանապարհ գնացեր. վասն այնորիկ վարկանի նմա զաբանչելեացն երախտիս, զի յիշատակօք հնոցն ուղղութեանց՝ զարթուցանիցէ ածել ի նախանձ՝ սիրել զԱստուած, զի ի Տէր դարձցին և այժմ, որպէս և յայնժամ:

« Չի նա է, ասէ, քո Աստուած. և եկեսցեն ի Սիոնի ուրախութեամբ և ցնծութեամբ յաւիտենից. զի ի վերայ գլխոց նոցա օրհնութիւն և ցնծութիւն և

ուրախութիւն հասցէ նոցա. և մեկնեցան հոգի և տրտմութիւնք և հեծութիւնք »: Իբրև թագ ինչ կամ նշան յաղթութեան լինիցի ուրախութիւն՝ի վերայ գլխոց նոցա: « Հալածեցան ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք »: Թէպէտ օրինակաւ զնոցանէն ասացաւ այս յայնժամ, այլ ձշմարտութեամբ՝ի հանդերձեալ աւուրն կատարեցաւ: « Հալածեցան ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք »: Եւ քանզի մեք մուծաք զցաւս և զտրտմութիւնս և զհեծութիւնս յաձախութեամբ մեղացն, յորժամ արմատն կտրիցէ, ասէ, յայնժամ և ծնունդքն չինջանիցին: Զի յորժամ վշտացին ինչ կեանք՝ի վերայ հասանիցեն, և սկսանիցեն ասել, թէ ընդէր այսպէս դանդաղանաց կեանս ետ մեզ Աստուած, յիշեսջիր զստեղծուածն՝ եթէ մեք մեղէն մերոց վշտացաք եղեաք պատճառք. զի նա ոչ կամէր եթէ յայնպիսի թշուառութիւնս հասանիցէք քնութիւնս մեր. զի նա յորժամ արար՝ մեծամեծ բարութիւնս պատրաստեաց առաջի: Այսպէս եթէ չհաւատաս՝ լուր դրոյն որ ասէ. Աստուած զմարդն ուղիղ արար, և նոքա խնդրեցին խորհուրդս բազումս: Եւ լուր, որպիսի՞ ոք ինչ էր Ադամ զառաջինն. ոչ՝ի տըրտմութիւնս ինչ, ոչ՝ի հոգս. քանզի և չէին իսկ տըրտմութիւնք միանգամ յայնժամ, այլ յետոյ՝ի պատժոյ կարգի յաւելան. զի՝ի պատիժս որում ոչ ակն կայցէ, այնմ հասանէ համբերել. որպէս յորժամ ասիցէ, եթէ Յաւուրք և տրտմութեամբ կերիջիր զդա, յայտ է եթէ յառաջ քան զայն՝ յուրախութեան վայելէր: Եւ յորժամ ասիցէ՝ Ի քրտին երեսաց քոց, յայտ է եթէ յառաջ քան զայն առանց քրտան և վաստակոց էր. և յորժամ ասիցէ, եթէ Յորում աւուր ուտիցես՝՝ի նմին մեռանիցես, յայտ է եթէ յառաջ քան զայն՝ի վերոյ էր քան զմահ. վասն այնորիկ և Քրիստոս զի ցուցցէ եթէ յառաջինն կարգն հաստատէ զմեզ, յետ յարուցեալեանն իբրև եաես զկանայսն՝ նախ զայն բարբառ արձակեաց, մանաւանդ առ նոսա՝ որ մերք իսկ էին տրտմութեանց, զհակառակն տրտմութեանց, թէ Ուրախ լերուք. Թէ՝ի սկզբանէ նախ՝ի ձէնջ իսկ եղև մուտ տրտմութեան, և այժմ ինձ լինի ձեզ մուտ ուրախութեան: Զոյն և Պաւղոս յաձախա-

գոյնս բարբառէր, եթէ Հանապազ ուրախ լերուք. լուծան առաջինքն. զի թէ մահ չկայ մահ, ապա և ոչ տրտմութիւնն տրտմութիւն. զի թէ մահուն խայթոցք փշրեցան, ապա բարձեալ են և մեղայն ծնունդք. զի՝ի մեղայն մտանելն, հարկ եղև և տրտմութեանցն մտանել, իսկ յայնժամ, ասէ, հալածեսցին ցաւք և տրտմութիւնք և հեծութիւնք. զի հալածեալն՝ զոյժ հեռանալն յայտ առնէ:

« Ես եմ, ես եմ ինքնին որ սիւթաբեմ զքեզ »: Ես նոյն իսկ եմ. զի թէպէտ և իրացդ փոխոխուածն եղև, այլ ոչ եթէ ես ինչ փոխեցայ. այլ նոյն որ էին՝ եմ: Եւ բարիոք ասաց, եթէ « Ես եմ որ սիւթաբեմ զքեզ»: Զի չիք ինչ օգուտ՝ի բարութեանց՝ յորժամ նա չկայ մեզ որ սիւթաբիցէն: Վասն այնորիկ և Պաւղոս ասէ, եթէ Որ սիւթաբէն զմեզ յամենայն նեղութիւնս: Ինքն է որ տայ զտրտմութիւնն, և կարձամտաց՝ զերկայնմտութիւն. զնա հանապազ աղաչեսցուք. մի՛ խընդրեսցուք մեծանալ, այլ զի Աստուած հաշտեսցի ընդ մեզ. զի յորժամ նա հաշտ իցէ՝ և յաղքատութեան մարթ է ուրախ լինել: Զոր օրինակ յորժամ թշնամի իցէ, թէպէտ և մեծատունք և ընչաւէտք իցեմք, կաըկ՝ի տրտմութեան մաշել. զի յորժամ տէրն թշնամի իցէ, թէպէտ և այլ ինչ շահ իցէ և բարեկամք մօտ, սակայն չէ ինչ օգուտ. որպէս և յորժամ հաշտ իցէ՝ չիք ինչ՝ի հակառակորդացն որ կարիցէ վնասակար լինել:

« Ծանիր դու՝ զինչ էիր, և կամ զնայդ երկեար դու՝ի մահկանացու մարդոյն կամ յորդոյ մարդոյ[1], որք իբրև զխոտ ցամաքեցան »: Բարւոք յիշեցուցանէ նմա զիւր աչնուականութիւնն, որպէս դստեր միւսոյ Թադաւորաց՝ որ յիւրոց ծերդաստականացն երկնչիցի: Զինչ էիրն՝ աղէ ասա: Բազում ինչ միտս ցուցանէ զինչ էիրն. մի՝ այնու իսկ, զի քան զայլ մարդիկ աւելի ծանեաւ զԱստուած. միայն ապրեալ էիր՝ի մերոյ թենէն, միայն զձշմարիտ զգաստութիւնն զգաստացայիր, միայն քեզ գաղտնիս և զաներևոյթս իմաստութեան իմոյ ցուցի. ըստ այնմ, եթէ Ոչ այսպէս արար

1 Յօր. Զիք մարդ:

ամենայն ազգաց, և զգատաստան իւր ոչ յայտնեաց նոցա: Զո՞ր ազգ այնպէս ընտրեաց Աստուած, կամ՞ ոք լուաւ զԱստուծոյ բարբառն՝ որպէս նոքա: Զինչ է իրն. զո՞ր կամիցիս՝ի միտ առնուլ. զմարմնական զօրութիւնն, եթէ զոգւո՞յն իմաստութիւն, եթէ որ՝ի բացուստ երանութիւնքն էին, եթէ զառանի՞ն վայել չութիւնն: Չինչ էիրն, կամ զնարդ երկեար՝ի մահկանացու մարմնոյն. միթէ զանմարմնականացն զօրութեանց զկեանս ո՞չ ետու քեզ կեալ. թէպէտ և ընդ աղօտ և կերպարանօք, սակայն ետու կեալ զայնպիսի կեանս. զքառասուն ամ ոչ վարեցեր և ոչ հնձեցեր, և վայելչիր՝ի բարութիւնս. Չհաց, ասէ, երկնից ետ նոցա, և զհաց հրեշտակաց եկեր մարդ: Զի՞ք ինչ մարդկան առանց աշխատութեան: Չինչ էիրն, և երկեար. զի և քան զմահ ևս՝ի վերոյ էիր. քանզի հանդերձեալքն յառաջագոյն նկարէին, և բազում անգամ զերծուցանէր զնոսա՝ի վշտաց. և այնու իսկ չէր մահկանացու, քանզի զԱստուած ունէր ընդ իւր զօրավար, և այնչափ կարող լինէր՝ որչափ ինքն կամէր:

« ՈՐք, ասէ, իբրև զնոսա ցամաքեցան »: Ցեսո՞ր զբնութեանն նուազութիւն. այլ եղև քեզ յարհաւիրս, ոչ իւրով ինչ զօրութեամբ, այլ վասն քո ծուլութեան: Ո՞վ ոք՝ի խոտոյ երկնչեցի. որպէս զի և մեզ յիրաւի ոք ասիցէ, եթէ զինչ եսգ, և զիարդ երկընչիսդ՝ի սատանայէ. զօձն հրամայեաց քեզ կոխել, և դու ընդդէր երկնչեցիս. ինքնին Քրիստոս ընդ քեզ է, և՝ի հակառակորդէն զանգիտե՞ս:

« Եւ մոռացար զԱստուած զարարիչն քո, որ արար զերկինս և հաստատեաց զերկիր »: Զի մին արարչութեան և տեսչութեան է, և միսն զօրութեան և խնամոյ. զի չէ ընդ մի համար զՀայր մոռանալ և զԱստուած. զի նա առաջին պատճառք և ձշմարտութեան պատճառք: Այլ ոչ տեսեր՝ որպէս արար զքեզ, և զերկինս ո՞չ տեսանիցես՝ որ հանապազ յիշեցուցանեն քեզ. զի յո՞ր կողմ և երթիցես՝ իբրև զարձան մի հաստատուն կանգնեալ կայ. շուրջ զքեզ եկեալ հնչէ գոչէ զարարչէն. յո՞ր կողմն և հասանիցես՝ անդ գտանես զնա՝ի վարդապետութիւն:

« Եւ երկնչէիր զամենայն աւուրս՝ յիրեսաց սրտմտութեան նեղչի՞ր »: Ակիւղաս՝ լկչի՞ր, ասէ: « Զոր օրինակ խորհեցաւ եղծանել զքեզ »: Իսկ այլքն՝ Յորջորջել զքեզ, ասեն: « Եւ արդ ո՞ւր լցե՞ր սրտմտութիւն նեղչին քո, զի՝ի փրկութեանն քումմ ոչ կայցե՞ և ոչ յերկարեսցի »: Եւ արդ կամիցի՞ս ուսանել՝ եթէ զինչ լցե՞. « Ծանիջի՞ր այժմ, զի ես եմ Տէր Աստուած քո՝ որ խռովեմ զծով, շարժեմ զալիս նորա. Տէր սաբաւովթ է անուն նմա »: Այսպա յոյժ առաւել ինն է քան զնոսա. « Եդից զբանս իմ՝ի բերան քո »: Քանզի հանդերձ այլովք չարեօքն՝ և յայսմ ևս միսիթարութենէ զրկեցան՝ պատուել՝ի բերանս զպատգամն Աստուծոյ. վասն այնորիկ ասէ. « Եդից զբանս իմ՝ի բերան քո »: Իսկ այլոմն՝ի Թարգմանացն ասէ, եթէ Աբարիկ զքեզ միշտ խորհել յօրինն Աստուծոյ, զի այնպէս արկից՝ի քեզ փոյթ և յօժարութիւն:

« Եւ ընդ հովանեաւ ձեռին իմոյ ծածկեցից զքեզ, որով կանգնեցի զերկինս և արկի հիմն երկրի »: Սիմաքոս ասէ. Որով անկեցի ընդ այնպիսի զօրութեամբ, պէսպէս զգուշութեամբ զգուշացայ քեզ:

« Զարթիր, զարթիր, երուսաղէմ, որ արբեր՝ի ձեռանէ Տեառն զբաժակ սրտմտութեան նորա, զբաժակին կործանման՝ զկարձն սրտմտութեան, զոր արբերն և Թափեցեր »: Քանզի վերագոյնն ասաց, եթէ Չինչ էիրն, և զիարդ երկեար՝ի սրտմտութենէ Թագաւորին, և Թէ նա զքեզ չարչարեաց. զի մի՝ի մարդկանէ ինչ Համարիցի զպատիժն՝ ասէ. « Ի ձեռանէ Տեառն արբեր զբաժակն կարձ զսրտմտութեան »: Միշտ զպատիժս ինչ՝ բաժակ սովոր են ասել գիրք. և կարձն ասելով, զի զվաղահաս պատիժն Աստուծոյ յայտ առնիցէ. և զի ցուցցէ եթէ՝ի սիրոն գործեցաւ, ասէ. « Զոր արբերն և Թափեցեր »: Եւ զարդար պատճառն ասէ, և զի ցածնալոյ էր բարկութիւնն. զբեր, ասէ, զչափ պատժոյն, արբեր Թափեցեր, ասէ, և ոչ ինչ կայ այլ՝ի պատժոյն:

Եւ զի ցուցցէ եթէ ոչ ոք կարէ նմա զօրավիգն լինել, ասէ. « Եւ ոչ ոք էր՝ որ միսիթարէրն զքեզ յամենայն որդւոցն քոց՝ զոր ծնար »: Յիշեցուցանէ զանչափ զպատիժն, և ոչ միայն զի չարչարեցան, այլ զի այնչափ չարչարեցան, զի և միսիթարիչ ոչ զոք գտա-

ներ առ՝ի վշտացն։ Եւ ոչ եթէ զորդիսն ինչ բամբասիցէ ասելով՝ եթէ չէր ոք որ մխիթարէր, այլ զայն կամի ցուցանել եթէ յերկնից էին հարուածքն. զի և ոչ որդիքն անգամ կամէին մխիթար լինել։ Զի՞ ասա՛ւ ինձս յարտաքինսն, ուր և չընտանիսդ չիք յոյս. զի յորժամ Աստուած հարկանիցէ, ոչ՝ի բազմութիւն զօրացն պարտ է յուսալ և ոչ յամրութիւն քաղաքացւոյ։

« Երկու ինչ են որ հակառակ կան քեզ, և ոչ իցէ որ տրտմակից լինի քեզ. կործանումն և բեկումն, սով և սուր. և ո՛վ իցէ որ մխիթարեսցէ զքեզ »։ Որդիքն քո, որ ինքեանք իսկ կարօտ են մխիթարութեան։ Եւ այլազգ ևս. զի սովոյ ո՛վ իցէ որ ժուժկալ կարիցէ լինել. զի ուսանիցիս Թէ և պատերազմին յերկնից է, վասն այնորիկ արձակեաց և զսովն։

« Որդիքն քո, որ վարանեալ նստէին՝ի գլուխս ամենայն Ճանապարհաց, պատրաստք առ՝ի լինել փախըստական. իբրև զձակնդեղ կիսեփեաց էին լի բարկութեամբ Տեառն »։ Այսինքն՝ զի կիսամեռք էին՝ի սաստիկ սովոյն։ Սիմաքոս՝ Իբրև զակն ուռկանի, ասէ. զի որպէս ակն ուռկանի զջուր ոչ արգելու, նոյնպէս և ոչ նոցա ինչ հայթայթանք՝ զԱստուծոյ բարկութիւնն։

Ասէ. « Լի էին բարկութեամբ Տեառն, լուծեալք՝ի ձեռանէ Տեառն Աստուծոյ։ Վասն այնորիկ լուր տարապեալ, որ արբեալդ ես, և ոչ՝ի գինւոյ. այսպէս ասէ Տէր Աստուած՝ որ դատի զժողովուրդ իւր. ահա՛ առի՛ք՝ի բաց զբաժակ կործանման՝ զկարձն բարկութեան իմոյ, և ոչ ևս յաւելցես ըմպել զնա. և տացե զնա՛ի ձեռս լլկեացն քոց, և որք տառապեցուցին զքեզ. որք ասէին ցանձն քո, խոնարհեա, Թո՛ղ անցցուք. և եդիր հասասար երկրի զմէջ քո »։ Սկիւթաս ասէ. Զթիկունս քո. Սիմաքոս՝ Զողն քո։ « Արտաքոյ անցաւորացն »։ Տե՛ս, յորժամ կամիցէ զերծուցանել զնոսա՛ի չարեացն, զնարդ և զմերձն յիշեցուցանէ և զպատժոյն սաստկութիւնն. և եթէ ոչ ոք կարաց փարատել զվիշտն. զի մի՛ յետ երեսաց մեռանայցեն զբարին և զմեղսն՝ վասն որոց լլկեցան. զի որպէս մեղացն յիշատակ, նոյնպէս և պատժոյն և երախտեացն՝ առնէ զմարդիկ պիտանացուս։ Եւ բազում ինչ վասն այսպիսի իրաց հնարէ Աստուած, զի խրատիցիմք լինել հեզք և պիտանիք. և զի ոչ միայն զերախտիսն, այլ և զպատիժսն յետ երախտեացն՝ առնէր նոցա յիշեցուցիչս, որ ինչ անցք ընդ Եգիպտոսն անցին և որ ինչ՝ի ջրհեղեղին. զի զջրհեղեղին նշանակ՝ աղեղամբն ցուցանէ, և զՍոդոմայեցոցն՝ երկրոյն այրեցելոյն։ Այլ աղեղն ընդ ամենայն երկիրն երևի, և Սոդոմայեցոցն ոչ ընդ ամենայն երկիր։ Եւ արդ տես, զի երկինք և երկիր իսկ ունին նշանակ զԱստուծոյ բարկութեանն. զի մին աչօք իսկ երևի, և միւսն յականջալուրս պատմի հեռաւորաց։ Իսկ պղնձի օձն՝ Հրէից էր նշանակ, և Թիթեղունքն՝ սեղանոյն. և բազում ինչ նշանակ ունիմք զգեհենին, զախտս, զցաւս, զպատիժս ինչ դժնդակս. զի յայսցանէ՝ և զհանդերձեալն իմանայցեմք։ Ո՞ զի չիմացաւ զՍոդոմայեցոցն զբարկութիւն. ո՛ր կողմն տիեզերաց՝ որոց չիցէ լուեալ։ Իսկ հրեականքն չիցէ՞ն բաւական Վաւանեցուցանել զհանդերձեալսն. քաղաքն կործանեալ, տաճարն աւերեալ, վիշտք, տրտմութիւնք, ցրումունք խաչահանուացն, զի անգէօղք և անքաղաք ընդ ամենայն աշխարհ շրջին. ընդ ամենայն տիեզերս դպրաւանեալք Թափառականք։ Եւ ոչ՝ի մարդկան բռնութենէ վասնեցան՝ յայնմանէ յայտ է, զի երբեմն Մակեդոնացւոցն յաղթեցին, և Պարսից և Մարաց՝ Աստուծոյ օգնականութեամբ. այլ հինն մեծազօր զօրութիւն խաչելոյն, որ այնպէս ցրուեաց արկ զնոսա վայրաւատինս։ Յորժամ փենեհէս սպան մի այր՝ այնչափ բարութիւնք պարգևեցան, և կամ յորժամ Մովսէս ինքնին իսկ՝ ո՛րչափ ևս աւելի երանութիւնն. իսկ արդ՝ զի զհակառակն Աստուծոյ սպանին՝ ընդէ՞ր լլկեցան, ընդէ՞ր ցիր և ցան ընդ ամենայն աշխարհս մաղեցան։ Ո՞ զի Թերահաւատ լինիցի՝ի գեհենին պատժոյն, ո՛ի հրեական չարչարանացն հաւանեսցի, և կամ յԱնանիայէ և՝ի Սափիրայ, որ իբրեւ ընկճեցան զոր նախ Աստուծոյ նաւիրեցին, և ապա իբրև զտաճարակապուտս գողութեամբն՝ սատակեցան։

ԳԼՈՒԽ ԾԲ

« Զարթիր զարթիր , Սիոնէ , և զգեցիր զզօրութիւն քո , և դու զգեցիր զփառս քո , Երուսաղէմ քաղաք սուրբ. զի ոչ ևս յաւելցու անցանել ընդ քեզ անթլփատն և պիղծն : Թօթափեա զփոշի քո , արի և նիստ , Երուսաղէմ, որպէս յայնժամ» : Բանդն բազումք և յայնժամ ունէին ինչ այսպիսի աւետիս : Եւ ընդէր եղեալք ընդ աշխարհն՝ անդէն՝ի թշնամեացդ երկրին կամէին մնալ : Վասն այնորիկ՝ զի մի վհատեսցին ինչ, ասէ . « Թօթափեա զփոշիդ՝ի քէն , արի և նիստ , Երուսաղէմ» : Արի՛ի հողոցդ և՝ի տառապանաց , և նիստ յաթոռ փառաց : « Լո՛ծ զկապդ՝ի պարանոցէդ քումմէ , գերիդ՝ դուստր Սիոնի՛ն » : Իբրև զկին մի այրի՝ որ ընդ մոխիր թօթափեալ լիցէ :

« Ա՛յսպէս ասէ Տէր . ձրի վաճառեցարուք , և ոչ արծաթով փրկեսջիք » : Եւ զինչ լիցէ ձրին . զի ոչ՝ի զուր ինչ և ոչ վայրապար , այլ որպէս վերագոյնն ասացաք , Թէ Ո՞ւր է գրաւական՝ որով վաճառեցի զձեզ. միթէ զինչ ինչ առի և պարտապան եմ հատուցանել. զի մանեցի առանց արծաթոյ , ոչ այսպէս ևս առնուցում զձեզ առանց արծաթոյ :

« Ա՛յսպէս ասէ Տէր . Յեգիպտոս էջ ժողովուրդն զառաջինն՝ լինել պանդուխտ՝ի նմա , և Ա՛սորեստան՝ նեայն բռնութեամբ վարեցան . և արդ զի՞ էիք աստ» : Զառաջինն յիշեցուցանէ նոցա , Թէ որպէս ապրեցուցանէր զնոսա . և ստէպ երթալն՝ի գերութիւն՝ իբրև ամբաստանութիւն լինի՝ի մէջ բերել զնոցանէն : Եւ ընդէ՞ր արդեաք զի ցուցցէ Եթէ ինքեանք են պատճառք գերութեանն . զի ոչ առաջինն և ոչ երկրորդն կարաց զդաստացուցանել զնոսա . վասն այնորիկ ասէ , Եթէ « վարեցա՛ն ժողովուրդն ձրի . զարմացեալ էին և լայն » : Ոչ զի չէին կարող , այլ զի ձրին վաճառեցան . այսինքն զի այնպիսի Տէր անկարօտ ունէին , և՝ի

բամբասանս արկին՝ Եթէ չկարէցէ օգնական լինել. վասն որոյ յարէ իսկ՝ի նոյն , Եթէ « Ա՛յսպէս ասէ Տէր . վասն ձեր անուն իմ հայհոյի յամենայն ժամանակի՝ի մէջ հեթանոսաց » : Զի և՝ի պանդխտութեանն լինքեանք եղեն պատճառք՝ Յեգիպտոս , և գերութեանն Ա՛սորեստան և՝ի Բաբելոն , և վաղվաղակի առնուլ զնոսա թշնամեացն , և որ այնպէս լինի դիւրառուք եղեն : Զպատճառսն առ նոսա ձգէր . վասն ձեր , ասէ , հայհոյիմ՝ Եթէ տակաւ և անզօրական լինչ էիցէ , կամ անողորմ և անադորոյն : « Վասն ձեր անուն իմ հայհոյի՝ի մէջ հեթանոսաց » : Եւ յորժամ փրկեմ զձեզ , և յորժամ տանջիցեմ . և յորժամ փրկիցեմ՝ ասէն . Ո՞ր էիցէ ժողովուրդս այս , վասն որ հանապազ մեռանիմք . և յորժամ տանջիցեմ զձեզ՝ ասէն . Զկարիցէ՞ արդեաք փրկել : « Վասն այնորիկ , յարէ՝ի նոյն , Եթէ՝ ծանիցէ ժողովուրդ իմ զանուն իմ» : Վասն այնորիկ ասէ , Թէ « Ես եմ ինքնին որ խօսէի , և արդ եկի հասի » : Վասն այնորիկ . վասն որո՞յ . « Զի անուն իմ հայհոյի՝ի մէջ հեթանոսաց » . զոր և Պաւղոս ասէ , յորժամ զհանապազորդ չարիսն նոցա յայտ առնել կամեցաւ , Թէ և ոչ երբեք դադարէն :

« Ես եմ ինքն որ խօսէի . և արդ եկի հասի » : Քրիստոս որ խօսէր՝ի մարգարէսն [1] , և ապա յայտնեցաւ իսկ մարմնով , և խօսեցաւ ընդ մեզ : Վասն որոյ և նմանապէսն իսկ յարէ՝ի նոյն , Թէ « Իբրև՛ զի գեղեցիկ են ոտք՝ որ աւետարանեն զնաղաղութիւն , որ աւետարանեն զբարութիւնս » : Ակիւղաս ասէ . Զի՞ գեղեցկացան՝ի վերայ լերանց ոտք աւետարանչին՝ որ լսելին առնէ զնաղաղութիւն , և աւետարանէ զբարութիւնս : Սիմաքոս ասէ . Զի՞ վայելուչ էն : Թէոդիտոնէն . Ո՛րպէս զի վայելուչ : Եւ բարւոք իսկ զարմանայ ընդ ոտսն՝ որ կոխեցին զօձս և զկարիճս : գեղեցիկ էն ոտքն՝ որ յաղթեցին գեղեցկութեամբ արեգական ձառագայթիցն , որ մեծամեծ բարութիւնս բերին մեզ : Զինչ զուգագոյն կայցէ խաղաղութեան , լինել մեզ ընդ Աստուծոյ , և իւրաքանչիւր՝ ընդ անձին և ընդ միմեանս : Տէս , զիարդ երեքկին և բազմապա-

1 Ծար. ի մարգարէն :

տիկ էր պատերազմն. ընդ Աստուծոյ կռուէաք և ընդ անձին և ընդ միմեանս. այլ քակեաց զայն Աստուածն՝ որ եկն ի բարձանց, և ասէր, եթէ խաղաղութիւն լիցի ձեզ: Միթէ մէք ինչ խնդրեցաք զաւետիս խաղաղութեանն. այլ նա ինքն եկն և հաւանեցոյց զմեզ՝ հաշտել ընդ իւր, և բարութիւնս այնպիսի չնորհեաց՝ զոր ոչ ոք երբեք գիտէ կամ զմտաւ ածել կարէ:

« Չի լսելի արարի զփրկութիւն քո »: Յայտնեցից, ասէ, առ ամենեցուն: « Ասել ցՍիոնէ, եթէ Թագաւորեսցէ ի քեզ Աստուած »: Իսկ այլքն ասեն. եթէ Թագաւորեաց: « Չի ձայն պահապանաց քոց բարձրացաւ »: Իսկ այլքն՝ Դիտացին քոց, ասեն. այսինքն՝ փառաւորչացն Աստուծոյ: « Եւ ի նոյն բարբառ առ Հասարակ ցնծասցեն. զի դէմ յանդիման տեսցեն՝ յորժամ ողորմեցաւ Տէր Սիոնի: Գոչեսցեն զուրախութիւն աւերակքն Երուսաղեմի, զի ողորմեցաւ նմա Տէր և փրկեաց զԵրուսաղեմ: Յայտնեսցէ Տէր զբազուկ իւր սուրբ առաջի ամենայն հեթանոսաց, և տեսցեն ամենայն ծագք երկրի զփրկութիւն Աստուծոյ մերոյ »: Եւ այս ամենայն ի գարձին կատարեցաւ ի ժողովուրդն:

« Ի բաց կացէք, ի բաց կացէք, ելէք և մեկնեցարուք այտի, և ի պիղծս մի մերձենայք »: Ցոր և Պաւղոս առեալ իսկ աստի վկայութիւն՝ զմտաւորացս լինի ձառէ. զի զինչ քան զԱբրելն լաւագոյն էին կեանք մարդկան: Եւ բարւոք իսկ խրատէ ցնոսա. քանզի բազումք իսկ խլխլէին անդէն ինալ ստիպէ և զպատաձառսն ևս դնէ, թէ « ելէք, և մի մերձենայք ի պիւղծսդ »: Ակիւղաս և Սիմաքոս՝ ի գարշելիսդ, ասեն: Եւ տես զկամակորութիւնն, զի յորժամ Յեգիպտոսէն ելին՝ անդրէն դառնալ ցանկային, և յորժամ ի Բաբելոնէն կոչէին՝ գժկամակ լինէին և խլխլէին. և այնչափ գժկամակ լինէին, զի յետ այնչափ բարութեանց աւետեացն՝ ոչ կամէին ելանել: Այլ ինն խօսս խառնէ. « ելէք ի միջոյ նոցա, մեկնեցարուք՝ որ բարձեալ բերէք սպաս Տեառն »: Չի թէ վասն այլ իրիք ոչ, գէթ զայդ ածջիք զմտաւ, թէ որ սուրբ սպասուդ եղեաք պաշտօնեայք, չէ օրէն ձեզ եթէ ի մէջ պղծոյդ քնակիցեք:

« Չի ոչ խռովութեամբ ելջիք, և ոչ փախստեամբ փախիջիք »: Այն լիցի նշանակ՝ « Չի առաջի ձեր Տէր ինքնին գնասցէ, և որ ժողովէն զձեզ՝ Տէր Աստուած Իսրայէլի »: Չի մի պատճառիցէք եթէ չարչարանս ինչ կրելոց իցէք, որպէս յորժամ Յեգիպտոսէն ելէք. ոչ այնպիսի ինչ, այլ բազում մեծարանօք, այլ մեղմով և հանդարտութեամբ. քանզի Տէր ինքնին է ընդ ձեզ:

« Ահաւադիկ ի միտ առցէ մանուկ իմ, և բարձրասցի և փառաւորեսցի յոյժ. զոր օրինակ զարմացին բազումք ի վերայ քո, նոյնպէս անարգեսցի տեսիլ քո ի մարդկանէ »: Աբանչելիս ի սքանչելիս յարէ, որպէս առ Աբրահամ: Եւ միւ կարգ ինչ խնդրեացուք. զի այնպէս լիմն սովոր է մարգարէութիւնն, միմեանց զայլոց իրաց ձառէ, վաղվաղակի ի միւս ևս դէմն դառնալ. յետ ասելոյն զգերութենէն և զգարձէն, յայլ եբեսս շրջեաց զբանն:

« Ահաւադիկ ի միտ առցէ մանուկ իմ»: Ցումէ կարծիցեն ասացեալ զայս Հրեայքն. զՅօրաբաբելէ, թէ զՊանիելէ, եթէ զժողովրգենէն. զի մեք զՔրիստոսէ միայն ասեմք ձառել: Եւ մի զկարգն ինչ ի մէջ բերիցեն. զի բազում տեղիս կարեմք ցուցանել հատակոտոր զմարգարէիցն զկարգն, և այլ առընթեր այլոց մուծեալ ձառս: Եւ արդ, ուշ ունիցիմք իւրաքանչիւր երեցունց երեսացն՝ զորոց նոքայն կարծեն, և զՔրիստոսի. և տեսցուք՝ առ ոմ պատշաձագոյնս կատարեսցին, և զայն ընդունիցիմք: Եւ դատաւորք առ ի քննել՝ գուք ձեզէն լինիջիք իրացդ: Չինչ իցէ ի միտն առնուլ, այսինքն՝ ցանկանալն: Եւ լնձ այսպէս թուի, եթէ զիմանալն զնա ի գրոց ակնարկէ. զոր և Ակիւղաս ասէ, թէ ի միտ առցէ ծառայ իմ: զոր և եբրայեցին՝ Չենէ եաբի աբդի [1], ասէ. նոյնպիսի ինչ՝ որպէս Ակիւղաս ասէ: Բայց ես ասեմ, թէ իսկ և իսկ զնաչէն ձառէ, զի յայտ արասցէ եթէ ըստ ցանկութեան եղեն նմա իրքն. քանզի և ասէ իսկ, եթէ ՅանկանալովՀ ցանկացայ ուտել զբարբարուհիս զայս ընդ ձեզ: Չի Թէպետ

1 Եբրայական բնագիրն գնէ עבדי ישכיל חנה որ է. Հնդ. խոսիլ ապրի. այսինքն՝ Ահաւասիկ ի միտ առցէ ծառայ իմ:

և ծանրագոյն էին իրքն, այլ սակայն նմա ցանկալի էին վասն ուղղութեանցն՝ զոր գործելոց էր: Եւ զի յայտ արասցէ, եթէ ոչ ակամայ և ոչ ՚ի հարկէ ինչ, այլ յոյժ մեծագիւտութեամբ և կամաւ էին յայն, և ցանկութեան են նմա իրքն և յոյժ ախորժականք, Մեծ, ասէ, քան զայս ոչ ոք կարէ առնել զի զանձն իւր դիցէ ՚ի վերայ բարեկամայ իւրոյ: Ցեսանեն, արդեաւք ինչ յայտ առնէ զցանկութիւնն՝ որով ցանկացեալն էր խաչին, զի և փառս ևս կոչէ զնորն:

« Եւ բարձրասցի և փառաւորեսցի »: Իսկ այլքն՝ վերասցի, ասեն. զի ոչ ամենայն բարձրացելոց՝ փառաւորութիւն է, այսինքն խաչելոց, այլ հակառակ նորին՝ անարգութիւն է. և զնոսին այնու որոշէ յայլոցն, եթէ Յորժամ բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ՝ յայնժամ ծանիջիք եթէ ես եմ: և դարձեալ, եթէ Յորժամ բարձրացայց՝ յայնժամ զամենեսեան առ իս ձգեցից. որոց այլոց պատձառք անիծիցն էր, նոյն զայլոց լուծանէր զանիծս:

« Եւ վերասցի յոյժ »: Զմեծ բարձրութիւնն յայտ առնէ. քանզի և միւսն ասէ, թէ փառաւորեսցի: Եւ արդ՝ ոմն բարձրացաւ, ոմն փառաւորեցաւ՝ և յորժամ բարձրացաւ. յոյր վերայ Ջանայցեն կատարել ՚ի Ջօրաբաբելի, եթէ ՚ի Դանիէլի, թէ ՚ի Ժողովրդեանն վերայ, թէ յԱստուածոյն՝ որ յամենայն տիեզերայ առնու զերկրպագութիւնն:

« Զոր օրինակ զարմացին բազումք ՚ի վերայ քո »: Ակիւղաս՝ Հայացան, ասէ. Սիմաքոս՝ Սքանչացան: « Նոյնպէս անարգեսցի տեսիլ քո ՚ի մարդկանէ »: Իսկ այլքն ասեն. Նոյնպէս եղծեալ է: « Եւ փառք քո յորդւոց ՚ի մարդկանէ »: Զտեսիլն նորա Ակիւղաս՝ Կերպարանս, ասէ: Ո՞վ ոք զարմացաւ ՚ի վերայ ժողովրդեանն, կամ ՚ի վերայ Ջօրաբաբելի. իսկ ՚ի Դանիէլի վերայ Թէպետ և բազումք զարմացան, այլ ոչ անարգեցաւ տեսիլ նորա, զոր մանաւանդ Հանապազ իսկ առ լաւս ունէին. իսկ ՚ի Քրիստոսի՝ երկոքինն իսկ աքանչելիքն կատարեցան. զի և բազումք իսկ զարմացան, և բազումք արհամարհեցին: Եւ բարւոք իսկ ասէ Թէ տեսիլ քո. զի այնու իսկ քամահիքն զնա, եթէ Ո՞չ սա է որդին Հիւսեան, և ոչ մայր դորա Մա-

րիամ կոչի: Եւ զի աքանչելացան սակայն՝ յայտ է յասելոյն, եթէ Ոչ ոք երևեցաւ այսպիսի աք Իսրայելի. և դարձեալ Թէ Աբդարև Աստուծոյ որդի է: Զի մի զայս ամենայն յորժամ յետոյ մեք ասիցեմք՝ անհաւատ ինչ կարծիցին, յառաջագոյն մարգարէս ասաց զսոյն: Աննարգեսցի, ասէ. զի դիւահար և մոլի կոչէին, և եթէ Մոլորեցուցանէ զժողովուրդ. քանզի ոչ ահա զին ինչ երեսս ցոյց: Եւ բարւոք ասաց եթէ ՚ի մարդկանէ անարգեսցի տեսիլ նորա. զի յԱստուծոյ ոչ եթէ անարգէր, այլ փառաւորէր. և վկայէ բարբառն, եթէ Դա է որդի իմ սիրելի, դմա լուիջիք: Զի ոչ յԱստուծոյ որ զամենայն ձարտար գիտէ՝ անարգէր, և ոչ ՚ի հոգեկիր մարդկանէ, այլ ՚ի մարմնաւորացն՝ որ մարդ միայն էին և ոչ հոգևոր մարդ: Ասպիսին՝ գայթակղեր յանշուք երեսացն. ըստ մարդկութեանն ասեմ, և ոչ ըստ աստուածութեանն. զի ոչ եթէ տգէղ քան զամենայն մարդկան էին կերպարանքն Քրիստոսի, այլ որչափ և գեղեցիկ էր կերպարանօք ըստ մարմնաւորութեանն, նոյնչափ էրևէր շուք ինչ ըստ աստուածութեանն: Զի՞նչ աւելի անշքութիւն քան զայն կայցէ՝ յորժամ Աստուած մարդ երևեսցի, և Տէրն ՚ի ծառայի կերպարանս. և արդ երկոքեան այսպիսի իրք ոչ կատարեցան ՚ի Դանիէլի, զի ամենեքեան զարմանային ընդ նա, և ոչ ամենեքեան արհամարհէին: Եւ արդ, տես նախ զաքանչելիսն և ապա զանարգանսն: Բարւոք ասէ՝ տեսիլ նորա, քանզի խաչին տեսիլ էր անարգ և անշուք. զի ՚ի տեսանելն իսկ՝ յորժամ զթուքն յերեսս առնոյր, և ապտակս և կապանս և զխաչն անարգանաց և խայտառականաց, և տէս և յայնժամ իսկ նախ զաքանչելիսն և ապա զանարգանսն. զի ինքեանք իսկ արարածք ծանեան զՏէրն խաչեալ՝ շարժեցան դղրդեցան: Եւ արդ, միա դիր զօրութեանն. զի Թէ մինչ յանարգութեանն էր՝ այնպէս դղրդէ զարարածս, ոչափ ևս առաւել ՚ի փառաւորութեանն, յորժամ գայցէ փառօք Հօր և հրեշտակօք հանդերձ:

« Նոյնպէս զարմացին ազգք բազումք ՚ի վերայ նորա »: Եւ Թէպետ և այլոցն զդոյն բան այլազգ ասացեալ են, այլ ըստ Իւթանասեանցին Թարգմանութեան յաջորդքն յայտ առնեն, եթէ զարմացին, և ոչ այլ

ինչ.քանզի յարէ իսկ ի նոյն, եթէ « կարկեսցեն թա-
գաւորք զբերանս իւրեանց »: Եւ ոչինչ երկմտութիւն
կայ ի միջի. քանզի և Ակիւղաս Թէպէտ և փոխեաց
զկարկեչն, Ամիռփեսցեն, ասէ, Թագաւորք զբերանս
իւրեանց, այլ զնոյն միտս ասաց. և ոչ միայն յանար-
գութիւնն եկն և եկայ, այլ և յետ անարգութեանն
ասէ. « Զարմասցին ընդ նա ազգք բազումք »: Եւ արդ,
մեկնութիւն ինչ պիտին այժմ: « Եւ ժողովեսցեն, ասէ,
Թագաւորք զբերանս իւրեանց »: Ա.յսինքն՝ զարմաց-
ցին, աքանչեսցին, հիասցին: Եւ ով ոք յանհաւատից
լցէ՝ որ ոչ զարմասցի: Եւ չէ ինչ խափան փառաւո-
րութիւնն. վասն այնորիկ իսկ յետ չփառաւորու-
թեանն և անարգութեանն են աքանչելիք, զի երևեց-
ցի զօրութիւն խաչին:

« Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տեսցեն, և որք
ոչն լուան՝ ի միտ առցեն »: Եւ արդ, ուր կատարեցաւ
այս առ ժողովուրդն. իսկ ի Քրիստոս նմանագոյնս և
յայնժամ և այժմ: Ո՞ր մարգարէք պատմեսցեն այժմ
վասն նորա. և ամենեքեան օր ըստ օրէ հաւատան:
Եւ զի ասէ. « Որոց ոչ պատմեցաւ վասն նորա՝ տես-
ցեն »: Ա.յսինքն է՝ զոր Պաւղոս ասէ, եթէ Որոց
գրեթէ առաջի աչաց գրեցաւ Յիսուս Քրիստոս ի
խաչ ելեալ: Բազում զօրութիւն է խաչելոյն, բազում
ամբաստանութիւն է Հրէիցն. զի թէ որոց քնաւ չիցէ
լուեալ մարգարէից վասն Քրիստոսի՝ և ի միտ առնու-
ցուն, իսկ նոքա զինչ պատասխանի կարիցեն տալ, ո-
րոց առաջի այնչափ զօրութիւնք գործէին, որ և ա-
ռանց մարգարէութեան իսկ կարէին յանկուցանել
զտեսողն. զի նոցա և ի մարգարէիցն էր լսեալ, և
աչօք իսկ տեսին զնա և զնշանս, և ոչ հաւատային. և
սոքա և ոչ նշանս ինչ տեսին, և ոչ ի մարգարէիցն քե-
րանոց ինչ լսեան, և հաւատացին: Մեծ են զարմանք
և աքանչելի գործ: Եւ արդ, միթէ պատրանօք ինչ
իցեն իւրքն. նա, փորձ իրացն իսկ վկայէ, եթէ ոչ պատ-
րանօք ինչ են իւրքն՝ որ յառաջ քան զբազում ժամա-
նակս ձառեալ էին:

« Եւ որք ոչ լուան, ասէ, ի միտ առցեն »: Ի միտ
առնուլ հաւատալն է. և նոքա ընդէր չհաւատացին.
քանզի ի հպարտութիւն կործանեցան. և ամենայն
չարեաց իսկ պատճառք՝ հպարտութիւն է:

ԳԼՈՒԽ ԾԳ.

« Տէր, ո՞ հաւատաց ի լուր մեր, և բազուկ Տեառն
ո՞մ յայտնեցաւ »: Բազուկ Տեառն, այսինքն՝ նշան
ինչ աստուածագործ զօրութեանն: Ո՞վ որ, ասէ, հա-
ւատաց մեզ. և բարւոք իսկ ասէ. զի ոչ մարգարէիցն
և ոչ աւետարանչացն հաւատացին Հրեայքն: « Տէր,
ո՞ հաւատաց ի լուր մեր »: Զի ոչ զմեր ինչ ի մէնջ լսո-
սեաք, այլ զոր ինչ լուեցաք՝ պատմեաք: Եւ յիրաւի ասէ՝
թէ ո՞ հաւատաց. զի հաւատոյ պէտք էին և ոչ քննու-
թեանց: Ո՞ որ ի մէնջ համարս պահանջիցէ. չէք ինչ
ասել, և ոչ պատմել մարթ է, զի սքանչելի են ձա-
ռեալքն և ըստ խորհուրդս անցանեն: Եւ ոչ ասէ թէ
հաւանեցաւ որ, այլ եթէ ոչ հաւատաց:

« Եւ բազուկ Տեառն ո՞մ յայտնեցաւ »: Մի կար-
ծիցես եթէ լուր ևեթ են ձառեալքն, զի ստեպ զհետ
գալոց է և արդեանցն վկայութիւն. սակայն և ոչ այն-
պես տեսանէին և ոչ լսէին. և զի ոչ միայն նշանքն
բաւական էին ածել ի հաւան, վասն այնորիկ պիտոյ
եղև անդ և յայտնութիւն. ապա եթէ ոչ՝ հասարա-
կաց իսկ առաջի կայր եղելոյն հանդէս, և կէսքն տե-
սանէին և կէսքն ոչ տեսանէին: Զերից, ասէ, երանի
ի՛ք աչաց՝ զի տեսանեն. և դարձեալ ասէ, եթէ ի գա-
տաստան եկի յաշխարհս յայս, զի որք ոչն տեսանի-
ցեն՝ տեսցեն, և որք տեսանեն՝ կուրասցին: Եւ յայտ
է եթէ ամենայն ուրեք մտաց պէտք են. ապա թէ
ոչ, ոչ բանից ինչ զօրութիւն և ոչ իրաց հաստատուն
վկայութիւն, և ոչ այլ ինչ ի՛ք՝ որ կարիցէ ածել
զանհաւատն ի հաւան:

Տէս, սրչափ յառաջագոյն ասէ զզարմանալն, ո-
րում ոչ եղեն հնազանդ Հրեայք. « Պատմեցաք առա-
ջի նորա իբրև զմանուկ, իբրև զարմատ յերկիր ծա-
րաւի »: Ակիւղաս ասէ. ելցէ իբրև սան ընդ առաջ
նորա. Սիմաքոս, եւ ել իբրև զգեղեցկութիւն առաջի

նորա. Թէոդիտոսին, Եւ եթէ իբրև ստնդիաց առաջի նորա: Հանէ զնոսա ամենևին՝ի պատասխանի ինչ տալոյ. քանզի բաւական իսկ էին ասացեալքն առնել զնոսա առանց ներելոյ և Թողութեան: Բազում Տեառն. զի լմնայցեն Թէ ամենայն լեալքն՝ զօրաւոր բազկին են գործ. և զարձեալ բազուկ, զի յայտ առցայէ եթէ՝ի միասին եական Հոր է, և զի ինքնագործ զօրութիւն է. զի ոչ հրամանօք իբրև հնազանդ, այլ իշխանութեամբ Հօր հանդոյն՝ առնէ զինչ և կամի:

« Իբրև զմանուկ, իբր՝ զարմատ յերկիր ծարաւուտ »: Ակիւղաս ասէ. Իբրև զարմատ՝ի դերև երկրէ: Մանուկ իսկ էր, այլ ոչ իբրև զայլ մանկտի. և արմատ, այլ՝ի ծարաւուտ երկրի. քանզի և երկիր ծարաւուտ զկոյն կոչէ, որ անփորձ էր ամուսնութեանն խառնից, և երաշտ՝ի սերմանական ցօղոյն: Եւ այս իսկ բաւական էր յանկուցանել զնոսա՝ի նա: Մինթէ մերկ աստուածեղէն բնութեամբն էին, և կամ յանկարծակի իբրև զայր ոք կատարեաւ երևեցաւ. ոչ ընդ նոսին մնաւ, և ընդ նոսին աձեաց. ոչ ըստնաւեայ ժամանակ ընդ նոսին շրջեցաւ. ոչ՝ի մարդկան հաղորդութենէ այլակերպեցաւ, զի մի խառնիցուցանիցէ ինչ, և ոչ յառաւելութենէ քան զայլն նուաղեաց, զի մի դոյզն ինչ ոք կարծիցէ և բաղմայ հաւասար: Զի իբրև զմանուկն էր՝ այնու զհասարակացն ունէր, և զի իբրև զարմատ՝ի ծարաւուտ երկրի՝ այնու զաղնուազոյնն և զառաւելութիւնն:

« Ոչ գոյր նորա տեսիլ և ոչ փառք »: Ակիւղաս ասէ. Զհիք երեսք և ոչ վայելչութիւն. Սիմաքոս, Եւ ոչ պատուի ինչ արժանաւոր: « Տեսաք մեք զնա, և ոչ գոյր տեսիլ և ոչ գեղեցկութիւն »: Զինչ խօսիս. միթէ աչեայի տգեղ ոք էր արդեւք. ոչ, ասէ, զայդ ինչ ասեմ. և զի ոչ զայդ ասեմ, այդէն որ զդորին զհետգ գայ՝ յայտ առնէ, եթէ «Ոչ փառք ինչ». զի անարդ տեսիլ՝ զփառաւորութիւնն կոչեցի, եթէ յանշուք կերպարանս երևեցաւ, և զի չաղքատ կուսէ ծնաւ, և զի յետ այնորիկ պէսպէս անարգանս կրեաց, զի դիւահար կոչեին և մոլորեցուցիչ, և ոչ ինչ խնդրեր զվերկ տանձին՝ի թշնամեացն. և երբեմն խոյս տայր և շրջէր ընդ

բազում տեղիս, և ընդ Հանապարհորդս ուղեկից լինէր. զի ամենևին զնուաղութիւն և զանպարծութիւն ցուցանիցէ: Զի ոչ միայն զփառաց զհետ չէ պարտ երթալ, այլ և զանարգանս ևս յանձին ունել՝ ուստի փառքն բխելոց են: Զինչ միասեցին նման այսպիսի անարգանք, և կամ զինչ ոչ առաւելութիւն աստուածարհնամս խոնարհութիւնն: Իսկ եթէ իբրև զՍտուածածկամիցիս տեսանել զնա, և զայս առաւելոլքն ա՛րկ՝ի քնին, և անդ գտանես զուգական Հօր զշնորհութիւնն: Եւ քանզի ասէր, եթէ « Ոչ գոյր նորա տեսիլ և ոչ փառք». զի մի ոք կարծիցէ եթէ բնաւ առանց փառաց էր, յարէ՝ի նոյն, եթէ « Տեսաք մեք զնա, և ոչ գոյր նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն »: Զի ցուցցէ ըստ մերում տեսութեանս եթէ ոչ գոյր նորա տեսիլ, զի ոչ կարէաք տեսանել զնա որպէս օրէնն էր տեսանել: Այլ զի փառաւոր էր, ինքնին իսկ ասէր, եթէ Հայր, փառաւոր արա զիս փառօքն՝ զոր ունէի առ քեզ, մինչև լեալ էր աշխարհ: Եւ այլազգ ևս. զի զնաչէն իբր փառս կոչէ՝ զանարգ զկերպարանս:

« Զի տեսիլ նորա նուազ է քան զորդւոց մարդկան »: Տեսանէս, որպիսի՛ անհնարին անարգութիւն կալաւ յանձին: « Քան զորդւոց մարդկան »: Ոչ վասն մարմնանալոյն, այլ վասն զանարգանաց և զանիծից մահ յանձին կրելոց. օրինացն պատժապարտ եղև, դատապարտեցաւ իբրև զանօրէնն. այնու իսկ է տեսիլն նորա նուազ քան զորդւոց մարդկան. զի ոչ միայն կերպարանօք դատապարտութեանն նուազ գտանէր, այլ և՝ի հասարակացն պատժոց:

« Զի ընդ անօրէնս համարեցաւ »: Տեսանէ՞ս, զի յաձախ զայնպիսիս դնէ, ոչ զփառաւորս ինչ այլ զանարգանացն: Եւ զիսիդ ոչդանդաղեսցի, այլ իբրև փառօք լիճն զարգարեալ՝ զանարգանացն ևեթ ձառէ, Սուաքելոյն նմանեալ. քանզի և նորա ամենեքեան զնաչէն ևեթ միաբան պատմեցին, և ոչ ինչ զոք նուազեցոյց. այլ Թէ և աւելի ինչ ասացին, այլն յաձախեցին կամ զանարգանացն պատմել, կամ զկապանաց և զհաղորդութենէ և զձաղանաց և զհատականաց և զարհամարհանաց: Զայսպիսի ինչ իրաս աւելի իմն հաստեաւ պատմեցին. որպէս և Սուաքեալքն այնպէս

վատահ էին ՚ի խաչելոյն զօրութիւն՝ եթէ աստուածեղէն զօրութիւն է, զի և ոչ մի ինչ յանարգանացն Թողին՝ որ ոչ պատմեցին. քանզի ոչ այնչափ փառաւորք և պարկեշտականք կարէին ընդհանուր ուղղութիւնս ինչ կատարել. զի եթէ ոչ այնպէս լեալ էր՝ ոչ էր զարմանք փառաւորօք փառաւորս ինչ կատարել, այլ հակառակորդօքն զհակառակորդսն հնարէր. և այս իսկ են զարմանք, զի հակառակ ինչ իրք՝ իւրեանց հակառակորդաց եղծիչք են, իսկ արդ հակառակքն՝ հակառակացն յաւելուածք լինէին:

« Ա.յր մի է ՚ի չարչարանս, և գիտէ համբերել ցաւոց »: Քանզի յաձախագոյնս ասաց, եթէ Ոչ գոյր նորա տեսիլ և ոչ գեղեցկութիւն, զի մի կարծիցի եթէ յանկերպարանութենէ այսպիսի իրք գործիցին՝ յարէ ՚ի նոյն, եթէ « Ա.յր մի է ՚ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց »: Ա.յսինքն՝ զհլածանս, զնեղութիւնս, զնենգութիւնս: Եւ արդարև մեծ իմաստութիւն է համբերել ցաւոց, մեծ զօրութիւն: Իսկ ցաւս ասաց՝ զտկարութիւնս և զմեղս և զնենգութիւնս կոչէ: «Գիտէ, ասէ, համբերել ցաւոց». տկարութեան աշակերտացն և մեղաց. զի ումն ասէր եթէ գիւահար է, և այլ ումն եթէ մոլորեցուցիչ, և այլք եթէ հակառակ Աստուծոյ է. և նա տանէր այսպիսի տկարութեան մտաց: Իսկ հարուածս՝ Թուի ինձ՝ կամ զօրբամբութիւնն կոչէցէ, կամ զցաւսն իսկ չարչարանացն. զի և ողջոյ ումեք այլոց տկարութեան համբերել՝ մեծ և կարի զարմանալի է, Թող Թէ յորժամ լինքն ՚ի ցաւս լիցէ, և կարիցէ այլոց ստահակութեանց տանել՝ յորժամ ՚ի վերայ յարձակիցին և զայրացուցանիցեն: Յովք ոչ կարաց համբերել սրտահանութեան բարեկամացն, իսկ զամենէ ասէ, եթէ « Ա.յր մի ՚ի հարուածս է, և գիտէ համբերել ցաւոց »: Հրեայք յորժամ ՚ի վիշտս էին և ոչ յիշել անգամ զԱստուածն կամէին. իսկ սա երկուս առաքինութիւնս ցուցանէ, մի՝ զի լինքն իսկ ՚ի խաչն և ՚ի չարչարանս էր, և զայլոց ևս ցաւս բառնայր. Թէպետ և զայլոց ցաւս բառնայցէ, պարտ է նմա՝ զի լինքն անցաւ և առանց վշտաց իցէ. ոչ այդպէս, ասէ, այլ և լինքն՚ի վերս է, և զայլոց տկարութիւնս բառնայ: Ապտակէին, զայրացուցանէին, տանջէին, և նա բառ-

նայր զմեղս այլոց. մեռանէր, և զայլոց մահս լուծանէր: Ա.յլ էի՞ ինչ զարմանք եթէ Աստուած մերկ՝ առանց մարմնոյ՝ զայսպիսի աքանչելիս գործէր. վասն որոյ և ասէ իսկ, եթէ « Ա.յր մի ՚ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց »: Զի ոչ այր ոք լոկ է, և ոչ Աստուած մերկ. զի և այս այսպէս է՝ յայտ այնու է, զի ոչ ասաց եթէ համբերէ, այլ եթէ « Գիտէ համբերել »: Նա և՚ի բնէ իսկ և՚ի սկզբանէ գիտէ զնոյն:

« Զի զարձեալ էին, ասէ, երեսք նորա. անարգեցաւ, ասէ, և ոչ ինչ համարեցաւ »: Ա.յլքն ասեն. Աչհամարհեալ է, և ոչ ինչ համարեցաք զնա. այսինքն՝ յաչաց էլ ամենեցուն, առեցաւ, անարգեցաւ, և ոչ ինչ համարեցաւ: Եւ զի ասէ, « Ի հարուածս է », զԹշնամանացն ասէ, Թէ զանարգանս՝ չհամարեցաւ անարգանս, և ոչ զԹշնամանսն՝ Թէ Թշնամանք իցեն. կամ որպէս այլքն ասեն, եթէ վասն անարգութեան չհամարեցաւք ինչ զնա:

« Սա զմեղս մեր բառնայ, և վասն մեր պաղատի »: Աչգի ազգի չարչարանս չարչարեցաւ, բայց զամենայն իսկ վասն մեր: Տէս, զիարդ աշխարհ զԵրուսաղէմ; կամ զիարդ զայրացեալ Հոգւով կոչէր զՊաղատ ՚ի գեբեզմանէն արտաքս, կամ զիարդ խռովեր վասն Յուդայի. Մի ոմն, ասէ, ՚ի ձէնջ մատնելոց է զիս: Խռովեցաւ ՚ի Հոգւի իւր, ոչ վասն զի մատնելոց էր. ապա Թէ ոչ՝ զիա՞րդ ասէր ցՀայր, եթէ Հասեալ է ժամ; փառաւորեա զորդի քո. զի զմատնիչն տեսանէր եթէ ելանելոց էր ՚ի Թուոյ երկոտասանիցն, և զՀրեայս՝ զի ցրուելոց էին ՚ի քաղաքէն. ոչ վասն իւրոց ինչ չարչարանաց, այլ վասն նոցա գործոցն աշխարէր. և զմեզ ուսուցանէ՝ զի և մեք ընդ այլոց վիշտս տրտմիցիմք: Եւ ոչ վասն այնր ինչ պաղատի՝ զի ինքն չարչարի, այլ զի ցուցցէ եթէ Թերահաւատելոց են ՚ի նմանէ՝ վասն որոյ չարչարին. և յայտ անուանէ. Երուսաղէմ, Երուսաղէմ, ասէ, բազում անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո, և ոչ կամեցարուք. ահաւադիկ Թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ:

« Եւ մեք համարեցաք զնա ՚ի ցաւս և՚ի վերս և՚ի չարչարանս՝ իբրև յԱստուծոյ »: Եւ բարւոք ասաց եթէ մեք համարեցաք զնա իբրև յԱստուծոյ. զի ոչ

եթէ բռնութեամբ ինչ կամ՝ի հարկէ ած զնա յայն Աստուած, այլ կամաւ մատնեաց ինքնին զանձն՝ փո- խանակ մեզաց մերոց: Եթէ որդի լիցես, ասէին, Աս- տուծոյ, էջ՝ի խաչէդ. այլ վասն ձեր ասէ զայս ամե- նայն, զի կատարեսցի այն, եթէ ցոչինչ համարեցաք զնա: Ոչ ինչ էին իրքն չարչարանաց և ցաւոց, այլ բժշկութեան և առողջութեան. քանզի և ասէ իսկ, եթէ «Նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց, չարչա- րեցաւ վասն անօրէնութեանց մերոց»: Նա, ասէ, չարչարեցաւ. բարւոք իսկ և զվէրս ձեռացն և զոյլոց մարմնոցն, և զպատճառս խաչին նշանակէ առնայն ուրեք: Եւ էլիա արդեւք այն նման վէրք և չարչա- րանք. ոչ, ասէ, քանզի կամով եկն յայն, և ցանկու- թեամբ ցանկացաւ նմին:

«Խրատ խաղաղութեան մերոյ՝ի նմա, և վիրօքն նորա ամենեքեան մեք բժշկեցաք»: Ասկինքն՝ զի խրատն և չարչարանքն նորա մեզ զխաղաղութիւն ծնանան: «Եւ բժշկեցաք վիրօքն նորա»: Զոր առողջու- թիւն ասիցես, զմարմնոյն ինչ արդեւք. ոչ, այլ զհո- գւոցն:

«Ամենեքին իբրև զոչխարս մոլորեցաք»: Զայնմ իսկ բժշկութենէ ասէ, զի՝ի մոլորութենէն դարձոյց. ոչ սա այո՛ և նա ոչ, այլ ամենեքին իսկ մոլորեցաք: Եթէ վասն Հրեից ինչ ասիցես. Ոչ, ասէ, ուրեք առաքեցայ, այլ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայելի: Տեսա- նե՞ս, զի նոցա և հեթանոսաց առհասարակ էր բժշկու- թիւն խաչին: Զոր բժշկութիւն ասիցէ. միթէ զգաճրձն՝ի բաբեղոնէն. այլ զգարձ ոգւոցն՝ի մոլորութենէն՝ի ճշմարտութիւն: «Ամր՝ի ձանապարհի իւրում մոլո- րեցաւ»: Եւ այն իսկ էր անհնարին մոլորութիւն, զի ոչ յայլոց, այլ իւրաքանչիւր միում ճանապարհի էին մոլորեալք. և ոչ միայն յօտար աշխարհին մոլո- րեցան, այլ մինչդեռ միում աշխարհին և միում րեանց քաղաքին էին մոլորեցին՝ի ճշմարտութենէն:

«Եւ Տէր մատնեաց զնա առ մեղս մեր. և նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր»: Զի մի կարծիցես եթէ վասն իւրոց ինչ մեղաց եղեւնման այն, վասն որոյ իսկ ասէ. «Տէր մատնեաց զնա առ մեղս մեր»: Վասն մեր ասէ, և ոչ ասէ թէ վասն իւրոց ինչ մեղաց գտաւ պատժա-

պարտ: «Ամր նա առ վշտին՝ ոչ բանայ զբերան իւր»: Եւ ընդէր արդեւք լռեաց և ոչ ետ պատասխանի. զի եթէ իրացն վկայութիւն ոչ հաւանեցոյց զնոսա, ձր- չտի և առաւել բանիցն. քանզի և ոչ դատաստանով անդամ հաւանէին, այլ ճշմարտութեամբ և արտաքոյ օ- րինաց կամէին սպանանել. և այնպէս դիւացեալ, զի թէպետ և պատասխանի ինչ տուեալ էր, սակայն ոչ անսային. այլ և լռելն նորա կարող էր զնա ապրեցու- ցանել՝ի խաչէն. և յայն սակս լռեաց, զի նոքա և միով իմիք պատասխանոյ մի՛ լինին արժանի. զի զնոսա ոչ երաղն կնոջն Պիղատոսի, և ոչ մատնչին խեղդել, և ոչ սուտ վկայիցն ամաչել, և ոչ այլ ինչ կարաց ածել՝ի հաւանութիւն: Գրեալքիր թէ զնա՝ի խաչ հանէք, ՝ի կայսր զի խրախուսէիք:

«Իբրև զոչխար եհն՝ի սպանումն»: Զի զհեզու- թիւնն ցուցանիցէ, ոչ միայն այլովքն, այլ և մեռա- նելն: Եւ ինձ այսպէս թուի եթէ ոչ միայն զլռութիւնն ասիցէ, այլ զի և պատարագն իսկ եղև. քանզի և Սի- մաքոս ասէ, եթէ Եւ զհնումն եհն՝ի պատարագել: Եւ մերն չէ ինչ լռելի՝ յորժամ սպանանել տանիցին զը- մեզ, քանզի առ երկիւղն լռեաք. այլ նորայն մեծ է որ կարաց բարբառով միայն զունելիսն զարկուցանել զգետնի. Զո՛վ, ասէ, խնդրիք. և ամենեքեան յետս առաճեալ՝ հարան զգետնի: Քան զոր պատասխանի չիցէ այն մեծ, քան զորպիսի՛ բանս առաւել չցուցա- նիցէ զզօրութիւնն: Տեսեր զզօրութիւնն, տե՛ս և զհե- զութիւնն՝ ուրեմն զօրաւոր, ուրեմն քաղցր. զի ոչ միայն՝ի զօրութենէն պարտ իցէ նկարել զաստուա- ծականն, այլ և՝ի հեզութենէն:

«Իբրև զորոջ առաջի կտրչէն՝ այնպէս կապեցաւ, ասէ, և այնպէս ոչ բանայ զբերան իւր»: Բայց սակայն բաց զբերանն և խօսեցաւ ինչ. այլ զի զհոնարհու- թիւնն ցուցանիցէ, եթէ ոչ խիստ ինչ և ոչ գժիտ բանս խօսեցաւ. Ամր թէ չար խօսեցայ՝ վկայէ, ասէ, վասն չարին. և եթէ բարւոք՝ զի հարկանես զիս: Քան զլռութիւնն ևս հանդարտ պատասխանի էր: Եւ մեք կամ քնաւ պատասխանի ինչ մի՛ տացուք, և կամ թէ տայցեմք՝ նոյնպէս հանդարտագոյնս:

«Ա՛ր խոնարհութեան նորա դատաստանն նորա

բարձաւ»։ Չի այնչափ ետ զանձն խոնարհուԹեան, զի և բանս անգամ չետուն խօսել, զի բնաւին իսկ զիբաւունս բարձցեն ՚ի նմանէ։ Եւ գիտէք՝ զի կարի անաւագայ և անկելոց է՝ յորժամ և ոչ գատ ոք տայցէ դնել, և ոչ ըստ օրինացս բանս առ բանս խօսել, զի յօգնականուԹենէ իրաւանցն արկանիցեն. զի առ բազում խոնարհուԹեան՝ և ոչ բանս ինչ յատենի խօսեցաւ։ Եւ տես, մարգարէն զիաւրդ յարէ ՚ի Ձառ խաչին իբրև զհեշտական ինչ զրոյցս՝ պատմել և զարմանալիս և աքանչելիս. «Ձաղգն նորա, ասէ, ոմ պատմեսցէ, զի բարձեալ են յերկրէ կեանք նորա»։ Ձինչ խօսիսդ. չիցէ՞ն զմարդոյ ումեք բանքդ. զի եԹէ մարդ լոկ իցէ, զիաւրդ ոչ ոք կարիցէ պատմել ըզծնունդն նորա. չիք ինչ հնար, ասէ։ Մի՛ զի բազում խոնարհագոյնք ՚ի խաչին գործեցան՝ գայԹակղեսցին ինչ, տես, զիաւրդ միւսանգամ հանէ զմեզ ՚ի վեր, և յուցանէ զզօրուԹիւնն նորա, եԹէ որ զայնպիսի չարչարանս չարչարեցաւ, «Բարձեալ են յերկրէ կեանք նորա», և կենդանի Աստուածոյ է. ըստ այնմ, եԹէ Կեանք մեր ծածկեալ են ընդ Քրիստոսի յԱստուած։

«Չի բարձեալ են յերկրէ կեանք նորա»։ Եւ ոմ ոք եղիցէ մարդ՝ որ ոչ համարեցաւ յազգս. ամաչեսցեն հերձուածողք՝ որ հակառակ մարգարէիս բարբառին զՀայհոյուԹիւն։ Եւ մի զվերին ծննդենէն ոք ասիցէ, զի այն անյայտ իսկ է. այլ ես զայսմ ծննդենէ՝ որ ՚ի խոնարհս եղև՝ ասեմ, եԹէ զիաւրդ մարդ ՚ի կուսէ ծնանիցի, զիաւրդ առանց ամուսնուԹեան լինիցին երկունք, զիաւրդ առանց առն՝ մանուկ, և առանց ամուսնուԹեան՝ ծնունդ. ոմ ասիցէ, ոմ պատմեսցէ։ Գտաւ, ասէ, յղի. և եԹէ ոչպէս ինչ է՝ ոչ ասաց։ Ա՛յո, ասէ, ասաց, եԹէ Հոգին սուրբ եկեսցէ, և զօրուԹիւն Բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է՝ սուրբ կոչեսցի, Որդի Աստուծոյ։ Եւ չԹուիցի՞ քեզ, ասեն, Թէ յայտ իցէ, քանզի և գիտեմք իսկ։ Իսկ արդ, որովհետև յայդ ապաստան եղև, ղզոյն իսկ քննեսցուք. Հոգին Սուրբ եկեսցէ։ Հոգին Սուրբ, ասեն, արար։ Եւ արդ, աղէ ասա, զիաւրդ արդեւք արար. որպէս զԱդամն՝ Աստուած. այլ չէ ինչ ՚ի դէպ։ Ա՛Ր ՚ի մարդկեղէնն ինչ սերմանէ. քաւ լիցի ասել

զայդ, քանզի մեծ ամպարշտուԹիւն է։ Իսկ որպէս զԵւայն ՚ի կողինն. այլ և ոչ այնպէս ինչ է։ Մարմինն ինչ առ արդեւք յարգանդէն[1] և ստէղծ. սակայն և զայն չառնում յանձն։ Իսկ առաւնց կուսին ինչ ուստեք. սակայն և այն չէ ՚ի դէպ. զի ոչ այնուհետև լինի առեալ ՚ի նմանէ մարմին։ Իսկ ոչպէս ինչ արդեւք։ Նախ խոստովան լինիմ զտկարուԹիւն, և ասեմ՝ եԹէ ոչ գիտեմ, մի՛ հարցաներ զանքննինս՝ որ ոչ կայտնի ինչ գործեցան. և ապա ասեմ՝ զի ՚ի կուսէն առ մարմին. և արդարև մարմին ձշմարիտ զայն խոստովանիմ, բայց զիաւրդ ՚ի նմանէ՝ այնմ չեմ բաւական գիտել. չեմ ձարտար քան զմարգարէս, և ոչ խելամուտ քան զՀոգին՝ որ ՚ի բերան մարգարէին խօսեր։ Հոգին՝ որ այնպէս գիտէ զԱստուծոյ, որպէս և Հոգին մարդոյ՝ որ ՚ի մարդն կայցէ, ոչ ետ աւելի ինչ ձառել քան զայն, եԹէ «Ձաղգ նորա ոմ պատմեսցէ». ես և դու ոմ իցեմք՝ որ զանքննինս քննիցեմք, և զանձառսն խնդրիցեմք։ Եւ եԹէ զմարմնաւոր ծնունդն ոչ ոք կարէ պատմել՝ որ ժամանակաւն եղև, որոյ բիւրուց բիւրք են վկայք՝ հրեշտակք և մարգարէք և արբածք ամենայն, որ գրեԹէ հանդիսապատիւ մեզ եղև, քանզի ամենայն իւիք մեզ նմանեցաւ ըստ մարդկուԹեան, առանց մեղաց միայն, ոմ ոք այնչափ չանդուգն և մելեան կայցէ՝ որ զանմիջնորդականն և զանձառականն և զանժամանակեանն՝ ՚ի հարց և ՚ի խնդիր իշխեսցէ արկանել։

Զէ յայս կենաց. «Չի բարձեալ են յերկրէ կեանք նորա»։ Եւ զիաւրդ բարձեալ իցեն յերկրէ կեանք նորա։ Ա՛յո, ասէ. քանզի և ոչ մնէն նորա ըստ մերում բնուԹեանս էր. զի ոչ եԹէ պատժապարտ ինչ էր մարմինն այն մեղաց, զի դատապարտեալ՚ի մեղաց անտի՝ լինիցի պարտական մահու, այլ փոխանակ այլոց չարչարեցաւ. վասն որոյ և Աստուած բարձրացոյց զնա։ Ցեսանէ՞ս, ոչչափ ինչ լաւ է վասն այլոց չարչարել։ Եւ մեք զիաւրդ, ասեն, հաւանեսցուք. զի ազգ նորա ոչ պատմի, և յերկրէ բարձեալ են կեանք նորա, զնա ոչ տեսանեմք, և ազգատոհմի նորա չեմք ինչ խելամուտ։ Ա՛ԼՐ զի ուսա-

[1] Յօր. Յարգանդէն՝ յօտար գրէ։

նիցին Թանձրասիրտքն և անհանձարքն, եթէ սա այն է՝ որ մեռանի ըստ մարմնոյն և ոչ մեռանի ըստ աստուածութեանն, և ոչ արգելաւ առ մեռեալս, այլ կենդանի է առ Աստուծոյ. ըստ այնմ, եթէ Ոչ Թողաւ շունչ նորա՝ի գժոխս, և ոչ մարմինն նորա հետես ապականութիւն. զի յայտ լիցի Թէ աստուածեղէն բնութեան է։ Ոչ վասն իւրոյ մեղացն, այլ վասն այլոց մեղաց մեռանէր, մահկանացուաւն՝ և ոչ կենդանեաւն. «Յանօրէնութեանց ժողովրդեան իմոյ վարեցաւ՝ի մահ»։ Սիմաքոս ասէ. Վասն անիրաւութեանց ժողովրդեան իմոյ։

«Եւ տայ զչարս փոխանակ գերեզմանի նորա, և զմեծամեծս փոխանակ մահու նորա»։ Զաւար քաղաքին ակնարկէ այսու, եթէ ոչ վայրապար աւերեցաւ և՝ի ցունաց, այլ Աստուած մատնեաց փոխանակ գերեզմանի նորա։ Փոխանակ որոյ գերեզմանի, ուր Հերեայդ, փոխանակ որոյ մահու. Թաղեցաւ Ջօլաբաբել և նզը և ցեսու Յովսեգեկեանց, և այլք ևս այսպիսիք մեռան, և ոչ կարես ասել Թէ վասն նոցա գերեզմանաց և մահու աւերեցաւ քաղաքն։ Եւ բարւոք ասաց, եթէ «Տայ զչարս»։ Զի չիք ինչ չար քան զՀրէիցն ազգ։ «Փոխանակ գերեզմանի նորա»։ Քանզի վասն գերեզմանին իսկ՝ արժանի չարաչար պատիժս կրել, ոչ զի Թաղեցաւն, այլ զի արգելուին և ոչ տային Թաղել. որպէս զի Թէ ոչ այլ ուստեք, սակայն վասն գերեզմանին զրկեալ լինիցին՝ի ներբեղց Թողութեան։ Ոչ այնչափ խաչն դատապարտեաց զնոսա, որպէս գերեզմանն. մանաւանդ զի և խաչն իսկ բաւական էր դատապարտել։ Եւ եթէ այլ ինչ նշանք չէին գործեալ, աւազակին միայն դաւանութիւնն կարէր պարտաւորել զնոսա։ Այլ Թերևս ասիցեն՝ Թէ չլսեաք զայն. իսկ և ձէզ զվախճանին արդեւք նշանան տեսին։ Իսկ յորժամ կամէին վէմարել, բարբառ մեծաձայն արձակեաց և եհան զոգին. Թէպէտ և այլոց վախճանելոյ այնպիսի հերպարանք ոչ լինիցին, այլ առ սակաւ սակաւ նուաղէ զօրութիւնն, և ապա ելանեն ոգիքն. և ոչ յառաջագոյն ինչ գիտեն զվախճան՝ ոգիքն։ Այլ Թերևս ասիցեն՝ եթէ ոչ զայն իմացաք ինչ. իսկ զվերագուրին հերձուլ և զվիմաց պատառել

զերկիր շարժել և զարեգական Ճառագայթիցն մթանալ յոլ տանիցին։ Այլ յայնժամ դեռ ևս ոգի կայր, ասեն։ Յորժամ տեսանիցես զմեռեալ՝ որ այնպիսի գործս գործիցէ, զիաւրդ ոչ զարմանայցես, զիաւրդ ոչ շտապիցիս. ձէ դու քեզէն իսկ խնդրեցեր՝ի դատաւորէն դաս մի զինուորաց՝ զի պահիցեն զգուշութեամբ. բարւոք քեզէն քոյին իսկ ձեռաք ետուր՝ի պահ զմեռեալն. և արդ՝ դու քեզէն տուր զերաւն. զի ոչ աշակերտ ոք մծատ էր, և ոչ աւետարանիչ ոք Հուպ. դու քոյին ձեռաք կինքեցեր զգերեզմանն, դու քեզէն կայուցեր պահապանս. և ոչ այնպիսի ինչ պահապանս՝ որ յանկէնն՝ի նա, այլ հակառակորդս և օտարամիտս, որք ոչ նշանս ինչ տեսին, և ոչ մարգարէիցն ինչ ընդել էին։ Զի Թէ զաւազակն հաւանեցոյց, ուրջաւի ևս առաւել զձեզ պարտ էր հաւանեցուցանել՝ որք ընդ մարգարէութիւն էիք մեռեալ. և եթէ զգինուորսն յանկոյց, ուրչափ ևս առաւել զձեզ՝ որք միշտ զմովսիսականն և եթէ լսէիք։ Ոչ ասեմ եթէ նշանս ինչ երբեք տեսէք կամ յառաջ կամ՝ի խաչին, այլ այն իսկ փոքր էր՝ զի աւազակն հաւատաց, զինուորքն ստրջացան, հարիւրապետն զարմացաւ. այլ և զայն ամենայն ևս ժխտէին։ «Տայ զչարս փոխանակ գերեզմանի նորա»։ Ոչ միայն զի սպանին, այլ զի և իմանալ կարէին զամենայն սքանչելիսն, և ոչ կամէին առնուլ՝ի միտ։

«Եւ զմեծամեծս փոխանակ մահու նորա[1]»։ Մեծատունս կոչէ զնոսա. զի առաւել քան զայլ մարդիկն՝ նոքա մեծատուն էին ընդ ժամանակն՝ վասն առատութեան բերոյ երկրին։ Դարձեալ և հոգևորքն՝ մինչչև զչարիսն գործեալ էր՝ մեծատունք էին. քանզի Աստուծոյ խնամ՝ի նոցա վերայ առաւել կայր քան յայլոց։

«Զի զանօրէնութիւն ինչ ոչ գործեաց»։ Իսկ այս՝ի ժողովուրդն կատարեսցի՝ իբրև զայն, եթէ «Տայ զչարս փոխանակ գերեզմանի նորա»՝ի ժողովուրդն

1 Յօրինակին պակասի այս բնաբան մարգարէին, որպէս Թուխ՝ յանմատրութենէ գաղափարողին՝ի բաց Թողեալ։

առնուն. ապա և զայս ՚ի ժողովուրդն պարտին առնուլ. «Եւ ոչ նենգութիւն գտաւ ՚ի բերանն նորա»: Իսկ նա աւանիկ ասէ, եթէ Զիք արդար՝ որ առնիցէք զբարի յերկրի, և ոչ մեղանչիցէք. և գարձեալ, եթէ Զիք ոք՝ որ ոչ գայթակղեսցի լեզուաւ: Եւ զայն ևս զի առնիցեմք, եթէ Սմենեքեան իբրև ոչխարք մոլորեալք. այր ՚ի ճանապարհի իւրում մոլորեցաւ: Եւ զի մի կարծիցես զամենեսին ասելով զբազմաց ասիցէ և ոչ զամենեցուն, ասէ. Սկր իբրաքանչիւր ՚ի ճանապարհի իւրում մոլորեցաւ. և ամենեքեան առհասարակ, և իբրաքանչիւր առանձինն. զի ծանիցեն եթէ վասն նորա եղև այն ամենայն: Ինքն իսկ յառաջագոյն ասաց, եթէ վասն նորա լինելոց է. և եղև և կատարեցաւ: Եւ եթէ այս այսպէս ոչ լիցի, աղէ՛ ասա ինձ, ով Հրեայդ, զի այն պիսի ինչ նախանձ ցուցեր՝ զի զայր մի անօրէն սպաներ, և ընդ֊ի֊ր կրեցեր զայդպիսի պատիժս: Որք առ Մովսէս զկուռնն պաշտէին, և զպատժապարտն վասն նահանձու Աստուծոյ սպանին՝ չիմանային զբարկութիւնն Աստուծոյ. իսկ այժմ զի պատժապարտ իսկ չէիր, և ըստ օրինացն արդարութեան առաքինանայիր, և զայլ մի զխոտիչ օրինացն և զհակառակ Աստուծոյ՝ սպաներ, ընդ֊ի֊ր լիցես ՚ի պատիժս: Փենեհէս սպան՝ և արձակեցաւ. և քեզ արդարանալ պարտ էր, քանզի և դու Աստուծոյ նախանձախնդիր էիր. չէր պարտ առնուլ փոխարէնս՝ փոխանակ բարւոյ նախանձուն: Սկր այժմ, ասէ, վասն մեղաց եմք ՚ի պատիժս: Վասն որո՞յ մեղաց. միթէ վասն որթոնն գլխոյ, կամ վասն երընջոյն ոսկեայ. միթէ վասն մանկտո՞յն զորս կոտորիր, կամ վասն դստերա՞յն՝ զորս զոհէիր. ո՞չ ապաքէն զմոլորեցուցիչն հալածէիք, և զվրիպեցուցիչն՝ զՅուդա և զԹևդա. ընդ֊ի֊ր ոչ գարձան ձեզ երախտիք իբրև նախանձաւորաց օրինաց: Եւ ոչ ոք կարէ ասել՝ եթէ ՚ի նա միայն ցուցէք զնախանձն, այլ և յաշակերտսն՝ որք զնորա տեղին առին. զԱտեփանոս քարկոծ արարէք, զՅակովբոս սպանէք, զՊաւղոս պեսպես մահու չարչարեցէք. նովին նախանձու՝ ոչ ոք գտաւ ՚ի ձէնջ կռապարիշտ ՚ի ժամանակին:

«Եւ Տէր կամի սրբել զնա ՚ի վիրաց անտի»: Քանզի մի վմահուանէ լուար, և եթէ թաղեցաւ ՚ի գերեզման

նի, զի մի ևեթ անդ հաստատեալ կայցէն[1] միտքն, յարէ ՚ի նոյն իբրև առակաւ զյարութեան ձառս. զոր և վերագոյն իսկ ասաց ակնարկելով, եթէ Բարձեալ են յերկրէ կեանք նորա: Այս և աստ, թէ «Տէր կամի սրբել զնա ՚ի վիրաց անտի». զի ցուցցէ եթէ աղատ յապականութենէ է մարմինն. ըստ այմմ, եթէ Մարմինն նորա ոչ ետես զապականութիւն. քանզի և չէր իսկ պարտական: Եւ եթէ զսիմոն յանձն առ, մի՛ ինչ վասն այնորիկ խոնարհագոյնս կարծիցես. զի վասն քո մտացդ հաստատութեան եղև այն. Ցինեցէ՛ք, ասէ, և տեսէք, զի ոգւոյ՝ մարմին և ոսկերք չիք, որպէս զիս տեսանէք՝ զի ունիմ մարմին և ոսկերս. և յայտ արար՝ եթէ առանց եղծանելոյ և ապականելոյ յաղոյց զիւր մարմինն. զի բայց ՚ի սպեացն՝ զոր ՚ի հաստատութիւն յարութեանն աշակերտացն էր ցուցանելոյ, այլ ինչ արատ ՚ի սուրբ մարմինն ոչ գտանէր:

«Եթէ տաջիք դուք վասն մեղացն, անձինք ձեր տեսցեն զզաւակ երկայնակեաց»: Քանզի ասաց եթէ վասն նոցա մեռաւ, և ոչ վասն իւրոց ինչ մեղաց, և եթէ վճիժս տալոց են, ասէ և զայն՝ եթէ մարթ էր նոցա վերստին կոչել անդրէն, և անցանելոց են պատիժք՝ եթէ կամիցին: Եւ զի՞նչ իցէ տալ վասն մեղաց. ոչ ոսկի խնդրէ և ոչ արծաթ, այլ զոր ինքն խնդրէ, թէ Հաւատացէք միայն և ջնջեսցին մեղքն ձեր:

«Եւ կամի Տէր ՚ի ձեռն նորա փոխոգել ՚ի ցաւոց անձինն նորա, ցուցանել նմա լոյս, ստեղծուլ իմաստութեամբ, ծառայել բարւոք բազմաց»: Սկյս ամենայն իմաստութեան և հանճարոյ է. իսկ զցաւսն փոփոխել՝ զյարութիւնն յայտ առնէ: «Սրդարացուցանել զարդարն, յայտնի առնել զարդարութիւն նորա»: Քանզի ոչ ասաց եթէ արդարացուցանել զնա, այլ թէ զարդարն. և յայտ է եթէ զարդարն՝ որ ոչ Հանաչէր ուիեք՝ առնէր յայտնի բազմաց: Ծառայէլն բարւոք այն իսկ է՝ զի պաշտօնեայ եղև թլփատութեանն: Նշանակիչ թլփատութեանն՝ զգործ ծառայից գործեաց Տէրն ամենայնի. լուաց զոտս աշակերտացն, և ջնջեաց ընթանոցսն. զի որոց բարւոքն ծա

1 Յօր. Հասպասելոյն կոչին:

ռայեաց, նոցին Տէր էր և արարիչ. Ոչ եկի՝ զի պաշտեցայց, ասէ, այլ զի պաշտեցից. և դարձեալ, Թէ Ո՞վ մեծ իցէ, որ բազմեաւն իցէ, Թէ որ յոտն կայցէ. և ես աւասիկ, ասէ, պաշտեցի զձեզ: Վասն այնորիկ իսկ առ զկերպարանս ծառայի, և այսպիսի կերպարանօք՝ ծառայեաց բարւոք բազմաց: Եւ զինչ իցէ՝ «Ի ձեռին նորա»: Ոմանք ասեն. Քանզի՝ ի նորին Քրիստոսի ձեռինն է զօրութիւնն, զի մի կարծիցի եթէ այլուստ զօրացեալ ունէր զամենայն, այլ ինքն իւրով զօրութեամբն առնէր զինչ և կամէր: «Փոփոխել՝ի ցաւոց անձինն իւրոյ»: Չի բազմացն հաւատք՝ փոփոխանք լինիցին ցաւոց նորա. զի Թէպէտ և չարչարեցաւ ըստ մարմնաւորութեանն, սակայն զբազումս շահեցաւ:

«Եւ զանօրէնութիւնս նոցա նա վերացուսցէ»: Քանզի արդարն ոչ ինչ պատժի վասն մեղաց: «Եւ վասն այնորիկ իսկ ժառանգեսցէ զբազումս»: Չի Թէ միոյն, ասէ, փոխանակ ամենեցուն մեռաւ, ապա որ կենդանիքն են՝ ոչ են անձանց կենդանիք. և դարձեալ. Չէք անձանց կենդանիք. և դարձեալ. Չէք անձանց, գնոց գնեցայք. և դարձեալ. Եթէ կեամք և եթէ մեռանիմք՝ Տեառն եմք. և Որ կենդանիքն իցեն, ասէն, մի անձանց իցեն կենդանիք, այլ այնմ՝ որ մեռաւն և յարեաւ վասն նոցա: Եւ զի մի կարծիցես եթէ վասն անցելոց իրաց ինչ ասէ, և ոչ վասն հանդերձելոց, ասէ. «Եւ զմեղս նոցա վերացուսցէ»: Սկիւղաս ասէ. Բարձցէ. Սիմաքոս ասէ. Կրեսցէ:

«Վասն այնորիկ ժառանգեսցէ նա զբազումս, և զաւար հզօրաց բաշխեսցէ»: Զդիւացն աւար, քանզի յաղթեաց և առ զկազմած հզօրին: Եւ բարւոք ասէ, Թէ բաժանեսցէ. զի Աւաքելոց բաժանեաց եա՝ ուսմունս զհեթանոսս և ուսեալն զթլփատութիւնն: «Փոխանակ զի մատնեցաւ՝ի մահ անձն նորա և ընդ անօրէնսն համարեցաւ»: Եւ սմն՝ի Թարգմանացն ասէ, Թէ Ընդ միասակարս Թուեցաւ: Ոչ վայրապար՝ի մահ, այլ զի բարձրացուսցէ զնոսա: Տեսանէս զմահուն շահ. տեսանէս զխաչին պտուղս: Եւ չէն ինչ, ասեն, պատշաճ վասն այնորիկ. այլ և վասն նորին իսկ եղև պատ-

շաճ. քանզի մեռաւ, վասն այնորիկ և կենդանեաց իսկ տիրէ: Եւ մահ նախատանաց. Լուաք, ասեն, զի ասէր մոլորեցուցիչն՝ եթէ յերիր աւուր յառնեմ: և բարւոք ասաց, Թէ «Ընդ անօրէնսն համարեցաւ». քանզի չէր իսկ անօրէն:

«Եւ նա զմեղս բազմաց վերացոյց»: Իսկ այլքն ասեն, Թէ Աւ: «Եւ վասն մեղաց նոցա մատնեցաւ»: Սկիւղաս ասէ. Եւ արհամարհողացն իւրոց պատահեսցէ. Սիմաքոս՝ Հակառակաց. Թէոդիտոնն՝ Եւ զամբարիշտս տանջիցէ: Տէս, զինարդ յաճախագոյնս զգուշանայ՝ զի մի երբեք գայթակղեսցիս: Չինարդ անօրէնն զգայլոց մեղս բառնայցէ և ջնջիցէ. ոչ ապաքէն վասն նորին իսկ սպանաւ՝ որ այնպէս ատեաց զմեղս, զի յանձին ևս կալաւ մեռանել՝ զի ջնջեսցէ: Եւ ընդէր ասաց՝ վերացոյց կամ վերացուսցէ. այլ զի գնաչն ակնարկիցէ, եթէ անդ եհան զնա և բեւեռեաց զնա ընդ խաչին. զի խաչն՝ լուծումն եղև մեղաց:

ԳԼՈՒԽ ԾԴ

«Ուրախ լեր ամուլ՝ որ ոչ ծնար»: Սկիւղաս ասէ. Երգեա բարւոք զօրհնութիւնդ, խնդալեա: «Գոչեա, գուժեա՝ որ ոչդ երկնեցեր»: Մի՛ ինչ ամաչիցես զի նախատեցարդ. «Չի բազում են որդիք այրոյդ՝ քան զարամբոյն: Չի այսպէս ասէ Տէր. ընդարձակեա զտեղի խորանի քո և զբարձից քոց»: Իսկ այլքն ասեն, եթէ Չիեզկս խորանից քոց: «Հաստատեա, մի խնայեր»: Սկիւղաս ասէ. Պարզեսցին և մի քակեսցին: «Երկայնեա զտուռունս քո»: Սկիւղաս ասէ. Յիւրեա զապաւանդակս քո: «Հաստատեա զցից քո. յաջ և յահեակ թափուսջիր. և զաւակն քո զհեթանոսս ժառանգեսցէ, և զքաղաքս աւերեալս շինեսցես»: Սկիւղաս ասէ այսու և վասն դարձին. բայց յերկեղեցի իսկ կատարեցաւ ձշմարտութեամբ, քանզի ամուլ էր յառաքինութենանց, և պտուղ ինչ երբեք ոչ տայր: Տեսանէս, զի ած շրջեաց զերան, և այլ ընդ այլոց արար:

«Մի՛ երկնչիր՝ զի ամաչեցերն, և մի՛ պատկառիցես՝ վասն զի նախատեցար»։ Զի ոչ եթէ անմահ իցէ բարկութիւն իմ. բաւական եմ զեղեալսն հանգոյն չեղելոց հաստատել՝ ի նախատանս եկիր, այսուհետև ոչ ևս ըմբռնիցիս յումեքէ, և ազատեսցիս յամօթոյդ, և արարիչ հանգոյն այնմ՝ որ ոչ երբեք լլկեցաւ։

«Ձամօթն յաւիտենից մոռասցիս դու, և նախատինսք այրութեան այլ ոչ ևս լինիցին քեզ յուշ»։ Զի այնպիսի լինէ բարութիւնս պարգևէ Աստուած, որք ոչ միայն զվիշտս անցուցանիցեն, այլ և բնաւ զվիշտսն մոռացուցանիցեն. քանզի այսպիսի իմն է առաւելութիւն պարգևացն Աստուծոյ։ «Զի Տէր է որ առնէ քեզ զայդ. Տէր սաբաւովթ անուն է նորա. Նա ինքն Աստուած ամենայն երկրի կոչեսցի»։ Մեծ է խոստումն, աքանչելի աւետիքն. այլ մի՛ ինչ զարմանայիս, զի Տէր է որ առնէ զայդ ամենայն. որուհետև ամենայն ինչ գիւրին է, որ փրկելոյն է զքեզ՝ նա ինքն Տէր Աստուած ամենայն երկրի կոչեսցի։ Բայց յետոյ կոչեսցի՝ յորժամ իրքդ՝ ի գլուխ ելանիցեն. ապա ուրեմն բարւոք ասացի՝ եթէ զեկեղեցւոյ Ձառէ, որ և կատարեցաւ իսկ յեկեղեցի. քանզի ՚ի բոլ Աստուած ամենայն երկրի կոչեցաւ, եթէ ոչ՝ ի գալատեանն, զի բարձաւ անուն հեթանոսութեանն և կոչեցան ամենեքեան յանուն Քրիստոսի։

«Ո՛չ եթէ իբրև զկին մի թողեալ լքեալ տարակուսեալ՝ կոչեաց զքեզ Տէր Աստուած»։ Սիմաքոս և Թէոդիտոնն ասեն. Վշտագնեալ, Թէպետ և այնպիսի իսկ էիր՝ ի մանկութենէ՝ զի ատելիր զնաղաղութիւն. ոչ, ասէ, նոյնպէս լինիցի եթէ հանապազ ատիցեմ զքեզ. առ ժամանակ մի ատեցար։ Եւ առ այնպիսի ատեցեալ կանայս դժուարաւ իմն լինի սէր, որք յառաջնումն իսկ ատեցին. զի ամենայն կին զինչ և որ իցէ, այնպէս իմն դեպ իցէ զի՝ ի մանկութեանն սիրիցի. իսկ աստ աւասիկ ասէ, թէ «Ա՛ր ժամանակ մի Թողի զքեզ, և ողորմութեամբ մեծով ողորմեցայց քեզ»։ Սկիւղաս ասէ. Գումարեցից զքեզ. Թէոդիտոնն, թէ Ժողովեցից զքեզ։ Զի այնպիսի ոք կին և՛ի մտի իմն սոլոր է ելանել, և ոչ եթէ սիրիլ միւսանգամ։ Բայց սակայն դու վայելեսցես՝ ի բազում մարդասիրութեան իմում։ և Թողուլն առ ժամանակ մի՝ և այն սիրոյ նշանակ է, և մեծի ողորմութեան լինիցի պատճառք. քանզի բազում անգամ բարութիւնք յայնժամ լինելոյ են, յորժամ ցամուցու ոք և ապա ցածուցանիցէ զցասումն։

«Ա՛ր սակաւ ինչ դարձուցի զերեսս իմ՝ ի քէն»։ Սիմաքոս ասէ. Ա՛ր սակաւ ինչ է սրտմտութիւնդ։ «Եւ ողորմութեամբ յաւիտենից ողորմեցայց քեզ, ասէ Տէր, որ փրկեացն զքեզ՝ ի ջուրցն որ առ Նոյիւ»։ Իսկ այլքն ասեն. Որպէս աւուրքն Նոյի. զի զամենայն իսկ մարդկան բնութիւն ապրեցոյց՝ ի բարկութենէն սակաւուքն՝ որ ապրեցան։ Եւ զսա զիմաստ արդեւք փրկեաց. զի ահաւանիկ զամենեսեան ջնջեաց ջրհեղեղն. այլ զի որ ապրեցանն՝ սոցա նախնիք էին. յիշեցուցանէ թէ որպէս զնոսա՝ ի սաստիկ ջրհեղեղէն փրկեցի, և զձեզ կարող եմ՝ ի գերութենէդ զերծուցանել։ Միթէ չփոխեցի՞ զբարկութիւնն՝ ի մարդասիրութիւն. զի որպէս անդն եղև, նոյնպէս առ ձեզ լինելոյ է։

«Ա՛յս է ինձ, որպէս երդուայ նմա՝ ի ժամանակին յայնմիկ՝ երկրի այլ ոչ բարկանալ»։ Բայց սակայն ոչ երդուաւ, այլ զի զսոցա միտս հաճիցէ՝ ասէ։ «Ո՛չ սպառնալեօք իմովք զբերինս փոփոխել, և ոչ բլուրք քո շարժեսցին»։ Ո՛չ եթէ զի լերինք իսկ փոփոխեցան, կամ թէ բլուրք՝ ի հիմանէ խախտեցան, այլ զչփոթութիւնն և զխռովութիւնն ակնարկէ այսուիկ։ Երդուայ, ասէ, ոչ միայն ջրհեղեղ չածել, այլ և ոչ այլ ինչ խռովութիւն կամ շարժումն առհասարակ ընդ ամենայն երկիր, այլ թող ետու միշտ կալ՝ ի հաստատութեան։ Եւ այժմ երդնում քեզ վասն գերութեանդ, թէ ոչ ևս թողից զքեզ լլկել՝ ի թշնամեացդ. զի թէ այնչափ չարիք յառաջ քան զջրհեղեղն գործեցան, սակայն թողի զաւակ մարդկան իմով մարդասիրութեամբ, «Նոյնպէս և ոչ՝ ի քէն պակասեսցէ ողորմութիւն իմ, և ոչ ուխտ խաղաղութեան իմոյ՝ ի քէն այլ ոչ անցցէ»։ Սկիւղաս՝ Դաշն, ասէ։

«Զի Տէր այսպէս ասաց. Հաշտեալ եմ ընդ քեզ, տառապեալդ և աստանդեալդ, և չիցես մխիթարե-

լոց. ահաւասիկ պատրաստեմ ես կարկեհան զքարինս քո »։ Ակիւղաս՝ Ննըստիմ, ասէ՝ վոխանակ կարկեհանին, այլ իմն օրինակ ականց[1]. Սիմաքոս՝ Սոբիթէ ըստէմն. իսկ եբրայեցին՝ Բափիոլք[2]։ « Եւ զհիմունս քո շափիղայ »։ Եբրայեցին՝ Ուզամթի քողքող վամ Թովքա[3], ասէ։ Ակիւղաս՝ Եւ արարից քողքող զմահարձանս քո։ Թէոդիտոնն՝ Եւ արարից կարկեհանեայ զպատարանս քո։ « Եւ արկից զմահարձանս քո յասպիս. և զդրունս քո յականս վանեայս »։ Ակիւղաս ասէ. Յականս ծակոտիկենս. Սիմաքոս և Թէոդիտոնն՝ Յականս քանդակելոց, ասեն։

« Ածից զքև պարիսպ ընտիր ընտիր յականց պատուականաց »։ Տես, զի յորժամ ոչ միսիթարիցիք, յայնժամ մեծամեծ բարութիւնք լինին մեզ՝ ի միսիթարուիլն և մեծամեծ շահք։ « Եւ զդրունս քո՝ ի տախտակս վանեայս »։ Ջայս ըստ առաւելութեան ինն ասէ, զի յորգորեսցէ հանել զնոսա՝ ի գերութենէն. զի յորժամ ասիցէ, եթէ թևք աղաւնոյ արծաթապատ և թիկնամկնք նորա՝ ի գոյն ոսկւոյ, իբրև ոչ եթէ այնպիսի աղաւնի ոք երբեք ետես. զի այսպիսի բանիւք զբարութիւնսն որ լինելոց էին նոցա՝ ակնարկէ. որպէս վերագոյնն՝ ի սմին մարգարէի իսկ ասէ,

1. Յօր. Ա.ից։

2 Ակիւղաս. Ἰδοὺ κατακλινῶ ἐν στίμει τοὺς λίθους σου. իսկ Սիմաքոս. Ἰδοὺ ἐγὼ συντίθυμι στίμμιας τοὺς λίθους σου. այսպէս և Թէոդիտոնն. Ἰδοὺ ἐγὼ εμβαλῶ ἐν στίμμι τοὺς λίθους σου. և եբրայեցի բառն פוך (բուխ-ի), որք չորեքեան ևս նշանակեն զծոբոր կամ զներբոփար։

3 Խմաստգ եբրայեցերէնն եդեալ աստանօր՝ ոչ է թարգմանութեան բանիցն՝ « Եւ զհիմունս քո շափիղայ », որպէս համարի մեկնիչն, այլ է եբրայեցերէնն յայնմդ խմաստիցն. « Եւ արկից զմահարձանս քո յասպիս »։ Եբրայեցին այսպէս ունի զկարգ բանիցն.

אבניך ויסדתיך בספירים׃

որ է. Ասպանախ ոխլանիխ պաչէէրիմ. այսինքն է. « Արկից քեզ հիմունս շափիղայ »։

ושמתי כדכד שמשתיך׃

որ է. Ո-էչամի փոփօա պիմդրախ. այսինքն է. Եւ զպատանիեաց պարսպաց քոց (արարից) կարկեհանեայ։ Ըստ բնագրի մեկնութեանս. « Եւ արկից զմահարձանս քո յասպիս »։ Եւ ըստ բնագրի Աստուածաշունչ մատեանին. « Եւ կանգնեցից զշտարակս քո յասպիս »։

եթէ եղիցի որ մնացեալ իցէ մարդն՝ իբրև զոսկին Ովփիրայ, իբրև զոսկին ընդ հուր անցեալ պատուական. զի որպէս անդ զչքնաղն ինչ առակէ ոսկւոյ, նոյնպէս և աստ զպատուական ինչ՝ ականց պատուականաց։ Չ[ի]նչ օգուտ եր այնպիսի ակամբք շինել զքաղաքս. զի ոչ՝ ի պարսպին շինած՝ այնպիսի ականք ինչ պիտոյ էին, և ոչ առ ընչից մեծութիւն այնչափ կարի յարգոյք. զի թէ վասն աշխարհիս կենաց, յորժամ նոքա՝ ի հարուածս ինչ մատնէին և միսիթարութեան չլինէին ինչ արժանի, և զայն ամենայն այլք առնուին. ապա թէ՝ ի յարութիւնն ինչ առնուցուն, և աղքատք վայելեսցեն այնպիսի բարութեամբք. սակայն և անդ ոչ եթէ այնպիսի մարմնաւոր իրաց պէտք են։ Եւ զ[ի]նչ օգուտ՝ ի յարութենէ անտի իցէ, եթէ դարձեալ յայսպիսի կեանս յառնելոց իցեմք. զի անկելոցն պարտ է եթէ յայլ ինչ ազնուութիւնս կանգնեալ նորոգեսցին։

« Եւ զամենայն որդիս քո խրատեալս Աստուծոյ »։ Տեսանե՞ս, զի զառաքինութիւնս իմն յայտ առնէ։ « Եւ՝ ի բազում խաղաղութեան մանկունք քո »։ Եւ զ[ի]նչ իցէ խրատեալքն Աստուծոյ, և՝ ի բազում խաղաղութեան մանկունք քո. այսինքն՝ յարդարեալք լեզուին կարգալոյք։ « Եւ արդարութեամբ շինեսջիր »։ Ակիւղաս ասէ. Հաստատեսջիր. Սիմաքոս և Թէոդիտոնն, թէ Պատրաստեսջիր։

« Ի բաց լեր յանիրաւէ անտի, և մի երկիցես, և դողութիւն առ քեզ մի մերձեսցի »։ Եւ արդ, աղէ ասա. ընդ[ի]ր իսկ երկնչիցիս. զի չիք ինչ այնպիսի վշտագին յորժամ՝ ի չարիս ոք կեցցէ, ոչ զեղև և ոչ տկարադոյն և ոչ դիւրածախ. զի այնպիսի կեանք իբրև ըզփոշի հողմոյ են և իբրև զխոտ և իբրև զեղեգն։ Եւ եթէ կամիս՝ քննեսցուք իսկ զկրօն. զի զչարէն թէպետ և ամբաստան ոք չիցէ, հանապազ չահի և յերկիւղ և՝ ի կասկածանս է. իսկ արդարոյն թէպետ և բազում սուտ վկայք՝ ի վերայ կուտիցին, աներկիւղ և անկասկած է, և ոչ ոք կարէ՝ ի նմա ինչ գամպիտ լինել։ Եւ թէպետ և զոր ինչ՝ ի վերայ գայցէ, և ուշնիցին և տանջիցին, սակայն ոչ ինչ վնաս կարիցեն նմա առնել. և եթէ սպանանիցեն ևս, սակայն՝ ի վախ-

Ձանկին իւրոյ ունի զվարս առաքինիս, յորժամ ոչ իւրև զինասակար ոք մեռանիցի: Այլ սակայն, ասեն, սպանանեն. և եթէ այդպէս չմեռանիցի, միթէ այլ ազգ ինչ չմեռանիցի՞. բայց ոչ իսկ մեռանի այնպիսին. կամ զի՞ իսկ գիտիցես, զի բազում անգամ մահ՝ բազում լաւ է քան զկեանս, և բազմաց կեանք ողորմելիք՝ լաւ են քան զմահս այլոց: Որպէս զի ամենայն ուրեք ոչ ինչ պարտ է խոտել զկեանն, և մի յամենայն վայրի փախչել՝ի վախճանեն, այլ՝ի չար վախճանն. զի ոչ այն և ոչ միւսն առանձինն, ոչ յոգիսն և ոչ յարուեստիսն պիտանացու ինչ են, այլ՝ի կարգայն ընտրին՝ թէ որպիսի՛ ինչ են: Զինչ ինչ քան զմահն Յովհաննու կայր երանելի, և կամ զինչ թերուառական քան զՀերովդէս, զի վախճանեաւն զկենդանին երկեցուցանէր. Լուաւ, ասէ, Հերովդէս զլուսն Յիսուսի. Յովհաննէս, ասէ, ուրեմն յարեաւ՝ի մեռելոց՝ զոր էսն սպանի: Եւ արդ, զայն քննեսցուք, կեա՞ն լաւ իցէ, եթէ բարւոքն կեալ. յայտ իսկ է թէ բարւոքն կեալ: Գիտեր Յիսուս զայնոսիկ՝ որք՝ի չարիսն կեցեն, և զչերեցոյն իբրև զերեցոյ ձառէ. Լաւ էր, ասէ, նմա՝ եթէ ընաւ իսկ չէր ծնեալ մարդն այն. զի ցուցցէ եթէ չլինելն՝ քան զչարաչարն լինել լաւագոյն է. և այլուր, եթէ երանի՛ իցէ մեռելոց՝ որ վաղուց իսկ իցեն մեռեալ քան զկենդանեացն. որպէս զի ոչ վայրապար ինչ կեալն լաւ իցէ, այլ բարւոքն կեալ. զի յորժամ այսպիսի ինչ չլինիցի՝ ո՛չ ապաքէն ամենայն մահ լաւ է քան զկեանս: Եւ արդ, դուք իսկ ձերոց անձանցդ զո՛ր ըղձանայիք՝ի կեանս ձեր. Թուի թէ զմահն Յովհաննու. զի մինն բիւրուց բիւր ամբաստանս ունէր, և յառաջ քան զայլն ամենայն՝ զևրոց մտացն խիղճ, քանզի՝ի ցաւս հարեալ դողայր և սարսէր, և աստ՝ի հարուածս էր և անդ պատժոց և տանջանաց ակն ունէր. և միւսն հանգուցեալ դադարեալ՝ի հոգոց իբրև զմարտիկ մի նահատակ՝ որ պսակիցի յաղթութեամբ, և ամենայն ուրեք հնչեալ քարոզիցի առաքինութիւնն, եդեալ թագ՝ի գլուխ՝ կատարեաց զվաստակն. զարմանալի եղև քաջութեամբքն, յարգեալ, գովեալ, ոչ միայն՝ի համաերկրեայ ազգականաց, այլ՝ի վերին զօրութեանցն՝ որք

լինէին տեսողք յաղթութեան նահատակին, զի հրեշտակաց՝ նոցին անուանակիցն, զի և նա հրեշտակ կոչէր, քանզի զհրեշտակաց համարձակութիւնն եցոյց յանձին: Եւ արդ, ընդ ո՞ զարմանայցես, զո՞ գովեսցես. զներո՞ղն եթէ զպատուոս. ո՞չ ապաքէն միոյն յարքունական սպասս էր, և միւս՝ի բանդի. և միոյն սպանանէր, և միւս մեռանէր: Արդ իւրաքանչիւր՝ի ձէնջ իբրև զո՞ ըղձանայիք. իբրև զներո՞ղն՝ որ սպան, եթէ իբրև զպատուոս՝ որ սպանաւն: Եւ զո՞ պիտոյ իցէ զհինս պատմութիւնս յիշել. իբրև զբռնաւորն՝ որք կոտորիչն՝ կամիք լինել, թէ իբրև զվկայն՝ որք՝ի նոցանէն կոտորեցան: Եւ արդ զո՞ պիտոյ իցէ հարցանել, որ արդիւնքն իսկ ընդ մեր տան պատասխանի. զի զնոսա բազում անգամ անիծանէք իսկ և եղկելիս համարիք, և սոցաամ յամէ գայք խնդութեամբ առնել յիշատակս: Եւ արդ, ոչ միայն զկենացն լինիցիմք կղկղութ, այլ զբարիսքն կենաց, եթէ մեռանել հասանիցէ և եթէ կեալ: Ոչ ասեմ, ասէ, եթէ զնասիցիս ինչ, այլ զի և երկնչիցիս իսկ ոչ. ըստ այմմ, եթէ Արդարն իբրև առեւծ յանձնապաստան է: Ոչ այնպէս ինչ կարէ առանց նենգութեան առնել զոգիսն, որպէս յորժամ միտքն սուրբ իցեն՝ի խղճէ. և ոչ այնպէս ինչ նենգէ զոգիսն, որպէս մեղացն խորհուրդք և մտացն խիղճ: Ո՞չ տեսանես, որպիսի՛ ոք մեծ և անուանի և հանճարեղ էր Դաւիթ, այլ յորժամ պատուհասեցաւն և յանդիմանեցաւ՝ի շինական և յաղքատ առնէն, որպիսի՛ խոնարհութիւն կալաւ յանձին. Մեղայ, ասէ, Տեառն. վասն այնորիկ իսկ և վաղվաղակի Թողան նմա մեղքն:

«Չի՛ ահաւադիկ եկաք՝ի քեզ վասն իմ պանդխտեցին, և զքեզ ապաստան արասցեն»: Չի տայ լինել քեզ նախանձելի վասն աստուածպաշտութեանն, զի բազումք ցանկանայցեն քեզ վասն բարւոք կարգացն: Եւ ոչ այն սակաւ ինչ պարգեւք իցեն, և յետ այնպիսի գերութեանն նախանձելի լինէր: «Եւ զքեզ ապաստան արասցեն վասն իմ». զի ծանիցեն եթէ ոչ վասն իւրոյ ինչ արդարութեան, այլ վասն Աստուծոյ մարգասիրութեանն: «Ահաւասիկ ես հաստատեմ զձեզ ոչ եթէ որպէս դարբին մի փքովք զկայծակունս, և

յառաջ բերէ անօթ ’ի գործ »։ Դարձեալ ’ի հաւատարիմ լինն միտս ձգէ զնոսա. զի որպէս դարբինն զպականեալ անօթն առնիցէ նոր՝ փքովքն և կայծակամքք, նոյնպէս լինիցի, ասէ, քաղաքդ ձեր նորաշէն նորակերտ. իբրև զանօթ լինչ նոր, որ այն լինչ ելեալ իցէ ’ի բովոյ և փայլիցէ, նոյնպէս և քաղաքն պայծառացեալ ճաղկիցէ ’ի դարձին։

« Ա.յլ ես Հաստատեցի զձեզ ոչ ’ի կորուստ. զանմեղայն անօթ մեքենաւոր ’ի քեզ ոչ յաջողեցից »։ Իսկ այլքն ասեն, եթէ Ա.հաւասիկ ես Հաստատեցից զքեզ ոչ ’ի կորուստ, ապականել զամենայն անօթ հնարայկան։ Վասն այնորիկ իսկ արարի զքեզ, ոչ զի կորուսից։ Եւ ուստի՞ յայտ է. զի թէ ’ի կորուստ լինչ Հաստատեցի, քնաւ և առնէի ոչ զքեզ. և զի այս այսպէս է, վկայեսցէ այն՝ զոր Ա.մենարուեստն ասէ, եթէ Ո՛չ զուարճանայ Տէր ընդ կորուստ կենդանեաց. Հաստատեաց Ա.ստուած ’ի լինել զամենայն, և ’ի փրկութիւն են ծնունդք աշխարհի։

« Եւ ամենայն բարբառ որ յարիցէ ’ի վերայ քո՝ ’ի դատաստանս պատրաստեացես զնոսա. և պատժաւորքն քո եղիցին ’ի նմա »։ Բայց այլքն՝ Ա.մենեքեան կորիւղեն, ասեն։ « Չի գոյ ժառանգութիւն պաշտօնեիցս Տեառն. և գուք եղիջիք ինձ արդարք, ասէ Տէր »։ Ա.յն իսկ է, Չի եթէ եւթն անգամ գլորիցի արդարն, սակայն յարիցէ։ « Եւ գոյ ժառանգութիւն պաշտօնեիցս Տեառն »։ Ցոյն բարւոյ՝ որ լինելոց էր նոցա յետ գերութեանն, և բարութիւնքն Հաստատունք։

ԳԼՈՒԽ ԾԵ

« Ո՛ր ծարաւիդ էք՝ երթայք ’ի ջուրն, և որք ոչդ ունիք արծաթ՝ երթայք գնեցէք և արբջիք առանց արծաթոյ »։ Չլուութիւնն որ հանդերձեալն էր լինել՝ ակնարկէ։ Գնեցէք, ասէ. և զլռէդ գնիցեն. արծաթոյ. այնպէս համարձակութեամբ առնուցուք ձրի, որպէս որք արծաթովն գնիցեն։ Եւ իբրև զջուր զիւրագին՝ այնպէս լինիցին ձեզ ամենայն բարութիւնքն. զի յամենայն կողմանց բղխեսցէ ձեզ երկիրն զբաղցրութիւն։ Եւ զինչ ևս զայլոց բարութեանցն ասիցեմ, ուր և գինի ևս և միս ոչ գնիցի արծաթով։ « Եւ վաստակքն ձեր չէին ցյագ »։ Զառաջինն վաստակոցն ասէ Թէ Ջանայիք, տառապէիք, ժողովէիք, ’ի վերայ կցրէիք, և ևս չար նուաղութիւնն լինէր. զի այնպէս լիմն որ անօրէնութեամբ լինչ ժողովիցին լինչք, թէպէտ և շատ իցեն՝ սակաւք լինին. նոյնպէս և գուք զառաջինն տառապէիք և ոչ լինչ շահէիք, բայց այժմ մեծասքիք և առաւել վայելեսքիք։

« Լուարժւք ինձ, և կերիջիք զբարութիւն, և վայելեսցեն ’ի բարութեան ոգիք ձեր »։ Տեսանես, զիարդ վարձուք գնէ Ա.ստուած զհնազանդութիւնն։ « Ընկերն գիք լսելեօք ձերովք, զհետ երթայք Հանապարհայ իմոյ, լուարժւք ինձ, և կեցցեն ’ի բարութեան ոգիք ձեր »։ Ո՛չ որպէս մեք ասեմք եթէ պարտիս հլպատակ լինել ինձ ամենայն բանի զոր ասիցեմ քեզ. այլ նա խոստանայ տալ փոխանակ հպատակութեանն. « Կեցցեն, ասէ, ’ի բարութեան ոգիք ձեր »։ Եւ եթէ զինչ իցեն ոգւոյն կեանք, գիտէք իսկ ամենեքին. զի ոչ զմարմնոյն, այլ զհոգւոյն կենաց ասէ։ « Եւ եդից ընդ ձեզ ուխտ յաւիտենից զսրբութիւնսն Դաւթի հաւատարիմս »։ Չի որպէս նորա աւետիքն հաւատարիմ եղեն, նոյնպէս և ձերն հաստատուն լինիցի։ Եւ զինչ իցեն սրբութիւնքն Դաւթի. ուղիղ կարգն, բարեկեցութիւնն, յաջողութիւնն. իսկ այլքն ասեն՝ զօղորմութիւնսն. գարձեալ այն են սրբութիւնքն՝ զի իշխանութիւնն հաստատուն եկաց ’ի քուն։

« Ա.հաւասիկ ’ի վկայութիւն հեթանոսաց ետուս զնա, իշխան և հեթանոսաց հրամանատար »։ Վկայութիւն Հրէից՝ ’ի հեթանոսս. ըստ այնմ, եթէ Յորժամ հեթանոսք՝ որ զօրէնս լինչ ոչ ունիցին, և բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ զօրէնսն ոչ ունին՝ անձամբ անձանց իսկ օրէնք են։ « Հեթանոսք որք ոչ գիտէին՝ կարդասցեն առ քեզ. և ժողովուրդք որք ոչ ճանաչէին զքեզ՝ ապաստան արասցեն զքեզ »։ Բազում հետութիւնն յանդիմանի Հրէից, յորժամ որք չգիտիցէնն՝ պատուիցեն։ « Եւ զքեզ ապաստան արաս-

ցեն »։ Տեսանէ՛ս զԱստուծոյ բարերարութիւնն. զի թէպէտ և այնչափ ապախտաւորք էին, սակայն ևս յարգէր և պգուէր, եթէ զքեզ ապաստան արասցեն իբրև զվերկիչ և բարերար. ըստ այնմ, եթէ Սփիցեն՝ եկայք ելցուք ՚ի լեառն Տեառն և ՚ի տունն Աստուծոյ Յակովբայ։ Եւ արդարև վերկիչ և բարերար եղև Աստուած ժողովրդեամբն՝ ամենայն ազգաց. ոչ ՚ի յայտնեաց և ՚ի յերևելեաց պատերազմաց, այլ և յաներևութից, զի ետ ձանաչել նոքօք բազմաց զԱստուած։ Եւ մի՛ յանձանց լինչ քաջութիւնս ապաստան լինիցին, և իբրեանց համարեսցին զուղղութիւնն, ասէ. « Վասն Տեառն Աստուծոյ Իսրայելի, զի փառաւոր առ բար զքեզ »։

« Խնդրեցէ՛ք զՏէր, և յորժամ գտանիցէք՝ կարդասջիք առ նա »։ Ոչ զի դոյզն լինչ կարդայցէք, այլ զի յամենայն մտաց և յամենայն սրտից խնդրիցէք զՏէր։ Ո՞չ արդեւք ձանաչիցեմք զնա. այո՛, ասէ, ձանաչէք. այլ առաւել յայնժամ ձանաչէք յորժամ ուղիղ կարգս լինչ և զիաման թիւն ոգւոց ցուցանիցէք։ « Եւ իբրև մերձեսցի առ ձեզ, թողեցէ ամպարիշան զձանապարհս իւր »։ Յորժամ զբարիսն պարգևեսցէ ձեզ, գնեցա յայնժամ դադարեցէք ՚ի չարեաց. իսկ բազմաց չարեաց պատճառք՝ պարգևք Աստուծոյ լինին։ « Եւ անօրէնն զկորհուրդս իւր »։ Ոչ միայն զգործս, այլ և զկորհուրդս՝ որ արմատ և աղբեւր են գործոցն։ Ջոգիան, ասէ, սրբեցէ՛ք, և մի՛ միայն զմարմինս. զկեան և զնչխանականն. զի յորժամ իշխանն որ ՚ի ձեզ իցէ՝ առողջ իցէ, ապա և որ ընդ իշխանաւն իցեն, խորհուրդքն՝ ՚ի վայելս աստուածպաշտութեան վայելեսցեն. ըստ այնմ, եթէ Ըստ իշխանի քաղաքին՝ և պաշտօնեայքն նորա. և այս ոչ եթէ առ քաղաքս միայն, այլ և առ մեր խորհուրդս։

« Եւ դարձցի առ Տէր, և գտցէ ողորմութիւն »։ Եւ չէ մարթ այլազգ դառնալ, եթէ ոչ նախ ՚ի չարեաց հրաժարիցէ. և ոչ ողորմութիւն գտանէ, եթէ ոչ զաղտն ՚ի մտաց սրբիցէ։ « Եւ բազմապատիկ թողցէ զմեղս ձեր »։ Զի յորժամ դառնայցէք և սրբիցէք ըստ կամացն նորա[1]։ « Զի ոչ են խորհուրդք իմ իբրև

1 Ա. յոպէս յօրինակին։

զխորհուրդս ձեր, և ոչ ձանապարհք իմ իբրև զձանապարհս ձեր, ասէ Տէր »։ Մինչեւ իբրև զմարդիկ օրհասական լիցեմ, և կամ իբրև զայր ոք աղքատ ՚ի մարդասիրութենէ։ « Այլ որպէս հեռի են երկինք յերկրէ »։ Զի՞նչ խօսիս. այնչափ հեռի միայն լիցեն. այլ քանզի դուք այնչափ միայն գիտէք զչափ, վասն այնորիկ այնմ ևեթ նմանեցուցանեմ զմարդասիրութիւնս իմ, որ առաւել բազմապատիկ անչափ է քան զայն. զի որչափ երկինք յերկրէ հեռի են, այնչափ և ևս բազմապատիկ առաւել՝ բարութիւնն Աստուծոյ ՚ի մարդկան չարութենէ։

« Զի զոր օրինակ անձրև կամ ձիւն ինչանէ յերկնից, և ոչ դառնայցէ, մինչեւ արբուցանիցէ զերկիրը, ծնուսցէ և բխեցուսցէ, և տացէ սերմն սերմանողի և հաց ՚ի կերակուր, այնպէս եղիցի բանն՝ որ ելանէ ՚ի բերանոյ իմմէ. մի՛ դարձցի, մինչեւ կատարեսցէ զամենայն զոր և կամիցիմ»։ Զանղեղը հրամանացն յայտ առնէ. զի որպէս անձրև կամ ձիւն ոչ դառնայցեն անդրէն յերկինս, այլ կատարեն զգործն յոր առաքեցան, նոյնպէս և հրամանքն իմ, ասէ, վճարեսցեն զամենայն ինչ զոր և կամիցիմ։ Եւ զի մի՛ յառաջագոյն ասելոյ և վաղվաղակի չկատարելոյ՝ ՚ի ծուլութիւնս ինչ անկանիմ, ասէ. Ոչ դարձցի։ Եւ զի մի՛ սուտ ինչ համարիցիմք զսպառնալիսն կամ զաւետիսն, և ընդհասեսցիմք, ասէ. Ոչ են ձանապարհք իմ իբրև զձանապարհս ձեր։

« Եւ դիւրեցիս զձանապարհս իմ և վճրամանս »։ Իսկ այլքն ասեն, եթէ Չհրամանս իմ պահիցիք։ « Զի ուրախութեամբ ելիցիք, և ցնծութեամբ ուսանիցիք. զի լերինք և բարձունք խնդասցեն ընդունել զձեզ ուրախութեամբ, և ամենայն ծառք անտառի ծափս հարցեն յոտս իւրեանց, և փոխանակ դժնկին՝ նոճ ելցէ »։ Սիմաքոս՝ փոխանակ դժնկին՝ եղէմ, ասէ։ Յառաւելութենէն յետ դարձին ակնարկէ այսու ամենայնիւ, և կամ զօրինացն խստութենէն և չնորհաց զղիւրութենէն։ « Եւ եղիցի Տեառն յանուն և ՚ի նշան յաւիտենից, և մի՛ պակասեսցի »։ Ասէնքն, զոր խոստացայն՝ լսցի և կատարեսցի. և եթէ գտանի ինչ՝ որ ոչ եղև, վասն զի նոքա յետ դարձին չեղեն արժանի պարգևաց։

ԳԼՈՒԽ ԾԶ

«Այսպէս ասէ Տէր. զգոյշ կացէք իրաւանց և գործեցէք զարդարութիւն, զի մերձ է փրկութիւն իմ, և ողորմութիւն իմ յայտնել»։ Զոր օրինակ յորժամ կամիցի զնոսա ապրեցուցանել՝ ի պատժոց, խրատէ զի բարւոք կենայց և ուղիղ կարգայ փոյթ յանձին ունիցին, որով կարիցեն մերժել զպատիժսն, նոյնպէս և յորժամ՝ ի բարիս ինչ կամիցի ածել, խրատէ զի մի ծուլանայցեն և մերժեսցեն զբարիսն, և կամ թէ՝ ի դիւրութեան զերախտիսն մոռանայցեն. ըստ այնմ, եթէ Գիրացաւ յուրացաւ ստուարացաւ։ Պատրաստ է Աստուած, ասէ, առնել ձեզ բարի. մի ինչ անարժանս անձամբ առնիցէք զանձինս. թէպէտ և՝ ի մարդասիրութենէն և՝ ի խնամոյն նորա լինի ամենայն ինչ, այլ ոչ կամի եթէ զմարդասիրութիւնն առնիցէք պատճառս ծուլութեանն։ «Եւ ողորմութիւն իմ յայտնել»։ Եւ ոչ ասաց եթէ լինել. զի յուցցէ եթէ հանապազ է և պատրաստ կայ, և դուք էք որ ծածկէք յաձախութեամբ մեղաց ձերոց։

«Երանի՛ առն որ առնիցէ զայս, և մարդոյ որ պաշտպան լինի սոցա, և պահիցէ զշաբաթս իմ և ոչ պղծիցէ, և պահիցէ զձեռս իւր՝ ի գործելոյ զանիրաւութիւն»։ Նախ վասն առաքինութեանն երանեաւ է մարդն, զի ինքն իսկ առանձինն անձամբ տայ ըզվարձս՝ առաքինութիւնն. ապա և վասն նորին իսկ պահիցէ զշաբաթս չպղծել. զի սկիզբն և առաքինական ինչ կարգայ ըստ օրինացն՝ շաբաթուցն պահպանութիւնք էին։ Իսկ եթէ կամիցիս քննել եթէ զինչ իցէ շաբաթ, զօրինացն իսկ պատուէրս՝ որ վասն աւուրն են՝ ի մէջ բերցուք. զի ոչ վայրապար ինչ այնպիսի պատուէրս ետ Աստուած վասն շաբաթու։ Ոչ ինչ զբաղնուն երբեք մարմնաւոր իրօք՝ ի շաբաթու, ոչ կերակուրս ինչ կալմէն, և ոչ այլ ինչ գործ գործեն՝ ի շաբաթու, բայց որ կարի ինչ կարևորքն իցեն,

և չմարթիցի առանց այնը վճարել՝ այն միայն համարձակ է, այլ ամենայն ինչ փակեալ և արգելեալ է։ Զի թէ զամենայն աւուրս այնպէս խափանէին՝ ի բերաց, և պարապորդ լինել հոգևոր իրաց, չէր ինչ ընդհատ՝ ի հրեշտակաց մարդկան բնութիւնս. զի չէք կալ՝ ի վաճառի, և ոչ զբինս ինչ ժժգնել, ոչ՝ ի կապելանոցս և ոչ՝ ի հանութս. չէք դարման մարմնոյ. այլ այնպէս կայ Հրեայն ձեռակապ դեգերեալ տուայտեալ. ամենայն պէտք խափանեալ, ամենայն գործք դատարկացեալք, չարիք լռեալ, մեղք դադարեալ. ոչ վարկ ոք, ոչ հնձէ. բայց միայն զի թլփատեն, և եթէ անասուն՝ ի ջրհոր անկանիցի՝ հանեն։

«Եւ պահեսցէ զձեռս իւր՝ մի ինչ առնել անօրէնութիւն»։ Յեւթն եւթն աւուր յիշատակ առաքինութեանց, լուր աստուածեղէն պատգամացն. փոյթ յանձին ունել կենացն յաւիտենից. թէպէտ և՝ ի հարկէ ինչ իրքն լինիցին, սակայն կապեցին զձեռս նոցա օրէնքն, զի մի՛ կամով և մի՛ ակամայ մեղանչեցեն. և եթէ հանապազ այնպէս դադարէին՝ ի բերաց, հրեշտակաց վարս ցուցանէին յանձինս, և չէին գտեալ պարտապան արեան մարգարէից, արդարոցն կոտորուածոց, և ոչ անհնարին յանդգնութեանն՝ զի իշխեցին մտաբերել՝ արկանել ձեռս յօծեալն Աստուծոյ։ Ցեսանէս, ուրեմն զի՛ չէ՛ շաբաթուցն գործելն. քանզի գիտեր Աստուած եթէ չդադարեն երբեք՝ ի չարեաց, վասն այնորիկ պատուիրեաց պահել զշաբաթս, զի գոնեա՝ ի միում աւուր յեւթանցն՝ դադարեսցեն՝ ի չարեաց։

«Պահեսցէ զձեռս իւր առնել զանօրէնութիւն»։ Բարւոք ասէ՝ պահեսցէ. զի ոչ այնչափ փշոց և խոչոց հարուածք կարիցեն զձեռս ապականել, որպէս մեղացն խայթոցք՝ որ հարկանիցեն և առնիցեն անզօր՝ ի զօրութենէ. քանզի մեծ իսկ է զօրութիւն ձեռաց յաղթել մատուցանել և յողորմութիւնն առնել. նոքա իսկ են խոցոտիչք սատանայի, յորժամ սրբութեամբ առ Աստուած ամբառնայցեն։ Եւ եթէ կամիցիս՝ ի միտ առնուլ զզօրութիւն ձեռացն, տեսջիր, զի արդ արք և կանայք զձեռս քահանայից համբուրեն. ընդէր ոչ զբերս կամ զայլ ինչ յանդամոցն.

այլ զի նոցա հաւատացան մեծամեծք՝ լինել սպասաւորք անձառ խորհրդոցն, զի նոքօք ծնանի հոգևոր ծնունդն։ Տէս զԱբրաքեալսն, որպիսի՛ ինչ գործ ցուցանէին ձեռօքն անարատիւքն ի՛ մեղաց. Յոր վերայ դնէին, ասէ, ձեռն, ընդունէին զՀոգին Սուրբ։ Նաև այժմ իսկ ի՛ ձեռաց քահանայից սրբոց ո՛րչափ ինչ օգնութիւնք, ո՛րչափ ինչ բարիք պարգևին։

« Մի՛ ասիցէ օտարազգին՝ որ եկեալ յեցեալ իցէ ի Տէր, եթէ մերժէ զիս Տէր ի ժողովրդենէ իւրմէ »։ Տէս, զիարդ նման են բանքս առաքելական բանիցն. Յորժամ հեթանոսք, ասէ, որ զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրինացն գործիցեն, նոքա որ զօրէնսն ոչ ունին, անձամբ անձին իսկ օրէնք են. և դարձեալ, եթէ թլփատութիւն օգնէ՝ եթէ զօրէնսն պահիցես. իսկ յորժամ անթլփատութիւնն զկատարումն օրինացն պահիցէ , ո՞չ ապաքէն անթլփատութիւնն նորա ի թլփատութիւն համարեալ լինի։ Զես ինչ ազգական Աբրահամու, այլ ըստ առաքինութեանցն ունիս ընդ նմա ազգականութիւն, և աւելի քան զբուն որդւոցն ազգականութեան։ Մի՛ կարծիցես եթէ նուազագոյն ինչ Ճոխութիւնս ունիցիս քան զՀեբրայեցւոցն՝ որ պարծէին ի նախնիսն՝ ի Աբրահամ, ի Սահակ և ի Յակովբ։

« Մի՛ ասիցէ նեբքինին եթէ ես եմ փայտ չոր »։ Քանզի բազումք յայլազգեացն յուժարկին ելանել ընդ Հրեայս. զի մի՛ դանդաղեսցին ինչ ի խիստ կրօնից օրինացն, և կամ վասն որոշելոյ օտարութեանն՝ բառնայ զպատճառս ի միջոյ. զի օգուտն առաքինութեանց, ասէ, միայն պէտք են, և ոչ այլ ինչ ծանր օրինացն։

« Զի այսպէս ասէ Տէր ցնեբքինիս՝ այք պահեն զպահպանութիւնս իմ և ընտրիցեն զոր ինչ կամիցիմ»։ Եւ բարւոք ասաց թէ ընտրիցեն զոր ինչ կամիցիմն. զի մի՛ զզօհն և զթլփատութիւնս մարմնոյ միայն բաւական համարեսցին ի փրկութիւն, այլ զի յոգւոցն առաքինութիւնս փութայցեն, և մի՛ ի մարմնաւորական սրբութիւնս ապաստան լինիցին։ « Եւ վերակացու լինիցին ուխտին իմոյ »։ Եւ բարւոք ասաց եթէ վերակացու լինիցին. զի մեծաւ զգուշութեամբ պարտ

էր պատկառ կալ օրինացն՝ որ ըստ հոգւոցն էին, և մի՛ այսր անդր հարկանել յաւելուածովքն։

« Եւ տայ, ասէ, նոցա ի տան իմում և ի պարսպին իմում տեղի անուանի առաւել քան ուստերաց և դստերաց իմոց, և անուն յաւիտենից տայ նոցա »։ Վասն այնորիկ իսկ ցանկալի են գործքն, զի զիւրաքանչիւր մեր անմահ պահեն, և ոչ տան ժամանակաց ածել ի մոռացօնս։ « Եւ անուն յաւիտենից առաւել քան ուստերաց և դստերաց »։ Ցիրաւի իսկ. զի այն ըստ բնութեանն է, և այս ըստ կամաց. զի այս ի հարկէ, և այն ըստ առաքինութեանց։ Եւ լաւ իսկ է առաքինութեանն անուն՝ քան զուստերաց և զդստերաց. այլ զի մի՛ յիշիցիմք ևեթ, այլ զի ի բարիսն յիշիցիմք, զի մի՛ ի սուտ կարծեացն պատիժս տանիցեմք. զի որ ի չարիս ինչ անուանիցի, յետ չարեացն կորըստեան՝ և նա կորստական է։ Այնուանի է Յուդաս ընդ ամենայն երկիրս, այլ ի չար և ի սատակումն իւրոյ գլխոյն. անուանի էր Պաւղոս, այլ ի բարի և յօգուտ յիշելեացն։ Եւ զայս ոչ եթէ վայրապար ինչ ասացի, այլ քանզի տեսանեմ զբազումս՝ զի ապարանս գեղեցիկս շինեն, և գերեզմանս նկարեալ հաստատեն, ոչ վասն այլ իրիք, այլ յորժամ վախճանիցին՝ անուն և յիշատակ շինուածովքն Թողուցուն յերկրի։ Յուրտ և անօգուտ միսիթարութիւն շահին անձանց յայնպիսի հայթայթանաց։ Զինչ օգուտ իցէ մեռելոյ և անզգայի շինուածոցն պաճուճանք, յորժամ ասիցեն եթէ այսր անուան են ապարանքն, այսր անուան է շիրիմդ. և օգուտ ինչ չիք, բայց միայն մեծ. զի իբրև կարձամբտի և անքաւի և ագահի և յափշտակողի անուն բամբասիցի, եթէ զորոց յափշտակեաց և զայրիս մերկացոյց՝ զի գերեզմանս շինեսցէ և շիրիմս կանգնեսցէ. և այն կանգնեալ կայցէ իբրև զարձան մի անօգուտ, ամբաստան չարեացն նորա և յիշատակ ապիրատութեանցն. զի և ոչք ողորմել կամիցեն՝ չողորմիցին, զի ոչ ինչ այլ աւելի գործիցեն, այլ զի անմահական ամբաստանութիւնս Թողուցուն այնու կենդանեաց. քանզի անօգուտ շիրիմ իսկ կանգնեալ Թողուցուս յանուն և ի պարծանս։ Հնարեաց Թողուլ, ո՛վ մարդ, անուն և յիշատակ՝ մարդիկ խօսուն, որ կարիցեն

պատմել միշտ զքո լինչ առաքինութիւնս, եթէ նուաւ կեցաք, նուաւ փրկեցաք ի վշտաց, նուաւ մխիթարեցաք յաղքատութենէ, և ելաք ի կարօտից. այն են յիշատակ և անուն՝ յորժամ խօսունքն և իմաստունք վայելեսցեն, ոչ եթէ քարն և բուսն և հողն, այլ մարդիկն՝ որ գոհանայցեն զԱստուծոյ վասն քո:

«Եւ ցօտարաշունչն՝ ասէ Տէր, որ եկեալ յեգեալ լոցեն ի Տէր. ծառայել նմա և սիրել զանուն Տեառն, լինել նմա ի ծառայս և յաղախնայս, և զամենեսին՝ որք պահիցեն զշաբաթս իմ չպղծել, և վերակացու լինիցին ուխտին իմոյ, տարայց զնոսա ի լեառնն սուրբ, և ուրախ արարից զնոսա ի տուն աղօթից իմոց. ողջակէզք նոցա և պատարագք ընդունելի լինիցին»: Տեսանե՞ս զկարգ պատարագացն, ոչ եթէ զայլ ինչ վարս սրբեն, այլ յորժամ այլ վարքն նախամեծար լինիցին, ապա և նոքա սուրբք և ընդունելիք լինին: «Զի տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց»: Տեսանե՞ս, զի ի վաղուց հետէ եղև գընացից հեթանոսաց մտանել ի տուն Աստուծոյ. անդրս տին ի վաղուց իսկ բացեալ էր դուռնն: Եւ արդ, զիա՞րդ մեզադիր լինիս Քրիստոսի, ով Հրեայդ, յորժամ յԵսայեայ լսիցես զդէպն բողոքեալ: Տե՛ս և զօրէնսն իսկ՝ զի զնոյն փութային հնարել, բայց չէին կարող. զի զամենայն ինչ ընդ զոհիւք կամէին փակել:

«Տուն իմ տուն աղօթից կոչեսցի ամենայն հեթանոսաց, ասէ Տէր, որ ժողովէ զցրուեալսն Իսրայէլի. ժողովեցից ի վերայ նոցա ժողովս. և ամենայն գազանք վայրենիք եկայք, կերայք. ամենայն գազանք անտառի եկայք, տեսէք»: Զի մի դժկամակ ինչ լինիցին Հրեայք ընդ հաղորդելն նոցա հեթանոսաց, զանձինս առ լաւս ունելով, յիշեցուցանէ նոցա զերախտիսն, թէ զձեզ ցրուեցի և ժողովեցից. բնաւ ասէն իսկ, եթէ ժողովեցից ի վերայ նորա միանգամայն զամենայն գազանս վայրենիս, եկայք, կերայք, ամենայն գազանք վայրենի, զայն իմն կայտ առնէ:

Քանզի ընդ օտարագիսն խօսէր, ասէ՝ ամենայն համաբձակութեամբ զվարսն հրէականս. և եթէ վասն կր թ այլ եա նոցա երթալ յերկիրն օտար, և եթէ նա

ղնոցա ընկեց յերեսաց՝ ըստ առաքելական բարբառոյն, որ ասէ. Զի թէ ի բուն ոստն ոչ խնայեաց, միւ երբեք և ի քեզ ոչ խնայիցէ: Այսցի, ասէ, թէ եկայք, կերայք, ամենայն գազանք անտառի: Եւ յիրաւի իսկ գազանս կոչէ զհեթանոսս՝ վասն վայրենական բարուցն, զի այնու իսկ զատին ի միմեանց գազանք և մարդիկ. զի թէ վարուքն ոչ փոխիցէ զբարսն, չէ ինչ ընդհատ ի վայրի գազանաց՝ մարդն: Որպէս և մեք իսկ բազում անգամ զչարս և զմարդատեացս՝ գազանս վայրենիս կոչեմք. և ոչ բաւական համարիմք լոկ գազանս կոչել, այլ զի ամենևին իսկ զբարկ միտսն յայտ առնիցեմք, վերադրեմ՝ գազանս վայրենիս կոչեմք. և դարձեալ յորժամ և զայն ևս չհամարիմք բաւական՝ և դևս ևս անուանեմք, և դևս չարս, զբժընդակս: Ոչ զի մարմին ունի մարդ՝ այն ինչ բաւական իցէ զչափ և զպայման մարդկութեան յայտ առնել, այլ նախ պարտ է յոգւոցն կողմանէ մարդ երևել. քանզի և մարմինն յայն սակս իսկ կազմեալ է, զի սպասաւոր և պաշտօնեայ իցէ ոգւոյն. իսկ յորժամ միտքն ի վայրենեաց բարսն գառնայցեն, զինչ օգուտ իցէ ի քնարէն, յորժամ քնարահարն եղծանիցի: Վայրենացաւ երբեմն Նաբուքոդոնոսոր. մարմինն մարդոյ կայր, բայց կերակուր և քնակութիւն և այլ ևս բարք՝ անասնականք եղեն: Եւ ո՛րչափ իցէ և այժմ՝ որ նմանիցեն բարոյիւք. երանի՛ թէ ընդ վայրագսն ելանեին, և խոտ ճարակէին, և ոչ զմարմինս մարդկան քանդէին, և ոչ զարիւնս ըմպէին, և զարարս և զվաստակս զայլոց յափշտակէին. Թէպետ և գազանայն չիցեն այնպիսի բարոյք՝ եթէ զմիմեանս ուտիցեն:

«Տեսէք, զի կուրացան ամենեքեան, և ոչ գիտացին զՀանձար. ամենեքեան շունք են համրք»: Իսկ այլքն ասեն. Զկարեն հաջել: Եւ արդ, երկայնաձիգ իմն արարեալ զբանն՝ յաճախել բամբասել զչարուքիւնն Հրէից. զպատիժսն ասէ և զպատճառս պատժոցն, և եթէ անհանճարք էին և կուրացան. և ոչ եթէ զմարմնոց ինչ կուրութիւն ասէ, այլ զմտացն: Եւ ամենեքեան, ասէ. և այն իսկ աղէտք են, զի ամենեքեան շունք համրք եղեն՝ որք ոչ կարիցեն հաջել:

Զիք ինչ քան զշունս բարեբարս ՚ի գազանս. ընդ որ և իմաստունք Յունաց զարմանային, և յօրինակ իմաստասիրութեան առնուին զբարս բարեբար անասնոյն, որ զընտանիան անվրէպ ձանաչէ, և յօտարաց փախչըս տական լինի. զի թէ և ՚ի սովոյ մեռանիցի, սակայն զիւր տէրն ոչ թողու. և աւելի այն լաւութիւն է, զի զընտանին և զօտարն որոշել գիտէ: Իսկ նոքա զհակառակն նորին, զի ոչ հաճէին յօտարս. զբարերարութիւնն այսպիսի անասնոյ՝ կորուսին յանձանց. քանզի ոչ կռուէին ընդ դէս միասակարս, և ոչ փախչէին ՚ի միասակարացն, այլ իբրև ՚ի քուն լինն ՚ի խորարձուն՝ եատուն զանձինս յափշտակութիւնն. իբրև թմբիր լինէ առեալ կամ կոնիոն, որ է խնդակոթ, այնպէս համարձակ լինն տալին առիւեցուն մուտ, բերկրեալ ՚ի բրիոն իւրեանց. և եթէ ոչ կարէին՝ չէր լինչ մեղ, այլ զի կարէին, և ոչ կամէին. և քանզի ոչ կամէին, այնու և զգօրութեանն կար բառնային յանձանց: Ոչ կարէ, ասէ, աշխարհ զձեզ ատել. և ոչ թէ չկարէր ատել, այլ չկամէր. և յայտ է եթէ չկարէն ատել՝ չկամել է: Որպէս և մեք բազում անգամ ասեմք, եթէ չկարէ այս անուն ճառայ լաւ լինել. և յայտ առնեմք եթէ չկամի լինել. զի թէ չկարէր, և ոչ մեղ ոք դներ. այսպիսի լինչ, չկարեմ ընդ երկինս թռչել զի թէպետ և կամիցիմ՝ չեմ կարող:

«Ցերազանան յանկողինս, սիրեն զնիրհել»: Ինձ այսպէս թուի թէ և զսուտ մարգարէիցն ասիցէ զայս, և զայնցանէ՝ որք ՚ի ծանրարձուն քուն ատցեն զանձինս: Դարձեալ միւս ևս չարիք. «Զի իբրև զշունս լիրբս են, և ոչ գիտեն զյագուրդ. և են՝ չարք, և ոչ ձանաչեն զհանձար»: Որկորեայք, անզօրք, բամբասողք. ուր զբարութիւնն և զքաջութիւնն պարտ էր ցուցանել՝ զվատութիւն և զծուլութիւն յառաջ բերին. ուր զհեզութիւնն և զհանդարտութիւնն՝ անդ զյանդգնութիւն և զլրբութիւն ցուցին: Եւ տես, զի զառաքինութիւնն ունէին, և ՚ի չարիս դարձուցին զնոյն, զի ոչ ՚ի դէպ վարեցան նովաւ, և ոչ ՚ի պատշաճ ժամանակի: Եւ զոր ասեմն այսպիսի լինչ է. բարւոք է հեզութիւն, այլ ՚ի պատշաճ ժամանակի. բարւոք է համարձակութիւն, այլ զի ՚ի դիմանն չխռովիցէ. զի

չէք լինչ ՚ի սոցանէ թէ առանձինն բարի իցէ և կամ թէ ոչ նոյնպիսի: Ի, ասէ, ամէն՝ որ ածէ զմեղս, և է ամէն՝ որ ածէ զփառս և զընծորհս. և է յանդիմանութիւն՝ որ չէ բարւոք, և է լռութիւն՝ հաւասար իմաստութեան. է որ յաձախէ ՚ի բանս, և այնպիսին ատելի լինի: Տեսանե՞ս, զի ամենայն ուրեք ըստ այնոցիկ է որ պատշաճն գնայցեն, կամ ոչ լինչ պատշաճագոյնս. զի եթէ բնութեամբ այնպիսիք էին, թէ բևս դանդաղէր լինչ ՚ի նոցանէ բնութիւնն. իսկ նա աւանիկ ոչ բնութեամբ լինչ, այլ ըստ ծուլութեանն, և ոչ ՚ի դէպն գնալոյ համրացեալք էին. ամենայն ուրեք իսկ պարտ էր նոցա այնպիսի լինել:

«Զարլք են՝ և ոչ ձանաչէն զհանձար»: Տեսանե՞ս, որպիսի անմտութիւն գործէ չարութիւնն և անհնարին մոլորութիւն. և սա չար քան զյիսոսիկ՝ որ ՚ի ծնէ իսկ մորոքն փոքրագլուխ ծնանիցին. այսինքն զանպայման ասեմ, որ քան զվայտառական ևս խայտառակք էին, թշուառականք, հէքք և եղկելիք և բազում արտասուաց և լալոյ արժանի. զի զնոսա բնութեանն նուաղութիւն փոքր մի ապրեցուցանէ ՚ի բամբասանաց, իսկ սոքա յո՞ վախչիցին, որք անձամբ զանձինս արարին մորոս, և անօպայ էն:

«Ամենեքեան ըստ ձանապարհաց իւրեանց գնային, իւրաքանչիւր ՚ի միասին»: Ասկինքն՝ ըստ անձին գիւրի, ըստ իւրաքանչիւր ցանկութեան: Եւ ուստի՞ էին չար ցանկութիւնքն. ոչ բնութեան լինչ, այլ ՚ի կամացն. ցանկութիւն, ասէ, արդարոյ՝ ամենայն բարուացն է. և ցանկութիւնք, ասէ, արդարոց՝ քաղցրացուցանեն զանձինս: Եւ յայտ է եթէ ոչ ՚ի բնութենէն լինչ է ցանկալն չարեաց, այլ ՚ի չար կամաց. զոր օրինակ, այլ ցանկութիւն առողջացն էն, և այլ ցանկութիւն հիւանդացն. զի կիսոցն արմատքն յախտիցն էն, և կիսոցն յառողջութենէն. նոյնպէս և աստ: Տեսցուք, զինչ ցանկանայցեն արդարն. Որպէս փափաքէ, ասէ, եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Աստուած. ծարաւի է անձն իմ առ քեզ, Աստուած կենդանի. և դարձեալ, եթէ Նուաղեաց սիրտ իմ և մոլորին իմ յուսալ առ Աստուած. և դարձեալ, եթէ ցանկայ և փափագէ անձն իմ ՚ի գաւիթս

Տեառն։ Տեսցուք, որժամ ցանկանայցէ չարն. ամպա-
րըշտութեանն չարեաց՝ զամենայն օր. քանզի ծնկիւն
՚ի նոյն ոգիքն և միաքն. իսկ զարդարոյն ասէ. Բազում
մարդարէք և արդարք ցանկացան տեսանել՝ զոր դուքն
տեսանէք, և ոչ տեսին։ Եւ զի ըստ բնութեանն է
բարեացն ցանկալն, և արտաքոյ բնութեանն՝ չարեացն
տենչանալ, լուր Պաւղոսի՝ որ ասէրն, եթէ Ջինչ ըն-
տրեցից ոչ գիտեմ։ Նեղեալ եմ յերկոցունց. զի ցան-
կացեալ եմ վախճանել և ընդ Քրիստոսի լինել, և աւա-
կարեւոր համարիմ կալ ինձ՚ի մարմնիս վասն ձեր։
Եւ թէթև համարէր զառաժամայն նեղութիւնսն. զի
եթէ բնութեամբ ինչ ընդդէմ նոցին, ապա ոչ թէթև
կոչէր զնեղութիւնսն։ Եւ դու մի՛ զհիւանդաց ինչ ձառս
ընդդէմ բերիցես, քանզի և՚ի քէն իսկ՝ քեզ ցուցա-
նելոց եմ օրինակ. ոչ թէ զՊաւղոսէ ինչ ասիցեմ, այլ
զձէնջ՝ որ անասնոց բարուց ցանկացեալ էք. զբարե-
կեցութիւնն զինչ համարիք. բնութեանն ինչ այն-
պիսի իցէ, եթէ արտաքոյ քան զբնութիւնն. այլ են
ոմանք իբրև բնակ ինն համարին զկրօն. և արդ յայն-
մանէ զբնութիւնն ինչ խոտիցեմք. քաւ լիցի։ Իսկ զա-
րուաքիտութեան անօրէն խառնակութիւնսն՝ որք զօ-
րէնս բնութեանն թէնամանեն, ըստ բնութեանն հա-
մարիցիս, եթէ արտաքոյ քան զբնութիւնն. յայտ իսկ
է եթէ արտաքոյ քան զբնութիւնն է. քանզի և ան-
զաւակութիւն՝ անօրէն խառնակութեանն գուշակ է.
որոց և օրէնսդիրքն և առնեքերին իսկ պատիժք մահու
՚ի վերայ եդին։ Եւ արդ, զի բազմոց ըստ բնութեանն
ինն թուի, միթէ ըստ բնութեանն ինչ իցէ, և ոչ ա-
ռաւել քան զբնութիւնն. և՚ի կանանց ազգի՝ թէնա-
նեցին զօրէնս՝ անօրէն արուագիտութեանն խառ-
նակութեամբ. զի զօտարոտին սիրեցին, և ոչ զընտ-
տանին. ոչ ապաքէն յայտ է՝ զի արտաքոյ քան զբնու-
թիւնն է։ Եւ ընկերին կնոջն ցանկանալ՚ի չնութիւնս,
ոչ ապաքէն արտաքոյ քան զբնութիւնն իցէ. և զիւրն
եթէ բաւական համարել՝ այն ըստ բնութեանն է։
Իսկ ընչից ցանկութիւն չիցէ արտաքոյ քան զբնու-
թիւնն. և արդարև իսկ, թէպէտ և մեք չկամիցիմք
յանձն առնուլ, որպէս և նոցա չթուի արտաքոյ քան
զբնութիւն՝անասնական խառնակութիւնն. և չթուիցի

քեզ՝ յորժամ՚ի ցանկութեանց հեռի իցես, մանա-
ւանդ առողջագոյն իցես. նոյնպէս և ընչից ցան-
կութիւն չթուիցի քեզ արտաքոյ քան զբնութիւնն, զի
ոչ պարապեն յախտէ ընչասէրքն։ Իսկ յորժամ առ-
այնոսիկ՝ որք կարի առողջքն իցեն՝ գայցես, ապա առ-
նուս՚ի միտ՝ եթէ արտաքոյ քան զբնութիւնն է ընչից
ցանկանալ, և յագահութիւնս յոլովել. որպէս և ասէ
իսկ հնարագէտն Աբաքեալ, եթէ ձնշեմ զմարմինս
իմ և հնազանդեցուցանեմ; գուցէ որ այլոց քարոզե-
ցի, և ես գլխովին անպիտան գտանիցիմ։ և Տէրն ա-
սէր յԱւետարանին, եթէ Քանի՞ նեղ և անձուկ է
ճանապարհն՝ որ տանի յաբքայութիւնն։ Եւ յայտ է
եթէ որ ինչ ըստ բնութեանն է՝ չէ ինչ աշխատու-
թեամբ, այլ որ ինչ արտաքոյ քան զբնութիւնն իցէ.
որպիսի ինչ, զի եթէ բռնագատիցէ զք՚ի ձեռն միայն
դնալ՝ այն կարի անհնարին է. իսկ յոտն դնալ՝ ա-
ռանց աշխատութեան է, և՚ի գլուխն դնալ՝ կարի
անհնարին է. և այսպէս իմանամք՝ զի թէ բնու-
թեամբ ինչ էր առաքինութիւնն, չէին ինչ պէտք ջա-
նալոյ. եթէ բնութեամբ էր չառաքինանալն՝ չգոյր
ինչ՚ի միջի մեղադրութիւն։ Իսկ նա աւանիկ Քրիս-
տոս վէհս տայ, և Պաւղոս օրէնսդիրը լինի. ձնշեմ, ա-
սէ, զմարմինս իմ և հնազանդեցուցանեմ։ կամի այ-
լոստ այլ ուրեմն շրջել. իսկ Քրիստոս ասէ. Նեղ և
անձուկ է ճանապարհն. իսկ որ ըստ բնութեանն իցէ,
յայնմ աշխատութիւն ինչ չկայ. զի ինքնին իսկ բնու-
թիւնն կարող է զիւրսն գործանել։ Եւ վասն այնորիկ
ոչ արար Աստուած զամենայն ինչ վաստակովք, զի մի
՚ի բազում աշխատութիւնս արկանիցէ զմեզ. զի է ինչ՝
որ ըստ կամաց լինի, և է ինչ՝ որ ըստ բնութեան. և
այնպէս գիւրաւ ինն լինի՝ որ ինչ ըստ բնութեանն է,
զի բնաւ և զգամք ոչ՝ եթէ զնարդ լինիցի. իսկ առ
դանդաղկոտսն և ախտացեալսն՝ ասէր Քրիստոս. Քա-
նի՞ նեղ և անձուկ է ճանապարհն՝ որ տանի՚ի կեանսն։
Եւ է ժամ՝ զի առողջութիւնն հիւանդութիւն լինի,
յորժամ ցաւն բնակաւոր լինիցի. եթէ չիցէ իսկ
լուեալ՚ի խառնաղանձ բազմութենէն, եթէ երկրորդ
բնութիւն է սովորութիւն. քանզի միշտ՚ի չարիս
և՚ե տեսեալ էին բազումք, վասն այնորիկ ասէ, եթէ

Քանի՛ նեղ և անձուկ է ճանապարհն՝ որ տանի՛ ի կեանս: Իսկ յորժամ առանձինն զառաքինութիւն քարոզիցէ, տեսցուք զինչ ասիցէ. Լուծ իմ քաղցր է, և բեռն իմ փոքրոգի. և գտջիք հանգիստ անձանց ձերոց: Եւ զիա՛րդ յանձուկ ճանապարհին հանգիստ ինչ գտանիցի. զիա՛րդ նեղ իցէ, կամ ո՛րպէս հանգուցիչ: Ա.յլ զոր ասացին նոյն են պատճառք. յորժամ առ ախտացեալն ճառիցէ՝ նեղ և անձուկ կոչէ. և յորժամ առ առողջն՝ քաղցր և թեթև: Իսկ Պաւղոս յողջոյն էր արդեւք թէ՛ ի հիւանդացն, որ ասէր՝ եթէ Երկինչիմ՝ գուցէ որ այլոց քարոզեցի՝ ես ինքն խոտան գտանիցիմ: և դարձեալ, եթէ Ո՛ր առաժամանակ մի թեթև նեղութիւնս է՝ զառաւելութիւն փառացն յաւիտենից գործէ ՛ի մէջ. քանզի ոչ գիտեմք զայսոսիկ՝ որ եբեւիս, այլ զայն՝ որ ոչն երևին: Զի եթէ արտաքին ցաւքն թեթև իցեն, ո՛րչափ և առաւել՝ որ արտաքոյ քան զբնութիւնն իցեն. զի ոչ այնչափ ինչ ոգւոյն ցանկութիւնք լինին զմիտս մեր, որպէս տանջանք և կապանք և հալածանք և եպերանք և սով: Եւ զիա՛րդ իցէ՝ զի այնք թեթևք իցեն, և այս ծանունք. այլ զի զմեզ խրատիցէ՝ լինել՛ի զգուշութեան, և մի յանձնաապատան: Նա և ասելովն իսկ, թէ Երկինչիմ՝ գուցէ որ այլոց քարոզեցի, ես ինքն խոտան գտանիցիմ; զհամարձակութիւն ցուցանէ. զի եթէ երկնչէր, ոչ կարէր ասա՛ կալ ինալ: Այլ զի վստահ էր, վասն այնորիկ ասէր զայնպիսի բանս, զի մի՛ ոք անփոյթ զանձնէ առնիցէ: Եւ վասն զայլս գարձուցանելոյ՝ համարի փրկութեան հասանել. չէ ինչ, ասէ, օգուտ՝ այլոցն քարոզել, եթէ յանձնէ ծոյլ գտանիցիմք. զի եթէ յորժամ ասիցէ՝ Ըստ առաւելութեան յայտնութեանն՝ զի մի հպարտացայց, ըստ խոնարհութեան ասէ, և ոչ ըստ պարծանաց. և այս իսկ առաւել տայր նմա հպարտանալ. այլ թողեալ զմեծամեծան, որովք ՛ի դէպն էր պարծել՝ պարծէր. Տուաւ ինձ, ասէ, խայթ մարմնոյ հրեշտակ սատան. այսինքն՝ խոտորեցուցիչ: Եւ եթէ պարծել ինչ պարտ իցէ՝ տկարութեամբ պարծեցայց, այլ ոչ հպարտացայց: Եւ զիա՛րդ

ոք որովք պարծեսցին ոչ հպարտանայցէ. քանզի ընդ այնպիսի մարդս խօսէր, որք գործոյ ինչ փոյթ յանձին չունէին, և ՛ի հաւատս միայն ապաստանէին, վասն այնորիկ ասէր, եթէ ես այժմ այնպէս ընթանամ, որպէս ոչ եթէ ընդ վայր ինչ. այնպէս ձկտիմ, որպէս ոչ թէ զՀողմն ինչ կոծիցեմ: ոչ ՛ի զուր ինչ, ասէ, և ոչ վայրապար: Եւ արդ, զիա՛րդ ըստ ոչ բնութեանն՝ քան զբնութիւնն յաձախագոյն լինիցի. այլ յորժամ ոչ զգուշանայցեմք. զոր օրինակ ասա՝ զի ըստ բնութեանն առողջութիւնն է, և եթէ ծուլանայցեմք՝ ՛ի պէսպէս անկանիցիմք. սոյնպէս և բարւոյն ցանկութիւն թէպետ և ՛ի բնութեանն իսկ տնկեալ իցէ, այլ այնպէս կամեցաւ Աստուած, զի և կամացն մերոց կարօտանայցէ. ըստ բնութեան ինչ առնել՝ զայն դիւրաւ է առնել, բայց չթողուլ կամացն՝ և այն անմահն լինի է. վասն այնորիկ ոչ տայ մեզ ընդ հարկաւ մնանել: Զի եթէ ըստ բնութեանն էր առաքինութիւնն, ապա ոչ ինչ յորդորէր զմեզ ՛ի նա Աստուած. և քանզի ոչ միայն ըստ բնութեան է, այլ և կամաքն կատարի. վասն այնորիկ իսկ գայ բժիշկ, զի զմարմինն՝ որ եղ արտաքոյ բնութեան՝ անդրէն ՛ի բնութիւն ածցէ, և զոսկրն՝ որ խախտեցաւ լիւրմէ հաստատութենէ՝ անդրէն հաստատեսցէ. զի որ ինչ ըստ բնութեանն իցէ՝ գործով արուեստիւ փորձի. զի թէ չիցէ արուեստն ուրեք ՛ի միջի, որ ըստ բնութեանն էր՝ արտաքոյ բնութեանն լինի. սոյնպէս և ՛ի վարս յորժամ ոչ ըստ Աստուծոյ գնայցես, եղեր արտաքոյ քան զբնութիւնն: Եւ զի ըստ բնութեանն է առաքինութիւնն և կամաքն կատարի, ասէ իսկ, եթէ Զոր ինչ կամիջիք դուք թէ առնիցեն ձեզ մարդիկ՝ արարէք և դուք նոցա: Որ ինչ ըստ բնութեանն է՝ ինքնուսումն լինի է. և դարձեալ, եթէ Սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո: Եւ բազում ժամանակս առանց օրինացս իսկ եթող զմարդիկ: Եւ ուստի՞, ասեն, յայտ իցէ՝ որ ինչ ըստ բնութեանն իցէ. յայնմանէ՝ որ ինչ Քրիստոս ասաց, և որ ինչ յառաջագոյն քան զնոսն էր ասացեալ. ապա և յայլոց իսկ ՛ի բազում իրաց. զոր օրինակ, ըստ բնութեանն զկերակուրն ասեմք՝ որ ունին զբնութիւնս մեր, և ըստ ոչ բնութեան՝ զապականիչսն. և դարձեալ, ըստ բնու-

թեան՝ զզարդ աշխարհիս, որ ունիցի պինդ վճաստատութիւնն, և ըստ ոչ բնութեան՝ զապականիչն. նոյնպէս և ըստ բնութեան զքաջութիւնն ասեմք՝ որ ունի պինդ վկեանս մեր, և ըստ ոչ բնութեան՝ զչարիսն որ ապականիցեն: Եւ եթէ կամիս, ևկ դիցուք ի մտի իբրև թէ տունս կամ քաղաք շինիցեմք. քանզի ոմանք ասեն թէ առ բարբարոսն այլազգ իմն թուի բարին, և առ Ցոյնս այլազգ. զի մեք, ասէ, գիտեմք որ ինչ արժան է գործել, և զոր ինչ ոչ գործել. քանզի յօրինացս և յօրէնսդրացս և յատենից ուսանիմք. և նոքա ուստի՞ կարիցեն ուսանել. ասեմ, թէ զոր ինչ դու յօրինացս և յօրէնսդրացս ուսանիս, նա ընդ՝ի բնական օրինացն գիտէ: Եւ գրեսջիր եթէ շինեսցին իսկ քաղաքք, մին մեղօք և միսն արդարութեամբ. տեսցուք՝որ յամրի և բազմաժամանակեայ լինիցի. և անտի կարեմք գտանել զայն ինչ՝ որ ըստ բնութեանն իցէ, և զայն՝ որ արտաքոյ քան զբնութիւնն: Թէ կամիս՝ և ի մարդիկ իսկ փորձեսցուք զդոյն: Արքեաքն ըստ բնութեա՞նն իցէ, եթէ արտաքոյ քան զբնութիւնն. նա աւանիկ և ցաւքն իսկ՝ որ մտանեն յարբեցութիւնէն՝ յայտ առնեն եթէ ոչ ըստ բնութեանն է, այլ արտաքոյ քան զբնութիւնն:

« Իւրաքանչիւր, ասէ, ըստ ձանապարհայ իւրեանց գնասցեն »: Եւ այս ևս մեծ աղէտք են, յորժամ հիւանդք ըստ կամաց գնայցեն, և ոչ զբժշկին պատուէրս պահիցեն: Եւ տե՛ս զմոահաճութիւնն, զի մեծատունն ըստ հարստութեանն իմն գնայ, և զերիս ի պոռնկութիւն աւերէ ծախէ զժամանակս իւր: Եւ առցուք նախ ի մէջ զամենայն չարեացն պատճառս՝ զարբեցութիւնն, որ թուի բազմաց եթէ դոյզն ինչ իւրք իցեն. որ նախ զմիտսն իսկ եղծանէ, ապա և յագահութիւն տայ մտաբերել. յորժամ ոչ գտանիցին ծախքն, հարկ է եթէ յագահութիւն մտաբերիցէ. իսկ ագահութիւնն կապանք իմն են երկաթիք, զոր օրինակ շղթայիւք զմր անդամ և կապեսցես, ընդ նմին ձգի ամենայն մարմինն՝ յմր կողմ և ձգիցին շղթայքն: Եւ ոչ այսչափ միայն, այլ և ի զօրութենէ և անկանի արբեցողն, և ագահէ և յափշտակէ, և ցասկոտ և նախանձոտ և բարկ և անմիտ լինի:

ԳԼՈՒԽ ԾԷ

Եւ արդ, տե՛ս. « Կորեաւ, ասէ, արդարն »: Զի մի միայն ողջ՝ի մէջ բազում հիւանդաց՝ վաղվաղակի կորնչի: Եւ այն իսկ է նշանակ հիւանդութեան, զի զկարողն՝ որ զկեանս նոցա և զվարս ուղղել կարիցէն՝ ի միջոյ բառնան: « Զի յերեսաց անիրաւութեանն բառնայ արդարն »: Զայն օգուտ արար նմա արդարութիւնն: « Եւ եղիցի ի խաղաղութեան գերեզմանն նորա. բարձաւ ի միջոյ »: Ա՛յսինքն ի չարութենէ չարեացն. և չէն սակաւ չարիք, այլ առաւել զժնդակ աղէտք, յորժամ զձրագն խափուցանիցէն, և զլոյսն ի միջոյ բառնայցէն: « Եւ ի խաղաղութեան գերեզմանն նորա »: Եւ զինչ իցէ. այլ զի նոցա և կեանքն ի խռովութեան են, և սորա և մահն հեշտական է. զի յաւել քան զչարիսն զերծոյց զնա ի չարեացն Աստուած. և որ թուէրն թէ հակառակ ինչ նմա իցէ, նոյն փոխանակ նորին եղև. զի ոչ էհաս տեսանել նմա ոչ զմարտ և ոչ զպատերազմ: Իսկ ոմանք զՅովսիայ արքայէ ասեն զայս, եթէ խնայեաց ի նա Աստուած, զի մի տեսցէ զգերութիւն ժողովրդեանն:

« Բայց դուք ժողովեցարուք այսր »: Ո՛չ ինչ օգուտ եղև ձեզ յամբաստանէն ի միջոյ բառնալոյ. քանզի ես իսկ ինձէն դատելոց եմ զձեզ: « Եկայք այսր »: Եւ յիրաւի իսկ բարւոք կոչէ զաստատութիւն զփախստական՝ զաւակ չնութեան և պոռնկորդիք: Եւ տոյտ զինչ էպերանք իցեն՝ եթէ հարքն այնպիսիք ոք էին. զի և ոչ՝ի հարցն չարիս նայէին, և ոչ՝ի նահատակաց ծնողացն ինչ զանգիտէին. և զնմանդ չիցէ այն պատճառ. զի թէ ոք պոռնկորդին կոչելոյ օգտեսցի ինչ ըմբռստանալ, և անարգանս զգործն համարել, ոչ ինչ կարի վնասեն թշնամանքն, մանաւանդ զի չէ իսկ վնաս: Ապա թէ և զանձն ևս՝ի նոյն նախատինս ձգիցէ, զինչ օգուտ իցէ նմա ըմբռստանալն. յորժամ պոռնկորդի կոչեսցիս՝ ըմբռստանաս. յորժամ դու իսկ պոռնկիցիս, զայն չհամարիս չարիս:

« Յոյր վերայ պերձացարուք, կամ յոյր վերայ բա-
ցէք զբերանս ձեր »: Թուի ինձ եթէ ասա զՀայհոյու-
թիւնն նոցա բամբասէ, որով զԱստուած թշնամա-
նէին: « Եւ արձակեցէք զլեզուս ձեր »: Թուի ինձ
եթէ մեղադիր լինէին Աստուծոյ, եթէ ոչ էին ուղիղ
Ճանապարհք նորա:

« Ո՞չ դուք էք որդիք կորստեան, զսակ անօրէն,
որ անկեալ աղաչէիք զկուռսն »: Եւ զի ցուցցէ եթէ
ուստի իցեն որդիք կորստեան. « Ի նեղբոյ անտառա-
խիտ ծառոց, ասէ, զոհեիք զորդիս ձեր, ՚ի խորաձորս
՚ի մէջ քարանձաւաց »: Դարձեալ բամբասէ եթէ
զընութիւնն իսկ չծաներուք, և զայն ո՞չ գիտիցէք, եթէ
զորդիս զենուլ չէիցէ արտաքոյ քան զընութիւնն: « Եւ
՚ի խորաձորս քարանձաւաց »: Չի և գերեզմանաց
անգամ, ասէ, արժանի չառնէիք. և այն չէր շատ զի
առաջի կռոցն զոհէիք, այլ և ՚ի հեռի տեղիս երթեալ
ընդ անտառախիտ ծառովք զոհէիք: Չի եթէ կռոցն
պաշտօն առանց ներելոյ Թողութեան իցէ, ոչբափ ևս
առաւել ծառոց զոհս մատուցանել. զի կուռքն գէթ
կերպարանս ինչ ունէին, և այնու պատրէին. իսկ
ծառքն առանց կերպարանաց են, զիաւրդ պատրէիք
՚ի նոսա:

« Անդ էր բաժին քո, և անդ վիճակ քո. նոցա
հեղեր դու զընծս քո, և նոցա մատուցեր դու զողջա-
կէզս քո. արդ յայսը ամենայնի վերայ ո՞չ բարկանայ-
ցեմ, ասէ Տէր »: Զքեզ առնեմ դատաւոր՝ զյանցաւորդ.
ընդ մոլորութիւն բնութեանդ և ընդ օրինացդ եղ-
ծանել ո՞չ բարկանայցեմ, ասէ Տէր:

« Ի լերինն բարձու և մեծի՝ անդ է հանպիստ քո.
անդր հաներ զողջակէզս քո. ՚ի թիկունս սեմոյ դրանց
քոց եդիր զյիշատակս քո »: Ոչ միայն ՚ի լերինս և յան-
ապատս ամպարշտեցար, այլ և ՚ի թիկունս դրանց
քոց՝ նշանակս իմն անօրէնս նշանակէիր: « Համարիւր
եթէ յորժամ լինէն ՚ի բաց կայցես, աւելն ինչ շա-
հեսցիս »: Այսինքն՝ զօրագոյնս ինչ լինիցիս. ապա ու-
րեմն յայտ է՝ եթէ կարևոր պէտք էին գերութեան.
դու քեզին եղեր պատճառք չարեացն:

« Լայնեցեր զանկողինս քո »: Զյաձախութիւն չա-
րեացն ասէ: « Սիրեցեր դու զհոմանիս քո »: Եւս չար,

ոչ ՚ի հարկէ եր պոռնկութիւն քո, այլ՚ի զեղև յա-
ճախագոյն կամաց: « Եւ բազմացուցեր զպոռնկութիւն
քո առ նոսա. և յաճախեցեր դու առ հեռաւորս քո.
առաքեցեր դու հրեշտակս արտաքոյ սահմանաց քոց »:
Եւ այսու ամենայնիւ զյաճախութիւն չար ցանկու-
թեանցն բամբասէ: Զսոյն և եզեկիէլ մեղադիր լինի:

« Խոնարհեցար մինչև ՚ի դժոխս, աշխատ եղեր ՚ի
բազում երթևեկս քո ». զոր օրինակ կին մի պոռնիկ
որ ընդ ամենայն աշխարհս սահեալ շրջեսցի խնդրել
զհոմանիս իւր. սակայն և այնպէս ոչ յագեցար: « Եւ
ոչ ասացեր եթէ հանգեայց »: Զօրացեալ իմն զայս
ամենայն գործէիր: « Չի առ ուժի իմն գործէիր զաշ-
խիան, վասն այնորիկ ոչ աղաչեցեր առ իս »: Սկիւզաս
ասէ. Ոչ խնդրեցեր. Սիմաքոս, Ոչ տատամսեցար: Վասն
այնորիկ, ասէ. տեսանե՞ս զի ամենայն ինչ վասն այնո-
րիկ է՝ զի աղաչեցեմք զԱստուած:

Դարձեալ, զիարդ մերժէ ՚ի ներելոյ Թողութեան:
« Յումէ զանգիտեցեր, յումէ զարհուրեցար, զի ստու-
թիւն արարեր ինձ, և ոչ յիշեցեր զիս »: Չի և ոչ
երկիւղ ուստեք կայր ՚ի միջի. քանզի զիմոյ զօրու-
թեան զաւրի գիտէիր, և զնոցա տկարութեան. զի
յայտ լինիցի եթէ ՚ի թշնամանացն եղև քեզ այդ:
« Արդ ես տեսից գքեզ և անփոյթ արարից: Եւ յի-
նէն ինչ ոչ երկեար, և ես պատմեցից զարդարութիւն
իմ»: Եւ աստ զպատիժն արդարութիւն կոչէ, զի
արդար դատաստանաւ ած զպատիժն ՚ի վերայ նոցա:

« Եւ դրօշեալքն ոչ ինչ օգտեսցին քեզ »: Սյս-
ինքն՝ զի ոչ ինչ վերակացու լինիցին քեզ կուռքն՝ յոր
յուսացարն: « Չի զամենեսեան զնոսա հողմք առցեն,
և մրրիկք բաժանեսցեն. իսկ որ յիմն յուսացեալ
իցեն՝ ժառանգեսցեն զերկիր, և ստասցին զլեառն իմ
սուրբ. և ասասցեն, սրբեցէք առաջի նորա զՃանապար-
հս, և ՚ի բաց արարէք զխոչ ՚ի Ճանապարհէ ժողո-
վրդեան իմոյ »: Սկիւզաս՝ Դայթակղութիւն, ասէ.
Սիմաքոս՝ Սեթաքոյիմն [1], ասէ, ՚ի Ճանապարհէ ժո-
ղովրդեան իմոյ:

1 Չկարացաք ստուգաբանել զնշանակութիւն բառիդ, ոչ գտա-
նելով և ՚ի պատառիկս Թարգմանութեանն Սիմաքոսի՝ զայս բնաբան
մարգարէութեան Եսայեայ:

Տէս դարձեալ զզօրութիւնն. քանզի բազում ինչ մեղադիր եղև նոցա, և դարձեալ այլ ինն հակառակ նոցա մտացն ձառէ ի տեղեացն՝ ուր յայտնութիւնքն երևէին, և ի հաւատոն կամի ձգել, եթէ « Ասյսպէս ասէ Տէր բարձրեալն՝ որ ի բարձունս բնակեալ է յաւիտեանս, սուրբն ի սուրբս »: Զզօրութիւնն յայտ արասցէ այնու, զիշխանչնաւորութիւնն. և թէպէտ և մեծ իմն Թուէն բանքն, այլ ըստ զինջանելոյ ընդ մեզ խօսի. քանզի ոչ եթէ ի տեղիս ուրեք փակեալ է Աստուած: Եւ զի վերագոյնն զանտառաց ձառեաց, վասն այնորիկ ասէ, թէ « Բարձրեալն՝ որ ի բարձունս բնակեալ է »: Եւ զի ի տաճարին միայն կարծէին զԱստուած, ասէ. « Սուրբն ի սուրբս հանգուցեալ է »: Տեսանէս, զիարդ յառաջագոյն նկարեր զնորս:

« Տայ երկայնամտութիւն տարակուսելոց, և կեանս այնոցիկ՝ որք մաշեալ են սրտիւք »: Չի թէ այսմ մարթ իցէ լինել, յայտ է եթէ միւսոյն ևս առաւելագոյն մարթ է: Չի թէ զբարս ոգւոցն շրջել կարիցէ, ոչըչափ ևս առաւել զայլ ինչ իրս փոփոխել: « Եւ կեանս այնոցիկ՝ որք մաշեալն իցեն սրտիւք »: Չի որոց յոյսն հատեալ իցէ ի մտաց՝ եթէ չիցէ յոյս կենաց, ածէ վաղվաղակի ի կենդանութիւն:

« Եւ ոչ յաւիտենից վրէժս խնդրեցից ի ձէնջ »: Իսկ այլքն ասեն, եթէ Ոչ յաւիտեան դատեցայց զձեզ: Տեսանէս, զի ոչ երբեք բարկանայ ի սպանանել՝ Աստուած: Եւ թերևս ումանք միսիթարութիւն լինչ առնուցուն այսու վասն գեհենի պատժոցն. այլ ձեզ, ասէ. որ զոմանս նշանակիցէ. և ոչ ամենեցուն առհասարակ չբարկանայցեմ, ասէ, մինչև յաւիտեան: Այսպա և զդէպ իսկ պատձառսն դնէ, եթէ « Հոգի լինէն արձակեցի, և զշունչ զամենայն ես արարի »: Մինէթ օտարոտիք լինչ ոք լցեն, ասէ, զորս տանջեցեմ. իմոյ ձեռինս են գործ:

« Վասն մեղաց առ սակաւ մի տրտմեցուցի զնա. հարի զնա, և դարձուցի զերեսս իմ ի նմանէ. խոժոռեցաւ և գնաց տրտմեալ ի ձանապարհս իւր. և զձանապարհս նորա տեսի, և բժշկեցի զնա, և միսիթարեցի զնա »: Տեսանէս, զի միսիթարել զտրտմեալն և զխրեալն: Զորպիսի՞ մեղաց պահանջեաց զվրէժս: Չինչ խօսիս, թէ « Առ սակաւ մի տրտմեցուցի զնա». զի ահա աւանիկ եւթանասնամեայ ժամանակ է զի պատիժս կրէ: Մի՛ ինչ համարիր եւթանասուն ամ, այլ զայն ի միտ առ, զի սկիզբն գերութեանն միայն էր դժնդակ, և յետոյ այնպէս ի դիւրոյլ էին, զի յորժամ դարձն քարոզեցաւ՝ ոչ կամէին անդրէն յաշխարհն իւրեանց դառնալ. զի այնպէս ի բարիս և ի դիւրութեան էին. զոր և յեզեկիելէ կարէ ոք ուսանել՝ եթէ արջառի ի դիւրութեան էին: Եւ արդ, մի զամենայն ժամանակ գերութեանն՝ ժամանակ պատժոց համարեսցիս. զի գիտէ Աստուած լռելեայն և ի վիշտս միսիթարել: « Եւ ետուս նմա, ասէ, միսիթարութիւն ձշմարիտ, և ոգաւորաց նորա հաստատեցի պտուղ շրթանց »: Ասյսինքն՝ միսիթարութիւն, ուրախութիւն և գոհութիւն: « Խաղաղութիւն ի վերայ խաղաղութեան՝ հեռաւորաց և մերձաւորաց, ասէ Տէր. իսկ անօրէնք ծփեսցին և հանգչել մի կարասցեն »: Ասյսինքն՝ թէ անօրէնք իբրև զծով ալեօք ծփեսցին:

ԳԼՈՒԽ ԾԸ.

«Գոչեա զօրութեամբ և մի խնայեար. բարձրացո իբրև զփող զբարբառ քո »: Չի դժուարինք էին՝ զոր ինչ ասելոցն էր, թէ « Պատմեա ժողովրդեան իմոյ զմեղս նոցա ». վասն այնորիկ խրախոյս տայր՝ թէ մի ինչ զանգիտեր: « Չիս օր ըստ օրէ խնդրեն, և ձանաչել զձանապարհս իմ ցանկանան, իբրև ժողովրդեան՝ որոյ զարդարութիւն գործեալ իցէ, և զիրաւունս Աստուծոյ չիցէ թողեալ »: Մի առաջին մեղք այն իսկ էին, զի մինչ ի տերունական դիպաՀւոլն էին՝ և յայնժամ ևս ընդդէմ դառնային, և իրաւունս ևս պահանջէին վասն իրացն՝ որ վասն նոցա լըքութեան և յանդգնութեան գործեցան: Եւ այն իսկ էր նշանակ մեղաց, զի պղծեալ էին ի կարգս

և ՚ի կրօնս, և զԱստուածոյ տեսչութիւնն բամբասէին, որոց պարտ էր ՚ի Քշուառութենէն լռել: Քանզի մինչ համարձակքն էին՝ չէղեն պիտանացուք.« Արդ է- կեալ ինդրեմին իրաւունս արդարութեան ». այսինքն, զատ եդեալ ընդ իս՝ իրաւունս պահանջէին:

« Եւ մերձենալ առ Աստուած ցանկանան. զի է, ասեն, զի պահեցաք մեք, և դու ոչ տեսեր. խոնարհեցուցաք զանձինս մեր, և դու ոչ գիտացեր »: Զոր ասէն՝ այսպիսի ինչ է. որոց բիւր չարիս գործեալ էր, պահովքն միայն կամէին աղատանալ ՚ի պատժոյն. քանզի և ասէին իսկ ցԱստուած, եթէ ահաւասիկ պահեմք, ընդէր ոչ փրկիցիմք: Եւ արդ, զինչ իցէ. չհամարէր բնաւ արժանի և գիտել ինչ զպահս. այլ սակայն և այնպէս առանց իրաւունս տալոյ չառնէր:

« Ցաւուրս պահոց ձերոց, ասէ, գտանին կամք ձեր, և կոձկեցէք դուք զանաւադն՝ որ ընդ ձեռամբ ձերով է. և արդ զինչ պիտոյ է ինձ այգպիսի խոնարհու- թիւնդ ձեր »: Զի թէ վասն այնորիկ պահիցէ ոք՝ զի ՚ի պարտապանէն վրէժս պահանջիցէ, զինչ օգուտ իցէն նմա պահքն. որպէս ոք զի կապեալ և ՚ի բանդի կայցէ, և առեալ ղշղթայսն՝ զայլ զիւր ընկերսն ըզ- բանդականն կոչկոձիցէ. նոյնպէս և պահքն՝ յորում անաւադք զրկիցին, ամբաստանութիւն են պահո- ղացն: Զի թէ ՚ի պահսն այնպէս անողորմ գտանիցին, ՚ի բաց առաւել առանց պահոցն: « Եթէ գատաս- տանս և ՚ի կռիս պահէք, և կռփէք զանաւադն »: Սիմաքոս ասէ. կոձկեցէք: Տէս զաղգ ազգ պատուի- րանս. զի ոչ ապաքէն պահք և ոչ կռուոյ ինչ է, եթէ ոչ իցեն պտուղք ինչ՝ որ ՚ի նոցանէն բխեսցեն: Զի կէսք ՚ի պատուիրանացն առանձինն են, և կէսքն այլովք իմն իրօք զարգանան. որպէս և յաշխարհական ինչ իրս, զի կէսքն ինքեանք լինին, և կէսքն այլովք իրօք. որպէս ՚ի հողագործութեան՝ սերմն և արօրն և այլն ևս ամենայն. կամ որպէս ՚ի մարտիկս կռիւն և եաղն և կրթութիւնն. նոյնպէս և աստ: Վասն ի՞ր իցեն պահքն. զի զկռիւն մերժիցեն. և ընդէ՞ր առնիցի կռիւ. այլ զի զմիտան յանդգնութեան եռուն:

« Զինչ պիտոյ իցեն ձեզ պահքդ այնպիսւոյ աւուր, զալ բողոքել ձեր առ իս, և ինձ լսել ձեզ. ոչ եթէ

զայս պահս ընտրեցի ես, և ոչ զայդպիսի օր, յորում կարկամիցէ մարդ զպարանոց իւր. այլ լիւծ զամենայն կնձիռն անիրաւութեան »: Եւ արդ, ո՞ր իցեն պահք. ոչ եթէ պահքն, այլ՚ի մեզացն հեռանալ: Եւ տե՛ս, զի ամենայն ուրեք Աստուած զառ՚ի գործոցն պահս ընդունելի համարի, որ ոչ գործելեացն միայն, այլ և ընկերացն առնիցեն չահս: Պահեաց Դանիէլ, և ընկալաւ Աստուած, քանզի վասն այլոց պահեաց. պա- հեաց և Մովսէս վասն այլոց: Եւ յուցանէ ևս զօրի- նակ պահոցն. զի եթէ զայլ պատշաճս պահոցն ոք չառնիցէ, չէ ինչ օգուտ ՚ի պահոյ անտի. քանզի կուսութիւն խոստեցաւ՝ որ չունէր զողորմութիւն. Թէպէտ և ձգամբք իցէ կուսութիւն և ծանր պահք, այլ ոչ եթէ Աստուած զայնպիսի ծանրութիւն խընդրէիցէ. բայց զի թէ և պատուղ ունիցի, յայնժամ հա- ճոյ է Աստուծոյ: Նա և ոմն ասէր, եթէ Պահեմ երբ կիցս՚ի շաբաթուն. և ոչ ինչ օգտեցաւ: Նա և պահքն ոչ վասն այլ իրիք են կարգեալ, այլ զի՚ի մերոց փափ- կութենեանցն ցածնուցուք, և պատրաստացուն առ ողորմութիւնն գտանիցիմք. յորժամ զայն ոք չառնի- ցէ՝ ընդ վայր են վաստակքն:

« Այլ լիւծ, ասէ, զամենայն կնձիռն անիրաւու- թեան »: Եւ յիրաւի կնձիռն կոչէ. քանզի արդարև կնձիռն իմն դժուարալոյծ է, զոր և Իմաստունն, խաղը, կոչէ. Սիմաքոս և Թէոդիտոսիէ՝ Սնօսը, ասեն: Եւ դու մի զընչչեցն միայն համարիցիս. քանզի կան՚ի մեզ և այլ անիրաւութիւնք, զոր բանիւք և արդեամբք կատարեմք: « Եւ քակեա դու զբռնութիւն խարդա- խութեանց վաճառոց քոց, և զամենայն մուրհակք անիրաւութեանց՚ի բաց պատառեսջիր, արձակեսջիր դու զնեղեալս՚ի թողութիւն »: Եւ ոչ միայն՚ի չա- րեացն հրամայէ հեռանալ, այլ և՚ի բարիսն յորդորէ. « Արձակեսջիր, ասէ, զնեղեալս՚ի թողութիւն »: Մի՞ իրաւունս ինչ յուցանիցես առ այնպիսիսն. այս մեծ իմն է քան զառաքինին. զի անդ զանիրաւութիւնն տայ լուծանել, և աստ՚ի վեր ևս քան զիրաւունս լինել: Զի իցէ՞ և յիրաւի իսկ պահանջիցի, բայց թէ չուզ նիցի՝ ուստի՞ հատուցանիցէ: « Եւ զամենայն մուրհակս անիրաւութեան պատառեսջիր »: Իսկ աստ ոչ միայն

հրամայեաց, այլ և պատառել: Զայս և Քրիստոս իսկ արար. զի Թէպէտ և արդար էր մուրհակն որ ըստ մերոց մեղացն էր, սակայն պատառեաց զգատակնիքն, և բևեռեաց ընդ խաչին: Իսկ այն ոչ'ի նոցա ինչ ինաս է, այլ քեզ. այլ զի Թողուցուս զմուրհակն, և ոչ պատառիցես, յորժամ երթիցես անդր՝ ըստ նմին պահանջիցեն:

« Բրդեա դու զհայ քո քաղցելոց »: Եւ ոչ ասէ Թէ տուր, այլ Թէ բրդեա. զի խնամով հրամայէ տալ. որպէս Պաւղոս ասէր, եթէ Ջամբիցեմ զինչս իմ աղքատաց: Ձքո հայ, ասէ, և ոչ զընկերին: « Ձաղքատս անյարկս տանիջիր'ի տուն. եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուսջիր դու զնա »: Եւ առանց պատուիրանաց իսկ չիցէ պարտ առնել: « Ձաղքատս անյարկս տանիջիր'ի տուն քո. և յարենէք զաւակի քո զկին մի արկանիցես »: Ըստ այնմ, եթէ ոք տան իւրում և ընտանեաց խնամ ոչ տանիցի, ուրացեալ է, և չար ևս է քան զանհաւատն: Եւ այն իսկ են պահք առանց բռնութեան, առանց ծանրութեան. Հացն և տուն և հանդերձն՝ տնակից առնեն զանտունն. մխիթարել'ի վշտաց զնեղեալս. քանզի որ հակառակ սմին է՝ կաբի դժնդակ է, անագորոյն և անողորմ լինել՝ ամենեցունց յայտ է: Իսկ Աստուած իմաստութեամբ կարգեաց վշտակից լինել միմեանց, ըստ այնմ, եթէ Ամենայն անասունն՝ զիւր նմանին սիրէ, և մարդ՝ զընկեր իւր: Դու'ի պէսպէս սեղանոյ խորտկօք վայելես, և միւսն'ի սովոյ մեռանիցի. դու կերպաս պատմուճանս զգենուս, և նա մերկ ծանակ շրջիցի: Ընդէր չհրաժայիցէ ակն առնուլ յարենէ. քանզի բազում իրաւունս ունիս նոքա բարիս գտանել'ի կարօղն ազգականէ: Այլ բազումք յանմտաց հաշին մաշին՝ եթէ ընդէր այս անուն մեծ է, և մեք աղքատք. նա'ի դիւրոյ, և մեք'ի վիշտս. ընդէր որպէս զարևս ամենեցուն առհասարակ ետ, զի ոչ աղքատն սակաւ վայելէ և մեծատունն շատ, նոյնպէս և զինչսն ոչ արար հասարակաց՝ Աստուած: Այլ և զինչսն հասարակաց արար Աստուած. քանզի և պատուիրէ իսկ գոյաւորին՝ տալ չքաւորին. զի Թէ չէր հասարակաց արարեալ և ոչ պատուէր ինչ այնպիսի տայր. զի որ ինչ

կարի պիտոյ էր կենաց մերոց՝ և հասարակաց զայն չէր արարեալ, ապականեր և եղծանէր ազգ մարդկան: Եւ եթէ զինչսն նոյնպէս հասարակաց էր արարեալ, ապա և զհնարս իսկ լաւութեանն'ի միջոց բառնայր. այլ վասն այնորիկ ոչ ետ հասարակաց զինչսն, զի մի և մեղքն՝ որ յընչասիրութենէն լինիցի՝ յամենեսեան տարածանիցի և ապականիցէ. զի Թէ և զարև չէր հասարակաց արարեալ, այլ իբրև զինչսն ումեք ումեք, բազումք'ի խաւարի չիջեալ նստէին. վասն այնորիկ ետ մեծութիւն մեծատանց, զի զաղքատութեան զցաւսն մխիթարեսցեն:

« Յայնժամ ծաւալեսցի իբրև զառաւօտ լոյս քո »: Ա.յսինքն, օգնականութիւնն վաղվաղակի հասանիցէ: Եւ զինչ յայտ առնէ ծաւալեցն. զյորդութիւնն և զառաւելութիւնն յայտ առնէ: Տեսանե՞ս զինչ տաս և զինչ առնուս: « Եւ բժշկութիւն քո վաղվաղակի ծագեսցէ »: Ապա ուրեմն'ի մեր ձեռս է վաղվաղակի կամ անագան ծագեցուցանել զփրկութիւնն: Եւ զինչ իցէ բժշկութիւնն. քանզի բազում վէրս ունիմք, վասն այնորիկ ասէ, Թէ « Վաղվաղակի ծագեսցէ բժշկութիւն քո ». առ եղծանել և անցուցանել զմեղսն: « Եւ գնասցէ առաջի քո արդարութիւն քո »: Որպէս առաջի իշխանաց յորժամ սպասաւորն երթայցէ, կարապետք և նուիրակք, և քարոզք մեծաձայն առաջի կարգայցեն. զոր վասն այնորիկ իսկ բազում անգամ երանելիս համարիմք: Եւ տես, փոխանակ սպասաւորաց որպիսի՞ առաջապահք երթան առաջի. « Ա.րդարութիւն քո սաստիկ ». սպասաւոր՝ յորմէ ամենեքեան խորչեսցին. և ոչ ոք կարիցէ և ոչ ընդդէմ հայել: Եւ արդ, զհանդերձն ևս տեսցուք՝ որպիսի՞ ինչ իցեն. մի եթէ կամաւր կամ սամոյրք. և ոչ ուրեք. այլ « Փառքն Աստուծոյ զբև փակեսցին »: Ո՞ր Թագ, կամ ո՞ր պատմուճան իցէ հանդոյն այնպիսի զարդու. զի որպէս Աստուածն ողորմած է և գԹած և բարերար և կենարար, նոյնպէս և զձառայսն իւր կամի առնել. ըստ այնմ՝ զոր ամենանահատակն Յովբ ասէր, եթէ Ոտք եղէ կաղոց և աչք կուրաց:

« Զարդարեսցեն զքեզ, ասէ, փառքն Աստուծոյ.

յայնժամ կարդասցես, և Աստուած լուիցէ քեզ. և մինչչև խօսեցեալ իցէ քո, ասասցէ Թէ աւասիկ կամ» : Զինչ քան զայն մեծ կայցէ, յորժամ բնաւ և միայցէ իսկ ոչ խնդրելոյ, և ոչ զաղօթսն կատարելոյ. յառաջ քան զխնդրուածսն՝ տայ զխնդրելիսն. որ հայր գթած կամ բարեկամ սերտ, որ այնպէս վաղվաղակի ի ձայնն ելանիցէ : Տեսանէս, զի սակաւ մի հացի և պատառոյ մի կապերտի զինչ գնեցեր. զառ ի մարդկանէ փառաւորութիւն, և զառ ի Աստուծոյ սէրն. զի ամենայն ինչ քեզ դիւրաւ լինիցի : Աւր արարեր զայս միանգամ և երկիցս, և բաղում անգամ պարտիս առնել. ըստ այսմ, եթէ Ողորմութիւն և հաւատք ի քէն մի պակասիցէ. և դարձեալ, եթէ Մի դանդաղիցես առնել բարի՝ յորժամ հասանիցէ ձեռն քո. և բրդելն զհաց՝ մշտնջենաւոր ժամանակի պատուիրէ :

« Ապա եթէ մերժեացես ի քէն զկնճիռն և զձեռնաձգութիւն » : Ակիւղաս ասէ, եթէ մերժիցես ի միջոց քումմէ ձգել առ ի վեաս զմատն քո. Սիմաքոս, Թէ ի բաց առնիցիր զանուրն և զմատնն. Թէոդիտոնն նոյնպէս ասէ և զայլսն : Կնճիռն՝ մեղքն են, որ բառնում կրկնուածս ունին, որ ոչ ուղղութիւն ինչ իցէ և ոչ դիւրութիւն. և ձեռնձգութիւն՝ զյափշտակութիւնն ասէ, և կամ Թէ զանխտիր իսկ ձեռնադրութիւնս և զբանս տրտնջմանն. ըստ այսմ, եթէ Ջամենայն ինչ արարիչք առանց տրտնջելոյ. զի այն իսկ նշանակ լիմն է ծայլ և անյօժար մտաց : Զի ոչ յայն ինչ փութացուցանէ մարգարէն՝ զի առնիցեմք ինչ, այլ որպէս բազում յօժարութեամբ, զի մի տրտնջեսցին՝ ապականիցեմք զգործն : Յորժամ առնիցեն ձեռք զողորմութիւնն՝ լռեսցէ բերանն, զի մի պատուէն ի դերև ելանիցէ, և քաղցրն դառն լինիցի : Տրտնջէիս, ով մարդ, ընդ ժառանգութիւն կարօտելոյն. զի Թէ չէր կարօտ, և ոչ ժառէր. և վասն այնորիկ իսկ պարտ է ողորմել, զի առ կարօտութեանն ժամ առ կոտորոյ հացի, առ պատառոյ միոջ կապերտի : Աւր հանապազ, ասէ, ձանձրացուցանէ, և բազում անգամ կագեցայ, և ոչ գտի հնարս : Եւ զայն ոչ գիտես եթէ աղքատութիւնն չտայ դուռ ի հարկէ, և ոչ աղէտք քաղցին.

չայցելէ սաստ՝ կարօտութեան, և ոչ ահ՝ աղքատութեան, և ուտէ ի ներքոյ զփորն : Եւ մեք իսկ յորժամ ժտիմք առ Աստուած վասն միոյ ինչ խնդրուածոյ, և ոչ ցասնու. այլ յայնժամ ցասնու, յորժամ ոչ ժտիցիմք. Տէրն քո ընդ այն ցասնու՝ յորժամ ոչ ստէպ թախանձիցես, և դու իշխէիս ցասնուլ՝ յորժամ թախանձիցիս :

« Եւ տայցես քաղցելոց զհաց քո սրտի մտոք» : Աւն իսկ է, եթէ ջտուրս զուարթառատս սիրէ Աստուած. զի որ տայցէ՝ այնպէս համարիցի՝ Թէ առնուցու. և արդարև առնու իսկ, զի սակաւ ինչ տայ, և բ...րգևս.. ռնու յԱստուծոյ : « Եւ զանձն կա... ուսցես [1] » :

« Ցայնժամ ծագեսցէ ի խաւարի լոյս քո» : Զինչ իցէ ի խաւարի լոյս ծագեալ. զի Թէպետ իբրև զխաւար իսկ մածեալ իցէն վիշտքն և փորձութիւնք, կամ զինչ պետք և իցէն, բաւական է ողորմածութեանն զբուխն զամենայն մէջն փարատել. զոր օրինակ ճառագայթք արեգական յորժամ ծագեսցին՝ պատառէն զզգն Թանձրամած, նոյնպէս ողորմածութիւնն ըզմուխս վշտաց ինչ և տրտմութեանց. և զինչ ասիցեմ Թէ զխաւար, այլ և զտապ հրոյ չիջուցանէ. ըստ այսմ, եթէ չհուր բորբոքեալ՝ լուր չիջուցանէ, և զնեղս քաւէն ողորմութիւնք բազում :

« Եւ եղիցի Աստուած քո ընդ քեզ յամենայն ժամ. և լցցիս որպէս և ցանկանայցէ անձն քո, և ոսկերք քո պարարեսցին » : Տեսանէս զհատուցումն և զիոխարէն. զի և զմեղսն ջնջէն, և բարութիւնս յաճախէն, և զոր ինչ կամին՝ զայն առնուն : Եւ բարւոք իսկ սերմն կոչեաց Աստուած զողորմութիւնն, քանզի իբրև զսերմն երկրի սերմանի և բազմապատիկ յաճախ : Եւ ընդէր, ասեն, բազում անգամ զբազում տունս տեսանեմք, Թէպետ և ողորմութիւնս առնեին, սակայն կործանեցան և ի պէսպէս փորձութիւնս անկան : Աւր մի զդուն ինչ և զանօսր ի մէջ բերեր, այլ զայն որ միշտ ինչ գործիցի՝ այծ զմտաս. ապա եթէ

1 Յօր. Յեղծմանէ Թղթոյն բառք ինչ անընթեռնելիք են. Թուի լինել. Եւ բազում պարգևս առնու յԱստուծոյ : « Եւ զանձն խրօփելոյն յագեցուսցես » :

զայնպիսեացն չկամիցիս լսել, ածեմ՝ի մէջ օրինակ ջՅովբ. քանզի այսու՝ յառաւել մեծութիւն իմն հանէ զայնպիսին Աստուած. ածէ՝ի վերայ փորձութիւնս ինչ, զի՝ի փորձութեանն և՛ առաւելագոյն երանեսցին. իսկ սակայն որ չիցեն այնպիսի հասու մտօք, վաղվաղակի դարձուցանէ այսրէն զփոխարէնս Աստուած. իբրև ըզլացող ոմն մանկտոյ՝ յորժամ հանիցէ ոք ինչ՝ի ձեռաց՝ զալ հարկանէն, զկական բառնան. իսկ իմաստնոյն և գիտնոց ոչ այնպիսի ինչ. քանզի առաւել յուսովքն պարարեն զոգիս իւրեանց օր ըստ օրէ, և չհամարին եթէ աստ կորնչիլն ինչ՝ի նոցանէն, զի անդ ուշ եդեալ է գանձել գանձս։

« Եւ եղիցի իբրև զպատեզ արբուցեալ ջրալից, և իբրև զաղբիւր՝ ուստի ջուր ոչ պակասիցէ »։ Տեսա՞նէս, որչափ ինչ բարութիւն է ողորմութիւնն։ Այսպիսի էր և Յովբ՝ որ ասէրն, եթէ Ոռոգանէին կաթամբ լերինք իմ. որում ամենայն ուստեք բաղում բարութիւնք էին. Եւ գործք ձեռաց նորա, ասէ, բազում էին յերկրի, և չինուածք և ամենայն ինչ։ Մինչ առ ագահութեամն և վատամտութեամն տուաւ նմա այնպիսի բարութիւնք. ոչ ապաքէն վասն առատութեան և մարդասիրութեանն։

Եւ քանզի միւսանգամ յառաջին բարութիւնսն հաստատելոյ էր ընդսա Աստուած, և վերստին ընդոր հեր նոցա զքաղաքն, զի մի ապաստան Աստուծոյ ողորմութիւնն՝ անփոյթ առնիցեն զգործոց բարեաց. մանաւանդ յորժամ լսիցեն, եթէ « Շինեսցին աւերակքն քո յաւիտենից, և եղիցին հիմունք մինչև նաւորք ». վասն այնորիկ յաձախէ և զպատուէրսն. « Եթէ դարձուսցես, ասէ, զոտս քո՝ի շաբաթուց ոչ առնել զկամս քո յաւուրն սրբութեան, և ոչ փոխիցես դու զոտն քո՝ի գործել. և ոչ խօսեսցիս բան ինչ՝ի սրտմտութիւն բերանոյ քո »։ Տեսանէ՞ս, զի և այն գործ է, և չար իսկ գործ, և քան զամենայն դժնդակ։ Եւ արդ ո՞ր իցեն Հրեայք՝ որ դատարկութեամբն միայն պարծին, և այլովք իրօք պղծեն զբերանն և աղտեղեն զլեզուս։

« Եւ հանցէ զքեզ՝ի բարութիւնս երկրին, և ջամբիցէ քեզ զժառանգութիւն Յակովբայ հօր քո »։

Չհանդերձեալ առաքինութեանն յիշեցուցանէ նոցա. և զի մի կասկածիցեն՝ եթէ չլինիցին իրքն հաւատարիմք, ասէ. « Չի բերան Տեառն խօսեցաւ զայս »։

ԴԼՈՒԽՈ ԾԹ

« Միթէ չիցէ՞ ձեռն Տեառն կարող փրկել, կամ ծանրացուսցէ՞ զունկն իւր՝ զի մի լսիցէ. այլ մեղք ձեր որոշեն՝ի մէջ ձեր և՛ի մէջ Աստուծոյ »։ Տե՛ս, զի ոչ կամի եթէ՝ի մի արդարութիւնն միայն յուսացեալք ակն ունիմն փրկութեան, այլ զի և զգործոց և զկարգաց փոյթ ցուցանել յանձին։ Միթէ առ իմո՞ւմ ինչ տկարութեան. կարող էի և յայնժամ փրկել զձեզ՝ի վշտաց. այլ չարիքն ձեր մատնեցին զձեզ, և մեղքն ձեր եղեն այնմ ամենայնի պատճառք. վասն այնորիկ, ասէ, և այժմ պատուիրեմ զգուշանալ՝ի մեղաց։ Այսպէս զուէն զմեղսն. « Չի ձեռք ձեր թաթաւեալ[1] են յարեան »։ Այնու բամբասեն զնոսա ամենայն մարգարէքն, եթէ սպանութեամբ լի են ձեռք նոցա։ Ինձ այսպէս թուի, եթէ վասն առաջնոցն զղջացուցանել կամիցի, և՛ի հանդերձելոյն կարձել. քանզի հանդերձեալ էին սպանութիւն գործել, որ քան զամենայն սպանութիւնս անօրէնն և դառն էր նոցա։ Յառաջագոյն՝ի բացուստ կամէին ցածուցանել զնոսա. զի թէ յառաջագոյն՝ի սկզբանն ասաց մարգարէս, եթէ Ձեռք ձեր լի են արեամբ. զոր և Աստուած յառաջագոյն իսկ պատուիրեաց, քանզի յայն ինն միտեալ էին, և նոյն, առաւել քան զամենայն մեղսն, էր պատճառք կորստեան նոցա։ Այո՛. Մի՛ սպանանիցես. զի մի համարեսցին եթէ բնաւ յակամայ իցէ սպանանել, ասէ յայտնագոյն, եթէ Ձարդարն և զանպարտն մի՛ սպանանիցես. վասն այնորիկ զլիտս երկաթոյ և՛ի գործոյ խափանել հրամայէ, զի՛ի սպանութեանցն ցածուսցէ զնոսա. Երկաթ ինչ, ասէ, մի՛ հուպ առնիցես՝ի շինուածս տաճարին. զի թէպետ և զենուին քահա-

1 Յօր. Թաւալեալ։

նայքն արջառս և ոչխարս, այլ զարիւն՝ Աստուծոյ մատուցանէին. զի Թէ յանառնոցն արենէ՛ի բաց պարտ էր լինել իբրև՛ի նուիրելոյ, ոչչափ ևս առաւել՛ի մարդկան արենէն. այնչափ՝ որչափ լինչ պատուական և ընդանի է քան զկենդանին։

« Եւ մատունք ձեր՛ի մեղս, շրթունք ձեր խօսեցան զանօրէնութիւն և լեզուք ձեր զանիրաւութիւն »։ Զեռք և մատունք, շրթունք և լեզու, և զիւրաքանչիւր անդամոյն՛ի կարգին Թուէ զչարիսն. և այնու դիւրաւ մերժեսցէ զնոսա՛ի մեղացն։ Եւ տէս, զի խորհրդիւ իմն զչարիսն գործէին և հնարիւք սպանութեան, և ոչ առ ցասման ինչ, և ոչ՛ի սրտէն չանդգնութեան. այլ խորհելով իբրև մեղանչականութեամբ՛ի նոյն կրթեալք էին և՛ի նոյն խառնեալք [1]։

« Եւ ոչ ոք է որ խօսի զարդարութիւն »։ Եւ այսու ամենայն ուրեք մեղադիր լինի Եթէ չանգդնութեամբ և ունայնութեամբ գործէն. զնոյն և աստ բամբասէ, Թէ « Ոչ գոյ որ խօսի զարդարութիւն, և ոչ գոն իրաւունք ձշմարտութեան. յուսացեալ են՛ի մնոտիս». այսինքն՝ ՛ի կուռս։ « Եւ խօսին զունայնութիւն ». Զի ամենայն որ անօգուտ իցէ՝ ունայնութիւն իցէ. կամ չարախօսութիւն ինչ և բամբասանք։ « Զի յղեն զցաւս, և ծնանին զանօրէնութիւն »։

« Զձուս քարբից բեկին, և զոստայն սարդից անկանեն. և որ ուտելոցն էր՛ի ձուոյն, եբայ՝ և եգիտ ջուր, և ընդ նմին քարք »։ Զխարդախութիւնս նոցա ակնարկէ այնոքիւք, Եթէ « Զձուս իժից բեկին, և զոստայն սարդից անկանեն ». զխորհուրդս նոցա զոր ծնանին, և զգործան զոր գործեն, զնենգութիւնսն, զանմտութիւնսն. զի այնպիսի իմն են չարիքն՝ Թշուառականացն. զի՛ի զուր և՛ի միաս անձանցն և եթէ ընԹանան։

« Ոստայնք նոցա ոչ ձորձեսցին, և ոչ զգեցցին նոքա՛ի գործոց ձեռաց իւրեանց »։ Այսինքն, գործք նոցա չանկ ինչ ոչ ելանիցեն. և զի այս այսպէս է, վկայեսցէ յաջորդն. « Զի գործք նոցա՝ գործք անօրէնութեան են »։ Այնպիսի ինչ գործս պարտ էր գործել՝ ոյք կամ անձանց...մ ըն...ր ...ինչ աւգ...կ նոցայն [1] միասակարք են և անօգուտք։

« Եւ ոտք նոցա՛ի չարիս ընԹանան. արագ են՛ի հեղուլ զարիւն ամբիծ »։ Տեսանէս, զի չարիք են, զի արիւն, և ամբիծ ևս արիւն հեղուին. զի Թէ և ամբիծ ևս էր, սակայն բազում երկեղիւ սոսկալ պարտ էր. քանզի խաղաղութիւն իմն տնկեաց Աստուած՛ի բնութեանս մերում. ոչ միայն զգործն անօրէն չգործել, այլ և ոչ տեսանել իսկ ախորժել։ Եւ քանզի գիտէը իսկ Աստուած Եթէ չեն միայն միտքն բաւական, վասն այնորիկ յիւրմէ բնութենէն ետ օգնականութիւն։

« Խորհուրդք նոցա՝ խորհուրդք անզգամութեան. բեկումն և Թշուառութիւն՛ի ձանապարհս նոցա, և զձանապարհս խաղաղութեան ոչ ծանեան. և ոչ գոն իրաւունք՛ի ձանապարհս նոցա, զի շաւեղք նոցա մոլեալք են՝ յորս գնանն, և ոչ խօսեցան զխաղաղութիւն »։ Վասն այսորիկ և Դաւիթ մեղադիր լինի։ « Վասն այսորիկ իրաւունք վերացան՛ի նոցանէ, և մի՛ հասցէ՛ի նոսա արդարութիւն. մինչդեռ ակն ունէին լուսոյ՝ խաւարեսցի նոցա »։ Տեսանէս զԱստուծոյ բժշկութիւնն, զի ոչ եԹող առանց պատժոց զայսպիսի չարիս, և եցոյց՝ զիարդ որոշէին մեղքն՛ի մէջ նոցա, և՛ի մէջ Աստուծոյ։ Որպիսի՛ ինչ խաւար էր մածեալ զսրտիւք նոցա՝ որք զայսպիսի չարիս գործէին. որ մուԹ կամ մէգ չկայր զնոքօք։ « Գլորեսցին՛ի մէջ օրէի իբրև՛ի հասարակ գիշերի »։ Զի քան զխաւար ևս չար մածեալ ունէին չարիքն զոգիս։ Եւ քանզի ոչ զգային զձանձրամած խաւար վշտացն, յարէ՛ի նոյն, Եթէ « Ակն կալաք իրաւանց՝ և ոչ գոյր, և փրկութիւն հեռացաւ՛ի մէնջ »։

Մարգարէն ընդ նոսա պաղատի և զղջանայ. « Զի բազում են, ասէ, անօրէնութիւնք մեր առաջի քո, և մեղքն մեր հակառակ կացին մեզ »։ Տեսանէս, զի ոչ գոյզն ինչ մեղք, այլ բազում մեղքն զարԹուցանեն

[1] Ա.յապէս յօրինակին. Թերևս խոպոչեալ կամ ախպոչեալ։

[1] Յօր. Բառք ինչ անընԹեռնելիք. Թուի լինել կամ ընԹերոյ ինչ օգիպէնն. խակ նոցայն, և այլն։

զԱստուած. քանզի ներել գիտէ այնոցիկ՝ որ ոչ անչափին մեղանչիցեն, որպէս զՔանանացւոցն ասէր, Թէ Զի և ես են կատարեալ մեղք նոցա. և զփարաւոնիսկ, Թէ Վասն այսորիկ գրգռեցի զքեզ՝ զի ի քեզ ցուցից զզօրութիւն իմ. սոյնպէս և առ հրէութիւնն. որպէս և Պաւղոս իսկ ասէր, եթէ երկնչիմ՝ գուցէ գայցեմ սուգ առնուլ ի վերայ բազմաց՝ որոց յառաջագոյն մեղացեալ իցէ և չիցէ ապաշխարեալ. որպէս և զայլս բազումս: Իսկ զԱնանիա և զԱփիրա՝ ընդէր, ասեն, անդէն յառաջին մեղն սատակեաց Աստուած: Եւ զայսպիսի ինչ իբրս բազում անգամ յօգուտ և ի գէպ առնէ Աստուած. և տեսցուք իսկ Թէ և նոցա ոչ ևս ներեաց. նախ զի գողացան, ապա և զՈւրբ Հոգին փորձեցին. զի ոչ գողութիւն ևեթ Աստուծոյ նուիրեալքն էր, այլ և փորձութիւն, զի փորձեցին զՈւրբ Հոգին. զի և ետքոյ ևս Պետրոս, և յայտնանէ ոչ ակնածեաց կինն, եթէ Ո՛յսչափ ևեթ գնոյ վաճառեցաւ ագարակն: Ընդէ՞ր հարցանէր. ոչ ապաքէն զի խոստովան լինիցին և գտանիցեն տեղի ապաշխարութեան: Քանզի և Աստուած յայն սակս հարցանէր ցԱգամ՝ զի յապաշխարութիւն կոչեսցէ. և ցկային, Թէ Ո՞ւր ե Աբէլ եղբայր քո. զի զղջանայցէ զմեղսն: Մինթէ չկարէ՞ր յառաջնումն իսկ յանդիմանել. այլ Թէ յանդիմանեալ էր՝ լծողքն պատճառ՝ի միջի յիւրմէ խոստովանութենէն բժշկել. ոչ վասն այնորիկ ասէ, եթէ Սսա դու նախ զմեղս քո՝ զի արդարասցիս. պատուիրէ չմեղանչել. բայց Թէ մեղանչիցեն՝ չհարկանէ ընդ վայր, այլ դարձեալ յայց ելանել՝ զի յախտիցն ապրեցուսցէ:

« Բազում են անօրէնութիւնք մեր առաջի քո »: Յորժամ առաջի Աստուծոյ բազում իցէ անօրէնութիւնն, զիարդ չիցէ առաջի նորա բազում զղջումն զղջացելոյն, որ ոչ հաւաստեաւն խնդրէ, և նեղեալ կամի լսել. զի Թէ առաջի հօր յորժամ յանցանք որդւոյն յայտնեսցին, ծածկել կամի, և ոչ հաւաստեաւ քննել զամենայն, ոլչափ ևս առաւել Աստուած, որ ևս անչափ առաւել գիտէ խնամով հայել յանցանս յանցաւորին:

Մեղք ձեր, ասէ, որոշեցին ի միջ ձեր և ի միջ

Աստուծոյ: Վասն այսորիկ և մարգարէն պաղատի ընդ նոսա, եթէ « Սնօրէնութիւնք մեր հակառակ կացին մեզ, և անիրաւութիւնք մեր ի մեզ են »: Զինչ քանզայն չար յորժամ մեղանչիցէ ոք, և անդէն յանձին ունիցի պահել զմեղսն: Է մարթ մեղանչել, և ի բաց ընկենուլ զմեղսն. մարթի յանցանել, և ի բաց ընկենուլ զյանցանսն. այլ այն չար է՝ յորժամ անդէն յանձին ոք տարեալ ունիցի զմեղսն: Քանզի և Սոդոմայեցւոցն յորժամ՝ի գլուխ ելին չարիքն, յայնժամ ասէ. Աղաղակ Սոդոմայեցւոց յաձախեաց առ իս: Տեսանե՞ս, յորժամ յաձախեցին չարիքն, յայնժամ՝ի՛ր առնուլ վրէժս: Եւ զեգիպտացւոցն զչարիս ակնարկեալ, Տեսանելով, ասէ, տեսի զչարչարանս ժողովրդեան՝ որ յԵգիպտացւոցն է, և հեծութեան նոցա լուայ. և առ Նոյիս, եթէ Սպականեաց ամենայն մարմին զձանապարհ իւր: Քանզի ոչ վաղվաղակի հատանէ, եթէ ոչ նախ տեսանիցէ զվէրն յամենայն կողմանց ձարակեալ, կամ թէ զի յապաշխարութիւն ածցէ, կամ զի նախ կատարեսցին չարիքն: Զոր օրինակ բժիշկ մի իմաստուն որ գիտիցէ զժամանակն՝ յորում պարտ իցէ զցաւն հատանել, տևէ բաւէ զի յայնժամ հատանիցէ՝ յորժամ դէպն իցէ, և օգտակար գեղովք բժշկեսցէ. նոյնպէս և Աստուած գիտէ եթէ բազում պատժոց արժանի եմք. կամի զի ապաշխարութեամբն ապրեցուցանիցէ և ի վերայ այնչափ չարեաց:

Չի այնչափ զայրացեալ էին ցաւքն, զի որք չարիսն առէին, պէսպէս կտտանօք կտտէին զնոսա. Ետես, ասէ, Տէր, և ոչ հաճեցաւ. զի ոչ գոյին իրաւունք. և ետես՝ զի ոչ գոյր մարդ, և ոչ որ դառնայր յօգնականութիւն »: Չի և ոչ միաք ուրուք յօժարէին յարդարութիւն, չառնոյր այնուհետև Աստուած յանձն, եթէ յայնչափ չարիս մաշեսցին մարդիկ. այլ առնէր, ի խնդիր ելանէր. վասն որոյ և ասէր իսկ, եթէ « Հաւատոյ նոցա բազկաւ իւրով, և ողորմութեամբ իւրով հաստատեաց »: Եւ չգուշիցի՞ իսկ քեզ եթէ յոյժ մարդասիրութեան է գործդ. սոյնպիսի ախտ՝ի միջոյ բառնալ՝ կրկին ողորմութիւն է, և առ չարչարեալսն և առ չարչարիչն. զի զնոսա՝ի չարեաց փրկեսցէ, և զչարչարիչսն՝ի չարչարելոյն ցածուսցէ. և այն ոչ

եթէ չարչարելոց ինչ երախտիք իցեն, այլ չարչարչացն։ Քանզի և արտաքին օրէնք բազում անգամ զմիոյն ուրուք յանցանք՝ հասարակաց համարին. և զընացելոյն՝ որ զընկերին կին խայտառակիցէ՝ չտան ապրել. թէ և որում մեղսցեալն իցէ՝ ընդհարել զանցանսն կամիցի, չառնեն զնա իշխան պատժոց, այլ անձանց իմն համարին զանարգանսն. և այն՝ զի և զնա պատուեսցեն։

Ապա վառէ զԱստուած զինուք՝ որ նմա պատշաճական իցէ. «Եւ զգեցաւ, ասէ, իբրև զզրահս՝ զարդարութիւնն իւր, և եդ՚ի գլուխ, ասէ, իբրև զսաղաւարտ՝ զփրկութիւն»։ Եւ մեք զայնպիսի զինս զգեցցուք՝ զարդարութեանն, զուժգինն, զզօրաւորն, յորում ոչ կարիցէ գամագիտ լինել թշնամին. որ ոչ՚ի պղնձոյ և յերկաթոյ կազմիցի, այլ յառաքինութեանց քուրայից։

«Եւ երկիցեն որ յարևմտից իցեն յանուանէ Տեառն, և որ յարևելս իցեն՝՚ի փառաւորեալ յանուանէ նորա. զի եկեսցէ որպէս զգետ բռնութեամբ՝ բարկութիւն՚ի Տեառնէ. եկեսցէ բարկութիւն հանդերձ սրտմտութեամբ։ Եկեսցէ՚ի Սիովնէ փրկիչ, և դարձուսցէ զամբարշտութիւնսն Յակովբայ. և այս իցէ որ կինէն ուխտ, ասէ Տէր. Հոգին իմ՝ որ է՚ի վերայ քո, և բանքն իմ՝զոր ետու՚ի բերան քո, մի պակասեսցեն՚ի բերանոյ քումմէ և՚ի բերանոյ զաւակի քո, ասէ Տէր. յայսմհետէ մինչև յաւիտեան»։ Այսինքն՝ աւետիքն իմ և խոստմունք Աստուածութեան մերոյ ընդ մեզ մնայցեն և հանապազ կացցեն մնայցեն։

ԳԼՈՒԽ Կ

«Լոյս ա՛ռ, լոյս ա՛ռ, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո»։ Ակնարկեալ և այլքն ասեն. Արի և լուսաւորեա՛յ։ Եւ զինչ ինչ հնարս լայտ առնիցէ պատուէրս. զի եթէ եկեալ հասեալ է լոյսն, ապա որք կամեսցին և որք չկամեսցին՝ հարկ է լուսաւորել։ Եւ ոչ ուրեք.

զոր օրինակ լուսոյս արեգական ոչ ըստ բնութեան ձա ռագայթիցն է լուսաւորելն, այլ ըստ աչացն առողջութեան, նոյնպէս և առ այն լոյս՝ մարդկան պէտք են որ ընդունիցին զնորհսն, ոչ մերժիցեն զերախտիսն յանձանց։ Քանզի սովոր են միշտ բարութիւնքն ծուլացուցանել զմեզ, և անարժանաւորս առնել՚ի պարգեւացն. զի մի այսպիսի ինչ լինիցին, յառաջագոյն խըրատել պատշաճական գտանել առ լոյսն. վասն այնորիկ իսկ և կրկնէ, եթէ «Լոյս առ, լոյս առ»։ և «Եկեալ է լոյս քո»։ Այլ ինն լոյս յայտ առնէ, զգիտութեանն։ Եւ արդարև չիք ինչ լաւ և առաւել քան զայն լոյս՝ որ զուրախութիւնն պարգեւէ, և զտրտմութիւնն հալածէ։

«Եւ փառք Տեառն՚ի վերայ քո ծագեսցէն»։ Տէս, զորպիսի լուսոյ ձառէ. ընդ որում փառք Աստուծոյ ուղեկից իցեն. զի Աստուծոյ փառն այն վայելէ՝ որ՚ի կարգս ուղիղս իցէ և՚ի վարս հաստատունս։ Եւ արդ ընդէր ոչ ասաց՝ եթէ լինիցին, այլ թէ ծագեսցէն. զի զնորոգութիւնն որ՚ի նոսա լինելոց իցէ՝ յայտ առնէ. զի որ էին Աստուծոյ փառքն, և՚ի նոցանէ հեռացեալ էին, յայնժամ ծագելոց էին՚ի նոսա փառքն Տեառն, և՚ի պատիժն և՚ի յարութիւնն։

«Զի ահաւասիկ խաւար ծածկեսցէ զերկիր և մառախուղ զհեթանոսս. բայց՚ի քեզ Տէր յայտնեսցի»։ Զի յորժամ այս լոյս ծագեսցէ, հարկ է ամենայն տեղեաց լուսաւորել. իսկ այն ոչ՚ի հարկէ, քանզի ըստ կամացն է, և ոչ ըստ բռնութեանն։ «Եւ գնասցեն թագաւորք՚ի լոյս քո, և հեթանոսք՚ի ծագել լուսոյ քո»։ Տեսանե՞ս զառաւելութիւն լուսոյն. զի չքնաղ ինն է, և զթագաւորս լուսաւորէ։ «Ամբարձ դու շուրջ զքեզ զաչս քո, և տե՛ս դու ժողովեալ՚ի քեզ զամենայն որդիս քո»։ Այս ամենայն որ ինչ աւետիք՚ի բնաւ ընթերցուածին են՝ խոստացեալ էին նոցա յետ դարձին. և եթէ է ինչ՝ որ ոչ եղև, վասն նոցա անարժանութեան չեղև։ Իսկ այլք յեկեղեցի առնուն, և ոմանք յարութիւն։

«Վասն բարկութեան իմոյ, ասէ, Հարի զքեզ»։ Այսինքն, ոչ թէ առ տկարութեան իմում վարեցար գերի. ապա թէ այս այսպէս իցէ, կարող է ապրեցու-

ցանել. քանզի և ասէ, եթէ « վասն ողորմութեան իմոյ սիրեցի զքեզ »: Ոչ վասն քո ինչ ուղղութեան. պատիժք վասն քոց մեղացդ եղեն, և ողորմութիւնն [1] ոչ՝ի քոց ինչ ուղղութեանց: « Բացցին դրունք քո հանապազ՝ի տուէ և՝ի գիշերի, և ոչ փակեսցին »: Ա. յս իբրև ըստ առաւելութեան իմն ասացեալ է վասն ժողովրդեանն, այսպիսի բանիւք յորդորեսցին և ելցեն՝ի գերեացն. իսկ յեկեղեցին Աշմարտութեամբն իսկ կատարեցաւ, զի բացան դրունք եկեղեցւոյ և ոչ փակեցան:

« Եւ ոչ լինի քեզ արեգակն՝ի լոյս տունջեան, և ոչ ծագեսցէ լուսին լուսատու լինել՝ի գիշերի. այլ եղիցի քեզ Տէր լոյս յաւիտենից, և փառք քո՝ Աստուած լինի. զի ոչ մտցէ քեզ արեգակն, և լուսին՝ի քէն մի պակասեսցէ »: Զի ամէնդ ոչ լինիցի լոյս տուընջեան արեգակն, կամ զնամէնդ դարձեալ ոչ մտանիցէ, կամ զնամէնդ ծագեսցէ լուսին և ոչ ծագեսցէ: Ոչ եթէ լուսաւորութիւնք լուսաւորացն պակասեսցին, այլ թէ ոչ այնչափ լուսաւորեսցեն՝ որչափ և Տէրն լուսաւորեսցէ. զի լուսաւորացն լոյս՝ ժամանակաւ զմարմինն Եւթէ լուսաւորեն, իսկ Աստուծոյ լոյսն՝ զմարմինս և զհոգիս:

Տեսանէ՞ս զբանչելին. զի զբարութիւնս ժողովրդեանն՝ որ յետ դարձին լինելոց էին՝ ակնարկէ, և զընորհացն մեծամեծն, որ՝ի նորումն լինելոց էին՝ դուշակէ: Զի ոչ միայն լուսաւորացն լոյսն լուսաւորեսցէ, այլ առաւել Աստուծոյ լոյսն զմիտս և զնորհուրդս, յորմէ զրկեալ էր ժողովուրդն. քանզի և յայտ իսկ առնէ յաջորդսն. զի ոչ հոգևոր ինչ խոստանայ նոցա պարգևս, այլ ոսկի և արծաթ, պղինձ և երկաթ, և խոյս Նաբևուքոդոնոսորայ, և նոճ և սարդ: Եւ միտ դիր, Հրեայդ, և մի ինչ աւելի ակն ունիցիս քան զմարմնաւորս. զի Թէպէտ և նուաղեսցի լոյս լուսնի կամ արեգական ընդ ժամանակս ժամանակս, ոչ յիւրեանց ինչ բնութենէ, այլ վասն չարեաց այնոցիկ՝ որ ընդ սոքօք մեղանչէին. վասն այնորիկ ասէ Աստուած,

1 Յօր. Ի մաշմանէ Թլթոյն բառք ինչ անընթեռնլիք. ըստ պահանջելոց կարգի բանիցն եղեալ, և ողորմութիւնն:

եթէ յայնժամ համարձակ գնայցես՝ի լոյս լուսաւորացն. և դարձեալ, եթէ բարձցին՝ի քէն տրտմութիւնք ամենայն:

« Եւ լցցին աւուրք սգոյդ »: Վասն տարաժամ մահու Հուդան ասէ, եթէ այս ոչ ևս լինիցին: « Եւ ժողովուրդք քո արդար յաւիտենից, և ժառանգիցեն զերկիրն »: Եւ այս ոչ եթէ յԱստուծոյ եղև, այլ՝ի նոցանէ. զի Տէր ած՝ի յերկինս, նոքա իւրեանց չարեօքն ընկեցիկ եղեն: « Պահիցեն զնորատունկ գործ ձեռաց իմոց՝ի փառս »: Զի զոր ետն տնկեցի, ասէ, կամիմ՝ զի կացցէ ինասցէ յաւիտեան՝ի փառս իմ: « Զի սակաւաւորն հազարաւոր եղիցի և կրտսերն յազգ մեծ »:

ԳԼՈՒԽ ԿԱ.

« Հոգի Տեառն՝ի վերայ իմ, վասն այսորիկ իսկ օծ զիս »: Եւ այն իսկ իցէն պատճառք. նա այլուր այլ ինչ պատճառս յայտ առնէ, եթէ Յորոյ վերայ տեսանիցես զՀոգին՝ զի իջանիցէ և հանգչիցի, նա է որ մկրտեսցէ՝ի Հոգին: Տէս, զի և աստ իսկ առանց վերադրի ասէ, եթէ « Հոգի Տեառն՝ի վերայ իմ », և ոչ եթէ Հոգին Տեառնն. այն իսկ է, եթէ ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունի, սա չէ նորա: Եւ յայտ է՝ եթէ ոչ՝ի կարօտութիւն առ Յիսուս զՀոգին, այլ միայն՝ի վկայութիւն. զի ոչեթէ զևւրն [1] ՝ի կարօտութիւն առնուցու. զի որպէս աստուածութեամբն եցոյց ըզզօրութիւն, նոյնպէս և Հոգւովն. զի ցուցցէ, եթէ՝ի նորին բնութենէ՝ յորմէ ինքն է՝ և Հոգին է: Քանզի և առաց ինքն, եթէ կատարեալ է ամենայն ինչ: Ո՞ւր են Հրեայք, ուր հերձուածողք. յորժամ Աստուած ասիցէ, թէ Ամենայն ինչ կատարեալ է, չիք ոք որ ընդդէմ այլ ինչ կարիցէ ասել: Այս ասէ. « Հոգի Տեառն՝ի վերայ իմ, վասն այնորիկ իսկ օծ զիս ». և այլուր ասէ, եթէ Օծ զնա Աստուած Հոգւով և զօ-

1 Յօր. Զի ու եթէ զոր՝ի կարօտութիւնն առնուցու:

բութեամբ: Աստուած, ասէ, և ոչ մարդ ոք. ոչ իւղով այլ Հոգւովն և զօրութեամբ. զի եթէ եւղով՝ի մարդկանէ էր օծեալ, ոչ առաւել էր քան զայլ օծեալսն: Այլ զոր օրինակ մկրտեցաւ, և չէր կարօտ մկրտութեան, քանզի յառաջ քան զմկրտութիւնն էր՝ի նմա Հոգին. ըստ այնմ, եթէ Հոգին Սուրբ եկեսցէ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լինի՝ի վերայ քո. նոյնպէս և՝ի մկրտութեանն եկն՝ի վերայ նորա Հոգին, ոչ զի սրբեսցէ, քանզի սուրբ իսկ էր և սրբիչ ամենայնի. և ոչ զի զօրութիւնս ինչ կատարեսցէ, զոր ինքն իւրով աստուածութեամբն կարէր կատարել. այլ զի վկայեսցէ միայն. ըստ այնմ, զոր Յովհաննէս ասէր, եթէ ես ոչ գիտէի զնա, այլ որ առաքեացն զիս ջուրջ մկրտել, նա ասաց ցիս, թէ յոր վերայ տեսանիցես զՀոգին Սուրբ՝ զի իջանիցէ և հանգչիցի՝ նա է: Եւ զի յայտ արասցէ, եթէ վասն վկայութեան երևեր Հոգին, և ոչ վասն կարօտութեան ինչ, ասէ. Ես տեսի և վկայեմ՝ եթէ նա է Որդին Աստուծոյ: Եւ յայտ է եթէ Աստուծոյ Որդին՝ Աստուած է. որպէս ինքն Հայր իսկ վկայեաց, եթէ Դա է իմ Որդի սիրելի, դմա լուիջիք: Եւ զի ասէ, եթէ Հոգւոյն հանեմ զգեաս [1]. և դարձեալ, եթէ վարեցաւ Հոգւոյն զի փորձեսցի՝ի սատանայէ. այսպիսի բանիւք զմի կամն և զմի հաւասարութիւն զոր ունէր ընդ Հոգւոյն՝ իմանամք տեսչութեամբ: Այլ տեսցուք եթէ չնորհս ինչ ասիցէ, եթէ զՀոգին Սուրբ. «Հոգի Տեառն», ասէ, և ոչ չնորհք Տեառն: Եւ այն իսկ է զարմանք, զի Հոգի Տեառն՝ի վերայ Աստուծոյն երևէր: Այնպէս պարտ իսկ էր երևել Հոգւոյ Սրբոյ՝ի վերայ մարմնաւորութեանն Աստուծոյ. և զի՝ի մէջ չնորհք Հոգւոյն՝ նորա մարմնոյն հաստատեսցին. զի որպէս՝ի նորա վերայ երևեցաւ Հոգին՝ի վկայութիւն, և ոչ՝ի կարօտութիւն, նոյնպէս՝ի վկայութիւն՝ի մեր վերայ և՝ի ընդունողսդ-

1 Յօր. Հաբէն հանեմ զքեզ, որ թէ չիցէ ուղիղ, Թուի յանմտադրութենէ գաղափարողին եգեալ. զի՝ի Մատթէոսէ առեալ է վկայութիւնդ. «Այսպէս եթէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս» և այլն. (Մատթ. ԺԲ. 28):

գուցս մերում՝զի եմք որդիք Աստուծոյ: Եւ զի նորա Որդի էր բնութեամբ՝ ըստ աստուածութեանն, վկայեաց և յայտնեաց մեզ. և զի մեք չեմք որդիք բնութեամբ, սրբէ և առնէ զմեզ որդիս ընդոհաց:

«Աւետարանել աղքատաց առաքեաց զիս»: Զքաջերութիւն զյայտնութիւնն իմացուք. քանզի ուստի յոմն առաքեացի, որ յամենայնին բնութեամբ էր ըստ աստուածութեանն: Աղքատաց, ասէ. միթէ կուսակալք և աշխարհակալք աղքատք իցեն, և կամ մեծատունք ամենայն՝ որոց քարոզէր: Այո՛, ասէ, և կարի քաջ աղքատք. և են բազում մեծատունք ըստ աշխարհիս կենցաղ, և աղքատք ըստ հանգերձելոցն: Դարձեալ և այլագոյ ևս. աղքատս՝ զհանարհս կոչէ որ զիսկզբան զաւետիսն ընկալան:

«Բժշկել զբեկեալս սրտիւք»: Որոց սիրտքն հանապազ մաշեալ էին՝ի մեղացն կասկածանաց: Հրեայքն հպարտացեալ՝ չէղեն արժանի ընդունել զաւետիսն. և Տեառն սկսեալ զերանութիւնս՝ նախ աղքատաց տայր երանիս [1], եթէ երանի իցէ աղքատաց, զի նոցա է արքայութիւն երկնից: Աղքատօք բացաւ դուռն արքայութեանն: Այնոցիկ բարեաց պատճառ խոնարհութիւն է, որպէս զի ամենայն չարեաց պատճառ հպարտութիւն:

«Հոգոյն, ասէ, օծ զիս»: Այսինքն է վկայեաց. զի մի իբրև զայլ մարգարէս օծեալ լինէ լոկ կարծիցեն, թէ աւետարանել միայն առաքեալ իցէ, յարէ՝ի նոյն, թէ և «Բժշկել զբեկեալս սրտիւք». կամ՝ի մեղաց կամ՝ի տրտմութեանց: Եւ զի իւր է բժշկութիւնն, և չէ իբրև զմարգարէ ոք անկած, թէ նախ առնուցու և ապա տացէ, ասէ իսկ յԱւետարանին, եթէ Եկայք առ իս, վաստակեալք և ծանրաբեռնիքդ, և ես հանգուսցից զձեզ. եան ասելով՝ զՔրիստոսի իշխանութիւնն յայտ առնէ: Տեսանէս, զի առաջին բարութիւնքն երևելիք էին, և այս իմանալիք. առաջինքն մարմնականք, և վերջինքս ոգւոց դարմանու-

1 Յօր. Ընդունել զաւետիսն... եւս վերանալ... նախ աղքաց... երիկ երանի ինչ. փոխանակ եզծեալ բառից ինչ, ըստ պահանջելոյ իմաստիցն եւ դաք. և Տեառն սկսեալ... պատ երանիս:

Թիւնք. ոչ զմծտաւորացս ինչ, և ոչ զաստէն ինչ զաշխարհականացս, այլ զՀանդերձեալսդն և զերկնաւորսդն ձառէ։ Եւ յիրաւի իսկ կոչէ աղքատս. քանզի զրկեալ էին յայնպիսի բարութեանց. և որպէս ոչ եթէ ընդունելն միայն պիտոյ իցէ զաւետիսն, այլ զի յետ ընդունելոյն չզղջանայցեմք։

« Բժշկել զբեկեալս սրտիւք »։ Զի հէնք առ ցաւս բեկեալ էին սրտիւք, և կէնք՝ի մեղաց, և այլք՝ի մեղաց և՝ի ցաւոց. որպէս անդամալուծին ասաց Տէրն, եթէ Ողջացար աւադիկ, երթ, մի՛ ևս մեղանչիցես։ Այլ առնի բեկումն սրտի և վասն արդարութեան և վասն մեղաց. ըստ այնմ, եթէ Ջնիրա բեկեալ և զխոնարհ Աստուած ոչ արհամարհեաց. և վասն մեղաց, ըստ այնմ, եթէ Բժշկեա զՀրոտածս սորա՝ զի սասանեցաւ։ Բեկանէ և սատանայ, որպէս զկինն կարկամեալ. և մեղք, զի Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, նեխեցան և փտեցան վէրք իմ։ Զի բեկեալ ինչ յորժամ ոչ դարմանեսցի, փուտն՝ի ներքս գործէ։ Եւ դարձեալ ասէ, եթէ Բեկումն և թշուառութիւն՝ի ձանապարհս նոցա։ Ոչ այնչափ մարմնոյն ցաւքն կարեն բեկանել զոյժ մարմնոյն, որպէս մեղացն ցաւք՝ զոգւոյն զօրութիւն խորտակեն։

Դարձեալ այլ ինն իմանալի բարիք. « Քարոզել գերեցեալ զթողութիւն »։ Որոց ոգիքն գերեալ էին. և ուստի՞ յայտ իցէ՝ եթէ զնացանէ ասիցէ. յայնմանէ՝ զի ոչ ասաց տալ թողութիւն, այլ եթէ քարոզել թողութիւն, զի ցուցցէ եթէ ըստ կամաց առողացն են բարիքն. եկն տալ աւետիս, զի առնիցէ ախորժական զբարեացն ցանկութիւն։ « Եւ կուրաց տեսանել »։ Եւ ո՛րք կոյրք ելին՝ի Բաբելոնէ. Թէպէտ և յառաջ քան զիջանելն անդր կոյրք էին, ըստ այնմ, եթէ Ո՞վ իցէ կոյրն, եթէ ոչ ծառայքն իմ։ այլ ոչ եթէ յետ գերութեանն։

« Կոչել տարեկան Տեառն ընդունելի »։ Այիւղաս և Սիմաքոս՝ Հաճութեան, ասեն, « Եւ օր Հատուցման Աստուծոյ մերոյ »։ Եւ բարւոք ասէ Հատուցման. զի մի յաւետիս բարեացն ևեթ ապաստան լինիցին, և ծուլանայցեն։ Եկեալ կայ առ դուրս դատաստանն՝

Հատուցանել ըստ իւրաքանչիւր բարեաց գործոցն...[1]։ Զի ոչ վասն այնորիկ միայն եղև, ասէ, գալուստն, զի զմեղսն միայն Թողուցու, և պարգևս ընդՀեռուէ, և զոմ զայն՝ի պատճառս մեղաց առնուցուս, և ևս յաՀախիցես զմեղանչելն։

« Կոչել զամենայն սգաւորս »։ Կամ որք վասն մեր. ինաւորաց ինչ՝ի սուգ էին, կամ վասն Հոգևորացն։ Իսկ Սիմաքոս՝ փոփոխել, ասէ։ « Տալ սգաւորաց Սիովն զփառս. փոխանակ մխրոյն՝ օծումն ուրախութեան, և սգաւորացն Հանդերձ փառաց՝ փոխանակ ոգւոյն ձանձրութեան »։ Իսկ այլք՝ ափշութեան ասեն՝ փոխանակ ձանձրութեան։ Տեսանե՞ս, որ ուրախութեան Աստուած է, նոյն եւկեալ բառնայ զաղբտմութիւնն. ոչ մարդ աք՝ի մարդկանէ, և ոչ Հրեշտակ՝ի Հրեշտակաց. չիք ինչ աստ մարմնաւոր, այլ ամենայն ինչ Հոգևոր։

« Եւ կոչեսցին, ասէ, աղք Տեառն, և տունկ Տեառն՝ի փառս »։ Տեսանե՞ս, զի Տեառն տունկ են, և ոչ մարդոյ ուրուք. և ոչ ասէ եթէ աղք, այլ եթէ « Աղք արդարութեան »։ Եւ արդ, առ ո՞վ կատարեսցի այս. առ մե՞զ՝ եթէ առ նոսա. այլ յայտնի իսկ է՝ զի տունկ Տեառն՝ի փառս՝ եկեղեցի է։

« Եւ շինեսցեն զաւերական յաւիտենից »։ Եւ արդարև աւերակք էին քաղաքք. ոչ կործանեալ ինչ պարսպովք և աւերեալ ապարանիւք, այլ՝ի մարդկանէ՝ որոց զԱստուած պարտ էր ձանաչել և ոչ ձանաչէին։ Եւ արդ շինեցան քաղաքք, զի գտանին՝ի նոսա մարդք աստուածագիտք։ Եւ բարւոք իսկ ասաց աւերակք յաւիտենից։

« Քաղաքք որ յառաջագոյն աւերեալքն իսկ էին՝ կանգնեսցին. և նորոգեսցեն զքաղաքս աւերեալս ազգաց յազգս։ Եւ եկեսցեն օտարածինք Հովիւք խաշանց քոց, և այլազգիք մաձակալք և այգեգործք քո »։ Եւ այս իսկ է զարմանալի, զի յայտնի իսկ զիշխանաց եկեղեցւոյ ասէ, եթէ « Դուք քահանայք Տեառն կոչեսջիք, պաշտօնեայք Աստուծոյ »։ Այս ամենայն իսկ

1 Ցօր. Բառք ինչ խափան եղծեալք. առ՝ի լուծին իմաստիցն յաւելք գուշակօրէն՝ի տեղի նոցին զբառսն՝ բաբէացն, հափշտակելոյ

քրիստոնէից ասէ, եթէ դուք եղիջիք ինձ՝ի թագաւորութիւն և՝ի քահանայութիւն և յաղք սուրբ։ Տեսանէ՞ս, զի յաւազանի իսկ առնի այս, զի ամենեքեան օծանիցին։

« Զզօրութիւն հետ անոսոց կերիջիք, և մեծութեամբ նոցա աքանչելի լիջիք. վասն այսորիկ զերկիր իւրեանց յերկրորդումն ժառանգեսցեն »։ Տեսցուք յա՛ կատարեսցի այս, ընդ ժառանգեսցեն յերկրորդումն. զի այն երկրորդ էր, թէպէտ և ոչ կատարեցաւ. իսկ սա աւասիկ ասէ, եթէ « երկրորդում ժառանգեսցեն »։ Եւ յայտ է եթէ ազգն՝ որ ելիցն վասն նոցա՝ անդրէն միանգամ ժառանգեսցեն զերկիրն։ Եւ յայտ յայնժրդաւն է՝ որ ասէ, եթէ « Ուրախութիւն յաւիտենից եղիցի՝ի վերայ գլխոյ նոցա »։ Եւ արդ, ո՞ր իցէ զի յաւիտենից ուրախ լինիցին Հրեայք յերկրին։

« Չի ես եմ Տէր որ սիրեմ զարդարութիւն և ատեմ զյափշտակութիւն անիրաւութեան. և տայց զվաստակս նոցա արդարոց, և ուխտ յաւիտենից ուխտեցից նոցա, և յայտ լիցի՝ի հետ անոսս ծնունդք նոցա »։ Ա՛յ՝ յառաքեալն կատարեցաւ, որոց եդ ուխտ յաւիտենից. զի զաւակ նոցա ևս և Ճանաչի՝ի մէջ հետ անոսց։ « Ամենեքեան որ տեսանիցեն՝ Ճանաչիցեն զնոսա »։ Եւ ո՞ր ազգ է՝ որ ոչ Ճանաչիցէ զնոսա։ « Եւ կոչեսցին զաւակ օրհնեալ՝ի Տեառնէ. և ուրախութեամբ ցնծասցեն՝ի Տէր »։ վասն բազմութեան աշակերտելոց և վասն հանդերձելոց պարգևացն։

« Ցնծասցէ հոգի իմ՝ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուճան ուրախութեան »։ Տեսանե՞ս զոգւոյն ևեթ ուրախութիւն. և չիք ինչ մարմնաւոր, այլ ամենայն հոգևոր. քանզի ասէ իսկ, եթէ « Ցնծասցէ հոգի իմ՝ի Տէր »։ Զի յորժամ ընդունիցիւք զնորս ինչ հոգևորս, ուրախ լինիցիք՝ի Տէր. զի ամենայն աքսիւրաքանչիւր ստացուածս ուրախ լինի, յորմէս, ՚ի ստացուածս. թէպէտ ՚ի սրտմտութիւնս իցէ, և տեսանիցէ կին ցանկալի, կամ որդիս անձկալիս, վերջք՝ նմա այնու հետև չէն վերջք. նոյնպէս և որ Աստուածն ուրախ լինիցի, և մանաւանդ պիտիցէ ստոյգ եթէ հաշտ է ընդ նմա Աստուած,

ոչ վերջքն վերջք են նմա այնու հետև, և ոչ նեղութիւնքն նեղութիւնք. որպէս առաքեալքն ուրախ լինէին հանապազ յԱստուած, և զայլն յորդորէին, թէ Ուրախ լերուք՝ի Տէր յամենայն ժամ։ Եւ այն իսկ հաստատուն և անմահ ուրախութիւն. իսկ եթէ լինէա որ ուրախ լինիցի՝ առ ժամանակ մի են ուրախութիւնքն [1], զի յորժամ լինքն վատնեսցին, ընդունայն է ուրախութիւնն. որպէս ծաղիկ գարնանայոյ, մինչդեռ կկէն՝ ուրախ առնեն զտեսիլ երեսաց, իսկ յորժամ անցանիցեն, բառնան ղբերկրութիւն յաչաց, նոյնպէս և լինքն հանեն զուրախութիւն՝ի մտաց. և թերևս նոքա նախ թողուցուն զմեզ, և կամ եթէ մեք զնոսա։ Եւ դարձեալ ուրախ որ լիցէ ընդ կին գեղեցիկ. սակաւ ժամանակաց ստացուած, առ ժամանակ մի բերկրութիւն, դիւրածախ ուրախութիւն, ընդ բազում կարեօք, ընդ ազգի ազգի կասկածանօք. և վասն այնորիկ հարկ է ժամանակեան լիցէ ուրախութիւն. իսկ եթէ զԱստուած սիրեսցես՝ անմահ է գութն, հանապազ նորոգի սէրն, միշտ բորբոքի անձուկն, ոչ ծերանայ, ոչ հնանայ, քանզի և ոչ նա իսկ՝ ընդ որում խոնամարկիցես. այլ կայ միայ միշտ նորոգ, ցանկալի և անձկալի։ Եւ եթէ ասիցես թէ չտեսանեմ զնա, տե՛ս զերկինս, զի՛արդ գեղեցիկ են և ո՛րչափ մեծ, զի՛արդ կինս, զի՛արդ գեղեցիկ են և ո՛րչափ մեծ, զի՛արդ քաղցր և ախորժական աչաց և պիտանացու առ ամենայն պետս. իսկ երկինքդ՝ այնը զոր սիրեսցեսն՝ են գործք, և գործ դոյզն ինչ և սակաւ՝ մատանց նորա. և այսի՛ իմանաս զնորա գեղն՝ որչափ հնար իցէ քեզ իմանալ։ Ո՛չ տեսանիցես զնա. եթէ կամիս՝ տեսանես. զտեա՛ զմիտս, որբեա՛ զսիրտդ. երանի՛ իցէ, ասէ, որ սուրբն իցէն սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն։ Նա ևեթ լիցի մեզ... կարևոր գութ և անձուկ... [2] խոտան համարէ։

« Չի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան »։ Զո՛ր հանդերձ. զայս հանդերձ զոր զգենուցուքս՝ չէ փըր-

1 Ցօր. Բառք ինչ ամենևին անընթեռնելիք՝ի մաշմանէ թղթոյն. ՚ի լրումն իմաստից կարևոր ևս ուսեցաւ մեզ յաւելուլ՝ի տեղի նոցին՝ յինչ ոչ ուրախ լինիցէ, ուրախութիւնն։

2 Ցօր. Բառք ինչ ընդ ապիր անընթեռնելիք։

կուԹեան. այլ գիտեմ զի գիտեն խորհրդոյն խորհըրդականք. բայց սակայն ասասցէ և Պաւղոս. Որ միանգամ, ասէ, ՚ի Քրիստոս մկրտեցայք, զՔրիստոս էք զգեցեալ. զի նա իսկ է փրկուԹեան հանդերձ։ Զգեցար զՀանդերձն, ոչ զի զմերկուԹիւն մարմնոյդ ծածկիցես, այլ զի ՚ի բռնուԹենէ մահու անըմբռնելի լիցիս։ Եւ բարւոք ասաց հանդերձ. քանզի մերկք և ծանակք էաք, անհնազանդք, անմիաք, մոլորեալք. ծառայեաք սկսպէս ցանկուԹեանց. քանզի մերկ առարին զմեզ մեղքն, և յամօԹ արար սատանայ, որում մեք մեղէն տեղի տուաք ՚ի մեզ. եկն Քրիստոս զգեցոյց զմեզ, և եցոյց ԹէԹ ևրպէս գիւրին է մերկանալ հինն մարդն յանկուԹեամբքն հանդերձ, և զգենուլ զնորն՝ որ ըստ Աստուծոյ հաստատեցաւ. և քանզի է մարԹ և մերկանալ, վասն այնորիկ պատուիրէ ԹԷ զգեցարուք, զի հանապազ ընդ մեզ իցէ։

« Եւ պատմուճան ուրախուԹեան»։ Է ինչ փրկուԹիւն և կարեօք գտանել, կամ ՚ի բժշկաց, կամ ՚ի գանէ խրատուաց. իսկ սա ոչ այնպիսի ինչ է, այլ ուրախուԹեամբ և բիւրապատիկ բարուԹեամբք. ոչ տայ Թոյլ յամօԹ լինել։ « Իբրև փեսայի եդ ինձ միտրը »։ Ակիւղաս, Իբրև զփեսայ վայելուչ պսակաւ։ « Իբրև զՀարսն զարդարեաց զիս »։ Միտրն պսակ ինչ բոլորեալ նարօտ ականակուռ, զոր դնեն ՚ի գլուխ փեսայքն ՚ի հարսանիս։ « Իբրև զՀարսն զարդարեաց զիս» ասէ։ Զի հարսանիք եղեն, և հոգևոր հարսանիք. քանզի հոգիքն ընդ Աստուծոյ եղեն հաղորդակիցք [1]։ Տէս զաղքատուԹիւն հարսինն, զի և զՀանդերձն և զզարդն ՚ի փեսայէն առնու. քանզի չէր այլ ոք որ այսպիսի հանդերձս կարէր զգեցուցանել. որպիսի, աղաչեմ ոք յորժամ առն Թագաւորի հաճոյ լինիցի ՚ի հարսնուԹիւն, և չգտանիցէ հանդերձս արժանիս հարսնուԹեան՝ յիւրմէ ուրոյն կազմել և Թագաւորն տայցէ նմա զամենայն և զարդարեսցէ. նոյնպէս և ե-

1 Յօր. Մէրն պսակ ինչ բոլորեալ նա... առ ... անա ... ոսկ ֆէսայէ ՚ի հար... պէս ասէ. զի հարսանիք է... հարսանիք, փանդէ հոգիք ... այ էզ հաղորդ ակիցք. պէս պաղ ... արքինն։ Յապաղանելոյ ԹղԹոյն՝ այսպէս Թէրան. դամ մնայնն բառքն. առ՚ի բովանդակել զիմաստն, զպակասուԹիւն եղծեալ բառիցն՝ գուշակօրէն լնուլ ջանացաք։

կեղեցւոյ՝ Քրիստոս ետ զամենայն զարդս և զարդարեաց։ « Եւ իբրև զերկիր մի՝ որ աձեցուցանէ զծաղկիս իւր »։ Զբազմապատիկ պտուղ առաքինուԹեանն ակնարկէ։ « Ա՛նպէս ծագեցուսցէ Տէր զարդարուԹիւն և զցնծուԹիւն առաջի ամենայն հեԹանոսաց»։ Վասն այսորիկ առաջի հեԹանոսաց՝ զի տեսանիցեն և վկայեսցեն, և նմին նմանող եղիցին։

ԳԼՈՒԽ ԿԲ

« Վասն Սիովնի ոչ լռեցից, և վասն Երուսաղեմի ոչ դադարեցից »։ Ինձ այսպէս Թուի ԹԷ վասն այնորիկ ասէ զայս՝ զի մի՛ հպարտանայցեն ինչ։ « Մինչև ծագեսցէ իբրև զլոյս արդարուԹիւն իմ, և փրկուԹիւն իմ իբրև ջահայլակն վառեսցի. և տեսցեն հեԹանոսք զարդարուԹիւն իմ, և Թագաւորք զփառս իմ. և կոչեսցի քեզ անուն քո նոր, զոր Տէր ինքնին անուանեսցէ քեզ. և եղիցես դու պսակ վայելչուԹեան ՚ի ձեռին Տեառն, և Թագ արքայուԹեան ՚ի ձեռին Աստուծոյ քո. և երկրին քում շինուԹիւն բնակուԹեան լինիցի »։ Ա՛յս ինքն՝ ՚ի զգուշուԹեան և յամրուԹեան [1]։ « Եւ առնուանեսջիր դու կամք իմ»։ Եւ երբ կոչեցաւ անուն քաղաքին կամք Աստուծոյ։

« Զոր օրինակ ուրախ լինիցի փեսայն առ հարսին, այնպէս ուրախ լինիցի Տէր ՚ի քեզ »։ Տեսանէ՞ս նորոգեալ ՚ի սէրն, զարԹուցեալ զանձուկն։ « Ի վերայ պարսպացն Երուսաղեմի պահապանս կացուցից հանապազորդ »։ Եւ չկալցի՞ն ինչ արդեւք պահապանս ՚ի վերայ պարսպացն Երուսաղեմի. այլ կացին և կարի իսկ ստեպ. և զինչ օգտեցան. և զի հալածեցին և։ Պահապանս աստ՝ կամ զիշխանս ասէ, կամ զքահանայսն։

« Չի չէք ոք նման ձեզ՝ որ ուղղեսցէ և արասցէ ըն-

1 Յօր. Աստուծոյ տ... լինիցի. այսինքն... ՌեԱն... մբռնեԱն։ Զայլ ամենայն բառս առ՚ի լրացուցանել զիմաստ բանին եդաք կարծեօք փոխանակ եղծելոցն։

ծուԹիւն Երուսաղէմի, և պարծանս յերկրի »։ Տե-
սանէ՛ս, զի զնոսա առնէ պատճառս առնային ուրեք,
և առնել զուղղուԹիւնն և չառնել։ Զի մի ապաստան
՚ի կանխասացիկան լինիցին, և չպատրաստիցեն լինել
զանձինս արժանիս, վասն այսորիկ ասէ, եԹէ « Ոչ ոք
գոյ նման ձեզ՝ որ ուղղեսցէ և արասցէ ցնծուԹիւն »։
Զի եԹէ գայցէք յուղղուԹիւն, ցնծուԹիւն լինիցէ
էք Երուսաղէմի, և պարծանք երկրի. ապա Թէ ոչ,
սակայն կանխասացիկքն ՚ի ձեր որդիսն՝ յառաքեալն
կատարելոց են, որ լինիցին ցնծուԹիւն վերին Երու-
սաղէմի, և պարծանք առնային երկրի։

« Երդուաւ Տէր ՚ի փառս իւր և ՚ի զօրուԹիւն բազկի
իւրոյ »։ Տեսանէ՛ս զերկգունակ երդմանն, զի ՚ի փառս
և ՚ի զօրուԹիւն բազկի իւրոյ երդնուին։ « ԵԹէ ոչ
ևս տացէ զցորեան քո և զկերակուր քո Թշնամեաց
քոց »։ Եւ չէ՛ս արդեւք. յայտ է Թէ ետ։ Մինչեւ սո՛ւտ
ինչ ասէր զերդումնն։ Այլ վասն պատժոյն նմանապոյնս
շղջէը զերդումնն [1], իսկ զբարեաց երդումնն ընդ-
հատ շղջեսցէ։ Ոչ եԹէ նա ինչ շղջեայ, այլ նոքա շղջե-
ցին զուխտն, զի չկացին ՚ի պատուէրսն։ Ոչ վասն այ-
նորիկ ժողովեաց զնոսա, զի դարձեալ ևս աւելի ամ
բարշտեսցին։

« Եւ ոչ ևս արբցեն որդիք օտարաց զգինի քո, այլ
որ ողորմեսցինն՝ կերիցեն և արբցեն ՚ի սրահս իմ
սուրբս »։ Տեսանէ՛ս, զի առնային բարիք նոցա՝ երևե-
լիք էն. և միտ դիր, զի յորժամ իմանալիս ինչ պար-
գևք խոստանայցէ, չկամանք օտար էն Հրեայքն։

« Երթայք գնացէ՛ք ընդ դրունս իմ, և հոլդեցէ՛ք
ճանապարհս ժողովրդեան իմոյ, և զքարինս ՚ի ճա-
նապարհէն ՚ի բաց ընկեցէ՛ք. առէ՛ք նշան ՚ի վերայ
հեԹանոսաց, զի ահաւասիկ Տէր լսելի արար մինչեւ ՚ի
ծագս երկրի »։ Ինձ այսպէս Թուի Թէ այս իմանալի
լիմն էցէ։ « Հոլդեցէ՛ք ճանապարհ ժողովրդեան Տեա-
ւրն »։ Տէ՛ս, ո՛րչափ անուանս դնէ նմա. քարինս ըն-
տրեալս, ասէ, կոչեսցի անուն նորա կաԹո՛ղ իմ, պա-

1 Ցօր. Ե... էպ ար... էպ. Ռ՚ՌՆ սո՛պ... ըղ... ան պատճոյն նմանա-
գոյնս ղջ...նն։ ԳուշակուԹեամբ լըացուցաք զԹերավանկ բառսդ՝
եղծեալս յապականուԹենէ ԹղԹոյն։

րիսպէք դրօշմեալք։ Եւ ո՛ւր կոչեցան նման այնպիսի ա-
նուանք. և ո՛չ իմանան Թէ այլ իմն յայտ առնէ այսո-
քիւք. զի վարս իմն պարկեշտս խնդրէ. և եԹէ չգը-
տանի ՚ի նոսա, ՚ի նոցա ծուլուԹենէ լինի։

ԳԼՈՒԽ ԿԳ

« Իսկ այս ո՛վ է որ գիմեալ գայ յԵդովմայ, կար-
մրուԹիւն ձորձոց իւրոց ՚ի Բոսորայ »։ Զի սովորու-
Թիւն է մարգարէիս՝ յորժամ զբաններ իւրոց Ճառէ՝
հարցանելով Ճառէ. զի ցուցցէ ԹԷ ոչ ինքն միայն
զարմանայ [1], այլ և զայլս զարմացուցանել կամի. որ-
պէս յորժամ վերագոյնն ասիցէ, ԹԷ Ո՞վ են սոքա որ
իբրև զամպս Թռուցեալ գան։ Զի յորժամ հաւատա-
րիմ կամիցի առնել զպատգամս Աստուած, ոչ միայն
՚ի մարգարէսն ցուցանէ զօրինակ իրացն որ լինելոցն
էցեն, այլ այլ իմն վարս հնարի ցուցանել. որպէս Ա-
մովսի ասէր զԱստուծոյ, ԹԷ Տէրն զՏէր, զի կայր ՚ի
վերայ անդամանդեայ պարսպի. և Դանիէլ յայլ կեր-
պարանս. և Միքիա ասէր. Տեսանէի զԻսրայէլ ցը-
րուեալ։ Տէ՛ս և ասա. « Իսկ այս ո՛վ է որ գիմեալ գայ
յԵդովմայ »։ Վասն... [2] ՚ի վերագոյնս Ճառէ, որ հան-
դերձեալ էին սատակել. և մանաւանդ այնպիսի դրա-
ցեաց՝ որ վիշտս և չարչարանս անցուցանէին ընդ ժո-
ղովուրդն։

« Տեսանէի այր և հանդերձ ԹաԹաւեալ. գօտի
ընդ մէջ իբրև հնձանահարի, որոյ հնձան կոխեալ
էցէ. և կարմրուԹիւն ձորձոց ՚ի Բոսորայ »։ Վասն այ-
նորիկ անտի երևէր, զի և տեղեաքն ցուցանէ զՀա-
րուածոն. որպէս յորժամ ասիցէ, ԹԷ Տեսանէի սան մի
՚ի հրատի, և երեսք նորա ՚ի կողմանց հիւսիսոյ. որ-
պէս Զաքարիա զձիան տեսանէր։

1 Զբառսն ՌՆ ոչ ինչ մեզ զարմանայ, այլ Ե, փոխանակ եղծեալ բա-
ւոյ ինչ օրինակին կարգեցաք կարծեօք առ ՚ի լրումն իմաստիցն։
2 Ցօր. Բառ. մի եղծեալ. Թուի լինել Եդոմայ կամ ոք։

« Գեղեցիկ պատմուճանաւ »։ Եւ զնաթրդ իցէ գե-
ղեցիկ այնպիսի Թաթաւեաղ պատմուճանաւ. զի գե-
ղեցիկ յայնժամ է պատմուճան, յորժամ նեղկիցի։
Այլ ընդ այն իսկ են զարմանք, զի Թէ չէր այնպիսի
ինչ, և ոչ զմարդարէն զարմացուցեալ էր. զի յորժամ
Աստուած զարմանալիս ինչ գործիցէ, դիւրութիւն
պատերազմին ցուցանէր [1]. և յարենէն՝ Թէ ոչ գինի
էր՝ որ կոխէր, այլ արիւն. և ոչ դոյզն հնձան, այլ զլի
կոխէր. և ոչ սակաւ ինչ ցայտեալ, այլ քաղ Թաթա-
ւեալ։

« Հնձան հարի, ասէ, միայն, և՛ի հեթանոսաց ոչ ոք
էր ընդ իս »։ Այսինքն՝ չեղէ կարօտ օգնականու-
թեան, չկոչեցի զոք զօտար ինձ՛ի թիկունս։ Զի ոչ
զհնձանէ ինչ քանք էին, այնու չայտ է, եթէ « ի հե-
թանոսաց ոչ ոք էր ընդ իս »։

« Կոխեցի զնոսա սրտմտութեամբ իմով, և ձմլեցի
զնոսա, և ի՛ջուցի զարիւն նոցա յերկիր» ։ Եւ ընդէ՞ր ար-
դեաք. « Զի հասեալ էր, ասէ, օր հատուցման նոցա,
և տարեկան փրկութեան »։ Զի՛ի նոցանէն հատու-

1 Այսպէս յօրինակին, ուր չայանապէս խառնակութիւն ի-
մասիոց երևի. և պատճառք, զի յանմտագրութենէ գալափարո-
ղին քանի մի տողք՛ի բաց Թողեալ են. ուր Գէորգ Սկևռացի և Դա-
ւիթ քահանայ՛ի քաղուածոյ մեկնութիւնս իւրեանց ետսեալ,
առ սոյն բնաբան մարգարէին, յՈսկեբերանէ առեալ ասեն. « Զի
յորժամ Աստուած զարմանալիս ինչ գործիցէ, զղևարդն մի հար-
ցաքննեացուք։ Եւ բռնն է ջջռոնեամբ. որ է հզօր և համեստ. զի այն-
պիսի ինչ էր երևուժն երեսացն։ Ապա պատասխանի առնէ առ հար-
ցանողն. Ես խօսիմ ջարդարութիւն և իբաւոնս էրիոնեան. այսինքն՝ առ-
նեմ. զի խօսելն այն՝ զգործն իսկ չայտ առնէ. քանզի Հզօր են գործք
պատուամաց նորա, ասէ Յովել։ Իսկ ընդէ՞ր ևրդրբ էն յորէ ևռ։ Ոչ արիւն
միայն էր և ոչ գինի սուրբ, այլ՛ի մէջ երկոցունց գունոցն. որ և
յորդորէ զմարգարէն՛ի հարցանել. զի՛ի հնձանահարացն ձևս՝
զդիւրութիւն պատերազմին ցուցանէր, և այլն » (Գէորգ Սկևռացի)։—
« Եւ երբ Աստուած զարմանս գործէ, զղևարդն՛ի բաց պարտ է
ընկենուլ։ Եւ բռնն, ասէ, ջջռոնեամբ. այսինքն՝ հզօր և համեստ.
այնպէս երևէր երեսացն, սաստիկ և հանդարտ։ Իսկ նա հարցմանն
տայ պատասխանի, եթէ ես խօսիմ ջարդարութիւն և իբաւոնս էրիո-
նեան. այսինքն է՝ առնեմ. զի խօսքն Աստուծոյ՝ գործ է յայտնեալ.
Հզօր են, ասէ, գործք պատուամաց նորա։ Իսկ ընդէ՞ր, ասէ, կարմիր են
ևռ էրբև հնձանահարի։ Ինքն ցինքն հարցանէ, և պատասխանի տայ
ինքեան. զի ոչ արիւն միայն էր և ոչ գինի սուրբ, այլ՛ի մէջ նմին
երկոցունցն գունոց. որ յորդորէր քննել և հարցանել. զի՛ի հնձանա-
հարացն ձևս՝ և զդիւրութիւն յաղթութեան ցուցանէր, և այլն »
(Պատիկ ևռհանայ)։

ցումն առնոյր, և զորս նեղկինն՝ նոցա փրկութիւն առ-
նէր։ Տեսանե՞ս, զի ինքեանք եղեն անձանց պատճառք։
Եւ զի մի յորժամ ցասումն լսիցես, կարիս ինչ անհան-
ճարականս կարծիցես Աստուծոյ, յարէ՛ի նոյն զուղիղ,
զարդար դատաստան, Թէ և յերկարեաց ածել զպա-
տուհասն. ասէ. « Զի հասեալ է օր հատուցման նո-
ցա »։ Եւ զի ցուցցէ եթէ վասն Հրէից պատժին, ասէ.
« Եւ տարեկան փրկութեան »։ Զոր օրինակ և՛ի դա-
տաստանին՝ Թէնամէոյն պատիժքն և մերս արութիւնք
միանգամայն յայտնին, նոյնպէս և անդ զմանս հար-
կաներ և զմանս կեցուցաներ. զի ծանիցեն եթէ առ
երկոսին զօրաւոր է. և ոչ որպէս արտաքին Յունաց
չիմաստուն խմաստութիւնքն դէս իմն համբաւեն, Թէ
կէսքն բարի և՛ եթէ գիտեն առնել, և չար ինչ ոչ. և
կէսքն չար և՛ եթէ գիտեն առնել, և բնաւ ինչ բարի.
Թէ կէս իմն զօրութիւն ունիցին երկոքեան կողմանքն,
նա և ոչ գկէսն։ Իսկ ես « Հնձան հարի միայն, և կո-
խեցի սրտմտութեամբ և բարկութեամբ »։ Յիրաւի
իսկ անուանի ցասումն և բարկութիւն. ցասումն՝ զոր
ունէր՛ի վերայ Հրէից. նաև լաւ ևս է՝ զի լինիցի նոցա
այն՛ի խրատ, ըստ առաքելական բանին, Թէ Մի՛
հպարտանար, այլ երկիր. զի այլոց չարչարանաւքն նոքա
զգաստանայցեն. քանզի բարութիւնք միշտ սովոր են
յուլացուցանել զվայելչութիւն, և՛ի ստահակութիւն
ածել։ Իբրև սանձս ինչ՛ի բերան դնէր զդրացեայն
նեղութիւնս. քանզի սովոր են վիշտք դրացեայ՝ ցա-
ծուցանել՛ի չարեաց և զանօսիկ՝ որ՛ի կարի դիւրու-
թեան իցեն. որպէս և ասեն իսկ բազումք՛ի բանից
կարգի, Թէ պարտ է երկնչել՝ յորժամ զդրացեայ ինչ
չար տեսանիցեմք։

Միտ դիցուք և այլասացիկ բանիցն. « Իսկ այս ոմն է
որ դիմեալ գայ Եդովմայ »։ Կրկին է մարգարէու-
թիւնն. արիւնագոյն երևէր նոցա Քրիստոս, քանզի և
ասէ իսկ, եթէ Ոչ ոք կապիցէ զՀզօրն, եթէ ոչ նախ
զկազմածն նորա Հանիցէ՛ի նմանէ. և դարձեալ, եթէ
Քաջալերեցարուք, ես յաղթեցի աշխարհի. և այլուր,
եթէ Քարոզել գերեաց զթողութիւն, և Հանել՛ի
բանդէ զկապեալս. և այլուր, Թէ Դրունս պղնձիս և
զնիգս երկաթիս խորտակեաց. և այլ ևս ինչ սոյնպի-

սիք, որ ցուցանեն զյաղթութիւն նորա, որ ցուցանեն զնա արիւնագոյն. որպէս և մարգարէն Յակովբ ասէր, թէ Լուսասցէ ի գինի զպատմուճան իւր, և յարիւն խաղողոյ զձորձս իւր: Եւ քահանայն Եմաւոն բազում ինչ ակնարկէ վասն պատերազմացն, եթէ Դա կայ ի գլորումն և ի կանգնումն բազմաց. և աստ այնպէս իմն երևի թէ զբազումս կոտորեալ՝ ելանիցէ Յեգովմայ. քանզի Բեթզահէմ Յեգովմայեցւոց կոչմանէն կայ: Եւ միսն իբրև զինեալ իմն ցուցանէ, թէ Ա՛ծ զսուր քո ընդ մէջ քո հզօր՝ վայելչութեամբ և գեղով քով. զի ոմն այնպէս գձուձ ինչ համարեսցին, որպէս մարգարէն վերագոյն ասէ, եթէ Նուազ է տեսիլ նորա քան զորդւոց մարդկան: Զի ոչ մի աղգ երևեր առնեցուն, այլ այլազգ Հրէից երևեցաւ, և այլազգ առաքելոցն, և այլազգ մարգարէիցն. այլազգ Յակովբեանց՝ ի լերինն, և այլազգ Կղեոպեանց, և այլազգ Պետրոսեանց, որ ասէրն Յոհան. Տէր է այն. և այլ ազգ Թովմայի, և այլազգ յառաջագոյն Մարիամայ և այլազգ յետ յարութեանն. զոր մերթ պարսիլապան կարծէր, և մերթ ռաբունի կոչէր. և նա ասէր. Մի՛ մերձենար առ իս. իւրաքանչիւր ըստ անցնելոյ հաւատոց չափէր զանձն: Որպէս և Հայր նորա, զի մերթ հրով երևէր, և մերթ իբրև զծեր հինաւուրց, ըստ պատշաճի իրացն՝ որ առաջի կայէին. ոչ թէ զնոսա թէ ինչ փոխէին, քաւ լեցի. այլ նոյն տեսիլ Տեառնէն էին [1], և այլազգ երևէին. նոյնպէս և աստ ըստ պատշաճի տեսողացն փոխէր զկերպարանս:

« Իբրև զի գեղեցիկ է, ասէ, պատմուճանաւ իւրով »: Մարթի և այլազգ լինանալ զպատմուճանն, այսինքն՝ զեկեղեցի, որ գեղեցկացաւ մարգասիրութեամբ նորա. ըստ այնմ, եթէ Զամենեսեան զնոսա զգեցջիր դու. քանզի մեք նմա հանդերձ եմք, և նա մեր. չհամարի բաւական զի օրինակ, այլ որ ինչ նայն՝ մեր է, զնոյն և զմեզ իւր կամի. Հանդերձ ձեր եմ, ասէ, այլ և դուք իմ հանդերձ. զգեցայց, ասէ, զձեզ, որպէս ոք զի ածիցէ միջատատ զմիջով. և դարձեալ ասէ. Մարմին էք՝ ի մարմնոյ նորա և ոսկր յոսկերաց նորա: Ես, ասէ, գլուխ եմ, և դուք այլ ևս անդամք: Նա և այլազգ ևս, եթէ ես տուն ձեր եմ, և դուք իմ տաճար. եթէ Որ յիս բնակէ, և ես ի նմա բնակեմ: դուք գիս ուտէք՝ և ես զձեզ. Իմ կերակուրը և եթէ այն է, ասէ, զի արարից զկամս Հօր իմոյ. և Բարեխօս լինի վասն մեր:

« Բուռն է զօրութեամբ »: Ոչ զբռնութիւն ինչ ասէ, այլ զզօրութիւնն: Զուղղութիւն իրացն յայտ առնէ. եթէ գիրսն ոք քննեսցէ՝ բռնութեամբ են. բայց զօրութիւն այնը՝ որ գիրսն ի գլուխ եհան, ոչ եթէ բռնութիւն ինչ էին [1]:

« Ես, ասէ, խօսիմ զարդարութիւն և գիրաւունս փրկութեան »: Եւ ոչ ասաց թէ ած էին: Այնպէսիցն հերձուածողք, որ զէութիւնն քննեն: « Ես, ասէ, խօսիմ զարդարութիւն և գիրաւունս»: Զի ցուցցէ եթէ էութիւնն առանց քննելոյ է: « Ես խօսիմ զարդարութիւն »: Այսինքն՝ առնեմ դատաստան փրկութեան. և դատաստան նորա ոչ դատապարտութեան ինչ է, այլ փրկութիւն. ի մեղաւորաց, ասէ, արդարս առնեմ: և կիսոց դատաստան ի փրկութիւն է, և այլոց ի դատապարտութիւն:

« Ընդէր իսկ կարմիր են ձորձք քո: Հնձան, ասէ, հարի միայն »: Գիտեք իսկ խորհրդոյն միջամուխքդ: Այո՛. « Հարի հնձան »: Եւ արդարև միայն Աստուծոյ է այսպիսի գործ, և ոչ այլ ուրուք, ոչ մարդոյ և ոչ հրեշտակի: « Սրտմտութեամբ խմով », ասէ: Սրտմտութիւն առ թշնամիսն, առ սատանայ և առ մահ: Եւ արդ տեսս, մարգարէն զնաւրդ գոհանայ վասն հարուածոյ թշնամեացն, եթէ լինի արժանի այնմ առնային, և աղաչէ զի պատիժքն բառնայցեն ի ժողովրդենէն, որպէս Երեմիա և Դանիէլ և այլքն ամենեքեան:

« Զի ղողորմութիւն Տեառն յիշեցի », ասէ: Եւ երբեք զի մոռանայր արդեւք մարգարէն. և ոչ ուրեք. այլ զմոռացելոցն յիշեցուցանէ, եթէ մեծաւոր իրքս աղգական են առաջնոցն, զի գիտեն իսկ զնոսին

1 Զբառսն՝ թէ՛ Տեառնն էին, գուշակօրէն եդաք ի տեղի եղծեալ ինչ բառից օրինակին:

1 Յոր. Բառնութիւն էիջ:

Ելախտիս և զառաջինան յիշեցուցանել. ինքն, ասէ, տայ ինձ իշխանութիւն և պետութիւն՝ պատմել զքանչելիս նորա։

« Եւ զքաջութիւնս Տեառն յուշ արարից, զօրհնութիւնս Տեառն՝ ի վերայ ամենայնի զոր հատուցանէ մեզ. Տէր գառատուր բարերար՝ ի վերայ տանն Իսրայէլի »։ Եւ այս միայն արգելք. այլ զի և այսուիկ [1] աւելի էիցէ. ոչ միայն այսուիկ, այլ և ամենայն իրօք, և յաձախագոյն սովաւ, զի ըստ մարդասիրութեանն գատի. քանզի և ասէ իսկ, թէ Հատուցանէ մեզ ըստ ողորմութեան իւրում, և ըստ բազում մարդասիրութեան իւրոյ ածէ՝ ի վերայ զչարիս և զբարիս, ոչ առ չարութեան ինչ, այլ զերկոսեան՝ ի բարերարութենէ. զի որպէս յարքայութենէ բարերարութիւնն երևի, նոյնպէս և՝ ի զէհենէ. և ուր և խնդրեսցես՝ ի բարերարութենէն Աստուծոյ գտանի։ Եւ չքուխցի՞ քեզ թէ առ բարերարութեանն արար զԱդամ, և պարգևեաց նմա ղդրախտն, և արար արժանի ընդ իւր խօսելոյ. և ոչ միայն այնչափ, այլ և հանելն յականէ, և՝ ի դրախտէն մերժելն՝ և այն ըստ բարերարութեան էր. զի թէ իրքն հակառակ լիցէ, այլ իւրաքանչիւր ըստ իւրաքանչիւր վախճանի վճարեցան։ Զի Հրէից ոչ միայն՝ ի գերոյն գառնալ, այլ և գերին երթալ ըստ բարերարութեան էր։ Մեք երբեմն բարիք և երբեմն չարք լինիմք, քանզի ընդ բազում փոփոխմանիք կամք, և ոչ ուղիղ մտօք գործեմք զամենայն. իսկ նա հանապազ բարերար է, զի բնութեամբ իսկ ունի զբարերարութիւնն, զի և՝ ի տանջանսն և՝ ի պսակելն նոյն բարերարութիւն երևի. զի թէ և հակառակ լինէ իրքն՝ որ երևեսցին՝ գործեսցին, այլ ոչ՝ ի նորա լինէ մարգասիրութենէն, այլ յայնցանէ՝ որք ան. . . . . այնպիսի . . . . . որպէս արեգակն զի զկէս . . . . եղուցանէ [2]. և հուր՝ ի լոնաւ նիւթոյ և՝ ի կակղոյ՝ ցամաքս

1 Զբառագ արգելս. այլ զի և այսուիկ՝ գուշակօրէն կարգեցաք փոխանակ անընթեռնլի բառիս օրինակին։

2 Յօր. Կրկին տողք խափառ անընթեռնլիք յապականութենէ թղթոյն. ամբողջութիւն իմաստիցն թերևս այսպէս կազմիցի. Այս յայնցանէ՝ որ անխորտակ փափանին, և առնեն զանձինս այնպիսի իրաց արժանիս. որպէս արեգական զի զկէսս լուսաւորէ, և զչիւղս ալս ցաւեցուցանէ։

և խիստս առնէ. զի է ինչ՝ զոր խեցի առնէ, և է ինչ՝ զոր թանձր, և է ինչ՝ զոր կակուղ. որպէս զսկի՝ զի հալէ, և զկաւ խեցեցուցանէ, և երկոքին ըստ ջերմութեան գործէ։ Նոյնպէս և Տէր արար զգեհենն և զարքայութիւնն նովին միով մարդասիրութեամբ։ Եւ զի՞նչ իսկ ասիցեմ. դիւրագոյն է հրոյ զջերմութիւնն մերկանալ, և ոչ Աստուծոյ զբարերարութիւնն։ Զարարածոցս զիարդ և լցէ խօսիմք՝ Աստուծոյ կամաք, իսկ զԱստուծոյ ոչ բանիւք և ոչ մտօք զհանգամանս ինչ կարեմք առնուլ. և յիրաւի ասէ, թէ Ես նոյն եմ. ոչ զբնութենէն ինչ ասէ, այլ զբարերարութենէ և զնամոյ։ Եւ արդ, ոնց նմանեցուցանեմ զսէրն. Որպէս ուրախ լինիցին փեսայ ընդ հարսին, նոյնպէս ուրախ լինիցին՝ ի ձեզ։ Իսկ զՀօր և զմօր ասիցես. այլ չնմանէ ինչ. Մարմինք էք, ասէ, ի մարմնոյ իմոյ և ոսկր յոսկերաց իմոց։

« Եւ ասէ. Ժողովուրդ իմ էք և որդեակք, և ոչ անարգեսցեն զիս »։ Իսկ այլքն ասեն, թէ ոչ անարգեսցեն զիս։ Այսինքն, պարտ իսկ է իբրև որդւոց՝ բարիս գտանել յինէն. կամ որպէս այլք ասեն, եթէ ոչ անարգեսցեն զիս։ Զասեմ, ասէ, եթէ բարիս ինչ գտին յինէն, այլ զի որդիք էին, չէր պարտ Թողուլ նոցա զՀայրն « Եւ եղև նոցա փրկութիւն յամենայն նեղութենէ »։ Ոչ եթէ՝ ի կիս նեղութենացն փրկեաց, և՝ ի կիսոյն ոչ. զի յորժամ կարելն և կամելն՝ ի միասին իցէ, չիք ինչ որ արգելուլ կարիցէ։

Այրդ տէս, զիարդ [1] ի դէպ վարկանի զերախտիս։ « Զի ոչ առաքեալ ոք, ասէ, և ոչ հրեշտակ, այլ ինքնին Տէր փրկեաց զնոսա »։ Մեծ է փրկել, այլ աւելի յայնժամ՝ յորժամ ինքնին փրկեսցէ. զոր օրինակ և Պաւղոս ասէր. Ոչ միայն այսչափ, այլ և պարծիմք ևս՝ ի Տէր։ Ոչ միայն Պաւղոս, այլ և Մովսէս ասէր. Թէ ոչ երթիցես ընդ մեզ, մի հաներ զմեզ աստի. զի թէպետ և փրկութեանն հասարակ խոստանայր, սակայն պատիւն ոչ այնպէս ինչ էր։ Տէս, որպիսի համարձակութեան արար զնոսա արժանի.

1 Յօր. Զի յորժամ ի . . . սէն էիցէ, չիք ինչ որ արգելս . . ցե . . . ր՝ ի դէպ։ Ըստ պահանջելոյ կարգի բանիցն զիարսին լացուցաք։

« Ա՛յլ ինքն Տէր, ասէ, փրկեաց զնոսա »: Եւ զպատճառան ասէ, Թէ « վասն սիրոյ և վասն խնամելոյն իւրոյ ». զի ցուցցէ Եթէ ոչ նոքա արժանի էին, այլ « Ինքն փրկեաց զնոսա և ընկալաւ զնոսա և բարձրացոյց »: Եւ ոչ միայն փրկեաց, որ խնամոյն երևէր, այլ և բարձրացոյց [1], այսինքն՝ փառաւորեաց զամենայն աւուրս յաւիտենից:

Եւ նոքա զինչ ընդ այսր. որոց և առանց այսր իսկ իբրև որդւոց զՀայր պարտ էր պատուել. « Նոքա, ասէ, հեստեցան, և բարկացուցին զՀոգին Սուրբ նորա »: Եւ արդ, զՀոգւոյն ասիցէ, Եթէ զարբանեակ ումեքէ, որպէս հերձուածողքն հայհոյեն: Եւ յիրաւի իսկ կոչէ Հոգին Սուրբ, զի Հոգւոյն եղև ամենայն ինչ, և վասն նորին մարգարէքն և Մովսէս:

« Եւ դարձաւ նոցա ի Թշնամութիւն [2] »: Տէս, զի՜ արդ ինքեանք իսկ եղեն պատճառք Թշնամութեան: « Ինքն Տէր ետ ընդ նոսա պատերազմ »: Եւ այս յայժ իսկ սիրոյ և առաւել գթոյ էր. զի Թէ մինչ չարքն էին՝ ներէր նոցա աճել ի խրատ, զի Թէ չէր անսայցեաւ՝ վաղուց կորուսեալ և եղծեալ էին. և յայտ է զի Թշնամին լինել՝ չէր ինչ ընդհատ ի սիրելոյ [3] փրկութեան աղագաւ. վասն այնորիկ եղև Թշնամի, զի մի՛ հանապազ Թշնամի կացցէ. վասն այնորիկ մեհենաց, զի դարձեալ միւսանգամ նորոգեսցէ:

« Եւ յիշեաց զաւուրսն յաւիտենից »: Աւուրս յաւիտենից զնախկին աւուրսն կոչէ, զՄովսեսի և զժողովրդեանն: Եւ այն իսկ առաւել աճ զնոսա ի Թշնամութիւն և ի պատերազմ, Եթէ ուր են երախտիքն՝ զոր արար ընդ հարսն ձեր և առ ձեզ: « Որ է, ասէ, որ եհան յերկրէն զՀովիւն խաշանց. ուր է, ասէ, որ եդ ի նոսա զՀոգին Սուրբ »: Ա՛յսինքն ի Մովսիսի և յիւթանասանն ծերսն: Եւ կամ զօրութիւնս ինչ հոգևորս ի ժողովուրդն գործէին, ասիցէ: Եւ բազում ասիցէ զՀովիւն եհան. զի նովաւ իսկ եհան զամենայն

1 Ցօր. Եւ ոչ միայն փրկեաց, որ խնամոյն երևէր, այլև բարձրացոյց. յօտար գրչէ:

2 Ցօր. Թշնամութիւն:

3 Ցօր. Զի ինչ ինչ ...ն էին... բայ, զի ինչ էին ... եաւ ... բռնեալ և եղծեալ ... զի ինչ... լինելն էր ինչ ընդ... իրեսյ:

նեսին. և քանզի փախեաւ նա ի Մադիամ, ասէ՝ Եթէ Աստուած եհան զնա անտի: Եւ դարձեալ քանզի կարծէին Եթէ Մովսէս եհան զնոսա անտի և ոչ Աստուած, զի և ասէին իսկ, Եթէ Մովսէսն այն՝ որ եհան զմեզ յերկրէն Եգիպտացւոց. զի մի՛ ի նոյն միտս հաստատեալ կացցեն՝ Եթէ յԵգիպտոսէ Մովսէս եհան և ի Բաբելոնէն Յեսու Յովսեդեկեանց, ցուցանէ Եթէ այնչափ հեռի էր Մովսէս ի հանելոյն, զի ինքն իսկ Աստուածով էլ անտի:

« Որ եդ ի նոսա զՀոգին »: Եւ տեսանեմք զի ոչ ինչ հաղորդեցան ընդ Սուրբ Հոգւոյն. բայց սակայն ի նոսա էր, քանզի ի գլխաւոր նոցա ի Մովսէս էր Հոգին Սուրբ, և յիւթան [1] . . . . . Հոգին Սուրբ . . . . . շահ ի պէտս նոցա: « Որ եհան աջով իւրով զՄովսէս »: Եւ ոչ վայրապար ինչ կրկնէ դարձեալ զՄովսիսի հանելն, այլ զի զպինդ բարբառ նոցա կարձեսցէ. և առենայն ուրեք ձառէ Թէ ես հանի զնոսա: Պատմէ և զգործսն որ ինչ գործեցան յանապատին. « Բազուկ փառաց նորա, ասէ, յաղթահարեաց զջուրսն առաջի երեսաց նոցա, և արար անուն յաւիտենից. անցոյց զնոսա ընդ անդունդս՝ որպէս ձի ի ընդ անապատս. և Հոգի Տեառն և առաջնորդեաց նոցա »: Ա՛յլ և զՄովսէս Հոգևոր իմն կոչէ: « Ա՛յսպէս, ասէ, աճեր զժողովուրդն քո առնել քեզ անուն փառաց »: Չի Թէպետ և նոքա անարժանք էին, սակայն վասն քո, ասէ, արարից. քանզի և նոքա վասն նորա փրկեցան:

« Դարձ յերկինից, և տես ի բնակութենէ սրբոյ փառաց քոյ »: Զառնեմք ինչ, ասէ, ապաստան ի տաճարն, չմտանեմք ի յայտնութեանցն տեղի, ի յերկինից կոչեմք զքեզ, զի այն է տաճար և անդ բնակութիւն քո: Եւ վասն այնորիկ ասեն մարգարէքն յերկինից, զի ցուցցեն Եթէ ոչ ի տաճարին միայն փակեալ կայր:

« Ո՞ւր է նախանձ քո և զօրութիւն և բազում ողորմութիւն »: Զոյն և Դաւիթ ասէր, Եթէ Ո՞ւր են ողորմութիւնք քո, Տէր, առաջինք. զի մի՛ յանձանց

1 Ցօր. Կրկին տողք խապառ անհետացեալք:

լինչ ուղղութիւնս ապաստան լինիցին, այլ յՍատանայ ծոց ողբմութիւնն։ Բայց և զայն դիտել պարտ է, զի թէպէտ և բազում ողորմութիւն է Սատանայ, այլ ընտրութիւնք կան յողորմութիւնսն[1] . . . . . ողորմելոց . . . . . խնդրել եթէ որ . . . . երկայնամիտ լինէր և արդ· այլ չերեմ այժմ, քանզի մինչև ցայժմ ներեցի, և չառէք ’ի միտ։ «ի ժամանակին, ասէ, զի ներկիր մեզ». և մեք լինչ ոչ օգտեաք։

«Զի դու Տէր ես մեր և Հայր· զի Աբրահամ ոչ լինչ գիտաց զմեզ, և Իսրայէլ ոչ ծանեաւ զմեզ»։ Տեսանէ՞ս, որչափ շահ եղև ’ի չարածելոց ազգականութեամբն. ’ի նմանէ եմք, ասէ, այլ ոչ լինչ ծանեաւ զմեզ։ «Եւ դու Տէր ես, ասէ, և Հայր մեր, փրկեա զմեզ· ’ի սկզբանէ անուն քո ’ի վերայ մեր». որպէս ծառայ մի դնեալ վաղուց կոչեսցի յանուն տեառն իւրոյ։ Եւ ոչ ասացէ եթէ զանուն քո կոչեմք, այլ թէ է ես ’ի մեզ անուն քո. նա այն իսկ է պատճառք պատժոյն, զի եր ’ի նոսա անուննն, և անարգէին։

«Զի՛ մոլորեցուցեր զմեզ, Տէր, ’ի ձանապարհէ քումմէ, և խստացուցեր զսիրտս մեր չերկնչել ’ի քէն»։ Կամ վասն երկմտութեանն ասէ, կամ վասն պատժոյն. որպէս և այլուր, եթէ խոտորեցուցեր զշաւեղս մեր ’ի ձանապարհէդ քումմէ. այսինքն՝ մերժեցեր, չօտաը չերկիր ընկեցեր, զրկեցեր զմեզ յօրինացն, և ’ի հրամանացն օգտից, խոտեցեր զծառայութիւն մեր, չկամիս առնուլ ’ի մէնջ պաշտօն։

«Դարձ վասն ծառայիցն քոց»։ Վասն արդարոցն և հեղոցն։ «Զի սակաւիկ լինչ և մեք ժառանգեսցուք զչեռն քո սուրբ»։ Տե՛ս, որչափ կարօտէին վայրացն Երուսաղէմի, զի թէ ոչ զամէնն, գոնեա սակաւ լինչ ժառանգեսցեն[2]։

«Հակառակորդք մեր նեղեցին զմեզ, կոխեցին ըզսրբութիւնս քո»։ Զի թէպէտ և մեք անարժանք իցեմք, այլ վասն նոցա խրոխտանացն արա ողորմութիւն։ «Եղեաք մեք իբրև զառաջինն, յորժամ ոչն տիրէին մեզ, և ոչ կոչեցաւ անուն քո ’ի վերայ մեր»։ Ոչ միայն վասն մեզաց, այլ և վասն ’ի ձեռաց թողլոյ։

1 Յօր. Երեք տող ջնջագիր անընթեռնլի։
2 Յօր. Վայր . . . էն, գոնեա սակաւ . . . Հակառակորդ։ Ջնջագիրն ըստ պահանջելոյ կարդն բանիցն եղած։

ԳԼՈՒԽ ԿԴ

«Եթէ բացցես զերկինս՝ դողումն կալցէ ’ի քէն զերկիրս»։ Տե՛ս, զիարդ ամենայն ուրեք զզօրութենէն ձառէ, եթէ մեծ է և զօրաւոր, և զամենայն զոր և կամի՝ կարող է առնել։ «Եթէ բացցես զերկինս՝ դողումն կալցէ ’ի քէն զերկինս, և հալեսցին իբրև զմոմ առաջի հրոյ։ Յաւիտենից ոչ լուաք, և ոչ աչք մեր տեսին այլ Սատուած բաց ’ի քէն»։ Եւ ոչ տեսին արդեւք. ոչ, ասէ. զի թէպէտ և մոլորեցաք և երկիր պագաք օտարոտի աստուածոց, այլ ոչ տեսաք լինչ այնպիսի Սատուած։

«Զի գործք քո ձշմարտութեամբ են, զոր առնիցես որոց համբերեն քեզ»։ Ողորմութիւն ձշմարիտ են վերակացութիւնք, և մանաւանդ այնոցիկ՝ որ համբերիցեն. թէպէտ և ոչ առժամայն, սակայն առ յապա։ «Եւ ընդ առաջ լինցի ողորմութիւն այնոցիկ՝ որ առնիցեն զկրաւունս, և յուշ լինցի նոցա ձանապարհքն քո»։ Տեսանէ՞ս, զի ոչ վայրապար ումեք, այլ այնոցիկ՝ որ յիրաւունն հայիցին։

«Արդ ահա դու բարկացար, և մեք մեղաք. վասն այնորիկ իսկ և մոլորեցաք»։ Այսինքն՝ զի դու բարկացար մեզ, և մատնեցաք ’ի գերութիւն . . . . . հանդերձ ծնելոց . . . . . բնութեամբ մերով զաւ . . . . . պահանջումն առնէ . . . . . չէք զգ որ արդար գտանիցի . . . [1]։ «Դու բարկացար, և մեք մեղաք»։ Եթէ կամիցիս հատուցանել ըստ մեղացն, պարտական իսկ եմք։

«Ոչ ոք իցէ որ օգնական լինիցի կարգալ առ քեզ, և ոչ՝ որ կարգայցէ զանուն քո, և ոչ՝ որ յիշեսցէ ապաստան լինել առ քեզ· զի դարձուցեր զերեսս քո ’ի մէնջ»։ Եւ զոր ասէն՝ այսպիսի լինչ է, եթէ ’ի բարկանալն

1 Յօր. Զորք տողք ջնջագիր, անընթեռնլի։

քում զարհուրեցուցեր զմեզ, և ևս յետս տարար, զի չիշևեմք մօտ գալ։ « Մատնեցեր զմեզ վասն մեղաց մերոց »։ Ա.յս ոչ յերեսաց մարգարէին է, այլ յերեսաց ժողովրդեանն. զոր ՚ի դէպ էր ասել, եթէ վասն զի բարկացար՝ ևս առաւել մեղաք. ընդ վայր եհար, չառնէ ինչ փոյթ։

« Եւ արդ, Տէր, Հայր մեր դու ես. մեք կաւ եմք »։ Զոր ինչ ՚ի դէպն էր ասել՝ չիշեաց ասել, եթէ դու Հայր ես և մեք որդիք. այլ քանզի զդարմանն կաւ մեցաւ հնարիւք յանձն ձգել, ասէ. « Դու, Տէր, Հայր մեր ես »։ Եւ զի զակնածութիւնն և զհնազանդութիւնն յուցանիցէ, ասէ. « Մեք կաւ եմք, և դուք ձեռաց քոց ամենեքեան ». ուրպէս և քեզ կամ լիցէ՝ զայն արա։ « Մի բարկանար մեզ յոյժ, և մի ՚ի ժամանակի յիշեր զմեզ մեր »։

Ա.պա ապաստան լինելին ՚ի տաճարն և ՚ի տեղին սուրբ. « Քանզի փառք մեծամեծք, ասէ, վերացան ՚ի մէնջ, և դու ան [1] . . . . . .

. . . . . .

. . . . . .

. . . . . .

1 Մինչև ցայս վայր օրինակս մեր (Գչ. ԿԴ. 10–12). ձեռագեալքն պակասին. այն է մեկնութիւն երկուց վերջին գլխոց մարգարէութեանն Եսայեայ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

ՀԱ.ՏՈՒԱ.ԾՈՅ

ՄԵԿՆՈՒԹԵԱՆՆ ԵՍԱՅԵԱՅ

ԳՏԵԼՈՑ Ի ՁԱՌԸՆՏԻՐՍ ՎԱՆԱՑՍ, ԲԱՂԴԱՏԵԱԼ ԸՆԴ ՕՐԻՆԱԿԻ ՏՊԱԳՐԻՆ ՄԵՐՈՑ

Ա. ՀԱ.ՏՈՒԱ.Ծ

Զի եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն Տեառն։ — Ես. Բ. 2։

Տպագիրն էջ 1–6

Գ.տանի հատուածս յերիս ձառընտիրս, այն է ՚ի ձառընտիրսն Գ. ԺԹ. ԻԹ. որպէս հաւանական երևի դաղափարեալս ՚ի միոջէ ևեթ աղբերէ. ընդհանուր տարաձայնութիւնս նոցին ընդ օրինակի տպագրութեանս՝ կարդեացուք ՚ի տող, նշանակելով զիւրաքանչիւր ձառընտիրսն նշանագրով իւրեանց և զհամաձայնութիւն երեցունցն՝ տարաձայն ՚ի մերմէ օրինակէս՝ տառիւքն ձձ։ — Ի ձառ. ԺԹ. յանուն Միքիայ մարգարէի ընծայի պատառիկս. և զի բնաբանս այս « Զի եղիցի յաւուրս յետինս յայտնի լեառն Տեառն » դոյ յեսայի և ՚ի Միքիա (Դ. 1–3), վասն այնորիկ թեև և դրչին չիսոթեալ զանուանան։

Ի սկզբանէ երեքին ևս ձառընտիրք քանի մի տողս աւելի ունին քան զտպագիրս մեր, այսպէս.

« Զի եղիցի, ասէ, յաւուրս յետինս յայտնի լեառն » Տեառն »։ Տեառնեա զաստուածութիւն մարգարէին, » զի ոչ միայն զիրան ասէ, այլ և զժամանակն նշանա-

» կէ, զոր և Պաւղոս ասէ, թէ ցորժամ եկէն լրումն ժա-
» մանակաց. և՝ի միւսում վայրկ, թէ Տեսչութիւն կա-
» տարման (ժամանակաց ». — աստի սկսաւնի օրինակ
տպագրիս) :

ՏՊԱԳԻՐՆ	
էզ	տող
1	5	՚ի Գ. և ԺԹ. յիք աղեղունս լարիցեն, և ՚ի Գ. յիք գեղարդունս չողացուցանիցեն։
	8	ԻԹ. լերինն ոչինչ կարիցեն առնել։
	10	ԺԹ. և նոցա ոչինչ վնասիցեն։
	13	ԻԹ. հիւանդացան, զամենայն հնարս հնարեցան. քանզի նոր իսկ և չքնաղ են յաղթութեանս կերպարանք. այլ միայն միայնոյ Աստուծոյ մեծի և հզօրի։ — Գ. հիւանդացան, զամենայն հնարս հնարեցան, և ՚ի չարչարելոցն յաղթահարեցան։ — ԺԹ. այլ միայն մարդասիրին Աստուծոյ։
	17	ԻԹ. ոչ զի յաղթեաց, հալածեալ մերժեալ, և ոչ նուաղեալ. այլ ևս քան զևս աճէ և բազմանայ։ — ԺԹ. և ոչ միայն չնուաղեցաւ, այլ ևս քան զևս աճէ և զօրանայ։
2	4	ՃՃ. որպէս և անդամանդ առ երկաթ ցուցանէ զհանդէս։
	9	Գ. առնու յանձն հաւանել Հրեայն, անդամին անճամբն յանձին առեալ զյանդիմանութիւն։ — ԺԹ. առնու յանձն հաւանել Հրեայն ՚ի միւսաշրջիկ այլակերպ յորջորջմանէս, և անդամին։ — ԻԹ. առնու յանձն Հրեայն հաւանել, ՚ի մի միւսաշրջիկ յորջորջմանէս՝ անդամին։
	13–29	Պակասիւ ՚ի ՃՃ։
	30	Գ. ԺԹ. այլ անուամբք նշանակեցան։ — ԻԹ. այս ամենայն անուամբք միայն նշանակեցան։
	32	ՃՃ. զանչարժութիւնն, զանմեղութիւնն, զբարձրութիւնն յորջորջմամբ։
	36	Գ. ոչ եթէ բանիւ լինչ կամ մեկնութեանց պէտք են։ — ԺԹ. ոչ բանիւ մեկնութեան պէտք են։ — ԻԹ. ոչ բանիւ լինչ յայտնութեան պէտք են։
3	2	ԻԹ. զերք եկեղեցւոյ պայծառագոյն և լուսաւորագոյն։

ՏՊԱԳԻՐՆ	
էզ	տող
3	8	ՃՃ. և որպէս տաճար մի... և սա յայտնի եղև։
	17	ՃՃ. եա ՚ի ձեռս։
	18	ԻԹ. և առաւելագոյն գոտաւ։
	19	ՃՃ. զնդիւք, հաւատացելոցն բանակօքն։
	22	Գ. քան զերկինս երկնից։
	29	ԻԹ. քան զսպանողսն հզօրագոյն գոտան։
	33	ԻԹ. և ևս յայտնագոյնս ասէ զմարգարէութիւնն։ (էջ 3, տող 38 — էջ 4, տող 6, պակասիւ ՚ի ՃՃ.)։
4	10	Գ. ԺԹ. առին հրաման ՚ի Միխայէլն։ — ԻԹ. առին հրաման ՚ի նմանէ։ (էջ 4, տող 12 — էջ 5, տող 10. պակասիւ ՚ի ՃՃ.)։
5	13	ԻԹ. զի ցնծան, խնդան, միանգամայն և ժողովին։
	15	ՃՃ. իբերաց լինին վարդապետք։
	16	Գ. ԻԹ. խառնեալք։
	18–22	Պակասիւ ՚ի ՃՃ։
	22	ԻԹ. իսկ կայ և մնայ ևս առաւելն յայտասցիկ յորջորջմունս մարգարէս, ընդ այն մի ինչ դարմանայցես։
	26	Գ. մերթ խիզ զմարգարէութիւն։ — ԺԹ. մերթ խաւխանէ զմարգարէութիւնն։
	28	Գ. և միւսովն վճարեսցէ զօրինական յանդգնութիւն։ — ԺԹ. և միւսովն կարճեսցէ զանօրինակ յանդգնութիւն։ — ԻԹ. և միւսովն կարճեսցէ զօրինակացն յանդգնութիւն։
	38	ՃՃ. զոր հաստատեցի։
6	1	Գ. թէ ըստ երկոցունց օրինացն ինքն է օրէնսդիրն. որում լիցի ամենեցուն մեզ հասանել ընդհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս, ամէն։ — ԻԹ. և ինքն է որ եհան զնոսա յԵգիպտոսէ, եհ զօրէնսն, Քրիստոս Աստուած մեր. նմա փառք յաւիտեանս, ամէն։

Բ· ՀԱՏՈՒԱԾ

Տէր ողորմեաց մեզ, զի մեք ի քեզ յուսացեալ եմք։ – Ես. ԼԳ. 2։

Տպագիրն էջ 200–208

ՏՊԱԳԻՐՆ		
էզ	տող	
		Գտանի հատուածս ի ճառընտիրան Լ· և ԻԹ։
200	32	ի Լ· պակասի և ճգունք։
201	3	ԻԹ· ոչ առ յանձն։
	15	ճճ· ըստ մարգասիրութեանն լինիցի։
	27	ԻԹ· պարտ էր փրկութեան պատիւ գտանել։
202	1	ԻԹ· զիարդ իմանայցէ զփրկութիւն, և ոմ ոք։
	8	Լ· հարքն ապրել։
	13	Լ· կամիցի ղողորմութիւն... միթէ ուղղութիւնք խնդրիցես և չկարիցես բաւական լինել։
	25	ԻԹ· եթէ զքեզ մօտեցուսցէ և զնա մերժեսցէ, և զքեզ մերժեսցէ և զնա մօտեցուսցէ։ — Լ· և զնա մօտիցէ։
	34	ի ճճ· յիր կամիս։
203	15	ի ԻԹ· յիր դոյն իսկ այդ եղև չահ մաքսաւորին։
	22	ճճ· ոչ ունէր ի մտի։
204	9	ԻԹ· և զանաստուածս արար իւր որդիս, և զօտարացեալս աչխարհիս յաստուածային խնամոյն արար իւր ժառանգ և հաղորդս և ժառանգակից իւրոյ Միածնին։
	18	Լ· անազատ զանել։
	32	ԻԹ· այլ կապմ են դէզքն. և չէք ինչ որ զանցանել կարիցէք և կամ յաղթել նորա մարգասիրութեանն։
	33	Լ· անցանել զանցանել... որ ասէ։
205	5	ԻԹ· որպէն օճանալ։
	8	ճճ· լրմնոտութեամբ։
	19	ԻԹ· առ վէմի կամ ակամայ։
206	26	Լ· (ատա վերջանայ հատուածն. յետ այսորիկ ահ-ցահեկ յէջ 285· խՓ· Գր· Եռայեայ)։
	30	ԻԹ· այլ զասասիկ և զմեծ զօրութեանն ասէ, զդիւրագոյն յաղթութեանն ասէ, ի ճայնէ որոտալոյ քո անուն չարժեսցի երկիր։
	30–36	Պակասի ի ԻԹ։

ՏՊԱԳԻՐՆ		
էզ	տող	
208	4	ԻԹ· զկարեաց ճգնութիւնս, զոր կատարեսցուք անուամբն Քրիստոսի, որում վառք յաւիտեանս, ամէն։
285	4	Լ· մերթ թաքնու, մերթ յառնու։
286	23	Լ· (ատա վերջանայ հատուածն, յետ որոյ անցանէ յէջ 367, վերջին տող· վասն որոյ և ասէ, և այլն)։
369	19	Լ· զինչ ինչ օգուտ ի զգրելոցն։

Գ· ՀԱՏՈՒԱԾ

Եւ եղև յամին յոտում մեռաւ Ողիա արքայ։ – Ես. ջ. 1։

Տպագիրն էջ 60–69

ՏՊԱԳԻՐՆ		
էզ	տող	
		Գտանի հատուածս ի ճառընտիրան ԺԹ. և ԻԹ։
60	26	ճճ· և ընդ քահանային արգելուլն՝ ասէ, չէ օրէն քեզ մտանել ի սրբութիւն սրբոցն, և զժկամակ։
61	21	ԺԹ· հակառակ ինչ էցեն որ այս՝ այսմ որ ի Քրիստոսէն ասացան։
62	13	ԺԹ· կարէք հատուցանել զպարտսն, այնմ նմանեցայ։
	17	ճճ· վառեալ, և երբեմն արիւնացայտ երևեցայ, երբեմն ի հուր, և երբեմն ի թիկանց։
	21	ԺԹ· մարմնաւոր տեսլեանս։
63	6	ԺԹ· միևն նոսէր։
	8	ԻԹ· զի և այն որ ատա ասին, այնմ նման է։
	24	ԺԹ· իսկ լոկ նատելն, այլ իմն նչանակէ մարգարէս։
	34	ԺԹ· վասն այսորիկ տեսանէ յաթոռ նստեալ և վերացեալ· կամ թէ այլ իմն զոս և այլ իմն զնա ակնարկէ· զի բարձր աթոռն, կամ թէ պատմութիւն է, զի ասէ զբարձրացեալ և վերացեալ, այսինքն է մեծ և վերացեալ յերկինս, զի յայնչափ բարձրութեան երևէր։

ՏՊԱԳԻՐՆ

էզ	տող	
64	10	ԺԹ. զորոց զառաքինութիւնան և զղօրութիւնան։
	23	ԻԹ. զի այն իսկ մեծ է նոցա։
	25	ԻԹ. զոր օրինակ առաջի երկրաւոր թագաւորաց, որ մեծամեծ պատիւս ինչ ունիցին նոքա են մօտակացք աթոռոյ թագաւորաց, նոյնպէս, և այլն։
66	13–16	Պակասին 'ի ճճ։
	30	ԺԹ. էջ յերկնից։
67	29	ճճ. զմտացն խոնարհութիւն յայտնէ։
	32	ԻԹ. բոցեղէն անճանց սրբոց։
68	5	ճճ. յայնպիսի ահեղ պաշտօն կոչեցեալ իւր, վասն այսորիկ յայս միտս զիւր չրթունն սիրձ կոչէր, իսկ զժողովրդեանն ոչ յայն միտս։
	14–17	Պակասին 'ի ճճ։
69	13	ճճ. և ապղումն հրոյ ինչ ոչ գործեաց։
	17	ճճ. և ոչ այրեաց հուրն զօրութեամբն Քրիստոսի, որում փառք յաւիտեանս, ամէն։

Դ. ՀԱՏՈՒԱԾ

Ջագգ հորա, ասէ, ո պատուհասէ։ – Ես. ծգ. 8։

Տպագիրն էջ 400–401

ՏՊԱԳԻՐՆ

էզ	տող	
		Գտանի հատուածիկս 'ի ճառընտիրն Է։
400	21–22	Պակասի 'ի Է. մի ինձ զվերին ծննդենէն ոք ասիցէ։
	35	Է. և զինչ Հոգին Սուրբ, ասեն, արար։
401	10	Է. զայն խոստանամ։
	15–17	Պակասի 'ի Է։
	19	Պակասի 'ի Է. Որ ժամանակաւն եղև։

Ե. ՀԱՏՈՒԱԾ

Զի ասաց Տէր այսպէս. հաշտեալ եմ ընդ քեզ։ – Ես. ծԴ. 11։

Տպագիրն էջ 409–413, 372–375, 340–343

ՏՊԱԳԻՐՆ

էզ	տող	
		Գտանի քաղուածոյ հատուածս 'ի ճառընտիրն ԻԹ։
411	1	ԻԹ. զոսկին Սոփիերայ։
	18–25	Պակասի 'ի ԻԹ։
	38	ԻԹ. և թէպէտ և զուր ինչ 'ի վերայ գայցէ և ունիցի և տանջեսցեն։
413	29	ԻԹ. (աստ վերջանայ հատուածն. յետ այսորիկ անցեալ յէջ 372. ես. Գլ. ԾԱ.)։
375	3	ԻԹ. զի զամենայնն և զամենեսեան։
	33	ԻԹ. (աստ դադարէ հատուածն. և անցեալ յէջ 340. ԽԸ. Գլ. Եսայեայ)։
341	1–3	Պակասի 'ի ԻԹ։
	4	ԻԹ. արդ երբայեցին սաղմոսէ։
343	19	ԻԹ. յորժամ և անդ տեսանիցեմք, և այնու սիրելիցեմք։
	26	ԻԹ. որ նորա էին գործեալ. սակայն խոցեալ երկիւղիւ չար սրոյն որ ունիցի յոգւոջ իւրում բունեալ՝ միշտ զնա խոցոտելով։ Վասն որոյ աղաչեմ զի զերծուսցուք զանձինս մեր 'ի մեղացն խոզխոզմանէ, 'ի մշանջենաւոր և յանբժշկելի մահուանէն, սրբեալք 'ի խղճէ մեացն, ապաշխարութեանն մատակարարութեամբն ընծայեալք Քրիստոսի, որպէս զանուշահոտ պատարագս լուսաւոր և կենդանի վարուք առաքինութեան. զի այնպէս արժանի լիցուք հասանել խոստացելոց բարութեանցն 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս, ամէն։

Զ· ՀԱՏՈՒԱԾ

Գոյևս գոյութևամբ և մի խնայևար։ — Ես· ԻԸ· 1։

Տպագիրն էջ 435–442

Գաւանի հատուածս 'ի ձառընտիրն ԺԵ· ԻԳ· և ԻԹ· երկոքին առաջինքն բառ առ բառ համաձայնք են միմեանց, այլ յորով ուրեք տարաձայնին յօրինակէ սրպագրութեանս, եթէ ըստ չարագրութեանն ոճոյ և եթէ ըստ ամբողջութեան հատուածոյն, զորոց վկայի կարևորան ևեթ նշանակեցով, զանց առնեմք զայլովք տարբերութեամբք. իսկ ԻԹ, բայ 'ի սակաւ տարբերութենց, զորս նշանակեացուք 'ի ստորև, յամենայնի համաձայն ունի զբանան ընդ մերսմն օրինակի։

ՏՊԱԳԻՐՆ		
էզ	տող	
435	30	ԺԵ· ԻԳ· 'ի սէրունական պահոչն էին։
436	9–14	Պակասին 'ի ԺԵ· և 'ի ԻԳ։
	23–25	Պակասին 'ի ԺԵ· և 'ի ԻԳ։
	25	ԻԹ· եթէ 'ի գատապարտութիւնս և 'ի գատաստանս։
	34	ԺԵ· և կամ որպէս 'ի մարտիկն կռիւն մերժիցի։ Չինչ պիտոյ են։ — ԻԳ· և կամ որպէս 'ի մարտիկն կռիւն և կրթութիւնն. այնպէս և աստ զի կռիւն մերժիցի։ Չինչ պիտոյ են։
	34–38	Պակասին 'ի ԺԵ· և 'ի ԻԳ։
	35	ԻԹ· կռիւն և երկուղն և կրթութիւնն։
437	4	ԺԵ· մեղացն հեռանալ, այլ և ընկերացն առնել պահօքն պահս։
	4–7	Պակասին 'ի ԺԵ· և 'ի ԻԳ։
	13	ԻԹ· և ծանր քան զպահս։
	16–39	Պակասին 'ի ԺԵ· և 'ի ԻԳ։
438	1–8	» » » »
	21–25	» » » »
	29–39	» » » »
439	1–12	» » » »
	26–32	» » » »

ՏՊԱԳԻՐՆ		
էզ	տող	
439	33	ԻԹ· որ թագաւոր և կամ որ թագաւորութեանց իշխանութիւնք, կամ որպիսի՞ պատմուճան իցէ հանգոյն այնմ հանդերձեալ զարդարուն։
	36	ԺԵ· ԻԳ· զոր նահապետն ցոր։
440	8–39	Պակասին 'ի ԺԵ· և 'ի ԻԳ։
	18–21	Պակասին 'ի ԻԹ։
441	1	Պակասին 'ի ԺԵ· և 'ի ԻԳ։
	2	ՃՃ· զաղան չար է ագքատութիւն և ուտէ 'ի նեղքոյ զիսրն։
	3	ԻԹ· վասն մերոց ինչ խնդրուածոց։
	29–39	Պակասին 'ի ԺԵ· և 'ի ԻԳ։
442	1–12	» » »
	21	ԺԵ· ԻԳ· նմին և մեք նախանձաւոր լիցուք, զի երկնից արքայութեանն հասցուք 'ի Քրիստոս Յիսուս, ամէն։ — ԻԹ· վասն առատութեան և մարդասիրութեան որ առ ամենեսեան, որում նմանող լինել առաքինութեանն առաք հրամայեաց. զի այնպէս մեծացեալք յաստի կեանս, և հանդերձելոց բարութենացն հասցուք և փառացն 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս, ամէն։

Է· ՀԱՏՈՒԱԾ

Վասն այնորիկ այսպես ասէ Տէր· ահաւասիկ ես արկանեմ։ Ես· ԻԸ· 16։

Գաւանի հատուածս 'ի ձառընտիրն ԻԹ· գաղափարեալ զկնի Բ· և Ա· հատուածոցն՝ խորագրեաս «Նոբրին 'ի նոյն զրոց՝ յեկեղեցւոյ խորհուրդ». այսինքն է, Նորին Յովհաննու Ոսկեբերանի 'ի մեկնութենէ մարգարէին Եսայեայ. որպէս եդեալ է 'ի գլուխս նախընթաց հատուածոցն։ Ա՛յլ զի հատուածս արդարև 'ի Մեկնութենէն Եսայեայ էին, ոչ միայն 'ի վերնագրէ ասաք է յայտ, այլ և յոճոյ մեկնութեանն և չարագրու-

թեան, թէպէտ և իբ. Գլուխն եսայեայ հանդերձ այլովքն պակասի ՚ի յոյնն և ՚ի հայումն։ Դարձեալ և առ Սկևռացւոյն և Դաւթի քահանայի ՚ի քաղուածոյ մեկնութիւնս իւրեանց յառաջ բերին կոտորակք ինչ այսր հատուածոյ՝ իբրև ՚ի Մեկնութենէն եսայեայ՝ յանուն Ոսկեբերանի։

«Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր. ահաւասիկ ես արկանեմ ՚ի դրունս Սիովնի վէմ բազմակատար, ընտիր, ծայր անկեան, պատուական, ՚ի հիմունս դորա»։ Տեսանես, զի վասն այնորիկ իսկ կարևոր էր գալուստն Քրիստոսի. տեսանես, որչափ ինչ պէտք էին տեսչութեանն։ «Ես, ասէ, արկից», և ոչ եթէ մարգարէ ոք։ «Ի հիմունս Սիովնի». և քանզի ապականեալ էր չինուածն՝ վասն այնորիկ իսկ ՚ի ներքուստ ՚ի հիմանցն ուղղէ։ Զոր օրինակ որմ ինչ խախտիցի և կամիցի նորոգել՝ ՚ի հիմանն իսկ գնէ վէմս մեծամեծս։ Եւ զի ոչ վասն վիմի ինչ է ճառս և ոչ վասն անչունչ ինչ նիւթոյ, յայտ յայնմանէ է, եթէ «Որ հաւատասցէ ՚ի նա՝ մի ամաչեսցէ»։ Քանզի ոչ եթէ ՚ի քարանց ինչ վճռութեսցի մեզ փրկութիւն, և ոչ եթէ քարանց ինչ հրամայեսցէ մեզ հաւատալ. այլ յայտ է եթէ զկենարարէն ասէ. որպէս և Պաւղոս ասէ, եթէ Հիմն եգեալ է։ Եւ այս ոչ զոյն ինչ յայտ առնէ՝ եթէ արարած իցէ Որդի, քաւ լիցի. այլ եթէ որ էրն ՚ի բնէ, նոյն եղև և հիմն քարոզութեան՝ Յիսուս Քրիստոս, յորոյ վերայ չինի եկեղեցի. զի որպէս ՚ի հիմանն վերայ՝ նոյնպէս և ՚ի վերայ նորա հաստատեցաւ և կայ ամենայն ինչ. վասն որոյ և ասէ իսկ, եթէ Ես եմ արմատ և դուք էք շառաւեղք։ Որ յայնմ արմատոյ էր, որում ոչ էր աղգականութիւն մարմնաւորապէս՝ կամեցաւ մարդասիրութեամբ լինել ըստ մարմնաւորացս, և արմատ մարմնաւորացս չինուածոց, զի ՚ի նմանէ արձակեցան շառաւեղք հաւատացեալք։

Եւ վասն էր կոչեսցի հիմն. զի ոք որ յայնր հիման վերայ չշինիցէ, չմտանէ ՚ի չինուածն. և որ ՚ի նմա ոչ առնէ սկիզբն՝ կործանելոց իցէ։ Իսկ վէմ հաստատութեան և անշարժութեանն, և զի ամենեսեան որ ՚ի նա յենուցուն՝ ունիցի հաստատութեամբ։ Բազմակատար, պատուական, զորոց զպատիւն ոչ ոք ըստ արժանեացն կարէ պատուել, և ոչ զգինս կշռել։ Ամենայն ինչ, ասէ, զոր ունի Հայր, այն իմ է. և արդ զի՞րդ ոչ իցէ բազմակատար, որ զկենաց և զմահու իշխանութիւն ունի ՚ի ձեռս. որ այնպիսի ինչ պարգեւս կարէ ընդհել, ոչ միայն մեծատուն փոխանակ աղքատաց կարէ առնել զառողն, այլ հրեշտակս փոխանակ մարդկան. ոչ

ինչս կամ հանդերձս վայրապարս պարգևէ, այլ զընութիւնս իսկ յայլ նորոգութիւնս փոխէ։ Զի՞արդ չիցէ բազմակատար, որ ոչ զոսկի և զարծաթ միայն տայ պարգևս, այլ զանմահութիւն մարմնոյ, զերկնից արքայութիւն, զյաւիտենականն իշխանութիւն։ Զի՞արդ չիցէ բազմակատար, որում ամենայն ինչ իբրև զմէտ մի ՚ի կշռոց համարեալ է։ Եւ արդ ո՞ կարիցէ ճառել զմեծութիւնն նորա, որ և Պաւղոսի սակաւ մի նայեցեալ աղաղակէ, թէ Ո՛վ խորք մեծութեան և իմաստութեան Աստուծոյ. ո՛րպէս զի առանց քննելոյ են դատաստանք նորա, և առանց զննելոյ են ճանապարհք նորա։ Եւ զարձեալ, եթէ Դատաստանք քո ՚ի խորս բազումս։ Եւ զարձեալ, եթէ Ո՞ զղօրութիւնս Տեառն խօսեսցի։ Զի՞արդ չիցէ բազմակատար՝ զորոյ զպարգևսն և զարդարութիւնս չեն բաւական բանք ճառել, զի անցանեն ըստ միտս և ըստ լեզուաց զօրութիւն և ըստ խորհրդոյ բարձրութիւն։ Վէմ ընտիր՝ զանզուգական հաւատարութիւնն նշանակէ, թէ չիք ինչ հանգոյն և հաւասար նմա։ Ցօրժամ ասիցէ թէ Ընտրեաց զԴաւիթ ծառայ իւր, զայն ինչ յայտ առնէ եթէ քան զամենեսեան զնա ընտիր եգիտ ՚ի ժամանակին. և անդ իբրև զմարդոյ ումեքէ. զի թէպէտ և ընտիր է, սակայն մարդ է։ Իսկ աստ զանհամեմատ զուգականութենէն նշանակէ, զի չիք ոք նմա հաւասար, բայց միայն ինքն Հօր հաւասար։ Զի մի յորժամ կոչիցի Որդի կամ Քրիստոս, զմի ոք ՚ի բազմացն կարծիցէք, ասէ, սա է ընտրեալն՝ որում ոչ դոյ զայլ ոք հաւասար գտանել։ Զոր օրինակ զՀօրէ ասէ, թէ Զիք ոք նման քեզ յաստուածս, Տէր. նոյնպէս և զՈրդւոյ ասէ, թէ Զիք ոք որ նմանի Տեառն յորդիսն Աստուծոյ. թէպէտ և իցեն բազումք, այլ նա միայն նմանէ Հօր։ Տեսանես, զի նա միայն ունի զժառանգութիւն ընդ Հօր, և զանզուգականութիւն ընդ այլ որդիս. զի որովհետև ՚ի վերայ երկոցունց կայ, և զնոյն զմի ինչ զղօրութիւնն յայտ առնէ։ Եւ զարձեալ, թէ Ոչ ոք նման քեզ յաստուածս, և ոչ ոք է որպէս զդործս քո։ Զի մի կարծիցի եթէ պաշտօն ինչ առնելով ասիցէ ոք զնմանէ, ՚ի գործոց անտի նորա ցուցանի հանդէսն. Հաւատացէք յիս, ասէ, և քննեցէք զդործս. եթէ իցեն համեմատ Հօր գործոցն՝ հաւատասջիք յիս իբրև յարարիչ. որպէս և ասէր իսկ Քրիստոս. եթէ յիս ոչ հաւատայք, գոնէ վասն գործոցն հաւատացէք։

«Ծայր անկեան»։ Տեսանես, զիարդ վազվազակի յայտնեաց զխորհուրդն. զի ոչ վայրապար վէմ կոչեաց, այլ ծայր անկեան։ Որք տեղեակ իցեն չինուածոյ՝ գիտեն զինչ ասացաւ, և որ ոք չիցեն տեղեակ՝ հարկ է զի ՚ի մէնջ ուսանիցին։ Քան զամենայն վէմս որ ՚ի չինուածն մատուցանիցի՝ անկիւնակալքն հաստատուն պարտին լինել. զի որ զամենայն վէմսն կապիցեն և ընդ միմեանս պնդիցեն՝ նոքա մա-

նաւանդ լաւագոյն պարտին լինել քան զայլսն. զի զերկո-
սեան ճակատս իբրև երկու ձեռօք բռնեն հարեալ ունիցի
պինդ, և ամենայն բռնութեանցն՝ որ ի դիմի հարկանիցի
չինուածոյն, նոյն ինքն նոքա կայցեն ընդդէմ. այսպիսի ինչ է
գործ անկիւնակալն վիմաց. զի և հողմոյն բռնութեանց նոքա
ունիցին զդէմ, և զայլ ամենայն չինուածն զդուշութեամբ
պահեն: Եւ այս ամենայն ի Քրիստոս կատարեցաւ. զի և
զանէծն յիւր անձն ընկալաւ և զմահ և զայլ ևս չարչարանս
ամենայն, զի զմեր բնութիւնս ի զդուշութեան սլահեսցէ. և
կապեաց սկզբնաց ի միմեանս զերկուս որմն քակեալս ի
միմեանց, զհեթանոսական և զհրէական ժողովուրդն. և
ինքնին հաստատեցաւ ի միջի՝ զի զերկուս ճեղքեալսն ի
մի վայր ժողովեսցէ. զորմն անջատեալս՝ յօդեաց սկզբնաց
ի միմեանս, զհրեշտակաց բնութիւնս և զմարդկան: Տեսա-
նէս զհոգիս արդարոցն որմն որ չինեցաւ ի մի տաճար, ի միում
մարմին Քրիստոսի. զի ի նոյն սկզբնացք և կապեցաւ և
յարեցաւք՝ անջատեալքն և որոշեալքն: Թլիատեաց և սլա-
հեաց զօրէնսն, զի և զաւուրս օրինացն կատարեալ
չօտարացուցանիցէ. և մերձեցոյց զհեթանոսս, զի մուտ նո-
ցուց ընծայեցուցանիցէ: Զի մինչ կրճիմն և միջն-
որմն ցանկոյն կայր ի միջի, ոչ իշխեր մերձենալ, իսկ յոր-
ժամ այն ի միջոյ բարձաւ՝ համարձակեցաւ գալ և միա-
ւորիլ: Այլ և հրեշտակք ևս կապէին [1] ընդ մարդկան, քանզի
Տէրն նոցա թշնամանէր ի մարդկանէ. և վասն այսորիկ
սպառնացեալ էին առնուլ զերկիժ թշնամանացն. այլ և զնո-
սա հաչտեցոյց, զի արժանի արար և հանդերձ մարմնովն՝
առնուլ ի նոցանէ երկրպագութիւն, որպէս և յառաջ քան
զգալուստն՝ աստուածութեամբն միայն: Եւ արդ, ո՛վ իսկ
ոք այնպիսի անմիտ և թշուառական, որ տեսանիցէ զսէր
իւր զգեցեալ զատելացն մարմինս, և իշխեսցէ մարտնչել
ընդ բնութեանն, և ոչ վաղվաղակի գալ ի հաշտութիւն:
զի եթէ զհանդերձն մեր արժանի արար զգենուլ, զիարդ իցէ
զի զմեզ առիցէ. զի այս կարի լինն սիրելեաց է, յորժամ
զհանդերձ ինչ զայնոցիկ որ սիրիցեն՝ զգենուցուն, թէպէտ
և կարի յոռի իցէ. և ոչ աստ միայն զգեցաւ, այլ և անդ ի
վեր առ Հօրն՝ ի նատելն ընդ աջմէ ոչ ինչ ամօթ համարի
զգեաւձ հանդերձն զոր զգեցաւն. զի սէր ամենայն խիղճ
յաղթէ, և ոչ ամօթ համարի: Բարւոք ասաց և «Պատու-
ական». զի թէպէտ և ապտակեցաւ, ընկալաւ թուք յերեսս,
և բաղում չարչարանս կրեաց, և զմահ նախատանաց և
զանիծից ընկալաւ յանձին, այլ մի՛ ինչ անվաւերութիւն զայն
համարիցիս. զի թէպէտ և յայսպիսի անարգանս նկն, սա-
կայն զպատիւն իւր ոչ կորոյս:

1 Ցօր. կարգէն:

Եւ զի հիմն ասի, մի՛ ինչ անարգ համարիցիս. զի հիմն ոչ՝ ի
յածուկ ինչ է, այլ յայնի, որ զամենայն ունի հաստատուն:
Զի հիմն այս՝ և այլոց՝ գոյանի գլուխ անկեան. զի անդ՝ ի վեր
ունի հաստատուն զամենայնն, և աստ՝ ի խոնարհս անչարժ
զամենայնս. զի ամենայն՝ ի նա հաստատեցան. և թէ թոյլ
տացէ՝ քակտի ամենայնն: Վասն այսորիկ և ասէ իսկ, եթէ
ի ձեռին քում ամենայն ծագք երկրի: Տեսանես, զի որ ինչ
զՀօրէ վասն երկրի ասէ, նոյնպէս և զՈրդւոյ վասն ամե-
նայն աշխարհի. զի ոչ միայն երկիր, այլ և հրեշտակք և
հրեշտակապետաց բնութիւնք և ամենայն ինչ՝ ի ձեռին նո-
ցա են. և որ ինչ մեծն և լաւ համարիմք ասացեալ զՀօրէ
վասն երկրի, նոյնպէս և վասն Որդւոյ. ըստ այնմ, եթէ Ա-
մենայն ինչ նուաւս հաստատեցաւ. ոչ միայն երկինք և երկիր,
այլ և հրեշտակք և հրեշտակապետք, աթոռք և պետու-
թիւնք և տէրութիւնք և իշխանութիւնք, և ամենայն ինչ նո-
ւաւս են և կացին միանգամայն: Եւ թէ զիարդ նուաւս՝ ասէ
և զկերպարանն, եթէ նա է գլուխ ամենայնի. որպէս և ա-
ռանց գլխոյ և առանց զօրութեանն՝ որ ի նմանէ առաքիցի
յանդամսն, ոչ կարէ կեալ կենդանի ինչ նոյնպէս և առանց
Քրիստոսի ոչ կարէ կեալ ինչ յարարածոցս. Հանես դու,
ասէ, զդի քո՝ ի նոցանէ և պակասին: Զի հիմն հիմանց ա-
մենայնի Քրիստոս է, և չէ ումեք արժան յանձնապաստան
լինել և ոչ՝ ի նախնիս. և մանաւանդ Հրէիցն՝ որ նախնեօքն
պարծէին. և թէպէտ և իցեն ուրուք վաստակք, սակայն
նորա զօրութեամբն կատարին:

«Եւ որ հաւատասցէ՝ ի նա՝ մի՛ ամաչեսցէ»: Բարւոք ա-
սաց թէ որ հաւատասցէ՝ ի նա՝ մի՛ ամաչեսցէ: Տեսանես,
զիարդ ակնարկէ զգալուստն, որչափ փառաւորութեամբ
ինչ եղև. այլ հաւատոյ պէտք էին. զի՝ ի փառաւորեալն
գալստեան ոչ այն պէտք էին հաւատոյ, այլ ինքն ահաւո-
րութիւնն է փոխանակ հաւատոյ: Տեսանես, զի ամենայն
ուրեք հաւատք պիտոյ են. «Որ հաւատասցէ, ասէ, ՚ի նա», և
ոչ եթէ որ քննեսցէ. և հաւատասցէ, ասէ, և ոչ որ՝ ի հարց
և՝ ի փորձ անկանիցի. որ հաւատասցէ, ասէ, և ոչ որ խոյզ
արկեալ հետաքրքիր լինիցին: Այսչեսցեն այնպիսիք որ
զանհասականն անձանց իւրեանց՝ խնդրեն լինել ճառելի,
Տեսանես, զի ամենայն ուրեք հաւատոյ պէտք են. և ծնընդ-
դեանն և յաչխարհի չրջելն, և չարչարանքն կատարել
և խաչիւն ապատել զամենայն տիեզերս. զի բազում և մեծ
հաւատոյ պէտք են, եթէ՝ ի խաչէ՝ որ մահու է գործ՝ ազա-
տութիւն տարածեցաւ, և՝ ի մահուանէ կեանք բղխեցին և
լցին զտիեզերս. որպէս և գրեալ է, եթէ Լցցի երկիր ճա-
նաչելոյ զՏէրն, իբրև ջուր բազում ծածկեալ զծովս: Եւ
զարձեալ, եթէ Ոչ ասիցեն այր ցընկեր իւր՝ եթէ ծանիր
զտէր. զի ամենեքին ծանիցեն զիս ՚ի փոքրկանց մինչև ՚ի

մեծամեծս նոցա. և ցարևելից մինչև ի մուտս արևու օրհնեալ է անուն քո: Եւ արդ, զինչ ևս աւելի կամիցի ոք ասել առաջի քո զայս: Եւ դու տես զառաւելութիւնն Աստուծոյ զօրութեանն, զի անդ բանական նիչ կանգնեաց, և աստ զնշանն յաղթութեան: Զինչ ինչ իցէ քան զխաչ անիծադոյն. այլ ամենայն ուրեք վայտիւ տեսանեմք զփրկութիւն կատարեալ:

Ո՞ լուաւ, ո՞ ետես. անիծեցին պատիժք՝ մահու լուծանելոյ եղեն նշանակ և մեղաց քակտումն. ամենևին իբրև հակառակ ընդդէմ նմին էին իրքն: Եւ զի՞րդ ոչ սքանչանայցեմք. զի զդահիճ ոք թերևս և տեսանել չկամիցիմք և ոչ մօտ երթալ, և սոսկամք և վախչիմք, իսկ մեք զնշան խաչին ի թագս և ի զարդս թագաւորաց և զօրաց հաստատեմք, և ի պատուական անդամս մարմնոյ՝ ի գլուխ և ի լանջս և ի սրտի վերայ, առ սեղան և ի մահիճս: Եւ եթէ զդևս ուրեք պատշաճ իցէ հալածել, զխաչն ի մէջ բերեմք. և առ ցաւոց բժշկութիւնս նոյն է սլիտանացու: Որչափ մարդիկ յառաջ քան զայս ժամանակս խաչեցան. և ոչ ուրեք յոք երևեցաւ այսպիսի զօրութիւն: Եւ երկիր պագցեն, ասէ Սուվիոնիա, իւրաքանչիւր ի տեղւոջէ իւրեանց Տեառն: Մի իմոց բանիցս հաւատար, ով Հրեայ, այլ ի հնոյն վիճիմ ընդ քեզ. զի հակառակիս հէքդ և թշուառականդ, և առ քո վըրկութեանդ մարթ եղեալ կռուիս. զի ընթանաս հակառակ քումդ զվնասդ, զի կից ածես ընդդէմ խթանի. չտեսանիցեն զգերեզմանն, չհայիցին ի տեղի խաչին. ոչ ապաքէն իբրև արճանիք իմն կանգնեցան:

Եթէ ոք հարցանիցէ՝ եթէ զինչ մեծամեծս արար Քրիստոս, թողում ասել զերկնից և զերկրէ և զծովէ և զբաղում մեռելոցն յարութենէ, և զայլ ևս զբազում նշանս զոր արար, զհացին բազմացուցանելն, զջրոյն գինի առնելն. զխաչն ևեթ ի մէջ բերեմ, որ բազում և քան զամենայն լուսաւորագոյն է. խաչեցաւ, ասեմ, և թուք յերեսս ընկալաւ և ապտակեցաւ. և այնպէս ինչ աւելի՛ երախտիս առբար մերում բնութեանս: Եւ այս Աստուծոյ գործ է, վասն այնորիկ և ինքն խոյ՝ զիրան վառս կոչէ. Հայր, ասէ, եհաս ժամ, փառաւորեա զՈրդի քո. և Պաւղոս, եթէ Ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչն: Եւ վասն այսորիկ եւս մեզ զօրինակ այսորիկ նշանին, զի ունիցիմք հանապազ առ ի յիշատակ՝ թէ չարչարեցաւ վասն մեր Քրիստոս մեծամեծ երախտեաւք. երախտիք այս են, այլ այնպիսի կերպարանօք՝ զի և խաչիւ՝ կատարեցաւ զնաչ և զմահ: Կարի իմն մեծ և անչափ սիրոյ նշանակ է և սերտ զքոյ մարդասիրութեան նորա առ մեզ: Վասն այսորիկ և Պաւղոս զսոյն զայս վերն ի վայր յեղյեղու, եթէ Սէր նորա սփռեալ է. և ցովհաննէս, եթէ Անդէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զՈրդին

իւր միածին ետ. զի զմին միայն զոր ունէր՝ ետ մեզ. իսկ նորա եկեալ՝ խաչին մահու գործէ զփրկութիւն մեզ. զոր կատարեալ և ոչ ի հարկէ կատարեալ զնորհուրդ սուրբ խաչին. զոր կանգնեալ ի մէջ տիեզերաց, աստուածագործ և հրաշափառ լուսով մարտակռուեալ, և զէն յաղթութեան ընդդէմ թշնամւոյն տուեալ հաւատացելոց, ի պարծանս յուսոյ յաւուրն մեծի. զի նմա վայելին փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ԲՆԱԲԱՆՔ Ս· ԳՐՈՑ

Ի ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ԱԾԵԱԼՔ

Ի ՄԱՏԵՆԻՍ

ԾՆՈՒՆԴՔ

ԳԼ·	ՀՄՐ·		ԵՋ
Ա·	27	Ախաբ Ասուածծ վմարդն	365
Բ·	17	Յորում աւուր ուտիցես	253, 380
	23	Ահա այժմ ոսկը յոսկերաց	271, 272
Գ·	17	Յաւուրք և որմունեցամբ	380
	19	Ի քիւրան էրեսաց	380
Դ·	9	Ուր է Աբէլ	446
	13	Մեծ է ինասն իմ	290
	14	Հանես զիս յերեսաց	213
	15	Ամենայն որ սպանանիցէ	234
	19	Հոլ էիր և 'ի հող	271
Զ·	3	Մի՛ ինասցէ ոգի	254
	4	Նոքա են սկայք	21
	12	Ապականեաց ամենայն մարմին	447
ԺԲ·	1	Եւ յերկրէ քումմէ	157
ԺԵ·	13	Զարբեցեն զինոսա ամս	336
	16	Զև ես են կատարեալ մեղք նոցա	446
ԺԷ·	17	Մինէ Թագուհւսա ինչ	157
	20	Եւ ազազակ չարուեցեան	29
	20	Ազազակ Սոդոմայեցւոց	447
	23	Մինէ կորուսանիցէս	144
	28	Բայց ես հող եմ	203
ԻԲ·	11	Աբրահամ, Աբրահամ	245
ԻԵ·	23	Երէցն կրսերոյն ծառայեսցէ	235
ԽԹ·	9	Կորիւն առիւծու	185
	11	Կապեսցէ զորթոյն զաւանակն	4
	11	Լուասցէ 'ի գինի զպատմուճան	464

ԵԼՔ

Գ.	7	Տեսանէլով տեսի	188, 379, 447
	8	Երկիր որ բվնիկ	47
Դ.	10	Ներքաճայն եմ	68, 69
	11	Ո՞վ արար զնոսա՛ն	316
Է.	16	Աբձակեա զԺողովուրդդ	315
Թ.	16	Վասն այսորիկ գրգռեցի	446
ԺԳ.	1	Օրհնեացուք զՏէր զի փառաք	45
ԺԷ.	14	Գրեա զայդ առ յիշատակ	237
ԺԹ.	5	Եղիցի ինձ Ժողովուրդ	296
Ի.	4	Մի առնիցէք ձեզ ինչ նմանութիւն	262
	12	Եւ եղիցի երկայնակեաց	234
	13	Մի սպանանիցես	443
	25	Երկաթ ինչ մի հուպ առնիցես	443
ԻԳ.	7	Զարդարն և զանպարան	443
	22	Թշնամի եղէց Թշնամեաց քոց	315
	26	Աւուրք ամաց նոցա լցցին	234
	26	Ոչ լինիցի քեզ անսէր մնայր	357
ԼԲ.	1	Մովսէսն այն որ եհան	469
	7	Ե՛րթ, էջ ասել	246
	7	Ժողովուրդ քո	246
	10	Թոյլ տուր	157, 246
	12	Ախեցեն, գոգցեն եթէ վասն այնորիկ հաներ	311
	21	Զի՛ արար քեզ Ժողովուրդն	31
	31	Թէ Թողուս զդոցա ըմեղս	244
ԼԳ.	15	Թէ ոչ երթիցես ընդ մեզ	467
	19	Ողորմեցայց որում ողորմեցայց	201, 332
	20	Ոչ ոք տեսցէ զերեսս իմ	61

ԹԻՒՔ

ԺԲ.	6	Ոչ ընդ ուժեք իսօսեցայ	157

Բ. ՕՐԷՆՔ

Գ. 40 Ե. 16		Եւ եղիցի երկայնակեաց	234
Զ.	4	Տէր Աստուած քո	316
	5	Ցամենայն սրտէ քումմէ	33
Ժ.	12	Զի՞նչ խնդրէ՝ ի քէն Տէր	141
ԻԷ.	5	Երկաթ ինչ մի հուպ առնիցես	443
ԻԹ.	29	Ծածուկքն Տեառն Աստուծոյ	133
ԼՈ.	19	Գրեա զայդ առ յիշատակ	237
ԼԲ.	1	Հայեցարուք երկինք	359
	6	Զայս Տեառն հատուցանէք	45
	15	Գիրացաւ, յուրացաւ, սատուարացաւ	418

ՑԵՍՈՒ

Ա.	2	Մովսէս ծառայ իմ	348
Ը.	31	Երկաթ ինչ մի հուպ առնիցես	443
Ժ.	12	Կայցէ արեգակնդ	238

ԴԱՏԱՒՈՐՔ

ԺԳ.	18	Զի՞ խնդրես զանուն իմ	112

Ա. ԹԱԳԱՒՈՐՔ

Գ.	1	Բան Տեառն պատուական	22
Զ.	6	Ոչ սա է Աստուածն	175
ԺԶ.	7	Մարդ ընդ երեսս	133

Բ. ԹԱԳԱՒՈՐՔ

ԺԲ.	13	Մեղայ Տեառն	413
ԺԵ.	25	Դարձո զտապանակդ	104
	26	Ակաւասիկ արասցէ	104
ԻԴ.	17	Ես հովիւս մեղայ	244, 289

Գ. ԹԱԳԱՒՈՐՔ

ԺԷ.	1	Զլինիցի անձրև	296
ԻԲ.	17	Տեսանէի զԻսրայէլ	461

Դ. ԹԱԳԱՒՈՐՔ

Ե.	10	Երթայցէ լսայցէ	241
ԺԸ.	20	Մինչ ե՛ի խորհուրդս կամ ՚ի բանս	103
	22	Ոչ ապաքէն այն Աստուած	122
	25	Աստուած ասաց ցմեզ	122
ԻԲ.	20	Ա՛ռ Աստուած զՅուսիա	234

Ա· ՄՆԱՑՈՐԴՔ

ԺԶ. 27 Օրհնեալ են փառք Տեառն 297
ԻԱ. 17 Ես հովիւս մեղայ 244, 289

Բ· ՄՆԱՑՈՐԴՔ

Զ. 30 Դու միայն Ճանաչես 85
ԺԸ. 16 Տեսանէի զԻսրայէլ 461
ԼԲ. 26 Զլջաւ Եղեկիա 'ի հպարտութենէ . . . 232
ԼԴ. 28 Ա՛ռ Աստուած զՅուսիա 234

ՍԱՂՄՈՍՔ

Դ. 5 Զոր ինչ ասիցէք 369
Է. 10 Միայն որ քննէ 84, 259
Է. 2 Տէր, Տէր մեր 112
Ը. 4 Տեսից յերկինս 268
6 Խոնարհ արարեր 254
Թ. 5 Նստար յաթոռ 63
28 Ի նեղքդ լեզուի 121
ԺԵ. 10 Ոչ թողաւ չունչ 402
10 Մարմին նորա ոչ էաես 405
ԺԶ. 9 Ի հովանի թևոց քոց 65
ԺԷ. 45 Ժողովուրդ զոր ոչ գիտէի 4
ԺԸ. 5 Ընդ ամենայն երկիր· 299
9 Պատուիրանք Տեառն լոյս են 10
ԻԱ. 7 Ես որդն եմ 203
ԼԱ. 5 Ասացի՝ պատմեցից զմեղս իմ . . . 369
5 Զանօրէնութիւնս իմ, Տէր, յուղիղ . . 370
ԼԲ. 4 Ոլորմութեամբ Տեառն 273
6 Բանիւ Տեառն երկինք 135
16 Ոչ ապրեսցի թագաւոր 13
ԼԴ. 6 Մատիք առ նա 277
ԼԴ. 13 Ես 'ի նեղել նոցա 223
ԼԵ. 7 Դատաստանք նորա իբրև զնորս· . . 374, 483
ԼԷ. 5 Անօրէնութիւնք իմ· 454
14 Եղէ ես իբրև 300
ԼԸ. 6 Ամենայն մարդ սնոտի 253
7 Զուր խռովի 322
ԽԱ. 2 Որպէս փափաքէ 425
ԽԴ. 19 Խոտորեցուցեր զչաւիղս մեր 470

ԽԴ. 4 Ա՛ծ զսուր քո ընդ մէջ քո 464
17 Կացուսցես զնոսա 194
ԽԸ. 7 Վա՛յ այնոցիկ որ յոտասցեալ իցեն . . . 13
17 Մի երկնչիր յորժամ 255
ԽԹ. 13 Միթէ ուսիցեմ զմիս ցլոց 306
Ծ. 3 Ողորմեա ինձ Աստուած 372
3 Եւ ըստ բազում գթութեան քոյ . . . 372
9 Յանեսցես յիս զոպպիւ 204
9 Լուասցես զնս և քան զձիւն 204
19 Զսերա բեկեալ և զխոնարհ 454
ԾԴ. 10 Տեսի զանօրէնութիւն 'ի քաղաքի . . . 247
11 Անօրէնութիւն և վաստակք 247
ԾԼ. 4 Օտար եղեն մեզաւորք 337
ԾԹ. 4 Բժշկեա զհարուածս սորա 454
ԿԷ. 2 Յարիցէ Աստուած 15, 209
14 Թևք աղաւնոյ· 410
ԿԸ. 14 Ժամանակ հաճութեան Աստուած . . . 349
ՀԱ. 19 Լցաւ երկիր փառօք 273
ՀԲ. 2 Սակաւիկ միս ևս 317
4 Ոչ գոյ հաստատութիւն 340
11 Ասացի եթէ զնա՛րդ 317
26 Ննջեղեաց սքրա իմ· 425
ՀԶ. 8 Միթէ յաւիտեա՞նս մերժեսցէ 280
ՀԷ. 25 Զհաց երկնից· 382
70 Ընտրեաց զԴաւիթ 359, 483
ՁԱ. 3 Դատ գնք, իրաւունս 364
8 Արի Աստուած և դատեա 16
ՁԳ. 2 Ցանկայ և փափաքէ· 425
ՁԵ. 8 Զնք ոք նման 483
ՁԸ. 7 Զնք ոք որ նմանիմ 483
48 Միթէ 'ի զո՞ր ինչ 325
50 Ո՞ւր են ողորմութիւնք 469
Ղ. 7 Անկցին ընդ կողմանէ 230
ՂԴ. 4 Ի ձեռին նորա են . . . 147, 259, 266, 485
8 Ա՛յսօր եթէ ձայնի 204
Ճ. 1 Ողորմութիւն և իրաւունս 332
ՃԱ. 27 Իբրև զվերարկու 266
ՃԲ. 12 Օրպէս 'ի բացէ են 373
13 Որպէս գթայ հայր 319, 373
20 Օրհնեցէք զնա հրեշտակք· 297
20 Հզօրք են զօրութեամբ 298
ՃԳ. 3 Որ չորքին 'ի վերայ 68
4 Որ առնէ զհրեշտակս 64

ՃԳ. 29 Հանէս զոգի 'ի նոցանէն 257, 485
32 Ո հայի յերկիր 16, 147
Ճե. 2 Ո՞ զզօրութիւնս 483
37 Զէնովին զուստերս 139
ՃԶ. 16 Դրունս պղնձիս 463
24 Նոքա տեսին զգործս Տեառն 299
27 Ամենայն իմաստութիւն նոցա 174
Ճթ. 2 Տիրեսցես 'ի մէջ թշնամեաց 352
ՃԺԲ. 3 Ցարևելից մինչև 486
ՃԺԳ. 11 Զամենայն ինչ զոր կամեցաւ . . . 268, 374
ՃԺԵ. 1 Հաւատացէ՛ վասն որոյ 82
ՃԺԸ. 64 Ողորմութեամբ Տեառն 273
105 Ճրագ են բանք 10
134 Փրկեա զնս 'ի նախատչաց 371
ՃԻ. 2 Օգնութիւն ինձ 'ի Տեառնէ 293
ՃԻԳ. 2 Երուսաղէմ՝ լերինք շուրջ են 46
ՃԻԹ. 3 Զի եթէ զանօրէնութիւնս 246
ՃԼԴ. 6 Զամենայն ինչ զոր կամեցաւ . . . 268, 374
ՃԼԶ. 1 Ի գեաս Բաբելացւոց 189
ՃԼԷ. 8 Զգործս ձեռաց քոց 308
ՃԽԵ. 4 Ցայնմ աւուր կորիցեն 255
ՃԽԶ. 4 Ո Թուէ զբազմութիւն 259, 273
10 Ոչ ընդ զօրութիւնս 13
ՃԽԷ. 20 Ոչ այսպէս արար 381

Ա Ռ Ա Կ Ք

Բ. 6 Տէր տայ զնմաստութիւն 364
Գ. 3 Ողորմութիւն և հաւատք 'ի քէն . . . 440
27 Մի դանդաղիցես առնել զբարի . . . 440
Դ. 18 Ձանապարհք արդարոց իբրև զլոյս . . . 362
19 Ձանապարհք ամպարշտաց խաւարինք . . 362
Ե. 6 Զհաստատեսցին ոտք նորա 199
8 Հեռի արա 'ի նմանէ 207
19 Եղն սիրոյ և յաւանակ 51
Թ. 18 Բազում ժամանակս կացցես 233
Ժ. 26 Որպէս ազոխ տատամնոց 200
ԺԱ. 23 Ցանկութիւն արդարոյ 425
25 Ակր ցասկոտ սխեղծ 200, 378
ԺԳ. 19 Ցանկութիւնք արդարոց 425
ԺԴ. 7 Զէն հանճարոյ չըճունք 199, 368
35 Բարկութիւն կորուսանէ 378
ԺԷ. 21 Սիրտ անզգամի ցաւք են 200

ԺԸ. 17 Արգարն յառաջին իսկ պատասխանոջն . . 307
Ի. 9 Ո՞վ պարծեսցի եթէ սուրբ 368
ԻԱ. 1 Իբրև զհոսանս ջրոց 154
31 Երկար պատրաստի 'ի պատերազմ . . . 192
ԻԴ. 5 Լաւ է խմաստուն 368
ԻԴ. 17 Թէ անկանիցի Թշնամի 225
ԻԶ. 12 Տեսի զմարդն յանձն 57
ԻԷ. 6 Լաւ է գան բարեկամաց 104
6 Լաւ են հարուածք բարեկամաց 104

Ժ Ո Ղ Ո Վ Ո Ղ

Ա. 13 Եա չար զբօսանք 322
Դ. 2 Երանի իցէ մեռելոց 412
Է. 18 Մէ լինիր խիստ 233
20 Իմաստութիւն օգնէսցէ 199
20 Լաւ է խմաստուն 368
21 Զիք արդար որ առնիցէ 369, 404
30 Աստուածն զմարդն 380
Ը. 4 Ո՞վ ասիցէ ցնա 288
Ժ. 7 Տեսի զծառայս 267

Ի Մ Ա Ս Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ա. 13 Ոչ զուարճանայ Տէր 414
16 Իւրոք իսկ ձեռօք 236
Դ. 11 Ցափշտակեցաւ յառաջագոյն 234
Ե. 19 Զգեցյկ զզեահս 135
Թ. 2 Ակարեր զամենայն ինչ 268
ԺԲ. 12 Ո՞վ ասիցէ ցնա 288

Ս Ի Ր Ա Ք

Գ. 33 Զհօսր բորբոքեալ չկրծուցանէ 441
Դ. 25 Է ամեն որ ածէ 425
Ժ. 2 Ըստ իշխանի քաղաքին 416
ԺԱ. 5 Բռնաւորք նստան 'ի գետնի 267
ԺԳ. 19 Ամենայն անասուն զիւր նմանին 438
ԺԴ. 1 Զիք ոք որ ոչ գայթակղեսցի 404
ԺԸ. 26 Ցառաւօտ մինչև յերեկոյ 267
26 Ամենայն ինչ երագագոյն 267
ԺԹ. 17 Զիք ոք որ ոչ գայթակղեսցի 404
27 Ձանդերձ մարդոյ 36

ԺԹ. 28 Է յանդիմանութիւն որ չէ բարւոք . . . 425
Ի. 8 Է որ յաճախէ ՚ի բանս 425

ՑՈՎԲ

Ա. 3 Եւ գործք ձեռաց նորա 442
8 Հայեցաւ մօք 155, 290
8 Աչք մի արգար 156
12 Ախաւասիկ տայ քեզ 199
22 Տէր եւ Տէր 105, 156, 199
22 Եղեցի անուն Տեառն 156
Բ. 3 Հայեցաւ մօք 155, 290
6 Ախաւասիկ տայ քեզ 199
10 Ասա բան ինչ 199
10 Եթէ զբարիսն 156
Է. 20 Ընդէր եդիր զիս 156
Թ. 12 Ո՞վ ասիցէ ցնա 288
Ժ. 2 Մի՛ ուսուցաներ զիս 156
ԺԱ. 10 Ո՞վ ասիցէ ցնա 288
ԺԴ. 15 Զգործս ձեռաց քոց 308
ԻԱ. 11 Փողովք և Թմբկօք 340
ԻԹ. 2 Ո՛տայր ինձ 41
6 Ոտոգանէին կաթամբ 442
15 Ոտք եղէ կաղաց 439

ԵՍԱՅԻ

Ա. 2 Լուր երկին և ունկն դիր 359
2 Որդիս ծնայ և բարձրացուցի 44, 46
5 Ամենայն գլուխ ՚ի ցաւս 93
15 Զեռք ձեր լի են 443
17 Դատ արարէք որբոյն 306, 364
18 Եթէ իցեն մեղք ձեր 204
18 Եթէ իցեն մեղք ձեր 286
Բ. 3 Ի Սիոնէ էլցեն 416
3 Ախեղեն՝ եկայք էլցուք 15
9 Խոնարհեցաւ մարդ 340
Ե. 12 Փողովք և Թմբկօք 13
22 Վայ ձեզ հզօրդ 297
Զ. 3 Սուրբ, սուրբ, սուրբ 346
Է. 14 Ախաւասիկ կոյս 152
Ը. 7 Ածէց զԹագաւորն Բաբելացւոց 111
9 Ընդ մեզ Աստուած 79
18 Ախաւասիկ ես և մանկունք

Թ. 6 Որոյ իշխանութիւն ՚ի վերայ 133
Ժ. 5 Վայ ասորեաստանեայցն 314
6 Իմում ժողովրդեանն կարգեցից 314
14 Ըմբռնեցից զաշխարհս 151
ԺԱ. 9 Լցցի երկիր ճանաչելոյ զՏէր 485
ԺԴ. 12 Եղիցի որ մնացեալ 411
ԺԴ. 2 Եղիցին գերեաքն գերեվարք 150
ԻԶ. 10 Բարձցի ամպարիշտն զի մի տեսցէ . . . 213
ԻԸ. 24 Մի՛ եթէ զօրն ամենայն 318
ԼԲ. 20 Երանի որ սերմանիցեն 95
ԼԴ. 4 Գալարեսցին երկինք 266
ԼԵ. 4 Դատաստանս հատուցանէ 217
ԼԶ. 5 Մի՛եթէ ՚ի խորհուրդս 103
ԼԷ. 4 Թերևս լուիցէ 371
35 Վասն իմ և վասն Դաւթի 232
ԼՐ. 3 Ցիշեա՛ որպէս գնացի 224
9 Ախ են աղօթք եզեկիայ 241
12 Ոգի իմ առ յինէն 241
Խ. 12 Ո՞ չափեաց զերկինս 264
15 Ամենայն հեթանոսք 374
16 Լիբանան չէ բաւական 306
ԽԱ. 4 Ես նոյն եմ 467
ԽԲ. 19 Ո՞վ իցէ կոյրն 454
ԽԳ. 25 Ես նոյն եմ 467
26 Ախա գուշ նախ զանօրէնութիւնս . . 369, 446
ԽԴ. 22 Սպանի զմեզս և ջնջեցի 373
ԽԵ. 2 Դրունս պղնձիս և զնիգս 463
7 Ես եմ Աստուած 175
18 Ախար զերկինս ՚ի բնակութիւն 275
ԽԷ. 6 Ծանրացուցեր ՚ի վերայ նոցա 152
ԽԸ. 4 Ես ինձէն գիտեմ 97
ԽԹ. 15 Զի թէպէտ և մոռանայցէ 319, 373
18 Զամենեսեան զնոսա զգեցջիր 464
Ծ. 1 Ո՞ր է գրաւական 386
4 Յաւել ինձ ունկն 364
8 Ո՞վ իցէ որ ոսոխն իցէ 364
11 Ի լոյս գնասջիք 363
ԾԱ. 12 Զինչ էիրն և զնարգ երկեար 383
12 Ես նոյն եմ 467
ԾԲ. 5 Վասն ձեր անուն իմ 66
ԾԳ. 2 Ոչ գոյր նորա 396
3 Ցոչինչ համարեցաք 398
3 Նուաղ է տեսիլ նորա 464

ԾԳ.	6	Ամենեքին իբրև ոչնչութ.	404
	6	Այր իւրաքանչիւր ի հանապարհի	404
	8	Բարձեալ են յերկիր	405
	9	Ջուրս ոչ արար	89
ԾԴ.	13	Եղիցին ամենեքեան ուսեալք	364
	15	Եւ ելիք առ քեզ մանկիկն	5
ԾԵ.	8	Ոչ էն հանապարհք իմ	417
ԾԸ.	3	Պահեցաք մեք	275
ԾԹ.	2	Մեղք ձեր որոշեցին	446
	8	Բեհուէն և Թշուառութիւն	454
	17	Ջգեցցի զզնահս	135
Կ.	8	Ո՞վ են սոքա	461
ԿԱ.	1	Փարոզել գերեւաց	463
ԿԲ.	5	Որպէս ուրախ լինիցի	467
ԿԳ.	7	Հատուցանէ մեզ ըստ ողորմութեան	466
	9	Ոչ հրեշտակ ոք	346

ՈՎՍԷ

Ա.	10	Եւ էր Թիւ որդւոցն	128
Գ.	7	Ըստ բազմութեան իւրեանց	128
Թ.	10	Իբրև վհատող յանապատի	46
ԺԱ.	1	Յեգիպտոսէ կոչեցից	178
	4	Նայեցայց առ նա	16
ԺԲ.	10	Ես առիւծ յաձախեցի	62
ԺԳ.	8	Պատահեցից նոցա իբրև զարջ	192

ԱՄՈՎՍ

Գ.	6	Իցէն չարիք ի քաղաքի	175
Դ.	1	Որ ասիցէն ցտեառս իւրեանց	197
			56
Ե.	18	Վայ զոք ցանկայցէն աւուր	54
Զ.	6	Ոյք ըմպէին պարզեալ գինի	461
Է.	7	Տեսի զՏէր զի կայր	359
	14	Ես ոչ էի մարգարէ	

ՄԻՓԻԷ

			38
Ա.	16	Խզեաց և գերծիը ի վերայ փափուկ	165, 359
Գ.	8	Ես լցայ զօրութեամբ	286
Դ.	2	Ի Սիովնէ էլցէն օրէնք	416
	2	Ասիցեն, եկայք էլցուք	290
Զ.	3	Ժողովուրդ իմ, զի արարի	

ՅՈՎԷԼ

Բ.	11	Հզօր են գործք	462

ՅՈՎՆԱՆ

Գ.	9	Թերևս զղջասցի	224
	10	Եւ եաես Աստուած	128
Դ.	10	Դու խնայեցեր	290
	11	Ես ոչ խնայիցեմ	128

ԱՄԲԱԿՈՒՄ

Ա.	3	Ընդէր ցուցեր ինձ	247
Բ.	14	Լցցի երկիր Ճանաչելոյ զՏէր	485

ՍՈՓՈՆԻԱ

Բ.	11	Եւ երկիր պագցեն	486

ԶԱՔԱՐԻԱ

Ա.	12	Զիաւրդ էցէ զի այս իւրթանասուն ամ	317
Թ.	7	Եղիցի Յերուսաղէմ իբրև զՀազարաքեան	212
ԺԱ.	15	Ցարուցից հովիս ագէտ	314

ՄԱՂԱՓԻԱ

			235
Ա.	2	ԶՅակովբ սիրեցի	27
Բ.	17	Որ զլծեցուցանէիք զԱստուած	

ԵՐԵՄԻԱ

Ա.	6	Մանուկ եմ	68, 69
	13	Տեսանէի սան մի	461
Բ.	5	Զինչ գտին հիս	290
	19	Խրատեսցէ զքեզ ապստամբութիւն	205
Ե.	14	Եղեն պատգամք Տեառն	165
Է.	16	Մի կար յաղօթս	202
	17	Ոչ տեսանես զինչ գոքայդ	202
ԺԲ.	1	Ճանապարհ ամբարշտաց	340
	11	Ման իմ ապականելով	363
ԺԳ.	11	Ձանդերձ ձեր եմ	464

ԺԷ. 5 Անիծեալ լեցի մարդն 244
Ի. 9 Եվե յոսկերս իմ 360
18 Ընդէր ցուցեր ինձ 247
ԻԲ. 24 Եթէ լինիցի Յաբոնիայ 355
ԻԵ. 9 Ծառայ իմ Նաբուգոդոնոսոր 314
ԻԶ. 3 Թերևս լսիցէ 225
ԻԷ. 6 Ծառայ իմ Նաբուգոդոնոսոր 314
ԼԱ. 8 Որդիս ծնանիցին կաղք 212
32 Հաստատեցից ընդ ձեզ 5
32 Յաւուր յորում կալայ 6
34 Մի եւս ուսուցանիցեն 4, 485
ԼԲ. 18 Առնէ զողորմութիւն ի հազար 374
ԼԵ. 7 Մի ի տունս բնակիցէք 116

ԲԱՐՈՒՔ

Գ. 3 Դու նստիս յաւիտեան 63

ԴԱՆԻԷԼ

Բ. 21 Որ փոփոխէն զժամս 267
Գ. 33 Եւ ոչ գոյ մեզ 68, 203
100 Աւքայութիւն նորա 298
Դ. 24 Թերևս լսիցէ 225
31 Աւքայութիւն նորա 298
Է. 9 Աթոռք արկան 63
10 Դպրութիւնք բացան 134
Թ. 17 Յորժամ տեսանիցէք 14
ԺԳ. 53 Զարգարն և զանպարան 443

ԵԶԵԿԻԷԼ

Գ. 17 Դէտ եառու զքեզ 69
ԺԷ. 3 Արծուին մեծ լայնաթեւն 50
ԻԸ. 9 Դու ասէիր Աստուած եմ 151

ՄԱՏԹԷՈՍ

Ա. 18 Գոսա յղի 400
Բ. 15 Յեգիպտոսէ կոչեցից 178
Գ. 3,16 Եթէ որդի էիցէ 398
7 Ծնունդք իժից 247
Դ. 1 Վարեցաւ Հոգւոյն 432

Դ. 10 Երթ յեռս 217
11 Եկին հրեշտակք 298
Ե. 3 Երանի էցէ ազքատաց 453
8 Երանի էցէ որ սուրբ 457
11 Երանի էցէ ձեզ, յորժամ 371
12 Վասն իմ ուրախ լերուք 372
21 Մի սպանանիցես 443
Զ. 9 Հայր մեր որ յերկինս 298
Է. 7 Խնդրեա 202
9 Ո՞վ էցէ ի ձենջ 319
11 Դուք չարք գիտէք պարգեա 373
12 Զոր ինչ կամիջիք 429
14 Քանի նեղ և անճուկ 427, 428
24 Ամենայն որ լսէ 196
25 Էջ անձրև 199
Ը. 3 Կամիմ, բժշկեաց 241
4 Երթ առ քահանայն 352
11 Բազումք յարևելից 75
29 Թոռղ, զի կայ 217
Թ. 2 Ընդեակ, թողեալ լեցին քեզ 84
13 Ոչ եկի կոչել 351
33 Ոչ ոք երևեցաւ 391
Ժ. 9 Մի սատայք ձեզ 322
15 Դիւրագոյն լինիցի 39
27 Զոր ինչ ասեմ 325
34 Ոչ եկի արկանել 172
ԺԱ. 29 Եկայք առ իս 352, 453
30 Լուծ իմ քաղցր 249, 428
ԺԲ. 28 Հոգւոյն հանեմ զգեաս 452
29 Ոչ ոք կարէ առնուլ զաւար 217, 463
ԺԳ. 16 Ջերոց երանի է աչաց 300, 393
17 Բազում մարգարէք 426
55 Ո՞չ սա է որդին 390
ԺԴ. 1 Լուաւ Հերովդէս 412
ԺԵ. 13 Ամենայն տունկ 26
24 Ոչ ուրէք առաքեցայ 398
ԺԶ. 21 Պարտ է որգւոյ մարդոյ 183
ԺԷ. 6 Դա է որդի իմ 391, 452
ԺԸ. 10 Մի արհամարհիցէք զմի 298
ԺԹ. 26 Զիք բան ինչ անկար 374
Ի. 23 Ոչ է իմ տալ 134
28 Ոչ եկի զի պաշտեցայց 406
ԻԲ. 37 Յամենայն սրտէ քումմէ 33

ԻԲ.	40	Սիրեսցես զընկեր քո	33, 429
ԻԳ.	3	Զամենայն զոր ինչ.	352
	37	Բաղում անգամ կամեցայ	202
	37	Երուսաղէմ, Երուսաղէմ	397
ԻԴ.	13	Որ համբերիցէ խոպառ	187
	15	Յորժամ տեսանիցէք	14
	29	Զօրութիւնք երկնից	147
ԻԵ.	24	Գիտէի եթէ այր մի	290
	32	Իբրև հովիւ.	258
	41	Երթայք յինէն	190
ԻԶ.	21	Մի ոմն ի ձէնջ	258, 397
	24	Լաւ էր նմա	412
ԻԷ.	46	Աստուած, Աստուած իմ	350
	54	Արդարև Աստուծոյ որդի	391
	63	Լուաք զի ասէր	407
ԻԸ.	19	Երթայք աշակերտեցէք.	4
	20	Ընդ ձեզ եմ	303

ՄԱՐԿՈՍ

Ա.	41	Կամիմ, բժշկեաց	241
	44	Ե՛րթ առ քահանայն	352
Բ.	5	Քաջալերեաց, որդեակ	353
	6	Որդեակ, Թողեալ լիցին	84
	17	Ոչ եկի կոչել	351
Գ.	27	Ոչ ոք կարէ առնուլ զաւար	217, 463
Դ.	2	Ակնաւասիկ եւ որ սերմանէր	287
	8	Որ ունի ականջս	300
Ե.	19	Փառաւորէ զԱստուած	352
Զ.	3	Ո՞չ սա է որդին	390
Ը.	31	Պարտ է որդւոյ մարդոյ.	183
Թ.	6	Դա է որդի իմ	391, 452
Ժ.	45	Ոչ եկի զի պաշտեցայց	406
ԺԲ.	29	Տէր Աստուած քո	316
	31	Սիրեսցես զընկեր քո	33, 429
ԺԳ.	13	Որ համբերիցէ խոպառ	187
	25	Զօրութիւնք երկնից շարժեսցին	147
ԺԴ.	18	Մի ոմն ի ձէնջ	258, 397
	21	Լաւ էր նմա.	412
ԺԵ.	34	Աստուած, Աստուած իմ	350

ՂՈՒԿԱՍ

Ա.	35	Հոգի Տեառն ի վերայ իմ	346, 400, 452
	37	Զկք բան ինչ անկար	374
Բ.	14	Փառք ի բարձունս	297
	34	Դա կայ ի գլորուիմ	464
Գ.	7	Ծնունդք իժից	247
Դ.	2	Վարեցաւ Հոգւոյն	452
	3,9	Եթէ որդի իցես	398
	19	Բարեզրէլ գերեաց	463
Ե.	13	Կամիմ, բժշկեաց.	241
	14	Ե՛րթ առ քահանայն	352
Զ.	21	Երանի իցէ ազբատաց	453
	22	Երանի իցէ ձեզ, յորժամ	371
	23	Վասն իմ ուրախ լերուք	372
Ը.	3	Ա՛յլ կանայք կերակրէին	146
	5	Ակնաւասիկ եւ որ սերմանէր	287
	39	Փառաւորէ զԱստուած	352
Թ.	22	Պարտ է որդւոյ մարդոյ	183
	35	Դա է որդի իմ	391, 452
	58	Որդի մարդոյ ոչ ունի աեղի	146
Ժ.	16	Որ ձեզ լսէ	362
	18	Տեսանէի զսատանայ	150, 218
	19	Կոխեցէք զօձս	218
	22	Ոչ ոք գիտէ զՀայր	260
	23	Զերոյ երանի է աչաց	300, 393
	24	Բաղում մարգարէք	426
	27	Զընկերն իբրև զանձն	33, 429
ԺԱ.	2	Հայր մեր որ յերկինս	298
	13	Դուք չարք գիտէք պարգեւս	373
ԺԳ.	4	Մի՛թէ նորա՞ւ եւթ	234
	34	Երուսաղէմ, Երուսաղէմ	397
ԺԵ.	7	Ուրախութիւն յերկինս լիցի.	374
	31	Ամենայն ինչ որ իմ է	132
ԺԶ.	25	Դու ընկալար զբարութիւնս	143, 290
	26	վիրհ մեծ է	143, 245
ԺԸ.	12	Պահեմ երկիցս	437
	29	Ակնաւ առ ոտն	200
ԺԹ.	21	Գիտէի եթէ այր մի	290
ԻԱ.	26	Զօրութիւնք երկնից շարժեսցին	147
ԻԲ.	15	Յանկանալով ցանկացայ	389
	27	Ո՞վ մեծ իցէ	406

ԻԴ.	36	Խաղաղութիւն լինի	388
	39	Ջննեցէք և տեսէք	405

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ա.	1	Իսկզբանէ էր Բանն	86
	3	Ամենայն ինչ նովաւ	485
	14	Տեսաք զփառս նորա	216
	18	ԶԱստուած ոչ ոք ետես	61
	19	Դու ո՞վ ես	85
	29	Ահաւասիկ գառն	89
	33	Ես ոչ գիտէի	452
	33	Յորոյ վերայ տեսանիցես	451
	34	Ես տեսի և վկայեմ	452
Գ.	16	Այնպէս սիրեաց Աստուած	374, 486
	20	Ամենայն որ զչարիս	325
Դ.	23	Եւ Հայրը զայնպիսիսկ	297
	34	Իմ կերակուր այն է	465
Ե.	14	Ահաւասիկ ողջացար	20, 114, 295, 454
Զ.	31	Զհաց երկնից	382
	45	Եղիցին ամենեքեան ուսեալք	364
	46	Ոչ ոք ետես զՀայր	61
	57	Որ յիս բնակէ	465
Է.	7	Ոչ կարէ աշխարհ	424
	12	Մրմրեցուցանէ զժողովուրդն	391
	37	Եթէ ոք ծարաւի	219
	38	Գետք յորովայնէ նորա	305
Ը.	18	Ես եմ որ վկայեմ	304
	18	Հայր իմ վկայէ	304
	28	Յորժամ բարձրացուցանիցէք	390
	46	Ո՞վ 'ի ձէնջ յանդիմանէսցէ	89
	58	Յառաջ քան զԱբրահամու	330
Թ.	5	Ես լոյս եմ	325
	35	Դու հաւատամ	295
	36	Ո՞վ ինչ զի հաւատացից	295
	38	Ես եմ	295
	39	Ի գառաստան եկի	393
Ժ.	11	Ես եմ հովիւ	157
	29	Ոչ ոք յափշտակէսցէ	355
	37	Հաւատացէք յիս և քննեցէք	483
	38	Եթէ յիս ոչ հաւատայք	483
ԺԱ.	39	Առէք զվէմն	241
	43	Արի՛ եկ արտաքս	241, 353

ԺԲ.	31	Այժմ գառաստան	288
	32	Յորժամ բարձրացայց	390
	38	Բարւոք ասաց վասն ձեր	71
	47	Ոչ եկի զի գառեցայց	328, 351, 375
	47	Ես ոչ գատիմ	7
ԺԳ.	2	Ամանայի իսկ արկեալ էր	289
	19	Յորժամ լինիցի հաւատասջիք	338
	21	Մի ոմն 'ի ձէնջ	258, 397
ԺԴ.	1,12	Հաւատացէք յիս և քննեցէք	483
	12	Ես 'ի Հայր և Հայր յիս	322, 323
	12	Եթէ յիս ոչ հաւատայք	483
	27	Զխաղաղութիւն եմ	113
	30	Գայ իշխան աշխարհիս	89
ԺԵ.	5	Ես եմ արմատ	482
	13	Մեծ քան զայս ոչ ոք	390
ԺԶ.	15	Ամենայն ինչ զոր	482
	33	Քաջալերեցարուք, ես յաղթեցի	463
ԺԷ.	1	Հասեալ է ժամ	397, 486
	4, 23	Ես սիրեցի զքեզ	133
	5	Հայր, փառաւորս արա	395
	6, 26	Ես ցուցից նմա	111
ԺԸ.	4, 7	Զո՞ խնդրէք	135, 399
	20	Ես համարձակաբար	325
	23	Թէ չար ինչ խօսեցայ	33, 399
	36	Թագաւորութիւն ոչ է	298
ԺԹ.	30	Կատարեալ է ամենայն	451
Ի.	17	Մի՛ մերձենար	464
ԻԱ.	7	Տէր է այն	464

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

Բ.	31	Ոչ թողաւ չունչ նորա	402
	31	Մարմին նորա ոչ ետես	405
Գ.	19	Հաւատացէք միայն	405
Դ.	32	Մի անձն և մի սիրտ	250
Ե.	8	Ա՛յսչափ ևեթ գնոց	446
	41	Ելին ուրախութեամբ	251
Է.	6	Ահաւասիկ ծառայեցուսցեն	296
	6	Զաղքատսն զնոսա ամն	336
	51	Խստասիրտք և խտամտաբանոցք	4
Ը.	17	Յորոյ վերայ դնէին	420
	24	Ակաչեցէք զՏէր	202
Ի.	34	Ճշմարտութեամբ 'ի վերայ	272

Ժ.	38	Օծ զնա Աստուած	451
ԺԳ.	35	Մարմին նորա ոչ եռաս	405
ԺԶ.	14	Եթող Աստուած զսիրան	364
ԻԸ.	25	Բարեդք ասաց վասն ձեր	71

Յ Ա Կ Ո Վ Բ Ո Ս

Բ.	8	Սիրեսցես զընկեր քո	33, 429

Ա. Պ Ե Տ Ր Ո Ս

Բ.	22	Որ ոչ արար մեղս	289

Թ Ո Ւ Ղ Թ Ա Ն Հ Ո Վ Մ Ա Յ Ե Ց Ւ Ս

Ա.	19	Ծանօթքն Աստուծոյ յայտնի է	272
	20	Զի աներևոյթք նորա	218, 272
	21	Ուշ[ա]խտացան ՚ի խորհուրդս	295
	22	Զանձինս առ իմաստուն	57
	26	Մատնեաց զնոսա Աստուած	24
Բ.	14	Յորժամ հեթանոսք	272, 415, 420
	16	Յաւուր յորում դատի Աստուած	7
	19	Յուսացեալ ես յանձն	10
	24	Վասն ձեր անուն իմ	66
	25	Թլփատութիւն օգնէ	420
Գ.	16	Ներկուսն և թշուառութիւն	454
	23	Ամենեքեան մեղան	328
Դ.	17	Միայն որ կոչէ զԱյս	268
Ե.	5	Յայս ոչ ամաչեցուցանէ	187
	5	Սէր նորա սփռեալ է	486
	11	Ոչ միայն այսչափ, այլ և պարծիմք	467
Զ.	9	Քրիստոս յարուցեալ է	89
	21	Զի՞նչ պտուղ ունէիք	186
Է.	24	Ամբ մի տառապեալ	249
Ը.	1	Ոչ դատապարտութիւն ինչ է	249
	9	Դուք չէք ՚ի մարմնի	254
	9	Եթէ ոք զՀոգի Քրիստոսի	451
	16	Հոգին վկայէ հոգւոյս	452
	19	Ինքն արարածք յուսով յայտնութեան	311
	22	Հետեն և երկինն	311
	32	Վասն մեր ամենեցուն	374, 375
	33	Աստուած է որ արդարացուցանէ	204
	34	Բարեխօս լինի վասն մեր	465

Ը.	36	Վասն քո մեռանիմք	159
	38	Ոչ մահ և ոչ կեանք	196
Թ.	13	Երեցն կրսերոյն	235
	13	ՋՅակովբ սիրեցի	235
	15	Ողորմեցայց որում ողորմեցայց	201, 332
	17	Վասն այսորիկ գրգռեցի	446
Ժ.	3	Զկնարհանց արդարութիւնն խնդրեն	295
	17	Եւ լուր ՚ի պատգամաց	218
	20	Եսայի համարձակի	70
ԺԱ.	20	Մի հպարտանար	463
	21	Զի թէ ՚ի բուն ոստն	423
	33	Ո՛վ խորք մեծութեան	483
ԺԳ.	9	Եթէ կեամք և եթէ	406

Ա. Թ Ո Ւ Ղ Թ Ա Ն Կ Ո Ր Ն Թ Ա Ց Ւ Ս

Բ.	9	Զոր ակն ոչ եռաս	82, 373
	10	Ա՛յլ մեզ յայտնեաց Աստուած	261
	10	Հոգին զամենայն քննէ	260
	11	Ոչ ոք գիտէ զմարդոյն	258
	11	ԶԱստուծոյ ոչ ոք	260
	16	Մեք զմիտս Քրիստոսի	261
Գ.	1	Ոչ կարացի ընդ ձեզ	72
	3	Ուր հեռ ՚ի ձեզ	72
	6	Ես անկեցի	26
	11	Հիմն եգեալ է	482
	12	Եթէ ոք չինէ	254
	18	Մի լինիք իմաստունք յանձինս	57
Դ.	4	Ոչ ինչ գիտեմ	368
Զ.	9	Մի խաբիք, ոչ պոռնիկք	342
	15	Ես գլուխ եմ	465
	19	Զձեք անձանց, գնոց	406
Ը.	6	Մի ի Տէր	295
Թ.	26	Ես այժմ այնպէս	429
	27	Ձնչեմ զմարմինս	427
	27	Երկնչիմ գուցէ որ այլոց	428
Ժ.	12	Որ կայն զգոյշ լինիցի	428
ԺԱ.	3	Ես գլուխ եմ	465
	7	Ա՛յր ոչ պիտի ծածկիլ	296
	28	Փորձեսցէ ի[ր]բաքանչիւր	369
	30	Վասն այնորիկ են ՚ի ձեզ	20, 234
	31	Եթէ զանձինս դատեաք	369
ԺԲ.	27	Մարմին էք ՚ի մարմնոյ	465, 467

ԺԳ. 3 Եթէ ջամբիցեմ 438
ԺԵ. 6 Ի վեր քան զՀինգհարիւր 74
31 Յոր երդնուս 'ի պարծանս ձեր . . . 159

Բ. ԹՈՒՂԹ ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ

Ա. 3 Հայր գթութեանց և Աստուած . . . 374
4 Որ մխիթարէն զմեզ 294, 381
Բ. 16 Ա՛ռ այս ո՛վ իցէ 294
Դ. 8 Յամենայնի նեղիմք 361
12 Մահ 'ի մեզ զօրանայ 361
13 Ունիմք զնոյն հոգի 82
15 Յառաւելութիւն փառաց Տեառն մերոյ . . 303
17 Զի որ առժամայն թեթեւ . . . 249, 428
Ե. 14 Զի թէ մին 'ի վերայ ամենեցուն . . . 406
15 Որ կենդանիքն իցեն, մի՛ անձանց . . . 406
16 Զի թէպէտ և գիտէաք 257
20 Աղաչեմք վասն Քրիստոսի . . . 144, 375
Զ. 2 Ա՛հաւասիկ ժամանակ ընդունելի . . . 350
4 Համբերութեամբ բազմաւ 187
Թ. 7 Զաւրս զաւրութեաւտոս 441
15 Շնորհքն Աստուծոյ 'ի վերայ անպատուաւ . 373
Ժ. 6 Յորժամ կատարեսցի և ձեր 124
ԺԱ. 30 Եւ եթէ պարծել 428
ԺԲ. 7 Ըստ առաւելութեան յայտնութեանցն . . 428
7 Տուաւ ինձ խայթ 428
20 Երկնչիմ գուցէ գայցեմ 446

ԹՈՒՂԹ ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

Բ. 20 Որ այժմ կեամ 375
Գ. 1 Որոց գրեթէ առալի 392
27 Որ միանգամ 'ի Քրիստոս 458
Դ. 4 Եկին և եղև 'ի կնոջէ 131
10 Զաւրս խորհէք 7
Ե. 2 Զի եթէ թէպետև 7
17 Հոգի հակառակ կայ 198
Զ. 14 Ինձ քաւ լիցի պարծել 486
Է. 15 Եթէ զմիմեանս խածատիցէք 120

ԹՈՒՂԹ ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

Ա. 16 Ինձ քաւ լիցի դադարել 244
19 } Առաւելութիւն մեծութեան . . . 372
Բ. 7 }
Ե. 30 Մարմին էք 'ի մարմնոյ . . . 465, 467
Զ. 3 Եւ եղիցի երկայնակեաց 234
18 Անդադար յաղօթս կացէք 220

ԹՈՒՂԹ ԱՌ ՓԻԼԻՊՊԵՑԻՍ

Ա. 20 Եթէ կենաք, եթէ մահու 361
23 Զինչ ընտրեցից ոչ գիտեմ 426
24 Եւ այլ վասն ձերոյ օգտի 234
Բ. 9 Վասն որոյ և Աստուած 401
14 Զամենայն ինչ արարէք 440
Դ. 4 Ուրախ լերուք հանապազ . . 220, 381, 457
7 Խաղաղութիւնն Աստուծոյ 373

ԹՈՒՂԹ ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

Ա. 3, 9 Ինձ քաւ լիցի դադարել 244
16 Ամենայն ինչ նովաւ 285, 484
Բ. 13 Սպանի զմեզս և ընկէցի 373
19 Ես գլուխ եմ 465
Գ. 3 Կեանք մեր ծածկեալ 400
9 Մերկացեալք զհին 249

Ա. ԹՈՒՂԹ ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

Դ. 4 Ճանաչել իւրաքանչիւր 11
12 Վասն ննջեցելոցն 11

Բ. ԹՈՒՂԹ ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ

Ա. 11 Ինձ քաւ լիցի գտանել 244
12 Յառաւելութիւն փառաց Տեառն մերոյ . . 303
Բ. 8 Խափանեացէ զնա յայտնութեամբ . . . 135
13 Ի փրկութիւն փառաց 209, 303

ԹՈՒՂԹ Ա.Ր ԵԲՐԱՑԵՑԻՍ

Ա.	1	Բազում մասամբք	217
	7	Որ առնէ զհրեշտակս	64
	12	Իբրև զվերարկու	266
Բ.	7	Խոնարհ արարեր զնա փոքր մի	254
Դ.	7	Այսօր եթէ ձայնի նորա	204
	12	Կենդանի է բանն Աստուծոյ	134
Զ.	17	Զի ունիցին ուժգին մխիթարութիւն	328
Ը.	27	Անհագին ինն է զատաստանացն	342
	32	Յիշեցէք զաւուրսն զառաջինս	250
ԺԱ.	38	Զորս և աշխարհ իսկ ոչ արժէ	129
ԺԲ.	14	Զհաղորդութեան զհետ երթայք	342

Ա. ԹՈՒՂԹ Ա.Ր ՏԻՄՈԹԷՈՍ

Ա.	9.	Ի վերայ արդարոց օրէնք	137
	12, 16	Շնորհ ունիմ Քրիստոսի	327
	20	Մատնեցի զնա սատանայի	175
Բ.	8	Յամենայն տեղիս ամբառնալ	178
	15	Կացցեն ի հաւատս	194
Գ.	5	Եթէ ոք ոտն իւրում	438
	6	Մի մատաղասունկ	26
Դ.	12	Մի ոք զքո մանկութիւնդ	26

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

Դ.	8	Սուրբ, սուրբ, սուրբ	297
ԺԴ.	13	Երանի՛ իցէ մեռելոց	412

ՅՈՒՅԱԿ ԿԱՐԵՒՈՐ ԻՐԱՑ ՄԱՏԵՆԻՍ

Ագահութիւն 450։ — Յաղագս ագահից և յափշտակողաց 51–53։

Աղնուականութիւն առնմի Թափուր յառաքինութենէն՝ աղարտելի է 356։

Աղօթք 202–205։ — Ոչ հայի Տէր յանարժանաւորութիւն աղօթողին, այլ զաղօթան ևեթ խնդրէ 202։ — Պարտ է աղօթել ևս և յորժամ չկայցէ վստահ ողորմութիւն գտանել 224–225։ — Ընդունի զմեզ Աստուած՝ ևս և յորժամ առ վշտի միայն դիմիցեմք առ նա 205։ — Ոչ յաղօթս արժանաւորաց միայն պարտ է ապաստան լինել, այլ և մեզէն պարտիմք գոն գործել 225–227։ — Յաղագս օգտի աղօթից 228։ — Վատթարագոյն քան զմեռեալս են որք ոչ օրհնեն զԱստուած 240։

Ամբարտաւանութիւն 115, 125։

Անկումն Ադամայ 151։

Անկումն Արեւելեան 150։

Անձնիշխանութիւն մարդոյ 340։ — Յաղագս կամն իբրաքանչիւր ուրուք ապաստան է չար կամ բարի լինել 208։ — Ոչ բռնագատեն կամք Աստուծոյ զանձնիշխանութիւն մարդոյ 313։ — Ոչ զոք բռնագատէ Աստուած յուղղութիւն 103։

Անմտութիւն է ընդ անցաւորս բևեռեալ՝ չինուածս բազմաժամանակեայս չլինել 115–116։

Անմտութիւն մեծ է յերկրուընս անուանի լինել 421։

Անչափարութիւն 306։

Անօգուտ են ցաւ և զօրութիւն անոց յորժամ յուղղութիւնս ոչ վարիցին 118։

Ապաշխարութիւն մեզաց կարեւոր առ՝ի փրկութիւն 187։ — Նշանք ճշմարիտ ապաշխարութեան 331։ — Հարկ՝ի վերայ կայ ապաշաւել զմեզս առ՝ի թողութիւն գտանելոյ 187։

Ապահովագոյն է բնակիլ յանապատս ուղղութեամբք, քան 'ի պատիսպս անօրէնութեամբք 199, 247–248։
Աւազքինութիւն ոչ ըստ բնութեան միայն է, այլ և կամաց կարօտի 429։ — Աւձնայն առաքինութիւնք դիւրինք եղեն 'ի գալըստեանն Քրիստոսի 250։ — Դիւրութիւն և քաղցրութիւն Նահապարտի առաքինութեան 249։
Աստուծոյ անքնին է էութիւն 465։ — Բարերար է Աստուած և 'ի տանջելն և 'ի պահել 466–467։ — Աւձնայն բնութիւնք չէն բաւական ըստ արժանի պատուել զԱստուած 262։ — Անկարօտ է Աստուած փառաւորելոյ 'ի մարդկանէ 269–270։ — Ոչ է կարօտ Աստուած փառաբանութեանց արարածոց 297։ — Յաղագս սեանելի և անսեանելի գոլոյ Աստուծոյ 61–62, 65։ — Սեպհական է Աստուծոյ անակնկիռն լինել և մշտնջենաւոր 279։
Արարչագործութիւն Աստուծոյ 266–268։ — Գործէ երբեմն Աստուած հակառակ օրինաց բնութեան, զի մի՛ ինքնակաց կարծիցին արարածք 238։ — Յարարածոց մարթ է զԱրարիչն 'ի միտ առնուլ 271–272։ — Աւձնայն ուրիք արարածք զԱրարիչն քարոզեն 382։
Արբեցութիւն 450։ — Յաղագս արբեցողաց 53–54։
Արդարութիւն և մարդասիրութիւն Աստուծոյ 552։ — Արդարութիւն և գթութիւն Աստուծոյ 572–573։ — Փրկիչ Աստուած զյանցաւորս առանց գործելոյ ընդդէմ արդարութեան 527–528։
Բաբելացիք գան առ Եզեկիա խմանալ զպատճառս այլայլելոյ ընթացից արեգական 243։
Բաղմաստուածութիւն 273–274, 524։
Բաղում անգամ զբուն ժամանակ պատժոյ յամեցուցանէ Աստուած՝ առ 'ի զգաստութիւն չարաց 91։
Բաղում անգամ ոչ փրկելոյն արժանաւորութիւն, այլ ինքասիրացն չարութիւն զպրծուցանէ զԱստուած յօդնականութիւն 225։
Բանն Աստուծոյ՝ բան անձնական է և մարդ կատարեալ 247։
Բարեխօս ունել պարտ է զսուրբսն առ Աստուած, այլ առաւել 'ի մեր տալթս պարտ է ապաստան լինել 202։
Գարշութիւնք կրօնից կռապաշտից և անհաւատից 292։
Գերեզն 210։ — Յաղագս տանջանաց հանդերձեալ աշխարհին 215։ — Ոչ միշտ անդէն վաղվաղակի ընդ մեղայ փոխարէն հատուցանէ Աստուած, այլ և 'ի հանդերձեալ աշխարհին 217։ — Մշտնջենաւորութիւն պատժոյ գերեզնին 357, 454։ — Աստուգութիւն պատժոյ գերեզնին 585։ — Պատասպարեալք 'ի գժոխս ղպայթեն և փախչիցեն կորուսեալ բարեաց 192–193։
Եկեղեցի Քրիստոսի հալածեալ՝ միշտ աճի և բազմանայ 1–3։
Երախիք քրիստոսական կրօնից առ ազգս մարդկան 139, 291։
Երախիք Քրիստոսի առ ազգս մարդկան 87, 218–219, 287, 551–552, 588, 484–486։

Զանազանութիւն ընդ կարծողս և ընդ մարդարէ 23։
Զառաջինն առ Հրեայս ծագեալ լոյսն Աստուածի՝ հալածի 'ի նոցանէ և գնայ 'ի հեթանոսս 109–110։
Զարմանալի է ոչ միայն ստեղծուլ ղնմին, այլ և հաստատուն և անսրատ պահել զստեղծեալն 265։
Զղջիանս և զնեղութիւնս աղքատաց յիւր դէմս ընդունի Քրիստոս 33։
Զինչ կարէ խմանալ յորժամ փառաւորել և բարձրանալ ասիցեմք զՏեառնէ 16։
Զոր ինչ Աստուած հրամայեցէ չէն ծանականք, թէպէտ և յայս մարդկան այնպէս թուիցին 182։
Զպատուհաս՝ բաժակ սովոր են կոչել Ս. Գիրք 385։
Իմմանուէլն անուն ըստ դիպաց եգաւ Քրիստոսի 87։
Ընդդէմ հերետիկոսաց, որք աստիճանաւորութիւն ինն դնեն յերկս անձինս Ս. Երրորդութեան 152։
Ընդդէմ հերետիկոսաց, որք գործի իմն լուկ համարին զՔրիստոս 126։
Ընդդէմ հոպատանաց և զարդասիրիկ լկտութեան կանանց 35–40։
Ընդդէմ որոց զգործս և զնորհուրդս Աստուծոյ քննել և գտանել ժպրհին 69։ — Զէ օրէն պատճառս խնդրել զգործոց Աստուծոյ 252, 317–319։ — Զէ օրէն զանհասականն քննել 485։
Ընդդէմ որոց զանանկս կէզեքեն 54։
Ընդդէմ փիլիսոփային Յունաց, որք զնիւթն մշտնջենաւոր դնեն 294։
Ընդդէր զպատուհասն օրհնութիւնս կոչիցեն Ս. Գիրք 45։
Ընդդէր ոչ ասէն յայտնի առնէ Տէր զիւրոխարէնս Հգնութեանց 207–208։
Ընդդէր ոչ ասէն պատժէ Աստուած զայնպիսիս որք 'ի չարս ծերանայցեն 193։
Ընդդէր ոչ սատակէ Աստուած զամենայն չարս, և զմանս սատակիցէ 206։
Ի բարկութեան Տեառն պարտ է ապաստան լինել յԱստուած որ բարկանայն 104։
Ի հրամանացն Աստուծոյ փոփոխին իշխանութիւնք 154։
Ի ձեռն Աստուծոյ է յաղթութիւն, և ոչ 'ի բազմութեան կամ 'ի սակաւութեան 166։
Իսկապէս փառք է մեռանել վասն Հմարտութեան 158–159։
Լաւ է մահ քան զկեանս լի չարեօք 411–413։
Խնամք Աստուծոյ 'ի վերայ արարածոց իւրոց 511, 520–521։
Խոնարհութիւն պատճառ ամենայն բարեաց 453։
Խոստովանութիւն մեղաց օրէնքի օգտակար իցէ 68, 307–308։
Կազմուած ևս մարդոյ խրատէ զնա առ Աստուած հայել և մի՛ կերկրաւորս բևեռել 270։
Կանխագիտութիւն Աստուծոյ 27–29։

Կանխագիտութիւն գիւաց 284–285։
Կուսական ծնունդ Ս. Կուսին 85–86։
Կուսութիւն Ս. Կուսին 394։
Կրկնակի ընտանութիւն կամ սէր Աստուծոյ ընդ մարդկան 209։
Համբերութիւն 187։ — Յաղագս օգտի համբերութեան և յուսոյ 187։
Հանգամանք կայսերութեան Յունաց առ Ոսկեբերանիս 9։
Հանդերձեալ դատաստան 128։ — Յաղագս դատաստանին Աստուծոյ 134։ — Անբժշկական է օր դատաստանին 142–144։ — Ի հանդերձեալ աշխարհին ոչ ոք կարէ բարեխօս լինել վասն այլոցմ 143։ — Յաղագս աւուր հանդերձեալ դատաստանին 145, 213, 289–290։ — Յաղագս օգտից հանդերձեալ դատաստանին 291։
Հաշտութիւն ընդ Աստուծոյ՝ խնդրելի յառաջ քան զամենայն 154, 581։
Հաւատոց կարեւորութիւն 485։
Հին օրէնք եղծեալ են յետ Քրիստոսի 177–178։
Հնութիւնք հոգւոյ պատճառք են յոլով ուրեք հիւանդութեանց մարմնոյ 377–378։
Հոգին Սուրբ ևս Աստուած է և առաքիչ 339։ — Բնութենական է Հոգին Սուրբ և Հոգին ընդ Որդւոյ 431։ — Ընկալաւ Քրիստոս զՀոգին Սուրբ յօրինակ միայն և ոչ առ կարօտութեան 286։ — Յաղագս վկայութեան և լինելոյ Հոգւոյն Սրբոյ ի վերայ Քրիստոսի 432։
Հրաշք կամ նշանն զինչ էր 85։ — Ընդդէմ խմասանոց Յունաց, ուրացողաց զՀմարտութիւնն հրաշից Ս. Գրոց 173։ — Յաղագս նշանաց զոր ետուն Քրիստոս ի ժամու մահուան՝ ընդդէմ Հրէից 402–403։
Հպարտութիւն 126, 224, 392, 455։
Ղուկիանոս մարտիրոս ի զրոյր հերետիկոս բամբասի 112։ — Ջատագովութիւն վասն թարգմանութեան Ղուկիանոս մարտիրոսի, և զՊաղեստինացւոց թարգմանութեանցն բանք 114։
Մահ արդարոյ 160։ — Սկիզբ և այլ պատճառք տարաժամ և ի ժամու մահուան 235–237։ — Ի մահ որ յԱստուծոյ հրամանացն, և ի զոր թէ և Աստուած ոչ կամի, այլ թոյլ տայ 256։
Մահ Քրիստոսի ըստ մարմնոյն եղեւ և ոչ ըստ աստուածութեանն 402։
Մարգարէական բանք բազում խմասու պարունակէին 178։ — Ի մարգարէութիւնս բազում ինչ վասն յորդորելոյ յուղղութիւնս լերը առաւելութեամբ ի ասացեալ 188։ — Ընդէր ծածուկս ձառէին մարգարէք 86։ — Ոչ միշտ կապակցութեամբ խմասոյ խօսին մարգարէք 389։ — Ոչ վայրապար ինչ նշանակեցան ի Ս. Գիրս ժամանակք մարգարէութեանցն կատարելոյ 180։
Մարգարէութեան ընծորհք ոչ արանց միայն, այլ և կանանց տուեալ լինէին 98։ — Վասն կրկ տալոյ Աստուած գիտել Հրէից զՀանգերձեալ ի ձեռն մարգարէից 74–75։ — Յաղագս սուտ մարգարէից 36, 96։
Մարգարէութիւն Քրիստոսի 400–401։ — Յաղագս մարգարէութեան Բանին ընդդէմ վաղենտինեանոսաց, Մարկիոնիտաց և այլոց հերետիկոսաց 88, 131։
Մարմնաւոր հիւանդութիւնք բազում անգամ վասն մեղաց դոն ի վերայ 20–21։ — Ի մեղաց որոմութիւնք և ցաւք մուծան յաշխարհ 114, 380։ — Ի մեղաց ապականեցաւ բնութիւն մարդկան 235։
Մարտ և կռիւ բազում անգամ պատճառք խաղաղութեան են 198։
Մեծութիւն միանգամայն և ընդունայնութիւն մարդոյ 253–254։
Մեղաւորք ի գիւր և ի հեշտ կեանս՝ առաւել լալոյ և արտասուաց արժանի են 343։
Մեղք անբժշկականք և առանց ներելոյ թողութեան 108։ — Մարդասիրութիւն Աստուծոյ առ ի թողուլ զմեղս բազում 204–205։ — Ներէ Աստուած որոց ոչ առաւել քան զչափն մեղանչեցեն 446–447։ — Կուրութիւն մտաց մեղաւորին ի ժամու գործելոյ զչարիս 186։ — Որք ի մեղս յորդորին՝ առաւելագոյն պատժոց պարտաւորք գտանին քան զորս գործեն 117։
Մեղք յուսահատութեան մեղաւորին 204։
Միաբանութիւն և խաղաղութիւն ամենայն հաստակի մարդկան ի գալստեանն Քրիստոսի յաշխարհ 136։
Միւսանգամ գալուստ Քրիստոսի 147։
Մկրտութեան խորհուրդ 277, 438։
Յաղագս այլ և այլ կերպարանաց որովք երեւեր Աստուած մարդկան 464։
Յաղագս անապատաւորացն Եգիպտոսի 172։
Յաղագս աստուածութեանն Քրիստոսի ընդդէմ Հրէից և Արիանոսաց 111, 304։ — Ճանաչէր զծածուկս մտաց նշանակ մեծ է աստուածութեանն Քրիստոսի 84։
Յաղագս բարկութեան Աստուծոյ 214։
Յաղագս գիտութեան երից անձանց Ս. Երրորդութեան 260։
Յաղագս դատաստանաց խղճի մտաց 568–570։
Յաղագս երդոց ոչ մեկնեն զոգիս 54։
Յաղագս թատերաց 343։
Յաղագս խորհրդոց չարաց և արդարոց 195–196։
Յաղագս խոտացուցանելոյ Տէառն զսիրան Փարաւոնի 314–315։
Յաղագս կազմութեան երկնակամարին 295։
Յաղագս կարգաց երկնից և երկրի 273։ — Յաղագս կարգաց երկրի 274։
Յաղագս կերպարանաց երկնից 266։
Յաղագս կերպի պաշտելոյ զԱստուած երկնաւորաց 298։
Յաղագս ձկոյ երկրի 264։
Յաղագս հրեշտակաց փրկութեան Քրիստոսիւ 178։
Յաղագս ուրախութեան վասն հոգևոր և մարմնաւոր ընծորհաց 436–437։

Ցաղագս պաշտաման երկնային զօրուԹեանց 64–66։
Ցաղագս պաշտաման ծառոց 452։
Ցաղագս պաշտաման քահանայուԹեան 246։
Ցաղագս օգտից սուրբ պահելոյ զաբաԹս ՚ի հին օրէնս 418–419։
ՑանգիՆուԹիւն Ոգւոց արքայի 60։
ՑարուԹիւն մեռելոց 193, 256, 362, 411։ — Զնոյն եղծեալ և զկոզացեալ մարմինս յարուսցէ Տէր ՚ի հանդերձեալ աշխարհին 251։
ՑարուԹիւնն Քրիստոսի ցուցանի հաւատացեօք, ընդդէմ հերձանոց 229։ — Անապական մարմնով յարեաւ Քրիստոս 405։
Ցիշատակք նախկին երանուԹեանց առաւել կսկծելի առնեն զնեղուԹիւնս 41։
ՆախանձմունԹիւն Աստուծոյ 457։
ՈղորմածուԹիւն 441–442։ — Անարատունք առնել զողորմուԹիւն 440։
ՈղորմուԹիւն Աստուծոյ կամեցողաց միայն է, ԹէպԷտ և ամենեցուն իցէ փրկուԹիւն 201։ — Ոչ ՚ի հարկէ ողորմի ուրուք Աստուած 201։ — Պարտ է ինդրել զողորմուԹիւն Աստուծոյ և անարժան գոլով, զի հասարակաց է ողորմուԹիւն նորա 201։ — Ընդէ՞ր ոչ ողորմեցաւ Աստուած Փարաւոնի և Սոդովմայեցւոց և որոց առ ջհՀեղեաան 193։ — Աստ միայն է դառնել զողորմուԹիւն Աստուծոյ, և ոչ ՚ի հանդերձեալսն 350։
Ոչ բնուԹեան ևԷթ է գործ ծնունդ մեր, այլ և Աստուծոյ 365։
Ոչ զգեստուԹիւն մեր միայն, այլ և զայլոցն պարտիմք հոգալ 244։
Ոչ զոք պատժէ Աստուած զայրացեալ մնոք, այլ առ ՚ի ածել յուղղուԹիւն 193։
Ոչ ինչ ստանալ խոտան իցէ, այլ բազում ՃոխուԹեամբ և աւելի քան զպէտն ժողովել 13։
Ոչ ՚ի տեղոյ չափելոյ խմաստուԹիւն ուրուք, այլ ՚ի հաստատուԹենէ մտաց 24–25։
Ոչ միայն չէ օրէն տեսանել զչարս, այլ և ոչ լսել 210։
Ոչ միշտ նոյնօրինակ պատժէ Աստուած զորս նոյնօրինակ մեղանչեցեն 38–40։
Ոչ որք լսկեցին, այլ որ լսկեհն են ողորմելիք 121։
Ոչ ոք ինքասի, եԹէ ոչ յանձնէ 200։
Որդին և Ճանաչէ ընդ Հօր զՀանդերձեալսն 112։ — Զուգապատիւ է Որդի ընդ Հօր 482–483։ — Իակից է Որդի ընդ Հօր 394։
Որպիսի անհնարին մոլուԹիւն է զմիաեանս խաՀատուել քրիստոնէից, որոց մի է մարմին հասարակաց 120։
ՈւրախուԹիւն ամբարշտաց լի է դառնուԹեամբ 340–345։
ԶարուԹիւն յինքեան ունի զպատուհաս իւր 30, 340–345։
Զէ ինչ ընդհատ մարդ ՚ի գաղանաց եԹէ ՚ի չար վարս կեցցէ 423։
Զէ ինչ օգուտ զանուն որդւոյ կրել՝ յորժամ ուղղուԹիւնս ոչ ցուցանիցեմք 194։
Զէ պարտ յայլասացիկ խմաստս ևԷթ Ս. Գրոց զկայ առնուլ, այլ յիմաստ բանին հայել 30։

Զիք դիւրուԹիւն որոց չարչարին՝ ՚ի բազմուԹենէ չարչարակցացն 245։
Զիք ինչ օգուտ ՚ի բազմուԹենէ, այլ յԱստուած պարտ է յուսալ 128–129, 168։
Պահք անօգուտ են՝ զուրկ ՚ի գործոց բարեաց 436–437։
Պաշտամունք կռոց 14–15։ — ՎաՀԹարուԹիւն կռոց և գիւաց 18, 108, 124, 251, 262–263, 269, 282, 526, 529։ — ԱնզգայուԹիւն և ստուԹիւն կռոց 510։
Պաշտամունք կռոց և գիւաց առ Հրեայս 283–284։
Պատուիրանք Տեառն ալբիւր խաղաղուԹեան և ամենայն բարուԹեանց 539։
Պարտ է կարի յոյժ հեռի կալ ՚ի կենցաղավկանացս 207։
Պարտք մեծատանց օգնելոց կարօտելոց 458–459։
Սատանայի գաւտապարտուԹիւն 288–289։ — Ոչ մարդկան միայն, այլ և սատանայի ևս գաւտաւտան հատոյց Աստուած 217։ — Կոչծանումն Մադիանու առ Գեդէոնիւ օրինակ խորտակման զօրուԹեան սատանայի 110։
Սէր առ Աստուած 457։
Սկզբնական մեղք 115։
Սկզբունք բարւոյ և չարի առ իմաստունս Յունաց և առ քրիստոնեայս 175, 465։
Սուգ սրդարոյ վասն եկեալ հասեալ անգարմանելի չարեաց 180–181։
Սուրբք յորժամ մեծարիցին՝ յայնժամ առաւել խոնարհուԹիւն ցուցանեն 67։
Վհուկն զինչ իցէ 106։ — Ցաղագս վհկին որ Եհան Սաւուղայ զՍամուէլ 107։ — Ընդդէմ վհկաց, դիւԹից, հմայից և կախարդաց 12, 105–107։
Տեսիլ առաքինեաց տանջել զչարագործս 29։
Տէրն անուն իսկապէս Աստուծոյ միայն վայելէ 296։
ՏնօրինուԹիւնք Քրիստոսի 183։
ՅանկուԹիւն բարեաց ըստ բնուԹեան է, և արտաքոյ քան զբնուԹիւն ցանկուԹիւն չարեաց 425–430։
Փառք մարդկան վաղանցուկ են 254–256։
Փառք սրբոց ՚ի վերոյ երկրի 207։ — Թոյլ տայ Աստուած սիրելեաց իւրոց նեղիլ, առ ՚ի փառաւորել զնոսա 155։
Քրիստոս օրինակ խոնարհուԹեան անօրինուԹեամբք իւրովք և վարդապետուԹեամբք 146։
Օրինաց կարևորուԹիւն և զի նոքօք զաՀաչանիմք յանատնոց 367։

ՅԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբեթնագոյ 133։
Աբել 446։
Աբրահամ նահապետ 67, 75, 131, 134, 143, 144, 157, 203, 233, 245, 272, 279, 280, 330, 365, 366, 370, 389, 420, 470։
Ագաբոս 336։
Ադամ 32, 131, 248, 270, 290, 366, 380, 400, 446, 466։
Ադամ, որ և Ադեմ 163։
Աղվոոս 179։
Աթենաս չաստուած 274։
Ալակեզոնացիք, տես Վակեզեմոնացիք։
Ակիզաս կամ Ակիւզաս 106, 109, 113, 124, 129, 130, 132, 133, 135, 142, 148, 150, 153, 168, 169, 171, 176, 179, 193, 208, 245, 250, 255, 261, 264, 274, 276, 278, 299, 309–314, 320–324, 332, 335, 546, 548–577, 585–594, 406–411, 433, 440, 448, 454։
Ահարոնի 51։
Ամոնացիք 14, 139։
Ամուի մարգարէ 179, 461։
Ամովացիք 167։
Ամուխացիք, տես Ամովացիք։
Ախրեբա չաստուած 275։
Անամելէք 130։
Անանիա (այլ Սափիրայ) 59, 585, 446։
Անգէ քաղաք 130։
Անախոք 314։
Ապողոս 26։
Առան սրբոյ Ասորեստանեայց 179։
Անոնի քաղաք 164։

Ասեղեկ քաղաք 176.
Ասորդան 231.
Ասորեստան 99, 182, 185, 190, 387.
Ասորեստանեայք 2, 92, 93, 100, 122, 124, 129, 140, 151, 153, 178, 190, 193, 194, 220, 225, 231, 237, 314, 386.
Ասորիք 93, 116.
Աստղիկ չաստուած 292.
Արաբացիք 124, 136, 165.
Արածանի գետ 93.
Արամ 76, 77, 80, 81.
Արիել 165.
Արուհիմ 165.
Արփաթ 225.
Աւաթ 30.
Ա.քաղ 74, 76, 79, 82–85, 153, 258.
Բաբելացիք 77, 116, 125, 142, 149, 152–154, 187–190, 208, 243, 268, 313, 314, 336, 338, 349.
Բաբելոն 148, 153, 190, 211, 248, 258, 285, 305, 333, 340, 387, 388, 397, 434, 469.
Բաղաղ 242.
Բաղտասար արքայ Ասորեստանեայց 152.
Բեդհեզդա 20.
Բեթզահէմ 109, 464.
Բեղբեքովր 46.
Բել չաստուած 329.
Բիլհան, որ և Բասան 17.
Բոսոր 214, 461.
Բրեսանացւոց կղզիք 9.
Գաբրիել 65.
Գալիլեա 109, 209.
Գալամացիք 165.
Գեբեր 130.
Գեդեւոն 83.
Գեհենդն 25.
Գեղեզեմ 130.
Գեսեթ 164.
Գովգ 212.
Գոմորացիք 39, 148.
Դագոն չաստուած 329.
Դամասկոս 80, 81, 95, 99, 124, 166.
Դանիել մարգարէ 25, 63, 77, 153, 154, 180, 244, 389–391, 437, 461, 465.
Դաւիթ արքայ 25, 46, 63, 79, 82, 104, 113, 114, 164, 181, 186, 203, 223, 230–233, 255, 257, 274, 280, 285, 289, 299, 349, 359, 371, 372, 413, 415, 445, 469.
— Տուն Դաւթի 76, 77, 82, 83, 85, և այլն.
Դեբովրա 45.
Դեմեթր չաստուած 273.
Դեմոթենէս 8.
Դիոնիսոս չաստուած 274.
Դկղաթ գետ 9.
Եգիպտացիք 2, 91, 93, 129, 140, 171, 173, 176, 178, 179, 182, 185, 186, 192, 221, 222, 235, 279, 302, 305, 311, 322, 323, 337, 370, 378, 447, 469.
Եգիպտոս 6, 109, 130, 140, 150, 171, 177, 188, 191, 235, 306, 322, 336, 340, 356–359, 385–389, 469.
Եգովմ 461, 463, 464.
Եգովմայեցիք 213, 214, 464.
Եզեկիա արքայ 15, 18, 101, 122, 125, 131, 133, 140, 157, 164, 190, 194, 195, 220–245, 371.
Եզեկիել մարգարէ 50, 69, 221, 423, 435
Եզր 249, 402.
Եզրա, տես Եզր.
Եթհոպացիք 169, 182, 322, 325.
Ելագացիք 284.
Եղիա մարգարէ 199.
Եղիակիմ Քեղկիանց 221, 222.
Եղիմ 165.
Եղիմաս մոգ 217.
Եղիշէա մարգարէ 25, 134.
Եմաթ 225.
Եսայի մարգարէ 69, 71, 79, 82, 84, 97, 142, 179, 180, 182, 185, 224, 226, 228, 232, 233, 240, 244, 422.
Եսաւ 255.
Եսբոնէ 162, 165.
Երեմիա մարգարէ 5, 25, 68, 86, 165, 180, 202, 212, 360, 362, 465.
Երուսաղէմ 6, 27, 42, 86, 101, 103, 109, 124, 125, 161, 165, 178, 181, 187, 189, 193, 211, 220, 245, 246, 257, 285, 286, 312, 322, 328, 375, 377, 378, 383, 386, 388, 397, 448, 459, 460, 470.
Երուսաղէմացիք 161.
Եւա 401.
Եփրեմ և ազգ Եփրեմայ 76, 77, 80, 82, 90, 120, 140, 166.
Զաբուղոն 109.
Զաքարիա մարգարէ (հայր Յովհ. Մկրտչի) 20.
Զաքարիա մարգարէ (որդի Բարեքիայ) 95, 97, 98, 212, 234, 461.
Զօրաբաբէլ 133, 140, 197, 278, 303, 321, 389, 390, 402.

Թարան 179.
Թեմիստոկղէս 284.
Թեւգա 404.
Թէոդիտոնէ, որ և Թէոդոտոն 106, 113, 132, 135, 136, 142, 149, 150, 153, 168, 173 176, 193, 261, 274, 276, 309, 313, 321, 325, 324 346, 349, 353–355, 363, 365, 367, 370, 371, 387, 394, 407–411, 437, 440.
Թովմաս առաքեալ 464.
Իգիմ 149.
Իղմիշ 130.
Իսահակ 73, 365, 420.
Իսրայէլ, Իսրայէլացիք և տուն Իսրայէլի 42, 49, 81, 91, 115, 117, 123, 140, 164, 235, 275, 285, 302, 330, 340, 347, և այլն.
Լակեդեմոնացիք 33.
Լիբանան 17, 30, 130, 197, 209, 216, 262, 276.
Լիբէացիք 9.
Խեւացիք 167.
Ծուբացիք 151.
Կային կամ Կայէն 20, 32, 213, 234, 272, 290, 332, 342, 446.
Կարմեղոս լեառն 197, 199, 209, 216.
Կարմեղով, տես Կարմեղոս լեառն.
Կեդար 299.
Կիւբոս արքայ Պարսից 142, 149, 278 313–315, 321, 338, 333, 337.
Կղոսպեանք 464.
Ս. Կոյան (Աստուածամայր) 171.
Կորնեթացիք 361.
Կորնեթոս 377.
Հայկ աստղ, որ և Որիոն 146.
Հէբմէս չաստուած 291.
Հէրովդէս (Հայր Ագրեպպէայ) 217, 233.
Հէրովդէս (Անթիպաս) 217, 412.
Հնդկաց աշխարհ 169.
Հռամա 130.
Հռամասիմ, տես Հռամիմ.
Հռամէլ 76, 80, 99.
Հռասիմ արքայ Արամայ 76, 77, 80, 81, 99, 100.
Հռեմոնէ 163.
Հռոմէլ, տես Հռամէլ.
Հռոմ 71,
Հրեայք 3, 5, 8, 22, 30, 38, 42, 57, 71, 74, 75, 85, 91, 93, 103, 111, 113, 122, 123, 166, 176, 179, 180, 183, 189, 202, 205, 210, 223, 242, 245–249, 282–288, 300–302, 309, 316, 323, 325, 328, 333, 385, 389, 393, 396–398, 402, 413, 420, 423, 453, 456, 460, 463–466, 485.
Հրէաստան 27, 30 74, 76, 80, 90, 93, 100, 101, 109, 190, 220, 227, 247, 257, 312.

Ղազար (ալքատն) 134, 143, 244, 330։
Ղազար (բարեկամ Քրիստոսի) 20, 71, 241, 333, 397.
Ղաքիս 220.
Ղեգեսոնէ 162.
Ղովտ 163.
Ղուկաս Ա.Հետաբանիչ 231.
Ղուկիանոս մարտիւրոս 112.
Մագեդով 130.
Մագովգ 212.
Մագրոնէ 130.
Մադոնէ 130.
Մադիամ 129, 469.
Մակեդոնացիք 383.
Մալաքիա մարգարէ 4, 27.
Մանասէ և ազգ Մանասէի 120.
Մայրեկնաս չաստուած 274.
Մաւթէոս Ա.Հետաբանիչ 331,
Մարիամ (Աստուածամայր) 390.
Մարիամ (քոյր Մովսէսի) 44.
Մարիամ (Մագդաղենացի) 464.
Մարկիոնիտք 88.
Մարոդաք Բաղդան 242.
Մարք 142, 148, 149, 153, 383.
Մաքմաս 130.
Մեդեբենա 130.
Մեմիայիք 174.
Մեսաք 133,
Միքիա մարգարէ (որդի Յեմլեայ) 461.
Միքիա, որ և Միքէ մարգարէ (Մորաշացի) 163.
Մովաբ կամ Մովաբացիք 13, 161–163.
Մովսէս մարգարէ 31, 44, 68–70, 123, 137, 262, 177, 186, 246, 262, 272, 313, 337, 348, 352, 359, 379, 383, 404, 437, 467–469.
Յակովբ, որ և Իսրայէլ 3, 73, 233, 283, 309, 416, 420, 442, 464, 470.
— Յակովբ կամ տուն Յակովբայ 103, 104, 113, 127, 149, 273, 280, 282, 302, 323, 448, և այլն.
Յակովբոս առաքեալ 404, 464.
Յասուբ 79.
Յասսա 162.
Յեզեր 163.
Յեսու Յովսեդեկեանց 402, 469.
Յեսու որդի Նաւէայ 238, 239.
Յեսսէ 79, 131, 132, 136, 140.
Յոյնք 116, 117, 173, 294, 402, 424 430, 463.

Յովաննէս Ոզնեցի 74, 76.
Յովսէփ Աղբանից 221 222.
Յովը 20, 38, 105, 155–157, 175, 259, 282, 396, 459, 442,
Յովէլ մարգարէ 462.
Յովհան Ոսկեբերան 185.
Յովհաննէս Մկրտիչ 85, 89, 180, 199, 304 412, 452.
Յովհաննէս Աւետարանիչ 71, 85, 216, 464, 486.
Յովնադաբ որդի Ռաքաբայ 116.
Յովնան մարգարէ 69, 181, 257, 290.
Յովսէփ նահապետ 25.
Յովսէս արքայ 25, 451.
Յորդանան 109, 216, 359.
Յորոբոամ արքայ 20, 33, 76.
Յուդա նահապետ և աղգ Յուդայ 47, 49, 50, 116, 120, 140, 185, 191, 250, 336.
Յուդա (գալիլեացի) 404.
Յուդա (մականիչ Քրիստոսի) 175, 217, 289, 313, 397, 421.
Նաբաս լեառն 162, 165.
Նաբեւռւթ 450.
Նաբուզոդոնոսոր (առ Դանիէլիս) 152, 196, 298, 314, 423.
Նաթան 179.
Նեբեբրա 163.
Նեեման 241.
Ներոն 413.
Նեփթաղիմ 109.
Նեքովթայ տուն 243.
Նինուէ 290.
Նինուէացիք 224, 335.
Նոավէ, տես Նինուէ.
Նոյ 52, 235, 409, 447.
Շաւուղ, տես Սաւուղ.
Շիլոհա, տես Սիլոհա.
Շմաւոն քահանայապետ (Ծերունին) 464.
Ոզնա 20, 23, 60, 70.
Ոռնիա 177.
Ովսէէ մարգարէ 27, 192.
Ովվէդ, տես Սովվէդ.
Ուբիա քահանայ 95, 97, 98.
Պաղեստին 8, 57, 93, 138.
Պարթեւք 142, 149.
Պարսիկք 93, 280, 284, 292, 309, 315, 325, 354, 385.
Պարսք, տես Պարսիկք.
Պաւղոս առաքեալ 7, 20, 67, 70, 71, 74, 82, 89, 111, 124, 131, 135,

144, 159, 175, 187, 194, 196, 209, 216, 218, 234, 249, 250, 258, 275, 294, 527, 528, 542, 550, 551, 564, 568–572, 574, 575, 580, 581, 587, 588, 592, 404, 413, 421, 426–428, 438, 446, 458, 467, 482, 485, 486.
Պետրոս առաքեալ 272, 446, 464.
Պիղատոս Պոնտացի 287, 399,
Պոսիդոնէ քաղաքէ 273.
Ռամա, տես Հռամա.
Ռափսակ 122, 220, 221, 224, 225, 571.
Ռաքաբ 116.
Սաբացիք 322.
Սահակ, տես Իսահակ.
Սամարիա 82, 95, 99, 115, 124, 127, 223.
Սամուէլ մարգարէ 107, 154.
Սառա 365, 366.
Սարգոնէ 179.
Սարոնէ 309.
Սաւուղ 107, 150.
Սափարուեմ 225.
Սափիրա 59, 217, 385, 446.
Սեբեմա 165.
Սեգովր 162, 165.
Սեդրակ 155.
Սելոամ 100.
Սելոհա, տես Սիլոհա.
Սեմէէ 371.
Սենեքերիմ 73, 220.
Սիլոհա 2, 99.
Սիմաքոս 103, 106, 113, 120, 124, 129, 132, 135–137, 142, 148–150, 155, 168, 169, 175, 176, 179, 193, 208, 238, 245, 261, 265, 274, 276, 278, 293, 299, 309, 312, 315, 321, 325, 332, 348–359, 362–367, 370, 371, 383, 384, 387–390, 393, 394, 399, 402, 406–411, 417, 433, 436, 437, 440, 454, 455.
Սինա լեառն 6.
Սինիմ 354.
Սիոն 6, 42, 105, 116, 124, 125–130, 141, 161, 164, 187, 192–195, 200, 211, 213, 220, 257, 284, 286, 333, 354, 366, 379, 386, 388, 448, 455, 459, 482.
Սոգովմայեցիք 28, 38, 148, 193, 250, 272, 279, 385, 447.
Սողոմոն 23, 25, 285, 362.
Սողոմոն, տես Սողոմոն.
Սոմորոն 80.
Սովկրատ Սովքրոնիսկեանց 8.

Սովմնաա 221, 222.
Սովփեը 147, 411.
Սովփոնիա մարգարէ 486.
Սոուհէն 505.
Սոխոը, տե՛ս Սովփեը.
Ստեփանոս նախավկայ 332. 404.
Վաղենտիանոսք 85.
Տաճիկք 292.
Տայան 174.
Տասէլ 80.
Տիմոթէոս 24, 26.
Փակէլ 76.
Փարաւոնէ (Ելից) 172, 193, 314, 315, 446.
Փենեհէս 385, 404.
Փղշտացիք 155.
Փաղանէ 125.
Փալդէացիք 148, 333, 338, 340.
Փանանացիք 176, 446.
Փերմեղ, տե՛ս Կարմելոս լեառն։

ՎՐԻՊԱԿԻ ՏՊԱԳՐՈՒԹԵՒՆ

Է՛ տող		ՊՐԷՊ	ՈՒՂԻՂ
8	35	Սոփրոնիսկեանց	Սովփրոնիսկեանց
36	6	բամբասէ և, զայս	բամբասէ, և զայս
»	13	յերդ արկեալ մրմնջէ. Զնւր զոսոխս և զհանդերձան	յերդ արկեալ մրմնջէ զնւր զոսոխս. Եւ զհանդերձան
105	3	այլ այս է խնայելն 'ի նոսա	այլ Աստուծոյ է խնայելն 'ի նոսա
136	10	զոր չէ հնար 'ի գաղանս հաւնել, եթէ ոչ 'ի մարդիկ տեսանես զգալստեանն շահս։ Գայլք ընդ գառինան	զոր չէ հնար 'ի գաղանս հաւնել, եթէ ոչ 'ի մարդիկ։ Տեսանէս զգալստեանն շահս. գայլք ընդ գառինան
243	34	չոայլօրէն	շռայլօրէն
332	14	Ստեփաննոս	Ստեփանոս
366	23	նոնպէս	նոյնպէս
373	29	սահման ասէ	սահման սա է
»	31	զքեզ, սա է Տէր	զքեզ, ասէ Տէր
438	10	Պաւղոս ասէր, եթէ Ջամբեցեմ	Պաւղոս ասէր. եթէ Ջամբեցեմ
465	5	Իմ կերակուր և եթէ այն է, ասէ, զի արարիչ զկամն Հօր իմոյ. և Բարեխօս	Իմ կերակուր այն է, ասէ, զի արարիչ զկամն Հօր իմոյ. և եթէ Բարեխօս

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ML00286779
<< Արգելոց գրադարան

25t1